ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1

1962

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հայ նոր գրականության պատմության առաջին հատորը գրել են. Ա. Մ. Ինճիկյանը *(«Ներածություն», «Հարություն Ալամդարյան», «Ղևոնդ Ալիշան»),* Վ. Վ. Թերզիբաշյանը *(«Հայկական կլասիցիզմ»),* Ս. Ա. Շտիկյանը *(«Հովհան Վանանդեցի»),* Ա. Ս. Մանուկյանը *(«Արսեն Բագրատունի»),* Կ. Ա. Դանիելյանը *(«Մեմուարային գրականություն»),* Հ. Ս. Սահակյանը *(«Աշուղական պոեզիա»),* Շ. Ս. Գրիգորյանը *(«Շիրին»),* Ռ. Պ. Նանումյանը *(«Միսաք Թաղիադյան»),* Հ. Բ. Մուրադյանը *(«Խաչատուր Աբովյան»)* Շ. Լ. Նազարյանը *(«Գաբրիել Պատկանյան»):*

Ժամանակագրությունը կազմել է Ս. Ա. Շտիկյանը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Ա. Ա. Ասատրյան, Ա. Մ. Ինճիկյան, Գ. Ն. Հովնան, Էդ. Մ. Ջրբաշյան, Խ. Ս. Սարգսյան, Ս. Ն. Սարինյան

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի բազմադարյան գրականությունը ընդունված գիտական պարբերացմամբ բաժանվում է երեք մեծ շրջանի՝ Հին և միջնադարյան. Նոր, Սովետական։ Յուրաքանչյուր շրջանի գրականություն իր բովանդակությամբ և զարգացման օրինաչափություններով ներկայացնում է գրականագիտական ինքնուրույն բնագավառ։ Այս վերջինի ընդգրկմամբ էլ ամենից առաջ պայմանավորվում է հայ գրականության գիտական, լիակատար պատմության ստեղծելու բարդությունն ու դժվարությունը։

Ավելի քան մեկ դարի վաղեմություն ունի հայ գրականության պատմագրությունը, որն արտահայտություն էր XIX դարասկզբին ծնունդ առած ազգային զարթոնքի և գրական-լուսավորական շարժման։

Հայ մատենագրության պատմության առաջին փորձը Սուքիաս Սոմալյանի «Տեսություն Հայաստանի գրականության պատմության» (Quadro della Storia letteraria di Armenia, estesa da Mons. Placido Sukias Somal, Arcivescovo di Siunia et Abate Generale della Gongergazione dei Monaci armeni Mechitaristi di St. Lazzaro. Venezia, 1829) իտալերեն աշխատանքն է, որին հաջորդում է Կ. Նեյմանի «Քննություն հայոց գրականության պատմության» (Versuch einer Geschichte der armenischen Literatur, nach den Werken der Mechitaristen frei bearbeitet, von Carl Friedrich Neumann. Leipzig, 1836) գերմաներեն աշխատանքը։

Մի որոշ ժամանակ անց Կազանում լույս են տեսնում Ստեփանոս Նազարյանի «Թռուցիկ ակնարկ հայկական գրականության վրա մինչև XIII դարի վերջը» (Беглый взгляд на историю Гайканской литературы до конца XIII столетия, Казань, 1844) և «Տեսություն նորագույն շրջանի հայկական գրականության պատմության» (Обозрение истории Гайканской письменности к новейшие времена. Казань, 1846) պատմական տեսությունները, որոնք և, ըստ էության, հիմք են դնում հայ գրականության պատմագրությանը։

Հայ գրականության պատմագրության բնագավառում առանձնակի տեղ են գրավում Հովսեփ Կաթրճյանի «Պատմություն մատենագրության հայոց» (1851) և Ստեփանոս Պալասանյանի «Պատմություն հայոց գրականության» (1865) աշխատությունները։ Ընդգրկելով միայն մատենագրային շրջանի հին բանավոր գրականությունը, հեղինակները, այնուամենայնիվ ներածական բաժիններում առաջադրում են առարկայի պատմության

և տեսության որոշ գիտական սկզբունքներ, տալիս նյութի ժամանակագրումը:

Հայ գրականության պատմագրության խոշոր նվաճումը XIX դարում Գարեգին Զարբհանալյանի «Հայ դպրության պատմություն» երկհատոր աշխատությունն է, որի առաջին հատորը կոչվում է «Հայկական հին դպրության պատմություն» (1865), իսկ երկրորդը՝ «Նոր մատենագրություն» (1878): Փաստերի առատությամբ ու բանասիրական քննումներով եզակի այդ աշխատությունը հատկանշվում է ընդգրկման մեծ շրջագծով՝ հնագույն շրջանից մինչև XIX դարի 70-ական թվականները: Տասնամյակներ շարունակ այն հանդիսանում էր հայ գրական մշակույթի պատմության առավել տարածված ձեռնարկը:

Հետագա տասնամյակներում եղան գրականության պատմագրության մի քանի ուրիշ փորձեր, ինչպես՝ Ե. Դուրյանի «Պատմություն հայ մատենագրության ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն» (1885), Ստ. Մալխասյանի «Դասընթաց հայ մատենագրության պատմության» (ապակետիպ, 1899), Հ. Մրմրյանի «Պատմություն հայ գրականության» (1910), Ն. Անդրիկյանի «Ուրվագիծ հայ մատենագրության» («Բազմավեպ», 1911), որոնք, սակայն, կամ կիսակատար էին և կամ նյութի ընդգրկմամբ ու պատմահայեցողության սկզբունքներով դուրս չէին գալիս նախորդ պատմագրության շրջանակներից:

1910-ական թվականներին նոր առաջընթաց է կատարվում հին շրջանի գրականության պատմագրության բնագավառում: Վրթանես Փափազյանի «Պատմություն հայոց գրականության» և Աբրահամ Ջամինյանի «Հայ գրականության պատմություն» աշխատությունները, առարկայի պատմությունը հարստացնում են բանասիրական նոր տվյալներով և մի շարք հարցերի նոր մեկնաբանությամբ:

Հայ գրականության պատմագրությունը XIX դարում սկզբնավորվեց ու զարգացավ հիմնականում գրականագիտական երկու դպրոցների ազդեցությամբ՝ բ ա ն ա ս ի ր ա կ ա ն և պ ա տ մ ա-հ ա մ ե մ ա տ ա կ ա ն: Բանասիրական դպրոցի օրինակով հայ գրականության պատմաբանները գրականություն հասկացողության ոլորտի մեջ էին առնում բոլոր գրավոր վավերագրերը, գեղարվեստական գրականությունը չէին անջատում ընդհանրապես մատենագրությունից և այն նույնացնում էին մատենագրության պատմությանը, իսկ պատմա-համեմատական դպրոցի ազդեցությամբ նրանք գրականությունը դիտում էին որպես ժողովրդի պատմության անխզելի մաս (իբրև հոգևոր պատմություն), որպես պատմության աղբյուր, ինչպես նաև հայ գրականության պատմությունն ուսումնասիրում էին մերձավոր և հեռավոր ուրիշ ժողովուրդների գրականության հետ ունեցած կապերի ու ազդեցությունների համեմատությամբ:

XIX դարի հայ գրականության պատմագրության ուսումնասիրության հիմնական առարկան հին և միջին դարերի գրականությունն էր: Ճիշտ է, գրականության որոշ պատմաբաններ (Ստ. Նազարյան, Գ. Զարբհանալյան, Ե. Դուրյան) իրենց աշխատություններում ընդգրկում էին նաև հայ

գրականության նոր շրջանը, սակայն վերջինս ներկայացվում էր բռուցիկ, հարևանցիորեն: Գրական նոր շարժումը, նրա ուղղությունները ու զարգացման օրինաչափությունները դեռևս գիտական հիմնավորում չէին ստանում:

Հայ նոր գրականության պատմագրությունը սկզբնավորվեց XX դարասկզբին: Սակայն, պետք է նշել, որ այն, հենց սկզբից, բռնունեց սխալ ուղղություն: Ելնելով հայ ժողովրդի երկու հատվածների (արևելյան և արևմտյան) գոյության պատմական իրողությունից, գրականության պատմաբանները ղեկավարվեցին գրականությունն ըստ հատվածների ներկայացնելու սկզբունքով և այսպիսով մեր գրականության պատմագրությունը դրվեց «ռուսահայոց» և «թուրքահայոց» բնորոշումների տակ: Այս մոտեցումը ամենից առաջ իր հետ բերեց սխալ պատկերացում նոր գրականության սկզբնավորման հարցում, այն կապելով երկու հատվածների բաժանման պատմական փաստի հետ: Ինչ խոսք, որ գրականության այսպիսի մասնատումը չի կարող արդարացվել: Անշուշտ երկու հատվածների գրականությունները ունեն որոշ յուրահատկություն ու տարբերիչ երանգներ, սակայն ակներև է, որ ընդհանրությունները անհամեմատ ավելի մեծ, ավելի կայուն ու հարատև են, քան տարբերությունները: Նախ նրանք գալիս էին նույն ակունքից, ձևավորվել են նույն ժողովրդի բազմադարյան կուլտուրայի հիմքի վրա, և ապա, երկու հատվածների գրականությունը ընդհանուր առմամբ ենթարկվել է նույն օրինաչափություններին, ոգևորվել է ազգային նույն բովանդակությամբ, նույն գաղափարներով:

Արևելահայ իրականության մեջ այս տիպի պատմության առաջին նմուշը տվեց Լեոն իր «Ռուսահայոց գրականությունը» (1904) գրքով, որն ընդգրկում է XIX դարի երկրորդ կեսի գրականությունը: Նյութն ընդգրկելու և սիստեմավորելու, որոշ օրինաչափությունների տակ դնելու իմաստով, ինչպես նաև գրական ստեղծագործությունների վերլուծումներով, Լեոյի աշխատությունը որպես առաջին փորձ ուշագրավ երևույթ էր և իր տեղն ունի հայ նոր գրականության պատմագրության բնագավառում:

Լեոյի «Ռուսահայոց գրականությունը», սակայն, ուներ մեթոդոլոգիական և գրական-պատմական բնույթի սխալներ: Գրականության պատմությունը շարադրելով ըստ ժանրերի՝ պոեզիա, դրամատուրգիա, արձակ՝ հեղինակն ակամա շրջանցում է գրականության միասնական պրոցեսը և մասնատում տվյալ շրջանի գրականության ներքին կապակցության ամբողջական պատկերը: Լեոյի սխալներն առավել ընդգծված արտահայտվեցին 90-ական թվականների գրական երևույթների և մի շարք գրողների ստեղծագործության գնահատման հարցում, որոնք արդյունք են գեղագիտական ուրույն ըմբռնումների: Լեոն գրական դաստիարակություն ստացավ 70—80-ական թվականներին, երբ ամբողջ հայ մամուլն ու գրականությունը տոգորված էր ազգային-ազատագրական ռոմանտիկական պաթոսով: Այդ շրջանի գրականության և գեղագիտության քաղաքական բնույթը, հասարակական տենդենցիան ու ազատասիրական ներշնչվածությունը Լեոյի համար մեկընդմիշտ մնացին իբրև գրական պարտադիր նորմաներ:

90-ական թվականների գրական նոր ոճերն ու, այսպես կոչված, «օբյեկտիվ» ռեալիզմը այլևս չէին հարմարում նրա գրական պատկերացումներին. նա փորձում էր այն գնահատել արդեն հնացած իր չափանիշներով, և այստեղից էլ ստացվում էր հակասություն իր դավանած սկզբունքների ու գրականության զարգացման բնական ընթացքի միջև, որի հետևանքով վերջինս ստանում էր ոչ ճիշտ գնահատություն: Այստեղից էին բխում Հ. Թումանյանի, Հ. Հովհաննիսյանի, Շիրվանզադեի ստեղծագործության այն սխալ բնորոշումները, որոնք առկա են Լեոյի գրքում:

1909—1911 թվականներին լույս է տեսնում բանաստեղծ-գրականագետ Լևոն Մանվելյանի «Ռուսահայ գրականության պատմությունը»՝ հինգ պրակով: Ստեղծելով գրականության պատմության ձեռնարկ միջնակարգ դպրոցի ուսանողների համար, Լ. Մանվելյանը, բնականաբար, առարկայի սկզբունքներն ու մատուցման եղանակը հարմարեցրել է այդ պահանջներին: Գրականագիտական վերլուծումների խորությամբ Լ. Մանվելյանի ձեռնարկը իհարկե չի հասնում Լեոյի աշխատությանը, սակայն, մի շարք կողմերով այն առաջ է անցնում նրանից, հատկապես XIX դարի արևելահայ գրականության պարբերացման, գրական փաստերի նկարագրության, գրական-կուլտուրական միջավայրի բնութագրման իմաստով:

XIX դարի արևմտահայ գրականության առաջին պատմագիրը Արփիար Արփիարյանն է: Նա պատմաքննական մի քանի ակնարկներ է նվիրել արևմտահայ գրականությանը, որոնցից հատկապես արժեքավոր է «Պատմություն ԺԹ դարու Թուրքիո հայոց գրականության» («Գեղունի», 1902) քննական տեսությունը: Արփիարյանը գրել է նաև մի քանի ուրիշ ակնարկներ՝ «Արևմտյան հայոց արդի գրականությունը», «Գրական հուշեր», «Թուրքիո հայոց գրականությունը», «Գրական դեմքեր», որոնք լրացնելով իրար, տալիս են արևմտահայ գրականության պատմության ուրվագիծը: Արփիարյանն առաջինն էր, որ պարբերացման ենթարկեց արևմտահայ գրականությունը, որոշ օրինաչափության տակ դրեց նրա զարգացման էտապներն ու ուղիները:

Ըստ առանձին հատվածների գրականության պատմագրությունը չմնաց առարկայի պատմության միակ ձև. շուտով երևան եկան աշխատություններ, որոնք ներառնում էին երկու հատվածների գրականությունը: Ճիշտ է, այդ աշխատություններում միանգամից չլուծվեց հայ նոր գրականության գիտական միասնության խնդիրը, բայց երկու հատվածների գրականությունը մի ամբողջական գրքի, թեկուզ ընդհանուր վերնագրի տակ առնելը, հոգեբանորեն միևնույն ժողովրդի ընդհանուր գրականության հասկացողության հուշումն իսկ լուրջ ազդակ էր երկու հատվածների գրականության մերձեցման:

Այս ուղղությամբ առաջին փորձն արեց Հրաչյա Աճառյանը «Պատմություն հայոց նոր գրականության» աշխատությամբ (1906—1912): Հայ նոր գրականությունն Աճառյանը բաժանում է երկու մեծ շրջանի՝ *կեղծդասական*, որը տևում է մեկ ու կես դար (ընդգրկում է XVIII դարասկզբից մինչև XIX դարի առաջին կեսը) և *աշխարհաբար*, որն

սկզբնավորվում է XIX դարի 60-ական թվականներին: Այնուհետև, կանգ առնելով երկու հատվածների գրականության առանձնահատկությունների վրա, պատմաբանը պնդում է, որ նրանք ընթացել են զատորոշ ուղիներով և ըստ այդմ էլ նրանց դնում է տարբեր պարբերացման տակ, ըստ որում, արևմտահայ աշխարհաբար գրականության համար սահմանելով չորս էտապ, իսկ արևելահայ գրականության համար՝ երկու էտապ: Անառյանի առաջադրած պարբերացումը բերի է: Նախ անընդունելի է երկու հատվածների գրականությունը տարբեր պարբերացման ներարկելը, ապա, ինքնին, այդ բաժանումները պայմանական են և չեն արտացոլում գրականության զարգացման իրական ընթացքը: Վերջապես՝ ակներև է, որ աշխարհաբար գրականության սկզբնավորումը նկատելիորեն ետ է բերվում և ակամա ստվերվում է 30-50-ական թվականների գրական շարժման նշանակությունը:

1908 թվականին «Արարատ» ամսագրում տպագրվում է Մանուկ Աբեղյանի «Ուրվագծեր XIX դարու հայոց գրականության պատմության» քննական տեսությունը: Աշխատությունն անավարտ է և ընդգրկում է միայն XIX դարի առաջին երեսնամյակի չափածո գրականությունը, սակայն նրա արժեքը հատկապես հայ նոր գրականության սկզբնավորման պատմա-հասարակական և կրթական-լուսավորական նախապայմանների խոր վերլուծության մեջ է:

Նոր գրականության ծնունդը առնչելով XVII դարասկզբից խմորվող ազգային-հայրենասիրական շարժման և մտավոր զարթոնքի հետ, Աբեղյանը, վերանայում է, Մխիթարյաններին նոր գրական շարժման հիմնադիրներ վկայակոչող ըմբռնումը և ապացուցում, որ մտավոր-գրական շարժումը սկսվել է Մխիթարյաններից ավելի վաղ և որ, հետևաբար, սրանք ոչ թե այդ շարժման հիմնադիրներն են, այլ միայն շարունակողները:

Հայ նոր գրականության առաջին լիակատար պատմությունը Վրթանես Փափազյանի «Պատմություն հայոց գրականության» ձեռնարկն է: Փափազյանի «Պատմության...» առավելությունը նախ այն է, որ ընդգրկում է ամբողջ հայ նոր գրականությունը՝ XVIII դարից մինչև XX դարի առաջին տասնամյակը՝ արևելահայ և արևմտահայ հատվածներով: Այնուհետև ուշագրավ է, որ պատմաբանը առանձնաշեշտում է երկու հատվածների գրականության ընդհանրությունները, արժևորում հատկապես հայ գրականության դեմոկրատական ավանդները և վերջապես՝ առաջին անգամ գրականության պատմության մեջ տեղ է հատկացնում հայ պրոլետարական գրական հոսանքին:

Բայց հայ նոր գրականության գիտական պարբերացման հարցում Փափազյանի «Պատմությունը...» ևս բերի է: Չառաջադրելով, ըստ զարգացման էտապների, գրականության պատմության մի հիմնավոր պարբերացում, պատմաբանը շարադրանքը տանում է տասնամյակների հաջորդականությամբ, մասնավոր հարցերի ու գրական գործիչների խմբավորման սկզբունքով, որի հետևանքով գրականության պատմության

առանձին էտապների յուրահատկություններն ու ընդհանուր օրինաչափությունները լրիվ չեն բացահայտվում:

Ընդհանուր գծերով այսպիսին է հայ գրականության նախասովետական պատմագրության անցած ճանապարհը:

* * *

Հեղափոխության հաղթանակից հետո սովետահայ գրականագիտության առաջ ծառացավ հայ բազմադարյան գրականությունը նոր մեթոդոլոգիայով լուսաբանելու խնդիրը, առանց, սակայն, հրաժարվելու անցյալի գրականագիտության արժեքավոր ավանդներից: Ժամանակի պահանջն այդ էր թելադրում. ստեղծվում է միջնակարգ դպրոցների լայն ցանց, բացվում են համալսարան և ինստիտուտներ, ուր ավանդվող առարկաների շարքում կարևոր տեղ են գրավում հայոց լեզուն և հայ գրականությունը: Անհրաժեշտ էր բավարարել այդ պահանջը, մինչդեռ դժվար էր միանգամից ստեղծել նորը:

Հայ գրականության պատմության ամբողջական դասընթացը սովետական տարիներին նախապես մշակվում է համալսարանի ամբիոններում: Հայաստանի Պետական համալսարանում հայ գրականության առաջին դասախոսները եղան Մանուկ Աբեղյանն ու Արսեն Տերտերյանը: Առաջինը վարում էր հայ հին և միջին շրջանի գրականության, իսկ երկրորդը՝ նոր շրջանի գրականության դասընթացը: Երկու անվանի գրականագետների դասախոսությունները ժամանակին լույս տեսան առաջադրությունների ձևով և, այսպիսով, այդ հիման վրա էլ ստեղծվեց սովետահայ առաջին գրականության պատմագրությունը: Առարկայի պատմությունն ու տեսությունը նրանց առաջադրություններում, իհարկե, դեռ չէին քննվում մարքսիստական մեթոդոլոգիայի լույսի տակ, դեռ ուղեցույց էին նախորդ պատմագրության սկզբունքներն ու դրույթները, սակայն, առկա էր նոր տեսանկյունով գրականության պատմության հարցերը մեկնաբանելու ձգտումը: Մ. Աբեղյանի «Դասընթացում», օրինակ, ակնառու են հին գրականության բովանդակության, զարգացման օրինաչափությունների, հատկապես XI—XVII դարերի հայ գրականության աշխարհականացման սոցիալական շարժառիթների այնպիսի մեկնաբանություններ, որոնք նորություն են հին գրականության պատմագրության համար:

Նոր գրականության պատմության արժեքների վերագնահատման որոշ փորձեր կան նաև Ա. Տերտերյանի պրակներում՝ մասնավորապես գրականության սոցիալական բովանդակության վերհանման և գրողների աշխարհայացքի բնութագրման ուղղությամբ: Պրակների հեղինակը, սակայն, որոշ տուրք տվեց գռեհիկ սոցիոլոգիզմին, որը խոցելի դարձրեց նրա տեսությունը: Սակայն պետք է նշել, որ անվանի գրականագետը հետագա տասնամյակների իր բեղուն գրչով հաղթահարեց այդ թերությունները և տվեց աշխատություններ, որոնք արժեքավոր են հայ գրականության պատմության գիտական ուսումնասիրման տեսակետից:

Սովետահայ գրականագիտության առաջնահերթ խնդիրն էր հայ գրականության մարքսիստական պատմության ստեղծումը: Անցյալում մենք չենք ունեցել հայ գրականության և հասարակական մտքի պատմության վերաբերյալ մարքսիստական ընդհանրացնող աշխատություններ: Հայ մարքսիստների հոդվածներն ու ասույթները արժեքավոր դրույթներ են պարունակում XIX դարի հայ գրականության և հասարակական մտքի պատմության առանձին ներկայացուցիչների վերաբերյալ, որոնք ելակետային նշանակություն ունեն անցյալի ժառանգության մարքսիստական գնահատման տեսակետից, սակայն դրանք մնում են որպես ասույթներ ու գնահատումներ, իսկ պատմական ընթացքի բարդ օրինաչափությունների վերլուծումը դուրս էր մնում նրանց նպատակադրումից:

1933 թվականին լույս տեսավ «Հայ գրականության պատմության» ծրագրված յոթհատորյակի երկրորդ հատորը, որն ընդգրկում է XIX դարի 30—60-ական թվականների արևելահայ գրականությունը: Սա, ըստ էության, ոչ թե գրականության պատմություն էր՝ գեղարվեստական զարգացման օրինաչափությունների ու գրական դպրոցների բնորոշման անհրաժեշտությամբ, այլ հասարակական հոսանքների յուրատեսակ պատմություն՝ վերջինիս վրա գրողների ստեղծագործության մեխանիկական հարմարեցումով: Իհարկե, չպետք է անտեսել գրականության հասարակական գաղափարայնության մեջ խորամուխ լինելու և գրողների աշխարհայացքի բացահայտմանը հասնելու ձգտումը, որ արտահայտվել է այդ գրքում, բայց ակներև է, որ այս ձգտումը հանգել է խիստ ծայրահեղության և խանգարել գրականության պատմության գիտական, մարքսիստական մեկնաբանությանը:

30-ական թվականների երկրորդ կեսին գռեհիկ սոցիոլոգիզմը գրականագիտության բնագավառում սկսեց տեղի տալ: Մարքսիստական մեթոդոլոգիան քայլ առ քայլ մուտք էր գործում՝ դուրս մղելով դոգմատիզմն ու սխեմատիզմը: Փոխվում է մոտեցումը անցյալի նկատմամբ, կիրառություն է ստանում մարքսիստական այն դրույթը, ըստ որի առանց անցյալի կուլտուրական արժեքների համակողմանի յուրացման հնարավոր չէ ստեղծել նոր, սոցիալիստականը: Այսպիսով, դասական գրականությունը ներկայացավ որպես նորի զարգացման կարևոր գործոն, տրադիցիաների ուսումնասիրությունը դարձավ գրականագիտության գլխավոր հարցերից մեկը: Անհրաժեշտություն դարձավ գրականության գիտական պատմության ստեղծումը: Դրա արտահայտությունն էր 1940—1942 թվականներին Արմֆանի Գրականության և Լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայ գրականության պատմությունը» երեք գրքով: Գրականության պատմության այս ձեռնարկը շատ կողմերով նորություն էր բերում հայ գրականության պատմագրության մեջ: Դա առաջին ձեռնարկն է, ուրեղ ներկայացվում է ամբողջ հայ գրականությունն իր երեք խոշոր շրջաններով՝ Հին, Նոր և Սովետական, ինչպես նաև, փորձ է արվում ընդհանուր պարբերացման ներարկելու հայ գրականության ամբողջ պատմությունը:

եռհատորյակում. ընդհանուր առմամբ, ավելի հաջող է ներկայացված հին և նոր շրջանների գրականությունը և բավականաչափ սխեմատիկ՝ սովետահայ գրականությունը: Անհատի պաշտամունքի հետևանքով ստեղծված ռեպրեսիաները հնարավորություն չտվեցին ներկայացնելու սովետահայ գրականության պատմության իսկական ընթացքը:

Հայ գրականության պատմության եռհատորյակի թերություններն ու անկատարությունները զգալիորեն շտկվեցին հետագա հրատարակություններում, հատկապես երրորդ հրատարակությունում (1954—1955): Ավելի հստակվեց ու կայունացվեց հին և նոր շրջանի գրականության պարբերացումը, ինչպես նաև հնարավորին չափ լուսաբանվեցին սովետահայ գրականության զարգացման օրինաչափությունները:

Սակայն հայ գրականության գիտական պատմության ստեղծումը տակավին մնում էր չլուծված պրոբլեմ: Ստեղծվածը անհրաժեշտ էր միայն մի որոշ սահմաններում: Գրականության պատմությունն այստեղ դեռ ներկայանում է մի որոշ մակարդակով. գրական պրոցեսի, մամուլի, կուլտուրայի պատմության հետ առնչվող բազմաթիվ հարցեր, բազմաթիվ դեմքեր ու երևույթներ դուրս էին մնում հորիզոնից: Տրվում են միայն ամենաընդհանուր օրինաչափությունները, մինչդեռ անհրաժեշտ է պատմությունը ներկայացնել իր մանրամասների, փաստերի ամբողջության, նյութի լիակատար ընդգրկման մեջ: Դրա համար անհրաժեշտ էր գրականագիտական մտքի հասունացում, նյութի հիմնավոր ուսումնասիրություն, փաստերի կուտակում: Թերևս պատահական չէր, որ առաջինը գրվեց հին շրջանի գրականության գիտական պատմությունը և դրա ձեռնարկողը եղավ մի խոշոր գիտնական՝ բազմակողմանի խոր գիտելիքներով, հայ ժողովրդի պատմության ու մատենագրության բազմահմտությամբ, բեղուն գրչի վեց տասնամյակների վաստակով: Դա Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» կապիտալ աշխատությունն է, որի առաջին հատորը լույս տեսավ 1944 թվականին, իսկ երկրորդը՝ 1946-ին: Աբեղյանի աշխատությունը հայ գրականության պատմագրության խոշորագույն նվաճումն էր, որը մի շարք կողմերով այսօր իսկ մնում է չգերազանցված:

Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» արժանիքներից մեկն այն է, որ սինթեզում է գրականության գիտական պատմագրության էական հատկանիշները: Այստեղ հիմնորեն զուգորդվում են փաստերի լայն օգտագործումն ու բանասիրական հետախուզումը, վերլուծումն ու գիտական ընդհանրացումը: Աբեղյանը լայն մասշտաբի վրա դրեց հայ հին գրականության ուսումնասիրությունը, դիտեց այն ժամանակի համաշխարհային գրականության ընդհանուր ֆոնի վրա և ցույց տվեց նրա ազգային առանձնահատկությունը: Իհարկե, հայ հին գրականության պատմության ոչ բոլոր երևույթների գնահատման մեջ է Աբեղյանը հասնում մարքսիստական վերլուծության: Գրքում կան մեթոդոլոգիական առանձին սխալ դրույթներ:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում կատարվեցին հայ գրականության գիտական պատմություն ստեղծելու փորձեր: Կազմվեցին ծրագրեր, ճշտության առարկա դարձան ըստ շրջանների հայ գրականության պատմության սկզբունքները. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը 1946 թվականից ձեռնամուխ եղավ հայ նոր գրականության պատմության վեցհատորյակի ստեղծմանը: Սակայն գործի ընթացքը ցույց տվեց. որ գրականագիտությունը բավարար նախադրյալներ չուներ ի կատար ածելու այդ դժվարին գործը: Բավարար չափով ուսումնասիրված չէր նյութը, չէին լուսաբանված շատ կնճռոտ հարցեր, չկային քիչ թե շատ հիմնավոր ուսումնասիրություններ հայ դասական գրողների վերաբերյալ: Այս բացերի վերացման ու հաղթահարման ուղղությամբ էլ ընթացավ վերջին տասնամյակի հայ գրականագիտական միտքը: Գրականագիտական ուսումնասիրությունների առատությամբ այս տասնամյակն, իրոք, աննախադեպ է հայ գրականագիտական մտքի պատմության մեջ: Լույս տեսան մի քանի տասնյակ մեծ ու փոքր մենագրություններ՝ դասական և սովետահայ գրողների մասին, լուրջ քայլեր կատարվեցին ժանրերի. գրական ուղղությունների և գրական կապերի ուսումնասիրման ուղղությամբ, լայն ծավալ ստացավ դասական գրողների ժառանգության հրատարակումը, զգալի չափով մշակվեցին գրական արխիվներն ու ֆոնդերը:

Խոշոր առաջընթաց կատարվեց նաև հասարակագիտության մյուս բնագավառներում. ուսումնասիրություններ լույս տեսան հայ ժողովրդի պատմության. հայ մամուլի. հասարակական հոսանքների, փիլիսոփայության, տնտեսագիտական մտքի. երաժշտության. թատրոնի, կերպարվեստի պատմության վերաբերյալ: Գրականագիտության և հասարակագիտության բնագավառում կատարված այս նվաճումների հիման վրա է, որ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը. վերջապես. գործնականորեն ձեռնամուխ է լինում հայ գրականության գիտական պատմության աշխատանքներին:

1961 թվականին լույս տեսավ «Սովետահայ գրականության պատմության» երկհատորյակի առաջին գիրքը, որն ընդգրկում է 1920—1930-ական թվականների գրականությունը: Պատրաստվում է և մոտ ապագայում լույս կտեսնի նաև երկրորդ հատորը:

Ընթացքի մեջ է «Հայ նոր գրականության պատմության» հինգհատորյակի հրատարակությունը: Հրապարակի վրա են առաջին և երկրորդ հատորները, մոտակա երկու-երեք տարում հաջորդաբար լույս կտեսնեն նաև մյուս հատորները: Հինգհատորյակը, ըստ նոր գրականության պատմության պարբերացման, ունի հետևյալ ընդգրկումը.

Առաջին հատոր. XVIII դարի վերջին քառորդ և XIX դարի առաջին հիսնամյակ:

Երկրորդ հատոր. XIX դարի 50—60-ական թվականներ:

Երրորդ հատոր. XIX դարի 70—80-ական թվականներ:

Չորրորդ հատոր. XIX դարի 90-ական թվականներ:

Հինգերորդ հատոր. 1900—1920 թվականներ:

Հինգհատորյակը նպատակ ունի ներկայացնել նոր գրականության հնարավորին չափ ընդարձակ, ամբողջական պատմություն՝ գրական շարժման, սոցիալ-քաղաքական կյանքի և կուլտուրական միջավայրի առավել բազմակողմանի կապակցությունների մեջ: Բազմաթիվ են գրական այն երևույթները, դեմքերն ու դեպքերը, որոնք առաջին անգամ են ներկայացվում գրականության պատմության մեջ:

Ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական ու գրական-կուլտուրական շարժումը բնութագրող ընդարձակ ներածականից զատ յուրաքանչյուր հատոր պարունակում է մենագրական գլուխներ, ըստ ժանրերի՝ տեսական ակնարկներ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության (տվյալ շրջանի գրականության յուրահատուկ) առանձին բաժիններ (օրինակ՝ աշուղական պոեզիա, մեմուարային գրականություն և այլն): Յուրաքանչյուր հատորի վերջում տրվում է համապատասխան շրջանի գրականության ժամանակագրությունը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ, ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ ԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

1

Հայաստանը XIV դարի վերջին քառորդում կորցնում է ինքնուրույն պետականությունը և դառնում միմյանց հաջորդող, միմյանցից դաժան ու վայրագ նվաճողներիասպատակությունների ասպարեզ։ Շուրջ հարյուրամյա թուրք-պարսկական պատերազմների հետևանքով, XVII դարի չորրորդ տասնամյակում, հայկական բնօրրանը մասնատվում և ընկնում է ռազմաֆեոդալական Թուրքիայի և Պարսկաստանի անագորույն լծի տակ։ Այդ երկու պետությունների վարչակարգի մեջ արևելյան բռնապետությունը ամենախտացված մարմնավորումն էր ստացել։ «Թե՛ Թուրքիան և թե՛ Պարսկաստանը,— գրում է Լեոն,— ընդգրկած ունեին վարչական այն կարգը, որ մշակել էր Արևելքի բռնապետությունը հնագույն ժամանակներից՝ Ասորեստանի, Եգիպտոսի, Մարաստանի, Աքեմենյան Իրանի աշխարհակալ պետությունների մեջ։ Պետության գլուխը մի շահ, մի սուլթան՝ ամենաբարձր էակն էր, իսկ մնացած ամբողջ ազգաբնակությունը նրա ստրուկն էր, որի կյանքն էլ, գույքն էլ պատկանում էին նրան։ Մի թեթև ակնարկով, մի հատ մատի շարժումով հազարավոր և տասնյակ հազարավոր գլուխներ կարող էին կտրվել առանց որևէ պատասխանատվության»[1]։

Կամայականությունն էր միահեծան թագավորում։ Քրիստոնյա հպատակի, հայի կյանքը կախված էր ոչ միայն սուլթանի, շահի ու նրանց ստորադրյալների, այլև յուրաքանչյուր «ուղղահավատի» քմահաճույքից։ Բազմաստիճան հարկային սիստեմը ժողովրդին մատնել էր տնտեսական ամենաթշվառ վիճակի. «ռայան», քրիստոնյա հպատակը անհաշիվ հարկերի անվան տակ բացարձակ կողոպուտի էր ենթարկվում։ Առևանգումը, հափշտակությունը, բռնաբարությունը, խոշտանգումը, սպանությունը թուրք և պարսիկ նվաճողները «օրինականացրին»՝ դարձնելով իրենց կառավարչաձևի մշտական «մեթոդները»։

---

[1] Գրոֆ. Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մասն Ա. (Ձեռագրից հրատարակված), Երևան, 1926, Պետական համալսարանի ապակետիպ, № 4, էջ 27։

Եվ այդ վիճակը գնալով առավել վատթարացավ, մինչև Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, մինչև հայ ժողովրդի արևմտյան հատվածի՝ համաշխարհային պատմության մեջ աննախադեպ կոտորածն ու բռնի տեղահանումը իր պատմական բնօրրանից։

Անիի թագավորության անկումից հետո սկսված արտագաղթը հետագա դարերում դառնում է սովորական և լայն չափեր է ընդունում։ Հայ ազգաբնակչության առանձին հատվածներ, դաժան նվաճողների ճնշումներից, սովամահության և ֆիզիկական ոչնչացման մշտական սպառնալիքներից ազատվելու համար, հարկադրված թողնում են հայրենի երկիրը՝ կյանքի և գույքի ապահովություն որոնելու օտար հորիզոնների տակ։ Հայ ժողովրդի ամբողջությունը խախտվում է, կոտորակվում։ Արտագաղթի հետևանքով առաջ են գալիս հայկական գաղութներ Լեհաստանում (Լվով), Հոլանդիայում (Ամստերդամ), Հնդկաստանում (Մադրաս, Կալկաթա), Ռուսաստանում (Աստրախան, Նոր-Նախիջևան) և այլուր։

Այսպիսի մասնատման հետևանքով հայ ժողովրդի տնտեսական, հասարակական կյանքը ընթացավ անհամաչափ զարգացման ուղիով։ Այն ժամանակ, երբ հայկական բնաշխարհում թուրք-պարսկական ռազմա-ֆեոդալական պետությունների կապարյա լծի տակ ճնշված հայ ժողովուրդը ապրում էր ասիական փակ տնտեսության կացութաձևի պայմաններում, համաշխարհային առևտրի բանուկ ճանապարհների վրա գտնվող հայկական գաղութներում սկսեց զարգանալ առևտրական կապիտալը և վերջինիս տնտեսական հիմքի վրա՝ հայ կուլտուրան. հիմնվեցին դպրոցներ, տպարաններ, մամուլ։

Հայ ժողովուրդը մասնատվեց, կոտորակվեց, բայց չկորվեց։ Օտար նվաճողները չկարողացան, և չէին էլ կարող ընկճել կուլտուրապես անհամեմատ բարձր կանգնած, դարերի ընթացքում իր հարուստ գրականությունն ու պատմագրությունը, իր հերոսական էպոսը և ուրույն ազգային ճարտարապետությունն ստեղծած ժողովրդի ստեղծագործական կորովը, նրա ազատատենչ ոգին։

XVII դարի երկրորդ կեսից սկսած Հայաստանի տարբեր մասերում բռնկում են ժողովրդական ապստամբություններ թուրքական և պարսկական բռնակալությունների դեմ։ Ժողովրդի ազատագրական այդ ճիգերը, ընդվզումները անհաջողության են մատնվում, սակայն իսպառ չեն դադարում։ Մերթ ընդ մերթ նրանք կրկին բորբոքվում են։

Թուրք-պարսկական լուծը թոթափելու անհրաժեշտությունն զգում են ոչ միայն ժողովրդական լայն զանգվածները, այլև վերնախավերը։ Հայ քաղաքական գործիչները ծրագրեր են մշակում՝ եվրոպական պետությունների և Ռուսաստանի օգնությամբ վերականգնելու հայկական ինքնուրույն պետականությունը։ Այդ ուղղությամբ դեռևս XVI դարի 40—60-ական թվականներին արված առաջին փորձերը ավելի մեծ եռանդով վերսկսվում են XVII դարի վերջին քառորդում։ 1678 թվականին Էջմիածնի գաղտնի ժողովում ընտրված պատվիրակությունը վրաց Գիորգի XI թագավորի հետ ծրագիր է մշակում՝ համատեղ ջանքերով պարսկական լուծը թոթափելու

վերաբերյալ, սակայն ծրագիրը չի գործադրվում: Պարսկաստանի դեմ վրաց անհաջող ապստամբության հետևանքով: Պատվիրակությունը ցրվում է, բայց նրա միսիան իր վրա է վերցնում XVII—XVIII դարերի հայ ազատագրական շարժման ամենաականավոր և եռանդուն գործիչներից մեկը՝ Իսրայել Օրին: Ավելի քան տասնամյա բանակցությունները եվրոպական պետությունների հետ նրան բերում են այն եզրահանգման, որ հայ ժողովուրդն իր ազատագրական պայքարում իրական օգնություն կարող է ստանալ միայն Ռուսաստանից[1]: Այնուհետև, ամբողջ XVIII դարում, և հետագայում ևս, հայ ազատագրական շարժման հիմնական քաղաքական գիծը դառնում է ռուսական օրիենտացիան: Իսրայել Օրուց հետո այդ ուղեգիծն իրենց գործունեության առանցքն են դարձնում հայ քաղաքական մտքի գրեթե բոլոր ներկայացուցիչները՝ Հովսեփ Էմինը և ուրիշներ[2]:

Անկախ բանակցությունների անհաջող ելքից, որոնք պայմանավորված էին, մեծ մասամբ, Ռուսաստանի համար ստեղծված ոչ նպաստավոր քաղաքական իրադրությամբ,— հայ ժողովուրդը մերթ Արևելյան Հայաստանում, մերթ Արևմտյան Հայաստանում, ապավինած սեփական ուժերին, շարունակում էր իր անհավասար, հերոսական պայքարը թուրք-պարսկական բռնակալությունների դեմ: Այդ պայքարի ամենափառավոր դրվագը եղավ Դավիթ-Բեկի ապստամբությունը Սյունիքում՝ XVIII դարի 20-ական թվականներին:

1768—1774 թվականների ռուս-թուրքական պատերազմների շրջանում առաջ են գալիս նոր հույսեր ու ակնկալություններ, և հայ ազատագրական շարժումը նոր ազդակներ է ստանում: Այդ հույսերն ու ակնկալություններն իրենց արտահայտությունն են գտնում Մովսես Սարաֆյանի նախագծում (1769), որը հանգում էր Ռուսաստանի հովանավորության տակ հայկական պետականության վերականգնման գաղափարին:

Մոտ երկու դար տևող հայ ազատագրական շարժումը XVIII դարի 70—80-ական թվականներին ստեղծում է և իր գաղափարախոսությունը, որի առավել ցայտուն, խտացված արտահայտություններն են հանդիսանում հնդկահայ լուսավորիչներ Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» (1772) և Շահամիր Շահամիրյանի «Գիրք անուանեալ Որոգայթ փառաց» (1773) երկերը, երկուսն էլ տպագրված Մադրասում:

Լեոն իրավամբ Մ. Բաղրամյանին համարում է հայ քաղաքական գրականության հիմնադիր: «Նոր տետրակը» ամբողջությամբ տոգորված է ազատագրական պայքարի գաղափարով, Հայաստանի քաղաքական վերածնության վառ հավատով: Նա հույս է ներշնչում, որ մոտ է հայկական աշխարհի արևի ծագումը և շուտով դժնդակ ձմռանը հաջորդելու է մանուշակաբեր գարունը: «Երանի՜ թե,— ասում է Բաղրամյանը,— հայերը կա-

[1] Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959:

[2] Տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945: Նույն հեղինակի՝ Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947.

րողացած լինեին նահատակվել իրենց հայրենիքի փրկության համար... Պետք է, որ ազգի մի մասը մյուս մասի համար գլուխ դներ, քան թե թույլ տար, որ ամբողջ ազգը ծառա և ստրուկ դառնար օտարին... Ուրեմն պետք է աշխատել, պետք է զենք ունենալ, վարժվել նրա գործածության մեջ։ Ոչ ոք չպիտի իրեն անկարող համարի... Անդադար հորդորեցեք առույգ մանուկներին և երիտասարդներին, որ արի լինեն. եթե ո՛չ դուք, ձեր սերունդները գուցե արժանանան իրենց սեփական ժառանգության»[1]։



Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» գրքի անվանաթերթը

«Նոր տետրակի» հեղինակը անհրաժեշտ է համարում հայոց պատմության ուսուցումը և եվրոպական քաղաքակրթության, լուսավորության տարածումը, առաջինը կնպաստի ազգային ինքնաճանաչմանը, երկրորդը հող կնախապատրաստի՝ ազատագրական պայքարի գաղափարների ընկալման, արմատավորման համար։

Եթե Մ. Բաղրամյանը մատնանշում էր հայկական ինքնուրույն պետականության նվաճման ուղիները և ազատագրական պայքարի էր կոչում, ապա Շ. Շահամիրյանն իր գրքով ներկայացնում էր ապագա Հայաստանի պետական կառուցվածքի և օրենսդրության նախագծերը՝ սրանց հիմքում դնելով մարդու և քաղաքացու ազատության սկզբունքը՝ վերջինս ամեն ինչից գերադաս համարելով. «...Ո՛չ գոյ ի յերեսս երկրի ոչ ոք առաւել քաղցրութիւն ի թոշակս մարդոյ քան թէ ազատութիւն»[2], գրում է «Որոգայթ փառացի» հեղինակը։ Շահամիրյանը ապագա Հայաստանում նախատեսում է հանրապետական համակարգ, ուր ժողովուրդն ինքն է տնօրինում իր բախտը («Ազգն հայոց բոլորովին լինիցին թագաւոր»)։

Մ. Բաղրամյանի և Շ. Շահամիրյանի երկերում — հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունն արտացոլող այդ երկու նշանակալից վավերագրերում — յուրովի արձագանք են գտել ֆրան-

---

1 Լեո, *Հայոց պատմություն, հատ. երկրորդ, 1946, Երևան, էջ 1027—1028։*

2 *«Գիրք անուանեալ Որոգայթ փառաց», Թիֆլիս, 1913, էջ 138։*

սիական բուրժուական մեծ ռևոլյուցիան նախապատրաստող լուսավորիչների գաղափարները։ Այդ վավերագրերը, ինչպես իրավամբ դիտված է[1], ազդարարում են հայ հասարակական մտքի պատմության մի նոր շրջափուլի սկիզբը XVIII դարի վերջին քառորդում՝ կապիտալիստական հարաբերությունների զարգացման հիմքի վրա։

Շահամիր Շահամիրյան

Հնդկահայ գաղութի բուրժուական միջավայրում ծնունդ առած հիշյալ ծրագրային երկերի նշանակությունը բնավ էլ չի սահմանափակվում այդ գաղութի շրջանակներում։

Գանգեսի և Դոնի, Արաքսի և Նևայի ափերին ապրող, միմյանցից հազարավոր կիլոմետրերով բաժանված հայության հատվածներին,— գոյություն ունեցող բոլոր տարբերություններից անկախ,— միացնում էր ազգային ազատագրության, ինքնուրույն պետականության ստեղծման գաղափարը։

Հայկական գաղութներում՝ համաշխարհային առևտրական ճանապարհներին գտնվող մեր տնտեսական-կուլտուրական կյանքի այդ կենտրոններում է, որ առաջինն արձագանք են գտնում ժամանակի քաղաքական խոշորագույն իրադարձությունները։

XVIII դարի վերջին քառորդում սկզբնավորվող լուսավորական շարժման համար, անտարակույս, զորեղ ազդակներ են հանդիսացել ո՛չ միայն հայկական բնաշխարհում օտար նվաճողների դեմ մերթ ընդ մերթ բռնկող ապստամբությունները, այլև ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիան, անգլիական գաղութակալության լուծը թոթափելու ձգտող հնդիկ ժողովրդի հերոսական մարտերը։

Հայկական լուսավորականությունը, որի քաղաքական բովանդակությունը ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունն էր, սկսվելով Բաղրամյանից և Շահամիրյանից, հասնում է մինչև Թաղիադյան

---

1 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մասն ա. (ձեռագրի իրավունքով), Երևան, 1926, էջ 9։ Թադ. Ավդալբեգյան, Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայոց ինքնավարությունը 18-րդ դարում, «Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի», 1929, № 4, էջ 39։ Գ. Հ. Գրիգորյան, Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից, 1957, էջ 5—6։ В. К. Чалоян, История армянской философии, 1959, էջ 341—342։

և Աբովյան՝ վերջինիս ստեղծագործության մեջ բարձրանալով զարգացման նոր աստիճանի։

Հնդկահայերը, ի դեմս իրենց քաղաքական գործիչների, ակնդետ հետևում էին Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին,



Հայ կամավորական ջոկատի դրոշակը

հայ-ռուսական դիվանագիտական բանակցություններին։ Ուշագրավ փաստ է, որ XVIII դարի 80-ական թվականների սկզբներին Շ. Շահամիրյանը Հովսեփ Արղության-Երկայնաբազուկին է ուղարկում հայ-ռուսական դաշնագրի և ապագա Հայաստանի նախագիծը՝ ռուսական կառավարությանը ներկայացնելու համար։ Ճորտատիրական-ցարական Ռուսաստանի կառավարությունը մերժում է Հայաստանի համար հանրապետական կարգեր երազող հնդկահայ գործչի խիզախ ծրագիրը։ Խափանվում է նաև «Որոգայթ փառացը» Ռուսաստանում հրատարակելու մտադրությունը[1]։ Ցարական կառավարության նպատակներից դուրս էր ոչ միայն հանրապետական Հայաստանը, այլև, անկախ պետական վարչաձևից, ինքնուրույն հայկական պետականություն ստեղծելու գաղափարը։

1 Տե՛ս Աս. Մնացականյան, XVIII դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի», 1958, N 4։

XIX դարը սկսվում է Անդրկովկասի ժողովուրդների համար պատմական մեծ իրադարձություններով. դարասկզբին Ռուսաստանին է միանում Վրաստանը, նաև Հյուսիսային Հայաստանի՝ Լոռու, Փամբակի, Ղազախի շրջանները: 1804—1813 թվականների ռուս-պարսկական պատերազմների հետևանքով հետզհետե ռուսական տիրապետության տակ են անցնում Անդրկովկասի մի շարք շրջանների հետ՝ Արևելյան Շիրակը, Զանգեզուրը, Շամշադինը. Գյուլիստանի դաշնագրությամբ վավերացվում է Ղարաբաղի, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Դերբենդի, Ղուբայի, Թալիշի խանությունների միացումը Ռուսաստանին: Ավելի ուշ՝ 1827 թվականին տեղի է ունենում Երևանի և Նախիջևանի խանությունների միացումը:

Ռուսական բանակի հաղթական մուտքը Երևան Նկ. Ֆ. Ռուբոյի)

Ինչպես նախորդ տարիների, այնպես էլ, հատկապես 1826—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմի ընթացքում հայերը չերմ աջակցություն են ցույց տալիս ռուսական բանակին: Ներսես Աշտարակեցու և Հար. Ալամդարյանի գործուն մասնակցությամբ կազմակերպվում է հայ կամավորական ջոկատը («Հայոց զորք»): Իր գրավոր և բանավոր կոչերով Ներսես Աշտարակեցին ժողովրդին ոգևորում է մոտալուտ հաղթանակի հեռանկարով և ինքն էլ ռուսական բանակի և հայկական կամավորների հետ մեկնում է ռազմաճակատ: Մարտական գործողությունների մեջ ռուս զինվորների հետ կողք-կողքի արիաբար մարտնչում են նաև հայ կամավորները:

Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից ցնծություն է առաջ բերում հայության բոլոր հատվածներում, մանավանդ Թիֆ-

կահայ գաղութում. Կալկաթայում բազմամարդ ժողով է գումարվում, ուր Թաղիադյանը ճառ է արտասանում «Ի վերայ ազատութեան հայոց աշխարհին»։ Դիմելով ժողովականներին, նա ասում է. «Ո՞ր վերին իմն զօրութիւն, ազգ ազնիւ, ո՞ր աստուածահրաշ սքանչելիք, կամ ո՞ր ներքին մղումն երանութեան շարժեաց զձեզ առհասարակ ի հանդէս հասարակաց խնդության, բայց եթէ անակնկալ աւետիք ազատութեան աշխարհի բնիկ հայրենեաց ձերոց...»։ Ապա կոչ է անում գնալ ազատագրված հայրենիք. «Եկա՛յք եղջուք ի Հայաստան, համբուրեսցուք զուարճախառն արտասուօք զփրկեալ հող հայրենեաց մերոց...»[1]։ Ժողովականները 105 ստորագրությամբ ողջույնի նամակ-հանրագիր են ուղարկում Ներսես Աշտարակեցուն։ Նման հանրագիր ուղարկում են նաև Մադրասի հայերը. «Երանի՜ է աչաց ձերոց, երանի՜ այնոցիկ որք տեսանենն զգալի տեսանելեօք զանկարծահաս փրկութիւն մերոցս Հայրենեաց, զի եթէ միայն ի յիշատակ բերկրականին զուարճանամք մեք այսքան, քանիօ՞ն ապա և ի տեսանելն և ի վայելելն զնա արդեամբ...»[2]։

Իրենց խնդակցության հետ միաժամանակ տարագիր հայության հատվածները հույս են հայտնում մի օր ընթեռնելու ամբողջ հայրենիքի և ազգի ազատագրության ավետավոր լուրը։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ոչ միայն ապահովում է հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը, այլև նախադրյալներ ու պայմաններ է ստեղծում հասարակական-կուլտուրական զարգացման համար։ Սակայն վերջինս շատ դանդաղ է տեղի ունենում. Կալկաթայի, Մադրասի, ինչպես և Նոր-Նախիջևանի, Մոսկվայի, Պետերբուրգի հայ գաղութների համեմատությամբ հայկական բնաշխարհը կուլտուրական զարգացման տեսակետից հետ էր մնում 4—5 տասնամյակով։

Այդ տարբերությունները ու զիգզագները հաշվի առնելով հանդերձ, հայ նոր գրականության սկզբնավորման ու ձևավորման օրինաչափությունները անհրաժեշտ է դիտել ամբողջության մեջ, ելնելով հայկական գաղութների և բնաշխարհի ստեղծած արժեքների հանրագումարից։

Այսպես մոտենալով խնդրին, հայ նոր գրականության սկիզբը պետք է ընդունել XVIII դարի վերջին քառորդը, երբ հնդկահայ գաղութում կապիտալիստական հարաբերությունների զարգացման հիման վրա սկսում է ձևավորվել բուրժուական լուսավորականությունը և նրա հիմնական բովանդակությունը կազմող՝ հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը։

Հայ հասարակական մտքի, գրականության պատմության և, ընդհանուր առմամբ՝ հայ ժողովրդի պատմության այդ նոր շրջափուլը համընկնում է ֆրանսիական բուրժուական մեծ ռևոլյուցիայի դարաշրջանին, որը, Լենինի բնորոշմամբ, «ընդհանրապես բուրժուա-դեմոկրատական

[1] «Ցուցակ վասն ամի տեառն 1829, տպագրեալ ի գործատան Մարդասիրական Ճեմարանի», ի Կալկաթա, էջ 76—84։

2 Լեո. Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 106։

շարժումների, մասնավորապես՝ ազգային-բուրժուական շարժումների դարաշրջանն է»[1], երբ սկսվում է «Մասսաների արթնացումը ֆեոդալական քնից, նրանց պայքարն ամեն մի ազգային ճնշման դեմ՝ ժողովրդի սուվերենության համար, ազգի սուվերենության համար»[2]։

Այդ նաև հայ ժողովրդի ազգային զարթոնքը, ազգային-ազատագրական շարժումների սկիզբը ազդարարող դարաշրջանն է։

2

Արտասահմանի հայ գաղութներում, ինչպես նաև Ռուսաստանի և Անդրկովկասի հայաբնակ կենտրոններում XVIII դարի վերջին քառորդից սկսվող բուրժուական հարաբերությունները նախադրյալներ են ստեղծում հայ կուլտուրայի զարգացման համար։

Նախորդ տասնամյակների և մանավանդ XVII դարի համեմատությամբ ակներև է առաջընթացը կուլտուրայի գրեթե բոլոր բնագավառներում։ Կուլտուրական կյանքի հիմնական գործոնները՝ տպագրությունը, դպրոցը, պարբերական մամուլը, արվեստները (հատկապես՝ թատրոնը), հայագիտությունը բարձրացնում են հասարակական գիտակցությունը, ազգային ինքնաճանաչությունը, նպաստում են գրականության զարգացմանը։ Այդ ժամանակաշրջանից առաջ է գալիս աշխարհական մտավորականությունը։

Հայկական տպագրությունը, որ սկսվել էր Գուտենբերգի հանճարեղ գյուտից շուրջ կես դար հետո (1512), XVIII դարում, մանավանդ դարի երկրորդ կեսից, բուռն զարգացում է ապրում։ Վենետիկի (1512), Պոլսի (1567), Նոր-Ջուղայի (1640), Ամստերդամի (1660) տպարաններից հետո տպարաններ են հիմնվում Զմյուռնիայում (1762), էջմիածնում (1771), Մադրասում (1772), Տրիեստում (1775), Պետերբուրգում (1780), Նոր-Նախիջևանում (1789), Կալկաթայում և Աստրախանում (1796), Վիեննայում (1811), Մոսկվայում (1820), Թիֆլիսում (1823), Շուշիում (1827), Վարդում (1854)։

XVII դարի համեմատությամբ XVIII դարում տպագրված գրքերի քանակը քառապատկվում է՝ 128-ի փոխարեն լույս է տեսնում 523 անուն գիրք[3]։

Տարբերությունը տպագրված գրքերի ո՛չ միայն քանակի, այլև նրանց բնույթի, բովանդակության մեջ էր։ Եթե XVI, XVII դարերում և XVIII դարի առաջին հիսնամյակում գրականությունը, սակավ բացառությամբ, կրոնական, եկեղեցա-ծիսական բնույթ էր կրում («Աստուածաշունչ», «Ավետարան», «Սաղմոս», «Վարք սրբոց», «Աղոթագիրք», «Ժամակարգութիւն», «Պատարագամատոյց» և այլն), ապա XVIII դարի երկրորդ կեսից նշանակալի չափով սկսում է աճել պատմագրական, աշխարհագրական-տեղա-

---

1 Վ. Ի. ԼԵՆԻՆ, *Երկեր, 4-րդ հրատ., հատ. 21, էջ 173։*

2 Վ. Ի. ԼԵՆԻՆ, *Երկեր, 4-րդ հրատ., հատ. 20, էջ 23։*

3 *Տե՛ս* Լեո. *Հայոց պատմություն, երրորդ հատոր, Երևան, 1946, էջ 937։*

գրական, լեզվագիտական, գիտական, գեղարվեստական (ինքնուրույն և թարգմանական) գրքերի քանակը։

Ուշագրավ է միջնադարյան Հայաստանի կուլտուրայի հուշարձանների, առավելապես մատենագիրների և պատմիչների հրատարակության փաստը։ Տպագրվում են Գրիգոր Նարեկացու երկերը (1827 և 1840 թվականներին՝ Վենետիկում), Մխիթար Գոշի առակները (1790 և 1842 թվականներին՝ Վենետիկում). Ներսես Շնորհալու «Գիրք, որ կոչի ընդհանրական» Պետերբուրգի 1788 թվականի տպագրությունից հետո XIX դարի առաջին տասնամյակներում հրատարակվում է երեք անգամ (Պոլիս, 1825, Վենետիկ, 1830 և 1838). «Որբ Եդեսիոյ» պոեմը նույնպես արժանանում է երեք հրատարակության (Մադրաս, 1810, Փարիզ, 1828 և Թիֆլիս, 1829)։

ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ

ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑՒՈՅ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1843 ՌՄՂԲ

Մ. Խորենացու «Հայոց պատմության» 1843 թ. հրատարակության անվանաթերթը

Վարդան Այգեկցու հատընտիր առակները ֆրանսերեն թարգմանությամբ լույս են տեսնում 1825 թվականին Փարիզում։

Հրատարակվում են նաև վաղ միջնադարի հայ փիլիսոփայության երկու ականավոր ներկայացուցիչների՝ Եզնիկ Կողբացու և Դավիթ Անհաղթի երկերը («Գիրք ընդդիմութեանց», Իզմիր, 1762, նույնը՝ Վենետիկ, 1826, 1850 և «Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք», Վենետիկ, 1833)։ 1832 թվականին Վենետիկում լույս է տեսնում XII դարի հայ բժշկության նշանավոր դեմքերից մեկի՝ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւնը»։ Նույն ժամանակաշրջանում, հատկապես XIX դարի 20—50-ական թվականներին համեմատաբար ավելի մեծ քանակ են կազմում հայ պատմագիրների հրատարակությունները. Ագաթանգեղոս (Վենետիկ, 1822, 1835), Մովսես Խորենացի (Վենետիկ, 1827, 1843, հայ-ֆրանսերեն լեզուներով՝ Վենետիկ, 1841, նույնը՝ Փարիզ, 1845), Կորյուն (Վենետիկ, 1833, 1854), Եղիշե (Պետերբուրգ, 1787, Կալկաթա, 1816, Պոլիս, 1823, Վենետիկ, 1828 և 1838), Փավստոս Բյուզանդ (Վենետիկ, 1832), Ղազար Փարպեցի (Վենետիկ, 1793, Մոսկվա, 1853), Սեբեոս (Պոլիս, 1851), Զենոբ Գլակ (Վենետիկ, 1832), Հովհան Մամի-

կոնյան (Վենետիկ, 1832), Հովհաննես Դրասխանակերտցի (Երուսաղեմ, 1843, Մոսկվա, 1853), Թովմա Արծրունի (Պոլիս, 1852), Մեսրոպ Երեց (Մադրաս, 1775), Արիստակես Լաստիվերտցի (Վենետիկ, 1844), Հեթում Պատմիչ (Վենետիկ, 1842), Աբրահամ Կրետացի (Կալկաթա, 1796), Եսայի կաթողիկոս Աղվանից (Շուշի, 1839)։

Մատենագիրների և պատմիչների երկերի հետ միաժամանակ տպագրվում են նաև պատմական, աշխարհագրական և տեղագրական ուսումնասիրություններ Հայաստանի և աշխարհի հին ու նոր ժողովուրդների ու երկրների վերաբերյալ։ 1784—1786 թվականներին լույս է տեսնում Միքայել Չամչյանի (1738—1823) եռահատոր «Հայոց պատմությունը», որը կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի պատմության հետագա ուսումնասիրության և մրշակման գործում։ Միք. Չամչյանն առաջինն էր, որ հայ պատմիչների տպագրված և անտիպ երկերի, ինչպես և հունա-հռոմեական պատմագրական աղբյուրների հիման վրա, նրանց համեմատական քննությամբ փորձեց շարադրել հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի 80-ական թվականները։ Փաստական հսկայական նյութ պարունակելով և երկար տասնամյակներ ծառայելով որպես հայոց պատմության ամենահեղինակավոր ձեռնարկ, Չամչյանի աշխատությունը ուներ էական թերություններ, որոնք հատուկ էին Մխիթարյանների պատմագիտական հետազոտություններին ընդհանրապես, և որոնց վրա իր ժամանակին ուշադրություն է հրավիրել Միք. Նալբանդյանը. «...Այսպիսի գրքերի կարգում են և՛ Չամչյան «Հայոց պատմություն» ասված հատորները, ուր Հազկերտներ, Լանկթամուրներ, Թաթարներ, Հույներ և այլ օտար ազգեր ավերում են Հայաստանը այն պատճառով, որ աստված բարկացել էր Հայաստանի վրա, առանց մեջ բերելու քաղաքական պատճառները, առանց կրիտիկոսի աչքով գնահատելու որևիցե իրողություն ազգային կյանքի մեջ»[1]։



Մ. Չամչյանի «Պատմութիւն հայոց» գործի առաջին հատորի անվանաթերթը

[1] Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. II, Երևան, 1947, էջ 222։*

Հայաստանի աշխարհագրության, տեղագրության և հնագիտության վերաբերյալ լույս են տեսնում մի շարք հետազոտություններ, որոնցից կարևորագույններն են՝ Ղ. Ինճիճյանի «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» (Վենետիկ, 1822), նույն հեղինակի՝ «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհին», հ. հ. I—III (Վենետիկ, 1835), Հովհ. Շահխաթունյանցի «Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» (էջմիածին, 1842), Ղ. Ալիշանի «Տեղագիր հայոց մեծաց» (Վենետիկ, 1855) և մի շարք ուրիշները։


ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Ա—Կ

1836

«Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» առաջին հատորի անվանաթերթը

Լայն ծավալ է ստանում նաև հայոց լեզվի բառապաշարի հավաքման և հրատարակության, հայերենի քերականության ուսումնասիրության գործը։

1784 թվականին ձեռնարկված Գաբր. Ավետիքյանի, Խաչ. Սյուրմելյանի և Մկրտիչ Ավգերյանի երկհատոր «Նոր Հայկազյան բառարանը» հրատարակվում է 1836—1837 թվականներին Վենետիկում, մեկ տասնամյակ հետո նաև՝ Մկրտիչ Ավգերյանի «Առձեռն բառարանը» (Վենետիկ, 1846)։ Հինգերորդ դարից մինչև XIX դարի առաջին տասնամյակները՝ հայոց բազմադարյան լեզվի գրեթե ողջ բառապաշարն ընդգրկող այս բառարանները մեծապես նպաստեցին հայերենի հետագա ուսումնասիրությանն ու զարգացմանը։ Հայոց լեզվի բացատրական բառարաններ կազմվում էին նաև հայ կուլտուրայի այլ կենտրոններում. դրանցից կարևորագույնն է Գրիգոր Փեշտմալճյանի գործը («Բառգիրք Հայկազեան լեզուի», Կ. Պոլիս, 1841). բառարաններ էին տպագրվում դպրոցական գործածության համար, ինչպիսին է 1830 թվականին Շուշիում լույս տեսած՝ Հովսեփ Արցախեցու գիրքը՝ «Համառօտ բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառն, ի պէտս համբակաց»։

Գրաբարի բազմաթիվ քերականություններից առավելապես տարածված էին Միք. Չամչյանի (1801), Գաբր. Ավետիքյանի (1815), Գր. Փեշտմալճյանի (1829) և Արս. Բագրատունու (1852) աշխատությունները։

Եվրոպական և ռուսական կուլտուրայի յուրացման գործում նշանակալի դեր է կատարում բառարանագրությունը, որը նույնպես զարգացման աննախընթաց շրջան է ապրում XIX դարի առաջին տասնամյակներին.

Հետագայում լույս են տեսնում Մ. Ջախջախյանի իտալերեն-հայերեն-տաճկերեն (1804), Հ. Ավգերյանի անգլիերեն-հայերեն և հայերեն-անգլիերեն (1821, 1825), Ա. Ազարյանի հունարեն-իտալերեն-հայերեն-տաճկերեն (1848) բառարանները, ինչպես և գերմաներենի, իտալերենի, ֆրանսերենի, անգլերենի քերականության ձեռնարկները։

Դեռևս 1788 թվականին Պետերբուրգում հրատարակվում է Գրիգոր Խալդարյանի հայ-ռուս բառարանը, այնուհետև լույս են տեսնում Հար. Ալամդարյանի ռուս-հայ (Մոսկվա, 1821) և Ալ. Խուդաբաշյանի երկհատոր հայ-ռուս (Մոսկվա, 1838) բառարանները։

Հայ պատմագրության և հին գրականության հուշարձանների հրատարակությունը, հայոց լեզվի (գրաբարի) բառապաշարի հավաքումը և ուսումնասիրությունը ստեղծում են անհրաժեշտ այն նախադրյալները, որոնք խթանում են հայագիտության զարգացմանը Ռուսաստանում և Եվրոպայում։

1809 թվականին Պետերբուրգում լույս է տեսնում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» ռուսերեն՝ Հովսեփ Հովհաննիսյանի թարգմանությամբ։ 1831—1833 թվականներին ռուս պատմաբան Ս. Ն. Գլինկան հրատարակում է «Հայ ժողովրդի պատմության տեսությունը»՝ երկու մասից[1]։



Գ. Խալդարյանի հայ-ռուս բառարանի անվանաթերթը

Հրապարակվում է Արևելյան Հայաստանի նոր պատմության համար փաստական հարուստ նյութ բովանդակող եռահատոր «Վավերագրերի ժողովածուն»[2] և Ի. Շոպենի վիճակագրական նշանավոր ուսումնասիրությունը[3]։ 1840-ական թվականներից Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում հիմք է դրվում արևելյան լեզուների, այդ թվում և հայերենի ուսումնասիրությանը. 1842 թվականին Կազանի համալսարանում բացվում է հայոց լեզվի ամբիոն. 1845 թվականին Պետերբուրգի համալսարանում հայագետ Մկ. Բերոյանի (Ն. Բերոյև) ջան-

[1] *Տե՛ս* *С. Н. Глинка*, Обозрение истории армянского народа, ч. I, 1831; ч. II, 1833.

[2] *Տե՛ս* „Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа", М., чч. I—III, 1833—1838.

[3] *Տե՛ս* *И. Шопен*, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, С.-Петербург, 1852.

քերով կազմակերպվում է հայ-վրաց-թաթարական (ադրբեջանական) լեզուների ամբիոն, որը 1855 թվականին վերածվում է արևելյան լեզուների ֆակուլտետի, ուր հիշյալ երեք լեզուներից յուրաքանչյուրին հատկացվում է առանձին ամբիոն։

Կազանի համալսարանում պաշտոնավարելիս Ստ. Նազարյանը գրում և հրատարակում է հայ գրականության պատմությանը նվիրված իր երկու աշխատությունը՝ ռուսերեն[1]։

1853 թվականին Թիֆլիսում Պ. Շանշյանը տպագրում է Եղիշեի «Պատմությունը» ռուսերեն թարգմանությամբ և առաջաբանով։ Ուշագրավ է, որ հայ պատմագրության կլասիկ երկերից մեկի այդ թարգմանությանը անդրադառնում են ժամանակի ռուսական առաջավոր մամուլի երկու օրգանները՝ «Отечественные записки» (1853, հ. LXXXIX) և «Современник» (1854, հ. XLIII)։

Մոսկվայում, 50-ական թվականների սկզբից հայագիտության բնագավառում բեղմնավոր գործունեություն է ծավալում Լազարյան ճեմարանի սան և ապա երկարամյա ուսուցիչ Մկրտիչ Էմինը (1815—1890)։ Նրա պատմաբանասիրական բազմաթիվ ուսումնասիրությունները (մեծ մասամբ ռուսերեն), հայ պատմիչների երկերի քննական հրատարակությունները առաջ են մղում հայագիտության զարգացումը Ռուսաստանում։ 1850 թվականին Մոսկվայում լույս է տեսնում Մ. Էմինի «Վէպք հնոյն Հայաստանի» հետազոտությունը, ուր քննության առնելով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ բերված հայկական հնագույն առասպելները, այն կարծիքն է հայտնում, թե դրանք նախապես մի ամբողջություն են կազմել։ Էմինի աշխատությունը պետք է գնահատվի որպես հայ ժողովրդական բանա-



Մ. Էմինի «Վէպք հնոյն Հայաստանի» աշխատության անվանաթերթը

---

[1] Տե՛ս «Беглый взгляд на историю Гайканской литературы до конца 13-го столетия», Ученые записки, издаваемыя Импер. Казанским Университетом, 1844, кн. I.

«Обозрение истории Гайканской письменности в новейшия времена», Казань. 1846.

հյուսության գիտական ուսումնասիրության հիմնաքարերից մեկը XIX դարի առաջին կեսին։

Քառասնական թվականների երկրորդ կեսից և 50-ական թվականների սկզբից հիմք է դրվում հայ ժողովրդական բանահյուսության, միջնադարյան և ժամանակակից երգերի, աշուղական ստեղծագործությունների հրատարակության և ուսումնասիրության գործին։ 1852 թվականին Ղ. Ալիշանը տպագրում է իր «Հայոց երգք ռամկականք» (հայերեն և անգլերեն). Նույն թվականին Գևորգ Ախվերդյանի (1818—1861) ընդարձակ առաջաբանով և ծանոթագրություններով լույս է տեսնում Սայաթ-Նովայի երգերի ժողովածուն[1]։

Գ. Ախվերդյանն ավարտել էր Լազարյան ճեմարանը և Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը. 40-ական թվականներին ապրելով Պետերբուրգում, ոգևորվել էր ժամանակի առաջավոր գաղափարներով, հակա-ճորտատիրական, բուրժուա-դեմոկրատական ձգտումներով. Թե՛ Ռուսաստանում, թե՛ Կովկասում, մոտիկից շփվելով ժողովրդի հետ, սկսել էր ուսումնասիրել նրա նյութական կյանքի պայմանները, լեզուն, բանահյուսությունը, ժողովրդից սիրված «խալխի նոքար» գուսանների ստեղծագործությունները, որոնցից, ինչպես գրել է «Սայաթ-Նովայի» առաջաբանում, «ավելի ենք նկատում ազգային հոգին ու ոճն, քան թե պատմագրական հաստ-հաստ գրքերիցն»։ Ինչպես երևում է նույն առաջաբանից, Գ. Ախվերդյանն ավելի լայն ծրագիր է ունեցել. «Կու՛գի մի քանի տարի (ուրեմն՝ քառասնական թվականների երկրորդ կեսից —Ա. Ի.) հավաքում եմ կենդանի աղբյուրից հանած կենդանի նյութեր ժամանակակից հայ ազգի պատմության համար... Լավ տեսնում էի, որ ամենից առաջ քննելուն՝ մեկ ժողովրդի խոսած լեզուն է, ու ձեռաց գլուխ դրի լեզվին, որով խոսում են Վրաստանում, մանավանդ Թիֆլիզում բնակող հայերն, որոնց ինքս էլ քաղաքակից եմ։ Էս մտքով ժողովում էի հայերեն առակ, առած, վիճակախաղ, ու ամեն տեսակ խաղեր, մանավանդ ազգային երգիչներու կամ աշուղներու պտուղներն, որն որ պահպանել է ազգն ավել-պակաս՝ թե՛ ավանդութենով, թե՛ գրով, որո չիմանալեն շատ զրկանք է կրել ողորմուկ Հայաստանն»[2]։

Գ. Ախվերդյանի գործը հայ հանճարեղ գուսան-բանաստեղծի ստեղծագործությունների առաջին և գիտական հրատարակությունն է, որով հիմք դրվեց սայաթնովագիտությանը և աշուղագիտությանը՝ ընդհանուր առմամբ։ Սակայն դրանով չի սահմանափակվում Ախվերդյանի գործի նշանակությունը։ Աբովյանից անմիջապես հետո, Աբովյանի հետ գրեթե միաժամանակ նա կանգնեց համազգային գրական լեզվի մշակման, հայ նոր գրականության զարգացման ուղիղ ճանապարհի վրա, հայ բանասիրական միտքը մղեց դեպի ժողովրդական բանահյուսության և բարբառնե-

[1] Գուսանք, Ա., Սայեաթ-Նովայ, լույս գցած աշխատասիրութենով Գէորգայ Ախվերդեան. Մոսկվա, 1852։

[2] Նույն տեղում, Յառաջաբան, էջ ա։

րի ուսումնասիրության գործը։ «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» բանահյուսական ժողովածուի հեղինակը՝ Գ. Տեր-Ալեքսանդրյանն իր գրքի առաջաբանում խոստովանում է, որ իրեն ոգեշնչողները եղել են «լուսահոգի Գեորգ Ախվերդյանի հրատարակած «Սայաթ-Նովան» և անմոռանալի Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին»[1]։

Եվրոպայի արևելագետները հայ ժողովրդի պատմության, մատենագրության և լեզվի հարցերով սկսել են հետաքրքրվել դեռևս XVII դարից, սակայն հայագիտությունը Եվրոպայում խոր և լայն հունի մեջ է մտնում XIX դարի առաջին տասնամյակներից[2]։ Համեմատական լեզվաբանության ականավոր ներկայացուցիչներ՝ Ֆր. Վինդիշմանը (1811—1861) և Հ. Պետերմանը (1800—1876) իրենց հետազոտություններում պարզում են, որ հայոց լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզվախմբին։ Հ. Պետերմանը գրում է նաև մի շարք ուսումնասիրություններ հայոց պատմության հարցերի վերաբերյալ (Հայաստանի պատմության՝ արարական տիրապետության շրջանի տեսությունը, Խորենացու պատմության գրավոր աղբյուրները, և այլն)։ Գերմանական հայագետ Ֆր. Նոյմանը (1790—1870) 1829 թվականին հրատարակում է Դավիթ Անհաղթի մասին իր ուշագրավ ուսումնասիրությունը, հաջորդ՝ 1830 թվականին տպագրում է Եղիշեի պատմության անգլերեն թարգմանությունը, գրում է մի շարք հայագիտական հոդվածներ, այդ թվում Փավստոս Բյուզանդի և Ներսես Շնորհալու մասին։

1798 թվականից Փարիզի կենդանի լեզուների դպրոցում սկսվում է հայերենի ուսուցումը, որը վարում է Հակոբ Շահան-Ջրպետյանը։

Ֆրանսիական հայագիտության զարգացման գործում խոշոր դեր է կատարում Անտուան-Ժան Սեն-Մարտենը (1791—1832)։ 1818—1819 թվականներին Փարիզում տպագրվում է նրա «Հիշատակագիրք Հայաստանի մասին» («Mémoires sur l'Arménie») երկհատոր ուսումնասիրությունը։ Նրա գրչին է պատկանում նաև Հովհաննես կաթուղիկոս Դրասխանակերտցու պատմության ֆրանսերեն թարգմանությունը։ Սեն-Մարտենի ջանքերով 1822 թվականին հիմնադրվում է «Ասիական ընկերությունը» և նույն թվականից սկսում է լույս տեսնել «Journal Asiatique» արևելագիտական հանդեսը, ուր պարբերաբար հոդվածներ են տպագրվում հայոց պատմության, լեզվի վերաբերյալ։

XIX դարի առաջին կեսին, Սեն-Մարտենից հետո հայագիտական բեղմնավոր գործունեություն են ծավալում Լ. դը Ֆլորիվալը, Էդ. Դյուլորիեն (1807—1881), Ֆ. Մ. Բրոսեն (1802—1880), Վ. Լանգլուան (1829—1869) և ուրիշներ։ Ֆլորիվալի թարգմանությամբ ֆրանսերեն հրատարակվում են Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (1843) և Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» (1843)։ Էդ. Դյուլորիեն, բացի Մատթեոս

---

1 Գ. Աղեքսանդրյան. *Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, մասն Ա, Բանաստեղծությունք, Թիֆլիս*, 1885, Առաջաբան, էջ Ա։

2 Տե՛ս Գ. Ա. Շրումպֆ (Դ. Զարբհանալյանի *թարգմանությամբ և հավելումներով*), *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուտս, Վենետիկ*, 1895։ Ն. Կոստանյանց, *Հայագիտությունը Արևմտյան Եվրոպայում, Թիֆլիս*, 1910։

ՈւռՀայեցու «Պատմության» ֆրանսերեն թարգմանությունից (1850), գրել է մի շարք հայագիտական ուսումնասիրություններ, որոնցից առավել ուշագրավ է հին հայկական երգերին և ավանդություններին նվիրված նրա հետազոտությունը (1852)։ Դյուլորիեն հայագիտական հարցերի շուրջը նամակագրական սերտ կապեր է հաստատել հայ բանասերների, հատկապես Մկ. Էմինի հետ։ Ֆ. Մ. Բրոսեն, որ 1836 թվականից եղել է Ռուսաստանի կայսերական ակադեմիայի անդամ, հայտնի է Թովմա Արծրունու, Ուխտանեսի, Մխիթար Այրիվանեցու, Ստեփանոս Օրբելյանի մասին գրած ուսումնասիրություններով, ինչպես նաև «Պատմություն վրաց Բագրատունիների՝ ըստ հայ և հույն հեղինակների» աշխատությամբ (1843)։ Վ. Լանգլուան զբաղվել է առավելապես հին Հայաստանի դրամագիտության հարցերով։

Նույն ժամանակաշրջանի իտալական հայագետներից նշանավոր է Ջ. Գափելլետտին (1810—1876), որ 1829 թվականին լատիներեն թարգմանել է Ն. Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» և ապա՝ 1840—1842 թվականներին հրատարակել է Մովսես Խորենացին և Եղիշեն՝ իտալերեն։ XIX դարի առաջին կեսի հայագետների շարքը պիտի դասել և՛ այն գերմանացի ճանապարհորդներին, որոնք իրենց ուղեգրություններում պատկերել են ժամանակակից Հայաստանի բնությունը, տնտեսական-քաղաքական կյանքը, կենցաղը, սովորույթները, կուլտուրան։

Դրանցից առաջինը Ֆ. Պարրոտն է (1791—1841), որ իր «Reise zum Ararat» *գրքում նկարագրել է Աբովյանի և իր պատմական վերելքը Արարատի գագաթը։ Մ. Վագները (1813—1887), Ա. Հաքստհաուզենը (1792—1866) և Ֆր. Բոդենշտեդը (1819—1892) ճանապարհորդել են Հայաստանում 1843—1846 թվականներին։ Նրանց ուղեգրությունները[1] արժեքավոր և ուշագրավ են նաև նրանով, որ հետաքրքրական տեղեկություններ են բովանդակում Աբովյանի կյանքի վերջին հինգ տարիների մասին և, Հայաստանի անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ արված դատողությունններն ու դիտողությունները կրում են հայ մեծ լուսավորչի հայացքների դրոշմը։*

3

XVIII դարի վերջը և հատկապես XIX դարի առաջին տասնամյակները հատկանշվում են նաև թարգմանական գրականության զարգացմամբ։ Վերջինս կուլտուրական առաջընթացի արտահայտություններից և գործոններից մեկը լինելով, միաժամանակ անդրադառնում էր ժամանակի ոգին, հայ իրականության մեջ գոյություն ունեցող հասարակական-քաղա-

---

[1] **Տե՛ս** *M. Wagner* **ա)** Reise nach dem Ararat und dem Hochland Armenien,. Stuttgart und Tübingen, 1848. **բ)** Reise nach Persien und dem Land der Kurden. Leipzig, 1852.

F. Bodenstedt, Tausend und ein Tag im Orient, Berlin, 1865. *A. F. von Haxthausen*, Transkaukasia, Erste Teil. Leipzig, 1856.

փարական տարբեր հոսանքների հայացքները, գրական-էսթետիկական ըմբռնումները։

Մխիթարյանները հայերեն են թարգմանում անտիկ գրականության դասական երկերը. Եղիա Թովմաճանը՝ Հոմերոսի «Եղիականը» (1843) և «Ոդիսականը» (1848), Եղ. Հյուրմյուզյանը՝ Վիրգիլիոսի «Ենեականը» (1845), Արս. Բագրատունին՝ «Մշակականքը» (1847) և Որատիոսի «Արուեստ քերթութեանը» (1847), Մ. Բժշկյանը՝ Եզոպոսի առակները (1818), Եղ. Հյուրմյուզյանը՝ Փեդրոսի առակները (1855), Եղ. Թովմաճանը՝ Պլուտարքոսի «Զուգակշիռքը» (1834), Մ. Ավգերյանը, Հ. Գաթըրճյանը և Ն. Զագրճյանը՝ Կիկերոնի ճառերը (1843—1852)։

Հոմերոսի «Ոդիսականի» հայերեն թարգմանության անվանաթերթը

Բնորոշ է, որ Մխիթարյանները XVII—XVIII դարերի եվրոպական (գերազանցապես ֆրանսիական) գրականությունից թարգմանում են կլասիցիզմի ներկայացուցիչների երկերը, վերջիններից էլ ընտրելով այնպիսիները, որոնք առավել համապատասխանում են իրենց աշխարհայացքին։ Ահա այդ թարգմանություններից մի քանիսը. Ս. Գեսներ, «Ի մահ Աբելի» (թարգմ. Մ. Ջախջախյանի, 1825), Ժ. Ֆլորիան, «Նումա Պոմպիլիոս» (թարգմ. Եղ. Հյուրմյուզի, 1853), Ռասին, «Երգ վասն կրոնից» (թարգմ. Մ. Գարագաշյանի, 1842)։ Միլտոնի «Դրախտ կորուսյալի» մեջ (թարգմ. Հ. Ավգերյանի, 1824) Մխիթարյան թարգմանչին գրավել է ոչ թե ապստամբական ոգին ընդդեմ լռության, այլ բարոյական ինքնակատարելության հասնելու քարոզը։ Ավելին. թարգմանիչը գաղափարապես «խմբագրել» է անգլիացի հեղինակի երկը. «Ավգերյանը,— գրում է Ա. Կարինյանը,— դիտավորությամբ կրճատել է Միլտոնի պոեմի որոշ էջերը, ձգտելով հումանիստ իմաստասերի ստեղծագործությունը դարձնել ավելի հանդուրժելի...»[1]։

Ֆենելոնի «Արկածք Տելեմաքա» վեպը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին տասնամյակներին հայ իրականության մեջ ամենատարածված

[1] Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 2, 1960, էջ 31։

գրքերից մեկն է եղել, հրատարակվել է երեք տարբեր թարգմանությամբ. «Ֆենէլոնի պատմութիւն Թէլեմաքի... փոխադրեալ ի գալլիացւոց և յիտալացւոց լեզուէ ի հայ բարբառ ջանիւ և աշխատութեամբ Մարգար Զաքարիայի խոճենց Երևանցւոյ..., Նոր-Նախիջևան, 1793»։ Մյուս երկու թարգմանությունը կատարել են Մխիթարյանները. ա) «Ֆենէլոնի Արկածք Տելեմաքայ որդւոյն Ոդիսեայ, թարգմանեալ ի բնագրէն ի Հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան, ի Մխիթարեան միաբանից, ի Վենետիկ, 1826». բ) «Տելեմաքայ արկածք, վիպասանեալ ի Ֆենելոնէ, թարգմ. Եդ. արքեպ. Հիւրմիւզեան, Վենետիկ, 1850»։ Այստեղ ևս Մխիթարյան թարգմանչին (Մ. Ջախջախյան) գրավել են ո՛չ թե ֆրանսիական լուսավորության նախորդներից մեկի՝ Ֆենելոնի՝ ժամանակի համար առաջադիմական գաղափարները, բռնակալության դեմ ուղղված քննադատությունը, այլ կրոնա-բարոյախոսական կողմը, որը նա համարում է էականը «Արկածքում», և հանգեցնում սրտկության քարոզի։ Իր թարգմանության մեկենասին՝ Պողոս աղա Յուսուֆյանին հասցեագրած ձոնի մեջ նա որոշակի ընդգծում է այդ հանգամանքը. «Ընդ Տելեմաքայ ուսցիս ընդ նմին անմեկնելի երթալ՝ ճշմարիտ կրօնիցն աստուածապաշտութեան ի շար գէպսն, որպէս և ի բարեբաստութեան. սիրել զքո հայր և հայրենիս, լինել իշխան ժողովրդասէր, քաղաքացի բարեկիրթ և հլու, բարեկամ հաւատարիմ, այլ և ստուկ ճսմբերող, թէ այնպէս կամք տեսչութեանն իցեն»[1]։ Ֆենելոնի վեպի գաղափարական իմաստը տեսնելով հլու հպատակության և սրտկական համբերության մեջ, Մ. Ջախջախյանը «Տելեմաքը» համարում է մուսաների լավագույն պարգևը և մարդկային երջանկության աղբյուրը. «Պիտանագոյն ի պարգևս Մուսայից զոր մահկանացուացս պարգևեցին՝ է բերթուածն Տելեմաքայ, վասն զի եթէ երջանկութեան ազգի մարդկան բնար իցէ ծագել ի բերթուածոց ինչ, ծագեսցէ այն ի Տելեմաքայ»[2]։

Եզոպոսի առակների հայերեն հրատարակության անվանաթերթը

---

[1] «Ֆենելոնի Արկածք Տելեմաքայ..., ի Վենետիկ», 1826, էջ 10։

[2] Նույն տեղում, էջ 18։

Բնորոշ է, որ 40-ական թվականներին «Բազմավեպում» ժամանակակից եվրոպական բանաստեղծներից առավել ջերմ գնահատականի են արժանացել և հաճախակի տպագրվել ռեակցիոն ռոմանտիզմի երկու ականավոր ներկայացուցիչները՝ Ֆ. Շատոբրիանը և Ա. Լամարտինը։ 1843 թվականին Շատոբրիանի «Ոգի քրիստոնեութեան» գրքից մի հատված տպագրելով, «Բազմավեպի» խմբագրությունը գրում է. «Շաթոպրիան գաղղիացվոց կենդանի մատենագիրներուն մեջ ամենեն անվանին ու ամենեն ճարտասանը կսեպվի... Իր գրվածքներուն մեջ ամենեն հռչակավորը և իր անունը անմահացնողը Ոգի Քրիստոնեության ըսված գիրքն է, բարեպաշտ հոգվով ու շատ գեղեցիկ ճարտասանությամբ գրված...»[1]։

Մխիթարյանները ո՛չ միայն չեն թարգմանել XVIII դարի ֆրանսիական մեծ լուսավորիչ-հումանիստների գեղարվեստական-փիլիսոփայական երկերը, այլև պայքար են մղել նրանց ազդեցության դեմ։ Ահա բազմաթիվ փաստերից մեկը։ «Գաղղիացվոց մատենագրության վրա ընդհանուր տեղեկություն» հոդվածի հեղինակը 1845 թվականին «Բազմավեպում» գրում է. «Ութ և տասներորդ դարուն ատենները սկսավ լինալ գրագիտության պայծառությունը. անոր տեղը սկսավ փիլիսոփայական ամբարտավանություն մը, որ նույն դարուն վերջերը բոլորովին հայտնվեցավ։ Ամեն գրվածքներու մեջ մտավ աս ամբարտավան փիլիսոփայությունը, ու ամենուն մտքին տիրեց...»[2]։

XVIII դարի ֆրանսիական լուսավորիչների գաղափարների ներթափանցման դեմ պայքարում էին ո՛չ միայն Մխիթարյանները, այլև նրանց գաղափարակիցները Պոլսում և այլուր։ Դեռևս 1829 թվականին Հովհ. Տեր-Կարապետյան Պրուսացին, նույն ինքը Հովհ. Զամուրճյան պատվելին՝ հետագայում, 50—60-ական թվականներին, արևմտահայ իրականության մեջ ռեակցիոն հոսանքի պարագլուխը, թարգմանում է Ժ. Ժ. Ռուսոյի «Հասարակական դաշինքը»՝ առաջաբանում, բազմաթիվ ծանոթագրություններում և ընդարձակ «Հավելվածում» փորձելով հերքել և «անվնաս» դարձնել ֆրանսիացի մեծ մտածողի դրույթները («Դաշն ընկերական և կամ սկզբունք արհեստի կառավարութեան, զոր յօրինեալ է Յովհաննէս Յակոբ Ռուսօ իմաստասեր Ճինեվրացի, ի գաղղիական լեզու։ Թարգմանեալ ի գաղղիական բնագրէ ի հայ բարբառ, ի Յովհաննէ Տեր-Կարապետեան Պրուսացւոյ, Յատարապար, յամի տեառն 1829, ի մարտի 27»)։ Թարգմանչի հավելվածն ունի հետևյալ բնորոշ խորագիրը. «Ճառ ի վերայ անհակառակութեան քրիստոնէական հաւատոյ և արհեստի կառավարութեան, ընդդէմ Ռուսօյի և նմանեաց նորա, հանդերձ լուծմամբք առարկութեանց»[3]։

---

1 «Բազմավեպ», 1843, № 10, էջ 149։

2 «Բազմավեպ», 1845, № 19, էջ 299—301։

3 Ռուսոյի «Հասարակական դաշինքի» այս ինքնատիպ թարգմանությունն անտիպ է։ Բնագիրը պահպանվում է Գրականության և արվեստի թանգարանում։ Տե՛ս նաև՝ Մկ. Ներսիսյան, «Ռուսոյի «Հասարակական դաշինքի» հայերեն թարգմանությունը 1829 թ.» Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1943, № 1։

Ֆրանսիական գրականության «վնասակար» ուղղությանը Մխիթարյաններն անդրադառնում են հե՛նց որ առիթը ներկայանում է. այսպես, 1846 թվականին «Բազմավեպը» է. Սյուի «Թափառական հրեա» վեպի ֆրանսերեն բնագրի առաջին տպագրության առթիվ գրված հոդվածում նշելով, որ ֆրանսիական գրականությունը «գրեթե միշտ ամեն ազգաց մեջ դյուրավ ընդունելի եղած է», ավելացնում է. «Ցավալին աս է, որ ամեն գրվածք, ինչպես ամեն ազգի մեջ, այսպես գաղղիացվոց մեջ ալ, միշտ օգտակար չեն. երբեմն ծուռ մտքե, երբեմն ալ ապականյալ սրտե առաջ գալով, շատ վնասներու պատճառ կըլլան։ Ու այսպիսի վնասակար գրքերն ալ՝ նույն գաղղիական մատենագրության բնական շնորհքը ունենալով, մարդկային ապականյալ բնությունն ալ օգնական գտնելով, ամենուն ավելի դյուրավ սիրելի կըլլան, անով ալ տված վնասնին ավելի շատ»։ Է. Սյուին դասելով վերջին ժամանակները ֆրանսիացիների մեջ հանդես եկած շատ «մեծահանճար մատենագիրների» շարքը, «Բազմավեպի» հոդվածագիրը հարկ է համարում վերապահություն անել. «Միայն մեղք որ իրեն մեծ մատենագրական տաղանդը կջանա ապականել իր հանած վնասակար գրքերովը։ Աս ետքերս հանեց գիրք մ'ալ, «Թափառական հրեա» ըսված, որ լի է ամբարշտական ու աղտեղի տեսարաններով։ Բայց դժբախտաբար թե՛ Գաղղիա և թե՛ Գաղղիայեն դուրս ամեն թեթևաբարո ընկերության զբոսարանը եղավ սա վնասակար գիրքը»[1]։

Է. Սյուի վեպին տրված այս «գնահատականը» պայմանավորված էր նրա՝ «Թափառական հրեայի» հակաճիզվիթական-հակակղերական բնույթով. Մխիթարյան հոդվածագիրը մտահոգված էր «վնասակար» այդ գրքի մուտքը հայ իրականության մեջ կասեցնելու խնդրով։ Հակառակ այդ ճիգերի, «Թափառական հրեան» երկու տասնամյակի ընթացքում հայերեն լույս տեսավ չորս անգամ։ Միք. Նալբանդյանը Է. Սյուի վեպի առաջին հատորի թարգմանությանը կցելով «հիսուսյանների» (ճիզվիթների) մասին մի ընդարձակ պատմական տեսություն, տպագրեց 1857-ին՝ կաթոլիկ հոգևորականության հակաժողովրդական, ռեակցիոն էությունը մերկացնելու նպատակով։

Մխիթարյանների թարգմանությունների մեջ Ֆլորիանի, Գեսների, Ռասինի, Շատոբրիանի, Լամարթինի երկերի կողքին կարելի է տեսնել նաև Դանիել Դեֆոյի, Բիչեր-Ստոուի, Բեռնարդեն դը Սեն-Պիեռի՝ ժամանակին շատ տարածված վեպերը։ Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոն» Մինաս Բժշկյանի թարգմանությամբ ունեցել է երկու հրատարակություն՝ 1818 և 1836 թվականներին, ընդ որում երկրորդը աշխարհաբար («Պատմութիւն վարուց Ռոպէնսոնին Քրուզօէ. թարմ. ի գաղղիացւոց լեզուէ յաշխարհաբար ի Մինաս վ. Բժշկեան, ի Վենետիկ, 1836»)։ Բեռնարդեն դը Սեն-Պիեռի և Բիչեր Ստոուի վեպերի հայերեն թարգմանությունները հրատարակվել են մի փոքր ուշ («Պօղոս և Վիրգինիա, վիպասանութիւն Պէռնարտէն տը Սէն Փիէր գաղղիացւոյ, թարգմ. Մանուկ պէյ մահտեսի Աս-

1 «Բազմավեպ», 1846, № 7, էջ 106—107։

…ածարեան, Վենետիկ, 1845», և՝ «Աղբար Թովմասի տնակը, վիպասանութիւն Պիչըր Սթոյ տիկնոջ ամերիկացւոյ, երկու պատկերազարդ հատորք, Վենետիկ, 1854»): Այդ վեպերի հայերեն հրատարակություններով Մխիթարյաններն, անշուշտ, որոշ չափով արձագանքում էին ժամանակի պահանջներին, սակայն դրանք չէին փոխում նրանց թե՛ ինքնության, թե՛ թարգմանական գրականության հիմնական ուղղությունը, որ իր վրա կրում էր կլասիցիզմի և ռեակցիոն ռոմանտիզմի զորեղ կնիքը:



«Պոլ և Վիրգինիա» վեպի հայերեն հրատարակության նկարներից

Հայ թարգմանական գրականությունը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում չի սպառվում Մխիթարյանների հրատարակություններով, ինչպես անցյալում ներկայացրել են հայ գրականության պատմաբանները: Եվրոպական և ռուս հեղինակների երկերի թարգմանության տարածման ասպարեզում նշանակալի դեր են կատարել նաև հայ տպագրության և կուլտուրայի մյուս կենտրոնները՝ Նոր-Նախիջևանը, Մադրասը, Կալկաթան, Պոլիսը, Զմյուռնիան, Մոսկվան:

Երբ մի ընդհանուր հայացք ենք նետում մի կողմից Վենետիկում և Վիեննայում, մյուս կողմից հայ կուլտուրայի մյուս կենտրոններում հրատարակված թարգմանական գրականության վրա, նկատում ենք էական տարբերություն:

Եթե Մխիթարյանների թարգմանությունների մեջ գերակշռողը կրոնաբարոյախոսական, միստիկական, ռեակցիոն-ռոմանտիկական գրականությունն էր, ապա հասարակական զարգացման կապիտալիստական ուղիով ընթացող, սոցիալական և ազգային-ազատագրական շարժումների ազդեցության ոլորտում գտնվող հայ գաղթավայրերի գործիչները նախընտրում էին ֆրանսիական լուսավորիչներին, ռեալիստական կլասիցիզմի, պրոգրեսիվ ռոմանտիզմի և ռեալիզմի ներկայացուցիչների ստեղծագործությունները:

Նշանակալի է այն փաստը, որ Վոլտերի «Հուլիոս Կեսարի մահը» ողբերգությունը, որի պաթոսը բռնակալության դեմ պայքարի, ազատության գաղափարն է, հայերեն թարգմանությամբ լույս է տեսնում 1818 թվականին Մադրասում, հենց այն միջավայրում, ուր ձևավորվել էր հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը. բնորոշ է նաև, որ Վոլտերի երկի հայ թարգմանիչը այդ գաղափարախոսության կրողներից մեկի՝ Շահամիր Շահամիրյանի որդին է՝ Հակոբ Շահամիրյանը («Ող-

բերգութիւն ի վերայ մահուան Յուլիոսի Կեսարու, թարգմանութիւն ի Յակոբայ Նազար Շամրեան յանգղիականէն, գործ Վոլթէրի գաղղիացւոյ, Մադրաս, 1818»)։

XIX դարի 20-ական թվականների սկզբին Կալկաթայում հրատարակվող «Շտեմարան» պարբերականի էջերում հանդիպում ենք թարգմանական քաղվածքներ Շեքսպիրի երկերից («Համլետ», «Երկու վերոնացիներ»)։ «Շտեմարանի» խմբագիրը (Մարտ. Մկրտչյան) Շեքսպիրին անվանում է «մեծ դատավոր մարդկային բնության»։

Ուշագրավ փաստ է նաև Բայրընի «Շիլիոնի կալանավորը» պոեմի հայերեն հրատարակությունը 1837 թվականին Շուշիում (թարգմանություն Մովսես Ջոհրարյանց Արցախեցու)։

Ջ. Բայրըն

Հետագայում, XIX դարի 40-ական թվականների կեսերին հնդկահայ մամուլում (Մ. Թաղիադյանի «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» պարբերականներում) ավելի հաճախակի են դառնում Շեքսպիրի, Սերվանտեսի, Բայրընի, Բալզակի, Լոնգֆելլոյի, Բյորնսի առանձին երկերի կամ դրանցից վերցված հատվածների թարգմանությունները, ինչպես և՝ այս կամ այն առթիվ այդ գրողների անունների հիշատակումները։

Կալկաթայում հայերեն թարգմանությամբ հրատարակվում են Բեռնարդեն դը Սեն-Պիեռի «Պավլոս և Վերգինիա»[1] և Օլվեր Գոլդսմիտի «Վեքվիլդա փոխերեցն»[2] վեպերը։ «Ազգասերում» տպագրելով երկու գլուխ

---

1 Տե՛ս «Սան Պիեռայ գաղղիացւոյ Նաւակոծութիւն կամ Պաւղոս և Վիրգինիա, զանգղիականն հայացոյց պարոն Թադէոս Խ. Աւետումեան՝ մին յաշակերտաց Մարդասիրական ճեմարանին ի Կալկաթա, ի գործարանի նորին իսկ ճեմարանի, 1830»։ XIX դարի առաջին կեսին այս վեպը հայ իրականության մեջ ամենատարածված գրքերից մեկն է եղել, լույս է տեսել չորս տարբեր թարգմանությամբ, մի փաստ, որ վկայում է սանտիմենտալիզմի ազդեցությունը ժամանակակիցների գրական ճաշակի և ըմբռնումների վրա։ Ռուս սանտիմենտալիզմի ներկայացուցիչներից հայերեն թարգմանված է եղել Բոգդանովիչի «Դուշենկա» պոեմը։ Հետաքրքրական է, որ այդ երկը Մովսես Ջոհրարյանցի թարգմանությամբ 1847 թվականին ընթերցվում է Ներսիսյան դպրոցի ուսուցիչների և աշակերտների մի հավաքույթում (ԳԱԹ, Աղանյանի ֆ., № 86, էջ 12)։

2 Տե՛ս «Օլիվըր Գոլդսմիթայ Փոխերեցն Վէքֆիլդայ», թարգմ. յանգղիականէն պարոն Թադ. Խ. Աւետում, Կալկաթա, 1848։

Ա. Լեսաժի «Ժիլ Բլասից», Թաղիադյանը խոստանում է իրականացնել վեպի առանձին հրատարակությունը, «Եթէ օգնութիւն ազգիս քաջալերս մատուցանեն մեզ»[1]։

Հասկանալի է ինքնին, որ Շեքսպիրը, Սերվանտեսը, Բայրընը, Լոնգֆելլոն, Բյորնսը, Լեսաժը, Գոլդսմիտը համապատասխանում էին հեռավոր և մոտիկ գաղթավայրերում, ինչպես և բուն երկրում, XIX դարի առաջին տասնամյակներին հասարակական նոր հարաբերությունների պայմաններում ձևավորվող ընթերցողի հոգևոր պահանջներին, հակաֆեոդալական, հակարոնակալական տրամադրություններին, ազգային-ազատագրական ձգտումներին։

Ա. Ս. Պուշկին

Հայ նոր գրականության և հասարակական մտքի զարգացման գործում նշանակալի է նաև ռուս գրականության դերը[2]*։ XIX դարի 20—30-ական թվականներին, նախ Հար. Ալամդարյանը, ապա և Մկ. Էմինը Լազարյան ճեմարանի սաներին ծանոթացնում էն ռուս գրողների ստեղծագործությունների հետ։ «Պուշկինի և Լեռմոնտովի գրվածքը առաջին անգամ մեզ ծանոթացուց նա,— գրում է Ռ. Պատկանյանը Մկ. Էմինի մասին,— շատ անգամ, հենց յուր դասի միջոցին, ձեռքը առնում էր նոցա շարադրությունները և կարդում էր մեզ համար, և այդ կերպով մեր մեջ ևեր և ճաշակ էր ձգում այդ և ուրիշ ռուս հեղինակների մասին»*[3]*։ Մկ. Էմինը նաև Պուշկինի առաջին հայ թարգմանիչն է։ Դեռևս ռուս մեծագույն բանաստեղծի կենդանության օրով, անցյալ դարի 30-ական թվականների առաջին կեսին, նա թարգմանել է «Բախչիսարայի շատրվանը» և «Կովկասի գերին», որոնք, սակայն, ժամանակին չեն տպագրվել։ Ռուս բանաստեղծների երկերի թարգմանությունների առաջին տպագրությունները նույնպես պատկանում են Լազարյան ճեմարանի սաներին. «Թարգմանութիւնք արձակ և ոտանաւոր ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ ի Ժուկովսկիոյ, Պուշկինէ, Լերմոնտովայ, Բարատինսկիոյ և Գնէդիչէ, Յ. Համազաս-*

---

[1] *«Ազգասէր», 1846, № 55, էջ 17։ «Ժիլ Բլասի» երկու գլխի թարգմանությունը տե՛ս «Ազգասէր», 1846, №№ 55, 56 և 57։*

2 Տե՛ս Գուրգեն Հովնան, *Ռուս-հայ գրական կապերը XIX—XX դարերում. գիրք առաջին, Երևան, 1960։*

3 *«Մկ. Էմինի երկասիրությունները», Մոսկվա, 1898, էջ 210։*

պեանց, ի Մոսկով, ի տպարանի Ճեմարանի տեարց Լազարեանց, 1843»։ 1849 թվականին Մկ. Էմինը հրատարակում է Լազարյան ճեմարանի սաների համար հայ-ռուս լեզուների ուսուցման մի ձեռնարկ-ժողովածու[1], ուր Հոմերոսի, Փեդրոսի, Ֆինելոնի, Լաֆոնտենի, Գյոթեի, Շիլլերի, Ուլանդի երկերի հետ տպագրվել են նաև Լոմոնոսովի, Դերժավինի, Կռիլովի մի քանի բանաստեղծությունների և առակների թարգմանությունները[2]։ Նույն թվականին ռուս առակագիրների երկերի հայերեն թարգմանությունների մի ժողովածու է հրատարակում Հար. Գեորքչեյանը[3]։

Այսպիսով, XVIII դարի վերջից մինչև XIX դարի առաջին կեսը, ինչպես վկայում են վերը բերված փաստերը, հայ թարգմանական գրականությունը յուրովի արտացոլել է հայ նոր գրականության զարգացման հիմնական տենդենցը՝ կլասիցիզմից և ռեակցիոն ռոմանտիզմից դեպի պրոգրեսիվ ռոմանտիզմն ու ռեալիզմը։

Վ. Գ. Բելինսկի

4

Հայ ժողովրդի հասարակական-մտավոր զարգացման պատմության մեջ, սկսած հատկապես XIX դարի առաջին տասնամյակից, էական դեր են կատարում դպրոցները, որոնք և ժամանակի կուլտուրական կյանքի կենտրոններն են եղել։ Դպրոցներին կից հիմնվում են տպարաններ, ուր դասագրքերից ու ձեռնարկներից բացի, տպագրվում են ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական գրականություն, գրական ժողովածուներ, կազմակերպվում են թատերական ներկայացումներ։

Ինչպես կուլտուրական մյուս ձեռնարկների (տպագրություն, պարբերական մամուլ), այնպես նաև դպրոցների զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծվում են նախ հայ գաղութներում։

---

[1] „Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа", часть III, М., 1838, էջ 220։ Ա. Պողոսյան, «Պուշկինի երկերի ամենահին թարգմանություններից մեկը», ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1954, № 12, էջ 85 – 87։

[2] «Ընտիր հատուածք քաղեալք ի գրոց նախնի և արդի մատենագրաց հայոց, հանդերձ բառգրքովք ի հայկականէ ի ռուսաց բարբառ, ի պէտս աշակերտաց Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց, Մոսկվա, ի տպարանին նորին ճեմարանի, 1849»։

[3] «Մաղկաքաղ յառակացն Քռիլովի, Տմիթրիևի և Խեմնիցերի. Թարգմանեաց Յարութիւն աւագ սարկաւագ Գեօրքչեանց, յամի տեառն 1849, ի Մոսկուա»։

Լազարյան ճեմարանի շենքը

Մասնավորապես նշանակալի է Լազարյան ճեմարանի դերը 30—40-ական և 50—60-ական թվականների կուլտուր-լուսավորական շարժման մեջ։ Այդ հաստատության մեջ են ձևավորվել և ուղղություն ստացել հիշյալ ժամանակաշրջանի գործիչները՝ Հ. Ալամդարյանը, Մկ. Էմինը, Գ. Ախվերդյանը, Գ. Շանշյանը, Ս. Տիգրանյանը, Ռափայել և Քերովբե Պատկանյանները, Միք. Միանսարյանը, Մ. Սալաթյանը, Սմբ. Շահազիզը և ուրիշներ։ Այստեղ են պաշտոնավարել նաև Ստ. Նազարյանը և Միք. Նալբանդյանը։

1829 թվականին Լազարյան ճեմարանին կից հիմնվում է տպարան, որտեղ տպագրվում են ճեմարանի սաների գրական փորձերը («Մուզայք Արարատեան», 1829), հետագայում՝ «Հյուսիսափայլ» ամսագիրը (1858—1864), Ս. Շահազիզի «Լևոնի վիշտը և զանազան քանաստեղծություններ» ժողովածուն (1865) և մի շարք հայ պատմիչների երկերը։

Լազարյան ճեմարանը այն կենտրոններից մեկն է, ուր սկսում է մշակվել և ձևավորվել արևելահայ գրական աշխարհաբարը[1]։

Տակավին XIX դարի սկզբներին, երբ Հովակիմ Լազարյանը ծրագրում էր հիմնել մի ազգային ուսումնական հաստատություն, ժամանակի գործիչներից ոմանք, այդ թվում Սերովբե Պատկանյանը և Ներսես Աշտարա-

---

[1] Տես, Ստեփանոս Նազարյանց, Հ. առաջին, Թիֆլիս, 1902, էջ 38—39։

կեցին նպատակահարմար են գտնում հիշյալ հաստատությունը կառուցել Կովկասի հայաշատ կենտրոններից մեկում՝ Թիֆլիսում։

Ներսես Աշտարակեցին, որ տարիներ ի վեր նույնպես հայկական դպրոց հիմնելու ծրագրեր է մշակում, հետագայում իր անունը կրող դըպրոցը կառուցում է Թիֆլիսում։ Ներսիսյան դպրոցի գործունեությունն սկսվում է 1826 թվականի հունվարի 1-ից[1] և տևում է գրեթե մեկ ամբողջ դար։

XIX դարի առաջին կեսին այդ ուսումնական հաստատությունը կովկասահայ կուլտուրական կյանքի կենտրոնն էր։ Այդտեղ ուսանել են Աբովյանը և Նալբանդյանը, դասավանդել են՝ Ալամդարյանը, Նազարյանը, Ռ. Պատկանյանը, Պ. Շանշյանը, Ստ. Ներսիսյանը և ուրիշներ։ Ինչպես Լազարյան ճեմարանը, Ներսիսյան դպրոցն ևս ունեցել է իր տպարանը (1823), ուր տպագրվել են ուսումնական ձեռնարկներ, Ն. Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը (1828), դպրոցի սաների արձակ և չափածո գրական նախափորձերը՝ «Օրախայրիք Ներսիսեան դպրոցի» (1828), ինչպես նաև 1826—1828 թվականներին ռուս-պարսկական պատերազմին մասնակից «հայոց զորքի» կանոնադիրքը՝ Թիֆլիսահայ բարբառով («Առաջադրություն հայոց նոր սարքվող զորքի մասին», 1827)։

Հայկական բնաշխարհում, որի վրա ծանրացած էր թուրք-պարսկական բռնակալության լուծը, իսպառ բացակայում էին ինչպես կուլտուրական այլ ձեռնարկությունների, այնպես էլ դպրոցների գոյության և զարգացման համար անհրաժեշտ պայմանները։

1813 թվականին Ներսես Աշտարակեցին Էջմիածնում բաց է անում «Ժառանգավորաց» դպրոցը, որի նպատակը հոգևորականներ պատրաստելն էր։ Թաղիադյանն իր ճանապարհորդական նոթերում նկարագրել է այդ դպրոցը, ցույց տվել, թե որ աստիճան ցածր էր այդտեղ ուսուցման մակարդակը[2]։ Նույն այդ ժամանակ Աշտարակեցու ծրագրած «Համալսարանը» (ապագա Գևորգյան ճեմարանի նախագաղափարը) մնում է իբրև ուտոպիա։

Անդրկովկասում ռուսական տիրապետության հաստատումից հետո, ինչպես երկրամասի այլ քաղաքներում, այնպես էլ Երևանում և Նախիջևանում, 1831 թվականին, հիմնվում են գավառական դպրոցներ։ Դրանք տարրական երկդասյան դպրոցներ էին, որտեղ հարկատու գյուղացիների երեխաները չէին կարող ընդունվել[3]։

---

1 Ներսիսյան դպրոցի բացման ժամանակի վերաբերյալ գոյություն ունեն հակասական տվյալներ։ 1825 թվականի հունվարի 1-ը ամենահավաստին է, քանի որ այն հիմնվում է դպրոցի տեսչի՝ Հ. Ալամդարյանի 1831 թվականի հունիսի 1-ին «Թիֆլիսի հայոց ուսումնարանի բարեկարգության կոմիտեին» ուղղած գրության բնագրի վրա (ՀՍՍՌ, ՊԿՊԱ, ֆ. № 2, ցուցակ 1 ա, գործ 1, թ. 16)։

2 «Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց վ. ա. սարկաւագի սրբոյ էջմիածնի ի Հայս», հատոր առաջին, ի տպարանի Արարատեան ընկերութեան, ի Կալկաթա, 1847, էջ 111—114։

3 Տես. Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 132։

1837 թվականին բացվում է Երևանի Թեմական դպրոցը, ուր բացի հայոց լեզվից և կրոնից, մնացած բոլոր առարկաները, այդ թվում նաև հայոց պատմությունն ու աշխարհագրությունը ռուսերեն էին ավանդվում։ Ցարական կառավարությունը բացահայտ ձուլման քաղաքականություն էր վարում։ Այդ քաղաքականության դեմ պայքարելու համար Աբովյանը, հաղթահարելով ցարական աժմիլիատոր չինովնիկների դիմադրությունը, Երևանի գավառական դպրոցում հետագայում մտցնում է տեղական լեզուների՝ հայերենի և ադրբեջաներենի դասավանդությունը։

1827 թվականին Շուշիում բաց են անում հայկական դպրոց և տպարան, ուր սկզբնական շրջանում տպագրվում են գրեթե բացառապես կրոնական բովանդակությամբ գրքեր։

1838 թվականին Շուշիում և 1840 թվականին Ալեքսանդրապոլում հիմնվում են թեմական հոգևոր դպրոցներ[1]։ Չնայած վերջիններիս կրոնական ուղղությանը, համատարած խավարի և տգիտության այն տարիներին դրանք զգալիորեն նպաստում են գրագիտության տարածմանը։

Լուսավորական գործի սկիզբը Կալկաթայում դրվում է XVIII դարի վերջերին Հարություն Գալուցյանի ջանքերով։ Նրա սաներն են, որ 1821 թվականին Կալկաթայում հիմնում են Հնդկահայ գաղութի կուլտուրական զարգացման պատմության մեջ շատ նշանակալի դեր կատարած Մարդասիրական ճեմարանը։ Այստեղ ուսանելու են գալիս ինչպես Հնդկաստանի, այնպես էլ Պարսկաստանի հայաբնակ շատ վայրերից, ընդ որում աղքատների զավակները ամսական վարձ չեն վճարում։ Մարդասիրական ճեմարանը տալիս էր աշխարհիկ կրթություն, նպատակ ունենալով պատրաստել կյանքի տարբեր ասպարեզներում գործելու ընդունակ մարդիկ։ Մարդասիրական ճեմարանում դասավանդել են XIX դարի առաջին կեսի Հնդկահայ գաղութի նշանավոր գործիչներ՝ Հարություն Գալուցյան, Հովհ. Ավդալյանց, Թադ. Ավետումյան, Մ. Թաղիադյան, բժ. Սարգիս Շիրխաթյան։ Մարդասիրական ճեմարանը հայ դպրոցի պատմության մեջ առաջին երկսեռ ուսումնական հաստատություններից մեկն է։ Դասատուների ցանկում հանդիպում ենք «վարժապետուհի և տանտիկին» Մարիամ Էլիազ Ավդալյանի անվանը, որին պիտի դասել հայ առաջին ուսուցչուհիների շարքը։ Հետագայում, 1846 թվականին, Մ. Թաղիադյանի նախաձեռնությամբ, ինչպես ինքն է ասում՝ «մեծ նեղութեամբ, մեծամեծ ծախուք և ամենայն պիտանեացն կարօտութեամբ» սկսում է գործել Կալկաթայի «Սուրբ Սանդուխտ» աղջկաց դպրոցը[2]։ Այս գործում Թաղիադյանին աջակցողների մեջ եղել են նաև կանայք, որոնցից մեկին՝ տիկին Եղիսաբեթ Հ. Սարգսյանցին է ձոնել նա իր «Ճառ դաստիարակութեան օրիորդաց» գրքույկը (Կալկաթա, 1847). Թաղիադյանը նրան անվանում է «նախամայր

[1] Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 89—90, 152—153։ Առաքել Պլանյան, Պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր վիճակային դպրոցի, Ալեքսանդրապոլ, 1912, էջ 17։

[2] «Ազգասէր Արարատեան», 1849, № 20, էջ 153։

ազգային յառաջադիմութեանց», նրան է վերագրում «օրիորդաց դաստիարակության» գործի սկզբնավորումը։

Մարդասիրական ճեմարանը 1822 թվականին ձեռք է բերում տպարան, որտեղ տպագրվում են ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական երկեր, դասագրքեր, բառարաններ։ Տպարանի գոյության առաջին տարիներին հրատարակված գրքերից են՝ «Համառօտ մեկնութիւն տրամաբանութեան, որ ըստ յունաց ասի տիալեքթիկէս, Կալկաթա, տպարանի Մարդասիրական ճեմարանի, 1822», «Այբբենարան աշխատասիրեալ ի պէտս մանկանց դպրոցին, ի բարեհիշատակ պր. Յ. Յ. Աղանուրեանց, 1824», Շատոբրիանի «Ատալա, բանաստեղծութիւն սրտառուչ և կենցաղօգուտ, թարգմանեալ ի պարոն Յովհաննիսէ Ավդալեանց, 1826», «Բառարան անգղիերէն և Հայկազեան լեզուի, համառօտագրեալ յԱւգերեան բառարանէն ի պէտս մանկանց դպրոցի, աշխատասիրութեամբ Յովհաննու Ավդալեանց, 1825»։

1828 թվականին ճեմարանին կից կազմակերպվում է «Արարատյան գրադարանը»՝ «յօգուտ մանկանցն ուսանողաց և ազգին մերոյ ընդհանրապէս»։ Կազմակերպողների նպատակն էր վարկ տալ աշակերտների արտադպրոցական ընթերցանությանը, ինչպես և հասարակության մեջ ընթերցասիրություն արթնացնել, նրան կապել ազգային կուլտուրայի հետ, կանխել ապազգայնացման վտանգը, որ գնալով սպառնալի էր դառնում։

Մարդասիրական ճեմարանի հիմնադիրներից և հնդկահայ գաղութի եռանդուն գործիչներից Հովհ. Ավդալյանը 50-ական թվականների երկրորդ կեսին իր մի ճառում մռայլ գույներով է նկարագրում ձուլման այդ վտանգը. «...Սէր հայկական դրագիտութեան նուազելով նուազեցաւ ի միջի մերում յայսմ քաղաքի, վասն զի սկսան անպիտան, անշահ և ումպէտ համարիլ զգիտութիւն լեզուին հայոց... Անգղիական լեզուն գեր ի վերոյ ամբարձեալ։ Անգղիականն լոկ պիտանի, շահավետ և հարկաւոր երևեալ։ Անգղիականն միայն զհաց և զապրուստ հայթհայթեալ։ Անգղիագարութիւնն՝ իբրև մղձաւանջ տիրեալ է ի վերայ սրտից ամենեցուն։ Անգղիագարութիւնն իսպառ ցամաքեցուցեալ է զաղբիւրս սիրոյ մայրենի լեզուագիտութեան և հայկական դրագիտութեան։ Անգղիագարութիւնն գրեթէ դատարկացոյց, թափուր կացոյց զՃեմարան մեր յաշակերտաց, և հայոց իջոյց զայն մինչև ցյետին անշքութիւն... Զարթի՛ր քերթողահայրդ մեր Մովսէս, զարթի՛ր և ողբա՛...»[1]։

Չնայած այդ «անշքացեալ» վիճակին, Մարդասիրական Ճեմարանը շարունակում է կուլտուր-լուսավորական իր գործունեությունը նաև հետագայում։

Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանը հիմնվել է 1775 թվականին, սակայն նրա գործունեության առավել բեղմնավոր շրջանը XIX դարի 30—40-ական թվականներն են։ Այդ թվականներին վարժարանը եղել է

---

[1] «Ճառ զոր ասաց վարժապետ պարոն Յովհաննէս Ավդալեանց ի ժողովի անդամոց Հայկական մարդասիրական ճեմարանին որ ի Կալկաթա, ի Վենետիկ, 1858», էջ 32—33։

Զմյուռնիայի հայ գաղութի մտավոր կյանքի կենտրոնը։ 1830-ական թվականներից այդտեղ աշակերտների ուժերով կազմակերպվում են թատերական ներկայացումներ։ 1840 թվականից վարժարանն ունեցել է իր տպարանը, ուր բացի դպրոցական դասագրքերից և ձեռնարկներից («Այբբենարան», «Սաղմոս») տպագրվել են գեղարվեստական երկեր՝ Հովհան Վանանդեցու «Ոսկի դարը», Շատոբրիանի «Ադալա կամ երկու վայրենիներում սերը» և այլն։ Մեսրոպյան վարժարանին կից եղել է ժամանակի համար հարուստ «գրքատուն» (գրադարան), որ կոչվել է «Թանգարան վերծանության Սուրբ Մեսրոպյան վարժարանին»։ 1842 թվականին գրադարանն ունեցել է «հազար կտորեն ավելի գիրք՝ հայերեն, ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն, հունարեն, ռուսերեն և տաճկերեն»[1]։

1840 թվականին Զմյուռնիայում հիմնվում է «Հռիփսիմյան աղջկաց դպրատունը»։ Նույն թվականից սկսում է լույս տեսնել «Արշալույս Արարատյան» պարբերականը, որի աշխատակիցների զգալի մասը Մեսրոպյան վարժարանի աշակերտներն են։ Այս ուսումնական հաստատությունից են դուրս եկել հայ գրականության և հասարակական մտքի մի շարք նշանավոր ներկայացուցիչներ՝ Մ. Մամուրյան, Գր. Չիլինկիրյան, Գ. Կոստանդյան, Մ. Աղաբեկյան և ուրիշներ։

XVIII դարի 90-ական թվականներից Պոլսում գոյություն ունեին թաղային վարժարաններ, որտեղ ուսուցումը տարվում էր խալիֆայական-սխոլաստիկ «մանկավարժության» քարացած դոգմաներով։ Պոլսահայ դպրոցի պատմության մեջ նոր շրջան է սկսվում 1838 թվականից, երբ հիմնվում է Յուսկյուտարի ճեմարանը։ Այստեղ, որպես միջնակարգ դպրոց, գալիս էին շարունակելու իրենց ուսումնառությունը թաղային վարժարաններն ավարտողները։ Յուսկյուտարի վարժարանը 40-ական թվականներին դառնում է ոչ միայն մտավոր կյանքի, այլև հասարակական բախումների կենտրոնը։ Ուսումնական այս հաստատության շուրջն է ծավալվում ամիրաների և էսնաֆների հայտնի պայքարը, որտեղից և սկիզբ է առնում սահմանադրական շարժումը։

XIX դարի 30-ական թվականների կեսերից սկսում են գործել նաև Մուրատյան և Ռաֆայելյան վարժարանները. առաջինը բացվում է 1834 թվականին Պադուայում (Իտալիա), երկրորդը՝ 1836 թվականին Վենետիկում։ Հնդկահայ վաճառականներ Սամուել Մուրատյանի և Ռաֆայել Ղարամյանի կտակած գումարներով հիմնված այս դպրոցները գտնվում էին Վենետիկի Մխիթարյանների իրավասության և նրանց իդեոլոգիական ազդեցության տակ։ Հակառակ այդ վարժարաններում տիրող կաթոլիկական-կղերական ոգուն, նրանք, այնուամենայնիվ, զգալի դեր են կատարել ժամանակի մտավոր շարժման մեջ։

Մուրադյան և Ռաֆայելյան վարժարաններում են ուսանել արևմտահայ մի շարք գրողներ և հրապարակախոսներ՝ Մկ. Պեշիկթաշլյանը, Մ. Աղաբեկյանը և ուրիշներ։

---

[1] «Արշալույս Արարատյան», 1842, № 72։

5

XVIII դարի վերջին քառորդը նաև հայ թատրոնի պատմության նոր էջափուլի սկիզբն է։

Ինչպես կուլտուրական այլ ձեռնարկումների (տպագրություն, գրական ժողովածուներ, գրադարաններ, ընթերցարաններ), այնպես էլ թատերական ներկայացումների կազմակերպիչները լինում են դպրոցները։

1770-ական թվականների երկրորդ կեսից Վենետիկի Մխիթարյանների դպրոցում, աշակերտության ուժերով, պարբերաբար տեղի են ունենում թատերական ներկայացումներ։ Բեմադրվում են Մխիթարյան հեղինակների շարադրած կամ փոխադրած, գերազանցապես կրոնական և պատմական բովանդակություն ունեցող դրամատիկական երկեր։ Ներկայացմանը նախորդում էր չափածո կամ արձակ մի «հառաջաբանություն», որով հանդիսականին ծանոթություն էր տրվում պիեսի բովանդակության մասին։ Ներկայացումն ավարտվում էր նույնպես չափածո կամ արձակ մի «վերջաբանությունով», որտեղ բարոյա-կրթական հետևություններ էին արվում։ Ներկայացումները, մեծ մասամբ, տեղի էին ունենում բարեկենդանին և Վարդանանց տոնին։ Պատմական ողբերգությունից հետո բեմադրվում էր մի փոքրիկ կատակերգություն։ Ողբերգությունների լեզուն գրաբարն էր, իսկ կատակերգություններինը՝ պոլսահայ գավառաբարբառը։

Մխիթարյանների դպրոցական թատրոնի ազդեցության ոլորտը բնականաբար, խիստ սահմանափակ էր։ Հանդիսատեսները նույն դպրոցի սաներն էին, միաբանները, երբեմն նաև վանքի այցելուները։

Թատերական կուլտուրայի զարգացումը պոլսահայ գաղութում նույնպես սկսվել է դպրոցական ներկայացումներով, XIX դարի առաջին տասնամյակում։ 1810 թվականին Մ. վ. Բժշկյանը ներկայացումներ է կազմակերպում Պոլսի Բերա թաղամասում գտնվող իր դպրոցում։ 1828 թվականին բանաստեղծ և մանկավարժ Գր. Փեշտիմալճյանը Գում-Գափուի Պեզճյան վարժարանում, աշակերտության ուժերով բեմադրում է կրոնա-դիցաբանական բովանդակությամբ մի քանի պիեսներ, այդ թվում իտալացի դրամատուրգ Մետաստազիոյի դրամատիկական երկերից մեկ-երկուսը։

1846 թվականին Պոլսում սկսում է գործել Արամյան ընկերության կրկես-թատրոնը՝ Հով. Գասպարյանի ղեկավարությամբ։ Արամյան թատերախումբը 1849—1851 թվականներին ներկայացումներ է տալիս նաև Վրաստանի հայաշատ քաղաքներում (Թիֆլիս, Քութայիս, Գորի) և Երևանում[1]։

XIX դարի 20-ական թվականներին թատերական ներկայացումներ են կազմակերպվում նաև հնդկահայ գաղութում՝ Կալկաթայում և Մադրասում. բեմադրվում են թե՛ կենցաղային կոմեդիաներ (Մարտ. Մկրտչյանի

---

[1] Գ. Լևոնյան, Արամյան ընկերության թատրոնը կամ առաջին հայերեն ներկայացումը Երևանում. 1850 թվին, «Վերելք», 1933, № 4, էջ 112—115։

Գ. Ստեփանյան. Արամյան թատրոնի գործունեությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 1, էջ 103—114։

«Խարադիմայ գժրողութեան»), թե՛ պատմական ողբերգություններ (Ղ. Ինճիճյանի «Մեծն Վարդանայ Մամիկոնէի փախուստը յօտարութիւն»)։

Դպրոցական թատրոններ, ավելի կամ պակաս տևողությամբ, գոյություն են ունեցել հայաշատ այնպիսի կենտրոններում, ինչպիսիք են Թիֆլիսը և Նոր-Նախիջևանը։ 1824—1830 թվականներին Ներսիսյան դպրոցում, Հ. Ալամդարյանի տեսչության օրով, աշակերտների մասնակցությամբ տրվել են ներկայացումներ. ռուսերեն բեմադրվել է Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը»։ Կան տվյալներ 40-ական թվականներին Թիֆլիսում «Շերմազանյանի դարպասում» կազմակերպված ներկայացումների մասին. այդտեղ է բեմադրվել Գ. Շերմազանյանի «Նկարագիր ինչ-ին։ գործոց Կարապետ եպիսկոպոսի...» աշխարհաբար սատիրական կոմեդիան։ Նույն շրջանում, 40-ական թվականների սկզբին Թիֆլիսի գավառական դպրոցում, Աբովյանի պաշտոնավարության ժամանակ, հավանաբար, բեմադրվել են «Ֆեոդորա կամ որդիական սեր», «Խաղարկություն մանկանց» դրամատիկական երկերը։

Անցյալ դարի 30—40-ական թվականներին Նոր-Նախիջևանում դպրոցական թատրոնի գոյության մասին վկայում է Միք. Նալբանդյանը. «...Քաղաքական վարժատան մեջ,— գրում է նա,— պ. Խատամյանցը և պ. Տիգրանյանցը քանի անգամ պատճառ տվեցին հայերին մի բան տեսանելու կամ լսելու թատրոնական բեմից մայրենի լեզվով»[1]։ Բացի պատմական ողբերգություններից («Ռադամիզդ և Զենոբիա», «Տրդատ թագավոր», «Քաջ Վարդան»), բեմադրվել են նաև վոդևիլներ Նոր-Նախիջևանի բարբառով (Ս. Տիգրանյանի)։

Գոյություն ունեն տվյալներ Ղրիմի Ղարասու Բազարում (1824—1825) և Գանձակում (1846) կազմակերպված դպրոցական ներկայացումների վերաբերյալ։ Այսպիսով, XVIII դարի վերջին քառորդից սկզբնավորվում է դպրոցական թատրոնը, որի հիմքի վրա 50-ական թվականների վերջերին կազմակերպվում է հայ պրոֆեսիոնալ թատրոնը։

Նույն ժամանակաշրջանում զարգացում են ապրում նաև արվեստի մյուս ճյուղերը՝ գեղանկարչությունը և երաժշտությունը։

XVIII դարի վերջին քառորդի և XIX դարի առաջին կեսի հայ գեղանկարչության ամենացայտուն դեմքերն են աշուղ-բանաստեղծ Նաղաշ Հովնաթանից սերող Հովնաթանյան նկարիչները։

Հովնաթան Հովնաթանյանը էջմիածնի վանքի որմնանկարներում վառվռուն գույներով ու նախշերով արտահայտել է ոչ այնքան պատվիրատուների կրոնական-միստիկ տրամադրությունները, որքան ժամանակակից աշուղական-ժողովրդական պոեզիային հատուկ կենսասիրությունը։ էջմիածնի որմնանկարներում Հովնաթան Հովնաթանյանին հեղինակակից է նրա որդին՝ Մկրտում Հովնաթանյանը։ Թե՛ հայրը և թե՛ որդին ունեն նաև պատմական-կոմպոզիցիոն նկարներ։

---

[1] Միք. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, 1945, էջ 392։ Տե՛ս նաև՝ Ռ. Պատկանյան, Երկեր, 1955, էջ 730։

Նկարիչների այս տաղանդավոր տոհմից ամենանշանավորը Հակոբ Հովնաթանյանն է (1809—1884), որը համարվում է նոր շրջափուլի սկզբնավորողը հայ գեղանկարչության պատմության մեջ[1]։ Նրա դիմանկարների ռեալիստական արտահայտչականությունը կերպարվեստի մարդում կենդանի արձագանքն էր, կենսագործումը էսթետիկական այն սկզբունքների, որոնք բխում էին նոր հունի մեջ մտած հասարակական զարգացման խնդիրներից։

XIX դարի առաջին կեսի հայ գեղանկարչության զարգացման վրա բարերար ներգործություն են ունեցել ռուսականավոր կերպարվեստագետները։ Նշանակալի է, որ այդ շրջանի հայ նկարիչներից շատերը (Աղաթոն Հովնաթանյան, Սուքիասյան, Մովսես Մելիքյան, Ստեփան Ներսիսյան) սովորել են Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիայում[2]։ Աղաթոն Հովնաթանյանը (1815—1893), Հակ. Հովնաթանյանի կրտսեր եղբայրը, աշակերտել է Կ. Պ. Բրյուլլովին։ Նրա գործունեությունը, սակայն, ծավալվել է ոչ այնքան գեղանկարչության, որքան վիմագրության բնագավառում։ Արվեստի այս տեսակի զարգացմանը հայ իրականության մեջ մեծապես նպաստել է Աղաթոն Հովնաթանյանը։

Նկարիչ Մովսես Մելիքյանը եղել է Լերմոնտովի պատանեկության ընկերներից, գրել է հիշողություններ ռուս մեծ բանաստեղծի մասին[3]։ Սովորել է Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիայում՝ Կ. Պ. Բրյուլլովի դասարանում, որն ավարտել է արծաթե մեդալով՝ «Մերունու գլուխը» դիմանկարի համար։

Հակ. Հովնաթանյանից հետո հայ գեղանկարչության մեջ XIX դարի առաջին կեսին (և հետագա երեք տասնամյակներին) ռեալիզմի ինքնատիպ ներկայացուցիչներից է Ստեփան Ներսիսյանը (1815—1884)։ Ուսումնառությունը Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիայում, շփումը ժամանակի առաջավոր գործիչների հետ (եղել է Խ. Աբովյանի մտերիմներից) որոշիչ նշանակություն են ունեցել նրա ստեղծագործական մեթոդի և դեմոկրատական հայացքների ձևավորման գործում։ Այս տեսակետից բնորոշ է «Խնճույք գետի ափին» կոմպոզիցիոն նկարը, որտեղ յուրովի դրսևորվել են ժամանակակից կյանքի սոցիալական հակասությունները, իրականության քննադատական ընկալումը, նկարչի հումանիզմը։

Ռուս տնտեսագետ-վիճակագիր Ի. Շոպենի վկայությամբ XIX դարի 20—30-ական թվականներին Երևանում եղել են երկու հայ նկարիչ (անունները դժբախտաբար չի հիշատակում), որոնց գործերը (դերազանցապես բնանկարներ) աչքի են ընկել «կոլորիտի թարմությամբ և հստակությամբ»[4]։

---

[1] *Изабелла Гинзбург,* Армянские художники первой половины XIX в. «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 114։

[2] Տե՛ս Մ. Ս. Սարգսյան, *Հայկական և ռուսական գեղարվեստի կապերը*, 1953։

[3] Տե՛ս Ս. Դանիելյան, *Լերմոնտովը և հայ մշակույթը*, 1960, էջ 32—38։

[4] *И. Шопен,* Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПБ, 1852, էջ 895—896։

Ինչպես ռուս, այնպես էլ հայ գեղանկարչության զարգացման գործում, XIX դարի առաջին կեսին և հետագայում էական նշանակություն է ունեցել հայազգի աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհ. Այվազովսկու (1817—1900) արվեստը։ Թուրքերի դեմ հունական ապստամբության առանձին դրվագներին նվիրված նրա կտավները, հատկապես «Նավարինի ճակատամարտը» (1848), որոնք արտահայտում են նկարչի ջերմ համակրանքը ազատության համար մարտնչող հույների և նրանց օգնող քաջարի ռուս ծովայինների նկատմամբ, անշուշտ, արձագանքում էին թուրք բռնապետության լուծը թոթափել ձգտող հայ ժողովրդի զգացմունքներին և ոգևորում էին ժամանակի առաջավոր հայ գործիչներին, այդ թվում նաև նկարիչներին։

Շատ քիչ տվյալներ կան նույն ժամանակաշրջանի արևմտահայ նկարիչների վերաբերյալ։ XIX դարի առաջին կեսի նկարիչներից հիշատակվում են Ումետ Պեհլպատը (1818—1874), Աբրահամ Սագայանը (1821—1876), Պետրոս Սրապյանը (1813—1898), որոնք զբաղվել են գերազանցապես դիմանկարչությամբ և եկեղեցական պատկերագրությամբ[1]*։*

Գեղանկարչության տեսությանը և «տեխնոլոգիային» նվիրված աշխատություններից ուշագրավ է 1813 թվականին Վենետիկում լույս տեսած «Մանրանկարք որ է մինիաթուռա արհեստ մանրակրկիտ ներկերանգ նկարագրութեան» գիրքը, ուր խոսվում է նկարչության կանոնների («Կանոնք ինչ յուսումն նկարչութեան»), ներկերի տեսակների («Յաղագս ներկերանգաց, որք վարին ի մանրանկարս») և նրանց գործածության մասին («Յաղագս գործածութեան նախակարգեալ ներկից») և այլն։ Հավելվածում համառոտ կենսագրական տեղեկություններ են տրվում Լեոնարդո դա Վինչիի, Ռաֆայելի, Ռուբենսի, Տիցիանի, Ֆիդիասի և եվրոպական կլասիկ ու ժամանակակից այլ նկարիչների վերաբերյալ։

Միջնադարյան հայ մանրանկարչության տրադիցիաների շարունակողը XIX դարի առաջին կեսին եղել է Իսահակ Տեր-Գրիգորյան Երևանցին, որ հայտնի է Սահակ Ծաղկարար կամ Ծաղկազարդ անունով (1780—1858)։

Սահակ Ծաղկարարը զբաղվել է ոչ միայն ծաղկարարությամբ (մանրանկարչությամբ), այլև միջնադարյան հռչակավոր իր արվեստակիցների նման իմացել է պատրաստել բարձրորակ ներկեր (որդան կարմիր, լաջվարդ և այլն)։

Սահակ Ծաղկարարը մեկն է եղել ժամանակի առաջավոր այն գործիչներից, որոնք խորապես գիտակցել են արհեստների և արդյունաբերության զարգացման խոշոր նշանակությունը Հայաստանի համար. «...Ամենայն Եւրոպայ և հզօր տէրութիւնք, որ պայծառ անուն ունին, ուստի է պայծառութիւն նոցա,— գրել է նա.— ոչ ապաքէն արհեստաւորքն են, որք զանազան հնարս գործ ածեն իւրաքանչիւր քաղաքի գործաւորքն իւրա-

---

[1] **Ռաֆ. Շիշմանյան,** *Բնանկարն ու հայ նկարիչները,* 1958, էջ 233։

բանչիր տէրանց»[1]։ *Ղեկավարվելով «ազգը լուսավոր ազգությունների ուղիներով տանելու» գաղափարով, Սահակ Ծաղկարարը արհեստները Հայաստանում զարգացնելու ծրագրեր է մշակել։ Հետագայում Նալբանդյանը բարձր գնահատելով Սահակ Ծաղկարարի գործունեությունը որդան կարմիր ստանալու ուղղությամբ, առաջարկում էր շարունակել այն՝ ընդգծելով որդան կարմիրի տնտեսական նշանակությունը Արարատյան դաշտի աղքատ շինականների համար*[2]։

Հայկական երաժշտությունը XIX դարի առաջին կեսին գերազանցապես եկեղեցական բնույթ էր կրում։ Ժամանակի երաժիշտները կոչվում էին «տիրացու», որոնք և դպրոցներում ավանդում էին «երաժշտություն» կամ «երգեցողություն» առարկան, որ հանգում էր եկեղեցական մի քանի եղանակների, շարականների ուսուցմանը։ Ժողովուրդը լսում և կատարում էր աշուղական-ժողովրդական երգեր, որոնց եղանակները անցնում էին բերնից-բերան, կամ սերնդից-սերունդ, անգիր, հիշողությամբ։ Հայկական խազային նոտագրությունը վաղուց մոռացված էր, իսկ եվրոպական ձայնագրությունը հայ իրականության մեջ դեռևս մուտք չէր գործել։ Հայկական երաժշտությունը, ինչպես Կոմիտասն է նկատում, «մի շարք երաժիշտ և իմաստակ տիրացուների ճաշակի կամ կրքի խաղալիք էր»[3]։

Ահա այս անմխիթար վիճակում էր հայկական երաժշտական կուլտուրան, երբ Համբարձում Լիմոնճյանը կամ ինչպես ժամանակակիցներն են նրան կոչել՝ Պապա Համբարձումը (1768—1839) 30-ական թվականների վերջերին ստեղծում է հայկական ձայնագրության նոր սիստեմը, որով հնարավորություն է ընձեռում գրի առնելու և պահպանելու հայկական հին եղանակները, գիտական հիմքի վրա դնելու երաժշտության ուսուցումը դպրոցներում։ Հայկական նոր ձայնագրությունը նրա ստեղծողի անունով կոչվում է «Լիմոնճյան սիստեմ», որն իր գոյությունը պահպանում է գրեթե ամբողջ դարի ընթացքում[4]։ *Լիմոնճյանի սիստեմի մշակմանն ու տարածմանը նպաստում են նրա աշակերտները՝ Պետրոս Ջեռմլեքճյանը (1785—1840) և Արիստողոմ Յություճյանը (1818—1847), որ ձայնագրել է մի շարք եկեղեցական եղանակներ, այդ թվում ժամանակին տարածված «Փառք ի բարձունս»։*

XIX դարի առաջին կեսին Պոլսում հայտնի են եղել նաև երաժիշտ-նվագածուներ Նեյզան Ջենոբը (1810—1866) սրնգահար, Հ. Լիմոնճյանի որդին, Թամպուրի Ալեքսանը (1815—1864) թամպուր նվագող, հեղինակ մի քանի արևելյան եղանակների[5]։

---

1 Տ. Ղազանչյան. *Սահակ Ծաղկարար*, «Բանբեր Մատենադարանի», 1956, N 3, էջ 133։

2 Տե՛ս Միք. Նալբանդյան. *Երկերի լիակատար ժողովածու*, հ. IV, 1949, էջ 215։

3 Տե՛ս Կոմիտաս, *Հոդվածներ և ուսումնասիրություններ*, 1941, էջ 131։

4 Տե՛ս Մաթ. Մուրադյան, *Հայկական նոր ձայնագրությունը*, «Սովետական արվեստ», 1955, N 6, էջ 49։

5 Տե՛ս Արիստ. Հիսարլյան. *Պատմություն հայ ձայնագրության և կենսագրությունք երաժիշտ ազգայնոց*, Պոլիս, 1914։

Լիմոնճյանի սիստեմը պայմաններ ստեղծեց հայ ազգային երաժշտության հետագա զարգացման համար, որ նոր շրջափուլ մտավ 50—60-ական թվականներին՝ Գարր. Երանյանի և Տ. Չուխաճյանի ջանքերով։

6

Հասարակական նոր հարաբերությունների զարգացման և ազգային ինքնագիտակցության զարթոնքի արդյունքն էին այն կրթական ընկերությունները, որոնք XVIII դարի վերջերից և մանավանդ XIX դարի սկզբներից սկսեցին կազմակերպվել և գործել հայկական գաղութներում։ Դեռևս 1781 թվականին Պոլսի Ղալաթիա թաղում հիմնվում է «Լուսավորչաց եղբայրություն» ընկերությունը, որը 1803 թվականին բաց է անում «Մանկաց դպրատունը»։ 1810 թվականին Պոլսում կազմակերպվում է «Արշարունյաց ընկերությունը», նպատակ ունենալով աջակցել տպագրության գործին։ Այդ ընկերության միջոցներով է հրատարակվում «Դիտակ Բյուզանդյան» պարբերականը (1812—1816)։

«Թանզիմաթից» հետո, որը Թուրքիայի քրիստոնյա հպատակներին ընձեռնում էր որոշ իրավունքներ նրանց ներքին կյանքում, XIX դարի 40-ական թվականներին ավելանում է Պոլսում գործող կուլտուրական ընկերությունների թիվը։ 1841 թվականին հիմնվում է «Ուսումնական ընկերությունը», որը, համաձայն իր կանոնադրության, հրատարակում է «կանոնավոր, անսխալ աշխարհաբառ և պարզ գրաբառ», ինքնուրույն և թարգմանական գրքեր։

1846 թվականին Պոլսում կազմակերպվում են «Համազգյաց», «Արամյան» և «Նարեկյան» ընկերությունները, հետևյալ՝ 1847 թվականին՝ «Վերածնության թանգարանը»։

«Համազգյաց ընկերությունը»,— որի հիմնադիրներից և եռանդուն անդամներից էր բանաստեղծ-դրամատուրգ Մկ. Պեշիկթաշլյանը,— նպատակադրել էր, առանց դավանանքի խտրության, մտավորական երիտասարդությանը համախմբել համազգային նպատակների շուրջը՝ աղջիկների և տղաների դպրոցներ հիմնել, գրքեր տպագրել և տարածել, նպաստել երկրագործության և վաճառականության զարգացմանը («ըստ եվրոպական օրինի»)։

«Նարեկյան ընկերության» ջանքերով 1846 թվականին Բերա թաղամասում հիմնվում է «Նարեկյան վարժարանը»։

«Արամյան ընկերությունը» 1846 թվականին կազմակերպում է «Արամյան թատերախումբը», որի մասին խոսվեց թատրոնին վերաբերող հատվածում։

«Վերածնության թանգարանը» դրադարան-ընթերցարան էր, որի հիմնադիրները ձգտում էին ժողովրդի մեջ ընթերցանության սեր արծարծել։ Նույն նպատակով, բայց ավելի լայն ծրագրով, 1853 թվականին հանդես է գալիս «Ընթերցասիրաց թանգարանը»։ Վերջինիս կանոնադրության մեջ նախատեսնված էր ո՛չ միայն «ազգիս մեջ հարկավոր, օգտակար և

զբոսական գրքեր ու գրվածքներ տարածել աժան գնով», այլև «անդամակցացը մեջ լեզվագիտության և ամենահարկավոր արհեստից ուսումը մտցնել և եղածը դյուրացնել»[1]։

1841 թվականին Տրիեստի մի քանի հայ վաճառականների (Պետրոս Յուսուֆյան, Աբրահամ Ապրոյան, Գրիգոր Աբելյան) նյութական օժանդակությամբ Զմյուռնիայում հիմնվում է Սյունյաց ընկերությունը։ «Աս ընկերության անունը Սյունյաց ընկերություն *դնել արժան դատեցավ,— գրում է «Արշալույս Արարատյան» թերթը,— ի հիշատակ այն երևելի դպրատուններուն, որոնք մեր սուրբ թարգմանիչներուն՝ Սահակա և Մեսրովպա ժամանակը Սյունյաց նահանգին մեջը շինվելով, հետզհետե ծաղկեցան, մանավանդ ութերորդ դարուն մեջ համբավ ստացան»[2]։ Ընկերության անդամների թվում, որ 4—5 ամսվա ընթացքում հասավ քառասունի, բացի զմյուռնիացիներից, կային Տրիեստի, Վիեննայի, Պոլսի, Բաղդատի, Մադրասի, Բոմբեի հայերից ևս։*

«Սյունյաց ընկերության» ծրագրի կենտրոնում եղել է Զմյուռնիայում և Արևմտյան Հայաստանի գավառներում գտնվող դպրոցների բարեկարգման խնդիրը։ «Արշալույս Արարատյանը», գովաբանելով Սյունյաց ընկերության երկամյա գործունեությունը, գրում էր. «Արդեն Անատոլուի քանի մը քաղաքներ վարժապետներ հաստատեց ու հարկավոր եղած գրքերը ղրկեց հայազգի աղքատ տղոց ուսումնական հառաջադիմությանը օգնելու... Ասկե զատ քաղաքից դպրատուններուն արժանավոր կառավարիչներ կարգեց բարեկարգությունը հաստատ պահելու համար։ Այլև Մեսրոպյան դպրոցին աշխարհագրության, երկրաչափության, մաթեմաթեկայի, ուրվագրության ուսուցիչներուն ամսականները կհատուցանե։ Նմանապես Սարգսյան աղջկաց ուսումնարանին գաղղիարեն վարժապետին վարձքը Սյունյաց ընկերությունը կվճարե»[3]։

Զմյուռնիայում 1840-ական թվականներին գործում էին նաև «Արագածունյաց» (1843) և «Երկրագործական» ընկերությունները։ Սրանցից առաջինը ուներ իր տպարանը, հրատարակում էր գրքեր և «Հայրենասեր» պարբերականը (1843—1846)։

Հնդկահայ գաղութում կրթական ընկերությունները սկսել են կազմակերպվել XIX դարի երկրորդ տասնամյակից։ 1815 թվականին Բոմբեյում հիմնվել է «Օճանսփյուռյան ընկերությունը» (օճան՝ օգնություն, նպաստ, նաև՝ բարիք), որի անդամներից մեկը՝ Մարտիրոս Մկրտչյան Շիրազեցին տեղափոխվելով Կալկաթա, այնտեղ կազմակերպում է համանուն մի նոր ընկերություն, տպագրում է «Խորադիմայ դժրողութեան» կատակերգությունը (որի հեղինակի ինքնությունը որոշել է Վ. Թերզիբաշյանը)[4], սկսում է հրատարակել «Շտեմարան» պարբերականը։ Վերջինիս անվանաթերթի

---

1 *«Կանոնադրություն ընթերցասիրաց թանգարանին», Կ. Պոլիս, 1853։*

2 *«Արշալույս Արարատյան», 1841, № 38։*

3 *«Արշալույս Արարատյան», 1843, № 142։*

4 *Տե՛ս* Վ. Թերզիբաշյան, *Հայ դրամատուրգիայի պատմություն, 1959, էջ 231։*

վրա գրված՝ «Տպարան Օհանասփյուռյան ժողովույն» բառերը ցույց են տալիս, որ ընկերությունն ունեցել է իր տպարանը։

Թեև կարճատև, բայց բեղմնավոր է եղել Մ. Թաղիադյանի նախաձեռնությամբ հիմնադրված «Արարատյան ընկերության» գործունեությունը Կալկաթայում (1845—1848)։ Նույն ժամանակաշրջանում Մ. Թաղիադյանի խմբագրությամբ լույս տեսնող «Ազգասերը» ոչ միայն տպագրվել է Արարատյան ընկերության տպարանում, այլև համարվել է նրա օրգանը («Օրագիր Արարատյան ընկերության»)։ Իր գոյության 3—4 տարում ընկերությունն հրատարակել է մի շարք գրքեր, այդ թվում Թաղիադյանի՝ «Վէպ Վարդգէսի» (1846), «Վէպ Վարսենկա» (1847), «Սօս և Սօնդիպի» (1847), «Ճանապարհորդութիւն ի Հայս», «Թուխակ Թաղիադեանց» (1847)։ Արարատյան ընկերության նյութական և բարոյական օժանդակությամբ է Թաղիադյանը հիմնում «Ս. Սանդխտյան» իգական դպրոցը (1846)։

Բացառապես հրատարակչական բնույթ է ունեցել Վիեննայի Արամյան ընկերությունը («Արամեան ընկերութիւն վասն գիրս ումանց տարածանելոյ», 1843)։ Նա իր նպատակն է համարել «...Առատաձեռն բարեբարներու օգնությամբը... ուման երևելի և իմաստուն հեղինակներու գրքերը տպել՝ մեր ազգին հառաջադիմության ու իմաստուններուն օգտին համար...»[1]։

Այս ընկերությունների մեծ մասի (Կալկաթայի՝ Արարատյան, Զմյուռնիայի՝ Սյունյաց, Պոլսի՝ Համազգյաց ընկերությունների և մի քանի ուրիշների) հիմնական նպատակն էր կրթա-լուսավորական գործը դուրս բերել եկեղեցու ենթակայությունից և տանել աշխարհականացման, կյանքի նոր պահանջներին համապատասխան ուղիով։

Տպարաններ, դպրոցներ, այլևայլ կրթական ընկերություններ հիմնելով, պատմության ասպարեզ իջած և իր վերելքի շրջանն ապրող երիտասարդ հայ բուրժուազիան առաջ էր մղում կուլտուրայի, ազգային ինքնագիտակցության, հասարակական մտքի, գրականության զարգացումը, և այդպիսով կատարում նշանակալի, առաջադիմական դեր։

7

Հայ պարբերական մամուլը սկզբնավորվում է XVIII դարի վերջին, Մադրասում, ուր երկու տասնամյակ առաջ ձևավորվել էր հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը։ Սակայն առաջին հայ պարբերականը՝ «Ազդարարը» (1794—1796) հանդես չի գալիս որպես Բաղրամյանի և Շահամիրյանի ազատագրական պայքարի ուղեգծի շարունակողը։ Նրա դիրքորոշումը յակոբինյանների նկատմամբ բացասական է, այդուհանդերձ, նորածագ հնդկահայ բուրժուազիայի օրգանը պաշտպանում է Ֆրանսիական բուրժուական մեծ ռևոլյուցիայի հետևանքով տապալված ֆեոդալիզմի փլատակների վրա հաստատվող տնտեսական-հա-

---

[1] «Արշալույս Արարատյան», 1843, № 131։

սարակական նոր հարաբերությունները։ Հատկանշական է, որ «Ազդարարի» խմբագիր Հ. Շմավոնյանը, չնայած իր չափավոր հայացքներին, 1794 թվականին տպագրում է ռևոլյուցիոն Ֆրանսիային նվիրված Մադրասի ցուցահանդեսի մասին Մարգար Խալդարյանի հայտարարությունը, որտեղ Վոլտերն ու Ռուսսոն գնահատվում են որպես «գերահռչակ հեղինակներ»[1]։

Հար. Շմավոնյան Շիրազեցի

Ազատագրության ձգտումը և նրա նվաճման համար ազգային միասնության գաղափարը կազմում են «Ազգարարի» հոդվածների և բանաստեղծությունների հիմնական բովանդակությունը։ Ուշագրավ է նաև, որ Շմավոնյանը հայ ժողովրդի ազատագրության հեռանկարը կապում էր Ռուսաստանի հետ, և օտար հողերում դեգերող հայրենակիցներին կոչ էր անում վերադառնալ Հայաստան։ «Առէ՛ք զզանձ ձեր զուք, ի միաբան, գնացէ՛ք ի սկոյն աշխարհն հայոց, քանզի այն է ձեր տուն…»[2]։


ԱԶԴԱՐԱՐ

«Ազդարարի» անվանաթերթը

«Ազդարարի» հրապարակախոսության և գեղարվեստական երկերի համար բնորոշ է լուսավորության քարոզը. լուսավորությունը, կրթությունը հնդկահայ պարբերականը համարում էր ազգային ինքնաճանաչման և քաղաքական ինքնագիտակցության նախապայմանը։

XVIII դարի վերջից պարբերականներ են սկսում հրատարակել Վենետիկի Մխիթարյանները։ Նրանց առաջին պարբերականը Ղ. Ինճիճյանի «Տարեգրությունն» է (1800—1802), որն ըստ էության տարեգիրք-ժողովածու էր, ուր կարելի էր գտնել տեղեկություններ նախընթաց տարվա քա-

1 Տե՛ս Ա. Բ. Կարինյան, *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության*, հտ. Ա, 1956, էջ 216—217։

2 Նույն տեղում, էջ 225։

ղաքական, տնտեսական, կուլտուրական կյանքի կարևոր իրադարձությունների վերաբերյալ։ «Տարեգրության» խմբագիր-հեղինակը, սակայն, դեպքերի և փաստերի սոսկ արձանագրությամբ չի բավականանում. կաթոլիկ կրոնավորի հայացքների անխուսափելի դրոշմը նկատելի է ամենուրեք՝ և՛ քաղաքական լուրերի, և՛ կուլտուրայի ու գիտության մասին տրվող տեղեկությունների վրա։ Նա չի փախցնում առիթը արտահայտելու իր բացասական վերաբերմունքը Ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի, մասնավորապես յակոբինյանների նկատմամբ։

«Տարեգրության» պատմական արժեքն այն է, որ լինելով աշխարհաբար առաջին պարբերականը (լեզուն պոլսահայ բարբառն է՝ խառն թուրքերեն բառերով), որոշ չափով նպաստել է կրթության տարածմանը և արևմտահայ գրական լեզվի հետագա զարգացմանը։

«Տարեգրության» շարունակությունը պետք է համարել «Եղանակ Բյուզանդյանը», որ դարձյալ Գ. Ինճիճյանի խմբագրությամբ սկսեց լույս տեսնել Վենետիկում 1803 թվականից («Տարեգրությունից» անմիջապես հետո), իր գոյությունը պահպանելով մինչև XIX դարի երկրորդ տասնամյակի վերջը։

«Եղանակ Բյուզանդյանը» նույնպես տարեգիրք-ժողովածու էր, սակայն «Տարեգրությունից» տարբերվում էր բովանդակության բազմազանությամբ. պարունակում էր ոչ միայն տարեկան տեսություններ տարբեր երկրների քաղաքական, առևտրական, տնտեսական, կուլտուրական կյանքի վերաբերյալ, այլև գրական-գեղարվեստական երկեր՝ ինքնուրույն և մեծ մասամբ թարգմանական-փոխադրական կենցաղային-բարոյախոսական առակներ. տպագրվում էին նաև բնագիտական, աշխարհագրական, աստղաբաշխական հոդվածներ, ազգագրական, վիճակագրական տեղեկություններ, գիտական նորություններ, քաղաքական անցքերի ժամանակագրություն։ Պատմական և ժամանակագրական հոդվածներում ավելի որոշակի է դրսևորվել «Եղանակ Բյուզանդյանի» խմբագրի կղերա-ավատական աշխարհայացքը, նրա բացասական, ուղղակի թշնամական դիրքորոշումը Ֆրանսիական ռևոլյուցիայի, ժամանակի առաջավոր, բուրժուա-դեմոկրատական գաղափարների նկատմամբ։ «Եղանակի» լեզուն ևս պոլսահայ աշխարհաբարն է, որ հետզհետե, մանավանդ վերջին տարիները, սկսում է մաքրվել թուրքերեն բառերից։

1812—1816 թվականներին Մխիթարյան վարդապետների խմբագրությամբ Պոլսում լույս էր տեսնում «Դիտակ Բյուզանդյան» պարբերականը (նախ երկշաբաթաթերթ, ապա շաբաթաթերթ), որ ըստ էության՝ բովանդակությամբ և գաղափարական ուղղությամբ գրեթե չէր տարբերվում «Եղանակ Բյուզանդյանից». թե՛ մեկը և թե՛ մյուսը ոչ այլ ինչ էին, եթե ոչ Պոլսի ամիրայության և Վենետիկի կաթոլիկ հոգևորականության հասարակական-քաղաքական հայացքների արտահայտիչները։ Այդուհանդերձ, XIX դարի առաջին երկու տասնամյակում ինչպես «Տարեգրությունը», այն-

պես էլ «Եղանակն» ու «Դիտակը», մանավանդ երկրորդը, որոշ դրական դեր կատարել են՝ ժամանակի խավար հայ իրականության մեջ տարածելով գիտության տարրերը, զարգացնելով ընթերցասիրությունը, ընդհանուր առմամբ նպաստելով մտավոր-կուլտուրական շարժմանը։

Միանգամայն տարբեր գաղափարական ուղղություն ուներ «Եղանակ Բյուզանդյանի» դադարումից երկու տարի հետո՝ 1822 թվականին Կալկաթայում հրատարակվող «Շտեմարան» պարբերականը։ Հնդկահայ գաղութի հասարակական տարբեր շերտերի և գաղափարական հակադիր հոսանքների բախումը որոշակի արձագանք է գտել «Շտեմարանի» էջերում։ «Խեղճ մարդկանց» իրավունքների պաշտպանությունը, հասարակական գործերում նրանց ձայն տալու պահանջը, մեծատունների և հոգևորականների կամայականությունների մերկացումը, խուլ բողոքը գաղութային ճնշման դեմ վկայում են, որ «Շտեմարանը» արտահայտում էր հնդկահայ գաղութում ձևավորվող բուրժուական դեմոկրատիայի գաղափարախոսությունը[1]։

Հնդկահայ այս պարբերականի գրական բաժինը ևս էականապես տարբերվում էր «Եղանակ Բյուզանդյանից» և «Դիտակ Բյուզանդյանից»։ Մխիթարյանների կրոնա-բարոյախոսական առակների, ամիրաներին և օտար «արքայազուններին» ձոնված ներբողների փոխարեն, «Շտեմարանը» տպագրում էր հասարակական կյանքի անարդարությունները, հակասությունները ակնարկող առակներ, բանաստեղծություններ. Նշանակալից է, որ առաջին անգամ այս պարբերականն է հրապարակ հանում ժողովրդական երգիչների՝ աշուղների (Բաղեր օղլու, Ղուլ Արզումի և ուրիշների) ստեղծագործությունները։

«Շտեմարանի» խմբագիրը Մարտիրոս Մկրտչյանց Շիրակեցին էր, հնդկահայ իրականության մեջ ժամանակի զարգացած մարդկանցից մեկը, որ լավ ծանոթ է եղել եվրոպական գրականությանը և, ինչպես վերը ցույց է տրված, հեղինակն է ջուղահայերի բարբառով գրված, 1821 թվականին Կալկաթայում տպագրված «Խտրադիմայ դժրողութեան» կենցաղային կոմեդիայի[2]։

Հանդես գալով որպես հասարակական նոր հարաբերությունների, բուրժուական դեմոկրատիայի վաղ շրջանի գաղափարների արտահայտիչ — «հրապարակախոս-բերան», «Շտեմարանը» շեշտում էր գրականության, մամուլի ներգործուն դերը կյանքում։

> *...Քանզի գրիչն շատ զալում բան ա,*
> *Թեպետ մի չնչին, անշունչ թեփուռ ա,*
> *Սարեր կփշրի, մարդի սիրտն ի՞նչ ա...*[3]

---

1 Տե՛ս Ա. Կարինյան. *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. Ա, 1956, էջ 239 և հետ.։*

2 Տե՛ս Վ. Թերզիբաշյան. *Հայ դրամատուրգիայի պատմություն, 1959, էջ 231 և հետ.։*

3 Ա. Կարինյան. *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. Ա, 1956, էջ 238։*

XIX դարի 40-ական թվականները հայ պարբերական մամուլի պատմության մեջ հատկանշում են մի նոր շրջան. մեկը մյուսի հետևից բազմաթիվ պարբերականներ են սկսում հրատարակվել հայկական գաղթավայրերում՝ Պոլսում, Զմյուռնիայում, Կալկաթայում, Մադրասում, Վենետիկում, Վիեննայում, Թիֆլիսում և այլուր։ Ժամանակագրական կարգով առաջնությունը պատկանում է պոլսահայ գաղութին. 1832 թվականին «Թագվիմ Վագայի» թուրքական պաշտոնաթերթին կից սկսում է լույս տեսնել «Լրո գիր» հայերեն պարբերականը՝ Պոլսի թրքախառն բարբառով. այս պաշտոնաթերթի շարունակությունն են «Հայտարար գիր լրո» (1841—1849) և «Սուրհանդակ Բյուզանդյան» (1847—1850) պարբերականները, որոնք գրեթե բացառապես տպագրում էին պաշտոնական լուրեր և հաղորդագրություններ, հետևապես ոչ մի էական դեր չեն կատարել հայ մամուլի և հասարակական մտքի պատմության մեջ։ Իր առջև լուսավորական նպատակներ էր դրել «Ազգասեր Բյուզանդյան» աշխարհաբար շաբաթաթերթը (1840—1841), որը, սակայն, միայն մի քանի ամսվա կյանք ունեցավ։

Պոլսահայ մյուս պարբերականները՝ «Հայաստանը» (1846—1852) և «Բանասերը» (1851—1852) իրենց նախորդների համեմատությամբ ավելի բովանդակալից են, բազմազան, ավելի շատ տեղ են հատկացնում ժամանակակից հայ իրականության հարցերին, տպագրում են տեղեկություններ Արևմտյան Հայաստանի գավառներից, պարբերաբար հրապարակում են պատմա-բանասիրական հոդվածներ, արձակ և չափածո գեղարվեստական երկեր։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը հանդիսանում են կղերապահպանողական գաղափարախոսության կրողները։ Այդ առավել ընդգծված ձևով արտահայտված է «Հայաստանի» «Վեցամսյա կրոնական հավելվածներում», որոնց հեղինակը շաբաթաթերթի խմբագիր Հովհ. Ջամուռճյանն էր։

«Բանասերը» դերազանցապես գրական-բանասիրական, քան հասարակական-քաղաքական ամսագիր էր. այդտեղ իրենց գրական երախայրիքով հանդես են եկել Մկ. Պեշիկթաշլյանը, Սրապ. Հեքիմյանը, Գր. Օտյանը և ուրիշներ։ «Բանասերի» էջերում է տպագրվել արևմտահայ առաջին աշխարհաբար վեպը՝ «Խոսրով և Մաքրուհին», որ պատկանում է ամսագրի խմբագրի՝ Հովհ. Հիսարյանի գրչին։

1852 թվականից Պոլսում սկսում են լույս տեսնել «Նոյյան Աղավնի» և «Մասիս» շաբաթաթերթերը, երկուսն էլ աշխարհաբար։ Առաջինի գոյությունը կարճատև եղավ՝ ընդամենը մեկ և կես տարի, այնինչ երկրորդը շարունակեց հրատարակվել մինչև 1908 թվականը։ Միք. Նալբանդյանն իր «Յաղագս հայկական մատենագրութեան ճառում» ըստ արժանվույն դրական գնահատական է տալիս լուսավորության տարածման բնագավառում աշխարհաբար այդ պարբերականների կատարած դերին. «Այո՛ խոստովանիլ խոստովանիմք զարժանավորութիւն հայ օրագրաց Կոստանդնուպօլսոյ «Նոյեան աղաւնի» և «Մասիս», և պատուելի հեղինակաց օրագրացդ չկարեմք ժխտել զմեր շնորհակալիս, զի և նոքին իսկ ըստ պարոն

Պալդազարեանի փոյթ տարան զնոր բարբառն ազգային ի յարգի կացուցանել և նովին ճանապարհ հարթել ընդ անշքացեալ անապատ հայկական լուսաւորութեանն...»[1]։

«Մասիսը» 50-ական թվականներին իրոք կատարում է լուսավորական-առաջադիմական դեր, սակայն, 60-ական թվականների սկզբից, հայ ազգային-ազատագրական պայքարի վերելքի շրջանում նահանջում է իր նախկին դիրքերից։

Զմյուռնահայ գաղութում XIX դարի 30-ական թվականներից սկսված կուլտուր-լուսավորական շարժման մեջ էական դեր է կատարել պարբերական մամուլը՝ «Շտեմարան պիտանի գիտելյաց» (1839—1854), «Արշալույս Արարատյան» (1840—1887), «Հայրենասեր» (1843—1846), մի փոքր ավելի ուշ՝ «Արփի Արարատյան» (1853—1856)։ Այս բոլոր պարբերականների լեզուն արևմտահայ աշխարհաբարն էր. տպագրում էին արտաքին-քաղաքական և ներքին-ազգային լուրեր, պատմա-բանասիրական, տեղագրական-վիճակագրական հոդվածներ, ազգային-հայրենասիրական հորդորներ ու ճառեր, բարոյախոսական ինքնուրույն և մեծ մասամբ թարգմանական առակներ և զրույցներ («արտավեպ»)։ Ի տարբերություն մյուսներից «Շտեմարան պիտանի գիտելյաց» ամսաթերթը, լինելով բողոքական միսիոներների օրգանը, կրոնական քարոզների միջոցով հետապնդում էր պրոպագանդիստական նպատակներ։

«Արշալույս Արարատյանը» և Զմյուռնիայի մյուս պարբերականները XIX դարի 40—50-ական թվականներին ներկայացնում էին ազգային-պահպանողական հոսանքի գաղափարախոսությունը. նրանք կողմնակից էին տնտեսական-կուլտուրական խաղաղ զարգացման՝ «սերն ու միաբանությունը» համարելով ազգի առաջադիմության և երջանկության միակ առհավատչյան։ «Ազգի պառակտիչների» դեմ ուղղված խուլ բողոքի և դատապարտության արտահայտությունները «Արշալույս Արարատյանի» էջերում վկայում են, որ ինչպես Պոլսում, այնպես էլ Զմյուռնիայում 40-ական թվականներից սկսած տեղի էին ունենում բախումներ մի կողմից՝ մեծատունների և հոգևորականության, մյուս կողմից՝ աշխատավորական խավերի միջև։ «Սեր և միաբանություն» քարոզելով, սակայն, Ղ. Պալտազարյանի շաբաթաթերթը կողմնորոշվում էր դեպի առաջինները, և պատահական չէ, որ 60-ական թվականներին նա որոշակիորեն անցնում է ռեակցիայի բանակը։

1843 թվականին Վենետիկում սկսում է հրատարակվել ամենաերկարակյաց հայ պարբերականը՝ «Բազմավեպը», որ շարունակում է լույս տեսնել մինչև այժմ։ Իր գոյության առաջին տասնամյակում (1843—1853) «Բազմավեպը» նշանակալի չափով նպաստում է ընդհանուր լուսավորական շարժմանը, հայ մամուլի, բանասիրության, գրականության և լեզվի զարգացմանը։ Երկշաբաթաթերթի էջերում տպագրվում են տեղեկություններ գիտության տարբեր բնագավառներից, պատմա-բանասի-

[1] Միքայել Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 2, 1947, էջ 44։

րական հոդվածներ, միջնադարյան հայ տաղերգուների, XVII—XVIII դարերի և XIX դարի սկզբի գուսանների ստեղծագործությունները, ժողովրդական երգեր: «Բազմավեպում» իրենց հայրենասիրական բանաստեղծություններով հանդես են գալիս Նահապետը (Ղ. Ալիշան), Մկ. Պեշիկթաշլյանը, Սրապ. Հեքիմյանը և ուրիշներ, տպագրվում են թարգմանություններ եվրոպական և ռուս հեղինակների երկերից: Ի տարբերություն «Բազմավեպի» Վիեննայի Մխիթարյանների օրգանը՝ «Եվրոպա» շաբաթաթերթը (1847—1863) առավելապես քաղաքական բնույթ ուներ. եվրոպական պետությունների քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններից բացի, շաբաթաթերթը երբեմն-երբեմն տեղեկություններ էր հաղորդում հայկական գաղութների վերաբերյալ, ինչպես նաև տպագրում էր պատմական, լեզվաբանական, հնագիտական հոդվածներ:


ԲԱԶՄԱՎԷՊ
ՕՐԱԳԻՐ
ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԵՒ
ՎԵՆԵՏԻԿ

«Բազմավեպի» անվանաթերթը

XIX դարի 40-ական թվականներին Եվրոպայում ծավալվող սոցիալական և ազգային-ազատագրական շարժումները որոշ չափով դրականորեն են անդրադարձել Մխիթարյանների պարբերական հրատարակությունների, մասնավորապես «Բազմավեպի» վրա: Վերջինիս այդ տարիների համարներն ավելի բազմազան են, ավելի հարուստ աշխարհիկ նյութերով. 1847—1849 թվականներին են գրվել և «Բազմավեպի» էջերում տպագրվել Ղ. Ալիշանի «Հայոց աշխարհիկ», «Հրազդան», «Մասիսու սաբերն» հայրենասիրական բանաստեղծությունները և «Պլպուլն Ավարայրի» պոեմը, որոնց մեջ, անշուշտ, յուրովի արձագանք է գտել իտալական ազգային-ազատագրական շարժումը: Սակայն դրանք առկայծումներ էին միայն, որոնք չէին փոխում «Բազմավեպի» կղերա-ավատական գաղափարախոսական ուղղությունը:

Միանգամայն հակամարտ դիրքերում էր գտնվում 40-ական թվականների հնդկահայ առաջադիմական մամուլը՝ Կալկաթայում հրատարակվող Թաղիադյանի «Ազգասերը» (1845—1848), «Ազգասեր Արարատյանը» (1848—1852) և Մադրասի «Բանասերը» (1848—1849):

«Ազդարարից» հետո մինչև «Հյուսիսափայլի» հանդես գալը գոյություն ունեցող հայկական բոլոր պարբերականներից ամենաառաջադիմականները Թաղիադյանի հրատարակություններն են: Ավելի, քան մյուս-

ները, նրանք սերտորեն կապված էին հայ կյանքին, իրականությանը։ Թաղիադյանը ծնվել, սնվել և մանկության-պատանեկության տարիներն անց էր կացրել Արարատյան Հայաստանում. Երիտասարդ հասակում շրջել էր գավառները, շփվել ժողովրդի հետ, ուսումնասիրել նրա կյանքի պայմանները, լեզուն, բանարվեստը, գիտեր նրա հոգեբանությունը, քաղաքական ձգտումները։ Թաղիադյանը քաջ իրազեկ էր ո՛չ միայն բնաշխարհի հայության, այլև նրա տարանջատ հատվածների վիճակին։ Իր պարբերականներում, սոսկ վիճակագրական տեղեկություններով նա չէր սահմանափակվում։ «Ազգասերն» ու «Ազգասեր Արարատյանը» արտացոլում էին հնդկահայ և պարսկահայ գաղութների սոցիալական հակասությունները. խմբագիրն իր հրապարակախոսական սուր, երգիծող գրչով մերկացնում, խարանում էր հոգևոր և աշխարհիկ հարստահարիչներին՝ վճռականորեն կանգնելով ժողովրդի իրավունքների պաշտպանության դիրքերում։ «Թաղիադյանի մոտիկ զինակիցները,— գրում է Արտ. Կարինյանը,— պարզորոշ կերպով ցույց էին տալիս, որ մտադիր են վերջ տալ հայ կղերականության բացարձակ հեգեմոնիային և ստեղծել աշխարհիկ կուլտուրայի վրա խարսխված հասարակական նոր շարժում։ Առաջավոր հնդկահայերի հոսանքը դառնում էր արդեն ուրույն մի «պարտիա», ուղղված անմիջապես ռեակցիոն-կղերական հոսանքի դեմ»[1]։

Եվրոպական լուսավորության, կուլտուրայի ու գիտության ջերմ ջատագով լինելով հանդերձ, Թաղիադյանն իր պարբերականների էջերում անխնա մերկացնում է եվրոպական և ամերիկական գաղութարարներին. Ֆրանսիացիների գործողությունները Ալժիրում նա որակում է «գազանային անգթություն» բառերով. բուռն զայրույթով դատապարտում է թալանչիական քաղաքականությունը Հնդկաստանում, որտեղից նրանք տարեկան տանում են 700 միլիոն լիրա և դրա մեկ-յոթհարյուրերորդը զլանում են ծախսել այդ երկրի լուսավորության համար. «Եւ չիցէ՞ այս բռնաբարութիւն ի ծայրագոյն աստիճան,— գրում է Թաղիադյանը,— անտանելի ևս քան զմուժիկութիւնն Ռուսաստանի և զկեղեքանս պարսից։ Եւ դեռ սոքա անգլիացի՞ք, որք անամօթ երեսօք պարծին միշտ ի բարերարս ազգի մարդկան լինել...»[2]։ Թանձր գույներով նա ներկայացնում է Հնդկաստանում իշխող սոցիալական սուր հակասությունները, աղաղակող անարդարությունը՝ ցոփ հարստության կողքին ծայրաստիճան աղքատություն, թշվառություն։ Թաղիադյանի պարբերականներում արտահայտված է հնդկահայ դեմոկրատիայի ակտիվ համակրանքը անգլիական գաղութարարների դեմ հնդիկ ժողովրդի մղած ազատագրական պայքարի նկատմամբ։ Թաղիադյանը հիշեցնում է, որ ժողովուրդները թևակոխել են ազատագրական շարժումների դարաշրջանը և այլևս նրանց չի կարելի հեշտությամբ ահաբեկել. «Այն վաղ էր, զի ժողովուրդք ընդ ռոմբրին թնդանոթաց զար-

---

1 Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. Ա, 1956, էջ 326։

2 «Ազգասէր Արարատեան», 1849, էջ 215։

հուրեալք և անհարեկեալք լինէին։ Այժմ կարէ Հնդկաստան և Թնդանօթ յօրինել և զվառօդ ընտիրը»[1]։

Հայ լուսավորիչ-դեմոկրատի այս տողերում ակներևաբար զգացվում է 1848 թվականի ռևոլյուցիայի գաղափարների մարտական շունչը, մյուս կողմից այստեղ արտահայտված է հայ-հնդկական գաղափարական և մարտական զինակցության հարյուրամյա տրադիցիան։ Հայերը ո՛չ միայն համակրանք են տածել հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարի հանդեպ, այլև զենքը ձեռքին, հնդիկների հետ կողք-կողքի, մարտնչել են անգլիական գաղութարարների դեմ։ Հայտնի է, որ 1763 թվականի բենգալո-անգլիական պատերազմում հնդկական բանակի սպաներից մի քանիսը հայեր են եղել. հայ է եղել անգամ ընդհանուր հրամանատարը (Գրիգոր Հարությունյան)[2]։ Երևույթը որքան նշանակալի, նույնքան և օրինաչափ է։ Հյուրընկալ Գանգեսի ափերին Հայաստանի ազատությունը և նրա համար հանրապետական կարգեր երազող հայը չէր կարող անտարբեր լինել և սրտին մոտ չընդունել հնդիկ ժողովրդի ազնիվ պայքարն հանուն իր ազատության։

Թաղիադյանի պարբերականների առաջավոր գաղափարախոսական ուղեգիծն էր պաշտպանում Մադրասի «Բանասեր» տասնօրյա թերթը (1848—1849)։ Այս պարբերականի հավաքածուն Երևանում չլինելով, հենվում ենք Գ. Գալեմքյարյանի հաղորդած տեղեկությունների վրա, որոնք, չնայած հեղինակի անսքող միտումին, որոշակի գաղափար են տալիս «Բանասերի» բովանդակության և ուղղության մասին. «Հայ լրագրությունն ալ ունեցավ յուր հեղափոխության օրերն,— գրում է Մխիթարյան բանասերը,— ճիշտ այն տարին, երբ Եվրոպա հեղափոխական խռովության մեջ կծփար (ակնարկում է 1848 թվականի ռևոլյուցիան — Ա. Ի.), Արևելք Հնդկաստանի Մադրաս քաղաքին մեջ հայ լրագրության հեղափոխության դրոշը պարզեցավ»[3]։

Թաղիադյանի «Ազգասերը» բնութագրելով «լրագրաց ընթացից սովորական հարթերեսեն (niveau) քանի մ'աստիճան վեր», Գալեմքյարյանը Մադրասի տասնօրյա թերթն համարում է առավել արմատական. «Բանասերը» եկավ մեկանց ահագին ոստում մ'ըրավ, այնպիսի սաստկությամբ մը, որուն ոչ այլք և ոչ ինք կրցավ դիմանալ»[4]։

Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ «Բանասերը» «աներկյուղ «մերկացրել, դատել և դատափետել» է աշխարհիկ և հոգևոր մեծավորների «պարսավելի կողմերը», ինչպես և կծու ծաղրով խարանել է Ղ. Պալտազարյանի խիստ զգուշավոր, հաշտվողական «Արշալույս Արարատյանը», որ ամենուրեք տեսնում է միայն բարեգործ, առաքինի և հայրենասեր վա-

---

1 Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. Ա. 1956, էջ 355։

2 Տե՛ս Լեո, Հայկական տպագրություն, հատ. II, Թիֆլիս, 1901, էջ 469—470։

3 Գ. վ. Գալեմքյարյան, Պատմություն հայ լրագրության ի սկզբանե մինչև

ճառականներ, «հրեշտակակրոն և աստվածիմաստ» վարդապետներ. «Ո՞վ երջանկութեանս,— բացականչում է «Բանասերը»,— չիք անդանօր ոք ժանտ արժանի խարազանաց տպագրութեան. ո՛չ ոք գառնազգեստ, բայց գայլացեալ հովիւ ըստ ստորին, ո՛չ ոք գոռոզ գործակալ ազգային իրաց. ո՛չ ոք քսակակալ աղքատաց յուղայախոհ գող: Երանի՜ թէ»[1]:

«Բանասերի» կյանքը, սակայն, կարճատև եղավ. իր գոյության մեկ տարին հազիվ լրացած, նա փակվեց՝ իր համարձակախոսության համար ֆինանսական բոյկոտի ենթարկվելով Մադրասի վաճառականության կողմից:

Գաղութահայ բուրժուազիայի պահպանողական տարրերի հայացքներն էր արտահայտում նույն ժամանակաշրջանում Սինգապուրում հրատարակվող «Ուսումնասեր» երկշաբաթաթերթը (1849—1853): Նա լոյալ համակերպվող դիրք էր գրավել անգլիական գաղութարարների նկատմամբ և վճռականորեն մերժում էր «Ազգասեր Արարատյանի» «ծայրահեղությունները»: Եթե Թաղիադյանը գաղութահայության փրկությունը և վերջնական հանգրվանը տեսնում էր հայկական բնաշխարհի, հատկապես Արարատյան Հայաստանի մեջ, ապա «Ուսումնասերի» խմբագիրը (Գ. Դ. Գալստյան) անգլիական կապիտալի արշավանքի հետևանքով քայքայվող հայ վաճառականությանն առաջարկում էր նոր գաղթավայրեր հիմնել հեռավոր Ավստրալիայում[2]:

XIX դարի 40-ական թվականների կեսերից հնդկահայ պարբերական մամուլի էջերում («Ազդասեր», «Ազգասեր Արարատյան», «Բանասեր») ձևավորվում է հայ բուրժուական դեմոկրատիզմի գաղափարախոսությունը, որը կազմում է հիշյալ պարբերականների ոչ միայն հրապարակախոսական հոդվածների, այլև գեղարվեստական երկերի հիմնական բովանդակությունը: Չնայած համազգային գրական լեզվի հարցում Թաղիադյանի ոչ-ճիշտ դիրքորոշմանը, նրա պարբերականներն արտահայտում էին հայ նոր գրականության զարգացման առաջատար տենդենցները. Մխիթարյանների կլասիցիզմին հակադրվելու և նրան բացառելու էր գալիս պրոգրեսիվ ռոմանտիզմը. պատմական թեմատիկան ստանում էր ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությանն համապատասխան նոր բովանդակություն: Գրականությունը մերձենում էր իրականությանը, արտացոլում էր կյանքի հակասությունները, հասարակական հոսանքների հակամարտը: Եկեղեցու սրբերին, բարձրաստիճան հոգևորականներին և մեծատուններին ձոնված ներբողների փոխարեն «Ազգասերը» և «Ազգասեր Արարատյանը» տպագրում էին նույն հոգևոր և աշխարհիկ տերերին խարազանող երգիծական բանաստեղծություններ, հասարակական-քաղաքական կյանքի իրադարձություններին արձագանքող աշուղա-

---

1 Գ. վ. Գալեմքյարյան, *Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը, հատ. Ա., Վիեննա, 1893, էջ 110:*

2 *Տե՛ս* Ա. Բ. Կարինյան, *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. Ա., 1956, էջ 399—400:*

կան երգեր, ժողովրդական իմաստությունը խտացնող առակներ, առածներ, ասացվածքներ։

Թաղիադյանի պարբերականների պրոգրեսիվ դրական ուղղության մասին են վկայում նաև նրանց էջերում տպագրվող թարգմանությունները Բայրոնից, Բեռնսից, Լոնգֆելլոյից, ինչպես և այդ հեղինակներին տրված գնահատականները։

Արևելահայ պարբերական մամուլի զարգացումն սկսվում է XIX դարի 10-ական թվականների երկրորդ կեսից։ 1813 թվականից Աստրախանում հրատարակվող «Վոստոչնիյա իզվեստիա» ռուսական շաբաթաթերթը 1816 թվականի հունվարից մինչև իր դադարումը (նույն թվականի հուլիս ամիսը) լույս է տեսնում նաև հայերեն՝ «Արևելյան ծանուցմունք» անունով։ Դա առաջին արևելահայ պարբերականն է։ Երկլեզվյան այդ շաբաթաթերթի հայերեն մասը խմբագրում էր Աստրախանի «կաթոլիկաց եզվիտական ուսումնարանի վերատեսուչ» Կղեմեն Շահվերդյանը։

Ինչպես վկայում են պահպանված վավերագրերը, «Վոստոչնիյա իզվեստիան» նաև հայերեն հրատարակելու անհրաժեշտությունն զգացել և այդ ուղղությամբ մեծ ջանքեր է գործադրել շաբաթաթերթի հրատարակիչ-խմբագիր՝ Աստրախանի ռուսական գիմնազիայի գերմաներենի ուսուցիչ Իոսիֆ ֆոն-Վեյսքհոպֆենը, հավանորեն հաշվի առնելով այն նշանակալի դերը, որ կատարում էին հայերը Աստրախանի տնտեսական-հասարակական կյանքում։ Տեղի ռուս և հայ վաճառականները առևտրական լայն գործառնությունների մեջ էին հատկապես Արևելքի երկրների հետ, հանգամանք, որով և պայմանավորված էր շաբաթաթերթի արևելյան «թեքումը»։ «Արևելյան ծանուցմունքի» լեզուն գրաբար էր. բացի տեղագրական-վիճակագրական հոդվածներից և լուրերից, շաբաթաթերթում տպագրվել են նաև գեղարվեստական երկեր՝ փոքրածավալ պատմվածքներ («պատմություն») արևելյան ժողովուրդների կյանքից[1]։

Ներսես Աշտարակեցին 1825 թվականին Թիֆլիսում հիմնելով դպրոց և տպարան, ծրագրում է նաև հրատարակել եռամսյա գիտական հանդես՝ «Տարեգրութիւն հայոց դպրագիտական» անունով, ուր տպագրվելու էին հոդվածներ Հայաստանի պատմության, աշխարհագրության, հայ մատենագրության վերաբերյալ. վիճակագրական տեղեկություններ Հայաստանում և աշխարհի տարբեր կողմերում ապրող հայերի մասին, գիտական լուրեր և գրախոսականներ։ Հանդեսի լեզուն լինելու էր գրաբարը, բայց «պարզ և դիւրիմաց»։ «Տարեգրության» հրատարակությունը սկսվելու էր 1827 թվականից, սակայն վերահաս ռուս-պարսկական պատերազմը արգելառիթ հանդիսացավ և Ներսես Աշտարակեցու մտահղացումը մնաց անկատար։ Հանդեսի համար պատրաստված նյութերի մի մասը հետագա-

---

1 Տե՛ս Ա. Երիցյանց, *Մի նոր գյուտ հայոց լրագրության պատմության համար*, «Արձագանք», 1895, № 87։ Վ. Ոսկանյան, Վ. Գրիգորյան, *Ռուսահայոց առաջին պարբերական «Արևելյան ծանուցմունքը»*, «Սովետական գրականություն», 1957, № 3, էջ 169—173։

յում զետեղվեց «Երախայրիք Ներսիսյան դպրոցի» ժողովածուի մեջ (1828)[1]։

XIX դարի 40-ական թվականների սկզբներին իր ապագա գործունեության ծրագիրը մշակելիս, Ստ. Նազարյանը առաջնահերթ է համարում հայկական պարբերականի հրատարակությունը՝ խորապես գիտակցելով նրա կարևորագույն նշանակությունը հասարակական զարգացման, լուսավորության տարածման գործում։ Այդ իմաստով դեռևս 1844 թվականին Կազանի համալսարանում պաշտոնավարելիս, նա մի դիմում է ներկայացնում լուսավորության մինիստրին, սակայն, մերժում է ստանում[2]։ Հայ պարբերականի անհրաժեշտության խնդիրը Նազարյանը հանգամանորեն արծարծում է 1846 թվականի «Տեսություն նորագույն ժամանակների հայկական մատենագրության պատմության» ռուսերեն աշխատության մեջ։ Նա նույնիսկ նախագծում է ապագա հայ պարբերականի բովանդակությունը. «հոդվածներ ընդհանուր պատմությունից, աշխարհագրությունից և վիճակագրությունից (մանավանդ հայոց և ռուսաց), հետաքրքրական տեղեկություններ բնագիտությունից, նույնպես և տեղեկություններ հայերի ներկա դրության մասին զանազան պետությունների մեջ, եվրոպական ազգերի քաղաքական և եկեղեցական դրության մասին, գյուտերի մասին և այլն»։ Լեոն, քննելով Նազարյանի այդ գրքում շարադրված նրա լուսավորական գործունեության ծրագիրը, իրավացիորեն նկատում է թե՝ «այստեղ է ամփոփված «Հյուսիսափայլի» ոգին... Նազարյանը դեռ 1846 թվականին «Հյուսիսափայլի» խմբագրի դերումն էր»[3]։ Նույն ծրագրով, 1854 թվականին Նազարյանը մտադրվում է հրատարակել «Ռուսիա» անունով հայկական մի ամսագիր, սակայն, այս անգամ ևս նրա դիմումը մերժվում է[4]։

1846 թվականին, երբ Ստ. Նազարյանը Կազանում տպագրված իր «Տեսության...» մեջ արծարծում էր հայ պարբերականի, որպես լուսավորության տարածման կարևորագույն մի գործոնի, հրատարակության խնդիրը, նույն թվականին Թիֆլիսում ռուսական «Կավկազ» պաշտոնաթերթին առընթեր հայերեն սկսում է լույս տեսնել «Կովկաս» քաղաքական և բանասիրական շաբաթաթերթը՝ Հ. Կարենյանի և Միք. Պատկանյանի խմբագրությամբ։ «Կովկասում» տպագրվում էին քաղաքական լուրեր, պաշտոնական հաղորդագրություններ և կարգադրություններ, պատմական-վիճակագրական հոդվածներ, գեղարվեստական երկեր՝ գերազանցապես թարգմանական։ Առանձնապես ուշագրավ է շաբաթաթերթի 1846—1847 թվականների համարներում տպագրված «Ադելայիդա ֆոն Վոլֆին-

---

1 *Տե՛ս* Ա. Երիցյան, *Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան Հայոց հոգևոր դպրոցի որ ի Թիֆլիզ, հատ. Ա, Թիֆլիս, 1898, էջ 130—133։*

2 *Տե՛ս «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի» (հասարակական գիտություններ), 1948, № 11, էջ 75—76։*

3 Լեո, *Ստեփանոս Նազարյանց, հատ. Ա, Թիֆլիս, 1902, էջ 145—146։*

4 *«Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի» (հասարակական գիտություններ), 1953, № 12, էջ 75—79։*

գեննեան, կամ արձանագիր բարբարոսութեան երեքտասաներորդ դարու»՝ կաթոլիկ հոգևորականության դեմ ուղղված պատմական ողբերգության թարգմանությունը, որ պատկանում է Խ. Աբովյանի գրչին։ «Կովկասի» լեզուն գրաբարն էր, սակայն, երբեմն-երբեմն այստեղ տպագրվում էին նաև աշխարհաբար լուրեր, բարոյախրատական «պատմություններ» (զրույցներ)։



«Կովկաս» թերթի առաջին էջը

Կովկասի առաջին հայ պարբերաթերթի դադարումից երեք տարի հետո, 1850 թվականի սեպտեմբերից, Թիֆլիսում սկսում է հրատարակվել «Արարատ» քաղաքական, առևտրական և բանասիրական շաբաթաթերթը։ Վերջինիս խմբագիր Գաբր. Պատկանյանը «Կովկասի» խափանման պատճառը համարում է ժողովրդին անմատչելի նրա լեզուն. «...Այլ որովհետև լեզուն չէր աշխարհաբար, և չէր ամենուն հասկանալի, վասնորո և խափանվեցավ»[1]։

«Արարատը» արևելահայ առաջին աշխարհաբար պարբերականն էր, որը նպատակ էր դրել նպաստել ժողովրդի լուսավորության գործին՝ նրան մատչելի լեզվով։ Շաբաթաթերթի խմբագիրը ակնհայտնի խուսափում էր հասարակական-քաղաքական սուր հարցեր արծարծելուց. «Աստված մի՛ արասցե,— կարդում ենք այնտեղ տպագրված մի հոդվածում,— «Արարատը» սկսէ խելքին զոռ տալ, ու հիմիկվա թագավորների և նրանց արածների վրա դատողություններ անի, թե՝ փլանը էս լավ չէ անում, կամ թե՝ փստանը մարդ չի դառնա, թե՝ ... էն ինչ մեծավորը փլան բանի համար քարկոծելու է. էն ժամանակ քո «Արարատը» հոգով ու մարմնով կկորչի, իր տունը իր ձեռքով կքանդէ»[2]։

Վերջին տողերի ակնարկը, անշուշտ, վերաբերում է հատկապես 1848 թվականի ռևոլյուցիայից հետո առաջադիմական գաղափարների դեմ ցարական Ռուսաստանում սկսված հալածանքներին։ Հասարակական-քաղաքական հարցերում զգուշավոր դիրքորոշում ունենալով հանդերձ, «Արարատը» իր տպագրած առակներում, բարոյախոսական զրույցներում, աշուղական երգերում, առածներում, այնուամենայնիվ, արտահայտում էր իր քննադատական վերաբերմունքը վերնախավերում տիրող այլանդակ

1 «Արարատ», 1850, № 1, էջ 3։
2 Նույն տեղում։

բարքերի, բարոյական նորմերի նկատմամբ։ Մյուս կողմից՝ «Արարատն» իր գրական բաժնի լավագույն նյութերով արտահայտում էր հայ նոր գրականության զարգացման առաջադիմական տենդենցները՝ ավելի մոտ կանգնել իրականությանը, արտացոլել ժողովրդի կյանքը՝ նրան հասկանալի լեզվով։

Ուշագրավ է, որ Սայաթ-Նովայի մասին առաջին տպագիր խոսքը ասել է «Արարատը»։ Այս շաբաթաթերթի էջերում են տպագրվել Ռ. Պատկանյանի, Մ. Նալբանդյանի առաջին բանաստեղծությունները, աշուղներ Շիրինի, Թուրինջի, Սեյադի տաղերը։ Հաշվի առնելով ժողովրդական լայն խավերի ընթերցողների «ճաշակն ու կարողությունը», «Արարատը» զարկ էր տալիս գեղարվեստական արձակի այն ժանրերին (առակ, զրույց, անեկդոտ), որոնք նրանց առավել մատչելի էին։

Չնայած իր կարճատև գոյությանը (1850—1851), «Արարատը» զգալի դեր կատարեց արևելահայ աշխարհաբարի և աշխարհիկ գրականության զարգացման գործում։

8

XVIII դարի վերջին քառորդից հայ իրականության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, ազգային ինքնագիտակցության արթնացումը, բնականաբար, առաջադրում են ժողովրդի տարբեր խավերին ու տարանջատ հատվածներին հասկանալի լեզվի՝ աշխարհաբարի պահանջը։ Ինչպես հասարակական նոր հարաբերությունները, այնպես էլ նրանցով պայմանավորված աշխարհաբարը ապրել են զարգացման երկարատև պրոցես։

Հայոց լեզվի պատմությունը վկայում է, որ աշխարհաբարը սկսել է գործունեության մեջ մտնել դեռևս XIV դարի երկրորդ կեսից, նախ՝ վիմական արձանագրություններում (Բժնիի արձանագրությունը, 1358), ապա՝ բժշկարաններում (Ամիրդովլաթի «Անգիտաց անպէտ», 1478), հիշատակարաններում (Բարսեղ Վարագեցու հիշատակարանը, 1591), ժամանակագրություններում (Գր. Դարանաղցի, 1630), օրագրություններում (Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, 1647), պատմագրական երկերում (Առաքել Դավրիժեցի, Պատմություն, 1662. Հակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին հայոց, 1663. Զաքարիա Սարկավագ, Պատմություն, 1699). պաշտոնական թղթերում (Ղարաբաղի մելիքների գրագրությունները XVIII դարի առաջին քառորդում)[1]։

1727 թվականին Մխիթար Սեբաստացին հրատարակում է արևմտահայ աշխարհաբարի առաջին քերականությունը («Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց»)։ 1752 թվականին լույս է տեսնում Պաղտասար Դպրի «Բարևագիրքը», որ պարունակում էր աշխարհաբար նամակների և պայմանագրերի ձևեր։ 1760 թվականին նույն հեղինակը տպագրում է «Գիրք քերականության» աշխարհաբար ձեռնարկը՝ գրաբարի ուսուցումը դյուրացնելու նպատակով։ Հայ պոեզիայի, ինչպես և աշխարհա-

[1] Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Երևան, 1951, էջեր 441—454։

բարի պատմության համար ուշագրավ երևույթ է Պաղտասար Դպրի՝ 1763 թվականին հրատարակած «Տաղարան սիրոյ և կարօտանաց...» գրաբարախառն աշխարհաբար բանաստեղծությունների ժողովածուն։

Արևմտահայ աշխարհաբարով են գրված Խ. Սյուրմելյանի «Համառոտ թվաբանություն» (1788) և Ղ. Ինճիճյանի «Տեսություն համառոտ հին և նոր աշխարհագրության» (1791) գրքերը՝ երկուսն էլ տպագրված Վենետիկում։

Բացի Վենետիկից և Պոլսից, ուր տպագրվել են հիշյալ գրքերը, աշխարհաբարի պահանջը XVIII դարի երկրորդ կեսից սկսում է զգացվել նաև հայաբնակ այլ վայրերում։ 1755 թվականին հեռավոր Ֆիլիպինյան կղզիներից մեկում Ֆր. Զաքարյան պարսկահայ կրոնավորը աշխարհաբար շարադրում է իր «Ճշմարիտ իմաստություն» մատյանը, որի նախաբանը շուրջ մեկ հարյուրամյակ անց՝ տպագրվում է Թաղիադյանի «Ազգասէր Արարատեանում»[1]։ Ջուղահայերի բարբառով նյութերի հանդիպում ենք առաջին հայ պարբերաթերթի՝ «Ազդարարի» էջերում։ Արևելահայ աշխարհաբարի նմուշներ է պարունակում 1788 թվականին Պետերբուրգում տպագրված Կղեոպատրա Սաֆարյանի «Գիրք որ կոչի բանալի գիտութեան» ռուսաց լեզվի ուսուցման ձեռնարկը։

XIX դարի սկզբից աշխարհաբար հրատարակությունները հետզհետե թե՛ քանակով աճում են և թե՛ բովանդակությամբ դառնում են բազմազան։ Ուշագրավ է հատկապես աշխարհաբար պարբերականների հրատարակության փաստը։ XIX դարի առաջին կեսին լույս տեսնող պարբերականների մեծագույն մասի լեզուն աշխարհաբարն էր, մասնավորապես պոլսահայ բարբառը, որի հիմքի վրա հետագայում մշակվեց արևմտահայ գրական լեզուն («Տարեգրություն», «Եղանակ Բյուզանդյան», «Դիտակ Բյուզանդյան», «Շտեմարան պիտանի գիտելյաց», «Արշալույս Արարատյան», «Բազմավեպ» «Եվրոպա», «Մասիս»)։ Բացառություն էին կազմում Կալկաթայի «Շտեմարանը» և Թիֆլիսի «Արարատը». առաջինի լեզուն ջուղահայերի բարբառն էր, երկրորդինը՝ նոր մշակվող արևելահայ աշխարհաբարը։ Դարասկզբից հիշյալ պարբերականների հետ մեկտեղ զգալի քանակությամբ լույս են տեսնում աշխարհաբար գրքեր՝ ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ բովանդակությամբ։ Հայտնի է, որ կաթոլիկ հոգևորականությունը աշխարհաբարն օգտագործում էր կրոնական պրոպագանդայի համար. այդ է վկայում Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար աբբայի հրատարակած առաջին աշխարհաբար գրքերից մեկը՝ «Գիրք քրիստոնեական վարդապետութեան, շարադրեցեալ աշխարհաբառիւ լեզուաւ» (1727)։ 1803 թվականին Վենետիկի Մխիթարյաններից Հովհ. Զոհրապյանը հրատարակում է «Աստվածաշնչի աշխարհաբար պատմությունը»։ Նպատակ ունենալով ցույց տալ, թե կաթոլիկ քարոզիչներն ինչպես են «քրիստոնեական հավատի լույսը» տարածում «հեթանոս» Արևելքում, Մխիթար աբբայի աշակերտները 1815 թվականին Վենետիկում

[1] «Ազգասէր Արարատեան», 1848, № 11 (հավելված)։

տպագրում են «Ճամբորդություն, որ ըրավ Թաշառ անունով երևելի ֆռանսըզ ճիզվիթ մը, կվինի չորեքտասաներորդ Ֆռանսայի թագավորին հրամանավը դեպի Շիամ, որ է մեկ երևելի թագավորություն մը Արևելյան Հինտիստանին մեջ» գիրքը։

XIX դարի 30—40-ական թվականներին, երբ կաթոլիկ, բողոքական և լուսավորչական հոգևորականների միջև դավանաբանական վեճերն ու պայքարը սուր բնույթ են ստանում, համապատասխանաբար աճում է նաև կրոնա-դավանաբանական գրականությունը աշխարհաբար լեզվով։ 1820-ական թվականների վերջերին Շուշում հաստատված բողոքական քարոզիչները տպարան են հիմնում և սկսում են հրատարակել կրոնական գրքեր՝ աշխարհաբար լեզվով. նրանք օգտագործում են նույնիսկ Լազարյան ճեմարանի տպարանը։ Շուշու հայ բողոքականների հրատարակած գրքերից են՝ «Ավետարանի զորությունը կամ մին արաբ ծառայի պատմությունը, որ Քրիստոսի հավատքովն երանելի էլավ» (1830), «Վարդապետություն Քրիստոսի խաչին համար» (1833), «Մեղքի մեծանալույն և զոբանալույն համար» (1833)։ Լազարյան ճեմարանի հրատարակությունների մեջ ևս առաջին աշխարհաբար գիրքը կրոնական բովանդակություն ուներ՝ «Համառօտ քննութիւն քրիստոնէական հաւատոյ և մահմետական կրօնի, յաշխարհաբառ լեզուի շարադրեալ յումեմնէ հոգեսիրէ ի պէտս պարզամտաց» (1831)։

Կրոնական պրոպագանդը ժողովրդի լայն խավերի համար առավել դյուրընկալելի դարձնելու նպատակով, աշխարհաբար հորինվում և տպագրվում էին կրոնական բովանդակությամբ չափածո և արձակ «գեղարվեստական» երկեր, ինչպես՝ Մկրտ. վ. Ավգերյանի «Բանաստեղծություն չորս ետքերնուս վրա» (1810), «Երանյակ անունով Թանկոյի թագուհիին պատմությունը» (1840), «Քրիստիանոսին ու Քրիստինեին ճամբորդությունը աս աշխարհես հանդերձյալ աշխարհը երազի ձևով» (1843), «Հովսեփին պատմությունը» (1847) և նմանները։

Անկախ այս գրքերի հեղինակների և հրատարակիչների հետապնդած նպատակներից, դրանք նշանակալի չափով նպաստում էին աշխարհաբար դրական լեզվի զարգացմանը։

Այդ ասպարեզում առավել մեծ է եղել թատրոնի դերը։ Ինչպես վերը տեսանք, դեռևս XVIII դարի վերջերին Վենետիկի Մխիթարյանների դպրոցական թատրոնում գրաբար ողբերգությունների հետ միասին բեմադրվում էին նաև կատակերգություններ պոլսահայ աշխարհաբարով։

XIX դարի առաջին տասնամյակներին աշխարհաբար կատակերգություններ հորինվում և բեմադրվում են Կալկաթայում («Խտրադիմայ դժրողութեան», 1821, «Լեյլի», 1832), Թիֆլիսում (Տերմազանյանի «Նկարագրութիւնք ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի վիճակավոր առաջնորդի հայոց գաղթելոց ի Տաչս», 1841), Պոլսում («Փոքր քաղաքներուն մեծ սիրտ մարդիկը», թարգմանություն իտալերենից, 1841)։

XIX դարի առաջին կեսին լույս տեսած աշխարհաբար գրականության մեջ զգալի թիվ են կազմում գիտական գրքերը՝ Մ. Բժշկյան, «Պատմու-

թյուն Պոնտոսի» (1819), Վեցմասյան, «Ստորագրություն կայսերանիստ քաղաքին Վիեննայի» (1829), Իգն. Փափազյան, «Հաշվեգիրք աշխարհաբար» (1830), Մ. Բեստեն (Պատկանյան), «Բժշկական արհեստին կրթություն» (1833), Պ. Հովնանյան, «Հրահանգք աստեղագիտական ի վերա գիսավոր աստեղաց» (1841), Մ. Սաղաթիելյանց, «Համառոտ բնական գիտություն» (1842), Հ. Կոճիկյան, «Մետաքսաբանություն կամ աղեկ մետաքս շինելու արհեստ» (1846), Ղ. Տերտերյան, «Օդերևութաբանություն համառոտ՝ ժողովրդյան դպրոցաց համար» (1850) և ուրիշները։

Աշխարհաբարն, այսպիսով, XVIII դարի վերջերից սկսում է մուտք գործել պարբերական մամուլի, դպրոցի, թատրոնի, գեղարվեստական և գիտական գրականության մեջ։ Աշխարհաբարի զարգացման պատմության ուշադիր ուսումնասիրությունը մեզ բերում է հետևյալ եզրահանգումներին. Նախ գործածության մեջ է մտնում պոլսահայ բարբառը, որը և հետզհետե մշակվելով, դառնում է արևմտահայ գրական լեզուն։ Այդ միանգամայն օրինաչափ է։ XVIII դարի երկրորդ կեսից Պոլիսը դառնում է արևմտահայության հասարակական զարգացման կենտրոնը. Պոլսի հայությունը գնալով աճում է՝ Արևմտահայաստանի տարբեր գավառներից եկող հայ բնտանիքների շնորհիվ։ Եվ քանի որ, Հ. Աճառյանի վկայությամբ, «Պոլսի բարբառի քերականությունը ընդհանրապես նույնն է Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի հայ բարբառների քերականության հետ»[1], ուստի և պոլսահայ բարբառը դառնում է ընդհանուր թե՛ «տեղացիների» և թե՛ եկվոր գավառացիների համար։ Այդ բարբառը ընդհանուր էր նաև Զմյուռնիայի հայության համար։ Պոլսահայ բարբառը հետզհետե մաքրվում է օտարամուտ տարրերից՝ նրա բառամթերքի զգալի մասը կազմող թուրքերեն բառերից, և արդեն XIX դարի 40-ական թվականներին հիմնականում ձևավորվում է արևմտահայ գրական աշխարհաբարը։

Գրական աշխարհաբարի գոյությունը անհերքելի փաստ էր, երբ սկըսում է բորբոքվել երկարատև այն բանավեճը, որ հայտնի է «գրապայքար» անունով։ Գրաբա՞րը, թե՞ աշխարհաբարը պետք է լինի գրականության լեզուն։ Կյանքը, հասարակական զարգացման օրինաչափ ընթացքը առաջադրված հարցը լուծել էին հօգուտ աշխարհաբարի։ Մխիթարյանները հակառակ դիրքորոշում ունեին. Ճիշտ է, նրանք աշխարհաբարը գործադրողների մեջ առաջիններից էին, սակայն ժխտում էին նրա դերազանցությունը գրաբարի նկատմամբ, համազգային գրական լեզվի նրա պատմական իրավունքը։ Մխիթարյանները աշխարհաբարին էին դիմում՝ իրենց կրոնա-իդեալիստական հայացքները հակադրելու ժողովրդի մեջ ներթափանցող առաջադիմական գաղափարներին։ Գրաբարով նրանք այդ չէին կարող անել. կաթոլիկ եկեղեցու քարոզիչներին աշխարհաբարն անհրաժեշտ էր իրենց պրոպագանդիստական նպատակների համար։ Այդ չափով միայն ընդունում և գործածում էին ընդհանուրին հասկանալի լեզուն։ Մխիթարյանները պաշտպանում էին այն տեսակետը, թե աշխարհաբարը

---

[1] Հ. Աճառյան. *Հայոց լեզվի պատմություն, մաս II, 1951, էջ 471։*

հետզհետե պետք է մոտեցնել գրաբարին, և այդպիսով վերջինս մատչելի դարձնել ժողովրդին։ «Իրավ է, որ աշխարհաբարը գրաբարեն շատ պակասավոր, աղքատ ու խառնակ է, ասված է «Բազմավեպի» առաջին համարներից մեկում, բայց աս բանս բավական չէ՝ իբրև անպիտան մեկդի ձգելու զանիկա. պետք է մաքրել, կոկել, և ըստ կարի՝ գրաբարին մոտեցնել, որով թե՛ գրաբարը իր հարգին ու ազնվության մեջ կմնա, և թե՛ աշխարհաբարը կազնվանա. անով գրաբարը դյուրավ հասկընալու ալ ճամբան կըբացվի»[1]։

1846 թվականին նույն ամսագրի էջերում Ա. Բագրատունին ոչ առանց տագնապի խոստովանում է, որ աշխարհաբարը հետզհետե տարածվում է և սպառնում գրավելու գրաբարի տեղը. «...Անհամեմատ ավելի աշխարհաբար կելլեն հիմա գրքեր ու գրվածներ, քան թե գրաբար, մանավանդ շատ կարդացվողները։ Ըսել է, որ ազգին գիտնականքն ալ իրենց լեզուն կթողուն, ռամկին կհարմարին՝ օգտի համար։ Ծվ աս աշխարհաբարն ալ օրէ օր երթալով կպակսի, կիյնա ազգին բերնեն, մինչև ատեն մը գա, կարծեմ, որ գրաբար անունը ինք պիտի հափշտակե»[2]։

Աշխարհաբարի «դատի» պաշտպանությունը իր վրա է վերցնում 1848 թվականի բուրժուական ռևոլյուցիայի գաղափարներով տոգորված արևմտահայ երիտասարդությունը հանձինս Նիկ. Զորայանի, Գր. Օտյանի, Ն. Ռուսինյանի, Ստ. Ոսկանյանի և ուրիշների։ 1850-ական թվականներին արդեն աշխարհաբարի կողմնակիցները որոշակիորեն գերակշռում են հակառակորդներին, չնայած գրապայքարը շարունակվում է. «...Հիմակ ժամանակը շատ փոխվեցավ գոնե մեր մայրենի լեզվին համար,— գոհունակությամբ գրում է Նիկ. Զորայանը XIX դարի երկրորդ հիսնամյակի սկզբին,— ալ հիմա ինծի հետ մեկտեղ շատերն ալ համոզված են, որ մեր գրաբառը հասարակաց լեզու չենք կրնար ընել, այլ փոխարեն՝ մեր աշխարհաբառ լեզուն զարդարելու ու տարածելու է։ Ծվ որովհետև ամեն բանի մեջ մեծագույն մասին օգուտը պիտի փնտրենք, քան թե քանի մը մասնավոր մարդոց, ուստի ես ալ կհորդորեմ առ հասարակ ընթերցողներս, որ ընտիր աշխարհաբառ մը ունենալու հոգ տանին...»[3]։

Աշխարհաբարի «դատի» պաշտպանների մեջ, սակայն, կային տարաձայնություններ։ 1851 թվականին գրեթե պատանի Գր. Օտյանը գրապայքարում կանգնելով «աշխարհաբարը հասարակաց լեզու ընելու» տեսակետի վրա, իր «Առաջարկության» վերջում հանգում է երկու լեզուների մերձեցման մտքին՝ առաջնությունը, այնուամենայնիվ, տալով գրաբարին. «Մեր հույսն այն է,— գրում է նա,— որ այսպիսով քիչ-քիչ գրաբար լեզվին ոճերը մտցնելով աշխարհաբարին մեջ և բառերն ալ իրենց աղավաղ

---

1 «Բազմավեպ», 1843, № 5, էջ 79։

2 «Բազմավեպ», 1846, № 13, էջ 196։

3 Ն. Մ. Զորայան. Ընթերցասիրություն կամ գիրք կարդալու միջոցով մտավորական մշակության հասնելու օգտակար խրատներ, Կոստանդնուպոլիս, 1852, էջ 255։

կերպարանքեն մերկացնելով, և հին ձևերնին և ույժերնին տալով, կրնանք օր մը անզգայաբար հասնել դրաբարը հասարակաց *ընելու»*[1]։

Բանավեճը գրաբարի և աշխարհաբարի շուրջը շարունակվեց 50—60-ական թվականներին և հետագայում, սակայն այն այլևս կորցրել էր իր հրատապ բնույթը և վերածվել էր սխոլաստիկայի, քանի որ իրականության մեջ վերջնականապես հաղթանակել էր աշխարհաբարը և գրաբարյան հատուկենտ գրվածքները հաստատում էին սոսկ աշխարհաբարի պատմական զարգացման, նրա հաղթանակի օրինաչափությունը։

Գրական աշխարհաբարի զարգացման պայմանները միանգամայն այլ էին հնդկահայ գաղութում։ Այստեղի հայերի խոսակցական լեզուն ջուղահայերի բարբառն էր, որի գործունեության շառավիղը շատ փոքր էր։ Չնայած մի քանի փորձերին, նա չդարձավ, և չէր էլ կարող դառնալ գրականության լեզու։ Հայտնի է, որ Թաղիադյանը իր «Ազգասերը» միայն մեկ տարի հրատարակելով ջուղահայերի բարբառով, անցավ գրաբարին։ Մ. Նալբանդյանը բարձր գնահատելով Թաղիադյանի տաղանդը և նրա լուսավորական արդյունավոր գործունեությունը, այդ առթիվ «Հյուսիսափայլում» հայտնեց իր տարակուսանքը։ Մեկ տարվա փորձը Թաղիադյանին բերել էր այն համոզման, որ որևէ բարբառ, այն էլ խրթին ու քչերին միայն հասկանալի ջուղահայերի բարբառը չի կարող դառնալ ընդհանրական գրական լեզու։ Իսկ վերջինիս կենսական անհրաժեշտությունը նա խորապես գիտակցում էր. Ճիշտ չէր, սակայն, նրա առաջարկած ուղին։ Թաղիադյանը գտնում էր, որ ընդհանուրին հասկանալի գրական լեզուն կստեղծվի գրաբարի աստիճանական պարզացման միջոցով։ Այդ է հաստատում նրա լեզվի ուսումնասիրությունը։ «Ազգասեր Արարատյանի» գրաբարի մեջ հաճախ ենք հանդիպում աշխարհաբար բառեր, արտահայտություններ, դարձվածքներ. Արարատյան աշխարհաբարով նա գրում և տպագրում է երգիծական բանաստեղծություններ։

Արևելահայ գրական աշխարհաբարի ձևավորման պրոցեսը համեմատաբար դանդաղ է տեղի ունենում։ Այդ ասպարեզում առաջին քայլերը կատարվում են XIX դարի 20-ական թվականներին Լազարյան ճեմարանում և Ներսիսյան դպրոցում։ «...Լազարյան ճեմարանում,— գրում է Լեոն,— սկսում է մշակվել մի պարզ, հանրամատչելի աշխարհաբար լեզու ... Աշակերտներ հավաքվում էին զանազան երկրներից. ամեն մեկը բերում էր իր երկրի խոսակցական հայերենը, գավառաբարբառը։ Ուսուցիչները հետևում էին նրանց խոսակցություններին, մաքրում էին լեզուն գավառաբանություններից, օտար բառերից և մշակում էին մի հարազատ հայերեն, որ գրաբար չէր, բայց գավառաբարբառ էլ չէր, այլ բոլոր տեղերից եկածներին հասկանալի մի լեզու»[2]։

---

1 Գ. Ս. Օտյան. *Առաջարկություն աշխարհաբար լեզուն կանոնավորելու և հասարակաց լեզու ընելու վրա, Կ. Պոլիս, 1851, էջ 11։*

2 Լեո. *Ստեփանոս Նազարյանց, հատ. Ա, Թիֆլիս, 1902, էջ 38—39, հմմտ. «Արարատ» շաբաթաթերթ, 1850, № 2։*

Ուշագրավ է, որ 20-ական թվականներին Ներսիսյան դպրոցում առարկաներն ավանդվում էին աշխարհաբար լեզվով գրված դասագրքերով. ահա մի հատված «Հայոց պատմություն» դասագրքից.

«Հարց.— Հայկ կրկին դարձա՞վ յԱրարատյան աշխարհը։

Պատասխան.— Հրամեր ես. յուր որդովքն և թոռամբքն, որ 300 հոգիք էին, փախավ էկավ յուր հայրենի երկիրն։

Հարց.— Բելն ի՞նչ արավ, ինչ ժամանակ լսեց Հայկա փախուստը։

Պատասխան.— Յուր որդվոց մեկի բերանով խապար ղրկեց Հայկին, թե արի՛ ինձ հնազանդիր, դարձիր յիմ երկիրը, թե չէ քեզ էսպես, էնպես կանեմ։

Հարց.— Ի՞նչ պատասխան տվավ Հայկն.

Պատասխան.— Հայկ պատասխանեց, թե՝ ինչ որ ձեռացդ կուգա՝ արա. ես քո ճորտն չեմ, չե՛մ հնազանդիր քեզ»[1]։

Լազարյան ճեմարանը և Ներսիսյան դպրոցն են լինում դարձյալ արևելահայ աշխարհաբարով առաջին գրքերն հրատարակողները[2]։

1832—1833 թվականներին Շուշում բողոքական քարոզիչները աշխարհաբար լեզվով տպագրում են չորս գիրք՝ կրոնական բովանդակությամբ։ Այսպիսով, արևելահայ աշխարհաբարով առաջին հրատարակությունները, բացի մեկից («Առաջադրություն հայոց նոր սարքվող զորքի մասին»), կրոնական գրքեր էին։

Ժամանակի առաջավոր մարդկանց գիտակցության մեջ գրական աշխարհաբարի անհրաժեշտության խնդիրը հասունացած էր։ Հար. Ալամդարյանը իր գրաբար քնարական բանաստեղծությունների հետ գրում է նաև աշխարհաբար առակներ (որոնցից, ցավոք, պահպանվել է միայն մեկը). այդ շրջանում է Արովյանը գրում և թարգմանում առակներ, երգիծական բանաստեղծություններ և կազմում արևելահայ առաջին աշխարհաբար դասագիրքը՝ «Նախաշավիղը»։

1840-ական թվականների սկզբներին աշխարհաբարի «դատի» հրապարակական պաշտպանությամբ առաջինը հանդես է գալիս Ստ. Նազարյանը։ 1843 թվականին գրած և 1844 թվականին հրատարակած «Համառոտ ակնարկ հայկական գրականության վրա՝ մինչև XIII դարի վերջը» ռուսերեն աշխատության նախաբանում հայ գրականության վերածնության առաջին նախապայմանը նա համարում է ժողովրդին հասկանալի լեզուն։ Իր երկրորդ, դարձյալ ռուսերեն աշխատության մեջ («Տեսություն նորագույն ժամանակների հայկական մատենագրության պատմության», 1846) Նազարյանը կրկին արծարծելով «դարի պահանջներին համապատասխան ազգային նոր գրականության» և համաժողովրդական գրական լեզվի

---

1 Ա. Երիցյան. Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, հատ. Ա., Թիֆլիզ, 1898, էջ 113—114։

2 «Համառոտ քննութիւն քրիստոնէական հաւատոյ և մահմետական կրօնի, յաշխարհաբառ լեզուի շարադրեալ յումեմնէ հոգեսիրէ ի պէտս պարզամտաց, 1831, ի Մոսկով, ի տպագրատան ճեմարանի հայոց տեարց Լազարեանց», «Առաջադրություն հայոց նոր սարքվող զորքի մասին», 1827։

հարցը՝ վերջինիս հիմքն է համարում Արարատյան բարբառը։ Նույն ժամանակ (1847) ռուսերեն «Կավկազ» թերթի էջերից Նազարյանին արձագանքում է Լազարյան ճեմարանի սան և Դորպատյան համալսարանի ապագա ուսանող Վահան Ասկարյանը։

1840-ական թվականների վերջերից արևելահայ իրականության մեջ ևս կրքոտ պայքար է բռնկում աշխարհաբարի և գրաբարի շուրջը։ Սակայն, ինչպես արևմտահայ հատվածում, այստեղ ևս, մի փոքր ավելի ուշ, հակառակ ռեակցիոներների կատաղի դիմադրության, գրականությունը զարգանում է համաժողովրդական լեզվի՝ աշխարհաբարի նշանաբանի տակ։ Դորպատի հայ ուսանողները (Ռափայել և Քերովբե Պատկանյաններ, Գ. Դոդոխյան, Գ. Միրիմանյան) 50-ական թվականների սկզբներին հյուսում են իրենց կենսաթրթիռ աշխարհաբար երգերը, որոնք սկսում են լայն տարածում գտնել՝ դեռևս նախքան տպագրվելը։ 1855 թվականին տպագրվում է «Գամառ-Քաթիպայի արձակ և չափաբերական աշխատությունների» առաջին տետրակը, որ նշանավորում է մի նոր շրջափուլ արևելահայ պոեզիայի պատմության մեջ։

Այսպիսով, գրաբարի և աշխարհաբարի շուրջը տեղի ունեցող պայքարի ելքը՝ հօգուտ աշխարհաբարի արևելահայ իրականության մեջ ևս կանխորոշում է կյանքը, հասարակական զարգացման օրինաչափ առաջընթացը։

9

XVIII դարի վերջին քառորդում և XIX դարի առաջին կեսում հայ գրականության մեջ տիրապետող գրական ուղղությունը եղել է կլասիցիզմը՝ իր ուրույն առանձնահատկություններով ու երանգներով։

Եթե եվրոպական (հիմնականում ֆրանսիական) կլասիցիստները իրենց երկերի նյութը վերցրել են բացառապես հունա-հռոմեական պատմական անցյալից ու դիցաբանությունից, ապա նույն այդ գրական ուղղության հայ ներկայացուցիչների ստեղծագործական ներշնչման աղբյուրը եղել է հայոց պատմությունը, հայկական դիցաբանությունը։

Պետք է նկատի ունենալ, որ տարբեր ժամանակաշրջաններում և հասարակական տարբեր շերտեր ներկայացնող հեղինակների ստեղծագործություններում կլասիցիզմը գաղափարախոսական միևնույն բովանդակությունը, միևնույն նպատակադրումը չի ունեցել։ Եթե XVII դարի ֆրանսիական կլասիցիստների (Կոռնել) քաղաքական իդեալը բացարձակապետությունն էր (աբսոլյուտիզմը), ապա XVIII դարի վերջին, ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի դարաշրջանում կլասիցիզմը որոշակի կերպով ուղղված էր ֆեոդալական կարգերի դեմ, բռնակալության դեմ։ Ֆրանսիական գրականության պատմության մեջ այդ շրջանի կլասիցիզմը որակվում է որպես «ռևոլյուցիզմ»[1]։

Միատարր չի եղել նաև հայկական կլասիցիզմը։

[1] „История французской литературы", т. II, изд. Академии наук СССР, М., 1956, էջ 16։

Տեսնենք նախ պոեզիան, որ, գրեթե իր բոլոր ենթատեսակներով, հիշյալ ժամանակաշրջանում, ամենատարածված գրական սեռն է եղել հայ գրականության մեջ։

XVIII դարի վերջերին և XIX դարի առաջին տասնամյակներին հանդես եկած Մխիթարյան բանաստեղծների՝ Գաբրիել Ավետիքյանի (1751—1827), Ղուկաս Ինճիճյանի (1758—1833), Մկրտիչ Ավգերյանի (1762–1854), Մանուել Ջախջախյանի (1770—1835), Եղիա Թոմաճանի (1777—1848) և ուրիշների պոեզիան կրում է նորմատիվ-ռացիոնալիստական կլասիցիզմի կորեղ դրոշմը. կյանքին, կենդանի իրականությանը միանգամայն խորթ, խրթին գրաբարով շարադրված, մեծ մասամբ բռնահանգ ու բռնակարգ չափածո ճարտասանություններ, եկեղեցա-ծիսական ոտանավորներ՝ կրոնական տոների կամ քահանայաօծության առթիվ գրված, ձոներգեր՝ աբբահորը, միաբանության այս կամ այն անդամին և վանքի մեկենաս ամիրաներին նվիրված, հանգավոր դամբանականներ և էպիտաֆիաներ-ահա՛ Մխիթարյան բանաստեղծների պոեզիայի ընդհանուր պատկերը. էությունը չի փոխվում, երբ նրանք, շատ հազվադեպ, դիմում են աշխարհաբարին. այս տեսակետից բնորոշ է 1810 թվականին հրատարակված Մկրտ. Ավգերյանի «Բանաստեղծություն չորս ետքերնուս վրա» դիմառնությունը՝ «գրաբարեն եւև աշխարհաբառ ռամկորեն դրած՝ ամմեն մարդու պետք ըլլալուն համար, և դպրատան տղոց՝ բաղդատությամբ վարժելու ի գրոց լեզու»։ Մխիթարյան բանաստեղծն աշխարհաբարն օգտագործում է ոչ միայն գրաբարի ուսուցումը դյուրացնելու, այլև «չորս ետքերը» (մահ, դատաստան, դժոխք, արքայություն) «դպրատան տղոցը» հիշեցնելով, նրանց դաստիարակելու քրիստոնեական հեզության և հնազանդության ոգով։

Պատմական անցքերին և անձերին նվիրված բանաստեղծությունները ձևով և բովանդակությամբ գրեթե չեն տարբերվում «տերունական»-կրոնական տաղերից. դրանք ծայրե ի ծայր ներթափանցված են քրիստոնեության փիլիսոփայությամբ, ավատական-միապետական գաղափարներով։ Բնությանը, տարվա եղանակներին վերաբերող ոտանավորները նույնքան անկենդան են և անարվեստ։ Սոցիալական-քաղաքական փոթորկալից իրադարձություններով հարուստ ժամանակաշրջանը (XIX դարի առաջին տասնամյակները) գրեթե ոչ մի արձագանք չեն գտել Մխիթարյան բանաստեղծների տաղերում, բացառությամբ, թերևս, Մանուել Ջախջախյանի «Ի պէսպիսութիւն բարոյից և վիճակի յայտնիչ աստուածային գերագոյն իմաստութեան» (1825) բռնահանգի, ուր հեղինակը բանավիճում է անանուն մեկի հետ, որը տրտնջում է մարդկանց վիճակի անհավասարության դեմ.

Քրրթմրնջե՞ս դու. է՞ր սա թամբիչ և նա նաժիշտ...
...Եթէ անցնիր ոսկի թագից էր արժանի,
Ի քոյդ փարախ կամ յաղօրիս ո՞ տարժանի։
Կամ թէ գեղջուկ քո պէս մրրէ անպէտ քարտեզ,
Ո՞ր բան յայնժամ բզբոյդ հեշտին բրրիր պարտեզ...[1]

1 «Տաղք Մխիթարեան վարդապետաց», հատ. երկրորդ, 1853, Վենետիկ, էջ 48։

Ըստ վանական բանաստեղծների, ապարդյուն է տրտունջալը, թե ինչո՞ւ մեկը իշխանուհի է, մյուսը՝ աղախին. ամեն ոք պետք է մնա իր համար «ի վերուստ» սահմանված տեղում. եթե յուրաքանչյուրը թագի լինի արժանի, ապա ո՞վ պիտի քեզ համար ոչխար պահի կամ աղունը աղա. եթե գեղջուկը քեզ նման գրի, ապա ո՞վ է մշակելու քո պարտեզը։

ՏԱՂՔ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Վենետիկ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1852

«Տաղք Մխիթարեան վարդապետաց» ժողովածուի անվանաթերթը

Սոցիալական անհավասարությունը «աստուածային գերագոյն իմաստութեամբ» բացատրելու և արդարացնելու այս մտայնությունը շատ բնորոշ է Մխիթարյանների ողջ պոեզիայի և ընդհանրապես գրականության գաղափարական ուղղության համար։

Մխիթարյանների պոեզիան և նրա գլուխ-գործոցը՝ Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազն» պոեմը, որ գրված լինելով անցյալ դարի 30-ական թվականներին, հրատարակվեց միայն հայկական կլասիցիզմի մայրամուտի շրջանում, 1858 թվականին, «Վերք Հայաստանի» վեպի հետ միաժամանակ, ընթերցող լայն շրջանների համար մնացին անմատչելի և գրեթե ո՛չ մի ազդեցություն չունեցան հայ գրականության զարգացման ընթացքի վրա։

Այստեղ անհրաժեշտ է նկատել, որ Մխիթարյանների դերը հայ գրականության մեջ (խոսքը գեղարվեստական գրականությանն է վերաբերում) անցյալում չափազանցված է եղել։ «...Հայ գրականության վրա,— գրում է ականավոր պատմաբան Լեոն,— դեռ XVIII դարի երկրորդ կեսից իշխում էր Մխիթարյան դարը, այսինքն ս. Ղազար վանքի ազդեցությունը։ Այս գերիշխող դերը նա ամենայն անաղարտությամբ պահպանեց և՛ XIX դարի առաջին կեսում...»[1]։ Ըստ Լեոյի, Մխիթարյանների գերիշխող ազդեցությունը սկսեց թուլանալ միայն «1850—1860-ական թվականներից,

[1] Պրոֆ. Լեո. Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս երկրորդ։ Դասախոսություններ՝ կարդացված ՀՍՍՀ պետ. համալսարանում, 1924—1925 ակադեմ. տարեշրջանում (Ձեռագրի իրավունքով)։ Երևան, 1927, Պետ. համալսարանի ապակետիպ, էջ 372։

երր մեզանում զարգացավ աշխարհիկ գաստիարակությունը, բերելով իր հետ և՝ համապատասխան գրականության պահանջ»[1]։

Անտարակույս, խոշոր է Մխիթարյանների դերը հայ պատմիչների, մատենագիրների հրատարակության, հայոց լեզվի ուսումնասիրության, բառարանագրության մարզերում, ինչպես և թարգմանական գրականության զարգացման գործում։ Սակայն նրանց գաղափարախոսությունը թե՛ հրապարակախոսության և գեղարվեստական գրականության մեջ և թե՛ պատմագրական ուսումնասիրություններում, քողարկված թե բացահայտ՝ ուղղված էր ժամանակաշրջանի առաջադիմական հայացքների դեմ։ Անշուշտ բացառություններ եղել են, որոնք, սակայն, ինչպես միշտ, այս դեպքում ևս հաստատում են օրինաչափությունը։

Ամենաբնորոշը Ղ. Ալիշանի օրինակն է։ 1840-ական թվականների վերջերին Վենետիկում ականատես լինելով իտալական ազգային-ազատագրական շարժման իրադարձություններին, վերջիններիս ներշնչմամբ նա գրում է «Նահապետի երգերը», մի պահ մոռանալով բանաստեղծական քանքարը կաշկանդող «աբեղայական սևաթույր


ՄՈՒԶԱՅՔ
ԱՐԱՐԱՏԵԱՆ
1829. Ի ՄՈՍԿՈՒ

«Մուզայք Արարատեան» ժողովածուի անվանաթերթը

վերարկուն»։ «Նահապետի երգերը» դուրս են Մխիթարյանների պոեզիայի զարգացման ընդհանուր օրինաչափությունից։ Ալիշանից ո՛չ առաջ և ո՛չ էլ հետո Մխիթարյան բանաստեղծները նման բան չեն ստեղծել։

Մուրադյան վարժարանի սաների՝ Մկ. Պեշիկթաշլյանի, Ս. Հեքիմյանի, Թ. Թերզյանի և ուրիշների գրական երախայրիքի վրա նշմարելի է, անշուշտ, Մխիթարյանների կլասիցիզմի առավել կամ նվազ ազդեցությունը, սակայն, վերջինս չի եղել տևական, չի ունեցել էական նշանակություն նրանց հետագա ստեղծագործական զարգացման համար։

Մխիթարյան բանաստեղծների ազդեցությունը նշմարելի է XIX դարի առաջին տասնամյակների, այսպես կոչված՝ դպրոցական պոեզիայի վրա։ Վերջինիս բնույթի և ուղղության մասին գաղափար են տալիս «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» (1828) և «Մուզայք Արարատեան» (1829) ժո-

---

[1] Լեո. *Հայ գրքի տոնը, Թիֆլիս, 1912, էջ 114։*

ռովածուները, որոնք ամփոփում են Ներսիսյան դպրոցի և Լազարյան ճեմարանի սաների արձակ և գերազանցապես չափածո գրական նախափորձերը։ Դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ կրոնա-բարոյախոսական, պատմա-հայրենասիրական վերացական, ճոռոմ բանաստեղծություններ, հոգևոր ու աշխարհիկ բարձրաստիճան պաշտոնյաներին նվիրված ձոներ, ներբողներ, ճառեր՝ բոլորն էլ, առանց բացառության, գրաբար՝ զուրկ գեղարվեստական որևէ արժանիքից։ Ժողովածուներին աշխատակցողների շարքում հանդիպում ենք Թեոդ. Խադամյանի, Սիմեոն Սուլթանշահյանի, Սարգիս Տիգրանյանի, Առաքել Արարատյանի, Հովս. Ջերքեզյանի անուններին, որոնց, որպես բանաստեղծների, գործունեությունը հետագայում գրեթե ոչնչով չնշանավորվեց։

Մխիթարյան պոեզիային զուգահեռ, նրան հակադիր գաղափարական բովանդակությամբ, թեև սկզբում միևնույն գրական ուղղությամբ, զարգանում էր լուսավորական, ազգային-ազատագրական շարժման պոեզիան։ Այս վերջինի երախայրիքը պետք է համարել Մովսես Բաղրամյանի հայրենասիրական չափածո ողբը, որով սկսվում է նրա նշանավոր «Տետրակ, որ կոչի հորդորակ»։ Դա միայն ողբ չէ, այլև ազգային զարթոնքի և հայրենիքի ազատության համար պայքարի կոչ։ Դրանով Բաղրամյանը, ըստ էության, հանդիսանում է սկզբնավորողը ո՛չ միայն հայ քաղաքական գրականության, հրապարակախոսության, այլև քաղաքական պոեզիայի։

Մ. Բաղրամյանի «Ողբի» հետևողությամբ է գրված Թաղ. Սոգինյանցի «Տետրակ, որ կոչի Ողբ Հայաստանեայց» երկը, որ տպագրվել է 1791 թվականին Մադրասում։ Հեղինակը թեև չունի Բաղրամյանի հրապարակախոսական-քաղաքական պաթոսը, բայց գրեթե նույն խնդիրներն է առաջադրում. թոթափել տգիտության կապանքները, ծուլության ախտը, հետևել լուսավորված ազգերին (բերում է անգլիացիների օրինակը), սակայն, զգուշացնում է ձուլվելուց, քանի որ «ոչ այլոց աշխարհ լինի ձեզ օթևան»։

Ըզգաստացիք, բաւական է զայս որ անցան,
Այսուհետև իսկ ըստացէք տուն սեփական...

Սոգինյանցի տետրակում արտահայտվել են նաև հնդկահայերի քաղաքական ակնկալությունները Ռուսաստանից։ Պետրոս Մեծի համառոտ կենսագրությունը թարգմանելով անգլիական բնագրից, հնդկահայ հեղինակը հորդորում է օրինակ վերցնել ռուսներից, որոնք Պետրոս Մեծից սկսած բարգավաճել են և «փայլին այսօր գրեթե պերճք և կորովիք և յաղթողք գտան ի մէջ ամենայն ազգի և փայլին ամենայն երջանկութեամբ...»։ Սոգինյանցը հույս է հայտնում, որ ռուսներին զորացնող «տերը» և՛ մեզ համար կբացի ողորմության դուռը։

Հետաքրքրական է, որ տետրակի վերջում զետեղված Եզոպոսի առակներն էս նա մեկնաբանում է ըստ իր քաղաքական իդեալի։ «Հայաստանի ողբի» հեղինակը «Ի վերայ գայլոյ և շան» առակի իմաստը համարում է՝ «Ազատությունն է մեծագին, քան զամենայն ինչ, և սիրելի»։

Ավանդական, «արտահալած» հայության քաղաքական ձգտումները՝ օտար ափերից վերադառնալ հայրենիք («յաշխարհ Արարատեան»), թոթափել օտարի լուծը՝ արտահայտություն է գտել XIX դարի երկրորդ տասնամյակում հնդկահայ մի անհայտ հեղինակի հորինած «Տէ՛ր, կեցո՛ դու զհայս» բանաստեղծության մեջ, որը մի քանի տասնամյակ համարվել է ազգային հիմներից մեկը և «Օրհներգություն ազգային» խորագրով տեղ գտել ժամանակի գրեթե բոլոր երգարաններում.

Տէ՛ր, կեցո՛ դու զհայս
Եւ արա զնոսա պայծառս,
Կեցո՛ զհայս.
Զողորմութիւնդ վերին
Հաճեաց ձօնել նոցին,
Զի նովիմբ մարթասցին
Ապրիլ յաստիս։

Ո՜վ տէր մեր, տէ՛ր, փութա՛,
Զազգ մեր համայն փրկեա՛
Ի թշնամեաց.
Կափո՛ զաչս նոցուն,
Հա՛տ զարմատոյն զբուն
Եւ զազգ մեր պարտասուն՝
Արա՛ հզօր...

Աչովդ համատարած
Զազգ մեր արտահալած
Փոյթ գումարեա՛
Յաշխարհ Արարատեան,
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեփական
Օտար ազգաց...[1]

Պատմա-քաղաքական պոեզիայի առավել բնորոշ ներկայացուցիչը Հովհան Վանանդեցին է, որ իր երկերը գրել է անցյալ դարի 30-ական թվականներին։ Իր նախորդների համեմատությամբ Վանանդեցին առավել օժտված բանաստեղծ է. նա ոչ միայն քաջահմուտ է կլասիկ հայերենին, այլև ունի վառ երևակայություն. եթե նախորդների մեջ գերակշռում էր ճարտասան-հրապարակախոսը, ապա սա առավելապես խոսում է պատկերների լեզվով. ընթերցողների առջև գծում է պատմական Հայաստանի էպիկական տեսարանները, նրա ավանդական և իրական հերոսների կերպարները («Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամի ու Արայի», «Արփիական Հայաստանի», «Ոսկի դար Հայաստանի»)։ Սակայն նա օժ-

---

[1] «Քնար հայկական», խմբագրեց Մ. Մ. Միանսարյանց, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 217։ Այս բանաստեղծությունը, որ առաջին անգամ տպագրվել է «Հայելի Կալկաթեան» հանդեսում 1820 թ. և ապա արտատպվել Թաղիադյանի «Ազգասերում» (1847 թ.), մինչև վերջերս համարվում էր Թաղիադյանի հեղինակությունը (տե՛ս Ա. Ալպոյաճյան—«Տէ՛ր, կեցո՛ դու զհայս» երգին հեղինակը». «Արմավենի» տարեգիրք, ա. տարի, 1937—1938, էջ 117—121։

տրված է նաև հրապարակախոսի պաթոսով։ Պատմելով և պատկերելով անցյալի դրվագները, միշտ զգում և զգալ է տալիս իրականությունը, Հայաստանի իրական վիճակը, և, հաճախ շեղվելով պատմական սյուժեի կարգացման ընթացքից, դիմում է ժամանակակիցներին և հորդորում «նմանիլ նախնյաց»։ Վանանդեցին վարդագույն է ներկայացնում անցյալը (հիշենք միայն «Հայաստան, երկիր դրախտավայր...» երգը). պատմական Հայաստանի գովքը, սակայն, բանաստեղծի համար լոկ միջոց է ժամանակակից հայերի մեջ սեր արծարծելու դեպի հայրենիքը, արթնացնելու ազգային ինքնագիտակցությունը, նրանց պատրաստելու սխրագործության՝ հանուն հայրենիքի[1]*։*

Եթե այս երեք բանաստեղծները իրական, շոշափելի Հայաստանից հեռու լինելով (Մադրասում և Զմյուռնիայում) երգել են միայն նրա պատմական անցյալը և նրա համար երազել ազատ ապագա, ապա Սեռովբե Պատկանյանը *(1770—1836) ապրելով Հայաստանին ավելի մոտ՝ իր պոեզիայի նյութ է դարձնում նրա ճակատագրի համար վճռական-պատմական նշանակություն ունեցող ժամանակակից իրադարձությունները։ Դրանք պատմական էին իրենց նշանակությամբ, բայց բանաստեղծի համար առօրյա էին, կենդանի իրականություն։ Քանիերեք տարեկան հասակում Պոլսից տեղափոխվելով Թիֆլիս, նա ականատես է լինում Աղա Մահմադ խանի արշավանքին և գրում «Ի հնգեկի հարուածս Տփխիսայ» բանաստեղծությունը, ուր ողբում է այդ արշավանքի բերած աղետները, կոտորածի, սովի, ժանտախտի, հրդեհի մատնված ժողովրդի տառապանքները։*

Սեռովբե Պատկանյանը բանաստեղծություններ է նվիրել նաև Անդրկովկասի համար ռուսական բանակի մղած մարտերին («Ի յաղթանակ Ցիցիանովի»)։ «Յազատութիւն սրբոյ էջմիածնի» և «Առ կայսրն ռուսաց Նիկողայոս Ա.» ոտանավորներում բանաստեղծն արտահայտել է Արևելյան Հայաստանի՝ պարսկական լծից ազատագրության այն ցնծությունը, որ ապրել են պատմական մեծ իրադարձության ժամանակակիցները[2]*։*

XIX դարի 20-ական թվականներից ավելի ու ավելի հաճախ ենք հանդիպում քաղաքական իրադարձությունները, առօրյա, երբեմն աննշան դեպքերը արտացոլող բանաստեղծությունների, թեև դրանք, մեծ մասամբ անարվեստ, դրաբար կամ կիսագրաբար ոտանավորներ են։ Էական է, սակայն, երևույթը՝ իրականության ակտիվ ներթափանցումը պոեզիայի, գրականության մեջ։

Լեզվի խրթինության պատճառով աշխարհիկ բովանդակությամբ այդ պոեզիան լայն տարածում չէր գտնում, և, բնականաբար, չէր կատարում, չէր էլ կարող կատարել իր հասարակական ֆունկցիան։ Ձևի և բո-

---

1 *Տե՛ս* Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ. Երևան, 1946, էջ 510—527։*

2 *Տե՛ս «Երգք Սերովբէ վարժապետի Պատկանեան ի լոյս ընծայիալ աշխատասիրութեամբ Աւետիքայ խաղեղեանց. ի Մոսկուա, 1857։*

վանդակության անչրպետը խիստ զգալի էր և դրա վերացումը գնալով դառնում էր հասարակական կյանքի զարգացման օրինաչափությամբ առաջադրված հրամայական պահանջ։ Վերջինիս բնորոշ արտահայտությունն է XVIII դարի վերջին քառորդի և XIX դարի առաջին տասնամյակների ժողովրդական-աշուղական (գուսանական) պոեզիան։ Այդ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձություններին արձագանքող ժողովրդական երգերից քիչ նմուշներ են պահպանվել, որոնք, սակայն, խիստ ուշագրավ են։ Ժամանակի պատմիչներից մեկը՝ Վարդան Օձնեցին, նկարագրելով 1795 թվականի Աղա Մահմադ-խանի արշավանքը Թիֆլիս, գրում է.

«...Իսկ ներքինին Մհամմադ շահ ելեալ ի Գանձակայ հարիւր քսան հազարաւ ... ուղղեաց զարշաւանս իւր դէպ ի Տփխիս քաղաք։ Բայց բնակիչք Տփխիս քաղաքի ոչինչ համարելով զարհաւիր և զերկիւղ արքայինպարսից, ծաղր առնելով զնա, յարմարեալ ի վերայ նորա զերգս կատականաց ասէին.

Մահմադ խանն գալիս ա,
Ներքինի է, լալիս ա...»[1]

1804 թվականի ամառը, երբ ռուսաց զորքը պաշարում է Երևանի բերդը, մի հայ երիտասարդ (Ռոստոմ-բեկ), որ աչքի է ընկնում հազվադեպ սխրագործություններով, ծանր վիրավորված ընկնում է թշնամու ձեռքը և տարվելով Թավրիզ՝ տանջամահ է արվում։ Նրա մասին հյուսվում է մի երգ («Ռոստոմ-բեկ»), որ, ինչպես վկայում է «Կովկաս» լրագիրը, մինչև հիմա (1846) երգում են Պարսկաստանում ապրող հայերը[2]։

Ժողովուրդը երգեր է հյուսում 1826—1827 թվականների ռուս-պարսկական պատերազմի՝ իր համար բախտորոշ նշանակություն ունեցող պատմական այդ խոշոր իրադարձության շուրջը, ներբողում նվաճված հաղթանակը, արտահայտում իր երախտագիտությունը՝ քաջարի ռուս զորքի նկատմամբ։ Այդ երգերից մի նմուշ բերում է Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպում.

Մենք ռամակ ռամակի կռանք, վեր կկենանք,
Ռսին մեր աշխարքը, կյանքն ղուրբան կռանք։
Հասան խանն կատվի պես քարն քար ընկավ,
Շահզադի ղոշունը ցիր ու ցան էլավ...[3]

Հետաքրքրությունը ժողովրդական, ինչպես և աշուղական ստեղծագործությունների նկատմամբ, նրանց հավաքումն ու հրատարակությունը հայ իրականության մեջ սկսվում է 30—40-ական թվականներից։

Նոր գրականության էսթետիկական սկզբունքների հիմքում դնելով ժողովրդայնության գաղափարը, Աբովյանը մեծագույն խնամքով և ուշա-

1 «Պատմութիւն Վարդան արքեպիսկոպոսի Օձնեցւոյ»։ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ՝ Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 147։

2 «Կովկաս, լրագիր քաղաքական և բանասիրական», 1846, № 35։

3 Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի, Թիֆլիս, 1858, էջ 258։

դրությամբ հավաքում և ուսումնասիրում է ժողովրդական բանարվեստի տարբեր ժանրերի նմուշները։ Ժողովրդական բանարվեստը մեծ վերանորոգչի համար ոչ միայն գիտական ուսումնասիրության առարկա էր, այլև ստեղծագործական ներշնչումների կենսալի ակունք. նա ղեկավարվում էր այն սկզբունքով, որ նոր գրականությունը ոչ միայն բովանդակությամբ, այլև ձևով պիտի ժողովրդին հարազատ լինի՝ արտացոլի ժողովրդի կյանքը՝ ժողովրդի գեղարվեստական մտածողությամբ։

Դեռևս Աբովյանի կենդանության օրով, 1843 թվականից Ղ. Ալիշանը «Բազմավեպի» էջերում սկսում է պարբերաբար տպագրել միջնադարյան հայկական ժողովրդական երգեր, որոնք և անգլերեն թարգմանությունների հետ մեկտեղ 1852 թվականին հրատարակում է առանձին գրքով («Հայոց երգք ռամկականք»)։

Նույն հանդեսում տպագրած հոդվածներում Ալիշանը բարձր գնահատելով ժողովրդական երգերը, գտնում է, որ դրանք արժանի են դասվելու «գերագույն գրվածոց կարգը»[1]։

Ինչպես աշուղական պոեզիայի, այնպես էլ ժողովրդական բանարվեստի հավաքման և ուսումնասիրության գործի սկզբնավորողներից է Դ. Ախվերդյանը։ 40—50-ական թվականներին, «կենդանի աղբյուրից», աշուղական տաղերի հետ միասին, նա գրի է առնում նաև բազմաթիվ «ջանգյուլումներ» և «մանիներ», որոնք, ցավոք, մինչև այժմ էլ մնում են անտիպ նրա արխիվում[2]։

Ժողովրդական բանարվեստի հետ սերտ առնչություն ունի աշուղական պոեզիան, որը XIX դարի առաջին տասնամյակներին լայն տարածում է ստանում ինչպես հայ գաղութներում, այնպես էլ բնաշխարհում։

Դա միանգամայն օրինաչափ էր հայ նոր գրականության զարգացման տվյալ ժամանակաշրջանի համար, երբ կյանքը առաջադրել էր աշխարհիկ բովանդակությամբ և աշխարհաբար՝ ժողովրդին հասկանալի լեզվով գրականության պահանջը։ Աշուղական պոեզիան այդ պահանջի արտահայտությունն էր։ Նա արտացոլում էր ժողովրդի կենցաղը ու հոգեբանությունը, նրա խոհերն ու զգացմունքները, անմիջականորեն արձագանքում ժամանակի հասարակական-քաղաքական իրադարձություններին։ Աշուղը «խալխի նոքարն» էր, ժողովրդի հարազատ ու սիրելի արվեստագետը—ահա՛ ինչից էր բխում Աբովյանի՝ աշուղ դառնալու ձգտումը։

XIX դարի 40-ական թվականների երկրորդ կեսից աշուղական երգերն սկսում են տպագրվել պարբերական մամուլի էջերում։ Թաղիադյանի «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» պարբերականներում լույս են տեսնում ջուղահայ աշուղներ՝ Արզունի, Բաղեր-օղլու, Ամիր-օղլու, Ղուլ-Օհաննեսի տաղերը։ «Բազմավեպում», «Կովկասում», «Արարատում» տպագրվում են Շիրինի, Ազրար-Ադամի և արևելահայ այլ աշուղների մի քանի խաղերը։

---

[1] «Բազմավեպ», 1845, N 7, էջ 109։

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային կից Գրականության և արվեստի թանգարան, Դ. Ախվերդյանի ֆոնդ, N N 83, 92։

Աշուղական պոեզիայի գիտական ուսումնասիրությունն ու հրատարակությունը ձեռնարկում է Գ. Ախվերդյանը. նա հիմք է դնում հայ աշուղների մատենաշարին՝ «Գուսանք» ընդհանուր խորագրով, սակայն, հնարավորություն է ունենում տպագրել այդ մատենաշարի միայն առաջին գիրքը՝ նվիրված Սայաթ-Նովային (1852)։ Մյուս աշուղներից նրա գրի առած երգերը (ոչ բոլորը) մի ժողովածուով լույս են տեսնում ականավոր բանասերի մահից ավելի քան կես դար հետո[1]։

Ժամանակի գրականության մեջ ամենատարածված ժանրերից էր առակը (չափածո և արձակ)։ Թարգմանական գրականությանը նվիրված հատվածում ցույց տրվեց, որ XIX դարի 40-ական թվականներին արդեն հայերեն (գրաբար և մեծ մասամբ աշխարհաբար) հրատարակված էին Եզոպոսի, Լաֆոնտենի, Կռիլովի ստեղծագործությունների լավագույն նմուշները, որոնք, ինչպես ժամանակի մամուլը վկայում է, «ախորժելի են եղած» ընթերցողների լայն խավերին։

Եթե XVII—XVIII դարերում առավելապես տարածված էին Սողոմոնի առակները և կրոնա-բարոյախոսական այլ առակներ, ապա XVIII դարի վերջերից հետզհետե սկսում են տպագրվել թարգմանական և ինքնուրույն այնպիսի առակներ, որոնք արտացոլում էին կենդանի իրականությունը, կենցաղն ու բարքերը, հասարակական հարաբերությունները, ժողովրդի խոհերը, ակնկալությունները։ Վերը տեսանք, թե ինչպես 1791 թվականին հեռավոր Մադրասում Սոգինյանցը առակների բարոյախոսությունը կապակցում էր ազգային-ազատագրական շարժման խնդիրներին։

Առակները սկսում էին դառնալ դասագրքերի անհրաժեշտ տարրը։ Դեռևս 1815 թվականին Աստրախանում կազմած մի դասագրքում, որին չէր վիճակված տպագրվել (Կղեմես Ճահվերդյանի «Տետրակ այբբենական, արարեալ յուսումն դեռահաս տղայոց հայկազնեաց»), զետեղված են մի շարք առակներ՝ թարգմանված ռուսերենից[2]։

Նոր պոեզիայի զարգացման տենդենցների համար բնորոշ է նաև 40-ական թվականներին, հասարակական սուր բախումների բովում ստեղծված չափածո պասկվիլի ժանրը, որը առավել լայն տարածում գտավ 50—60-ական թվականներին։ Այս ժանրի ոտանավորները սովորաբար չէին տպագրվում. նրանք տարածվում էին անգիր՝ «բերնե-բերան» անցնելով և կամ արտագրված օրինակներով։ Այդ է պատճառը, որ դրանցից շատ քիչ նմուշներ են հասել մեր ձեռքը։ Գրա-պատմական ուշադրավ վավերագրեր են այն պասկվիլ-ոտանավորները, որոնք արտացոլում են XIX դարի 30-ական թվականների վերջերին և 40-ական թվականների սկզբներին Կ. Պոլսի Սկյուտարի ճեմարանի շուրջը բորբոքված էսնաֆների և ամիրաների պայքարը։ Այդ ժամանակաշրջանում հասարակական նոր հարաբերությունների զարգացման հետևանքով և Եվրոպայում ծավալ-

---

[1] Տե՛ս «Հայ աշուղներ, լույս գցած աշխատասիրութեննով Գեորգյա Ախվերդյան, հրատարակությամբ օրիորդ Մանե Ախվերդյանի, Թիֆլիս, 1903»։

[2] Ա. Երիցյան, Մի նոր գյուտ հայոց լրագրության պատմության համար, «Արձագանք», 1895, № 87։

վող սոցիալական շարժումների ազդեցությամբ պոլսահայ էսնաֆությունը (արհեստավոր դասը) սկսում է ըմբոստանալ ամիրաների «միահեծան» տիրապետության դեմ, ձգտելով ձեռք բերել իր օրինական իրավունքները ազգային-հասարակական գործերի, մասնավորապես Սկյուտարի ճեմարանի ղեկավարման մեջ։ Էսնաֆները հասնում են որոշ հաջողության. ձեռք են բերում ճեմարանի ղեկավարությունը, նորաստեղծ ազգային վարչության կազմի մեջ անց են կացնում իրենց ներկայացուցիչները։ Էսնաֆների այդ հաղթանակը ամիրաները չեն հանդուրժում. նրանք միջոցների մեջ խտրություն չեն դնում. դիմում են մինչև իսկ մատնության, որի հետևանքով էսնաֆների պարագլուխները բանտարկվում են։ Ամիրաների հետ՝ էսնաֆների դեմ գործում է նաև Պոլսի բարձրաստիճան հայ հոգևորականությունը։

Ահա այս դեպքերի շուրջը երկուստեք հյուսվում է պասկվիլ-ոտանավորների մի ամբողջ շարք։

Էսնաֆների բանաստեղծը, ոմն Կարապետ Պապայան՝ Արգար ծածկանունով անխնա մերկացնում է ամիրաներին, նրանց աջակից «պատվելիներին» և պատրիարքին (Ստեփանոս Զաքարյան), որ «Աղավնի» մականունն էր կրում։ Վերջինիս մասին բանաստեղծը գրում է.

Ո՜վ անամոթ ամբարտավան,
«Աղավնի» քեզ միշտ կը ճանչնան,
Ինձ հարցունես՝ ապուշ ալ չես,
Ըրած գործերդ միշտ կ'երևան...

Դուն անաստված, ամբարտավան,
Հավատք, օրենք վրադ չըկան.
Պատարագեդ վար իջնալուդ
Դուրս թուղթ տարիր մեզ մատնության...[1]

Ամիրաների և պատրիարքի պաշտպանությանը նվիրված ոտանավորում ևս, որի հեղինակը համարվում է Խաչ. Միսաքյանը[2]*, որոշ չափով արտացոլված է «խռովության» սոցիալական բնույթը, «իշխանների» (ամիրաների) կեղեքումները.*

Ազգին այսրան զուրուշները
Կերեր էին իշխանները.
Պիտի նային թեֆտերները,
Կուզենք սանց հիսապները...[3]

Սկյուտարի ճեմարանի շուրջը բորբոքված պայքարն արտացոլող այլ չափածո-պամֆլետներ էլ են եղել, որոնք դեռևս անտիպ են[4]*։*

1 Գ. Հնասեր, Գրական գունդիկ սեռի մը սկիզբը, զարգացումը և վերջավորությունը, «Անահիտ», 1931, Գ. տարի, Թ. 1—2, էջ 140։

2 Ա. Չոպանյանը տարակուսանք է հայտնում այդ առթիվ. «Թերևս ուրիշ մը գրած է և անոր վերագրած են» (նույն տեղը, էջ 138)։

3 «Անահիտ», 1931, գ. տարի, թ. 1—2, էջ 138։

4 Գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի ֆ., N N 227/I, 263 ա։

Այս վավերագրերը վկայում են, որ նախ՝ XIX դարի 40-ական թվականներին արևմտահայ իրականության մեջ տեղի են ունեցել սուր բախումներ սոցիալական տարբեր շերտերի միջև, և երկրորդ՝ այդ բախումները ծնունդ են տվել չափածո-պամֆլետի ժանրին։

Ժամանակի հետադեմ-պահպանողական հրապարակախոսները խիստ բացասական վերաբերմունք են ունեցել ազգի հոգևոր և աշխարհիկ տերերի արատներն ու խոցերը մերկացնող այդ ժանրի նկատմամբ։ Այսպես, օրինակ՝ «Արշալույս Արարատյանի» խմբագիրը Զմյուռնիայի «Սարգսյան աղջկանց դպրատան» հաջողությունները նշելով, դատապարտում է «հասարակության միտքը պղտորող» ոտանավորների հեղինակներին. «...Ազգասեր սիրտերնիս կարեվեր խոցվեցավ անանկ անարժան ու անձոռնի ոտանավորներու վրա, որոնց նպատակը ազգերնիս նախատելու ու միամիտ հասարակության միտքը պղտորելու կնայի, ուստի ասոնց նման դատապարտելի աշխատասիրությանց պսակն ալ ուրիշ բան չի կրնար ըլլալ, բայց միայն խռովությունը և գայթակղությունը»[1]։

Նման չափածո-պամֆլետներ 30—40-ական թվականներին հորինվել են նաև արևելահայ հատվածում՝ ժամանակի ռեակցիոն գործիչների (Միք. Սալլանթյանի և ուրիշների) մասին։ Այդ ժանրի ուշագրավ մի նմուշ է Ներսես Աշտարակեցու «շաթիր-բաշի»՝ «Օղի-գելդի» Մկրտիչի մասին հյուսված երգիծական ոտանավորը.

Առաջնորդի շաթիր-բաշին,
Առուտնհան կերթա խաշին.
Տերտերներու տոլումբաշին.
Օղի-գելդի Մկրտիչը,
Ձեն չարեքի չպրտիչը[2]։

«Օղի-գելդի» Մկրտիչը եղել է տիպական ներկայացուցիչը բարձրաստիճան հոգևորականների այն սպասավորների, որոնք օգտվելով իրենց դիրքից, կեղեքել ու կողոպտել են ժողովրդին։ Ժամանակի կարգերն ու բարքերը բնութագրող այդ կերպարը արժանացել է ոչ միայն անհայտ երգիծաբան-բանաստեղծի գրչին, այլև, ինչպես վկայում է Ա. Երիցյանը՝ նկարիչ Ստ. Ներսիսյանի վրձինին։ Ժամանակի պրոգրեսիվ տենդենցները արտահայտող նկարչի այդ աշխատանքը, ցավոք, չի պահպանվել։

Չափածո-պամֆլետի այդ ժանրը, որ երգիծաբանության, սատիրայի մի ենթատեսակն է, պայմանավորված էր հասարակական զարգացման օրինաչափությամբ։ Սատիրան փթթում է բեկման ժամանակաշրջաններում, երբ հասարակական նոր հարաբերությունները գալիս են բացասելու հինը, իր դարն ապրածը, զարգացման առաջընթացն արգելակող երևույթները և սրանց կրողներին։ Սատիրան հանդիսանում է պատմության ասպարեզ իջած հասարակական նոր ուժերի՝ հնի ժխտման պաթոսն արտահայտող գրականության հիմնական ժանրերից մեկը։

---

1 *«Արշալույս Արարատյան»*, 1841, № 60։

2 Ա. Երիցյան, *Օղի-Գելդի Մկրտիչը և նորան «գովաբանող» անհայտ երգիծաբան հեղինակը*, «Արձագանք», 1892, № 77։

Այդ երևույթը տեսնում ենք նաև հայ նոր գրականության պատմության առաջին հիսնամյակում։ Նշված ժամանակաշրջանում հայ սատիրական պոեզիայի լավագույն նմուշները, գաղափարական և գեղարվեստական խոր ընդհանրացումներով, տվել են Մ. Թաղիադյանը («Հիպոն», «Համեմատութիւն...», «Ցուցակ ստացեալ աղխից...») և հատկապես Խ. Աբովյանը («Հազարափեշեն», «Նախվերմաղի գովքը»)։

10

Պատմական նույն ժամանակաշրջանում արձակի ժանրի մեջ ևս, ինչպես պոեզիայում, տեսնում ենք զարգացման նույն օրինաչափությունները։

Հասարակական նոր՝ բուրժուական հարաբերությունների զարգացման հիմքի վրա ձևավորվում է ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը գրական մի նոր ժանրի՝ քաղաքական-հրապարակախոսական արձակի մեջ (Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ»)։

Տրադիցիոն պատմագրությունն իր ենթաժանրերով (հիշատակագրություն, ժամանակագրություն) տեղի է տալիս մեմուարագրությանը[1]։ Այս ժանրը ևս, որի ամենացայտուն նմուշները հիշյալ ժամանակաշրջանում Հովսեփ Էմինի (1726—1809) և Հարություն Արարատյանի (1774—1835) ինքնակենսագրություններն են, արգասիք է հայ հասարակական զարգացման նոր շրջափուլի և նրա բովանդակությունը լուսավորական, ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունն է։

Ժանրային բնույթով և գաղափարական բովանդակությամբ Հ. Էմինի և Հ. Արարատյանի երկերից որոշակիորեն տարբեր է Մանվել վարդ. Կյումուշխանեցու (1768—1843) «Անձնական պատմությունը...»։ Վերջինս ինքնակենսագրության և հիշատակարանի միահյուսումն է, և նրա հեղինակը, որ սահմանափակվում է իր տեսած դեպքերի ու դեմքերի նկարագրությամբ, հեռու է կանգնած ժամանակի առաջավոր գաղափարներից, որոնց կրողները հանդիսանում են նրա ժամանակակիցներ Խաչ. Աբովյանը և Մ. Թաղիադյանը։

Միջնադարյան պատմագրության տրադիցիաների շարունակողն է հանդիսանում Վարդան Օձնեցին, որի «Պատմությունը» նվիրված է XVIII դարի վերջին քառորդին և XIX դարի առաջին տասնամյակների քաղաքական իրադարձությունների նկարագրությանը[2]։ Ինչպես իր նախորդները (Լաստիվերտցի, Գանձակեցի, Դավրիժեցի և ուրիշներ), Վարդան Օձնեցին ևս պատմական անցուդարձի չոր և անտարբեր արձանագրող չէ. նրա երկը զուրկ չէ հայրենասիրական պաթոսից, ինչպես և պատմական կարևորա-

---

[1] Կ. Ա. Դանիելյան, *Հայ մեմուարային գրականության պատմությունից*, 1961, էջ 84—85։

[2] *«Պատմութիւն Վարդան արքեպիսկոպոսի Օձնեցւոյ» (անտիպ), Հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ (Մատենադարան), ձեռ. № 4331։*

գույն անցքերին և անձերին նվիրված գեղարվեստական էջերից (ինչպես՝ Օվագիմ Թումանյանի (Օվագիմ Յուզբաշի) և նրա զինակիցների սխրա գործությունների նկարագրությունը՝ 1826—1827 թվականների ռուս-պարսկական պատերազմին նվիրված հատվածում և այլն)։ Վարդան Օձնեցու «Պատմությունը» ևս վկայում է պատմագրության տրադիցիաների դերը հայ նոր գրականության մեջ՝ պատմա-գեղարվեստական ժանրի զարգացման գործում։

XIX դարի 30—40-ական թվականները հատկանշվում են նաև ուղեգրության ժանրի զարգացմամբ։ Այդ ժամանակաշրջանին վերաբերող ուղեգրությունների մեծ մասը (տպագրված, թե ձեռագիր) ունի սոսկ պատմա-տեղագրական, ազգագրական նշանակություն, ինչպես՝ Մ. վ. Բժշկյանցի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» (Վենետիկ, 1830), Ս. վ. Ջալալյանի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (հատորներ I և II, Թիֆլիս, 1841—1842), Ավետիս Կարբեցու՝ դեպի Հնդկաստան կատարած «Ուղևորությունը» (անտիպ)[1], Բարունակ Քրթիկյանի «Ուղևորություն ի Բաբելոնը»[2], և ուրիշներ։

Իրենց գաղափարական բովանդակությամբ և գրական-ժանրային հատկանիշներով վերոհիշյալներից որոշակիորեն տարբերվում են XIX դարի առաջին կեսի հայ լուսավորական շարժման երկու ականավոր ներկայացուցիչների՝ Խ. Աբովյանի և Մ. Թաղիադյանի ուղեգրությունները։

Խ. Աբովյանի՝ այս ժանրին պատկանող երկերը, գրված հայերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներով, գրեթե ամբողջությամբ տպագրվել են հեղինակի մահից ավելի քան 50—100 տարի հետո։ Բացառություն է կազմում «Նոր վերելք դեպի Արարատ» ուղեգրությունը, որ տպագրվել է ռուսական «Կավկազ» թերթում, 1847 թվականին[3]։ Աբովյանի այդ և մյուս ուղեգրական երկերը՝ «Ճանապարհորդութիւն պարոն պրոֆեսոր Պարրոտի և Խաչատուր դպրի Աբովեան, համառոտ ստորագրութեամբ հանդերձ Արարատեան լերին, որ է Մասիս» (1829), «Առ բարեմտունդ և սիրելի աշակերտս իմ» (1838), «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» (ռուսերեն, 1847) գրված են ստեղծագործական խոր ներշնչմամբ, հայրենասիրական մեծ պաթոսով, հագեցած են գաղափարական հարուստ բովանդակությամբ. նրանց մեջ արտահայտված են մեծ լուսավորիչ-վերանորոգչի մտահոգությունները հայրենի մռայլ իրականության առթիվ, նրա երազանքները ժողովրդի տնտեսական և կուլտուրական բարգավաճման վերաբերյալ, մոտիկ անցյալի վերհուշերը, բանաստեղծական դեղումները...

Մեր բանասիրությունը արդեն դիտել է Աբովյանի ուղեգրությունների («Առ բարեմտունդ և սիրելի աշակերտս իմ») ստեղծագործական կապը

---

[1] Ռ. Աբրահամյան. *Հայաստանից Հնդկաստան*, «Երևան», 1959, № 205։

[2] Հրանտ Ասատուր. *Դիմաստվերներ*, Պոլիս, 1921, էջ 128։

[3] *Տե՛ս* «Кавказ», 1847, № 20։

նրա գեղարվեստական երկերի, մանավորապես «Վերք Հայաստանի» վեպի հետ[1]։

Մ. Թաղիադյանի ուղեգրությունը («Ճանապարհորդութիւն ի Հայս», Հ. Ա., Կալկաթա, 1847) արտաքին հատկանիշներով տարբերվում է Աբովյանի նույն ժանրի ստեղծագործություններից. Թաղիադյանն հետամուտ է առավելապես պատմա-հնագիտական, աշխարհագրական-տեղագրական, ֆոլկլորային-ազգագրական տեղեկությունների, և այդ առումով նրա երկը հարուստ նյութ է մատակարարում։ Սակայն ընդհանուրը Աբովյանի և Թաղիադյանի ուղեգրությունների միջև, որով և դրանք էականապես տարբերվում են Մ. Բժշկյանի, Ս. Ջալալյանի և մյուսների երկերից, նրանց լուսավորական գաղափարախոսությունն է. երկրի անցյալը և ներկան նրանք դիտում են ապագայի, ժողովրդի նյութական և հոգևոր կյանքի վերանորոգման, վերակառուցման տեսանկյունից։ Աբովյանը և Թաղիադյանը հայ գրականության մեջ ընդլայնեցին ուղեգրության տրադիցիոն շրջանակները, այն մոտեցնելով մի կողմից հրապարակախոսությանը, մյուս կողմից՝ գեղարվեստական արձակին։

Ինչպես դիտվեց պոեզիայի բաժնում, առակը (չափածո և արձակ) ժամանակի ամենատարածված ժանրերից էր։ Դեռևս XVIII դարի վերջերին թարգմանական առակների հետ, տպագրվում էին նաև հայկական միջնադարյան առակներ։ 1784 թվականին Տրիեստում հրատարակվում է «Տնօրէնութիւն մարդկային կենաց որ և կոչի նոր առակք Սողոմոնեան, հանեալ ի հնդիկ ձեռագրէ վաղեմի ուրումն Պրամանի» ժողովածուն։ Նշանակալից է, որ գիրքը անգլերենից հայերեն (գրաբար) է թարգմանել XVIII դարի հայ լուսավորական-ազատագրական շարժման հայտնի դեմքերից Մարգար Շեհրիմանյանը՝ «Առ ի պատիւ մտերիմ բարեկամի իւրոյ աղայ Շամիրի Շամիրեանց, և ի յօգուտ և ի զբօսանս Հայկազեան բարեսէր ընթերցողաց»։ Ժողովածուի վերջում զետեղված են Եզոպոսի առակների թարգմանությունները՝ «Առակք Եզոբոսի Փռիւգացւոյ»։

1790 թվականին Վենետիկում տպագրվում են Մխիթար Գոշի առակները՝ «Առակք և ոտանաւորք խրատականք ասացեալք ի Նախնեաց մերոց, ի հրահանգ ուսումնասէր համբակաց» ժողովածուում։ Առաջաբանում խոսվում է առակների «շահավետ պիտանության» մասին։ 1827 թվականին Պոլսում, երրորդ հրատարակությամբ լույս է տեսնում Երեմիա Արեվելցու առակների ժողովածուն՝ «Աղուեսագիրք, որ գեղեցիկ առակաբանութեամբ խրատէ մարդիկ զգուշանալ ի չարեաց և գործել զբարիս»։ 1846 թվականին Մ. Թաղիադյանը հայերեն (գրաբար) թարգմանությամբ հրատարակում է պարսկական առակները («Ջուարճախօս առակք պարսից»), «Հավելվածում» տալով մի քանի նմուշ իր գրի առած հայկական առակներից, որոնք, ըստ էության, ժամանակի բարքերը ծաղրող կենցաղային անեկդոտներ են։

---

1 Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. VII, 1956, էջ 453—455։

XIX դարի 30—40-ական թվականների արձակի մեջ զգալի տեղ է գրավում բարոյա-խրատական գրույցի ժանրը, որ ժամանակակիցները անվանում են «բարոյական պատմություն», «արտավեպ», երբեմն նաև «առակ»։ Ժամանակի պարբերական մամուլի («Բազմավեպ», «Արշալույս Արարատյան», «Արարատ») էջերը ողողված են այդ կարգի գրույցներով (մեծ մասամբ թարգմանական), որոնց բարոյախոսության էությունը կազմում են ագահության, ծուլության, ստախոսության, բղջախոհության դատապարտումը, և աշխատասիրության, ազնվության, ճշմարտախոսության, ողջախոհության, կրոնական ջերմեռանդության, բարեգործության գովատումը։ Նմանօրինակ գրույցները, մանկավարժական-դաստիարակչական նպատակով, հրատարակվում էին առանձին ժողովածուներով և նույնիսկ միմյանց հաջորդող հատորներով, ինչպես՝ «Բարոյական պատմություններ ի պետս մանկանց, այլևայլ գրքերէ թարգմանած և բարոյական խրատներ էվելցուցած աշխարհաբար լեզվով» (Կ. Պոլիս, 1841), «Բարոյական վեպեր կամ տղոց սիրտը կրթելու համար պատմություններ» (հատորներ Ա—Դ, 1850—1852)։

Նույն ժամանակաշրջանում (առանձնապես 1840—1853) գրույցների հետ մեկտեղ պարբերական մամուլում և առանձին գրքերով լույս են տեսնում վեպեր, վիպակներ (թարգմանություն կամ փոխադրություն), որոնց լեզուն թեև աշխարհաբարն էր, սակայն, գրեթե անխտիր բոլորի հիմքում ընկած էին քրիստոնեական հեզության, մոլեռանդության, ֆատալիզմի (ամեն ինչ ընթանում է «ի վերուստ» սահմանված կարգով) գաղափարներն էին։ Այսպես, 1840 թվականին Վենետիկի Մխիթարյանների «Մատենադարան մանկանց» մատենաշարով հրատարակված «Երանյակ անունով Թանկոյի թագուհիին պատմությունը» վիպակի նյութը «քրիստոնեության լույսը» «հեթանոս Ասիայում» տարածելն է։ Միսիոներների ջանքերով ճապոնական կղզիներից մեկի իշխանուհին քրիստոնյա է դառնում և քարոզիչ քահանան նրան վերանվանում է Երանյակ, «վասն զի թէ ուրիշները և թե ինքը երանի կուտային իրեն, որ այսպիսի մեծ շնորհքի արժանի եղավ»։ 1843 թվականին Զմյուռնիայում տպագրված «Քրիստիանոսին ու Քրիստինեին ճամբորդությունը աս աշխարհես հանդերձյալ աշխարհը երազի ձևով» գրքի խորագիրը արդեն բացահայտում է նրա բովանդակությունը։ «Տղայոց ու պատանիներուն համար շինված» «Հովսեփին պատմությունը» (Զմյուռնիա, 1847) ոչ այլ ինչ է, եթե ոչ «Աստվածաշնչի» հայտնի լեգենդներից մեկի աշխարհաբար վերաշարադրանքը։ Ուշագրավ են գրքի առաջաբանի այն տողերը, որոնք վկայում են 40-ական թվականներին Զմյուռնիայի հայ պատանի ընթերցողների հակումը դեպի աշխարհիկ գրականությունը՝ «զվարճացուցիչ պատմությունները». «Դուք շատ գիրքեր կկարդաք, իմ սիրելի տղաքներս, ձեր զբոսանացը համար,— գրում է գրքի անանուն հեղինակը,— ու ան գիրքերը առավել կսիրեք կարդալ, որոնք որ պատմություն են ... Ես չեմ ուզեր ըսել, թե դուք ամենևին մի՛ կարդաք զվարճացուցիչ պատմություններ, ու թե՝ անոնք անօգուտ են, հապա կուզեմ ըսել, թե պարտիք առավել խրատական գիրքեր ալ կարդալ...»։

«Խրատական գրքեր» ասելով, հեղինակն, անշուշտ, նկատի ուներ հենց «Հովսեփին պատմությունը» և նմանները։ Բնական է, որ կրոնական բովանդակությամբ «խրատական գրքերից» ավելի ընթերցողներին դուր կգային աշխարհիկ բովանդակությամբ «զվարճացուցիչ պատմությունները», որոնց մեջ խոսվում էր նրանց ծանոթ երևույթների, հետաքրքրաշարժ դեպքերի, արկածների մասին։ Ժամանակի ընթերցողների այդ պահանջները մասամբ բավարարելու համար էին, որ հրատարակվում էին այնպիսի «զվարճացուցիչ պատմություններ», ինչպես՝ «Մին արաբ ծառայի պատմություն» (Մոսկվա, 1830), «Խաշնարածին աղջկանը՝ Եղիսաբեթին երջանիկ մահը» (Զմյուռնիա, 1841), «Երկու գառնուկներուն պատմությունը» (Զմյուռնիա, 1842), «Իտալիա, Փալմերո քաղաքին մեկ գյուղեն» (1853), «Պարոն Տյուվալի աղջիկները կամ հաղթանակ բարեկրթության» (Կ. Պոլիս, 1853) և նմանները։

Այդ երկերը, չնայած աշխարհաբար լեզվին և աշխարհիկ բովանդակությանը,— որոնց շնորհիվ ընդունվում և տարածվում էին,— չէին ներկայացնում, սակայն, ազգային ինքնուրույն գրականությունը և հեռու էին այդ գրականության առաջավոր տենդենցներն արտահայտելուց, քանի որ նրանց հիմքում ընկած էր քրիստոնեական բարոյախոսությունը։ Լինելով բացառապես թարգմանություններ կամ փոխադրություններ, դրանք չէին պատկերում հայ ժողովրդի կյանքը, կենցաղը, հայկական իրականությունը։

Կյանքը, հայ հասարակական կարգացման ընթացքը 40-ական թվականներին առաջադրում էր ինքնուրույն ազգային գրականության և մասնավորապես վիպագրության պահանջը։ Այդ պահանջի լավագույն արտահայտությունը եղավ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին», որը և դարձավ հայ նոր գրականության անկյունաքարը։ Սակայն նա հայ գրական և ընթերցող հասարակայնությանը անծանոթ մնաց շուրջ երկու տասնամյակ։

Քառասնական թվականների երկրորդ կեսին և հիսունական թվականների սկզբներին հայ ինքնուրույն ազգային վիպագրություն ստեղծելու փորձեր եղան Կալկաթայում և Պոլսում։

Ինչպես վերը ասվեց, հայ նոր գրականության կարգացման առաջադիմական տենդենցներն արտահայտում էին Մ. Թաղիադյանի «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» պարբերականները և նրանց շուրջը խմբված գործիչները։ Վերջիններիս թվին է պատկանում Թադևոս Ավետումյանը (1810—1863), XIX դարի առաջին կեսի լուսավորական շարժման ներկայացուցիչներից մեկը։ Թ. Ավետումյանի գրական ժառանգությունից ուշադրավ է «Արամայիս» վիպակը՝ տպագրված 1846 թվականին «Ազգասեր Արարատյանում», ապա և առանձին գրքով[1]։ Ավետումյանը վիպակն սկըսում է, աշխարհաբարով՝ ցուցահայց բարբառով, սակայն երբ «Ազգասերը»

---

1 Տե՛ս «Արամայիս», որ է բարոյական ստեղծաբանութիւն, արարեալ ի պարոն Թադէոսէ Խաչիկ Աւետումեանց, ի տպարանի Արարատեան ընկերութեան, ի Կալկաթա, 1846։

վերադառնում է գրաբարին, նա էլ իր երկը շարունակում և ավարտում է գրաբարով։ «Արամայիսը» հետաքրքրական և արժեքավոր է իր բովանդակությամբ և արծարծած գաղափարներով։ Ի տարբերություն Վենետիկի, Վիեննայի, Պոլսի և Զմյուռնիայի «բարոյական վեպերի», որոնք, ըստ էության ո՛չ մի առնչություն չունեն հայ իրականության հետ, Ավետումյանի վիպակի նյութը վերցրած է հայկական կյանքից։ «Արամայիսի» սյուժեն բարդ չէ. համանուն հերոսը, որի հայրենիքն է Հայաստանը (հեղինակը չի նշում նրա ճիշտ ծննդավայրը), գալիս է Կալկաթա ուսանելու. այստեղ նա հյուրընկալվում է լուսավորյալ, բայց ազգային ավանդություններին հավատարիմ վաճառական Վահագնի ընտանիքում։ Վահագնը հեղինակի գաղափարների կրողն է. նա լուսավորության ջատագով է. գիտակցում է եվրոպական գիտության, արդյունաբերության և արհեստների օգտակարությունը, դրանց յուրացման և հայ իրականության մեջ տարածման անհրաժեշտությունը. «Ինչ լավ կլիներ,— ասում է նա,— թե մին կանոնն ևս այս լիներ, որ ստիպեր ամենեցուն յուրյանց երկրիցն որ դուս ան գնաման, հետևեն մին ուսում և կամ մին արհեստ սովորեն, որ զկնի հետ դառնալույն կարողանան յուրյանց երկրումն նույն ուսում և կամ արհեստն ծաղկեցնել» (էջ 25)։ «Արամայիսը» արտացոլում է հնդկահայ գաղութի պատմության այն շրջանը, երբ անգլիական կապիտալի մրցակցության ուժեղացման հետևանքով, հայ վաճառականությունն սկսել էր ընկրկել, տեղի տալ, մասամբ և կուլ գնալ զորեղ մրցակցին. ահա՛ ինչով պետք է բացատրել հեղինակի որոշակի հակակրանքը անգլիացիների նկատմամբ։ Թ. Ավետումյանը դատապարտում է, ծաղրում այն հայերին, որոնք յուրացնելով օտար սովորույթներն ու բարքերը, մոռանում են հայրենական ավանդությունները, կենցաղը, լեզուն, և հետզհետե ենթարկվում ձուլման։ Ըստ Վահագնի, օտար լեզուն (անգլերենը) չպետք է և չի կարող փոխարինել մայրենի լեզվին. նա կարող է սոսկ գործիք, միջոց լինել՝ յուրացնելու գիտություններն ու արհեստները. «...Ինգլիզն յուր լեզվավն, ֆռանսեզըն յուր, և գերմանացին ևս յուր լեզվավն են հառաջաման, միայն թե՝ մինն մյուսի լեզուն յուր համար մին գործիք է շինյալ վասն նորին գիտության և արհեստն շահեցուցանելո յուր ազգին։ Վասն որո և մեք մեր լեզվավն կարող եմք մյուս ազգաց պես հառաջանալ, այլոց ազգաց լեզուն մեզ համար մին գործիք շինելով» (էջ 39)։

Վահագնը Արամայիսին ծանոթացնելով եվրոպական տեխնիկայով կառուցված գործարաններին, արհեստանոցներին, ասում է. «Այսպիսի գործատունք են, սիրելի, ասաց պարոն Վահագն մի օր, որ զեվրոպացւոց ազգերն լուսաւորեալ են և յառաջացուցեալ։ Որքա՜ն հարկաւոր է և մեզ միտ դնել այսմ, և մեր պատանեաց մասն այսպիսի արհեստից յաշակերտութիւն տալով, յառաջացուցանել, որով մեծ օգուտ և ճշմարիտ լուսաւորութիւն *կծագի մեր միջում» (էջ 47)։*

Վիպակն ավարտվում է նրանով, որ Արամայիսը, Վահագնի խորհրդով, վերադառնում է՝ «ուստի եկեալն էր»։ Ծովի վրա նավը խորտակվում է, և հերոսն ընկնում է մարդակերների կղզին։ Վերջիններիս հոշոտումից

նրան ազատում է կղզու մոտով անցնող մի նավ։ Այս արկածը (նավաբեկությունը և փրկությունը) թերևս խորհրդանշում է Արամայիսի կյանքը օտար երկրում՝ օտարացման, ձուլման վտանգին ենթարկվելն ու փրկվելը։

«Արամայիս» վիպակում շատ էջեր են նվիրված հեղինակի և նրա հերոսների (Արամայիս, Վահագն) դատողություններին, ինչպես նաև հայ գաղթավայրերի անցյալ և ժամանակակից վիճակի նկարագրությանը։ Թ. Ավետումյանի վիպակը իր ռեալիստական տենդենցներով և լուսավորական գաղափարներով ներկայացնում է XIX դարի առաջին կեսի հայ գեղարվեստական արձակի մի ուշագրավ էջը։

Հնդկահայ հասարակական կյանքի զարգացման միևնույն շրջափուլի արգասիք հանդիսացող Թաղիադյանի վեպերը՝ «Վեպ Վարդգիսի» (1846) և «Վեպ Վարսենկայ» (1847), որքան էլ առաջինն առնչություն ունենա օտար աղբյուրների հետ՝ ազգային-ինքնուրույն վիպագրություն ստեղծելու լուրջ փորձեր էին, որոնք արտահայտում էին նոր գրականության զարգացման առաջավոր տենդենցները, ժամանակաշրջանի առաջավոր, բուրժուա-դեմոկրատական գաղափարները։

Մ. Թաղիադյանի «Վէպ Վարդգիսից» հետո, 50-ական թվականների սկզբներին եղել են ազգային-պատմական վեպ ստեղծելու այլ փորձեր ևս, ինչպես՝ Կ. վ. Սիպիլյանի «Տրդատա առանձնանալը, վերջին օրերն ու մեռնիլը» (Վիեննա, 1851), Ս. վ. Թոռնյանի «Արտաշիսյան Արտավազդա բարքն ու վախճանը» (Վիեննա, 1852), նույն հեղինակի «Արկածք Վարդանա Մամիկոնենո» (Վիեննա, 1854)։

Մխիթարյան հեղինակների ստեղծագործական ավյունից զուրկ այդ երկերը, սակայն, շատ հեռու էին պատմական վեպից. դրանց պակասում էր հենց պատմականությունը. չկային ո՛չ պատմական կոնկրետ ժամանակ ու միջավայր, ո՛չ մարդկային հոգեբանություն ու բնավորություն։ Դրանք ազգային տրադիցիոն պատմության այս կամ այն դրվագի ընդարձակ վերադրաշարադրանքն էին սոսկ՝ «վեպ» անվան տակ։

11

Դպրոցական թատրոնը XVIII դարի վերջին քառորդում և XIX դարի առաջին տասնամյակներին, նախ Վենետիկում, ապա Պոլսում, Թիֆլիսում։ Նոր-Նախիջևանում և այլուր, ազդակ է հանդիսանում դրամատուրգիայի զարգացման։

Այս ժամանակաշրջանի դրամատուրգիայի հիմնական ժանրը ազգային-պատմական կլասիցիստական ողբերգությունն է։

Ինչպես պոեզիայում, այնպես էլ դրամատուրգիայում հայկական կլասիցիզմը հատկանշվում է ազգային-պատմական բովանդակությամբ։ Հայկական կլասիցիստական ողբերգության նյութը ավատական Հայաստանն է՝ իր թագավորներով, նախարարներով, բարձրաստիճան եկեղեցականներով. Ե. Էնտաղյանի, Վ. Սահակյանի և Պ. Ինճիճյանի «Արկածք Երուանդեան Տիգրանայ» (1776), Մ. Ջախջախյանի «Դաւադործ մահ

Մեծին Խոսրովու» (1789), Գ. Ավետիքյանի «Վահան Մամիկոնյան» (1792), Ղ. Ինճիճյանի «Փախուստ Մեծին Վարդանի» (1799), Ե. Թոմաճանյանի «Հայկ դիւցազն» (1805), Ա. Բագրատունու «Երվանդ Բ» (1815), Ե. Սեթյանի «Մեծն Ներսէս Պարթև» (1822), և, վերջապես, հայ կլասիցիստական դրամատուրգիայի ամենաբնորոշ ներկայացուցչի՝ Պետրոս Մինասյանի (1799—1867) ստեղծագործությունները՝ «Միհրդատ» (1829), «Աժդահակ և Տիգրան» (1830), «Խոսրով Մեծ» (1845)։

Այս բոլոր պատմական ողբերգությունների պատմականությունը խիստ պայմանական է և վերացական, և բոլորի գաղափարախոսական հիմքն էլ դրանց հեղինակների՝ Մխիթարյան վանականների կղերա-ավատական աշխարհայացքն է, կրոնա-իդեալիստական պատմա-փիլիսոփայությունը։ Այդուհանդերձ, բեմի վրա վերակենդանացնելով հեռավոր անցյալում օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի առանձին դրվագներն ու հերոսներին, հայ կլասիցիստ դրամատուրգները օբյեկտիվորեն արձագանքում էին ժամանակաշրջանի տրամադրություններին, ազգային ինքնագիտակցության զարթոնքին, ազատագրական ձգտումներին։ Մյուս կողմից հայ կլասիցիստական դրամատուրգիան հող էր նախապատրաստում պատմական ողբերգության ժանրի հետագա զարգացման համար։

XVIII դարի վերջերին Մխիթարյանների դպրոցական թատրոնում սկզբնավորվում է նաև հայկական կոմեդիան։ Պատմական ողբերգություններին արընթեր ներկայացվող կատակերգությունները, սակայն, եղել են ավելի շուտ ֆարսեր, վոդևիլներ, քան կոմեդիաներ, ինչպես՝ «Խորագիտություն և միամտություն», «Ապուշ և հնարագետ», «Ագահ», «Փառասիրության պատկեր», «Ծաղրածու Յուսուֆ» և նմանները։ 1815 թվականին բեմադրված կատակերգության բովանդակությունը «Հրավիրագիր-ազդի» մեջ համառոտ շարադրված է այսպես. «Կատակերգութիւն ագահ հոր և շռայլ որդւոյ, որ կուին ընդ միմեանս վասն արծաթոյ և հանդերձից, ապա անխոհեմութիւն հորն և ես ստահակեալ որդւոյն, որ զրպարտէ զհայրն առ այլազգիս և ժառանգէ զնա»։ Կամ մեկ ուրիշը՝ «Կատակերգութիւն, յորում ոմն ի հայոց Զմիւռնիոյ կամի տալ զորդի իւր ի ձեռս Եվրոպացւոյ ուսումն տանել յԵւրոպայ և վարժել ուսմամբ, բայց ընտանիք հայոյն առ ատելութիւն եւրոպացւոյն պէս-պէս հնարիւք յաչաց հանեն զնա և խափանեն զգործն»։

Եթե պատմական ողբերգությունների լեզուն գրաբարն էր, որ ապահովում էր այդ ժանրի անհրաժեշտ հատկանիշը համարվող վսեմ ոճը, ապա կատակերգությունները գրվում էին բարբառով։ Վերջինս դիտվում էր կատակերգության կարևոր առանձնահատկություններից մեկը։ 1847 թվականին «Բազմավեպի» խմբագրությունը տպագրելով «Երկվորյակք» կատակերգությունը, խոստովանում է, որ դեռևս ամսագրի հրատարակության առաջին տարվանից ընթերցողներից շատերը կատակերգություններ տպագրելու առաջարկներ են արել։

Մխիթարյանների կատակերգությունները դուրս չեկան ֆարսի, վոդևիլի սահմաններից, նրանք չթևակոխեցին, և չէին էլ կարող թևակոխել սոցիալական խնդիրների բնագավառը, ո՛չ միայն նրա համար, որ կտրված էին ժողովրդից, կենդանի իրականությունից, այլև այն պատճառով, և սա հիմնականն է, որ սոցիալական հակասությունները կատակերգության նյութ դարձնելը նրանց հասարակական շահագրգռություններից չէր բխում:

Եվ միանգամայն օրինաչափական է, որ փողի իշխանության վրա հիմնված հասարակության խոցերը, սուտը, կեղծիքը, նենգությունը խարանող կոմեդիան («Խտրադիմայ դժրողութեան», 1821) ստեղծվում է Կալկաթայի գրական միջավայրում, որի ներկայացուցիչները ստեղծագործական ներշնչումներ էին ստանում կենդանի իրականությունից և տոգորվում էին ժամանակի առաջավոր, բուրժուա-դեմոկրատական գաղափարներով:

Հայ դրամատուրգիայի պատմության մեջ ռեալիզմի որոշակի տենդենցներով ուշագրավ է «Խտրադիմայից» ուղիղ երկու տասնամյակ հետո գրված Գ. Շերմազանյանի «Նկարագրությունք ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի՝ վիճակավոր առաջնորդի հայոց գաղթելոց ի Տայս» կատակերգությունը (Տփխիս, 1841), որտեղ մերկացված են բարձրաստիճան հոգևորականության այլանդակ բարքերը, կամայականությունը, կաշառակերությունը:

Թե՛ «Խտրադիմայն» և թե՛, մանավանդ, Գ. Շերմազանյանի «Նկարագրությունք ինչ-ինչ գործոց...»-ը հատկանշում են հայ դրամատուրգիայի, մասնավորապես կոմեդիայի զարգացման ուղին՝ կլասիցիզմից դեպի ռեալիզմ:

* * *

Հայ նոր գրականության սկզբնավորումը տեղի է ունենում հասարակական նոր՝ բուրժուական հարաբերությունների զարգացման հիման վրա: Դա մի երկարատև պրոցես է, որ ընդգրկում է շուրջ երեք քառորդ դար՝ XVIII դարի 70-ական թվականներից մինչև XIX դարի 50-ական թվականների առաջին կեսը:

Հասարակական-տնտեսական կյանքի զարգացման այդ դանդաղ, անհամաչափ ընթացքը պայմանավորված էր հայ ժողովրդի ուրույն քաղաքական ճակատագրով, նրա մասնատվածությամբ, ինքնուրույն պետականության բացակայությամբ: Ըստ այդմ՝ անհամաչափ էր նաև կուլտուրայի, գրականության զարգացումը: Տարբեր երկրներում, տարբեր քաղաքական գործոնների ազդեցության ենթակա, տնտեսական կյանքի տարբեր շրջափուլեր ապրող հայության հատվածներում, բնականաբար, գրականության զարգացումը նույն ընթացքը չուներ, և չէր էլ կարող ունենալ: Հասարակական մտքի, գրականության մեջ նոր տենդենցներ ու երևույթներ երևան են գալիս հայության այն հատվածներում, որոնք (ինչպես, օրինակ՝ հնդկահայ գաղութը) առաջինն են թևակոխում բուր-

ժուական հարաբերությունների ոլորտը։ Սակայն, հայության բոլոր հատվածներն էլ, ի վերջո, ենթարկվում են հասարակական զարգացման միևնույն օրինաչափություններին. սկսած XVIII դարի վերջին քառորդից, նրանք, մեկն ավելի վաղ, մյուսը մի փոքր ուշ, անհրաժեշտաբար, մտնում են կապիտալիստական զարգացման ժամանակաշրջանը։

Բուրժուական հարաբերությունների զարգացումը խորացնում է սոցիալական շերտավորումը։ Պատմության ասպարեզ է իջնում հայ բուրժուազիան։ Առաջ է գալիս և ձևավորվում է բուրժուա-դեմոկրատական հոսանքը՝ ժամանակի հասարակական զարգացման առաջավոր տենդենցների արտահայտիչն ու կրողը։ Վանական-եկեղեցական մտավորականության կողքին հանդես է գալիս աշխարհիկ մտավորականությունը, ի դեմս եվրոպական և ռուսական համալսարանները (Պետերբուրգում, Դորպատում, Մոսկվայում, Փարիզում) ավարտած հայ ուսանողների, որոնք և դառնում են հայ իրականության մեջ նոր գաղափարների, նոր հայացքների սերմանողները։

Պայքարը ֆեոդալիզմի դեմ հայ իրականության ուրույն պայմաններում ընթանում է ազգային-ազատագրական շարժման նշանաբանի տակ։

Հասարակական նոր հարաբերությունների հիմքի վրա, XVIII դարի վերջին քառորդում, սկսում է ձևավորվել հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը, որը և հետագայում դառնում է հայ հասարակական մտքի և գրականության, լուսավորական ողջ շարժման հիմնական բովանդակությունը։

XVIII դարի վերջին քառորդի և XIX դարի առաջին կեսի համաշխարհային-պատմական խոշոր իրադարձությունները՝ ֆրանսիական բուրժուական մեծ ռևոլյուցիան, անգլիական գաղութակալության դեմ հնդիկ ժողովրդի պայքարը, հունական ապստամբությունը, դեկաբրիստների ապստամբությունը, 1830 և 1848 թվականների ռևոլյուցիաները, իտալական ազգային-ազատագրական պատերազմները յուրովի անդրադառնում են հայ իրականության մեջ, նպաստում հայ ազատագրական շարժման զարգացմանը, բուրժուա-դեմոկրատական առաջավոր գաղափարների տարածմանն ու արմատավորմանը։

Հասարակական զարգացման նոր շրջափուլը XVIII դարի վերջին քառորդից սկսած, ինչպես վերը ցույց տրվեց, հատկանշվում է պարբերական մամուլի, տպագրության, դպրոցների, կրթական ընկերությունների, թատրոնի, կերպարվեստի և երաժշտության՝ ազգային կուլտուրայի աստիճանական զարգացմամբ։

Սոցիալ-տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններն իրենց արտացոլումն են գտնում հասարակական մտքի, գրականության մեջ։ Նոր գաղափարները, անհրաժեշտաբար, առաջ են բերում գրական նոր ձևերի, նոր ժանրերի պահանջ։ Լուսավորականության, ազգային-ազատագրական շարժման բուրժուա-դեմոկրատական գաղափարները դրսևորվում են հրապարակախոսության, քաղաքական պուբլիցիստիկայի մեջ (Մ. Բաղրամյանի «Յորդորակը» և սրան կից «Ողբը», Թ.

Սոգինյանցի «Ողբ Հայաստանեայցը», Հ. Վանանդեցու պոեմները, և ուրիշներ)։ Այսպիսով, XVIII դարի 70-ական թվականներից, ի հակակշիռ Մխիթարյանների հիմնականում սխոլաստիկական, կրոնա-միստիկական գրականության, հայկական գաղութներում, հասարակական նոր հարաբերությունների հիմքի վրա, սկսում է առաջ գալ և ձևավորվել նոր գաղափարների գրականությունը։ Ինչպես արդեն նշվեց, այդ պրոցեսը դանդաղ էր տեղի ունենում, քանի որ դանդաղ էր ընթանում գրականության հասարակական հիմքը կազմող՝ սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացումը։ Անհրաժեշտ է դիտել նաև, որ հայկական գաղութներում առաջ եկան հայ նոր գրականության զարգացման սաղմերն ու տենդենցները միայն։ Մ. Բաղրամյանի, Թ. Սոգինյանի, Հ. Վանանդեցու, նույնիսկ Հ. Ալամդարյանի և Մ. Թաղիադյանի ստեղծագործությունները՝ գաղափարական և գեղարվեստական նոր հատկանիշներով նշանավորում էին կլասիցիզմից դեպի ռոմանտիզմն անցման պրոցեսը, սակայն ո՛չ նոր որակ հայ գրականության մեջ։ Նոր որակը պատմական օրինաչափությամբ ստեղծվեց հայկական բնաշխարհում՝ «հարազատ ու իրական հողի վրա», Խաչ. Աբովյանի հանճարով։

Ավելի քան կես դար տևող հայ նոր գրականության ձևավորման պրոցեսը ավարտվեց և՛ ամբողջացավ Աբովյանով։

XVIII դարի վերջին քառորդից մինչև XIX դարի առաջին կեսը՝ լուսավորության, ազգային զարթոնքի, ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության և նոր գրականության ձևավորման այդ դարաշրջանի ամենամեծ դեմքը հանդիսացավ Աբովյանը։ Նա իր հանճարեղ ստեղծագործության մեջ՝ «Վերք Հայաստանի» վեպում համադրեց, սինթեզավորեց հայ ժողովրդի ազատագրական ոգորումները՝ Դավիթ բեկից մինչև Աղասի։ «Վերքը» ավելի քան հարյուրամյա այդ ժամանակաշրջանի քաղաքական և գեղարվեստական ամենամեծ ընդհանրացումն է, հայ ազգային-ազատագրական շարժման առաջին դյուցազներգությունը և առաջին ժողովրդական վեպը։ «Վերքը» արտացոլում է ազգային-քաղաքական և կուլտուրական վերածնության ուղին բռնած հայ ժողովրդի նվիրական գաղափարներն ու ձգտումները, ազատագրական պայքարի պաթոսը, հայրենասիրությունը, հումանիզմը, ապագայի երազանքը։ Իր ձևով և բովանդակությամբ դա մի նոր, աննախընթաց երևույթ էր բազմադարյան հայ գրականության պատմության մեջ։

Խ. Աբովյանի վեպը ազդարարում էր կլասիցիզմի դարաշրջանի վախճանը և գրական պրոգրեսիվ նոր ուղղության՝ ռոմանտիզմի հաղթանակը։

Աբովյանը բաց արեց հայ նոր գրականության մայրուղին, որոշեց նրա առաջընթացի հիմնական տենդենցները, սահմանեց էսթետիկական նոր սկզբունքներ, որոնք ժառանգեց և զարգացրեց 50—60-ական թվականների գրական սերունդը։

ԴԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԼԱՍԻՑԻԶՄ

XVIII դարի վերջին կլասիցիզմը ձևավորվում և տարածվում է հայ գրականության մեջ իբրև հստակորեն գիտակցված և հետևողականորեն պաշտպանվող գեղարվեստական ուղղություն։ Ընդհուպ մինչև XIX դարի 50—60-ական թվականները կլասիցիզմը էական տեղ է գրավում մեր գրական-գեղարվեստական պրոցեսում, գտնվելով ներքին պայքարի և փոխազդեցության մեջ՝ ստեղծագործական այլ ուղղությունների և տենդենցների հետ։ Միայն նշված ժամանակաշրջանի վերջում է, որ կլասիցիզմը, իբրև արդեն իր գաղափարական և էսթետիկական սկզբունքներով հնացած մեթոդ, ասպարեզից դուրս է մղվում նոր ուղղությունների՝ ռոմանտիզմի և ռեալիզմի կողմից։

Հայկական կլասիցիզմի առաջացումը, նրա առանձնահատկությունները, անշուշտ, սերտորեն կապված էին հասարակական կյանքի քաղաքական և իդեոլոգիական նախադրյալների հետ։ Միաժամանակ, անժխտելի է արևմտաեվրոպական և ռուսական գրականության ազդեցությունը հայկական կլասիցիզմի էսթետիկայի և ստեղծագործական սկզբունքների ձևավորման գործում։ Այդ պատճառով, եվրոպական կլասիցիզմի մի քանի կողմերի հետ ծանոթանալը խիստ անհրաժեշտ է, ինչպես հայկական կլասիցիզմի ընդհանուր գծերը, այնպես էլ նրա սպեցիֆիկ առանձնահատկությունները պատկերացնելու համար։

1

Կլասիցիզմը, որպես գրականության և արվեստի ուղղություն, ծագեց և ձևավորվեց Ֆրանսիայում XVII դարում, իբրև բացարձակ միապետության (աբսոլյուտիզմ) դարաշրջանի գաղափարախոսության արտահայտություն։ Սկզբում կլասիցիզմի մեջ տիրապետող էր ազնվականության բարքերի, կենցաղի, նկատուկացի համապատասխան ոճը, սակայն շուտով այդ ուղղության մեջ ուժեղացավ նոր բարձրացող դասակարգի՝ բուրժուազիայի գաղափարախոսությունը, որի փիլիսոփայական հիմքն էր բանականության գերիշխանությունը, առողջ դատողության զգացումը, քաղաքացիական առաքինությունների փառաբանումը։ XVII դարի ֆրանսիական գրականության մեջ կլասիցիզմի խոշորագույն տեսաբանը հան-

դիմացավ Բուալոն, որն իր «Արվեստ քերթողականի» մեջ տվեց այդ ուղղության կոդեքսը։ Կլասիցիզմի հիմնական դրույթներն էին անտիկ գրականության նմուշներին հետևելը, երեք միությունների պահպանումը, գրական ժանրերի խստորոշ սահմանազատումը, ոճի վեհությունը և վսեմությունը։

Հետևելով հունա-հռոմեական դասականությանը՝ կլասիցիստները ըստ իրենց հասկացողության ձգտում էին օրինակելի պարզության, կոմպոզիցիայի մեջ ճշգրիտ համամասնության, համաչափության ձևերի պլաստիկ նրբագեղության։ Կլասիցիզմի նշանաբաններն էին՝ բանականություն, բնականություն, գեղեցկություն, մտքի հստակություն և ոճի ճշգրտություն, այդ բոլորի վրա իշխող վսեմությամբ։ Կլասիցիզմը պահանջում էր կարգ ու կանոնի կատարյալ տիրապետություն, նորմաների պարտադիր պահպանում։ Մինչդեռ նրան հաջորդող ռոմանտիզմը, հակադրվելով կլասիցիզմին, չէր ընդունում որևէ պայմանականություն, խախտում էր նույնիսկ բնության և բանականության օրենքները, հակվելով դեպի գերբնականը, գերերկրային և հրաշալի ֆանտաստիկան, ինչ որ մերժում է կլասիցիզմը, որպես բանականության հակասող բան։

Հասկանալի է, որ կլասիցիզմը հանդիսանում էր իր դարաշրջանի ոճը և նրա տեղափոխումը այլ դարաշրջան կարող է դառնալ անհեթեթ անախրոնիզմ։ Ահա թե ինչու Ստենդալը, բնորոշելով ռոմանտիզմը և կլասիցիզմը որպես գրական ուղղություններ, ասել է. «Ռոմանտիզմը մի արվեստ է, որ ժողովրդին տալիս է այնպիսի գրական երկեր, որոնք ներկա սովորությունների և հավատալիքների պայմաններում կարող են առավելագույն գոհունակություն պատճառել, կլասիցիզմը, ընդհակառակը, տալիս է մի գրականություն, որը առավելագույն հաճույք էր պատճառել մեր պապերին»[1]։

Կլասիցիզմի և ռոմանտիզմի այլազան և այլախոս բնորոշումներ կան, սակայն, միակ ճիշտ մոտեցումը պատմականն է, որ կիրառել է Ստենդալը։ Այդ ուղղությունները պետք է վերցնել իրենց ժամանակի և իրենց պայմանների մեջ, այլապես դրանք կդառնան սոսկ վերացական հասկացողություններ, ժամանակից և տարածությունից կտրված, ուրեմն և խիստ անորոշ և տարտամ կատեգորիաներ։

Ամենից առաջ պետք է նկատի ունենալ այն կոնկրետ միջավայրը և դարաշրջանը, ուր երևացել է կլասիցիզմը որպես գրական ուղղություն։ Եթե այդ ուղղությունը չի համապատասխանում տվյալ ժողովրդի, տվյալ դարաշրջանի կյանքի պայմաններին, որոնց արտացոլումն է գրականությունը, ապա կլասիցիզմը կամ ռոմանտիզմը որպես ուղղություններ կդառնան սոսկ տարամուտ, արհեստական երևույթներ, զուտ նմանողություն և ստրկական հետևողություն մի այլ գրականության։

Կլասիցիզմը հայ գրականության մեջ հող չէր ունենա, եթե նա չարտացոլեր հայ ժողովրդի կոնկրետ պատմական կացությունը։ Որպեսզի

---

[1] *Стендаль*, Собрание сочинений, т. 7, М., 1956, стр. 26.

գրական երկը լինի ազգային, նա պետք է արտացոլի տվյալ ժողովրդի գեղարվեստական պահանջները, ազգային և սոցիալական կացությունը։ Կլասիցիզմը դարձավ հայ գրականության մեջ ազգային երևույթ, քանի որ նա արտահայտեց մի ամբողջ դարաշրջանի հասարակական միտքը, ձգտումները, ժողովրդի իղձերն ու իդեալները։

Հայկական կլասիցիզմը անկասկած շատ ընդհանուր գծեր ունի արևմտաեվրոպական կլասիցիզմի հետ, սակայն ունի և իր առանձնահատկությունը, ինչպես ռուսական կլասիցիզմը, որի ազգային գծերը ակնհայտ են։

Կլասիցիզմի ընդհանուր գիծն է «հավիտենական գաղափարների» արտահայտումը վերացական գեղարվեստական ձևերով։ Կլասիցիզմը մերժում է այն ամենը, ինչ վաղանցիկ է, կենցաղային, կապված տվյալ վայրի և սովորության հետ։ Մարդկային շատ հասկացողություններ, նույնիսկ հույզեր և զգացմունքներ կլասիցիստների կարծիքով, ժամանակավոր են, վաղանցիկ, կապված տվյալ ժողովրդի նիստ ու կացի, սովորությունների, բարքերի հետ. բանականությունն է միայն ընդհանուր և հավիտենական, որը միացնում է մարդկանց և մարդկային հասարակությունը, անկախ ժամանակից և տարածությունից։ Բանականության ուժը բացարձակ է և հավիտենական։ Ամբողջ երկրագնդի մարդիկ, չնայած տարբեր լեզուներին և բարքերին, հասկանում են միմյանց, որովհետև բանականության օրենքները ընդհանուր են և համամարդկային։ Այդպես են նաև Արդարության, Հավասարության, Ազատության գաղափարները, հիմնված բանականության օրենքների վրա։ Նիստ ու կացը, բարքերը, սովորությունները կարող են փոխվել, սակայն բանականությունը մնում է անփոփոխ, որովհետև նա համապատասխանում է բնության օրենքներին, որոնք անփոփոխելի են և հավիտենական։ Ահա այս ռացիոնալիզմն է, որ դառնում է կլասիցիզմի հիմնական գաղափարական բովանդակությունը և կանխորոշում է նրա գեղարվեստական առանձնահատկությունները։

Կլասիցիզմի ակունքները Ռենեսանսն է և հումանիզմը, որոնք հենվելով անտիկ արվեստի և փիլիսոփայության վրա, ազատ թռիչք տվին մարդկային մտքին, արձակելով միջնադարյան սխոլաստիկայի և դոգմատիզմի կապանքները, մերժելով միստիկան և քրիստոնեական բարոյականության բռնակալությունը։ Ռաբլեի, Մոնտենյի, Էրազմի նման հումանիստ ազատ մտածողներ հող էին պատրաստել Դեկարտի և Լոկի փիլիսոփայության համար։ Ռացիոնալիզմը դառնում է կլասիցիզմի փիլիսոփայական հիմքը, իսկ անտիկ գրականության և արվեստի անկրկնելի գեղեցկությունները՝ ընդօրինակության արժանի նմուշներ։

Սակայն բացարձակ միապետության շրջանում վերածնության և հումանիզմի ազատ թռիչքը ենթարկվեց միահեծան պետության ռեգլամենտացիային, մեծ գաղափարները և մտքերը հարմարվեցին պալատական էտիկետի և նիստ ու կացի կանոններին։ Այնուամենայնիվ, կլասիցիզմը պահպանեց իր պրոգրեսիվ նշանակությունը որպես առողջ դատողության, բանականության և բնության օրենքներին ենթարկվող ուղղություն, որ

մերժում էր միջնադարյան միստիկան, գրական հեղհեղուկ և տարտամ ձևերը։ Կլասիցիզմի առանձնահատկություններից մեկն էր ազգային գրականություն ստեղծելու ձգտումը, որը համապատասխանում էր պետության կենտրոնական իշխանությունն ամրապնդելու, ազգային միասնություն ստեղծելու գաղափարին։ Դրանումն է բացարձակ միապետության պրոգրեսիվ նշանակությունը XVII դարի Ֆրանսիայում, ինչպես նշել է Մարքսը։

Հարկավ, հայ գրականությունը զարգանում էր բոլորովին այլ պայմաններում, սակայն այդ դարաշրջանի հայ գրողների առաջ ևս դրված էր համազգային գրականություն և կուլտուրա ստեղծելու խնդիրը։ Թեև զուրկ պետականությունից, հայ ժողովուրդը ևս պատմական նոր պայմաններում ձգտում էր ազգային միասնականության և ազատության։ Այդ առումով գրական կլասիցիզմը դառնում էր օրինաչափ և անհրաժեշտ մի էտապ հայ գրականության զարգացման մեջ։

2

Հայ գրականության <u>վերածնության նոր շրջանը սկսվում է XVIII</u> դարի երկրորդ կեսից։ Մինչ այդ երկրում տիրող քաղաքական պայմանների, թուրքերի և պարսիկների միջև մղված անվերջ պատերազմների հետևանքով, որոնք տեղի էին ունենում Հայաստանի տերիտորիայի վրա և ավերում ու քայքայում երկիրը, ոչ մի հնարավորություն չկար գրականության և կուլտուրայի զարգացման համար։ Շահ Աբասի արշավանքից և բազմահազար հայերի բռնի գաղթեցումից հետո ավերածությունը հասավ իր գագաթնակետին։ «XVI դարու վերջերը և XVII սկզբներում,— գրում է ակադեմիկոս Մ. Աբեղյանը,— համատարած իշխում էր ավերակ և թանձր տգիտություն», և բերում է Առաքել Դավրիժեցու վկայությունը. «տգիտութեամբ խոպանցեալ և կորդացեալ էր ազգս հայոց, և ոչ միայն ոչ ընթեռնուլին, այլ և ոչ գիրս գիտեին և զկորուսին գրոց, վասնզի անպիտանացեալ էր գիրքն յաչս մարդկան...»[1]։

Երկու հզոր պետությունների միջև մղվող պատերազմների դադարից հետո, քաղաքական ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվում Հայաստանում՝ կուլտուրայի և գրականության զարգացման համար։ Սկսվում է մի շրջան, երբ վանքերում ուսյալ վանականները դարձյալ սկսում են զբաղվել հայ դասական գրականությամբ, ուսումնասիրել ավերածություններից և հրից հրաշքով ազատված հին գրչագիր մատյանները, որոնց թիվը համեմատաբար շատ քիչ էր և ոչ մատչելի ընթերցողների լայն շրջանին։

XVIII դարի սկզբից, տպագրական գործի զարգացման շնորհիվ, սկսում են տպագրվել հայ դասական այնպիսի հեղինակներ, ինչպես Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Դավիթ Անհաղթ, Ստեփանոս Օրբելյան,

---

1 Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, հատ. 2, Երևան, 1946, էջ 438։

Գրիգոր Տաթևացի և այլն։ XVII դարում առաջին անգամ տպագրվել էր Մովսես Խորենացին։

XVIII դարի սկզբին հիմնվեց նաև Մխիթարյան միաբանությունը, որը զգալի դեր կատարեց հայ հին գրականության և լեզվի ուսումնասիրության գործում, կարելի է ասել գրականության մեջ վերականգնեց V դարի հայերենը, ստեղծեց հայոց լեզվի բառարաններ։ Հայ դասական գրականության վերականգնումը և ուսումնասիրությունը հող պատրաստեց հայկական կլասիցիզմի ծագման և զարգացման համար։ Բավական չէր միայն կարդալ, հասկանալ և ուսումնասիրել «մեր անհասկանալի դարձած ու մոռացված գրականությունն ամբողջ» (Մ. Աբեղյան), այլ անհրաժեշտ էր ստեղծել նոր գրականություն, նոր երկեր՝ հնի ուսումնասիրության հիման վրա, ինչպես եղել էր առհասարակ բոլոր վերածնունդների ժամանակ (օրինակ, իտալական Ռենեսանսի)։

Հասկանալի է, որ ստեղծված գրական նոր երկերում պետք է արտացոլվեր տվյալ դարաշրջանը և ոչ թե սոսկ մեխանիկորեն կրկնվեին հին թեմաները։ Դա անխուսափելի մի երևույթ է ամեն մի գրականության օրինաչափ զարգացման համար։ Իսկ ո՞րն էր XVIII դարում հայ ժողովրդի և նրա առաջավոր մարդկանց առաջ դրված կարևորագույն խնդիրը. ազգային ազատագրությունը։

Դարի սկզբին Իսրայել Օրին հանդիսացավ հայ ազատագրական շարժման ռահվիրան։ Այնուհետև ազատագրության գաղափարը գնալով ավելի ուժեղացավ հայ գործիչների և նույնիսկ ժողովրդական խավերի մեջ։ Ճշմարիտ է, այդ գաղափարը կրում էր զգալի չափով վերացական, միահայեցողական, երբեմն նույնիսկ ուտոպիական բնույթ, հնդկահայ գաղափարախոսները ծրագրում էին ռեսպուբլիկա, հայկական հասարակապետություն հիմնել Հայաստանում՝ արևելյան բռնակալության, արիստոկրատական-ֆեոդալական միապետություններով շրջապատված։ Սակայն դրանով ազատագրական գաղափարը չէր զրկվում իր գրավչությունից և ոգևորիչ ուժից, որը թև ու թիկունք էր տալիս հայ մտավորականներին, բանաստեղծներին և պատմագիրներին։

Ազատագրության և հայրենասիրության գաղափարը ինքնին վեհ էր ու վսեմ և չէր կարող չխանդավառել ժամանակի առաջավոր մարդկանց։ Այդ գաղափարը իր միահայեցողական-ռացիոնալիստական բնույթով առավել չափով համապատասխանում էր լուսավորության դարի կլասիցիզմի ոգուն, որն անկասկած պրոգրեսիվ էր, հումանիստական, ուղղված բռնակալության, ճնշման և խավարի դեմ։

Կլասիցիզմի հետևորդները անսահման հավատ ունեն դեպի բանականության ուժը, ամեն ինչ ստորադասում են ճշմարտության, արդարության և ազատության գաղափարին։ Մարդկային ազատությունը, ինչպես նաև ժողովուրդների ազատությունը նրանց համար բանականության հավիտենական օրենքներին համապատասխանող մի վիճակ է, որի բռնադատումը խախտում է հենց այդ բանականության օրենքները։ Մարդիկ ազատ են ծնվում, այսպես էին դավանում XVIII դարի լուսավորական կլասիցիզ-

մի հետևորդները. բռնակալները և ճնշողները անարգանք և նախատինք են մարդկության, որովհետև նրանք խախտում են բանականության համիտենական օրենքները, ճշմարտության, արդարության նորմաները, որոնցից մեկն է նաև ազատությունը և ժողովուրդների ինքնիշխանությունը։

Հայ ազատագրության գործիչների Իսրայել Օրիի, Հովսեփ Էմինի, Բաղրամյանի, Շահամիրյանների և այլոց քարոզած և դավանած գաղափարները իրենց արտացոլումն էին գտնում դարաշրջանի հայ գրականության, հատկապես էպիկական և դրամատիկական ժանրերում։

Հայկական կլասիցիզմի ամենաբնորոշ կրողները և գաղափարախոսները հիմնականում հանդիսացել են մխիթարյան գրողները։

Ապրելով և գործելով Եվրոպայում (Իտալիայում և Ավստրիայում), նրանք ավելի շատ և անմիջական շփում ունեին արևմտաեվրոպական մտավոր շարժման, գրականության և կուլտուրայի այլ ճյուղերի հետ։

Սակայն պետք է նկատի ունենալ, որ հայկական կլասիցիզմի ներկայացուցիչները երբեք նույնությամբ կամ ստրկորեն չեն հետևել արևմտաեվրոպական կլասիցիզմի նմուշներին։ Հայկական կլասիցիզմը, վերդանալով XVIII դարի երկրորդ կեսին, արտացոլում էր հայ ժողովրդի կոնկրետ քաղաքական վիճակը այդ դարաշրջանում։

Ուղղությունները յուրաքանչյուր ազգի գրականության մեջ արտահայտում են տվյալ ազգի ներսում մղված հասարակական, գաղափարական պայքարը, ձևավորվում են տվյալ գրականության դարավոր տրադիցիաների, ազգային ոճի, կուլտուրական առանձնահատկությունների ազդեցության տակ, հարկավ կրելով նաև արտաքին ազդեցությունները։ Սակայն հիմնականը տվյալ ժողովրդի կոնկրետ պատմական վիճակն է, նրա պահանջները, ձգտումները և տենչերը։

Ֆրանսիական կլասիցիստները իրենց տեսական դրույթները հիմնավորելու համար դիմում էին հին հույներին և հռոմեացիներին, որովհետև իրենց միջնադարյան գրականության մեջ չէին գտնում համար օրինակներ ռացիոնալիստական պոետիկայի և էսթետիկայի՝ դիցուք տրագեդիայի և օդայի ժանրերի կանոնները բացատրելու համար (նույնը վերաբերում է նաև անգլիական և գերմանական կլասիցիզմի գործիչներին, բացառություն է կազմում իտալական գրականությունը, որի դասական նախորդը համարվել է հռոմեականը)։ Հայ կլասիցիստները հարկ չունեին դիմելու միայն հունա-հռոմեական կլասիկային։ Նրանք ունեին իրենց սեփական ազգային կլասիկան (Խորենացին, Դավիթ Անհաղթը, Եզնիկը, Փավստոսը և շատ ուրիշներ), նույնիսկ կարող էին դիմել այնպիսի հունական աղբյուրների (ժամանակին հայերենի թարգմանված), որոնց բնագրերը այժմ կորած են։ Օրինակ, հայ հետազոտողները կարող էին Խորենացու «Գիրք Պիտոյից» տեսական աշխատությունից իմանալ Եվրիպիդեսի մի ողբերգության մասին, որը չի հասել մեզ և դարերի ընթացքում անծանոթ է եղել Եվրոպացի հետազոտողներին։ Ճշմարիտ է, հայ կլասիցիզմի ներկայացուցիչները դիմում էին նաև հունա-հռոմեական նմուշներին, բայց երբեք չէին մոռանում իրենց ազգային կլասիկան։

Պատմական ողբերգություններում, որոնք սկսել են բեմադրվել Մխիթարյան դպրոցական թատրոնում սկսած XVIII դարի երկրորդ կեսից, թեմաների մեծ մասը առնված են հայոց պատմությունից։

Ընդունված է ասել, որ Մխիթարյանները կտրված են եղել կյանքից և ժողովրդից, սա հարկավ ճիշտ է, սակայն նրանք չէին կարող բոլորովին մոռացության տալ այն ժողովրդին, որի ծոցից էին ելել։ Նույնիսկ հակառակ իրենց կամքին՝ հարազատ ժողովրդի ծանր վիճակը ճնշում էր նաև նրանց։

Մխիթարյան գրողների կլասիցիզմը իր ցայտուն արտահայտությունը գտել է գլխավորապես դրամատուրգիայի մեջ։ Ճշմարիտ է, մյուս ժանրերը՝ լիրիկան և էպոսը, նույնպես զգալի չափով կրել են կլասիցիզմի ազդեցությունը, սակայն բացի Ա. Բագրատունու «Հայկ դյուցազն» պոեմից, այդ երկու ժանրերի մյուս երկերը համեմատաբար ավելի քիչ արժեք ունեն իրենց գաղափարական և գեղարվեստական նշանակությամբ։

Լուսավորության դարաշրջանի կլասիցիզմը անկասկած պրոգրեսիվ բնույթ ուներ և (XVIII դարի վերջում նույնիսկ ռևոլյուցիոն բովանդակություն ստացավ) աչքի էր ընկնում մի առանձնահատկությամբ, որ մենք որոշակի կերպով նկատում ենք նաև Մխիթարյանների կլասիցիստական դրամատուրգիայի մեջ. դա բռնակալամարտական (тиранoборческий) ոգին է, որը ավելի ցայտուն էր դառնում ճնշված ազգերի մոտ, ինչպես օրինակ, Իտալիայում, ուր ազգային ազատագրության և հայրենասիրության գաղափարները դրամատուրգիայի մեջ շեշտված կերպով արտահայտվում էին բռնակալների դեմ պայքար մղելու կոչերով։

Արդեն Վոլտերը կլասիցիզմին զգալի չափով տվել էր մարտական այդ ոգին, որը իտալական դրամատուրգիայում վերածվում էր ազգային-ազատագրական բացահայտ պայքարի կոչի՝ ուղղված ավստրիական բռնակալության դեմ։ Այս իմաստով հայ ժողովրդի վիճակը ընդհանուր գծեր ուներ իտալական ժողովրդի հետ։ Դարաշրջանի հայ դրամատուրգները ևս իրենց պատմական ողբերգություններում դնում էին ազգային անկախության և պետականության խնդիրը և փորձում լուծել այն պատմական անցյալի օրինակով։ Այդպես էին անում իտալական ազգային ազատագրական շարժման գաղափարախոս բանաստեղծները և դրամատուրգները (Ալֆիերի, Մոնտի և այլն)։

Մխիթարյան գրողները ոչ միայն թարգմանում էին հույն տրագիկներին, ֆրանսիական կլասիցիստներ՝ Կոռնեյլին և Ռասինին, այլև իտալական ռևոլյուցիոն կլասիցիզմի ներկայացուցիչներ Ալֆիերիի և Մոնտիի պատմական ողբերգությունները։

XVIII դարի վերջը և XIX դարի սկիզբը դեռևս կրում էր լուսավորության դարի դրոշմը, ազատությունը և արդարությունը հասկացվում էին իրենց ռացիոնալիստական բովանդակությամբ, ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի նշանաբանները, իրենց վերացական բնույթով հանդերձ, ոգևորիչ հմայք ունեին նոր սերնդի ներկայացուցիչների համար։

Հայ ժողովրդի իրական դրությունը չէր կարող չանդրադառնալ Մխիթարյանների գրականության վրա։ Ճիշտ է, այդ անդրադարձումը եղել է փոքր ինչ վերացական, մշուշապատ, սակայն և այնպես ժամանակի երիտասարդությունը ոգեշնչվել է ռացիոնալիզմի քարոզած ազատասիրության և մարդկության գաղափարներով, որոնց սնող աղբյուրն է հանդիսացել անտիկ աշխարհի, ինչպես նաև հայ դասական գրականությունը։

Պլուտարքոսի «Զուգակշիռքի» հայերեն թարգմանության անվանաթերթը

Մխիթարյան կլասիցիզմի ներկայացուցիչ բանաստեղծները և թարգմանիչները հսկայական ծառայություն են մատուցել՝ հայացնելով և թարգմանելով հունահռոմեական գրականության գլուխ գործոցները, որոնք հենց հանդիսացել են կլասիցիզմի հիմքը։ Մխիթարյան բոլոր բանաստեղծները միաժամանակ խոշորագույն թարգմանիչներ են, նրանք տվել են իրենց ժամանակի հայ ընթերցողին, հասկանալի է գրաբար, սակայն հիանալի լեզվով, այնպիսի տիտանների երկերը, ինչպես Հոմերոս, Անակրեոն, Էսքիլես, Սոֆոկլես, Էվրիպիդես, Վիրգիլիոս, Հորացիոս և այլն, նոր ժամանակի դրամատուրգիայի խոշորագույն դեմքերից՝ Կորնեյլ, Ռասին, Վոլտեր, Ալֆիերի և այլն։

Անտիկ աշխարհի և նոր շրջանի արևմտաեվրոպական դասական գրականության նմուշներից XIX դարի առաջին կեսում Մխիթարյանները թարգմանեցին և հրատարակեցին Հոմերոսի «Իլիականը» (առաջին թարգմանություն Թովմաճեանի, 1843), «Ոդիսականը» (նույն թարգմանչի, 1848), «Էնեականը» (թարգմ. Է. Հյուրմյուզի, 1845), «Մշակականք» Վիրգիլիոսի և «Արվեստ քերթողութեան» Օրատիոսի (Հորացիոս) (թարգմ. Ա. Բագրատունու, 1847)։ Դրանից առաջ 1835 թվականին Թովմաճեանը թարգմանել էր Պլուտարքոսի հռչակավոր գիրքը՝ «Զուգակշիռք», որը կլասիցիզմի գրականության ամենահարուստ աղբյուրներից մեկն է։ Ջախջախյանը գերմաներենից թարգմանել էր Գեսների «Ի մահն Աբելի» պոեմը, գերմանական կլասիցիզմի յուրահատուկ արտահայտու-

թյուններից մեկը, որի մեջ անցում էր կատարվում դեպի հովվերգական սենտիմենտալիզմը։ Ջախջախյանի այս թարգմանությունը, սկսած 1825 թվականից, հրատարակվեց մի քանի անգամ։ Թարգմանված էին, բայց դեռևս լույս չէին տեսած «Էդիպ արքան», «Անտիգոնե», «Էլեկտրա», «Գոթոդիա», «Բրիտանիկ», «Միհրդատ», «Իֆիգենիա Ավլիդում» (Ռասինի), «Ալզիրա», «Մերոպե» (Վոլտերի), «Սավուղ» (Ալֆիերի)։ Այս տասը կլասիկ ողբերգությունների թարգմանիչն է Արսեն Բագրատունին։

Արևմտաեվրոպական գրականության դասական նմուշներից հայ կլասիցիստները թարգմանում են նաև Ֆենելոնի «Տելեմաքի արկածները», որի հեղինակը հանդիսանում է լուսավորության դարի ռահվիրաներից մեկը։ Այդ գրքի առաջին թարգմանությունը տպագրված է դեռևս 1794 թվականին Նոր-Նախիջևանում, ճիշտ այն տարում, երբ հեռավոր Մադրասում լույս էր տեսնում առաջին հայ պարբերականը՝ «Ազդարարը»։ Թարգմանիչն է իր ժամանակի հայականավոր գրական գործիչ Մարգար Զաքարիայի խոճենց Երևանցին։ Անկասկած «Տելեմաքի» այս թարգմանությունը առաջավոր երևույթ էր, որ գալիս էր հարստացնելու հայ գեղարվեստական գրականությունը։

Գեսների «Ի մահն Աբելի» պոեմի հայերեն թարգմանության անվանաթերթը

XIX դարի սկզբին տպագրվում են նաև մի քանի այլ թարգմանություններ, որոնցից առանձնապես պետք է հիշատակել Վոլտերի «Կեսարու մահը» ողբերգությունը, որն ունի ամբողջովին քաղաքական բովանդակություն և ուղղված է բռնակալների դեմ։ Այս ողբերգությունը լույս տեսավ Մադրասում 1818 թվականին։ Վոլտերի ազատասիրական երկը լուսավորության դարի կլասիցիզմի փայլուն նմուշներից մեկն էր։ Պատահական չի կարելի համարել Վոլտերի այս ողբերգության թարգմանությունը։ Հետագայում հայ գործիչները և թարգմանիչները քանիցս դիմել են Վոլտերի բռնակալամարտական այդ ողբերգությանը՝ իրենց ազատասիրական տենչերը արտահայտելու համար։ Վոլտերի այս պիեսը, որի մեջ կին գործող անձինք չկան, հաճախ է բեմադրվել հայ դպրոցական թատրոնում։

3

Ինչպես նկատեցինք, հայկական կլասիցիզմը որպես ստեղծագործական մեթոդ, գրական ուղղություն միանգամից ու հանկարծակի չծագեց, այլ հանդիսացավ հայ գրականության զարգացման մի էտապը, որը կապված է նախորդ էտապների հետ և վերցրել է նրանցից գրական տրադիցիաներ և հայ դասական գրականության լավագույն նմուշների փորձը։ Հայկական կլասիցիզմը ստեղծեց նաև իր տեսությունը՝ պոետիկան։

Խորենացու «Գիրք Պիտոյիցից» և Դիոնիս Թրակացու քերականության հայ մեկնաբանների կլասիկ աշխատություններից հետո հայ գրականության մեջ պոետիկայի և էսթետիկայի ասպարեզին նվիրված փոքրաթիվ երկեր են եղել։ Սակայն հայ գրչագրի մատյանների հարուստ ժողովածուների մեջ, որոնցից շատերը մինչև օրս անհայտ են, դեռևս XVII և XVII դարերում գոյություն են ունեցել բազմաթիվ նյութեր, որոնց հիման վրա ստեղծվել է գեղագիտական տերմինոլոգիա։

Հայկական կլասիցիզմի հետևորդները բացի Խորենացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Տաթևացու և այլ գրողների ու մտածողների երկերից իրենց ձեռքի տակ ունեին գրականության և արվեստի տեսության վերաբերյալ XVIII դարի սկզբին տպագրված տեսական մի ընդարձակ աշխատություն։ Գրքի հեղինակը՝ Խաչատուր վարդապետ Էրզրումցին, իր այդ աշխատության մեջ («Համառոտ իմաստաբանություն», այսինքն փիլիսոփայություն), բացի բնական գիտություններից, կատարում էր որոշ տեսական ընդհանրացումներ արվեստների, բանաստեղծության և տրամաբանության մասին։

Հատկապես մեզ համար հետաքրքրական է բանաստեղծության վերաբերող մասը, ուր բացահայտ կերպով շարադրված է կլասիցիզմի պոետիկան՝ իր բնորոշ հատկանիշներով, նորմատիվ բնույթով, ոճական առանձնահատկությամբ։

«Բանաստեղծութիւն է ազատական արուեստ,— գրում է Խաչատուր Էրզրումցին,— յանդիման կացուցանող զընտիր և զվսեմ արարս մարդկայինս եղեալս, կամ հնարեցեալս։ Է ուրեմն ազատական արուեստ որ աւանդէ բացորոշեցեալ կանոնս յանդիման կացուցանելոյ զընտիր և զվսեմ արարս մարդկայինս եղեալս կամ բանաստեղծեցեալս..., Բանաստեղծութիւն է վսեմական արուեստ։ Քանզի ի յամենայն կողմանէ է վսեմ։ Են վսեմ արարք, զորս յանդիման կացուցանէ, քանզի են ազնիւք և ընտիրք։ Է վսեմ եղանակ, որով վարի ի խօսիլն։ Քանզի իրակէ զբանս ոտանավորս։ Են վսեմ ձևք, զորս կիր արկանէ։ Քանզի պահանջէ զձևս գերազանցս։ Են վսեմք այլաբանութիւնք, զորս իրակէ։ Քանզի սիրէ զբարձրաթռիչ այլաբանութիւնս և զնմանախոսութիւնս։ Է վսեմ պատմաբանութիւն, որով վիպասանէ։ Զի գերազանց եղանակաւ պատմաբանէ։ Վսեմք են անձինք յանդիման կացուցիչք։ Զի խնդրէ զշնորհալիս։ Վսեմք են ապարանք, զորս յանդիման կացուցանէ. զի ընտրէ զգեղեցկաշէնս և

զպատուականս։ Վսեմք են զարդք անձանց և գործոց։ Ջի պահանջէ զփառահեղս...»[1]։

Այսպես երկար շարունակում է պոետիկայի տեսաբան վարդապետը, մոռանալով նույնիսկ երաժշտությունը և թատերական ներկայացման այլ կոմպոնենտները, որոնք պետք է ընդունակ լինեն «հայեցողս ու դիտողս ընդոստուցանել»։ Այսպիսով, գիտնական վարդապետը իր պոետիկայի մեջ, բացահայտորեն ներշնչված է իր դարաշրջանի տիրապետող ոճի՝ կլասիցիզմի ոգով, նրա ամենափայլուն տեսաբան Բուալոյից, որի ժամանակակիցն է եղել հայ վարդապետ-տեսաբանը։ Թեև նրա աշխատության մեջ ոչ մի բառացի փոխառություն չկա Բուալոյի «Արվեստ քերթողականից», բայց ոգին նույնն է։ Խաչատուր վարդապետը Բուալոյի նման պայքարում է հանուն ճշմարտության և բանականության, ատում է սուտը, գարշում է անհամեստությունից, փախչում է անպարկեշտությունից։ Բանաստեղծությունը,— գրում է նա,— «ատէ զստութիւն, արհամարհէ զմոլորութիւն, անարգէ զյոռութիւն, գարշի ի յանհամեստութենէ և փախչի ի յանպարկեշտութենէ»։

Իր այս միտքը հիմնավորելու համար Խաչատուր վարդապետը դարձյալ դիմում է բանականությանը. «Բանաստեղծութիւն անարգէ զյոռութիւն,— գրում է նա,— քանզի ոչ գիտէ ածել մարդիկ զյոռութեան։ Արդ իրք անհամեստ ոչ վայելեն մարդկան, զի մարդն է բանաւոր։ Բան գարշի ի յանհամեստութենէ, ուստի և բանաստեղծութիւն, որ է արվեստ բանաւորաց, գարշի ի յանհամեստութենէ»։

Կիրառելով ձևական տրամաբանության կանոնները, գրականության հայ առաջին տեսաբաններից մեկը, թերևս ինքն էլ չկասկածելով հետևում է իր դարի ամենաառաջավոր փիլիսոփայական հոսանքին՝ ռացիոնալիզմին, որը հենց հանդիսանում էր կլասիցիզմի գաղափարական հիմքը։

Խաչատուր վարդապետը տալիս է նաև արվեստի բնորոշումը. «Արուեստ, որ և արհեստ ասի, է ունակութիւն բանիւ արարողական, այսինքն է ունակութիւն, որ աւանդէ զբացորոշեալ կանոնս, և հրամայէ առնել զգործիմն ըստ կանոնաց...»։

Ինչպես տեսնում ենք, արվեստի հարցում կանոններին շատ կարևոր տեղ է հատկացվում։ Սակայն կան ազատական և ծառայական արվեստներ. օրինակ՝ բանաստեղծությունը ազատական արվեստ է (ուզում է ասել ոչ կիրառական կամ մեխանիկական)։ Բանաստեղծությունը տարբերվում է բնական կարողությունից, որովհետև արվեստ է, բանաստեղծությունը բոլոր կողմերով վսեմ է ու պայծառ։ Բանաստեղծությունը տարբերվում է պատմությունից նրանով, որ նա վերարտադրում է ոչ միայն եղած բաները, այլև «հնարվածները»։ Այստեղ մենք նկատում ենք Արիստոտելի պոետիկայի այն դրույթը, թե՝ «բանաստեղծությունը ավելի փիլիսոփայա

---

[1] Խաչատուր վարդապետ Էրզրումցի, *Համառոտական իմաստասիրութիւն, Վենետիկ, 1711, էջ 16։ Այս հազվագյուտ գրքի մի օրինակը վերջերս նվեր ստացավ Պետական Մատենադարանի Հնատիպ գրքերի բաժինը։*

կան է և լուրջ, քան պատմությունը»։ Արվեստը, բանաստեղծությունը վերարտադրում են մարդկանց հնարավոր բնավորությունները և գործողությունները, և ոչ անպայման կատարված դեպքերը կամ մասնակի փաստերը և իրադարձությունները, որոնք պատմության մեջ արձանագրվում են ճշտությամբ։

Խաչատուր վարդապետի գործը XVIII դարի սկզբին անկասկած ուշագրավ երևույթ էր հայ իրականության մեջ։ Հայ ընթերցողը ստանում էր տպագրված մի գիրք (ճշմարիտ է լատինական ձևերով աղավաղված գրաբարով), որի մեջ հանրագիտական տեղեկություններ կային իր ժամանակի գիտության և փիլիսոփայության զանազան բնագավառների, այդ թվում և գրականության ու արվեստի տեսության մասին։ Հայ իրականության մեջ դա վերին աստիճանի հետաքրքրական մի երևույթ էր, ուսանելի նոր սերնդի համար, որը ձգտում էր հայ ժողովրդի կուլտուրական արժեքները վերագնահատել, իմաստավորել և լուսավորություն տարածել ավելի լայն խավերի մեջ։ Այսպիսով, XVIII դարի սկիզբը, նշանավորվում էր վերածնության մտավոր շարժումը խթանող գրական մի երկով, որը կարելի է համարել հայ գրականագիտական և քննադատական մտքի ամենավաղ արտահայտություններից մեկը նոր շրջանում։

1775 թվականին Վենետիկի Ս. Ղազարի տպարանում լույս տեսավ Ստեփանոս Ագոնցի «Ճարտասանություն» ընդարձակ աշխատությունը, բաղկացած 5 գրքից, որի մեջ ըստ էության շոշափվում էին գրականագիտական խնդիրներ։ Այն ժամանակ ճարտասանությունը դեռևս համարվում էր պոետիկայի մի մասը, քանի որ ոճաբանական նույն ձևերը, տրոպները կիրառվում էին թե՛ բանաստեղծության և թե՛ ճարտասանության մեջ։ Այդ գրքում օրինակները բերված են թե արևմտյան «երևելի հեղինակներից» և թե «մեր նախնեաց ընտիր մատենագիրներից», ինչպես ասված է առաջաբանում։

Գրականության տեսության, պոետիկայի, կամ ինչպես ընդունված էր ասել մեզանում «Արվեստ Քերթողականի» այնպիսի դասական մի գործ, ինչպես Բուալոյի գիրքը, հարկավ, ծանոթ էր Մխիթարյան հայ կլասիցիստներին, բայց այն ժամանակ դեռևս թարգմանված չէր, կարդում էին այն բնագրով։ Բուալոյի փոխարեն Բագրատունին թարգմանել էր նրա նախորդի, անտիկ աշխարհում հայտնի հռոմեական հռչակավոր բանաստեղծի (Հորացիոս) «Արվեստ Քերթողականը», որը համարվում է Բուալոյի տեսության հիմքը Արիստոտելի պոետիկայի հետ միասին։ Մխիթարյան կլասիցիստները խորապես դիտեին Արիստոտելի «Պոետիկան» և դրամատուրգիայի մեջ ավելի շատ հետևում էին նրան, քան ֆրանսիական կլասիցիզմի տեսաբան Բուալոյին։

Կլասիցիզմի գրականության նշանավոր երկերի թարգմանության գործում երախտիք ունի նաև Մխիթարյան վարդապետ Էդվարդ Հյուրմյուզյանը, որը փորձել է տալ նաև տեսական մի ընդհանրացում բանաստեղծության մասին։ Վերին աստիճանի ուշագրավ երևույթ է Էդվարդ Հյուրմյուզյանի «Առձեռն բանաստեղծութիւն համառոտեալ» գրքույկը, որը լույս

է տեսել 1839 թվականին, այսինքն այն ժամանակ, երբ հայ կլասիցիզմը, հատկապես մխիթարյան գրողների շրջանում, հասել էր իր զարգացման գագաթնակետին և սկսում էր արդեն վայրէջքը, որի նշանները արդեն երևում են Հյուրմյուզյանի այս յուրատեսակ «պոետիկայի» մեջ։

Կարելի է ասել, որ սա առաջին հատուկ ուսումնասիրությունն է, նվիրված գրականության տեսության, բանաստեղծական արվեստի հարցերին։ Դրանից առաջ եղել են տարբեր բովանդակության տեսական աշխատություններ, որոնց մեջ հարևանցի կամ համառոտ շարադրությամբ խոսվել է բանաստեղծության մասին որպես արվեստի։ Բայց չէր եղել առանձին աշխատություն, որի մեջ խոսվեր գրականության տարբեր ժանրերի, տաղաչափության, ճարտասանության, երգիծաբանության և այլ գրականագիտական հարցերի մասին։ Մենք տեսանք, որ XVIII դարի սկզբում մի աշխատության մեջ բավական ընդարձակ տեղ է հատկացված բանաստեղծության տեսական բնորոշմանը, սակայն դա հատուկ գրականագիտական աշխատություն չէ, այլ հանրագիտարանի պես մի բան, ուր այլ հարցերի կողքին դրված է նաև բանաստեղծության հարցը։ «Ճարտասանության» նվիրված տեսական աշխատությունը նույնպես չէր կարող պատասխանել պոետիկայի բոլոր հարցերին։ Միայն ճարտասանական և էսթետիկական մի քանի պրոբլեմներ կարող էին ընդհանուր լինել թե՛ ճարտասանության և թե՛ պոետիկայի համար։ Հայտնի է, որ դեռևս Արիստոտելը ճարտասանությունը դուրս էր համարում պոեզիայից, և իր պոետիկայում չի քննել հռետորական արվեստը։


Էդ. Հյուրմյուզյան

Այսպիսով, Էդվարդ Հյուրմյուզյանը հանդիսանում էր առաջին հայ գրողը, որը փորձում էր ընդհանրացնել գրականության փորձը և տեսականորեն իմաստավորել մի շարք գրականագիտական և էսթետիկական դրույթներ։

Ճշմարիտ է, դրանից 5 տարի առաջ Մոսկվայում լույս էր տեսել Սարգիս Տիգրանյանի «Ինչ-ինչ գեղեցկութենէ» տեսական աշխատությունը՝ որպես ընդարձակ առաջաբան Ռասինի «Գոթողիայի» թարգմանության։ Սակայն այդ աշխատության մեջ Ս. Տիգրանյանը տալիս էր

միայն մի ժանրի (ողբերգության) տեսական և պատմական բնութագիրը՝ սկսած Էսքիլեսից մինչև ռուս Օզերովը, նույնպես հիմք ունենալով կլասիցիզմի դրույթները։

Հյուրմյուզյանի աշխատության հետաքրքրական կողմն այն է, որ նա հիմնականում ընդունելով կլասիցիզմի պոետիկան, երբեմն քննադատական վերաբերմունք է ցույց տալիս դեպի այդ ուղղության առանձին երկերը։ Նա իր օրինակների գրեթե մեծ մասը բերում է հայ դասական գրողներից—Խորենացուց, Եղիշեից, Շնորհալուց և այլն։

Երբ լույս էր տեսնում կլասիցիզմի պոետիկայի և էսթետիկայի ամփոփումը տվող գրականագիտական այս աշխատությունը, Արսեն Բագրատունին զբաղված էր իր մոնումենտալ երկի, հայ կլասիցիզմի գլուխ գործոցը հանդիսացող «Հայկ Դյուցազն» էպիկական պոեմի դժվարին աշխատանքով։ Այն, ինչ անում էր Հյուրմյուզյանը տեսության բնագավառում, Բագրատունին կիրառում էր գործնականում, կերտելով մի դյուցազներգություն, որը թեև իր բնույթով և ոճով բավական ուշացած էր, համարյա անախրոնիզմ դարձած, բայց մի հոյակապ հուշարձան էր, որը մի քանի հայ խանդավառ գրիչներ չափազանցված գովեստով դնում են Հոմերոսի երկերի կողքին։ Այդ գրիչներից մեկը ասում է. «Հայկ դյուցազնը»—հայ ցեղին երկունքի այդ հոյակապ դյուցազնավեպը վար չի մնար Հոմերի «Ոդիսականեն», շնորհիվ նյութին ագուցվածքին և մանավանդ այն գերազանցապես վսեմ ու փարթամ ոճին՝ որ դարտըկած է գրաբարի կանձարանն ամբողջ»[1]։

Էդվարդ Հյուրմյուզյանը, հայ կլասիցիզմի տեսաբանը, բանաստեղծության երկու կարևորագույն հատկանիշը համարում է «գեղեցիկն և վսեմը»։ Այնուհետև նա բնորոշում է գեղեցիկը և վսեմը, գտնելով, որ դրանք տարբեր հասկացողություններ են։ Սակայն վսեմը ճոռոմաբանության մեջ չի կայանում, ընդհակառակը հաճախ պարզ խոսքերով և անպաճույճ պատկերներով կարելի է հասնել իսկական վսեմության։

«Քանզի վսեմութիւն ի վեհ իմաստս է,— գրում է հայ տեսաբանը,— և հնարք վսեմախոսութեան ի պարզ և սակաւ բանս։ Վսեմագոյնք ի քերթողաց և ի մատենագրաց բազում այն է զի պարզախօսք ևս գտանին. և որ հնարի ոք հանդես առնել բառից և յաճախէ մակդիրս շքեղս, սովորաբար թափուր գտանի յիմաստից. մանաւանդ ի մերս բարբառ որչափ մեծավայելուչ և վսեմ յօրինին իմաստք վեհք ընտրութեամբ բառից և բարդութեանցն ըստ պատշաճի և զգոյշ պիտառութեամբ, այնչափ ցուրտ և տաղտկալի է յաճախութեան բարդիցն և կրկնութիւն համանշանակ և աւելորդ բառից»[2]։

Այսօր իսկ մեզ համար ընդունելի գրականագիտական այս դրույթը արտահայտում էր ռացիոնալիզմի վրա հիմնված գրական ուղղության՝

---

1 Թեոդիկ. Ամենուն տարեցույց, 1927, էջ 564։

2 «Առձեռն բանաստեղծութիւն համառօտեալ Եդուարդայ վարդապետէ Հիւրմիւզեանս», ի Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1839, էջ 46։

կլասիցիզմի էությունը, նրա ոճական հիմնական տենդենցը, որը հայ իրականության մեջ այն ժամանակ դեռևս պահպանում էր իր պրոգրեսիվ նշանակությունը միջնադարյան սխոլաստիկայի, միստիկայի և եռմիասնության դեմ մղված պայքարում՝ հանուն բանականության, մտածողության պարզության, կառուցվածքի սիմետրիկ ներդաշնակության, ընդդեմ գոթական խրթնության և մանվածապատության, որին երբեմն զգալի տուրք են տվել միջնադարի կապանքներից դեռևս չազատագրված հայկական կլասիցիզմի աջ թևի ներկայացուցիչները։

Գրականության ժանրերից ամենաբարձրը Հյուրմյուզյանը համարում է դյուցազներգությունը, որը նա բնորոշում է այսպես. «Դեպք ինչ մեծագործ քերթողաբար միպագրեալ, առ ի սեր և ի զարմացումն առաքինութեան ձգելոյ ընթերցողս։ Վեհագոյն քան զամենայն ազգս քերթութեանց է սա, այլ դժուարին յոյժ ի կատարումն»[1]։

Դյուցազներգության երկու խոշորագույն պոետներն են Հոմերոսը և Վիրգիլոսը։ Նրանցից հետո հայ տեսաբանը հիշատակում է Տասսոյին, Միլտոնին, Ֆենելոնին, Վոլտերին։ Նա հատկապես ընդգծում է Ֆենելոնի «Տելեմաքի» նշանակությունը։ Այս երկը հայերենի էր թարգմանվել դեռևս XVIII դարի վերջում Ռուսաստանում, իսկ Մխիթարյանների մոտ այն թարգմանել էր բանաստեղծ Մանուել Ջախջախյանը «Արկածք Տելեմաքա» վերնագրով, որը բազում հրատարակություններ է ունեցել սկսած 1826 թվականից մինչև 1900 թվականը։

Ուշագրավ փաստ է այն, որ հայկական կլասիցիզմի տեսաբանը չի մոռացել հիշատակելու Օսիանին, որպես դյուցազներգակի, և բարձր գնահատական է տալիս շոտլանդացի Մակֆերսոնի գրական այդ միստիֆիկացիային, որը հանդիսացավ ռոմանտիզմի ոգեշնչության աղբյուրներից մեկը։ Այստեղից էլ երևում է, որ Հյուրմյուզյանը չի պարփակվել սոսկ կլասիցիզմի նեղ սահմաններում։ Նա իր գրքում գնահատել է ռեալիստական վիպասանության այնպիսի խոշորագույն ռահվիրայի, ինչպիսին է Սերվանտեսը։

Հյուրմյուզյանի կլասիցիստական հայացքները ամենից ավելի ցայտուն և բնորոշ կերպով արտահայտվում են ողբերգությանը նվիրված գլխում։ Մի համառոտ ակնարկ նետելով ողբերգության ծագման և զարգացման վրա, նա ամենից առաջ կանգ է առնում երեք միությունների (եռմիասնություն) կանոնի վրա, որը կլասիցիստական ողբերգության հիմնաքարերից մեկն է։ Նա գործողության միություն է պահանջում ոչ

---

[1] «Առձեռն բանաստեղծութիւն...», էջ 116։

Մոտավորապես նույն ձևով է բնորոշում XVIII դարի ռուս կլասիցիստ բանաստեղծ Խերասկովը, գրելով „Эпическая поэма заключает какое-нибудь важное. достопамятное, знаменитое приключение, в бытиях мира случившееся, и которое имело следствием важную перемену, относящуюся до всего человеческого рода". (**Տես** Д. Благой, История русской литературы XVIII века, 1946, стр. 281)։ **Խերասկովը հիշատակում է նույն դյուցազներգակներին, ինչ Հյուրմյուզյանը (Հոմերոս, Վիրգիլիոս, Միլտոն, Վոլտեր, Տասսո և այլն)։**

միայն ամբողջ պիեսից, այլև յուրաքանչյուր արարից։ Նա պահանջում է նաև պահպանել ժամանակի միությունը (այսինքն գործողությունը քսանչորս ժամից ավելի չպետք է տևի), իսկ տեղի միության հարցում ընդունում է նույն քաղաքի սահմանները, որոնց մեջ գործողության վայրը կարող է փոխվել։ Այստեղ պետք է նկատել, որ իրենք, Մխիթարյան դրամատուրգները երբեք չեն պահպանել երեք միությունների կանոնը։ Բացի գործողության միությունից, որ ամեն մի գեղարվեստական երկի (առավել ևս դրամայի) անխախտ պահանջն է, տեղի և ժամանակի հարցում նրանք իրենց ազատ են զգացել։

Որպես համոզված կլասիցիստ, Հյուրմյուզյանը կողմնակից է ողբերգության գլխավոր գործող անձերի «ազնվական և իշխանազուն» լինելու տեսակետին։ Նա այդ պատճառաբանում է նրանով, «որպեսզի աղետք նոցա ազդողագոյնք իցեն»[1]։ Հյուրմյուզյանը այս տողերը գրում էր Վիկտոր Հյուգոյի «Կրոմվելի» առաջաբանից ավելի քան մի տասնամյակ հետո։ Հայտնի է, որ այդ առաջաբանով Վ. Հյուգոն վճռական ճակատամարտ մղեց կլասիցիզմի քարացած կանոնների դեմ և գրեց «Էռնանի» դրաման, որի մեջ կենտրոնական հերոսը մի ավազակ է։

Խոսելով հունական սրագեդիայի մասին, Հյուրմյուզյանը գտնում է, որ հույն ողբերգուներից ամենավեհն է Սոֆոկլեսը, իսկ Էվրիպիդեսը գերազանցում է նրան իր կրքերի ուժեղությամբ և արտահայտած բարոյական իմաստներով։ Հունական ողբերգության թերությունն այն է, որ նրա մեջ երբեմն միջամտում են աստվածները և հաճախ հանգույցի լուծումը կատարվում է հրաշքներով։ Սա նույնպես բնորոշ է կլասիցիզմի տեսաբանի համար։ Հայտնի է, որ հետևելով բանականության խիստ կանոններին և ռացիոնալիստական տրամաբանությանը, կլասիցիզմի հետևորդները դրամայի մեջ մերժում էին ամեն մի հրաշալի տարր, գերբնական ուժերի միջամտությունը։ Այդպես են վարվել Կոռնեյլը, Ռասինը և նրանց հետևորդ (ձևական իմաստով) Վոլտերը իրենց ողբերգություններում, ուր բացակայում է, ինչպես ընդունված էր ասել հնում deus exmachina, աստվածների կամքով տրված լուծումը, հրաշքը։ Այս տեսանկյունից է քննադատում Հյուրմյուզյանը հունական ողբերգությունը, մոռանալով որ այդ ժամանակ ուրիշ կերպ չէր կարող լինել, քանի որ դիցաբանությունը խորապես թափանցել է հույների բուն իսկ մտածողության մեջ, դարձել նաև գրականության հիմքը։

Բնորոշ է նաև այն, որ Հյուրմյուզյանը ֆրանսիական կլասիցիզմի խոշորագույն դրամատուրգներին խիստ բարձր է գնահատում և նույնիսկ գտնում, որ նրանք գերազանցել են հույներին, «յաճախութեամբ դիպաց և բազմադեմ կրից, և ճշգրիտ նկարագրօք բարուց. արուեստ, կարգաւորութիւն, միութիւնք իրաց ժամանակի և տեղւոյ, ոճ պերճ և քերթողական, խիտ առ խիտ իմաստք և ամենայն օրենք պահեն ի նոսա։ Միայն թերու-

---

[1] «Առձեռն բանաստեղծութիւն համառօտեալ Եդուարդայ վարդապետէ Հիւրմիւզեան»։ ի Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1839, էջ 145։

թիւն նոցա է գի շատախօսք են և երկարաբան, որպէս ինքինքն իսկ Վոլթեռ խոստովանի զայս...»[1]։

Կարելի է զարմանալ, որ կլասիցիզմի ջերմեռանդ հետևորդը չըլացավ բացահայտորեն նշելու այնպիսի թերություններ, որոնք հենց բխում են նույն կլասիցիզմի ռացիոնալիզմի և սիմետրիկ ներդաշնակության պահանջներից։

Որպես դասական ողբերգության լավագույն նմուշ հայ տեսաբանը բերում է Ռասինի «Գոթողիան», որը հինգ տարի առաջ արդեն լրիվ թարգմանել էր Սարգիս Տիգրանյանը։ Հյուրմյուզյանը տալիս է այդ նշանավոր ողբերգության առանձին տեսարանները, պատմելով ամբողջ պիեսի բովանդակությունը, գլխավորապես գործող անձերի և երգչախմբի փոխհարաբերությունը և դիալոգը հատվածաբար, ինչպես ինքն է ասում՝ ողբերգության կմախքը։ Քերթողը ծածկել է այդ կմախքը,— ասում է նա,— «վեհ և գեղեցիկ իմաստներով, գորովական և հոգեշարժ կրքերով, ինչպես ջլով ու մարմնով պատեալ, և քերթողական ձևովքն և ասացուածովք վայելչացուցեցեալ ... ճարտար հանգուցիւ ընդ բազմափոփոխ տեսարանս պահեալ զպարզութիւն, ամենակատար ընծայէ օրինակ ողբերգութեան»[2]։

Հյուրմյուզյանը չի մոռանում նաև Շեքսպիրին, անվանում է նրան «այր մեծահանճար, բայց առանց կիրթ ախորժակաց», այսինքն ճաշակի, իսկույն մատնելով իրեն որպես կլասիցիզմի կողմնակից։ «Բազումք են ի քերթուածս նորա հատուածք և տեսարանք ընտիրք, այլ չիք և ոչ մի ի նոսա ողբերգութիւն ամբողջ և ըստ կարգի. սակայն նկարագիր բարուց և լեզու կրից անթերի»[3]։ Այնուհետև հիշատակված են անգլիական կլասիցիզմի խոշորագույն դրամատուրգները՝ Դրայդընը և Ադդիսոնը։

Հյուրմյուզյանը, որպես ուղղափառ կլասիցիստ, անունն անգամ չի տալիս ռոմանտիկ դրամատուրգիայի մի քանի խոշորագույն ներկայացուցիչների, որոնք Ֆրանսիայում նույն դարի 30-ական թվականներին, այսինքն ճիշտ այն ժամանակ, երբ լույս էր տեսնում հայ գրականագետի տրակտատը, իշխում էին ֆրանսիական թատրոնում. խոսքը Վիկտոր Հյուգոյի և Ալեքսանդր Դյումայի մասին է, որոնց Հայնեն դեռևս 1837 թվականին անվանում էր իր ժամանակի «ֆրանսիացիների լավագույն ողբերգու բանաստեղծները»[4]։

Հյուրմյուզյանը հատուկ ուշադրություն է դարձնում երգիծաբանության վրա։ Խոսելով կատակերգության մասին, նա ասում է, որ դրամատիկական կանոնները նույնն են թե՛ ողբերգության և թե՛ կատակերգության համար։ Վերջինիս նպատակն է «զուարճարար հրահանգել զտեսողս, և ծաղր կացուցանել զմոլութիւնս և զյոռութիւնս»։ Սակայն կա մի էական տարբերություն. բոլոր ազգերի և բոլոր ժամանակների երևույթները կա-

---

1 «Առձեռն բանաստեղծութիւն համառօտեալ Եդուարդայ վարդապետէ Հիւրմիւզեան»․ ի Վենետիկ, ի ս. Ղազար, 1839, էջ 149։

2 Նույն տեղում, էջ 171։

3 Նույն տեղում, էջ 150.

4 „Гейне и театр", Изд. Искусство, Москва, 1956, стр. 208.

րող են ողբերգության նյութ լինել, որովհետև մեծ կրքերը, առաքինությունները և չարիքները միշտ նույնն են և անփոփոխ բոլոր ազգերի և բոլոր դարերի մեջ, իսկ հասարակական կյանքի մանր թերությունները, որոնք պատկանում են կատակերգությանը, ըստ ազգերի և ըստ ժամանակների փոփոխվում են, և մի ազգի համար ծիծաղելին կարող է ծիծաղելի չլինել մի այլ ազգի համար[1]։ Այս միտքը պետք է հասկանալ այն իմաստով, որ կատակերգությունը շատ ավելի գործ ունի կենցաղի, բարքերի և սովորությունների հետ, որոնք ենթակա են փոփոխության, մինչդեռ ողբերգության մեջ կենցաղային տարրը համարյա դեր չի խաղում, այնտեղ գործում են մարդկային մեծ կրքերը, հույզերը և զգացմունքները։ Որպես կլասիցիզմի հետևորդ, Հյուրմյուզյանը կոմեդիայի մեջ զգուշացնում է չափազանցությունից և զավրաբանությունից,— «նուաստ երգիծանաց»։

Հիշատակելով խոշորագույն կոմեդիոգրաֆների անունները, Հյուրմյուզյանը բոլորից գերազանց համարում է Մոլիերին, անվանելով նրան «քերթողահայր կատակերգուաց»։

Հյուրմյուզյանն առաջինն է հայ գրականության մեջ, որ փորձում է տալ ծիծաղի տեսություն, հարկավ ելնելով կլասիցիզմի դիրքերից։ Նա թվարկում է երգիծաբանության մի շարք հատկանիշներ. «զորօրինակ եթե հիմարն պանծասցի որպես իմաստուն, և վատն իբրև քաջ»[2]։ Այս հակասությունը նա անվանում է անհարմարություն, որը որչափ անակնկալ լինի, այնքան ավելի ծիծաղ է շարժում։ Դրա համար էլ լարախաղացների և ստվերաշարժ խաղերի (ղարագյոզ) վրա ամենից շատ ծիծաղում էին մանուկները և տխմարները։ Իսկ իմաստունները և բազմահմուտները միայն խիստ անակնկալ բաների վրա են ծիծաղում։

Հյուրմյուզյանի պոետիկայի ձեռնարկի ուշագրավ և արժեքավոր մի առանձնահատկությունն այն է, որ նա աշխատում է գրականագիտական տերմինները և հասկացողությունները բացատրելիս օրինակները բերել հայ գրականությունից, գլխավորապես դասական շրջանից, սակայն երբեմն բերում է նաև օրինակներ իր ժամանակակից Մխիթարյան բանաստեղծների երկերից, առանց հեղինակների անունները հիշատակելու, բավականանալով միայն նշել «և ոմն ի քաջացն մերոց արդի քերթողաց» կամ «յումեմնէ արդի քերթողաց»։ Այդ «արդի քերթողները» Մխիթարյան միաբաններն են, իրեն Հյուրմյուզյանին դասակից և իրենից ավագ բանաստեղծները՝ Ավետիքյանը, Ջախջախյանը, Բագրատունին և այլն։ Այդ բանաստեղծների մասին նա արտահայտվում է բարձր գովեստով, նույնիսկ հպարտությամբ, անվանելով նրանց «Պինդարի և Ովրատիոսի հետևորդներ», միաժամանակ ընդգծելով նրանց ազգային առանձնահատկությունը։ Ահա ինչ է գրում նա այդ մասին. «Եվ առ մեզ ոչ պակասին զարդիս հետևողք Պինդարեայ և Ովրատեայ առ որ և վսեմութիւն հայկական

---

1 Տե՛ս Ն. Հյուրմյուզյան, *Առձեռն բանաստեղծութիւն...*, էջ 175։

2 Նույն տեղում, էջ 177։

բարբառոյ օգնէ ոչ սակաւ»։ Հյուրմյուզյանը գտնում է, որ հայ դասական լեզվի վսեմությունը մեծապես օգնում է հայ բանաստեղծներին՝ հունական հռչակավոր բանաստեղծների արժանի հետևորդ լինելու համար։

Ինչպես երևում է, Հյուրմյուզյանն իր օրինակները բերում է Մխիթարյան բանաստեղծների դեռևս անտիպ երկերից, որոնք հրատարակվեցին ավելի ուշ։ Ահա թե ինչու որոշ տեքստային տարբերություններ կան բերված օրինակների և տպագրված բանաստեղծությունների միջև։ Որպես գեղեցիկ օրինակ Հյուրմյուզյանը բերում է Մխիթարյան բանաստեղծի տողերը նվիրված մանուշակի և ելակի նկարագրությանը. «գեղեցիկ յոյժ և ոմն արդի քերթողաց յօրինէ այսպէս զդրուատիս ելակի և զմանուշակին ըստ իմաստից և ըստ բացատրութեան» (այսինքն ըստ ձևի և ըստ բովանդակության).

Լուրթագոյն մանուշակ
Եւ ելակ կարմրորակ
Նազելիք երկոքին,
Յածր համեստք երկոքին,
Երկոքին իսկ մանունք,
Չգեանով են սողունք...

Այս լիրիկական բանաստեղծության մեջ ելակը և մանուշակը հանդես են բերված որպես համեստության խորհրդանշաններ։

Որպես էլեգիայի (եղերերգության) օրինակ բերելով Մխիթարյան բանաստեղծներից մեկի տաղը («յումեմնէ արդի քերթողաց ի վերջաբանի ճարտար եղերերգութեան ի մահ սոխակին»), Հյուրմյուզյանը համարում է այն հաջող ֆինալ.

«Աչք գեղեցիկ ցողագին
Լացեք զմահ Սոխակին,
. . . . . .
Լացեք, լացեք, սուրբ մանկտի
Ու օրհորդք նազելի...[1]

---

[1] *Եղերերգության օրինակը բերված է Արսեն Բագրատունու այն ժամանակ դեռևս անտիպ «Մահ սոխակին, եղերգ հովվի» ընդարձակ լիրիկական բանաստեղծությունից, որը սկսում է այսպես.*

Աչք գեղեցիկ ցողագին
Լացեք ըզմահ սոխակին։
Վայ և եղուկ ինձ հիքիս
Սուգ և ի յիմ սիրելիս.
. . . . .
Մի՛ զիս, մի՛ զիս բոփոփեր...
Զի սեր սոխակն իմ լռեաց
Սան իմ սիրուն երգասաց,
Զի սէրն հավիկն իմ մեռաւ
Սան իմ սիրուն անպարսաւ...

Հովիվը ողբում է իր սիրած թռչնի մահը։ Հովիվը նստած Արծնչի ծովափում սրինգ է նվագում։ Լսելով սրնգի ձայնը սոխակը գալիս է և թառում մոտակա ծառին, հետո մոտե-

Հյուրմյուզյանը իր «Առձեռն բանաստեղծության» մեջ որպես էպիկական պոեզիայի գեղեցիկ օրինակ բերում է մի հատված Օսիանի պոեմներից, առանց հիշատակելու թարգմանչի անունը։ Ինչպես երևում է, հեղինակը ձեռքի տակ ունեցել է Արսեն Բագրատունու թարգմանությունը, որը այն ժամանակ դեռևս անտիպ էր և լույս տեսավ միայն 1852 թվականին Բագրատունու «Տաղք Մխիթարեան վարդապետացի» առաջին գրքում.

Որպես մրրայլ մրրրկիք աշնան
Շրղթայազերծ ի դուրս սուրան
Յերկուց լերանց հանդիպակաց
Խրրոխտ դրընդմամբ խառնին յիրեարս.
Սապես երկու այն դիւցազունք
Յոլոր պատին զերթ գալարունք։
Եւ որպես ուղխք կըրկին պըղտոր
Բարձր ի ժայռից գըլին ի գլոր,
Բախին յիրեար, ժայթքեն փրփուր
Ի մի ձուլեալ վազեն ի դիւր...

Որպես շրջաբանության (պերիֆրազի) հաջող օրինակ Հյուրմյուզյանը գրում է. «և ոմն ի քաջաց մերոց արդի քերթողաց փոխանակ ասելոյ թե մինչ մերազնեայ մանկտին որբերգէ ի տեսարանի, վայելուչ իմն այսպես շրջաբանէ».

«Ի չափ տաղի մինչ Թորգոմեան մանկանց պար
Ի սոփոկլեան սոլերս ագոյց վարշապար»։

Այստեղ Հյուրմյուզյանը ակնարկում է, որ Մխիթարյան դպրոցական թատրոնում Թորգոմի զավակները, այսինքն հայ մանուկները Սոփոկլեսյան կոշիկներ են հագնում։ Ինչպես հայտնի է, հին հունական թատրոնում ողբերգակ դերասանները բարձրաներբան կոշիկներ էին հագնում (կոտուրն), ոճ է դարձել «կոտուրն հագնել» արտահայտությունը, որը նշանակում է «ողբերգություն ներկայացնել»։

նում է հովվին, նստում նրա ուսին և ունկնդրում։ Մոխակը դառնում է ընտանի թռչուն, սակայն անողոք մահը խլում է նրան։

է դարեանդ ի յԱրճիշ
Հովանաւոր քաջուղեշ,
Վերուստ ի ծովըն նայի
Ջինըն իբր ի ջինջ հայելի...

Հետաքրքրական է, որ այս երկարաշունչ էլեգիայում, նվիրված Մոխակի մահվանը, բանաստեղծը հիշում է շոտլանդացի էպիկ Օսիանին և դիմելով նրան ասում է.

Վայ Օսիան ի քո տուն,
Վայ և երկիրդ, հիւսիսի
Յորոյ շընչոյդ սոսկալի
Փախչի սոխակ, չունի թառ
Նորա չյսի քեզ կիթառ։

(Տաղք Մխիթարեան վարդապետաց, 1852, հատ. Ա, էջ 233)։

1822 թվականին Մխիթարյան դպրոցական թատրոնում բեմադրված «Մահ մեծին Ներսեսի» ողբերգության նվիրված բանաստեղծության մեջ Ա. Բագրատունին նույնպես հիշատակում է հունական թատրոնի դերասանների բարձրաներբան կոշիկները.

Ի չափ տաղի մինչ թորգոմեան մանկանց պար
Ի կեկրոպեան կոշիկս ագոյց գարշապար...

Նույն բանաստեղծությունից, որ դեռևս անտիպ էր, Հյուրմյուզյանը բերում է մի հատված որպես օրինակ.

Երկիր, շրնչոյ կենդանութեան մայր դայակ,
Սոկրատայ միշտ ի քեն ծնանիս.դեղ վրիժակ։
Այ դիւարախ գլուխ և սիրտ մահացուի,
Որ առաջին ցուցեր ըղթոյն աշխարհի,
Եթէ քո չէր-շրնչեալ ըզսիք եթերաց,
Ներսէս այժմիկ շրնչէր և տայր շունչ կենաց.
Դու և զպատկերն եղծեր ղու զայն վայելուչ,
Որբացուցեր զազգն ի հօրեն անտեղուչ[1]։

Այս հատվածը բերված է որպես հակադրության (անտիթեզի) օրինակ։ Երկիրը, որը կենդանության մայրն է, ծնում է նաև թույն, որին զոհ գնաց Սոկրատը։ Թող անիծվի այն մարդը, որը առաջին անգամ գտավ թույնի գործածությունը, եթե այդ մարդը չնչեր, այսինքն չապրեր աշխարհի վրա, ապա Ներսեսը կշնչեր և կենաց շունչ կտար։ Հասկանալի է, որ ոճական այս հնարքի հակադրության բովանդակությունը բավական նաիվ է։

* * *

1828 թվականին Մոսկվայում լույս է տեսնում «Մուզայք Արարատյան» վերնագրով մի ժողովածու, որի մեջ ամփոփված են Լազարյան ճեմարանի սաների գրաբար բանաստեղծությունները, հորինված կլասիցիզմի ոճով։ Այդ գրքի մասին Մ. Աբեղյանն իրավացիորեն գրում է. «Այդ ժողովածուն մի մանկական թոթովանք է, որը ցույց է տալիս, թե լեզուն պիտի բացվի։ Դրա մեջ արդեն երևում է, որ «մուզաները» ոչ միայն բարոյական խրատներ և Աստվածաշունչ են սիրում և տաղաչափում նրա հատվածները, այլև ոգևորվում են մեր անցյալով ընդհանրապես. ունին արդեն հայրենիքի գաղափար, որով պարծենում են, որովհետև այդ հայրենիքը դրախտ է. ցույց են տալիս ուսման սեր և ուրախանում են, որ պարսից բռնակալ լծից ազատվում է հայ ազգը։ Դրանք ոգևորության նոր նյութեր են, որ Լազարյան սաներն առաջարկում են մեր բանաստեղծներին մշակելու, և որոնցով այնուհետև պիտի զբաղվեր մեր ապագա բանաստեղծությունը»[2]։

1 Նույն տեղում, էջ 211։

2 Մ. Աբեղյան, Հայոց հին դրականության պատմություն, հատ. 2, էջ 509—510։

Դրանից մի տարի առաջ, 1828 թվականին Թուրքմենչայի դաշնագրությամբ Արևելյան Հայաստանի մեծ մասը միացվել էր Ռուսական կայսրությանը և պարսկական լծից ազատագրվել էին հարյուր հազարավոր հայեր։ «Մուզայք Արարատյան» բանաստեղծությունների ժողովածուն հենց այդ մեծ իրադարձության արձագանքն էր։

«Մուզայք Արարատեան» գրքում տպագրված բանաստեղծությունների հեղինակներից մեկն էր Սարգիս Տիգրանյանը, որը ավարտելով Լազարյան ճեմարանը, սովորում էր Մոսկվայի համալսարանում, ուր նա ընդունվել էր Վ. Բելինսկու հետ միաժամանակ։

Սարգիս Տիգրանյանը հավերժացրեց իր անունը հայ գրականության պատմության մեջ ոչ թե իր բանաստեղծություններով, այլ մի թարգմանությամբ և նրան կցված ընդարձակ առաջաբանով, որոնք կարելի է ասել դարագլուխ են կազմում հայկական կլասիցիզմի պատմության մեջ։

Թարգմանությունն է Ռասինի հռչակավոր «Գոթողիա» («Աթալիա») ողբերգությունը, ֆրանսիական կլասիցիզմի հոյակապ նմուշներից մեկը, իսկ առաջաբանը մի տեսական աշխատություն է «Ինչ-ինչ զեղերերգութենէ» վերնագրով, մոտ հարյուր էջ, ուր տրվում է ողբերգական ժանրի պատմությունը և տեսությունը՝ սկսած հունական տրագիկներից մինչև XIX դարի սկզբի ռուս դրամատուրգ Օզերովը։ Աշխատության մեջ հիշատակվում են նաև XVII դարի 60-ական թվականներին Լվով քաղաքում բեմադրված հայկական մի քանի ողբերգություններ, որոնց մասին նա կարդացել է ֆրանսիացի հայագետ Սեն Մարտենի մի հոդվածում։ Ընդհանրապես Տիգրանյանը արձանագրում է, որ անցյալում հայ գրականությունը զուրկ է եղել թատերական գրվածքներից։ «Ճշմարիտ է, հայախոս հանճարը անգործ չի մնացել, ասում է Տիգրանյանը, պանծալի է անուն Նարեկան վարդապետի... Շնորհալւոյ, գրականութիւն մեր հայրենի չէ զուրկ ի քերթութեանց, քնարերգականաց և յորոց սովորեցաք անուանել դիւցազնականս, բայց ի թատրոնականաց՝ այո և զուրկ բնաւին»[1]։

Սարգիս Տիգրանյանը իր թարգմանությունը կատարել է Մոսկվայի համալսարանի ուսանող եղած ժամանակ, երբ գրել է նաև իր տեսական պատմական աշխատությունը ողբերգության մասին, որ նա անվանում է եղերերգություն։ Այդ գիրքը պատրաստ է եղել տպագրության և ներկայացվել է գրաքննիչ Միքայել վարդապետ Սալլանթյանին 1832 թվականի սկզբին և արտոնվել տպագրության նույն թվականի ապրիլին, սակայն Լազարյան ճեմարանի տպարանից լույս է տեսել, մեզ անհայտ պատճառներով, միայն 1834 թվականին, այսինքն երկու տարի հետո։

Հիմնվելով այն փաստի վրա, որ Սարգիս Տիգրանյանը Մոսկվայի համալսարանում, նույն ֆակուլտետում, եղել է Բելինսկու դասընկերը, նմանապես նկատի ունենալով այն հանգամանքը, որ Տիգրանյանի թարգ-

---

[1] *«Գոթողիա եղերերգութիւն, թարգմանեալ ի Սարգիս Տիգրանեան Նախիջևանցւոյ», ի Մոսկով, 1834, էջ 70։*

մանությունը և տեսական աշխատությունը լույս են տեսել միշտ նույն տարում, ինչ Բելինսկու «Գրական երազանքներ» հոդվածաշարքը, մեր գրականության մեջ կարծիք է հայտնվել, թե Սարգիս Տիգրանյանը շատ գրական հարցերում գաղափարակից է եղել Բելինսկուն։ Այդ միտքը արտահայտված է զանազան ձևերով։ Հիմնվելով այն փաստի վրա, որ Տիգրանյանը մեծ գովեստով է խոսել Շեքսպիրի մասին, ըստ արժանվույն գնահատելով նրա հանճարը, եզրակացրել են, թե Վ. Բելինսկու և Ս. Տիգրանյանի մոտեցումը դրամայի գնահատմանը, «դրամատուրգիայի ժանրերի տեղը որոշելիս, Շեքսպիրի դերն ու նշանակությունը որոշելիս՝ միատեսակ ու ընդհանուր է եղել»։ Ահա նաև մի այլ ոչ պակաս կատեգորիկ հայտարարություն Բելինսկու և Տիգրանյանի գաղափարական ընդհանրության մասին. «Բելինսկու «Գրական երազանքներում» և Տիգրանյանի «Ինչ-ինչ պեղերերգութենէ» գրական գործերում ուշադրավ տեղ են գրավում արևմտաեվրոպական թատերական կուլտուրայի նվաճումներին նվիրված էջերը։ Մեզ հետաքրքրում է այս հարցը մի տեսանկյունից. երկու հեղինակներն էլ միատեսակ վերաբերմունք են ցուցաբերում դեպի եվրոպական տարբեր երկրների թատրոնների և մասնավորապես դրամատուրգիայի պատմության ու կացությանը[1]։


ԳՈԹՈՂԻԱ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ·

Թարգմանեալ 'ի Գաղղիականէ

Սարգիս Տիգրանեան Նախիջևանցւ·

'Ի ՄՈՍԿՈՎ

'Ի տպարանի Հայկական Տեառն Լազարեանց

Ճեմարանի արևելեան լեզուաց ·

1834 ·

«Գոթողիայի» հայերեն թարգմանության անվանաթերթը

Ռուս թատերագետ Օ. Օլիդորը, հավանաբար հիմնվելով հայկական այդ աղբյուրի վրա, վերջերս լույս տեսած մի աշխատության մեջ խոսելով Սարգիս Տիգրանյանի մասին, որպես առաջին հայ թատերագետի, գրում է. «Մոսկվայի համալսարանում Բելինսկու դասընկեր Սարգիս Տիգրանյանը (1812—1873) «Դրամայի պատմությունը և տեսությունը» հոդվածում, որը առաջաբանն է Ռասինի «Աթալիայի» թարգմանության (1834), վեր-

[1] Տե՛ս Ա. Արշարունի, Հայ թատերագիտական մտքի պատմությունից, Երևան, 1956, էջ 85։

լուծում է ռուսական դրամատուրգիան, պարզացնելով ռուս մեծ քննադատ դեմոկրատի մտքերը»[1]։

Այնինչ հենց ռուսական դրամատուրգիայի գնահատման հարցում տրամագծորեն հակառակ դիրքերի վրա են կանգնած Բելինսկին և Տիգրանյանը։

Հայտնի է, որ Բելինսկին իր «Գրական երազանքներում», անկասկած փոքր ինչ անարդար կերպով, XVIII դարի ռուսական դրամատուրգիան և նրա պարագլուխ Սումարոկովին համարյա զրոյի էր հավասարեցնում։

*Իսկ ինչպիսի՞ գնահատական է տվել Սարգիս Տիգրանյանը նույն այդ երևույթին։ Իր աշխատության մեջ նա Սումարոկովի մասին գրում է. «Սումարոկով երևելի գտաւ ի հայրենիսն. որոյ և Դեմետրոս Սաանուն (*Димитрий Самозванец*) նախապատիվ կնա դասեաց քան զՏրեդյակովսկիյ նա քան զԼոմոնոսով»*[2]*։ Տիգրանյանը Օզերովի դրամատուրգիայի մասին խոսելիս գործ է ածում դրվատական այնպիսի արտահայտություններ, ինչպես «չքնաղ», «պանծալի», «ընտիր» և այլն։ Մինչդեռ Բելինսկին, գնահատելով հանդերձ Օզերովի որոշ առավելությունները, գրում է, որ հանդիսականը Օզերովի ողբերգությունից «վճռականապես ոչինչ չի հասկանա»։*

Տիգրանյանը Օզերովի «Դմիտրի Դոնսկոյ» ողբերգությունը, որը նա զարմանալի հետևողականությամբ կլասիցիստական ոճով անվանում է հնադարյան ձևով «Դեմետրե Դանսկոյյան», համարում է հայրենասիրական վառ զգացումի արտահայտություն, որը «կենդանի իմն և ազդողագոյն անդրշողի սիրտս ամենեցուն»[3]*։ Հասկանալի է, որ այստեղ խոսքը վերաբերում է այդ ողբերգության ներգործող, էմոցիոնալ ուժին, ուրեմն և նրա գեղարվեստական արժանիքին։*

Ահա թե ինչ է գրում ռուս մեծ քննադատը Օզերովի «Դմիտրի Դոնսկոյի» մասին։ «Նրա (Օզերովի —Վ. Թ.) լավագույն պիեսը, անկասկած, «Էդիպն» է, իսկ վատագույնը «Դմիտրի Դոնսկոյը», այդ փքուն հռետորական ճառը, վերածված խոսակցության։ Այժմ ոչ ոք չի ժխտի Օզերովի բանաստեղծական տաղանդը, բայց դրա հետ միասին, հազիվ թե գտնվի մեկը, որ կարդա նրան, ևս առավել սքանչանա նրանով»[4]*։ Տալով Օզերովի դրամատուրգիայի ընդհանուր գնահատականը, Բելինսկին ասում է, որ Օզերովը «բառի բուն իմաստով դրամատիկ չէ, նա չի ճանաչում մարդուն»։*

Կարելի է միայն զարմանալ, որ այս և նման ասույթներից հետո փորձ է արվել «հայացքների ընդհանրություն» տեսնելու Բելինսկու և Տիգրանյանի միջև՝ կլասիցիզմի գնահատման հարցում։ Տիգրանյանը ամբողջովին գտնվում է կլասիցիզմի ազդեցության տակ։ Շեքսպիրի ստեղծագործությանը տված բարձր գնահատականը բոլորովին չի նշանակում, թե հայ

---

[1] *О. Олидор*, В борьбе за сценический реализм, изд. Искусство, Москва, 1957, стр. 23–24.

[2] *«Գոթողիա», էջ 66։*

[3] *Նույն տեղում, էջ 68։*

[4] *В. Белинский*, Собрание сочинений в трех томах, т. I, Москва, 1948, стр. 48.

տեսաբանը արդեն քննադատում է կլասիցիզմը։ Իսկ մենք գիտենք, որ Բելինսկին այդ շրջանում կլասիցիզմի երդվյալ հակառակորդն էր. Բելինսկու համար կլասիցիզմը պարզապես ռեակցիոն կաթոլիկության արվեստի փիլիսոփայությունն էր, իսկ կլասիցիզմի խոշորագույն տեսաբաններ Բուալոն, Բաթթյոն, Լահարպը և ուրիշներ՝ «մեծ ինկվիզիտորներ»։ Բելինսկին այդ շրջանում ռոմանտիզմի ջերմ պաշտպանն էր, այդ ուղղությունը համարելով «վերադարձ դեպի բնականությունը, հետևաբար դեպի ինքնատիպությունը և ժողովրդայնությունը արվեստի մեջ ... հնադարյան խորթ և անձուկ ձևերի տապալումը...»[1]։

Այն մարդիկ, որոնց Բելինսկին անվանում է արվեստի և գրականության «ինկվիզիտորներ», Տիգրանյանի համար անառարկելի հեղինակություններ էին, և նա իր աշխատության մեջ հաճախ հենվում է հենց Բուալոյի, Բաթթյոյի, Լահարպի, Մարմոնտելի և ուրիշ կլասիցիստների վրա։

Սխալ է նաև անալոգիա անցկացնել Բելինսկու և Տիգրանյանի միջև այն հիման վրա, որ երկուսն էլ բարձր գնահատական են տալիս Շեքսպիրին (թեև Տիգրանյանն այդ անում է որոշ վերապահումներով)։ Չպետք է մոռանալ, որ Շեքսպիրի առաջին մեծ գնահատողները հանդիսացել են հենց կլասիցիզմի նշանավոր ներկայացուցիչները բուն իսկ մեծ դրամատուրգի հայրենիքում, ինչպես օրինակ XVIII դարի անգլիացի նշանավոր բանաստեղծ Ալեքսանդր Պոպը, որին Տիգրանյանը համարում է Շեքսպիրի լավագույն քննադատը։ Մի այլ կլասիցիստ քննադատ՝ Ջոնսոնը համարվում է Շեքսպիրի լավագույն մեկնաբաններից մեկը։ Մենք չենք խոսում այլ քննադատների մասին, որոնք պատկանելով հանդերձ կլասիցիզմի ուղղությանը, վերին աստիճանի բարձր գնահատական են տվել Շեքսպիրի ստեղծագործությանը, իհարկե, որոշ վերապահումներով, որոնք շատ մոտիկ են Տիգրանյանի վերապահումներին և բխում են հենց կլասիցիզմի ոգուց։

Հայտնի է նույնպես, որ Վոլտերն էր առաջին անգամ ծանոթացրել Եվրոպային Շեքսպիրի հետ, անվանելով նրան «ուժով, բնականությամբ, արգասավորությամբ լի հանճար», որը սակայն «զուրկ է տարրական ճաշակից և կանոններից»։ Ճիշտ նման գնահատական էր տալիս Տիգրանյանը։ Կլասիցիզմի հետևորդները գնահատելով Շեքսպիրի հորդահոս հանճարը, որը Վոլտերը մի տեղ անվանել է «բարբարոսական», չէին կարող ընդունել մեծ դրամատուրգի ստեղծագործական ազատությունը ու նրանք համարում էին կամայականություն, ուժը՝ կոպտություն, գույների վառվռունությունը՝ չափի խախտում և անճաշակություն։ Նույնիսկ Դիդրոն և Լեսինգը զգուշացնում են Շեքսպիրին ստրկորեն նմանվելուց։ Սխալ է նաև այն պնդումը, թե Ռասինը իր «Գոթոլիա» ողբերգության մեջ խախտել է կլասիցիզմի նորմաները և հանդես է եկել միապետության դեմ, թե իբր, այդ երկը հակամիապետական գործ է։ «Գոթոլիայի» մեջ իրականում ոչ միայն գոյություն չունի հակամիապետական տրամադրություն, այլև այդ

[1] *В. Белинский*, Собрание сочинений в трех томах, т. 1, Москва, 1948, стр. 54.

ողբերգությունը հենց մի ապոթեոզ է միապետության գաղափարին։ Այնտեղ ծերունի քահանայապետը, զորավարը, իշխանները ծունր են չոքում իսկական միապետի առաջ, որը հազիվ ութ տարեկան է։ «Գոթողիայի» մեջ բողոք կա ոչ թե միապետության դեմ, այլ «օրինական» արքայի գահը հափշտակող, ոճրագործ միապետների դեմ։ Խոսքը վերաբերում է բռնակալ միապետներին տապալելուն և նրանց փոխարեն օրինական, բարի և ժողովրդասեր միապետներ հաստատելուն։ Ճշմարիտ է, «Գոթողիա» ողբերգությունը քաղաքական ուժեղ բովանդակություն ունի, ըստ էության ուղղված է բռնակալության դեմ, սակայն այդ պիեսի մեջ կրոնական էնտուզիազմը հասնում է իր գագաթնակետին։ Թագավորները դատապարտվում են երկնային թագավորի հրամանով։ Պիեսի բիբլիական-կրոնական այս բնույթով կարելի է մասամբ բացատրել, որ Սարգիս Տիգրանյանից հետո Ռասինի այդ ողբերգությունը թարգմանել են նաև Մխիթարյան բանաստեղծ վանականները, ոչ թե մեկ, այլ երկու անգամ։

Իր գրելաձևով և գաղափարներով Տիգրանյանն ամբողջովին գտնվում է կլասիցիզմի ոլորտում, նա լրջորեն օգտագործում է հունական միֆոլոգիայի ամբողջ արսենալը, կլասիցիզմի նորմատիվ էսթետիկայի և պոետիկայի օրենսգիրքը, մազաչափ շեղում չի կատարում դեպի գրական նոր ոճը՝ ռոմանտիզմը։

Այստեղ հետաքրքրական է նշել, որ Տիգրանյանը առաջինն է հայ գրականության մեջ գործ ածում կլասիցիզմ և ռոմանտիզմ տերմինները, նույնիսկ Բելինսկուց առաջ, որի «Գրական երազանքները» այն ժամանակ դեռևս լույս չէին տեսել։

Խոսելով ողբերգություն հորինելու երկու եղանակների մասին, Տիգրանյանը մի եղանակը անվանում է հին, իսկ մյուսը՝ նոր։ Ծանոթագրության մեջ նա բացատրում է, որ այդ բաժանումը քաջ հայտնի է արդի բանասիրաց «խորհրդով փոխեցի զկլասիցիզմոն և զռոմանտիզմոն[1] նոցա ի հին և ի նոր»։

Ահա ինչպես է նա բնորոշում այդ եղանակները. «Ըստ եղանակի շարադրութեան եղերերգութիւնն է հին (այսինքն կլասիցիստական—Վ. Թ.) ճիշտ ի կանոնապահութեան, որ ընիկ իմն վսեմութեամբ կատարելագործէ զկազմուածն ողջոյն, կամ նոր՝ մերթ օտար երից միութեանցն, և մերթ բովանդակիչ ոչ արգոյից և մեծարուաց. յորում հանդիման լինին տեսարանք և բնավորութիւնք կատակերգադէպ, սնոտիապաշտութիւնք հասարակաց, հմայք, դյութահարութիւնք, կերպարանափոխութիւնք, միով բանիւ՝ միջին ժամանակացն ծնունդք այլազան. մուծաւ անդանոր յապայն և սէր, որ և եղև կարևոր և միակ նպատակ արդի եղերերգութեանց»[2]։

Տիգրանյանը նույնպես գտնում է, որ ողբերգությունը նպատակ ունի «կրթել զիշխանս փառահեղ», «Անդանոր բացարձակ ինքն իշխանութիւն բռնակալ տեսանէ զիւր կորուստ»։ Ուրեմն, ողբերգությունը ոչ միայն ժո-

[1] Ըստ երևույթին տերմինները գործ է ածվում հունարենի հետևողությամբ։

[2] «Գոթողիա», էջ 86. այստեղ Տիգրանյանը հիշատակում է նաև Շլեգելին։

ղովրդին, այլև արքաներին և իշխաններին դաստիարակելու միջոց է. ուրեմն դա մի տեսակ «Արքաների դպրոց» է։ «Գոթողիա» ողբերգության մեջ նույնպես խրատ կա թագավորներին ուղղված, և ոչ թե պայքար միապետության դեմ։

Այսպիսով, Տիգրանյանը տեղյակ էր ժամանակի գրական շարժմանը և հոսանքներին, նրան ըստ երևույթին ծանոթ էին կլասիցիզմի և ռոմանտիզմի միջև մղվող մարտերը։ Թեև ըստ երևույթին նա գիտեր Պուշկինին և նրա դրամատիկական հռչակավոր գործը՝ շեքսպիրյան ոգով գրված՝ «Բորիս Գոդունովը», բայց այդ մասին ոչ մի խոսք չկա Տիգրանյանի ընդարձակ աշխատության մեջ. դրա փոխարեն կա Սումարոկովի և Օզերովի դրամատուրգիայի անվերապահ գովասանություն։ Հետևաբար ոչ մի հիմք չկա «գեղեցկացնելու» պատմությունը, վերագրելով մի մարդու այնպիսի հատկանիշներ, որ նա չի ունեցել, ռոմանտիկ կամ համարյա ռեալիստ հռչակելով մի տեսաբանի, որ շատ հեռու է եղել այդ ուղղություններից։

Այնուամենայնիվ Տիգրանյանը իբրև կլասիցիզմի գրական հայացքների պաշտպան անկասկած հետաքրքիր երևույթ էր ժամանակի հայ իրականության մեջ։ Այդ շրջանում հայ գրականությունը դեռևս ապրում էր միջնադարից դեպի նոր շրջան անցնելու պրոցես։ Հասկանալի է, որ այդ պայմաններում կլասիցիզմի ոգով տրված գրական դաստիարակությունը կարող էր օգնել թոթափելու միջնադարյան սխոլաստիկայի և դոգմատիկայի լուծը։ Անհրաժեշտ էր լուսավորել մարդկանց գլուխները, իսկ բանականության, ճշմարտության, մտավոր դիսցիպլինայի, կարգ ու կանոնի վրա հիմնված կլասիցիզմի պոետիկան դեռևս կարող էր օգնել ազատվելու միջնադարյան միստիկայի հետևանքով ստեղծված և սնոտիապաշտություններով սրբագործված գրական շտամպներից, յուրահատուկ գոթական ֆորմալիզմից, բանականության և առողջ դատողության դեմ մեղանչող ձևերից։ Զուր չէ, որ Տիգրանյանը միջնադարի արդյունքն է համարում սնոտիապաշտությունը, դյութահարությունը, կերպարանափոխությունը և այլ հրաշազան հնարները, որոնք մերժվում են կլասիցիզմի պոետիկայի կողմից։

4

Ականավոր գիտնական Մանուկ Աբեղյանը հայկական կլասիցիզմի գրականությանը բավական ընդարձակ էջեր է նվիրել «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորում։

XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի հայ գրականության հիմնական գաղափարը Աբեղյանը համարում է հայրենասիրությունը, որը դեռևս «չի կտրված կրոնական-եկեղեցականից»։ Աբեղյանը վերլուծում է այդ շրջանի հայ պոեզիան, գլխավորապես քնարերգությունը, որը ունեցել է մեծ չափով խրատական-բարոյական, դիդակտիկական և որոշ չափով սիրային թեմատիկա։ Այն բոլոր գծերը, որ գտնում է Աբեղյանը այդ պոեզիայի մեջ, հատկանշական և տիպական են կլասիցիզմի ոճի համար։ Այդ շրջանի հայ բանաստեղծներից շատերը ներբողներ են գրում, որոնց մեջ տի-

րապետում էր ճարտասանությունը, միակերպ սառը նկարագրությունը։ Բանաստեղծական այդ երկերում մենք գտնում ենք ավելի շատ դատողություն, մտահայեցողություն և իմաստասիրական տրամաբանություն՝ ֆորմալ լոգիկայի հիմունքներով, քան կենդանի հույզ և ոգևորություն։

Օրինակ, դարասկզբին Պոլսում լույս տեսած մի գրքույկում, որը կրում է «Ներբողական Սրբո Աթոռին էջմիածնի» խորագիրը, հեղինակը (Աստաբադցի Աբրահամ Վարդապետը) Արիստոտելի տասն ստորոգություններով (կատեգորիաներով) ապացուցում է «էջմիածնի գերազանցությունը»։ էջմիածինը գովելի է, գրում է նա, «ըստ գոյացութեան, ըստ քանակութեան, ըստ առնչութեան, ըստ որակութեան, ըստ երբին, ըստ ուրին» և այլն։

Բերելով վարդապետի սխոլաստիկական այս մտահղացումը, Աբեղյանը իրավացիորեն նկատում է. «Մարդ սպասում է, թե էջմիածնի համար մի կենդանի ներբող կգտնի, որի մեջ ցույց տրվի նրա նշանակությունը հայ կյանքի մեջ, նրա կատարած դերը և տեղը, գտնում է մի ահագին կուտակություն Սուրբ գրքի վկայությունների, որը ծայրահեղ աստիճանի սխոլաստիկ մեկնություններով հարմարեցրած են էջմիածնի վրա»[1]։ Դարասկզբի քնարերգուների պոեզիան նույնպես մեծ չափով կրում է սխոլաստիկայի դրոշմը, միջնադարյան ձևերը դեռևս մնում են ոտանավորի պայմանականությունները, ակրոստիխը՝ տների սկզբի տառերից բառեր (մեծ մասամբ հեղինակի անունը) կազմելը, վարդ ու սոխակի այլաբանության հեղհեղումները, բնության վերացական նկարագրությունները։

Գրիգոր Գապասախալյանը 1803 թվականին Պոլսում լույս է ընծայում իր «Երգարանը», որտեղ աստծուն, մայր աստվածածնին նվիրված խրատական-բարոյական երգերի կողքին կան նաև վարդին ու երգնակին, բնության գեղեցիկ տեսարաններին նվիրված տաղեր, որոնց մեջ շոշափվում է նաև սիրո թեման։ Ճիշտ կերպով բնորոշելով Գապասախալյանի պոեզիան, Աբեղյանը գրում է. «Մենք այստեղ տեսնում ենք, որ տաղասաց դպիրը սիրահար է բնության, գարնան, վարդի ու երգնակի (սոխակի), որոնց և վերաբերում են տաղերի խոշոր մասը։ Բայց նա բնություն երգելով հանդերձ, բնություն չի տեսնում, նրա երգածը երկինքը չէ, այլ միջնադարյան երևակայության երկինքը... մի «գերակայան», մի «րախճանական տեղ ցնծութեան, յորում բարիքն երանութեան», մտքից ու խելքից վեր մի լուսավոր տեղ, մի «անսյուն խորանայակ» լայն-ընդարձակ, ուր սրբերի հոգիներն են կենում ... դա կրոնական հայացքով երկինք է, «Վերին Երուսաղեմը»... այսպես, «գեղեցկատեսիլ յերեսս երկնի կարի ցանկալի, արծաթանման բոցաճաճան։ յոյժ զարմանալի», աստղերը նյութ են դառնում ոտանավորի ոչ թե իրենց թողած տպավորությամբ, այլ իրենց մասին եղած ավանդություններով, հավատալիքներով ու սնոտիապաշտություններով»[2]։ Հասկանալի է, որ նման ձևով նկարագրված բնությունը

1 Մ. Աբեղյան. Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2, էջ 471։

2 Նույն տեղում, էջ 473։

կենդանի բնության տրամադրություն չէր կարող զարթեցնել ընթերցողի մեջ։

XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի հայ գրողները, տվյալ դեպքում քնարերգու բանաստեղծները, նոր էին սկսում թոթափել իրենց ուսերից միջնադարյան սխոլաստիկայի բեռը և դեռևս զգալի չափով կրում էին կրոնական դոգմաների ազդեցությունը, որը կաշկանդում էր նրանց ստեղծագործական թռիչքները։ Սակայն նոր շրջանի ոգին անդիմադրելի ուժով ներս էր թափանցում։ Նույն Գրիգոր Գապասախալյանի մի բանաստեղծության մեջ, արդեն խախտվում է դոգմատիզմի, միջնադարյան սխոլաստիկայի ազդեցությունը, բանաստեղծության մեջ մուտք է գործում ոչ միայն աշխարհիկ ոգին, այլև սենտիմենտալ հուզականությունը, ռոմանտիկական տխրությունը, որ մի քանի տասնամյակ հետո դառնալու էր պոեզիայի լեյտմոտիվը։ Հետաքրքրության համար այստեղ բերում ենք Գապասախալյանի այդ ոտանավորը, որ անկասկած պատկանելով հանդերձ կլասիցիզմի ոճին, մի տեսակ անցում է դեպի սենտիմենտալիզմը.

Արի սեր իմ, արի երգեա ցնծալի.
Եղանակաւ՝ միշտ քաղցրաձայն բաղձալի.
Ահա եհաս գարուն ծաղկեալ՝ սիրալի.
Սիրտ վշտալի՝
Ես վիրալի
Վարանեալ
Եմ սգալի
Միշտ խղճալի
Ընկեցեալ։
Ողբերգական երգով եկ ձայն արձակեա.
Ինձ յալագին եղանակաւ ձայնակցեա
Ձայն գովելի՝ երգ ցանկալի դու երգեա...[1]

Կյանքից կտրված, անկենդան պոեզիա ասելով Աբեղյանը հասկանում է Մխիթարյան բանաստեղծների կլասիցիստական պոեզիան, որն ունեցել է մոտավորապես ոճական և գեղարվեստական նույն հատկանիշները, ինչ արևմտաեվրոպական և ռուսական կլասիցիզմի լիրիկական նմուշները։

Հայկական կլասիցիզմի Մխիթարյան հինգ առաջին բանաստեղծներն են՝ Ղուկաս Ինճիճյանը (1758—1833), Գաբրիել Ավետիքյանը (1751—1825), Մանուել Ջախջախյանը (1770—1835), Եղիա Թովմաճանը (1777—1848)[2] և Արսեն Բագրատունին (1790—1866)։

Հիշված բանաստեղծներից միայն Բագրատունուն կարելի է համարել պրոֆեսիոնալ բանաստեղծ այսօրվա առումով, թեև Բագրատունին ևս իր հսկայական հմտությամբ և հայագիտական ընդարձակ գիտելիքներով հանդիսացել է նաև գիտնական բանասեր։

1 Գրիգոր Գապասախալյան. Երգարան, Պոլիս, 1803։

2 Չգիտես ինչու այս գրողի անունը աղավաղվելով դարձել է Թովմաճյան։ Իրականում նրա ազգանունը եղել է Թովմաճանյան, որի կրճատ ձևն է Թովմաճանը, որ ինքը հեղինակը գործ է ածում իր ինքնուրույն և թարգմանական երկերը («Ոդիսականը») ստորագրելիս։

Ղուկաս Ինճիճյանը հայտնի է գլխավորապես որպես հնախոս և աշխարհագետ, Մանուել Ջախջախյանը նույնպես թարգմանիչ և բանասեր է եղել, իսկ Թովմաճանը նշանավոր թարգմանիչ, որն անմահացել է իր Հոմերոսի «Ոդիսականի» առաջին հայ թարգմանությամբ։

Հայկական կլասիցիզմի տիպական ներկայացուցիչներից կարելի է համարել նաև Եդվարդ Հյուրմյուզյանին (1799—1876), որը նույնպես բանաստեղծ է և թարգմանիչ, իսկ դրամատուրգիայի ասպարեզում կլասիցիզմի խոշորագույն դեմքերից և տեսաբաններից է Պետրոս Մինասյանը (1799—1867)։

Մխիթարյան այս բանաստեղծների երկերը մտել են (1852—1854) երեք հատորով հրատարակված «Տաղք Մխիթարեան Վարդապետաց» գրքի մեջ։ Այդ հատորներում մեծ թիվ են կազմում «բռնահանգ» և «բռնակարգ» ոտանավորները։ Հասկանալի է, որ ֆորմալիստական այս հնարը չէր կարող չանդրադառնալ բանաստեղծությունների բովանդակության վրա, տալով նրանց զգալի չափով արհեստական, բռնազբոսիկ հորինվածքի բնույթ։ Սակայն այդ «բռնահանգը» սոսկ ձևական խաղեր չեն։

Մանուել Ջախջախյանը մեկն է մխիթարյան այն բանաստեղծներից, որոնց երկերում ամենից ավելի արտացոլվել են իր ժամանակի քաղաքական անցքերը, նույնիսկ բնագիտական և բանասիրական պրոբլեմները։ Ջախջախյանի «բռնահանգերում» կան այնպիսի ուշագրավ տեղեր, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց շահեկանությունը։ Դրանցից մեկն է, օրինակ, «Ի պարսավադիրս նախնեաց» վերնագրով երգիծաբանությունը, որի մեջ հեղինակը պատասխանում է այն մարդկանց, որոնք արհամարհում են անցյալը և պարսավում հինը, առանց գնահատելու անցյալից ժառանգություն մնացած արժեքները։ Այդ բանաստեղծության մեջ Ջախջախյանը հիշատակում է այնպիսի գիտնականների անուններ, ինչպես Բյուֆոն, Շապտալ, Բոյերհավ, Նյուտոն, Մոնտեսքյո։ Բերում ենք այն տունը, որը վերաբերում է հին չինացիներին, հնդիկներին, բաբելացիներին և քաղդեացիներին, որոնք ամենից առաջ են ստեղծել օրենսդրությունը, տոմարը, աստղագիտությունը.

Եւ ճենք օրենս հրամանատար
Կընքէր հակիրճ բայց և յարմար.
Ըզմոնթեսքեայ մատեան ըստուար
Դեռ չէր տըպեալ ախտոյ ճարտար։
Եւ ի թըոց գաղտնի համար
Կանխեաց հնդիկ դերահանճար.
Կարուց ստեղց հարմարակար
Եղեն Քաղդեայք, Բաբել և Մար[1]։

---

1 «Տաղք Մխիթարյան Վարդապետաց», 1853, հատ. Բ, էջ 31։

Խոսքը վերաբերում է Մոնտեսքյոյի „Esprit des lois“ «Օրենքների ոգին» գրքին, որը լույս է տեսել ֆրանսիական հայտնի ֆիրմայի Դիդրոյի հրատարակությամբ։ Ուզում է ասել, որ հռչակավոր օրենսգետը լուսավորության դարի խոշորագույն դեմքերից մեկից՝ Մոնտեսքյոյից շատ առաջ չինացիները ստեղծել էին հակիրճ և հարմար օրենքներ։

«Մուսայն առ արամեան քերթող» բռնահանգում, որի մեջ տրված են կլասիցիստական պոեզիայի մի քանի կանոնները, բանաստեղծը բողոքում է հենց ֆորմալիզմի դեմ և պահանջում է ուշադրություն դարձնել ոչ թե բառերին, այլ իմաստներին, զգուշանալ տաղտկալի միօրինակությունից և հաճախ փոփոխել նյութերը և ոճը: Հետևելով Բուալոյին, Ջախջախյանը խորհուրդ է տալիս.

Լիշիր պատկառ յազգազգ նյութոց զոճ փոփոխել,
Զէ քաղցր երգիչ որ զմի ուսաւ զլար բախել...[1]

Այս բանաստեղծության մեջ արտացոլված են իր ժամանակի քաղաքական անցքերը, որոնցից ամենանշանավորն էր Հունաստանի ազգային-ազատագրական պայքարը օսմանյան բռնակալության դեմ: Հիշատակված է Նավարինի հռչակավոր ճակատամարտը, երբ անգլիական, ֆրանսիական և ռուսական ծովային միացյալ ուժերը խորտակեցին թուրքական հսկա նավատորմը: Դեպքը կատարվել է 1827 թվականին, իսկ Ջախջախյանի բանաստեղծությունը գրված է մի տարի անց: Ջախջախյանը գրել է երեք բռնահանգ բանաստեղծություն, նվիրված Հունաստանին: Առաջինը «Գովեստն» է, երկրորդը՝ «Պարսավը», իսկ երրորդը՝ «Ջեղջը» (այսինքն զղջում պարսավի համար): Երեք բանաստեղծություններն էլ նույն հանգերով են գրված: Աբեղյանը այդ ոտանավորները անվանում է «տաղաչափ խաղեր», առանց հաշվի առնելու նրանց կոնկրետ բովանդակությունը: Մեզ համար կարևորն այն է, որ հայ բանաստեղծը հավատում է հունական վերածննդին, հույն ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, որը կծնի իր նոր Հերակլեսը, Թեսեոսը, Աքիլլեսը, կծնվեն նոր Պղատոններ, նոր Թեոկրիտներ, նոր Սոֆոկլեսներ: Այն, ինչ չկարողացավ անել գոռ Քսերքսեսը, այսինքն կործանել Հունաստանը, այժմ չեն կարող անել նորահաս անզոր ճագարները,— այսպես է անվանում Մխիթարյան բանաստեղծն Օսմանցի թուրքերին.

Թէ ոչ ուժեաց կալ առաջի գոռ Քսերքսես,
Զի՞նչ նորահաս անզօր ձագար զոր դու քերբես:

---

[1] Նույն տեղում, էջ 37:

Sans cesse en écrlvant verier vos discours
Un style trop égal toujours uniforme
En vain brille à nos yeux, il faut quil nous endorme.
On lit peu ces auteurs, nes pour nour ennuyer.
Luï toujours sur un ton semblent psalmodier.

Գրելիս անընդհատ փոխեցեք ձեր խոսքը,
Միահավասար և խիստ միալար ոճը
Կարող է միայն մեզ քուն բերել,
Չեն կարդում երբեք այն հեղինակներին, որոնք
ծնված են մեզ ձանձրացնելու
Որոնք նույն տոնի վրա անվերջ սաղմոսերգում են:

Boileau. „L'Art Poétique", Paris, 1906, p. 5.

Այս առաջին բանաստեղծությունն ուղղված է Առան Սիսակյանին (Ա. Բագրատունու կեղծանունը), որը Հունաստանի և նրա հարուստ կուլտուրայի ջերմ պաշտպանն ու ջատագովն էր։ Դիմելով իր պոետ բարեկամին, Ջախջախյանը բանաստեղծության վերջում հարցնում է.

Ե՞րբ կասեսցէ բազմադարեան արեան ճապաղ,
Ընդ հայրենեան որթովք նստցուք մենք անզրաղ[1]։

Բանաստեղծը հույն ժողովրդի ազգային ազատագրության կապակցությամբ հիշում է իր հարազատ ժողովրդի վիճակը, Հայաստանը, որը դեռևս ճնշված է, և երանի է տալիս այն օրին, երբ ինքը և իր ընկեր բանաստեղծը անհոգս և հանգիստ կնստեն հայրենի խաղողի այգում։

Նստի մըշակ ընդ հովանեաւ ի բարտի,
Լայ զիւր վաստակ ծածկէ զլալիս զոր պարտի,
Հայի ի քիրտն յամարայնի ւ ի գարուն,
Ոչ իւր մընայ մեղուացն անմեղ գունդ պարուն.
Ջհօտ իւր խըլէ Մար հուղկահար շոյտ ի քայլ.
Ոչ թե զմին որպես Ներող քան զայն գայլ...
Դարձցի մաղթեմ անդրէն Մասիս և Մարանդ,
Կանգնել ձեզ սուրբ տաճար ի կորդ ի մարմանդ.
Եւ ես առեալ զիմ կրնդկրնդոց ընդ լարի
Յանդրին ալեաց ցոտս անդ Մասսեայ դալարի,
Նըւագեցից զերկնից առ մե սուրբ օճան,
Երգոց պարուց հիւսել նրվագ անվախճան[2]։

Արսեն Բագրատունու բանաստեղծությունների մեջ կան «Սթափականք» վերնագիրը կրող մի քանի երգիծական-կենցաղային տաղեր։ Դրանցից է «Ի Հերիսայն» բռնահանգը, որը աշխարհիկ բանաստեղծության հետաքրքիր նմուշ է։ Այնտեղ գովաբանվում է հերիսան, որպես կերակուրների «դերաղանցը».

Կոփինք սանին հընչեցին ձայն ուետեաց՝ Հերիսայ
Շուրջ պար առել երգեսցուք, հայեցան աչք մեր ի սայ։

Երբ հարիսան մեջտեղ է գալիս ճաշոց, մաշտոց, ժամագիրք մոռացվում են, արեղարող *մանուկները իրենց բոլորովին ազատ են զգում.*

Հերիսային տոնական հրսկման մեծի դու գիշեր,
Ջարեղաթող մանկտւոյս ըզմեղս մեր մի յիշեր։

Յորժամ յաւուրն հանդերձեալ բազմահանճար քոյդ եփոց
Եւ զցորեան լի ատոք սրբեալ փայլուն ի թեփոց,
Ճաշոց, մաշտոց, ժամագիրք մեք մոռացար յայն խրախճան
Եւ ի դոփիւն կաթսային պարս յօրինեալ ցվախճան...

---

1 «Տաղք Մխիթարյան վարդապետաց», հատ. Բ, էջ 66։
2 Նույն տեղում, էջ 165։

Հերիսային երգարանս՝ խոհանոցին սեաւ ի մեղծ
Մինչդեռ նստեալ տողեի զբաղմաքանդակ տողս իմ եղծ
Ուղապարար ջերմաջերմ շրջեալ պուտանն արգանակ,
Եւ մոռացա գնլուագայ գեղգեղաձայն եղանակ։

«Ափսեի և սկահակաց սրճոյ» երգիծական բանաստեղծության մեջ Բագրատունին ծաղրում է հայերեն լեզվի մաքրության աղարտողներին.

Փող հարկանեմ հրաւիրանաց, զուռնա չալեմ բիրկրաձայն,
Եկայք ի սուրճ, տեսեք մոտա Թեփսի ճարտար ի սուփրայն...
Ջերդ Հոմերոս քերթողահայր չորիք Յունաց բարբառով,
Ջայս երգեցի հայոց քառեակ տիալեքթից մոդայով.
Դուք թե Ջհայկաւ արկչիք շափղայ, ճիլի, խաւուղ և պուռնուզ,
Կազմ է որ թուք, թեքմե, եումրուխ որոտընդոստ հարկան
Վ·սրէ զհնկայն մերկ անբարբառ անփանթալոն ի տանէ[1]։

Ա. Բագրատունու բանաստեղծությունների մեջ ուրույն տեղ է գրավում Ալեքսանդր Առաջնի այցելության առթիվ գրած ներբողը՝ «Պատուեալ յոտին Աղեքսանդրի կայսեր ռուսաց վանք Մխիթարեանց» (գրված 1822 թվականին).

Դու որ հզօր աջովդ ունիս զպաղեալ Բևեռն աշխարհի,
Յակն Երասխայ ձրգես զահեակդ և զԿովկասաւ հովանի,
Որում ալիք չորից ծովուց սարսեն ի սաստ հրամանի,
Եւ զկարկաջոտ սանձես ոլորս ուղխից Վոլկայ, Տանայսի[2],

Քան զկեսար նախնոյն Հռովմայ և զգումարտակ արիսեան
Արձակացեր զԹևս քո կանգնել քեզ ցանկ և սահման
Ուր տաւաղեալ բղհոլյս հոտից հովուես ի մի գաւաղան,
Տաս բազմաձայն քան Կապիտոլ լեզուաց օրենս և պայման...

Այդպիսիդ դու, Աղեքսանդրէ, ինքնակալ վեհ գերակա,
Յիմե չարժեալ երկիր ի տես խոնարհ հարկի Մխիթարայ.
Բայց թե ոգին պահպանական տան և գրոհին Արամայ,
Որ մերթ ազգին վարատելո քաղցր այցելու սրլանայ,

Մերթ ղարանեալ առ Երասխաւ ի գլուխս քոց սահմանաց
Նստի արթուն դետ հպահապան ընդդեմ հինից ոսոխաց,
Նույն անշուշտ դրդեաց դքեզ յայս ձիր պատուոյ պարծանաց
Ընձեռնեալ մեզ յառատասիրտ քում դիւցազին պարգևաց։

Ահեղ տեսիլդ որ ի շաչիւն զինուց ի հրոյ ճայթմանէ
Յարինագիծ կաքաւս ոտից կայթս Արիսի հարկանէ,
Արդ հեզաքայլ ի ճեմ գնալով զուարթ ժպիտ փայլակէ
Ի լուռ հանգիստ հայ Մուսայից վրտարանդի աշխարհէ....

---

1 «Տաղք Մխիթարյան վարդապետաց», հատ. Բ, էջ 237։
2 Դոնի հնագարյան անունն է։

Սորա, վեհագն, արդ կան լռեալ յոթարութեան տաղաւար,
Կամ ի մըմունջ առնուն տաղից փող և տաւիղ և քնար,
Է յամօրել զաղի վիժակս որ ակուսն գայտս արդար...
Էր իսկ վայել իշխեցողիդ ոչ խուն մասին Հայկազանց,
Որ ընդ թևոք քո հովանեաւ ցընծան ի բոստ գերազանց...

Այսուհետև առ կաթոգինն քո Նեվա դարձիր արդ
Տարեալ բըհայրդ, ըզսիրելիդ և զդիցատիպ փառաց զարդ
Ե. Վոլքոնսքի որչափ փըթթէ փունջ տերևոց բարդ ի բարդ
Բողբոջեսցին ի քում դարաստ սիրտք երջանիկ շնորհապարտ։

Իր համոզմունքներով կլասիցիստ-տեսաբան Եդուարդ Հյուրմյուզյանը լիրիկ բանաստեղծ է հովվերգական թեքումով։ Նա ունի դիալոգաձև չափածո «Հովվական գեղոնք»։ Դրանցից առաջինն է «Մայր և Դստրիկ» խոսակցությունը մոր և աղջկա միջև, որին վերջում մասնակցում է ծեր հովիվը։ Գեղոնի իմաստը կրոնաբարոյական է. չպետք է ողբալ մահացածների համար. եթե նրանք արդար են, ապա հանդերձյալ կյանքը երջանկություն է նրանց համար։ Երկրորդ գեղոնը Հովվի և Հովվուհու տրամախոսությունն է։ Հովիվը կորցրել է իր «ձյունաբույր» ոչխարը և ողբում է նրա կորուստը, կարծելով որ գայլերը կերել են, իսկ հովվուհին մխիթարում է նրան։ Հովիվը խոստանում է գոհ մատուցանել, եթե գտնվի ոչխարը։ Հանկարծ հովվուհին լճի մեջ արտացոլված տեսնում է ոչխարի պատկերը, որը կանգնած է բարձր բլրի վրա։ Հովիվը շնորհակալություն է հայտնում գեղեցիկ հովվուհուն, որին նա անվանում է «բարեաց դուշակ», գովում է նրա գեղեցկությունը, և ինչպես երևում է, սիրահարվում է նրան. սիրո մոտիվը միայն կարելի է կռահել, քանի որ մխիթարյան բանաստեղծին սյատշաճ չէր այդպես բացահայտ խոսել քնքուշ զգացումների մասին։ Հովիվը խնդրում է հովվուհուն հրավիրել դրացիներին, որ գան միասին ուրախանալու խոստացված մատաղի վրա։

Չորրորդ գեղոնը՝ «Ծերունին մերձ ի մահ և ընտանիք իւր», հովվական կյանքի մի իդիլլիկ նկարագրություն է։

Ուշագրավ են Հյուրմյուզյանի բանաստեղծությունները՝ նվիրված դպրոցական թատրոնին.

Մինչ զԵւրիպիս և զՍոքլիդ
Հայաբարբառ ի թատեր
Եւ սոփոկղեան նոր տավիղ
Ածև ի նուագ մանկտին մեր...

Մի այլ բանաստեղծության մեջ ասում է.

Մարգերդ թե չեմ.
Թըվեցեալց թող մոզ.
Ճարտարքն ողբելգուք
Գայցէ ժամանակ.
Զի զմեծ ես եղուկ
Արկացեն յեղանակ։

«Առ նորընծա մանկտին դերասան» բանաստեղծությունը սկսվում է այսպես.

Այժմ ի թատեր մինդ և ռամիկ,
Ի թագաւոր միւսդ ծպիտ,
Կերպաանեալ ի ձև ճշգրիտ,
Ո Սոփոկլի համբակք մարզիկք…

Մի այլ տեղ մանուկ դերասանների հաջող խաղի մասին բանաստեղծը երգում է.

Մանրերամ մանկտին
Զանձնիւր կերպարան,
Քաջ ձևացուցին
Յախորժ տեսարան։

1830 թվականին բեմադրված Կոռնեյլի «Պոլիկատոս» («Պոլիյոկտ») ողբերգության դերակատարներին նվիրված երգը այդ ողբերգության համառոտ մի վերլուծությունն է, որով փառաբանվում է հայազգի նահատակը.

Շանթընկեցիկ ի գնդլն
Ի զօրս երկնից վառեալ
Խաչիւ վառեալ կենազեն…

Բանաստեղծը տալիս է այդ ողբերգության բոլոր գործող անձերի՝ Փելիքսի, Պավլինեի, Նեարկի բնութագիրը։

Հետաքրքրական է նշել, որ Հյուրմյուզյանը իր բանաստեղծությունների մեջ հաճախ կիրառում է եռատող տունը, որը որոշ չափով նման է տերցինի, օրինակ.

Ընդեր, մայրիկ իմ արտասուես.
Պատմեա լռվիշտ սրտի քո ինձ,
Գեթ վրշտակից եղեց ընդ քեզ։

* * *

Անցյալ դարի առաջին քառորդը հայ դրականության մեջ ընթացել է հիմնականում կլասիցիզմի նշանաբանի տակ։ Նույնիսկ այն գրողները և բանաստեղծները, որոնք միայն ունեցել են «հայ ուսում», ինչպես գրում է Արեղյանը, ակամա տուրք են տվել կլասիցիզմին։ Այդ գրողներից է Հովհան Միրզա Վանանդեցին, որը Աբեղյանի խոսքերով «նույնպես հին դպրոցի մարդ է և յուր մեջ կրում է յուր ժամանակակիցների բոլոր պակասությունները բանաստեղծական արվեստի նկատմամբ»[1]։

Վանանդեցու ժամանակ դեռևս չէին հրատարակված Հոմերոսի և Վիրգիլիոսի գրաբար թարգմանությունները, ուստի և Վանանդեցին չէր կարող ազդված լինել նրանցից։ Մնալով ինքնուրույն ստեղծագործող,

[1] Մ. Աբեղյան. Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2, էջ 611։

անկասկած տաղանդավոր, Վանանդեցին զգալի թերություններ ունի գեղարվեստական ճաշակի, ոճի և գրական վարպետության ասպարեզում։ Ճիշտ է նկատել Աբեղյանը, որ Վանանդեցու ամենամեծ թերությունն այն է, որ նա ոչ մի գաղափար չունի գեղարվեստական երկի միության մասին։ Դա այն երեք միություններից գլխավորն է, որոնց ջերմեռանդ պաշտպաններն էին կլասիցիստները։ Վանանդեցին մնում է ինքնատիպ տրադիցիոնալիստ, ավելի հետևում է հայ դասական հեղինակներին, քան օտարներին, թեև նա էլ երբեմն դիմում է հունա-հռոմեական դիցաբանության պատկերավորության զինանոցին, այնպես, ինչպես արել են Խորենացին և հայ մյուս դասականները իրենց ժամանակին։

Սակայն Վանանդեցու պոեզիայի գլխավոր արժանիքը նրա բովանդակությունն է, այն համահնչուն է դարաշրջանի հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարին, որ հանդիսանում է հայկական կլասիցիզմի հիմնական ոգեշնչող ուժը։ Վանանդեցին իր պոեզիայում շոշափում է հայ ժողովրդի քաղաքական ազատության խնդիրները, որի ոգևորիչ զգացումը հայրենասիրությունն է։ Ճշմարիտ է, Վանանդեցին դեռևս բիբլիական պատկերացում ունի հայ ժողովրդի անցյալի մասին։ Հայաստանը համարելով «Երկիր դրախտավայր, մարդկայնո ցեղիս օրրան», նա չի բավականանում դրանով։ Պատմական անցյալը միակ ոգևորիչ աղբյուրը չէ Վանանդեցու համար։ Նա իր գրչով մասնակցում է ժամանակի գաղափարական պայքարին՝ հանուն հայ ազգի միասնության, ընդդեմ կրոնական երկպառակության։ Բողոքական միսիոներների քարոզի դեմ նա գրում է.

Մունչ կարկեսցի. մեզ չէ պիտոյ Ամերիկեան սին քարոզ...
Մանկունք Հայկեան, մի յայնոսիկ իղձս լայնէք վայրապար.
Մի ընթեռնուք զգիրս նոցա, ուր իմաստութեան չիք նպար։

Վանանդեցին առաջիններից է հայ պոեզիայի մեջ, որ կոչ է անում զենքի դիմել ինքնապաշտպանության համար։ Նա երեք միջոց է ընդունում ազգի պահպանության համար՝ գիր, սուր և արհեստ.

Ազգային գործոց երիւք վճարել փորձն մեզ յայտնեաց.
Ի գիր, ի սուր և յարհեստս ի պէտս հասարակաց։

Վանանդեցին զերծ է կրոնական մոլեռանդությունից, նա ընդունում է խղճի ազատությունը, չպետք է ատել օտարին, չպետք է ծաղրել նրանց ավանդությունները, որովհետև նրանց հայրերին հատուկ է եղել դրանց գործադրությունը։

Վանանդեցու պոեզիայի այս բոլոր հատկանիշները ապացույց են, որ նա, թերևս ինքն էլ չգիտակցելով, լուսավորության դարի կլասիցիզմի լայնախոհ, հումանիստական, ազատասիրական գաղափարների կրողն է հայ իրականության մեջ։

Վանանդեցին, ինչպես Ալամդարյանը և Թաղիադյանը, պատկանում է հայկական կլասիցիզմի շրջանի այն գրողների թվին, որոնք հող էին

պատրաստում գրական-հասարակական նոր շարժման համար, մի ոտքով կանգնած էին հին աշխարհի, մյուս ոտքով նոր աշխարհի հողի վրա։ Նրանք լուսավորիչներ էին իրենց դարի բոլոր հատկանիշներով օժտված, որոնք ժամանակի և պայմանների բերումով հետզհետե անցնում էին դեպի գրական նոր շարժումը, որի հզոր խթանը հանդիսացավ աշխարհիկ լեզուն։

5

Հայկական կլասիցիզմը ամենից ավելի լրիվ և ցայտուն կերպով արտահայտվել է դրամատուրգիայի մեջ, որի զարգացումը սերտորեն կապված է թատրոնի հետ։

Մխիթարյան դպրոցական թատրոնը սկսում է զարգանալ XVIII դարի վերջին քառորդում, երբ սկսվում է նաև կլասիցիզմի զարգացումը։

Մխիթարյան թատրոնի կլասիցիզմը դրամատուրգիայից վտարում էր սերը և նրա հետ կապված այլ զգացումները, դրանց փոխարեն պետք է հանդես բերվեին այլ զգացումներ—հայրենասիրություն, քաղաքացիական պարտքի գիտակցություն, անձնվիրություն, ընկերասիրություն և այլ քաղաքացիական առաքինություններ։ Մխիթարյան դրամատուրգիայի մեջ երբեմն որոշակի լսվում են հասարակական-քաղաքական երևույթների արձագանքները, նկատվում է ազգային-ազատագրական շարժման անդրադարձումը։

Հայ դրամատուրգիայի կլասիցիզմը մեխանիկական կրկնությունը չէ ֆրանսիական կլասիցիզմի։ Մխիթարյանները չեն պահպանում երեք միությունները, տրադիցիոն **5** *գործողության փոխարեն գրում են 3 և չորս գործողությամբ պիեսներ։ Հայտնի է, որ ֆրանսիական կլասիցիստների պիեսներում գործողությունը մեծ մասամբ կատարվում է բեմից դուրս, իսկ բեմի վրա միայն խոսում և ճառում են։ Հայ կլասիցիզմի դրամաներում բեմի վրա ոչ միայն խոսում, այլ և գործում են։ Կարելի է բերել մի շարք օրինակներ։*

Առաջին պատմական ողբերգությունը բեմադրված Մխիթարյանների դպրոցական թատրոնում, որը հասել է մեզ՝ «Տիգրան» պիեսն է, որը ձեռագրում անվանված է «Խաղ Տիգրանա»։ Այդ պատմական պիեսը բեմադրվել է 1776 թվականին։ Պիեսի հեղինակներն են Մխիթարյան առաջին դրամատուրգները՝ Եղիա Էնտաացյանը և Վարդան Սահակյանը (Ղուլումջի կոչված)։ Պիեսը գրված է մաքուր գրաբարով և բարձր ոճով, առանց ավելորդ խրթնությունների՝ նկատի ունենալով, որ բեմի համար է սահմանված, իսկ հանդիսատեսների մեջ երբեմն լինում էին մարդիկ, որոնք լրիվին չէին տիրապետում դասական հայերենին։ Հայտնի է, որ Մխիթարյան թատրոնի այցելուների մեջ երբեմն լինում էին դրսից եկած հյուրեր, ճամփորդ հայ վաճառականներ, ուսանողներ և այլն։

Ողբերգությունը, հակառակ երեք միությունների կանոնին, բաժանված է ոչ թե հինգ, այլ երեք մասերի։ Այդպես էլ կոչված են՝ մասեր *(այն*

ժամանակ դեռևս արարված կամ գործողություն բառերը գործածական չէին)։

Պիեսի սյուժեն առնված է Խորենացուց։ Դա հայոց և մարաց Աժդահակ թագավորի միջև մղված պայքարն է։ Աժդահակը խորամանկությամբ թակարդի մեջ է ձգում հայոց արքայազն Տիգրանին, որը պատրաստվում էր մենամարտել իր հետ (ի դեպ, այս սյուժեն որոշ նմանություն ունի «Սասունցի Դավթի» մի էպիզոդի հետ)։ Սակայն գերբնական ուժերը ազատում են Տիգրանին, և սա մենամարտում սպանում է Աժդահակին։ Պիեսի հեղինակները Խորենացու հաղորդած պատմությունը հարստացրել են դրամատիկ տեսարաններով, աշխատելով մոտեցնել այն հունական ողբերգությանը։

«Արկածք Տիգրանա» պիեսը ըստ ժանրի կարելի է համարել հերոսական դրամա, գրված կլասիցիզմի ոգով, որը սակայն շատ զգալի կերպով վանազանվում է արևմտաեվրոպական նույնատիպ երկերից։ Հայ դրամատուրգները իրենց ողբերգությունը կառուցելիս ոչ միայն հետևել են Կոռնեյլի կամ Ռասինի դրամատուրգիային, այլև դիմել են հունական տրագիկներին՝ Սոֆոկլեսին և Էվրիպիդեսին, իսկ դրամայի տեսության բնագավառում՝ Արիստոտելին։ Օրինակ, «Տիգրանի արկածները» ողբերգության մեջ ճշտորեն պահպանված է Արիստոտելի պոետիկայում առաջադրված կանոնը պերիպետիայի և ճանաչման մոտիվների մասին, միայն այն տարբերությամբ, որ մխիթարյան դրամատուրգները չէին ընդունում ճակատագրի վճռական դերը, ինչպես մենք այդ տեսնում ենք հունական դրամայում։ «Տիգրանի արկածները» պիեսում առաջին պերիպետիան—երջանկությունից դժբախտության անցնելը—ավելի շուտ կատարվում է դրամատիկական անհրաժեշտության օրենքով, որը բխում է մարդկանց ազատ կամքից, չար և բարի մարդկանց գործերից։ Սակայն ճանաչման մոտիվը այս պիեսում տեղի է ունենում գերբնական ուժով, հեթանոսական Հերմես աստծու միջամտությամբ, այսինքն հրաշքով, մի բան, որ մերժվում էր կլասիցիզմի ռացիոնալիստական պոետիկայի կողմից։

Ե. Հյուրմյուզյանը պոետիկայի իր ձեռնարկում, ինչպես տեսանք, հունական ողբերգության թերությունն է համարում այն, որ նրանում աստվածների միջամտություն կար. «և որ թերութիւն մեծ է՝ հրաշիւք ուրեք-ուրեք լուծումն հանգուցին վճարեր»[1]։ «Տիգրանի արկածները» պիեսում հենց հանգույցի լուծումը հրաշքով է կատարվում՝ հեթանոսական Հերմես աստծու միջամտությամբ։

Համենայն դեպս վերին աստիճանի ուշագրավ է, որ մխիթարյան առաջին դրամատուրգները ստրկորեն չեն հետևել ֆրանսիական կլասիցիստական դրամատուրգիայի կանոններին և դիմել են այդ ժանրի հնադարյան վճիտ ակունքներին՝ հունական տրագեդիային և նրա տեսաբան Արիստոտելի պոետիկային։

[1] Հ. Է. Հյուրմյուզյան, Արուեստ բանաստեղծութեան, էջ 147։

Հայ կլասիցիստ դրամատուրգները զգալիորեն շեղվել են ռացիոնալիստական չոր սխեմաներից, ավելի ազատություն են տվել իրենց երևակայությանը, օգտագործելով նաև էպիկական և լիրիկական տարրերը, հայ ժողովրդական գրականության, բանահյուսության տրադիցիաները։ Աշագրավ է, օրինակ, որ «Տիգրանի արկածները» պիեսում անց է կացված այն միտքը, թե պատերազմի ժամանակ պետք է խուսափել հազարավոր անմեղ մարդկանց արյունը թափելուց, այլ հրապարակ բերել երկու կողմից առանձին ռազմիկներին, որոնք իրենց մենամարտով կվճռեն պատերազմի բախտը։

Հետևելով Արիստոտելի պոետիկայի այն դրույթին, թե ողբերգությունը պետք է վախ ու կարեկցություն հարուցի հանդիսատեսի մեջ, մեր դրամատուրգները իրենց գլխավոր հերոսին ենթարկել են ծանր տառապանքների, որոնց մասին ակնարկ անգամ չկա Խորենացու մոտ։ Արգելափակված խավար անտառում Տիգրանը երգում է (ի դեպ ողբերգությունը երգախառն է).

Ահ օր խաւար և ժամ անյոյս
Արկած չարի տեսիլ անլոյս,
Զիք զօրավիգն և օգնական
Իմ գերաբուն արքայութեան...[1]

Երվանդ Թագավորը ողբալով իր որդու կորուստը, նույնպես երգում է.

Յավագին եմ ես վշտահար կենօք,
Կալաւ սուգն զանձն իմ, պաշարեաց ցաւօք,
Իմ վերա եհաս այս աղետ բեկման,
Փառք իմ կործանեալ ի սուգ փոխեցան...

Բայց ահա Տիգրանը դարձյալ ազատ է, նա դետնին է տապալում հսկա Աժդահակին, Հայաստանի ամենաոխերիմ թշնամուն։ Ընդհանուր ցնծություն։ Երգչախումբը, ինչպես հունական տրագեդիայում, երգում է.

Արիք եկայք, ազգ արամեանք, արիք, ելիք գունդք զօրականք,
Պսակ փառաց յօրինելով, ձայն տուք փողով ուրախութեան,
Զվիշապազուն ամբարտաւան տիգօք եհար վանեաց Տիգրան,
Եւ ի կարմիր ի գոյն արեան, գիրն ներկեաց սուր հաղթական,
Արի ցնծա, տուն Թորգոմյան, արի պսակդ արևելյան...

Հայրենասիրական այս ապոթեոզով է վերջանում XVIII դարի հայ առաջին ողբերգություններից մեկը, որը իր թեմայով, ժանրով և ոճով շատ որոշակի կերպով ղանազանվում է ֆրանսիական կլասիցիստական ողբերգությունից։

Որպես հերոսական դրամա «Տիգրանը» ընդհանուր շատ քիչ բան ունի Կոռնեյլի և Ռասինի դրամատուրգիայի հետ, ավելի մոտենում է Վոլտերի դրամատուրգիային, սակայն լիովին ինքնուրույն է ազգային հայկական իր թեմայով և մշակման միջոցներով։

[1] «Տիգրանի» ձեռագրի լուսատիպ պատճենը գտնվում է Թատերական Թանգարանում։

Մխիթարյան առաջին դրամատուրգները որոշակի խնդիրներ էին դնում իրենց առջև։ Դա հայրենասիրական զգացումը վառ պահելու ձգտումն էր և խրատական դաստիարակչական միտումը։ Պիեսի վերջաբանում խորհուրդ է տրվում ներկայացումից «իմաստություն քաղել և լինել հարաժամ զգույշ և խոհական»։

Որքան էլ վերացական լիներ հայրենասիրության գաղափարը, այնուամենայնիվ նա հանդիսանում էր հայկական կլասիցիզմի դրամատուրգիայի հիմնական բովանդակությունը։ Ճիշտ այնպես, ինչպես քաղաքականության մեջ հայ ազգային-ազատագրական շարժման գործիչները արծարծում էին Հայաստանի ազատության և անկախության գաղափարը։ XVIII դարի վերջին քառորդում բեմադրված ողբերգությունների թվում, կրոնական բովանդակություն ունեցող պիեսների հետ միասին, կան նաև մի քանի ազգային-պատմական ողբերգություններ, որոնց հայրենասիրական բովանդակությունը ապացուցում է այդ։ Այդ պիեսներից է 1789 թվականին, այսինքն ֆրանսիական ռևոլյուցիայի տարում, բեմադրված «Տրդատի հաղթությունը Հռչէի վրա» պատմական ողբերգությունը (հեղինակ Մ. Ջախջախյան), որը այնքան է հաջողություն ունենում, որ կրկնվում է հաջորդ տարին։ Այս ներկայացմանն է նվիրված Գաբրիել Ավետիքյանի հավուր պատշաճի հորինած երգը «Ի մենամարտութիւն Տրդատա և Հռչէի».

Եկայք ի հանդես յաղթանակի
Քաջապսակ Տրդատայ.
Տեսեք զՀռչէ խրրոխտապանծ
Սանձահարեալ իբր անբան։

Երգելով ձայն ուրախութեան
Հրնչեցէք յընդհանուրս։

Լերինք բարձունք Այրարատա,
Դաշունաւորել ընդ Ալբիայ,
Կայծակնահար որոտացին
Ի դաշտս ի բլուրս Գըթաց...

Հռովմեական փառքն աղօտացան
Ի գերարփին նշուլից
Արշակունեանն Տրդատայ
Մենամարտիկ քաջութեամբ...

Երգի վերջին տունը մի կոչ է հայ ազգին՝ թոթափելու «գերության հանդերձները»։ Բանաստեղծը հույս ունի, որ վերջին փառքը ավելի մեծ կլինի, քան նախնիների ամբողջ փառքը.

Մերկեա ըզհանդերձս քոյդ գերութեան
Գերեդարձիս այս հըզոր.
Մեծ եղիցին քո փառք վերջին
Քան ըզնախննացդ համօրէն[1]։

1 «Տաղք Մխիթարեան վարդապետաց», հատ. Բ, Վիեննա, 1853, էջ 7—8։

Բանաստեղծությունը գրված է 1790 թվականին, երբ Ֆրանսիայում փոթորկվում էր մեծ հեղափոխությունը։

Այս պիեսից հետո ներկայացվել են նաև մի քանի ազգային պատմական ողբերգություններ, ինչպես Մ. Ջախջախյանի «Դաւագործ մահ մեծին Խոսրովու» (հետագայում նույն թեմայով պիես գրեց Պետրոս Մինասյանը, տպագրված 1845 թվականին)։

1792 թվականին բեմադրվեց «Վահան Մամիկոնյանի մարզպանությունը»։ Այս ներկայացմանն է նվիրված դարձյալ Գ. Ավետիքյանի հորինած երգը «Վահանայ ի հաղթական չու առ Նիխոր», որի մեջ կան այս տողերը.

Արիք հայկազեան—տուք ցնծության ձայն—փառազունք ահա բեկան
Պարծանք Սասանեաց դարձան յանլոյս օրեր...

Հայրենասիրական պիեսների մեջ նշանավոր տեղ է գրավում «Հայկ Դյուցազնը», որը բեմադրվել է 1805 թվականին, հեղինակն է Ե. Թովմաճանը, Հոմերոսի հայտնի թարգմանիչը։ Այս թեմայով Ա. Բագրատունին հետագայում գրեց իր նշանավոր դյուցազներգությունը։ Այն ժամանակ Բագրատունին հազիվ 15 տարեկան մի պատանի աշակերտ էր մխիթարյան վանքի դպրոցում, որի բեմի վրա ներկայացված «Հայկը» ինչպես երևում է, մեծ, անջնջելի տպավորություն է թողել նրա վրա։ Ենթադրում են, որ Բագրատունին այդ տպավորության տակ է հղացել իր հռչակավոր դյուցազնավեպը հորինելու միտքը, որ նա իրագործեց միայն քառորդ դար հետո։

«Հայկ Դյուցազն» պիեսի բովանդակությունը հիմնականում Հայկի և Բելի մենամարտությունն է։ Հաղթանակից հետո Հայկի թոռը՝ Արամայիսը արտասանում է Գողթան երգերի ոճով գրված մի ներբող.

Երկնէր երկին, երկնէր երկիր
Երկեր և ծով ծիրանի...
Ընդ անդնդոց փող՝ դև ծուխ ելանէր
զԲել պաշարէր, առեալ տանէր...

Մխիթարյան բանաստեղծներից մեկը (Հարություն Ավգերյանը) այս բեմադրությանը նվիրված ներբողում ակնարկում է այն մասին, որ պետք է պայքարել բռնության և ազգային ճնշման դեմ։ Բանաստեղծը գտնում է, որ այսօրվա հանդեսի առաջ Ոլիմպոսը և Պառնասը նսեմանում են։ Հայերը պետք է պարծենան իրենց նախնիներով։

Ահա նսեմացաւ Ողիմպոս հզօրաց
Եւ պառնասեան հանդես պուետիկոսեանց
Ընդ նորասքանչ տեսիլ նախնոյն մեր մրցանաց...
Օրիոն[1] մշտափայլ ի պարս լուսաւորաց

[1] Օրիոնը երկնքի ամենամեծ և գեղեցիկ համաստեղություններից մեկն է։ Հայերը այդ համաստեղությունը կոչել են Հայկի անունով, այնպես որ այստեղ Օրիոնը պետք է հասկանալ Հայկ։

Դու ազդեա յիս հոգի՝ յորդոր բանահիւսաց...
Մարտադիր յաղթական գլխոյն բոնաւորաց,
Դիմակալ ախոյան անիրաւ բռնութեան...

Այս տողերում մխիթարյան բանաստեղծը պատկերավոր ձևով հասկացնում է, որ հայ նոր բանաստեղծները, վերակենդանացնելով իրենց փառավոր անցյալը, նսեմացնում են պառնասյան «պուետիկոսներին», այսինքն անտիկ աշխարհի և եվրոպական նոր շրջանի պոետներին։ Թերևս փոքր-ինչ պարծենկոտ թվացող այս միտքը ունի յուրահատուկ իմաստ և նշանակություն. խոսքը վերաբերում է հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացմանը, որի համար անհրաժեշտ էր նաև արթնացնել ազգային արժանապատվության և հպարտության զգացումը։ Առաջին անգամն էր, որ հայ թատրոնում բացվում էր «քաջ նախնիների մրցանաց» տեսարանը, ուստի և դիտողները պետք է խորհրդածեին՝ «խրախուսել զտեսողս հայկական մրցանաց»։

Նույն ներկայացման նվիրված մի այլ բանաստեղծության մեջ մենք կարդում ենք.

Երգաբան նուաչաց ի ծաղ հանդիսին՝
Հագներգու բանահյուսք ձայնակից լինեին,
Ի գեն նուագեալ և ի սիրտ քաջին
Թորգոմեան պարծանաց զյաղթական մարտին։

Ազգային-պատմական ողբերգությունների հետ միասին մխիթարյան դպրոցական թատրոնի դրամատուրգները գրում և բեմադրում էին նաև հռոմեական պատմությունից ներշնչված պիեսներ, հատկապես այնպիսիք, որոնց մեջ ցայտուն կերպով արտահայտված էր հայրենասիրության և քաղաքացիական արիության գաղափարը։ Նման պիեսներից է «Ովրատեաց և Կուրատեանց մենամարտությունը» (հեղինակ Ե. Թովմաճան, բեմադրված 1804 թվականին)[1]։

---

[1] «Հանդես մենամարտության Որատեանց» ողբերգության (հեղինակ Ե. Թովմաճան) ներկայացումին նվիրված «Նուագ յաղթութեան» ներբողը հեղինակը ավարտում է մի բացահայտ կոչով, ուղղված հայերին՝ հռոմեացիների օրինակով «լինել հայրենեաց անվրդանդ պաշտպան».

Ճշմարտել անձին բզսին օրինակ,
Առ սեր հայրեննեաց դիմել ի վտանգ.
Զի ոչ վասն անձանց միայն հաստեցաք,
Եւ որ կեայ անձին, կեայ սրնավաստակ։

Այսինքն պետք է թատերական ներկայացման սին, ոչ իրական, օրինակը ճշտությամբ կիրառել սեփական անձի վրա, ի սեր հայրենիքի դիմել վտանգի, որովհետև մենք ստեղծված չենք միայն մեր անձի համար։ Նա, ով ապրում է իր անձի համար միայն, ապրում է ապարդյուն, սնավաստակ։ Այս գաղափարը կլասիցիզմի հիմնական դրույթներից մեկն է՝ քաղաքացիական առաքինությունը, անձնվիրությունը հայրենիքին։

* * *

Ինքնուրույն պատմական ողբերգություններից պետք է հիշատակել «Երուանդ Բ»։ Սա Ա. Բագրատունու առաջին դրամատիկական երկն է, գրված և բեմադրված 1815 թվականին, երբ հեղինակը 25 տարեկան երիտասարդ էր։ Դրանից առաջ Բագրատունին գրել էր կրոնական թեմայով երկու օրատորիաներ։

Ա. Բագրատունու առաջին դրամատիկական երկերը, գրված Մետաստազիոյի օրատորիաների ձևով (1812, 1813), համակված են կրոնա-միստիկական այլաբանությամբ։ «Երուանդ Բ» զգալիորեն զանազանվում է դրանցից թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ։ Իր պոեզիայում Բագրատունին առանձին հակում ունի դեպի հեթանոսական դիցաբանությունը և դյուցազներգությունը (Հոմերոսը)։

Նա իր երկերում հաճախ հիշում է մուսաներին, հատկապես ողբերգության մուսա Մելպոմենէին.

Մելպոմենէ, հար ինձ քընար
Նըւագ՝ ձայնիւ ողբերգարար...
Լացցեն նուագ լերանց փապարք
Մռնչեսցեն ձորք և անտառք...
Ջեռն ի ծնոտին նստցին լռիկ
Ձի մեր տաշտին յաւար եղև,
Յոյս վաստակոյս եղ ի դերև։

Սակայն իր դրամատուրգիայի մեջ Բագրատունին խոսում է համեմատաբար ավելի պարզ լեզվով, թեև չի հրաժարվում կլասիցիզմի ոճից։ Նա առանձին սեր և հետաքրքրություն է ունեցել դեպի դրամատիկական պոեզիան, գրել է մի քանի ողբերգություններ, նաև կոմեդիաներ, թարգմանել է դասական դրամատուրգիայի մի քանի գլուխ գործոցները։

«Երուանդ Բ» ողբերգության սյուժեն քաղված է Խորենացուց։ Գլխավոր իդեան է ապօրինի կերպով գահին տիրացած բռնակալ արքայի դատապարտումը։ Ութ գործող անձերից մեկը՝ Երվանդ թագավորի եղբայր Կոռնակը ծպտված է հանդես գալիս, որը նկատելի շեղում է կլասիցիստական դրամայի կանոններից։

Ա. Բագրատունու «Երուանդ» պիեսի բեմադրության առթիվ Մ. Ջախջախյանը գրում է «Ի թատերական ողբերգութիւն Երուանդայ հայոց արքայի» ներբողը, ուղղված հեղինակին և բեմադրողներին։ Այս ողբերգության մեջ հեղինակը դատապարտում է բռնակալ արքաներին, որոնք ապօրինի կերպով հափշտակում են իշխանությունը։ Այդպիսի հափշտակիչ բռնակալ (ուզուրպատոր) է եղել հայոց պետության մեջ, ըստ Խորենացու, փառասեր Երվանդ թագավորը, որը կանգ չի առել ոճրագործության առաջ իր փառասիրական տենչերը իրականացնելու համար։ Այդ բանաստեղծության մեջ Ջախջախյանը ասում է, որ խարխուլ են այն գահերը, որոնք թեև ոսկեղեն, կառուցված են ոճիրի վրա.

Խարխուլ են գահոյք թէ և ոսկեղէն
Որոյ պատուանդանք յոճիր յեցեալ են։

Բանաստեղծն ասում է, որ պետք է դաս առնել պատմությունից, որը ցույց է տրված բեմի վրա։ Ճշմարիտ է, տեսարանը իրական չէ, բայց կարելի է սովորել ստույգ իմաստը «ի սուտ դըպրոցէ տեսելանց թատրոնից».

Մանկունք կրըթականք, ուսայք, ուսուցեք,
Խաղացեալ այլոց անձանց խաղացեք
Զոր ինչ միանգամ քաջ երկտեցեք,
Մի արդեամբք ըզնոյն ի յանձին բերեք.
Նկաց ժամ երկու Երուանդեան ձեր խաղ
Այլ խաղ մեր կենաց ձըգի մինչ ի թաղ.
Եղերք դիւցազանց դարուց առաջնոց,
Ճոխացեն համարք, ւ Արքայից դըպրոց.
Որք ոչ ուսանին յանցից եղելոց
Ուսցին թող յՕլպա ի տիպար յետնոց...[1]

Մոտավորապես հասկանալի է, թե ինչ է ասում փոքր ինչ խրթնաբան բանաստեղծը։ Թատերական ներկայացումը հազիվ երկու ժամ է տևում, իսկ մեր կյանքի խաղը տևում է մինչև գերեզման, ուրեմն պետք է դաս առնել թատերական խաղից։ Սակայն ի՞նչ «Արքայից դպրոցի» մասին է խոսում Ջախջախյանը, և ինչ է նշանակում Էլբա կղզու հիշատակումը։ Ոչ մի կասկած այն մասին, որ «Արքայից դպրոցը» դա ֆրանսիական ռևոլյուցիոն կլասիցիզմի ներկայացուցիչ դրամատուրգ Մարի-Ժոզեֆ Շենիեի (1764—1831) «Կարլ IX կամ Արքաների դպրոց» ողբերգությունն է, որի դերը շատ խոշոր է եղել ֆրանսիական ռևոլյուցիոն թատրոնի պատմության մեջ[2]։ Ջախջախյանը իր այդ ներբողը գրելու ժամանակ արդեն երիտասարդ չէր, սակայն ինչպես տեսնում ենք, նրա վրա հսկայական տպավորություն էր գործել ֆրանսիական հեղափոխության տարիներին ֆրանսիական թատրոնում չտեսնված հաջողություն ունեցած այդ պիեսը, որի մերկացնող սիմբողջ ուժը ուղղված էր բռնակալների դեմ։ Մարի-Ժոզեֆ Շենիեն պահպանում էր կլասիցիզմի բոլոր կանոնները, բայց տալիս էր ռևոլյուցիոն նոր բովանդակություն։

Ինչ վերաբերում է Էլբա կղզու հիշատակմանը, ապա դա էլ կապ ունի «Արքաների դպրոցի» հետ։ Այն ժամանակ, երբ Ջախջախյանը գրում էր իր ճոն-ներբողը «Երվանդ» ողբերգության առթիվ (դա 1815 թվականի հունվարն էր), Նապոլեոն Բոնապարտը, որին համարում էին բռնակալ-հափշտակիչ, դեռևս գտնվում էր արգելափակված Էլբա կղզում։ Փետրվարին նա փախավ։ Հայ բանաստեղծը ասում է. Նրանք, ովքեր անցյալի եղելություններից չեն սովորում, թող սովորեն ժամանակակից անցքերից,

1 «Տաղք Մխիթարեան վարդապետաց», հատ. Բ, էջ 161։

2 Շենիեի այս ողբերգությունը ռուսերեն թարգմանության մեջ կոչվում է «Կարլ IX կամ խրատ (урок) արքաներին»։ Այսպես են թարգմանում Մոլիերի մի քանի պիեսների վերնագրերը, ֆրանսերեն դպրոց բառը վերածելով դաս բառին։

ինչպես էլպա կղզում գտնվող մարդու օրինակը, թե ինչպես բռնակալները մի օր վերջ ի վերջո տապալվում են։

XIX դարի առաջին քառորդում բեմադրված պատմական ողբերգությունների զգալի մասը կառուցված է հայկական ինքնուրույն սյուժեներով՝ առնված Խորենացուց, Փավստոսից և այլ դասական պատմագիրներից։ 1818 թվականին գրված և բեմադրված հինգ արարվածով, «Տրդատայ դաւադիր մահը» պիեսայի հեղինակն է Եփրեմ Սեթյանը. գործողությունը կատարվում է Վաղարշապատում։ Այդ ներկայացման առթիվ Մ. Ջախջախյանը հորինել է «Եղերական տեսարան դաւադիր մահու Տրդատայ» տաղը, որի մեջ կան հետևյալ տողերը.

Ջանցելոց դարուց զբացական վայրաց,
Մերոց արքունեաց զեղչելի արկած,
Գրիչ և վրձին՝ ձայնք դերասանաց,
Դեղեցիկ ճրգամբ դաշնաւորք միմիանց
Ցուցին կենդանի որպես ի մտոյ
Պատկեր ախորժակ՝ անախորժ տեսոյ...

1819 թվականին գրվել և բեմադրվել է «Դնելի եղերական մահը»՝ հինգ արարվածով, որոնցից երկու վերջին արարվածները հորինված են Սոֆոկլեսի «Անտիգոնեի» հետևողականությամբ։ Գործող անձերի թվումն են Արշակ Բ, Տիրիթը, Սպանդարատը և այլն։ Այս ողբերգության սյուժեն պատկանում է Արշակ երկրորդի ցիկլին, որը հետագայում մշակվեց շատ հայ դրամատուրգների կողմից, ինչպես նաև վերածվեց լիբրետտոյի, որի հիման վրա Չուխաճյանը գրեց իր հռչակավոր «Արշակ երկրորդ» օպերան։

Հասկանալի է, որ կին գործող անձերը բացակայում էին, չկար գլխավոր հերոսուհին՝ Փառանձեմը։ Մենք գիտենք, որ մխիթարյան դպրոցական թատրոնում ընդունված կանոնների համաձայն, կինը չէր կարող երևալ բեմի վրա, նույնիսկ տղամարդը չէր կարող կնոջ դեր խաղալ։ Այս պիեսի հեղինակը հայտնի չէ, ենթադրում են, որ կարող է լինել Սեթյանը կամ Բագրատունին։

1822 թվականին բեմադրվեց Սեթյանի «Մեծն Ներսես Պարթև» ողբերգությունը։ Այս պիեսի սյուժեն հետագայում նույնպես մշակվել է մի շարք դրամատուրգների կողմից։ Կարելի է ասել, որ մխիթարյան դրամատուրգները զգալիորեն մշակել են այն սյուժեները, որոնք հետագայում հիմք են ծառայել հայ ազգային պատմական դրամատուրգիայի համար ոչ միայն կլասիցիզմի, այլև ռոմանտիզմի շրջանում։

* * *

Դրամատուրգիայի ասպարեզում հայկական կլասիցիզմի ամենացայտուն և տիպական ներկայացուցիչն է Պետրոս Մինասյանը (1799—1866)։ Մինասյանը առաջին պրոֆեսիոնալ դրամատուրգն է, որ նվիրել է իրեն գրականության այդ ժանրին ոչ միայն գործնականում, գրելով մի շարք ողբերգություններ և կատակերգություններ, այլև զբաղվել է դրա-

մատուրգիայի տեսական հարցերով, ամբողջովին կանգնած լինելով կլասիցիզմի դիրքերում։

Առաջին անգամ մենք հանդիպում ենք Մինասյանին որպես դրամատուրգի 1829 թվականին, երբ նա թարգմանաբար հորինել էր «Մեծն Միհրդատ» ողբերգությունը՝ 5 արարով։ Կարելի է ենթադրել, որ այս պիեսի սյուժեն Մինասյանը վերցրել էր Ռասինից, որի դրամատուրգիայի հանդեպ նա առհասարակ մեծ հարգանք ուներ։ Այնուհետև նա գրել է «Աժդահակ և Տիգրան» ողբերգությունը՝ 5 արարով։ Հետաքրքրական է, որ Մինասյանը գրել է նաև մի դրամա, որի գործողությունը կատարվում է Մոսկվայում («Մայր լիբյան Միքսալ»), նաև մի պիես չինական կյանքից, «Սարգիս աղա» ինքնուրույն կոմեդիան, թարգմանել է Կոռնեյլի «Պոլիյոկտը», որը հետագայում ուրիշ թարգմանությամբ տպագրվեց «Պոլիտկոս վկա հայկազն» վերնագրով։

Թեմատիկայի այս այլազանությունը և գործողության վայրերի աշխարհագրական ընդարձակությունը նույնպես լուսավորության դարի կլասիցիստական դրամատուրգիայի բնորոշ գծերից մեկն էր, որի առաջին օրինակը տվել էր Վոլտերը, գրելով պիեսներ Ամերիկայի, Աֆրիկայի, Ասիայի և այլ աշխարհամասերի կյանքից (օրինակ, «Ալզիրա», «Չինացի որբը», «Մուհամեդը» և այլն)։

Որքան էլ աշխատեր Պետրոս Մինասյանը շեղումներ չկատարել կլասիցիզմի կանոններից, այնուամենայնիվ նա չի կարողացել խուսափել լուսավորության դարի ազդեցությունից։ Սակայն և այնպես Պետրոս Մինասյանն իր շեղումներով հանդերձ հանդիսանում է հայկական կլասիցիստական դրամատուրգիայի տիպական ներկայացուցիչը։

Պ. Մինասյանն իր ժամանակի առաջավոր գործիչներից մեկն է եղել և, չնայած իր կրոնական դիրքին և աշխարհայացքին, հարել է ազգային-ազատագրական շարժմանը։ Նրա գլխավորությամբ 1846 թվականին Պոլսում հիմնվում է «Համազգեաց ընկերությունը»։

Որպես պատմական պիես նրա «Խոսրով Մեծը» ունի դրամատիկական որոշ արժանիքներ։ Պիեսի գլխավոր հերոսներից մեկն է 12-ամյա Զարեհը (ապագա Գրիգոր Լուսավորիչը), Անակի որդին, որի հայրը դավադրում է հայոց թագավորի կյանքի դեմ և նենգաբար սպանում Խոսրովին։ Զարեհը հայոց թագավորի հովանավորյալն է, նա հավատարիմ է և սիրում է արքային և դատապարտում է հոր արարքը, բայց իբրև որդի պարտավոր է հնազանդվել հորը, որը ստիպում էր նրան դավակից լինել իրեն։ Կարող է տարօրինակ թվալ, որ հեղինակը հնարավոր է համարել համարյա մի երեխայի դարձնել դրամատիկական հերոս։ Սակայն հայ դրամատուրգը իր աչքի առաջ ունեցել է Ռասինի օրինակը, որը իր «Գոթոլիա» ողբերգության մեջ գլխավոր հերոսներից մեկին հանդես է բերել ութնամյա մի մանկան—Հովասի անձնավորությամբ, որը չափահաս մարդու պես խոսում է խելոք և իմաստուն։

«Խոսրով Մեծ» ողբերգությունը իր կառուցվածքով ճշտորեն հետևում է կլասիցիզմին։ Գործող անձերի փոխհարաբերությունները հստակ են և

որոշակի, խստորեն պատճառաբանված ռացիոնալիստական տրամաբանությամբ: Պիեսը հագեցած է գործողությամբ, փոքրաթիվ գործող անձինք (6 մարդ) ունեն հետևյալ որոշակի փոխհարաբերությունը. Անակը ձգտում է սպանել Խոսրովին: Անակի որդի Զարեհը ձգտում է արգելք հանդիսանալ: Բուրզ պարսիկ իշխանը ձգտում է վարկաբեկել Զարեհին, որպեսզի առաջ քաշի իր հովանավորյալ Պերպամատին: Վերջինս սիրում է Զարեհին: Անակի եղբայր Շավարշը գործում է որպես խորհրդատու (նույնպես բնորոշ կլասիցիստական դրամայի համար):

Պետրոս Մինասյանի ողբերգության նկարներից

Պիեսում հիմնական ողբերգական կոնֆլիկտը կատարվում է հոր և որդու միջև և ստեղծում է հոգեբանական բարդություն: Մինասյանը հետևում է Արիստոտելյան տեսությանը՝ ողբերգությունը պետք է արթնացնի երկյուղ և կարեկցություն: Ըստ Մինասյանի, ողբերգություն է հանդիսանում դրամատիկական այն երկը, որի մեջ պատկերված է «նախնի քաջազնեաց դիւցազնական գործը», հերոսը պետք է լինի առաքինի, վսեմախոհ, պայքարող արդարության համար հանուն գաղափարի:

Լինելով կլասիցիստ, Մինասյանը սակայն սարկորեն չի հետևում երեք միության կանոններին: Նա հս փոխում է գործողության վայրը, բստ որում առանձին ուշադրություն է դարձնում բեմի կահավորման և արտաքին ձևավորման վրա: Իսկ ամենամեծ շեղումը կլասիցիզմից՝ արձակ ողբերգություն գրելն է. մինչ այդ բոլոր ողբերգությունները գրվում էին միայն չափածո: Վոլտերը նույնպես առաջինն էր, որ փորձեց ողբերգություն գրել արձակով: Մինասյանը իր բոլոր պիեսները գրել է արձակ, իսկ կոմեդիաները աշխարհաբար լեզվով, նույնիսկ բարբառով:

«Սմբատ Ա»[1] պիեսը իր ժանրով չի կարելի համարել ողբերգություն, քանի որ նա չի վերջանում հերոսի մահով կամ թշվառությամբ, ինչպես անխախտ կերպով ընդունված էր հնում: «Սմբատ Ա» դրամայում հեղինակը

[1] «Խոսրով Մեծ» և «Սմբատ Ա» ողբերգությունները տպագրվել են 1845 թվականին Վենետիկում:

արտահայտել է բավական լայնախոհ մտքեր և հանդուրժողականություն կրոնական հարցերում։ Հայրենիքի առաջ բոլոր տարաձայնությունները և երկպառակությունները պետք է վերանան։ Այս պիեսում դրամատիկ կոնֆլիկտը լուծվում է համաձայն առաջադրված սկզբունքի։ Սմբատ թագավորը վեհանձնորեն ներում է զղջացող նախարարներին, որոնք դավադրել էին իր դեմ, համոզվելով, որ նրանք անկեղծորեն ուզում են ծառայել հայրենիքին։

Որպես տեսաբան՝ թատրոնի հարցերում Պետրոս Մինասյանը կանգնած է բավական պահպանողական դիրքերի վրա։ Ըստ էության նա մերժում է աշխարհիկ թատրոնը։

Պետրոս Մինասյանը հսկայական նշանակություն է տալիս թատերական արվեստին, համարելով այն մարդկային զարգացման ազդակներից մեկը՝ հնագույն ժամանակներից սկսած։ Մինասյանը հիշատակում է նաև հնադարյան հայ թատրոնը և Արտավազդ թագավոր-դրամատուրգի հորինած ողբերգությունները և կազմակերպած ներկայացումները, ուր ցույց էին տրվում «ողբերգակ և վսեմ իմաստներ», ինչպես երաշխավորում է Պլուտարքոսը։ Բայց ավաղ, ամեն բանի հետ միասին, այդ պարծանքի արժանի արվեստը ևս խլվել է մեզանից, ասում է Մինասյանը,— սակայն եկել է ժամանակը, որ մեր ազգը նույնպես հետ չպետք է մնա մյուսներից թատերական արվեստի ասպարեզում։ Թատրոնը զվարճության վայր չէ, գրում է Մինասյանը, ինչպես կարծել են միջնադարյան եկեղեցական գործիչները՝ Ոսկեբերանը և Մանդակունին։ Նրանք նկատի են ունեցել հեթանոսական անկման շրջանի թատրոնը (խոսքը վերաբերում է հռոմեական թատրոնին), ուր ներկայացնում էին անպատկառ տեսարաններ, ուր կանայք «լրբենի երեսոք դիվական պարերով և կաքավումներով այլասերում էին բարքերը»։ Հին հունական թատրոնում այդպիսի բաներ չկային։ Կանայք նույնիսկ իրավունք չունեին բեմ բարձրանալու։ Այսպիսով Մինասյանը իրեն կողմնակից է հայտարարում դաստիարակչական-բարոյական նշանակություն ունեցող թատրոնին, որի ցայտուն նմուշն է հին հունական թատրոնը։ Մինասյանը առարկում է նաև այն տեսակետի դեմ, թե սերը պետք է լինի դրամայի հիմնական թեման։ Մի շարք օրինակներով նա ապացուցում է, որ հին հունական և կլասիցիզմի շրջանի շատ ողբերգություններում սերն ու սիրահարությունը սյուժեի մեջ շարժիչ դեր չեն խաղում։ Ռասինի «Գոթողիա», Վոլտերի «Կեսարի մահը» և այլ պիեսներում հիմնական թեման հանդիսանում է քաղաքացիական առաքինությունը՝ հայրենասիրությունը, ընկերասիրությունը, հերոսությունը, «պերճ և վսեմ արտահայտություններով»։ Ուրեմն ամուսնական սերը պարտադիր թեմա չէ։ Սոֆոկլեսը «Էդիպը» գրել է առանց սիրային տարր խառնելու։ Հիմնվելով ֆրանսիական կլասիցիզմի խոշորագույն տեսաբան Լահարպի վրա, նա դատապարտում է սիրային ծայրահեղությունները նոր շրջանի ռոմանտիկ դրամայում։ Լահարպը զարմանում է, որ «ռամկի» ճաշակին դուր գալու համար դրամատուրգները ողբերգության ճշմարիտ գեղեցկության, վեհապանծ ոգուն և դյուցազնական մտքին, հանճարավոր

խոսքերին խառնում են «անազգ ախտեր և նվաստ կրքեր» և ահա հերոսներ, աշխարհակալներ, հզոր դյուցազուններ, որոնց մի հայացքից «քաղաքներ և աշխարհներ են սասանվում ... որոնք հրամայում են ազգերին և մարդկության համար օրենքներ սահմանում ... ընկնելով նվաստ և մոլորության ետևից (այսինքն սիրահարվելով —Վ. Թ.), տարվելով մեղկ կրքերից, քարշ են գալիս մի պչրուհու ետևից և ընկնում այլազան խայտառակության մեջ...»[1]։

Ինչպես տեսնում ենք, Մինասյանը շարադրում է կլասիցիզմի սկզբունքները դրամայի ասպարեզում։ Սակայն նշելով հանդերձ Մինասյանի միակողմանիությունը և ծայրահեղ սպահպանողականությունը աշխարհիկ սիրո հարցում, չի կարելի անտեսել որոշ «ռացիոնալ հատիկը» նրա տեսության մեջ։ Մինասյանը բացարձակապես չի ժխտում սիրո թեման, այլ բողոքում և դատապարտում է նրա չարաշահումը և այն ծայրահեղությունները, որոնց մեջ ընկել էր ժամանակակից արևմտաեվրոպական թատրոնը, հաճախ դառնալով սոսկ զվարճատեղի և գռեհիկ կրքեր հարուցող տեսարան։

Ինչպես նշվեց, Մինասյանը կողմնակից է արիստոտելյան տեսությանը դրամայի նշանակության մասին, որպես «երկյուղ և գութ» հարուցող արվեստի, որի միջոցով դաստիարակվում է հանդիսատեսը։

Հայ կլասիցիզմի ուշադրած տեսաբանը ողբերգությունը համարում է բարձրագույն ժանրը։ Ողբերգական հերոսը պետք է լինի վսեմախոհ, առաքինի, հանուն արդարության և բարության պայքարող։ Մյուս ժանրերից Մինասյանը թվարկում է եղերերգությունը (օպերան), նախազերգությունը (հերոսական դրաման), կատակերգությունը և ղավեշտը։ Այս երկու ժանրերը Մինասյանը խստորեն զանազանում է իրարից։ Կոմեդիան մի տեսակ դրամա է, որն իր առաջ դնում է լուրջ խնդիրներ։ Կոմեդիայի հերոսը կարող է ճանաչել իր սխալները և ուղղվել, իսկ չզղջացող չարագործը ստանում է իր արժանի պատիժը։

Ջավեշտը ֆարսի և բուֆոնադայի տարրեր ունեցող պիեսն է՝ «նկաբագիր բարուց և ձև չափազանցութեան», որ շարժում է բոլորի ծիծաղը և միշտ խնդագին է վերջանում, մինչդեռ կատակերգությունը ոչ միշտ վերջանում է խնդագին։ Այդպես են բարձր կոմեդիաները—Մոլիերի խարակտերների կոմեդիան, Գրիբոյեդովի և Գոգոլի կոմեդիաները, որոնց ծանոթ չէ հարկավ Մինասյանը, և վերջապես, հետագայում գրված «Պաղտասար աղբարը»՝ Պարոնյանի անմահ կոմեդիան. դրանցից ոչ մեկը «խնդագին» վերջավորություն չունի։

Պետրոս Մինասյանը դրամատուրգիայի լավագույն նմուշների թվում հիշատակում է Ռասինի «Գոթողիան» և Վոլթերի «Հուլիոս Կեսարի մահը», որոնց մեջ դատապարտվում են բռնակալ թագավորները։

---

[1] Պ. Մինասյան, *Խոսրով Մեծ, Վենետիկ, 1845, Առաջ. (բերում ենք աշխարհաբար թարգմանությամբ)։*

* * *

Կլասիցիզմի շրջանի հայ դրամատուրգիայի մասին խոսելիս պետք է հիշատակել նաև մի քանի գործեր, դրամատիկական ձևով գրված երկեր, որոնք բնորոշ են այդ ուղղության համար, թեև նրանցից մի քանիսը, չտպագրվելով կամ չբեմադրվելով, չէին կարող ազդել դրամատուրգիայի զարգացման վրա։

Հարություն Ալամդարյանի անավարտ պատմական դրաման՝ «Հռադամիզդ և Զենոբիա», իր ձևով ու մասամբ բովանդակությամբ որոշակիորեն կլասիցիստական է։ Դժբախտաբար պիեսը անավարտ լինելով[1] մենք չենք կարող ընդհանուր գնահատական տալ և որոշել նրա տեղը հայ դրամատուրգիայի զարգացման մեջ։ Սակայն մի բան հայտնի է, որ Ալամդարյանը իր գրական դաստիարակությամբ պատկանում էր կլասիցիզմին, թեև իր ստեղծագործության մեջ, հատկապես լիրիկական երկերում զգալիորեն շեղվել է կլասիցիզմից, անցնելով դեպի ռոմանտիզմը տանող սենտիմենտալիզմը։

Հայ հասարակական կյանքում առաջ եկած քաղաքական շարժման գաղափարների արդյունքը կարելի է նշմարել մի այլ դրամատիկական երկում, որը վերաբերում է համեմատաբար ավելի ուշ շրջանի։ Այդ պիեսը «Արտաշիր, թագավոր հայոց» ողբերգությունն է, որի առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 1846 թվականին Գանձակում։ Այս պիեսի ձեռագիրը պահպանվել է։ Ինչպես մյուս կլասիցիստական դրամաները, «Արտաշիրը»[1] նույնպես չափածո է, հանգավոր, տասնավանկի տողերով։ Պիեսը երգախառն է, մի ուշագրավ երևույթ, որին մենք հանդիպեցինք մխիթարյան դպրոցական թատրոնի առաջին ողբերգություններում։ Անկասկած այս հանգամանքը մի տեսակ շեղում է կլասիցիզմից։ Պիեսի հեղինակը հայտնի չէ (ենթադրել են, որ Հակոբ Կարենյանն է, սակայն համոզիչ ապացույցներ չկան)։

Խ. Աբովյանի դրամատուրգիան ամբողջովին չի ընդգրկվում կլասիցիզմի ոլորտում։ Սակայն նրա անավարտ դրաման՝ «Ադելայիդա ֆոն Վուլֆինգենը» անկասկած պետք է համարվի իր ձևով կլասիցիստական։ Մենք չենք խոսում գրաբար լեզվի մասին, որովհետև միայն լեզուն չենք համարում հայկական կլասիցիզմի գլխավոր հատկանիշը. իր բովանդակությամբ նույնպես Աբովյանի վերին աստիճանի ուշագրավ դրամատիկական այդ գործը զգալիորեն պատկանում է կլասիցիզմին։

Հայ գրականության պատմագիրներից ոմանք XIX դարի 50—60-ական թվականների հայ դրամատուրգներին անվանել են «կեղծ դասական» ուղղության պատկանող գրողներ։ Նման դրամատուրգներից է Սրապիոն Հեքիմյանը, որը իր առաջին դրամատիկական երկը գրել է 1848 թվականին («Արտաշես և Սաթենիկ»)։ Հ. Աճառյանը գրում է. «Առհասարակ վերցրած, Հեքիմյանի թատերերգությունները... զուտ դասական են, Կոռնեյլի

[1] Պետական Մատենադարանի արխիվ, Ալամդարյանի ֆոնդ։

և Ռասինի ոճով»... «Հեքիմյանը, ինչպես Թաղիադյանը արևելյան հայոց մեջ, կեղծ դասական գրականության վերջին ներկայացուցիչն է արևմտյան հայոց մեջ» և այլն[1]։

Հասկանալի է, որ մենք չենք կարող ընդունել այս տեսակետը։ Հեքիմյանը, ինչպես և Թաղիադյանը, կլասիցիզմին տված տուրքի հետ միասին, երբեք չեն հանդիսացել կեղծ դասական գրողներ։ Հեքիմյանը հենց իր առաջին պիեսի առաջաբանում հայտարարում է, որ ինքը հետևել է Շեքսպիրին և Դրայդենին, իսկ Թաղիադյանի վեպերի վրա նկատելի կերպով երևում է Վալտեր Սկոտի ազդեցությունը, որը շատ հեռու է կլասիցիզմից։

Ճշմարիտ է, որ թե Թաղիադյանը և թե Հեքիմյանը գրել են գրաբարով, սակայն կարևորը ձևը չէ, այլ ոգին ու բովանդակությունը։

Ինչ վերաբերում է XIX դարի 50—60-ական թվականներին գրված պատմական ողբերգությունների հեղինակներին (Պեշիկթաշլյան, Թերզյան, Կարենյան, Գալֆայան և այլն), ապա նրանք կիրառելով հանդերձ կլասիցիզմի որոշ կանոնները, իրենց երկերի բովանդակությամբ և ոգով, պատկանում են ռոմանտիզմին, այնպես որ սխալ կլինի անվանել «կեղծ դասական» կամ «կեղծ կլասիցիզմի» հետևորդներ։ Այդ հեղինակների ստեղծագործության կոնկրետ ուսումնասիրությունը կօգնի պարզելու նրանց տեղը և ցույց տալու գրական ուղղությունների պայքարի առանձնահատկությունները հայ գրականության մեջ։

* * *

Կլասիցիզմի շրջանի հայ դրամատուրգիայի մեջ վերին աստիճանի հետաքրքրական երևույթ է կատակերգության զարգացումը։ Հայտնի է, որ կլասիցիզմը չի ժխտում կոմեդիան որպես դրամայի տեսակ, միայն պահանջում է նրանից պահպանել երեք միությունների կանոնները, մարդկային բնավորությունները պատկերելու ռացիոնալիստական մեթոդը, գաղափարական ընդհանրացումները և զգալի վերացականությունը, որը առհասարակ բարձր է կենցաղային մանրուքներից։ Հին դարաշրջանի կոմեդիոգրաֆները՝ Արիստոֆանը, Պլավտը և Տերենտը մեծ հարգանք էին վայելում կլասիցիզմի հետևորդների մոտ։

Մոլիերը կլասիցիզմի մեծագույն կոմեդիոգրաֆն է։ Կլասիցիստական կոմեդիայի մեջ գործողության վայրը և կենցաղը երկրորդական տեղ են գրավում, գլխավորը մարդկային բնավորության կարևոր հատկանիշների, կոմեդիայի մեջ արատների և թերությունների ընդհանրացումն ու տիպականացումն է։

Կենցաղային կոմեդիան հայ դրամատուրգիայի մեջ ավելի ուշ շրջանի արգասիքն է։ Առաջին կատակերգությունները իրենց բնույթով կլասիցիստական են։

---

[1] Հ. Աճառյան, *Հայոց նոր գրականության պատմություն*, հատ. 2, 1912, էջ 178։

Սկսած XIX դարի սկզբից մխիթարյան դպրոցական թատրոնում ողբերգությունների հետ միասին բեմադրվել են նաև կատակերգություններ։ Թարգմանականների հետ միասին ներկայացվել են նաև ինքնուրույն կատակերգություններ, ըստ որում որպես կանոն՝ աշխարհաբար լեզվով, նույնիսկ հաճախ բարբառային խառնուրդով։

Այդ կատակերգությունների ձեռագրերը պահպանվել են։ Դրանցից մեկն է «Խաղարկութիւն ի վերա սեղանոյ» վերնագիրը կրող կատակերգությունը, որը բեմադրվել է 1805 թվականին և որի լուսատիպ պատճենը գտնվում է Գրականության և արվեստի թանգարանի թատերական բաժնում։

Այս կոմեդիան ըստ էության ֆարսային բնույթի մի զավեշտ է, սրամիտ, ժողովրդական հումորով ներծծված։ Լեզուն միանգամայն հասկանալի աշխարհաբար է, հիմնականում Պոլսի հայ բարբառը։ Այնտեղ ծաղրված են սնոտիապաշտությունը, խաբերայությունը և ագահությունը, այն բոլոր արատները, որոնք մերկացված են Մոլիերի կլասիցիստական կոմեդիայում։

Սակայն հայ կատակերգությունը միանգամայն ինքնուրույն է։ Այդ պիեսում դուք չեք նկատի ոչ Մոլիերի, ոչ Գոլդոնիի և ոչ էլ մի այլ օտար կոմեդիոգրաֆի ազդեցությունը։ Դա հայ կենցաղային բարքային կատակերգության առաջին նմուշներից մեկն է, կառուցված հայ ժողովրդական երգիծանքի մոտիվների վրա։ Գործող անձերը խոսում են պարզ և հասկանալի լեզվով, ժողովրդական սրամիտ և դիպուկ արտահայտություններով։ Օրինակ, սնոտիապաշտ գյուղացին, դիմելով քահանային ասում է. «Ճանըմ, տեր Փիլոս, իշուկս ղայիպ ըրի (կորցրի — Վ. Թ.), ոտքդ պագնեմ, դուն պիտի կտնիս...»։ Գալիս է տիրացուն և գանգատվում է. «ԵՒս ինչը՞խ կեղնի, դահա իմ փարաս չի՞ս մի տար, մեռելը ես գահմեթ քաշեցի թաղեցի, դուն իմ փարաս ալ առիր կերար քուկդ ալ. չէ՞ս ամչնար...»։

Կոմեդիայի լեզուն խառն է թուրքերեն բառերով։ Այդպես էր այն ժամանակ պոլսահայերի բարբառը։ Կոմեդիայի հեղինակները աշխատել են հավատարիմ մնալ իրականությանը, որով և ռեալիստական տարրը սկսում էր մուտք գործել դրամատուրգիայի մեջ։

Բազմաթիվ նման կատակերգություններ են գրվել և բեմադրվել մխիթարյան դպրոցական թատրոնում։ Դրանցից կարելի է հիշատակել «Խելոք Դավիթը», «Գողության պատկերը», «Անհավատ սարաֆին նենգությունը», «Խարդախությունը», «Անիրավություն և արդարություն», «Երկվորյակներ» և այլն։ Դրանցից մի մասի վերնագիրը ցույց է տալիս բովանդակության բնույթը. վերացական արդարության, ճշմարտության գաղափարները՝ մարմնացած որոշ մարդկային բնավորությունների մեջ, ինչպես նաև ծաղրված են արատները՝ ագահությունը, խաբեբայությունը, նենգությունը։

Կոմեդիաների գործող անձերի ամբողջ սիպտոմը առնված է հայ իրականությունից։ Նրանց մեջ մենք հանդիպում ենք այնպիսի անունների, ինչպես Մելիք, Սահակ, Մանկասար, Մելքո, Ղազարոս, Կիկո, Մելքոն,

Գասպար, Պաղտասար. այս վերջին նույնը հանդես է գալիս ժողովրդական երգիծարանության մեջ, որի տարրերից օգտվել են մխիթարյան կոմեդիոգրաֆները։ Կոմեդիաների գործող անձերը օժտված են տեղական, ազգային առանձնահատկություններով։ Նրանցում ավելի ցայտուն կերպով արտահայտվել է ժողովրդի վիճակը՝ բարքերը, կենցաղը, բարբառը, քաղաքական-սոցիալական դրությունը։

XIX դարի առաջին քառորդում հայ կլասիցիստական կոմեդիայի լավագույն նմուշը անկասկած հանդիսանում է 1821 թվականին Կալկաթայում լույս տեսած «Խտրադիմա դժբաղդութեան» կենցաղային-բարքային կատակերգությունը, չորս գործողությամբ, չափածո տասնավանկի հանգավոր տողերով։ Բնորոշ է, որ այս չափը գործածական է եղել մինչև այժմ մեր հիշատակած բոլոր դրամատիկական երկերում։

Չնայած իր կլասիցիստական ձևին, «Խտրադիմա» կատակերգության մեջ ռեալիստական տարրը շատ լայն տեղ է գրավում։ Կոմեդիայի լեզուն աշխարհաբար է, թեև կան տեղ-տեղ գրաբար հատվածներ, տիրապետում է Նոր Ջուղայի բարբառը, որով խոսում էին հնդկահայերը։ Բերենք մի օրինակ, թե ինչպես է բնորոշում գործող անձերից մեկը ագետ հարուստներին.

Չանգալից բռնած վայրենի խալխ ան,
Անքաղաքավար և հույժ ագնտ ան,
Մինն քան զմյուսն օգգա վարք ունեն,
Տեսողաց յուրեանց ծիծաղ պատճառեն,
Բայց վասն փողին պատվի ան արժան...

Ենթադրում են, որ հայ առաջին խոշոր կոմեդիայի հեղինակն է դպիր Մարտիրոս Մկրտչյանը, որը Կալկաթայում հրատարակել է նաև «Շտեմարան» հանդեսը։ Նա համարձակ կերպով քննադատել է իր շրջապատի հարուստ դասակարգի բարքերը, ագիտությունը, կեղծավորությունը, սնապարծությունը։ Հավատալով ճշմարտության և արդարության հավիտենական գաղափարներին, հեղինակը իր գլխավոր հերոսներից մեկին՝ Դոն Ժուանին օժտել է իդեալիստի, բանականության և իմաստության ուժին հավատացողի հատկանիշներով։ Նա անարդանքի սյունին է գամում խաբեբայությունը և խաբեբաներին, բայց որում իր այդ ցասումնալից տիրադը արտասանում է գրաբար, բարձր ոճով.

Ով դժբաղդութիւն, ծնունդ դժոխային,
Հարազատ որդի դժնդակ չարին,
Այս է սովի պարգև կամ պատիժ քոյին,
Զոր կրե ատեն ոք կանացածին...
Մինչ գիտեմ զի բարձր սուրբ Իմաստութիւն
Տուեալ է ինձ ակիզբ, և տայցէ...

«Խտրադիմա դժբաղդության» պիեսը իր ժանրով բարձր կոմեդիա է։ Այնտեղ կան նաև դրական անձնավորություններ, որոնք հակադրված են բացասականներին։ Հեղինակը փորձել է ցույց տալ հերոսի և միջավայրի

միջև ընկած կոնֆլիկտը, ինչպես Գրիբոյեդովը «Խելքից պատուհասում»։ Հայ կատակերգության հերոսներից մեկը՝ Դոն Ժուանը հիշեցնում է Զացկուն. անկասկած այս հիշեցումը բխում է կլասիցիստական բարձր կոմեդիայի ոգուց, որի փայլուն օրինակը տվել էր Մոլիերը իր Միզանտրոպում։

XIX դարի առաջին կեսում գրված կատակերգություններից է Գալուստ Շերմազանյանի հայտնի պամֆլետ-կոմեդիան՝ «Նկարագրութիւնք ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի վիճակաւոր առաջնորդի հայոց գաղթելոց ի Տայս»։ Այժմ արդեն ապացուցված է, որ այդ գրվածքը պատկանում է ոչ թե 1836, այլ 1841 թվականին[1]։ Անկասկած դա խիստ ուշագրավ վավերագիր է, որը ավելի շուտ պատմական, քան գեղարվեստական նշանակություն ունի։ Թե իր ժանրով և թե իր ոճով այդ պիեսը չի կարող մտնել հայ դրամատուրգիայի պատմության մեջ որպես հայկական կլասիցիզմի արտահայտություն։

Տվյալներ կան, որ այդ պիեսը ժամանակին բեմադրվել է Թիֆլիսում, հանդիսատեսների նեղ շրջանի համար։ Սակայն եթե մի կողմ թողնենք այս մի քանի կատակերգությունները, որոնք գրված են աշխարհաբար կամ բարբառներով, ապա կարելի է ասել, որ հայկական կլասիցիզմի երկերի ճնշող մեծամասնությունը գրվում էր գրաբար։ Առհասարակ, գրաբարին դիմելը հայկական կլասիցիզմի կարևորագույն առանձնահատկություններից մեկն էր։ Այդ հանգամանքը մեծ չափով դժվարացնում էր գրականության մեջ նոր ուղղություն, նոր ոգի ստեղծելու համար մղվող պայքարը։ Արևմտաեվրոպական և ռուսական կլասիցիզմը լեզվական նման արմատական մի հատկանիշ չի ունեցել, ինչպիսին է հայ գրական լեզուն՝ գրաբարը մինչև անցյալ դարի վաթսունական թվերը։ Ճշմարիտ է, ամենուր կլասիցիզմը ունեցել է որոշ ոճական առանձնահատկություններ, բարձր և վսեմ ոճը բնորոշել է կլասիցիզմը, բայց լեզուն, նրա քերականական կազմը և բառարանը հիմնականում նույնն են եղել թե կլասիցիստների, թե ռոմանտիկների և թե հետագայում՝ ռեալիստների համար։ Կլասիցիզմը Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում խոսել է բոլորին հասկանալի լեզվով, մինչդեռ հայկական կլասիցիզմի լեզուն կենդանի լեզու չէր և անհասկանալի էր ժողովրդի լայն խավերին։ Գրաբարը լրացուցիչ մի հատկանիշ էր և լրացուցիչ մի դժվարություն՝ հաղթահարելու հին գրական ուղղության քարացած կանոնները, թոթափելու հնության փոշին ու կապանքները։

Մի քառորդ դար հետո արդեն բացահայտ պայքար հայտարարվեց գրաբարի հայկական կլասիցիզմի հիմնական զինանոցի դեմ։ Եթե 30-ական թվականներին գրաբարը և կլասիցիզմը դեռևս որոշ դրական դեր էին կատարում, դաստիարակելով կադրեր գրականության ասպարեզում, ծանոթացնելով հայ մտավորականության փոքրաթիվ ներկայացուցիչներին

[1] Մինչև վերջերս այդ պիեսը կորած էր համարվում։ 1949 թվականին այն հայտնաբերվեց և ընդարձակ ծանոթագրություններով հրատարակեց բանասեր Աս. Մնացականյանը։

համաշխարհային գրականության, անտիկ աշխարհի և նոր շրջանի գեղարվեստական երկերի հետ, նրանց սեր ներշնչելով դեպի կուլտուրան, գիտությունը, փիլիսոփայությունը, դրանով իսկ հող պատրաստելով աշխարհաբար լեզվի և աշխարհիկ ոգու զարգացման համար, ապա շուտով կլասիցիզմը և գրաբարը, կատարելով իրենց պատմական դերը, վերածվում էին արդեն հետադիմական գործոնի։ Հայտնի է, որ Ալամդարյանի և Թաղիադյանի նման գրական գործիչներ այդ թվականներին, այսինքն 20—40 թվականներին դեռևս զգալի չափով գտնվում էին կլասիցիզմի ոլորտում, թեև նրանց մեջ արդեն սկսվել էր բեկումը դեպի գրական նոր ուղղությունը՝ ռոմանտիզմը։ Ահա թե ինչու մենք անվանում ենք նրանց «անցման շրջանի գրողներ»։

Գրաբար լեզուն հայկական կլասիցիզմը ժողովրդի համար դարձնում էր ավելի ևս անմատչելի և խորթ, ուստի և, ինչպես տավեց, ավելի էր դժվարանում պայքարը նրա դեմ։ Բանն այն էր, որ դեռևս գոյություն չուներ նոր գրական լեզու, որով կարելի լիներ փոխարինել դասական հայերենը և թարգմանել Հոմերոսի և այլ մեծագույն դասականների երկերը։ Ոչ ոքի մտքով չէր անցնում թարգմանել Սոֆոկլեսի, Եվրիպիդեսի, Կորնեյլի, Ռասինի, Վոլտերի ողբերգությունները ժողովրդի խոսակցական լեզվով, որը դեռևս բարբառային էր և խառն օտար բառերով ու ոճերով։ Գոյություն չուներ աշխարհիկ գրական լեզու, որը ընդունակ լիներ հաղորդելու ընթերցողին մեծ գրողների ոճի վսեմությունը և գեղեցկությունը։ Գրաբար լեզուն իրոք դարձել էր հնության կաշկանդիչ և ժողովրդի համար խորթ մի ձև, որը հնարավորություն չէր տալիս բնական հույզերի, անմիջական զգացումների և մտքերի հորդահոս ընթացքին, կապում էր մարդկանց լեզուն, ինչպես ասում է Աբովյանը։ Մեծ լուսավորիչը պանդատվում է, որ մեզանում «մեկ մարդ էլա չի դուս եկել, որ մեկ սրտի բան գրի», մինչդեռ Եվրոպայում «հեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Սոֆոկլեսի գրքերը երեխեքն էլ գլխատակներին ունեին»[1]։ Հայ նոր գրականության հիմնադիրը գրական նոր ուղղությունը հռչակում է դասականության մեծ կորիֆեյների հիշատակումով։ Նույն գրողներին Մխիթարյանները թարգմանում էին գրաբարով։ Հասկանալի է, որ այդ մատյանները չէին կարող հայ գեղջուկ երեխայի գլխատակում լինել, որովհետև գրված էին նրանց համար անհասկանալի լեզվով։ Աբովյանն ինքը սկզբում դաստիարակվել է կլասիցիզմի ոգով, սակայն նա կարողացավ հաղթահարել կլասիցիզմի միակողմանիությունը, անկենդանությունը, հռետորականությունը, ճոռոմությունը և վերջապես խրթնաբան գրաբարը, որովհետև դիմեց բնությանը, իրականությանը, գնաց դեպի ժողովուրդը, հրաժարվելով դրքայնությունից, գրական ռուտինայից, անկենդան ճառախոսությունից։

---

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, 1948, էջ 3։

* *

Այսպիսով, հայ նոր գրականության սկզբնավորման ժամանակաշրջանում կլասիցիզմը ներկայացնում է մի բարդ, իր նշանակությամբ հակասական, բայց կարևոր էտապ: Իրենց արծարծած լուսավորական, ազգային-ազատագրական գաղափարներով, համաշխարհային գրական-գեղարվեստական կուլտուրայի մի շարք հուշարձանների թարգմանությամբ և պրոպագանդայով հայկական կլասիցիզմի ներկայացուցիչները օբյեկտիվորեն նպաստեցին նոր էսթետիկական ըմբռնումների առաջացմանը և նոր գրական սկզբունքների աստիճանական հաղթանակին: Սակայն, մյուս կողմից նրանց աշխարհհայացքին ու ստեղծագործությանը հատուկ էին և կղերա-ավատական ըմբռնումներ, անցյալի արտապատմական իդեալականացում, հնացած գրական ձևերի պահպանողական սրբագործում, ժողովրդի համար անհասկանալի գրաբար լեզվի համառ պաշտպանություն: Սրանք արդեն գործոններ էին, որոնք լրջորեն կաշկանդում էին հայ նոր գրականության ձևավորումը, որը պահանջում էր ոչ միայն նոր բովանդակություն, այլև գրական նոր ձևեր, ժանրեր, ժողովրդին հասկանալի նոր լեզու: Կյանքը գրականությանը թելադրում էր նոր գաղափարներ և թեմատիկա, պահանջում էր ժամանակակից իրականության բազմակողմանի արտացոլում՝ ժամանակակից ձևի մեջ: Պատմականորեն հասունացած այդ պահանջն է իրագործել Խաչատուր Աբովյանը: Սակայն ինչպես գեղարվեստական ամեն մի նոր և մեծ երևույթ, այնպես էլ Աբովյանի ստեղծագործությունը իր մեջ դիալեկտիկորեն բովանդակում էր նախընթաց գրական զարգացման, այդ թվում և հայկական կլասիցիզմի, պատմական սահմանափակությունների, թուլությունների բացասումը և այդ զարգացման դրական արդյունքների յուրացումն ու օգտագործումը:

ՀՈՎՀԱՆ ՎԱՆԱՆԴԵՑԻ

Հայկական կլասիցիզմի կարևոր արտահայտություններից մեկն է Հովհան Վանանդեցու ստեղծագործությունը, հատկապես նրա երեք չափածո վիպերգությունները։ Ճիշտ է, Վանանդեցին կտրված էր հայկական կլասիցիզմի հիմնական օջախից՝ Վենետիկի Մխիթարյանների գրականությունից, և, ինչպես վկայում է կենսագիրը, որևէ սիստեմատիկ պատկերացում չուներ եվրոպական գրականության վերաբերյալ։ Առավել ևս չի կարելի խոսել Վանանդեցու կողմից կլասիցիզմի նորմաներին գիտակցաբար հետևելու մասին։ Սակայն XVIII դարի վերջի և XIX դարի առաջին տասնամյակների հայկական կյանքի էական հարցերը և գեղարվեստական իշխող ըմբռնումները հիմք հանդիսացան Վանանդեցու ստեղծագործության մեջ այնպիսի գծերի առաջացման համար, որոնք նրա վիպերգությունները օրգանապես կապում են հայկական կլասիցիզմի գրական շարժման հետ։ Այդ գծերն են՝ հայոց պատմության հնագույն դրվագների պատկերումն ու իդեալականացումը, կղերամիտ հայացքը իրականության նկատմամբ, դեպքերի և կերպարների պատկերման հրաշապատումը, դիցաբանական հնարանքները, ռացիոնալիզմը, վիպերգությունների գրաբար լեզուն և ոճը։

1

Հովհան Վանանդեցին (Ամիրզադե Միրզայի Միրզայանը) ծնվել է 1772 թվականին Վան քաղաքում, ունևոր ընտանիքում։ Չորս տարեկան հասակում նա զրկվում է հորից, և մայրն ու 12 երեխաները մնում են հետին չքավորության մեջ։ Ութ տարեկան հասակում, երբ հազիվ գրել կարդալ գիտեր, ուղարկվում է նշանավոր Կտուց անապատը և հանձնվում է ուսումնառության։ Այստեղ նա շուտով աչքի է ընկնում բանաստեղծություններ գրելու իր ունակությամբ։ Համաձայն կրոնական միաբանություններում ընդունված օրենքի, նկատի ունենալով բանաստեղծություններ գրելու նրա շնորհը, պատանի Ամիրզադեի անունը շուտով փոխում են և վերանվանում Հովհաննես (ի պատիվ Հովհաննես Ոսկեբերանի)։ Սակայն ուսումնատենչ, նորանոր գիտելիքներ ստանալու ձգտող պատանուն չէր կարող բավարարել իր ուսուցիչներն ու միաբանության խստաշունչ ռեժիմը և թողնելով Կտուց անապատը, մեծամեծ դժվարություններ հաղթահարելուց հետո 1792 թվականին նա գալիս է Կ. Պոլիս։ Նույն թվականին էլ ընդունվում է իր ժամանակին անուն հանած Պոլսի մայր դպրատունը և աշակերտում նշանավոր ուսուցիչների։ Հայրենիքում մնացած քույրերին

ու եղբայրներին օգնելու համար դասերից ազատ ժամերին արտագրություններ կատարելով, Հովհաննեսը յոթ տարի սովորում է մայր դպրատանը և այստեղ էլ շուտով ճանաչվում է որպես բանաստեղծ։ Այստեղ էլ նա ընդունում է Վանանդեցի ազգանունը, որով էլ հետագայում հայտնի է դառնում հայ ընթերցող և գիտական հասարակայնությանը։

Հովհան Վանանդեցի

Տեղեկանալով, որ Զմյուռնիա (Իզմիր) քաղաքից խնդրել են հայերենին հմուտ մի մարդ ուղարկել, դպրատան վերակացու Շնորհ-Մկրտիչ Միրիջանյան ամիրան առաջարկում է այդ ժամանակ ուսումնառությունն արդեն ավարտած Հովհաննես Վանանդեցու թեկնածությունը։ Վերջինս, իհարկե, համաձայնում է, թեև ամբողջ սրտով ցանկանում էր վերադառնալ իր ծննդավայր Վան քաղաքը և օգտակար լինել իր հայրենակիցներին։ 1798 թվականի ապրիլի 26-ին Վանանդեցին գալիս է Զմյուռնիա։

Թեև հայերը Զմյուռնիայում հաստատվել էին դեռևս XIV դարի վերջերից, սակայն հայկական դպրոց ունենալու հնարավորությունն ստեղծվում է միայն XVIII դարի վերջում։ Բանն այն էր, որ քաղաքում գտնվող մյուս ազգերի ներկայացուցիչները (ֆրանսիացի, իտալացի, հույն և այլն) արդեն ստեղծել էին իրենց կրթական հաստատությունները, ըստ որում հազվագյուտ չէին այն դեպքերը, երբ ուսում ստանալու համար հայ մանուկները գնում էին հույների կամ ֆրանսիացիների դպրոցները։ Անհանգստացած դրանից, քաղաքի հայ հարուստները ձեռնամուխ են լինում սեփական դպրոց հիմնելու գործին։ Նորաստեղծ վարժարանին տրվում է Մեսրոպի անունը և հետագայում անուն հանած Մեսրոպյան վարժարանը 1799 թվականից սկսում է իր գոյությունը։ Այստեղ էլ սկսում է աշխատել Վանանդեցին, դասավանդելով աստվածաբանություն և հայկաբանություն։ Վանանդեցին 1802 թվականին ամուսնանում է, իսկ 1817 թվականին ձեռնադրվում է քահանա՝ պաշտոնավարելով քաղաքի նշանավոր սուրբ Ստեփաննոս եկեղեցում։

Զմյուռնիայի հայկական վարժարանը բավականին բարգավաճում է։ Վանանդեցու առաջարկով քաղաքի հայ հասարակությունը 1825 թվականին կառուցում է վարժարանի նոր, ավելի ընդարձակ և հարմարավետ շենքը։

Երեսուն երկու տարի շարունակ Վանանդեցին դասավանդում է հիշյալ վարժարանում։ Նրա հեղինակությունն այնքան է աճում, որ, ինչպես վկայում է կենսագիրը, «Ամենայն վարմունք իւր և շարժմունք դրեա թէ առանց արձանագրութեան օրենք իմն էին ականողաց»[1]։ Նրա աճեցրած աշակերտներից հետագայում հայտնի դարձան Պողոս Մելիքշահյանը՝ նշանավոր Ֆիզիկա Պողոսը և Մսեր Մսերյանը։ Վերջինս մեծագույն ակնածանքով էր խոսում իր ուսուցչի մասին, անվանելով նրան «Խորախորհ հանճար», «Այր առաքինի և ամենագէտ» և այլն։ Մսերյանը 1853 թվականին Մոսկվայում հրատարակում է իր ուսուցչի «Ճառ ներբողական ի սուրբ խաչն Քրիստոսի» կրոնական բնույթի աշխատությունը։

Գրական-կրթական և հասարակական մեծ աշխատանք է ծավալում Վանանդեցին Զմյուռնիայում։ Դասերից ազատ ժամերին նա շարունակում է անխոնջ կերպով կարդալ ու պարապել, ինքնուս կերպով սովորում է պարսկերեն ու արաբերեն լեզուները, հմտանում է տաճկերենի իմացության մեջ։ Պարսկերենից հայերենի է թարգմանում միջնադարյան պարսիկ նշանավոր բանաստեղծ Ադդարի բանաստեղծությունները «Փենտի Ադդար» խորագրով։ Քահանա ձեռնադրվելուց քիչ ժամանակ անց, 1822 թվականին գրում է «Կերակուր քահանայից» ծավալուն աշխատությունը (հրատարակվել է Էջմիածնում 1841 և 1858 թվականներին)։ Իրենց դպրոցի համար գրում է ժամանակին մեծ ընդունելության արժանացած ֆիզիկայի մի ձեռնարկ և այլն։ Մասնակցում է նաև կրոնա-դավանաբանական հարցերի շուրջը մղվող պայքարին, գրելով ու արտագրելով, բազմացնելով մինչև 20 անուն աշխատություններ։

1836 թվականին Պոլսում հրատարակվում է Վանանդեցու առաջին ծավալուն չափածո վիպասանությունը՝ «Արփիական Հայաստանի» վերնագրով (հեղինակի երեք գործերից միակը, որը լույս է տեսնում նրա կենդանության օրոք)։ Հինգ տարի հետո, 1841 թվականի կեսերին, արդեն հեղինակի մահվանից հետո Զմյուռնիայի Մեսրոպյան տպարանում տպագրվում է Վանանդեցու հաջորդ՝ «Ոսկի դար Հայաստանի» գործը։ Վերջապես՝ 1856 թվականին Զմյուռնիայում լույս է ընծայվում «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ և Արայի» չափածո վիպասանությունը։

Տասը տարի տառապելուց հետո, 1841 թվականի փետրվարի 3-ին Վանանդեցին վախճանվում է և թաղվում Զմյուռնիայում։ Համաքաղաքացիները ներբողական չափածո մակագրություն ունեցող մահարձան են կանգնեցնում նրա շիրիմին։

2

Վանանդեցու առաջին չափածո ստեղծագործությունը՝ «Ներբող բարեբանութեան ի սուրբ Նշանն Վարագայ», գրվել է 1816 թվականին, թեև հրատարակվել է անհամեմատ ավելի ուշ՝ 1853 թվականին[2]։ Ինչպես ցույց

1 Հ. Վանանդեցի, Ոսկի դար Հայաստանի, Զմյուռնիա, 1841, էջ 11։

2 Տե՛ս Հ. Վանանդեցի, Ճառ ներբողական ի սուրբ խաչն Քրիստոսի, Մոսկվա, 1853, տե՛ս նաև Մատենադարան, ձեռ. N 5763։

է տալիս վերնագիրը, այդ երկը մի սովորական կրոնական ներբող է՝ նվիրված Վարագա վանքին և գրվել է այդ վանքի սպասավորներից մեկի՝ Սարգիս վարդապետի խնդրանքով։ Նկարագրված է վանքի կառուցման պատճառը հանդիսացող տեսիլքը, գովերգված է հայոց կրոնը, նրա մեծ ու փրկարար դերը հայ ժողովրդի համար և այլն։ Ամբողջ «Ներբողը» (230 տող) գրված է ակրոստիքոսի ձևով և առաջին տառերն ընթերցելիս ստացվում է «Ներբող գովեստի առ սուրբ Նշանն Վարագայ, ի խնդրոյ Սարգիս վարդապետի նորին սրբոյ Նշանին պաշտոնեի. ասացեալ Յովհաննու Միրզայան Վանանդեցւոյ» նախադասությունը։ Լինելով հիմնականում կրոնական ստեղծագործություն, չնայած իր մի շարք հաջողված հատվածներին, «Ներբողը» առանձին արժեք չունի այսօր մեզ համար։

1829 թվականին Վանանդեցին ավարտում է իր «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ և Արայի» չափածո վիպասանությունը, որի նյութն է, ինչպես նշում է հեղինակը, «Նախնեաց մերոց զարիութիւն և զաստուածպաշտութիւն գեղեցիկս նկարագրեալ, երդիծանէ զՇամիրամ, վասն անսանձ կրից վարար ցանկութեան նորին և զորոց զկնի հետևանաց։ Ողերգէ զԱրայէ վասն տարապարտ մահուանն, զոր պատուղ գեղեցկութեան իւրոյ և ողջախոհութեան ընկալաւ ի նոյն Շամիրամէ»[1]։ Պոեմը հայտնի է երկու արտագրությամբ, իսկ որոշ տվյալներից էլ երևում է, որ եղել է նաև մի ուրիշ՝ երրորդ արտագրություն, որի թվականն ու վայրը սակայն, չի հիշատակվում[2]։

Տասնյոթ գլուխներում, որոնք վերնագրված են երգեր, 6171 չափածո տողերով (ձեռագրային օրինակներն ունեն 6740 տող), հեղինակը վերարտադրում է հայոց պատմության սկզբնական շրջանի դրվագները, հիմնականում աղբյուր ունենալով Խորենացուն։ Տրված է ջրհեղեղի պատմությունը, աշտարակաշինությունը, Հայկի ծնունդը, Հայկի ու Բելի պատերազմը, Բելի սպանությունը, Հայկի մահը, Արամի թագավորելը, նրա հաջորդի՝ Արա Գեղեցիկի թագավորությունը, վերջապես մեծ պատերազմը Շամիրամի հետ և Արայի սպանությունը։ Գիրքն ավարտվում է «Յորդոր նմանիլ նախնեաց» վերջաբանով։

Վանանդեցին իհարկե կետ առ կետ չի հետևել Խորենացուն և կատարել է բազմաթիվ շեղումներ, ժամանակագրական խախտումներ, մի շարք հավելումներ։ Հայկից հետո, օրինակ, տրված է ջրհեղեղի, Նոյի տապանի շինության, նրանց փրկվելու ամբողջ և մանրամասն պատմությունը, որը ըստ Խորենացու, եղել է Հայկից առաջ։ Անդրադառնալով Հայկի սերունդ-

---

1 Հ. Վանանդեցի, *Ոսկի դար Հայաստանի, Զմյուռնիա, 1841, էջ 12։*

2 *Դժվար է ասել, թե այդ արտագրություններից ո՞րն է հիմք ծառայել 1856 թվականի հրատարակության համար, մանավանդ որ մեզ հասած օրինակներում, բացի գրչագրական սխալներից այլ կարգի տարբերություններ չկան, սակայն փաստ է, որ հրատարակողը կատարել է զգալի կրճատումներ։ Կրճատված են հատկապես կրոնական խորհրդածությունները, զանազան կրոնա-դավանաբանական քառյակները, բուն նյութի հետ չառնչվող էքսկուրսները, և այդ ամենը, ընդհանուր առմամբ, դրական է անդրադարձել գրքի վրա։*

ներին, հեղինակը մանրամասնորեն վերարտադրել է միայն երկուսի՝ Արամի և հատկապես Արա Գեղեցիկի կյանքը։ Եվ վերջապես XI գլխում, որը ունի «Մահ Հայկայ» վերնագիրը (410 տող), հեղինակը պատկերում է Հայկ նահապետի հիվանդությունը, նրա մահը, նրա հրաժեշտի խոսքերն իր որդիներին, Հայկի շքեղ թաղումը և այլն, մի բան, որը ոչ մի հայ պատմիչ մեզ չի ավանդում։ Նման օրինակների թիվը կարելի է շատացնել, որոնք ցույց են տալիս, որ Վանանդեցին իր ստեղծագործության համար հիմք ծառայող նյութի հետ վարվել է այնպես, ինչպես ինքն է նպատակահարմար գտել. մի բան, որը բնորոշ է XIX դարում դյուցազներգություն գրող մեր մյուս հեղինակներին ևս (օրինակ՝ Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազնը»)։

Թեմային ստեղծագործական մոտեցման օրինակ է հանդիսանում «Տեսարան...-ի» առաջին՝ «Ծնունդ և սնունդ Հայկայ» վերնագիրն ունեցող գլուխը, ուր նկարագրված է հայոց նախահոր ծնունդն ու հասունացումը։ Մինչև Հայկի ծնունդը, ըստ Վանանդեցու, երկրի վրա տիրում էր համակ խառնակություն ու անկազմակերպություն։ Ամենուրեք գլուխ էր բարձրացրել չարը, խախտվել էր անդորրը, և մարդիկ գազանացած հոշոտում էին իրար։

Առ ի չգոյէ բարւոյ պետի ի յաշխարհին,
Անդորրութիւն գաղթէր ի բաց, դաւք զեղուին.
Անտիրանայր ի խընամոց տունն առաջին
Եւ ընտանիք յաղմուկս հոգւոց վարանէին։

Հայկի ծնվելուն, ըստ պոեմի անձկանոք սպասում են բոլորը, որովհետև նա, իր մեջ սիմվոլացնելով բարին ու լավը, պետք է կարգ ու կանոն հաստատեր մեղսալից աշխարհում։ Եվ չնայած պոեմում հանդես է գալիս Հայկի հոր՝ Թորգոմի և մոր՝ Թարմանուշի կերպարները, այնուամենայնիվ նրա ծնունդի մեջ գերիշխում է աստվածային տարրը։ Գրեթե նույնությամբ, օրինակ, վերարտադրելով աստվածաշնչի հայտնի լեգենդը Քրիստոսի ծննդյան մասին, Վանանդեցին նկարագրում է «հրեշտակատիպն» աղավնուն, որն ավետում է Թարմանուշին նրա հղիության և դյուցազուն զավակ ունենալու մասին։ Երկունքի ցավերով բռնված է ոչ միայն Թարմանուշը, մոլեգնել ու փրփրել է ահռելի ծովը, գոռում-որոտում է երկինքը, բազմաթիվ հրաբուխների շատրվաններ վիժելով՝ տնքում ու գալարվում է երկիրը։

Վանանդեցին նկարագրում է նորածնի «արեգակնատիպ» դեմքը, գեղասեսիլ վարսերը, կրակ ու բոց աչքերը։ Այդպիսի ցայտուն արտաքին ունեցող հերոսն էլ, ինչպես այդ բնորոշ է կլասիցիստական ստեղծագործություններին, հենց սկզբից պետք է աչքի ընկնի իր դյուցազնական գործերով։ Եվ հեղինակը ջանք չի խնայում այդ բանն իր ընթերցողներին ցույց տալու համար։

Սէգ առիւծուց ոհմակք զոտիւք քրծնի փարեալ
Գայլք ընդ գառինս հանդարտ բարուք ճարակս առեալ
Ըզհայաստան բոյն արագլի յարդարակեալ,
Թռչնոց ամուրս ապաստանի անքոյթ գործեալ,
Նորա քայլուածք լերինք, բըլթուրք սասանէին,
Անկոխ պարեխք նըմա յարձակս հարթագետին.

Չի կարելի չնկատել, որ վերոհիշյալ ամբողջ նկարագրության վրա ուժեղ չափով նկատելի է «Վահագնի ծնունդի» ազդեցությունը, որը հաճախ հասնում է բառացի նմանությունների։

Վանանդեցու ուշադրության կենտրոնում եղել է հայրենասիրության հարցը։ XIX դարում ծայր առած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները, ռուսական բանակների հաղթական առաջխաղացումը բերկրալի հույսեր էին ներշնչում Թուրքիայի ու Պարսկաստանի բռնակալական կրնկի տակ հեծացող հայությանը։ Անհրաժեշտ էր ժողովրդի մեջ վառ պահել հայրենասիրության ոգին, մոտալուտ ազատությամբ հուսադրել նրան, ոգևորել։ Իբրև իր դարի զավակ Վանանդեցին շտապում է արձագանքել տիրող հասարակական-քաղաքական մտայնությանը։ Այս առումով «Տեսարանը...» քննելիս հասկանալի է դառնում, թե ինչն է ստիպել հեղինակին խախտելու հայ ժողովրդի պատմության ժամանակագրական հաջորդականությունը, և վերցնել այդ պատմության միայն որոշ օղակները, և անտեսել կամ շատ համառոտակի նշել մյուսները։ Վանանդեցին օգտագործել է գերազանցապես այն դրվագները, որոնցում հայերը հաղթել են թշնամիներին, արտաքսել են նրանց իրենց երկրից, կամ հայրենի երկրում կատարել են գեղեցիկ գործեր, ցույց են տվել աշխարհաշինության հիասքանչ օրինակներ և այլն։ Այս կարգի թեմաներն անհրաժեշտ էին, որովհետև դրանց միջոցով հեղինակը կարող էր դրվատել նախնիների վսեմ գործերը, ցանկացածի չափ ծավալվել հայրենասիրության պրոպագանդայի բնագավառում։ Եվ Վանանդեցին առիթը բաց չի թողնում հայրենիքի նկատմամբ սեր քարոզելու համար։ Հատկանշական է, որ նորածին Հայկին նրա հոր՝ Թորգոմի տված առաջին խրատն է.

...յիշեա՛ որդեակ զարեաց զուպար,
Որք ապագայս ըզքաջութեան թողին տիպար։

Այս տեսակետից, իր առանձնահատուկ տեղն ունի «Տեսարան...-ի» տասներորդ՝ «Պատերազմ և յաղթութիւն Հայկայ» գլուխը, ուր հեղինակը խանդավառությամբ վերարտադրում է Հայկի ու Բելի հայտնի հերոսամարտը և հայերի հաղթությունը։ Դեռ մինչև ճակատամարտը, իր ընթերցողներին ծանոթացնելով Բելի հետ, Վանանդեցին նրան նկարագրում է միանգամայն բացասական գծերով։ Ստանալով Հայկի աներկյուղ մերժումը՝ ազատ ապրելու և իրեն չհնազանդվելու մասին, Բելը մոլեգնում է։ Վանանդեցին կարողացել է հաջողությամբ նկարագրել Տիտանյան արքայի կատաղի զայրույթը։ Այդ նկարագրության մեջ զգացվում է Եղիշեի ազդեցությունը։

...Ջայրոյթ մոլեգին, գեր քան ըզլեզուոյ դառնութիւն դաժան,
Փըլուզէր ի փոր ըզծովակ մաղձուն հեղեղանըմանւ

Խանձեր, խարակէր իբրու ի հընոց ի բոց բարկութեան,
Գոչէր, մռընչէր յամեհի գազանաըն կատաղական
Իբր ի հրաբուխ ծըծըմբոյ ցոլմանց շանթս այրողական
Բարդարարդ ցայտէր յաղարտըս վայել ըզսերունդ Հայկեանւ

Հեղինակը պատկերել է նաև Տիտանյան Բելի հրոսակներին, որոնք անճոռնի ու կոպիտ, մոլեգին ինչպես «վագրըն կատաղի», սարից գահավիժող լավայի նման անկազմակերպ ու խուռներամ գալիս են դեպի հայոց երկիրը։ Մահաբեր պատերազմն անխուսափելի է, սակայն ոխերիմ թշնամուն կազմ ու պատրաստ սպասում է կորովի Հայկն իր զինավառ դյուցազուն քաջերի հետ։

Վանանդեցին իրեն զգում է իր տարերքում։ Նա համոզված է, որ հայերը պիտի հաղթեն ու չեն կարող չհաղթել, որովհետև նրանք կռվում են իրենց հայրենիքի պաշտպանության ճշմարիտ գործի համար, ազատության ու անկախության համար։ Իսկ հայրենի երկիրը պաշտպանելու սրբազան գիտակցությամբ կռվի ելած զինվորը չի կարող պարտվել։

Սկսվում է արյունահեղ ճակատամարտը, որի նկարագրությունը «Տեսարան...-ի» հաջողված հատվածներից մեկը կարելի է համարել։

Գունդք երկոքին բաղխեալք յիրեարս ընդ հակառակ
Յահեղ ձայնից դոռան լերինք ումգնահնչակ
Ի դոփմանէ ոտից թնդայ գետնոյն հատակ
Շաչմունք նետից տան լըսելեաց խըլութեան փակւ

Շըռինդն ահեղ որպէս ի յամպ հողմայազուրկ
Ջարհուրելի գործէ ճայթմունս հըրակայծակ
Տեղատարափ նետից ընդ օդն յորդավըտակ,
Ջարեան առուս բըղխեալ յորդէ գետահետակւ

Անդ տապաստից թաւագըլոր անկեալ դիակ,
Ի ճապաղիս արեան լեղայ մերկ, խայտառակ
Անդ մռընչին վիրաւորաց յոգւոցըն քակ
Ողորմաձայն հրնչէ ընդ չոր մըրկեալ հագագւ

...Իրար են հաջորդում դեղեցիկ պատկերներն ու համեմատություններր, հաջող նկարագրությունները։ Թշնամի բանակները գուպարում են մեծ խիզախությամբ, գուպարում են մոլեգին կատաղությամբ, երկուստեք ավելի ու ավելի են շատանում ընկնողներն ու ընկածները։

Հայերը աստիճանաբար սկսում են նեղել Բելի սև հրոսակներին։ Տիտանյան արքան շփոթված է հայերի համառ դիմադրությունից։ Նրա շփոթությունը շուտով վախի է փոխվում, երբ նկատում է յուրայինների նահանջը։ Թողնելով նրանց բախտի ու ճակատագրի կամքին, Բելը փորձում է ճողոպրելով փրկվել։ Այլեղնավոր Հայկը նկատելով այդ՝ առաջ է նետվում.

Այլ մեր դիւցազն իմացեալ զայն ճեպէ յարձակ
Յառաջ վարեալ գինքըն Թափով մեծ ի բըլըրակ
Զօրէն դոգցես սէգ առիւծու յորսոյն վրիպակ
Ահեղ գոչմամբ սարսէ ըզվայրըն բովանդակ։

Ընդ լայնալիճ մըտեալ յաղեղն այրն ուժընդակ
Զերեքթեւեանն հարկանէ նետ ի նըպատակ.
Որ ընդ կըրծոց Թափ խմն անցեալ ընդ պահպանակ
Ի յողըն կոյս լայնարերան բանայ դըռնակ։

Շող արեւուն Թափանց ընդ վէրսըն լայնածակ
Տեսչող անուան բերէ տեղւոյն զըմբռսն վիճակ
Եւ ինքըն Բէլ յորսայս անկեալ չարակատակ,
Ըզհպարտ իւր փըչէ կոգին դիւայընակ։

Ա՛ստ կործանի լեառն մըսոյ վաթսընկանգեան,
Ա՛ստ ընկըմին բոլոր պարծանք իւր ընկունայն,
Ա՛ստ մահանայ անմահութեան սուտ ուռուական,
Ա՛ստ ըզգրաւի Թշուառ հաւակն անկրօնութեան։

Նույնպիսի ուժով պատկերված է Արա գեղեցիկի ու Շամիրամի պատերազմը և Արայի եղերական մահը։ Վանանդեցին կոչ է անում հայոց նախնիների պես լինել խիզախ և աներկյուղ, մշտապես պատրաստ լինել կրծքով պաշտպանելու հայրենի երկրի ամեն մի թիզն օտար հրոսակներից։ Բնորոշ է այս տեսակետից հետևյալ հանգամանքը։ Պատկերելով Արայի մահը, հեղինակը նկարագրում է նրա «սիրասունն սիրելու»՝ Նուարդի ողբը, որն Արայի արժանիքները դրվատելուց հետո, դիմում է ներկաներին և կոչ է անում չհուսահատվել տեղի ունեցածից, այլ ելնել կռվի հայոց աշխարհը փրկելու, նենգ թշնամուց վրիժառու լինելու համար։

Ելէ՛ք զօրաւորք Հայկազնեայ դընդին կուռ սպառազինեալ,
Հոսել զամբարտակըն տըհօրէնութեան ի վըէժ վառեալ.
Մի՛ ունկըն դընէ՛ք սուտ բաբանյեցն անհիմըն հընչեալ
Զի գիշխանըն ձեր տարաժամ հընձեսց սուրըն կատաղեալ։

Վանանդեցին ամեն մի հնարավոր առիթով հայրենիքի ու հայրենասիրության գովքն անելով չի բավարարվում։ «Տեսարան...-ի» վերջում նա գրել է հատուկ գլուխ, ուր անդրադառնալով ժամանակակից ընթերցողներին, մի շարք խորհուրդներ ու խրատներ է տալիս նրանց։ Այդ խրատներից առաջինը հետևյալն է.

Ազգին շինութեան սէրն է նախադրիւր յերկնից վըտակեալ
Որով աշխարհին գործոց դարաստանք ծաղկին ուոգեալ
Սէր ասեմ անկեղծ ի շահ ընկերին ջինջ գետահեռեալ
Սէր արդիւնաւոր յօգտավէտ բերմունս բերրի ուռճացեալ

Ժըրացէ՛ք հապա, ով ըզգեցարուք որդիք զօրութեան,
Անխախտ պահպանել զոր ինչ ձեզ աւանդք են բարենըշան.
Զի որ հայրենի ցանկոյն է քակտիչ, ասէ սուրբ մատեան,
Խայթ իւր ամանայն է պատիժ նորին մահ մատնչական։

Ապա, արդեն ուղղակի դիմելով հայ երիտասարդությանը, Վանանդեցին նույն գլխի վերջում գրում է.

Ապա մանո՛ւկ դու հարազատ, ծընունդ գերարբուն քաջաց,
Զօրաջի՛ր հըզօր անմոռաց պահել ըղձուք քոց նախնեաց.
Զանք յարափստակ մի՛ անգործ կացցէ 'ի քեզ և թըմբըրած,
Զազգին զօգտաւէտն 'ի հանդէպ կացո յամենայն շարժուած:

Զաւակ ես քաջաց, մի՛ շիջցի ի քեզ ոգին նախահարց,
Զարմ ես վեհազանց, յարեա՛ց ի նոսա յօրանալ 'ի վարձ,
Քանզի զի՞նչ օգուտ ունիլ ըղնախնիս ի մեծ դիւցազանց,
Եւ նուաստանալ անտոհմից գործովք ի կարգ վատ արանց:

Շարունակելով նույն ձևով, հեղինակը այնուհետև բացատրում է, որ չի կարող ճշմարիտ հայրենասեր համարվել այն մարդը, ով «խորթացեալ խորշի» այն ամենից, ինչ ժողովրդինն է, նրա մտավոր ու ֆիզիկական աշխատանքի արդյունք է հանդիսանում: Հեղինակը կծու խոսքերով պախարակում է նրանց, ովքեր կփորձեն դեթ «ի մտի իւրեանց» հրաժարվել սիրելի հայրենիքից:

Իհարկե, կրոնի հարցում Վանանդեցին մնում է իր միջավայրի հարազատ զավակը՝ բոլոր համապատասխան սահմանափակումներով: «Տեսարան...-ում» արծարծվող գաղափարներից մեկը կրոնասիրությունն է, ավելի ճիշտ՝ լուսավորչական կրոնասիրությունը: Ընդ որում, այս կապակցությամբ հեղինակը հասնում է մինչև այնտեղ, որ հավատացնում է, թե Բելին պատերազմում հաղթելուց հետո Հայկ Նահապետի առաջին ու ամենակարևոր գործը եղավ Հայաստանում աղոթավայրեր կառուցելը[1]: Կրոնի դավանմանն անդրադառնալով գրքի վերջում, նա «Չարեացն չարիք» է համարում հայ լուսավորչական կրոնին չհավատալը, մանավանդ, որ ավելի պախարակելի է դավանափոխ լինելը:

Թեև «Տեսարան...-ի» մասին ժամանակակիցներն ու հաջորդները մեծ մասամբ դրվատանքով են խոսել, այնուամենայնիվ նրան հատուկ են գեղարվեստական և գաղափարական լուրջ սահմանափակումներ: Դրանցից առաջինը լեզուն է, խրթին գրաբարը: XIX դարի սկզբներին հանդես եկած մեր մի շարք գործիչների նման, Վանանդեցին ևս հավատացած էր, որ հայ ժողովրդի միակ լեզուն պետք է լինի գրաբարը, և դրա համար էլ անհրաժեշտ է գրել այդ լեզվով: Այդ պատճառով էլ, ինչպես նրա «Տեսարան...-ը», այնպես էլ հետագա բոլոր ստեղծագործությունները գրված են գրաբարով, ընդ որում, հավանորեն իր հմտությունը ցույց տալու համար նա հաճախ գրում է այնքան բարդ ու խճողված, որ առանց լուրջ ճիգերի ու բառարանի անկարելի է լրիվ հասկանալ: Ահա թե ինչու Վանանդեցու ստեղծագործությունը չմտավ ժողովրդի մեջ: Բացառությամբ մի քանի հաջողված դյուցազնների և հատ ու կենտ հատվածների, մյուսները չափազանց ծանրատաղտուկ են, չոր ու ցամաք, կարդացվում են մեծ դժվարու-

1 Հ. Վանանդեցի, *Ոսկի դար Հայաստանի*, էջ 56:

թյամբ։ «Տեսարան...-ի» գլուխներից մի քանիսն էլ այնպիսի տպավորություն են թողնում, որ կարծես հեղինակն ամեն կերպ աշխատել է ձգձգել, երկարացնել։

Եվ վերջապես՝ թերի են հեղինակի գիտելիքները տաղաչափության վերաբերյալ, մի բան, որ անկեղծորեն խոստովանում է նաև ինքն իր վիպասանության առաջաբանում. «Չունելով իսկ և տեսութիւն անգամ նախնի հանգերգութեանց մերոց, կամ օտար ազգաց յայս վաստակ յարացոյց,— գրում էր նա,— և ոչ ևս ի նոյն պիտանեգոյն զամբողջ հնախօս մատեանս»։ Այս հանգամանքն ունեցել է իր բացասական հետևանքները։ Հետևելով իրենից առաջ ստեղծագործած հեղինակներին, Վանանդեցին ևս աշխատում է տողերը վերջացնել միևնույն հանգերով, որը միապաղաղություն է մտցնում նրա՝ առանց այն էլ միապաղաղ ստեղծագործության մեջ։ Հեղինակի նախասիրած հանգերն են՝ «աւ», «ակ», «եաց», գերակշռում են «ան» և առանձնապես «ին»։

3

Վանանդեցու հաջորդ չափածո վիպասանությունը կոչվում է «Արփիական Հայաստանի», որը, ինչպես արդեն ասվեց, հրատարակվել է հեղինակի կենդանության օրոք՝ 1836 թվականին Պոլսում։

Յոթ մեծ գլուխներում և տասնհինգ վանկանի մոտ տասը հազար տողերով հեղինակն ամենայն մանրամասնությամբ վերարտադրում է հայ ժողովրդի քրիստոնեություն ընդունելու ամբողջ պատմությունը, առաջնորդ և ուղեցույց ունենալով Ագաթանգեղոսին։ Ի տարբերություն իր նախորդ ստեղծագործության, Վանանդեցին այստեղ չի կատարել նյութի ընտրություն, հավելում կամ վերադասավորում, այլ սկզբից մինչև վերջ մեծագույն բարեխղճությամբ և առանց որևէ վերապահության հետևում է Ագաթանգեղոսին, ընդ որում հաճախ այնպիսի տպավորություն է ստացվում, որ կարծես հեղինակը մտադիր է եղել պարզապես չափածոյի վերածել Ագաթանգեղոսի պատմությունը։ Այստեղից էլ ծայր է առնում «Արփիական Հայաստանի» կարևոր ու հիմնական թերություններից մեկը՝ սյուժեի կտրտվածությունը։ Հանրահայտ է, օրինակ, որ Ագաթանգեղոսի պատմության մեջ, առաջին և երրորդ գլուխների միջև ընկած է «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» վերնագիրը կրող ընդարձակ ու երկարաշունչ կրոնական քարոզների մի հավաքածու, որը բացարձակապես չի կապվում ոչ նախորդ, և ոչ էլ հաջորդ գլուխներին։ Ուշադրությամբ և կետ առ կետ հետևելով Ագաթանգեղոսին, Վանանդեցին այդ վարդապետությունն էլ վերարտադրել է չափածո, ամենայն մանրամասնությամբ տալով աշխարհաշինության, Ադամի ու նրա կողոսկրից Եվայի ստեղծման ամբողջ պատմությունը, մարդկային մեղքի առաջացումն ու նրա շատանալը երկրի վրա, աշխարհակործան ջրհեղեղի իրողությունը, «Պիղծ աշտարակի» շինությունն ու կործանումը, հրեաների ազատվելը կոտորածից Մովսեսի օգնությամբ և այլն, և այլն։ Բուն թեմայից կատարված այս խոտորում-

ները զետեղված են երեք մեծ գլուխներում (4-րդ, 5-րդ և 6-րդ. մոտ 3680 տող), որոնք, նախ՝ ցրում են ընթերցողի ուշադրությունը և ապա ոչնչով չեն պատճառաբանվում։ Այս բնույթի շեղումները, այլևայլ բնագավառները կատարված էքսկուրսները և այլն, գրքում շատ են։

«Արփիական Հայաստանիում» ևս Վանանդեցին լրջորեն հետևում է Ավգերյանի և Ջամչյանի քարոզած այն միամիտ տեսակետին, որ աստվածաշնչային դրախտը եղել է Հայաստանում և հետևաբար մարդկությունը սերվել է Հայաստանից, որ Ադամը և Եվան խոսում էին հայերեն, հետևաբար մեր լեզուն աստվածային ծագում ունի, որ աշխարհի բոլոր ժողովուրդները առաջացել են Հայաստանից և այլն, և այլն։

«Արփիական Հայաստանիում» ևս հանդիպում ենք գեղեցիկ նկարագրությունների, հաջող տրված պատկերների ու համեմատությունների, որոնք, անկասկած, խոսում են հեղինակի ստեղծագործական կարողությունների մասին։ Ահա, օրինակ, թե ինչպես է նկարագրում Վանանդեցին Գրիգոր Լուսավորչին.

Քաջահասակ, ի տես ծաղկեալ երիտասարդ, անձնագեղ
Առոյգաբարձ, այր թիկնաւէտ, տեսակ դիմացն էր շքեղ
Վեհ դիւցազանց զարմին անշուշտ յինքն ընկալեալ յորդագեղ,
Յազանցն ի տես հրաշատեսակ իմն երևէր փառահեղ։

Ի կաթնասուն իւր հասակի յանգէտս երկիրն Դամրայ,
Ընդ կաթին և սուրբ զօրէնս դիել առնէ ըզնորս շնորհաց
Կայտառ դիմաց յոյս աներկբայ ի սիրտ տային տեսողաց,
Դոյլ հեզ ի միտս, արդար ի բանս ժիր ի կորովս ոսկերաց։

Իր ուժով դրանց չի զիջում ջրհեղեղի նկարագրությունը։ Ահա այդ հատվածի առաջին քառյակը։

Ջատագակապն կոչեցեալ ջուրցն զհոսանս յանդնդոց,
Զերկնից հոյզ յորդ սահմանաց ծովակուտակն զջրոց.
Հեղեղասաստ ցասումն եհեղ ծովապատիժ հարուածոց,
Առ հասարակ յողող զերեսս երկրի սրբեաց ի պղծոց։

Եվ վերջապես՝ հաջող է մտածված գրքի ավարտը։ Բարձրաբերձ մի լեռնապարում, անմատչելի, անհասանելի այրի մեջ, որը լուսավորվում է միայն դռնից ընկած լույսի նեղ շերտով, առանձնացել է Գրիգոր Լուսավորիչը։ Նա անհանգիստ է, հուզված, ստեղծագործական ծանր երկունք է ապրում նրա միտքը։ Վերջապես, նա սկսում է մագաղաթի վրա շարադրել այն ամենը, ինչ տարիներ շարունակ ամբարել ու մշակել էր գլխում։ Տարիների տքնության արդյունքը լինում է նշանավոր «Յաճախապատումը»՝ սերունդներին որպես հիշատակ, որպես գրավոր վկայական թողնված մի երկասիրություն։

Չնայած վերևում բերված և գրքում առկա ուրիշ հաջողված հատվածներին, մի քանի իսկապես գեղեցիկ նկարագրություններին, թևավոր ու պատկերավոր խոսքերին, Վանանդեցու այս երկրորդ՝ «Արփիական Հա-

յաստանի» վիպասանությունը հեռու է ամբողջական գեղարվեստական գործ լինելուց։ Այստեղ էլ իրեն զգացնել է տալիս սյուժեի կտրտվածությունը, խրթին գրաբարը, տողերն ու քառյակները, նույնահանգությամբ վերջացնելու ձգտումը և այլն։ Բայց «Արփիական Հայաստանիի» գլխավոր, հիմնական թերությունը կայանում է նրանում, որ եթե նախորդ գործերում հեղինակն առաջին պլանի վրա է մղում հայրենասիրությունը, ապա այստեղ այն ստորադասված է կրոնական գաղափարախոսությանը։ Օգտագործելով ամեն մի առիթ, հեղինակը փառաբանում է լուսավորչական կրոնը, այն համարում է բոլորից ավելի ճիշտն ու արդարացին, բառեր չի խնայում այն օրհներգելու համար և այլն։ Այս ձգտումը որոշ գլուխներում հասնում է այն աստիճանի, որ վերջիններս կրոնա-դավանաբանական գրվածքների տպավորությունն են թողնում։ Ահա թե ինչու է հեղինակին գրավել հատկապես Ագաթանգեղոսը, հայոց դարձի պատմությունը, որն այնքան խնամքով արել է նա, կարող էր հարմար նյութ տալ և իրոք տվել է Վանանդեցուն՝ կրոնական գաղափարախոսության պրոպագանդայի բնագավառում ցանկացածի չափ ծավալվելու համար։

4

Ստեղծագործական որոշ ընդմիջումից հետո Վանանդեցին գրում է իր վերջին՝ «Ոսկի դար Հայաստանի» գործը, «Յորում զանմեղութիւն նախանձելի դարուն ջերգեցիկս նկարագրեալ՝ հաստատէ ապացուցութեամբ, եթէ նախկին խանձարուրք երջանկութեանն այնմիկ Հայաստան եղև, ուր դրախտն տնկեցաւ ի բնակութիւն նախածայրին մարդկութեան»[1]։

Վանանդեցին այս գրքում մեզ ներկայանում է նախ և առաջ որպես բազմակողմանիորեն զարգացած, տարբեր ազգերի ու ժողովուրդների գրականություններին քաջատեղյակ մի անձնավորություն։ «Ոսկի դար Հայաստանիում» ամեն մի հնարավոր առիթով նա հիշատակում է հունական դիցաբանության այնպիսի անուններ, ինչպիսիք են, օրինակ, Ոլիմպոս, Սատուրնոս, Դեմետր, Յապոն, Մեդեա, Յանոս, Արգոն և այլն, այլևայլ կապակցությամբ հենվում է «Ճղիոնի պատահարի», այսինքն՝ Իլիականի վրա, հիշում է Ոդիսևսի պատմությունը, գիտե Հոմերոսին, Քսենոֆոնին, Տակիտոսին, Արիստոտելին, Պլատոնին և այլն։ Ընդհանրապես, հին հունական գրականությունն ու պատմությունը համեմատաբար լավ ծանոթ են Վանանդեցուն։ Գալով արևելյան երկրներին, ապա այստեղ էլ նրա գիտելիքները ավելի շատ են։ Վանանդեցին ծանոթ է պարսկական գրականությանը, զանազան դեպքերի շարադրման կապակցությամբ հիշատակում է Որմիզդ, Տիր, Զրվան, Զրադաշտ և զրադաշտականություն, մազդեզիանականություն և այլն։ Չի կարելի չնկատել նաև հայոց պատմության ու պատմագրության խոր իմացությունը, սկսած հեթանոսական անգիր ժամանակաշրջանից մինչև Միքայել Չամչյանը։ Ուշադրավ համդամանք-

[1] Հ. Վանանդեցի. Ոսկի դար Հայաստանի, էջ 13։

ներ են սրանք, որոնք կամ շատ փոքր չափով էին առկա նախորդ գործերում, կամ էլ, հատկապես Վանանդեցու առաջին չափածո վիպասանության մեջ, հազիվ զգացնել էին տալիս իրենց։

Հակադրվելով նախորդ հեղինակներին և ինքն իրեն, Վանանդեցին այստեղ հրաժարվում է բանաստեղծության նույնահանգությունից, որը ստեղծագործությունը դարձնում էր ծանր, տաղտկալի։ Նախորդից իբրև ժառանգություն այստեղ մնացել է այն, որ յուրաքանչյուր քառյակ առանձին վերցրած վերջանում է միևնույն հանգով, բայց նույնիսկ այստեղ էլ բացառությունները ամենևին հազվադեպ չեն։


ՈՍԿԻ ԴԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

Արարեալ. Յովհաննու Միրզայեան Վանանդեցի
Վարժապետ Քահանայի ։

Ի Պատրիարգութեան Կոստանդնուպօլսոյ Տ.Տ.
Ստեփաննոսի Սրբազան Արք Եպիսկոպոսի ։

Յառաջնորդութեան Տեառն Մատթէոսի Արհի Եպիս.
կոպոսի ։

Ի ԶՄԻՒՌՆԻԱ
Յուսումնարանի Սրբոյն Մեսրովպայ ։

1841 —— ՌՄՂ

«Ոսկի դար Հայաստանի» պոեմի անվանաթերթը

5524 տասնհինգ վանկանոց տողեր և չորս մեծ գլուխներ ունի «Ոսկի դար Հայաստանի» չափածո վիպասանությունը, ուր հեղինակն իր մշտական ու անփոփոխ սովորության համաձայն դարձյալ անդրադարձել է աստվածաշնչային-պատմական թեմայի։ Սակայն նախորդների համեմատությամբ այստեղ էլ տարբերությունն ակնհայտ է։ Հեղինակը տառացի չի հետևել կոնկրետ այս կամ այն պատմիչին, այս կամ այն հեղինակին, այլ նրանց հաղորդած ավյալներն ի մի բերելով, նոր և ինքնուրույն սյուժե է ստեղծել։ Ըստ որում նկատելի է, որ Վանանդեցին ամեն կերպ աշխատում է սյուժեի պարզացման ընթացքում կիրառել այնպիսի հնարանքներ, որ դեպքերը շարադրվեն հետաքրքիր ու աշխույժ ձևով, որ ամբողջ ստեղծագործությունը որքան կարելի է ավելի դինամիկ բնույթ ունենա։ Այսպես, օրինակ, «Ոսկի դար Հայաստանիում» սկզբից հանդես է գալիս Սահակ Բագրատունին, որը մի որոշ ժամանակ ինքն է տանում պատմությունը, ապա դիմելով Խորենացուն, խնդրում է նրան նկարագրել հին Հայաստանի հեթանոսական շրջանի դեպքերը։ Ասպարեզ է գալիս Խորենացին և դյուցազներգում է հայոց հին շրջանի պատմությունը. այս փոփոխությունն արդեն շարժում է մտցնում շարադրանքի մեջ։ Գիտակցելով, որ հետագայի ամբողջ պատմությունը մենակ Խորենացու կողմից պատմվելու դեպքում անխուսափելի միապաղաղություն կառաջանա, հեղինակը հաճախ ընդմիջում է նրան, անում է զանազան լրացուցիչ հերոսապա-

տումներ: Երկրորդ գլխում դեպքերի շարադրանքը հիմնականում տանում է հեղինակը, սակայն, նկարագրելով բուն Հայաստանից ժողովուրդների ցրվելն աշխարհի տարբեր կողմերը, նա դարձյալ մեջ է բերում զանազան կպիզոդներ, խոսքը փոխնիփոխ տալիս է ուրիշներին և այլն: Ստեղծագործություն կառուցելու նման եղանակը երկն ընդհանուր առմամբ դարձրել է ավելի դյուրընթեռնելի, իսկ շարադրանքը ավելի աշխույժ ու անմիջական, քան ասենք, «Արփիական Հայաստանիում», ուր հեղինակը թեև մերթ ընդ մերթ դարձյալ դիմում է նման հնարանքների, բայց դրանք մեծ մասամբ չեն ձուլվում բուն շարադրանքին:

Իր գործի սյուժեն ստեղծելով տարբեր պատմիչների ու հեղինակների հաղորդած տվյալներից, Վանանդեցին զգալի աշխատանք է կատարել դրանք իրար միացնելու՝ մի դեպքը մյուսից բխեցնելու համար: Եվ դա, որոշ թերություններով հանդերձ, հիմնականում հաջողվել է հեղինակին: «Ոսկի դար Հայաստանի» ստեղծագործության մեջ փաստերն ու երևույթները համեմատաբար կապված են մեկը մյուսին, լրացնում և փոխադարձաբար պայմանավորում են իրար:

Գրելով «Ոսկի դար Հայաստանին», Վանանդեցին, ինչպես այդ երևում է ընդգրկած նյութի սահմաններից, ունեցել է հետևյալ շատ ընդարձակ ծրագիրը՝ դյուցազներգել հայ ժողովրդի պատմությունը, սկսելով Ադամից ու Եվայից, և հասցնել մինչև իր ժամանակները: Այս լայնածավալ ծրագիրն իրագործված է. հեղինակը շարադրանքը բերել հասցրել է մինչև այն ժամանակաշրջանը, երբ՝

Ի Մոսկովաց հայեաց կայսեր, զոր հայոց տայ զօրութիւն,
Ազգ է անկեղծ և մտերիմ առ ո և է տէրութիւն:

Այսինքն, մինչև ռուսաց տիրապետությունը:

Իհարկե, դյուցազներգելով հայ ժողովրդի հին շրջանի պատմությունը, Վանանդեցին մնում է այն ամենի քարոզիչն ու հետևորդը, ինչ այնպես ջանասիրաբար սովորեցնում էին Չամչյանի հատորները: Նրա նման Վանանդեցին համոզված է, որ դրախտը գտնվում էր Հայաստանում, որ այժմ երկրագնդի վրա լայնորեն տարածված աշխարհի բոլոր ժողովուրդները Հայաստանից են ցրվել ու հաստատվել երկրագնդի այն բոլոր մասերում, որտեղ այժմ նրանք գոյություն ունեն, որ հայոց լեզուն եղել է հայտնի ու անհայտ մյուս բոլոր լեզուների նախամայրը, որովհետև դրախտում հայերեն են խոսել և այլն և այլն: Նման մտքեր ու նկարագրություններ մի քանի անգամ հանդիպում ենք նրա առաջին ու երկրորդ գործերում, սակայն «Ոսկի դար Հայաստանիում» այն դրսևորվում է առավել հստակությամբ: Վերարտադրելով այս բոլորը, Վանանդեցին հաճախ կարողանում է գեղեցիկ նկարագրություններ անել, ստեղծել հաջող պատկերներ ու համեմատություններ: Ահա, օրինակ, ինչպես է տրված դրախտի (իսկ քանի որ դրախտը հեղինակի համոզմամբ եղել է Հայաստանում՝ ուրեմն Հայաստանի) բնության նկարագրությունը:

Կայծն ի խաշանց իւղապարար կեր էր կարդեալ ախորժակ,
Եւ մերկութեանն առի ի սթափ ասուեայ խոշոր պատմուճակ.
Զցրտութեան միայն բառնալ յանձնէ սարսուռ դժնդակ.
Զկայծնատուին կեղեքել միս չէին դեռևս ընդելակ։

Զերկիրն էր փոր Պրծուլ եզանց պաշտօն սրւեալ առանձնակ,
Եւ խիղ ձօնել զուարթարար կովուց հարուստն էր վաստակ.
Հերկագործին այլ զմարմինն անդամատել ի ճաշակ,
Գարկեշտութիւն շտայր նոցա բա՞րլ բարուցն անուշակ։

Բարեխառնիկն ազանց դարուն զի հանդերձանք բնական,
Յանմեղագոյն տածէր վիճակ ի հեշտութիւն բանական
Սիրտ ի շաղիղ և ո՞ւր գեխիլ իբր լափլիզ պգազան
Ուստի ախտից անդր ի մարմնի բոյսք ստեղնին յօգնազան։

Պակաս հաջողությամբ չի տրված նաև կենդանիների նկարագրությունը, որոնք աշխարհակործան ջրհեղեղից հետո սկսում են դուրս գալ Նոյի տապանից։ Հեղինակը կարողացել է նշմարել ու վերարտադրել նրանցից յուրաքանչյուրի այս կամ այն բնորոշ հատկանիշը։

Դայլարագնաց ընդ լանջն ի սող հոսէր վիշապ զնրթ գերան,
Զօրէն գոգցես նոճոյ ամբարձ տարեալ ցցուած ի տատն.
Օյժ զպորտիւ ահեղ զեռայր իբրու վիթխար ինչ տիտան
Մատո յուզել հովանաւոր ի հեշտութիւն հանգստեան

Խանչ ի կոկորդ վարագուն կոր վարգումն ի վայր հոծաշամբ
Արդնատիպար ցցէր զատնս ձամձամաձեն ըզթիկամբ,
Զհողաբիր վարեալ կնճիթն արմատս որցել առ ի ջամբ
Ժանիքն հատու իբրև զտապար, դժոխատիպ էր տեսլեամբ։

«Ոսկի դար Հայաստանիի» տաղին հաջորդված հատվածները երկրորդ և երրորդ երգերն են, ուր հեղինակը նկարագրում է պատմական Հայաստանը և այս կապակցությամբ անում է մի շարք հետաքրքրական խորհրդածություններ։ Վանանդեցին իսկապես գեղեցիկ պատկերներով նկարագրում է իր հայրենի երկիրը, ուր ամեն ինչ այնպես խաղաղ է ու հանգիստ, ուր կյանքը սոսկ բերկրանք է, բարիք։ Այնտեղ մարդիկ ուրախ ու ազատ են ապրում, մշակն ուրախությամբ է գնում աշխատանքի, որովհետև աշխատանքը ինքնին երջանկություն է և երջանկության աղբյուր։

Ի լուծ զնոյն պարզէն հեծան ի փոկ պրկեալ սերտական,
Եւ զոյգս եզանց սամետապիրկ ընդ լուծ դնեն միաբան
Որք եզողին կալով ազդման՝ հլու ձեմեն և հաւան,
Ուժգին ձգեն, ակօս բանան, խշտիս կահեն սերմնարան։

Ապա զառյն յես զօրավոր կարդեաց հանեալ ի հանդէս
Միզապաղաղն առ խրամել տրամն զհող խորապէս
Եզանց կրկին ածեալ զզոյգս ի սերտալոր սամետէս
Յոխորտաճեմ կառս դարօրին յանդոյն մղեն յառաջէս։

Զորոց նմա կարգայ անուն մշակախօս բուն բարբառ
Քառեակք եզանց վի բազորդին գետնոյն ընդերցն ի պատառ
Ուր յերկրորդին հօտաղ ի լուծ մանուկ նստեալ ոգևառ
Ձեռն ի վարոց ձեմել եզանցն տայ ընդ հերկն անթափառ։

Իրական գույներով հեղինակը նկարագրում է աշխատանքային օրվա ավարտը։ Արեգակի մայր մտնելու հետ մեկտեղ դադարում է գործել աշխույժ հնձվորի գերանդին, հոգնած ու վաստակած՝ կանգնում է հողի կուրծքն ակոսող գութանը։ Ամենքը տուն են գնում օրվա ծանր աշխատանքից հանգստանալու համար։ Խաղաղ, անդորր է գյուղական անշուք, պարզ, բայց երջանիկ խրճիթում։ Բոլորը տանն են, կանայք ու հարսներն զբաղված են արոտից նոր վերադարձած ոչխարի հոտը կթելով։

Յաջ և յահեակ կթօղք նստեալ անօթ ծնկացն ի միջի
Եւ հեզաբայլ կարգ ի կարգէ ոչխարք մատչին առաջի
Յորոց զերկուց զուլն ընդ անթով հովիւ կալեալ մեղմակի
Եւ այլք ի նոյն ստողին կարգաւ ուռնկն ի միմեանց դմակի։

Զատեանց կալեալ անդր կթօղք բթով սեղմեն ընդ ափով
Յետուստ երրեակ ճմլեալ մատամբք զհիւթն ցնդէն շտապով.
Փրփրադէզ իբրու տարափ կաթն ի տեղալ գայ թափով,
Զծանրութիւն դիւրեալ խաշին կայթել առնէ յապահով։

Զուարճագոյն անդ նոր յառնէ զբօսանաց տեսարան,
Այն ինչ զչոկս առեալ գառանց՝ դառնարած գայ յերևան.
Յերկուց դիմաց մայիցն ամբոխ իբր ի զօրաց խառնարան,
Շռինգն ախարժ ի լիս բերէ, քաղցր նուագ էր ունկան։

Ոգևորված այս բոլորով, Վանանդեցին ավելացնում է.

Այսպէս ահա մեր Հայաստան որպէս նախկին եղաւ տուն,
Նախ և յետոյ յիւրոց տալով բարեաց հեշտանս զհաստուն,
Նոյն և յոգունց կայ արուեստից սկզբնավայր ճոխարդիւն
Զընաւիք դշխոյութեան տարեալ հանդէս հաստատուն։

«Ոսկի դար Հայաստանիում» շատ հատվածներ կարելի է նշել, որոնք գրված են հայրենասիրական ոգով։ Հիացած իր հայրենիքով, Վանանդեցին միամտորեն հավատացնում է, որ աշխարհիս բոլոր բարիքները, կուլտուրայի ու արվեստի հրաշակերտները առաջին անգամ ստեղծվել են պատմական Հայաստանում և աստիճանաբար այնտեղից են անցել մյուս երկրները։

Սակայն իբրև զարփոյն պայծառ է լոյս վարկած հայ ազգին
Բամ նախագահ ի սկզբանէ, մեր մեծն է Հայք յայս մասին.
Խոփ մշակաց նախ զնորուն հերձ բեղմնաւորն զգետին,
Եւ կարևոր նա խանձարուրք ի գիտս կայ արուեստին։

Ի Հայաստան նախ կանգնեցան շէնք և քաղաքք ի հիմնաց
Անդնայք և հօտք անդ խայտացին նախ ի ծնունդս սերմանց
Որ մոզութեան ասի հրահանգ երիցս ընտիրն այն ուսմանց,
Զգօնացուցիչն անդր դնչոյլ իւր ցոլացոյց ի սկզբանց։

Հայաստանին են նախարուեստ վաճառականքն ի հանճար,
Որք զառաջինն ի տուրևառս կարգ հաստեցին զճարտար։

Վանանդեցին հիանալի գիտե, որ Հայաստանը քանդված ու ավերված է, որ օտարազգի նվաճողները առիթը բաց չեն թողնում ավելի բզկտելու նրան։ Եվ դրա մեջ ըստ հեղինակի մեղք ունեն նաև իրենք՝ հայերը։ Փոխանակ միասնական ու միաձույլ պայքարի ելնելու թշնամու դեմ, փոխանակ մինչև վերջին շունչը կռվելու իրենց «դրախտանման» հայրենիքի փրկության համար, նրանք զբաղվում են ներքին երկպառակություններով, գժտությամբ...

Անունն, որ բուն էր պածանաց ի նախնեաց քաղցր դարուն,
Այժմիկ վա՜յ ինձ, յանախորժակն անկեալ դնի հիգութիւն.
Չի են բազումք, որք անարգանս անձանց դնեն հայ անուն
Յայլոց միտեալ թիմար մտօք ազնուանալ յետին տուն։

Ստրկութեան անուրն ի մերս անլոյծ կապեալ պարանոց,
Հայրենատուրն իսպառ քերքեաց ի վիճակէն աւալոց
Երկիր, որ դրախտն էր փափկութեան անմահութիւն ծաղկանոց
Դժնեայն եղև ազգաց կոխան, մեր յանդարման սրտից խոց։

Աշխարհակալ մեր մթացաւ պայծառ թագն փայլատակ
Արքայազանց համակ բարձաւ տոհմեղութեան յիշատակ
Չի ցան և ցիր յոլորտս անկան յօտարազգեացն ի պառակ,
Նորոգութեան ոչ ունելով զակնկալեաց նպատակ։

Ուրեմն ի՞նչ անել, ինչպե՞ս հասնել այն բանին, որ Հայաստանը դառնա նախկին «երկիր դրախտավայրը», որ կրկին դառնա ազատ, հզոր ու անկախ։ Վանանդեցին գտնում է, որ դրա համար անհրաժեշտ է նախ առաջ մղել ուսումն ու գիտությունները, որոնք բարձիթողի են արված, հայ մանուկներին դաստիարակել նախահայրերի դյուցազնական գործերի օրինակների վրա, սովորեցնել նրանց ամբողջ ուժով ատել հայրենիքի թշնամիներին, երկպառակություն սերմանողներին, դավաճաններին։ Այս գաղափարները, որ Վանանդեցին արծարծել էր իր նախորդ գործերում, շատ ավելի ուժեղացված ու խորացված ձևով հանդես է գալիս «Ոսկի դար Հայաստանիում»։ Իբրև իր հայրենիքի ապագայով խորապես մտահոգված անձնավորություն, Վանանդեցին ուղղակի դիմում է հայությանը՝ կոչ անելով անհապաղ ձեռնամուխ լինել այդ ազնիվ գործին։

Հասուն բարւոյ եք հարազատ մանկո՛ւնք զգօնք և հուժկուք,
Ձեռն ի յաղեղն ազդու բանից ընդդէ՛մ ելեք առարկուք
Անկցի՛ Ներրովթ, գունդ ցնդեսցի չարին յամօթ և ի քուր
Եւ ձեր փառացն յաղթանակ հնչակ հարցէ գեղաշուք։

Իսպա՞ռ կարծես յայնժամ յազգէն բարձեալ Հայկայ փառաց շուք
Միշտ ի վիճակն եկա՞ց յարուց հենգն յայպանս և ի քուք
Ո՛չ, զի որեար փոյթ յառնէին յազգին պատիւ ձեռնարկուք,
Սակայն զարդիս անփառունակն եմք աղետից ողբերգուք։

Բազմահարուստ մեր տեսլք հայց վարդիւնս գործոյն գրարի
ՋՄահակայ զՄեսրովբայ և զորոց յայնմ են շարի։

Այս է Վանանդեցու ստեղծագործության առանցքը՝ հայրենասիրությունը։ «Եվ այսպես մեր բանաստեղծությունն արդեն գտել էր յուր իսկական խորը զգացմունքների աղբյուրը. դա հայրենասիրությունն է իսկական ընդարձակ իմաստով, որ միանգամից յուր բոլոր թափով գալիս է բարձրացնելու մեր քերթվածները և զորեղ շեշտեր հնչել տալու նրանց։ Եվ Վանանդեցու այդ շեշտերի մեջ մենք գտնում ենք և՛ Ալիշան, և՛ Գամառ Քաթիպա, և՛ Պեշիկթաշլյան և նույնիսկ Աբովյան»[1], իրավացիորեն գրում էր Մանուկ Աբեղյանը։

Գալով կրոնական գաղափարախոսությանը, պետք է ասել, որ Վանանդեցին մնում է նույն ջերմեռանդ հավատացյալը, ինչ որ էր նախորդ ստեղծագործություններում։ Տարբերությունն այստեղ միայն այն է, որ եթե նախորդ գործերում նա իր խոսքի սլաքներն ուղղում էր ընդհանրապես լուսավորչական կրոնի թշնամիների դեմ, ապա այստեղ նա արդեն ունի միանգամայն կոնկրետ, որոշակի հակառակորդ։ Դրանք ամերիկյան կաթոլիկ միսիոնարներն էին, որոնք ակտիվ գործունեություն էին ծավալել Պոլսում։ Դրանց դեմ էլ կրքոտ պայքար է մղում Վանանդեցին, իր բանավեճում կիրառելով «հիւանդամիտ», «լիրբ», «ժպիրհ», «մոլեգնեալ յիմար», «ստամբակ», «վարկպարապի» և բազմաթիվ այլ բառեր ու ոճեր։

«Ոսկի դար Հայաստանի» գրքում ևս բացակայում է սյուժետային միասնությունը. վիպերգում առկա են բազմաթիվ թեմաներ, որոնք պոեզիայի նյութ լինելուց շատ հեռու են։ Այսպես, օրինակ. 4-րդ երգում հեղինակը նախանձելի բծախնդրությամբ նկարագրում է պատմական Հայաստանի բոլոր շրջանները, տալիս է նրանց աշխարհագրական սահմանները, թվում է Հայաստանի միջով հոսող գետերն՝ իրենց բնորոշ հատկանիշներով, իրենց տված օգուտներով։ Նույնպիսի մանրամասնությամբ շարադրված են հայոց բոլոր թագավորները՝ սկսած Վաղարշակից, տրված է նրանց գործունեության բնութագրությունը և այլն։ Ստեղծագործական մի թերություն, որն առավել կամ պակաս չափով ընդհանուր էր XVIII դարավերջի և XIX դարեսկզբի մեր հեղինակների համար, և որը նույնիսկ համապատասխան տեսական արդարացում էր գտել։ Հատկանշական է 1792 թվականին Վենետիկում հրատարակված Մինաս Բժշկյանի «Ճեմարան պիտանի գիտելեաց» աշխատությունը, ուր հեղինակը «Զի՞նչ է բանաստեղծութիւն» հարցին պատասխանում է, որ բանաստեղծություն է այն ամենը, ինչ գրված է չափածո տողերով և «վսեմական ոճով»։ Եվ Բժշկյանն էլ իր գրքում իրագործում է այդ սկզբունքը։ Հազար քառյակի սահմաններում նա անդրադառնում է բացարձակապես ամեն հարցի, խոսելով բժշկության, մարդակազմության, մաթեմատիկայի, կենդանաբանության, երկնային մարմինների և այլ՝ պոեզիայի հետ բնավ առնչություն չունեցող նյութերի մասին։

[1] Մ. Աբեղյան. *Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2, էջ 521։*

«Ոսկի դար Հայաստանի» վիպերգը գրված է նույն խրթին գրաբարով. բազմաթիվ քիչ գործածական կամ ամենևին չգործածվող բառեր, ինքնահնար արմատներ, բառաբարդումներ ու ածանցումներ, գրաբարի շարահյուսության անհարիր նախադասությունների կառուցումներ, հայտնի բառերի այլ իմաստով կիրառումներ և այլն, և այլն։ Խրթնությունն ավելանում է նաև այն պատճառով, որ հեղինակը շատ է գործածում աստվածաշնչային անուններ։

Բարդություն ստեղծող հանգամանքներից մեկն էլ այն է, որ Վանանդեցին հայ և օտարազգի դիցաբանական հերոսների անուններն օգտագործում է վանազան բառաբարդություններով ու ածանցումներով հանդերձ։ «Ոսկի դար Հայաստանիում» ինչքան ասես կարելի է հանդիպել այսպիսի արտահայտությունների. «Բեյացեալ Թշնամիք», «Քաջերն. հայոց Հայկահոտ», «Ջոհ եղև նա Աքիլլապէս», «հուր աչօքն որմզդական», «Սաբայատիպ գեղով իւրոյ» և այլն, և այլն։

Վանանդեցին բանաստեղծություններ սկսել է գրել դեռ պատանեկության ժամանակ, սակայն չափածո գործերի առաջին և միակ ժողովածուն հրատարակվում է անցյալ դարի սկզբներին։ Ինչպես և պետք էր սպասել՝ հեղինակն իր ստեղծագործության թեմաները վերցրել է գերազանցապես աստվածաշնչային դրվագներից։ Ներբողված են աշխարհաշինությունը, Քրիստոսի ծնունդը, խաչելությունը, համբարձումը, եկեղեցական զանազան տոներն ու արարողությունները, մի բան, որ այնքան բնորոշ էր ժամանակի համար։ Ունի ոչ քիչ թվով բանաստեղծություններ էլ նվիրված Պոլսին, մայր դպրատանը, իր ուսուցիչներին, Շնորհ-Մկրտիչ ամիրային և այլն։ Սակայն Վանանդեցու պոեզիայի մեջ առաջին տեղը պատկանում է նշանավոր «Առ Հայաստան» բանաստեղծությանը, որն ավելի հայտնի է առաջին քառյակի առաջին տողով՝ «Մայր Հայաստան, երկիր դրախտավայր»։ Բանաստեղծությունը բազմաթիվ արտատպությունների է արժանացել, և չքնաղ երգի վերածվել Կոմիտասի հանճարով։ Գրված լինելով մոտ 150 տարի առաջ, այդ երգը չի խամրել և մեր օրերում էլ կատարում են երգիչներն ու երգչախմբերը։

Իր բանաստեղծության մեջ Վանանդեցին ներկայանում է որպես հայրենի բնաշխարհի կրքոտ սիրահար, Հայաստան անունը կյանք ու եռանդ է ներշնչում նրան, ոգևորում, թև է տալիս նորանոր սխրանքների համար։

Ի վեհ անուն սիրտ իմ ո՜հ յոյժ
Ոգևորի ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ
Ի քեզ, ի քեզ, յոյս իմ միայն.
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Այստեղ, հիշում է պոետը, սխրագործության օրինակներ ցույց տալով, իրենց հայրենի երկրի անկախության համար սրբազան պայքարի են

էլել Հայկը, Արմենակը, Արամը, Տիգրանը։ Այս ամենը հպարտություն է առաջացնում հեղինակի հոգում։

Գետք քաջառաջք, ազնըրուղխ,
Ջհորդ բարի առնէն յուռթի
Քև ապրեմ ես, քև միշտ ցնծամ,
Քև, քև պանծամ, փառք իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Բնորոշ են բանաստեղծության վերջին տողերը, ուր իր սիրելի հայրենիքը ջերմորեն փառաբանելուց հետո, հեղինակը մեծ ոգևորությամբ ազդարարում է ի լուր ամենքի, որ կյանքում իր միակ պարծանքն ու սերը Հայաստանն է։

Զքեզ յիշեմ, զքեզ սիրեմ,
Զքեզ, զքեզ սէր իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Վանանդեցու «Ա՛ռ Հայաստան» բանաստեղծությունը իր հաստատուն տեղն ունի մեր գրականության մեջ, որպես նոր ձևավորվող հայկական հայրենասիրական պոեզիայի առաջին և հաջողված գործերից մեկը։

Հովհան Վանանդեցու երկերում, ինչպես տեսանք, ուժեղ են ժամանակաշրջանի հետ կապված և նրանով պայմանավորվող նեղ ըմբռնումներն ու հեղինակի սահմանափակ աշխարհայացքի շեշտերը։ Լինելով կրոնավոր և եկեղեցական գործիչ, Վանանդեցին, բնականաբար, մի շարք կարևորագույն հարցեր քննում և գնահատում է կրոնական մտայնության դիրքերից։ Սակայն Վանանդեցին ակտիվ կերպով արձագանքեց հայրենասիրական ոգորումներին, ժողովրդի ազատագրության բաղձանքներին։ Նա հայ ժողովրդի պատմության հին դարերից դուրս կոչեց հերոսական կերպարներ ու դրվագներ և առաջ քաշեց ժամանակակիցներին նրանց ոգով դաստիարակելու հարցը։

ԱՐՍԵՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Արսեն Բագրատունու գրական գործունեությունը կապված է XIX դարի առաջին կեսի հետ։ Հանդես գալով Մխիթարյանների միջավայրում, նա իր ստեղծագործությամբ և բանասիրական հետազոտություններով շարունակեց նրանց գրական տրադիցիաները։

Հարուստ և բազմաժանր է Բագրատունու թողած ժառանգությունը. նա հեղինակ է պատմական ողբերգությունների, կրոնա-բարոյախոսական բանաստեղծությունների, հունա-հռոմեական գրականությունից կատարած բազմաթիվ թարգմանությունների, վերջապես «Հայկ Դյուցազն» հերոսական պոեմի։ Օժտված բանաստեղծական անժխտելի կարողություններով. Բագրատունին, կլասիկների նմանությամբ, մշակեց ազգային հայտնի ավանդությունը՝ պատասխանը Հայկի և ասորական բռնակալ Բելի մասին, գրեց հայկական դյուցազնավեպ, որով և դարձավ հայկական կլասիցիզմի ամենախոշոր ներկայացուցիչը։

I

Արսեն Կոմիտաս Բագրատունին ծնվել է 1790 թվականին Կ. Պոլսում։ 1801 թվականին նա, մոր ցանկությամբ, ուղարկվում է Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ։ Այստեղ նրա ուսուցիչներից՝ Հոմերոսի հայտնի թարգմանիչ Եղիա Թովմաճանը, նշանակալից դեր է կատարում ապագա բանաստեղծի ճաշակի, գրական հակումների և հետաքրքրությունների կազմակերպման գործում։

Տիրապետելով կլասիկ լեզուներին, Բագրատունին վաղ հասակից զբաղվել է անցյալի գրականության ուսումնասիրությամբ։ Նա հունարեն իմացել է մայրենի լեզվին համահավասար, դեռ մանկությունից, մինչև Վենետիկ մեկնելը, իսկ 18 տարեկանից արդեն կատարելությամբ տիրապետում էր լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն լեզուներին և հատուկ ջանասիրությամբ զբաղվում էր գրաբարով։

Պատանեկան տարիներից Բագրատունու նախասիրած հեղինակներն էին Հոմերոս, Վերգիլիոս, Ռասին, Ֆենելոն և ուրիշներ։

Բացառիկ ընդունակություններով ու գիտելիքներով օժտված Բագրատունին շուտով ճանաչվում է իր միջավայրում։ 1810 թվականին, քսան տարեկան երիտասարդ, նա արդեն ուսուցիչ էր Ռաֆայելյան դպրոցում։ Բագրատունին դաստիարակել է բազմաթիվ աշակերտներ, որոնցից են Մ. Բեշիկթաշլյանը և իրենց գրական-թարգմանական գործունեությամբ հայտնի Գևորգ և Էդվարդ Հյուրմյուզյան եղբայրները։

Բագրատունին գրական ասպարեզ է իջել 1812—1813 թվականներին։ Սկզբում նա հանդես եկավ Մեսրոպ Տաղիադյանի նմանությամբ գրված օրատորիաներով ու կրոնական բանաստեղծություններով՝ նվիրված Քրիստոսի ծննդյանն ու հայտնությանը, իսկ 1821 թվականին նա հրատարակեց ֆրանսերեն լեզվի ընդարձակ քերականությունը՝ «Յաղագս բանաստեղծական լեզուի և ոտանաւորաց գաղիացւոց» հավելվածով։

Արսեն Բագրատունի

Բագրատունու գիտական աշխատանքը ընթանում էր գլխավորապես հայ մատենագրության հետազոտության, ապա՝ օտար, մասնավորապես անտիկ գրականության ուսումնասիրության ուղղությամբ։

Իր գրական-բանասիրական աշխատանքների համար, նա Մխիթարյան միաբանության ձեռագրատունն օգտագործելուց հետո, մեկնել է Փարիզ, ֆրանսիական ազգային մատենադարանի հայկական ձեռագրերին ծանոթանալու և նրանցից նյութեր քաղելու նպատակով։

Բագրատունու գրական ժառանգության մի մասն է կազմում թատերգությունը, որն ունի կրոնական և պատմական բովանդակություն։ Կրոնականները գրված են ո՛չ միայն Մեսրոպ Տաղիադյանի ազդեցությամբ, այլ նույնիսկ տեղ-տեղ նրանից փոխառված։ Բովանդակությամբ ու ձևով դրանք չորս կամ երկու արարվածներով պիեսներ են, «Ի ծնունդ Տեառն», «Ի յայտնութիւն Տեառն» վերնագրերով։ Գործող անձինք են՝ սուրբ կույսը, սուրբ Հովսեփը, զանազան հովիվներ և հրեշտակը։

Պատմական ողբերգություններից հայտնի են «Երվանդը» և «Արտաշեսը»։

Երվանդը ծագումով Պարթև է և հայոց թագավոր։ Նրա գահակալության դեմ ապստամբում են պալատական երկու հայտնի դեմքեր՝ Արգամն ու Սմբատը, որոնք Երվանդին համարում են գահին պատահաբար տիրացած մարդ։ Գործողության ընթացքում պարզվում է ընտանեկան ծանր դրաման. Արգամի երեք ապօրինի զավակներն են Տուրը, Երվանդը և Երվազը։ Հայրը չի ճանաչում որդիներին, նրանք, որպես ապօրինի զավակներ, հորից հեռու մնացել էին անհայտության մեջ։ Որդիները նույնպես չեն ճանաչում ո՛չ հորը և ո՛չ էլ միմյանց։ Եվ ահա, քաղաքական կրքերի բախման թոհուբոհի պահին հանկարծ հարազատները երևան են գալիս որ-

պես ոխերիմ հակառակորդներ, քաղաքական թշնամիներ։ Հայտնվում են հոր և որդիների փոխադարձ կապերը, բայց ուշացած. Արգամը սպանել էր արդեն Երվանդին, իսկ եղբայրներն՝ իրար։ Ապստամբները հաղթանակում են և գահ բարձրացնում Արտաշեսին։

Երկրորդ ողբերգությունը «Արտաշեսն» է։ Զորավար Արտավանը իր որդի Արշակին գահ բարձրացնելու հույսերով գաղտնի սպանում է Քսերքսեսին և որպես հայրասպանի սպանում է նաև նրա որդի Դարեհին։ Ոճիրի կասկածը շուտով ընկնում է Արշակի վրա և նա ձերբակալվում է։ Հայրը աշխատում է ազատել անմեղ որդուն, իսկ նա հրաժարվում է փախուստի հնարավոր միջոցներից, զգալով խղճի խայթ, գիտակցելով հոր հանցանքը։ Մի քանի հարցաքննություններից ակնհայտ են դառնում Արտավանի սպանությունների և դավադրությունների նպատակները։ Որդին անպարտ է արձակվում, իսկ հայրը՝ Արտավանը ստիպված փախուստի է դիմում։

Երկու ողբերգությունների՝ «Երվանդի» և «Արտաշեսի» բովանդակությունը պատմական-քաղաքական անցքերն են, որոնց ֆոնի վրա զարգանում են ընտանեկան կոնֆլիկտները և ավարտվում ծանր ու ցնցող տեսարաններով։

Բագրատունու թատերգությունները գրված էին մխիթարյան աշակերտության համար, որոնք և բեմադրել են իրենց դպրոցում։ Հեղինակի նպատակն էր բեմի միջոցով ևս վառ պահել աշակերտության մեջ հայրենասիրության, ազգային հպարտության զգացմունքները, ծանոթացնել նրանց հայոց թագավորական անցյալի հետ։

Բագրատունին հետագայում չզբաղվեց դրամատուրգիայով. Նրա ստեղծագործական տարերքը պոեզիան էր և նա որպես բանաստեղծ, ամբողջական հավաքածուով, ուր կան և թարգմանություններ, հրապարակ եկավ 1852 թվականին։ Ժողովածուն, որը լույս տեսավ Վենետիկում, «Տաղք Մխիթարեան վարդապետաց» բանաստեղծությունների եռհատորյակի առաջին հատորն է և կոչվում է «Տաղք տեառն Հ. Արսենի Կոմիտասայ Բագրատունւոյ, որ և պաճուճեալ անուամբ Առան Սիսիական»։ Հատորը բաժանված է մի քանի մասերի՝ «Տերունականք», «Կրոնականք», «Բարոյականք», «Կենցաղականք», «Սթափականք»։ Անկախ այս բաժանումներից, նրանք բոլորն էլ հագեցած են կրոնա-բարոյախոսական մտածողությամբ, իսկ մի մասն էլ գրված է ըստ Մետաստազիոյի։ Ունի և լիրիկական բանաստեղծություններ («Դաշտիկն յաւար, եղերք մշակին», «Ի մահ սոխակին եղերք հովուի»), սակայն, երկերի նշանակալից մասը ներբողներ են, նվիրված Տյուզյան ամիրայական տոհմի զանազան անդամներին, Մխիթարյան միաբանության տոներին և նրա հիմնադրին՝ Սեբաստացուն։

Անցյալում Մխիթարյաններին հարած գրական շրջանները մեծ ջերմությամբ են ընդունել Բագրատունի-բանաստեղծին, համարելով նրան ո՛չ միայն հայ իրականության, այլև ժամանակի խոշորագույն երգիչներից մեկը։ Նման գնահատականներն, անշուշտ, չափազանցություն-

ներ են, բայց բանաստեղծական թափն ու շունչը անժխտելի են Բագրատունու մոտ։ Բագրատունին զգում և տեսնում է բնությունը բազմերանգ գույներով, ճոխությամբ ու պայծառությամբ։ Այս բոլորը նա երգել է այն ժամանակ, երբ մխիթարյան հայրերը, ինչպես և ինքը, սգում էին ավերված հայրենիքը, դրվատում նրա երբեմնի փառքը, կամ հանդես էին գալիս կրոնա-բարոյախոսական և զանազան «յաւուր պատշաճի» ոտանավորներ գրելով։

Բագրատունին ունի և «Բոնահանգ», «Բոնակարգ» բանաստեղծություններ։ Վենետիկցիների մոտ ծավալված չափածոյի այս ձևը շատ հեռու է արվեստից և աչքի է ընկնում միայն մշակված լեզվական տեխնիկայով։

Գրական աշխատանքին համահավասար Բագրատունին զբաղվել է և գիտական ուսումնասիրություններով՝ նվիրված հայոց լեզվին և հայ մատենագրությանը։

Նրա լեզվաբանական աշխատությունների գլուխ գործոցը համարվել է «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց» դասագիրքը, որը ըստ Հ. Աճառյանի «...մի գանձարան է Ե—ԺԹ դարերի հայերեն լեզվի, այնտեղ կարելի է գտնել հայ լեզվի ամեն շրջանների վիճակը, թեև առանց գիտական ու կանոնավոր համակարգութեան»[1]։

Բագրատունու վաստակի լավագույն բաժիններից մեկը նրա թարգմանություններն են։ Կլասիկ լեզուներին հավասար տիրապետելով եվրոպական ժամանակակից լեզուներին, նա կատարել է բազմաթիվ թարգմանություններ։ Մեծ և մնայուն արժեք է ներկայացնում հատկապես Հոմերոսի «Իլիականը», որը թարգմանված է ստեղծագործական բարձր տաղանդով, լեզվի հմուտ իմացությամբ։ Նա թարգմանել է նաև Վիրգիլիոսի «Էնեականը», Միլտոնի «Կորուսյալ դրախտին» և բազմաթիվ երկեր, որոնք հրատարակվել են երկու հատորով. առաջինը կոչվում է «Ճաշակ հին և նոր ողբերգութեանց», իսկ երկրորդը՝ «Ճաշակ հելլեն և լատին ճարտասանութեան»։

Բագրատունու գրական գործունեության բնութագիրը լրիվ չի լինի, եթե չհիշենք նաև նրա մասնակցությունը միաբանության բանասիրական աշխատանքներին։ Նա հրատարակել է Եզնիկի, Ագաթանգեղոսի, Խորենացու, Եղիշեի և այլ մատենագիրների երկերը։ Համառ ու տոկուն աշխատանքի արդյունք էր Բագրատունու խմբագրությամբ և նրա կողմից ստուգված Աստվածաշնչի 1852 թվականի հրատարակությունը։ Նա ունի և անտիպ աշխատություններ, որոնցից արժեքավորը՝ «Կարևոր գիտելիք բառից և ոճից» բառագիրքն է, ուր ճշտվում և նշվում են նոր Հայկազյան բառարանի պակասները։

Բագրատունին մասնակցել է և միաբանության վարչական աշխատանքներին։ Հռոմում եղել է Մխիթարյան միաբանության գործակալու-

[1] Հ. Աճառյան, Պատմություն հայոց նոր գրականության, պրակ Ա, Վաղարշապատ, 1906, էջ 79—80։

թյան օգնական, իսկ 1829 թվականին Հովհ. վարդապետ Սերվիյանի հետ ուղևորվել է Պետերբուրգ, որպես նրա օգնական ու թարգմանիչ։ Ուղևորությունը նվիրված էր 1829 թվականին Բարձր-Հայքից Կովկաս տեղափոխված հայ բնակչության կաթոլիկ եկեղեցուն պատկանող գյուղերի վերաբնակեցման հարցերին։

Բագրատունին վախճանվել է 1866 թվականի դեկտեմբերի 24-ին, 76 տարեկան հասակում և թաղված է Ս. Ղազար կղզում։

2

Սկսելով XIX դարի սկզբներին, Բագրատունու ստեղծագործական ուղին շարունակվեց մինչև 60-ական թվականները, և զուգադիպեց հասարակական երկու խոշորագույն երևույթների հետ։

XIX դարի առաջին կեսը զուգադիպում է հայ ազգության կազմավորման ժամանակաշրջանին, մի հանգամանք, որը կարող էր անդրադառնալ Բագրատունու ստեղծագործության վրա և նոր որակ հաղորդել նրա հայրենասիրությանը։ Եվ Բագրատունին յուրովի արձագանքեց հայ հասարակական կյանքի մեջ տեղի ունեցող նոր երևույթներին ու փոփոխություններին։

Երկրորդ, ապրելով Եվրոպայում, Բագրատունին ժամանակակից էր եվրոպական ժողովուրդների, հատկապես իտալացիների և հույների ազատագրական շարժումներին, որոնք նույնպես մասնակիորեն ազդել են նրա հայացքների վրա։

Բագրատունին, անշուշտ, չէր կարող արմատական ազդեցության ենթարկվել Եվրոպայում ծավալված ազատագրական շարժումներից։ Նա կղերա-ավատական գաղափարախոսության ներկայացուցիչ էր, կաթոլիկ հոգևորական։ Սակայն այդ շարժումները, բեկվելով Բագրատունու աշխարհայացքի մեջ, յուրօրինակ ձևով անդրադարձան «Հայկ դյուցազնում»։

Բագրատունու «Հայկ դյուցազնը» նվիրված է հայրենասիրության և կրոնի պաշտպանության գաղափարներին։ Հայրենասիրությունը և կրոնը Բագրատունու մոտ երկու համազոր ու միաձույլ գաղափարներ են, որոնք, ըստ հեղինակի, անհրաժեշտ են ազգի ինքնուրույնության և ազատության համար։

Մինչև Բագրատունին, XIX դարում, հայրենասիրության և կրոնի պահպանման գաղափարների գեղարվեստական առաջին խոշորագույն մշակողը հանդիսացավ Հովհան Վանանդեցին՝ իր «Տեսարան հանդեսից Հայկայ...» պոեմով, որը Մ. Աբեղյանը համարել է «Հայկ դյուցազնի» «նախագաղափարը»։ Տասնմեկ գլուխների մեջ Վանանդեցին երգել է Հայկի ծնունդը և պայքարը։ Պոեմը ավարտվում է ոչ ըստ ավանդության։ Նա պատմում է Բելի մահվանից հետո Հայկի ծաղկած պետության մասին մինչև Հայկի մահը։

Բագրատունին նույնպես դիմեց Խորենացուն։ Նրա, ինչպես և առհասարակ Մխիթարյանների ոգեորության աղբյուրը, հայկական պատմական անցյալն էր, ուր փնտրում էին նրանք իրենց հուզող արժեքները։

Անցյալի պաշտամունքը բարդ ձևերով էր բեկվում Մխիթարյանների միաբանության մեջ։ Մի կողմից նրանք այդ անցյալին հաղորդում էին իդեալական երանգներ, դարերի խորքից վերակենդանացնում իրենց սիրած հերոսներին, ոգեորվում նրանց ստեղծագործություններով և այդ հերոսների կատարյալի մեկնաբանությամբ վերաբերմունք ցույց տալիս դեպի ժամանակակից կյանքը, մյուս կողմից, այդ անցյալը դիտելով որպես նմանվելու, հետևելու գերազանց օրինակ, հանդես էին գալիս անտիկ կուլտուրայի ջերմ կողմնակիցների դերում։

Հայաստանը վաղուց էր զրկվել պետականությունից։ Հայկական կլասիցիզմի հետևորդները անկարող էին և չէին ցանկանում ստեղծագործական դրդումներ ստանալ ժամանակակից իրականությունից։ Նրանք իրենց հայացքը սևեռեցին դեպի պատմական անցյալը, ուր գտան Հայաստանի երբեմնի թագավորության հերոսներին և, խրախուսված նրանց հայրենասիրական արարքներով, ներբողեցին նրանց։

Եվրոպական կլասիցիստները, վերակենդանացնելով հունա-հռոմեական պատմության և գրականության հերոսներին, ներբողների, ողբերգությունների և հաղթական պոեմների միջոցով երգում էին ինքնակալության հաղթանակը և ուժը, ասպետների խիզախությունները, նրանց մեջ խտացնելով ժամանակի մորալն ու պահանջը։ Հայ կլասիցիստները, իրենց ստեղծագործության թեմատիկան վերցնելով հայոց պատմությունից, հարություն տվեցին հայ պատմական հերոսներին։

Հայկական անցյալի ոգևորիչ փաստերին դիմող հայ կլասիցիզմի գաղափարախոսությունը նույնպես հայրենասիրությունն էր, հանուն հայրենիքի՝ անհատական շահերի զոհաբերումը, ընդհանուրի շահերին՝ անձի նվիրվածության բարձր գիտակցությունը։

3

Բագրատունու ստեղծագործությունների գլուխ գործոցը «Հայկ դյուցազն» է, որի բովանդակության հիմքը «Հայկի և Բելի կռիվը» ազգային առասպելն է։ Հեղինակն ինքը թվարկել է այն բոլոր սկզբնաղբյուրները, որոնցից նյութեր է քաղել իր երկի համար։

Աղբյուրներից հիմնականն ու առաջինը Խորենացին է, այնուհետև՝ Սեբեոս, Թովմա Արծրունի, Մովսես Կաղանկատվացի, Միքայել Ասորի, Վարդան Բարձրբերդցի, «և արտաքինք և մեկնիչք սուրբ գրոց»։

Խորենացին մանրամասն պատմում է, որ մինչ «աշտարակաշինությունը» և լեզուների բաժանումը երկրի իշխաններն էին Զրվանը (Սեմ), Տիտանը (Քամ) և Հապետոսթեն (Հաբեթ)։ Տալով մի քանի տեղեկություններ Հայկի և Բելի այս նախահայրերի մասին, անմիջապես անցնում է բուն նյութին։ Խորենացին ասում է. «Սա (Հայկը —Ա. Մ.) ի մէջ սկայիցն

քաջ և երևելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ միապետել 'ի վերայ ամենայն սկայիցն եւ դիւցազանց։ Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բէլայ»[1]։

Չենթարկվելով Բելին, Հայկը թողնում է և հեռանում։ Այնուհետև պատմահայրը գրում է, թե ինչպես Բելը, որդիներից մեկին, հավատարիմ մարդկանց ընկերակցությամբ, պատգամավոր է ուղարկում Հայկի մոտ, առաջարկելով նրան հպատակություն։ Հայկը մերժում է, և Բելը դիմում է հարձակման։ Սարսափահար Կադմոսը փախչում է և ահազանգում Հայկին մոտալուտ վտանգի մասին։ Կռվում Հայկը սպանում է Բելին։


ՀԱՅԿ
ԴԻՒՑԱԶՆ
ՎԷՊ
Ի Հ. ԱՐՍԵՆԷ Ն. ԲԱԳՐԱՏՈՒՆԵՆՑ
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
1858

«Հայկ Դյուցազնի» անվանաթերթը

Բացի հիմնական այս դեպքերից, Բագրատունին պոեմի գլխավոր հերոսներից մեկի՝ Բյուրասպի նախատիպը նույնպես վերցրել է Խորենացուց։

Ոչ միայն հերոսների նկարագիրն ու արտաքինը, այլև ռազմական գործողությունների մի քանի դրվագներ Բագրատունին մշակել է ըստ Խորենացու։ Խորենացին հիշատակել է Հայկի սերունդից մի քանիսի անունները՝ Խոռ, Մանավազ, Բազ, Արամանյիս, Կադմոս և որոշ վայրերի անունների ստուգաբանությունը՝ կապված Հայկի անվան հետ՝ Հայք, Գերեզմանք, Հայկաշեն և այլն։ Այս բոլորը նույնությամբ պահպանված են Բագրատունու երկում։

Մնացյալ սկզբնաղբյուրները, իրենց հիմնական բովանդակությամբ, համարյա բան չեն ավելացնում Խորենացու պատմածին, բացի մասնակի լրացումներից։ Օրինակ, Սեբեոսը պատմում է, որ Հայկը ունեցել է յոթ դուստր, մինչդեռ Խորենացու մոտ ոչ մի հիշատակություն չկա այդ մասին։ Բագրատունու Դյուցազնը յոթի փոխարեն ունի մեկը՝ Հայկանուշը։

Թովմա Արծրունուց Բագրատունին վերցրել է միայն Բելի որդու անունը՝ Բաբ, որը չկար նախորդների մոտ։

[1] Խորենացի, *Պատմություն հայոց, Թիֆլիս, 1881, Ա. գիրք, Ժ գլուխ*։

Բարձրբերդցին ևս շատ հակիրճ է պատմել Հայկի և Բելի մասին։ Բագրատունին նրանից է վերցրել Նոյի որդիների անունները՝ Մանիտոն և Աստղիկ (վերջինիս անունը կա և Խորենացու Ա գրքի Զ գլխում), Հայկի յոթ եղբայրների հիշատակությունը և նրանցից երկուսի անունները.

«Եւ Թորգոմ ծնաւ զՀայկն, և զեօթն եղբարս նորա, զՔարթլոս, զԿով-կաս և զայլսն, որք ժառանգեցին զՀիւսիսի»[1]։

Բագրատունին պատմիչներից մի քանիսին (Մովսես Կաղանկատվացի, Թովմա Արծրունի, Միխայել Ասորի) չի օգտագործել ամբողջապես, այլ նրանցից քաղել է միայն այն տեղեկությունները, որոնք վերաբերում էին աշտարակաշինությանը, Հայկին ու Բելին։

Հիմնական աղբյուրը և՛ Բագրատունու և՛ պատմագիրների համար Խորենացին է։ Անշուշտ նրանք առասպելը իրենց կողմից ենթարկել են գրական մշակման, հենվելով ժողովրդական զանազան պատումների վրա, ինչպես այդ վկայում է Միխայել Ասորու գրքի երկրորդ հրատարակությունը։ Սակայն, առասպելի բուն իմաստը՝ ազատության գաղափարը, բոլորի մոտ պահպանված է. Հայկը և Բելը ոխերիմ թշնամիներ են, մեկը ազատատենչ, իսկ մյուսը բռնակալ։

Բացի ազգային աղբյուրներից, օգտագործված են և օտար աղբյուրներ, հատկապես հմուտ ուսումնասիրության է ենթարկված «Աստվածաշունչը»՝ բուն նյութին առնչվող ավանդական-կրոնական հարցերի մեկնաբանման համար, ինչպես, օրինակ, աշտարակաշինության և լեզուների բաժանման պատմությունը, զանազան ավանդական վայրերի անունների, բառերի ստուգաբանությունը և այլն։

* * *

Բագրատունին, չնայած սկզբնաղբյուրների այսպիսի սակավ տեղեկություններին, հարուստ երևակայությամբ, հյուսել է վիպական մի ամբողջ պատմություն, բազմաթիվ հերոսներով ու դեպքերով։

Առաջին դրվագում հեղինակը դիմում է «Հայոց հրեշտակին», խնդրում է նրանից երկնային ոսկի քնարը և որպես ազատության մեծ պայքարի մասնակից ցանկանում է, որ «Հայոց հրեշտակը» նրա համար բանա երկրնքի ու անդունդների քողը։

Աստված իր պատգամավորին՝ հրեշտակին ուղարկում է Հայկի մոտ և պահանջում, որ նա փութացնի վրիժառությունը Բելից։ Հսկա դյուցազնը շտապում է հաղորդել յուրայիններին երկնային պատգամը։ Նա պատմում է ժողովրդին Բելի դաժանությունների ու բռնության մասին և հայտնում, որ իրենց երկիրը պետք է ցերծ մնա պիղծ բռնակալի ասպատակություններից։ Ազատության ու հայրենասիրության տենչով տոգորված՝ ամբողջ ժողովուրդը միանում է Հայկի պայքարին։ Հաջորդ օրը, Նավասարդ ամսին, մարդկությունը ջրհեղեղից ազատվելու և տարեկան բերքի տոնն էր։

---

1 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 14։

Համաժողովրդական ուրախության, խրախճանքի ժամին գալիս են Բելի պատգամավորները։ Բելի որդի Բաբը ներկայացնում է իր հոր երեք պահանջները. առաջին՝ հպատակություն, երկրորդ՝ կրոնափոխություն և երրորդ՝ Հայկի դուստր Հայկանուշին տալ Բելին կնության։ Հայկը մերժում է երեք առաջարկները։ Լսելով նրա բացասական պատասխանը, Տիտանյանները (Բելի բանակը) անցնում են հարձակման, որի լուրը դյուցազնին հասցնում են Կադմոսի մոտից եկած սուրհանդակները։

«Հայկ դյուցազնի» երկրորդ անվանաթերթը

Հայկյան բանակը շարժվում է մարտի։ Ըստ նախնյաց սովորության, բանակին միանում են կանայք՝ Հայկանուշը և Հայկի որդու հարսնացու՝ Արուսյակը։

Հանդիպում են երկու հակառակորդ բանակները։ Երկնային ուժերը՝ աստված իր հրեշտակներով, պահապան ու քաջալերողն են Հայկի, իսկ երկրի ոգիները, այսինքն Սանդարամետի դևերը՝ Բելի հովանավորները։

Առաջին հանդիպումը նշանավորվում է Հայկյան բանակի հաղթությամբ, սակայն, բանակի ներսում, Զրվանյան Վստամի գլխավորությամբ, որը մեծ քաջագործություններ էր ցուցաբերել կռվում, կազմակերպվում է խռովություն ընդդեմ Հայկի։ Նրանք իրենց են համարում երկրի տերը, և ո՛չ եկվոր Հայկին։

Բելի ներկայացուցիչները՝ Բյուրասպը և Բաբը, նորից գալիս են Հայկի մոտ՝ առաջարկելով նույն պայմանները։ Հայկը մերժում է, և նրանց մեկնումից հետո, բոլորի ներկայությամբ պատմում աշտարակաշինության պատմությունը, թե ինչպես Բելը՝

Դաւազանաւ երկաթեաւ յարիւն 'ի հուր և յաւերած
Փարաւազս անձին տրեաւ կանգնեաց յերկրի զգահ բռնաւոր։

Չհանդուրժելով գոռոզ հսկայի դաժանությունները, Հայկը թողնում ու հեռանում է և իր մերձավորներով բնակություն հաստատում Այրարատյան դաշտում։ Բռնակալի ձեռքը այստեղ ևս հանգիստ չի տալիս դյուցազնին։ Նա ցանկանում էր խլել Թորգոմյանների ազատությունը, պատիվը, որոնց պաշտպանության համար կռվում էր Հայկը Բելի դեմ։

Ծանր է դյուցազնի վիճակը։ Վստամին հաջողվել էր արդեն երկպառակտել բանակը և Հայկը ստիպված առանձնանում է իր որդիներով ու թոռներով, հիմնելով առանձին զորաբանակ։ Հոգեկան տագնապի այս սուր պահին, Աստղիկը, Նոյի դուստրը, որը երկնքում հովանավորում էր հայերին, աստծո հրամանով գալիս հուսադրում է դյուցազնին, ներշնչելով նրան արիություն ու տոկունություն։

Այնուհետև դեպքերը արագորեն հաջորդում են իրար։ Վստամի բանակը մատնվում է պարտության։ Հայկը տեսնելով վտանգավոր դրությունը, որոշում է օգնության կանչել Ապահ որդուն, որպեսզի նա ևս մասնակից դառնա վրիժառության արդար գործին։

Վիրավորված Վստամի դավաճանությունից, Հայկը՝ երդվել էր որևէ մասնակցություն չունենալ նրա վարած կռիվներին, սակայն ստեղծված լուրջ վիճակը հարկադրում է նրան երդմնազանց լինել և կռվել Տիտանյանների դեմ՝ իր որդիներով։ Հայկի մասնակցության շնորհիվ փոխվում է մարտի բախտը, պարտվում են Տիտանյանները, Թորգամյաններին պատճառելով ծանր կորուստ. սպանվում է Հայկի որդի Հայկակը։

Տեսնելով սեփական ուժերի նվազումը, Բելը ստիպված հրաժարվում է կրոնափոխության պահանջից, բայց կրկին մերժվում է։

Համալրվում է Հայկյան բանակը։ Ապահը ուրախությամբ ընդունում է դյուցազնի առաջարկը։ Նա ապրում էր առանձին, հոր կամքին հակառակ, գեղեցիկ Բեբորի հետ ամուսնանալու համար։ Ապահը ուժի, գեղեցկության և քաջության տիպար է. նրա մեջ զարմանալի ներդաշնակությամբ միահյուսված են գեղեցիկն ու հերոսականը։ Ճանապարհին նա եղբորը՝ Մանավազին պատմում է իր կռիվը մարդաձև հրեշի հետ, որը Տիտանյաններից նշանակված լրտես էր, չարիք։ Նա առևանգում էր կանանց, հափշտակում անասուններ և մարդիկ սարսափահար, անկարող էին նրան ոչնչացնել։ Ապահը խիզախում է կռվել հրեշ Խուդաբանդի հետ, սպանում է նրան և ազատում վերջին զոհին՝ Հրանուշին։

Բազմաթիվ զորքերով Հայկին օգնության են հասնում նրա յոթ եղբայրները, որոնք հանդիպելով Ապահին, կազմակերպում են շքեղ զորահանդես, ցուցադրելով իրենց զենքի ուժը։

Սկսվում է Թորգոմյանների (Հայկի եղբայրները, Ապահը) և Տիտանյանների կռիվը։ Արյունալի մարտերից հետո, Բելի բանակը դիմում է փախուստի։ Նրա անհաջողություններից խռովում ու գազազում են չար ուժերը։ Բյուրասպը մանուկ՝ սատանայից լսելով Բելի պարտությունը, անձամբ գնում է փոթորկաբեր Քաջի մոտ, խնդրելով նրա օգնությունը։ Քաջը, հնազանդ չար ուժերին, բարձրացնում է ահռելի փոթորիկ։ Բզնունյաց ծովի վրա զոհվում է Թորգոմյանների բանակը, ամեն ինչ ոչնչացվում ու մատնվում է ավերածության։

Ի հակադրություն երկրի չար ուժերին, հանդես է գալիս երկնային ամենակարող զորությունը։ Հայոց հրեշտակը ահազանգում է աստծուն Թորգոմյանների նավաբեկության մասին։ Եվ ահա, Աստղիկը, աստծո հանձնարարությամբ, դուրս է գալիս դրախտից, խաղաղեցնում է մոլեգ-

նած ծովը։ Վերջ է տրվում աղետաբեր փոթորկին, բայց վիրավորվում է Հայկը։

Տիտանյան բանակի երկու պարտված զորավարները՝ Շամիրը և Թուրոսը, որոշում են գիշերային հարձակման ենթարկել Թորգոմյաններին, սպանել Հայկին, նկատի ունենալով նրա վիրավոր վիճակը։ Գիշերային լռության մեջ Հայկանուշը լսում է թշնամու նախապատրաստությունները վկայող ձայներ։ Հայկանուշը ապրում է խղճահարության և զղջման, երկընտրանքի ծանր րոպեներ։ Կանացի նուրբ զգացումը՝ սերը, այժմ և՛ մղում է նրան հասնելու թշնամիներով շրջապատված Հրանտին, սակայն, որդիական պարտականության գիտակցությունը իշխող է հանդիսանում, և նա վճռում է պաշտպանել հորը։

Վերցնելով դյուցազնի զենքերը, Հայկանուշը մթության մեջ արիաբար կռվում է հարձակվող թշնամու դեմ և ի վերջո ընկնում է Շամիրի հարվածից։ Կիսակենդան վիճակում նրան փոխադրում են Բելի մոտ, որը հանձին աղջկա պարտված էր կարծում և հորը՝ Հայկին։

Բելի հրամանով, Հայկանուշը ներկայանում է նրան։ Բելը խոստանում է Հայկանուշին իշխանություն, ճոխություն, փառք և ամեն տեսակի վայելքներ, հիշեցնելով, որ իրենց ամուսնությամբ վերջ կտրվի երկու հսկաների թշնամությանն ու դժբախտություններին։

Իզուր են Բելի ջանքերը։ Անդրդվելի է Հայկանուշը, հպարտ ու կայուն իր որոշման մեջ։ Համառ ու քինախնդիր բաբելացին ձգտում է տիրանալ հալոց դստերը։ Այժմ Բելը հրաժարվում է նաև իր երկրորդ պահանջից, բայց, այնուամենայնիվ Հայկը մերժում է նրան տալ Հայկանուշին։ Ո՛չ Բաբի ու Ամրփալի սպառնալիքները, ո՛չ Թամիրի (Բելի աղջկա) թախանձանքը և ո՛չ էլ Հայկանուշի ծանր վիճակը անզոր էին մեղմելու Հայկի վճիռը։ Հաշտություն նրա և Բելի մեջ կկնքվեր միայն այն դեպքում, երբ Բելը կհրաժարվեր բռնակալությունից. և երբ կթագավորեր ազատությունն ու հանգիստը։

Կրած պարտություններից հոգեկան տառապանքի, ներքին մաքառման մեջ էր Վստամը։ Երազում հայտնվում է նրան իր հայր Զրվանը և խորհուրդ տալիս որդուն՝ հնազանդվել դյուցազնին։ Արթնանալով քնից, զգաստ ու առողջ բանականությամբ, նա վճռում է հրաժարվել իր խռովարար գաղափարներից, հաշտվում է Հրանտի հետ և ընկերանում նրան՝ Հայկանուշին փրկելու համար։ Թորգոմյաններին չի հաջողվում Հայկանուշին ազատել. մեծ ընդհարումների ժամանակ գերի է ընկնում և Հրանտը։ Նրանք երկուսով ներկայացվում են Բելի ատյանին և կամովին ընտրում մահվան վճիռը, արհամարհելով տանջանքն ու սպառնալիքները։ Հրանտը դատապարտվում է մահվան, իսկ Հայկանուշը՝ շղթայակապ բանտարկության։

Սակայն երկնային հսկողությունը չի լքում Թորգոմյաններին։ Աստծո միջնորդությամբ հրեշտակը աներևույթ կերպով մոտենում է վիրավոր դյուցազնի մահճին, կազդուրիչ քնով ընդարմացնում է նրան և երազի մեջ փոխադրում երկնավոր տաճարը։ Այնտեղ Հայկին ցույց են տրվում պա-

նազան տեսիլներ՝ տիեզերքի ստեղծումից սկսած մինչև հայոց պատմության փառավոր էջերն ու դժբախտ անցքերը։ Հայկը տեսնում է տիեզերքի ու մարդկության սկզբնավորումը, հայերի անցյալն ու ապագան իրենց հերոսներով՝ Արա գեղեցիկ, Երվանդյան Տիգրան, Արտաշես, Արտավազդ, Վռամշապուհ, Սահակ, Մեսրոպ, Վարդան, Վահան, Բագրատունիք, Կիլիկյան թագավորություն, Դավիթ և Սյունյաց ապստամբություն, Մխիթար Սեբաստացի. Հայոց պատմության քաղաքական պայքարի, հոգևոր վերածնունդի այն բոլոր դեմքերին, որոնք պահպանել են ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից, փրկել մտավոր խավարից, կռվել նրա անկախության ու ազատության համար։

«Հայկ դյուցազնի» նկարներից

Դրանից հետո Հայկի մեջ վերակենդանանում են արիությունն ու հոգեկան կորովը։ Բուժվում է դյուցազնը և ֆիզիկապես։ Աստղիկը երկնային հրամանով ընդունում է Բավոն բժշկապետի կերպարանքը և զանազան անուշահոտ բույսերով դարմանում նրա վերքը։

Կազմավորվում է Թորգոմյան բանակը։ Վստամը ներում է խնդրում դյուցազնից և միանում նրան։ Ներքին միասնությունը ապահովելուց հետո, Հայկը ձեռնարկում է վճռական մարտի։ Կրկին բախվում են երկնքի և երկրի տերերը։ Հայոց հրեշտակը հատուկ սպառազինություն է բերում Հայկի համար։ Իսկ սանդարապետի ցանկությամբ Բելը զոհաբերելու էր իրենց, այսինքն խավարի իշխանությանը, Հայկանուշին ու մյուս գերյալներին, որպեսզի ապահովեր Տիտանյանների հաղթանակը։ Եվ ահա մահվան սարսափի րոպեին, երկնային զորությամբ Աստղիկն ու հրեշտակները ազատում են Հայկանուշին և տանում Հայկի մոտ։

Սանդարապետը կռվի է պատրաստում խավարի ուժերին, իսկ աստված՝ իր հրեշտակներին։ Միմյանց դեմ են գալիս լույսն ու խավարը, պարտվում է սանդարապետը։

Կռիվը փոխադրվում է երկու բանակների միջև. Տիտանյաններից զոհվում են բազմաթիվ հսկաներ, ի թիվս որոնց և Բյուրասպը։

Բելի անկազմակերպ բազմությունը չի կարողանում դիմադրել Թորգոմյանների կազմակերպված զորաբանակին։ Բելին անձամբ հետապնդ-

դում էր ինքը՝ դյուցազնը։ Եվ վերջապես հաղթանակում է արդարությունը, կատարվում է անխուսափելին. Հայկի աղեղից սպանվում է բռնակալը։

Տոնում են ազատության մեծ հաղթանակը։ Հայկը միաձայն ընտրվում է Հայաստանի նահապետ և երբ նրան մատուցում են Բելի գերված արքայական գավազանն ու թագը, Հայկը հրաժարվում է ընդունել.

Քա՛ւ ինձ, ասէ, յանձն առնուլ զառելիդ զայդ օրէն և շուք,
Զինքնակալ միահեծան արքայութեան նշան և կնիք։

Հայկյան բանակը հաղթությամբ վերադառնում է Հայկաշեն։

4

Ազգային առասպելը ենթարկելով գրական մշակման, Բագրատունին Հայկի պայքարը դիտել է որպես հայ ժողովրդի վաղ շրջանի ազատագրության պայքարի պատմություն։ Հայկը ներկայացված է իբրև պատմական դեմք։ Նա պոեմի գաղափարախոսության հիմնական կրողն է, Նոյից սերված, Թորգոմի որդին, աստծո ընտրյալը, հայերի նախահայրը։

Ինչպե՞ս է կերտել Բագրատունին Հայկին ու մնացյալ հերոսներին։

Հայկը հսկա է։ Ֆիզիկական անսահման ուժի հետ միասին, նրա մեջ մարմնավորված է և արտաքին գեղեցկությունը։

Եւ 'ի գլուխն սաղաւարտ ահեղ ծօծեալ փաղփուն վերջօր,
Եղանէր որդւովքն հանդերձ, խայտայր դիւցազն 'ի մէջ քաջաց,
Խոպոպք վարսից զանգուրադեղ ղուսովքն իջեալ ծածանէին։
Նա նիզակ արի ծօծեալ 'ի զաւազան իշխանութեան՝
Հարկանէր գործոյն խրախոյս աչօքն՝ անձամբն և հրամանաւ։

Հայկի արտաքինի մեջ ընդգծված է նրա հերոսական նկարագիրը։ Նա անձնիշխան է, վեհ, միաձույլ մի կերտվածք, որն իր ամբողջությամբ իշխում է թե՛ մարդկանց և թե՛ բնության վրա։ Բարդ չէ Հայկի հոգեկան կերտվածքը։ Նա ազատության և կրոնի պաշտպան է և այս հիմնական գաղափարներից են բխում նրա ներքնաշխարհի հույզերը՝ ոգևորություն, հիասթափություն, հուսախաբություն, վրիժառություն։

Հայկը հանդես է գալիս ո՛չ միայն իր ժողովրդի, այլև համայն մարդկության ազատության և իրավունքների պաշտպանության պահանջով։

Ոչ մեզ եկեթ է խնդիր 'ի բռնութեանց ազատութեան,
Ա՛յլ համօր աշխարհի բոլոր ազանց և յաւիտեանից։

Հայկը բյուրեղացած տիպ է։ Նա հեղինակի քաղաքական-հասարակական իդեալի՝ ֆեոդալական կարգերի այն ցանկալի միապետն է, որը պայքարում է օտարերկրյա բռնության դեմ, հանուն ազգային ինքնուրույնության և կրոնի ազատության։ Բագրատունին նրա մեջ մարմնավորել է դյուցազն հսկայի լավագույն հատկանիշները՝ հերոսություն, հայրենասիրություն, հավատարմություն և անձնազոհություն դեպի իր հայրենիքը,

համատատակամություն, ներողամտություն, հոգու վեհանձնություն։

Հայկի հերոսությունը պայմանավորված չէ միայն նրա հոգեկան նկարագրի արիությամբ, այլև ֆիզիկական ուժով։ Այստեղ հեղինակը դիմել է ժողովրդական ավանդությանը Տորք Անգեղի մասին, որն ըստ Խորենացու ահագին ժայռեր էր պոկում գետնից և շպրտում թշնամու վրա։

Ահա և Բագրատունու դյուցազնը.

> Վազէ Հայկ յերիվարէն, տուեալ ըզնա յարին Կոռնակ,
> Շոպէ պարեխ մի քասքնելի անդ 'ի գետինն հարըստեալ,
> Զոր յայժմուցըս քըսան այր 'ի տեղւոջէն չկարէր խախտել.
> Ամբարձեալ միով ձեռամբ և գգըլխով ճախր ածեալ պարսէ։
> Ի մռընչեալ ժըպիրհ ժայռին և սոսափել թևոց հոգւոյն
> Սասանեցան ախոյեանք և մահ 'ի դէմս ներկաւ նոցուն։

Բագրատունին մի կողմից օգտագործել է Խորենացուն, իսկ մյուս կողմից՝ Հոմերոսին. Իլիականում նույնպես կիկլոպները հսկա ժայռերով էին կռվում թշնամու դեմ։

Բագրատունու Հայկը ընթերցողին ներկայացված է որպես պատրաստի հերոս։ Նրա տիպական հատկանիշները աստիճանաբար չեն զարգանում պոեմի հետ. առաջին իսկ ճառից հետո, նա արդեն կազմավորված ու ձևավորված է, առանց հոգեկան տատանումների ու անցումների։ Նա հեղինակի գաղափարների արտահայտիչն է։

Հայկին անմիջապես հակադրված է մյուս հսկան, Տիտանյան Բելը, որը բացասական հերոս է։ Նա բռնակալ է, մարդկությունը ստրկացնող ինքնիշխան։ Բելը, Հայկի համեմատությամբ, հոգեկան իր նկարագրով թույլ է ու անկայուն։ Գաղափարը չէր, որ նրան առաջնորդում էր, այլ անզուսպ կիրքը դեպի Հայկանուշը, որովհետև նա ի վերջո զիջում է Հայկին իր պայքարի գաղափարական մասը կազմող երկու առաջարկները՝ կրոնափոխությունն ու հպատակությունը։

Ինչպես Հայկը, նույնպես և Բելը պատրաստի հերոս է, բացասական հատկանիշների խտացում։ Թե՛ Հայկը և թե՛ Բելը, ենթարկվելով գրական մշակման, միաժամանակ հիմնականում համապատասխանում են ժողովրդական ավանդության ոգուն։

Բելի հետ անմիջապես կապված է նրա դենպետը՝ Բյուրասպը, ստորերկրյա չար ուժերի պետը, որի գեղարվեստական կերպարը կազմված է մասամբ ժողովրդական ավանդության տարրերից։ Խոսելով նրա կախարդական հատկությունների մասին, Բագրատունին ասում է. «ըստ համբաւուց վաղեմի ստուգապատումն աւանդութեանց»։ Բյուրասպի հիմնական հատկանիշն է անզուսպ, անհաշտ պայքարող ոգին ընդդեմ աստծո։

Պոեմի գլխավոր հերոսներից է Զրվանյան Վստամը, նա փառասեր, հանդուգն և խիզախ ապստամբ իշխան է։ Հեղինակը նրան ստեղծել է Զրվանյանների պատմության հիման վրա, ըստ Խորենացու։ Վստամը լինելով երկրի ընիկներից, իրենց՝ Զրվանյաններին է վերապահված համարում երկրի իշխանությունը։

Ուշագրավ է այստեղ մի հանգամանք։ Երբ Վստամը Հայկի հակառակորդն է, ապա լրիվ բացասական անձնավորություն է, իսկ երբ զղջման գալով միանում է Հայկի պայքարին, ապա բանաստեղծի ցանկությամբ ամբողջովին վերափոխվում է։ Պետք է ասել, որ դա Արսեն Բագրատունու ստեղծագործության առանձնահատկություններից մեկն է։ Նրա հերոսները ստեղծված են այնպես, որ կարծես կրողներ են բացասական կամ դրական երկու հատկանիշներ մարմնավորող կաղապարների, որոնք կարելի է դյուրությամբ հագցնել այս կամ այն հերոսին, տալով նրանց ցանկացած բովանդակությունը։ Դեռ ավելին. նրա հերոսները ամբողջությամբ ենթարկված են հեղինակի կամքին ու ցանկություններին։ Նրանց գործողությունների մեջ զգացվում է ինքը՝ հեղինակը իր գաղափարներով ու մտածողությամբ։

Համեմատաբար ավելի հաջողված են և տարբերվում են իրենց շրջապատից Հայկի որդի Ապահը և դուստր Հայկանուշը։ Ապահը հավիտենական սիրո, գեղեցկության ու վայելքի երկրպագու է, ասպետական քաջագործունեությունների լավագույն մարմնավորումը։

Հետաքրքրական է Հայկանուշի կերպարը։ Նա երկու հակադիր, իրար բացասող նկարագրերի միացումն է։ Անսահման կանացիություն, ռազմական մարտնչող ոգու հետ միասին, «գեղեցիկ կոյսն արիասիրտ նոյնչափ ի գութ գորովաղեա»։ Այսպես է բնութագրում իր հերոսուհուն հեղինակը։ Մատաղ հասակից նրան հրապուրել են ո՛չ թե կանացիական առօրյայի հետ կապված զբաղմունքները, այլ մարտիկի ոգին զարգացնող ու կազմակերպող զենքի տեսակները։ Ընկերանալով բանակին, նա իր ներկայությամբ ոգևորում էր զինվորներին և՛ որպես կին, և՛ որպես քաջ ռազմիկ։ Հայկանուշը գրականության մեջ հանրածանոթ կանացիական խիզախ կերպարներից է. այսպես է Վիրգիլիոսի Կամիլլան, Տասսոյի Կլորինդան, որն իր կանացիական հրապույրների հետ միասին խիզախությամբ կռվում էր քրիստոնյաների դեմ Երուսաղեմի գրավման ժամանակ և հերոսաբար զոհվում նրա պատերի տակ։

Հանձին Հայկանուշի Բագրատունին աշխատել է ներկայացնել կնոջ ներքնաշխարհը, տալ նրա հոգեվիճակը զանազան բարդ պայմաններում՝ տառապանք, երկընտրանք, մահվան սարսափ և ամենուրեք բարձր պահել ու ընդգծել հայ կնոջ փայլուն գիտակցությունը հայրենիքի առջև։

Կին հերոսուհիներից են գեղեցկուհի Բերոր՝ Ապահի կինը, լի նազանքներով ու հրապույրներով, Բելի դուստր Թամիրը՝ բռնակալ հոր գորովագութ աղջիկը, Հայկի Խոռ որդու հարսնացու Երուսյակը՝ Հայկանուշի մտերիմը, որին հակադրված է նա իր դյուրաբեկ, վեհերոտ նկարագրով, հոգեկան ուժերի ու կամքի թուլությամբ։

Որպես կերպարներ, Բագրատունու հերոսները ունեն բնորոշ ընդհանրություններ. հոխորտալից երկար ճառեր միանման բովանդակությամբ, արտասուքի հեղեղներ, հիացմունքի և հիասթափության անակնկալ պոռթկումներ, երդումի և զղջման զգայացունց տեսարաններ, հատկանիշներ, որոնք բնորոշ են բոլոր հերոսների համար։

Հանդես գալով մեծ մասամբ ռազմի պայմաններում, Բագրատունու հերոսները հասարակության դիմում են նրանց տրամադրությունը կազմակերպող, ազգային հպարտությունն ու գիտակցությունը բարձրացնող մարտաշունչ ճառերով, որոնց միջոցով վարգանում են գործողությունները և բացահայտվում հերոսների նկարագրերը։ Սա դասական գրականության հատուկ հերոսական պոեմի ժանրային և կոմպոզիցիոն առանձնահատկությունն է՝ լրիվ չափով կենսագործված «Հայկ դյուցազնի» մեջ։

* * *

«Հայկ դյուցազնը» էպիկական-հերոսական պոեմ է, ծավալով ավելի մեծ (22.332 տող), քան Հոմերոսի «Իլիականը», Վիրգիլիոսի «Էնեականը» և Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմը»։

Երկի բովանդակությունը՝ Հայկի և Բելի պայքարը առաջին դրվագից մինչև վերջին դրվագի առանցքն է. բայց առաջինը ծառայում է որպես ներածություն, որով հեղինակը ծանոթացնում է ընթերցողին պոեմի բովանդակության և գլխավոր անձերի հետ։ Մնացյալ դրվագներում հասունանում են դեպքերը, խորանում կոնֆլիկտները և երկը հարստանում է վիպական տարրով ու նորանոր հերոսներով, որոնցից հիմնականները՝ Հայկը, Բելը, Վստամը, Բյուրասպը, Արմենակը, Հայկանուշը, Բաբը ըսկըզբից մինչև վերջը մասնակից են անցքերին։ Սյուժեի լուծումը՝ Բելի սպանությունը տրված է ամենավերջում, իսկ հեղինակի երևակայությամբ ստեղծված ղանազան միջանկյալ պատմությունները ու դեպքերը իրենց վախճանին են հասնում մինչև բռնակալի սպանությունը, աստիճանաբար, գործողությունների զարգացման ընթացքում (օրինակ, ծերունի Ադադանը իր կյանքի տխուր էջերով, Ապահի և Բեբոր սիրային պատմությունը և նրա հետ կապված Բեբորի քրոջ՝ Բորանեի ցավալի մահը, Հայկանուշի և Հրանտի սերը, Հրանտի ողբերգական սպանությունը և այլ դեպքեր)։

«Հայկ դյուցազնը» բաղկացած է քսան տարբեր դրվագներից և Բագրատունին աշխատել է նրա կոմպոզիցիայի մեջ պահպանել բովանդակության ներքին միասնությունը, յուրաքանչյուր դրվագ դարձնելով նախորդի շարունակությունը, բայց այդ չի հաջողվել հեղինակին։ Պոեմի ընդհանուր կոմպոզիցիան ունի ակնառու թերություններ։

Նախ, խախտված է հիմնականը՝ բովանդակության հաջորդական զարգացումը։ Չորրորդ դրվագում Բագրատունին արհեստական կերպով միջամտել է և հանդես եկել ինքը հանձին Նոյի, տալով կաթոլիկ հոգևորականի կրոնական հայացքների մի երկար մեկնաբանություն, որը կատարված է տրամաբանական անճշտությամբ։ Բյուրասպը Բելի դեսպանն է, գալով Թորգոմյանների մոտ նա շարադրում է իրենց կրոնի սկզբունքները, համարելով այն միակ ընդունելին ու ճշմարիտը։ Իսկ Նոյը, փոխանակ անմիջապես հակադրվելու, նրանց մեկնումից հետո ընդարձակ, ձանձրալի ճառերով բացատրում է տիեզերքի արարչի՝ աստծո դերը, նրա մեծությունն ու հզորությունը։ Այսպիսով մի ամբողջ դրվագ, որը ոչ մի

կապ չունի սյուժեի հետ, նվիրված է Թորգոմյանների և Տիտանյանների կրոնական ըմբռնումների քննարկմանը։

Բարդ է և «Հայկ դյուցազնի» ամբողջ կոմպոզիցիան, որի գլխավոր պատճառը Բագրատունու ստեղծած հայկական միֆական աշխարհն է, խճողված բազմաթիվ գերբնական երևույթներով, հրեշտակներով, սատանաներով ու ավանդական հերոսներով։ Երկրորդ դրվագի ստորերկրյա ուժերի ժողովը, նրանց պետերի՝ սատանաների խոսակցությունը, աստվածաշնչի հերոսների վերակենդանացումը՝ ստեղծում են ընթերցողի համար այնպիսի մի վիճակ, որ անհնար է դառնում այդ բոլորը զուգակցել բուն նյութի, ընդհանուր բովանդակության հետ։ Եվ նույնիսկ հեղինակն ինքը մատնվել է որոշ շփոթի, երբ հանդես է բերում Նոյին, որի ներկայությունը ժամանակագրական խախտում է. ըստ ավանդության Թորգոմը Նոյից հետո երրորդ սերունդն է (Հաբեթ, Գամեր, Թորգոմ), և եթե «Հայկ դյուցազնում» Թորգոմը արդեն խոր ծերության հասած էր, ապա ինչպե՞ս կարող էր Նոյը կենդանի մնացած լինել։

Կան և այլ կարգի թերություններ. հատկապես նկատելի են միանման բովանդակությամբ կանացի ճառերի հաճախակի կրկնություններ, տասնյակ նման վարիանտներով նկարագրված պատերազմական տեսարաններ, մենամարտող հերոսներ, սպանված զինվորներ, մտքերի, դատողությունների և գործողությունների կրկնություններ (օրինակ, Ե և ԺՁ դրվագներում կրկնված է աշտարակաշինության պատմությունը, ԺԴ և ԺԷ դրվագներում Վստամի ողջումը, դարձը դեպի Թորգոմյանները, ինչպես և այլ դեպքեր, որոնցից տուժել է երկի կոմպոզիցիոն ամբողջությունը)։

* * *

Բագրատունին բնությունը զգացող և բնությունը բանաստեղծորեն պատկերող հեղինակ է։ Նրա ստեղծագործական տաղանդը լրիվ չափով զարգացավ և հայտնաբերվեց ո՛չ այնքան առանձին բանաստեղծություններ, որքան «Հայկ դյուցազնի» մեջ։

Բագրատունին ստեղծագործական իր կարողությունները ցուցաբերելու համար օժտված էր լեզվական մեծ կուլտուրայով։ Նա քաջ գիտակ էր գրաբարի, նրա հարստություններին և ընդհանրապես հայկազյան լեզվի բառապաշարին։ Բագրատունու լեզուն պատկերավոր է, ճոխ և բազմազան։ Բնության նկարագրությունները բազմերանգ են, գունեղ, ռազմական նկարագրությունները հանդիսավոր ու մարտաշունչ։ Լեզվական հարստության լայն հնարավորությունները նպաստել են ալիտերացիաների վարժ օգտագործմանը, որը հատկապես հաջողված է որսորդական նկարագրությունների մեջ՝ ստեղծելով յուրահատուկ տրամադրություն և աշխուժություն.

Հայկեանց ցրուել 'ի մայրիան յայսկոյս յայնկոյս յառաջս առաջս,
Ի հաչել հետազօտել շանց՝ 'ի դղորդից ասպատակին
'Դոստուցեալ բոյլք եղնոց վազեն վարգին, 'ի վեր, 'ի վայր։

Անդ քառատրոփ դրռոյթ, անթ գոռ. անդ ոտն ի դոփ, մրկունդ ի կոփ.
Թունդ առ անտառ, բոմբ 'ի բոմբիւն թումբ 'ի թրմբիւն գանգք արձանաց։

Բնությունը Բագրատունու մշտական ներշնչումների աղբյուրն է, սակայն, բանաստեղծը սիրահար է բնության առավել խաղաղ վայրկյանների։ Մենակյաց հոգևորականի զգացմունքները հանգստացել են բնության անդորրում և ներշնչվել նրանից։ Բագրատունու երգած բնությունը, հատկապես լուսաբացը՝ նուրբ երանգներով, առավոտը՝ վարդակարմիր ճաճանչներով, երեկոն իր հանդստաբեր խաղաղությամբ, բանաստեղծական արվեստի լավագույն նմուշներ են.

Առաւօտ վարդակարմիր մատամբ բանայր ըզպատուհանս
Այգածին առոյգ լուսոյն յերկնից ոսկի պատըշգամբէն,
Ջվարսագեղ ծիրաներփինեալ գլուխըս լերանցըն Թորգոմայ։
Նըկարէին թեապարից զըւարթ 'ի թուփ դեռ զարթուցեալք
Ի մացառս և 'ի մայրիս՝ ծակս ի՛ վիմաց սալարելոց,
Բիբելով ծըռուողելով զնոր կենսաբեր լոյսն այգորէն,
Եւ 'ի շուրջըս գեղգեղեալ գունակ գունակ նուագաց ձայնից
Ողջներգեն զանդրանկածին նախ նըշուլից արփւոյն ծագող։

Այս հեղինակի նախասիրած պահերից է, սակայն նրա տաղանդը չի սահմանափակվել լուսաբացի կամ մայրամուտի նկարագրություններով։ «Հայկ դյուցազնում» կան ներքին թափով ուժեղ, երևակայությունը լարող բնության արհավիրքների այնպիսի պատկերներ, որոնք ստեղծված են նկարչական արվեստի ուժով ու հստակությամբ.

Նախ քըսմնեալ կապուտակէր գեղածիծաղ ծովուն ծըփանք,
Յանդըրնդոց անտի ապա խռովեալ յամբոխ մըրըրատեսիլ,
Ալիս զալեօք լեռնաձևըս կուտակեալ կանգնէր դիզան,
Փըրփուր աղի, խըճախառն աւազ ընդդէմ ժայթքեալ երկնից։
Սահէին անցանէին լեռնակարկառ երկայն կոհակք
Տըւեալ այսուն ըզթիկունս կորաքամակ, և քիւ առեալ,
Թաւալեալ բախէին երթեալ յափունսըն քարաժեռս,
Եւ զցըրնցուղսըն շամանդաղ մինչև յաստեղըս սըրսկէին։
Ծովեզերք, խութք և կըղզիք գոչէն մըռունչ որոտաձայն.
Նա մոլէր մըրըրկէր զերկին և զօդ, զերկիր և զծով,
Վեր 'ի վայր ընդ տիեզերս հարեալ վըրդով և աղճատեալ։

Միայն առանձին նկարագրություններով չէ, որ Բագրատունին կապվում է բնության հետ։ «Հայկ դյուցազնում», հանձինս ծերունիներ Դանանի և Աղաղանի, նա, ռոմանտիկական երանգներով երգում է հովվական կյանքը, նահապետական կենցաղը՝ բնության անդորրի ու ազատության մեջ։

5

Կենսագրերի վկայությամբ, Բագրատունին իր ողջ կյանքի ընթացքում ուսումնասիրել է Հոմերոսին ու «Աստվածաշունչը»։ Եթե սա նույնիսկ չափազանցություն է, բայց խիստ բնութագրական հեղինակի համար։

Բագրատունին իբրև ստեղծագործող, առաջին հերթին հետևորդն է Հոմերոսի, սակայն, բացի Հոմերոսից, նա կրել է և այլ հեղինակների, հատկապես Վիրգիլիոսի «Էնեականի» և Տասսոյի՝ «Երուսաղեմն ազատյալի» ազդեցությունները։

Բագրատունին հանդես եկավ այլ էպոխայում, առաջադրեց միանգամայն ուրույն հասարակական իդեալներ, և վերոհիշյալ հեղինակների հետ նրան կապողը գլխավորապես դասական գրականության հերոսական պոեմների ժանրային հատկանիշներն են։ Իհարկե, չպետք է բացասել նաև կրոնական-գաղափարական որոշ ազդեցությունները Տասսոյից։

Հոմերոսի «Իլիականը» հյուսված է հույն ժողովրդի միֆական հավատալիքների հիման վրա, համաձայն որոնց հույների և տրոյացիների արյունալի պատերազմների ժամանակ օլիմպիական աստվածները բաժանված էին երկու խմբի։ Հույներին հովանավորում էին Հերան, Աթենասը, իսկ տրոյացիներին՝ Զևսը, Արեսը, Աֆրոդիտան (Վեներան)։

Իհարկե Բագրատունու ոգեշնչման և նմանվելու հիմնական աղբյուրը Հոմերոսն էր, սակայն նրա պոեմների միֆական բազմաստվածությունը (որն ամբողջությամբ կապված էր հանճարեղ երգչի ժամանակաշրջանի, անտիկ հասարակության մտածողության հետ), միանգամայն ուրույն ձև ստացավ Բագրատունու դյուցազնավեպում։ Նա բազմաստվածությունը փոխարինեց միաստվածությամբ ու երկրի չար ուժերով։ Միֆական աշխարհի նման մշակումը պայմանավորված էր քրիստոնեական կրոնով։

«Հայկ Դյուցազնի» կոմպոզիցիան, գործողությունների զարգացումը, գերբնական ուժերի միջամտությունները՝ իրենց մանրամասնություններով, հիմնականում կրելով Հոմերոսի ազդեցությունը, միաժամանակ զերծ չեն վերոհիշյալ հեղինակների ազդեցությունից։ Ահա մի քանի մանրամասնություններ։ «Իլիականում» Երազը Նեստորի կերպարանքով երևում է Ագամեմնոնին և հաղորդում Զևսի ցանկությունը տրոյացիների հետ պատերազմելու համար։

Հայոց հրեշտակը աստվածային կարգադրությամբ հայտնվում է Հայկին և շտապեցնում նրան կռվի դուրս գալ Տիտանյանների դեմ։ «Իլիականի» հետևությամբ դեպքերի համանման ընթացքով ու ձևով սկսվում է և Բագրատունու դյուցազնավեպը։

Տրոյացիների ու հույների առաջին արյունալի մարտերին դադար է տրվում երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ զոհվածներին թաղելու համար։ Այսպես են վարվում և «Հայկ դյուցազնի» հակառակորդ կողմերը։ «Իլիականի» դիակիզման տեսարաններն ու նկարագրությունները ամբողջությամբ օգտագործված են Բագրատունու կողմից։ Հայկակի հուղարկավորության ծեսերն ու ողբասացությունները Հեկտորի թաղման կենցաղային բնույթ կրող արարողություններն են։

Ապոլոնի և Պոսիդոնի մասնակցությամբ իննօրյա ջրհեղեղը ոչնչացնում է հույների պաշտպանության պատվարը տրոյացիների հարձակումներից, իսկ աստված՝ ավերում է Տիտանյանների դավադիր պատրաստությունները ընդդեմ Հայկյան բանակի։

Վիրգիլիոսի, Տասսոյի և Բագրատունու հերոսները պատերազմում ծանր վիրավորվում են։ Էնեասին փրկում է նրա մայրը՝ Աստղիկը, Իդա սարի ամենաբույժ ծաղիկների միջոցով, Գոտֆրիդին հատուկ բույսերով բուժում է նրա պահապան հրեշտակը, իսկ Հայկին՝ Աստղիկը բուժիչ ծաղիկներով։

Հայկը հատուկ «յոթնտակյա», «ոսկեձույլ ականակուռ» վահան և այլ սպառազինություն է ստանում երկնքից։ Թեդիսը քանդակապատ վահանը հանձնում է Աքիլլեսին, Աստղիկը՝ Էնեասին, Մենակյացը՝ Ռինալդին։

Համաշխարհային գրականության մեջ դեռևս Բագրատունուց առաջ Տասսոն «Երուսաղեմն ազատյալում», համաձայն քրիստոնեական ըմբռնման, միֆական աշխարհի հիմքը դարձրեց երկնային արարչի և երկրի չար ուժերի հակամարտությունը։ Այսպես է դիտված և կառուցված նաև «Հայկ դյուցազնում» աստծո և Բելի պայքարը։ Տասսոյի չար ուժերի պետը խաչակիրների դեմ կռվող Դիսկորդիան է։ Նա իր բնույթով, ինչպես և Բյուրասպը, հեքիաթային է։ Դիսկորդիայի ատելության, չարության և ըմբոստացման ոգին դեպի աստված ու մարդը պրիմիտիվ ձևով տրված է Բյուրասպի ու նրա գործակից մյուս սատանաների մեջ։

Կառուցվածքի ու բովանդակության, գործողությունների զարգացման ու հաջորդականության նմանություններից բացի, Բագրատունու ընդհանրությունները Հոմերոսի և վերոհիշյալ մյուս հեղինակների հետ նկատելի են նաև գեղարվեստական նկարագրությունների մեջ։

Հոմերոսն ունի նկարագրության որոշ նախասիրություններ. այդ բնությունն է իր տարերքով, կենդանական աշխարհը՝ անզուսպ կրքերով, սև հեղեղներ, փրփրահույզ ծովեր, մայրյաց անտառներ, սովալլուկ գայլեր, մեղուների պարսեր, կատաղած գազաններ,— ահա այն բոլորը, որոնք հատուկ են և Բագրատունուն։

Բացի նկարագրություններից, «Հայկ դյուցազնում» կան Վիրգիլիոսից, Տասսոյից զանազան միջադեպերի փոխառություններ ևս։ Վիրգիլիոսի՝ Հերակլի և Բագրատունու Ապահի մենամարտերը կիսամարդ հրեշներ Կակոսի ու Խուդաբանդի հետ ոչնչով չեն տարբերվում միմյանցից։ Երկուստեք նրանք բնութագրված են իբրև ժողովրդին ահաբեկող հասարակական չարիքներ, որոնց վերջ է տրվում Հերակլի և Ապահի անձնազոհ սխրագործությամբ։

Տասսոն նկարագրել է չերքեզ Արգամի և Տանկրետի մենամարտությունը։ Նրանցից ոչ ոք չէր զիջում իր քաջությամբ, մինչև որ մայրամուտը կասեցնում է երկու համազոր հսկաների սարսափելի կռիվը։ Այս մենամարտության ամբողջ ներքին ուժն ու թափը փոխանցված է Դասեմյան իշխանի և Վստամի կռվի մեջ, որին նույնպես վերջ է տալիս մայրամուտը։

Բացի այս բոլորից, Բագրատունուն Հոմերոսի և մյուս հեղինակների հետ կապողը դասական գրականության ոգին է, ստեղծագործական շունչն ու պաթոսը, որոնցով հագեցած է «Հայկ դյուցազնը»։

«Հայկ դյուցազնի» գլխավոր հերոսներն են աստվածատիպ երկու հսկաներ՝ Հայկը և Բելը։ Հասարակ, սովորական մարդկանց ներկայությունը, նրա մասնակցությունը հերոսական դեպքերին՝ համարյա անտեսված է։ Այսպես են Հոմերոսի հերոսական պոեմները՝ «Իլիականն» ու «Ոդիսականը»։ Հոմերոսը ժլատ է գտնվել ժողովրդի հանդեպ։ Նա անմահացրել է աստվածանման Աքիլլեսին, հունական զորքի հրամանատար Ագամեմնոնին, նրա եղբայր Մենելաոսին, Իթակիայի թագավոր հնարամիտ Ոդիսևսին, Տրոյայի արքայորդի Հեկտորին, աստվածների սիրելի Պարիսին և բազմաթիվ արքայական և աստվածակերպ հերոսների։

«Հայկ դյուցազնի» հերոսների մեջ իրականը՝ մարդկայինը, փոքր է, ավել գերբնականին, նրանք ստեղծված են քաջագործությունների համար։ Հայկը և Բելը ինքնակամ անձնավորություններ չեն, նրանք երկու հակառակորդ աստվածությունների ներկայացուցիչներ են, երկուսն էլ քաջ ռազմիկներ, ժողովրդի առաջնորդ։ Որպես գերբնական մարդիկ «Հայկ դյուցազնի» գործող անձինք հանդես են գալիս արտակարգ պայմաններում, մեծ մասամբ ռազմի դաշտերում, որոնց տարերքը մարդկային արյունն է, դիակների կույտերը։ Հեղինակի այս նկարագրություններում նույնպես զգալի է արտակարգը, որոշ հիպերբոլիզմ և մասամբ նատուրալիզմ, որովհետև Բագրատունու մոտ դա սովորական ռազմի դաշտ կամ մարդկային կռիվ չէ։ Այստեղ հանդես են գալիս աստված իր հրեշտակներով և սանդարապետը իր սատանաներով։ Մեկը Մասյաց գագաթից, մյուսը երկրի ընդերքից հովանավորում և մասնակցում են այդ մարտերին։

Թեմատիկայի համապատասխան, Բագրատունին որպես կլասիցիզմի ներկայացուցիչ ստեղծել է և դիցաբանական հարուստ աշխարհ։

Վերջապես Բագրատունուն կլասիցիզմի հետ կապող գլխավոր հատկանիշներից մեկը լեզուն էր։ Կլասիցիստների լեզուն սովորական, խոսակցական լեզուն չէր, ժողովրդական մտածողությամբ ու ժողովրդին հասկանալի։ Նրանք ստեղծեցին լեզվական նոր մշակույթ, գոյություն ունեցող լեզուն հղկեցին, մշակեցին, հարստացրին նորանոր բառերով, վերամբարձ արտահայտություններով, որով լեզուն ստացավ ճարտասանական բնույթ, հանդիսավորություն ու վեհություն։ Բագրատունին չդիմեց այդ ուղուն, նա հրաժարվեց աշխարհաբարից և բացառապես օգտագործեց գրաբարը իր լայն հնարավորություններով ու հսկայական բառապաշարով։

«Հայկ դյուցազնը» հարուստ է կլասիցիզմի գրականությանը հատուկ նկարագրություններով։ Զանազան տոնակատարությունները, հանդիսավոր արարողություններն ու ծեսերը՝ աստվածների մասնակցությամբ ու հաճությամբ, ամբողջովին դասական գրականության առանձնահատկություններն են։ Բավական է հիշատակել առաջին դրվագի, հեթանոսական շրջանից մնացած վարդավառի տոնակատարությունը, Հայկանուշի ու Արուսյակի նշանդրության արարողությունները, երկնքից Աստղիկի հայտնությունն ու նրանց շնորհավորումը։ Եվ կամ Հայկի յոթ եղբայրների կո-

բանաստեղծներ, աստվածային զայրույթով առաջացած բնության արհավիրքներն և նման բազմաթիվ նկարագրություններ։

«Հայկ դյուցազնը» հեղինակի երկար տարիների կուտակած դասական կուլտուրայի արգասիքն է։ Բագրատունին խոշորագույն գիտակն էր Հոմերոսի և այն իր անդրադարձումը գտավ նրա ստեղծագործության մեջ։

Լինելով կլասիցիստական գրականության ամբողջական արտահայտություն, «Հայկ դյուցազնում» կան և ռոմանտիկական տրամադրությունների մասնակի արտահայտություններ՝ հովվական կյանքի ներբողում, ձգտում դեպի բնություն, հիասթափություն մարդկային հասարակությունից և առանձնության մեջ հանգիստ գտնելու ձգտում։ Այս բոլորը ժամանակի արտահայտությունն էր, որը հիմնականում հատկանշական չլինելով Բագրատունու համար, աննկատելի ներթափանցել էր մխիթարյան պոեզիայի մեջ։

Բացի բանաստեղծական հղացումներից, բնության զանազան երևույթները Բագրատունին ծառայեցրել է մարդկային հույզերի վերարտադրմանը։ Հատկապես հոգեկան աշխարհի խռով, անհանգիստ վիճակը նա համեմատել է փոթորկալից ծովի, կամ վարարող ջրերի հետ.

Ըզգիշերն ողջոյն Հայկ յուզեալ ծըփեր 'ի սըրտին խորս,
Իբր 'ի ծով մըրըրկածին անկանիցին այսք յամենուստ,
Եւ ալիք զալիս առեալ կոհակք զկոհակսըն մըղիցեն,
Եւ համօրէն ծովափունք մըռընչիցեն ահագնագոչ։

Նկարագրության այս ձևերը խիստ տիպական են Բագրատունու համար, աչքի են ընկնում բազմազանությամբ ու վարպետությամբ։

* * *

«Հայկ դյուցազնի» մեջ Բագրատունին փորձել է գիտնականի պահանջկոտությամբ տալ պատմական Հայաստանի մանրազնին տեղագրությունը և գեղագետի վրձինով՝ բնական գեղեցկություններն ու ճոխությունները։ Նա աշխատել է թափանցել դարերի խորքը, երևակայության օգնությամբ վերականգնել հայ ժողովրդի վաղ անցյալի տրադիցիաները՝ ժողովրդական տոներ, խրախճանք, սուգ, նշանդրություն, ռազմի պատրաստություն, ըմբահամարտներ, հաղթանակի ուրախություններ։ Բավական է հիշատակել «Հայկ դյուցազնի» հերոսների հանդերձանքների, սպառազինության և զենքի բազմաթիվ տեսակների նկարագրությունները, որոնք վկայում են հեղինակի տքնաջան ուսումնասիրությունների, պրպտող մտքի մասին և կազմում են երկի ստեղծագործական արժանիքների լավագույն բաժինը՝ պատկերված ազգագրական-պատմական տվյալների հիման վրա։

«Հայկ դյուցազնը» լույս տեսավ 1858 թվականին, երբ կլասիցիզմն ապրել էր իր դարը։ Գրական ստեղծագործության հիմքը արդեն իրական

կյանքն էր իր բազմաթիվ հակասություններով, առօրյայով ու ներկայով։ Ժամանակի մարդը դարձել էր ուշադրության կենտրոն, կյանքը դիտվում և վերարտադրվում էր ռեալ սահմանների մեջ։ Մարդկային առաջավոր միտքը հիմնովին հեղաշրջել էր դարերի կուլտուրան, կրոնական ըմբռնումները, հասկացողությունը դեպի բնական երևույթները, և ինչպես Էնգելսն է ասել՝ «ամեն ինչ բանականության դատարանի առաջ պետք է կանգներ և կամ արդարացներ իր գոյությունը, և կամ հրաժարվեր նրանից»[1]։

Մարքսը «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» գրքի ներածությունում խոսելով հին հունական դիցաբանության մասին, որը հանդիսացել է նրանց արվեստի «զինարանն» ու «հողը», բացատրել է հունական դիցաբանության ծագման պայմանները և միաժամանակ ցույց տվել անտիկ արվեստի հմայքի գաղտնիքներն ու առանձնահատկությունները՝ կապված անտիկ հասարակության զարգացման աստիճանի հետ։

«Հունական արվեստը ենթադրում է հունական դիցաբանություն, այսինքն՝ բնության և հասարակական ձևեր, որոնք անգիտակցական եղանակով մշակված են արդեն ժողովրդի երևակայության միջոցով։ Դա է նրանց նյութը։ Սակայն ո՛չ ամեն մի պատահական դիցաբանություն, ո՛չ էլ բնության ամեն մի պատահական անգիտակցական գեղարվեստական մշակումն»[2]։

Բագրատունին «վառոդի» և «կապարի» դարաշրջանում, Հոմերոսի հետևությամբ կառուցեց իր դյուցազնավեպը, տալով նրան հայկական հերպարանք։ Բայց իր բնույթով ու ոճով «Հայկ դյուցազնը» ուշացած երևույթ էր. նա մնաց հասարակությանն անմատչելի, որի հիմնական պատճառներից մեկը պետք է համարել նրա լեզվի բարդությունն ու խրթինությունը։

«Հայկ դյուցազնը» հրապարակ եկավ այն ժամանակ, երբ իրենց, վենետիկցիների մոտ, հանձին Ալիշանի, մուտք էր գործել արդեն աշխարհաբարը՝ գրաբարի և միջին հայերենի տարրերով։ Եվ դեռ ավելին. նույն 1858 թվականին լույս տեսավ Աբովյանի «Վերք Հայաստանին», հրատարակվում էին «Հյուսիսափայլը» և «Գամառ Քաթիպա» տետրակները։ Կղզիացած Մխիթարյան միաբանության անձուկ շրջանակներում, չունենալով անմիջական կապ մայր հայրենիքի և ժողովրդի հետ, Բագրատունին իր հայացքը սևեռեց անցյալին և «Հայկ դյուցազնով» փառաբանեց կորսված պետականության, ազգային անկախության գաղափարները։

Բագրատունու դյուցազնավեպը բնականաբար չունեցավ ժողովրդականություն։ Բայց նրա հեղինակին այդ պոեմն ապահովեց ուրույն տեղ հայ գրականության պատմության մեջ, իբրև հայկական կլասիցիզմի խոշորագույն ներկայացուցչի։

---

1 Մարքս—Էնգելս, Ընտիր երկեր, հատ. I, Երևան, 1941, էջ 219։

2 Կարլ Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, Երևան, 1932, էջ 57։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԵՄՈՒԱՐԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ժողովրդի գրականության պատմություն լրիվ և ամբողջական չէր լինի, եթե նրա մեջ չարտացոլվեին մեմուարային գրականության նվաճումները, որովհետև մեմուարները (հուշեր, հիշողություններ, հուշագրեր և այլն) վերջին հաշվով գեղարվեստական գրականության մի ամբողջ ենթաբաժին են կազմում, ճիշտ է, մի առանձնակի, ուրույն ենթաբաժինը, որն ունի իր յուրահատուկ պոետիկան, զարգացման օրինաչափությունները և, հետևաբար, պատմությունը։ Մեմուարային գրականությունը որոշ դեպքերում կարող է բազմահարուստ նյութ և ինքնատիպ փաստեր տալ գրականության պատմական զարգացման ընդհանուր պրոցեսը բացատրելու համար։ Ավելին. նա կարող է դյուրացնել այդ պրոցեսի մի շարք առանձնահատկությունները մեկնաբանելու գործը։

Հայ մեմուարային գրականությունը, որի իսկական պատմությունը սկսվում է XVIII դարի վերջերից, իր նախնական արտահայտություններով նույնքան հին է, որքան հայ գրականությունն առհասարակ։

V դարից սկսած մեզանում զարգացավ հիշատակարանային գրականությունը, որ արձանագրում էր տեղի ունեցող պատմական եղելությունները դրեթե տարի առ տարի։ Առաջին հիշատակագիրները, որոնք ժամանակակից ու երբեմն էլ ականատես էին նկարագրվող դեպքերին, իրենց հիշատակարաններում անպայմանորեն անդրադառնում էին անձնական կյանքի հանգամանքներին, երբեմն հեռանալով ընդհանուր պատմության շարադրանքից։ Այսպես, Եղիշեն գրեց Վարդանանց պատերազմի իր սքանչելի տարեգրությունը՝ որպես ականատես-հուշագրող։ Կորյունը Մաշտոցի մասին մի հիշատակարան ստեղծեց, որ որոշ գծերով հիշեցնում է ժամանակակից կենսագրական հիշողությունների տեսակը։

Մեմուարատիպ պատմագրական երկերը, մանր հիշատակարանները, ժամանակագրություններն ու տարեգրությունները երկարատև զարգացման ու ձևափոխումների ենթարկվելով, XVI—XVII դարերում բաժանվեցին երկու մեծ խմբի՝ պատմական և անձնական հիշատակարանների։ Այդ բաժանումը հետևանք էր հիշատակարանային գրականության որոշ տեսակների մեջ անձնական պատմության ավելի ու ավելի մեծ տեղ գրա-

վելուն։ Արդեն Մատթեոս Ուռհայեցու (X դար) ժամանակագրության մեջ նկատվում էին այն սաղմերը, որոնք հետագայում պետք է առաջացնեին ժամանակագրության մի նոր տեսակ՝ ի դեմս Գրիգոր Դարանաղցու (Կամախեցու, XVII դար) աշխատության, որը օրագիր-հիշատակարանի, անձնական պատմության և պատմական ժամանակագրության մի շաղախ է ներկայացնում։

Որքան հեռանում ենք միջնադարից, այնքան նկատելի են դառնում անձնական և համընդհանուր պատմության զուգակցման փաստերը։ Եվ ոչ միայն այդ. երևան է գալիս ընդհանուր պատմությունից մեկընդմիշտ հեռանալու տենդենցը, որն ուղիղ գծով տանում է դեպի ինքնաներկայացման և անձնական պատմության նոր ձևերի մշակումը։ XVI, XVII, XVIII դարերի օրագրերը և ընտանեկան ժամանակագրությունները, ուղեգրությունները և ինքնակենսագրական հիշատակարանները արդեն հաստատեցին այդ նոր ձևերի հանդես գալը։

XVI—XVII դարերում բավական տարածում ստացան օրագրերը և ուղեգրությունները (Հեթում Կոռիկացի, Խաչատուր Եվդոկիացի, Մարտիրոս Երզնկացի, Սիմեոն Լեհացի, Երեմիա Չելեպի Քյոմյուրճյան, Զաքարիա Ագուլեցի և այլն)։ Ուղեգրությունները և օրագրերը խիստ անջրպետված չէին միմյանցից. նրանք ուղեչափական, ճանապարհորդական և անձնական օրագրության հետագայում միայն կայունացած ձևերի մի համադրություն էին ներկայացնում։

XVIII դարի առաջին տասնամյակում ստեղծվեց մի ինքնակենսագրական հիշատակարան եվրոպական ճանաչում ստացած Ավետիք պատրիարք Թոխաթեցու (Եվդոկիացու) ձեռքով։ Լյուդովիկոս XIV-ի և Թուրքիայում ֆրանսիական դեսպան Ֆերիոլի բանսարկություններով Բաստիլի զնդանն ընկած «Երկաթե-դիմակի» այդ հերոսը, իր ինքնակենսագրությունն էր գրում ճիզվիթ կրոնավորների թելադրանքով, խեղաթյուրելով փաստերը՝ իրեն կաթոլիկ և պապին երկրպագու ձևացնելով։ Հիշատակարան-ինքնակենսագրությունը գրվել էր 1710 թվականին։ Դա կարելի է ասել ամբողջապես նորություն էր հայկական հիշատակարանային գրականության մեջ, մի նորություն, որը հետո Մանվել վարդապետ Կյումուշխանեցու մեմուար-հիշատակարանի ավարտուն տեսքն ստացավ XIX դարի առաջին հիսնամյակում։

Անձնական պատմության, մեմուարի, ինքնակենսագրության այդ նաիվ ձևի մեջ չի կարելի չտեսնել հիշատակարանային գրականության վերջնական երկփեղկման արտահայտությունը, մի ուղղության, մեթոդի երևան գալը, որն արդեն զբաղվում էր մարդու անձնական հիշողությունների օգնությամբ՝ նրա իսկ կյանք-պատմությունը վերարտադրելու հարցով։ Այդ տարանջատումը վաղուց արդեն կանխանշված էր ինքնակենսագրական օրագրական և ուղեգրական գրականության առաջացման փաստով։ Հիմա այն հանդես է գալիս իր կայուն տեսքով՝ պատմական գրականության և մեմուարային գրականության հաստատուն տեսակներով։

XVIII դարում հայ մեմուարային գրականությունը դեռ նոր-նոր էր կազմավորվում։ Ավետիք պատրիարքի ինքնակենսագրությունից հետո, մինչև դարեվերջը, բացի մի քանի օրագրական և պատմագրական հիշատակարաններից (Պետրոս դի Սարգիս Գիլանենց, Աբրահամ Կրետացի, Հովսեփ կաթողիկոս և այլն), ինչպես նաև ուղեգրություններից (Քյուչուկ Հարություն) ուրիշ գործեր չստեղծվեցին։ Միայն դարեվերջին հանդես եկավ Հովսեփ էմինը՝ հայ մեմուարային գրականության առաջին խոշոր ներկայացուցիչը։

ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ

Հովսեփ Էմինը ծնվել է Համադանում (Պարսկաստան), 1726 թվականին, վաճառականի ընտանիքում[1]։ 1740-ական թվականներին տեղափոխվելով Հնդկաստան (Կալկաթա), Էմինը ծանոթանում է հնդկահայ առևտրական բուրժուազիայի առաջավոր խավերի քաղաքական հայացքների ու երազանքների հետ։ Այնուհետև նա թողնում է Կալկաթան և մեկնում Լոնդոն, եվրոպական ռազմական արվեստը սովորելու։ Մոտ 14 տարի Էմինը ապրում է Եվրոպայում, այնտեղից անցնում Ռուսաստան, հետո Կովկաս, փորձելով գլուխ բերել հայ ժողովրդի ազատագրության գործը։ 20 տարի շարունակ նա երազում, աշխատում ու պայքարում է այդ սրբազան գործի նշանաբանով։ Նրան, ինչպես ասել է Լոնդոնի նրա բարեկամներից մեկը, վիճակված չէր Արևելքում օրենքներ հրատարակել, բայց նա իր գործունեությամբ, իր քարոզած գաղափարներով խոր հետք թողեց հայ հասարակական կյանքում։

Հ. Էմինը հայ գրականության մեջ հայտնի է իր նշանավոր մեմուարներով։ 1786 թվականին՝ բարեկամների խորհրդով նա գրի է առնում իր արկածալից կյանքի պատմությունը։ Մի քանի տարի անց (1792) այդ պատմությունը հրատարակվում է Լոնդոնում՝ «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» վերնագրով[2]։ 1918 թվականին Կալկաթայում, Էմինի ծոռը՝ Էմին Աբգարը վերահրատարակում է իր մեծ պապի մեմուարները, կցելով դրանց չափազանց արժեքավոր ծանոթագրություններ։

Էմինը մեռավ 83 տարեկան հասակում, Կալկաթայում, 1809 թվականին օգոստոսի 2-ին։

Հովսեփ Էմինը ազգային-ազատագրական շարժման հնդկահայ գործիչների մեջ թերևս առաջինն է, որ հանդես է գալիս միանգամայն որոշակի քաղաքական ծրագրով։ Էմինն իր ծրագիրը ամփոփ տեսքով շարադրել

---

[1] Հովսեփ Էմինի կյանքի ու քաղաքական գործունեության մանրամասները տես՝ Լեո, «Հայոց գրականությունը 18-րդ դարում», «Մուրճ», 1903, № 11, «Հայոց պատմություն», մաս Ա, 1926, Զ. Գրիգորյան, «Մի էջ Հովսեփ Էմինի քաղաքական հայացքներից», «Երևանի Պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատություններ», հատ. 1, Երևան, 1940, Մ. Ներսիսյան, «Հովսեփ Էմին», ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (Հայկական ֆիլիալ), 1941, № 1, *А. Р. Иоаннисян*, «Иосиф Эмин», 1945, Դ. Հ. Գրիգորյան, «Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից», Երևան, 1957։

[2] Հ. Էմինի մեմուարների հայերեն թարգմանության ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվում՝ գործ № 145։ Հետագա բոլոր մեջբերումները կատարվում են այդ ձեռագրից։

է 1755 թվականին Նորթումբերլանդի դքսին ներկայացրած այն հիշատակարանում, որը միանգամից հռչակեց նրան անգլիական արիստոկրատիայի շրջանում։ Պատմելով իր կյանքի պատմությունը, նա թվարկում է այն շարժառիթները, որոնք դրդել են նրան թողնել հայրենական տունը և մեկնել Եվրոպա. «Իմ հոժար կամքով,— գրել է Էմինը Նորթումբերլանդին,— ես թողել եմ անհոգ ապրելու հնարավորությունը և ընդունել այն կյանքը, որ հիմա քարշ եմ տալիս։ Ես չեմ թախծում դրա համար։ Ես մտածում եմ, որ կարող եմ հասնել իմ նպատակին։ Որքան հիշում եմ մեր ընտանիքի բոլոր անդամները եղել են զինվորականներ, մինչև հավատարիմ Քրիստոսին, չնայած այն բանին, որ Շահ Աբբասը նրանց կտրել-բերել է իրենց սիրելի հայրենիքից և գերի վերցնելով տեղավորել էր Պարսկաստանում, նրանք այնուամենայնիվ մնացին որպես զինվորներ։



Հովսեփ Էմին

Իմ երկու հորեղբայրները թափել են իրենց արյունը Կուլի խանի ծառայության մեջ։ Հայրս նրա ստրուկն է եղել շատ տարիների ընթացքում, բայց վերջ ի վերջո ստիպված է եղել փախչել Հնդկաստան, որովհետև այդ բռնակալը իր մարտական տապարը ավելի սեփական զորքի դեմ սրած ուներ, քան իր թշնամիների դեմ։ Հայրս շուտով ինձ տարավ Կալկաթա, Բենգալիա։ Իմ հայրը վաճառական է Կալկաթայում։ Այնտեղ ես առաջին անգամ տեսա Եվրոպացիների զորությունը, զինվորների վարժությունը և նավարկությունը, և դրանք ամեն բանի մեջ հաջողակ էին և կատարյալ։ Այն ժամանակ ես ինքս ցավ զգացի իմ կրոնի և հայրենիքի համար, որ մենք ստրկության և տգիտության մեջ ենք, և հրեաների պես աստանդական աշխարհի երեսին։ Եվ ես խոսեցի հորս հետ այդ բոլորի մասին, որովհետև մեր հայերը իրենց հայրենիքի համար չկռվեցին, բայց ես հասկացա, որ սև հայերը[1] լեռներում ազատ են, իրենց մանկությունից զենք են գործածում, և որ պատրիարքի հովանավորության ներքո գտնված հայերը, որոնք թուրքերի և պարսիկների հպատակներ են, քաջության պակասություն չունեն, բայց բոլորը տգետ են և կռվում են միայն վայրենի ու բնական կատաղությամբ, և այսպես նրանք ուրիշ ոչինչ չունեն, ոչինչ չեն անում, այլ միայն ավազակների պես են վարվում։ Այդ պատճառով ես վճռեցի գնալ Եվրոպա, որպեսզի կարողանամ պատերազմական արվեստը սովորել և

[1] Ակնարկում է Ղարաբաղի հայերին։

ուրիշ օժանդակ գիտություններ։ Ես ինչպես մի եվրոպացի սպա կարող կլինեի օգտակար լինել հայրենիքիս գոնե մի որոշ աստիճանի։ Բայց հայրս ականջ չդրեց ինձ, որովհետև աստված նրան հասկացողություն չէր տվել այդ բաների մեջ։ Ես չէի կարող տանել, որ անասունի պես ապրեմ ուտելով և խմելով, առանց ազատության և գիտության»[1]։

Երիտասարդ Էմինի քաղաքական հայացքները ձևավորվեցին այն ժամանակ, երբ հնդկահայ վաճառականությունը փաստորեն անկումն էր ապրում։ Նա ականատես էր տնտեսական քայքայման այն տխուր տեսարաններին, որ տեղի էին ունենում անգլիական կապիտալին ընդդիմադիր սոցիալական խմբավորումներում։ Պարսկաստանը, որտեղ նա անց էր կացրել իր մանկությունն ու պատանեկությունը, նրա հոգում վառել էր մեկն այն կրակներից, որոնցով ջերմանում են հայրենասեր հոգիները իրենց ամբողջ կյանքում։ Նա տեսել էր իր մոր մահը՝ Բաղդադի պաշարման ժամանակ, տեսել էր մոլեգնող սովը և իր հարազատների հուսահատ դրությունը, տեսել էր, թե ինչպես են հալածվում մարդիկ միմիայն այն պատճառով, որ քրիստոնյա են և հայ, տեսել էր հարկահանության սարսափները և խարույկների վրա ողջակիզվող մարդկանց։ Նա զգացել էր պարսկահայերի դժգոհության և հուսահատության ամբողջ խորությունը։ Լավագույն ապագայի և հայրենիքի փրկության մասին մարդկանց երազները Նադիրի տիրապետության ժամանակներում ջախջախվել էին, չդիմանալով բռնության և թշվառությունների վիթխարի ծանրությանը։ Մեծ գերդաստանի հետ թափառելով այդ հետամնաց ու ավեր երկրում, պատանի Էմինը վայրույթով է համակվում բարբարոս և վայրենի ինքնիշխանության նկատմամբ։ Դեռ վաղ մանկությունից նա լսում է զրույցներ ու պատմություններ Հայրենիքի մասին։ Պարսկաստանի քաղաքներով անցնելիս, նա առիթներ է ունենում հաղորդակից դառնալ հայրենալուրկ հայերի, մասնավորապես արհեստավորական շրջանների խոհերին ու տրամադրություններին։ XVIII դարի 40-ական թվականներին Թավրիզի, Համադանի, Նոր-Ջուղայի հայկական գաղութները քայքայվում են։ Սկսվում է մասսայական գաղթը, փախուստը երկրից։ «Բազումք յազգէս հայոց,— գրել է Խաչատուր Ջուղայեցին,— ետուն զամենայն ստացուածս իւրեանց, և ինքեանք մերկք և կողոպտեալք անկան փախստականք ի տար աշխարհ. և յայնմհետէ սկսաւ իսկ խաթարեալ աղարտիլ կրպակմամարդ և զգեղեցկաշէն աւանս մեր Նոր Ջուղայ»[2]։ *Իր մեմուարներում Էմինը տաղանդավոր կերպով է վերապատկերել պարսկական իրականությունը Նադիր շահի գահակալության վերջին տարիներին։ Կամայականություններ, սով, գերեվարություն, անապահով կյանք, քրիստոնյաների լլկանք և ոտնահարում, հարկեր, կաշառակերություն, ժողովրդի հուսահատություն և ողբ, ամենուրեք անիշխանություն և պատերազմ, արյուն և սուր։*

---

1 ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գործ 145, էջ 83—84։

2 «Խաչատուր Ջուղայեցւոյ Պատմութիւն Պարսից», Վաղարշապատ, 1905, էջ 269—270։

Էմինի քաղաքական ծրագիրը իր առաջին տեսքով շատ անորոշ էր. այնտեղ բացակայում էր պատմական պայմանների և իրադարձությունների կոնկրետ հաշվառումը, գործնական պայքարի ուղիների մատնանշումը և այլն։ Որպես մի եվրոպացի սպա մեկնել Ղարաբաղ և կազմակերպել «վայրենի ու բնական կարողությամբ կռվող» ազգայինների ուժերը՝ հայրենիքի ազատագրության համար — ահա Էմինի ծրագիրը։ Հետագայում պատմա-քաղաքական հանգամանքների ու իր շրջապատի ազդեցությամբ այդ ծրագիրը բազմաթիվ անգամներ փոփոխության ենթարկվեց, աստիճանաբար դառնալով ավելի ու ավելի կոնկրետ, մշակված և, որ ամենակարևորն է, սերտորեն կապված իրականության հետ։

Սակայն Էմինը Հնդկաստանից Անգլիա էր մեկնել ոչ առանց որոշ քաղաքական դիրքորոշման։ Միմիայն ռազմական կրթություն ստանալու ձգտումը չէր, որ նրան բերել էր Եվրոպա։ Էմինի լոնդոնյան շրջանի գործունեությունից պարզ երևում է, որ նա որոշակի հույսեր էր կապում Անգլիայի կառավարության հետ՝ Հայաստանի քաղաքական ազատագրության խնդրում։ Այդ մասին վկայում են Լոնդոնից Հերակլին գրած նրա առաջին նամակը և Անգլիայի վարչապետ Պիտտի հետ ունեցած տեսակցությունը։ Ուրեմն Էմինի քաղաքական ծրագիրը սկզբնապես նախատեսում էր Հայաստանի ազատագրումը՝ Անգլիայի օգնությամբ։ Երբ Էմինը մեկնեց հայրենիք և ծանոթացավ Կովկասի քաղաքական վիճակին, նա անմիջապես փոխեց իր դիրքորոշումը Անգլիայի նկատմամբ։ Էմինը համոզվեց, որ Կովկասում ապրող քրիստոնյա (և ոչ միայն քրիստոնյա) ժողովուրդներն ու նրանց ազգային գործիչները ունեն ռուսական օրիենտացիա։ Ռուսաստանն էլ իր հերթին վարում էր այնպիսի արտաքին քաղաքականություն, որը ըստ էության զուգադիպում էր թուրք-պարսկական բռնակալությունից ազատագրվելու այդ ժողովուրդների քաղաքական ձգտմանը։

Էմինը կանգնեց քաղաքական նոր պլատֆորմի վրա՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարի ապագան կապելով Ռուսաստանի հետ։ Էմինի այդ դիրքորոշումը հայկական ազգային շարժումների ընդհանուր օրիենտացիայի կոնկրետ դրսևորումներից մեկն էր։

«Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» գրքի հրատարակությունը XVIII դարի 90-ական թվականներին՝ գրական խոշոր իրադարձություն էր Կալկաթահայ միջավայրում։ Շ. Շահամիրյանի, Մ. Բաղրամյանի երկերից հետո, Էմինի մեմուարները ծանուցում էին հնդկահայ գրականության մեկ յուրջ նվաճումը ևս։ Քաղաքական բանաստեղծության ու տրակտատների կողքին հանդես է գալիս քաղաքական մեմուարը, մի գրական տեսակ, որ վերջին հաշվով նորություն էր ամբողջ հայ գրականության մեջ։

Էմինն իր գրական գործունեությամբ, 1790-ական թվականներին, ըստ էության, շարունակում էր ազատագրական պայքարի գործը՝ լայնորեն պրոպագանդելով և իր փորձը, և իր գաղափարները։ Մեմուարների ներածականում նա գրել է. «Այսպես նա բավարարություն է տալիս իր սրտին, աղոթելով Գերագույն էակին, իր կյանքի բոլոր օրերում, որ նա

բավականաչափ դատողություն շնորհե իրեն՝ իր կյանքի Անցքերի Պատմությունը գրելու։ Նա հաստատապես համոզված է իր սեփական կարծիքի մեջ, որ նրա բարեկամների աննկարագրելի համակրանքը դեպի նա և նրանց բացառիկ մարդասիրությունը չեն թողնի, որ նրա՝ ի սեր իր հայրենիքի (կրած) չարչարանքը մոռացվի նրա մահից հետո, այլ նախանձախնդիր են, որ այն ավանդվի ապագա սերնդին, որ նրանք էլ նույն օրինակին հետևեն, ուղիղ հասկացողության շավղով գնան և հաղթահարեն բաղդի այն արգելքները, որ խոչընդոտ հանդիսացան նրա հաջողության»[1]։ Գրքի վերջաբանում լրացնելով այս միտքը, Էմինն ասում է. «Նա (Էմինը —Կ. Դ.) հուսադրվում է այն մտքով, որ երիտասարդ հայերը, որոնց լեզվի իմտությունը մակերեսային է, կարող են հեշտությամբ կարդալ և հասկանալ այսքան պարզ գրված մի երկ։ Ո՞վ է իմանում, նրանց մտքում կարող է մի լույս ծագել, որ նրանք այս երկի բուն միտքը հաղորդեն ուրիշներին կամ գուցե թարգմանեն իրենց մայրենի լեզվով։ Ապագայում (գալիք ժամանակներում) կարող է օգտակար լինի և նրանց զարթեցնի իրենց նիրհից, մինչև որ աստիճանաբար բաց անեն իրենց աչքերը և հասկանան ազատության իսկական էությունը»[2]։

* * *

Էմինի ինքնակենսագրությունը XVIII դարի հայ լուսավորական և հրապարակախոսական գրականության նշանավոր հուշարձաններից մեկն է։ Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և քաղաքական յուրօրինակ պայմանների բերումով ազատագրական պայքարի և լուսավորության գաղափարները XVIII դարում հանդես եկան գրեթե միաժամանակ և միևնույն նպատակին ուղղված, այնպես որ, թե պայքարը և թե լուսավորության խնդրի լուծումը համարյա հավասարարժեք դարձան այն իդեոլոգների համար, որոնք պատմական այդ շարժման առաջնորդները եղան։ Իր մեմուարներում Էմինը առաջ է քաշել և տեսականորեն հիմնավորել ոչ միայն ազգային-ազատագրական շարժումների անհրաժեշտության (մի որոշ իմաստով նաև անխուսափելիության) խնդիրը, այլև, և որ կարևորն է, ազգային շարժման հաղթանակի հարցը կապել է ժողովրդի լուսավորության, «կյանքի եվրոպականացման» պրոբլեմների հաջող լուծման հեռանկարի հետ։ Այս իմաստով Էմինը մի կողմից ինքնատիպ արտահայտիչն է մեր ազատագրական շարժումների գաղափարախոսության և, մյուս կողմից, եվրոպական լուսավորական իդեաների մունետիկը հայ իրականության մեջ։

Ինչպե՞ս և ի՞նչ կերպ է Էմինը հիմնավորել ու պարզաբանել ազգային-ազատագրական շարժումների գաղափարախոսությունը իր մեմուարներում։ Ահա, օրինակ, Ջինիսի գյուղացիների հետ նրա զրույցը, որ նա բավական մանրամասնորեն վերարտադրել է իր հիշողություններում։ «Քրիս-

1 Գործ № 145, էջ 14։

2 Նույն տեղում, 18-րդ տետր. էջ 35—36։

տոնյաներ,— հարցնում է Էմինը,— դուք ի՞նչ հիմունք ունեք ընդդիմանալու, եթե ձեր հայրենակիցներից մեկն ցանկություն ունենա զինվոր դառնալու։ Եվ ինչո՞ւ դուք ազատ չեք։ Ինչո՞ւ դուք ձեր սեփական իշխանը չունեք։ Նրանց տված պատասխանն այս եղավ. «Տեր, մեր ազատությունը մյուս աշխարհում է, մեր թագավորը Հիսուս Քրիստոսն»։ Էմինն ասաց՝ այդ ինչպե՞ս է եղել, ձեզ ո՞վ է ասել այդ։ Նրանք պատասխանեցին. «Եկեղեցու սուրբ հայրերը, որոնք ասում են՝ հայ ազգը հպատակ է եղել մահմեդականներին աշխարհիս ստեղծագործությունից և այդպես էլ պիտի մնա մինչև հարության օրը, այլապես մենք կարող էինք շուտով օսմանցիներին դուրս քշել մեր երկրից»[1], Էմինը գյուղացիներին պատասխանում է բերելով Հիսուսի խոսքերը. «Ո՞վ է ժառանգելու աստծո արքայությունը,— ով որ կթողնե իր հորը, մորը և կնոջը, վեր կառնե խաչը և կհետևե ինձ։ Հետո Էմինն ասաց. «Դուք պետք է որ լսած լինեք Ֆրանգստանի քրիստոնյաների մասին, որոնք եթե ականջ դրած լինեին իրենց տերտերներին և Ավետարանն էլ այդպես հասկացած լինեին, ինչպես մեր սուրբ հայրերն են բացատրել մեզ (որ աստված հեռու տանե), նրանք նույնպիսի մեծ ստրուկներ կլինեին մահմեդականներին, ինչպես մենք ենք հիմա։ Խաչը շալակելու նշանակությունն այն դրոշն է, որ քաջ զինվորները կրում են անհավատների դեմ կռվելու և մեռնելու նրա ներքո։ Դրանք են ճշմարիտ քրիստոնյաները, որ կարող են ժառանգել աստծո արքայությունը և ոչ թե նրանք, որոնք ծույլ և վախկոտ կյանք են վարում մեզ պես, որ անասուն ենք դարձել գայլերից գիշատված»[2]։


THE
LIFE
AND
ADVENTURES
OF
JOSEPH EMÎN,
AN ARMENIAN.

WRITTEN IN ENGLISH BY HIMSELF

LONDON:
PRINTED IN THE YEAR 1792.

Հովսեփ Էմինի մեմուարների առաջին՝ անգլերեն հրատարակության անվանաթերթը

Քրիստոսի պատվիրանների այսպիսի մեկնաբանությամբ Էմինը տեսականորեն հիմնավորում է ազատագրական պայքարի անհրաժեշտությունը։ Մերժելով ու դատապարտելով «եկեղեցու հայրերի» տեսակետը, թե հայ ժողովուրդը աշխարհի ստեղծագործությունից ի վեր հպատակ է

1 Գործ № 145, էջ 195։
2 Նույն տեղում, էջ 196։

նդել մահմեդականներին, և որ նրա ազատությունը միմիայն երկնային թագավորության ոլորտներն է տեղափոխված, նա ըմբոստության ու պայքարի կոչ է անում՝ բերելով Եվրոպայի (Ֆրանգստանի քրիստոնյաների) օրինակը և ցույց տալիս, թե ինչպես պետք է հասկանալ ավետարանական պատվիրանների էությունը։

Ազատությունը ամեն մի մարդու բնական իրավունքն է. «Դավթի սաղմոսը,— շարունակում է Էմինը,— վկայում է. «Մի լինեք ձիու կամ ջորու պես, որ հասկացողություն չունեն, որոնց բերանը կարելի է բռնել մի սանձով կամ երասանակով»։ Օրինակի համար մի բնական էակ իրեն չէր հանդուրժի ինքնահոժար ստրուկ լինել ուրիշներին։ Նա մինչև անգամ պարտավոր կլիներ զգուշանալ, որ իր սեփական ընկեր քրիստոնյաները գերիշխանություն չունենան նրա վրա, քանի որ աստված բոլորին միօրինակ հավասար է ստեղծել, բարի օրենքներով ղեկավարվելու կամ կառավարվելու, միևնույն իրավունքով՝ թե հարուստների, թե աղքատների համար»[1]։ Մարդկանց ազատ ապրելու իրավունքը, որ տրվել է աստծո կողմից բոլորին՝ և հարուստներին, և աղքատներին հավասար է դարձնում։ Մարդիկ բանական էակներ են և հենց այդ պատճառով ոչ ոք չպետք է մյուսի ստրուկը լինի, այսինքն կորցնի իր ազատությունը։ Մարդկանց ազատությունը պայմանավորվում է նրանց բանական էակներ լինելու հանգամանքով։ Հետևաբար մարդու ազատությունը մարդու բնական իրավունքն է։ Զրկել նրան նրա բնական իրավունքից, այդ նշանակում է դեմ գնալ աստծուն և ճշմարտությանը։ Մարդը չպետք է ենթարկվի որևէ գերիշխանության, նա պետք է պայքարի իր բնական իրավունքի պաշտպանության համար։ Ահա Էմինի ազատագրական պայքարի գաղափարախոսության փիլիսոփայական հիմքը կամ տեսական հիմնավորումը։

«XVIII դարի վերջում,— գրել է Գերցենը,— մարդիկ առաջին անգամ ոչ թե գրքի մեջ, այլ հենց իրականում սկսեցին ազատվել թեոլոգիական պատմության ճակատագրական, անըմբռնելիորեն ծանրացած աշխարհից, և փորձում էին քաղաքացիական ամբողջ կենցաղը, որն աճել էր գիտակցությունից ու կամքից անկախ, հիմնել գիտակցական ըմբռնողության վրա»[2]։ Գյուղացիների հետ Էմինի զրույցի մեջ արտացոլվել է լուսավորության դարաշրջանի այդ հիմնական մտայնությունը։ Իրոք, Էմինը թեոլոգիական պատմության ճակատագրական աշխարհին էր դեմ գնում, երբ մարդկանց, որոնք ենթարկված էին այդ աշխարհին, բերում է Ֆրանկստանի քրիստոնյաների օրինակը, բացատրելով, թե ինչպես պետք է հասկանալ «խաչը կրելու» պատվիրանը։ Դավթի սաղմոսը նա օգտագործում է ցույց տալու համար մարդկային փոխհարաբերությունների մեջ բանականության ունեցած վճռի վիթխարի նշանակությունը։ Ամեն մարդ պետք է առաջնորդվի բանականությամբ, բանականությամբ նա կկարողանա հասնել այն բանին, որ չի հանդուրժի ինքնահոժար ստրուկ լինել

[1] Գործ № 145, էջ 196։

[2] Ա. Ի. Գերցեն, Ընտրյալ երկեր... Երկեր...

ուրիշներին, բացի դրանից նա «կզգուշանա» իր «սեփական ընկեր-քրիստոնյաների գերիշխանությունից», այսինքն որպես անհատ կպահպանի իր հասարակական ինքնուրույնությունն ու ազատությունը։

Մարդու ուժը տեսնելով նրա բանականության մեջ, Էմինը առաջ է քաշում լուսավորության հարցը, գտնելով, որ կրթության, արվեստի և գիտության զարգացումը կարող է ապահովել բանականության հաղթանակը։ «Հին հռոմեացիները,— ասում է նա,— որ այնքան մեծ էին փրկչի ծնունդից առաջ, օրինակներ տվին և նվաճեցին աշխարհիս բոլոր ազգերը։ Այդ արվեստով էր և գիտությամբ»[1]։ «Մի ուրիշ օրինակ էլ Ռուսաց վերջին փառավոր Պետրոս մեծն է, որ այնքան մեծ պատերազմող չէր լինի, ոչ էլ իր հայրենիքն այնպես օրհնված ու ծաղկած կլիներ, եթե նա եկած չլիներ այս կողմերը գիտություն սովորելու, որը Հոլանդիայում, մի նավաշինարանում ծառայում էր իբրև բանվորներից մեկը և խոնհարեցնում էր իրեն այնտեղ, որովհետև «որ խոնհարեցուցանէ զանձն իւր բարձրասցի»։ Այս բաներն են, որ Եվրոպայի ժողովրդին հաղթող են դարձրել և ավելի իմաստուն են համարված, քան բոլոր ազգերն աշխարհիս երեսին»։ «Եթե եվրոպացիք ուսման գործում աշխատասեր չլինեին, այն էլ աշխարհի իրենց ամենափոքր մասում, նրանք չէին կարող դեմ կենալ Ասիային և Աֆրիկային, ոչ էլ կարող էին գտնել Ամերիկան՝ քաղաքակրթելու համար։ Մուհամեդը, մեծ խաբեբան, և նրանից հետո նրա խանդավառ խալիֆաները կամ հաջորդները, որոնք շատ թագավորություններ անապատ դարձրին՝ հրով ու սրով, առանց խղճալու կամ ողորմելու, երբեք չկարողացան նվաճել լուսավորված Եվրոպան»[2]։ Գիտությամբ ու լուսավորությամբ է, որ ազգերը կարողանում են ապահովել իրենց ազատությունը, հաջողությամբ պայքարում են զավթիչների դեմ և երբեք չեն կորցնում անկախությունը։ «Այն վայրերում,— գրում է Էմինը,— ուր ատում են իմաստությունը (գիտությունը) և փակվում դաժան տգիտության խավար զնդանում, այլևս չի կարելի մարդկանց մեղադրել անգամ, եթե նրանք վայրի գազանների նման իրար հոշոտեն»[3]։ Տգիտությունը մարդկանց նրկպառակման ու անհաշտության պատճառն է, ստրկության կորավիգը, բռնավորների հենարանը։ Ազատության հասնելու համար պետք է լուսավորվել։ Ասիական ժողովուրդները դարեր շարունակ չեն կարողացել հասկանալ ազատության իսկական իմաստը, որովհետև զուրկ են եղել լուսավորությունից[4]։

* * *

Էմինի մեմուարները ներկայացնում են XVII դարի երկրորդ կեսի հայկական ազգային-ազատագրական շարժումների յուրօրինակ տարեգրությունը։ Հայ գրականության մեջ հազիվ թե հնարավոր է ցույց տալ մի

1 Գործ № 145, էջ 159—160։

2 Նույն տեղում, էջ 16։

3 Նույն տեղում, 17-րդ տետր, էջ 6—7։

4 Նույն տեղում, 18-րդ տետր, էջ 35։

այլ երկ, որն այդքան բազմակողմանի ընդգրկմամբ և ժամանակագրական հետևողականությամբ կարողանար ներկայացնել այդ էպոխայի համայնապատկերը։

Պատմաքաղաքական իրադարձությունների լայն ֆոնի վրա Էմինը տվել է հայկական ազգային-ազատագրական շարժումների այդ էտապի պատմության քննական վերլուծությունը։

Ազատագրական պայքարի շարժիչ ուժերը, ըստ Էմինի, երեքն են՝ հոգևորականությունը, վաճառականական դասը և ժողովուրդը։

Ժողովրդի նկատմամբ Էմինի դիրքորոշումը միանգամայն պարզ է. դա հայրենիքի ազատագրության համար մշտապես պատրաստ քաջարի և «բնական կատաղությամբ կռվող» հայերի այն մասն է, որ սպասում է մի ճշմարիտ առաջնորդի՝ զեն ի ձեռին պայքարի ելնելու համար։ Ժողովուրդը դարավոր խավարի և տգիտության մեջ է գտնվում։ Օտարի ճնշումն ու հարստահարումը, բռնակալների կամայականությունները, մշտապես անապահով կյանքը լցրել են համբերության բաժակը։ Ժողովուրդը ինքը ուզում է ազատագրվել, նա լի է եռանդով ու վճռականությամբ, բայց նա անուժ է առանց առաջնորդի, նա չի կարող ինքնուրույնությամբ գործել։ Կղերը, որ դարեր շարունակ օրորել է ժողովրդին «հնազանդվելու» քարոզներով և երկնքին ապավինելու հորդորներով, ամենածանր հարվածն է հասցրել նրան՝ նրա մեջ սպանելով ազատագրական ձգտումները և պայքարելու հերոսական վճռականությունը։ Նա կորցրել է ազատության սերը և նվիրվել Քրիստոսին, չհասկանալով, որ այդպիսի նվիրվածություն Քրիստոսը երբեք չի քարոզել։ «Հայ ազգը հպատակ է եղել մահմեդականներին՝ աշխարհիս ստեղծագործությունից սկսած»,— ասել են ժողովրդին նրա եկեղեցու հայրերը, և նա հավատացել է դրան։

Հայ ժողովուրդը «երեխայի պես խաբված է եղել իր եկեղեցու սրբազան հոգևորականներից»[1]։ Ժողովուրդը իր ստրկական վիճակի համար մեղավոր չէ։

Որպիսի՞ն է հայ կղերը և ո՞րն է նրա պատմական գործունեության նշանակությունը։ «Հայկական իշխանության միակ կործանիչները եղել են հոգևորականները,— հայտարարում է Էմինը[2]։ Որ տգետ է ժողովուրդը, որ հնազանդ ու ստրկամիտ է նա, դրանում մեղավոր են հոգևորականները։ «Մահմեդական երկրներում, մանավորապես Թուրքիայում, հայ եկեղեցու հայրերը զբաղված են «եկեղեցական զարհուրելի վեճերով»։ Էմինը մինչև սիրտը խոցված շատ անգամ է լսել նրանց (հոգևորականներին,— Կ. Դ.) իրենց հարազատ հոտերն անիծելիս և հափշտակող գայլերին (մահմեդականներին) ներբողելիս։ Այսպիսի անբանական և անգութ մերձավոր բարեկամներով ինչպե՞ս կարելի է, որ նրանք (հայերը) ստրկությունից ազատվեին»[3]։ Քաղաքական ասպարեզում հոգևորականները կարող են

[1] Գործ № 145, էջ 22։
[2] Նույն տեղում, 17-րդ տետր, էջ 52։
[3] Գործ № 145, էջ 211—212։

դավաճանել ազգին, դեմ դուրս գալ նրա ազատությանը։ Վերլուծելով իր կրած պարտությունների ու անհաջողությունների պատճառները, Էմինը մշտապես շեշտում է, որ հայ եկեղեցին, իր գլուխ ունենալով Սիմեոնին, ամեն տեղ թե Վրաստանում, թե Ղարաբաղում, թե Թուրքահայաստանում և թե հեռավոր Հնդկաստանում, կանգնել է իր ճանապարհին և խափանել իր բոլոր լավագույն ծրագրերը։ Գանձասարի Հովհաննես կաթողիկոսը մի առիթով Էմինին ասում է. «Եկեղեցականներն են միակ արգելակները ձեր ճանապարհի ընթացքում և միշտ պետք է խանգարեն ձեր ամեն մի դրվատելի ծրագիրը»[1], և ապա, «Մի մեղադրեք մեր ցեղապետներին[2] և ոչ էլ Հայաստանի ժողովուրդը, որովհետև, եթե նա (Սիմեոնը — Կ. Դ.) հակառակ չլիներ, նրանք իրենց բոլոր կարողությամբ կմիանային ձեզ և կհամախմբվեին ձեր առաջնորդության ներքո»[3]։

Հոգևոր դասի էմինյան քննադատության մեջ երևում է ազգային շարժման գաղափարախոսության առաջադիմական բնույթը։ Հարցն այն չէ, թե ձաղկվում է հոգևորականությունը, այլ այն, թե ինչի համար է ձաղկվում։ Էմինը քննադատում է ուղղելու համար։ Լինելով հայ առևտրական բուրժուազիայի առաջավոր գաղափարախոսը, նա, ինչպես իր ժամանակի ազգային գործիչները, տեսնում է մեկ ընդհանուր շահ և մեկ ընդհանուր նպատակ — հայրենիքի ազատագրումը օտար բռնակալների լծից։ Նա հանդես է գալիս որպես ամբողջ տառապող ազգի և ոչ թե որևէ հատուկ դասակարգի ներկայացուցիչ։

Քննադատելով առևտրական բուրժուազիայի սոցիալական անդիմությունը և ազգային շարժման մեջ նրա գրաված պասսիվ դերը, Էմինը ցույց է տալիս, որ թե պարսկահայ և թե հնդկահայ առևտրական շրջանները ավելի հակված են «անխոնջ ջանքերով հարստություն դիզելու» և քաղաքական լոյալություն քարոզելու, քան թե հանդես գալու որպես հայրենիքի դատի իսկական պաշտպաններ։ Վաճառականները եկեղեցականների հետ դաշնակցած մտածում են միմիայն սեփական շահի և բարօրության մասին։ Հայրենիքի համար նրանք չեն կարող զոհաբերություններ կատարել և ոչ էլ մտածել ժողովրդի մասին, քանի որ անձնական օգուտը եսապաշտ, տրկահոգի այդ մարդկանց միակ սրբությունն ու հավատամքն է։ Հոգևոր դասի և առևտրական բուրժուազիայի սոցիալական փոխկապվածությունը Էմինի համար միանգամայն պարզ է։ Նա գիտե նաև, թե որքան ամուր է այդ կապը և որքան հասարակականորեն ճանաչված։ Նա բնավ էլ դեմ չէ «ազգի միասնությանը», և գտնում է, որ այդ միասնությունը ներկայացնող Էջմիածինն ու գաղութահայ առևտրական բուրժուազիան միասին և միևնույն նվիրվածությամբ պետք է պայքարեն ազգի ազատագրության ու քաղաքական ինքնուրույնության համար։ Եթե, համենայն դեպս, որոշ դեպքերում սոցիալական ձգտումների անհամապատասխա-

1 Գործ № 145, 14-րդ տետր, էջ 34։

2 Խոսքը Ղարաբաղի մելիքների մասին է։

3 Գործ № 145, 14-րդ տետր, էջ 32։

նություն է նկատվում այդ երկու խոշոր ուժերի միջև, ապա դա, ըստ Էմինի, մի կողմից առանձին անհատների (օրինակ Սիմեոն կաթողիկոսը) ապաշնորհության և քաղաքական վախկոտության արդյունքն է և մյուս կողմից մարդկանց չարչիական շահամոլության և անազնիվ ինքնապաշտպանության հետևանքը։ Ծաղրելով ու դատապարտելով վաճառականների ու եկեղեցականների քաղաքական վախկոտությունը, շահամոլությունը, անտարբերությունը դեպի ազգային գործը, Էմինը դրանով կամենում է վերադաստիարակել նրանց, վերափոխել։ Նրա քննադատությունը ժխտողական քննադատություն չէ։ Նա առաջարկում է պրոֆիլակտիկ միջոցներով բուժել հասարակական օրգանիզմի հիվանդ մասերը։ «Բայց եթե աշխարհականները,— ասում է Էմինը,— Մուհամեդին հավատացողներին ընծաներ տալով աղքատների վրա կարծեցյալ տեր դառնալու և դրամ ձեռք բերելու ստոր փառասիրությունը թոթափեին իրենցից, եթե նրանք դրամի գեթ մի քառորդն իրենց հարազատ երեխաների վրա գործ դնեին, նրանց հատուկ դաստիարակություն տալու և ընդունակ դարձնելու՝ բանական էակին ջոկել անբան անասունից, այնպես որ ավելացնեին պիտանի բույսերի թիվն ու մոլախոտը արմատախիլ անեին, նրանք ազատ ազգ կդառնային»[1]։ Էմինի իլյուզիաները մարդկանց վերափոխության մասին բուրժուական բարոյագիտության սահմաններից այն կողմ չեն անցնում։ Նա, ինչպես իր դարի մարդիկ, կարծում էր, որ դաստիարակությամբ և անձնական վատ հակումները օտարելու մեթոդով, հնարավոր է հասնել հասարակության վերափոխմանը, ձեռք բերել ազատություն և ապահովել բանականության հաղթանակը։

* * *

Էմինի ինքնակենսագրությունը հայ մեմուարային գրականության պատմության մեջ բացառիկ կարևոր տեղ է գրավում։ Մինչև Էմինը մեր գրականության մեջ գոյություն չուներ գրական մեմուարի տեսակը։ Ավետիք պատրիարք Եվդոկիացու ինքնակենսագրությունը իր ձևով և ընդգրկմամբ շատ հեռու էր իսկական մեմուար լինելուց։ Դա մի փոքրիկ հիշատակարան էր (իհարկե ավելի ծավալուն և մշակված, քան Շիրակացու ինքնակենսագրությունը), որի մեջ հիշատակագրողը փորձել էր շարադրել իր կյանքի պատմությունը՝ գլխավորապես կաթոլիկ քահանաների առաջ արդարանալու համար։ Եվդոկիացին միայն մոտեցել է մեմուարային կենսագրականի ստեղծմանը։ Նա չի գրել մեմուար, այսինքն չի փորձել գրական մշակման ենթարկել հիշողությունների մեջ կենդանացող անցյալի դեպքերն ու իրադարձությունները։ Նա պարզապես բավականացել է այն փաստերի շարադրանքով, որոնք կարող էին արդարացուցիչ վկայություններ հանդիսանալ իր հասարակական գործունեության համար, ուրեմն և Բաստիլից ազատվելու համար։

1 Գործ № 145, էջ 212։

Էմինի ինքնակենսագրությունը հայ մեմուարային գրականությունը սահմանազատում է միջնադարյան ամբողջ հիշատակարանային գրականությունից։ Էմինը բերեց հուշագրության նոր ուղղություն և ոճ։ Ինքնապատկերման մեթոդները, անձնական և հասարակական կյանքի վերարտադրության ինքնօրինակ ձևերը, հիշողությունները պատմելու եղանակը — այդ բոլորը նորություն էին մեզանում։

Էմինի ինքնակենսագրությունը իր շատ առանձնահատկություններով կապվում է եվրոպական մեմուարային գրականության տրադիցիաների հետ։ Բայց Էմինը կարողացավ հմտորեն զուգակցել այդ տրադիցիաները հուշագրության այն ավանդական ձևերի հետ, որ ստեղծել էին հայ պատմիչները, տարեգիրները, ուղեգրողներն ու հիշատակագիրները։ Այնպես որ ստեղծվեց հուշագրության մի բոլորովին նոր ոճ, որը ցույց է տալիս, թե ինչպիսի յուրօրինակ զարգացում է անցել հայ մեմուարային գրականությունը։

Արդեն XVIII դարում եվրոպական մեմուարային գրականությունը վիթխարի չափերի է հասնում։ Մեմուարներ հրատարակում էին բոլոր այն մարդիկ, որոնք ունեին տպագրելու միջոցներ. պետական ու քաղաքական գործիչներ, գրողներ, արվեստագետներ, արքունի պալատականներ, դիվանագետներ, վաճառականներ։ Գեղարվեստական գրականության մեջ արդեն ձևավորվող սենտիմենտալ ռոմանտիկական ուղղությունը մեծապես ազդում էր մեմուարային գրականության վրա և որոշում հուշագրության մեթոդի առանձնահատկությունները։

Հուշագրության մեթոդը որոշվում է ոչ միայն այն բանով, թե ինչպիսի եղելություններ ու դեպքեր են ներկայացվում, այլև, գլխավորապես, թե ինչպես են վերապատմվում, վերապատկերվում այդ դեպքերն ու եղելությունները։ Հետևաբար հուշագրության գրական ուղղությունը պարզելու համար պետք է ամենից առաջ հետևել այն բանին, թե ինչպիսի հնարանքներով է մեմուարիստը պատկերում անցյալը, որն է նրա գեղարվեստական հավատամքի էական կողմը, ի՞նչն է նախընտրում ինչից և ինչո՞ւ է հատկապես նախընտրում։ Այս իմաստով մի ընդհանուր օրինաչափություն է նկատվում գեղարվեստական գրականության և մեմուարային գրականության փոխհարաբերության մեջ։ Ժամանակի գեղարվեստական միտքը, էսթետիկական հասկացողությունները, գրականության մեջ տիրապետող ուղղություններն ու ոճերը ավելի կամ պակաս չափով ներթափանցում են մեմուարային գրականության մեջ։ Այլ կերպ էլ չէր կարող լինել։ Մեմուարային գրականությունը որպես գեղարվեստական գրականության մի ուրույն ենթաբաժին, թեև ունի իր առանձին պոետիկան, այնուհանդերձ այդ պոետիկան կառուցվում է գեղարվեստական գրականության տրադիցիոն ձևերի և ժամանակի գրական ոճերի հաշվառմամբ ու օգտագործմամբ։

Էմինը Եվրոպայում շատ էր կարդացել պատմական ու քաղաքական գրականություն, մեմուարներ և գեղարվեստական այնպիսի երկեր, որոնք այդ ժամանակներում մեծ ընդունելություն և տարածում ունեին։ Տիկին

Մոնտեգյուի սալոնում նա շփվել էր բազմաթիվ բանաստեղծների, արտիստների, արվեստագետների հետ։ Այդ բոլորը այսպես թե այնպես ձևավորել են նրա գեղարվեստական ճաշակն ու պատմելու հմտությունը։

Ի՞նչ գրական ուղղության է հետևել Էմինը։

Տիկին Մոնտեգյուն Էմինի ոճը համարում է արևելյան, գունագեղ ու ինքնատիպ։ Էմինի նամակները Մոնտեգյուին գրված են վերամբարձ, փոքր ինչ պաթետիկ և սենտիմենտալ ոճով։ Այս ոճը մասամբ պահպանված է նրա մեմուարներում։ Մեմուարների առաջին խմբագիր Ջոնսը կարդալով «Կյանքի» ձեռագիրը, Էմինին զգուշացնում էր, որ չպետք է, համենայն դեպս, պաթետիկ ու սենտիմենտալ լինել, որ պետք է թողնել բոլոր զարդարանքները և, որ կարևորն է, դեն նետել ինքնարնութագրումների մեջ թույլ տված չափազանց բարձր գնահատականները։ Ջոնսը Էմինից պահանջում էր այն, ինչ նա չէր կարող անել։ Դրա համար էլ «Կյանքի» ձեռագիրն ուղարկելով Լոնդոն՝ տպագրության, Էմինը ոչ մի փոփոխություն չի մտցնում տեքստի մեջ։

Ընդհանուր առմամբ Էմինը հետևում էր գրականության մեջ արդեն հայտնի սենտիմենտալ-ռոմանտիկական ուղղությանը։ Նա իր կյանքի պատմությունը շարադրում էր մի՛ գլխավոր նպատակ հետապնդելով։ Այդ պատմությունը պետք է լիներ հետաքրքիր, զարմանահրաշ, լի բազմաթիվ անակնկալներով, ցնցող արկածներով, էկզոտիկ պատկերներով, համարձակության, հերոսականության, հայրենասիրության աննախադեպ դրվագներով, որոնք պետք է ապշեցնեին ընթերցողին, պատահականություններով, որտեղ պետք է երևար, թե ինչքան մեծ է աստծո նախախնամությունը, և վերջապես, թե մարդը ինչի է ընդունակ, երբ պայքարում է հանուն իր ժողովրդի, հանուն նվիրական ազատության, հանուն հայրենիքի։ Բոլոր դեպքերում այդ պատմությունը պետք է արցունք քամեր ընթերցողի աչքերից, բայց ոչ հուսահատության ու ողբի արցունք։ Ընթերցողը սրտատրոփ պետք է հետևեր այն մարդու ճակատագրի զարմանալի ընթացքին, որը մեն մենակ, վճռել է փրկել իր հայրենիքն ու հայրենակիցներին օտարերկրյա բռնապետներից։ Ընթերցողը պետք է հուզվեր, զարմանար, ոգևորվեր. ընթերցողը պետք է հավատար, որ մեծ մարդու կյանքը ապարդյուն չի անցել բախտի դժոխային հարվածներից հետո։

Եվ այսպես Էմինը գրում էր իր կյանքի «վեպը», աշխատելով որքան կարելի է հետաքրքիր ու ռոմանտիկական դարձնել այն։ Բայց ինչպիսի՞ մեթոդներով ու ձևերով էր հասնում այդ բանին հուշագրողը։

Մեմուարների սկզբում Էմինը նկարագրում է իր մանկությունը, թափառումները Պարսկաստանում պապի ու հորեղբայրների հետ։ Այդ նկարագրությունները անմիջապես պատկերացում են տալիս պատանի Էմինի բնավորության մասին։ Նա ամեն ինչով հետաքրքրվող և ամեն ինչով հրապուրվող, ռոմանտիկ, անվախ, ձեռներեց, հանդուգն մի պատանի է։

Երբ 15-ամյա Էմինը համաղանցի պարսիկ բեկին պատժելու նպատակով դիմում է դեպի Նադիրի ապարանքը՝ Շահին գանգատվելու, բեկը ներումն է խնդրում նրանից և ազատում ձերբակալված Միքայելին (Էմինի

պապին), ասելով. «Գնա քաջ տղա, ծառայիր ծերունի պապիդ և նրա որդուն, նության առ, կերպարանքիցդ տեսնում եմ, որ մի օր դու մեծ մարդ ես դառնալու»[1]։ «Վոլպոլում» անգլիացի նավաստիները Էմինին տալիս են «Նադիր Շահի որդի» մականունը։ Ֆրիդրիխ երկրորդը նրան անվանում է «Հայոց իշխան»։ Վերջապես Էմինն իր մասին ասում է, որ «ինքը միակ հայն է, հազարավորներից մեկը, որ հազարավոր տարիների ընթացքում բարգավաճման ու ազատության մի անասելի ծարավ է ունեցել»[2]։ Բերելով բազմաթիվ քաղաքական ու հասարակական գործիչների կարծիքներն ու ասույթները իր մասին (Հերակլ, Վորոնցով, տիկին Մոնտեգյու, Նորթումբերլանդի դուքս, Շահվերդի խան, Հովհաննես կաթողիկոս և այլն), Էմինը փաստորեն բնութագրում է ինքն իրեն։ Ինքնաբնութագրման այդ մեթոդը լայնորեն օգտագործված է մեմուարներում։ Այնտեղ բերված են ոչ միայն հայտնի պետական, քաղաքական, հասարակական գործիչների խոսքերն ու բնութագրումները, այլև ամենահասարակ գյուղացիների, ռազմիկների, քուրդ, չեչեն, լեզգի ցեղապետների կարծիքները։ Ահա օրինակ, թե ինչպես է բնութագրում Էմինին մի երիտասարդ գյուղացի. «Նրանք, ովքեր սեփական աչքերով տեսել են նրան (Էմինին) և բազմաթիվ վայրերում վկա են եղել նրա քաջարի գործերին, նրա հռչակը հասցրել են մեր ականջներին և արևի նման շողացրել են բոլոր իսկական հայերի սրտի, հոգու մեջ։ Անգամ մահմեդականները հիանում են նրանով։ Նա առյուծի նման քաջ է, Սողոմոնի պես իմաստուն և Պղատոնի նման արդար»[3]։ Էմինը իրեն չափազանց ազատ է զգում, երբ բերում է ուրիշների կարծիքները իր մասին։ Նրան չի մտահոգում այն, թե այդ ինչպես կընկալվի ընթերցողի կողմից։ Նա միշտ աշխատում է ընթերցողին հավատացնել, որ ինքը պատմում ու ներկայացնում է միայն շատ քիչ բան այն ամենից, ինչ կատարվել է իր հետ, ինչ ասվել է իր մասին։

Էմինը չի բերում միայն այն կարծիքները, որոնք զարդարում են իրեն առաքինության, մեծագործությունների, հերոսականության դափնեպսակով։ Նա պատմում է նաև այն մասին, թե ինչպիսի նվաստացումների ու զրկանքների է ենթարկվել ինքը, տանելով շատերի դառը խոսքը, արհամարհանքն ու անգութ վերաբերմունքը։ Եվ այդ մարդիկ եղել են իր մերձավորները, երբեմնի բարեկամներն ու ընկերները։ Էմինը ցույց է տալիս, որ ինքը միշտ չէ, որ գրկաբաց ընդունելություն է գտել բոլորի մոտ։ Նրա վաստակը, տառապանքը, զոհաբերությունները շատ հաճախ չեն գնահատվել, ծաղրվել են կամ վերագրվել մի անպարփակ փառասիրության։ Ներքին խոր վրդովմունքով Էմինը այդպիսիներին պարտադրում է նայել իր անձնական կյանքին։

Սակայն անհաջողությունները, զրկանքները, աղքատությունը երբեք չեն փշրում նրա կամքը, վճռականությունը, համարձակությունը։ Վերա-

---

1 Գործ № 145, էջ 14։

2 Նույն տեղում։

3 Գործ № 145, 18-րդ տետր, էջ 2—3։

դառնալով Հնդկաստան, նա շարունակում է ամենուրեք պարսավել այն անտարբերությունը, որ մարդիկ ցուցաբերում են հայրենիքի ազատագրության գործի նկատմամբ։ Նա երբեք չի հուսախաբվում և կորցնում եռանդը։ Բասրայում, Մադրասում, Կալկաթայում և այլուր նա միշտ հանդես է գալիս հայրենասեր ուժերի համախմբման կոչերով և ազատագրական պայքարի կոնկրետ, գործնական ծրագրերով։ Նա ուզում է հնդկահայերին տեսնել համարձակ՝ քաղաքականության մեջ և հայրենասեր՝ ազգային հարցում, մասնավորապես երիտասարդությանը, որի հետ նա կապում է բոլոր լավագույն հույսերը։

Հայրենասեր, ազնիվ, մեծահոգի և ներող, համարձակ, միշտ կենսախինդ և լավատես, իր կոչման բարձր գիտակցությամբ, հայրենիքին ու իր ժողովրդին անսահման սիրով նվիրված մի մարդ է Էմինը։ Սեփական հիշողությունների մեջ նա կենդանանում է, ավելի քան որևէ մեկը նրա ժամանակակիցներից։ Թվում է, թե նա ոչ մի հատուկ ջանք չի թափել իր կյանքը բացառիկ, անօրինակ դարձնելու ուղղությամբ։ Այդ կյանքը եղել է այդպես, այդ կյանքը չէր կարող այլ կերպ լինել։ Արկածներ, պատահականություններ, դիպվածներ, անակնկալներ. կյանքը ընթացել է այդպիսի ռելսերի վրայով և հենց այդ պատճառով ամեն ինչ այնտեղ բազմիմաստ է և միաժամանակ խորհրդավոր, հետաքրքիր։

* * *

«Ճշմարտությունը կենսագրականի գեղեցկությունն է»,— գրել է Էմինը իր մեմուարներում[1]։ Սա լոկ տեսակետ չէ նրա համար։ Նա գտնում է, որ իր կյանքի պատմությունը գրված է այդ սկզբունքի լիակատար գործադրմամբ։ Խնդիրն այն է, որ իր կյանքը չափազանց արկածալից է, հեռու է սովորական լինելուց։ Այդ պատճառով, այն ինչ ինքը պատմում է, կարող է շատերին անհավատալի թվալ։ «Քսան տարի հետո, գրում է Էմինը,— երբ ինքը և իր պատմածներին իրազեկ իր բոլոր լավագույն բարեկամները մեռած-գնացած կլինեն, նա (Էմինը) դիտվելու է սոսկ որպես մի վիպասան»[2]։ Էմինը տարբերում է վիպասանությունը հուշագրությունից։ Վիպասանը իրավունք ունի հորինելու, մեմուարիստը պետք է անպայման պատմի եղելությունը։ Առանց ճշմարտության կենսագրությունը ոչինչ չարժե — ահա Էմինի տեսակետը։ Իհարկե հուշագրությունը հակադրելով վիպասանությանը, Էմինը երբեք էլ մտադիր չէր հուշագրությանը ինչ որ առավելություններ վերագրել։ Նրա պատկերացմամբ՝ գրել անձնական կյանքի պատմությունը, այդ նշանակում էր պարզապես պատմել այն բոլորը, ինչ մարդու հետ կատարվել է մանկությունից սկսած մինչև ծերություն։

Մեմուարները գրելիս Էմինն օգտվել է իր սեփական արխիվից (նամակներ, փաստաթղթեր, գրություններ և այլն), որը նա, ըստ երևույթին,

---

1 Գործ № 145, 17-րդ տետր, էջ 43։

2 Նույն տեղում, էջ 42։

պահել է իր մոտ, իր թափառումների ամբողջ ընթացքում: Հայտնի չէ, թե Էմինը ձեռքի տակ ունեցե՞լ է իր գրած ու ստացած բոլոր նամակների պատճենները կամ ընդօրինակները: Ամենայն հավանականությամբ նա շատ բան հաղորդում ու վերապատմում է միայն հիշողությամբ: Այդ պատճառով նրա մեմուարներում կարելի է գտնել ժամանակագրական անճշտություններ, ուրիշներից ստացած նամակների բովանդակության ազատ շարադրանք, կրկնություններ, հաճախ մութ, հակասական պատմություններ, որոնց, ըստ երևույթին, ինքն էլ բավական անտեղյակ է եղել, զրույցներ, ավանդություններ, որոնք կարոտ են ստուգման, ճշգրտման ու հաստատման:

Էմինը պատկանում է այն մեմուարիստների թվին, որոնք օժտված են պատմելու բնական ձիրքով, բայց որոնք չեն ստացել կանոնավոր գեղարվեստական պատրաստություն: Դրա համար էլ արվեստականն ու բնականը, վերամբարձ, պաթետիկ ոճը և պարզ, ժողովրդի բառ ու բանով համեմված խոսքը նրա մեմուարներում հանդես են գալիս կողք-կողքի կամ միմյանց մեջ ներթափանցված: Չնայած դրան, Էմինը կարողացել է ստեղծել գեղարվեստական արժեքից ոչ զուրկ մեմուարային դիմանկարներ, հիանալի նկարագրություններ և այլն, և այդպիսով հասնել որոշ գեղարվեստականության:

Մեմուարային դիմանկարները պետք է պատմականորեն ճշմարտացի լինեն: Նրանց մեջ պետք է երևա դարաշրջանի մարդը: Եթե անձնավորությունը, որի մասին պատմվում է, խոշոր քաղաքական, հասարակական կամ գրական գործիչ է, ապա նրան պետք է ցույց տալ իր միջավայրում, բնավորության, խոսքի և գործի տիպական առանձնահատկություններով:

Էմինը մեծ հաջողությամբ ստեղծել է վրաց Հերակլ թագավորի մեմուարային դիմանկարը: Հերակլը թերևս այն միակ պետական-քաղաքական գործիչն է, որի հետ Էմինը ունեցել է ամենամեծ շփումը: Հերակլի հետ նա քննել-քննարկել է իր քաղաքական ծրագրերը: Նա Հերակլին պլաններ է առաջարկել, զեկուցագրեր ներկայացրել, նամակներ գրել, տեղյակ պահել Տաճկահայաստանում, Ղարաբաղում գոյություն ունեցող հայկական ազատագրական շարժումներին: Հերակլը այն անձնավորությունն էր, որի հետ Էմինը XVIII դարի 60-ական թվականներին կապում էր իր ծրագրերի իրականացման հույսերի մեծ մասը: Մոտ երկու տարի ապրելով Վրաստանում, նա բազմաթիվ առիթներ է ունեցել հետևելու Հերակլի քաղաքականությանը և ռազմական գործողություններին, և համոզվելու, որ վրաց «Ոզորագույն իշխանը» տաղանդավոր ու փորձված քաղաքական գործիչ է: Էմինը ինչարկե միշտ հիացմունքով չի արտահայտվում Հերակլի մասին: Զանազան առիթներով նա մերթ դատապարտում է նրան, մերթ գովաբանում: Հերակլի քաղաքական գործունեությունը և վերաբերմունքը դեպի հայկական ազգային շարժումները միշտ չէ, որ հստակորեն ըմբռնել է Էմինը: Թեև տարբեր առիթներով և տարբեր ժամանակ Էմինը միանգամայն հակասական կարծիքներ է հայտնում Հերակլի մասին, այնուամենայնիվ, նրա գնահատումների մեջ կա մի ճշմարիտ պատմակա-

նորեն հավասարի բան, այդ Հերակլին որպես Կովկասի ամենամեծ պետական-քաղաքական գործիչ ներկայացնելն է. «Էմինը շատ օրեր վայելեց իշխանի (Հերակլի —Կ. Դ.) ընկերությունը, որ արդարև շատ օգտակար էր, կարծես մի ուսյալ անգլիացի ազնվականի խոսակցություն լիներ, առանց ամենափոքր հպարտության, կամակորության կամ իշխանական վարվեցողության, որոնք այնքան սովորական են ասիական իշխանների համար, և ըմբռնողության մի այնպիսի արագությամբ, որ դեռ խոսքը չասած, նա արդեն հասկանում էր ամբողջ իմաստը: Ձայնը, բառեր արտասանելիս, երբ մի որևէ առարկայի մասին խոսում կամ քննադատություն էր անում, այնքան ներդաշնակ քաղցր էր, որ լսողը՝ նրա կանաչավուն կերպարանքը չտեսած՝ կկարծեր, թե մի հրեշտակ է ատենաբանություն անում: Հպարտության ամենաչնչին մասնիկը չուներ: Նա գուցե երբեք էլ իր կյանքում պարծեցած չկար, չնայելով, որ շատ պատերազմներում էր տապալել գրեթե ամեն մի հակառակորդի՝ Նադիր՝Շահի օրից ի վեր, և նրա համար միևնույնը կլիներ, եթե նա Արևելքի բոլոր թագավորություններին էլ տիրած լիներ»[1]: Հերակլը իր իշխանական վեհությամբ գրավում էր բոլորի սրտերը. «Նրա դեմքի սովորական գույնը սև-կանաչավուն էր, հասակը՝ փոքր, մի կես դյույմ ավելի քան Էմինինը, բայց նա ուներ սքանչելի կազմվածք, ուժեղ էին նրա ոսկորները և ներվերը»[2]:

Ընդհանրապես մեմուարային դիմանկարներ ստեղծելիս Էմինը նկարագրում է տվյալ անձնավորության արտաքինը, սովորույթները, խոսելու ձևերը և այլն, այսինքն ուշադրություն է դարձնում այնպիսի մանրամասների վրա, որոնք կենդանացնում են հուշագրերի «հերոսին»: Այսպես են ստեղծված Իբրահիմ խանի, Յուսուֆի և Հասմի. Իմերեթիայի թագավոր Սոլոմոնի, Ավարայի նուցալ Մոհամեդ խանի, Շ. Շահամիրյանի. Թեհմուրազի, տիկին Մոնտեգյուի, Նորթումբերլանդի դուքսի, Բյորքի, կանցլեր Վորոնցովի մեմուարային դիմանկարները: Ընթերցողի հիշողության մեջ են մնում նաև Ստեփանոսի, միստր Միդլտոնի, Սարգսի, Մալալայի, միսիս Նյումանի, Ատոշախանի, Ալի Սուլթանի դիմանկարները: Այս վերջինների հետ Էմինը հանդիպել է այս կամ այն առիթով՝ կյանքի մեծ ճանապարհի վրա: Մի քանի խոսք, երկու-երեք շտրիխ, զրույց կամ պատմություն և, ահա, ձեր դեմ կանգնում է ավազակաբարո ու հանդուգն Ալի Սուլթանը, խորամանկ և քծնող Սարգիսը, փոքրոգի ու արծաթասեր Ստեփանոսը, բարի ու խանդակաթ միսիս Նյումանը, անձնազոհ Մալալայը և այլն:

Էմինը իր այդ «հերոսների» մասին պատմում է սրախոս հումորով, աշխատելով ցույց տալ, թե որքան ցած հոգի և միաժամանակ որքան ծիծաղելի են մարդիկ իրենց նեղ անձնական շահերի ու մանր ձգտումների մեջ: Էմինին հատուկ է երգիծելու տաղանդը: Նրա պատմությունների մեջ գավեշտը, հումորը, կենսախինդ երգիծանքը մեծ տեղ են գրավում: Էմինը

---

1 *Գործ № 145, էջ 238:*

2 *Նույն տեղում:*

միշտ տեսնում է կոմիկականը նույնիսկ այնտեղ, որտեղ թվում է, թե չի կարելի այդպիսի բան տեսնել։

Էմինի նկարագրությունները աչքի են ընկնում գույների ու երանգների արտակարգ ընդգծվածությամբ։ Այնտեղ, որտեղ հանդես է բերվում մարդկայնորեն գեղեցիկը, բարին ու ազնիվը, որտեղ գովաբանվում է առաքինությունը, նվիրվածությունը, մարդասիրությունը, հայրենասիրությունը և այլն, այնտեղ Էմինի խոսքը դառնում է պաթետիկ, էպիտետները պայծառ ու շլացուցիչ։ Մարդիկ, որոնք հանդես են գալիս որպես այդ հատկանիշների կրողներ, պատկերվում են մի առանձին համակրանքով։ Եվ ընդհակառակը անազնվությունը, դավաճանությունը, մարդկային վատ ու ցոփ արարքները պախարակվում և դատապարտվում են Էմինի կողմից։ Նրա գնահատումների մեջ, իհարկե, շատ սուբյեկտիվ բան կա, և այդ էլ, մի որոշ իմաստով, անդրադարձել է ինչպես մեմուարային դիմանկարների պատմականության, այնպես էլ եղելությունների պատկերման ճշմարտացիության վրա։

Էմինը ունի տաղանդավոր, հոյակապ նկարագրություններ, մանավանդ ռազմի տեսարանները, որտեղ նա հասել է մեծ վարպետության։ Գետաշենի ճակատամարտը, Կոլանի քուրդերի և լեզգիների ընդհարումը Սևանի ափին, կռիվը լեզգիների դեմ Հաղպատի ճանապարհին և այլն։ Էմինն ասես թե վերապրել էր այդ կռիվներն ու ընդհարումները, երբ վերցրել է գրիչը և անցել դրանց նկարագրությանը։

Էմինը տաղանդավոր նոթագիր է։ Իր բազմաթիվ ճանապարհորդությունների ընթացքում նա ենթարկվել է հետաքրքիր արկածների և մեծ փորձությունների, բայց միշտ էլ ուշի ուշով հետևել է, թե ինչպես են ապրել փոքր ու մեծ ժողովուրդները, ինչպես են կազմակերպել իրենց սոցիալ-բարոյական և սոցիալ-տնտեսական կյանքը։ Էմինի մեմուարները այս իմաստով չափազանց հետաքրքիր փաստեր ու տեղեկություններ են պարունակում Թուրքահայաստանի, Կովկասի, Միջագետքի, Պարսկաստանի, Վրաստանի, Ղարաբաղի ժողովուրդների ներքին կյանքի, պատմական հուշարձանների, սովորույթների, վարք ու բարքի, կենցաղի վերաբերյալ։ Էմինը իր սովորություններն ու հիշողությունները պատմում է որպես մի մարդ, որ շատ երկրներ է շրջագայել հատուկ քաղաքական նպատակադրությամբ։ Նա սարաշխարհիկ գեղեցկությունների ու հնամենի հուշարձանների սիրահար չէ և ոչ էլ գիտնական ճանապարհորդ։ Չեչենների մոտ նա ռազմական առաջնորդ է, Ղարաբաղում՝ ռուսական կայսրության և Հայաստանի ազատագրական շարժման ներկայացուցիչ, Թուրքահայաստանում՝ քաղաքական պրոպագանդիստ, Միջագետքում՝ ծպտրված ազգային հերոս, Իմերեթիայում՝ «սոմեխի բատոնա» (հայ պարոն) և այլն։ Ամենուրեք նա ուսումնասիրում է ժողովուրդների բարքերը, պետական, վարչական ղեկավարման ձևերը, մեծ ուշադրություն դարձնելով այն բանին, թե հետագայում ինչպես կարելի է օգտագործել այս կամ այն ժողովրդի, այս կամ այն իշխանության ռազմական ու քաղաքական օգնությունը, եթե դրա համար անհրաժեշտ իրադրություն ստեղծվի։

Զափազանց հետաքրքիր պատմություններով ու արկածներով մի դըրվագ է Էմինի ճանապարհորդությունը Կովկասից Հնդկաստան։ Էմինը այդ ճանապարհորդության մասին պատմում է ամենայն մանրամասնությամբ։ Նա անցնում է Քուրդիստանի վրայով Բաղդատ, հյուրընկալվում արաբական միզիֆիխաններում (գթության տներ), ազատվում շատ վտանգներից, կռվում քրդերի դեմ, և որպես շիա աղանդին պատկանող պարսիկ ուխտագնաց՝ փրկվում մոլեռանդ մահմեդականների վրեժխնդրությունից։ Էմինի նկարագրությունները աչքի են ընկնում արտակարգ պարզությամբ և գրավչությամբ։ Նա չի ճգնում հեքիաթային տպավորություն ստեղծել, բայց և աշխատում է ամեն ինչի մասին տեղյակ պահել ընթերցողին, որպեսզի նա իմանա, թե ինչպիսի փորձությունների, դժվարությունների ու զրկանքների միջով է անցել ինքը՝ իր նվիրական իղձերը կենսագործելու համար։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ

Էմինի մեմուարների հրատարակությունից շուրջ քսան տարի հետո Պետերբուրգում, ռուսերեն լեզվով, լույս ընծայվեց մի մեմուար ևս, որ կրում է «Հարություն Արարատյանի կյանքը...» վերնագիրը։

Հարություն Արարատյանը XIX դարի առաջին կեսի հայ մեմուարային գրականության ամենախոշոր դեմքն է։ Նա ծնվել է 1774 թվականի ապրիլի 20-ին, Վաղարշապատում, մի աղքատ արհեստավորի ընտանիքում։ Նրա հայրը՝ Աստվածատուր Խաչիկյանցը Մուշի Վարդենիս գյուղից էր։ Երիտասարդ ժամանակ ուխտ գալով Էջմիածին, նա Սիմեոն կաթողիկոսի միջնորդությամբ, ամուսնանում է ղազախեցի մի այրու դստեր հետ և հաստատվում այդտեղ։ Հարությունը չորս ամսեկան էր, երբ մեռավ Աստվածատուրը։ Այրին ստիպված էր ամեն տեսակ աշխատանք կատարել երեք որբերին պահելու համար։

Ծանր էր եղել Հարությունի մանկությունը։ Աղքատություն, կարիք, զրկանքներ, որ հաջորդել են մեկը մյուսին, ընչազուրկ գյուղացու մի դառը մանկություն՝ անցած լացի, ողբի ու տառապանքի մեջ...։ «Ես,— պատմում է Արարատյանը,— ամբողջ ուժով զգում էի, որ որբ եմ, որ իմ մայրը մի անօգնական ու աղքատ այրի է, և որ նա միայն մեծ զոհողություններով ու աշխատանքով է կարողանում հայթայթել մեզ համար ամենաաղքատ և անհրաժեշտ սնունդը»[1]։

Փոքրիկ Հարությունը շնորհիվ մոր ջանքերի և նախաձեռնության գրել-կարդալ է սովորում մասնավոր մի ուսուցչի մոտ։ Շուտով նա աշխատանքի է անցնում վանքի տպարանը որպես աշակերտ։ Այստեղ նա տեսնում է վանական կյանքի արատները. գրեթե ոչ մի տարբերություն վանքի և գյուղի միջև. ֆալախկան, ծեծը, հայհոյանքը, կաթողիկոսի անտարբերությունը, միաբանների օտարոտի վարքն ու բարքը զարմացնում ու վիրավորում են պատանուն։

Աշխույժ, հետաքրքրասեր, միամիտ և անփորձ Հարությունը ձգտում է հասկանալ ու բացատրել իրեն շրջապատող աշխարհը։ Կյանքի հարվածները նրան ստիպում են ատել բոլոր իշխաններին, վանքն ու նրա միաբանությունը։ Նրա համար առանձնապես ծանր էր կրթության նկատմամբ մարդկանց անհոգի վերաբերմունքը։ Նրան ծեծում էին ու վիրավորում, ծաղրում ու սպառնում, որովհետև նա ցանկանում էր սովորել, ցանկանում

---

1 «Жизнь Артемия Араратского...», СПБ, ч. I, 1813, стр. 2.

էր գրաճանաչ դառնալ։ «Գյուղի յոթ հարյուր ընտանիքներից,— ասում է Արարատյանը,— հազիվ տասը մարդ գրագետ լիներ»[1]։ Մողնու վանքի վանահայր Կարապետ վարդապետի մոտ փոքրավոր, ապա Աշտարակում այգեպան, կազմարարի աշակերտ, ուխտավորների ուղեկցող, Երուսաղեմից եկած Սահակ արքեպիսկոպոսի մոտ սպասավոր և այլն,— ահա այն «պաշտոնները», որ վարում էր Հարությունը իր պատանության օրերին։

1795 թվականի հուլիսի 15-ին Հարությունը հրաժեշտ տալով յուրայիններին, մեկ անգամ ընդմիշտ թողնում է Վաղարշապատը և մեկնում Թիֆլիս։ Այստեղ նա երկար չի մնում. 1795 թվականի դեկտեմբերի 1-ին գալիս է Ղզլար, ուր արդեն կենտրոնացած էին ռուսական զորքերը։ Սկսվում էր 1796 թվականի կովկասյան նշանավոր արշավանքը։ Ղզլարցի մի հայ քահանայի միջնորդությամբ Հարությունը, որպես ձիապան ծառայության է մտնում հայազգի մայոր Սերեբրովի մոտ և 1796 թվականի մայիսի 1-ին ռուս զորքերի հետ հասնում Դերբենդ։

Հարություն Արարատյան

Գեներալ-ֆելդմարշալ Վ. Զուբովի բանակը 1796 թվականի ամառային կոմպանիայի ժամանակ խոշոր հաղթանակներ տարավ ադրբեջանական խանությունների դեմ։ Դերբենդի, Բաքվի, Ղուբայի, Գանձակի, Շաքիի և այլ խանություններ ռուսական հպատակություն ընդունեցին։ Բայց աշնանը մեռավ Եկատերինա կայսրուհին։ Քսանվեցամյա ֆելդմարշալը հետ կանչվեց, և ռուսական զորքերը նահանջեցին մինչև Ղզլար։ Հենց այդ ժամանակ Բաքվից Ռուսաստան տեղափոխվող ստորաբաժանումներից մեկի հետ, Հարությունը նավ է նստում և 1797 թվականի սկզբներին հասնում Աստրախան։ Մայիսին իր նոր տիրոջ հետ (ռուս, նույնպես զինվորական) նա մեկնում է Ստավրոպոլ, ուր տերը վերցնում է իր ընտանիքը և Չերկասկ—Նոր Նախիջևան—Տուլա—Մոսկվա ճանապարհով հասնում Տորժոկ փոքրիկ գյուղը։ Հարությունը հրաժեշտ է տալիս իր տերերին և որոշում

[1] «Жизнь Артемия Араратского...», СПБ, ч. I, 1813, стр. 4.

գնալ Պետերբուրգ։ 1797 թվականի օգոստոսի 17-ին Հարությունը արդեն Պետերբուրգումն էր։ Սկսվում էր նրա կյանքի մի նոր շրջանը։ Այդ շրջանի մասին Արարատյանը միայն հետևյալ հիշատակությունն է թողել. «Այդպիսով բնակություն հաստատեցի Ս. Պետերբուրգում. առաջին տարիներին շատ դժվարություններ տարա և չկարողացա խուսափել նոր արկածներից, թեկուզ ոչ այնքան վիրավորական, բայց ծիծաղելի ընդհանրապես։ Հետո աստծո օգնությամբ ձեռք բերի օրինավոր կյանք և իմ ուժերի ներածին չափ ունեմ բարեկիճակ ապրուստ»[1]։ Շատ քիչ բան է հայտնի Արարատյանի կյանքի այս տարիներից։ 1804—1808 թվականների շրջանում նա որդեգրվում է հայտնի հրատարակիչ և տպարանատեր Գրիգոր Խալդարյանի այրու՝ Կատարինե Զաքարովնայի կողմից։ Կատարինե Խալդարյանը կրթված ու զարգացած մի կին էր։ Նրա տունն էին մուտք գործում ժամանակի հայտնի հոգևորականներն ու աշխարհիկ անձինք, ռուս ազնվականներն ու ազնվական տիկինները։ Նա ուներ ընկեր-բարեկամների լայն շրջան, ծանոթ էր Լազարյաններին, մանավանդ շատ մտերիմ էր Կատարինե Իվանովնա Լազարյանի հետ։ Կատարինե Զաքարովնայի նամակագրությունը երեք կաթողիկոսների (Հովսեփ, Դանիել, Եփրեմ), Ներսես Աշտարակեցու և այլ եկեղեցական ու հասարակական գործիչների հետ, պետերբուրգյան բազմաթիվ կապերն ու ծանոթությունները ցույց են տալիս, որ նա ժամանակին աչքի ընկած հայուհիներից մեկն է եղել։ Դեռ 1788 թվականին նա հրատարակեց ամուսնու աշխատությունը «Գիրք որ կոչի շաւիղ լեզուագիտութեան», որով հայ ընթերցողին հնարավորություն էր տրվում դյուրությամբ սովորելու ռուսաց լեզուն։ 1818 թվականին նա կայսեր հաճությունն ստացավ Պետերբուրգում «Հայոց լեզվի» ուսումնարան բանալու։ Այս կնոջ օգնությամբ Արարատյանը մեծ համբավ է ձեռք բերում մայրաքաղաքի հայության մեջ։ Նա դրաղվում է կոորեկենի առևտրով, և շնորհիվ իր գրական տաղանդի ու բնատուր սրամտության, հայտնի դեմք դառնում Պետերբուրգի բարձրաշխարհիկ հասարակության սալոններում։ Ալ. Երիցյանը ասում է, որ Արարատյանը «յուր զվարճախոսության համար... մուտք ուներ ռուսաց մի քանի մեծամեծների և մանավանդ իշխան Գոլիցինի մոտ»[2]։

Պետերբուրգում եղած գրեթե բոլոր նշանավոր հայ գործիչները՝ Հովհաննես և Խաչատուր Լազարյաններ, գեներալ Մադաթով, Դավիթ Արամնելիքյան, Հովսեփ Հովհաննիսյան և այլն ծանոթ են եղել Արարատյանին։ Հայ եկեղեցու պետերից երկուսը՝ Ներսես Աշտարակեցին և Եփրեմ կաթողիկոսը միշտ նամակագրական կապ են ունեցել նրա հետ։

Բարեկամների և ծանոթների այդ շրջանն ունենալով, Արարատյանն իրեն ազատ էր զգում միջամտելու Պետերբուրգի հայության ներքին գործերին, մասնակցելով ամեն մի հուզող հարցի քննության, կազմելով

---

1 «Жизнь Артемия Араратского...», ч. II, СПБ, 1813, стр. 260.

2 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, հատ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 98։

խնդրագրեր, ոչչունելով ձեռնարկված և ազգին շահավետ ամեն մի քայլ, նամակներով, այցելություններով, այլ միջնորդություններով հաջողեցնելով հայրենիքից եկած յուրաքանչյուր խնդրանքի կատարումը։ Նա, ինչպես միշտ, ծանակում էր «տգետ ու անբան հոգևորականներին», հետևում եկեղեցական վեճերին և այլն։ Մանվել Կյումուշխանեցին Եփրեմ կաթողիկոսին ուղղած մի նամակի մեջ գրել է. «1814 թուին իւր էաք ընդ առաքելաշաւիղ դետին (Հովհաննես արքեպիսկոպոսի մասին է խոսքը —Կ. Դ.) ի Պետերբուրգ։ Գիտէ ձեր վրարս Յարութիւն Վաղարշապատեցւոյն, միշտ բանագոծ առնէր զառաքելաշաւիղ առաջնորդն, ընդ նմին և համայն հոգևորականսն, որք չունին փոյթ հոգալ վպակասութիւն եկեղեցւոյն և այլն որպէս գիտէք զբարս Արարատովին»[1]։

Նա մի երկարաշունչ ակրոստիկոս է գրել մխիթարյան միաբանների դեմ, ուր նրանց մեղադրել է հայրենի եկեղեցուց հեռանալու և ազգին վնաս հասցնելու մեջ։


ЖИЗНЬ
АРТЕМІЯ АРАРАТСКАГО
УРОЖЕНЦА СЕЛЕНІЯ ВАГАРШАПАТЪ
близь горы
АРАРАТА,
и приключенія, случившіяся съ нимъ отъ младенчества до совершенныхъ лѣтъ, удаленіе его отъ своего Отечества въ Грузію; оттуда въ Россію, потомъ въ Персію и на конецъ возвращеніе обратно въ Россію чрезъ Каспійское море, съ описаніемъ многихъ любопытныхъ предмѣтовъ, находящихся въ его сторонѣ и прочихъ мѣстахъ Персіи, съ приложеніемъ шести гравированныхъ эстамповъ изображающихъ виды городовъ Персидскихъ.

Писанныя и переведенныя имъ самимъ

Съ Армянскаго на Россійскій.

ЧАСТЬ ПЕРВАЯ.

Հարություն Արարատյանի մեմուարների առաջին հրատարակության անվանաթերթը

Թե երբ է Արարատյանը պետական ծառայության անցել,ստույգ հայտնի չէ։ Նա երկար ժամանակ Պետերբուրգի դատարաններում թարգմանի պաշտոն է վարել և ունեցել կոլեժսկի սեկրետարի աստիճան։

1813 թվականին Արարատյանը հրատարակեց իր մեմուարները։ «Կատարելով մորս և դաստիարակիս կտակը,— գրում է նա «Կյանքի» առաջաբանում,— որոնք ներշնչել են ինձ միշտ հիշողությանս մեջ պահել ինձ հետ պատահած բոլոր թշվառությունները և դրանով ճանաչել աստծո իմ վրա ունեցած բարությունը ես գրի առա իմ բոլոր արկածները և լրացնելով ըստ ժամանակների, հավաքեցի և կազմեցի նրանցից իմ կյանքի լրիվ պատմությունը հայերեն լեզվով։ Մի քանի անձնավորություններ, որոնք եղել են անցյալ պարսկական պատերազմում և ինձ բավական ճանաչում են, սփոփեցին և համարյա հարկադրեցին ձեռագիրը վերջապես թարգմանել ռուսերեն, իսկ իմ գրքի նման շատ հրատարակությունների օրինակը պայման դարձավ, որ ես լույս ընծայեմ իմ հուշագրերը»[2]։

---

1 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 38, վավերագիր 188 ա։

2 «Жизнь Артемия Араратского...», ч. I, СПБ, 1813, «От издателя».

Մեկ տարում չէ, որ Արարատյանը գրել է իր մեմուարները։ Նախապատրաստական աշխատանք այդ ուղղությամբ նա կատարել է սկսած 1809—1810 թվականներից։ Նրա խնդրանքով Վաղարշապատի իր ուսուցիչը՝ Հովհան քահանա Ոսկերչյանը մի փոքրիկ հիշատակարան է գրում, նկարագրելով Արարատյան աշխարհում տեղի ունեցած դեպքերը 1751—1804 թվականներին։ Նա ստանում է այդ հիշատակարանը 1812 թվականին։ Մինչ այդ Արարատյանը թերթել էր «С. П. Ведомости»-ները, կարդացել զանազան գրքեր, հետևել նոր հրատարակություններին և այլն։ Արարատյանի մեմուարները մեծ արձագանք գտան ինչպես հայ, այնպես էլ ռուս ընթերցողների շրջանում։ Թիֆլիսում և Պետերբուրգում, Ռուսաստանի զանազան քաղաքներում, նաև Եվրոպայում, Արարատյանի «Կյանքը» գտավ իր ընթերցողներին։ Ամբողջ Ռուսաստանը և Եվրոպան ընթերցեց Արարատյանի մեմուարները,— ասում է Միքայել վարդապետ Սալլանթյանցը Խ. Աբովյանին գրած մի նամակի մեջ[1]։ 1821 թվականին Հալլեում գերմաներեն և ապա 1822 թվականին Լոնդոնում անգլերեն լեզուներով հրատարակվելուց բացի, այդ գիրքը թարգմանվեց նաև ֆրանսերեն ու վրացերեն և երկար ժամանակ, մինչև XIX դարի վերջերը, համարվում էր Կովկասի պատմության լավագույն աղբյուրներից մեկը։

Հրատարակելով իր մեմուարները, Արարատյանը ռուսական կայսրության ուշադրությունն էր հրավիրում դեպի Կովկաս, դեպի այն ժողովուրդները, որոնք դեռ սպասում էին ռուս զորքին, որի կյանքի փառքը արդեն թնդում էր Եվրոպայով մեկ։ Գյուլիստանի հաշտության դաշնագրով (1813) Ռուսաստանին վերջնականապես միացան Դաղստանը և Վրաստանը, մերձկասպյան խանությունները, Ղարաբաղն ու Գյանջան, Շաքին ու Շիրվանը, Արևելյան Հայաստանի մի քանի գավառներ (Շամշադին, Փամբակ) պոկվեցին Պարսկաստանից[2], բայց Երևանը դեռ կանգուն էր, կանգուն էր Ցիցիանովի, Գուդովիչի հարվածներից հետո և էլի շարունակում էր կանգուն մնալ ռուսական հաղթանակների և ուժի հանդեպ։

Հայկական ազատագրական շարժումը ծայր էր առնում մի նոր թափով։ XVIII դարը նախապատրաստել էր այդ վերելքը։ Գրական-հասարակական գործիչները, հայտնի ու անհայտ մարդիկ, ամենախեղճ արհեստավորը և ամենահարուստ բուրժուան գործնական հաջողության յուրաքանչյուր քայլը գերադասում էին բոլոր ծրագրերից. դա ազգային-ազատագրական շարժման այսպես ասած պրակտիկ շրջանն էր, երբ հարկավոր էր ամեն ինչով օգնել առաջ շարժվող ռուսական բանակին, հարկավոր էր մտածել հացի, վառոդի, ձիերին կերակրելու, բեռնասայլերի, միաժամանակ՝ կռվելու և արյուն թափելու մասին։ Գյուլիստանի դադարը վերջնական չէր կարող լինել. այդ հասկանում էին ոչ միայն Ռուսաստանում, այլև Երևանում...

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 2, Երևան, 1948, էջ 94։

2 Տե՛ս «Договоры России с Востоком, политические и торговые», собрал и издал Т. Юзефович, СПБ, 1894, стр. 208—214.

Արարատյանի մեմուարները հրատարակվել էին ժամանակին. Հայաստանի մասին, ինչպես էլ լիներ, սկսեցին մտածել շատ-շատերը։

Պահպանվել է 1815 թվականին իշխան Ա. Ն. Գոլիցինին հասցեագրած Արարատյանի մի նամակը, որ պատմական մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Մի ամբողջ քաղաքական ծրագիր էր մշակված այդ նամակում։ Ցույց տալով, թե հայ ժողովուրդը ինչպիսի նախանձախնդրություն ու ջանք է գործադրել 1796, 1804, 1808, 1810, 1813 թվականների պատերազմներում օգնելով ռուսական բանակին նրա ամենածանր պայմաններում, նվիրաբերելով նրան այն ամենը, ինչ թույլ են տվել նրա ուժերն ու հնարավորությունները, անձնուրացորեն, հերոսական խանդավառությամբ տանելով ամեն մի փորձություն,— Արարատյանը դնում է այդ ժողովրդի պատմական բախտի հարցը, և ինչպես Էմինը իր ժամանակ, փորձում ռուսական կառավարությանը ներկայացնել հարցի լուծման իր նկատառումները։ Արարատյանը, իհարկե, իր ծրագրով հետապնդում էր ավելի համեստ նպատակ։ Նա ցանկանում էր, որ Ռուսաստանի կողմից նվաճված պարսկական խանություններում հայերին մեծ առանձնաշնորհումներ տրվեն, որովհետև նրանք իրենց արյամբ են նվաճել դրա իրավունքը։

Ռուս-պարսկական պատերազմը (1813) չիրականացրեց հայերի հույսերը։ Մարդիկ ակամայից տեսնում էին, որ Ռուսաստանը բավականանում է ձեռք բերածով։ Գրեթե ոչ մի տարբերություն անցյալի և ներկայի միջև։ Հայերի կոհողությունները, ակտիվությունը, պայքարը, խիզախության օրինակները, թափած արյունը հատուցվում էին թղթե պատվոգրերով, միմիայն խոսքով։ Ոչ մի բան այդպես հիասթափեցնող, այդպես վրդովեցուցիչ չէր կարող լինել։ Արարատյանի նամակի մեջ իրենց արտահայտությունն են գտել հայերին համակած դժգոհության մոմենտները։ Նամակի տոնը, դիտողություններն ու առաջարկները, կազմած ծրագիրը ցույցե հանդուգն կամ անժամանակ թվացին բարձրագույն կառավարությանը և այդ պատճառով հետևանքներ չունեցան։

1817 թվականի գարնանը Արարատյանը մեկնում է Փարիզ և մոտ երկու տարի մնում Եվրոպայում։ Փարիզում նա մի քանի հոդվածներ է գրում Շահան Ջրպետյանի դեմ, կազմակերպում տեղի հայերի նյութական օգնությունը բացվելիք Ներսիսյան դպրոցի համար. հայտնի արևելագետ Կլապրոթի հետ նա ֆրանսերեն է թարգմանում Հովհան քահանա Ոսկերչյանի հիշատակարանը։

Եվրոպայից վերադառնալուց հետո Արարատյանը զբաղվում է իր մեմուարների թարգմանության գործով։ Կարծիք կա, թե Ա. Ս. Գրիբոյեդովը և Արարատյանը միաժամանակ աշխատել են Ռուսաստանի արտաքին գործերի պետական կոլեգիայում և մասնակցել Երևանյան արշավանքին[1]։

1831 թվականին Արարատյանը դուրս է գալիս Պետերբուրգից Հնդկաստան գնալու նպատակով։ Ի՞նչ եղավ նա դրանից հետո, մեզ անհայտ է։

[1] Վ. Ա. Պարսամյան. *Ա. Ս. Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 12—13։*

Գ. Փոշյանը պատմում է ժողովրդից լսած հետևյալ զրույցը. «Արարատյանը ցանկանալով օր ծերության այցելել յուր ծննդավայր Էջմիածինը, այնտեղից գնացել է յուր հոր հայրենիքը՝ Մուշը տեսնելու ... Նա վախճանվել է Լիմ անապատում և այսօր այնտեղ է գտնվում նրա շիրիմը»[1]։

* * *

Հ. Արարատյանի մեմուարները ընդգրկում են մոտ հիսուն տարվա մի ժամանակաշրջան (1751—1797)։ Պատմական դեպքերով հարուստ ու բազմազան է այդ էպոխան, և, կարելի է ասել, անկյունադարձային մեր ժողովրդի պատմության մեջ։ Մեմուարիստը վառ կերպով արտահայտում է այդ էպոխայի մի քանի բնորոշ գծերը, ներքին հակասությունները, լուսավորության պահանջի և եկեղեցու սրբագործած տրադիցիաների գոտեմարտը, նորի ընթացքը և, վերջապես, անհատի տանջալից մաքառումը ինքնազատագրման համար։

Ծնվելով Վաղարշապատում՝ հայ եկեղեցու այդ ամենահին օրրանում, Արարատյանը ապրել էր դառնություններով լի մի կյանք։ Նա մեծացել էր այն դժբախտ հանգամանքներում, որոնք մարդուն ստիպում են փոքր հասակից ավելի լավ տեսնել իր միջավայրը, ավելի շատ բան հասկանալ դրսից, ավելի խոր ըմբռնել անհավասարության ամբողջական ողբերգականությունը։

Դեռ երեխա, նա ստիպված էր պայքարել չարիքի դեմ, որ մարդիկ են ստեղծել, մարդկանց դեմ, «որ չարիք են բերում»։ Նրա ձգտումները, նրա ցանկությունները յուրաքանչյուր քայլափոխին հանդիպում էին դիմադրության, ծաղրվում էին կամ արհամարհվում։ Տգիտության ու խավարի այդ ժամանակներում կրթություն ստանալու ձգտումն անգամ դատապարտվում էր։ Արարատյանը ցնցող պատկերներով է ներկայացնում իր մանկության տառապանքները, առանձնապես այն ամբողջ հալածանքը, որ կազմակերպում են գյուղի իշխանավորները՝ որդուն ուսումնական տեսնելու ցանկությամբ տարված այրու, և կրթվելու բուռն տենչով տոգորված նրա փոքրիկ որբուկի դեմ։ Մի անգամ գզիրը հաջողեցնում է բռնել դաշտային աշխատանքներից խույս տված Հարությունին հենց նրանց տան մեջ։ Ծեծ ու հայհոյանքով նա ստիպում է մորը և որդուն վերցնել գործիքները և գնալ տանուտերի մոտ։ «Նա քաշկռտելով մորս մազերից, ստիպեց իրեն հետևել,— պատմում է Արարատյանը։ Բայց այդ արդեն անտանելի էր. «մայրս թագուչակով խփեց գզրի գլխին և արյունաթաթախ արեց նրան»։ Գզիրը առանց այն էլ քարասիրտ ու անխղճմտանք մարդ էր, միանգամայն կատաղեց, մորս սաստիկ ծեծեց ու, համարյա կիսաշունչ փողոցում վայր գցեց։

Այդքանով նա չկշտացավ. տանուտերին թողած՝ ուղղակի վազեց գյուղի կառավարիչ Գալուստի մոտ և գանգատվելով հայտնեց, որ մայրս

---

[1] «Վաղարշապատեցի Հարություն Արարատյանի կյանքը», Թիֆլիս, 1892, Թարգմանչի կողմից, էջ Ժ։

չի հնազանդվում, ոչ ինքն է գնում բանելու և ոչ որդոցն է ուղարկում, այլ միայն մտածում է, որ մեզ ուսում տա. մեկին, ասում է նա, կոշկակարի աշակերտ է տվել, մյուսին կարդալ գրելու»[1]։

«Գալուստն այդ ժամանակ կալումն էր։

Նրա հրամանով յուր սարադրյալներից վեց հոգի իսկույն եկան և մորս մազերից քարշ տալով, նրա մոտ տարան։

Եվ ահա ամենայն սառնասրտությամբ նա հրամայեց, որ մի ուժեղ տղամարդ կանչեն և գերմաստի մահակներ բերեն։

Եկավ մի հաստ ու կոպիտ գյուղացի, մորս շալակեց ու յուր ուսի վրայից նրա ձեռները պինդ բռնեց. իսկ մյուսները այնքան ծեծեցին նրան, որ ձայնը կտրվեց ու շորերն արյունաթաթախ եղան»[2]։

Այսպես էր մարդու ճակատագիրը։ Եվ ո՞վ է մեղավոր դրանում,— կրթության պակասը, տգիտությունը,— պատասխանում է Արարատյանը։ Եվ բոլորովին պատահական չէ, որ նա գյուղի իշխանավորների և իր միջև եղած անհաշտության, կոնֆլիկտի հիմքում առաջին հերթին դրել է ոչ թե աղքատությունը, այլ կրթության հարցը։ Իհարկե Արարատյանը տեսնում էր հարուստին և աղքատին, նրանց դիրքերի, կոչման, իրավունքների տարբերությունները։ Նրա համար իշխանավորը և աղքատ գյուղացին սոցիալապես հակադիր ծայրաթևեր էին։ Բայց Արարատյանը, որպես ազգային շարժման գաղափարախոս իր դեմ ելած գյուղական վերնախավի վերաբերմունքը բացատրում էր կրթության նկատմամբ նրանց ունեցած ատելությամբ։ Տգիտությունը նրանց չի ճնշում, չի նվաստացնում. նրանք դրանից ոչ մի անհանգստություն չեն զգում. ընդհակառակը, նրանց հաճելի է տեսնել անկիրթ ամբոխին, որովհետև դա հնարավորություն է տալիս ավելի լավ կողոպտելու, ավելի հանգիստ բանեցնելու, ավելի հեշտ համոզելու նրան, որ այդ այդպես էլ պետք է, որ նրա համար ուրիշ ելք չկա, քան աղոթքը, ծանր աշխատանքը և ենթարկվածությունը։ Այսպես է դատում Արարատյանը։

Այն հատուկենտ անհատները, որոնք մեծ դժվարություններով կարողանում են կրթություն ստանալ այդպիսի պայմաններում, ըստ Արարատյանի, արտակարգ մարդիկ են, որովհետև սոցիալական չարիքը՝ աղքատությունը անհնարին է դարձնում ամեն մի ընդունակության զարգացում. նա մարդուն կապում է գորշ աշխատանքին, ծանր, միշտ անտանելի կարիքին և ստիպում հրաժարվել կրթված մարդ դառնալու որևէ մտքից։ Եթե ինքը կրթություն է ստացել, ապա այդ իր բնական ընդունակությունների շնորհիվ է. «Այն ժամանակվա սահմանափակ լուսավորության պայմաններում,— ասում է Արարատյանը,— ես ... նրանց աչքում մի անսովոր, արտակարգ երեխա էի»[3]։

1 *«Վաղարշապատեցի Հարություն Արարատյանի կյանքը», Թիֆլիս, 1892, էջ 46—47։*

2 *Նույն տեղում, էջ 47։*

3 «Жизнь Артемия Араратского», СПБ, ч. I, 1813, стр. 89

Գյուղում ոչ մի դպրոց չկար։ Կային մի քանի մասնավոր ուսուցիչներ, որոնց մոտ դարձյալ հնարավոր չէր կրթված մարդ դառնալ։ «Ուսուցման փոխարեն,— ասում է Արարատյանը Տեր-Գաբրիելի մասին,— նա ուրիշ ուսուցիչների սովորույթով ինձ օգտագործում էր կանական աշխատանքներում, իսկ եթե դասեր էր տալիս, ապա անգիր ասելու ժամանակ, եթե պատահեր սխալվեի անգամ մեկ բառի մեջ, անխնա պատժում էր, ճիշտն ասած, ուղղակի տանջահար էր անում ինչպես ինձ, այնպես էլ մյուս աշակերտներին»[1]։

XVIII դարի վերջերին Էջմիածինը Երևանի խանության սահմաններում միակ հաստատությունն էր, որ հարկատու չէր խանին։ Նա խոշոր մյուլքադար էր, հարկ էր վերցնում իրեն ենթակա յոթ գյուղերից, ուներ վանքապատկան կալվածներ և ճորտեր։ Արարատյանն ասում է, որ գյուղացիները պարտավոր էին աշխատել ոչ միայն իշխանավորների, այլև վանքի համար. «Մեզ բոլորիս քշում էին աշխատանքի, որ աղքատ չքավորները պետք է կատարեին, ինչպես սովորաբար լինում է՝ գիշեր ու ցերեկ, մերթ վանքապատկան դաշտում, մերթ որևէ ստարշինայի արտում»[2]։ Տուն վերադառնալ չէր թույլատրվում. առանց հացի ու ջրի գյուղացիներն օրն ի բուն աշխատում էին դաշտերում. նրանք պառկում էին չոր գետնին, քնում բաց երկնքի տակ, և այսպես օրեր, շաբաթներ...[3]։ Ահա գալիս է գյուղացիներից մեկը, որ ստացել է աշխատանքի իր վարձը. «գյուղի իշխանավորները հրամայում են կանգնեցնել նրան, և պատճառաբանելով, իբր նրա կովը կամ ուրիշ անասունը մտել է իրենց արտը և տրորել ցորենը, պահանջում են վճարել վնասի համար»[4]։ Եվ այսպես նրանք վարվում են ոչ թե մեկի, այլ բոլոր չունևոր աղքատների հետ,— եզրափակում է Արարատյանը[5]։

Հարկադիր աշխատանքի տարված գյուղացիներին մնում էր հնազանդվել, մնում էր տանել և՛ անարդարությունը, և՛ չարությունը։ Իսկ ո՞ւմ կարող էին բողոքել նրանք։ Բողոքի համար նրանց սպասում էր մտրակը և ֆալախկան, անհնազանդության համար ավելի մեծ պատիժը։ Բայց կային մարդիկ, որոնք ըմբոստանում էին հարուստի դեմ ի սեր աղքատի. դրանցից մեկն էր Տեր-Մզրախը. «Նա,— պատմում է Արարատյանը,— ավազակության միջոցով վրեժ էր լուծում հարուստներից աղքատների համար, և վերցնելով առաջիններից ինչքան հաջողվում էր, օգնում էր վերջիններին այնպես, որպես թե տալիս էր հարուստների կողմից յուրացված նրանց ունեցվածքի մի մասը»[6]։ Արարատյանը բացառիկ համակրանքով է խոսում աղքատներին պաշտպանելու ելած այդ քահանայի

1 «Жизнь Артемия Араратского...», СПБ, ч. 1, 1813, стр. 80.

2 Նույն տեղում, էջ 182—183։

3 Նույն տեղում, էջ 75։

4 Նույն տեղում, էջ 75։

5 Նույն տեղում, էջ 75։

6 Նույն տեղում, էջ 101։

մասին։ Դա, ի միջի այլոց, միակ քահանան է, որին չի դիպել նրա թունավոր խոսքը։

Տեր-Մզրախի գործունեության նկարագրությամբ Արարատյանը առաջին անգամ հայ նոր գրականության մեջ դուրս էր բերում սոցիալական անհավասարության ու անարդարության դեմ ելած ըմբոստ անհատին։

Արարատյանը կարողանում է վարպետորեն կապակցել իր կյանքի պատկերները էպոխայի ընդհանուր նկարագրին։ Այդպես է նա, երբ տալիս է իր մոր պատմությունը և կամ նկարագրում իր ճանապարհորդությունները ու թափառումները։

«Կյանքի» սկզբում Արարատյանը պատմում է իր տատի գերի տարվելու և նրա աղջկա (այսինքն իր մոր) Զոլախ բեկի մոտ ութ տարի ապրելու ու վերստին քրիստոնեության գիրկը դառնալու ոչ այնքան հավանական, բայց հետաքրքիր պատմությունը։ Սյուժետային այս հորինվածքը անհրաժեշտ է եղել Արարատյանին պատկերելու 1750—1770-ական թվականների անդրկովկասյան անցքերը, Հերակլի և Երևանի խանի փոխհարաբերությունները, 1779 թվականի վրաց արշավանքը Երևան, Սիմեոն կաթողիկոսի հաշտարար միջնորդությունը պատերազմը կանխելու համար և այլն։ Որպեսզի իր նկարագրությունները միանգամայն արժանահավատ աղբյուր համարվեն պատմության համար և որպեսզի ոչ մի տարակույս չլինի, թե նրանք հորինաբանության արդյունք չեն, Արարատյանը դիմել է նորից մեմուարին, ինքնակենսագրությանը, բայց արդեն իբրև պատմող հանդես բերելով ոչ թե իրեն, այլ իր մորը, որին ծանոթ է եղել ինքը՝ Սիմեոն կաթողիկոսը։ Եթե Արարատյանի մոր պատմությունը դուրս բերվի նրա մեմուարներից և ներկայացվի առանձին, ապա այն կարելի կլինի դիտել որպես յուրատեսակ գեղարվեստական մի ստեղծագործություն։

Վրաստան կատարած իր ճանապարհորդության ընթացքում Արարատյանին հուզում են բոլորովին նոր խոհեր ու ապրումներ։ Ճանապարհները լի են հայ, թուրք փախստականներով. սրանք գնում են Հերակլի երկիրը, որպեսզի փրկվեն Աղա Մահմեդ խանից։ Սոված և ուժասպառ, առանց պարենի նրանք առաջ են շարժվում, իրենց հետևից միայն դիակներ թողնելով. «...դրանից երկօրյա ճանապարհի ամբողջ տարածությամբ օդը այնպես ծանրացել էր, որ մենք հազիվ էինք կարողանում տանել այն»[1]։ Բայց ահա զինավառյալ Թիֆլիսը. զինի են խմում կամավորները, հանդիսավոր զորաերթով քաղաք են մտնում Իմերեթիայից օգնության եկած զորքերը. մարդիկ իրարանցման մեջ են. վաճառականները հավաքում են իրենց ունեցվածքը. լսվում է, որ Շահը գրավել է Շուշին և ահա ուր որ է կհասնի Թիֆլիս։

Արարատյանի նկարագրությունները պատմականորեն ճշմարտացի են։ Բազմաթիվ վրաց և ռուս աղբյուրներ լրացնում և հաստատում են

---

[1] «Жизнь Артемия Араратского...», СПБ, ч. I, 1813, стр. 283.

դրանք։ Բայց Արարատյանը միայն չի արձանագրում կատարված փաստը, նա պատկերում է, և այս է, որ նրա նկարագրություններին տալիս է գեղարվեստական արժեք, մի առավելություն, որով և նրա մեմուարները ստանում են պատմագեղարվեստական երկի նշանակություն։

Յուրաքանչյուր մեմուարիստ այսպես թե այնպես միշտ չէ, որ հավատարմություն է հանդես բերում պատմության նկատմամբ։ Ենթարկված լինելով իր դասակարգի ընդհանուր սոցիալ-քաղաքական մտահայացքին, նա պատմությունը վերապատկերում է այդ նույն մտահայացքի սահմաններում, առանց խորշելու բացթողումներից, հորինումից կամ միտումնավոր չափազանցություններից, որովհետև դրանք այնպես, ինչպես քաղաքական հանգամանքների դիվանագիտական մեկնաբանությունները, ծնունդ են առնում տվյալ դասակարգի սոցիալ-պատմական շահերի անմիջական ու կոնկրետ հաշվառումից։ Վերցնենք թեկուզ 1796 թվականի Կովկասյան արշավանքի նկարագրությունը։ Համեմատելով այդ արշավանքին մասնակցած հայտնի պատմաբան Պ. Գ. Բուտկովի և Արարատյանի աշխատությունները, մենք տեսնում ենք, որ նրանց միջև եղած տարբերությունները լոկ որոշ մանրամասնությունների մեջ են։ Այն ամենը, ինչ որպես ականատես նկարագրում է Արարատյանը, հավաստվում է ոչ միայն պատմական մի շարք այլ աղբյուրներով ու փաստաթղթերով, այլ հենց իր Բուտկովի թողած օրագրով, օրագիր, որ վերջինս պահում էր այդ արշավանքի միջոցին։ Արժե հիշատակել, որ Բուտկովի «Նյութերը» և «Օրագիրը» հրատարակվեցին միայն 1860-ական թվականների վերջերին, ուրեմն և բոլորովին չէին կարող աղբյուր հանդիսանալ Արարատյանի համար։ Այս հանգամանքը մեկ անգամ ևս ընդգծում է, որ Արարատյանը համենայն դեպս ինքնուրույնաբար է վերապատկերել այդ ամբողջ պատմական ժամանակաշրջանը։ Արարատյանն իհարկե չէր կարող իմանալ մանրամասներ, որոնք հայտնի էին միայն բանակը ղեկավարող անձանց։ Պետք է նկատի ունենալ, որ նա այդ ժամանակ միայն հասարակ ձիապան էր։ Հարկավոր էր միայն հիանալ ու զարմանալ, թե ինչպես կատարված դեպքերից 15—16 տարի հետո նա կարող էր այնպես ճշմարտացիորեն վերարտադրել այդ հերոսական և իրոք հաղթական արշավանքի պատմությունը։ Արարատյանը 1796 թվականի դեպքերի մասին գրում էր 1813 թվականին։ Այդ ժամանակ սկսվել էր ռուս-պարսկական պատերազմը և այս անգամ ավելի մեծ ծավալով ու հեռանկարներով։ Արարատյանը հասկանում էր ստեղծված իրադրության ամբողջ արժեքը՝ հայ ժողովրդի մոտալուտ ազատագրության համար։ Եվ նա իր գրքով գալիս էր համոզելու քաղաքական ու ռազմական գործիչներին, որ ռուսական բանակի համար շատ հեշտ է պարսկական խանությունների գրավումը։ «Ռուսական բանակը,— գրում է նա 1796-ի նահանջի առթիվ,— կարող էր առանց որևէ դիմադրության առաջ շարժվել Պարսկաստանի խորքերը, որտեղ նրան ցանկալի էր։

...Երբ Շահը բոլորովին պատրաստ չէր և չէր կարող դուրս բերել այնպիսի ուժեր, որոնք կարողանային դիմագրավել ռուսական զորքերին։

Ավելին. Նրանք (պարսիկները —Կ. Դ.) չունեն կամ համենայն դեպս այն ժամանակ չունեին հրետանի, որից նրանք սարսափելի վախենում են»[1]։ Ուշագրավ է, որ այստեղ Արարատյանը պարսկական բանակի հրետանի չունենալու հանգամանքը նշում է որպես առկա փաստ։ Սա վկայում է, որ նա գրում էր ոչ միայն ի սեր պատմության։ Այստեղ երևում է նաև իր ժամանակի քաղաքական անցուդարձերով շահագրգռված մարդը, որի համար անցյալ եղելությունների վերապատմումը որոշ պատմական տեսակետի պաշտպանության, առաջ քաշման և հիմնավորման միջոց էր։ Նկարագրելով Դերբենդի գրավումը ռուս զորքերի կողմից, Արարատյանը բավական մանրամասնորեն անդրադառնում է հայերի ռուսներին ցույց տված օգնությանը. նա, ինչպես Բուտկովը, պնդում է, որ Դերբենդի առումը տեղի ունեցավ գրեթե առանց արյունահեղության, շնորհիվ տեղի հայերի ցուցաբերած անձնվեր գործողությունների։ Ռուսական զորքերի առաջխաղացումը Ղուբա, Ղարաբաղ, Բաքու, կատարվեց անսպասելի հաջողությամբ և առանց նկատելի կորուստների։ Դրա պատճառը, ինչպես ցույց է տալիս Արարատյանը, ամենից առաջ պարսկական միասնական պետության բացակայությունն էր, խաների լուրջ տարաձայնությունները և աշխատավոր ժողովրդի համակրանքը ռուսների նկատմամբ։ Արարատյանը ջերմորեն սիրում է ռուս ժողովրդին, նրա մեծ և հիանալի հայրենիքը։ Ահա նրա առաջին տպավորությունը Պետերբուրգից. «Մայրաքաղաքի գեղեցկությունն ու վեհությունը, վեհորեն ընթացող Նևայի հորդառատ ջրերը, ինձ մեծագույն հիացմունք պատճառեցին. փայլատակեց հույսի լուսավոր շողը, իսկ նախազգացումը հավաստիացնող ձայնով ասաց ինձ—այստեղ դու կգտնես քո հոգու խաղաղությունը և քո բարօրությունը»[1]։ «Ռուսաստանը իմ իսկական հայրենիքն է»— բազմիցս ասում էր նա։ Պետք է նկատել, որ Արարատյանի մեմուարները թարգմանվել էին մասամբ ռուս ընթերցողի համար։ Եվ դա հասկանալի է։ Արարատյանը, ինչպես և նրան ժամանակակից հայ գործիչներից շատերը, այն հայացքին էին, թե պետք է հայ կուլտուրան և պատմությունը, այսպես ասած, ժողովրդականացնել ռուսների մեջ, ցույց տալ հայ ազգի անցյալն ու ներկան, նրա հինավուրց հրաշակերտները և արդիական խեղճությունը, ավերակների միջից հառնող դյուցազնության վաղընջական պատկերները, և սոցիալական թշվառության դժոխային մանրամասները։ Այդ կարող էր ոչ միայն հետաքրքրություն, այլև քաղաքական շահագրգռություն առաջացնել մի ժողովրդի նկատմամբ, որ ցանկանում էր հատկապես Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել օտարների ճնշումից։ Ստեղծված պատմական իրադրությունը արդարացնում էր այդ հայացքը, քանի որ Ռուսաստանի քաղաքական շահերը ըստ էության զուգադիպում էին հայերի ազգային շահերին։ Եվ դրա համար էլ Արարատյանը իր գրքում բերում է Հայաստանի պատմական վայրերի ու կոթողների վերաբերյալ բազմաթիվ տեղեկություն-

1 «Жизнь Артемия Араратского..», СПБ, ч. II, стр. 167—168.
2 Նույն տեղում, էջ 259։

ներ, վերապատմում ժողովրդի կրույցները և ավանդությունները, գնահատում դրանք, երբեմն տալիս իր մեկնաբանությունները։ Յուրաքանչյուր հնամենի բերդ, փոքրիկ խաչքար, մատուռ, եկեղեցի, քարակոփ պարսպի մնացորդ, խարխուլ վանք, մի ձորակ կամ մի ժայռափոր քարանձավ իր անվան հետ, իր նշանակության շուրջը մի պատմություն ունի հյուսած, մի լեգենդ, մի կրույց, որ ժողովուրդը և դարերը բերել հասցրել են ներկային։ Պատմել այդ բոլորի մասին, հաղորդել այն օտար ընթերցողին, նշանակում էր ներկայացնել նույն այդ ժողովրդին, նշանակում էր պատմական անցյալը, որի լեզուն իր հուշարձաններն են, դարձնել խոսուն, ինքն իր մասին վկայող։ Դրա շնորհիվ մի օտար ժողովրդի աչքում կբարձրանա իր ժողովուրդը, նրա պատմությունը, նրա ստեղծագործ հանճարի հմայքը։ Այս էր Արարատյանին առաջնորդող սկզբունքը։ Միաժամանակ պետք էր ցույց տալ, թե ի՞նչ է այդ հին, բայց մեծ ժողովրդի ներկան, ի՞նչ տեսք ունի այն, որոնք են նրա համընդհանուր պատկերը կազմող հիմնական տեսարանները և արդյոք կա՞ն այդ տեսարանների մեջ մխիթարական կամ ոգևորող պատկերներ, և եթե չկան, ապա ի՞նչն է դրա պատճառը, որոնք են խոչընդոտները և կամ ինչի՞ց է առաջացել այդ աննախադեպ անկումը։ Երկու դեպքում էլ նպատակը միակն էր՝ լայն մասշտաբի հարց դարձնել Հայաստանի ու հայ ազգի ազատագրության խնդիրը, մասսայական հետաքրքրություն առաջացնել այդ հերոսական ժողովրդի պատմական բախտի նկատմամբ։

Նախաաբովյանական շրջանի հայ գրականության մեջ, Էմինից հետո, Արարատյանը երկրորդ հեղինակն էր, որն իր անձնական կյանքի պատմությունը դարձնում էր միջոց այն մեծ պատմական շարժմանը մասնակցելու համար, որ սկսել էր ժողովուրդը հանուն իր ազատագրության։ Գրական այդ ձևի առաջացումը կապված էր պատմահասարակական այն նոր պայմանների հետ, որոնք մի կողմից մատնանշում էին միջնադարյան-ֆեոդալական հարաբերությունների քայքայումը և մյուս կողմից մարդկանց սոցիալ-քաղաքական նախկին հայացքների հեղաշրջման անհրաժեշտությունը։ Ժամանակը պահանջում էր ինչ որ նոր և խորապես տենդենցիոզ գրականություն, մի գրականություն, որ դներ այն հարցերը, որոնք մշակվել էին ազատագրական շարժման գաղութահայ գործիչների կողմից (հրապարակախոսական և պատմական գրականության), և շարունակվում էին մշակվել պատմական յուրաքանչյուր իրադարձության ազդեցությամբ, մի խոսքով առաջացել էր «ժամանակակից առաջին գրականության» (Էնգելս) պահանջը՝ միջնադարին հակադրվող և ազգի կենսական շահերին համապատասխան։

Մեմուարը, ճանապարհորդական հիշատակարանը, օրագիրը գրական այնպիսի ձևեր են, որոնցում եղած տենդենցիոզությունը, կյանքի իրական վերարտադրությունը, գեղարվեստական տարրը հնարավորություն են տալիս որոշ պայմաններում և որոշ ժամանակ կատարելու այն դերը, որ նշված էր գեղարվեստական գրականության համար։ Այդ դեպքում հատկապես կարևոր նշանակություն է ստանում մարդու անձնական կյանքի

պատմությունը, որովհետև այն ձուլված լինելով էպոխայի հասարակական ու քաղաքական անցուդարձերի հետ, արտահայտում է այն առանձնահատուկը, որով աչքի է ընկել նույն այդ էպոխան։ Մեմուարը դառնում է ժամանակի հասունացած հարցերին պատասխանող այն միջոցներից մեկը, որը շատ սուբյեկտիվ բան ունենալով իր մեջ, այնուամենայնիվ, քաղաքական պայքարի զենք է, այնպես ինչպես ներքին հակասություններով ու դրանց խիստ բախումներով հարուստ ժամանակաշրջանում ստեղծված յուրաքանչյուր գեղարվեստական ստեղծագործություն։ Մյուս կողմից անմիջականորեն կապված լինելով հրապարակախոսական և պատմական գրականության հետ, և մեծ չափով ազդված լինելով նրանից, մեմուարները առավել հեշտությամբ էին պրոպագանդում և մասսայականացնում ազատագրական շարժման գաղափարախոսությունը, որովհետև նրանց գրական ձևը իրոք տալիս էր այդ հնարավորությունը։ Մեմուարները բերեցին առաջին գրական պորտրեները, նրանցում երևացին կենդանի մարդիկ իրենց վարք ու բարքով, սոցիալական հոգեբանությամբ, գործողություններով։ Ինքնավերլուծման միջոցով մեմուարիստները հասան հոգեբանական ճշմարտացիության, և մարդու ներքին կյանքի խոր ու բազմակողմանի արտացոլմանը։ Ինքնին հասկանալի է, որ ժողովրդական կենցաղի պատկերները, դեպքերի շատ հաճախ վիպականացված նկարագիրը, սյուժետային բազմազանությունը և վերջապես պատմական եղելությունների հետաքրքիր վերապատմումը պետք է, որ մեծ հետաքրքրություն առաջացնեին մեմուարների նկատմամբ։ Դրանով պետք է բացատրել Արարատյանի մեմուարների չափազանց լայն տարածումը XIX դարի առաջին կեսում։

Արարատյանի «Կյանքը» բացվում է մի առաջաբանով, որտեղ հեղինակը տալիս է իր հուշերի հրատարակման վերաբերյալ անհրաժեշտ բացատրություններ։ Նույն առաջաբանում, ի միջի այլոց, ասված է. «Հրատարակելով այս հուշերը, ես իմ պարտքն եմ համարում նախազգուշացնել ընթերցողներին, որ իմ կյանքի գրքի մեջ նրանք չեն կարող գտնել ոչ մի տեսակի հռետորական զարդարումներ, թեև կային տեղեր, որտեղ կարելի էր այդ բանն անել։ Ես գրել եմ միայն այն, ինչ ինձ հետ իրականում պատահել է, ոչ մի այնպիսի խոսք չավելացնելով, որը ասված չի եղել և դեռ աշխատել եմ հնարավորին չափ ծածկել շատ բան»[1]։ Ուրեմն Արարատյանը կողմնակից է իրականության, այսպես ասած, ռեալիստական պատկերմանը, դեմ՝ կեղծ պաթեթիկ գունազարդումներին, ինքնամուծ հոռինաբանություններին ու չափազանցություններին, մեծամիտ ինքնագովությանը և այլն։ Այս նշանակում է, որ Արարատյանի համար ամենագլխավորը պատմության և պատմականի անսքող ճշմարտացի վերարտադրությունն է։ Ունենալով նման հայացք և ստեղծագործական սկզբունք, Արարատյանը աշխատել է գտնել դրանց համապատասխան գրական ձևեր ու հնարանքներ։ Գրական ձևը տվյալ դեպքում մեմուարն է, ինքնակենսա-

[1] «Жизнь Артемия Араратского...», СПБ, ч. I, 1813, от издателя.

գրությունը, իսկ սա իրականին, պատմականին հավատարիմ մնալու և այն վերարտադրելու առավել մեծ հնարավորություններով օժտված ձևերից մեկն է։ Մեմուարը վերարտադրում է իրոք գոյություն ունեցած եղելությունների ու հանգամանքների մի մեծ ամբողջություն, որի մեջ անձնական կյանքի մի շարք մոմենտներ միաձուլված են հասարակականին և ըստ ամենայնի նրա կոլորիտն ունեն։ Մասնավորի մեջ արտահայտված ընդհանուր, անձնականի մեջ դրսևորված հասարակականը, իհարկե, համընդհանուր պատմական կյանքի միայն մեկ կողմն է, միայն մեկ հատվածը և ոչ երբեք նրա ամբողջությունը։ Բայց հենց դրա շնորհիվ էլ մեմուարի մեջ արտահայտվում է մի կողմից իրական-պատմականը և մյուս կողմից պատմական-իրականը։ Հենց այս իմաստով, ինչպիսին էլ լինի մեմուարիստի ստեղծագործական մեթոդը, այնուամենայնիվ, նա, այսպես թե այնպես, ավելի մոտ է կանգնում իրականությանը, և վերարտադրում է այն՝ ավելի քիչ դիմելով պոետական հնարամտություններին և երևակայությանը (այն, ինչ Արարատյանն անվանում է հռետորական զարդարումներ)։ Այստեղից էլ բխում է մեմուարիստի ձգտումը՝ ամեն կերպ ճշմարտապատում դարձնել իր նկարագրությունները, վկայություններ բերել, հաճախ հիշատակել ժամանակակից և պատմական աղբյուրներ, մի խոսքով մասնավոր կյանքի հանգամանքները մոտեցնել պատմական իրականությանը և համապատասխան դարձնել նրան։ Արարատյանը մեկն է այն մեմուարիստներից, որի համար գերադասելի է լինել տարեգիր-պատմիչ, քան հուշագրող մեմուարիստ։ Այդ պատճառով նա ամենուրեք աշխատել է իր անձնական կյանքի դրվագները զուգակցել պատմականին կամ դարձնել նրա մի մասը։ Եթե այդ զուգակցման համար անհրաժեշտ դրությունները պակասում են, այսինքն անձնական կյանքի դրվագները և պատմական իրադարձությունները ուղղակիորեն չեն կապվում միմյանց, Արարատյանը ստեղծում է (հորինում) մի շարք տեսարաններ[1], որոնց դասավորում է այնպես, որ այդ կապը դառնում է միանգամայն որոշակի, թեև որոշ չափով ուռճացված։ Իր հաղորդած փաստերն ու տեղեկությունները վավերական և ճշմարտապատում դարձնելու նպատակով Արարատյանը դուրս է բերում մի անձնավորություն, որը որպես ականատես պատմում է անցյալ պատմական իրադարձությունների մասին։ (Այսպես է Արարատյանի մոր պատմությունը)[2]։

---

1 *Անցյալի մեր քննադատներից մեկը (Արիստակես եպիսկոպոս Սեդրակյան) նման հորինվածքների հանդիպելով Արարատյանի «Կյանքում», նրան բախտախնդիր և միստիֆիկատոր է համարել, չզլանալով մի ամբողջ գիրք գրել այդ բանը ապացուցելու համար (Տե՛ս «Հարություն Արարատյանի կեղծիքը», գրեց Ա. Ե. Ս, Բաքու, 1894)։ Քննադատին առաջնորդող նպատակը եղել է Հայ եկեղեցու շահերի պաշտպանությունը։ Արարատյանին պատմության կեղծարար դուրս բերելով, նա դրանով ուզում էր ջրել այն քննադատությունը, որ իր գրքում ծավալել էր Արարատյանը Հայ եկեղեցու և հոգևորականության դեմ։*

2 *Հատկանշական է, որ այդ նույն հնարանքը 1860-ական թվականներին օգտագործել է Գալուստ Շերմազանյանը իր «Ճանապարհորդություն Հայաստանումը» («Կռունկ», 1863) պատմագրական երկի մեջ։ Նախավկա վանքի շրջակա բարձունքներում Շերմա-*

Այս գրական հնարանքը որքան էլ նաիվ, բայց և այնպես ուներ մի շատ արժեքավոր կողմ. այդ այն էր, որ պատմական անցյալը վերարտադրվում էր որոշ վիպականացմամբ, մանավանդ, երբ ականատես-հուշապատմողը իր արկածները ներկայացնում էր խիստ հետաքրքրաշարժ և երբեմն էլ ծայրահեղ ռոմանտիկ գույներով։ Պատմագրական այդպիսի հորինվածքները ավելի շուտ էին հասնում ժողովրդին և դառնում նրա սեփականությունը։

Արարատյանը հաճախ ավանդության սյուժեն օգտագործում է իր ապրած իրականության մի քանի կողմերը բացահայտելու համար։ Խնուսի հայ քահանայի աղջիկը, որին բռնությամբ կնության էր վերցրել տեղի թուրք փաշան, մի քանի տարի հարեմում տառապելուց հետո, հաջողեցնում է փախչել իր նախկին ամուսնու հետ և հասնել Վաղարշապատ։ Ջարմանալի գեղեցիկ ու քնքուշ էր Մանուշակը, արտևանունքները սև էին ու սրածայր, աչքերը ծովի պես թախծոտ ու կապույտ։ «Մեր գյուղի իշխանները,— պատմում է Հարությունը,— և առհասարակ նրանք, ովքեր յուրյանց հարստությունով համարված էին մեզանում ուժի տեր մարդիկ. Մանուշակի մեր գյուղը ոտք դրած օրից անդադար աշխատել են նրա ռարեհաճ համակրանքին արժանանալ»[1]։ Մի գիշեր էլ նրանցից մի քանիսը «Հավաքվում են և գալիս մտնում այն տունը, ուր Մանուշակն ու յուր ամուսինն էին ապրում։ Նրանք դռները կոտրատում են, և առանց նրա համաձայնությանն սպասելու, բռնաբար բավականություն են տալիս իրենց չար տռփանքին»[2]։ Մանուշակը այլևս չէր կարող մնալ Վաղարշապատում։ Նա ծածուկ հեռանում է գյուղից և գնում Բայազետ, ուր շուտով ընկնում է տեղի փաշայի ձեռքը, որը և աշխատում է դավանափոխ անել նրան։ «Մանուշակը մերժեց ամենը՝ հարստություն, սեր և սուտ մարգարեին»[3]։ Մանուշակին դատապարտում են քարկոծության։ Նույն գիշեր Մանուշակի նահատակված տեղը լույս է ծագում[4]։ Այս տեսիլքից սքանչացած մահմեդական և քրիստոնյա ժողովուրդը, Մանուշակի դին տեղափոխում է Սիրանավոր եկեղեցու բակը և թաղում այնտեղ։ «Ես կամեցա անպատճառ անձամբ ստուգել պանդոկապետի հաղորդած տեղեկությունը. մյուս օրը գնացի Մանուշակի սպանության տեղը և իսկապես, հորի մեջ դտա շատ արյունաթաթախ քարեր»[5]։ Դժվար չէ կռահել, որ Վաղարշապատի հարուստների նողկալի վարքագիծը մերկացնելու համար է Արարատյանը որպես եղելություն պատմել պանդոկատիրոջ զրույցը։

Պատմական իրադարձությունների տենդենցները ավելի ցայտուն[illegible] ցույց տալու համար Արարատյանը հաճախ սրում, չափազանցնում է

զանյանը հանդիպում է 90-ամյա մի ծնվորի։ Սա որպես ականատես ամենայն մանրամասնությամբ նկարագրում է Աղա Մահմեդ խանի Վրաստան կատարած արշավանքը։

1 «Հարություն Արարատյանի կյանքը», Թիֆլիս, 1894, էջ 109։

2 Նույն տեղում, էջ 110։

3 Նույն տեղում, էջ 111։

4 Նույն տեղում, էջ 112։

5 Նույն տեղում։

եղելությունների իրական գույները, հատկապես, երբ ներկայացնում է անարդարությունը, կեղծիքը, շահագործման եղանակները, բիրտ ուժի կամայական գործողությունները և այլն։ Այդպես է տրված Էջմիածնի հոգևորականության նկարագիրը, հարուստների, կառավարիչների ու ստարշինաների վարք ու բարքի, գործողությունների տիպանկարը։ Խիստ սև գույների չափազանցումը, մարդկանց արտակարգ հրեշավորության ընդգծումը, Արարատյանի համար եղել է միջոց՝ իր ապրած կյանքը պատկերելու այնպես, որպեսզի մարդիկ ավելի շատ ափսոսանք զգան իր ճակատագրի, իր անձի համար, որպեսզի նրանք, ինչպես ինքը, ատեն խավարի ու տգիտության այդ աշխարհը և տեսնեն, որ մարդ արարածը «տարաբախտաբար ավելի հակամետ է դեպի չարությունը, նախանձը, ատելությունը և դեպի ամեն տեսակ հանցանքները»[1]։ Հենց դրա համար էլ Արարատյանը պատմում է այն ամենը, որ այլ դեպքերում կարող էր նվաստացուցիչ և իրոք վիրավորական լինել իրեն՝ պատմողի համար։ Դրանով Արարատյանը ցույց էր տալիս, թե տաղանդը, լուսավոր մարդը, բարձր անհատականությունը ինչպես կարող էր ծաղրվել ու ետին ծայր թշվառության հասնել վայրենի բարքերի ու սոցիալական աղաղակող անարդարությունների այդ երկրում։ Արարատյանը իրեն հակադրում է իր միջավայրին. նա բարձր է կանգնած նրանցից իր անհիշաչար ու առաքինի նկարագրով, իր մտավոր կարողություններով, մերձավորին, ընկածին անվերապահորեն օգնելու համոզմամբ և ձգտումով։ Այդ պատճառով նա միշտ էլ կոնֆլիկտի մեջ է իր շրջապատի հետ, նա չի հաշտվում նրա հետ, ըմբոստանում է, քննադատում, ծաղրում, բայց և անխուսափելիորեն պարտվում, որովհետև միջավայրը կայուն է, հովանավորված՝ ուժի ու կամայականության օրենքներով։ Արարատյանը բևեռացնում է մարդկանց բնավորությունները։ Նենգամտության ու առաքինության, խորամանկության ու պարզասրտության, շահամոլության ու անկաշառության, չարի ու բարու հատկանիշները նա այնպես է բաշխում իր նկարագրած անձնավորությունների մեջ, որ մեկը դառնում է բոլոր չարությունների մարմնացում, մյուսը՝ բոլոր առաքինությունների հրեշտակ։ Այս ուղղագծությունը ունի և իր առավելությունները և իր թերությունը։ Սոցիալական կյանքի խստապարզ նկարագրությունները նրա մեմուարներում հաճախ նատուրալիստական են, մերկապարանոց ու բիրտ։ Այդտեղ չկան լայն ընդհանրացումներ, ինքնաբուխ էմոցիա, որ վարակիչ է իր անկաշկանդվածությամբ. չկան գույներ, որոնց ներդաշնակության մեջ թաքնված է գեղարվեստական հաճույքը. չկան արտակարգորեն վսեմ զգացումներ, լայնարձակ խոհեր, որ կաշկանդեն ընթերցողին կամ թևավորեն նրան մի անհայտ երազանքով. մի խոսքով չկան տաղանդով ուրվագծված մարդկային անհատականություններ։ Բայց այն, ինչ պարտադիր է բանաստեղծին, պարտադիր չէ մեմուարիստին։ Արարատյանը չի էլ ձգտում հասնել բանաստեղծականության։ Նրա համար կարևորը փաստի արձանա-

[1] «Հարություն Արարատյանի կյանքը», Թիֆլիս, 1892, էջ 101։

գրումն է, թող այն լինի այլանդակ, որքան կարող է սև, նույնիսկ անգույն, միևնույն է, միայն թե փաստը, եղելությունը հասնի ընթերցողին, իր գարշելիության բոլոր մանրամասներով։

Աբրահամյանի «ստեղծագործական մեթոդի» այս առանձնահատկությունները ցուցադրում են հայ նոր գրականության կազմավորման էպոխայում գրական կուլտուրայի վիճակը։ Ձևը միշտ հետ է մղվում. տենդենցիոզ իրականությունը, սոցիալական կյանքին օրգանապես ձուլված ստեղծագործությունն իր համար ճանապարհ է հարթում նույնիսկ առանց կատարյալ արվեստի, որովհետև ժամանակաշրջանը այդպիսի երկի կարիք ուներ։

Յուրաքանչյուր մեմուարի մեջ ամենից լավ, ամենից բազմակողմանիորեն կերպավորված է ինքը մեմուարիստը։ Աբրահամյանի ինքնադիմանկարը ստացվել է բավական հաջող, թեև այն զուրկ չէ հակասական, երբեմն ամբողջ պատկերին ոչ համահունչ շտրիխներից։ Մանկության տարիներին նա սիրել է լսել հեքիաթներ ու զրույցներ, եղել է հետաքրքրասեր, չի հրաժարվել ուրախ խաղերից։ Բայց և շուտով զգացել է հարուստին ու աղքատին բաժանող տարբերությունը, ու դրանից խոր խոցվել է նրա մանկական հոգին։ Տոհմիկությամբ հպարտացող հարուստի երեխային նա չի կարողացել որևէ պատասխան տալ. հենց այդ ժամանակ էլ նա խորապես գիտակցել է որբուկի իր ծանր վիճակը։

Դա ստիպել է նրան կառչել միակ ելքից — ուսումնական դառնալ։ Նա օժտված է բնատուր ձիրքերով, շուտ հասկանալու ընդունակությամբ, բարի է, խոնարհ։ Սրանք առավելություններ են, որոնց շնորհիվ նա կարճ ժամանակամիջոցում դառնում է գրաճանաչ, սերտում սաղմոս ու ժամագիրք, փոխ ասում եկեղեցում։ Սակայն այդ առավելությունները պատճառ են դառնում, որ հալածանք սկսվի նրա դեմ, իսկ այդ հալածանքին նա պատասխանում է ավելի համառորեն նվիրվելով ուսմանը։ Նա արդեն նախկին միամիտ երեխան չէ, նա սովորում է խաբել, փախուստ տալ, ստել՝ հանուն իր կրթության։ Նրա մասին սկսում են խոսել շատերը։ Երևանի բերդի վերակացու Ջաֆարը նրան ճանաչելուց հետո, ամեն օր ձիավոր է ուղարկում էջմիածին և կաթողիկոսից տեղեկություն հարցնում նրա առողջության մասին։ Նա սովորույթ է դարձրել իր հետ պատահած անցքերը գրի առնել, նաև հետաքրքրվում է պատմական հնություններով, տեղյակ է եկեղեցու գործերին, օգնում է աղքատներին, թեև այդ բանն անելու համար գողանում է գանձանակի փողերից։ Նա ճանապարհորդում է հայրենի երկրում, ծանոթանում ժողովրդի կյանքին, տեսնում, թե որքան տգետ է հայ հոգևորականը, թե կաթողիկոսական աթոռանիստում ինչ զարհուրելի դեպքեր են կատարվում, ինչպես են ֆալախի զարկում մի վարդապետի, որ համարձակվել է խոսել ճաշի ժամին՝ սեղանատանը։ Նրա նախկին հայացքները հարուստի և աղքատի մասին այժմ փոխվել են։ Նա հիմա տեսնում է ավելին, քան երեխա ժամանակ, նա գիտե, որ հարուստը երբեք չի խղճա աղքատին և չի մտահոգվի նույնիսկ իր երեխայի կրթությամբ։ Հարուստը դեմ է լուսավորության։ Աբրահամյանը

տեսնում է հայ կնոջը, նրա տգիտությունը, կրոնավախությունը. ինչով պետք է այդ վերացնել—կրթության օգնությամբ։ Եվ ահա Հարությունը փորձում է դասեր տալ իր հարսին. սա դառնում է կեղտոտ բամբասանքի առիթ. Նա հեռանում է գյուղից և աշխատանքի մեկնում Մողնի՝ Կարապետ եպիսկոպոսի մոտ։

«Եվ այսպես, դու վերադարձել ես ինձ մոտ, ինչպես մոլորվածը հոր մոտ»,— ասում է եպիսկոպոսը պատանուն։

«Ճիշտ այդպես, տեր հայր։

— Եթե այդպես է, ծունկի եկ և քո խոստովանանքն արա։

Ես անմիջապես հասկացա, որ պարզամիտ եպիսկոպոսին ցանկալի էր տեսնել ավետարանական առակի տեսարանը, որտեղ ինքը պետք է լիներ առաջին գործող անձը։ Ծունկի գալով ես ասացի.

— Մեղք եմ գործել քո և երկնքի առաջ, և քո որդին համարվելու անարժան եմ. բայց գթացեք ինձ և հրամայեցեք հարգել ինձ թեկուզ ձեր ճորտերին»[1]։

Հարությունը վճռում է թողնել հայրենի գյուղը. այդ վճիռը հենց այնպես չէր կայացվել. Ռուսաստանը նրան էր ժպտում հազար ու մեկ հրապույրանքով։ Հայրենիքից դուրս նա տեսնում է շատ բան, անձամբ կրում պատերազմի դառնությունները, բայց երբեք չի հրաժարվում իր մշտական օպտիմիզմից։ Օտարության մեջ նա պահպանում է իր մտքի պայծառությունը, մերձավորին օգնելու պատրաստակամությունը, երբեք քինախնդիր չէ, վատությունը հատուցում է բարությամբ, աշխատում է վեր բարձրացնել ընկածին, արհամարհել թշվառությունը և մնալ միշտ կենսուրախ ու ժպտերես։ Նա զբաղվում է քաղաքական հարցերով։

Արարատյանի ինքնաբնութագրումները երբեմն կեղծ են հնչում։ Նա չի կարողանում համոզել, որովհետև բնավորության յուրաքանչյուր գիծը, որով օժտում է իրեն (իսկ դրանք միշտ էլ դրական են), հասցնում է ծայրահեղության։ Քրիստոնեական անհիշաչարությունը շրջապատի նկատմամբ նրա վերաբերմունքի առանցքն է։ Մայոր Ս-ն, որի մոտ ծիապան է Արարատյանը, մի դահիճ է, իսկական հրեշ, մի մարդ, որի համար տանջելը և բռնանալը մեծագույն բավականության աղբյուր են։ Նա Հարությունին պահում է իր սեղանի փշրանքներով, ամեն անգամ երեսին շպրտում նրա «ստոր վիճակը», չի տալիս աշխատավարձը, ստիպում է ամեն տեսակ ծառայություն մատուցել թե իրեն, և թե իր ընկերներին, հագցնում է խեղճ մուրացկանի պես և վերջապես, ամենաթեթև սխալի համար ծեծում ու ջարդում է նրան։ Մայոր Ս-ին մեղադրում են պետական հանցագործության մեջ և բանտարկում։ Հենց այդ ժամանակ Զուբովի բանակն է հասնում Հերակլի պատգամաբերը (Աղնախցի մի երևելի հայ)։ Հարությունին հաջողվում է տեսնվել այդ մարդու հետ։ Երկար զրույցից հետո, պատգամաբերը աղնախցիների անունից խնդրում է Հարությունին թողնել բանակը և վերադառնալ ընիշկ Մաթեոսի մոտ, տեր դառնալ նրա

[1] «Жизнь Артемия Араратского...», СПБ, ч. I, 1814, стр. 240—241.

հարստությանը և շենացնել Սղնախի թափուր մնացած եկեղեցիները։ Հարությունը մերժում է այդ առաջարկը, պատճառաբանելով, որ ինքը չի կարող թողնել իր բանտարկված տիրոջը՝ մայոր Ս-ին, և որ նրան այդ ծանր դրության մեջ լքելը մեծ հանցագործություն կլիներ իր կողմից։ Հարությունը մուրում է, ձեռք բերած հացը կիսում մայորի հետ։ «Ես չեմ սպասում Ս-ից ոչ շնորհակալություն և ոչ վարձատրություն,— ասում էր նա այդ առթիվ իրեն հանդիմանողներին։— Ես չեմ թողնում նրան նրա համար, որ նա լքված է բոլորից, անգամ իր մտերիմներից, և որ վարձատրություն իմ այդ քայլերի համար ես սպասում եմ միայն աստծուց, որը հրամայում է ծառայել մեր թշնամիներին և օրհնել մեզ անիծողներին»[1]։ Արարատյանը տվյալ դեպքում ծայրահեղության է հասցրել իր անհիշաչարությունը, այն դարձրել չարին չհակառակվելու քրիստոնեական ամենավատթար քարոզի խորհրդանիշ։ Սակայն այս պատմության մեջ հեշտությամբ կարելի է նկատել մի մարդու, որն աշխուժորեն հորինում ու ցուցադրում է այն, ինչ կարող է միայն լուսապսակով շրջապատել իր անձնավորությունը։ Ընդհանրապես Արարատյանը իրեն օժտում է իր պատկերացրած և իր համոզմունքներին համապատասխան դրական հատկանիշներով. նա խելացի է, ուսումնասեր, հումանիստ, անկաշառ, առաքինի, տիրասեր, անհիշաչար, աստվածավախ և անսահմանորեն բարի։ Նրա պատկերած գրեթե բոլոր դրական անձնավորությունները հենց այդպիսի նկարագիր ունեն։ Նրանք բոլորն էլ ձգտում են դեպի բարին, աշխատում են մարդկանց օգուտի համար, օժտված են մեծ մարդասիրությամբ, դեմ են շահագործմանը, վարում են «ճշմարիտ քրիստոնեական կյանք»։ Այսպես է ուրվագծում Արարատյանը իր մոր դիմանկարը, իր ուսուցիչ քահանային, տեր-Մզրախին, մայոր Բ-ին, Ջաֆարին, բժիշկ Մաթեոսին, Մանուշակին և այլն։ Իսկ բացասական անձնավորությունները, որոնք համեմատաբար շատ են դրականներից, ներկայացված են հրեշային կերպարանքներով, մարդկային ոչ մի նշույլ. նրանք կարող են մի ողկույզ խաղողի համար սպանել մի երիտասարդի (գյուղի վարդապետ-վերակացուն) կամ հրապարակով ճիպոտահարել մի անօգնական այրու (գյուղապետ Գալուստը)։ Հատկանշական է, որ բոլոր բացասական անձնավորությունները շահագործող դասի ներկայացուցիչներ են՝ հարուստներ, բարձրաստիճան զինվորականներ ու եկեղեցականներ, գյուղապետ, գզիր, տանուտեր և այլն։ Արդյոք դիմանկարների պատմականությունը տուժո՞ւմ է նրանց միակողմանիորեն գծագրված տեսքից։ Չի կարելի ասել, թե չի տուժում։ Բայց Արարատյանը հենց այդպես էլ ըմբռնում էր իրականությունը։ Նա կյանքում տեսնում էր չարին ու բարուն, ուժեղին ու թույլին, և նրա համար կարևորը դրանց չափազանցված ցուցադրումն է։

Հարություն Արարատյանի մեմուարները, անկասկած, հայ նոր գրականության առաջին նվաճումներից են։

[1] «Жизнь Артемия Араратского...», СПБ, ч. II, 1813, стр. 137.

ԱՅԼ ՄԵՄՈՒԱՐԻՍՏՆԵՐ

Հարություն Արարատյանից հետո, XIX դարի առաջին կեսին հանդես են գալիս մի շարք մեմուարիստներ, օրագրողներ և ուղեգիրներ. Մանվել վարդապետ Կյումուշխանեցի, Խաչատուր Աբովյան, Մեսրոպ Թաղիադյան և այլն։ Այս շրջանի մեմուարային գրականությունը արծարծում է նաև այնպիսի հարցեր, որոնք արդեն բարձրացվել էին հայ առաջին մեմուարիստների կողմից։ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումը նոր խնդիրներ ու պրոբլեմներ դրեց այն մտածողների առաջ, որոնք պատմական այդ բախտորոշ ակտը դիտում էին որպես հայ ժողովրդի նոր կյանքի ու վերածնունդի սկիզբը։ Լուսավորության, ազգային ինքնագիտակցության արթնացման, տնտեսական առաջընթացի, կյանքի եվրոպականացման պահանջները այժմ դրվում էին ավելի բացահայտ ու սուր։ Այլ կերպ էլ չէր կարող լինել։ Երկարատև մաքառումներից հետո ձեռք էր բերվել ցանկալի ազատությունը և ապահովությունը։ Հարկավոր էր անցնել խաղաղ կյանքի, հարկավոր էր «կանգնիլ ու նորոգել», ինչպես ասում էր Աբովյանը, հարկավոր էր դպրոցներ հիմնել, դեն նետել ասիական հետամնացությունը, ստեղծել ազգային-հասարակական հիմնարկներ, ամեն ջանք գործադրել, որպեսզի կարիքի ու աղքատության մեջ գտնվող ժողովրդական մասսաները կարողանան ոտքի կանգնել, կարողանան լուսավորվել։ Մեմուարային գրականությունը գեղարվեստական գրականության հետ միասին պրոպագանդում էր «դարիս լուսավոր գաղափարները»։

* * *

XIX դարի առաջին կեսի նշանավոր մեմուարիստներից է Մանվել վարդապետ Կյումուշխանեցին: *Նա ծնվել է 1768 թվականին Բայբերդի և Տրապիզոնի միջև ընկած Կյումուշ-խանա փոքրիկ քաղաքում։ Գրաճանաչություն սովորել է մի հայ սարկավագի մոտ։ Հոր մահից հետո նա աշակերտում է մի ջուլհակի, և ապա ծառայության անցնում քաղաքի առաջնորդարանում։ Յոթ տարի անց Կյումուշխանեցին իր ուսուցիչ և հոգևոր հայր Հովհաննես վարդապետ Չերքեզյանի հետ մեկնում է Պոլիս։ Շուտով նա ձեռնադրվում է քահանա և քիչ անց վարդապետի գավազան ստանում նույն այդ Չերքեզյանից։ Ակտիվ մասնակցություն ունենալով սկսված Դավիթ-Դանիելյան պայքարին, Կյումուշխանեցին 1802 թվականին թողնում է Պոլիսը և գնում Ռուսաստան բանակցելու ռուսահայ ազգային գործիչների հետ՝ Դանիելին կաթողիկոսական գահ բարձրացնելու*

համար։ Նրա բանակցությունները ունենում են հաջող ելք։ Լազարյան եղբայրների խորհրդով նա մեկընդմիշտ հաստատվում է Ռուսաստանում։ Մոտ 14 տարի Կյումուշխանեցին վարում է Ղրիմի առաջնորդության պաշտոնը, բացում է դպրոցներ, զբաղվում մատաղ սերնդի դաստիարակության գործով։ 1827 թվականին նա գալիս է Էջմիածին և նշանակվում Սինոդի անդամ ու դրադարանապետ։ Այստեղ Կյումուշխանեցին կարգի է դնում մոռացության մատնված ձեռագրատունը, սահմանում դրադարանից օգտվելու կանոններ և այլն։ 1830 թվականին Սևանում գրում է իր «Անձնական պատմութիւնը»[1], մի քանի գիտական ուսումնասիրություններ և այլն։ Կյումուշխանեցին, այնուամենայնիվ չմնաց Հայաստանում։ Նա նորից գնաց Ղրիմ, ուր և վախճանվեց 1843 թվականին։ Մ. Կյումուշխանեցու «Անձնական պատմութիւնը» հայկական հիշատակարանային գրականության զարգացման վերջին փուլի արտահայտություններից է։ Նրանում վերջնականապես հաղթանակել է գրական այն ձևը, որ մենք գտնում ենք Ավետիք պատրիարքի ինքնակենսագրության մեջ։ Բայց եթե Ավետիք պատրիարքը միմիայն խոստովանք էր գրում իր «կաթոլիկությունն» ապացուցելու համար, ապա Կյումուշխանեցին ազգային գրականությանն էր հանձնում իր «սեպուհ անձի վեպը»[2], որպեսզի այն լինի «խրատք բազմոց» և «այլոց... խրատական զգուշաւոր կգաստութիւն իւր սեպհական իսկ անձին»[3]։ Կյումուշխանեցին իր նախորդի համեմատությամբ մի նկատելի առաջքայլ է կատարել։ Նրա «Անձնական պատմութիւնը» պատմական մտահայացքի արդասիք է։ Հուշերի առաջաբանում խոսելով ընդհանրապես հայ գրի ու գրականության նշանակության մասին, Կյումուշխանեցին նկատում է՝ «Սոքօք վանցեալսն ներկայացուցանեմք ոչ միայն մեզ, այլ և ազգաց և ազանց, տերութեանց և պետութեանց, աղքատաց և հարստաց։ Սոքօք տիրեմք ապառնւոյն զետ տեսլեանց մարգարէութեանց և աստուածային վճռոց։ Սոքօք զներկայ իրականութիւնսն անմահ կցուցանեմք, տալով նոցա կեանս և անսպառ բարբառս»[4]։

Վերջնականապես հաստատուն դարձած այն հայացքը, որն անհատի պատմությունը նույնքան կարևոր էր նկատում գալիք սերունդների համար, որքան ամեն մի այլ պատմություն, Կյումուշխանեցուն օգնել է մասամբ ճիշտ հասկանալ պատմականի ու անձնականի փոխհարաբերության բարդ պրոբլեմը։ Հուշերի սկզբում նա ասում է. «օրենք բնութեանց ամենայնին սկիզբն որոնէ... վասնորոյ հարկ համարեցայ առաջ քան զայլ ծանուցանելսն իմ, զերկիր ծնողացն իմոց նկարագրել»[5]։ Կյումուշխանեցին

---

1 Մ. Կյումուշխանեցու «Անձնական պատմութիւնը» տպագրվել է Գյուտ քահանա Աղանյանցի «Դիւան հայոց պատմութեան» ԺԲ գրքում (Թիֆլիս, 1917) «Անձնական պատմութիւն Մանուել Կիմիւշխանեցի վարդապետի, Սուլթաննանի կամ Շահինովի» վերնագրով։

2 «Դիւան հայոց պատմութեան», Թիֆլիս, 1917, գիրք ԺԲ, էջ 7—8։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում, էջ 9—10։

մանրամասն նկարագրում է իր հայրենի քաղաքը, նրա դիրքը, տեղադրությունը, բնական հարստությունները, բնակչության ազգային ու սոցիալական կազմը։

Ուրեմն նա իր անձնական կյանքին չի նայում որպես ինչ որ զուտ սուբյեկտիվ բանի։ Երկիրը, ծնողները, սոցիալական միջավայրը և այլն, այդ բոլորը սկիզբ են դրել իր կյանքին։ Նրանք սերտորեն կապված են իր անձնականի, ես-ի հետ։ Նրանց ստվերում թողնելը նշանակում է պատմությունից հանել շատ բան, նշանակում է չբացատրել կամ անհասկանալի թողնել սեփական բնության, նկարագրի շատ կողմերը։ Կյումուշխանեցին այս իմաստով տարբերվում է թե Էմինից, և թե Արարատյանից։ Էմինը գրեթե ուշադրություն չի դարձնում սոցիալական միջավայրի նկարագրությանը, համենայն դեպս այն չի վերածում իր անհատականությունը բացատրող ֆակտորի։ Եվ Էմինը և Արարատյանը գտնում են, որ իրենք արտակարգ մարդիկ են, և որ այդ արտակարգությունը սահմանված է ի վերուստ։

Կյումուշխանեցին հայ մեմուարային գրականության պատմության մեջ հանդես է գալիս որպես մի հեղինակ, որի համար ոչ մի արժեք չունեն ինքնամեծար բնութագրումները։ Նա ամեն ինչ բացատրում է հանգամանքների և իրադարձությունների ընթացքով կամ դասավորությամբ։ Նա մի անկաշառ ինքնակենսագիր է, լի այն հավատով, որ իր կյանքի պատմությունը պիտանի կլինի ընթերցողին իր ապրած ժամանակաշրջանը և իրեն ճանաչելու համար։

Կյումուշխանեցու մեմուարներն ընդգրկում են 1768—1830 թվականներն ընկած ժամանակաշրջանը։ Հայ ժողովրդի պատմաբանը նրա «Անձնական պատմութիւնից» կարող է հսկայական արժեքավոր նյութ վերցնել։ Լինելով ակտիվ եկեղեցական-հասարակական գործիչ, Կյումուշխանեցին վարել է անդադրում աշխատանքով լի բազմափորձ մի կյանք։ Ռուսաստանի հայկական գաղութների պատմության համար (Ղրիմ, Գրիգորիոպոլ) նրա մեմուարները անգնահատելի աղբյուր են։ Կյումուշխանեցին առաջիններից մեկն է, որ ականատեսի իր հիշողություններն է պատմել ռուս-պարսկական պատերազմի ավարտի և Երևանի գրավման մասին։ Բանասիրական մեծ հետաքրքրություն են ներկայացնում մեմուարների այն հատվածները, որտեղ Կյումուշխանեցին նկարագրում է Ռուսաստանի հայկական դպրոցների, Լազարյան ճեմարան ուղարկվող ուսանողների, Էջմիածնի ձեռագրատան, Սևանի անապատի վիճակը։ Արժեքավոր և խիստ ուշագրավ են Դավիթ-Դանիելյանի պայքարին, Սինոդի քննադատությանը նվիրված հատվածները, և վերջապես, այն գնահատականները, որոնք տրված են առանձին եկեղեցականների գործունեությանը։

* * *

XIX դարի առաջին կեսի հայ մեմուարային գրականության հուշարձաններից են Խ. Աբովյանի «Դորպատյան օրագրերը»։ «Օրագրերը» գրվել են 1830—1835 թվականներին, Աբովյանի՝ Դորպատում ուսանելու տա-

րիներին։ Մինչ օրագրերը, Աբովյանը ծրագրել էր՝ գրել ու հրատարակել իր մեմուարները, դրանց միջոցով՝ «նորոգել կամ ուղղել զանբարի վարս ոմանց եկեղեցականաց մերոց»[1], միաժամանակ ձեռք բերել Եվրոպայի կամ Գերմանիայի օգնությունը Հայաստան աշխարհի համար[2]։ Աբովյանին այդ ժամանակ հայտնի էր արդեն Արարատյանի «Կյանքը»։ «Դորպատյան օրագրերում» նա հիշատակում է իր և պրոֆեսոր Էնգելհարդի զրույցը այդ գրքի շուրջը (տե՛ս 1831 թվականի սեպտեմբերի 30-ի գրառումը)[3]։ Արարատյանի կյանքը այդ ժամանակ հանրածանոթ մի ստեղծագործություն էր, թարգմանված եվրոպական մի քանի լեզուներով և մեծ ընդունելության արժանացած։ Էջմիածնի և հայ հոգևորականության Արարատյանի քննադատությունը, պետք է որ ջերմ արձագանք գտներ երիտասարդ դիակոնուսի սրտում, որովհետև նա տարիներ շարունակ տառապել էր Տեր-Մարուքյան Հովսեփների միջավայրում և տեսել, թե ինչպես դաժանորեն ճզմվում ու ոտնատակ է արվում ամեն սուրբ երազանք և իդեալ այն մարդկանց կողմից, որոնք հարբում են տոն օրերին, գողանում մեկը մյուսի ինչքը և Քրիստոսից ավելի՝ պաշտում մամոնային։ Աբովյանը սակայն չի իրագործում մեմուարները գրելու ծրագիրը՝ հայրենիքում իր ապագա գործունեության համար հնարավորություններ ստեղծելու միանգամայն հասկանալի մտահոգության թելադրանքով։ Եթե հրատարակվեին նրա մեմուարները և, այսպիսով, մի անգամ էլ «ամբողջ Եվրոպան» ծանոթանար հայ հոգևորականության վարք ու բարքին, Աբովյանը չէր կարող նվազագույն հույս ունենալ անգամ հայրենիքում գրական-լուսավորական աշխատանքով զբաղվելու, մի բան, որ նրա համար նպատակների նպատակն էր, կյանքի հարց, սեփական գոյության արդարացում։

Դեռևս Հայաստանում, 1829 թվականին, Աբովյանը գրում է իր առաջին արձակ երկը՝ «Ճանապարհորդութիւն պարոն պրոֆեսոր Պարրոտի և Խաչատուր դպրի Աբովեան, համառօտ ստորագրութեամբ հանդերձ Արարատեան լերին որ է Մասիս»։ Այս ուղեգրությունը, որ ինքնակենսագրական բնույթ ունի, գրվել է, ըստ երևույթին, Պարրոտի դրդմամբ և հանձնարարականով։ Երբ 1830 թվականի սեպտեմբերի 3-ին Աբովյանը հասնում է Դորպատ, Պարրոտը հենց նույն օրը առաջարկում է Աբովյանին գրել իր ճանապարհորդության մասին. «Յերեկոյին հրավիրելն նորա (Պարրոտի— Կ. Դ.) զիս առ թեյ, տալն նորա զթուղթ, զթանաքաման, վասն գրելոյ զճանապարհորդութիւն իմ»[1]։ Իսկ մինչ Դորպատ հասնելը Աբովյանը սկսել էր գրի առնել օրվա դեպքերը՝ օրագրի ձևով։ Հենց այդ օրագրի վրա էլ նա հետագայում դարձրեց իր ամբողջ ուշադրությունը, գրանցելով այնտեղ ոչ միայն յուրաքանչյուր օրվա տպավորություններն ու խոհերը, այլև Էստոնիայում կատարած մի քանի ճանապարհորդությունների պատմությունը։

1 «Դիվան Խաչատուր Աբովյանի», հատ. 2, Երևան, 1949, էջ 93։
2 Տե՛ս նույն տեղում, էջ 94։
3 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 6, Երևան, 1955, էջ 25—26։

Այսպիսով Աբովյանի ստեղծագործական աշխատանքը Դորպատում հիմնականում ընթանում էր օրագրական և ուղեգրական ժանրի մշակման ուղղությամբ։ Եվ դա պատահական չէր։ Բանն այն է, որ Աբովյանը իր օրագրերը և ուղեգրությունները գրում էր մի սկզբունքով, որ բխում էր նրա լուսավորական գաղափարների ու ծրագրերի ներքին էությունից։ Այդ սկզբունքը նա շարադրել է «Դորպատյան օրագրերի» վերջում՝ շեշտելով հատկապես դրա կարևորությունը. «Մեր անցկացրած օրերն նշանակել,— գրում է նա,— և նրանց համար հատուկ օրագիր սարքելը չէ թե միայն նրա համար է լավ և օգտակար, որ մենք մեր առաջին ժամանակը վերջինի հետ կարող ենք համեմատել, մեր կենացն կարգ և սահման դնել, բախտավոր էլածին պես մեր անցյալ ապաբախտությունն միտք բերել և դնա ավելի քաղցրությունով և շնորհակալությունով վայելել մեր կյանքը, և հակառակն պատահելիս մեզ մխիթարել և հեշտացնել, այլև էն պատճառով, որ մեր միտքը տկար գոլով, շատ բանն մոռանում ա, և մենք ինչ որ մեր գլխովն անց ա կենում չենք կարող այնպես ուղիղ հիշել և դատել ինչպես հարկն ա։ Նամանավանդ հարկավոր է այս անել ինչ ժամանակ մենք օտար աշխարհ եմք դուրս գալիս։ Որ ոչինչ պատճառ չունենաք գրելու մեզ բավական նյութ են վարքն, կացությունն, կենցաղավարությունն տեղին, որ հետո մեր երկրացիքը կարողանան էստոնք իմանալ և ինչ իրանց հավանելի ա և օգտակար իրանց համար ժողովել և նրանցից օրինակ առնուլ»[1]։

Օրագրերի ու ուղեգրությունների մասին Աբովյանի այս կարծիքը որոշ չափով արտացոլում է հայ մեմուարային գրականության զարգացման նոր էտապի պահանջներն ու խնդիրները։ Եվ իրոք, մինչև Աբովյանը, մեմուարային գրականությունը գերազանցապես պատմա-քաղաքական բովանդակություն ուներ. նրանում արտահայտվում էր պետական անկախությունից զուրկ մի ժողովրդի քաղաքական երազանքներն ու պայքարի տրամադրությունները, ազատագրության հասնելու մշտավառ տենչը, Հայրենիքի նկատմամբ մարդկանց ունեցած պատկերացումները և դրանցից բխող ցանկությունները։ Աբովյանի օրագրերի ստեղծագործական պատմությունն ու գաղափարական ուղղվածությունը ցույց են տալիս, թե ինչպես հասարակական զարգացման այս նոր շրջանում փոխվում է մեմուարային գրականության բովանդակությունը։ Մեմուարիստը այժմ իր ուշադրությունը կենտրոնացնում է առավելապես սոցիալական խնդիրների վրա, զբաղվում կենցաղի հարցերով, անդրադառնում բուն առօրյային, այսպես ասած գործնական կյանքին։

«Դորպատյան օրագրերով» Աբովյանը գալիս էր պատասխան տալու լուսավորական շարժման նոր էտապում առաջադրված հայ ժողովրդի ազգային և սոցիալական վերածննդի հարցերին, դրանով իսկ, հանդես գալով դարաշրջանի պրոգրեսիվ ուժերի շարքերում։ Այս հանդամանքը որոշիչ դեր կատարեց Աբովյանի ինչպես հասարակական, այնպես էլ գրա-

---

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 6, Երևան, էջ 301։

կան գործունեության ճակատագրում։ Կողմնորոշվելով դեպի նորն ու առաջադեմը՝ Աբովյանը գնաց դեպի կյանք, ժողովուրդը և, աստիճանաբար, քայլ առ քայլ, իր բազմափորձ և համակողմանի գործունեությամբ, մի հզոր թափով առաջ մղեց XIX դարի առաջին կեսի գրական-կուլտուրական շարժումը։

Աբովյանի գրական գործունեության առաջին քայլերը բնորոշվում են թափի, համարձակության և հեղաշրջող ոգու հաղթական ծավալմամբ։ Հենց միայն «Դորպատյան օրագրերի» օրինակը հաստատում է այդ փաստը։ «Դորպատյան օրագրերով» Աբովյանը ոչ միայն հաստատում էր հայ գրականության պատմա-հասարակական բովանդակության մեջ տեղի ունեցած հեղաշրջումը, այլև բերում էր նոր ուղղություն և ոճ, որը, որքան էլ անմշակ ու թերի, զուրկ չէր զարգացման լայն հեռանկարից, և որը կարող էր նպաստել ու իրոք նպաստեց սոցիալ-հոգեբանական պատմվածքի, նովելի, նաև վիպական ժանրի ստեղծման ու մշակման գործին։ Պետք է նկատել, որ հոգեբանական սքանչելի էտյուդները, բնության հոյակապ նկարագրությունները և սոցիալական կյանքի գեղարվեստական պատկերները Աբովյանն առաջին անգամ ստեղծել է «Դորպատյան օրագրերում»։ Հենց այն ռեալիզմը, որ հաճախ կոչվում է աբովյանական, ռոմանտիկական պաթոսն ու սլացումը, զգացմունքների, մտքերի, պատկերների, մշտահորդ ու անզուսպ հեղեղը, որ այնպես տիպական է նրա «Վերքին», կարելի է գտնել «Դորպատյան օրագրերի» բազմաթիվ էջերում։

«Տեսեալ զտգիտութիւն և զդժբախտութիւն ազգակցաց իմոց և լուեալ զհամբաւ բարեբախտութեան և ծաղկեալ վիճակի եւրոպացւոց յամենայն ազգս կենաց, զիա՞րդ ծանր թուէր ինձ ապաբախտութիւն իմ անկեալ գոլով յայնպիսի երկիր ուր և ոչ մի ինչ ի դիտաւորութեան իմոց կարէր յառաջ գալ...։

Հոգով և հառաչ հանելով հայէի ի տարաձիգ երկնաբարձ շղթայս Կովկասեան և հոգի կենաց իմոց յուսայր միմիայն ի հիւսիսային հողմոյ ստանալ, այն զի հարաւն ինձ միմիայն բարբարոսութիւն և տգիտութիւն շնչէր»[1],— գրել է Աբովյանն իր օրագրում՝ վերհիշելով այն ծանր ժամանակները, երբ կաթողիկոսի թարգման ու գրագիր էր Էջմիածնում։ Իրականանում է նրա երազը։ Թողնելով կովկասյան երկնաբարձ լեռները նա հասնում է Դորպատ։ Նոր երկիր, նոր մարդիկ, նոր բարքեր։ Առաջին շփոթությանը շուտով փոխարինելու է գալիս հին, բայց մշտարթուն մտահոգությունը՝ հայրենիքի ու հայրենի ժողովրդի նկատմամբ։ Հայտնվում են բազմաթիվ հովանավորողներ ու բարեկամներ, Ֆրիդրիխ Պարրոտի ընտանիքը, պրոֆեսոր Ֆրիդլենդերը, Էնգելհարդը, Գրասների ընտանիքը, պրոֆեսոր Երդմանը, Բլումենը, լեզվաբան Վիդեմանը, Մորգենշտերնը, Ադրկասը, Բարդելսը, ռուս, էստոն և գերմանացի ուսանողները, տիկին Էշհոլցը դառնում են Աբովյանի բարեկամները, կազմակերպում նրա կըր-

[1] Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 6, 1955, էջ 297—298։

թությունը, հոգ տանում, որպեսզի «թոշակառու դիակոնուսի» կյանքը հեշտ ու դյուրին ընթանա՝ օտարների մեջ, հայրենիքից հեռու։

Մեկնասների ու բարեկամների շրջանում Աբովյանի ունեցած զրույցները գրեթե միշտ և մեծ մասամբ վերաբերվել են Հայաստանին ու հայ ժողովրդին։ Աբովյանը դրանով ոչ միայն բավարարում էր իր զրույցընկերների հետաքրքրությունը տարաշխարհիկ մի երկրի նկատմամբ. նա չէր կարող չխոսել, չպատմել, չներկայացնել իր երկիրն ու ժողովուրդը, որովհետև նա ամբողջապես, ամբողջ էությամբ, իր բոլոր նյարդերով ու զգայարաններով ապրում, շնչում, մտածում ու գործում էր հանուն այդ երկրի, հանուն այդ ժողովրդի։ «Օրագրի» յուրաքանչյուր հատվածից հորդում է այդ ինքնամոռաց հայրենասիրության ջերմ շունչը, կարոտի ու թախծի, հպարտության ու կարեկցանքի զգացումներով առլեցուն։ Մի չափազանց զգայուն, որոնող ու անհանգիստ հոգի՝ ամբողջովին կրակված հայրենիքի սիրով, լավատես ու պայծառ մի հանճար, որ երիտասարդության օրերին մշտաբորբոք հետաքրքրությամբ փնտրում է ելքը՝ իրագործելու վեհ երազներն իր սրտի, երբեմն հուսախաբ, երբեմն հավատի ու իր կոչման հպարտ գիտակցությամբ, երբեմն մռայլ ու ոգեկորույս, երբեմն կորովի ու խանդավառ, աչքը դեպի հայրենիքն հառած, մի անպարփակ վիշտ հոգու մեջ — ահա «Դորպատյան օրագրերից» մեզ նայող Աբովյանը։

Դժվար է ի մի բերել, դասակարգել մտքերի, ապրումների ու խորհրդածությունների այն բազմերանգ հարստությունը, որ կա այդ յուրօրինակ հիշատակարանում։ Փայլուն վարպետությամբ և պոետական մեծ շնչով է գրված «Ճանապարհորդութիւն իմ ի Ֆրիդրիխսհով» սքանչելի հատվածը։ Աբովյանը մանրամասնորեն նկարագրել է Գրասների մոտ իր հյուրընկալության երջանիկ ժամանակները։ «Լիֆլանդիո երկիրը» իր ճահճուտներով ու անտառներով, կալվածատիրական մշակված ու բերրի հողերով, ասպետական հնամենի դղյակներով՝ նկարագրված են հոյակերպ պատկերավորությամբ ու մնայուն հմայքով։ Բազմահարուստ է «Օրագրի» յուրաքանչյուր էջը, մեծարժեք թե՛ գրական և թե՛ պատմաբանասիրական տեսակետից։ Աբովյանի հանդիպումը ռուս բանաստեղծ Ժուկովսկու հետ, Բուլգարինի լկտի վարվելակերպը Աբովյանի նկատմամբ և այլ պատմական եղելություններ, որոնց մասին նա պատմել է իր «Օրագրերում», տակավին մեծ հետաքրքրություն են ներկայացնում։

Առանց «Օրագրերի» դժվար կլիներ բացատրել շատ հարցեր՝ կապված Աբովյանի անձնավորության, նախասիրությունների ու դիտավորությունների, աշխարհայացքի կազմավորման հետ։

* * *

Ուղեգրությունները, ճանապարհորդական հիշատակարանները, նոթերը, որպես գրական ժանր, հետաքրքիր պարզացում են ունեցել։ Միջնադարյան ուղեգրողներից մինչև Աբովյան և Ռափայելյան՝ մեծ տարածու-

թյուն է ընկած, և այդ տարածությունը, իրոք, ակնհայտորեն սահմանազատում է նրանց։ Ժամանակը, նյութական և կուլտուրական առաջընթացը ուղեգրողների մի սերունդը բաժանում է մյուսից, առավել կամ նվազ չափով փոփոխություններ մտցնելով նրանց ստեղծագործությունների գաղափարական բովանդակության ու ձևի մեջ։ Ինչպի՞սի մեծ տարբերություն գոյություն ունի Սիմոն Լեհացու ուղեգրության և Թաղիադյանի ու Աբովյանի ճանապարհորդական հիշատակարանների միջև։ Միջնադարյան ուղեգրողները մեծ մասամբ օտար երկրների ընդհանուր պատկերն են տալիս։ Նրանց համար բնաշխարհը, հայրենի երկրի տեղագրությունը, պատմական հուշարձանները և այլն չունեն այնպիսի նշանակություն, որպիսիք նրանք ստանում են XIX դարի ուղեգրողների մոտ։ Հետաքրքրությունը դեպի հայրենի երկիրը և նրա կուլտուրական հուշարձանները առաջանում են այն բանից հետո, երբ դրվում է ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման սկիզբը։ Ազգային-ազատագրական շարժումները, լուսավորական պայքարը, մանկավարժական հաստատությունների հիմնադրումը, մամուլի և գրականության հետզհետե զարգացումն ու աճը մեծ չափով նպաստում են ժողովրդի ազգային ինքնաճանաչման գործին։ Ժողովրդի պատմության և պատմական հուշարձանների, բարքերի ու սովորույթների նկատմամբ արթնացած հետաքրքրությունը բացատրվում է ազգային կոնսոլիդացման և ինքնության համար այն ժամանակ արդեն ձևավորվել սկսվող պայքարով։

Աբովյանի և Թաղիադյանի ուղեգրությունները տոգորված են այդ պայքարի մտայնությամբ։

«Ուղևորություն դեպի Անիի ավերակները» (1847) երկի մեջ Աբովյանը բոլորովին նոր դիրքերից է մոտենում հայ ժողովրդի պատմության հարցերին, դրան զուգընթաց վերլուծելով իր ժամանակի կյանքը, առաջադրելով տնտեսական կյանքի վերակառուցման մի ծրագիր, որը այդ ժամանակվա համար անիրագործելի լինելով հանդերձ, նշում էր երկրագործական և արդյունաբերական առաջընթացի ճշմարիտ ուղին։

Միանգամայն ինքնօրինակ ձևով է կառուցված ուղեգրությունը, դա բոլորովին նման չէ նախկին ուղեգրական հիշատակարաններին։ Այստեղ առաջին պլանի վրա են քաշված ժողովրդի պատմությունը, հայրենի երկրի հասարակական կյանքին վերաբերող խորհրդածությունները և իր՝ ուղեգրողի մանկության ու պատանեկության հուշերը։

Մեծ չէ Էջմիածնից Անի ընկած ճանապարհը, բայց Էջմիածինը և Անին եղել են հայ ժողովրդի հոգևոր ու կուլտուրական զարգացման նշանավոր օջախները։ Ուղեգրողի խորհրդածությունները այդ երկու նշանավոր քաղաքների մասին սոսկ տպավորություններից դուրս բերված մտորումներ չեն։ Քննելով Անիի անկման պատճառները՝ հեղինակը կատարում է պատմական մեծ էքսկուրս. «Խոսել Անիի մասին,— գրել է Աբովյանը,— նշանակում է շոշափել Հայաստանի պատմության ամենանուրբ տեղը։ Այդ քաղաքի անունն անգամ բորբոքում է նույն զգացմունքները, ինչպիսիք յուրաքանչյուր մարդու հոգում արթնացնում են Պալմիրը, Բաբելոնը,

Կարթագենը և վերջապես Հռոմը»[1]։ Անիի անունով է նշանավորվում ամբողջ ասիական Կրկմուտքը միջին դարերում[2]։ Արովյանը ամենից առաջ ժխտում է Անիի կործանման քրիստոնեական լեգենդը—իբր թե այն կործանվել է՝ «անեցիների այնքան փարթամ և չափազանց մեծաշուք կյանքի նկատմամբ արգահատանք տածող ինչ-որ կուսակրոնի սրբազան շուրթերի անեծքով»[3]։ Պարսիկները, մոնղոլ-թաթարները, թուրքերը և հայերը եղան այդ ծաղկյալ և մեծաշուք քաղաքի իսկական կործանողները։

Անիի անկումից հետո «թշնամական-բարբարոսական ուժերի թոհ ու բոհի ժամանակ» Հայաստանի գավակները ցրվեցին աշխարհով մեկ՝ Հաշտարխան, Կալկաթա, Պոլիս, Գալիցիա, Լեհաստան և Հունգարիա, Պարսկաստան և Փոքր Ասիայի այլ վայրեր։ Տարագիր և ընչազուրկ հայերը «չօգտվելով այն ժամանակ նրանց համար այնքան հատկանշական զինվորական ծառայության ոչ արտոնություններից, ոչ իրավունքներից... իրենց առջև ոչ մի ասպարեզ չտեսնելով..., ստիպված էին հնչուն դրամով միայն հագեցնելու իրենց հալածիչների և դահիճների ագահությունը»[4]։ Այդ բնավեր ժողովուրդը սակայն, հենց Անիի օրինակով ամբողջ աշխարհին ցույց է տալիս իր կենսունակության ուժը, կերտող ու վերաշինող հանճարի մեծությունը։ Անին թեև կործանված ու անմարդաբնակ «ստեղծագործությունն է ի սեփական ջանքով ու աշխատանքով փառքի ու մեծության այդ աստիճանին հասած խաղաղ, գործունյա, բայց դաժան բախտի բերումով մեծ ու անթիվ բոլոր նվաճողների խաչուղիների վրա ընկած մի ժողովրդի»[5]։

Փոխվել են պատմական ժամանակները, փոխվել է ինքը ժողովուրդը, բայց մնացել է նրա ստեղծագործ ու շինարար ոգին։ Ահա Սարդարաբադի ջրանցքը, նրա վերակառուցումը մոտենում է իր ավարտին և սակայն, ինչե՞ր չէր կարելի ստանալ Արարատյան դաշտավայրի բարեբեր հողից, ընդարձակելով ջրանցքների ցանցը, շինելով ճանապարհներ, օոգելի դարձնելով անջրդի տարածությունները։ «Եթե մեզանում լիներ երկրագործական դպրոց և փորձված լանդ-վիրտ (գյուղական տնտեսության տեր), այն ժամանակ ֆրանսիական ոսկիները նույնպիսի առատությամբ կհոսեին մեր մթերքների դիմաց, ինչպիսի առատությամբ այժմ դրանք հոսում են մեր տպրուկների համար»[6]։ «Զարկ տուր արդյունաբերությանը, սովորեցրու երիտասարդներին և ոչ թե հին ապուպապերի սովորույթների մեջ քարացած մարդկանց, և գործը հաջող կընթանա»[7]։

*Ուղեգրությունը Արովյանը պատրաստել էր «*Кавказ*» թերթում տպագրելու համար։ Չնայած դրան, նա հարցերը դրել է չափազանց համար-*

[1] Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 7, Երևան, 1956, էջ 166։

[2] *Նույն տեղում, էջ 167։*

[3] *Նույն տեղում, էջ 168։*

[4] *Նույն տեղում, էջ 167։*

[5] *Նույն տեղում, էջ 157։*

[6] *Նույն տեղում, էջ 186։*

[7] *Նույն տեղում, էջ 185։*

ձակ։ Օրինակ, մինչ Բլավատսկու Երևանի գավառապետ նշանակվելը, նախկին ռուս ղեկավարների հասցեին ուղղած նրա քննադատությունը։ «Միայն նա — ով ինչպես ես,— գրել է Աբովյանը,— ականատես է եղել երկրի (Սարդարաբադի շրջանի — Կ. Դ.) և նախկին բարեկեցությանը և այժմյան կատարյալ ամայությանը... նա առանց վրդովմունքի չի կարող հիշել մեր ժամանակներում Երևանի նախկին կառավարիչների (խոսքը ռուս կառավարիչների մասին է —Կ. Դ.) անհոգությունն ու անշրջահայեցությունը»[1]։

Ուղեգրության բազմաթիվ հատվածներում Աբովյանը անդրադարձել է իր անձնական կյանքին, պատմելով մանկության ու պատանեկության հուշերը, նաև մոտ անցյալի դեպքերն ու եղելությունները, որոնք խորապես հուզել են մեծ լուսավորչին և երկար ժամանակ եղել նրա մտահոգությունների ու խոհերի առարկան։ Պատմելով, թե ինչպես Թիֆլիսի գիմնազիայի խորհուրդը արգելել է իր աշխատությունների տպագրությունը, Աբովյանը բերում է մի փոքրիկ փաստ, որը բացահայտում է այն կոշմարային ու ծանր ժամանակների էությունը, որի մեջ ապրում էր նա։ «Ավագ ուսուցիչ Ֆիլիադելֆինը,— գրել է Աբովյանը,— դեռ համարձակվեց արտահայտվել ահա թե ինչպես. «Կառավարությունը ցանկանում է ոչնչացնել տեղական լեզուները, իսկ դուք ուզում եք դրանց կենդանացնել և ամրապնդել»[2]։ Աբովյանը ցավով է նկատում, որ կառավարությունը փոխանակ արևելյան լեզուների ամբիոններ հիմնելու տեղերում, որտեղ «ավելի լավ և հեշտ է պատրաստել» մասնագետ թարգմանիչներ, այդպիսիները բացել է Պետերբուրգի և Կազանի համալսարաններում։ Ինչպիսի ողբերգություն է ապրել Աբովյանը տեսնելով, թե ինչպես «լեզուների ուսուցման համար պատրաստած» իր ձեռնարկները «փտում են փոշու մեջ»։ «Սիրտս չի սպասում պարգևներ,— այդ առթիվ գրել է նա,— բայց և չի ցանկանում ենթարկվել ճնշումների. նախախնամությունը ամեն ինչ կպարգի իր ժամանակին»[3]։ Նախախնամությունը, բայց արդյոք հավատո՞ւմ էր դրան Աբովյանը...։

«Պատանեկության տարիների հուշեր» հատվածում Աբովյանը պատմել է իր կյանքի ամենատխուր և միաժամանակ ամենահետաքրքիր ժամանակների մասին։ Էջմիածնում «ես կազմեցի իմ առաջին ըմբռնումները կյանքի, աշխարհի մասին»[4]։ Վանքում չորս տարի սովորելուց հետո, Աբովյանը տեղափոխվում է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցը։ Երբ ազատագրվում է Երևանը, նա անմիջապես մեկնում է Էջմիածին՝ նշանակվելով Սինոդի և կաթողիկոսի թարգման ու դրագիր։ «Ես գիտեի Եվրոպա, Մոսկվա և Վենետիկ անունները,— գրել է նա,— որոնցից երկուսը հատկապես նրա համար, որ այնտեղ էին գտնվում ամենալավ հայկական ուսումնա-

1 Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 7, Երևան, 1956, էջ 189—190։

2 Նույն տեղում, էջ 196։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, էջ 176։

կան հաստատությունները։ Դեպի նրանց, դեպի նրանց էր ձգտում հոգիս զլուխական ուժով»[1]։ Վանքը, նրա բարքերը, հոգևորականների ծանր միջավայրը, ֆալախկան և ծեծը, անսահման տգիտությունը, միաբանների ընչաքաղցությունն ու էգոիզմը խունավորել են Աբովյանի պատանեկության պայծառ ժամանակները։ Որպիսի՜ եղանակներով է ապրել պատանի խաչատուրը այդ տարիներին, ինչպե՜ս դաժան է եղել նրան շրջապատող միջավայրը։ Խանդավառ ու ռոմանտիկ նա տառապել ու «հոգեբուխ արյունք» է թափել ամեն անգամ, երբ ոտնահարվել ու ծաղրվել են նրա նվիրական երազանքներն ու ձգտումները։ Բայց նա շարունակել է երազել... «Պետրոս Ամենացու գործունեության մասին չիմանալով դեռևս ոչ մի խոսք, ես հույս ունեի այն ժամանակ դժբախտ իմ հայրենիքն ազատել բարբարոսների լծից...»[2]։ Հուշերի այս շարքը գրված է, ինչպես Աբովյանն է ասում, ոչ թե իր անձնական կյանքի հետ ընթերցողին ծանոթացնելու, այլ «անցյալի կարևոր հիշողությունները» նրան ներկայացնելու ցանկությամբ[3]։ Անձնական կյանքի որոշ փաստեր Աբովյանն օգտագործում է՝ ներկայացնելու համար մոտիկ անցյալի էջմիածինը։ Ի՞նչ էր այդ կարևոր հասարակական քաղաքական հաստատությունը տարիներ առաջ. ինչպիսի՞ն էր նրա մտավոր և բարոյական նկարագիրը, և արդյոք փոխվել է այն այժմ։ Ժամանակակիցների համար այդ հարցը խոշոր նշանակություն ունեցող խնդիր էր և Աբովյանը անդրադառնում է այդ խնդրին, նորից ու նորից ընդգծելով եկեղեցու վերակառուցման իր պահանջները։ Ի՞նչ է հարկավոր հայ հոգևորականությանը—կրթություն, դարձյալ ու դարձյալ կրթություն. «մի համեստ հոգևոր դպրոց՝ հագեցած քրիստոնեական ոգով... կենդանացած այլ և այլ հանրօգուտ գիտություններով, ինչպիսիք են՝ աշխարհագրությունը, պատմությունը, քիմիան, ֆիզիկան, բնապատմությունը, և հին լեզուները՝ ահա թե ինչ է պետք և անհրաժեշտ հայ հոգևորականությանը»[4]։

Աբովյանը գիտեր, որ լուսավորության և մանուկ սերնդի կրթության գործը հանձնված է հոգևորականներին։ Դուրս մղել նրանց այդ ասպարեզից, հնարավոր չէր և ոչ էլ պետականորեն թույլատրելի։ Մնում էր մի բան—ձգտել հասնելու հոգևորականության մտավոր ու բարոյական մակարդակի բարձրացման, իսկ դրան էլ նա չէր հավատում, այլապես քիչ անց չէր գրի հետևյալ տողերը. «Քանի դեռ մոլլաներն ու տերտերները կիշխեն աճող սերնդի մտքին, մենք դեռևս և միշտ կունենանք մեր ուժեղ և անդրդվելի հակառակորդները»[5]։ Մերժելով կղերի «լուսավորական միսիան», Աբովյանը սակայն չի ժխտում նրա ունեցած դերը հայ ժողովրդի պատմության մեջ։

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 7, Երևան, 1956, էջ 177։
2 Նույն տեղում, էջ 177։
3 Նույն տեղում, էջ 180։
4 Նույն տեղում, էջ 174։
5 Նույն տեղում, էջ 183։

* * *

Մ. Թաղիադյանի աշխատությունը՝ «Ճանապարհորդութիւն... ի Հայս» (1847) իր բնույթով բավական տարբերվում է Աբովյանի ուղեգրությունից։ Ճիշտ է, որոշ առումով այդ երկերը կառուցված են գրեթե նույն սկզբունքով։ Բայց Թաղիադյանի «Ճանապարհորդութիւնը» ավելի ուղեգրական-տեղագրական բնույթ ունի. ազգագրական նյութեր, բարքեր, սովորույթներ, աշխարհագրական տեղագրություն, կլիմա, բուսական ու կենդանական աշխարհ, հին ու նոր կառույցներ, պատմական հուշարձաններ, երկրի քաղաքական պատմություն, վարչական բաժանումներ, դպրոց, դաստիարակություն, մարդկանց հիմնական զբաղմունք, տնտեսություն վարելու ձևեր և այլն։ Եվ այդ բոլորի մեջ հեղինակի կենսագրությունը, անցյալի հիշատակները։

Ուղեգրության առաջաբանում Թաղիադյանը գրել է. «Որպէս միտք մարդկան նոյն և մարմին յարաշարժ զգայանօք պատշաճեալ ի բարեբար արարչէն, ոչ ինչ այնքան օգտակար և ախորժ համարին՝ որքան վպատմութիւն շարժական աստանդականի»[1]։ Այսպես գնահատելով ուղեգրությունների նշանակությունը, Թաղիադյանը, իհարկե, նկատի ուներ, ամենից առաջ, իր աստանդական կյանքի պատմությունը, որ լի էր բազմաթիվ արկածներով և հետաքրքիր անց ու դարձերով. դրան գումարած և այն, որ նա մանուկ հասակից հավաքել էր բազմաթիվ նյութեր հայրենի երկրի տեղագրությանը, պատմական հուշարձաններին և բարքերին վերաբերող, որոնք պետք է զուգորդվեին այդ պատմությանը և ավելի մեծարժեք դարձնեին այն։ Թաղիադյանը սակայն նկատում է, որ ինքը ժողովրդական ծեսերն ու սովորույթները «կարի հարևանցի» է հիշել իր աշխատության մեջ, որովհետև կամեցել է հետագայում «յօրինել եթէ ոչ զՄատեան ինչ, այլ Տիտարան մի, յորում նկարագրեսցին առանձին սովորութիւնք, հանդեսք, կարգք և արարողութիւնք ազգայինք»[2]։

Ինքնակենսագրական և ժամանակագրական նյութերը, ազգագրական ու տեղագրական դրառումների մեծ մասը, որ հավաքել էր Թաղիադյանը մանկությունից ի վեր, կորչում են նրա «աշխարհից-աշխարհ» թափառումների ժամանակ։ Այդ մասին նա հիշատակում է «Ճանապարհորդության» առաջաբանում։ Բայց և այնպես անցյալի հիշողությունները հնարավորություն են տալիս վերականգնել կորցրածի մի մասը։

Թաղիադյանը նույնպես, ինչպես Աբովյանը, ծանր հիշատակներ ունեն պահած էջմիածնից։ Նրա մանկությունն էլ անցել է այնտեղ՝ խավար ու նեղլիկ խցերի մենության մեջ, ֆալախկայի ու ծեծի ամենօրյա սպառնալիքի տակ։ 1816 թվականին էջմիածին է գալիս մեծանուն վարդապետ Պողոս Ղարադաղցին։ Փոքրիկ Մեսրոպը խնդրում ու աղաչում է

---

1 Մ. Թաղիադյան, *Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագի սրբոյ էջմիածնի ի Հայս, հատ. 1, Կալկաթա, 1847, էջ Ե։*

2 *Նույն տեղում, էջ Զ։*

իրեն էլ մտցնել Ղարադաղցու աշակերտների խմբի մեջ, բայց ոչ ոք չի համաձայնվում։ Փախուստը էջմիածնից վերջանում է նրանով, որ նա բռնվում և հետ է բերվում վանք։ Իբրև պատիժ Մեսրոպին այնքան են ծեծում, որ՝ «թափեցին զեղունգս մատանց ոտից իմոց»[1]*։ Ուսման ծարավի և ըմբոստ այդ պատանյակին շուտով հաջողվում է դառնալ Ղարադաղցու ամենասիրելի աշակերտը և նրա հետ ճանապարհորդել հայրենի երկրի շատ վայրեր։ Բազմաթիվ հետաքրքիր պատմություններ, անցքեր, միջադեպեր Թաղիադյանի մոտ թողել են ամենավառ տպավորություններ։ Թեև ծանր են եղել պատիժները, բայց նա երբեք չի հուսահատվել։ Մշտապես կենսուրախ ու զվարթամիտ նա շատ հաճախ մեղմել է իր մեծավորների ցայրույթը՝ առաջադիմելով գիտության մեջ։ Մի անգամ նա ճանապարհորդում է Արագածի լանջերին ընկած գյուղերը (Աշտարակ, Օշական, Կարբի, Ագարակ, Ապարան և այլն)։ «Դրեալ էի զամենայն անցս այսր ճանապարհորդութեան իմոյ, վերհիշում է Թաղիադյանը, յորում և մի առ մի յիշատակագրեալ զխանդաղատանս դստեր քուրդ իշխանին Ամադայ՝ որ յԱպարան»*[2]*։ Հովհաննես Եվդոկացի սարկավագը կարդալով ճանապարհորդությունը՝ մատնում է Մեսրոպին։ Այդ հեռավոր ու ռոմանտիկ սիրո համար նրան մի լավ ծեծ են տալիս։ Բայց Մեսրոպը պատժում է մատնիչին, կաղին լցնելով այն ատրճանների վրա, որտեղից իջնում էր Հովհաննես Սարկավագը։ Ջարդվում է մատնիչի ոտը և նա ամբողջ կյանքում կուզ է մնում։*

Թաղիադյանի մանկության ու պատանեկության հուշերի մեջ հետաքրքիր են հատկապես այն մասերը, ուր նկարագրվում է դպրոցի և առհասարակ կրթության վիճակը՝ պարսկական տիրապետության տակ գտնըվող հայկական գավառներում։

1816—1821 թվականներին Եփրեմ կաթողիկոսի և եկեղեցական այլ գործիչների հետ մշտապես շրջագայելով Հայաստանում, պատանի Մեսրոպը տեսնում է համատարած անգրագիտության մեջ գտնվող մի թշվառ ժողովուրդ։ Չկան դպրոցներ, չկան ուսուցիչներ։ Ամեն ինչ մեկդի դրած Մեսրոպը վճռում է ձեռք բերել գիտելիքներ ու բարձր կրթություն, որպեսզի կարողանա օգտակար լինել հյուղակներում ապրող ու չքավորության ծովն ընկած մարդկանց։ Թաղիադյանի մանկության ու պատանեկության պատմությունը ուսման ու կրթության համար՝ մաքառումի անձնազոհ պայքարի մի պատմություն է։ Ուղեգրության շատ էջեր լցված են այդ ողբերգության փայլուն նկարագրություններով։ Միջավայրը, շրջապատը, ժամանակը այնքան անմխիթար էր, այնքան հուսալքիչ, որ հարկավոր էր անձնվիրություն, կորովի կամք և պայծառ հավատ ապագայի նկատմամբ, որպեսզի որբ, կիսաքաղց և տաղանդավոր այդ պատանին կարողանար հաղթահարել բազդի արգելքները, դարերով ամրապնդված

---

1 Մ. Թաղիադյան, *Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. ստրկասագի սրբոյ էջմիածնի ի Հայս, հատ. 1, Կալկաթա, 1847, էջ 8։*

2 *Նույն տեղում, էջ 219։*

վանական կյանքի պարտադիր օրենքները և հասներ նվիրական երազին՝ ուսմանը։ Տանր, կոշմարային այդ ժամանակներում Թաղիադյանի նման մեկը կարող էր ձեռք բերել բարձր պաշտոն ու ապահով կյանք, դառնալով կղերի հավատարիմ սպասավոր, բայց նա թողնում է այդ հեռանկարը, փորձելով անցնել Պոլիս, որտեղից և ըստ երևույթին Եվրոպա՝ բարձրագույն կրթություն ստանալու համար։

Դժբախտաբար «Ճանապարհորդության» միայն առաջին հատորը կարողացավ հրատարակել Թաղիադյանը։ Արդեն սկսվել էր երկրորդ հատորի տպագրությունը, և լույս էին տեսել աշխատության մի քանի մամուլներ, երբ դադարեցվում է նրա հրատարակությունը, ըստ երևույթին դրամական սուղ միջոցների պատճառով[1]։

«Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան» աշխատությունը բաղկացած է մի մեծ ներածությունից, որտեղ հեղինակը տեղեկություններ է հայտնում Պարսկաստանի վարչա-տնտեսական բաժանումների, գետերի, լճերի, բնական հարստությունների, ազգային սովորույթների, կենցաղի, կրոնական ծիսակատարությունների և հավատալիքների վերաբերյալ։ Այնուհետև տրվում է Ատրպատական գավառի նկարագրությունը։ Այստեղ Թաղիադյանը ներկայացնում է այն ահավոր, մղձավանջային պայմանները, որի մեջ ապրում էին Պարսկաստանում հաստատված հայերը։ «Դավրեժ», «Ելքի Դավրիժոյ» գլուխները առանձին հետաքրքրություն են ներկայացնում ինքնակենսագրական առումով։ Ցավոք «Ճանապարհորդութիւնը» հենց այստեղ էլ ընդհատվում է։ Եթե ուղեգրության մնացած մասն էլ տպագրվեր, դա, անկասկած, չափազանց մեծ արժեք կունենար, քանի որ այդ հատվածներում մենք, ըստ երևույթին, կտեսնեինք հասուն շրջանի Թաղիադյանին՝ իր հասարակական ու անձնական գործունեությամբ, իր լայնախոհ մտորումներով, աշխարհըմբռնմամբ։

* * *

1830 թվականին Վենետիկում լույս է տեսնում Մ. Բժշկյանի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» խիստ արժեքավոր գիրքը, իսկ 1841 և 1842 թվականներին Թիֆլիսում հրատարակվում է Սարգիս վարդապետ Ջալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» երկհատոր աշխատությունը։ Այս ճանապարհորդական հիշատակարանները մեծարժեք նյութեր են տալիս ազգային պատմության, ազգագրության, տեղագրության, պատմական հուշարձանների վերաբերյալ։ Սակայն դրանք արդեն վերջնականապես անջատվում են միմուարային գրականությունից և իբրև գրական երևույթներ անցնում՝ պատմության, հնեաբանության և ազգագրության բնագավառ։

[1] ԳԱ Գրականության և Արվեստի Թանգարանում պահվող Մ. Նալբանդյանի անձնական գրադարանում գտնվում է «Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան» աշխատության մի քանի մամուլները։

* * *

XIX դարի երկրորդ կեսին հայկական կյանքը մտնում էր իր զարգացման այն եռուն շրջանը, երբ մի կողմից տեղի էր ունենում նահապետական-ֆեոդալական հարաբերությունների քայքայումը և մյուս կողմից՝ համահարթվում էր այն ուղին, որով պետք է հաղթարշավի դուրս գար կովկասյան տնտեսության գլխավոր ուժերից մեկը՝ հայ բուրժուազիան։ XIX դարի մտավոր զարթոնքը իր գարնանային օրերն էր ապրում։ Հրապարակ են գալիս առանձին խոշոր ազգային պարբերականներ՝ «Հյուսիսափայլ», «Կռունկ», «Մեղու Հայաստանի», «Մշակ», «Ծաղիկ», «Մասիս», «Արևելյան մամուլ» և այլն։ Պոլսում և Թիֆլիսում հիմնադրվում են հայկական պրոֆեսիոնալ թատրոններ, կազմակերպվում են դպրոցներ, հիմնվում են նոր տպարաններ և հրատարակչություններ և վերջապես մեծապես աճում է հայ ինտելիգենցիայի փոքրաթիվ բանակը։ Աննախընթաց վերելք է ապրում գեղարվեստական գրականությունը։ Պոեզիայի, արձակի, դրամատուրգիայի բնագավառում հանդես են գալիս ստեղծագործական փայլուն կարողություններով օժտված մեծատաղանդ մարդիկ։ Հենց այս շրջանում էլ ստեղծվում է քաղաքացիական այն գրականությունը, որն իր գաղափարական տենդենցիոզությամբ և հեղափոխիչ նպատակադրումով արտահայտում է ազգային լուսավորական շարժման սոցիալ-պատմական բովանդակությունը։ Այդ գրականությունը իր սուր ծայրով ուղղված հնի դեմ՝ պայքար էր մղում կյանքի եվրոպական ձևերի և ազգային իդեալների հաղթանակի նշանաբանով։ Մոտ մեկ հիսնամյակ տևող գրական-լուսավորական շարժումը կանոնավոր հունի մեջ դրեց հայկական մտավոր կյանքը։ Մի ամբողջ էպոխա մարդիկ գործեցին, պայքարեցին ու ստեղծեցին համազգային գրականություն, համազգային թատրոն, նկարչություն, երաժշտություն և այլն։ Հայկական կյանքն ստացավ ոչ միայն իր ուրույն ազգային ձևը, այլև ունեցավ իր նորագույն շրջանի պատմությունը, հենց այդ պատմությամբ էլ զբաղվեցին գլխավորապես մեմուարիստները։ Հայ մեմուարային գրականությունը բուռն զարգացում ստացավ։ Հանդես եկան այնպիսի նշանավոր մեմուարիստներ, ինչպիսիք են՝ Մ. Մամուրյանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Գ. Ջմշկյանը, Կ. Ցութունճյանը և շատ ուրիշներ։ Մեմուարային գրականությունը վերլուծման ենթարկեց նախընթաց պատմությունը, մատնանշեց այնպիսի ազգային-հասարակական երևույթներ, որոնք, այսպես թե այնպես որոշել էին հայկական կյանքի ընդհանուր զարգացումը։

Եվրոպական և ռուսական հուշագրության, ինչպես նաև հայկական հիշատակարանային գրականության տրադիցիաների արմատական յուրացման շնորհիվ XIX դարի վերջերին հայ մեմուարային գրականությունը վերջնականապես իր ավարտուն տեսքն ստացավ և կազմեց գեղարվեստական գրականության ուրույն ու խոշոր ենթաբաժիններից մեկը։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՇՈՒՂԱԿԱՆ ՊՈԵԶԻԱ

1

Հայ գրականության զարգացման ընդհանուր պրոցեսի մեջ, գրավոր ու ժողովրդական-բանավոր պոեզիայի հետ իր առանձնահատուկ տեղն ունի նաև աշուղական պոեզիան։

Սկզբնապես բանավոր լինելով, աշուղական երգերը սերտորեն առնչվում են ժողովրդական բանահյուսությանը, մյուս կողմից դրանք անհատ երգիչների ստեղծագործություններ են, որոնց մեջ երևում են կոնկրետ ստեղծագործողներն իրենց անհատականությամբ ու բանաստեղծական խառնվածքով։ Այս իմաստով այդ երգերն աղերսվում են նաև գրավոր պոեզիայի հետ, մի հանգամանք, որ յուրահատուկ երանգ է տալիս աշուղական պոեզիային, նրա սկզբնավորման առաջին օրերից մինչև մեր ժամանակները։

Մեզ հասած աղբյուրների տվյալներից պետք է ենթադրել, որ աշուղական պոեզիան մեզանում սկիզբ է առել XVI դարի վերջերին։ XVII դարի կեսերին այդ պոեզիան արդեն լայն տարածում ու ճանաչում է գտնում, իսկ XVIII դարում հասնում իր զարգացման բարձրակետին։

Իր այս ծաղկման շրջանում աշուղական պոեզիան էական դեր է կատարում, արտացոլելով հայ ժողովրդի կյանքն ու պայքարը, հույզերն ու նվիրական զգացմունքները, աշխատանքն ու կենցաղը, և այդ այն ժամանակ, երբ գրավոր պոեզիան ավելի ու ավելի է թեքվում դեպի սխոլաստիկան, կտրվում ժողովրդից։

Պատմա-քաղաքական հանգամանքների բերմամբ, հայ աշուղական պոեզիան սկիզբ է առել ոչ թե բուն Հայաստանում, այլ հայկական գաղութներում՝ Նոր-Ջուղայում, Թիֆլիսում, Աստրախանում, Պոլսում և այլուր[1]։ Այդ պոեզիան իր տաղաչափությունն ու պոետիկական շատ ձևեր վերցրել է արևելյան պոեզիայի ընդհանուր գանձարանից։ Հիշյալ

[1] Բնականաբար գաղութներում ստեղծագործող հայ աշուղները, հայերեն երգերի հետ միասին, հորինում էին նաև պարսկերեն, վրացերեն և հատկապես թուրքերեն երգեր, որոնք հայերեն երգերի նման հասկանալի էին հայ ունկնդիրներին։ Հետագայում, երբ աշուղական պոեզիան գաղութներից անցնում է բուն Հայաստան և աշուղական դպրոցներ են հիմնվում Հայաստանի տարբեր վայրերում, թուրքերեն երգեր հորինելու տրադիցիան դեռևս երկար ժամանակ շարունակվում է։ Բայց այս դեպքում հայ աշուղներն այդ երգերը հորինում են ոչ այնքան անհրաժեշտությունից դրդված, որքան աշուղական տրադիցիաներին տուրք տալու թելադրանքով։

հանգամանքները, սակայն, չէին կարող ու չեն խանգարել աշուղական արվեստի լայն տարածմանը նաև բուն Հայաստանում, հայ ժողովրդի ամենալայն խավերի մեջ, քանի որ գեղարվեստական այդ խոսքն իր բովանդակությամբ ու բնույթով եղել է տիպիկ ազգային ստեղծագործություն, հազար ու մի թելերով կապված հայ ժողովրդի պատմական բախտի և ազգային առանձնահատկությունների հետ։

XVII—XVIII դարերի հայ աշուղական պոեզիան աչքի է ընկնում իր խորապես հումանիստական բնույթով, սոցիալական երևույթներն ու մարդկային հոգեբանության բարդ ելևէջները գեղարվեստորեն արտացոլելու կարողությամբ։ Պատահական չէ, որ XVII դարի հայ գրականության ամենապայծառ դեմքը դարձավ թեև ոչ պրոֆեսիոնալ աշուղ, սակայն հիմնականում իր սքանչելի աշուղական երգերով հայտնի Նաղաշ Հովնաթանը, իսկ XVIII դարի աշուղական պոեզիայից վեր բարձրացավ ողջ հայ գրականության ամենաշողշողուն գագաթներից մեկը՝ Սայաթ-Նովան։ Բացի այս երկու խոշոր բանաստեղծներից, XVII—XVIII դարերի աշուղական պոեզիայի մեջ երևացին այնպիսի տաղանդավոր երգիչներ, ինչպիսիք էին Ղուլ էգազը, Բաղեր-օղլին, Ճամչի Մելքոն, Քիչիկ-Նովան, Ղուլ Հովհաննեսը, որոնց ստեղծագործությունը, թեև առ այսօր քիչ է ծանոթ մեր հասարակությանը, սակայն, առանց նրանց անհնար է լրիվ պատկերացում կազմել մեր գրականության պատմության այդ ժամանակահատվածի մասին։

Հենց այս տաղանդավոր երգիչների ստեղծագործության օրգանական շարունակությունն է XIX դարի առաջին կեսի աշուղական պոեզիան։ Ինչպես առհասարակ գրականության, այնպես էլ աշուղական պոեզիայի զարգացումը մի անընդմեջ, շարունակական պրոցես է։ Անջրպետ չկա ու չէր կարող լինել XVIII դարավերջի և XIX դարի առաջին կեսի աշուղական պոեզիայի միջև թեկուզ հենց այն պատճառով, որ XVIII դարավերջի աշուղներից շատերը, օրինակ Ճամչի Մելքոն, Հարթուն օղլին և ուրիշներ, գործել են մինչև XIX դարի 30—40-ական թվականները, ինչպես XIX դարի առաջին տասնամյակներին հանդես եկած աշուղների զգալի մասը շարունակել են ստեղծագործել մինչև 70—80-ական թվականները։ Մյուս կողմից XIX դարասկզբին հանդես եկած նոր աշուղները՝ Աղբար Ադամը[1], Միսկին Բուրջին[2], Շիրինը[3], Սեյադը[4], Գյուրջի-Նավեն[5], Թուրին-

[1] Ծնվել է 1816 թվականին, Վաղարշապատի Փարաքար գյուղում։ Ապրել ու ստեղծագործել է Երևանում։ Մեռել է 1846 թվականին։

2 Ծնվել է 1810 թվականին, Հին Նախիջևանում։ Ապրել ու ստեղծագործել է Գանձակում։ Մեռել է 1847 թվականին։

3 Իսկական անունն ազգանունը՝ Հովհաննես Կարապետյան։ Ծնվել է 1827 թվականին, Ջաջուռ գյուղում։ Ապրել և ստեղծագործել է Ալեքսանդրապոլում և Վաղարշապատում։ Մեռել է 1856 թվականին։

4 Իսկական անունն ազգանունը՝ Պետրոս Տեր-Հովսեփյան Մաղաթյանց։ Ծնվել է 1810 թվականին, Արցախում։ Ապրել և ստեղծագործել է Թիֆլիսում։ Մահվան թվականը հայտնի չէ։

5 Ծննդյան թիվն անհայտ է։ Մեռել է 1840 թվականին։

ջը[1], Նիրանին[2], Թիֆլիզ-Նարգիզը[3], Քյանհանը[4], Իվանը[5], Ջարկյարը[6] և ուրիշներ, թվով ավելի քան 30 աշուղ, աշակերտել են XVIII դարավերջի աշուղներին, վերցրել նրանց բանաստեղծական հնարանքները, ինչպես նաև որոշ, աշուղական պոեզիայի համար մի տեսակ պարտադիր դարձած, թեմաներն ու մոտիվները։ Բայց բնականաբար ժամանակի հասարակական-քաղաքական իրադարձություններն իրենց կնիքն են դրել այս աշուղների ստեղծագործության վրա։ Նախորդների նման հորինելով պատմական, սոցիալական, կրոնական, բարոյա-խրատական, երգիծական, սիրային ու զանազան այլ երգեր, սրանք արդեն առաջ են քաշել նաև նոր հարցեր, նոր թեմաներ, հին հարցերին ու թեմաներին մոտեցել են նոր իրադարձությունների տեսանկյունից, նոր մեկնաբանություններ են տվել դրանց։ Ձևականորեն փոփոխություն չկրելով, XIX դարի առաջին կեսի աշուղական պոեզիան ստացել է նոր բովանդակություն, գաղափարական նոր երանգավորում։

Երբ կարդում ենք XIX դարի առաջին կեսի աշուղների երգերը, առաջին գիծը, որն իսկույն աչքի է ընկնում, դա հեղինակների ակտիվ, գործուն վերաբերմունքն է ժամանակի հասարակական-քաղաքական դեպքերի նկատմամբ։ Դա պատահական չէ, եթե նկատի ունենանք, որ նրանք ստեղծագործում էին մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ տեղի ունեցավ Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի ազատագրումը պարսկական բռնապետության լծից, երբ հասարակական-քաղաքական կյանքում բոլորովին նոր երևույթներ էին տեղի ունենում։

Հայ ժողովուրդը խանդավառությամբ դիմավորեց ռուս ազատարար զորքին, մեր ժողովրդի զավակներից շատերը մասնակցեցին պարսիկների դեմ ռուսական բանակի մղած մարտերին։ Հայ աշուղները, որոնք դեպքերի սոսկ ականատեսներ չէին, այլ ժողովրդի աչքաբաց ու ակտիվ ներկայացուցիչները, բնականաբար չէին կարող հեռու մնալ ընդհանուր խանդավառությունից։ Ժողովրդի հույզերի ամենատաղանդավոր արտահայտչի՝ Խաչատուր Աբովյանի նման, նրանք էլ խորապես ըմբռնեցին Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու պատմականորեն բախտորոշ փաստի հսկայական նշանակությունը։ Այդ պատճառով նրանց երգերի մեջ հնչեց նոր, ազգային ազատագրության և վերածնության մոտիվը, որն իր հետ բերեց նոր երանգներ աշուղական արվեստի մեջ։

---

[1] *Իսկական անուն ազգանունը՝ Թորոս Մարթաշյան։ Ծնվել է 1790 թվականին, Շամախում։ Ապրել է Աստրախանում։ Մեռել է 1875 թվականին։*

[2] *Ծնվել է 1822 թվականին, Վաղարշապատում։ Մահվան թվականն անհայտ է։*

[3] *Ապրել և ստեղծագործել է XIX դարի 30—40-ական թվականներին, Թիֆլիսում։*

[4] *Իսկական անունը՝ Պետրոս։ Ծնվել է 1820 թվականին, Թիֆլիսում։ Ապրել ու ստեղծագործել է Աշտարակում։ Մեռել է 1886 թվականին։*

[5] *Իսկական անուն ազգանունը՝ Հովհաննես Սարգսյան Սարգսյանց։ Ծնվել է 1800 թվականին, Աստրախանում, ուր և ապրել ու ստեղծագործել է։ Մեռել է 1865 թվականին։*

[6] *Իսկական անունը՝ Աբրահամ։ Ծնվել է 1824 թվականին, Շամախում։ Ապրել ու ստեղծագործել է Բաքվում։ Մեռել է 1874 թվականին։*

Այդ մոտիվը տարբեր աշուղների երգերում արտահայտվեց բազմազան ձևերով։ Աշուղներից ոմանք բավարարվեցին նկարագրելով ռուսական զորքի մղած հերոսամարտերը, ոմանք գովերգեցին այդ մարտերին մասնակցած հայ զորավարներին ու զորականներին, ուրիշները երախտագիտական երգեր ձոնելով Ռուսաստանին, ավելի առաջ գնացին, Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու փաստի մեջ տեսնելով ոչ միայն հայ ժողովրդի փրկությունը ֆիզիկական բնաջնջումից, այլև նրա կուլտուրական վերածննդի հեռանկարը։

Ժամանակի քաղաքական իրադարձությունների անմիջական արձագանքներն են Շիրինի, Սեյադի, Իվանի և մի շարք այլ աշուղների բազմաթիվ բանաստեղծությունները։ Շիրինն ու Սեյադը, օրինակ, երգեր են ձոնում ռուսական բանակի հայազգի զորավար Բեհբությանին։ Շիրինն իր մի երգում[1] նկարագրում է Շիրակում, 1853 թվականին, իշխան Բեհբությանի հրամանատարության տակ կռվող ռուսական բանակի մղած մարտերն ընդդեմ թուրքական զորքերի, փառաբանում այդ բանակի տարած հաղթանակը, շեշտելով հայ ժողովրդի ազգային վերածնության հնարավորությունը Ռուսաստանի հովանավորությամբ. «Գարնան առաւօտ դարձավ աշունացեալ բուրաստանն», ոգևորված ասում է նա։

Աշուղ Իվանը Ռուսաստանին նվիրած բազմաթիվ ներբողներում հատուկ շեշտում է Պարսկաստանի և Թուրքիայի դեմ ռուսների տարած հաղթանակների նշանակությունը Անդրկովկասի ժողովուրդների ու հատկապես հայերի համար, նա այդ հաղթանակների մեջ տեսնում է հայ ժողովրդի փրկությունը ֆիզիկական բնաջնջումից, այլև նրա կուլտուրական վերածնության գրավականը։

Մեր աշուղների հիշյալ երգերի մեջ, իհարկե, չպետք է որոնել քաղաքական մեծ խորաթափանցություն։ Իվանի երգերը, նույնիսկ, կարող են տհրահաճ թվալ, սակայն այսպիսի երգերը քննելիս պետք է նկատի ունենալ ժամանակի կոնկրետ իրադրությունը։ Հայ ժողովրդի ազատագրությունը ռուս ժողովրդի ձեռքով աշուղ Իվանը, բնականաբար, ռուսական միապետի անվան հետ պետք է կապեր։

XIX դարի առաջին կեսի աշուղների ստեղծագործության հիմնական գաղափարներից մեկը ազատասիրությունն է, որ վերջին հաշվով ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդասիրություն, հայրենասիրություն։ Այս գաղափարն աշուղների համար ընդհանուր լինելով, նրանցից յուրաքանչյուրի ստեղծագործության մեջ արտահայտվել է տարբեր ձևերով։ Դրա արտահայտման ձևերից մեկն է, օրինակ, Սեյադի բանաստեղծությունների մեջ Հայաստանի անցյալ ու ներկա վիճակների համադրությունը։ Մի քանի բա-

---

1 «Հայկազուն Վասիլի Օսիպովիչ Բեհբութեանց քաջ իշխանի յաղթութեանց վերայ և պատերազմական սխրագործութեանց, որ եղև յամի 1853 թ. ի Շիրակ գաւառի մեր յՕլեքսանդրապօլ քաղաքի»։ Տե՛ս Ոսկ. Տեր-Գևորգյան-Հովհաննիսյանց, «Նոր քնար Հայաստանի», տետր Բ, Մոսկվա, 1858, էջ 33—35։

նաստեղծություններում Հայաստանը դիմավորարար պատկերելով որպես այրիացած, որդեկորույս մի կին, Սեյադը ողբում է նրա երբեմնի փառքի կորուստը, լալահառաչ շեշտով ու թանձր գույներով պատկերում հայ ժողովրդի թշվառ վիճակը, որի պատճառները նա միամտաբար որոնում է հայ երիտասարդության ապգուրացության մեջ։

Հայաստանի երբեմնի փառքն ու հայ ժողովրդի քաջարի զավակներին է գովերգում Շիրինն իր մի շարք երգերում։ Խանդաղատանքի ու սիրո խոսքեր ձոնելով հայրենիքի ազատության համար նահատակված հերոսներին, նա իր ժամանակակիցներին հորդորում է արժանի լինել քաջ նախնիներին։ Սակայն Սեյադից առաջ անցնելով, Շիրինը բարձրացնում է ժողովրդի լուսավորության հարցը գրեթե նույն ոգով, ինչ ոգով այդ հարցն արծարծվում էր Մ. Թաղիադյանի «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» պարբերականներում։

Ինչպես տեսանք, այս մոմենտն արտահայտվել է նույնիսկ Իվանի այն երգերում, որոնք ձոնված են Ռուսաստանին ու ռուսական կայսրությանը։ Բայց Շիրինի երգերում այն ավելի հզոր ու գեղարվեստորեն կատարյալ բնույթ է ստացել, դարձել ավելի կոնկրետ ու անմիջական։ Շիրինն իր մի շարք բանաստեղծություններում գովաբանում է լուսավորական ձեռնարկումներն ու դրանց նախաձեռնողներին։ Այդպիսի երգերից են, օրինակ, «Առ պ. Մկրտիչն Խեչանեան Սանահեանց»[1] և «Գովանաբանութիւն Նոր-Բէազիդա վարժարանի, զոր կառոյց քաջատոհմ աղա Բարսեղ Արծրունի»[2] բանաստեղծությունները։ Փառաբանելով կուլտուրական լուսավորական ձեռնարկումները, Շիրինը միաժամանակ արտահայտում է իր ցանկություններն ու իղձերը, որպես օրինակելի լուսավորական հաստատություններ մատնանշելով Կալկաթայի, Վիեննայի, Վենետիկի և այլ դպրոցները։

Շիրինի համար հայ ժողովրդի բարօրության ու առաջընթացի հիմնական նախապայմաններից մեկը կրթությունն ու լուսավորությունն է։ Պատահական չէ, որ «Ուսումնական աղջիկ և ռամիկ տղա» բանաստեղծության մեջ նա «ռամիկ տղային», որն, ի դեպ, անկիրթ, անկուլտուրական «ազգն» է ներկայացնում, փրկում է ուսումնարան ուղարկելով.

...Ռամիկ տղան իւր մէջ Հայկայ արիւնն ունելով,
Զգուշացաւ, արթնացաւ, խաւարն իսպառ թող տալով,
Մտաց քօղն վերացաւ, յաղթերկանէն խրատուելով,
Վարժարանին մօտեցաւ, ուսուցչի հետ խօսելով,
Մտաւ յուսումնարան մեկ նոր արարած դոլով[3]։

Լուսավորության այս պրոպագանդան, որ վերջին հաշվով ժողովրդի վիճակի փոփոխության մի ծրագիր է, շատ բանով նորություն էր մեր

---

1 «Նոր քնար Հայաստանի», տետր Ե, էջ 82—83։

2 «Նոր քնար Հայաստանի», տետր Բ, էջ 25—27։

3 «Նոր քնար Հայաստանի», տետր Դ, 1858, էջ 63։

աշուղական գրականության մեջ։ Իր այս գաղափարներով XIX դարի առաջին կեսի աշուղական պոեզիան անցնում է ժամանակի առաջավոր գրականությանը։


ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅ

ԳԷՈՐԳԵԱՅ ԱԽՎԵՐԴԵԱՆ

ՄՈՍԿՎԱ.

1852

Սայաթ-Նովայի երգերի՝ Ախվերդյանի հրատարակած ժողովածուի անվանաթերթը

Աշուղական գրականության մեջ միշտ էլ էական տեղ են գրավել պատմական դաստանները, այն երկարաշունչ բանաստեղծությունները, որոնցում նկարագրվում են պատմական կարևոր իրադարձությունները ու բնական աղետները։ XIX դարի առաջին կեսի աշուղները ևս հորինել են բազմաթիվ պատմական դաստաններ։ Բայց ի տարբերություն նախորդ շրջանի աշուղների, նրանք մանրամասն ու հանգամանորեն չեն նկարագրում պատմական դեպքերը, այլ բավարարվելով դրանց ժամանակի և տեղի թեթևակի հիշատակությամբ, ավելի շատ խոսում են իրենց ապրումների ու խոհերի մասին, աշխատում բացատրել պատմական իրադարձությունների ու բնական աղետների պատճառները։

Ինչպես նախորդ դարերի աշուղները, XIX դարի առաջին կեսի աշուղները ևս բնական աղետներն ու արհավիրքները, իսկ երբեմն նաև պատմական արյունալի իրադարձությունները բացատրում են մարդկանց մեղավորության քրիստոնեական բարոյախոսությամբ, մի բան, որ պայմանավորվում է ոչ միայն կրոնական մտայնու-

թյամբ, որ միանգամայն բնական էր ինչպես նախորդների, այնպես էլ նրանց համար, այլև աշուղական արվեստի մեջ պարտադիր դարձած տրադիցիաներով։

XIX դարի առաջին կեսի պատմական դաստաններից համեմատաբար հաջող են Ագրար Ադամի «Ակոռի գիւղի կործանուիլը»[1], Քյանհանի «Այս մարախի կսկիծն դառն էր, քան ըամէն բանը»[2], Կարապետի «Գաղթականութիւն ի 1828 ամին»[3], Գյուրջի-Նավեի «Կողբայ աւերումն»[4] և այլն, որոնցից ընթերցողը որոշ պատկերացում է կազմում նկարագրվող դեպքերի, ժողովրդի կրած տառապանքների, ինչպես և օսմանյան բռնակալների դեմ հայ ժողովրդի քաջարի զավակների մղած պայքարի մասին։

XIX դարի առաջին կեսի աշուղական պոեզիայում ամենից արժեքավորը, թերևս, սոցիալական մոտիվն է։ Սոցիալական անարդարությունները միշտ էլ հուզել են ժողովրդի իղձերի ու ապրումների երգիչ աշուղներին։ Դեռևս XVII—XVIII դարերի հայ աշուղների երգերում մերթ ուղղակի, մերթ անուղղակի կերպով հնչել է սոցիալական անարդարության դեմ բողոքի մոտիվը, որը XIX դարի առաջին կեսի աշուղների ստեղծագործության մեջ դառնում է հիմնականներից մեկը։ Այս շրջանում ավելի շատ են հորինվում սոցիալական թեմայով երգերը, ինչպես նաև ավելի խորանում, բազմերանգ ու իմաստալից է դառնում դրանց բովանդակությունը։ Այս երևույթն, իհարկե, ունի իր պատճառները։ Անդրկովկասում ուժգին թափով զարգանում են առևտրա-դրամական, բուրժուական հարաբերությունները, խորանում է գյուղացիության ունեզրկումը և առհասարակ ժողովրդի աղքատացումը։ Աշխատավոր ժողովրդի ապրումների արտահայտիչները լինելով, աշուղները հանդես են գալիս որպես այդ իրականության քննադատներն ու մերկացնողները։ Բնականաբար, նրանք իրենց քննադատության սլաքներն ուղղում են առաջին հերթին դրամի, ինչպես իրենք են ասում, «արծաթի» կամ «Մամոնայի» գերիշխանության դեմ։ Շիրինի «Վասն անգութ արծաթոյ»[5], Ջարկյարի «Փողի վերա ասած»[6], Իվանի «Թագավոր ես աշխարհի, ով բռնաւոր չար Մամոնայ»[7] տողով սկսվող բանաստեղծությունները հենց այդպիսի երգեր են։ Այս ու նման երգերում կամ այլաբանորեն, ինչպես Շիրինն ու Իվանը, կամ ուղղակի կերպով, ինչպես Ջարկյարն ու Վույ-Վույը (XIX դարի 50-ական թվականներ), աշուղները խոսում են դրամատիրական հասարակության արատների մասին, շեշտում, որ այդ հասարակության մեջ ամեն ինչ գնվում ու վաճառվում է,

---

1 Գ. Ախվերդյան. *Հայ աշուղներ*, Թիֆլիս, 1903, էջ 25։

2 *Նույն տեղում*, էջ 163։

3 Գ. Թարվերդյան, *Հայ գուսաններ*, Երևան, 1957, էջ 140։

4 Ոսկ. Տեր-Գևորգյան-Հովհաննիսյանց. *Նոր քնար Հայաստանի*, տետր Դ, Մոսկվա, 1858, էջ 58—59։

5 Ոսկ. Տեր-Գևորգյան-Հովհաննիսյանց. *Նոր քնար Հայաստանի*, տետր Ե, Մոսկվա, 1859, էջ 47—48։

6 Գ. Թարվերդյան, *Հայ գուսաններ*, էջ 168։

7 Գ. Ախվերդյան, *Հայ աշուղներ*, էջ 389—390։

այդ թվում նաև սերը, պատիվը և նույնիսկ հոգևորականության խոստացած արքայությունը։ Ահա թե այդ մասին ինչ է գրում Ջարկյարը իր վերը նշված բանաստեղծության մեջ.

...Ոչ ով չասի ես խելոք եմ, այսու պատիվ ունեմ աշխատած,
Փողը մարդկանց պատվից հանող, պատվից գցողն է, իմացեք։
...Թեպետ կասեն մեծատունն արքայության անարժան է,
Բայց մին կերպով արքայության դուռն բացողն է, իմացեք։

Աշուղները չեն բավարարվում նկարագրելով դրամի ամենակարող ուժը, որ Ջարկյարն ընդհանրացնում է «մարդ բառը փողն է» դիպուկ ֆրազով։ Ժողովրդի բոլոր խավերի հետ ունեցած ամենօրյա շփումը, հսկայական կենսափորձը, նրանց տասնյակ կոնկրետ օրինակներ են տալիս արտացոլելու համար այն խոր ճշմարտությունը, թե դրամն ու դրամական հարաբերությունները խեղում, այլանդակում են մարդու հոգին, ջարդում, ոչնչացնում «ընկերային սուրբ հարաբերությունները»։ Նույն Ջարկյարն, օրինակ, դառնությամբ նկատում է դրամական հարաբերությունների զարգացման հետևանքով ընտանիքների ներսում կատարվող փոփոխությունները, երբ խաթարվում են ազգակցական, արյունակցական կապերը, երբ շահի զգացումը միմյանցից բաժանում, իսկ երբեմն նույնիսկ միմյանց դեմ է հանում հայրերին ու զավակներին։ Աշուղ Ալլավերդին (Սպահանցի, XIX դարի սկիզբ) խարազանում է կեղծիքն ու կեղծավորությունը մարդկային հարաբերությունների մեջ։ Աշուղ Սայադ օղլին (XIX դարի I կես) զարմանալի խորաթափանցությամբ նկատում է այն տենդագին անհանգստությունը, որ դրամական հարաբերությունների զարգացման հետևանքով պաշարում է ազգաբնակչության բոլոր խավերին.

Մէկէլն թէպետ ունի իրան ապրուստն բաւական,
Անհանգիստ է անցկացնում իւր ժամանակն պատուական,
Թամահն աշխարհումս բազմացել ա անթուական,
Թէ հարուստ և թէ տնանկ, կամ թէ իշխան ազնուական,
Թէ համայն արհեստաւորք, կամ բոլոր վաճառական,
Տառայում են աշխարհիս իրենց կամօք յօժարական...[1]

Շիրինը, կիրառելով վիճաբանության բանաստեղծական հնարանքը, իրար է հակադրում շնորհքն ու բարեկեցությունը, որ նա բախտ է անվանում։ Այս սրամիտ վիճաբանության մեջ նա բացում է սոցիալական անհավասարությունն ու անարդարությունը։

Որքան շնորհալի մարդի տեղ գիտեմ.
Ոչ տանն ալիր կայ, ոչ գլխին գտակ...[2]

դառնացած ասում է նա։ Աշուղը նկատում է, որ իր շրջապատում բարեկեցիկ, երջանիկ ու բախտավոր են հենց այն մարդիկ, որոնք ոչ մի ար-

1 Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, էջ 439—440։
2 Նույն տեղում, էջ 130։

ժանիք չունեն, որոնք, ընդհանրապես, մարդկային բոլոր արատների կրողներն են։ Բախտին դիմելով նա բողոքում է.

Այլ կույր ես, չես տեսնում պատվույ արժանը,
Կամապաշտ, մեծասիրտ ինքնահաւանը
Քեզնով է բարձրանում, ո՛վ չար նշանակ[1]։

Ժամանակի սոցիալական հարցերի խոր ըմբռնողությունը աշուղին հասցնում է պայծառ հետևության։ Հանդես գալով Ֆրիկից վեց դար հետո, նա արդեն չի վարանում պնդել, թե բախտը, որ այս դեպքում նույնն է, ինչ որ Ֆրիկի ֆալաքը, ոչ թե աստծո, այլ մարդկանց սահմանածն է.

Շնորհքն ասաւ մին օր Սուրբ Գիրքն բացայ,
«Ծննդոցն» մինչ «Յայտնութիւնն» ընթերցայ,
Բաղդ անունով երբեք պարգև չիմացայ,
Մարդկանց սահմանած ես, խարբերայ նամակ[2]։

Քննադատելով դրամատիրական հասարակության խոցերը, XIX դարի առաջին կեսի աշուղները սրտի կսկիծով են նկարագրում ժողովրդի աղքատացումը, տնտեսական ծանր վիճակն ու շահագործումը։ Աշուղ Վույ-Վույն, օրինակ, իր «Ափսոս» վերնագիրը կրող բանաստեղծության մեջ ժամանակի համար զարմանալի պարզությամբ ու համարձակությամբ է դնում ժողովրդի ընչազրկության հարցը.

Հորն ու մորս աղքատ տեսի,
Հացի ձեռքից Թիֆիլ իքյան,
Դառը տանջանքներ շատ տեսի,
Խալխի դռներն ընկա նյոքար,
Աղեքանց անխիղճ, վատ տեսի,
Աշխատողին սոված ու մերկ,
Վայելողին անաշխատ տեսի...

Կամ.

Հասունացա, բյամալ դառա,
Հողագործ եմ, բայց հող չունեմ,
Ինչպես ապրեմ աշխարհի մեջ...
...Հաց ու ապրուստ հոգալու
Կայինք չունեմ ու փող չունեմ...[3]

Իհարկե, չպետք է կարծել, թե XIX դարի առաջին կեսի աշուղները, նման երգեր հորինելիս, միշտ էլ գիտակցաբար հետապնդել են սոցիալական անարդարությունների բուն պատճառները մերկացնելու նպատակը։ Նրանց բանաստեղծությունները շատ հաճախ ծնվել են որևէ կոնկրետ միջադեպից։ Ջահել օղլանն (1820—1850), օրինակ, «Անիրաւ, քեզ ով

---

1 Գ. Ախվերդյան. *Հայ աշուղներ, էջ 131։*

2 *Նույն տեղում։*

3 Գ. Թարվերդյան. *Հայ գուսաններ, էջ 115—116։*

ասաւ դալը մանեթ իս խուրդա անում»[1] տողով սկսվող բանաստեղծությունը Հորինելիս (ուր պարզապես կենդանի զրույցի ձևով պատմում է, թե ինչպես կեղծ դրամ մանրելու պատճառով ընկել է չինովնիկների ձեռքը, ինչպես են սրանք տանջել ու չարչարել իրեն, ինչպես է կաշառքով ազատվել) Հավանաբար չի էլ Հասկացել, որ մեծ ընդՀանրացում է կատարում, մերկացնելով առՀասարակ ցարական չինովնիկությունը։

Մնում է ավելացնել, որ, Հասկանալով այդ թե ոչ, մեր աշուղները իրենց սոցիալական բանաստեղծություններում ելել են նույն դեմոկրատական դիրքերից, ինչ դիրքերից ելնում էր Հայ նոր գրականության Հիմնադիր Խաչատուր Աբովյանը։ Բավական է թեկուզ Հիշել Աբովյանի քննադատական, երգիծական տողերը՝ ուղղված ցարական չինովնիկության դեմ, նրա «Երկաթակեր մուկը», «Հացակեր փեշը», որոնք դրամական Հարաբերությունների զարգացման Հետևանքով Հասարակության բարոյական նորմաների խեղումն արտացոլող դասական օրինակներ են մեր գրականության մեջ։

Կյանքի սոցիալական երևույթներին ակտիվորեն միջամտելու ձգտումը Հատուկ է XIX դարի առաջին կեսի մեր աշուղներին. այս տեսակետից նրանք որոշակիորեն տարբերվում են ժամանակի գրավոր պոեզիայի ներկայացուցիչներից, որոնք թեև նույնպես առաջ են քաշում ազգային ազատագրության, ժողովրդի լուսավորության ու այլ՝ Հասարակական-քաղաքական կարևոր Հարցեր, սակայն, դեռևս քիչ են անդրադառնում բուն սոցիալական Հարցերին։ Այս իմաստով աշուղական պոեզիան լրացնում է ժամանակաշրջանի գրականության Հիշյալ թերին։

XIX դարի առաջին կեսի Հայ աշուղները տրադիցիոն կերպով Հորինել են նաև զուտ կրոնական և բարոյախրատական երգեր, որոնք, սակայն, իրենց բնույթով փոքր-ինչ տարբերվում են նախորդ դարերի աշուղների Համանման երգերից։ Ճիշտ է, այս նոր շրջանի աշուղների կրոնական երգերում գրեթե թեմատիկ նորություն չկա, վերջին Հաշվով դրանք աստվածաշնչային թեմաների նույն մշակումներն են, քրիստոսի, Մարիամ աստվածածնի, վանքերի, եկեղեցիների, սրբատեղերի գովքերը, սակայն սրանցում զգալիորեն թույլ է կրոնական ջերմեռանդությունը, պակաս են մեղայական, ինքնախարազանման մոտիվները, Մարիամին ու Քրիստոսին նվիրված բանաստեղծություններն անգույն են և անՀույզ, աստվածաշնչի թեմաները մշակված՝ ոչ այնպես կենդանի ու ջերմ շնչով, ինչպես XVII—XVIII դարերի աշուղների երգերում։ Սրանցում ընթերցողն իսկույն նկատում է, որ աշուղներն այլևս չունեն իրենց նախորդների ոգեշնչվածությունը, որ միայն տրադիցիայի պարտադրող ուժն է նրանց ստիպում ձեռք զարկել նման թեմաների մշակմանը։ Հիրավի, բացի Թուրինջի «Երկնային թագաւոր ստեղծող Աստուած» տողով սկսվող վարսաղից[2], որն իր ժողովրդական երանգով նախորդ դարերի Համանման աշու-

---

[1] Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, էջ 279—280։

[2] Նույն տեղում, էջ 351։

դական երգերն է հիշեցնում, քրիստոսին ու տիրամորը նվիրված մյուս երգերը պարզապես աստվածաշնչի նյութերի անգույն վերապատումներ են, որոնցում առատ են կրոնական բանաստեղծություններից եկող գրաբարյան արտահայտություններն ու ոճերը։ Այսինքն, փաստորեն մոտենալով սկզբնաղբյուրներին՝ կրոնական գրքերին, այս ոտանավորները հեռանում են նախորդ դարերի աշուղական պոեզիայի նման երգերին հատուկ ժողովրդական ձևերից։ Թե բովանդակությամբ, թե ձևով սրանք XIX դարի առաջին կեսի աշուղական պոեզիայի ամենաթույլ կտորներն են։



Միսկին Բուրջու ձեռագրերից

Կրոնական ջերմեռանդության նույն պակասն է զգացվում նաև վանքերի, եկեղեցիների, սրբատեղերի գովասանությանը նվիրված բանաստեղծություններում։ Եթե նախկինում աշուղները շատ հաճախ էին գովաբանում այդ վայրերին վերագրված հրաշագործ հատկությունները, այսպես կոչված սրբությունը, ապա այժմ աշուղներին առավելապես հետաքրքրում է վանքերի ու եկեղեցիների ճարտարապետական կառուցվածքը, կահույքն ու սպասները, եկեղեցու սպասավորների քանակը, դրանց հագուստների փարթամությունը և այլն։ Այս տեսակետից տիպական են, օրինակ, Միսկին Բուրջու «Մուխամմազ սուրբ էջմիածնի»[1], Ջյանհանի «Գովասանութիւն առ վասն սրբոյն Կարապետի»[2] բանաստեղծությունները, և միակ բացառությունը, թերևս, Թիֆլիզ-Նարգիզի «Սուրբ ու աղոթք անենք ճշմարտութենով» տողով սկսվող ոտանավորն է[3], ուր խոսվում է Գեղարդի սրբության մասին։

Կրոնական ջերմեռանդության թուլացումն են վկայում նաև պասի և ուտիսի վիճաբանության թեմայով հորինված երգերը։ Այդպիսիք են աշուղ

1 Գ. Ախվերդյան, *Հայ աշուղներ, էջ 227։*

2 *Նույն տեղում, էջ 197։*

3 *Նույն տեղում, էջ 253։*

Իվանի «Հաղ ի վերայ պասի ու ուտիսի»[1] և «Ի վերայ պասի»[2] բանաստեղծությունները։ Սրանք իրենց բնույթով նման են միջնադարյան բանավոր և գրավոր պոեզիայում այնքան տարածված երկու իրարամերժ սկզբունքներ ներկայացնող երևույթների կամ առարկաների (երկինք և գետին, եկեղեցի և ջրաղաց, հոգի և մարմին և այլն) բանաստեղծական վիճաբանություններին։ Եվ ճիշտ այնպես, ինչպես նկատում ենք դեռևս XVII—XVIII դարերի աշուղների համանման երգերում, XIX դարի առաջին կեսի աշուղների բանաստեղծություններում առավել ևս, չնայած աշուղն ի վերջո հաղթանակը պաշտոնապես տալիս է հոգևորին՝ տվյալ դեպքում պասին, սակայն աշխարհիկը՝ ուտիսն այնպիսի հաճելի ու դրական գույներով է ներկայացվում, իսկ պասն այնպիսի տհաճ ու վնասակար, որ ամենամիամիտ ընթերցողն իսկ նկատում է հոգևորի հաղթանակի բռնազբոսիկությունը։

Այսպես ուրեմն, հասարակական նոր հարաբերությունները զգալի փոփոխություն են մտցնում XIX դարի առաջին կեսի աշուղների աշխարհայացքի մեջ։ Նրանք սկսում են հասկանալ հոգևորականության էությունը, նկատել քրիստոնեական պատվիրանների և կյանքի մշակած սկզբունքների միջև եղած անդունդը, զգում են սոցիալական անարդարությունների առկայությունն ու դրա հետևանքով աստիճանաբար խամրում է նրանց ջերմեռանդությունը։ Չհրաժարվելով կրոնական թեմաներից, նրանք կամա թե ակամա փոխում են այդ թեմաներով հորինվող երգերի բնույթը։

Հենց այդ նույն պատճառով փոփոխվում է նաև խրատական երգերի իմաստը։ Դրանցում մեր աշուղներն, իհարկե, չեն մերժում քրիստոնեական բարոյախոսության սկզբունքները, այդ նրանցից չէր էլ կարելի սպասել, սակայն չդադարելով քարոզել հոգու փրկության մասին մտահոգվելու, աշխարհիկ հաճույքներից հրաժարվելու գաղափարը (այդպիսի երգեր շատ է հորինել հատկապես աշուղ Իվանը. նման երգեր ունեն նաև Շիրինը, Ազբար Ադամը, Յաղուբ-օղլիները, Սայադ-օղլին և ուրիշներ), նրանք շտապում են անցնել այլ տիպի խրատների, քարոզում են ժուժկալություն, քաղաքավարություն, հորդորում են հեռու մնալ հայհոյախոսությունից, բամբասանքից, հարբեցողությունից, դատարկապորտությունից և այլն։ Ճիշտ է, այս խրատների զգալի մասը ևս վերցնում են քրիստոնեական հավատի պատվիրաններից, սակայն տվյալ դեպքում աշուղներին ոչ այնքան դրանց ծագումն է հետաքրքրում, որքան դրանց նշանակությունը բուն կյանքի համար, այն հետաքրքրությունը, որ հանդես էր բերում ժողովուրդը նման հարցերի նկատմամբ։ Որտեղից էլ վերցված լինեին չստելու, մերձավորին սիրելու, աղքատներին կարեկցելու և օգնելու մասին խրատները, վերջիններս մոտ էին ժողովրդի սրտին։ Հենց դրանով է բացատրվում, որ դրանք, ի տարբերություն զուտ կրոնական խրատա-

---

1 Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, էջ 411—414։

2 Նույն տեղում, էջ 399—401։

կան երգերի, շատ ավելի պոետական, հուզական հորինվածքներ են, հագեցած ժողովրդական, կենդանի, սրամիտ հումորով, խոսքի անմիջականությամբ ու անկեղծությամբ։ Այս առումով աշուղական պոեզիայի գեղեցիկ նմուշներից մեկն է Գյուրջի Նավեի «Հողեղէն մարդու համար միշտ անուշակ սէր, գինի ջան» տողով սկսվող երգը.

Խմողն առաջի տարին խիստ շատ դըրուստ կըլնի հախի,
էն մասին էհտիբարը կտրուելուց շատ կըվախի,
Ծաւաշ ծաւաշ տան մէջը բոլոր կիսագին կըծախի,
Լիտրը մի ժում կըխմի, կասի մնայ կըքացախի,
Կասի իրան միջումը, կուշտ խմելն ա խէր, գինի ջան։
...Ծթէ թօբա չի անի, կըփուշուի վրայ հինգ տարումը,
էնթաւուր ազգի թքանք էլ չի ման գայ աշխարհումը,
Բանգի մարթը փչանայ, լաւերը մնան բարումը,
Գիւրջի Նաւասին գրեց էս խրատը դաւթարումը,
Լսողը էլ չի խմի, բալքեա ասի վեր, գինի ջան[1]։

XIX դարի առաջին կեսի աշուղական գրականության ամենահիմնական մոտիվը, թերևս, սիրո մոտիվն է։

Այս ժամանակաշրջանի աշուղների սիրային երգերի մի զգալի մասը գովերգություններ են, որոնցում մանրակրկիտ նկարագրվում են կնոջ ֆիզիկական բարեմասնությունները։ Այդպիսի բանաստեղծությունների մեջ նկատվում է նախորդ դարերում հղկված, մշակված ձևերի ու ոճերի, ինչպես նաև կնոջ նկատմամբ ունեցած վերաբերմունքի խոր ազդեցությունը։ Այժմ էլ կնոջ արտաքինը նկարագրելիս մեր աշուղներն օգտագործում են աշուղական արվեստի ընդհանուր գանձարանից առած պատկերներն ու համեմատությունները։ Աչքերի համար, օրինակ, նրանք ունեն «վառ ճրագ», «ծով-ծով», հոնքերի համար «ղալամքաշ», «աղեղ», «յուսին» էպիտետները, շուրթերը շատ հաճախ նմանեցնում են վարդի, ատամները՝ մարգարտի, բոյը՝ չինարի, կուրծքը՝ խնձորի, շամամի, մազերը՝ ռեհանի, սաթի. չեն մոռանում ո՛չ խալը, ո՛չ քաղցրահամ բերանը, ո՛չ կաքավի քայլվածքը... Ոճեր և արտահայտություններ, որ ծանոթ են դեռևս XVII—XVIII դարերի աշուղների ստեղծագործություններից, որոնցով, սակայն, հպարտացել են նոր շրջանի աշուղներ, որոնցով շատ հաճախ չափվել է աշուղական արվեստի մեջ ունեցած նրանց վարպետությունը։

Սակայն այս տրադիցիոն ոճերի ու ձևերի հետ մեկտեղ XIX դարի առաջին կեսի աշուղները օգտագործում են նաև բանաստեղծական նոր ձևեր, նոր էպիտետներ, նոր պատկերներ ու համեմատություններ, որոնցով նրանցից յուրաքանչյուրը տարբերվում է իր ընկերակցից և, հատկապես, նախորդ դարերի աշուղներից։ Ահա, օրինակ աշուղ Բուբինչն ինչպես է ներկայացնում սիրած կնոջը.

---

[1] Գ. Ախվերդյան, *Հայ աշուղներ*, էջ 70—71։

Հազար վինտով, չարխերով սարքած սհաթ ես գեղեցիկ,
Ոսկէտիպ գիրը ես դառել խեղճ պարապ Թուրինջի համար,
Զնոխ բանած կարդում եմ, նազլու հէքիաթ ես գեղեցիկ[1]։

Սա, հասկանալի է, ժամանակի ազդեցությունն է աշուղական պոեզիայի վրա։

Կնոջ արտաքինի նկարագրության հետ մեկտեղ սիրային երգերում մեծ տեղ է հատկացվում բուն սիրո զգացման դրսևորմանը։ Դրանցում մեծ մասամբ սիրո աղերսանք, սիրո վիշտ և երբեմն էլ սիրո երջանկություն է արտացոլված, սակայն այստեղ արդեն աշուղներից յուրաքանչյուրն իր ինքնուրույն դեմքն ու ձայնն է հանդես բերում, յուրովի, ինքնատիպ ձևով է երգում իր սերը։ Եվ հենց այդ պատճառով է, որ այս հարցում դրսևորվում է նաև աշուղների, որպես բանաստեղծների, անհատականությունը։ Այսպես, եթե Գյուրջի Նավեն ասում է.

Ես մեռեալ էի, կենդանացա, ինձ եկար ռաստ...[2]

Ջարկյարը նույն միտքն ավելի է խորացնում.

Եթե, որ փոքր խոսես հարյուր տարեկան ծերի հետ,
Կու շինես կրկնածանոթ յուր ջահելության սէրի հետ,
Ով դժոխք չի ցանկանա մին քեզ նման ընկերի հետ
Չի տեսնիլ արքայություն սէր քարոզող սուրբերի հետ[3]։

Իսկ Սեյադը հորինում է մի գողտրիկ այլաբանություն, ըստ որի արևելքի բոլոր գունեղ ծաղիկները սիրահարված են, սիրահետում և սպասավորում են իրենց ընտրածին.

Մանուշակն կուժն ուսին գալիս է ջուրէն,
Խեղճ նարկիզն քէշիկդ է քաշում կըտուրէն,
Գիշեր ցերեկ ղուլլուղումդ կանգնած է լալէն,
Լիլուփառն բռնած ունի գինու փիալէն,
Դինաբախանն նեղացաւ քեզ գլուխ տալէն,
Գուլխսարահին մեռաւ մօտդ շատ գնալ գալէն,
Եասամանն Թառալեյայ, ընկելայ հալէն...[4]

Եվ առհասարակ մեր աշուղները որպես բանաստեղծներ ուժեղ են հատկապես այն երգերում, որոնցում խոսում են իրենց հույզերի, հոգեկան ապրումների, սիրո տված երջանկության կամ տանջանքների մասին։

Այստեղ նրանցից յուրաքանչյուրը կարողանում է գտնել հոգեբանական այնպիսի նրբերանգներ, որոնք երգը դարձնում են գեղեցիկ, գրավիչ

---

[1] Գ. Ախվերդյան, *Հայ աշուղներ*, էջ 349—350։

[2] *Նույն տեղում*, էջ 453։

[3] Գ. Թարվերդյան, *Հայ գուսաններ*, էջ 171։

[4] Ոսկ. Տեր-Գևորգեան-Հովհաննէսեանց, *Նոր քնար Հայաստանի*, տետր Ա, Մոսկվա, 1857, էջ 30։

ու հուզական։ Այս իմաստով ուշագրավ են հատկապես Միսկին Բուրջու, Քյանհանի, Թուրինջի, Նիրանու, Գյուրջի Նավեի, Ազբար Աղամի, Զարկյարի, Սեֆիլ Գյոֆթարու (XIX-ի I կես) և մի քանի այլ աշուղների երգերը։ Դրանք աչքի են ընկնում պատկերների, համեմատությունների, գեղարվեստական այլևայլ հնարանքների թարմությամբ, ինքնատիպությամբ, ժամանակի ժողովրդական բանահյուսության հետ ունեցած կենդանի կապով, ընդգծված ազգային կոլորիտով, ինքնարուխ անմիջականությամբ։ Միսկին Բուրջու սիրային երգերն, օրինակ, պղալիորեն հիշեցնում են ժողովրդական խաղիկները, բայց միաժամանակ ըստ ամենայնի անհատական ստեղծագործություններ են։ Այս տեսակետից հետաքրքիր նմուշ է հետևյալ հատվածը.

Խելքս գնաց, դուրս եկար էն զոլիցը,
Կաքաւի պէս ձայն ես տալիս քոլիցր,
Ջեյրանի պէս, տեսայ, եկար չոլիցը[1]։

Այս տողերը ցույց են տալիս, թե որքան գեղեցիկ կերպով կարող են միահյուսվել ժողովրդական բանավոր ստեղծագործության և այդ ժողովրդից ելած տաղանդավոր անհատի հորինած երգի մոտիվներն ու հնչյունները։

Աշուղական արվեստի փայլատակումներ կարելի է նկատել ոչ միայն Միսկին Բուրջու, որ սիրային լիրիկայի լավագույն ներկայացուցիչներից մեկն է, այլև Ազբար Աղամի, Գյուրջի Նավեի, Շիրինի, Նիրանու և մյուսների սիրային-լիրիկական երգերում։ Աղբար Աղամը կնոջ սիրախաղն ու իր սիրատոչոր սրտի տվայտանքները ներկայացնում է նրբին, ներքին հույզով աոլցուն փոխաբերությունների ու գողտրիկ համեմատությունների միջոցով.

Վախտ որոտում ես, վախտ ամպում ես, վախտ մթնում ես շատ
Անձրևում ես կաթ կաթ.
Վախտ հարաւային հողմոյ նման հնչում ես խիստ սաստ,
Ես ընում եմ զգաստ...[2]

Գյուրջի Նավեն սիրո պատճառած վիշտը պատմում է ժողովրդական բանահյուսության ոճերով հագեցած նկարեն համեմատություններով ու պատկերներով.

Ինչպէս թէ որ խաւարում է արևր,
Ինչպէս թէ որ ծառը թափի տերևր,
Էնպէս էլայ, անմահականս չեկաւ։
Ճանապարհիդ արտասուքս դոլ էլաւ,
Ռահմ արա, ով անիրաւ բոլ էլաւ...
...Գիւրջի Նաւէն ճանապարհիդ դուլ էլաւ,
Քյարամ-դաղի նման էրուեց, քուլ էլաւ... և այլն[3]

[1] Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, էջ 221։

[2] Նույն տեղում, էջ 3։

[3] Նույն տեղում, էջ 76—77։

Թուրինջը թե՛ սիրուհուն նկարագրելիս, թե՛ իր տրամադրությունն ու հոգեվիճակը պատկերելիս, միշտ գտնում է այնպիսի ոճեր, պատկերներ, համեմատություններ, որոնք հատուկ են լեռնական ժողովրդի մտածողությանը. ահա թե ինչ է ասում նա իր սիրուհու մասին.

Բոլորած անձդ սպիտակ նման ձյուն նստած սարի պէս[1].

Կամ ահա թե ինչ բառերով ու արտահայտություններով է պաղատում.

Արտասուքս վարար բուլաղ մի անիլ...
Աստուած սիրես, մահլամ դիր, աղ մի անիլ...[2]

Այսպես և մյուսները։ Յուրաքանչյուր նոր անուն, նոր անհատականություն է, ժողովրդական պոեզիայի հետ սերտորեն առնչվող, բայց և ինքնատիպ ու ինքնուրույն բանաստեղծական խառնվածք։

XIX դարի առաջին կեսի աշուղական սիրային լիրիկայի մեջ նկատվում է մի հետաքրքիր երևույթ, որն այլևս չի կապվում պոեզիայի ձևական առանձնահատկությունների հետ, այլ վերաբերում է սիրային երգերի իմաստին ու բովանդակությանը։ Բանն այն է, որ այս ժամանակաշրջանի աշուղները կնոջ արտաքին բարեմասնությունները, նրա հմայքն ու գեղեցկությունը, սիրո զգացման ուժն ու վեհությունը փառաբանելով, հետըզհետե ավելի ու ավելի շատ են մտորում կնոջ հոգեկան բարեմասնությունների կարևորության մասին, այլ խոսքով նրանք կնոջ մեջ ավելի ու ավելի շատ են տեսնում մարդը, ընկերը... Այդ պատճառով էլ սիրային երգերում առատ են այն կտորները, որոնցում խոսվում է կնոջ ունեցած, կամ ցանկալի հոգեկան հատկությունների մասին։ Այսպես, Ազբար Ադամն իր սիրեցյալին գովաբանում է նրա հանդարտ, խոնարհ ու բարի վարքի համար, իսկ երբ խոսում է ցանկալիի մասին, ապա առաջին հերթին շեշտում է. «Ես մի սիրեկան կուզեմ դարդից խաբարդա ըլնի»[3], Քյանհանը նույնն է ասում «Սիրեկանս սրտագէտ, հասկացող խսան եմ ուզում»[4]։ Գյուրջի Նավեն սքանչելի պատկերներով փառաբանելով սիրելի կնոջ գեղեցկությունը, այնուամենայնիվ շատ ավելի կարևոր է համարում այն, որ աստված կնոջ խելք ու շնորհք է տվել։ Աշուղ Քիմիան հպարտ է իր սիրուհու հոգեկան բարեմասնություններով և հատկապես ուսումնականությամբ.

Գեղեցիկ ես, դուշա ջան, հանճարեղութիւնդ գովեմ,
Գերազանց ես ի մէջ մարդկան, համեստութիւնդ գովեմ,
Սիրոյ գերելոց հոգեհան, ամբողջ գրութիւնդ գովեմ,
Ընթերցողաց վայելչական շարադրութիւնդ գովեմ,
Խրատ ունես բարոյական, արտաբերութիւնդ գովեմ,
Թշնամեաց կորստական արիր, զօրութիւնդ գովեմ[5]։

1 Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, էջ 361։
2 Նույն տեղում, էջ 356։
3 Նույն տեղում, էջ 10։
4 Նույն տեղում, էջ 195։
5 Նույն տեղում, էջ 207։

XIX դարի առաջին կեսի աշուղների մեջ այս հարցում ամենահետաքրքրականը Շիրինն է։ Նա ևս գովաբանում է սիրելի կնոջ խելքը, շնորհքը, խաղաղ ու հանդարտ բնավորությունը, բարի անունը, համեստությունն ու ազնվությունը։ Բայց դրանով չբավարարվելով, նա հատուկ շեշտում է կնոջ դերը ընտանիքում և հասարակության մեջ։ Այս տեսակետից ուշագրավ են նրա «Գովասանութիւն»[1] և «Գովք առ Իսկուհի տիկին»[2] բանաստեղծությունները, որոնցում նա շարադրում է իր կարծիքը այն մասին, թե ինչպիսին պիտի լինի կինը։ Շիրինի համար այն կինն է օրինակելի, որը կարող է խելացի կերպով կազմակերպել տնտեսությունը, որն ընտանիքում օգնական ու ընկեր է ամուսնուն, կրթված է, գիտի կար ու ձև անել, ինչպես աշուղն է ասում՝ «եվրոպական կանոնով» սեղան պատրաստել, և այլն։ Սակայն դրա հետ միասին աշուղը պահանջում է, որ կինը լինի հասարակության անդամ, տեղյակ լինի աշխարհի անց ու դարձին։ Այսինքն, որպես դրական կերպար, Շիրինին այլևս չի բավարարում նահապետական կինն՝ իր բարեմասնություններով. աշուղի իդեալը քաղաքի կրթված, աչքաբաց ու բանիմաց կինն է, ընտանիքի սյունն ու, որոշ իմաստով, ղեկավարը։ Այստեղից միանգամայն հասկանալի է, թե կնոջ մեջ ինչու է նա ավելի շատ որոնում ոչ թե ֆիզիկական, այլ հոգեկան բարձր հատկություններ։ «Պակասամիտ սիրունին ես մի դատարկ գաւ եմ ասում»[3], հայտարարում է նա և նույն ոգով խրատում.

Ով ճարելու կամք ունի նոր սիրեկան,
Թող չի խաբուի լեզուի ու գեղեցկութեան,
Հոգին ճանչի յետո սէր տայ նրան...[4]

Կնոջ գնահատման այս չափանիշը սերտորեն առնչվում է մեր աշուղների տարերային դեմոկրատական-լուսավորական հայացքների հետ։

XIX դարի առաջին կեսի աշուղները, իրենց նախորդների նման, հորինել են նաև երգիծական բանաստեղծություններ։ Դրանք մեծ մասամբ զավեշտական, ուրախ ոտանավորներ են, որոնցում հեղինակները նպատակ չեն ունեցել շոշափելու լուրջ սոցիալական հարցեր, այլ նկարագրելով իրենց հետ պատահած այս կամ այն կոնկրետ դեպքը, զվարճացրել են ունկնդիրներին։ Այդպիսիք են, օրինակ, Ազբար Ադամի «Փող եմ տուել, տուն չի գալիս չալ էծը»[5], Միսկին Բուրջու «Էս ձիուն փող տվողի խելք ու քյամալին ինչ ասեմ»[6] տողերով սկսվող ոտանավորները։

---

1 Տե՛ս Ոսկ. Հովհաննիսեանց, Նոր քնար Հայաստանի, տետր Բ, Մոսկվա, 1856, էջ 9—11։

2 Նույն տեղում, էջ 29։

3 Նույն տեղում, էջ 12։

4 Նույն տեղում, էջ 13։

5 Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, էջ 34։

6 Այս բանաստեղծությունը տպագրվել է Ս. Քամալյանցի «Միսկին Բուրջու առիթով» հոդվածում («Արձագանք», 1894, N 129)։ Գ. Ախվերդյանի «Հայ աշուղներում» այս ոտանավորը թյուրիմացաբար վերագրված է Գյուրջի Նավեին։

Սակայն մերթ ընդ մերթ այդ զավեշտական երգերի մեջ շոշափվում են նաև որոշ սոցիալական հարցեր, կատարվում մերկացումներ, գծվում ժամանակի մարդկանց երգիծական կերպարներ։ Շիրինի «Վանահայր սրբունոյ կուսին Շողակաթի վանիցն Յովհաննէս վարդապետ ճաշ պատրաստելով վասն միաբանից, գայս գովասանութիւն ընկալաւ ու ժամն 'ի 10 յունիսի, 1854 ամի, ի Վաղարշապատ»[1] և «Գեաֆ վերնոյն»[2] երգերում կան այնպիսի տողեր, որոնցում սուր ծաղրի են ենթարկում ժամանակի հոգևորականությունը, շեշտելով նրանց ծուլությունը, ագահությունը, որկրամոլությունը, ընչաքաղցությունն ու անբարոյականությունը։



Ոսկան Երևանցու կազմած «Երկասիրութիւնք ազգային երգչաց» ժողովածուի անվանաթերթը

Օրյեկտիվորեն կատարվող քննադատությունն ու մերկացումներն ավելի խիստ են այն ոտանավորներում, որոնց մեջ մեր աշուղները խոսում են առևտրաարհեստավորական միջավայրի մարդկանց արատների մասին։ Այսպես, օրինակ, Թիֆլիզ-Նարգիզն «Ինքդ մէ հախվէրմազ» տողով սկսվող բանաստեղծության մեջ[3], Շամչի Մելքոյին նմանվելով, խայտառակում է ոմն Փասոյի տղայի, որ ուրացել է իր ուխտ լիտր կորեկն ու տաս շահին։ Սա մի հայհոյախառն, զավեշտական երգ է, սակայն այստեղ տողամեջ աշուղն այնպիսի բաներ է ասում, որ փաստորեն ստեղծում է առ ու ծախի մեջ խաբթարվող մարդկային հարաբերությունների պատկերը։ Ահա թե ինչպես է բնութագրվում այդ Փասոյի տղան. «հեսաբեն փախչող», «գափող», «դզլող», «ուտող», «դիլանչի», «թալանչի», «մէ գրոշի համա մարդու կու խաշի» և այլն։ Բնութագիր, որ շատ է բնորոշ մի խանութպանի համար։

Զարկյարն իր «Ասացյալ ի վերա ագահ մարդո»[4] ոտանավորում ժողովրդական սրամիտ արտահայտություններով գծում է ագահ, ժլատ հա-

[1] Ոսկ. Տեր-Գևորգյան-Հովհաննիսյանց, Նոր բնար հայաստանի, տետր Բ, 1856, էջ 38—39։
[2] Նույն տեղում, տետր Ե, էջ 30—31։
[3] Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, էջ 466—468։
[4] Գ. Թարվերդյան, Հայ գուսաններ, էջ 166—167։

բուստի կերպարը և դրան հակադրում աշուղներին, որոնք, հակառակ իրենց աղքատությանը, սրտաբաց են ու առատաձեռն։

Նույն բնույթն ունեն նաև կենցաղային երգերը, որոնք հումորով գրված գրույցներ են։ Դրանք իրենց՝ աշուղների հետ պատահած մասնավոր դեպքերի նկարագրություններ են, ինչպես՝ Ազբար Ադամի «Ես չեմ ուզում էս թաւուր փիս մահուզը»[1], «Իմ այլուղն ով գողացաւ տանիցը»[2], «Բարձս քաշեց տարաւ, չիմացյա ով էր»[3] տողերով սկսվող և «Ասացեալ ի վերայ դողի ու էրոցք»[4] խորագիրը կրող բանաստեղծությունները, ինչպես նաև Շամչի Բալեի (XIX դարի I կես) «Գիշեր, ցերեկ անդադար խնդրեցի Աստուածանից» տողով սկսվող ոտանավորը[5], որն ուղղված է հարբեցողության դեմ։

Թվում է, թե այս երկերը կարող են նշանակություն ունենալ միայն որպես սոսկ տեղեկություններ մեր աշուղների կյանքի մանրամասնությունների մասին, սակայն դրանցում հեղինակներն անդրադարձել են նաև ժամանակի մարդկանց, հատկապես արհեստավորների կենցաղին, երբեմն շոշափելով սոցիալական հարցեր։ Այսպես օրինակ, Ազբար Ադամի վերը հիշված «Ես չեմ ուզում էս թաւուր փիս մահուզը» տողով սկսվող ոտանավորում փաստորեն մերկացվում է վաճառականության խաբեբայությունը.

Ինձ խաբել ա պարոն խեչօ եահուզը,
Մութ տեղր կտրեց, չիմացայ փուտր,
Աստուծով օրթում կերաւ, առեց սուտը... և այլն

Իսկ «Ասացեալ ի վերայ դողի և էրոցքի» երգում, Նաղաշ Հովնաթանի «Գովասանութիւն Երևանու քաղաքին» բանաստեղծությունը հիշեցնող տողերով, աշուղը գծում է Երևան քաղաքի պատկերը։

Բոլոր այս մոմենտների հանրագումարը երգիծական ու կենցաղային բանաստեղծություններին տալիս են գեղարվեստական ու ճանաչողական որոշակի արժեք։

Խոսելով XIX դարի առաջին կեսի աշուղական ստեղծագործությունների մասին, չի կարելի կանգ չառնել դրանց լեզվական ու պոետիկական մի քանի առանձնահատկությունների վրա։ Այս տեսակետից առաջին բանը, որ աչքի է ընկնում այդ բանաստեղծությունները կարդալիս, այն է, որ դրանց լեզուն նախորդ դարերի աշուղական երգերի լեզվի համեմատությամբ շատ ավելի մաքուր է, շատ ավելի հայերեն։ Այժմ արդեն սակավ են մի քանի լեզուներով երգեր հորինող աշուղները, իսկ երբ դրանցից մի քանիսը, ինչպես Միսկին Բուրջին, միևնույն բանաստեղծության տարբեր տողերը հորինում են տարբեր լեզուներով, ապա այդ միմիայն

[1] Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, էջ 12։
[2] Նույն տեղում, էջ 18։
[3] Նույն տեղում, էջ 9։
[4] Նույն տեղում, էջ 16—17։
[5] Գ. Լևոնյան, Հայ աշուղներ, Ալեքսանդրապոլ, 1892, էջ 72—73։

աշուղական արվեստի մեջ իրենց վարպետությունը, իրենց գիտելիքները ցույց տալու նպատակով։

Աստիճանաբար աշուղական բանաստեղծություններից անհետանում են թուրքերեն, պարսկերեն, արաբերեն բառերը։ Ճիշտ է, այժմ էլ տեղ-տեղ երևում են ռուսերեն բառեր, հատկապես Աստրախանի և Երևանի աշուղների ստեղծագործություններում, սակայն դրանք առանձին որակ չեն կազմում և մեծ մասամբ ռուսական պետականության օրենքների ու չինովնիկության հետ կապված բառեր են, որոնց համանիշները մեր աշուղները չեն գտել մայրենի լեզվում։

Հետևելով բանաստեղծության լեզվի մաքրությանը, աշուղներն աստիճանաբար ավելի ու ավելի շատ են օգտագործում գրավոր պոեզիայի բառապաշարը։ Որոշ աշուղների երգերում առատորեն երևում են այնպիսի բառեր, դարձվածքներ, ոճեր, որոնք չեն գալիս ժողովրդական պոեզիայից, ոչ էլ նախորդ դարերի աշուղների երգերից։ Դրանք կամ բոլորովին նոր երևույթների հետ կապված բառեր են, կամ այնպիսիք, որ մեր աշուղները սովորել են գրքերից։ Այս տեսակետից հետաքրքիր են աշուղ Մելիքսեթի, Քիմիայի, Նիրանու և, մանավանդ, Շիրինի բանաստեղծությունները։ Օրինակ Մելիքսեթն ասում է.

Մելիքսեթի սիրտը քցել ես վառող,
Էրվելով քեզանից կու մնամ կարոտ,
Ինձ նամակ գրելիս, գրիր համառոտ,
Կարճ ու զորեղ իլի, կես էջ եմ ուզում[1]։

Հասկանալի է, որ այստեղ «վառող», «համառոտ», «զորեղ», «էջ» բառերը գրքային «ծագում» ունեն։

Նիրանին գործ է ածում «մրուր», «նշտար», «տրտում», «արկանել», «բարբառել», «սաստկությամբ», «մորմոքել», «երկսայրի», «անձնիշխանություն», «բյուր» բառերը։ Իսկ Շիրինի երգերում նման և շատ ավելի խորթին (աշուղական պոեզիայի համար) գրքային բառերն ու ձևերը հաճախ որակ են կազմում, դրանցով նա ամբողջ ոտանավորներ է հորինում, այսպես օրինակ.

Արի իմ լույս անշամանդաղ Իսկուհի,
Շըքեղապանծ, գեղածիծաղ Իսկուհի,
Գեղեցկութեանդ բիւր ասաղ, Իսկուհի...

Կամ.

Ասում ես իմ ինչ լինելս քեզ չէ փոյթ,
Բայց ցավում եմ ամենալավ համբաւոյդ...[2] և այլն։

Այսպիսի բանաստեղծություններում աշուղականը փաստորեն մնում է լոկ տաղաչափությունը։

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ այս էպոխայի աշուղական պոեզիան հիրավի, սկսում է մոտենալ ժամանակի գրավոր պոեզիային,

---

1 «Սոխակ Հայաստանի», հատ. 3, էջ 152։

2 Ոսկ. Հովհաննիսյանց, Նոր քնար Հայաստանի, տետր Բ, էջ 30։

սակայն սա չի նշանակում, որ XIX դարի առաջին կեսի աշուղները դադարում են աշուղ լինելուց, դառնում են գրավոր պոեզիայի ներկայացուցիչներ, կամ իրենց երգերն անխտիր հորինում գրական հայերենով։ Ընդհակառակը, ինչպես և նախորդ դարերում, այժմ էլ մեր աշուղները հորինում են մեծ մասամբ բարբառներով, գործ են ածում աշուղական երգերի համար պարտադիր դարձած օտար բառեր ու արտահայտություններ, թեև անհամեմատ ավելի քիչ, քան իրենց նախորդները։ Կարևորն այստեղ աշուղական բանաստեղծության լեզվի զարգացման տենդենցն է, որն ինչպես վերը բերված օրինակներից է երևում, տանում է դեպի նոր գրական լեզուն, որի ամենամեծ նախանձախնդիրը Խ. Աբովյանը եղավ։



Սեյադի երգերի առաջին ժողովածուի անվանաթերթը

Ինչ վերաբերում է աշուղական ստեղծագործությունների պոետիկական առանձնահատկություններին, ապա պետք է ասել, որ այս տեսակետից առանձին տարբերություն չկա նախորդ դարերի և այս շրջանի աշուղների ստեղծագործությունների միջև։ Դարձյալ նույն տաղաչափությունն է, ստեղծագործական նույն օրենքներն ու սկզբունքները, նույն ձևերը, որոնք, ըստ երևույթին, միանգամայն բավարարել են մեր աշուղներին իրենց հույզերն ու մտքերը ունկնդիրներին հասցնելու գործում։

Պետք է ասել միայն, որ այժմ աշուղներն ավելի շատ մտահոգվելով իրենց երգերի գաղափարական բովանդակությամբ ու դաստիարակչական նշանակությամբ, երբեմն ավելի քիչ ուշադրություն են դարձնում բանաստեղծության պոետիկական կատարելության, պատկերավորության ու գեղեցկության վրա, երբեմն բավարարվում են իրենց գաղափարներին համապատասխան տաղաչափական ձև տալով ու ոտանավորների համար եղանակներ համարեցնելով (երբեմն նաև հորինելով)։ Բայց, համենայն դեպս, XIX դարի առաջին կեսի աշուղական պոեզիան հարուստ է բանաստեղծական այնպիսի պայծառ բռնկումներով, որպիսիք են Ակրար Ադամի, Միսկին Բուրջու, Շիրինի, Գյուրջի Նավեի, Նիրանու, Ջարկյարի, Սեյադի և մյուսների լավագույն ստեղծագործությունները։

* * *

Այսպիսով, XIX դարի առաջին կեսի աշուղական պոեզիայում իրենց արտացոլումն են գտել ժողովրդի կյանքի գրեթե բոլոր կողմերը, նրան հուզող հարցերն ու խնդիրները, հասարակական ու կենցաղային հարաբերությունները։ Այդ պոեզիան, իր գերակշիռ մասով, աշխարհիկ է, ժամանակի առաջավոր լուսավորական-դեմոկրատական գաղափարների գեղարվեստական արտահայտությունը։ Այս էլ հենց առանձնակի դեր ու տեղ է հատկացնում աշուղական արվեստին ժամանակի գրական պրոցեսի մեջ, մի բան, որ առաջինը նկատեց ու գնահատեց մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը։ Նա առաջին սրտալի խոսքն ասաց իր ժամանակաշրջանի աշուղների ստեղծագործության մասին, նա առաջինն էր, որ ժողովրդի սրտին ու մտքին մերձենալու, նրան հասկանալի ստեղծագործություններ տալու իմաստով արժեքավորեց աշուղական պոեզիան։

«Շատ անգամ տեսնում էի, որ մեյդանում, փողոցում մեկ քոռ աշըղի էնպես են հայիլ-մայիլ մնացել ու կանգնել ականջ դնում, փող բաշխում նրան, որ բերնըների ջուրը գնում էր։ Մեջլիս ու հարսանիք հո առանց սավանդարի ե՞րբ հաց կուլ կերթար։ Ասածները թուրքերեն էր, շատը մեկ բառ էլ ա չէր հասկանում, ամա լսողի, տեսնողի հոգին գնում էր դրախտը, ետ գալիս։ Միտք արի, միտք արի, մեկ օր էլ ասացի ինձ ու ինձ, արի քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալիր, դրաղ դիր ու մեկ աշըղ էլ դու դառ, ինչ կըլի-կըլի, խանչալիդ քարը հո վեր չի ընկնիլ, գառ վարաղդ հո չի գնալ։ Մեկ օր էլ դու վեր կընկնիս, մեկ ողորմի ասող էլ չես ունենալ»[1]։

1 Խ. Աբովյան, *Վերք Հայաստանի*, Երևան, 1955, էջ 8։

ՇԻՐԻՆ

Հայ աշուղական պոեզիայի պատմության մեջ Շիրինը գրավում է առանձնակի և պատվավոր տեղ։ Սայաթ-Նովայից հետո նա փաստորեն երկրորդ աշուղն էր, որ իր ստեղծագործական անհատականությամբ կարողացավ իշխել աշուղական պոեզիայի վրա՝ դառնալով նրա ականավոր դեմքերից մեկը։

Իր ոչ այնքան հարուստ, բայց մեծարժեք գրական ժառանգությամբ, վգացմունքների և պատկերների թարմությամբ, կյանքի և երևույթների խոր, փիլիսոփայական ըմբռնումներով Շիրինը մեծապես նպաստեց հայ աշուղական պոեզիայի հետագա առաջընթացին։

Լինելով XIX դարի առաջին կեսի աշուղական գրականության առաջամարտիկը, Շիրինն իր անվան հետ կապեց նաև Երևանի կամ Արարատյան աշուղական դպրոցի հիմնադրի պատիվը։

Այլալեզու և բարբառագիր աշուղական պոեզիան նա բարձրացրեց մայրենի գրական լեզվի մակարդակին և հող նախապատրաստեց հայ ազգային աշուղական դպրոցի հետագա ներկայացուցիչների համար։

1

Շիրինը (Հովհաննես Կարապետյան) ծնվել է 1827 թվականին Երևանի նահանգի Կողբ գյուղում։ Նրա հայրը՝ Մահտեսի Կարապետը հարևան Բլուր գյուղացի էր։ Այդտեղից էր նաև մայրը՝ Շահխաթունը։

Երկու տարեկան էլ չկար Հովհաննեսը, երբ հիվանդացավ «ծաղկով», որը և ունեցավ ողբերգական հետևանք. դժբախտ մանուկը կուրացավ։ Մայրը, անկարող լինելով երկար դիմանալ սիրելի զավակի դժբախտությանը, վախճանվեց։

«Այսպիսով, հենց այն հասակում, երբ երեխան շատ ավելի կարիք ուներ խնամքի և ոչնչով չփոխարինվող մայրական փաղաքշանքների, նա (Շիրինը —Ն. Գ.) դատապարտվում է դառն և միայնակ մանկության»[1]։

«Կույր, որբ, աղքատ՝ այս մանուկ աշըղ Շիրինը»։

Մանկան ծանր վիճակն ու ի բնե երաժշտական օժտվածությունն սկսում է լրջորեն մտահոգել Կարապետին։ Վերջինս, հաշվի առնելով իր հարազատների ու հայրենակիցների հորդորը, որոնք հիացած էին փոքրիկ

[1] М. Миансаровъ. „Фелистон" „Русский инвалид", 1857, № 28.

երեխայի ձայնական տվյալներով, որոշում է որդուն ուղարկել Ալեքսանդրապոլ՝ աշուղություն սովորելու։

Ութ կամ ինը տարեկան է լինում Հովհաննեսը (1835—36), երբ հայրը նրան տանում է Ալեքսանդրապոլ՝ հռչակված աշուղների քաղաքը։ Այստեղ, շուրջ երեք տարի Հովհաննեսը ուսանում է աշուղ Բաբայի (Բավեի) մոտ, հմտանում քյամանի նվագելու մեջ, որից հետո մեկնում է Էրզրում (Կարին)՝ կատարելագործվելու աշուղ Ասպի (Էսպի) էֆենդու մոտ։ Այս շրջանումն էլ, ըստ երևույթին, Հովհաննեսին շնորհվում է վարպետի կոչում, և տրվում «Շիրին» պատվանունը։

Հովհաննեսի աշուղական անվան հիմքում ընկած է հավանաբար նրա հրաշալի ձայն ունենալու հանգամանքը, որովհետև «շիրին» պարսկերեն նշանակում է՝ «քաղցր», «հաճելի»։ Տասներկու տարեկան հասակում Հովհաննեսը, որ արդեն Շիրին անունն էր կրում, իր վարպետ Ասպի էֆենդու հետ 1839 թվականին գնաց Թիֆլիս։ Այստեղ Շիրինն իրեն դրսևորեց որպես փորձված և հմուտ երգասաց։ Բայց նա Թիֆլիսում երկար չմնաց։ Վեց ամիս անց, երբ վախճանվեց նրա վարպետը, Շիրինը վերադարձավ Կողբ՝ հոր մոտ։ Վերջինիս գործերը հավանաբար բարվոք վիճակի մեջ չէին. հայր ու որդի վճռեցին ընդմիշտ թողնել իրենց պապենական օջախը և մշտական բնակության համար փոխադրվել Վաղարշապատ։ Այստեղ ևս Շիրինը անսպասելի ընդունելության արժանացավ։ Ամենուրեք տարածված համբավը հարգանքի ջերմ մթնոլորտ էր ստեղծել նրա շուրջը։ Սակայն վերին աստիճանի հետաքրքրասեր և աշխույժ պատանի լինելով, Շիրինը չէր կարող մի տեղում երկար մնալ։ Վաղարշապատ գալու հաջորդ տարին իսկ, նա դուրս է գալիս շրջագայությունների։ Այս անգամ նա լինում է արևելյան Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում, ծանոթանում իր ժողովրդի նիստ ու կացին, վայելում նրա հյուրընկալությունը։

Շրջագայություններից ստացած տպավորությունները ավելի են խորանում Էջմիածնում, ուր Շիրինն հնարավորություն է ունենում ծանոթանալու հայ հին մատենագրության և միջնադարյան պոեզիայի գանձերին։ Արևելյան աշուղական պոետիկայի նկատմամբ պաշտամունքի հասնող սերը աստիճանաբար տեղի է տալիս հայրենի եզերքի կարոտանքին։ Շիրինը՝ հայտնի աշուղագետ Գ. Ախվերդյանի և Մ. Բերոյանի խորհրդով, մայրենի լեզվով աշուղական երգեր հորինելու փորձեր է կատարում։ Այդ բանում նրան օգնում են նաև Էջմիածնի սինոդի անդամները, որոնք Շիրինի համար կարդում են հին ու նոր հայկական երգեր, ծանոթացնում մատենադարանի հնագույն ձեռագրերին։

Տաղանդավոր աշուղին ընդառաջ է նլնում նաև վարժապետ Սարգիս Փիլիպոսյանը, հանձն առնելով նրա երգերի գրառման դժվարին աշխատանքը։ Շիրինին իր հովանավորության տակ է առնում կաթողիկոս Ներսես Աշտարակեցին, որի մշտական և ցանկալի հյուրն էր նա։

Դատելով Շիրինի երգերի մեջ պահպանված կենսագրական որոշ տեղեկություններից, նա մասնակցել է այն ժամանակ տեղի ունեցած գրեթե բոլոր մեծ հանդեսներին, նստել, վեր է կացել մեծահարուստ աղաների

հետ։ Բայց անձնական այդ ծանոթությունն ամենևին չի խանգարել աշուղին արտահայտելու իր դժգոհությունը վերջիններիս դեմ։ Երիտասարդ Շիրինին է վերապահվել նաև իր ժամանակի աշուղների անվանակոչության (աշուղներին կոչում շնորհելու) իրավունքը։

Ի վերջո, Շիրինն իր գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործության հետ միասին ունեցել է մի կարևոր առավելություն ևս։ Դա նրա կատարողական անկրկնելի արվեստն է (իմպրովիզացիան), որի մասին ահա թե ինչ է պատմում Գ. Լևոնյանը.

Աշուղ Շիրին

«Շիրինը՝ այդ լեզվով ու բնությամբ շիրին (քաղցր) աշուղը՝ մի կրակ էր երաժշտության մեջ, մի կատաղի կրքոտ ու բորբոքվող նվագածու։ Նա կույր էր։ Արտաքին աշխարհը փակ էր նրա համար, իսկ ներքինը մեծ հրդեհով վառվում էր. նա ուզում էր իր բոլոր վիշտը, դայրույթը, բողոքը ասել՝ այդ անարդար ու անկատար գործերի վրա արտահայտել։ Թող խոսեն ականատեսները. մենք լսենք։ Օրական մի քանի անգամ կտրատում էր նա սազի սիմերը ու ամեն ժամանակ այնքան ոգևորվում էր, այնքան բարձր էքստազի մեջ ընկնում, որ նստած տեղը (հատակին, ծալապատիկ) օրորվելով, ցնցվելով առաջ էր գնում մի քանի քայլաչափ։ Ներկա եղող բարեկամները խառնում էին նրան, զրկախառնվելով բերում տեղը նստեցնում, որ դարձյալ կրկնվում էր նույն բանը»[1]։

50-ական թվականներին Շիրինը կրկին մեկնում է շրջագայությունների։ Այս անգամ նա լինում է Շուշի, Շամախի, Թիֆլիս, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ քաղաքներում և այլուր։

Շամախիում նա հանդիպում է հայտնի բողոքական Սարգիս Համբարձումյանին, որը աշուղի մեջ գտնելով իր վաղուց փնտրած պրոպա-

[1] Գ. Լևոնյան, Աշուղների մասին, «Ազգագրական հանդես», 1903, գիրք X, էջ 55։

գանդիստը, համոզում է նրան մտնել իր համախոհների կարգը»[1]։ Շիրինը, ի հեճուկս մոլեռանդ բողոքականի, հավատարիմ է մնում իր հավատին ու համոզմունքներին, արտահայտելով նույնը նաև, ինչպես կտեսնենք, իր ստեղծագործության մեջ։

Նոր Բայազետում Շիրինն ընդունվում է առանձնակի ջերմությամբ։ Նրա գալուստը զուգադիպում է այդ քաղաքի «շնորհարուխ գիտելյաց վարժարանի» բացման արարողությանը։ Այդ վարժարանն իր ծախսով կառուցել էր հին բայազետցի աղա Բարսեղ Արծրունին, որի մասին, ինչպես գիտենք, մեծագույն հիացմունքով է արտահայտվել նաև Խ. Աբովյանը, անվանելով նրան՝ «հոյակապ իշխան»։ Այս առթիվ Շիրինը հորինում է մի ընդարձակ ոտանավոր և սազի նվագակցությամբ երգում վարժարանի բացման հանդեսին։

1853 թվականի ամռանը Շիրինը լինում է Թիֆլիսում և Ալեքսանդրապոլում։ Թիֆլիսում նա հյուրընկալվում է իր նախածանոթ և բարեկամ Գ. Ախվերդյանի մոտ, նրա տրամադրության տակ դնում իր հայերեն երգերը։ Իսկ Ալեքսանդրապոլում, աշուղ Սեյադի (Պետրոս Մաղաթյան) վկայությամբ, Շիրինն ընդունվում է առավել ջերմությամբ։ Աշուղասեր ալեքսանդրապոլցիները բացառիկ ընդունելություն են կազմակերպում և երկու ամսից ավելի պահում նրան իրենց մոտ։ Երկարատև շրջագայությունից հետո, Շիրինն աշնան վերջերին հազիվ վերադառնում է Էջմիածին։ Այստեղ նրա դրությունը գնալով ավելի է ծանրանում։ Անապահով վիճակն ու դժվարին աշխատանքը, որ երբեմն ուղեկցվում էր կույր մարդուն սպասվող անակնկալներով, ի վերջո քայքայում են առանց այն էլ թույլ նրա առողջությունը։

Եվ դեռ չբոլորած իր կյանքի երրորդ տասնամյակը, Շիրինը զոհ է գնում (1857) անդարմանալի մի հիվանդության (հավանաբար թոքախտ), որ նրան բաժին էր հանել աշուղի թափառաշրջիկ և չարքաշ կյանքը։

Շիրինի երգերի անդրանիկ տպագրության պատիվը պատկանում է «Արարատ» շաբաթաթերթի խմբագիր Գ. Պատկանյանին, որն իր թերթի 1850 թվականի № 4 և 9-ում տպագրել է Շիրինի երկու երգերը։ Ապա Շիրինի անձնավորությամբ և ստեղծագործությամբ հետաքրքրվել է Սայաթ-Նովայի երգերի հռչակավոր հրատարակիչ, բժիշկ Գ. Ախվերդյանը, որի անունով հետագայում՝ 1903 թվականին հրատարակված աշուղական երգերի ժողովածուում տպագրվել է Շիրինի երգերի մի մասը։

Ժամանակագրական կարգով երրորդ մարդը, որ զբաղվել է Շիրինով՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի հայոց լեզվի ուսուցիչ Ոսկ. Հովհաննիսյանն էր, որի՝ «Նոր քնար Հայաստանի» հանրահայտ 7 տետրերը ամփոփում են զանազան հայ աշուղների երգեր։ Այդ տետրերից երկրորդը, որը լույս տեսավ 1856 թվականին, նվիրված է բացառապես Շիրինի ստեղ-

1 Գ. Լևոնյան, Մանր բուրժուական աշուղական հոսանք, Հայ գրականության պատմություն, հատ. 2, 1933, էջ 103։

ծագործությանը[1]։ Շիրինի երգերից մի քանիսը տպագրվել են նաև նույն ժողովածուի «Ե» և «Է» տետրերում։

1857 թվականին Շիրինին անդրադարձավ Մ. Միանսարյանը։ Ըստ արժանվույն գնահատելով երևանցի բանահավաքի աշխատանքը, Մ. Միանսարյանը 1857 թվականի փետրվարի 2-ին «Русский инвалид» *օրաթերթի № 28-ում տպագրում է մի գրախոսական, որի մեջ, ի լրումն՝ Ազբար Ադամ, Շիրին և Նիրանի հայ աշուղների մասին բանահավաքի տված տեղեկությունների, կցում է լրացուցիչ կենսագրական ծանոթություններ։ Իսկ ավելի ուշ՝ 1868 թվականին, նա իր խմբագրած «Քնար հայկականում» տպագրում է Շիրինի 9 երգերը՝ նույն կենսագրական տեղեկություններով։*

Ավելի մանրամասն, և փոքր-ինչ հիմնավոր, Շիրինի կյանքով և ստեղծագործությամբ զբաղվել է բազմավաստակ աշուղագետ Գ. Լևոնյանը։ 1892 թվականին հրատարակած «Հայ աշուղներ» անդրանիկ ժողովածուի, «Ազգագրական հանդեսի» 1904—1906 թվականների՝ № 10—13 համարներում՝ «Աշուղների մասին» և այլ ուսումնասիրությունների մեջ Գ. Լևոնյանը վերլուծել է Շիրինի արվեստն ու ստեղծագործությունը, անդրադարձել նրա կյանքի ու կենսագրության մանրամասներին։ Շիրինի մասին գրել և զանազան առիթներով արտահայտվել են Ղ. Աղայանը, Մ. Աբեղյանը, Կ. Կոստանյանը, Թ. Ազատյանը, Ս. Քամալյանը, Ե. Ադամյանը, Մ. Աղայանը, Գ. Թարվերդյանը և շատ ուրիշներ։ Շիրինի երգերը բազմիցս տպագրվել և արժեքավորվել են սովետական շրջանում, հաղորդվել ռադիոյով, պատշաճ տեղ գրավել գեղարվեստական խմբերի խաղացանկերում։

2

Միանգամայն ինքնատիպ և հետաքրքրական հեղինակ է Շիրինը։ Տրադիցիայի հարկադրանքով աշուղագիտությունը նրան դրել է նոր ժամանակների մեր հարյուրավոր աշուղների կողքին, որպես նրանց համահավասար կամ, լավագույն դեպքում, նրանց մի մասից հազիվ բարձր կանգնած ստեղծագործող։ Որոշ աշուղագետներ էլ (Գ. Լևոնյան) անդրադառնալով Շիրինի պոետական արվեստի առանձնահատկությունների հարցին, ոչ միայն թույլատրելի են համարել համեմատություն անցկացնել նրա և Սայաթ-Նովայի երգերի միջև, այլև նախապատվությունը վերապահել են առաջինին[2]։ Դժվար չէ նկատել, որ այստեղ՝ առաջին դեպքում, սխալը ավանդաբար ժառանգված ղոգմայի մեջ է, իսկ երկրորդ դեպքում՝ Շիրինի ստեղծագործության հանիրավի գերագնահատության։

Նրա ստեղծագործության նախնական ծանոթությունն իսկ ցույց է տալիս, որ հսկայական տարբերություն կա հայ աշուղական դրականու-

---

1 *«Զանազան երգք պարոն Հովհաննէսի Կարապետեան աշըգ Շիրին մականւանելոյ», ի լոյս ընծաեաց Ոսկան Հովհաննիսեան երեւանցի, Մոսկվա, 1856։*

2 Գ. Լևոնյան, *Աշուղների մասին, «Ազգագրական հանդես», 1903, գիրք X, էջ 79—80։*

թյան համար ընդհանուր դարձած տրադիցիաների և Շիրինի պոետական արվեստի միջև։ Տարբերություն ոչ միայն թեմատիկ ընդգրկման կամ գաղափարական իմաստով, այլև գեղարվեստական արտահայտչական միջոցների օգտագործման և ոճի տեսակետից։ Եթե նախորդ և իր ժամանակի հայ աշուղների ստեղծագործության համար բնորոշ է բնության և մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ամենաընդհանուր, աղոտ պատկերացումը, որը ենթադրում է, ուրեմն, նաև նրանց նաիվ, մակերեսային վերարտադրություն[1], ապա Շիրինի համար բնորոշ է հասարակական կյանքի և բնության երևույթների խորիմացությունը։ Այնտեղ, ուր երբեմն խարխափում էին նախորդները, Շիրինն անկաշկանդ թևածում էր։

Անհավասիկ աշուղական գրականության մեջ ամենից շատ ծեծված՝ կյանքի և մահվան կամ աշխարհի ունայնության թեման։ Չունենք մի աշուղ իսկ, որ այս կամ այն կերպ գայթակղված չլինի այդ թեմայով, որովհետև դա բավական հետաքրքրական և ինքնըստինքյան փիլիսոփայական պրոբլեմ է։ Մինչև իսկ մի ժամանակ այդ թեմայով գրած երգերն են համար դիտվել աշուղների բանիմացությունը չափելու համար։ Եվ ահա մեր աշուղները հարյուրավոր երգեր են հորինել այդ թեմայով, որոնց մեջ նրանք մարդկային կյանքը դիտել են որպես «անցավոր երազ» և մարդու միտքն ու հոգին մթագնել աշխարհի ունայնության գաղափարներով։ Մի կողմից նրանք ապատիկ ինքնամոռացությամբ ստվածավախություն են քարոզել՝ աշխարհն համարելով «տիրոջ» պարգևը (Նոր Ջուղայի դպրոց), իսկ մյուս կողմից՝ լավատեղյակ հավատի հանգամանքներին՝ դիմադարձ են կանգնել աշխարհի արարչագործությանն անգամ (Արարատյան դպրոցի որոշ ներկայացուցիչներ)։ Բոլոր դեպքերում էլ, սակայն, ակնհայտ է այն նաիվ հայեցողությունը, որ ընդհանուր է անցյալի մեր շատ աշուղների համար, մտքի այն ծանծաղուտը, որով, ոչ այնքան էլ վարպետորեն, շղարշված են նրանց երգերը։

Ի՞նչ են ասում մեր աշուղներն, օրինակ, աշխարհային և հանդերձյալ կյանքի, մահվան, աշխարհի չարի ու բարվո մասին։ Աշխարհը, որ այս դեպքում նույնանում է կյանք հասկացողության հետ, անցողիկ է, ունայն։ Յուրաքանչյուր մարդ պետք է ձգտի բարի անուն թողնել, «մեղաց» ճանապարհից հեռու լինել, որ, ինչպես ժողովուրդն է ասում՝ «հոգին արքայության փայ դառնա»։ Այս հայացքը, ինչպես պետք էր ենթադրել, գալիս է հնից և ունի քրիստոնեական իմաստասիրության որոշակի երանգ։

Աշուղներն այսպիսով փաստորեն ոչինչ չեն ավելացնում ժողովրդից փոխ առած մտքերի վրա, միայն որոշ ձև ու կերպարանք են տալիս դրանց։ Իսկ այն, որ աշուղները խարազանում են հարուստներին, ծաղրում՝ ժլատ և ապիկար փարիսեցիներին, աշխարհային կյանքը «երազ» կամ «տնազ» համարում, այդպիսի դեպքերում և նրանց մտքի թռիչքը բնավ չի գերազանցում ժողովրդականին։ Մինչդեռ իսկական մեծ արվեստագետը (խոս-

---

[1] *Այստեղ, իհարկե, Սայաթ-Նովան նկատի չի առնված։*

քը պրոֆեսիոնալի մասին է) ստեղծագործորեն վերամշակում և զարգացնում է ժողովրդական իմաստությունը՝ առավել վառ և արտահայտիչ դարձնելով այն։ Այդպիսին էր հենց Շիրինը։ Նա մեր աշուղների մեջ այն հազվագյուտ բացառություններից էր, որ կարողացավ իր ինքնուրույն խոսքն ասել։

Վերցնենք օրինակ նույն այդ մահու և կենաց պրոբլեմը։

Ամենայն մարդ մահկանացու է։ Մահվան գերանդին հնձում է թե ահելին, թե ջահելին։ Մահը նույն կերպ էլ խտրություն չի դնում հարուստի և աղքատի միջև.

Հարյուր միլիոն փող ունենամ,
Մահս եկավ՝ թողնեմ կերթամ... (Մահուբի Գևորգ)

Ահա մոտավորապես այսպիսին է եղել մեր աշուղների հայացքը կենաց և մահու մասին։ Երբեմն մեկ կամ երկու բառ ավելացնելով կամ փոփոխելով, նրանք այսպես կրկնել են միմյանց՝ սերնդե-սերունդ։ Շիրինն էլ այդ թեմայով մի քանի երգեր ունի հորինած, որոնցից յուրաքանչյուրն իր մասին խոսել է պարտադրում։ Ահավասիկ դրանցից մեկը, որ կոչվում է՝ «Դիվանի ղազել ի վերա մահվան»։ Խորհրդածելով մահվան առեղծվածի շուրջը, Շիրինն ընթերցողին համակում է ոչ թե մահվան երկյուղի անդիմադրելիության, այլ նրա դեմ պայքարելու գաղափարով։ Այլ կերպ ասած՝ նա մահվան գաղափարի միջից պոկում է պասիվ հոռետեսության ծիլը և նրա տեղը ցանում առողջ օպտիմիզմի սերմեր։ Եվ այդ նա անում է ո՛չ թե մահվան օբյեկտիվ գոյությունը ժխտելու միջոցով, մի բան, որ կարող էր դոնկիխոտություն կարծվել, այլ պարզապես բարոյական և ֆիզիկական մահվան գաղափարի հակադրությամբ։ Շիրինը գտնում է, որ վերջ ի վերջո վճռականը ֆիզիկական մահը չէ։ Եվ թեև «Մահն Ադամեն մինչև այսօր մեր կենաց հետ կռվում է», բայց երբեք էլ պետք չէ մահից սարսափել։ Մահվան նկատմամբ ունեցած միստիկական երկյուղածությանը, որ առկա է միջնադարյան մեր տաղերգուներից մեծ մասի ստեղծագործության մեջ, հետագայում (XVII—XVIII դարեր) հակադրվեցին սիրո, գինու և ուրախության երգիչների օպտիմիստական տրամադրությունները։ Նրանք սեր ու սովդի, սուփրա ու սեղանի գովքով էին արբեցնում մահվան երկյուղով համակվածներին, և գինու շիթով ցողում հեղձկությամբ լցված մթնոլորտը։ Բայց դա մահվան դեմ և հանուն աշխարհիկ կյանքի մղած պասիվ պայքար է։ Շիրինը առաջ է քաշում «մահեն երբեք չդողալու» գաղափարը, որը նույնն է, թե պայքարի կոչ է անում մահվան դեմ։

Ուրեմն, ով մարդ, մի մնալ անզեն, անարի մահվան համար։

Ինչպես վերը նշվեց, Շիրինը որոշակի տարբերություն է տեսնում ֆիզիկական և բարոյական մահվան միջև։ Մի բան, որ ինքնին խոսում է նրա աշխարհհայացքի ողջախոհության մասին։ Բայց դա հարցի մի կողմն է։ Կարևորն այն է, որ նա «անարատ և արդար» մահը («մահ իմացյալ»),

հակադրում է այսպես ասած «խավարի» մահվանը («մահ ոչ իմացյալ») և նախապատվությունը տալիս առաջինին.

Աշխատե, որ սիրտ չունենաս խավարի մահվան համար։

Հեղինակի գաղափարական կոնցեպցիան ի վերջո ծլարձակել է մի շյուղ ևս, որը խիստ համահնչուն է ոտանավորի ընդհանուր բովանդակությանը։ Դա մահվան առիթով մահկանացուի հասցեին ուղղված գորովալի մի մաղթանք է՝ ցողված հումանիստական սիրազեղումներով.

Քեզ էլ միտ բեր երբ որ ցավիս օտարի մահվան համար։

Բայց կյանքի և մահվան պրոբլեմի փիլիսոփայական էությունն ըմբռնելու տեսակետից բացառիկ դիպուկ օրինակ է Շիրինի մի այլ մուխամմազի, հուշակավոր՝ «Երբ ծնանք, էն րոպեն մեզ մահի մոտ գրավ դրինք» արտահայտությունը, որը կարծես թե, ինչ-որ չափով, հիշեցնում է Հ. Թումանյանի՝ ժողովրդականից փոխ առած հուշակավոր աֆորիզմը։ Իսկույն զգացվում է, որ այդ տողի հեղինակը սովորական աշուղ չէ. որովհետև մի բան է, երբ ասում ենք՝ մարդը մահկանացու է կամ թեկուզ՝ մահը մերն է, մենք՝ մահինը և բոլորովին այլ բան, երբ Շիրինը խոսում է ծննդի րոպեից մահվան մոտ գրավ դրված լինելու մասին։ Այստեղ թանձրացվել և ծայրահեղ դիպուկությամբ են օգտագործվել գույները, իսկ միտքը, որը ինքնատիպ մի հղացում է, նույնպես ցուցադրվել է զարմանալի հակիրճությամբ։

* * *

Շիրինը կյանքն ընկալում էր արտասովոր զգայնությամբ, անհուն կիրք և եռանդ հաղորդում աշուղի իր համեստ մասնագիտությանը, սրտի թրթիռով ընդունում իր հասցեին ուղղված ամեն մի հաճոյախոսություն։ Չլինելով բնավ ինքնամեծար, Շիրինը գիտեր իր արժանիքները չափել հանդիսականների մեծաձայն գովեստներով։

Զգայուն է կույրը, բայց և անհաղորդ արտաքին աշխարհին։ Ներփակված իր անձի մեջ և զրկված աշխարհիկ վայելչություններից, Շիրինը կարծես հաշտվել էր միակողմանի իր պասիվ աշխարհազգացողությանը և գտել կյանքն ու մարդկանց ճանաչելու յուրահատուկ ձևեր։ Ահա թե ինչու նրան բաժին ընկած ֆիզիկական ծանր հարվածն անգամ անկարող եղավ վարագույր ձգել իր և շրջապատող աշխարհի միջև։ Եվ Շիրինը մնաց նույն առողջ ու բանական մարդը՝ կորեղ մտքով, արտահայտություններում ժլատ, զգացմունքների մեջ շռայլ։ Շիրինը համակ զգացում էր, աշխարհիկ վայելչությունների սիրահար, կարոտակեզ հոգիների գովերգու։ Աշխարհիկ կյանքը նրա համար կարծես զուրկ էր նյութականությունից, իսկ մարդկային հոգսն ու ցավը, առօրյան՝ անդառնալիորեն գոցված մի դիրք։ Եվ ահա մեր աչքերի առաջ է դժբախտ հանդամանքների զոհը, բախտի չարությամբ խոշտանգված, ցավալիորեն թախծոտ, բայց և միևնույն պահին, ճակատագրի զարմանալի համակերպությամբ, տխրատես ու

բարեպաշտ արտաքինի մեջ, ներքին կրակով այրվում, աչքը փակ, հոգին անվերջորեն կայտառ, սիրտը զեղումներից ալեկոծ... Ահա թե ինչով, վերջ ի վերջո, պետք է բացատրել հայացքների այն տարբերությունը, որ ընկած է Շիրինի որոշ երգերի մեջ արտահայտված գաղափարախոսության հիմքում։ Մի կողմից մահու և կենաց մասին աստվածավախությամբ շպարված փքուռույց բարբաջանք՝ անկախ իր վերը հիշված ռացիոնալ հատիկի, իսկ մյուս կողմից այնքան վսեմ հայացք մարդու էության պայծառացնող աշխարհիկ վայելչությունների մասին։

3

Շիրինի կյանքի և ստեղծագործության առանցքը սերն է։

Սիրո մեջ կյանք եմ տեսնում, իսկ ի մեղս՝ վիշտ ու մահը—խոստովանում է սիրատոչոր աշուղը։ Նույն կրքոտությամբ էլ նա ծառանում է աշխարհիկ կյանքի հոռետեսական ըմբռնման դեմ և փառաբանում իսկական սիրո գաղափարը։

Ինչ մարդ սրտով սիրած սիրական չունի,
Կենդանության հետը նա երբեք բան չունի։

Այս կերպ Շիրինը որոշակի սահմանագծում է սիրո փիլիսոփայության իր ըմբռնումը, որը, ի դեպ, իր որոշ կողմերով նորություն էր հայ աշուղական գրականության մեջ։ Հայտնի է, որ Շիրինից առաջ ապրած և ստեղծագործած մեր մի շարք աշուղներ սիրո խնդրին մոտենում էին ոչ այնքան լրջությամբ, անպատշաճ, իսկ երբեմն էլ գռեհիկ արտահայտություններ թույլ տալիս սիրային երգերի մեջ (Նոր Ջուղայի դպրոց)։ Այդ նույն բանը կարելի է նկատել նաև Շիրինի ժամանակակից մի շարք աշուղների մոտ։ Իսկ Շիրինն, ընդհակառակը, անսահման քնքշանքով և նազելիությամբ է գծում իր սիրած էակի դիմանկարը։

Հոգի ջան, նոր բաց էլած վարդ մանուշակ ես ինձ համար,
Ձեմ ուզիլ լույսն արևու, դուն արեգակ ես ինձ համար,
Անմահական ջուրերով լեցուն բաժակ ես ինձ համար,
Պատվական մարգարիտով կազմած պսակ ես ինձ համար,
Դու Չինաստանու եկած թանկադին ակ ես ինձ համար,
Բաց ի քեն բաժին չունիմ, այլ դու մենակ ես ինձ համար։

Ավելին, Շիրինն հաճախ այնքան է հափշտակվում իր սիրուհու արտաքին բարեմասնությունների նկարագրությամբ, որ անխուսափելիորեն հանգում է աշուղական դրականության մեջ այնքան լայն տարածում գտած համեմատության հիպերբոլիկ մեթոդին, որը և, ցավոք սրտի, նրա ոճին հաղորդում է որոշ դժգունություն։

Մեկ րոպե տեսնողդ, հարյուր տարի կյանք կունենա,
Մեռձ ի մահ ընի էլած, կենդանության ջանք կունենա,
Քեզ տեսնողն իրան ժամանակեն թանկ կունենա,
Գովացողդ քեզանից մինչ այսքան հրամանք կունենա,
Որ ասի. բախտով կուր եմ, դուն աշտանակ ես ինձ համար։

Իսկ երբ հիպերբոլիկ համեմատության այդ նույն եղանակը կառուցվում է ժամանակի և տարածության հաշվարկներով, իսպառ անհետանում է արտահայտության քնարականությունը և նրա տեղը բռնում աշուղության արհեստի պրոզան։

Չեմ տեսած, չեմ իմացած գեղեցկանման քեզի պես,
Կարծում եմ գեռ չի ծնած բոլոր Վրաստան քեզի պես,
Ո՛չ Հայաստանումը կա և ո՛չ Ռուսաստան քեզի պես,
Մինչ եդեմն էլ չի եկած հոտով բուրաստան քեզի պես,
Վերջապես զարմանալի մին օրինակ ես ինձ համար։

Էլ չենք խոսում այս հնգատողի վերջին «ամփոփիչ» տողի մասին, որպիսին աշուղական պոեզիայում, ինչպես և Շիրինի ստեղծագործության մեջ, թեև ընդունված, բայց բավական ճապաղ արտահայտչաձևերից է։

Շիրինն, իհարկե, չի բավականանում լոկ իր սիրուհու հազվագյուտ գեղեցկությունն ու մարդկային բարեմասնությունները թվարկելով, իսկ դա մի՞թե կարող էր որևէ բանով անսովոր լինել։ Շիրինին պետք էր գույների ավելի վառ, որոշ իմաստով նույնիսկ արտառոց համադրություն, մի բան, որին միշտ էլ ձգտել են մեր բոլոր աշուղները։ Եվ ահա Շիրինի սրտի սիրեցյալը մեզ պատկերանում է որպես՝ Թագուհի լուսին ու աստղաց բարեկամ, կար ու ձև հարմարող նրբին և շնորհաբուխ մատներ ունեցող, սոխակի նման քաղցրալեզու, սիրամարգակերպ, մինչև իսկ՝ «բավականին լեզվագետ» ու «քաղաքական մաքերով զարմանալի հեղինակ», «եվրոպական կանոնով ստոլ սեղան, զարդարող», այլ կերպ ասած «միանգամայն զարմանալի և արարչարար պատկեր» ունեցող մեկը, որ կես տերության արժեք ունեցող և ծովի հատակից հանված մարգարիտ է կարծես։ Ահա թե ինչու է, սիրո հեզ տանջանքից հազիվ կայտառացած երգիչը, բացականչում.

Չինաստան մեծ աշխարհը ունքերիդ գին պետք է տամ,
Թարթափներով երկսայրի սուր, աչքերով հոգեհան ես։

Մի այլ երգի մեջ Շիրինն իր սիրուհուն համարում է գեղեցկության արքա, համեմատում բարելից ու նորատունկ անտառի, Աշտիշատի, Փարիզի և նույնիսկ փոխարքայի պարտեզի հետ։ Այս կարգի համեմատությունները իհարկե որոշակի ճապաղություն են հաղորդում աշուղի ոճին, պոկելով նրանից արտահայտչականության նրբագեղությունը։ Բայց դրանց կողքին այնպիսի երգեր էլ կան, որոնք անվերապահորեն հավաստում են Շիրինի պոետական նուրբ զգացողությունը, ցուցադրում նրա խոսքի մեծ կուլտուրան։

Աշուղական երգին հատուկ տաղտկալի միօրինակության փոխարեն այդ երգերում իշխում է թեմատիկ և կոմպոզիցիոն բազմազանությունը, տողի և տների կառուցման նուրբ արխիտեկտոնիկան։

«Սիրելիս, սերդ ինձ ամեն ցավի հյուր չդարձրե՞ց», «Հոգյակ, բախտիս պես ցրված հույսերիդ մեջն եմ ես», «Կյանք առնող են սիրելիս, քո

այդ խումար աչքերը» և մի շարք այլ երգերի մեջ Շիրինը հասավ աշուղական պոեզիայի համար նկատելի բարձրության՝ երգը կառուցելով պատկերավոր մտածողության սկզբունքներով։ Եվ որքան էլ բազմազան են այդ երգերը նյութի ընդգրկման տեսակետից (անկեղծ և անդավաճան սիրո երդում, կարոտի կամ անջատման մորմոք, հավատարմության շռայլ խոստովանություն), այնուամենայնիվ, Շիրինի սիրային երգերի ոճը ընդհանուր առմամբ մնում է նկարագրական։

Բայց խիստ ինքնանպատակ, հետևաբար և շատ քիչ բանով հետաքրքրական կարող էին լինել Շիրինի սիրային երգերը, եթե նրանց մեջ պատկերանար միմիայն իր սիրուհու շնորհներով հրապուրված աշուղը։ Շիրինի սիրային երգերի մեջ որոշակիորեն արտացոլվել է հեղինակի բարձր գաղափարախոսությունը, որը զուրկ չէ պատմա-հասարակական կոնկրետ նշանակությունից։

Շիրինը որոշակի տարբերություն է դնում համեստ ու առաքինի և «որը հարյուրի մոտ կաքավող», «ոչ բարվո և ոչ կատարյալ սիրո ծարավ» գեղեցիկի միջև։

Խոսելով «հանճարեղության ոգին զվարճությունեն վեր սիրող» կնոջ մասին, Շիրինն այնուհետև նկատում է, որ բարձր բարոյականության տեր կինը, բոլոր դեպքերում էլ, նախընտրելի է «սեգ, ամբարտավան, գոռոզ գեղեցկից»։ Ուստի Շիրինը որքան անզիջում է իրենց վարք ու բարքը սակարկող և պատշաճության շենք ու շնորհքը կորցրած գեղեցկուհիների, նույնքան գորովագութ և զգայուն է «անբիծ կաթով սնված» պարկեշտ կանանց նկատմամբ։

Սիրային երգերից մեկի մեջ («Առ սիրելին») Շիրինը դրվատում է ազնիվ և հանդարտ բնություն ունեցող և հարազատ ազգից (իմա՝ ցեղ, տոհմ) ծնված իր սիրուհուն, չմոռանալով, ինարկե, ապսպրել, որ նա զգույշ մնա վատաբերան իր գեշ հարևաններից, որոնք կարող են չարախոսությամբ արատավորել նրա անբիծ անունը։

Իսկ մի այլ՝ կենսագրական տվյալներ պարունակող երգի մեջ («Սիրահար, իմ աչքերս միշտ լալագին տեսնելու ես») Շիրինը դիմում է երդումին և ինքնախարազանմանը՝ ցույց տալու համար իր սիրո հավատարմությունը.

Ես Շիրինս բեզեն ավելի թե սիրեկան ունենամ,
Բարի վիճակ չճարեմ, ստոր ատրճան ունենամ։

Շիրինի երգած սերն ունի որոշակի սոցիալ-հասարակական հիմունք՝ խարսխված միանգամայն լուսավոր ու առաջադեմ հայեցակետի վրա։ Նա դրվատում է չափավոր ու անսեթևեթ կյանք վարող կանանց, որոնք ոչ միայն գոհ են իրենց վիճակից և բարձրության ձգտում չունեն, այլև զերծ են քաղքենիության աղետից, «աղքատության միջոցին տրտմիլ-նեղանալ չունեն».

Խնդրում եմ այսուհետև համարձակ ման գալ չունենաս,
Անմտին, աննամուսին երբեք մտիկ տալ չունենաս,
Խորամանկ քաղցրաբանին խորհուրդ տալու հալ չունենաս,
Անվայել բարեկամի տուները երթալ չունենաս,
Քո փիճակեն գոհանաս, բարձրության ցանկալ չունենաս,
Աղքատության միջոցին տրտմիլ-նեղանալ չունենաս,
Ինձ լսես, չես ունենալ ստոր աստիճան, սիրելի։

Լեզվաոճական հնարների բազմազանությունն ու աշուղական արվեստի տեխնիկայի փայլուն իմացությունը Շիրինի երգերին հաղորդել են պոետական որոշակի հրապույր։

Մարդու հոգին ամոքող ինչպիսի՜ նվիրական թախիծ կա, օրինակ, անհուն կարոտի այս հուսահատ կանչերի մեջ.

Իմ ստվերից դու անանջատ, ոսկի արև, չերթաս, ե՛կ,
Նարգիզի բույր, հասմիկի փունջ նրբատերև, չերթաս, ե՛կ,
Արյուն-արցունք ես կթափեմ, ինչպես անձրև, չերթաս, ե՛կ,
Արցունքիցս կակաչի պես հողն է կարմրել, չերթաս, ե՛կ։

Շիրինի երգերին աշուղական կերպարանք տվողն առաջին հերթին աշուղական արվեստի նորմատիվ սկզբունքներն են, այսինքն երգի տների կազմությունն ու հանգերի դասավորությունը կամ ինչպես Մ. Նալբանդյանը կասեր «երգերի կազմակերպությունքը... հիմնած միմիայն ոտքերի և վերջերի նույնահանգության վերա»[1]։ Այնպես որ, սխալ է այն կարծիքը, թե «աշուղներն ունեն իրենց հատուկ տաղաչափական արվեստը՝ բազմազան հարուստ ձևերով տոնիկական շեշտադրությամբ» (Գ. Լեոնյան)։

Իրավացի էր Մ. Աբեղյանը, երբ գրում էր. «Աշուղական արվեստը տաղաչափական տեսակետից լեզվական ռիթմի նկատմամբ, մեր ոտանավորի մեջ ամենից անկատարն է[2]։ Ուրեմն աշուղական ոտանավորի բազմազանություն ասելով պետք է հասկանալ երգի տների և հանգերի դասավորությունը, որը բոլոր դեպքերում պարտադրորեն կիրառում է նույնիսկ յուրաքանչյուր շարքային աշուղ։ Ընդ որում, այդ սկզբունքները բնորոշ են միմիայն աշուղական երգին և բնավ գործադրելի չեն պրոֆեսիոնալ պոեզիայում։

Արդ, ո՞րոնք են այդ սկզբունքները։

Ամենից առաջ այն, որ յուրաքանչյուր երգ տաղաչափորեն պետք է համապատասխանի իր եղանակին։

Եթե երգն ունի դիցուկ 11 վանկ, անկախ նրանից՝ Ղոշմա է, Դաստան թե Եդաքլամա (այսինքն չնայելով, ինչ տարբեր շեշտականությամբ է գրված) կարող է երգվել՝ Քեշիշօղլի, Սինադաղլի կամ Բագիսուլի եղանակներով։ Մինչդեռ պրոֆեսիոնալ պոետիկայի սահմաններն այդպիսի անձկություն չեն ճանաչում։

---

1 **Մ. Նալբանդյան,** *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, 1945, էջ 282։*

2 **Մ. Աբեղյան,** *Հայոց լեզվի տեսություն, 1933, էջ 320։*

Այնուհետև։ Այս ձևերից յուրաքանչյուրն իր հերթին ունի տների կառուցման կամ հանգավորման համապատասխան կարգ, որը ոչ մի կերպ խախտել չի կարելի։

Շիրինն ստեղծագործել է աշուղական երգի բազմապիսի չափերով, սկսած 5 վանկանի հնագույն Բայթավուրից (որով Ներսես Շնորհալին իր նշանավոր «Առավոտ լուսոն» է գրել) մինչ իր նախասիրած մուխամմազն ու Դիվանին։ Իր երգերի գեղարվեստական և տաղաչափական այդ բազմազանությամբ է, հավանորեն, Շիրինը դարձել հետագա մեր աշուղների կուռքը.

Շիրինն է Նոր Հոմերոս,
Խոսքը պիտի ոսկով ջրած։

Եվ որքան էլ Շիրինը հմուտ էր աշուղական երգի կառուցվածքի մեջ, յուրացրել և մարսել էր աշուղական բանահյուսական արվեստը, այնուամենայնիվ, նրա ոճը երբեմն դուրս է գալիս աշուղական պոետիկայի սահմանափակությունից, և նա իր լեզվամտածողությամբ, գեղագիտական ըմբռնումներով կանգնում է պրոֆեսիոնալ ստեղծագործողների կողքին։ Շիրինը գրում է նկատելիորեն խրթին և հանդիսավոր մի ոճով, որը տառապում է գրքայնությամբ և ծանրաշունչ երկարաբանությամբ։ Այդ իմաստով էլ Շիրինը գուցե ավելի մտավորականության, քան ժողովրդի սիրած աշուղն է։ Ահա, թերևս, պատասխանը նաև այն հարցի, թե ինչու Շիրինը, որ հետագայում ավելի քիչ հայտնի եղավ մեր լայն հասարակայնությանը, այնքան մեծ կշիռ և համարում է ունեցել ականավոր աշուղների աչքում։ Հայտնի է, որ նրա մեծ արվեստի և ստեղծագործության հմայքը տեղիք է տվել նույնիսկ չափազանցված մեծարանքի։ Սկսած Գյուրջի Նավեից մինչև Ջիվանի, մեր բոլոր նշանավոր աշուղներն էլ ընդունել են Շիրինի մեծությունը, և ներբողել նրան։

«Շիրինի անունն ու հեղինակությունն այնքան մեծ էր,— գրում է Գ. Լևոնյանը,— այնքան ազդեցիկ, որ նրա մահը աշուղները ողբում էին ինչպես մի անփոխարինելի կորուստ։

Նիրանին ահա ինչ է գրում նրա մահվան լուրն իմանալիս.

Ա՜խ իմ քաղցրախոս Շիրին, ես քեզ այլ ուր գտանեմ.
Եթե իցի գիս հնար, և ես ընդ քեզ մեռանեմ,
Ով լինի գիս հեղինակ, կամ ում ընկեր անվանեմ,
Ով լինիցի գիս Շիրին, ես այլ ո՞ւմ սեր արկանեմ,
Նիրանի եմ, քեզ կորուսի, Շիրին, այլ ո՞ւմ նմանեմ։

Ուշադրության արժանի է վերջին խոսքերը՝ «Շիրին այլ ո՞ւմ նմանեմ», որ երևում է Շիրինին նմանելիս են եղել որպես ուսուցչի, որպես մեծ վարպետի։ Ահա ինչ է ասում Ջիվանին համեստորեն.

Ո՜վ Ջիվանի, դու երգերիդ թե խառնես էլ մեղր ու շաքար,
Շիրինի ասածներու նման դուրեկան չի լինի»[1]։

---

1 Գ. Լևոնյան, Աշուղների մասին, «Ազգագրական հանդես», 1904, գիրք XI, էջ 150։

4

Ընդհանուր ակնարկ նետելով Շիրինի ստեղծագործության վրա, դժվար չէ նկատել այն մեծ սերը, որ նա տածում է մարդու նկատմամբ։ Թող որ մարդը լինի համեստ նիստ ու կացի տեր, մինչև իսկ բարետես և վայելուչ արտաքինից զուրկ, միայն թե «ունենա բարի ընթացք» և «կատարյալ կեցություն»։

Ինչ է գեղեցկությունը, եթե ոչ «Արարչի պարգև», որ «հողանյութ գոյացելոց» համար բարեբեր անձրևի է նման։ Բավական է լուսո մի ճառագայթ, որ ամեն բան ցնդի, անհետանա, որովհետև՝

«Արմատը չէ, տերևն է»։

Եվ ահա Շիրինը ակնհայտ կրքով խրատի իր խրոխտ խոսքն է ասում.

Գանձը ժանգի համար է, մարդուս անունն է գովելի,
Բարի ընթացքը՝ կատարյալ կեցությունն է գովելի,
Անունի տարածվելը, անհատ արդյունն է գովելի,
Դու մի կարծիր, թե միայն գեղեցկությունն է գովելի,
Պակասամիտ սիրունին ես մի դատարկ գավ եմ ասում։

Շիրինի բարոյախոսական երգերի գլուխ գործոցը, սակայն, Թուրքերեն Թախմիսն է, որի յուրաքանչյուր տողը կարծես իմաստությամբ լի մի խրատ է.

Վնասդ իմացիր, օգուտդ ճանաչիր, նամուս ղեյրաթով, պատվով շրջիր,
Ջուր մի մատնիր փառք ու կայքդ, մեկ ուղիղ նպատակով շրջիր,
Ծագումդ պահիր, խոսքդ ճշտիր, քեզանից առավել բարձրի հետ շրջիր,
Մի լինիր բռնակալ, հնգօրյա այս աշխարհի չար գործերից հեռու շրջիր։

Շիրինի բարոյախոսության հիմքում ընկած է մարդկային առաջադիմության և հումանիզմի գաղափարախոսությունը։ Նա անհաշտ պայքար է մղում խավարի և տգիտության դեմ, անարգանքի սյունին գամում գոռոզ և ինքնահավան փարիսեցիներին, վկայաբերում գիտության նշանակությունը։

Գիտությունը, ով աչքի լույս, մարդուս երկրորդ արևն է։

«Տղա, տաղ», «Նոր Բայազետ գավառի ուսումնարանը», «Վարժարանեն մեկ աղջիկ» երգերի մեջ Շիրինը կանգ է առնում դպրոցի և կրթության հարցերի վրա։ Եթե այդ երգերից առաջինի մեջ Շիրինը մանկան կրթության հարցը դեռևս կապում է հոգևոր առաջադիմության և կրոնական ուսուցման հետ, իսկ երկրորդում՝ նորաբաց ուսումնարանի հիմնադրման կապակցությամբ կրթության և ուսման մասին քարոզ կարդում, ապա վերջին երգի մեջ, որ իր արվեստով իհարկե նվազ արժեքավոր է, Շիրինը մանրամասնությամբ պատմում է, թե ինչպես «վարժարանեն» մի աղջիկ, իր մոր տունը գնալիս, հանդիպում է գութանից տուն վերադարձող 15-ամյա մի պատանու և փորձում է նրան համոզել, որ սա թողնի իր վար

ու ցանքը և գա դպրոց՝ ուսում առնելու։ Տղան համառում է փորձելով հրապուրել աղջկան Գութանավարի փլավի և քաջ եզների պատմություններով, իսկ աղջիկը, որ տղայից էլ դեռ երեք տարով փոքր էր, մոգական գավազանի զորությամբ ջարդում է համառությունը և տղային տանում ուսումնարան։

Դիմելով դիդակտիկ մեթոդին և «Զույգ մանկանց հանգամանքն ազգին օրինակ տալով», Շիրինն հետապնդել է որոշակի նպատակ, թեպետ ցավալիորեն խոտորվել է այդ նպատակն իրագործող ճանապարհից։ Որովհետև կյանքից վերցրած կոնկրետ փաստն այստեղ ոչ միայն չի բարձրացել գեղարվեստական ընդհանրացման աստիճանին, այլև անկարող է եղել սքողելու «դաստիարակչական լինելու հեղինակի ձգտումը»։

Ուսման և դաստիարակության հաջորդ գործոնը հայրենասիրությունն է։

Այստեղ իհարկե Շիրինը շատ չի ծավալվել։ Եվ առհասարակ պետք է նկատել, որ հայրենասիրության թեման աշուղական գրականության մեջ իշխել սկսեց XIX դարի 60—70-ական թվականներից, երբ ազգային գաղափարներով ոգորված հայ մտավորականությունը սկսեց հայրենասիրական գաղափարների լայն պրոպագանդա մղել։ Բայց դրա փոխարեն նա իր երգերի մեջ դրել է շիկացած ազգային ոգի։ Երբ նա խոսում է օրինակ հայրենիքի ու նրա հերոսական անցյալի մասին, չի մոռանում անդրադառնալ մեր քաջ և համբավավոր նախնյաց՝ Տիգրան Մեծին, Վահան Ամատունուն, Վարդան Մամիկոնյանին և հիացմունքով խոսել նրանց անօրինակ քաջագործությունների մասին։ Շիրինի գրչին է պատկանում «Ազգասիրություն» վերնագրով այն նշանավոր երգը, որի երկտող բնաբանով անվանի բանահավաք Մ. Միանսարյանը զարդարեց իր կազմած հռչակավոր երգարանի ճակատը.

Երբ զորաց տերն աստված օգնել կուզե որը ազգին,
Նորա մեջն կուղարկե ազգասիրության հոգին։

Եվ երբ, իր ժամանակակիցներից ոմանք ամբաստանում էին Շիրինին Էջմիածնի Շողակաթ վանքի վանահայր Հովհաննես վարդապետի կազմակերպած ճաշկերույթի ժամանակ չարաբաստիկ աքլորի վրա հորինած երգի կապակցությամբ, մեղադրելով նրան նույնիսկ հավատափոխության մեջ, Շիրինն հարկադրված եղավ վերստին հանդես գալ պատասխան մի երգով՝ երդմամբ խոստովանելով իր իսկական հավատն ու դավանանքը.

Շիրինս հայոց տղա, և ինձ է մայր՝ Հայաստանն։

Կարճատև, բայց ծանր մի կյանք ապրեց Շիրինը։ Չտեսավ ոչ մանկություն, ոչ պատանեկություն, Աշուղի ամբասիր արհեստը նրա կյանքը լցրեց անհուն զվարճություններով, և Շիրինն ակամա սկսեց համակերպվել ճակատագրական իր վշտին։ Եկան երիտասարդության ոսկյա տարիները։ Նրա սիրտն էլ բաբախեց հավերժական սիրո նրանարույր ժպտից։ Եվ նա երգեց սիրո հեզ տանջանքն ու կարոտի սրբազան դողը, վայելքի քաղցրությունն ու երջանկարար իմաստը։

Անթարշամյալ սերերով վայելենք վիճակ միասին,
Ազնիվ սերն ունենալով անխախտ ու անքակ միասին,
Վայելենք էս աշխարհը երկար ժամանակ միասին,
Ոչ ստոր անուն թողունք, ոչ թերի փափագ միասին...

Այդ էլ անցավ։ Պատանեկական տարիների խանդավառ հույզը տեղի տվեց իմաստուն խոհին, և երգչի միտքն սկսեց սավառնել անհասանելի բարձունքների մեջ, օբյեկտիվ ռեալիստականության փաստով հավաստված դատողությունները մարմնավորվեցին առավել գեղեցիկ և մոնումենտալ ձևերի մեջ։ Շիրինն ստեղծեց իր հանրահայտ՝ «Այգեպան, ինչ ես անում» երգը, որ հայ աշուղական գրականության նշանավոր կոթողներից է.

Այգեպան ի՞նչ ես անում, շամբը բուրաստան չի լինիլ,
Օձի որքան գեղեցիկն ըլնի՝ սիրական չի լինիլ,
Կատուին ուտացնես օրը հազար նազ ու նամաթ
Տիրասեր ու բարեսիրտ, հայտ Լ՝ իբր շան չի լինիլ։

Ագռավին շուշի միջում պահես շաքար ու նաբաթով
Վատարախտ բլբուլի պես վարդի սիրաբան չի լինիլ,
Մանկական ուսումն ունի միլիոնի չափ արժողություն,
Ապտակով սնված տղեն առանց աստիճան չի լինիլ։

Ղուրանը ասում է թե ջեննաթումը շատ հուրի կա,
Ինչ Վրրաստանին է, ջեննաթին էլ էնքան չի լինիլ.
Խաղողի վազովը շատ տեղ պարապած մարդ կա, միայն
Կարծում եմ, թե ոչ մեկը Բերզեն Ալեքսան չի լինիլ։

Նախարարներ շատ ունի օգոստափառ Կայսրը, բայց
Մեկն իր անձին չխնայող իբր Արղության չի լինիլ,
Թեև էս դարերիս էլ ազգասեր իշխանք շատ ունինք
Կարծում եմ, թե ոչ մեկը Սմբատ ու Վարդան չի լինիլ։

Շիրակա չընաշխարհիկ դաշտն է լալիս աղիողորմ,
Ասելով. թե սրբությամբ ոչ մի տեղ Հայաստան չի լինիլ.
Դու Շիրին, օրը հարյուր քաղցր ու ախորժ բան մտածես,
Քո հայերեն խաղերը՝ Սնյադի նման չի լինի։

Օգտագործելով այգեպանի երևակայական կերպարը և խոսքն ուղղելով նրան, Շիրինը երգը կառուցեց հակադիր իրողությունների ու հատկանիշների բաղդատման վրա։ Շամբի և բուրաստանի, օձի սիրելի լինելու, կատվի և շան, ագռավի և բլբուլի, ջաննաթի և Վրաստանի հուրիների միջև անցկացվելիք համեմատության հնարավորությունը բացառող այդ հանգամանքներն էլ ավելի շեշտեցին երգի դաստիարակչական-ուսուցողական նշանակությունը։ Ահա թե ինչով պետք է բացատրել այն հանգամանքը, որ հարյուր տարուց ավելի կյանք ունեցած այդ երգը, այժմ էլ նույն կերպ և նույնքան սիրով է հնչում մեր ժողովրդի բերանից իր հոյակապ հրաժշտությամբ։

Բայց այստեղ էլ Շիրինը չէր կարող կանգ առնել։ Կյանքը, որ այնքան չռայլ էր երևում, իրականում քիչ բան էր պահել իր լքյալ և տարաբախտ զավակին։ Եվ նա շատ վաղ ապրեց հուսախաբության ցավատանջ մորմոքը։

Մշուշապատ, խորթ և անհրապույր մի բան թվաց երբեմնի գեղեցիկ աշխարհը նրան, և երգիչն ակամա ընկղմվեց հուսահատության խավարի գիրկը․

Մտքիս խորունքը,
Շտեմարանը,
Բոլոր սահմանը
Խավար թանձրամած։

Անդարձ կորած պատանեկական տարիների աշխույժն ու կենսասիրությունը, և մահկանացուի ճակատագրական վիշտը իր մեջ լուծեց աշխարհիկ կյանքի վսեմ հմայքը։ Եվ Շիրինը, որ այնպես կայտառ ու անուղջական «կտցահարում էր կյանքի սեղանից» (Գ. Լևոնյան), դառը մենության և ափսոսանքի վշտով է խոսում անդարձ գնացած օրերի մասին.

Երեկը ինձ այսօր թվում է երազի նման,
Օրերս՝ տարիներս, անցնում են փուշի նման,
Մեկ բանե չի մնում, սահմանումը սագի նման,
Մենք փազող ջուր արընթաց, ինքն է ավազի նման։

Շիրինի կյանքը ընդհատվեց հանկարծակի։ Նա, որ մանկան անհոգությամբ և հոժարակամ իր անձը նվիրեց իր սիրած արվեստին՝ դառնալով նրա ջերմ երկրպագուն, չապրեց բնականոն կես կյանք անգամ։ Սակայն որքա՜ն շատ բան տեսավ ու զգաց այդ՝ ոչինչ տեսնել չկարողացող պատանին, որքա՜ն իմաստուն և ոգեկոչող խրատներ կարդաց նա խենեշ ու ապաշնորհ մարդկանց, որքա՜ն ջերմ ու դեղումնալից տողեր հյուսեց սիրակարոտ զույգերին։ Նա էր, որ օտար լեզուներով և բարբառներով ստեղծագործող հայ աշուղներին ընտելացրեց մայրենի լեզվին, Ակբար Ադամի, Գյուրջի Նավեի հետ միասին դառնալով աշխարհաբար գրական լեզվի հիմնադիրը աշուղական գրականության մեջ։ Իսկ եթե հաշվի առնենք, որ մայրենի լեզվով գրած նրա երգերն առաջին անգամ տպագրվել են «Վերք Հայաստանիի» տպագրությունից ավելի վաղ, պարզ կդառնա, թե ինչպիսի խոշոր ծառայություն է մատուցել նա մեր աշուղական գրական լեզվի զարգացման գործին։

Շիրինն անժխտելի և ճանաչված մեծություն էր աշուղական պոեզիայի և կատարողական արվեստի բնագավառում։

ԴԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԱՄԴԱՐՅԱՆ

XIX դարի առաջին տասնամյակներին առավել ցայտուն է դառնում գրականության մերձեցումը իրականությանը, գրականության աշխարհականացումը, որ նախ և առաջ սկսվում է նրա բովանդակությունից։

Հայ գրականության մեջ, մանավորապես պոեզիայի բնագավառում, անցյալ դարի 20—30-ական թվականներին տեղի ունեցող այդ երևույթի ամենաբնորոշ և տաղանդավոր ներկայացուցիչներից է Հարություն Ալամդարյանը։ Նա նաև խոշոր մանկավարժ է և հասարակական-քաղաքական գործիչ։ Մեր լուսավորական շարժման պատմության մեջ ամբողջ մեկ դար նշանակալից դեր կատարած ուսումնական երկու հաստատությունների՝ Լազարյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի գործունեության սկզբնավորումն ու առաջին տարիները սերտորեն կապված են նրա անվան հետ։ Բավական է ասել, որ նրա, որպես տեսչի և մանկավարժի, վեցամյա գործունեության շրջանը (1824—1830) Ներսիսյան դպրոցի պատմության մեջ կոչվել է «Ալամդարյան դար»։

Հ. Ալամդարյանը իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկն էր, և խոշոր չափով նպաստել է ռուսական և եվրոպական կուլտուրայի, մանկավարժական առաջավոր գաղափարների տարածմանը հայ իրականության մեջ։ Ալամդարյանը պատկանում էր առաջադիմական այն հոսանքին, որը հայ ժողովրդի փրկությունը տեսնում էր Ռուսաստանին միանալու մեջ։ 1826—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմի ժամանակ նա ջերմ մասնակցություն է ունեցել հայ կամավորական ջոկատի կազմակերպման գործին և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին բնութագրել որպես «դարագլուխ ազատութեան և երանութեան մերոց ապագայից»։

1

Հարություն (աշխարհական անունը՝ Գեորգ) Ալամդարյանը ծնվել է 1795 թվականի հունվարի 14-ին, Աստրախանում, «բաշմախչի» (կոշկակար) Մանուկի ընտանիքում։ Նա իր տարրական կրթությունն ստանում է Սերովբե վարժապետ Պատկանյանի մոտ, որը Եփրեմ կաթողիկոսի հրավերով եկել էր Աստրախան՝ պաշտոնավարելու նոր հիմնադրված Աղա-

բարյան դպրոցում։ Սերովբե Պատկանյանը (1770—1836), որ Ռափայել Պատկանյանի պապն է, ժամանակի զարգացած մարդկանցից էր՝ հռչակված որպես «քաջ հայկաբան», մանկավարժ և բանաստեղծ։ Տեսնելով իր աշակերտի արտակարգ ընդունակությունները, Սերովբե վարժապետը առանձնահատուկ ուշադրությամբ է հետևում նրա կրթության գործին։ 1810 թվականի դեկտեմբերին Ալամդարյանն ընդունվում է նորաբաց Աղաբաբյան ուսումնարանը։ Դպրոցն հաճախելով, նա միաժամանակ շարունակում է արտադպրոցական պարապմունքները Սերովբե վարժապետի մոտ։ Ալամդարյանը ոչ միայն դառնում է դպրոցի առաջին աշակերտը, այլև ուսման ընթացքը չավարտած, 1812 թվականին, նշանակվում է հայոց լեզվի կրտսեր ուսուցիչ։

Հարություն Ալամդարյան

1813 թվականին Հովակիմ Լազարյանի հրավերով Ալամդարյանը փոխադրվում է Մոսկվա։ Հ. Լազարյանը, որ այդ ժամանակ ձեռնարկել էր հետագայում իր անունը կրող ճեմարանի հիմնադրմանը, ի դեմս Ալամդարյանի տեսնելով մի հուսալի օգնական իր նախաձեռնած գործում, նրան որդեգրում է և տալիս հայրենական պատերազմում, 1813 թվականին, Լայպցիգի տակ զոհված որդու՝ Հարությունի անունը։

Պատրաստվելով ուսուցչական պաշտոնի ապագա ճեմարանում, Ալամդարյանն ամբողջովին նվիրվում է իր գիտելիքների պաշարը հարստացնելու գործին։ Ուսումնասիրում է պատմություն, աշխարհագրություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, ճարտասանություն, լեզուներ՝ ռուսերենի հետ նաև լատիներեն և ֆրանսերեն։ Հատկապես ռուսերենի մեջ խորանալու համար նա թարգմանություններ է կատարում, գրում է շարադրություններ։ Ատելով «ծուլության ախտը» և գիշեր-ցերեկ պարապելով, Ալամդարյանը նշանակալից արդյունքների է հասնում ինքնազարգացման գործում։

Կենսագիրներից մեկի վկայությամբ (Հովհ. Քուչուբեգյան), Ալամդարյանը, որպես ազատ ունկնդիր, հաճախել է Մոսկվայի համալսարանը և լսել դասախոսություններ «բարձրագույն առարկայից»։

Լինելով ճեմարանի առաջին հիմնադիր-տեսուչը, Ալամդարյանը խոշոր դեր է կատարում ուսումնական գործը կազմակերպելու ուղղությամբ։ Միաժամանակ նա ավանդում է հայոց լեզու, կրոն, ապա նաև ռուսաց լեզու։ Ալամդարյանը մանկավարժ էր ոչ թե «ի պաշտոնե», այլ իր բնածին հակումներով։ Մանուկների դաստիարակությունն իր սրտին մոտ համա-

րելով, նա հենց առաջին քայլերից որոշում է այդ գործին նվիրել իր կյանքը։

Ալամդարյանը մեծ ջանքեր է գործ դնում, հակառակ ավանդական սխոլաստիկայի, իրեն վստահված ուսումնական հաստատությունում կիրառելու մանկավարժության նորագույն, առաջավոր մեթոդները «ըստ օրինի եվրոպական վարժապետաց», հեշտից, հետզհետե անցնելով դեպի դժվարը։ Իր գործունեության հենց սկզբից (1815) նա մերժում է ծեծը, գտնելով, որ դաստիարակությունը պետք է վարել քաղցրությամբ «և ոչ խստութեամբ և գանիւք՝ հանգոյն դահճաց»։ Նրա խորին համոզմամբ, մանկավարժը ոչ թե «վարձկան» պաշտոնյա է, այլ «անձնադիր հովիվ»։

Ալամդարյանի եռանդուն ջանքերը Լազարյան ճեմարանում նրա տեսչության առաջին երկու տարում պսակվում են փայլուն հաջողությամբ։ Ալ. Խուդաբաշյանը, 1816 թվականին, Հովակիմ Լազարյանի հանձնարարությամբ, ծանոթանալով ուսման ընթացքին, բարձր գնահատական է տալիս Ալամդարյանի գործունեությանը և նշելով նրա աշակերտների մեծ առաջադիմությունը, գտնում է, որ նրանցից առավել հաջողակներին, ճեմարանն ավարտելուց հետո, կարելի է կարգել ուսուցիչների օգնականներ։

Սակայն, Ալամդարյանի գործունեությունը Լազարյան ճեմարանում չի ընթանում հարթ ու անարգելք։ Նրա առաջին իսկ քայլերը հանդիպում են խավարամտության ներկայացուցիչների՝ Մոսկվայի հայոց եկեղեցու երեցփոխի, քահանաների, Հովակիմ (Միքայել) վարդապետ Սալլանթյանի, Հովհաննես և Խաչատուր Լազարյանների՝ սրանց ազդեցությամբ նաև ճեմարանի հիմնադիր և հոգաբարձու Հովակիմ Լազարյանի դիմադրությանը։ Լազարյանների վերաբերմունքը Ալամդարյանի նկատմամբ փոխվում է հատկապես, երբ 1816 թվականին Մոսկվա է գալիս Հովակիմ Սալլանթյանը։ Վերջինս, օգտվելով Հովակիմ Լազարյանի հատուկ հովանավորությունից, ճեմարանում գերադաս դիրք է գրավում, ձգտելով ուսուցումը վարել սխոլաստիկական իր ըմբռնումների համաձայն և ուսուցիչներին ենթարկել իրեն։ Ալամդարյանը նման վիճակի հետ չի կարողանում հաշտվել։ Նա բացահայտ քննադատում և մերկացնում է կաթոլիկ կրոնավորի տգիտությունը, մանկավարժական նրա միջնադարյան հայացքները, մոլեռանդությունը։

Ալամդարյանի հետևողականությունն ու վճռականությունը իր ինքնուրույն դիրքը պաշտպանելու և մանկավարժության առաջավոր մեթոդները կիրառելու խնդրում, նրա համարձակ քննադատությունը Սալլանթյանի նկատմամբ, դիտվում է որպես «հանդգնություն, անհնազանդություն» և «խռովություն»։

Ըմբոստ ուսուցչին ընկճելու նպատակով, նրան նեղում են նաև նյութապես, երեք տարի ձրի պաշտոնավարությունից հետո էլ մերժելով աշխատավարձ ստանալու նրա օրինական պահանջը։ Ալամդարյանի հակառակորդներն ավելի հեռուն են գնում. Խաչ. Լազարյանն սպառնում է՝ թեմի առաջնորդի միջոցով նրան հեռացնել ոչ միայն ճեմարանից, այլև քաղաքից, եթե չհրաժարվի «խռովարար» վարքագծից և եթե չհամաձայնվի

առանց վարձատրության պաշտոնավարել՝ բավականանալով միայն քահանայական հասույթով։ Ահա այսպիսի պայմաններում Ալամդարյանը աշխատում է Լազարյան ճեմարանում շուրջ տասը տարի (1814—1824)։

Լազարյան ճեմարանում իր պաշտոնավարության տարիներին, գործնական մանկավարժական աշխատանքին զուգընթաց, Ալամդարյանն զբաղվել է նաև աշակերտության համար ուսումնական ձեռնարկներ ստեղծելու գործով։ Նա կազմել է հայոց և ռուսաց լեզուների քերականության դասագրքեր և ռուս-հայ բառարան։ «Առաջին գործը, որ նա արեց,— ասված է Լազարյան ճեմարանի պատմության համառոտ ակնարկում,— հայերի համար դյուրըմբռնելի քերականություն կազմելն էր»[1]։ Հայերենի քերականության այդ ձեռնարկի մասին այլ տեղեկություններ չկան։ Սակայն, Ալամդարյանի նամակագրությունից երևում է, որ արդեն 1815 թվականի աշնանը ռուսաց քերականությունը պատրաստ էր, որի տպագրության թույլտվության համար Ալամդարյանը դիմում է Հովակիմ Լազարյանին։ Վերջինս սկզբում համաձայնում է, բայց հետո՝ մերժում, պատճառաբանելով Ալամդարյանի աշխատության մեջ տեղ գտած անճշտությունները։ Երիտասարդ հեղինակը Հովակիմ Լազարյանի բերած երկու օրինակի առթիվ տալիս է իր բացատրությունը՝ հիմնվելով բազմաթիվ ռուս լեզվագետ-մատենագիրների երկերի և Պետերբուրգի ակադեմիայի հրատարակած բառգրքի վրա։

Նամակը վկայում է բանաստեղծ-հեղինակի մտավոր լայն պատրաստականության, հայ մատենագրության և ռուսերենի իմացության աստիճանի, ինչպես և տրամաբանության ուժի մասին։ Այնուամենայնիվ, հակառակ իր խոստմանը, Հովակիմ Լազարյանը Ալամդարյանի քերականությունը չտպագրեց։ Այն չի տպագրվել նաև հետագայում։ Պահպանված ձեռագրից կարելի է դատել, որ Ալամդարյանի աշխատությունը ռուսերենից թարգմանական վարժություններ կատարելու գործնական ուղեցույց է, ըստ հեղինակի պատկերավոր բնորոշման՝ «ճրագ իմն առ անխարխափ գնալոյ ի թարգմանութեան ճանապարհ». միաժամանակ նա պարունակում է ռուսերենի քերականության հիմնական կանոնները։

Համառոտ առաջաբանում Ալամդարյանը բացատրում է, որ իր նպատակը չէ «բարբարոսաբար հրամայելով» աշակերտներին անգիր անել տալ քերականական կանոնները և ծանրաբեռնել նրանց միտքը, այլ այդ կանոնների պարզ մեկնություններով և օրինակներով դյուրացնել ռուսերենի ուսուցումը։ Ուշագրավ է թարգմանական վարժությունների համար բերված հարուստ նյութը՝ ռուս հեղինակների, գլխավորապես առակագիրների՝ Կարամզինի, Կռիլովի, Դմիտրիևի, Խեմնիցերի և ուրիշ հեղինակների երկերից։ Նյութը ընտրելիս Ալամդարյանը հետապնդել է որոշակի նպատակ. բերված հատվածների միջոցով աշակերտներին դաստիարակել հայրենասիրության, քաղաքացիական պարտքին հավատարիմ լինելու, հու-

---

[1] „Материалы для истории Лазаревского института восточных языков", М., 1914, էջ XV։

մանիզմի ոգով։ Այս տեսակետից հետաքրքրական են Կարամզինի երկերից արված մեջբերումները։ Այսպես օրինակ. «Հայրենիքի սիրո մասին» խորագիրը կրող հատվածում ասված է (տեքստում բերված է ռուսերեն բնագիրը). «Լավագույն փիլիսոփայությունն այն է, որ ... սովորեցնում է մեզ սիրել հայրենիքի օդուտը, որովհետև անխզելիորեն նրա հետ է կապված մեր սեփական երջանկությունը։ Նրա փառքը՝ մեր փառքն է»։ Կամ մի այլ հատվածի հայերեն թարգմանության մեջ ասված է. «Այր խորթ ի սիրոյ հայրենեաց չկարէ լինել ոչ որդի բարի և ոչ բարեկամ մտերիմ»։

Երիտասարդ Ալամդարյանի գրական հայացքների համար բնորոշ է Կարամզինից բերված հատվածը գրողի կոչման մասին. «Ասում են, թե գրողը պետք է ունենա տաղանդ, գիտելիքներ, սուր, խորաթափանց միտք, վառ երևակայություն, և այլն։ Ճիշտ է, բայց այդքանը բավական չէ։ Գրողը պետք է ունենա նաև բարի, քնքուշ սիրտ, եթե նա ցանկանում է լինել մեր հոգու բարեկամը և սիրելին... Դու ցանկանում ես հեղինակ լինել՝ կարդա՛ մարդկային դժբախտ ցեղի պատմությունը, և եթե քո սիրտը արյունով չլցվի, թո՛ղ գրիչը...»:

Մի այլ հատվածից կարելի է պատկերացնել, թե Ալամդարյանը որքան բարձր է գնահատել մանկավարժի աշխատանքը, նրա դերը. «Որպէս արեգակն գարնանի կենսագործէ զերկիր՝ պարգևեալ նմա պչերմութիւն և զարգասաւորութիւն, նոյնպէս և իմաստուն վարժապետն լուսաւորէ զմիտս և հրահանգէ զսիրտս աշակերտաց իւրոց»[1]։

Լազարյան ճեմարանում Ալամդարյանի կազմած ուսումնական ձեռնարկներից տպագրվել է միայն ռուս-հայ բառարանը («Համառօտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ, աշխատասիրութեամբ Յարութիւն քահանայի Մանուկեան Ալամդարեանց. ի Մոսկով, 1821»)։

Ինչպես ռուսերենի քերականությունը, այնպես էլ բառարանը կազմելիս, Ալամդարյանը ղեկավարվել է այն խոր համոզմունքով, որ «ռուսաց բարգավաճ լեզվի» իմացությունը խոշոր չափով նպաստելու է հայ ժողովրդի մտավոր զարգացմանը։ Բառարանի առաջաբանում նա նշում է, որ ռուսերենի միջոցով հայ մանուկները հնարավորություն ունեն ձեռք բերելու բոլոր կարևորագույն գիտելիքները և լուսավորելու իրենց միտքը. «Յայս միտս,— եզրակացնում է նա,— Ռուսիա է վասն նոցա նոր Աթէնք»։

Ալամդարյանի բառարանը նախատեսված է եղել մանուկների համար՝ «առ դիւրութիւն համրակաց», սակայն նրա նշանակությունը չի սահմանափակվում սոսկ ուսումնական ձեռնարկի շրջանակներում. նա իր պատշաճ տեղն ունի նաև հայ-ռուս բառարանագիտության պատմության մեջ։

1 Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ (Մատենադարան), ձեռագրերի ֆ., N 3754, թ. 61։

2

Ալամդարյանի մանկավարժական գործունեության երկրորդ շրջանն ընդգրկում է նրա պաշտոնավարության տարիները Ներսիսյան դպրոցում (1824—1830)։ Ներսես Աշտարակեցու հրավերով նա Թիֆլիս է գալիս 1824 թվականի սեպտեմբերին և ստանձնում հիշյալ դպրոցի տեսչի պաշտոնը։ 1825 թվականի հունվարի 1-ին տեղի է ունենում Ներսիսյան դպրոցի բացումը։

Ալամդարյանի, որպես տեսչի, առաջին գործը լինում է մշակել դպրոցի համառոտ ծրագիրը, ավելի ճիշտ՝ կանոնադրությունը, ըստ որի, աշակերտներ ընդունվում էին ութ տարեկանից սկսած. ավելի բարձր տարիք ունեցողների համար ընդունելությունը չէր սահմանափակվում՝ «յաղագս չլինելոյ յազգի մերում դպրութեան»։ Ուսման տևողությունը սահմանվում էր երեքից մինչև տասը տարի՝ նայած ընդունվողի տարիքին, գիտելիքներին և ընդունակություններին։ Դասավանդության համար նախատեսվում էին հետևյալ առարկաները. հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, պարսկերեն, ճարտասանություն, տրամաբանություն, պատմություն, աշխարհագրություն, գրականություն, նկարչություն, թվաբանություն, երկրաչափություն, հանրահաշիվ, բնագիտություն և կրոն։ Ամիսը մեկ անգամ նախատեսվում էր գումարել մանկավարժական ժողովներ, ուր քննարկվելու էին աշակերտության առաջադիմության, դաստիարակության և դպրոցի բարեկարգման հարցերը։

Կանոնադրությունից հետո Ալամդարյանը մշակում է հիմնական այն սկզբունքները, որոնցով ղեկավարվելու էին ուսուցիչները Ներսիսյան դպրոցում («Ցուցակ պարտաւորութեանց վարժապետաց»)։ Այստեղ, հիմնական գծերով, շարադրված են Ալամդարյանի մանկավարժական հայացքները։ Առաջին հրահանգի իմաստն այն է, որ ուսուցիչը պարտավոր է աշակերտներին ոչ միայն գիտելիքներ ավանդել, այլև նրանց համար լինել կենդանի օրինակ «ամենայն առաքինութեանց և մարդավայել քաղաքավարութեան»։ «Քանզի,— բացատրում է Ալամդարյանը,— եթէ չափահասքն առաւել յօրինակէ համոզին ի գործս բարութեանց, քան յոկ ի բանից, քանի ևս առաւել համբակք՝ յորոց ներքին և արտաքին զգայութիւնք դիւրապատրաստք են յընդունելութիւն ամենայն գործոց և բարեաց, և չարեաց, որպէս փորձն հանապազորդ ցուցանէ»[1]։

Ուսուցիչը պարտավոր է «հայրագորով գթով սիրել» իր բոլոր աշակերտներին, քաղցրությամբ դաստիարակել՝ առանց խտրություն դնելու հարուստ և աղքատ երեխաների միջև, որովհետև ով մի անգամ դպրոցի շեմքից ներս է մտնում, նա դպրոցի որդեգիրն է դառնում։ Աշակերտներին «քաղցրությամբ դաստիարակելու» սկզբունքը պաշտպանելով, Ալամդարյանը, սակայն, անհրաժեշտ է համարում հետևյալ վերապահությունն

---

1 Հ. Ալամդարյանի «Ցուցակ պարտաւորութեանց վարժապետաց», Տե՛ս Ա. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան Հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 93։

անել. ինչպես որ իմաստուն հայրերը իրենց որդիների հետ խստությամբ են վարվում, նրանց քմահաճույքներին սանձարձակ ազատություն չտալով, այնպես և ուսուցչի համար օրենք պետք է լինի՝ գովելիս, կամ պարսավելիս ձեռքին ունենալ «շրջանկատ չափավորության կշիռը», որովհետև չափազանց գովեստը աշակերտին կմղի դեպի «հանդգնության խորխորատը», իսկ չափազանց պարսավանքը նրան հուսալքության կմատնի։

Աշակերտների նկատմամբ կոպիտ վերաբերմունքն ու հայհոյանքը Ալամդարյանը համարում է ոչ միայն դաժանություն, այլև հետևանք ուսուցչի անզորության։ Ալամդարյանի հրահանգներում մերժվում է նաև ծեծը, որպես դաստիարակչական մեթոդ («դան և ծեծ մի՛ լիցին ի դպրոցի»)։ Աղդու եղանակով տրված խրատներն առավել արդյունավետ են, քան ծեծի երկյուղն ու ցավը։

Կրթա-դաստիարակչական գործում Ալամդարյանը առաջնակարգ է համարում ուսուցչի դերը. ուսուցիչը աշակերտին պետք է առաջնորդի ուղիղ ճանապարհով, աստիճանաբար զարգացնելով նրա ընդունակությունները, գնալով պարզից դեպի բարդը, հեշտից դեպի դժվարը։ Այդպիսով, աշակերտը ավելի շատ արդյունքների կհասնի, քան, եթե առանց հաշվի առնելու պատանու զարգացման աստիճանը, նրան ծանրաբեռնեն բազմաթիվ և խրթին գիտելիքներով, նման այն ծնողին, որ ցանկանալով իր նորածին մանկանը որքան կարելի է արագ հասուն տարիքի հասցնել, նրան միանգամից տալիս է շատ և անմարս կերակուրներ։ Լազարյան ճեմարանում ձեռք բերած սասնամյա մանկավարժական փորձից ելնելով, Ալամդարյանն իր հրահանգներում հատկապես ընդգծում է, որ առարկաների տեսական իմացությունը առանց գործնականի, և գործնականն առանց տեսականի՝ կաղ է[1]։

Ալամդարյանի տեսչության ժամանակ Ներսիսյան դպրոցում որոշ առարկաների դասավանդությունը տարվել է աշխարհաբարով։

Տեսչական պաշտոնի հետ մեկտեղ, Ալամդարյանը վարում էր հայոց և ռուսաց լեզուների, վայելչագրության և կրոնի դասերը։ Ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը լինելով, նա հոգ էր տանում իր սաների նաև գրական ճաշակի զարգացման։ ուղղությամբ, նրանց ծանոթացնելով, մասնավորապես, «ընտիր հայերի բանաստեղծության» կանոններին։ Ալամդարյանի ջանքերով 1828 թվականին լույս է տեսնում Ներսիսյան դպրոցի աշակերտների գրական նախափորձերի առաջին ժողովածուն՝ «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» խորագրով։ Այդ ժողովածուին մասնակցում էր նաև ինքը՝ բանաստեղծ-ուսուցիչը «Ողբերգութիւն Իսրայէլի», «Տեսիլ», «Տաղաչափութիւն», «Տաղերգութիւն» և «Աղօթք» բանաստեղծություններով, սակայն, ոչ իր ստորագրությամբ։

Ալամդարյանի տեսչության վեց տարիների ընթացքում (1824—1830) Ներսիսյան դպրոցը դառնում է ամենաբարեկարգը այդ ժամանակ։ Անդր-

---

[1] Տե՛ս Ա. Երեցյան. Պատմութիւն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր

կովկասում գոյություն ունեցող ուսումնական հաստատություններից։ Վեց տարվա ընթացքում դպրոցն ավարտում են հարյուր աշակերտ, որոնք քաղաքացիական և զինվորական այլևայլ պաշտոնների են անցնում։ Ալամդարյանի սաներից դուրս են գալիս այնպիսի ականավոր գործիչներ, ինչպիսիք են Խաչ. Աբովյանը, Ստ. Նազարյանը, Ստ. Ներսիսյանը (նկարիչ)։ Ալամդարյանի մանկավարժական գործունեությանը բարձր գնահատական են տվել ժամանակակիցներից շատերը, և մասնավորապես Խաչ. Աբովյանը։ Հայ նոր գրականության հիմնադիրը քանիցս արտահայտվելով իր ուսուցչի մասին, նրան բնութագրում է «Հայրենեաց բարեկամ», «Հայր բազմերախտ», «Հավիտյան անմոռաց բազմերախտ դաստիարակ» բառերով, իսկ Դորպատյան օրագրում Ալամդարյանի մահվան առթիվ խոր ցավով է արձանագրում, թե՝ «Ա՜խ, նրանով մեր ազգի շատ երիտասարդք կորցրին իրենց բախտը։ Նա շատերին կարեր լուսավորիչ լինել»[1]։



Հ. Ալամդարյանի 1830 թ. հունիսի 24-ի Խ. Աբովյանին գրած նամակի ֆոտո-պատճենը

Ալամդարյանի գործունեությունը Ներսիսյան դպրոցում չի սահմանափակվել սոսկ մանկավարժական աշխատանքների շրջանակներում։ Նրա ջանքերով բարեկարգվել և գործարկվել է Ներսիսյան դպրոցի տպարանը, ուր 1824—1830 թվականների ընթացքում տպագրվել է 30 անուն գիրք՝ շուրջ 15.000 տպաքանակով, այդ թվում, ուսումնական ձեռնարկներ դպրոցի սաների համար՝ Մ. Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի»՝ Ալամդարյանի առաջաբանով, «Այբուբենք հայոց», «Հեգ սաղմոսք,» «Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան». բժշկական՝ «Խրատ պատուաստի ծաղկման»։ Այդ տպարանում են տպագրվել «Երախայրիք Ներ-

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 88—92, հատ. 6, էջ 302, հատ. 8, էջ 312—313։

սիսեան դպրոցի» ժողովածուն, Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը, Գեորգ Արծրունու «Դարաստան խրատուց» գիրքը, ինչպես և բազմաթիվ պաշտոնական հրահանգներ, այդ թվում 1826—1828 թվականի ռուս-պարսկական պատերազմին մասնակցող հայ կամավորական գումարտակի համար գրված հրահանգը («Առաջադրութիւն հայոց նոր սարքվող զօրքի մասին»):

Ալամդարյանը տպարանի ոչ միայն կառավարիչն էր, այլև տպագրվող գործերի հսկիչը և նույնիսկ սրբագրիչը։

Ներսիսյան դպրոցի տպարանում պետք է տպագրվեր, ինչպես նախագծված էր, «Տարեգրութիւն հայոց գրագիտական» խորագրով եռամսյա հանդեսը, որ ունենալու էր զուտ գիտական բովանդակություն։ Հանդեսի հրատարակության անմիջական ղեկավարությունը վերապահված էր Ալամդարյանին. վերջինիս հանձնարարությամբ դպրոցի ուսուցիչները, ինչպես և կարող աշակերտները բարձր դասարաններից հոդվածներ էին պատրաստում հանդեսի համար, սակայն վերահաս ռուս-պարսկական (1826—1828) և ռուս-թուրքական պատերազմները (1828—1829), Ներսես Աշտարակեցու և Ալամդարյանի դեմ սկսված հալածանքներն ու ապա նրանց աքսորը խափանարիթ եղան այդ հրատարակությանը։ Ալամդարյանի աքսորից հետո դադարեց և տպարանի գործունեությունը։

Ալամդարյանը ոչ միայն ռուս կուլտուրայի ամենաեռանդուն տարածողներից էր հայ իրականության մեջ, այլև ռուսական օրիենտացիայի ջերմ պաշտպաններից մեկը։ Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, 1827 թվականի մարտին, Ներսես Աշտարակեցու և Ալամդարյանի գործուն աջակցությամբ Թիֆլիսում կազմակերպվում է հայ աշխարհազորայինների գումարտակը, որին զինվորագրվում են նաև մի քանի տասնյակ հոգի Ներսիսյան դպրոցի սաներից։

Նույն թվականի մայիսի 15-ին հայկական գումարտակի երդման և դրոշակի օրհնության հանդեսին Ալամդարյանը համառոտ ճառով դիմում է հայ կամավորներին, նրանց բացատրելով տեղի ունեցող իրադարձությունների պատմական բախտորոշ նշանակությունը հայ ժողովրդի համար։ Նա կոչ է անում «մինչև արյան վերջին կաթիլը» «սատար լինել մեր ամենասիրելի հայրենիքի վերականգնմանը՝ դարավոր ավերակներից»։

Մեծ բերկրանքով լսելով Երևանի գրավման ավետաբեր լուրը, Ալամդարյանը 1827 թվականի հոկտեմբերի 12-ին Ներսես Աշտարակեցուն ուղղած նամակում գրում է. «Զկնի բազմադարեան ակնկալութեան, վերջապես արար զմեզ արժանի նախախնամութիւնն երկնից տեսանել և լսել զազատութիւն ամենասիրելի հայրենեաց մերոց յընդ լծոյ տառապանաց ապառում բռնաւորաց»։ Նկարագրելով ժողովրդի հրճվանքը Արևելյան Հայաստանի ազատագրման առթիվ, նա շնորհավորում է «զփրկութիւն Հայաստան աշխարհի յերկաթի հնոցէ անագորոյն պարսից...»[1]։

[1] Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ (Մատենադարան), Կաթող. դիվան, թղթ. 55, վավ. 210։

Հ. Ալամդարյանի գործունեությունը Ներսիսյան դպրոցում տևում է մինչև 1830 թվականի կեսերը։

Ցարական բյուրոկրատիան, ի դեմս Կովկասի կուսակալ Պասկևիչի, օգտագործելով հայ ռեակցիոն հոգևորականության (Հովհաննես Կարբեցու և ուրիշների) դժգոհությունները և խարդավանքները Ներսես Աշտարակեցու և Ալամդարյանի դեմ, բայց, ըստ էության, հաշվի առնելով, որ ժամանակի այդ երկու ականավոր գործիչները ձգտում են պաշտպանել հայ եկեղեցական և ազգային-լուսավորական հաստատությունների ինքնուրույնությունը, որով փաստորեն դիմադրում են նոր նվաճված երկրամասի գաղութացման և տեղական ժողովուրդների ձուլման քաղաքականությանը, ամեն կերպ աշխատում է ազատվել նրանցից։

1828 թվականի օգոստոսին Ներսես Աշտարակեցին Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմական առաջնորդի պաշտոնով ուղարկվում է, փաստորեն՝ աքսորվում է Քիշինև։ Ներսես Աշտարակեցուց հետո հերթը հասնում է Հար. Ալամդարյանին։ Պասկևիչը իր չինովնիկներով և հայ համհարզներով ուժեղացնում են հալածանքները և դավերը Ներսիսյան դպրոցի տեսչի դեմ. վերջինս գրեթե մեկուսացվում է, ենթարկվում է հսկողության. նրանից, որպես քաղաքական հանցագործից, ծանոթներն սկսում են խուսափել։ «Ինձ այսուհետև անհնարին է մնալ աստ առանց ենթարկելոյ գթշուառական գլուխ իմ ակնյայտնի մեծամեծ վտանգից»,— գրում է նա 1829 թվականի մարտի 15-ին Ներսես Աշտարակեցուն ուղղած նամակում[1]։

Ալամդարյանի ընդհարումները ցարական չինովնիկների հետ Ներսիսյան դպրոցի և հայ եկեղեցու ինքնավարության հարցերի առնչությամբ հաճախ սուր բնույթ էին ստանում։

Պասկևիչի թելադրանքով, էջմիածնի սինոդի որոշմամբ՝ 1830 թվականի աշնանը Ալամդարյանը, «իբր խռովարար ոք և Ներսիսեան», աքսորվում է Հաղբատ։ Հաջորդ տարվա հունիսին Ներսես Աշտարակեցին նրան հրավիրում է իր մոտ՝ Քիշինև և նշանակում Նոր-Նախիջևանի Սուրբ-Խաչ վանքի վանահայր։ Ալամդարյանը ակամա հնազանդվելով, մեկնում է իր նոր պաշտոնատեղին, չնայած բուռն ձգտմանը՝ գնալ Մոսկվա կամ Պետերբուրգ՝ հեռու Պասկևիչի հալածանքներից ու էջմիածնի սինոդի դավերից։

Սուրբ-Խաչ վանքում Ալամդարյանը ծրագրում է հիմնել տպարան, դպրոց, ծավալել լուսավորական գործունեություն. սկսում է աշակերտներ հավաքել և պարապել հետները։ Այստեղ գրում է մի շարք բանաստեղծություններ, ինչպես և ձեռնարկում է «Հռադամիզդ և Զենոբիա» պատմական ողբերգությանը, որ, սակայն, անավարտ է մնում՝ վաղաժամ և ողբերգական մահվան պատճառով (1834 թվականի մայիսի 25)։

---

[1] Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ (Մատենադարան), Կաթող. դիվան, թղթ. 63, վավ. 321 բ։

3

Ժամանակակիցները հավաստում են, որ Ալամդարյանը բանաստեղծություններ գրել է պատանեկության հասակից։ Այդ է վկայում նաև Մանվել Կյումյուշխանեցին, ոչ առանց հեգնանքի, նրան տալով «դեռարույս բանաստեղծ-Հոմերոս» հորջորջումը[1]*։ Գաբրիել Պատկանյանը պատմում է, որ Ալամդարյանը Աստրախանի դպրոցում «շատ կծու և անպարկեշտ խոսքերով» երգիծական բանաստեղծություններ է գրել («Կայեն և Աբել», «Սավուղ և Դավիթ» խորագրերով) իր ուսուցիչ Սերովբե վարժապետ Պատկանյանի դեմ։ Վերջինս, որ ժամանակի անվանի բանաստեղծներից մեկն է եղել, ոչ այնքան զայրացել է իր աշակերտի հանդգնության վրա, որքան ուրախացել նրա «հաջողակ գյուտերու և գեղեցիկ շարադրության» համար*[2]*։*

Սակայն, բանաստեղծի վաղ շրջանի ստեղծագործություններից ոչ մեկը չի պահպանվել։

Ալամդարյանի գրական ժառանգությունը մեծ չէ, ընդամենը մոտ երեք տասնյակ բանաստեղծություն, որ ամփոփված են նրա մահից կես դար հետո լույս տեսած «Ջափարերականք» ժողովածուի մեջ, և «Հռադամիզդ և Զենոբիա» անավարտ պատմական ողբերգությունը։

Ալամդարյանի պոեզիան բազմազան է թե՛ ըստ բովանդակության և թե՛ ըստ ձևի։ Նա գրել է քնարական-սիրային բանաստեղծություններ, կրոնական տաղեր ու աղոթքներ, ձոներ, էպիտաֆիաներ և առակներ, ինչպես և կատարել է թարգմանություններ եվրոպական բանաստեղծներից (Տորկվատո Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմ» պոեմից)։ Նրա պոեզիայի հիմնական մոտիվը, սակայն, սերն է։ Ընդ որում, նա երգում է ոչ թե պատանեկան առաջին սիրո անուրջները, փոխադարձ ու երջանիկ սիրո հրապույրներն ու վայելքները կամ մերժված սիրահարի տվայտանքները, այլ սիրած էակի կորստյան մորմոքն ու կսկիծը։

Ինչպես ամեն մի իսկական քնարերգություն, Ալամդարյանի պոեզիան խորապես ապրված զգացմունքների բյուրեղացումն է, բանաստեղծի հոգեկան աշխարհի հարազատ արտացոլումը, նրա ողբերգական կյանքի գեղարվեստական տարեգրությունը։

Խառնվածքով կրակոտ, կենսասեր և կենսախինդ մի երիտասարդ, որին բնությունն ստեղծել էր աշխարհիկ կյանքի վայելքների համար և որին, հակառակ իր հակումների, միջավայրն ու ժամանակը եկեղեցու սպասավոր էին դարձրել, վաղաժամ կորցնում է իր զգայուն սրտի ամբողջ զորությամբ սիրած էակին, կորցնում է այն միակն ու նվիրականը, որ նրան կապում էր կյանքին ու աշխարհին. «Նորա համար չիջավ ամեն լույս և ամեն հույս,— պատմում է ժամանակակիցը։— Ամեն օր ո՛չ ցուրտ կրհարցներ, ո՛չ տաք, ո՛չ անձրև, ո՛չ ձյուն, ո՛չ ցեխ. հետևակ կերթար գե-

---

[1] Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարան, ֆ. 1, թ 139։

[2] Հայկական ՍՍՀ Պետ. պատմ. կենտր. արխիվ, ֆ. 57, գ. 349, թ. թ. 28—50։

բեզման, կավլեր, ծաղկամր կկարդարեր, այնքան կուլայր, մինչև սիրտը հովանայր...»[1]։

Սիրած էակի կորուստը դառնում է նրա վշտի աղբյուրը։ Իսկ հետզ-հետե կուտակվող ու ծանրացող վիշտը, բնականաբար, պետք է ելք գըտներ և դուրս հորդեր սիրային ողբերգերի ձևով։ Ուշագրավ է, որ Ալամդարյանի՝ մեզ հասած բանաստեղծություններից ժամանակագրական կարգով առաջինը («Նազելույս դէմքն էր ճերմակ ու կարմիր...») գրված է կնոջ մահվան անմիջական տպավորության տակ։ Հետագայում բանաստեղծի գրչի տակից դուրս եկած բոլոր սիրերգերը այդ վշտի՝ քնարական դրսևորումներն են լոկ։ Դրանք ներքին, օրգանական կապով կապված են միմյանց և ներկայացնում են մի ամբողջություն, մի գեղեցիկ հիմն հարատև և ամենահաղթ սիրո մասին։

Իր առաջին ողբերգի բնաբանը Ալամդարյանը վերցրել է «Երգ երգոցից». «Ամենևին ես գեղեցիկ, մերձաւոր իմ, և արատ ինչ ո՛չ գոյ ի քեզ»։ Բանաստեղծը, ինչպես ժողովրդական ողբերգերում, գովաբանում է իր սիրած էակի բարեմասնությունները՝ «ճերմակ ու կարմիր» դեմքը, ոսկեփայլ վարսերով պճնազարդ գլուխը, լուսավոր ճակատը, աղեղնաձև հոնքերը, պարկեշտ հայացքը, այտերի վրա ժպտացող վարդերը, ցինց ատամների «մարգարտայեռ» շարքը.

ՑԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԱԼԱՄԴԱՐԵԱՆՑ

ՋԱՓԱԲԵՐԱԿԱՆՔ

(ԾՆ. 1796, ՄԱՀ. 1834)

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՏՊԱՐԱՆ Ն. Ի. [illegible]

[illegible]

Ալամդարյանի «Ջափաբերականք» ժողովածուի անվանաթերթը

Ձնորօք պատէին շրթունք հրատապք,
Ի լեզուէն կաթէր շունչ արծաթ կենաց։
Զայնն էր հրեշտակի, անցինց ի սրտէս.
Բերանոյն խոսուած հրրոյ պէս ազդէր
Ոսցն էր ի հրով, ատինք բոցավառք,
Լանջաց գովեստ՝ չէ՛ բան իմ լեզուի։

Իր նազելու զովքից հետո, բանաստեղծության երկրորդ մասում Ալամդարյանը ողբում է նրա անժամանակ կորուստը, և դարձյալ, ինչպես ժո-

[1] Հայկական ՍՍՀ Պետ. կենտր. պատմ. արխիվ, ֆ. 57, գ. 349, թ. թ. 28—50։

զովրդական ողբերգերին է հատուկ, վշտոտ սիրահարը դիմում է մարդկանց, նրանց հետ կիսում իր վիշտը, նրանցից օգնություն հայցում.

Պատմեցէ՛ք, մարդիկ, թէ տեսիք զնա,
Պատմեցէ՛ք, եղբարք, թէ կա սիրտ ի ձեզ...
Թէ լուր ինչ չունիք զանգին չքնաղէս,
Թէ ինձ չիք հնար գտանել զնա՝
Ինձ յափսոս եկայք անչափ նեղելոյս,
Ողջ ողջ դի՛ք յարգանդ մութ գերեզմանի։

Սիրակորույս սիրահարի վիշտն ու մորմոքը նոր ու նուրբ երանգներով և միշտ վարակիչ հուզականությամբ Ալամդարյանը երգել է իր մյուս էլեգիաներում։ «Կոծ» ողբերգի մեջ, որ գրված է «Նազելույս դէմքն էր ճերմակ ու կարմիր» բանաստեղծությունից անմիջապես հետո, նա մերթ դիմում է անդրշիրիմի իր «նազելույսին», որի սիրո կայծը միշտ վառ է իր վիրալից սրտում, և մերթ խոսքն ուղղում է «թռչնոց երամից պարծանք», «անվարուժան, ամայաբնակ» տատրակին՝ վերջինիս և իր վիճակի մեջ համանմանություն տեսնելով.

Ուրախ ձայնիւ մի՛ դայլայլեր,
Զայրւոյս այրած սիրտ մի՛ ճմլեր, ո՜հ զվէրս մի՛ նորոգեր.
Լերդակիզւոյս զուգերգող լե՛ր,
Դու լաւ գիտես, թէ զինչ է սէր. վա՜յ ինձ, հուր վառէ սէր։

Տատրակը, սակայն, չի դայլայլում, այլ գոս մրտենու ճյուղի վրա հյուծվում է վշտից՝ «անկեր, անումպ, գերի կոծոյ»։ «Այն նետը,— ասում է բանաստեղծը վշտահար թռչնին,— որ մեռցրեց քո վարուժանին, առ, խրիր քո սև, տրտում սիրտը — ափսոս, այլ հնար չկա»։ Եվ բանաստեղծը, ձեռները ծոցին, շրջում է ավերակների ամայության մեջ, ձայնակցում սևափետուր, տխրատեսիլ բուերին, փնտրում իր հոգյակին։ Ոչ մի տեղ հանգիստ չունի նա. վիզը գցած օղակի պես են աղետները, որ վերջ չունեն. ազատվելու ջանքերն իզուր են. փախչի, բայց ո՞ւր։ Եվ ինչպես վարուժանը կորցրած տատրակի, այնպես էլ իր փրկությունը նա տեսնում է մահվան մեջ։ Սիրած Մարգարիտին զոհաբերելու այլ բան չի մնում նրան, քան իր կյանքը.

Նուագս քեզ ձօն չէ՛ զուգակշիռ,
Ո՛, Մարգարիտ, զա՛նձ անկշիռ. ա՜խ, ա՜խ, զիս անտուր զենիր.
Քեզ ի նուէր չունիմ զայլ իր,
Զկեանս իմ դնեմ արդ ի կշիռ. աւա՜ղ, ասա՝ մեռի՛ր։

Սիրած էակի կորստյան մեծ վիշտը, որ բարձրանում է մինչև ողբերգության աստիճանը, բխում է բանաստեղծի նույնքան մեծ սիրուց և նրանով է պայմանավորված։ Սակայն դա միակողմանի սեր չի եղել։ Բանաստեղծը սիրել և սիրվել է փոխադարձաբար։ «Սուգ» ողբերգում սիրած էակին մեղմ հանդիմանելով, որ հեռացել և իրեն թողել է անել վիրապի

մեջ, բանաստեղծը նրան հիշեցնում է միասին ապրելու և մեռնելու իրենց ուխտը․

Ա՜խ, անմոռաց կեանք, հոգի, սէր,
Այդպէս երբէք չէր պայման մեր.
Կեալ, մեռանիլ, ցնծալ, տրտմիլ
Ի միասին՝ խոստումն էր մեր։

Փոխադարձ, երջանիկ այդ սերն էր իմաստավորում կյանքը, բանաստեղծին դարձնում աշխարհի տերը.

Քև տէր էի ես աշխարհաց,
Իսկ առանց քո՝ որբ գետնամած...
Չի՛ք չափ հեղման դառն արտասուաց,
Յիմոց պղտոր միշտ թաց աչաց.
Լեղի իմ ջուր, մոխիր է հաց,
Նինջ իմ՝ պատկեր գերեզմանաց...

Առանց սիրո կյանքը մահից վատթար է, և ավելի դառն՝ «քան բիւր չար կատարած»։

Իր ծանր վշտի մեջ դժբախտ սիրահարը ունենում է նաև թեթևացման, մոռացման պահեր, երբ վերանում է դառն իրականությունից և վերապրում է, վերհիշում իր կյանքի երջանիկ ժամերը։ Այդպիսի մի վերհուշ է «Պարերգությունը»՝ Ալամդարյանի լավագույն ստեղծագործություններից և ժամանակին շատ սիրված ու տարածված երգերից մեկը։

Յերկու ձեռին երկու մոմ՝
Ինձ ընդառաջ եւ յիւր տան.
Մի՛ հարցանէք ով էր նա,
Հրեշտա՞կ, թէ կոյս լուսագեղ։

Բանաստեղծության տողերի միջից հառնում է փեսացուին դիմավորող, ամոթից վարդ կտրած, պարկեշտ հարսնացուի կերպարը՝ ողջ գեղեցկությամբ ու հմայքով.

Մարգարտափայլ մարմինն էր,
Հասակն էր յոյժ վայելուչ.
Ջոտիքն իւր վարսք բարշ կային,
Ի գոյն քրքմոյ ·փայլէին։

Դիմացն շրիղ երևոյթ,
Յօնից, աչաց, այտից գեղ,
Շրթանց, լեզուին համ անոյշ՝
Խոստանային ինձ կեանք նոր։

Հարսնացուի տեսքից սիրահար երիտասարդը բռնվում է հիացմունքի ու հաճույքի դողով և մոռանում ամբողջ աշխարհը։

Ա՜խ, ասացի, թմրեցա,
Սիրտս սկսաւ դողդողալ,
Զաշխարհ համայն մոռացայ
Ի գեղ կուսին ապշեցայ։

Բանաստեղծական այս վերհուշը հատկանշվում է երանգների ու զգացմունքների նրբությամբ, քնքշությամբ. վշտի ծանրությունը չի ճնշում այստեղ, ինչպես մյուս երգերում։ Սակայն վերհուշի երջանիկ պահը արագ անցնում է, տեղի տալով դաժան, անողոք իրականությանը, որ բանաստեղծին հանգեցնում է հուսահատական եզրակացությունների. աշխարհը անգութ թշնամի է, ավելի չար, քան մահաթույն օձը. սիրո ցանցով նա քեզ գցում է անել որոգայթը և ապա արագ հափշտակում սիրած էակիդ։

Կյանքը այլևս կորցնում է իր հմայքը, և հուսահատության ծայր աստիճանին հասած՝ բանաստեղծը հանգում է մահվան գաղափարին։

«Ողջույն հրաժեշտի զաւակաց իմոց» բանաստեղծության մեջ, որ, ըստ էության, դրամատիկական մի փոքրիկ պատկեր է, Ալամդարյանը նկարագրում է հուսահատության այդ պահերից մեկը։ Դա մի հուզիչ զրույց է հոր և նրա մատաղահաս դուստրերի միջև։

Երթամ ես յաշխարհ ի ձէնջ յոյժ հեռի,
Երթամ որոնել զայն, զոր կորուսի.
Արտասուօք, ողբովք, ձայնիւ սրգալի
Խնդրեցից զնա յամենայն երկրի։

Դուստրերից, ըստ երևույթին, ամենափոքրը՝ Մարիամը, դեռևս անհաղորդ կյանքի չարին ու բարուն, անկարող ըմբռնելու հոր վիշտն ու նրա խոսքերի բուն իմաստը, մանկական անմեղությամբ հարցնում է.

Զի՞նչ խոսիս, հայրիկ, զի՞նչ դու կորուսեր,
Եւ զի՞նչ գտանել յանծանօթ երկիր
Կամիս, ասա մեզ, մի՛ թագուցաներ,
Տա՛ր և զմեզ ընդ քեզ, հա՛յր, մի՛ արտասուեր։

Միայն երկրորդ դուստրը՝ Աննան է գիտակ իրողությանը և քույրերին բացատրում է, որ հայրը սգում է իրենց մոր կորուստը.

Հայր մեր, ես գիտեմ, ըզմայր մեր ողբայ,
Զմա՛ նորա յիշեալ՝ մորմոքի, սրգա…

Իսկ երրորդ դուստրը՝ Կատարինեն, մխիթարելով հորը, հարցնում է, թե՝ երբ նա գնա, ո՞վ պիտի, ապա, սիրի, փայփայի իրեն.

Զիս ո՞ սիրեսցէ՝ զԿատեայս քո թշուառ…

Մոր գգվանքներից այնքան վաղ և ընդմիշտ զրկված որբուկների հոգու անմեղությունն արտացոլող և միաժամանակ նրանց անօգնական վիճակի մասին հիշեցնող այդ սրտառուչ խոսքերը կասեցնում են վշտահար հոր հուսահատական քայլը։

Սիրո անհուն կարոտից ու տենչանքից ավայտող բանաստեղծը միայն անուրջներում է գտնում իր թանկագին կորուստը («Անուրջք»).

Յառաւօտուց ի յանկողնի
Սէր նազելւոյս զիս խորովէր.
Անքուն գիշերն ես անցուցի,
Զի տանջէր զիս նորա պատկեր։

Լեզուս ցամաք, հոգւով վհատ,
Տկար մարմնով կայի անկեալ.
Անուրջք անոյշք ի նինջ կիսատ
Զթայց աչօքս կային սփռեալ...

Այգարացին. երբ լույսի ցնցուղները ներս են թափանցում և վաղորդյան աղջամուղջը սկսում է ցրվել, կիսարթուն բանաստեղծը, կորցրած իրականության և երազի սահմանածիրը, պատրանքի մեջ, լսում է իր նազելու ոտնաձայնը և քնքուշ հանդիմանությունը.

Աւ՞ղ գլխոյս, գոչեաց ճիպով,
Ընդէ՞ր մաշիս, սրտիս իշխան։

Նազելու ձայնը նրա մեջ բորբոքում է կյանքի կայծը և ողջ էությունը համակում ցնծությամբ։ «Անուրջքը» հայ հին և նոր քնարերգության լավագույն նմուշների շարքը կարելի է դասել։

Սիրո վշտից մարդկային հոգու ապրած տառապանքները Ալամդարյանը գեղարվեստորեն դրսևորում, բյուրեղացնում է արտահայտչական բազմերանգ ձևերով, միշտ նոր փոխաբերություններով ու պատկերներով։ Միանգամայն ինքնատիպ ձևով նա օգտագործում է արևելյան պոեզիայում և միջնադարի հայ տաղերգության մեջ այնքան շատ սիրված ու տարածված վարդի և սոխակի մոտիվը, գրելով «Թշուառութիւն սոխակի», «Վարդակորոյս», «Սոխակ ի հոգևարս», «Կոկովանք վարդի» բանաստեղծությունները։

Այս շարքից առաջինը («Թշուառութիւն սոխակի») չի զիջում Կոստանդին Երզնկացու և Առաքել Բաղիշեցու նույն մոտիվով հյուսած հայտնի տաղերին։

Հոգեբանական ինչպիսի՜ նուրբ երանգներով ու ելևէջներով է տրված տագնապի և անհանգստության զգացումը սիրած էակի նկատմամբ։ Որքա՜ն ճշմարիտ, իրական, մարդկայնորեն վսեմ է սոխակի վիշտը։

Այգարացի աղջամուղջին սոխակը սրտի տագնապով է մտնում այգի. տերևների՝ միմյանց ողջունելը — մեղմ սոսափյունն իսկ նրան սարսափ է պատճառում, որովհետև սև օրեր, անիրավ հալածանքներ է տեսել և տեղյակ է բիրտ պարտիզպանի գռեհիկ ու տմարդի բարքին։ Նա առաջանում է հառաչելով, սրտի դողով ու բաբախով, և քանի մոտենում է վարդի թփին, տագնապն այնքան ավելանում է. սիրտը տրտմություն է գուշակում և աչքերից արտասուք քամում. նա մերթ սրտաբեկ հառաչում է, մերթ՝ մեղմ երգում և մերթ լսում ու ամեն ձայնի ականջ դնում։

Տառապարդ, ցողոտ, պճնազարդ այգին՝ անապատ ու ավերակ է թվում սոխակին. նարդոսների, շուշանների զմայլելի բուրմունքը, թռչունների

հոգեզվարճ, քաղցրաձայն երգերը, արծաթափայլ, սառնորակ աղբյուրները՝ նրան թվում են դահիճ ու դանակ։ Բնությունն իր բոլոր հրապույրներով նրան չի գրավում։ Վշտահար սոխակի աչքին ոչինչ չի երևում.

Սոխակն իմ կոյր է.
Բացի վարդէ
Ոչ ինչ տեսանէ.
Սոխակին դիպան
Զճանապարհայն
Ծաղկունք զանազան.
Նա ոչ զոք ետես,
Ոչ ինչ խօսեցաւ,
Յոչ ինչ հայեցաւ.
Նա զայլ ոք խնդրէր,
Յառաջէր, հառաչէր,
Աչօք թացօք զվարդն որոնէր։

Այս փոքրիկ, բայց գողտրիկ պոեմի դրամատիկական լարվածությունն իր կուլմինացիային է հասնում, երբ սոխակը տեսնում է թփից պոկված, գետնամած վարդը. անողոք իրականությունը հաստատում է նրա տխուր կանխազգացումը.

Յանկարծ թալկացաւ,
Կենդանի մեռաւ,
Ուշաբարձ անկաւ,
Ընդ թփով վարդին
Տեսեալ զթերթ նորին
Ընդ պերճ երանգին
Ակնախաբ բոսորին
Զգոյն շառագոյն և դեղին
Տարա՜ծ ի գետին.
Մեծաձայն վայեաց,
«Վա՛րդ, վա՜րդ» ձայնեաց,
Զիւր շունչ վճարեաց...

Վարդի և սոխակի այլաբանությամբ հյուսված Ալամդարյանի մյուս ողբերգերը գրված են նրա կյանքի վերջին շրջանում, Հաղբատում, ուր նա աքսորված էր ցարական սատրապ Պասկևիչի կարգադրությամբ։ Ո՛չ տասնամյա ժամանակը, ո՛չ էլ վարդապետական վեղարը որևէ չափով չէին կարողացել մոռացնել տալ կամ նույնիսկ մեղմել սիրած էակի կորստյան վիշտը։ Ցարական դաժան պաշտոնյաներից և խավարամոլ, քսու հոգևորականներից հալածված, երկարատև հիվանդությունից հյուծված, աքսորական բանաստեղծի զգայուն սրտում նոր ուժով են բորբոքվում սիրո տենչն ու կարոտը, առավել ցավագին են հնչում նրա ողբերգերը.

Այգանայ ահա՛, այգացաւ ահա՛.
Ա՜խ, սոխակս հեծէ, դնի անզգայ։
Լաց չառնէր երէկ, այսօր չատ ողբայ.
Վարդն իւր չերևի, այգն է ցայգ նմա։

Աւա՜ղ վիճակի անբաղդ սոխակին,
Որ կեանքն ի հնոցի սիրոյ տոչորին,
Մա՜հ ո՞ւր ես, ե՛կ, հա՛ս, օգնեա՛ թշուառին.
Դու դառն ես այլոց, քաղցր ես անբաղդին։

Նա փորձել է ուշքը հավաքել, ճգնել է հանդուրժել, դիմանալ վշտին, զգացմունքները «անօրէն բաղդին» հնազանդեցնել, բայց զուր.

Եղո՜ւկ, նա խաբի. չէ՛ կարող ժուժել,
Ուժգնութեան սիրոյն ո՞վ կարէ յաղթել։

Արդ սիրտ սոխակին է խոց, վիրաւոր,
Լեարդն լեալ հրաբուն, վիշտքն՝ բիւրաւոր,
Նա զուրկ ի վարդէն շրջի խելացնոր,
Ցաւոտ, աղեխարշ, կիսամեռ, անզօր։

Վերջին քառատողի ակնարկը «բյուր վշտերի» մասին, անտարակույս, բանաստեղծի կրած հալածանքներին է վերաբերում, որ չէին դադարել նաև աքսորավայրում։ Հակառակորդները ճգնել են բռնանալ նրա զգացմունքների վրա, չարախնդությամբ ծանակել նրա նվիրական վիշտը։ Այդ առթիվ նա իր տրտունջն ու խուլ բողոքն է հայտնում.

Մոլորին իմ միտք, լեզուս պապանձի,
Բարունիլ զքէն ոչ զօրէ յայտնի, առ չարացն ահի...

Կամ՝

Յիշել զքո անուն չիշխեմ, պապանձիմ,
Յահէ նախանձոտ մարդոց դժնադէմ։

Եվ մի այլ տեղ՝

Զիմ ողբովք, հառաչանօք ատամնաբաց ծիծաղին։

Եվ որպես պատասխան բնության ձայնը խեղդել ցանկացող միջնադարյան խավարամոլներին ու ասկետներին, Ալամդարյանը բացականչում է.

Ուժգնութեան սիրոյն ո՞վ կարէ յաղթել։

Սիրո ամենահաղթ այդ ուժի առաջ անզոր էին ինչպես վանքի հաստաբեստ պատերն ու կուսակրոնի վեղարը, նույնպես և «դիվադեմ մարդկանց» դավերն ու խարդավանքները։ Նրանք անկարող եղան բանտելու բանաստեղծի սրտաբուխ խոսքը։

Ալամդարյանի ծանր հոգեվիճակը աքսորավայրում և Լոռու հիասքանչ բնությունը միմյանց բացասող հակադրություն էին ներկայացնում։ Լոռին գարնանային իր հրապույրներով ավելի էր շեշտում բանաստեղծի ապրած ողբերգությունը։

Ամոթխած, «հույժ չքնաղ» մանուշակը գարուն է ավետում, մշտականաչ մայրիները, սաղարթազարդ սոսիներն ու նոճիները անդորր խա-

ղում են և, խրախճան կազմած, հրավիրում խնդության՝ գուշակելով լավ և խաղաղ օրեր, մինչդեռ «Հոգևար» սոխակը տոչորվում է անդարձ կորցրած վարդի կարոտով («Սոխակ ի Հոգևարս»)։

Տու հոգեզուարճ ազնիւ իմ վարդ, պատուական, կարմրերփեան,
Յե՞րբ ի տրփիդ կացցես սքօղեալ, հոգեհան, կարկեհան.
Աչացս իմ լոյսք քով կարոտով քաղեցան, քամեցան,
Անգամ մի ցո՛յց զգեղդ լոսոր՝ հրաշազան, աննման.
Աշխարհ խնդայ, ես եմ միայն ի շիւանս

Բնության պատկերների առատությամբ չի փայլում Ալամդարյանի պոեզիան. բնությունը, որպես այդպիսին, նրան կրաղեցնում է իր հոգեվիճակը դրսևորելու համար միայն։

Վարդակորույս, վշտահար սոխակը, որ գիշերն ամբողջ, մինչև ոսկեղեն մահճից առավոտի հառնելը, վարդի կորուստն է ողբերգել, լուսնին է դիմում՝ լուսավորելու իր տրտմագին հոգին, և արևին աղերսում՝ ջերմացնելու իր չքնաղ վարդը.

Լիալոյս լուսին, զարդ ամպոց մթին,
Փառք գիշերացեալ սրտիս ցաւագին, հոգւոյս տրտմագին,
Առ իս նշողեա՛ զքո շող պանծագին...
Արև բարերար, զվարդն իմ ջեռո՛
Նախածագ լուսովդ, եռանդեամբ լցո՛, զարթո՛, փայլեցո՛.
Բակերտ է, չքնաղ, գիրգ, ջինջ ծով սիրո,
Արժանի շողոյդ, ջեր գթոյ, լուսոյ, մաքուր ի տապոյ...

Վարդի և սոխակի ողբերգերում Ալամդարյանը դրսևորել է իր զգացմունքների աշխարհը, և վերջինս փոթորկող սիրո վիշտը։ Խորապես ապրըված են նրա յուրաքանչյուր տողն ու բառը, որոնք, ասես, գրչի տակից չէ, որ դուրս են եկել, այլ պոկվել են բանաստեղծի ցավատանջ հոգուց։

Վարդի և սոխակի մոտիվով Ալամդարյանը կապվում է միջնադարի հայ տաղերգության և ժողովրդական պոեզիայի տրադիցիաների հետ։ XIII—XVIII դարերի հայ տաղերգուները, սկսած Կոստանդին Երզնկացուց և Առաքել Բաղիշեցուց մինչև Պաղտասար Դպիր և Սայաթ-Նովա, բազմաթիվ տարբերակներով ու երանգներով երգել են վարդն ու սոխակը, նրանց մեջ մարմնավորելով սիրո գեղեցկությունն ու թովչանքը, կարոտն ու վիշտը։

Այս մոտիվի մշակմամբ, սակայն, Ալամդարյանը նախորդներից տարբերվում է մի էական առանձնահատկությամբ, որ բխում է նրա քնարերգության ընդհանուր ոգուց։

Միջնադարյան տաղերգուների ստեղծագործություններում սոխակի վիշտը հարատև չէ, քանի որ նրա տենչանքի առարկան՝ վարդը վերադառնում է յուրաքանչյուր գարնան հետ. սոխակը հասնում է իր «մուրազին»՝ նոր հրապույրներով ու բույրերով վերարացված վարդին։ Այդպես է Գրի-

գորիս Աղթամարցու «Վասն վարդի և պլպուլի» պոեմում, այդպես է նաև Նահապետ Քուչակին վերագրված սքանչելի հայրեններից մեկում.

Եկին ու բերին խապար պիւլպիւլին, թէ վարդն մեռաւ.
Պիւլպիւլն ի վարդին սիրուն սև ներկեց զշապիկն ու հագաւ.
Շուտով մի բերին խապար պիւլպիւլին, թէ վարդն եկաւ.
Պատռեց զիւր սևուկ շապիկն, զկարմիր մի շուտով հագաւ։

Այստեղ, ինչպես նաև Գրիգորիս Աղթամարցու և մյուս տաղերգուների ստեղծագործություններում, վարդն ու սոխակը մարմնավորելով սերը, ներկայանում են գերազանցապես իբրև այդպիսիք (ծաղիկ և թռչուն), իրենց հիմնական հատկանիշներով։ Բնության անխախտ օրինաչափության համաձայն, վարդը թառամում և կրկին փթթում է։ Այս օրինաչափությունը դնելով իրենց ստեղծագործությունների հիմքում, միջնադարյան տաղերգուները հաստատել են բնության և սիրո հավերժականության գաղափարը։

Ալամդարյանի երգերում վարդն ու սոխակը խիստ պայմանական, սիմվոլիկ նշանակություն ունեն. բանաստեղծի համար դրանք սոսկ արտահայտչական միջոցներ են՝ իր հոգեվիճակն առավել վառ ու ցայտուն դրսևորելու համար։ Այստեղ ոչ թե վարդի թառամումը սգացող սոխակն է, այլ իր սիրած էակի անվերադարձ կորուստը ողբացող մարդկային հոգին։

Վարդի և սոխակի մոտիվի բանաստեղծական այսօրինակ մեկնաբանումը բխում է Ալամդարյանի անհատականությունից և լիովին ներդաշնակում է նրա քնարերգության էլեգիական ընդհանուր բնույթին։

Ի տարբերություն միջնադարյան տաղերգուների (թերևս միայն Սայաթ-Նովայի բացառությամբ), Ալամդարյանի ստեղծագործության մեջ տիրապետողը ոչ թե սիրո վայելքի խնդությունն է, այլ սիրո ողբերգականությունը։

Այդ ողբերգականության ակունքը սիրո անհագուրդ տենչն էր, որով համակված էր բանաստեղծը իր ողջ էությամբ։ Ալամդարյանը այնքան ողբերգականորեն է ապրում սիրո վիշտը, որ հանգում է նույնիսկ մահվան գաղափարին, որովհետև նրա համար սերը և կյանքը համանիշներ են. սերն է իմաստավորում կյանքը. սիրո ուժը գործում է բնության տարերային ուժերի օրինաչափությամբ.

Որպէս ծուխն ի վեր բնապէս ձգի,
Որպէս նետն առ իւր նպատակ բերի,
Որպէս ջուր վերուստ ի վայր սողոսկի,
Որպէս մարդ հիւանդ՝ ողջ լինել կամի՝
Նոյնպէս սիրտ, մարմին, իմ բոլոր հոգի
Քեզ բաղձայ, ո՛վ իմ, քև վառի, մաշի[1]։

[1] Լ. Մանվելյանը նշում է Ալամդարյանի «Դաւ երևակայութեան» և Շելլիի «Սիրո փիլիսոփայությունը» բանաստեղծությունների նմանությունը, համարելով պատահական բան։ Անհավանական չէ, սակայն, որ Ալամդարյանը ծանոթ լիներ Շելլիի ստեղծագործությանը, ինչպես ծանոթ է եղել Բայրոնին։

Սիրո հմայքին ենթակա են բնության բոլոր արարածները՝ասուն, թե անասուն, թռչուն, թե սողուն։

Ծիտ, լոր, որդն և օձ, չքոտին մրջիւն
Սիրո ազդեցմանց անձայն հնազանդին։

Աշխարհում ոչինչ, և նույնիսկ մահը, ի վիճակի չէ հաղթել սիրո զորությանը.

Մահ, գանձ, կյանք, չար ցավ, վաստակ, տքնութիւն,
Ոչ կարեն մեղմել սիրոյ զրկնութիւն։

Այսպիսով, Ալամդարյանի ստեղծագործության մեջ սիրո ողբերգը հանգում է սիրո համատարած և ամենահաղթ ուժի պանծացմանը։ Բանաստեղծը երգում է սիրո հաղթանակը մահի դեմ, սիրո հարատևությունն ու հավատարմությունը։ Սերն անկրկնելի է. եթե մի թույն դեղաթափ է մի այլ թույնի նկատմամբ, ապա առաջին սերը բացառում է այլ սիրո հնարավորությունը, որովհետև մի հոգին չի կարող երկու իրարամերժ զգացմունքների գերի լինել, ինչպես և մի սիրտը երկու տարբեր աստվածների մեհյան լինել չի կարող.

Անթաքուստ է սէր, քաղցր են վերք նորա,
Սիրահար սրտի սերն է անթեղայ։
Մի թոյնն է դեղթափ երկրորդեալ թունոյ,
Իսկ սէրն առաջին՝ է խոչ միւս սիրոյ։
Մի հոգի չէ ստրուկ նրկուց ներհակ կրից,
Մին սիրտ չէ մեհեան երկուց ահեղ դից։

Ալամդարյանի սիրո երգերը, որոնք խորապես ապրված զգացմունքների բուռն պոռթկումներ են, չունեն միջնադարյան մեր տաղերգուների վառվռուն, շլացուցիչ գույները և կամ զգայական շեշտերը։ Նրա երգերում երևակայությունը զիջում է զգացմունքին. բանաստեղծն ամբողջովին կլանված է իր սիրած էակի կորստյան անսփոփ վշտով. նրան քիչ է զբաղեցնում նույնիսկ իր նազելու արտաքին նկարագրությունը։ Նրա գեղեցկությունն ու հմայքը արտահայտելու համար Ալամդարյանը սովորական փոխաբերությունների և համեմատությունների չի դիմում, որովհետև իր «սրտի թագուհին» անհամեմատելի է.

Քեզ չիք ինչ նման յոլորտս աշխարհի։

Պատմական և առասպելական բոլոր գեղեցկուհիները նսեմանում են իր նազելու առջև, ինչպես գիշերը՝ ցերեկի համեմատությամբ.

Ջրնաղաց ըզգով, զանուն և պատկեր
Շատ լուսյ, տեսի յայս աշխարհ ավեր։
Յուդիթ, Սաթինիկ, Բերսաբէ, Նաթեր,
Մեծ Կղեոպատրայն, որ զաշխարհ գերեր...
Առ քև չեն այլ ինչ, բայց միայն ստուեր.
Դու տիւ աննման, իսկ դոքա՝ գիշեր։

Սիրած էակին տված այնպիսի որակումները, ինչպես՝ «անգին ընկեր», «Հույս իմ», «կյանք իմ կենաց», «իմ կենաց կարդ», «գանձ անկշիռ», «սեր մաքուր», «չինչ ծով սիրո», ցույց են տալիս, որ Ալամդարյանը կնոջ մեջ գնահատում է ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեկան գեղեցկությունը։ Կինը բանաստեղծի համար եղել է հոգևոր նեցուկ, որ նրա հետ բաժանել է կյանքի ոչ միայն վայելքն ու ուրախությունը, այլև վիշտն ու դառնությունը։ Թերևս, մասամբ դրանով պետք է բացատրել, որ աքսորավայրում, կյանքի ամենադառն օրերին, երբ Ալամդարյանը, ինչպես երբեք, կարիք ուներ բարոյական հենարանի, նրա հոգում անթեղված վշտի ու կարոտի կրակը կրկին է բորբոքվում, և ավելի սաստիկ։

Սխալ կլիներ կարծել, թե խոր վիշտը, որ հորդում է Ալամդարյանի քնարական երգերի դրեթե յուրաքանչյուր տողից, հետևանք է միմիայն անձնական դժբախտության։

Շատ երիտասարդ հասակից մտնելով մանկավարժական-հասարակական գործունեության ասպարեզ, բանաստեղծը, ինչպես ցույց են տալիս նրա կենսագրության փաստերը, հաճախ բախվել է ժամանակի խավարամոլների հետ և հալածվել աշխարհիկ ու հոգևոր բարձրաստիճան այնպիսի պաշտոնյաներից, ինչպիսիք են՝ Հովհաննես և Խաչատուր Լազարյանները, Հովհաննես Կարբեցի կաթողիկոսը, կոմս Պասկևիչը, և, կյանքի վերջին շրջանում նաև Ներսես Աշտարակեցին։

Այդ ամենը չէին կարող խոր հետք չթողնել նրա նրբազգաց հոգու և ստեղծագործության վրա։

Սիրած ասպարեզից արտաքսված, լքված ու հիվանդ բանաստեղծի դառն ապրումներով ու մռայլ խոհերով են համակված վերջին տարիների նրա բանաստեղծությունները, և հատկապես «Գարուն» էլեգիան։

Այստեղ ևս բանաստեղծի ծանր հոգեվիճակը տրված է արթնացող բնության հակադրությամբ։ Գարնան հրապույրներն ավելի են խորացնում նրա հոգու վերքերը, հիշեցնելով իր «անդարձ գերությունը».

Յամսավերջն ապրիլի զպատուհանս բացի,
Զձիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի.
Արտասուք եռանդունք զայտս իմ այրեցին,
Զիմ անդարձ գերութիւն յուշն իմ մուտ ածին։

Լեղուապէս դառնացան քիմք վհատ հոգւոյս,
Զմրեցաւ զգայարանքս, հատան Լւք շնչոյս։
Ափսո՜ս ինձ, ասացի բիւր անգամ յայն օր,
Շատ անէծս թափեցի ի ծննդեանս վատ օր։

Բանաստեղծությունը վերջում կրոնական երանգ է ստանում։ Հուսալքված բանաստեղծը, որ իրեն «անհույս կորուսյալ» էր համարում, ափոփանք է փնտրում միստիկ խորհրդածությունների մեջ։

Ալամդարյանի կրոնական երգերը գերազանցապես գրված են կյանքի վերջին տարիներին (1831—1834)։ Կրոնական մտայնությունից զատ այդ

երգերը արտացոլում են քնարերգակ բանաստեղծի հիշյալ տարիներին ապրած հոգեկան տվայտանքը, վիշտն ու բողոքը «ամբարիշտ նեղիչների» և դաժան ճակատագրի դեմ։

Մորմոք, սուգ, կսկիծ և երկունք մահուան,
Անթիւ տառապանք գինն գրջեցան...
Դառնացան իմ կեանք յօրէս ծննդեան,
Յո՛ և գնացի՝ միշտ գտի դարան...

Ալամդարյանը գրել է նաև սյուժետային բանաստեղծություններ հին կտակարանի մոտիվներով («Ողբերգութիւն Իսրայէլի», «Լաց դստերն Յեփթայեայ»)։ Բանաստեղծին գրավել է ոչ թե կրոնական նյութը ինքնին, այլ դրա հիմքում ընկած մարդկային ողբերգությունը։ Այս տեսակետից հետաքրքրական է «Ողբերգութիւն Իսրայէլի» բանաստեղծությունը, ավելի ճիշտ՝ դրամատիկական փոքրիկ պոեմը։ Այստեղ պատկերված է այն պահը, երբ գուժկանը Հովսեփի արյունոտ պատմուճանը ձեռքին ներկայանում է Հակոբին և հայտնում, թե գազանները նրա որդուն սպանել են։ Անդրանիկ և ամենասիրած որդու մահվան գույժը խորապես ցնցում է ծերունուն.

Ա՜խ, Յովսէ՜փ, Յովսէ՜փ, ցուպ իմ ծերութեան,
Շնորհալի, քաղցրիկ, քնքույշ, գեղազան,
Աչեղ, մրայօն, կարմրայտ, քաղցրաբան,
Խարտեաշ, գանգրահեր, մանուկ աննման...

Ո՜հ, որդեա՜կ, որդեա՜կ, զիս բարձ, առ քեզ տար,
Մի՛ թողուր զիս աստ տանջիլ չարաչար.
Ես՝ քո մոլորակ, դու՝ արփի պայծառ,
Առանց քո զինն պատեալ է խաւար։

Վշտահար ծերունու հարսներն ու թոռները աշխատում են սփոփել նրան, բայց զուր. որդու կորստյան վիշտը նորոգում է կնոջ վաղաժամ մահվան հին, բայց դեռ չսպիացած վերքը։ Իր սիրելիների կորուստը ողբալով, անմխիթար ամուսինն ու հայրը զայրույթով ծառանում է մահվան դեմ.

Մեռելոց իշխան, կմախք սոսկալի,
Համայն կենդանեաց տեսիլ սոսկալի...

Անգո՜ւթ, ձգեցեր զքոյ սուր գերանդի,
Հնձեցեր յերկրէ զիմ Ռաքել բարի,
Զիս ի սուգ արկեր, յոգր անտանելի,
Զիս միայն թողեր այրի տրտմալի։

Մ. Աբեղյանն իրավամբ նկատել է, որ այստեղ «բանաստեղծն իսկապես իր անձնական կյանքն է ողբում»[1]։ Ժամանակակիցներն իրենց հի·

---

1 «Արարատ», 1909, № 9, էջ 732։

շողություններում վկայում են, որ այս երկում, ի դեմս Հովսեփի, Ալամդարյանը սգացել է իր համանուն որդու մահը. «Հովսեփ մանկան տարաժամ մահը,— պատմում է Գ. Պատկանյանը,— խանգարեց նորա կենաց կանոնավոր ընթացքը։ Անմխիթար թախիծը նորա զվարթ բարքի տեղը սերմանեց սևամաղձություն, որ պատճառ տվեց նորան զանազան եղերերգական բանաստեղծություններ շարադրել»[1]։ Պետք է ավելացնել, որ Ռաքելին վերաբերող տողերով Ալամդարյանն իր զգացմունքներն է արտահայտել կնոջ՝ Մարգարիտի նկատմամբ, որի շիրմաքարին փորագրված բանաստեղծության երկու տողը վերցված է հենց այս ողբերգից.

Չէ՛ նա վատաբաղդ, որ վաղ մեռանի,
Այլ որ յետ մահու սիրելւոյն ապրի։

Այս հանգամանքի վրա հատկապես կանգ առանք՝ առավել ակնառու դարձնելու համար այն իրողությունը, որ Ալամդարյանը կլասիցիզմից անցնելով սենտիմենտալիզմին և ռոմանտիզմին, իր ստեղծագործության ակունքն է դարձնում թրթռուն կյանքը, մարդկային հոգին, Աբովյանի ասած՝ «սրտի բաները»՝ «սերը, ծնողը, զավակը, մահը»։ Իր գրեթե բոլոր քնարական երգերում Ալամդարյանը ուղղակի կամ անուղղակի արտահայտել, մարմնավորել է իր հոգում բեկված զգացմունքները, իր ապրածն ու զգացածը։ Հարազատ զավակի մահվան կսկիծը խորապես ապրած բանաստեղծը միայն կարող էր այնքան ճշմարտացի և սրտառուչ կերպով վերարտադրել պանդխտության մեջ մեռած որդուն սգացող մոր հոգեկան տառապանքը («Մօր աղեկիզի ողբ քստմնելի ընդ մահ անդրանկի յօտար աշխարհի»)։

Հոգեպարարճ դարձիր, հոգեկից որդեակ,
Ես ցայգ ու ցերեկ բաց աչօք սպասեմ.
Ի տունջեան յուսով սփոփ խաբեմ, որդեակ,
Զգիշերն երազովք միշտ ընդ քեզ խօսիմ.
Ո՜հ, ե՞րբ եկեսցես, զիս ե՞րբ սփոփեսցես։

Իմ սիրտ մայրենի, իբրև ջուր յստակ,
Զպատկերդ ցուցանէ յինքեան պարզ, որդեակ.
Ա՜խ, մնացի իմ սիրտ, սիրտ տրտմագուշակ,
Քայքայիմ, հալիմ, կաթոգնիմ, հաշիմ.
Զիս ե՞րբ սփոփեսցես, ե՞րբ տեսցես, որդեակ։

Կարոտակեզ մայրը փափագում է գոնե մեկ անգամ տեսնել որդու երեսը, լսել նրա ձայնը, թող այնուհետև երկնքի շանթերը կտրեն իր սև կյանքի թելը։

Մայրական «տրտմագուշակ» սիրտը, տխուր նախազգացումներով համակված, մերթ արթուն և մերթ երազում տեսնում է որդուն օտարների

---

[1] *Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ (Մատենադարան), Պատկանյանների ֆ., թղթ. 139, վավ. 51։ Տես նաև՝ ՀՍՍՌ Պետ. կենտր. պատմ. արխիվ, ֆ. 57, գ. 349, թ. թ. 28—50։*

մեջ հիվանդ, անխնամ, մերձ ի մահ պառկած. ձեռք է մեկնում նրան, բայց չի հասնում։ Եվ «նզովյալ երազից» կրկին արթնացած, մայրը անհուն քնքշանքով փարում է որդու մտապատկերին, անձկությամբ կանչում.

Փարիմ զքո ոտից, որդեակ նազելի,
Զոհ լիցին իմ կեանք քեզ, անգին որդի.
Դու արդ դարձ առ իս, իմ հնազանդ որդի,
Ընդ քո զի՛ս մեռո, կեցո զիմ հոգի։
Վա՜յ, քանի՜ ցաւոն է մայրութիւն, որդի։

Համբար է վշտաց սիրտ մօր քոյ, որդեակ,
Անհուն են աչայս հոսանք արտասուաց։
Դու ինձ մխիթար, ծաղիկ անուշակ,
Խարիսխ իմ հուսոյ, իմ կեանք, լոյս, տատրակ,
Փութա, դարձ առ իս, սպառիմ ի կենաց։

Որքա՜ն սեր, քնքշություն, կարոտ, վիշտ ու տրտմություն է ամփոփված մայրական սրտառուչ այս խոսքի մեջ։ Ալամդարյանի այս ողբերգը վստահորեն կարելի է դասել մայրական սերն ու վիշտը մարմնավորող քնարական լավագույն ստեղծագործությունների շարքը։

Ինչպես վերը նշվեց, Ալամդարյանը մի առանձին հակումն է ցուցաբերում պատկերելու մարդկային ողբերգությունը։ Նրա առաջադիր նպատակը այդ է եղել նաև «Լաց դստերն Յեփթայեայ» բանաստեղծությունը գրելիս։

Ըստ Աստվածաշնչի լեգենդի, իսրայելացիների զորավար Յեփթայեն մարտի մեկնելիս խոստանում է, որ եթե հաղթանակով վերադառնա, զոհաբերի նրա՛ն, ով առաջինը իրենց տանից դուրս գա ընդառաջ։ Եվ այդ ճակատագրվում է իր միամորիկ դստերը։ Ալամդարյանն իր բանաստեղծությունը նվիրել է Յեփթայեի դստեր ապրումներին՝ զոհաբերումից առաջ։ Այս նույն մոտիվով բանաստեղծություն ունի նաև Բայրոնը։ Գ. Պատկանյանի վկայությամբ, Ալամդարյանը «Լաց դստերն Յեփթայեայն» գրել է «Լորդ Բայրընի հետևմամբ»։ Փաստն ինքնին հետաքրքրական է. սակայն Ալամդարյանը ոչ թե հետևել, այլ սոսկ ստեղծագործական դրդում է ստացել անգլիացի բանաստեղծից, և տարբեր մեկնաբանություն տվել հերոսուհու կերպարին։ Եթե, ըստ Բայրընի, զորավարի դուստրը զոհաբերությունն ընդունում է հայրենասիրական պարտքի գիտակցությունից թելադրված, ապա, ըստ Ալամդարյանի, նա ենթարկվում է ճակատագրի և աստծու կամքին։

Ալամդարյանը ստեղծագործական ներշնչում է ստացել նաև Իտալիայի վերածնության խոշորագույն բանաստեղծ Տորկվատո Տասսոյից, թարգմանելով մի հատված նրա «Ազատագրված Երուսաղեմ» պոեմից։ Ալամդարյանն ընտրել է Տասսոյի հռչակավոր պոեմի 4-րդ երգի այն հատվածը, ուր նկարագրված է գեղեցկուհի Արմիդան իր բոլոր հմայքներով («Ստորագրութիւն Արմիդեայ»)։ Հետաքրքրական է, որ հիշյալ հատ-

վածը պոեմի այն մասերից է, որ Տասսոն հետագայում հանել է, համարելով «հեթանոսական» և «խորթ» իր երկի քրիստոնեական ոգուն։

Արմիդան իտալացի բանաստեղծի ստեղծագործության ամենահմայիչ կերպարն է, որի նկարագրության թարգմանությունը Ալամդարյանը տվել է ստեղծագործական ավյունով.

Նորատունկ նոճւոյ իրանն է նման,
Ուղիղ, դիւրաթեք, բարձր, պատուական.
Ոսկեգոյն հերաց հարուստ հիւս շքեղ
Յակն ականողին արկանէ խոտիղ.
Ի բնէ են գանգուրք այս հերք պաշտելիք
Սիրահար հողմոց քնքուշ խաղալիկք։
Հայացք նազելիք՝ սիրոյ տեսարան,
Յայտս նորա փթթին նարդոս, վարդ, շուշան։

Տասսոյի պոեմի այս հատվածի ընտրությունն ու թարգմանությունը լիովին ներդաշնակում են հայ քնարերգակ բանաստեղծի գրական ըմբռնումներին և ստեղծագործության աշխարհիկ ոգուն։

Ալամդարյանի պոեզիայի մեջ արձագանք է գտել 1827 թվականի հոկտեմբերի 1-ը՝ «պարսկական բռնության երկաթե հնոցից» «ամենասիրելի հայրենիքի» փրկության օրը։ Նույն այդ թվակիրն ունեցող «Տեսիլ» բանաստեղծության մեջ Ալամդարյանը պատկերում է Արարատյան դաշտի ցնծությունը, երբ սգո քողը հանելով, Հայաստանը պճնվում է ոսկեխայտ շքեղ պատմուճանով։ Բանաստեղծը ոգեշնչված է հայրենի երկրի ապագայի լուսավոր հույսերով.

Դարն ոսկի մոռացեալ՝ արդ կրկին յայտնեսցի,
Սեռն Հայկայ յանաղարտ խնդութիւն զմայլեսցի…

Ալամդարյանի քնարը հասարակական կյանքի երևույթներին արձագանքել է նաև առակային ժանրի ստեղծագործություններով, որոնցից մեր ձեռքը հասել է միայն մեկը («Առիւծ և էշ»), գրված աշխարհաբար, 30-ական թվականների սկզբներին։ Առակում ծաղրված են կոմս Պասկևիչը, Հովհաննես Կարբեցի կաթողիկոսը և Ներսես Աշտարակեցին։ Գրական ուշագրավ այս վավերագիրը հավաստում է Ալամդարյանի ստեղծագործական զարգացման միտումը դեպի աշխարհաբարը։

Հ. Ալամդարյանի գրչին է պատկանում նաև «Հռադամիզդ և Զենոբիա» անավարտ պատմական ողբերգությունը, որ, ժամանակակիցների վկայությամբ, գրված է բանաստեղծի կյանքի վերջին շրջանում, 1833—1834 թվականներին[1]։

Ողբերգության նյութը վերցրած է մեր թվականության առաջին դարի անցքերից, երբ պարսից Վաղարշ Ա (Վոլոգես) թագավորը, օգտվելով հայ

1 Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ (Մատենադարան), Ջանազան հեղինակների ֆոնդ, թղթ. 67, վ. 51։

նախարարների միջև գոյություն ունեցող երկպառակություններից, ինչպես նաև հայ և վրաց ֆեոդալների թշնամական հարաբերություններից, արշավում է Հայաստանի վրա։

Ալամդարյանի ողբերգության պաթոսը հայրենասիրությունն է, պայքարը օտար նվաճողների դեմ։

Հայաստան չքնաղ ակն է աշխարհի,
Աղբիւր ճոխութեանց՝ փարթամ բարելի,
Բազմամարդ, հզօր, միշտ անպարտելի,
Է Եդեմ երկրորդ՝ մայր մարդկան ազգի։

Սակայն դժբախտ է գեղեցիկ Հայաստանը, որ ներքին երկպառակությունների հետևանքով դարձել է բազմաթիվ թշնամիների ասպատակությունների ասպարեզ։

Հ. Ալամդարյանը, ինչպես և իր ժամանակակիցներից շատերը, կանգնած է ազգային-կղերական պատմահայեցողության դիրքերում, Հայաստանի դժբախտության պատճառը տեսնելով սուբյեկտիվ ֆակտորների մեջ (անմիաբանություն, դավաճանություն)։ Սակայն, այնուամենայնիվ, Ալամդարյանի պատմական ողբերգությունը պետք է համարել 30-ական թվականների ազգային ինքնագիտակցության արտահայտություններից մեկը ժամանակի հայ դրամատուրգիայում։

Գրված լինելով կլասիցիստական դրամատուրգիայի սկզբունքներով, «Հռադամիզդ և Զենոբիան» զգալի չափով տարբերվում է մխիթարյան հեղինակների պիեսներից։ Ալամդարյանն իր ողբերգության գործող անձերի մեջ հանդես է բերել կանայք, ներմուծել կենցաղային տարրեր, ինչպես և գործածել ժողովրդական բառեր ու դարձվածքներ։

* * *

Ալամդարյանի պոեզիան XIX դարի հայ գրականության պատմության առաջին հիսնամյակի ուշագրավ էջերից է։ Որպես անցման շրջանի բանաստեղծ, Ալամդարյանն իր ստեղծագործության մեջ (կրոնական տաղերը և «Հռադամիզդ և Զենոբիա» ողբերգությունը) տուրք է տվել ժամանակի իշխող գրական ուղղությանը՝ կլասիցիզմին։

Սակայն մարդկային հոգու կենդանի թրթիռները արտացոլող նրա քնարական բանաստեղծությունները, որոնք հասարակական նոր հարաբերությունների պոետիկական արտահայտություններն էին, ազդարարում էին նոր, աշխարհիկ պոեզիայի սկիզբը, անցումը կլասիցիզմից սենտիմենտալիզմին և ռոմանտիզմին։ Կյանքն սկսում էր ներթափանցել գրականության, այդ թվում նաև պոեզիայի մեջ. միաժամանակ տեղի էր ունենում և հակառակ երևույթը՝ բովանդակությամբ աշխարհիկ գրականությունը, այդ թվում նաև պոեզիան, սկսում էր կյանք մտնել, տարածվել՝ հակառակ դրաբար ձևի, որ կլասիցիզմի դեռևս դիմադրող վերջին կապանքն էր։ Ալամդարյանի քնարական պոեզիան այդ երևույթի լավագույն

ապացույցներից է։ Ժամանակակիցները վկայում են, որ նրա սիրերգերը դեռ բանաստեղծի կենդանության օրով, լայն տարածում էին գտել։ Ալամդարյանը 1836 թվականին իր ուսուցչի շիրմի առջև արտասանած դամբանական ճառում, դիմելով նոր-նախիջևանցիներին, այդ փաստն է մատնանշել. «Տաղք և երգք նորա մինչև ցայսօր կան կենդանի ի բերանս և ի հոգիս զաւակաց ձերոց...»։ «Խնջույից և խրախճաններու մեջ,— պատմում է Գ. Պատկանյանը,— լսվում էին նրա քաղցրաձայն երգերը, որ ազգային եղանակ զգեցան»։

«Թշուառութիւն սոխակի» երգը,— պատմում է բանաստեղծի ժամանակակիցներից մեկ ուրիշը,— սիրեն և երգեն ի Թիֆլիզ, ի Հայաստան, երգեսցեն և ի Պոլիս, և ի Հնդկաստան, և այժմէն իսկ առաջի աչացս նկարագրեմ զսիրելի տեսարան, երբ սիրասուն օրիորդք Զմիւռնիոյ ի խնդրելն զհանգիստ յետ տնային աշխատութեանց, ճեմս առնել ի պարտիզի, աջակցեալ ընդ իւրեանց սիրականաց և անցեալ առաջի թփոյ վարդի, երգեն քաղցրութեամբ.

Ա՜յ անգին վա՜րդ, վա՜րդ,
Իմ կենաց զա՜րդ, զա՜րդ»։

Հ. Ալամդարյանի պատմական ծառայությունն այն է, որ նա զարգացնելով միջնադարյան հայ տաղերգության լավագույն ավանդները, մեծապես նպաստեց հայ նոր քնարերգության ստեղծմանը։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆ

Մեսրոպ Թաղիադյանը հայ ժողովրդի ազգային շարժման, կուլտուրայի և գրականության զարթոնքի ականավոր գործիչներից մեկն է։

Թաղիադյանն առաջիններից մեկն է եղել իր ժամանակակիցների մեջ, որ ծառացել է ֆեոդալական կապանքների և եկեղեցու գերիշխանության դեմ, առաջ է քաշել ազգային և տնտեսական ընդհանրության, անհատի ազատության հարցերը։

Լուսավորականության դիրքերից նա առաջադրել է գիտության, կուլտուրայի, քաղաքակրթության յուրացման պահանջը, ինչպես և հայրենասիրությամբ, ժողովրդայնությամբ տոգորված ազգային գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը։

Աշխարհայացքի սահմանափակությունը հնարավորություն չտվեց Թաղիադյանին ամբողջ լիակատարությամբ կանգնելու էպոխայի ամենաառաջավոր գաղափարախոսության դիրքերում, բայց իր հասարակական-քաղաքական ըմբռնումներով նա մեծապես կապվում է այդ գաղափարախոսության հետ, դրանով իսկ, Խ. Աբովյանի և Ստ. Նազարյանի հետ իր արժանավոր տեղը գրավում XIX դարի առաջին կեսի հայ ազգային-լուսավորական շարժման մեջ։

1

Մեսրոպ Դավթի Թաղիադյանը ծնվել է Երևան քաղաքի Ձորագյուղ թաղամասում, 1803 թվականի հունվարին։ Նրա պապերը եղել են կարբեցիներ։

XVIII դարի առաջին կեսին Հայաստանի հողի վրա թուրքերի և պարսիկների միջև մղվող երկարատև պատերազմները քայքայում, ավերում են բազմաթիվ գյուղեր ու ավաններ, այդ թվում և տրանզիտային ճանապարհի վրա ընկած հարուստ ու բազմամարդ Կարբին, որը հիմնովին ավերվում է 1735 թվականի պատերազմի ժամանակ։ Գյուղից գաղթողների մի մասը ապաստարան է խնդրում Երևանի սարդարից և հաստատվում Ձորագյուղ թաղամասում։ Նրանց մեջ էր Մեսրոպի հոր պապը՝ Նիկողայոս Թաղիադյանը։ Երկար ժամանակ երևանցիները պատմում էին Նիկողայոս Թաղիադյանի 12 տղաների արկածալի պատմությունների ու քաջությունների մասին։ Նրանցից Մեսրոպը (Թաղիադյանի պապը) մեռել է թոռան ծննդից

մի փոքր առաջ: Աննա տատը, ամուսնու հիշատակը հավերժացնելու նպատակով, թոռնիկին անվանում է Մեսրոպ, փոխադրում իր մոտ՝ Վաղարշապատ և ուխտում նվիրել նրան էջմիածնի վանքին: Մեսրոպը մանկության առաջին տարիներն անց է կացնում Վաղարշապատում, իսկ տատի

Մեսրոպ Թաղիադյան գործ նկ. Վ. Ստեփանյանի

մահից հետո՝ նորից Ջրաղացում: 1812 թվականին մայրը, տատի ուխտի համաձայն, որդուն հանձնում է էջմիածնի վանքին: Մեսրոպին տանում և կանգնեցնում են այն ժամանակ հայտնի դարձած Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու առջև:

«— Կարդալ գիտե՞ս, մանուկ,— հարցնում է նրան Աշտարակեցին:

— Եթե իմանայի, ինչո՞ւ էի գալիս,— համարձակ պատասխանում է երեխան:

— Հապա ի՞նչ գիտես,— հետաքրքրությամբ դիմում է իր հարցը Ներսեսը:

— Այն ամենը, ինչ նրանից սովորեցնում է մանուկ երեխաներին՝ երգ, առակ, առածներ»[1]:

Հարցուփորձն արքեպիսկոպոսին համոզում է, որ վանքի դպրոցը չէր կարող որևէ լուրջ բան տալ սրամիտ ու ընդունակություններ ունեցող այդ երեխային և փոքրիկ Մեսրոպին ժամանակավորապես հանձնում է

[1] «Ճանապարհորդություն Մ. Թաղիադյանց Երևանցու ի Հնդկաստան», 1847, էջ 4:

վանքի գրատան վարիչ Հովհաննես վարդապետ Բագրեվանդեցուն՝ մասնավոր կրթության։

Վանական կրթությունը, «խցի» դաժան դաստիարակության եղանակները՝ ծեծը, պատիժը, առավոտյան երկար-բարակ ժամերգությունները խորթ և անտանելի էին բնության ծոցում ազատ մեծացած, գեղջկական պարզության և իմաստության պտուղները վայելած Մեսրոպի համար։

1816 թվականին Էջմիածին է գալիս ժամանակի համբավավոր մանկավարժ և գիտնական Պողոս Վարդապետ Ղարադաղցին։

Վանքի մռայլ պատերի ներսում Մեսրոպի համար ճառագայթում է մի լուսավոր շող. հոգևորականի սքեմ հագած Ղարադաղցին ուներ լայնախոհ միտք, կյանքի փորձ, շիտակ և անկաշառ բնավորություն։ Հմուտ լինելով ճարտասանությանը և հոգևոր պատմությանը, նա միաժամանակ տիրապետում էր հայոց պատմությանը և մոտ էր կանգնած ժողովրդի կյանքին։

Կարճ ժամանակում աշակերտի և ուսուցչի մեջ սկիզբ է առնում ջերմ բարեկամություն։ Վանքում ստեղծված ծանր մթնոլորտը, ծույլ ու տգետ դպիրների անբարտավան վերաբերմունքը շուտով ստիպում են Ղարադաղցուն թողնել Էջմիածինը և տեղափոխվել ս. Հակոբի վանքը։ Նա իր հետ վերցնում է և Մեսրոպին։

Ղարադաղցին նրան սովորեցնում է գրի առնել ժողովրդի կյանքն ու կենցաղը, սովորություններն ու զրույցները։ Վանքում եղած ժամանակ Մեսրոպը փորձում է բանաստեղծություններ գրել, որի համար և արժանանում է վարժապետի խրախուսանքին։ Մատիտը գրքակալի մեջ, փետուրե գրիչը գոտկածալում, թանաքի շիշը գոտիկից կախ, տետրերը թևի տակ, վանքի ետևում ընկած պուրակների մեջ, ամբողջ օրը անց էր կացնում պարապելով։ «Թեպետ և երկուտակ կուզիկ եմ դարձել, ոչ այնչափ տարիներից, որքան վշտերից, սակայն իմ մեջ դեռ վառ է մնացել մանկությունս, ուր ամեն ինչ սիրելի էր ինձ համար»[1],— գրում է նա հետագայում իր հուշերում։

1819 թվականին Նվիրակ Դանիել եպիսկոպոսի հետ Մեսրոպը շրջագայում է Հայաստանի համարյա բոլոր գավառները։ 16 տարեկան՝ արդեն հասունացած պատանու առջև բացվում է խանական Պարսկաստանի տիրապետության տակ հեծող հայոց աշխարհը։ Արշավանքներից և ասպատակություններից քայքայված, ամայացված գյուղերում ու ավաններում նա տեսնում է հայ և պարսից իշխանավորների անպատմելի խժդժություններն ու հափշտակությունները։ Այդ ժամանակվա ստացած ծանր տպավորություններն ու խոհերը Թաղիադյանը հետագայում շարադրում է «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ։

1821 թվականին Մ. Թաղիադյանը Եփրեմ կաթողիկոսի հետ մեկնում է Շուշի, իսկ այնտեղից՝ Հաղպատ։

---

1 «Ճանապարհորդութիւն ի Հայս», էջ 161։

1822 թվականի գարնանը Հաղպատ են գալիս Պարսկաստանի դեսպան Դավիթ խան Տատուրյան-Մելիք Շահնազարյանը և Հնդկաստանի [illegible]ակ Թովմաս վարդապետը։ Նրանք հետաքրքիր բաներ են պատմում Հնդկաստանի և Եվրոպայի մասին։ Մեսրոպի մեջ նորից բորբոքվում է կրթությունը շարունակելու ջերմ փափագը։ «Պատմություն Պարսից» աշխատության մեջ նա գրում է, որ Դավիթ խանը խնդրել է Եփրեմ կաթողիկոսին թույլ տալ Մեսրոպին տանել Փարիզ՝ կրթության։ Կաթողիկոսը մերժում է այդ խնդրանքը։ Մեսրոպն իր հերթին մի քանի անգամ աղերսագիր է տալիս Եփրեմ կաթողիկոսին՝ խնդրելով արձակել իրեն վանքից՝ Եվրոպա գնալու համար։ «Իմ սրտում արթնացած սերն,— գրում է Թաղիադյանը,— այլևս չի համաձայնում մնալ այստեղ առանց կրթության, եթե խնդրածս ողորմությամբ չստանամ, կամ կփախչեմ, կամ այնպիսի չարիք կգործեմ, որ կարժանանամ ձեր հալածանքին»[1]։

Եփրեմ կաթողիկոսը այս անգամ ընդառաջում է պատանուն, և սա, իր հետ վերցնելով «Աստվածաշունչն» ու Պետրոս Բերդումյանի «Աստուածանմանություն» աշխատության իր ձեռքով արտագրված օրինակը, 1822 թվականի մայիսի 8-ին դուրս է գալիս Հաղպատից։

Հետագայում գրված ճանապարհորդական նոթերից երևում է, որ Թաղիադյանը մտադիր է եղել Եվրոպա գնալ Պոլսի վրայով, բայց երբ պարզվում է, որ Պոլիս տանող ճանապարհները փակված են՝ Ալաշկերտում տեղի ունեցող քրդական ընդհարումների պատճառով, թողնում է նախանշած ուղեգիծը և մեկնում Թավրիզ, այնտեղից Հնդկաստան անցնելու նպատակով։

Թավրիզում նա իջևանում է Տեր-Հովհաննես անունով մի հայ քահանայի տանը, սպասում Թեհրան գնացող քարավանի։ 15 օր անց Թաղիադյանին հաջողվում է դուրս գալ Թավրիզից Աբբաս Միրզա արքայորդու դաստիարակ Հաջի Մազանդարանու քարավանի հետ և ճանապարհվել Թեհրան։

Ծածկելով իր հայ լինելը, Թաղիադյանը Հովհաննես քահանայի խորհրդով Հաջի Մազանդարանուն ներկայանում է որպես Երմոլովի կողմից Թավրիզ գործուղված պետական պաշտոնյա։ «Սպտվեցի վրացական տարազի մեջ (մազերս թողնելով տակավին գլխիս անվթար), ծալեցի զանազան թղթեր, դրի ծրարի մեջ, կնքեցի զանազան կնիքներով, Հովհաննեսի ձեռքով շինած, որը մասնագետ էր փորագրության արվեստի մեջ, դրեցի մաղախի մեջ և կնքված, որպես մի խոշոր անձնավորություն, ճանապարհ ընկա Հաջի աղայի քարավանի հետ»[2]։

1822 թվականի սեպտեմբերին Թաղիադյանը հասնում է Կալկաթա, այնտեղից Դաքա քաղաքը, ուր ապրում է մոտ մեկ տարի։ Հաջորդ տա-

1 «Ճանապարհորդութիւն ի Հայս», էջ 358։

2 «Ճանապարհորդութիւն ի Պարսս», էջ 169։ (Կիսատիպ մնացած այս աշխատության մի օրինակը պահվում է Գրականության և արվեստի թանգարանի Մ. Նալբանդյանի գրադարանում)։

րին նա փոխադրվում է Կալկաթա, հայոց լեզվի դասեր ստանձնում «Հայոց մարդասիրական ճեմարանում»։

Կալկաթայում այդ ժամանակ միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն էր անգլիական եպիսկոպոսական ճեմարանը։ 1826 թվականի փետրվարին Թաղիադյանը ընդունվում է անգլիական այդ ճեմարանը։

1826 թվականի ամռանը Հնդկաստան են հասնում ցնծագին լուրեր։ Ռուսական զորքերը հայկական կամավորների աջակցությամբ հաղթություններ էին տանում հայկական հողի վրա։ Մ. Թաղիադյանը, Աշտարակեցուն ուղղած նամակով, իր ուրախությունն է արտահայտում տեղի ունեցող դեպքերի առթիվ և ցանկություն հայտնում Հայաստան վերադառնալ։ Նամակն ուղարկում է մի ընդարձակ գրության հետ, որտեղ նկարագրում է իր ուսումնառության ընթացքը ճեմարանում։

Նույն թվականի դեկտեմբերի 5-ին Թաղիադյանը գրում է երկրորդ նամակը։ Այս անգամ արդեն նրա կարճ և խիստ տոնից երևում է, որ նա վիրավորված է Աշտարակեցու հիշաչար լռությունից։ Այնուամենայնիվ, նա խնդրում է իրեն վարդապետ ձեռնադրել՝ հայ մանուկների կրթությանը նվիրվելու համար։

Թաղիադյանի բոլոր դիմումները մնում են անպատասխան։ Առժամանակ թողնելով հայրենիք վերադառնալու միտքը, նա իր ձեռքն է վերցնում տպարանի հայկական բաժնի հրատարակության գործի կազմակերպումը։

1827 թվականին Թաղիադյանը լույս է ընծայում էջմիածնից իր հետ բերած Պ. Բերդումյանի (Նախիջևանցու) «Աստվածանմանություն» աշխատությունը՝ իր ծանոթագրություններով և Կարապետ արքեպիսկոպոսին նվիրված ընծայականով։ Դրան հետևում է կրոնական բովանդակություն ունեցող «Ճշմարտություն քրիստոնեական հավատո» Գրովտիոսի լատիներեն գրքի թարգմանությունը (գրաբար)։

1830 թվականին նա ձեռնարկում է իր առաջին ինքնուրույն գործի տպագրությանը։ Դա հունա-հռոմեական դիցաբանության մասին հանրամատչելի մի ձեռնարկ էր՝ «Դիցաբանություն» վերնագրով։ Այնուհետև նա տպագրում է Ռիչինալդ Հիբրի «Պաղեստին» պոեմի անգլերենից կատարած իր թարգմանությունը։

1827 թվականին հայրենիքից Հնդկաստան են հասնում նոր բերկրալի լուրեր։ Ռուսական զորքերը ազատագրում են հայոց երկիրը պարսկական լծից։ Արևելյան Հայաստանից առհավետ վերանում է ասիական բռնակալությունը։ Ներսես Աշտարակեցուն են հասնում ամեն կողմից ցնծության ձայներ։ Ազատագրված Հայաստանը դառնում է գաղթարնակ հայության հուսալի հենարանը։ Հայաստան ուղարկված բազմաթիվ ողջույնների և ուղերձների մեջ աչքի է ընկնում 1828 թվականին երևանցիներին գրած Մ. Թաղիադյանի նամակը։ Դա հայրենասիրական մի կոչ էր՝ ուղղված հայ ժողովրդին։ Այնտեղ նա առաջադրում էր քաղաքական-լուսավորական մի ամբողջ ծրագիր՝ ազատագրված երկրի հետագա բարեկարգման համար։

XIX դարի 20-ական թվականներին Թաղիադյանն առաջիններից մեկն էր, որ գիտակցում է Ռուսաստանի առաջադիմական դերը ասիական բռնապետությունների՝ Պարսկաստանի և Թուրքիայի լծի տակ տառապող հայ ժողովրդի ազատագրման գործում։

«Աչքներդ լույս,— գրում է Թաղիադյանը,— որ մեր քաղցր աշխարհն պարսից դառն չարչարանքիցն ազատվեց, քրիստոնեի տերության ներքո ընկավ։ Փա՜ռք բարերարին աստծո, որ այսուհետև ավել նեղություն չեք ունենալեց, ազատ քաղաքի քաղաքացի պիտի անվանիք, ձեր ազգասիրության՝ իմաստասիրության լույսն և արվեստից հառաջադիմությունն բոլոր Աշխարհ պիտի տարածվին»[1]։

Թաղիադյանը համոզված է, որ ժողովրդի ազատագրումը իր հետ կբերի լուսավորության ու կրթության հնարավորություն. «Բայց հուսամ, երբ որ ազնվության հոգին կնորոգվի ձեր միջումն, և դա՛ռն գերության քաշությունն կը մոռանաք, էն վախտն կիմանաք, թե ի՞նչ է իմ լացս։ Ախ, իմ լա՛վ քաղաքացիք, ա՛խ, հոգիս հարայ ա կանչում, հին խմորն թողե՛ք, նոր ազգի լուսավորության և պայծառության հետևեցեք»[2],— գրում է Թաղիադյանը «Վերք Հայաստանիի» հեղինակի համանման ձգտումները հիշեցնող իր նամակում։ Դեռ Աբովյանից առաջ Թաղիադյանը դժգոհում է, որ իր հայրենակիցները մեծ դժվարությամբ են թողնում նախապաշարումները և գերի մնում խավարին ու տգիտությանը։ «Ով, ինչպես կոպիտ սովորում են, էնպես էլ կոպիտ սովորեցնելով գնում են։ Արվեստ պայծառեցնիլ չեն գիտում, նոր արվեստ գտնիլ չեն կարում, եթե լսում են որ մին տեղ աղջիկը գրել-կարդալ ա սովորում՝ զարմանում են, երբ ինգլիզ կամ ֆռանգ են տեսնում, կարծում են աստված է երկնից իջել ոտներն ամպաթաթախ։ Ով ի՞նչն է պատճառն ապաշեմ, եթե ոչ գիտությունից զուրկ մնալը»[3]։

Թաղիադյանն առաջարկում է Երևանցիներին հավաքել «Շհարի, Կոնդի, Ջորագյուղի երեխաներին» և դպրոց հիմնել, որի համար նա իր ծառայությունն է առաջարկում, խոստանալով հայրենիք բերել տպագրական մեքենա, գրականություն և դրամ՝ դպրոց կազմակերպելու համար։

1830 թվականին Թաղիադյանն ավարտում է Կալկաթայի անգլիական հոգևոր ճեմարանը և ստանում արվեստների մագիստրոսի կոչում։

1831 թվականի գարնանը նա Նոր Ջուղայից մի խնդրագիր է ստանում, որով տեղի հասարակությունը հրավիրում է նրան կազմակերպելու նոր դպրոց։ Այդ մասին իր օրագրում նա գրում է. «Որ ծնաք ի ծառայել ազգին մերում, և ի նմին զարգացեալ ի մանկութենէ թողաք զեպիսկոպոսական ճեմարանն անգղիացւոց ի Կալկաթա՝ յուսով առավել ծառայելոյ հայրենեաց և հասաք ի Նոր Ջուղայ, զհետադայ խնդիր հոգևորականաց և աշխարհականաց նորա՝ ոչ արհամարհեցաք. և կարօտ որքան և

---

1 Հ. Մկրեան, Կենսագրութիւն Մ. Դ. Թաղիադեանց Երեւանցւոյ, 1886, էջ 133։

2 Նույն տեղում, էջ 136։

3 Նույն տեղում,

էաք ծնողաց և ազգականաց մերոց՝ լավ համարեցաք հոգևոր կարոտությին գնոր Ջուղայ լցուցանել քան զմեր ինքեան. և այն՝ ոչ այնքան վասն վարձու, որում և դրամոք և օգնեցաք քան եթե վասն սիրոյ և պարտեաց»[1]։

1831 թվականի հունիսին Թաղիադյանը հասնում է Նոր Ջուղա, կարգավորում է դպրոցական շենքը և հուլիս ամսին կատարում հանդիսավոր բացումը։ Դպրոցն անվանվում է «Ամենափրկչեան ճեմարան»։

Սակայն Թաղիադյանի եռանդուն գործունեությունը կարճատև է լինում. հոգաբարձուների անտարբերությունը, ինչպես նաև Հայաստան ընկնելու փափագը ստիպում են նրան թողնել Նոր Ջուղան և ճանապարհվել դեպի Էջմիածին։

2

Թաղիադյանը հայրենիք է մտնում լուսավորական ծրագրերի իրականացման ջերմ երազներով։ «Մեսրոպ Թաղիադյանը եկել է Հնդկաստանից և իր հետ բերել է վեց բեռ գրականություն, տպարան և դրամ, մի ոմն բարերարի օգնությամբ Երևանում հայոց դպրոց հիմնելու համար»[2], գրում է Սալանթյանցը Խ. Աբովյանին ուղղած մի նամակում։

Աբովյանը Դորպատից իր շնորհավորանքներն է հղում կաթողիկոսին, աշխատում համակել նրան հայրենիքը լուսավորելու ձգտումներով։ «Լուսավորությամբ է բարձրանում ազգը, լուսավորությունից է ելնում ամեն բարեբախտություն»[3],— գրում է հայ ժողովրդի ապագա լուսավորիչը։ Առաջադրելով լուսավորական գործունեության մի ամբողջ ծրագիր, նա խորհուրդ է տալիս Կարբեցուն՝ համախմբել գրագետ հայրենասերներին և վերակենդանացնել Էջմիածինը։ «Մեկն ահա դրանցից ունեք հանձին Մ. Թաղիադյանի։ Հետևորդներ կլինեն նրան բազում բազում»։

Սակայն այդ բոլորը երազ էր միայն։

Թե՛ Թաղիադյանին և թե՛ Աբովյանին վիճակված էր ապրելու այն ծանր ճակատագիրը, որ ունեցել են բոլոր լուսավորիչները կղերա-ավատական դոգմաներով կաշկանդված, հետամնաց իրականության մեջ։ Իր անձնական ապահովության համար հակառակորդներին մեկուսացնելու գործով տարված՝ Կարբեցին ժամանակ չուներ զբաղվելու լուսավորական որևէ ձեռնարկումով։

Կաթողիկոսին և միաբաններին դուր չեն գալիս Թաղիադյանի առաջարկությունները՝ եվրոպական լուսավորությունը վանքի պարիսպների մեջ մտցնելու և Հայաստան աշխարհում կրթության գործը կազմակերպելու վերաբերյալ։ Մի քանի ամիս անհեռանկար թափառում է Թաղիադյանը, մինչև որ կաթողիկոսը առաջարկում է նրան ձրի ծառայություն՝ թույլ տալով բացել մի դասարան՝ մի քանի սարկավագների ու գյուղական մանուկների փոքրաթիվ խմբի համար։ Նրա վրա սահմանվում է խիստ հըս-

---

1 «Ազգասեր Արարատեան», 1849, № 36, էջ 285—286։

2 Գրականության և արվեստի թանգարան, ԳԱԹ, Աբովյանի ֆոնդ, 128։

3 Ն. Շահազիզ. Դիվան Խ. Աբովյանի, հ. 1, Երևան, 1940, էջ 38։

կողություն, որ «բողոքական մտքեր» չհաղորդի աշակերտներին և չքննադատի եկեղեցական դոգմաները։ Այս բոլորն ավարտվում է նրանով, որ անօթևան, կիսաքաղց կյանք վարող Թաղիադյանը, բանսարկության զոհ դառնալով, ապրիլի 1-ին գիշերով թողնում է վանքը և փախչում Երևան։ «Եվ Մեսրոպ Թաղիադյանը, իբրև չկեռան առակաբանեալ առասպելին ի Հնդկաստանի աստի, ձայն բարձեալ ուժգին. գոյեալ եկն էհաս յէջմիածին աղնգիւղաս անբարսաւութեամբ իւրով մուկն չնչին ծնաւ նախատինս իւր»[1],— գրում է նրա մասին Ա. Արարատյանը, որը հետագայում դարձավ թե՛ Թաղիադյանի, թե՛ Արովյանի և թե՛ Նազարյանի կատաղի հակառակորդներից մեկը։

Թաղիադյանի փախուստի լուրը հասավ երկրի կառավարչապետ բարոն Ռոզենին։ Նրան առաջարկեցին վերադառնալ Էջմիածին, բայց նա մերժեց և որպես պատիժ նրան արգելեցին դուրս գալ ռուսական սահմաններից։

Թաղիադյանին մնում էր անհույս ու աննպատակ թափառել Երևանի փողոցներում։

1832 թվականի օգոստոսի 2-ին գրած մի նամակում Թաղիադյանը ակնարկում է վանքի միաբանության նյութած դավերի մասին. նա գրում է, որ միաբանությունը մեղադրում է իրեն «ամբարտավանության և պարտության» մեջ, մինչդեռ ինքը՝ միաբանությունը, օրավուր կորցնում է իր դեմքը՝ մխրճվելով այն տիղմի մեջ, որ պատրաստել են հենց իրենք։

Կտրված դրսի աշխարհից, Թաղիադյանն ապրում է հոգեկան անձկություն։ «Գրեթե իսպառ զուրկ եմ յընկերակցութինէ մարդկան զորս Դիոգինես ճրագաւ փնտրելոյ ի լոյս միջօրեացյալն Արեգական։ Խուժկան բռտութիւն եզնավարաց տեղւոյս ոչ իւք մխիթարել կարե զիս, ուստի կարծեցեալ ապահովութեան կենաց իմոց՝ թուիմ լինել ի բանտի»[2]։

Դեկտեմբեր ամսին Թաղիադյանը խնդրագիր է գրում Թեոդոսիա՝ Խալիբյանին ու ներկայացնելով իրեն՝ խնդրում է ընդունել որպես դասատու տեղի դպրոցում։ Պատասխան ստանում է, թե ոչ, հայտնի չէ, բայց նույն ամսին նա դիմում է Էջմիածնի Սինոդին՝ խնդրելով հատկացնել հողամաս՝ երկրագործությամբ զբաղվելու համար։

1833 թվականին Էջմիածնում կաթողիկոսի դեմ ութ միաբանների դավադրության մերկացումը պատճառ դարձավ Թաղիադյանի վիճակի փոփոխությանը։ Նա նորից հրավիրվում է Էջմիածին, այս՛ անգամ բարենպաստ պայմաններով, բայց Թաղիադյանին այլևս չէր հրապուրում վանքի «գաղջացած օդը»։ Ընդառաջելով Նոր-Ջուղայեցիների խնդրանքին, նա 1834 թվականին մեկնում է Նոր Ջուղա և ստանձնում երբեմնի իր հիմնադրած դպրոցի տեսչությունը։

---

[1] ԳԱԹ, Խ. Աբովյանի ֆոնդ, № 22։

[2] Հայկ. ՍՍՌ Պետական Չենտրալ արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 38, գործ № 27ջ։

Առաջին տարին Նոր Ջուղայում Թաղիադյանն ունենում է խաղաղ և արդյունավետ գործունեություն։ Հավաքելով ցրված աշակերտներին իր շուրջը, նրանց թիվը հասցնում է 160-ի, որը մեծ հաղթանակ էր այն ժամանակվա ուսումնական մի հաստատության համար։

Նոր Ջուղայում հաստատվելու երկրորդ տարին խիստ սրվում են Թաղիադյանի և դպրոցի կառավարիչների փոխհարաբերությունները։ «Վարժապետ Մեսրոպն յուր լավագույն ջանք գործ դներ վասն աշակերտաց հառաջանելուց,— գրում է նրա աշակերտներից մեկը,— և հառաջանքն բայց ջուղայեցիք նրա արժեքը չիմացան, այդ աղագավ վարժապետի սիրտը սառեց, հրաժարվեց յուր պաշտոնիցը։ Վերջը ջուղայեցիք զղջացին՝ այդպիսի վարժապետը կորուսանելն»[1]։

1836 թվականի ամռանը Թաղիադյանն իր կնոջ հետ դուրս է գալիս Ջուղայից և ճանապարհվում Թավրիզ։ Գալուստ Շերմազանյանի հաղորդած տեղեկությունների համաձայն Թաղիադյանը Թավրիզում անգլերենի դասեր է տալիս արքայազն Մելիք Ղասըմ Միրզային, իսկ հետո տեղավորվում քաղաքի հայկական դպրոցում։ «Եթե Թաղիադյանը ճշտությամբ ստանար իր ռոճիկը, նա երկար ժամանակ կծառայեր մանուկներին, բայց ցավելով պիտի ասեմ, որ շատ անգամ ռոճիկը պակաս լինելու համար նա ստիպված է լինում փոխ դրամ առնել ծանոթներից, օրական պարենը հայթայթելու համար»[2],— գրում է Գալուստ Շերմազանյանը։

1837 թվականի նոյեմբերի 18-ին մեռնում է Թաղիադյանի կինը՝ 21 տարեկան Թանգ խաթունը։ Կնոջ մահից հետո Թաղիադյանը թողնում է Թավրիզը և կրկին վերադառնում Էջմիածին։ Այս անգամ ևս նրան պատում է խոր հիասթափություն։ «Պոլոժենիեյի» հիման վրա կատարված փոփոխությունները, կաթողիկոսի կամայականությունները, Սինոդի պրոկուրոր Ղորղանովի, ատենադպիր Քարտաշյանի միահեծան իշխանությունը ծանր ու ավելի խեղդող էին դարձրել Էջմիածնի մթնոլորտը։ Թաղիադյանը նորից մատնվում է հուսահատության։ Մի անգամ, ինչպես պատմում է ինքը, գալով Էջմիածին. նա մտնում է վեհարան՝ կաթողիկոսի մոտ։ Վեհարանը թափուր գտնելով, նա նկատում է թանաքամանի վերածած մի հաղճապակյա աման, որը Հնդկաստանում որպես թքաման են գործածում, և, վայրացած, թղթի վրա, հանպատրաստից գրում է հայտնի դարձած քառատողը.

Երբ թքամանն թանաքաման,
Դարձելա տես յայս վեհարան,
Զինչ այլ քեզ յոյս մնալ,
Փախիր փութով, Մեսրովպ Դաւթեան։

Թուղթը թողնելով սեղանին՝ Թաղիադյանը նույն օրը դուրս է գալիս Էջմիածնից և բռնում Պոլսի ճանապարհը՝ Եվրոպա անցնելու մտադրությամբ։

---

1 *«Դիտողագիր Հ. Շահնազարյան-Սարգսյանի ի վերայ կենսագրութ. Մ. Դ. Թաղիադյանի», 1888, էջ 39։*

2 *«Մասիս», 1875, № 1759։*

1838 թվականի մայիսին Մ. Թաղիադյանը հասնում է Պոլիս։ Պոլսում, նա, դաստիարակի պաշտոնով, տեղավորվում է քաղաքի հայտնի ամիրա Սերվերյանի տանը՝ միաժամանակ դասախոսություններ կարդում Գուզգունջուկի «Համալսարանում»։

Այդ ժամանակ, երկարատև պատերազմներից և սոցիալական հակասություններից քայքայված Թուրքիան ճանապարհ էր որոնում դուրս գալու քաղաքական-տնտեսական ճգնաժամից։ Արտաքին գործերի մինիստր Ռեշիդ փաշայի առաջադրած ռեֆորմի ծրագիրը նախատեսում էր մի շարք արտոնություններ, որով հնարավորություն պետք է տրվեր տնտեսական կյանքի կազմակերպմանը և լուսավորության զարգացմանը։ Ակնհայտ էին դառնում էսնաֆների և առևտրականների ակտիվ միջամտության փորձերը հասարակական կյանքում։ Ամիրաները պատրիարքարանի գլխավորությամբ աշխատում էին չեզոքացնել դժգոհ տարրերին և պահպանել իրենց գերիշխանությունը։ Այդ պայմաններում ահա հասարակական ամեն մի նախաձեռնություն և քաղաքական-լուսավորական ամեն մի ձգտում դիտվում էր իբրև ընդվզում ամիրայական գերիշխանության, եկեղեցու հնամենի օրենքների դեմ։

Ժամանակակիցների վկայությամբ Թաղիադյանն այդ օրերին աչքի է ընկնում հասարակական հարցերի նկատմամբ ցուցաբերած ակտիվ վերաբերմունքով։ Շատ շուտով պարզվում է, որ ամիրաները և պատրիարքի գործակալները հետապնդում են Թաղիադյանի ամեն մի քայլը, լրտեսում նրա դասախոսությունները, կասկածելի համարում նրա կատարած այցելությունները անգլիական միսիոներներին, ինչպես և բողոքականների գրավաճառանոցը։ Հետևանքը լինում է այն, որ մի գեղեցիկ օր Թաղիադյանին կանչում են պատրիարքարան բանտարկելու միտումով և միայն բարեկամների օգնությամբ նրան հաջողվում է փախչել Պոլսից։

Մեծ դժվարություններով և բազմաթիվ պատահարներով, Կարինի, Դերջանի, Ակնի, Արաբկիրի վրայով նա կտրում է պատմական Ծոփքը և Աղձնիքը, անցնում Մծբին, Բաղդադ, ապա Բասրա, այնտեղից էլ՝ Հնդկաստան։

1839 թվականի դեկտեմբերի վերջին Թաղիադյանը հասնում է Կալկաթա։ Առաջին ամիսը նա հյուրընկալվում է հնդկահայ հայտնի հարուստ Հ. Աբգարյանի մոտ, իսկ հետո մնում անօթևան։ Այդ օրերի իր գոյության ու տրամադրությունների մասին նա այսպես է գրում «Ազդարարի» էջերում. «Թե տասն տարի էլ կույր բազարում խարիսխ գցած մնայի, կարծումս ոչում փո՛ւյթ էր։ Ոչ ծնողք ունեի և ոչ սիրելի կին, որ աչքներն իմ ճանապարհիս մնէր, իսկ ժամանակիս բարեկամություն էլ աստված բարաքաթ տա, որ միայն երեսհանց ա...

Եթե մարդ փող ունենա՝ ուր որ գնա յուր համար ընտանիք պակաս չեն. Թող զպորտն, աղիքներն ես կերկարացնեն, որ գուցե իրար հասնի, և սիրելի ընտանի դառնան միմյանց. բայց եթե փող չունենա, վայ յուր խեղճ գլխին, քան կմեր Տերն խեղճ կմնա, որո բարեկամք և մերձավորք հեռի եղեն ի նմանե, օտարացան և եղբարք նորա։ Թող անփող մարդն հեզ

լինի և խոնարհ. կասեն էն էշն ես ասում, որ բերանխուփ նստած ա մնում մին տեղ՝ առանց խոսելու։ Թող ճարտար լինի և բանիբուն, կասեն էն գիժն ես ասում, որ քամի ա կուլտալման և խոսալով մարդ ա զզվացնում, թող յուրն մոռանա և միայն հայրենացն ծառայի, կասեն, իհարկե էշն որ կա ստեղծվել ա, որ հարսանիքի ջուր կրի, ի՞նչ պարծանք յուրն։ Թող այժմ լավ կիրակի անցկացնող սրբազաններն գան, տեսնենք, ո՞ր մտածողություն են, որ մարդիս աշխարհքիցս հեռացած Աստուծո կմոտացնեն։ Ասեն. երբ մարդն աշխարհ չունենա, որ յուրն կրադացանի, հարկիվ պիտի մինն գտնի որ նորանով զմայլի»[1]։

1840 թվականի գարնանը Թաղիադյանը նորից մտնում է Կալկաթայի Եպիսկոպոսական ճեմարանը, այս անգամ որպես ապարանի գրաշար։ Մոռացության տված իր տառապանքները, անտարբեր իր ներկա խղճուկ վիճակին, Թաղիադյանը նորից ոգևորվում է լուսավորական գաղափարներով։ Օգտվելով առկա հնարավորություններից, նրա առաջին գործն է լինում տպագրել իր մանկավարժական տարիների փորձը դրսևորող «Մեսրոպեան այբբենարանը» և «Մեսրոպեան շարադրիչը»։ Դրանց հետևում է «Հնդկաստանի պատմություն» ուսումնասիրությունը։

Բացի իր գրքերի տպագրումից, Թաղիադյանը մշակում է հրատարակչական ավելի լայն ծրագիր։ Նրա նպատակն էր կազմել հրատարակչական ընկերություն և ազգի շահագրգռված անդամների օգնությամբ զարկ տալ գրական նորագույն շարժմանը, օգնել երիտասարդությանը՝ համարձակ կերպով գրական ասպարեզ դուրս գալու։

«Տեսնեութ հատոր գրվածքներ միայն,— գրում է նա Ուռպելյանին,— իմ կողմից կան շարադրված պատրաստ տպագրության համար և կարոտ են ազգասերների օժանդակության. եթե շնորհ անեք գոնե մի փոքր օգնել ինձ, ուրեմն ես կնվիրեմ իմ ամբողջ կյանքը ազգի օգտին, կաշխատեմ առանց աշխարհիկ շահի ակնկալության»[2]։

Սակայն հայ լուսավորականների ճակատագիրն այդ ժամանակներում այնպես չէր սահմանված, որ նրանց բուռն ցանկություններն իրականություն դառնային։ Սպասվող նյութական օժանդակությունը չի հասնում Թաղիադյանին և նրա փայփայած ծրագրերը կրկին տապալվում են։ Ընդհանուր հուսահատությանն ավելանում է նաև հիվանդությունը՝ տենդը։

1842 թվականին նա թողնում է ապարանը, հեռանում Կալկաթայից դեպի Հնդկաստանի խորքերը։ Երկու տարի թափառելով Գանգեսի ափերին, զբաղվում է փերեզակությամբ, բայց շուտով կորցնում է իր ամբողջ դրամագլուխը և սնանկացած նորից վերադառնում Կալկաթա։ Հետագայում, իր «Ճանապարհորդություն ի Հայս» գրքի առաջաբանում հիշելով այդ օրերը, նա դառնությամբ գրում է. «Է որ պիտեացն և է, որ անպիտան վտարանդեալ որ ի բեմբ, և որ ի բանդ, եւ առանց վրէժխնդրութեան և խոյս ետու ի Հնդիկս վերստին։ Ուրանոր մերթ պատմարան Հնդկաստանի,

1 «Ազգասէր», 1847, № 91։

2 Հ. Մկրեան. Կենսագրութիւն Մ. Դ. Թաղիադեանց, էջ 116

մերթ փերեզակ յերկրամիջի և մերթ հիւանդ գետնախշտի, զամս հինգ անդադար աշխատեցայ, այլ շահեցայ և ոչինչ՝ մինչև եկայ Արարատեան Ընկերութիւն, սպաս հարկանել Ազգին գրագիտութեան։ Որոց ի ծառայել իմում, ծառայից ազգին ծառայելով՝ զանձն երջանիկ համարիմ զարդիս և րուն նպատակին հասեալ»[1]։

1845 թվականին Հնդկահայ աշխի ընկնող վաճառական երիտասարդ Մանուկ Ջորաբյանի նախաձեռնությամբ Կալկաթա քաղաքում հիմնվում է «Արարատյան Ընկերությունը»։ Ընկերությունն իր առջև խնդիր էր դնում մամուլի և գրականության միջոցով պայքար ծավալել տգիտության և նախապաշարումների դեմ, տարածել լուսավորություն, եվրոպական քաղաքակրթություն։

Ընկերության աշխատանքներին գործնական ղեկավարություն և գաղափարական ուղղություն ցույց տալու նպատակով հրավիրվում է նաև իր գիտելիքներով և լուսավորական ձգտումներով հայտնի դարձած Մ. Թաղիադյանը։

1845 թվականի օգոստոսի 16-ից ընկերությունը Թաղիադյանի խմբագրությամբ սկսում է հրատարակել «Ազգասեր» անունով պարբերականը՝ «Օրագիր Արարատեան ընկերության, քաղաքական, տնտեսական, բնական և բարոյական գիտելիքների» վերտառությամբ։ Թերթի ճակատը զարդարում էր Արարատյան Ընկերության խորհրդանշանը՝ Մասիս սարը՝ գագաթին Նոյի տապանը, ստորոտում բացված մի գիրք՝ հետևյալ բնաբանով. «Ուսումն առնէ զմարդն երջանիկ»։

«Արարատյան Ընկերությունն» իր գոյությունը պահպանում է մոտ երեք տարի։ Հարուստ հիմնադրի՝ Մ. Ջորաբյանի մահով այն զրկվում է նյութական միջոցներից և քայքայվում։ Ասպարեզի վրա մնում է միայն Մ. Թաղիադյանը՝ Ընկերությունից մնացած տպարանով և «Ազգասեր» թերթով։

Մենակ, անօգնական, առանց նյութական միջոցների, 1852 թվականի ապրիլին Թաղիադյանը փոխադրվում է Կալկաթայի մոտ գտնվող Չինսուրա քաղաքը։ Այդ մասին խորին դառնությամբ նա գրում է իր թերթում. «Իսկ մեք որ յինն ամաց հասակէ այսր՝ վաստակեցաք հայրենի դրականութեան և ահա յիսնամենի և ծանրութեան լքեալ և տառապեալ պարտավորեցաք առանձնանալ ի լսութիւն անապատիս այսօրիկ»[2]*։ Նույն թվականի հուլիսի 15-ին նա ստիպված է լինում վերջնականապես ընդհատել թերթի տպագրությունը։ Հիվանդ և անօգնական, նա ապրում է Չինսուրայում մինչև 1857 թվականը։ Բայց դեռևս չկորցրած եռանդը, վստահ իր ուժերին, նա որոշում է թողնել Հնդկաստանը, գնալ Նոր Ջուղա, գուցե նորից հայրենիք վերադառնալու մտադրությամբ։ 1858-ի գարնանը նա հիվանդ վիճակում հազիվ հասնում է Շիրազ, ուր և մեռնում է հունիսի 18-ին։*

---

1 «Ճանապարհորդութիւն ի Հայս», Առաջաբան, էջ Դ։

2 «Ազգասէր Արարատեան», 1852, № 82։

3

Դեռևս 1828 թվականին հրևանցիներին գրած իր պատմական նամակում Թաղիադյանը շոշափում էր հայության համար կենսական նշանակություն ունեցող լուսավորական ու քաղաքական զարգացման խնդիրները։ XVIII դարի վերջի հնդկահայ առաջավոր գործիչների օրինակով Թաղիադյանը հայ ժողովրդի պատմական զարգացման ճանապարհը տեսնում էր Ռուսաստանի հովանավորության տակ մտնելու մեջ։ Թաղիադյանի երազը՝ ռուսական իշխանության սահմաններում հայությանը տեսնել ֆիզիկապես և տնտեսապես ապահով ու լուսավորված, ուներ իր պատմական որոշ հիմքը։ Պարսկական տիրապետության տակ դարավոր անշարժության զոհ դարձած հայ ժողովուրդը ի վիճակի չէր համախմբելու իր ուժերը, կազմակերպվելու քաղաքականապես՝ հասարակական առաջընթացի ուղիներ որոնելու համար։ Ռուսաստանը պետական, հասարակական կազմակերպությամբ ու կուլտուրայով անհամեմատ առաջ էր ասիական ֆեոդալական պետություններից և բնականաբար նրա տիրապետությունը համեմատաբար նպաստավոր պայմաններ էր ընձեռնում հայ ժողովրդի կուլտուրական ու տնտեսական զարգացման համար։

Թաղիադյանն առաջինն էր իր հայ ժամանակակիցներից, որ ուշադրություն է հրավիրել արևելյան ֆեոդալական բռնակալական կարգերում ապրող ժողովուրդների տնտեսական քայքայման փաստին։ Նկարագրելով XIX դարի 20-ական թվականների հայ գյուղացու վիճակը, նա ցույց է տվել, թե ինչպես խանական բռնություններն ու ծանր հարկերը քայքայել են գյուղացուն, ենթարկել նրան անասելի զրկանքների։ «Ճանապարհորդություն ի Հայս» աշխատության մեջ նա գրում է. «Վասնզի Հուսեյին խան բդեշխն Երևանայ, որպես ամենայն գիւղօրէից աշխարհին, նոյնպես և ողորմելի բնակչաց սորուն բաժանորդ լինէր ամենայն հերկոց։ Տայր իւրաքանչիւր տան լուծն մի եզանց և սերմանիս որիզոյ բամբակի և այլևս շահաբեր արդեանց և արգասեաց։ Յանեին նոքա և ի ժամանակի հնձոցն առաքէր նախ ընդ մեջ կիսէր զկալ նոցա ի բարժին ապա մնացորդացն հատանէր և զհասսն արքունի, մինչև զի, չմնայ ինչ նոցա և ծախուցն բաւական։ Եթէ դէպ լինէր երբեմն երկնառաք պատուհասիւք սաերջանալ անդորէից և զլանալ ի բերսն, սա զվասն կանցառութեամբք ժողովրդեանն արկեալ, բռնանայր նոցա անպատմելի խժդժութեամբ, առնոյր գրավել իւր զոր ինչ ի տունս և նոցա գտանէր զկահս և զկարասիս և ի պակասիլ նոցուն զկանայս և զորդիս նոցա՝ առ ի վճար ընկերական բաժնի իւրում։ Նա շատ և այն էր զի դերեվեալ յայսցանէ գանիւք, ծնուցանէր իւր ոսկիս և ի տանջանաց տառապելոցն հավաքէր արիւն յարբումն իւր. վաշխարհն ամօրեն կեղեքանօքն մաշէր և քրտամբք նոցա կերտէր իւր դաստակերտս ի Ղազրին և ճոխացուցանէր զգանձն»[1]։

Բողոքելով ասիական գաղութներում գոյություն ունեցող ստրկական հարաբերությունների դեմ, Թաղիադյանը եվրոպական լուսավորիչների

[1] «Ճանապարհորդութիւն ի Հայս», էջ 226—227։

նման բարձրացնում է մարդու իրավունքների պաշտպանության հարցը։ «Զարթի՛ր, ո՛վ մարդ, զարթի՛ր ի թմրական քնոյ մտաց,— գրում է Թաղիադյանը «Ազգասերի» առաջին էջերում,— զննէա և ծանիր զքեզ ինքն և զննեա զայր արարածս ամենայն»[1]։ Ազատությունն ըստ Թաղիադյանի մարդու գոյության գերագույն պայմաններից է։ «Ով թե ազատ օրենք և ազատ կյանք չիցէն նոցա,— գրում է նա,— այնպիսիք ուրեմն համարին ծնեալք ի բանդ և մեռանելիք ի բանդի»[2]։ Բայց ի՞նչ ճանապարհով մարդը պետք է հասնի իր ազատությանը, գուցե իր շղթաները սեփական ձեռքերով կործանելու միջոցո՞վ։ Ո՛չ, պատասխանում է Թաղիադյանը, քանի ագիտությունը և խավարը կա, այդպիսի ազատության դեպքում նա կարող է զարգացնել հանդգնությունը և անբարտավանությունը իշխանություն ունեցողի նկատմամբ։ «Եւ տես թե այսօրինակ ազատութիւնք տառապա՛նս ածեն ի վերայ ժողովրդեանն արդեոք թե՞ զմխիթարութիւն»։ Գիտությունն ու լուսավորությունն է առաջին զենքը, «զի ազատութիւն առանց գիտութեան վտանգաւոր է ժողովրդեան աշխարհիս այսորիկ»[3]։

Թաղիադյանը փորձում է մտովի պատկերացնել այն հասարակարգը, որտեղ անհատը կարող է հասնել լիակատար երջանկության։ 1850 թվականի «Ազգասեր Արարատեան» թերթի նոր տարեշեմին նվիրած իր առաջնորդողում նա այսպես է ներկայացնում իր պատկերացրած նոր հասարակարգը. ո՞րն է այդ հասարակարգի գլխավոր հիմքը՝ «սերը և միաբանությունը». ովքե՞ր են այդ հասարակարգի անդամները՝ հողագործը, վաճառականը, հոգևորականը և պետական պաշտոնյան, որոնցից ամեն մեկն ունի իր դասակարգային շահը։ «Մշակն թող հերկիցէ զերկիր իւր, և հանցէ անտի զայն առատութիւն զոր անդուլ աշխատանք կարեն։ Թող քաղաքացիքն գործնականք և գիտնականք յարմարեսցեն զգիտ և զարհեստս իւրեանց կարեւորագունիցն ի պիտոյիցն մարդկութեան, այնինչ վաճառականքն զաւելորդս այսր երկրի ընդ աւելորդաց այնր երկրի փոխանորդելով զաշխարհ ընդարձակ ի մի դրախտ եղանակեն լի անկարօտ վայելչութեամբն Եդեմայ»[4]։

Թաղիադյանի կարծիքով այն պայմաններում հնարավոր է հասնել սիրո և միաբանության գաղափարի իրականացմանը, եթե «աղքատն աշխատասեր լինի, հարուստը՝ ողորմած, դատաւորը՝ անաչառ, ոստիկանը՝ զգաստ». այդպիսի հասարակությունը կարող է ծառայել ժողովրդի բարօրությանը և նրա կյանքի երջանկությանը։

Բացասելով ֆեոդալական սիստեմը և ծառանալով ագիտության և նախապաշարումների դեմ, Թաղիադյանը երազում էր հայրենի հողի վրա համախմբել հայ հասարակության բոլոր դասերին, վերականգնել ազգային կորած ընդհանրությունը, և լայն հնարավորություն տալ ներքին ուժերի զարգացմանը։

1 «Ազգասեր», 1845, № 1։
2 «Ազգասեր», 1847, № 92, էջ 153։
3 Նույն տեղում, էջ 154։
4 «Ազգասեր Արարատեան», 1850, № 40։

Իր քաղաքական երազանքը Թաղիադյանը կապում էր կոնկրետ ծրագրի իրականացման հետ։ «Ազգասերում», «Ազգասեր Արարատեանում» և ապա «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ նա մանրամասն կանգ է առնում Հայաստանի աշխարհագրական դիրքի, ընդերքի հարստությունների, հողի բերքատվության, զանազան կուլտուրաների աճեցման հնարավորությունների, երկրի ֆաունայի, ֆլորայի, գետերի ջրառատության, տրանզիտային հայտնի և անհայտ ճանապարհների նկարագրության վրա։ Կատարելով քաղաքական, տնտեսագիտական, աշխարհագրական, բնագիտական, պատմագրական ուսումնասիրություն, նա ծրագրում է կապիտալիզմի զարգացման բոլոր հնարավորությունները մայրենի հողի վրա։ Թաղիադյանը կոչ է անում համախմբվել հայրենիքում, կազմակերպել ընկերություններ, զարկ տալ երկրագործությանը, հողը մշակել տեխնիկայի նոր առաջադրած ձևերով, զարգացնել արհեստները, բացել առևտրական դպրոցներ, տարածել կրթությունը երկրի ներսում և այլն։

«Մեք տեղս արմատական ծառեր չեմք,— գրում է նա «Ազգասերում»՝ դիմելով հնդկահայերին,— մեր արմատն մեր հայրենիքն ա և եթե չջանամք մի կամ միւս եղանակաւ մեր հայրենեաց երջանկութեան հաստատիլ, չէ որ մեք երջանիկ ապրեմք։ ... ով կամի երջանիկ կալ նախ պիտի որ հայրենեաց երջանկութեան միտ դնի»[1]։

1829 թվականի փետրվարին Կալկաթայում Պողոս Հորդանյանի տանը հավաքված հայ վաճառականների ընդհանուր ժողովում ընթերցվում է Ներսեսի կոնդակը Հայաստանի ազատագրման առթիվ։ Թաղիադյանն իր պատասխան ճառում կոչ է անում վաճառականներին. «Եկայք ելցուք ի Հայաստան. համբուրեսցուք զուարճախառն արտասուօք զփրկեալ հող հայրենեաց մերոց, երկրպագեսցուք աշխարհասասան դրոշակին Արշակունեաց որ ջնջեացն և յարս և այլևս ոչ մեռանի»[2]։ Նույն ժողովում Թաղիադյանի անձնական մասնակցությամբ գրված պատասխան նամակում հնդկահայ վաճառականներն իրենց ցնծությունն են հայտնում Ներսեսին և խոստանում, եթե ոչ ամենքը, ապա՝ մեծ մասը երկու տարում գան Հայաստան «առ բնածին երկիրն մեր» և վայելեն քաղաքական ազատության պտուղները։

Հնդկահայ գաղութում վաղուց արդեն հաստատված հայ առևտրական կապիտալը սկսում է թուլանալ եվրոպական, հատկապես անգլիական առևտրական կապիտալի մրցման հետևանքով։ Հետզհետե սահմանափակվում են հայերի առևտրական գործարքները։ 1760—1763 թվականներին հայերը մասնակցում են հնդիկ ժողովրդի ապստամբությանը անգլիական պետության գաղութային քաղաքականության դեմ։ Ապստամբությունը ճնշվում է։ Անգլիայի համայնքների պալատում ընդունվում է մի որոշում, որի համաձայն լուծարքի է ենթարկվում «Արևելա-հնդկական ընկերության» դաշինքը հայ առևտրականների հետ։ Սա նշանակում էր,

1 «Ազգասեր», 1845, № 18։

2 «Ցուցակ վասն յամի տեսանի», Կալկաթա, 1829, էջ 84։

որ անգլիացիները դադարում են գործ ունենալ հայերի հետ և այնուհետև ուժեղացնում են հալածանքներն ու տնտեսական ռեպրեսիաները նրանց նկատմամբ։

Պատահականություն չէ, որ XVIII դարի վերջերից հնդկահայերի մոտ սկսում է ուժեղանալ հետաքրքրությունը հայրենի աշխարհի հանդեպ։ XIX դարի սկզբներից հնդկահայ վաճառականներն արդեն մեծ ոգևորությամբ սկսում են հետևել Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին։

Որդեգրելով հնդկահայ լուսավորիչների քաղաքական բաղձանքները, Թաղիադյանն ամբողջապես ապավինում էր եվրոպական առաջավոր քաղաքակրթությանն ու գիտությանը, նրա վրա խարսխում իր հումանիստական աշխարհայացքի սկզբունքները։ Բուրժուազիան նրա համար հանդիսանում էր հասարակական այն գլխավոր շարժիչ ուժը, որը պետք է իր պատմական դերը կատարեր հայ իրականության մեջ՝ կյանքի նոր պահանջների թելադրությամբ։

Սակայն միայն բուրժուազիան չէր, որ Թաղիադյանի համար ներկայանում էր իբրև հասարակական շարժիչ ուժ։ Նրա տեսադաշտում կար նաև հայ եկեղեցական բարձրաստիճան իշխանությունը։ Սրբությամբ պահպանելով դարերով մշակված կղերա-ավատական դոգմաները, հայ հոգևոր իշխանությունը ազգային շարժման նոր պայմաններում աշխատում էր լեզու գտնել հասարակական նոր ուժերի հետ՝ պահպանելու իր ազդեցությունը քաղաքական-կուլտուրական կյանքի վրա։

Թաղիադյանը բազմիցս անդրադարձել է հայ եկեղեցու և կրոնի հարցին, քննադատական վերաբերմունք ցուցաբերել հոգևոր դասի գործունեության հանդեպ։ Պարսկաստանում կատարած իր ճանապարհորդական նոթերում նա հայտարարում է, որ «հայտնագոյն նշան կործանելո, տերութեան է հոգևորականաց մխել յիրս աշխարհականաց»[1]։ Մամուլի էջերում նա հաճախ է հանդես եկել հայ կրոնավորների կամայականությունների և տգիտության դեմ։ Թաղիադյանը մերժում էր հայ եկեղեցու բացարձակ իշխանությունը ազգային գործունեության մեջ։ Նրա տեսակետով հոգևոր առաջնորդը պետք է հաշվետու լինի հասարակության առաջ։ Նա պահանջում էր մեծացնել եկեղեցական խորհուրդներում աշխարհիկ ներկայացուցիչների իրավունքները։ Նա մերժում էր հայ եկեղեցու կալվածատիրական իրավունքը։ Զինրայի եկեղեցու կառավարիչների կողմից գնված մի հողամասի առթիվ բարկացած և դառնացած, գրում է. «Միշտ ասացուք և դարձյալ ասեմք, թե այսպիսի աւելորդութիւնք անպիտան է եկեղեցուն...։ Աղաչեմք զձեզ եղբարք, բավականայարուք ծախել զկուռ արծաթ եկեղեցւոյն ի հող և ի մոխիր։ Լավ համարեցէք նույն դրամով ժողովուրդս առաւելուր անդանօր և ցուցանել նոցա զճանապարհն ապրուստիցն»[2]։

---

1 «Ճանապարհորդութիւն ի Պարս», էջ 31։

2 «Ազգասեր Արարատեան», 1850, № 62։

Սակայն այս բոլորը դեռ չի նշանակում, թե իր քննադատությամբ Թաղիադյանը մերժում էր հայ եկեղեցու հոգևոր իշխանության ունենալիք դերը ազգային-քաղաքական կյանքում։ Հայաստանը Ռուսաստանին անցնելուց հետո, ցարիզմը մի կողմ է դնում հայկական պետություն ստեղծելու հարցը։ Եկեղեցական իշխանությունը հայ լուսավորիչների համար մնում է որպես քաղաքական-ազգային միավորող կենտրոն։ Թաղիադյանը չի կարողանում թափանցել եկեղեցու սոցիալական արմատների մեջ և ենթադրում է, թե գոյություն ունեցող կամայականությունները հետևանք էին վատ առաջնորդի գործունեության։ Ահա թե ինչու նա չափից ավելի հուսավառվում է, երբ կաթողիկոս է դառնում Ներսես Աշտարակեցին, մի մարդ, որը հայտնի էր իր հայրենասիրական գործունեությամբ և որը, իբր թե, ի վիճակի կլինի հոգևոր իշխանությանը բարձրացնելու ցանկալի աստիճանի։

Թաղիադյանը երկար ժամանակ սպասում է իր հավատը կաթողիկոսացած Ներսեսի վաղեմի հայրենասիրական գործունեության հանդեպ։ Բայց նրա հույսերը չարդարացան. 1849 թվականին «Ազգասեր Արարատյան» թերթում նա տպագրում է մի հոդված, որ խստորեն դատապարտում է Ներսեսի քաղաքական վարքագիծը, ցույց տալիս, որ նա այլևս ի վիճակի չէ ծառայել իր հայրենիքին։

«Ազգասերի» և «Ազգասեր Արարատյանի» էջերը լի են 1840-ական թվականների Ռուսաստանի քաղաքական-տնտեսական կյանքին վերաբերող տարբեր հաղորդումներով։ Հետևելով Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը, Թաղիադյանը նկատում է Նիկոլայ կայսեր դիվանագիտական խաղերը, որոնք անհարիր են «ազատարարի» նրա կոչման հետ։ Հունգարական դեպքերի առիթով քննադատելով Ռուսաստանի, Թուրքիայի, Անգլիայի և Ֆրանսիայի դիրքը, Թաղիադյանը վկայակոչում է Եզոպոսի առակներից մեկը. «Ռուսաց գայլն և Թուրքաց գառնն եկին ըմպել ի միևնույն աղբերեն Հունգարացվոց։ Հա՜, աղաղակեաց Գայլն պղտորե՞ս դու զջուրս և խառնե՞ս զիմ ըմպելիս։ Ո՛չ բնաւ երբեք, հեզութեամբ պատասխանեաց դառն. քանզի ստորև կամ ընթացից գետոյս քան զքեզ և եթե կամիցիմ ևս ոչ կարեմ առնել դայդ։ Այո՛, այո՛, պատասխանեց Գայլն, դու չէի՞ր որ հերու գիս թշնամեիր»[1]։ Եվ այսպես, շարունակելով առակի դիալոգը, վերջում հայտնում է, որ երբ գայլը պատրաստվում էր մենակ ըմբոշխնել գառին, վրա են հասնում հովիվ անգլիացին և շուն գաղիացին։ Վեճը ավարտվում է նրանով, որ ավարից բաժին է հասնում բոլորին էլ։

Ցարիզմի արտաքին քաղաքականության նկատմամբ քննադատական վերաբերմունքի արտահայտություններից մեկն է հետևյալ փաստը։ 1852 թվականի վերջին Նապոլեոն III գրավում է ֆրանսիական իշխանությունը։ Ռուսաստանը անմիջապես կողմնորոշվում է քաղաքական նոր իրադրու-

---

[1] «Ազգասէր Արարատեան», 1849, № 38։

թյան մեջ։ Թուրքիայի հանդեպ բռնած նրա դիրքի առթիվ Թաղիադյանը գրում է. «Մեք մինչև օրս հինգ ուլից հրամայել չունեցաք զիա՞րդ գիտիցեմք թե սոքա զի՞նչ առնիցեն և նոքա զինչ։ Միայն տեսանեմք, զի երկոքին ևս հսկայք՝ բազկունս կորովիս ունին, կորս եթէ փոխանակ իմաստութեամբ ի շինութիւն աշխարհի գործ դնելոյ դիւահարեացին ի թշվառութիւն անձանց և հայրենեաց գործ դնել. ուրեմն պիտի ասել, վերջում վշտացած հայտարարում է Թաղիադյանը, թե պատիժ մեղաց հասեալ է»[1]։

Քննադատելով Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը, Թաղիադյանը, սակայն, նույնքան կդոն չէր նրա ներքին քաղաքականության նկատմամբ։ Նա, օրինակ, դատապարտում է 1830 թվականի լեհական ապստամբությունը և նույնիսկ հայտարարում է, թե այդ ապստամբությունը բորբոքում է «զարդար վրեժխնդրություն կայսեր»։

Որքան զգույշ է Թաղիադյանը ռուսական պետականության քննադատության հարցում, այնքան ազատ և համարձակ է նա եվրոպական պետությունների և Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության քննադատության մեջ։ Թաղիադյանը ապրում էր Հնդկաստանում և նրան մոտիկից ծանոթ էր այն վերասերման քաղաքականությունը, որ իրականացնում էին անգլիացի դիպլոմատները, վաճառականները, միսիոներները Հնդկաստանի նաև հայկական հատվածներում, ձգտելով չեզոքացնել նրանց։ «Ազգասերում» և «Ազգասեր Արարատեանում» բազմաթիվ էջեր կան, որտեղ, փաստական տվյալների վրա, Թաղիադյանը կատարում է եվրոպական պետությունների այդ քաղաքականությանը վերաբերող խոշոր ընդհանրացումներ։ Խոսելով անգլիական գաղութարարների մասին, նա նկարագրում է Հնդկաստանում կատարված կողոպուտները, հալածանքներն ու խժդժությունները, որոնք մեծապես ազդում էին հնդիկ ժողովրդի տնտեսական կյանքի վրա, քայքայելով և սովի մատնելով նրան։ «Յամին ղեօթնհարիւր միլիոն լիրայից քարշեն ի հարկաց Հնդկաստանի և ոչ գոնէ զմիլիոն մի ծախեն ի վճար ուսման այնքան բազմութեան տաւղացն զայն։ Եւ չիցե՞ այս բռնարարութիւն ի ծայրագոյն աստիճանի. անտանելի ևս քան զմուժիկութիւնն Ռուսաստանի և զկեղեքանս Պարսից»[2]։ Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մտքերը հիշեցնող այս տողերը անգլիական քաղաքականության մասին բավական տեղ են բռնում Թաղիադյանի հրատարակած պարբերաթերթերում և պատմագիտական աշխատություններում։ «Եւ դեռ սոքա՞ Անգղիացիք,— շարունակում է նա նույն տեղում,— որք անամոթ երեսոք պարծին միշտ ի բարերարս ազգի մարդկան լինել։ Չիցե՞ այս և ապերախտութիւն մեծցցել ցամաքեցուցանել զստինս հպատակեաց ի վերջին՛ շթէ կաթին եւ զկենսարարն նոցա խնայել նոցա զսնունդ։ Աշխարհ զաչս բացցէ այսուհետև և տեսցէ թե ո՞ր բար-

---

1 «Ազգասեր Արարատեան», 1852, № 80։
2 «Ազգասեր Արարատեան», 1849, № 27։

յարոսութիւն իցէ դժնդակագոյն քան զայս և աղօթս առասցէ վասն փոփոխութեան նորուն դէպի բարին կոյս այսինքն Հօգուտն Հասարակաց՝ որով միայն Հաստատուն կայ տէրութիւն»[1]։ Թաղիադյանը քննադատում է անգլիացիների արտաքին քաղաքականությունը նաև եվրոպական ժողովուրդների նկատմամբ։ Օրինակ, անդրադառնալով Պորտուգալիայում կատարվող դեպքերին և անգլիացիների միջամտությանը, նա գրում է. «Բարւոք լինէր Անգղիո եթէ փոխանակ յայլս խառնակիչ չէրելոյ՝ զիւրոյ տան զկացութիւն բարւոքէր»[2]։

«Ազգասէրում» տողեր կան նվիրված ալժիրցիների ապստամբությանը՝ ընդդեմ ֆրանսիացիների. «Իրավի այս լուսավորեալ ժամանակում այսպիսի գազանային անգթութիւն երբեք լսված չէր։ Գաղիացւոց տէրութիւնը բոլոր ալջիր տանուլ տալը լավ էր քան թե այս վատահամբաւութիւնը կրէր»[3]։ Թաղիադյանի թերթերում քննադատական վերաբերմունք կա նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության վերաբերյալ. «Միաբանեալ Նահանգ Ամերիկա» հոդվածում նա գրում է, որ մեծ քաջություն չէ նրանց կողմից հաղթել Մեքսիկային. «Ամերիկա զմի կամ զերկուս պատերազմունս յառաջ մղելով ի վերայ տկար թշնամւոյ զերկիր նոցա բռնի յափշտակելով աւարօք ընչիւքն փարթամանալով ոչ դառնայ և զօրմոց ապարանից կախէ զիւր մահածիգն հրացան»[3]։

Այսպես, Թաղիադյանը, ականատես լինելով Պոլսից մինչև Հնդկաստան ասիական հողի վրա ապրող մանր ժողովուրդների կրած տառապանքներին, հետամուտ՝ ռուսական, եվրոպական և ամերիկյան պետությունների արտաքին քաղաքականությանը, մամուլի միջոցով ծանոթանալով եվրոպական ժողովուրդների ճնշումներին և հալածանքներին, տարիներ շարունակ ձաղկում և մերկացնում է այդ հակասությունները և երբեմն էլ հուսահատ հանգում այն մտքին, թե այդ բռնության տիրապետության պայմաններում կարո՞ղ է իրոք լուսավորությունը հարթել ժողովուրդների ազատության և երջանկության ուղիները։

Առանց խորանալու ֆեոդալական կապանքները խորտակող կապիտալիզմի բերած ներքին հակասությունների մեջ, Թաղիադյանը սրտագին ողջունում է նրա մղած պայքարը ազգային նեղմտության, կղերա-ավատական դոգմաների, միջնադարյան քարացածության դեմ, ոգևորվում լուսավորության, գիտությունների տարածման նոր հեռանկարներով։ Սակայն նա խորապես վշտանում է կյանքում օրեցօր ուժեղացող կեղծիք և խաբեբայություններ, մարդու կյանքի անապահովություն ու շահագործում տեսնելով։ Չկարողանալով հասկանալ այդ երևույթները, նա ընկնում է հակասությունների մեջ։ Մի կողմից նա գովերգում է հայ մեծատունների բարերարությունը, մյուս կողմից՝ մերկացնում նրանց կեղծիքը և անտարբերությունը ժողովրդի շահերի հանդեպ. մի կողմից մերկացնում է սնա-

1 «Ազգասէր Արարատեան», 1849, № 27։
2 «Ազգասէր», 1847, № 100։
3 «Ազգասէր», 1846, № 58։

հավատությունն ու նախապաշարումները, մյուս կողմից՝ զարգացնում քրիստոնեական ուսմունքի վրա խարսխված ուրույն բարոյախոսություն, որով նա կամենում էր հասարակությունը փրկել արատներից. մի կողմից նա ջերմորեն պաշտպանում էր ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, մյուս կողմից հորդորում տիրակալներին՝ իրենց գլուխները զարդարելու բանականության պսակներով, հարդարելու նրանց և ժողովուրդների շահերի միջև գոյություն ունեցող հակասությունները։

Ապրելով Հնդկաստանի հայ հասարակական կյանքի անձուկ միջավայրում, նա չկարողացավ խորանալ քաղաքական այն հարցերի մեջ, որոնցից շատերի պատասխանը անուղղակի կերպով տվել էր արդեն իր ամսագրի էջերում՝ եվրոպական պետությունների և կապիտալիզմի քննադատության մեջ։

Իր քաղաքական-հասարակական հայացքները Թաղիադյանը արտահայտել է նաև պատմագիտական գործերի և մանկավարժական գործունեության մեջ։ Ըլակեա ունենալով լուսավորությունը, նա առաջին կարգի վրա է դնում ազգային կյանքի ուսումնասիրության պահանջը։ Իր պարբերաթերթերում հրապարակում է պատմական անցյալին վերաբերող վավերագրեր, ազգային կյանքի կազմավորման մոտակա ժամանակներին, Հայաստանի ազատագրման նախօրյակին տեղի ունեցած քաղաքական իրադարձություններին վերաբերող նյութեր և այլն։ Անցյալի ուսումնասիրությունը կատարելիս նա ելնում էր իր ապրած ժամանակաշրջանի պահանջներից և մշակում է պատմական նոր տեսակետ՝ երևույթների և փաստերի ուսումնասիրության վերաբերյալ։

Թաղիադյանի գրչին են պատկանում «Պատմություն հին Հնդկաստանի» և «Պատմություն Պարսից» աշխատությունները։ Նա հրատարակել է նաև Թոմաս Խոջամալյանի 1768 թվականին գրած «Պատմություն Հընդկաց» աշխատության երկրորդ մասը՝ կցելով առաջաբան։ Պատմագիտական նշանակություն ունեն նաև նրա «Ճանապարհորդություն ի Հայս» և «Ճանապարհորդություն ի Պարսս» մեմուարները։ Քաջ տիրապետելով հնդկերենին, պարսկերենին, թուրքերենին. հրեերենին, ապա լատիներենին, հունարենին և անգլերենին, Թաղիադյանն ուսումնասիրում է մի շարք սկզբնաղբյուրներ, իր ճանապարհորդության ընթացքում գրի առնում հնագիտական, ազգագրական, բանահյուսական փաստեր, որոնք և օգտագործում է իր պատմագիտական ուսումնասիրություններում։

Թաղիադյանն առանձին ուշադրություն է դարձնում ժողովուրդների ազատագրական պայքարի դրվագներին։ Հնդկաստանի պատմության մասին գրած աշխատության մեջ նա նկարագրում է, թե ինչպես սկսվեց անդրօվկիանյան թալանը։ «Իա նոցա չեղան Փորթուգալք և կրոնաւորք նոցա, որպէս սպանեացուցն ի Մեքսիկոն, իձախ բարձին զխաչ և յաջ իւրեանց զսուսեր, բանի ածել զնոսա ի հաւատս իւրեանց։ Զօրացան եա նոցա Դանիք, Գաղիացիք և Անգղիացիք և բազումս թէ ի հաւատացելոց և թէ յանհաւատից՝ որսացան և որսան ի կողմն իւրեանց առանց խտրա-

նաց»[1]։ Այնուհետև. «Ամաչեսցե արդարև իշխանք հաւատացելոց, որոնց փառամոլութիւն միայն յիրաւունս համարի գազանային անգթութեանց»։ Այս տողերը արդար վրդովմունքի արտահայտություն են ընդդեմ կապիտալիստական թալանի, ընդդեմ փոքր ժողովուրդների հարստահարության։

Հնդիկ և պարսիկ ժողովուրդների պատմությունը շարադրելիս Թաղիադյանը հիմք է ընդունում ոչ թե կրոնական կանխակալությամբ շաղախված դոգմաները, այլ պատմության կենդանի փաստերը։ Պատմական դրվագները քննարկելիս նա առանձին ուշադրություն է նվիրում անհատների գործունեությանը։ Քննադատելով արյունարբու տիրակալներին, դրվատում է պետական միասնության և լուսավորության ձգտող թագավորներին։ «Երանի ազգին որում իշխեցին թագավորք իմաստունք կամ իշխանք իմաստասերք»։ Միաժամանակ նա սպարսավում, անարգանքի սյանն է գամում արյունարբու Լենկթեմուրին, Աղա-Մահմեդ խանին, Չինգիզ-խանին. «Ճինկիզ խան ժանտախտն ապականության մարդկային ազգի»[2], ակնարկում է Ալեքսանդր Մակեդոնացու դրական և բացասական կողմերի մասին ու եզրակացնում՝ «Սկսաւ սկայաբար եկաց սնափառ և մեռաւ չուառ»[3]։

Պարսից պատմության մեջ տարբեր դինաստիաների հետ կապվող պատմական եղելությունները շարադրելիս Թաղիադյանը փորձում է ցույց տալ, որ ասպատակող և ավերող բռնակալների կողքին բարձրանում են ժողովրդի հոգին ու զգացմունքներն արտացոլող կուլտուրայի և գրականության նշանավոր կոթողները։ Օրինակ, Լենկթեմուրի ժամանակ, Շիրազում ապրում էր Հաֆիզը, որը «ցուցեալ թե անմեղ գիտութիւն առաւել պատուական էր քան զմեծ՞ուցեալն արքայութիւն»[4]։

Հիշատակելով պարսկական պոեզիայի առավելությունները, Դաքիքիից հետո նա արժեքավորում է Ֆիրդուսուն, որը իր նախորդի ժառանգության վրա «հրաշակերտ յօրինեաց ձայն շինութիւն պարմանազան, որ առաւել քան զամբարտակն հսկայից ի Բաբելոն տեսլով՝ մշտնջենաւորեաց առ յապայ ղփառս հնութեանց Պարսկաստանի անուանեալ Շահնամա կամ Գիրք թագաւորաց»[5]։

«Պարսից պատմություն» աշխատության մեջ Թաղիադյանը բավականին նյութ է տալիս պարսկահայ գաղութի վերաբերյալ։ Նա ուսումնասիրում է Շահ-Աբասի ժամանակներից սկսած մինչև 1834 թվականը Ջուղայում և Սպահանում տեղի ունեցած դեպքերը և նորից ընդգծում այն փաստը, որ հայ ժողովրդի այդ հատվածը իր գոյությունը կարողացել է պահպանել միայն մաքառման շնորհիվ։

Հայ ժողովուրդը երկար դարեր տառապել է օտարի լծի տակ, անընդհատ ենթարկվել ֆիզիկական խոշտանգումների, քայքայվել տնտե-

1 «Պատմութիւն հին Հնդկաստանի», 1841, էջ 224։
2 «Պատմութիւն Պարսից», 1846, էջ 137։
3 Նույն տեղում, էջ 42։
4 Նույն տեղում, էջ 152։
5 Նույն տեղում, էջ 75։

սապես, բայց նա պահպանել է իր կենսական ուժերը, իր լեզուն, իր ազգային տրադիցիաները, հոգևոր հարստությունը։ Այդ հանգամանքն է, ահա, թելադրում Թաղիադյանին ասելու իր ժողովրդին, որ երկար մտածելը պետք չէ, որ անհրաժեշտ է հաղորդակցվել եվրոպական քաղաքակրթությանը, և այդ ուղիով հասնել ազատության. «Ազատին մեծի ես ծնունդ,— ասում էր նա իր հոդվածներից մեկում,— եւ ո՞վ կարիցէ գերել զքեզ, հսկայ ոք ես, քան զՍամփսոն և ո՞վ կապեցէ զքեզ եթէ ոչ դու ինքդ»։ Թաղիադյանը մեծ նշանակություն է տալիս սեփական ձեռներեցությանը լուսավորական շարժման մեջ։ Առաջին հարցը, որ դնում է նա, ուսուցման և գիտությունների յուրացման հարցն է, «որ մարդի զժողովուրդ ի շինութիւն աշխարհի և ուսումն է որ առնէ հպատակ տիրասէր և պիտանի պետութեան»[1]*։*

Տարիների ընթացքում Թաղիադյանը մեծ խանդավառությամբ հետևում է Ռուսաստանում և Թուրքիայում, ինչպես և հայկական մյուս օջախներում բողբոջող լուսավորական շարժմանը։ Նա ոգևորվում է այս կամ այն վայրում բացվող հատուկենտ դպրոցներով, հրատարակված գրքերով, կազմակերպված ընկերություններով. ամեն ինչի մեջ նա տեսնում է կյանքի սկիզբը, որը ունի աճելու ու զարգանալու մեծ հնարավորություն։ Հենվելով Զմյուռնիայի, Պոլսի, Թիֆլիսի թերթերի տված տեղեկությունների վրա, նա դրվատում է մանկավարժական նորամուծությունները, որոնք սկիզբ են դնում հայ մանուկների նորաձև կրթությանը։ Ինքը՝ Թաղիադյանը իր գործունեության ընթացքում, առանձին նշանակություն տալով մանկավարժական սկզբունքների զարգացմանը, սեփական նախաձեռնությամբ կազմում է դասագրքեր և առաջ քաշում մանուկների կրթության հարցերը։

Բացասելով ուսուցման մեջ մինչ այդ գոյություն ունեցող սխոլաստիկ մեթոդները, Թաղիադյանը հայ իրականության մեջ առաջիններից մեկն է, որ կիրառում է տառաուսուցման, տառահեգման նոր ձևը։ «Մանկունք վաղուց յավետ հակամետ քան եթէ գրոց,—գրում է նա 1848 թվականին հրատարակած իր Մեսրոպյան այբբենարանի առաջաբանում,— բազում անգամ ծուատեն զսեղանս յուրյանց յառաջ քան ուսանել զաթութայս նոցա»։

Թաղիադյանի կարծիքով երեխան պետք է առաջին հերթին ճանաչի իր շրջապատը, յուրացնի այն, ինչ շոշափելի և տեսանելի է իր համար։ Բառ կամ տառ ուսուցանելիս պետք է ընտրել այնպիսի վանկեր, որոնք հիշեցնում են նրան ծանոթ առարկաները։

Թաղիադյանն առանձին ուշադրություն է դարձրել քերականության ուսուցման վրա։ Քննադատելով իր ժամանակի քերականական դժվարըմբռնելի կանոնները, նա աշխատում է դյուրություններ մտցնել նրա մի շարք ձևերի մեջ, հեշտությամբ այն յուրացնելու համար։

---

1 *«Ազգասէր», 1847, № 86։*

Հեգարանից և շարադրիչից հետո Թաղիադյանը երեխային առաջարկում է ընթերցարանը։

Դասագրքերից բացի Թաղիադյանը հրատարակել է նաև մի գրքույկ՝ «Ծառ դաստիարակութեան օրինրդաց» (1848)։ Այստեղ նա զարգացնում է իր մտքերը ազգային դաստիարակության և կրթության վերաբերյալ։ Խոսելով հասարակության մեջ անհատի ունեցած կարևոր դերի մասին, Թաղիադյանը կանգ է առնում այդ հասարակության հիմնական օղակի՝ ընտանիքի վրա։ Ընտանիքը հիմքն է, ուստի կազմակերպված հասարակության համար անհրաժեշտ է կազմակերպված, քաղաքակրթված ընտանիք։ Այդտեղ առանձին նշանակություն է ստանում կրթված և դաստիարակված կնոջ հարցը։ Կինը, ըստ Թաղիադյանի, պետք է ունենա հոգևոր ու կուլտուրական այնպիսի դաստիարակություն, որը բխի ոչ միայն նրա քաղաքացիական շահերից, այլև ազգային հայրենասիրական նպատակներից։

Հայ աղջիկների դաստիարակությանը նվիրված գրքում Թաղիադյանը գրում է. «Ազգութիւն կերպասի պատմուճան կամ անկուածոյ քող չէ՝ զոր երբ կամի աղնվուհիդ ագանի և երբ կամի մերկանայ. այլ ընդ արեան և ընդ կենաց նորա ունի զանբաժան հաղորդութիւն»[1]։

«Ազգասեր» և «Ազգասեր Արարատեան» թերթերում մենք հանդիպում ենք բավական թվով մանկավարժական հոդվածների, որոնց նպատակն էր սիստեմատիկ կերպով ծանոթացնել դաստիարակության և կրթության նորագույն հարցերին, ինչպես նաև Նոր Ջուղայում, Կալկաթայում, Պոլսում և այլ վայրերում եղած դպրոցների նորամուծություններին, դասավանդման նոր ձևերին և այլն։

Պայքարելով սխոլաստիկ մանկավարժության դեմ, Թաղիադյանը, սակայն, իր ուրույն պայմաններից ելնելով, չհասկացավ կամ չկարողացավ լուծել աշխարհաբարի հարցը։ «Ինձ շատ ծանր է թվել Թաղիադյանցը այն հայերի կարգում,— գրում է Նալբանդյանը,— որ մտածում էին մեռյալը գործիք շինել, ժողովրդի մեջ կյանք ներս բերելու համար»[2]։

Աշխարհաբարի գործածման պահանջը Թաղիադյանը զգացել է դեռևս 20-ական թվականներին, երբ նա գրում էր իր պատմական նամակը երևանցիներին։ Ճանապարհորդությունների ընթացքում նա, դիտնականի հմտությամբ, ծանոթացել և ուսումնասիրել է հայ բարբառները, հավաքել բազմաթիվ զրույցներ, երգեր, առակներ։ 1832—1834 թվականներին Էջմիածնում եղած ժամանակ գրել է աշխարհաբար բանաստեղծություններ։ Հաշվի առնելով ջուղահայերի պահանջը, Թաղիադյանը 1845 թվականին Կալկաթայում հրատարակում է իր «Ազգասերը» աշխարհաբար լեզվով։ Խ. Աբովյանը Թիֆլիսում, Ս. Նազարյանը Կազանում, հրապարակ էին եկել աշխարհաբար լեզվին քաղաքացիական իրավունք տալու և այն որպես գրական լեզու մշակելու հրատապ պահանջով։ Աշխարհաբար լե-

[1] Մ. Թաղիադյան, *Ծառ դաստիարակութեան օրիորդաց*, Կալկաթա, 1847, էջ 43։
[2] Մ. Նալբանդյան. *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 1, էջ 275։

զում լայն զարգացման նոր պայմաններ էր որոնում արդեն XIX դարի սկզբներից։ Հրապարակի վրա կային աշխարհաբար ձեռնարկներ, պարբերականներ, որոնք ձգտում էին մատչելի դառնալ ժողովրդին, հաղորդակից լինելով նրա կենսական պահանջներին։

Թաղիադյանը չհասավ աշխարհաբարի հասարակական դերի խոր գիտակցման։ 1848 թվականի սեպտեմբերին հրատարակելով իր ճերթը գրաբար լեզվով, նա գրում է. «Որ ռամկօրէն գրէ, վասն մասնաւոր սեղվոյ, աշխատի, իսկ որ գրաբար գրէ՝ վասն ամենայն ազգին և ընդհանրոյ աշխատի»[1]։ Սրանից երևում է, որ Թաղիադյանը լուծում էր իր երկընտրանքը աշխարհաբարի հարցում և անցնում գրաբարի կողմը։

1846 թվականին Թաղիադյանը հիմնում է Ս. Սանդխտյան ուսումնարանը։ Նրա սաներից մեկը՝ Հ. Շահնազար Սարգսյանը գրում է, որ այդ ուսումնարանի նպատակն էր «կրթել, գգալարամիտ օրիորդունս ազգին ի հայ բարբառ և նոքօք իսկ տարածել զմայրենի լեզու ի գերդաստանս Հայոց Հնդկաստանի, որոց բազումք ծնեալք ի Կալկաթա անգեւո իսպառ հայերենի զանգլիական իկիր արկանէին»[2]։

«Ազգասէր» և «Ազգասէր Արարատեան» պարբերականներում տպագրված դպրոցական հաշվետվություններում Թաղիադյանը ներկայացնում է այն գործնական ձեռնարկումներն ու ծրագիրը, որով նա վարում էր իր ուսումնական դասընթացը։ «Առաջին պարտականութիւն է,— գրում է նա,— մարդո ուսումն, առանց որի ոչ ցորեանը հաց կդառնա, ոչ թութն ապրեշում»։

«Ազգասերի» էջերում մենք հանդիպում ենք մանկավարժական բնույթի բազմապիսի հոդվածների և հաղորդումների։ «Յաղագս ուսումնասիրութեան» անստորագիր հոդվածաշարում հեղինակը Զուղայի բարբառով հանգամանորեն բացատրում է ուսման օգտակարությունը, խոսում է մանկան դաստիարակության խնդիրների մասին, երեխայի առաջին ուսուցիչը համարում է ծնողը, ապա շարադրում դպրոցում ուսուցչի պարտականությունները և այլն։ Թաղիադյանը միաժամանակ ընդգծում է նաև դաստիարակության հարցը։ Նա կարևոր նշանակություն է տալիս այն միջավայրին, ուր սնվում և դաստիարակվում է երեխան, մշակվում նրա բնավորությունը։ Թաղիադյանը առանձնապես կարևոր նշանակություն է տալիս բարոյական դաստիարակությանը, երեխայի մեջ առաքինության, ազնվության, գթության և այլ հատկանիշների պատվաստմանը։ Այստեղ նա չի բացառում նաև կրոնական դաստիարակությունը։

Նախապաշարումներից ազատ քրիստոնեական սկզբունքների ուսուցումը նրա կարծիքով կարող է օգնել բարքերի մեղմացմանը, մարդու արատների վերացմանը և կեղծիքի նվազեցմանը։

---

1 «Ազգասէր Արարատեան», 1848, № 1։

2 «Դիտողագիր Հ. Շահնազար Սարգսյան, ի վերա կենսագրութեան Մ. Դ. Թաղիադյանի», 1888, էջ 22։

Մ. Թաղիադյանը ծանոթ է եղել եվրոպական գրականության խոշորագույն ներկայացուցիչների ստեղծագործություններին։ Բնագրերով կարդացել է Շեքսպիրին, Բայրընին, Դիկենսին, Հոմերոսին, Ֆիրդուսուն, Սաադիին և ուրիշների։ Ժամանակին նշվել է, որ Թաղիադյանն իր թերթերի էջերում տեղ է տվել Բայրընի բանաստեղծությունների թարգմանություններին, տպագրել է մի հատված Ֆիրդուսու «Շահնամեից», Շեքսպիրից և այլն։ Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև «Գուլիելմոս Տելլ» վերնագիրը կրող շվեցարական ժողովրդական պատմությունը, որը սկզբնաղբյուր է հանդիսացել Շիլլերի «Վիլհելմ Տելլի» համար։ Այստեղ պատմվում է «ազատածին ալպեան որսորդի» հերոսական պատմությունը իր հայրենիքի ազատագրման համար։ Վրեժ լուծելով քաղաքապետ Գեսլերից, Գուլիելմոս Տելլը անցնում է ազատագրական շարժման գլուխ և ազատագրում Շվեյցարիան ավստրիական լծից։ Հետաքրքիր է այն փաստը, որ ժողովրդական այդ պատմության թարգմանիչը նույն «Ազգասերի» էջերում տպագրում է մի հոդված՝ «Իրավունք Հայկայ ի պատերազմել ընդդեմ Բելայ» վերնագրով, ուր քննում է Հայկի և Բելի առասպելը։ Հայկի մեջ նա մարմնավորված է տեսել հայության գլխավոր հատկանիշը՝ չխոնարհվել բռնության առաջ, պահպանել անկախությունը և բարելավել ժողովրդի բարօրությունը։ «Զի՞նչ առաւել արժանի առն քաջի,— գրում է հեղինակը,— քան արիարար ընդդեմ կալ ի պաշտպանութիւն ազգին և հայրենեաց, ընդդեմ հարստահարացն անիրաւացն»[1]։ Այս երկու գործերի զուգադիպությունն ինքնին ցույց է տալիս, որ Թաղիադյանը առաջին պլանի վրա է դնում ժողովրդի կյանքի կազմակերպման և նրա ինքնուրույնության պահպանման հարցերը։ Այդ պատճառով էլ նա առանձին ուշադրություն է դարձնում հայ ժողովրդի հերոսական կյանքը, նրա բնավորության հատկանիշները գրականության նյութ դարձնելու գործին։ «Մեզ հոժարութիւն եղև օրինակօք քաջի գործոց նախահարց մերոց ընդարբուցս ավնուութիւն իմն սերմանել ի միտս ազգին և ապա թողուլ նմա ինքնին յորդորել ի հաւասարութիւն անդր եթէ չգերազանցիցէ ևս քան հրաշալեօք օտարաց շլացուցանել զաչս մերոցն»[2]։ Ելնելով այդ սկզբունքից, Թաղիադյանը փորձում է ստեղծել գեղարվեստական նոր տիպի գրականություն։ Նա այդ նպատակով էլ տպագրում է «Վէպ Վարդգեսի» և «Վէպ Վարսենկան» գեղարվեստական գործերը։

1846 թվականի «Ազգասերում» նա տպագրում է մի հայտարարություն, որից երևում է, որ նա իր առաջին վեպի սյուժեն վերցրել է Մ. Խորենացու՝ հայկական հին վեպերից բերված մի դրվագից։ Այնտեղ պատմըվում է, թե ինչպես Երվանդ թագավորի օրով Տուհաց գավառից եկած Մանուկ Վարդգեսը ամուսնանում է Երվանդի քրոջ հետ և հիմնում Վարդգեսավանը, որը հետո անվանվում է Վաղարշապատ։ Թերթի նույն համա-

1 «Ազգասէր», 1847, № 113։

2 Նույն տեղում, № 112։

յում Թաղիադյանը հրատարակում է մի գլուխ իր վեպից «Յական Արմավրայ» վերնագրով։

Արարատյան ընկերության նախագահ Մանուկ Զորաբյանը, խիստ հավանելով վեպը, թերթի միջոցով խնդրել է Թաղիադյանին ծանոթացնել ընթերցողներին այդ հույժ հետաքրքիր ավանդությանը։ Թաղիադյանը պատասխանել է նրա հետևյալ խոսքերով. «Յարգոյ համապատասխանւոյ և նովաւ պատուելի Ազգիս ընդհանրապէ յայտ լիցի, զի որպես ընթերցող նոյնպես և զտպագիրս Վէպի Վարդգիսի քաջիկ ճանաչէի գոգուտն մեծ՝ որ ի վճիռ հանգամանաց անտի գիտոյ և գրութեան նորա բայց զարդիս ոչ կամեցայ տալ՝ քանզի գրեա 'թէ բոլոր կենօ մատանդական բոլոր գրուածք հի օրագրականք են, որոց մեծապէս անիրաւ էի, եթէ զամենայն հաստուած բանայի և դնէի պատաշեաւ»[1]։ Թաղիադյանի խոսքերից պարզվում է, որ նա մի քանի անգամ օժանդակություն է խնդրել օրագիրը տպագրելու, սակայն այն մնացել է անհետևանք. «Արդ ես ի նոյն կամի կամ, և եթէ սիրելի իցէ պատուելի Ազգի իմում տեղեկանալ հանգամանաց Վարդգէսի և սկզբնատարերաց Աղգային նշխարաց, ցանելոց աստ և անդ, յէջս Ազգասիրին այսօրիկ, ուրեմն, շնորհ արասցէ մի կամ միւս եղանակաւ զտպագրութիւնէ և նորին մեզ բաշալերս մատուցանել և անտուստ տեղեկանալ։ Ապա թէ ոչ համբերեսցէ մինչև որ ես հարստացեալ, եթէ մնայցեմ, նոյն՝ ինչ և արդ եմ, տպեցից. քանզի՝ թէպէտ և ես ոչ հարստացայ և ոչ գիտեմ, բայց լսեմ, որ ասեն թէ ճոխութիւն փոփոխէ զբնութիւն»[2]։



«Վէպ Վարդգեսի» երկի անվանաթերթը

Սակայն, 1889 թվականին «Աղբյուրում», ապա 1910 թվականին «Հորիզոնում», Ղ. Աղայանը խոսում է Թաղիադյանի «Վէպ Վարդգեսի» մասին և հայտարարում, որ դա ազգասիրական նպատակով կատարված

[1] «Ազգասէր», 1846, Ν 44։

[2] Նույն տեղում։

թարգմանություն է «Աբիլոն» վերնագրով մի ռուսերեն վեպի, որն իր հերթին թարգմանված է իտալերենից։ «Ռուսերեն թարգմանությունը համեմատեցի հայերենի հետ,— գրում է Աղայանը,— և չգտա ոչ մի բան պակաս կամ ավելի, միայն հատուկ անուններն են հայացված, բնագիրը եղել է իտալերենից, որից թարգմանել են մյուս ազգերը միմյանցից։ Գործողությունը կատարվել է Վենետիկ քաղաքում, որը հայերենում դառել է Արմավիր»[1]։

Բանասիրական ճշգրտումները պարզել են, որ իրոք Աղայանի ձեռքի տակ եղել է ռուսերեն թարգմանական մի գիրք, որը կոչվել է «Разбойник в Венеции или ужасный Абелико», сочинение г-на Левиса, автора «Монаха», перевод с французского, 1816. Տեքստերի համեմատությունը ցույց է տալիս, որ Թաղիադյանը վերցրել է այդ վեպի սյուժեն, և ինչպես Աղայանն է ասում, տվել նրան գաղափարական նոր բովանդակություն։ Տեքստի մեջ հեղինակը կատարել է որոշ կրճատումներ, ավելացրել է «Ազգասերում» տպագրված Ե գլուխը և մի շարք բնության նկարագրություններ[2]։

Մինչև Թաղիադյանի այս գործը մեզանում հրապարակի վրա չկար ոչ մի վեպ։ «Ազգասերը» փորձում է ստեղծել արդիական և պատմական վեպի նոր տրադիցիա և իբրև առաջին փորձ հրատարակում է Թաղիադյանի մտերիմ բարեկամ Թ. Խ. Ավետումյանի «Արամայիսը»։ Արձագանքելով ժամանակակից հասարակական հարցերին, հեղինակը փորձում է ստեղծել նոր մարդուն՝ իր էպոխային համապատասխան խոհերով ու զգացումներով։ Սակայն Թաղիադյանի նպատակն էր միաժամանակ շոշափել հայ ժողովրդի գոյության, նրա կյանքի պահպանման և ազգային ընդհանրության հարցերը։ Այս նպատակով է նա վերցրել եվրոպական վերոհիշյալ արկածային վեպը, և հայացրել նրա սյուժեն, դարձրել ազգային-հայրենասիրական տենդենցներով հագեցված գեղարվեստական մի երկ։ Գրական այսպիսի փոխառումները, տոհասարակ չեն բացառվել անցյալի դրականության մեջ։

Վեպն սկսվում է Տուհայց երկրի իշխան Վարդգեսի երևան գալով։ Գիշերը հասնելով Արմավիրի պատերի տակ, Քասախ գետի ափին, նա նկատում է Արմավիրի իշխաններից մեկին, որին հետապնդում են ավազակները՝ նրան սպանելու դիտավորությամբ։ Վարդգեսն ազատում է իշխանին, սակայն նրա դաժանությունը տեսնելով, որոշում է պատժել մարդկային չարությունը։ Միանալով ավազակներին, նա իմանում է, որ Արմավիրի իշխանները դավադրություն են կազմակերպել Երվանդ թագավորի դեմ և իրենց չար գործը իրականացնելու համար կապ են հաստատել Արմավիրի շուրջը սփռված ավազակների հետ։ Աչքի ընկնելով իր ուժով, բանականությամբ ու ճարպկությամբ, Վարդգեսը մերկացնում է իշխանների դավադրությունը և ոչնչացնում ավազակների բույնը։ Կանգնած թա-

[1] «Հորիզոն», 1910, էջ 169։
[2] Մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտություններ). 1961, № 7, էջ 69։

գավորական ատյանի առջև, նա պատմում է հայոց պետության շահի համար իր գործած քաջությունները։ Թագավորը հիանում է նրանով և նրան կնության է տալիս իր քույր Հայկանուշին։ Երկրում նորից վերականգնվում է խաղաղությունը. Վարդգեսը դառնում է մի շարք գավառների բդեշխ։

Օտար սյուժեից փոխառնված կերպարի օգնությամբ Թաղիադյանը ընթերցողի առջև ուրվագծում է հայ ավանդական վեպերում իր կյանքի մի դրվագով հայտնի մանուկ Վարդգեսի կերպարը։ Փոխառնված իրողությունների ֆոնի վրա բարձրանում է պետական միասնության համար պայքարող և միաժամանակ մարդկային բարձր գծերով օժտված կերպարը։

Գաղափարական ավազակի դերը ստանձնած Վարդգեսը որքան ուժեղ է, քաջ և իմաստուն՝ ճշմարտությունը երևան հանելու մեջ, այնքան թույլ և անվստահ է Հայկանուշի հանդեպ տածած սիրո մեջ։ Սակայն այստեղ ևս հաղթանակը մնում է մարդկային անկեղծ զգացումների կողմը։ Ամենածանր վայրկյանին Հայկանուշի սերը հաղթում է բոլոր տեսակի նախապաշարումները և հաղթանակը մնում է Վարդգեսի կողմը։ «Անշուշտ որպես և կենդանի եմ անձամբ անձս վարձեցի ի չար յայս մշակութիւն կամ պարտաւորեցից զապագայս ազգաց պատուել զայն անուն զոր գործել իմ՝ մեծացուցանեցեն ինձ»[1],— եզրակացնում է ազգային ինքնաճանաչության զգացումով տոգորված Վարդգեսը։

Վեպի սյուժեն զարգանում է Թաղիադյանի կանխորոշած սխեմայով։ Հայ իշխանների կերպարանքով հանդես եկած հերոսները իրենց գործունեությամբ պետական դավաճաններ են, բայց նրանք ցույց են տալիս, որ իրենց չարությունը ինքնանպատակ է. «Բայց արդ՝ զի՞նչ իցէն արարք մեր,— քննադատում է իշխաններից մեկը իր համագործակիցներին,— եթե ոչ դատարկութեամբ անցուցանեն զկեանս մեր ի գաւիթս մեհենից, ի զբօսանս հրապարակաց ի վայելչութիւնս պարտեզաց, ի գինեբբուս և յանառակութիւնս, որոնց ոչ գոն ի թիվ»[2]։

Գորխ իշխանը, որը գործում է պետական դավաճանների հետ, ցանկանում է քայքայել ամեն ինչ՝ լոկ քայքայելու համար։ Աստղ իշխանը ետ է նայում, զգում իր արած վատ գործը և այլևս դուրս գալու ճանապարհ չի տեսնում։ Թաղիադյանն այստեղ ցանկանում է ասել, որ չարիքն իր արմատների մեջ է փտած, և, որ անբարոյականությունն ու ինտրիգները քաղաքականապես քայքայված իշխանների մոտ ավելի վտանգավոր են, քան նույնիսկ ավազակների արարքները։

Քննադատելով ավազակներին և Արմավիրի իշխաններին, Թաղիադյանը նրանց պետ Վայկունու բերանով մի շարք ճշմարտություններ է հայտնում. Անահիտի տաճարում Վարդգեսի հետ ունեցած խոսակցության ժամանակ Վայկունին պատմում է, թե ինչպես ինքը մինչև ավազակ

1 Մ. Թաղիադյան. Վեպ Վարդգեսի, Կալկաթա, 1846, էջ 37։

2 Նույն տեղում, էջ 51։

դառնալը քրմերի մոտ ցանկացել է գիտություններ սովորել, սակայն կյանքի աղտեղությունները, չարիքները նրա մոտ առաջացրել են ատելություն և հիասթափություն այդ իրականության հանդեպ։ Նա թողել է այդ կյանքը, բարվոք համարելով զբաղվել ավազակությամբ՝ չարիքին չարիքով պատասխանելու համար։ Վարդգեսը բացում է նրա հոռի հայացքը կյանքի և մարդու մասին և ապացուցում, որ ամենածանր ոճրագործությունը հենց մարդ սպանելն է։ Ամեն ինչ կարելի է վերադարձնել, բայց մարդու կյանքը՝ երբեք, հայտարարում է Վարդգեսը։

Պատմական թեմայով է գրված նաև Թաղիադյանի երկրորդ վեպը՝ «Վեպ Վարսենկա»։ Վեպի առաջաբանից երևում է, որ նա, դիտավորյալ հրաժարվելով «ծանր և լուրջ» թեմաներից, վերցրել և վերամշակել է ժողովրդական զրույցը, ստեղծել վիպական սյուժե։ «Որոց միանգամ կրճատ երևիցի պատմութիւնս գիտասցէ զի Ջօր գրէմ և տպեմք ըստ արդի հանգամանաց, տնօրինեմք, ապա թէ ոչ միայն անցքն վիրաւորին յատրնուշ բաւական լինէր միւս ևս հատորոյ»[1]։

Անցքերը տեղի են ունենում Աղվանից իշխանի Պարտավ քաղաքում։ Աղվանից թագավոր Վաչագանը սովորություն ուներ գիշերները ծպտված դուրս գալ քաղաք՝ ծանոթանալու ժողովրդի ներքին կյանքին։ Մի գիշեր լսում է պանդոկում իջևանած երեք աղքատների խոսակցությունը։ Մեկը դրանցից ցանկություն է հայտնում թագավորի սպարապետը դառնալ, մյուսը՝ նրա խոստովանահայրը, իսկ երրորդը ցանկանում է տիրանալ թագավորի աղջկան՝ առանց որևէ շնորհի։ Մյուս օրն օտարականները կանչվում են թագավորական ատյան և թագավորի հրամանով կրկնում իրենց ցանկությունը։ Ի զարմանս բոլորի, թագավորը կատարում է երեքի ցանկությունն էլ։ Գուրգենը թագավորի աղջիկ Վարսենիկի հետ հեռանում է քաղաքից, հասնում Միանդուար քաղաքը, ուր նրանք ապաստարան են գտնում մի պառավ կնոջ հարկի տակ։ Գուրգենը մշակությամբ է պարապում, իսկ Վարսենիկը ձեռագործով։ Նրա անունը տարածվում է ամբողջ քաղաքում։ Մի օր Գուրգենն անհետանում է։ Պարզվում է, որ նա ընկել է դևերի որոգայթը։ Վալետ թագավորի օգնությամբ Վարսենիկն ազատում է Գուրգենին, նրանք տիրանում են դևերի հարստությանը, կառուցում են մեծ հյուրանոց՝ աղքատների համար։

Ինչպես Աղայանի «Անահիտը», այնպես էլ Թաղիադյանի այս վեպը, վերցված լինելով արևելյան շրջիկ հեքիաթներից, ցույց է տալիս ժողովրդի այն իմաստությունը, թե երջանկությունը հիմնվում է ոչ թե հարստության, այլ փոխադարձ սիրո, համեստության և ազնիվ աշխատանքի վրա։ «Աշխատութիւն պարզև աստուծոյ էր բնութեանս և յառաջ քան զանկումն նախահարց մերոց»,— ասում է Վարսենիկը Գուրգենին, «ուր թէև քրտամբք երեսաց ուտել զհաց մեր ժառանգութեամբ ձգեցաք առ մեզ ետ յանցածն»[2]։ Աշխարհում չկա ոչինչ հավիտենական, ասում է Վարսենիկը իր թագավոր

[1] Մ. Թաղիադյան, Վէպ Վարսենկայ, Կալկաթա, 1847, էջ Դ։

[2] «Վէպ Վարսենկայ», էջ 83։

հոր հետ ունեցած խոսակցության ժամանակ։ Ըստ նրա՝ իշխանները, նախարարները, նույնիսկ թագավորները հաճախ կործանվել են, իսկ սեփական աշխատանքով ապրող մարդիկ պահպանել են իրենց կյանքը։ Աշխատանքը ազնվացնում է մարդուն, հաղթահարում նրա առջև եղած ամեն մի դժվարություն, հեռու պահում նրան բոլոր մոլորություններից, կրքերին ծառայելու ստորաքարշ կյանքից։ Այդպիսի ազնիվ մարդու տիպար էր Գուրգենը։ «Զի փոյթ է յինչից զուրկ էր և զգեստք պատառոտուն շուրջ զիւր դեռևս ունէր զայսմ ամենայն կատարելութիւնս մտաց և մարմնոյ, ընդ վորս հայել անգամ ամաչէր աշխարհ։ Զիս սկայ անձնեայ էր զնա գեղապատշաճ անդամօք հաստաթիկունք և լայնակուրծք, յորում խորհուրդք բարեպաշտութեան և անպարապ գործունեութիւնք հանճարոյ էլևելս առնէին վեհութիւն իմն առ ընդ խոնարհութեան երևէր միշտ ի դէմս նորայ քաջ ի սիրտ և ամոք միշտ ի բանս իւր»[1]։

Գուրգենը ոչ միայն ոչնչացնում է դևերին, այլև իր սեփական փորձով օրինակ է հանդիսանում նույնիսկ Վաչե թագավորի համար, որը ամոթի մեծ զգացումով խոստովանում է իր չարությունը և խոնարհվում Գուրգենի մեծ կամքի և արդար մտքի առջև։ Վաչագան թագավորը քննադատում է ինքն իրեն, ընդունելով, որ իրենք, իշխաններ լինելով, մտածում են միայն իրենց անձնական շահի մասին։ Գուրգենի խորհուրդների հետևանքով երիտասարդ Հասոն թողնում է իր մոլորությունները և ապրում արդար վաստակի արդյունքով։ Ըստ հեղինակի հաղթանակում է նա, ով ունի իր մեջ աննկուն աշխատասիրություն, ուժեղ կամք և համբերատարություն։ Այստեղ Թաղիադյանն իր հերոսի մեջ դնում է ժողովրդի իմաստությունը։ Այդ իմաստությունը նրա մոտ ձեռք է բերվում կյանքի փորձություններից։ Հարստացած Գուրգենը մտածում է ոչ թե օգտագործել իր ունեցածը սեփական շահի համար, այլ վերացնել աղքատությունը, վերջ տալ մոլորություններին, մարդկային անազնիվ կրքերի տիրապետությանը։

Թաղիադյանի վեպը համեմված է ժողովրդական ասացվածքներով, համեմատություններով և երգերով։ Նրանք դառնում են գաղափարական հանգույցներ, որոնց վրա հեղինակը բևեռում է ընթերցողի ուշադրությունը։ Չափածոյով արտահայտված խոհերն ու դատողությունները պտտվում են կյանքի հակասությունների, մարդկանց իշխանամոլության, շահասիրության և այլ հարցերի շուրջը։ Վարսենիկի բերանով Թաղիադյանը խորհուրդ է տալիս մարդկանց՝ չտարվել հարստությամբ, ոսկու փայլով, այլ ապրել համեստ աշխատանքով։

6

Թաղիադյանի գրական ժառանգության մի արժեքավոր բաժինն են կազմում բանաստեղծությունները։ Նա թարգմանել և փոխադրել է նաև համաշխարհային պոեզիայի մի շարք նմուշներ։ Թաղիադյանի պոեզիայի

---

1 «Վէպ Վարսենկայ», էջ 71։

համար բնութագրական են հասարակական տրամադրությունների բազմազանությունը, քաղաքացիական և հայրենասիրական մոտիվները։

1847 թվականին հրապարակի վրա երևում է Թաղիադյանի «Թութակ Թաղիադյան» ժողովածուն։ Հեռու Հնդկաստանից հայացքը սևեռած հայրենիքում խմորվող հասարակական նոր տրամադրություններին, Թաղիադյանն իր հրապարակախոս ձայնին միացնում էր բանաստեղծական խոհերն ու ապրումները։ Այդ ժողովածուին կցված առաջաբանում նա պատմում է, թե ինչպես հայրենիք դառնալով նա իր հետ տարել է երկու երգախոս թռչուն. մեկը դրանցից, որը պատրաստ էր վսեմ ոճով երգելու իր հայրենիքի պատմական անցյալը, նրա դիցաբանությունը, չհարմարվեց ժամանակի պահանջներին և դատապարտվեց մահվան։ «Պապկայն սիրայրեաց, որ երգէր միշտ զԱրայն Գեղեցիկ և կատուածս հայրենեաց իմոց, մեռաւ և մատնեցաւ ի խաբոյկս դագաղաց, ըստ որում համարեցաւ թե հնդիկ էր յազգէ Բրամանց»։ Մյուսը, որին բանաստեղծը պահում էր իր անձնական հույզերն ու ապրումները վերարտադրելու համար, դարձավ միակ միջոցը կապվելու աշխարհի հետ։ «Մնաց ի մխիթարութիւն ինձ միայն այս թութակ,— գրում է նա իր առաջաբանում,— որ այն, ինչ ձագ անփետուր ի ճիրանաց արծուոյ մազապուրծ ապրեալ՝ միշտ կրէր երկիւղ մահու ի սրտի իւրում, ուստի համարձակ խօսել ոչ կարէր։ Ջանացայ ուսուցանել նմա երգս ազգի, բայց եթէ երգք նորա անախորժ ումեք թուիցին, այն իմ են մեղք ոչ նորա»[2]։


ԹՈՒԹԱԿ ԹԱՂԻԱԴԵԱՆ

ՆՈՒԻՐԵԱԼ

Ի ԿԱԼ.ԿԱԹԱ

1847

«Թութակ Թաղիադյան» ժողովածուի անվանաթերթը

Ի՞նչ նորություններ է բերում այդ ժողովածուն։ Նախ և առաջ այնտեղ ձևավորվում են հետագա պոեզիայի առանձնահատկությունը կազմող երկու հիմնական մոտիվներ՝ ազգային-քաղաքական լիրիկայի նմուշներ, որոնք հետագայում զարգացան Պատկանյանի և Նալբանդյանի ստեղծագործություններում, դառնալով մեր պոեզիայի հատկանշական գծերից մեկը, ապա հասարակական-խոհական մոտիվներ, որոնք դրսևորում էին պոետի ապրած կոնֆլիկտը իր ժամանակի իրականության հետ և որը նույնպես իր լայնահուն զարգացումը գտավ XIX դարի երկրորդ կեսի հայ պոեզիայում։

1 «Ողբերգութիւն յօրհաս Թանգայ Թաղիադեանց», 1893, էջ 90։

2 Նույն տեղում։

«Թութակ Թաղիադեան» ժողովածուն սկսվում է մի անավարտ պոեմով՝ «Հայկ ի տեսիլ Հայկազնին» վերնագրով։ Այստեղ բանաստեղծի հանդիպումն է մեր ավանդական նախահայր Հայկի հետ և նրա տված խորհուրդները հայրենիք-Հայաստանը վերակենդանացնելու համար։ Պոեմի հերոսները՝ Հայկը և ինքը բանաստեղծը, տոգորված են մեծ հայրենասիրությամբ։ Մեկը կանգնած է հայության նախաշեմին, որպես հայության կազմավորման սիմվոլ, մյուսը՝ քայքայված, բզկտված ժողովրդի բազմատանջ կյանքի ճանապարհին և ձգտում է փրկել հայրենիքը անխուսափելի կործանումից։ Հայկը հանդիպում է բանաստեղծին այն ժամանակ, երբ սա ընկած մի անջուր անապատում, աշխատում է կենդանություն պարգևել հողին, պեղելով նրա ընդերքը.

Թողեալ գջուր կենդանի,
Որ կեանս տայ աշխարհին,
Պեղիցե՞ ոք զաղտախտին
Ի զով ինքեան՝ զայդ գետին[1]։

Հայկ Նահապետի այն հարցին, թե ի՞նչ է անում նա, բանաստեղծը բացատրում է, որ հայրենի հողը զրկվել է կենսական հյութերից և կորցրել իր երբեմնի առատությունն ու խաղաղ, երջանիկ կյանքը։ Նա պատմում է Նահապետին, որ իր ժողովրդի անցած տառապալից ճանապարհը սկսվեց «գայլակորիւն հռոմոյոսների» արշավանքներից և նրանց հաջորդող «մարդախոշոշ գազանները» քայքայեցին երկիրը, ոչնչացրին ժողովուրդը.

Ապականեալ հեղձուցին
Բոյս դալարի՝ զոր գտին,
Ջգեօղ, աւան, քաղաք
Եղին ողջոյն աւերակ[2]։

Լսելով բանաստեղծի ցավալի պատմությունը, Նահապետը շրջվում է դեպի Մասիս և ասում նրան.

Տես, աով, ցիս, պատանիդ,
Ջոտամբ լերանց Արքայիդ,
Լից ծովանայ ձիւնութեամբ,
Որ հալս հանուր ծծև յումպ[3]։

Հայկը խորհուրդ է տալիս բանաստեղծին վերադառնալ հայրենիք, համախմբել Մասսի շրջակա կարող ուժերին, փշրել ձյան ծանր շերտերը, հալեցնել սառույցը և վերակենդանացած ջուրը հոսեցնել դեպի երկիր.

Որ լիցի քեզ տեսանել
Թմբրոյդ շրջել հիմն ի վեր

---

1 *«Ողբերգութիւն յորհաս Թանգայ Թաղիադեանց», էջ 98։*
2 *Նույն տեղում, էջ 104։*
3 *Նույն տեղում, էջ 105։*

Յայնժամ կրկին Հայաստան
Փոխել յԱդին փափկութեան[1]։

Փոխաբերական պատկերների մեջ բանաստեղծն արտահայտում է իր քաղաքական խոհերն ու ձգտումները, գալով այն եզրակացության, որ երկիրը վերականգնելու համար անհրաժեշտ է համախմբել ժողովրդի կենդանի ուժերը, նրանց միջոցով ուղի հարթել նոր կյանքի համար։

Պոեմի վերջում հեղինակը երանի է տալիս այն ժողովրդին, որը իր քաղաքական միասնությունը կապում է լուսավորության իդեալների իրականացման հետ, այդ ճանապարհով հասնում ցանկալի նպատակին։

Թաղիադյանի այս պոեմը հիշեցնում է հայրենասիրական նման հույզերով տոգորված, համարյա նույն կառուցվածքն ունեցող Աբովյանի պոեմը՝ «Մուտ Հայկական ի Հայաստան և արհավիրք երևակայութեան նորայ ի ժամ պատերազմի, ի 1826 ամի»։ Այստեղ Հայկ Նահապետը տեսնում է ամեն ինչ փոփոխված, ողբում է Հայաստանի ծանր վիճակը։ Սակայն նրա թոռները՝ Հայաստանի նոր ժառանգները, ներկայանում են Հայկին և հայտնում նրան, որ ահա սարերի ետևում երևացող ռուս զինվորները գալիս են փրկելու Հայաստանը։ Այս պոեմների մեջ եղած նորությունը նախ և առաջ նրանց բովանդակության և հարցերի մեկնաբանման մեջ է։ Երկու դեպքում էլ Հայկը փորձում է հասկանալ նոր ժամանակներում տեղի ունեցած փոփոխությունները։ Ինչպես Թաղիադյանի, այնպես էլ Աբովյանի մոտ Հայկն արդեն հասկանում է, որ աստվածները չէ, որ պիտի օրինակ ծառայեն նոր սերնդին՝ նրա ազատագրական պայքարի մեջ։ Հայկը զգում է, որ ինքը արդեն անցյալ է, որ մարդիկ իրենք նոր ձևով պետք է լուծեն իրենց ազատության հարցը։

Պատմա-հայրենասիրական բնույթի ոտանավորներ Թաղիադյանը տպագրել է նաև «Ազգասերում»[2]։ Ուշագրավ են «Նոր Ջուղա» և «Երազ» բանաստեղծությունները։ Ահա «Երազ» ոտանավորը. Գիշեր է. Արուսյակը հանդարտիկ սահում է պարզ երկնքի վրայով. փչում է արևելյան քամին, դիմացը օվկիանոսն է, բանաստեղծը ճեմում է նրա ափին և լսում թռչունների դայլայլը։ Հանկարծ նա նկատում է մի գեղեցիկ պարտեզ, մտնում է ներս, հանդիպում պարտիզպանին։ Պարզվում է, որ այդ փար-

---

1 «Ողերերգութիւն յորհաս Թանգայ Թաղիադեանց», էջ 106։

2 «Մեռելահարցուկ» վեպում Մ. Նալբանդյանը «Ազգասեր» պարբերականում տպագրված «Տե՛ր, կեցցո զՀայս» բանաստեղծությունը վերագրել է Մ. Թաղիադյանին և այդպես էլ անվիճելիորեն ընդունվել է գրականության պատմության մեջ։

1937 թվականին Կահիրեում հրատարակված «Արմավենի» տարեգրքում Ա. Ալպոյաճյանը «Կրկնված սխալներ» վերնագրով հոդվածում համոզիչ փաստերով ապացուցում է, որ այդ բանաստեղծությունը Թաղիադյանինը չէ և վերջինս պարզապես այն արտատպել է 1820 թվականի «Հայելի կալկաթյան» օրաթերթից, հիշատակելով պարբերականի անվան սկզբնատառերը՝ Հ. Կ.։

Մեջ բերելով անգլիական ազգային երգերից մեկը, Ալպոյաճյանը ցույց է տալիս, որ «Տե՛ր, կեցցո զՀայսը» գրվել է նրա նմանողությամբ։ Բանասերի ենթադրությամբ հայերեն երգի հեղինակը «Հայելի կալկաթյան» օրաթերթի խմբագիր Հովհաննես Տեր-Հակոբյանն է։

թամ, գեղեցկատեսիլ պարտեզը ամայի է և սպասում է իր բնակչին, որը թողել է իր տունը և գաղթել օտար վայրեր։ Բանաստեղծը կոչ է անում կյանք տալ այդ գեղեցիկ պարտեզին՝ երջանկացնել ամայի տունը բնակությամբ։

«Ազգասերում» տպագրված մի շարք այլ բանաստեղծություններ, որոնք գրված են Թաղիադյանի ձեռքով, արտահայտում են նույն տրամադրությունները։ Այդպիսիներից են, օրինակ, «Մի մոռանար» բանաստեղծությունը, որտեղ մայրը ճանապարհելով իր սիրած զավակին օտար երկիր, պատվիրում է չմոռանալ մայրենի հողը, պապական գերեզմանը, ապրել միշտ հայրենիքի կարոտը հոգում։

Հայրենիքի կարոտի և հայրենասիրական իղձերի արտահայտման լավագույն գործերից մեկն է Թաղիադյանի «Ջամբյուղաշեն աղջիկը» գեղեցիկ բանաստեղծությունը, որը հավանաբար գրվել է 1842—1843 թվականներին։



Մ. Թաղիադյանի ձեռագրերից

Ջամբյուղ պատրաստող աղջկա երգի մեջ բանաստեղծն արտահայտել է հայ պանդուխտի տառապանքները.

ՋԱրարատ, Եփրատ և Տիգրիս թողի,
Միայնակ շրջիմ աստ եզերս Գանգէսի,
Պանդուխտ եմ, օգնեցեք անտերունչ անձիս
Չի ծնողք ձեր յառաջ աստ պանդուխտք էին[1]։

Իր բանաստեղծություններում Թաղիադյանը ձգտում է նաև մոտենալ իրականությանը, մասնակցել հասարակական կյանքին, ներկայացնել թերություններն ու արատները։ Բանաստեղծի լիրիկական հերոսը հանդես է գալիս ըմբոստ ոգով՝ ընդդեմ քարացած նորմաների ու հետամնացության։ Շատ հաճախ բանաստեղծի վսեմ գաղափարների և հետամնաց կյանքի միջև եղած հակասությունները խախտում են նրա հավատը և եղերական շեշտ մտցնում նրա հույզերի մեջ։ «Մայրիկ» բանաստեղծությունը բնորոշ է այս տեսակետից։ Քննադատելով էջմիածնի կղերական միջավայրը, ցույց տալով, թե ինչպես այդ միջավայրը խեղդում է լուսա-

1 «Քնար հայկական», 1862, էջ 136։

վորության ձգտող մարդուն, ոչնչացնում նրա նվիրական ձգտումները, բանաստեղծը համակվում է խոր վշտով, դառն կշտամբանք ուղղում ճակատագրի դեմ։

Օ՜չ թէ էի այր ոգէտ
Կամ խաշնարած ի դաշտի.
Քան զոր եղայ վարժապետ
Յայս տորրիլ Դպրոցի[1]։

Բանաստեղծի մոտ երբեմն հանդես են գալիս սկեպտիկ տրամադրություններ, մանավանդ, երբ տեսնում է, թե ինչպես նորաձև բարքերը շաղախվում են հին անկարգ օրենքների հետ և ավելի խորացնում տիրող այլանդակությունները։

«Տաղ չարադրիչ ի Հնդկաստան յամին 1841» բանաստեղծության մեջ Թաղիադյանը դատապարտում է հոռի իրականությունը և խորհուրդ է տալիս չհավատալ «շոգմոգ» մարդկանց սնամեջ շողոքորթություններին, հրաժարվել նրանց առաջարկած «նուշից»։

Արդ զիմ ընկալ խրատ անոյշ,
Թէ այր շոգմոգ՝ տայցէ ձեզ նոյշ,
Մի առնուցուս, թունաւ գգոյշ,
Զի կեղև է դատարկ և սին[2]։

Մի ուրիշ բանաստեղծության մեջ, ապացուցելու համար աշխարհի ունայնությունն ու դատարկությունը, նա բերում է օրինակներ՝ ծաղրելով կրոնավորներին, հարուստներին, մամոնային պաշտողներին, որոնք, ոսկու փայլից շլացած, իրենց արժանիքներն ու պատիվը հանում են վաճառքի։ Թաղիադյանը ծաղրում է շահամոլությունն ու խարդախությունը։

Նենգեա զաշխարհ անխնայ
Զիարդ կարես, փող կուտեա,
Մի վախեր զի օգնական
Է քո աստուածն Մամոնայ[3]։

Թաղիադյանի բանաստեղծություններում արտահայտվել են հակասական տրամադրություններ։ Մի դեպքում նա անողոք քննադատական վերաբերմունք է դրսևորում իրականության բացասական երևույթների հանդեպ՝ օգտագործելով սուր սարկազմը, երկրորդ դեպքում, նա ենթարկվում է իրականությունից հեռանալու հուսահատ տրամադրությանը։ Բայց երկու դեպքում էլ բանաստեղծը, կանգնած լինելով իրականությունից վեր, դատավճիռ է կարդում նրան և քարոզում նրա վերափոխությունը։

Թաղիադյանի չափածո երգիծական գործերից մնացել են մի քանի բանաստեղծություններ և մի պոեմ։ Դրանցից մեկը ինքնակենսագրական բնույթ կրող հայտնի բանաստեղծությունն է՝ «Ցույակ ստացեալ աղխից

1 «Ողբերգութիւն յորդաս Թանկայ Թաղիադեանց», 1893, Թիֆլիս, էջ 108։
2 Նույն տեղում, էջ 74։
3 Նույն տեղում։

տան իմոյ ի ծայրագոյն կառավարչեն սրբոյ աթոռոյս» վերնագրով։ Այստեղ նա պատմում է այն ընդունելության մասին, որ ցույց են տվել իրեն էջմիածնի հոգևոր կառավարիչները, երբ նա նշանակվել էր մայր աթոռի գլխավոր ուսուցիչ։

Երբ զիս վարժապետ կարգեցին
Արարատեան ճեմարանին,
Տվին սենեկիս թախումն
Բոլորն էլ նորաձև իքմինն[1]։

Թաղիադյանը բացատրում է, թե ի՞նչ է նշանակում այդ «նորաձև իքմինը»։ Դա մեռած վարդապետի խցում մնացած կեղտոտ, ժանգոտած հին կարասիներն են, նրան բաժին հասած չորացած, անպետք բակլան ու բրինձը։ Զավեշտական տողերում Թաղիադյանը նկարագրում է երազում իրեն երևացած Աբրահամ վարդապետին, իրենց խոսակցությունը՝ ծուռ խալիի մասին, նամակը կլեկչուն, նրա պատասխանը և այլն։ Թաղիադյանի երգիծանքն այստեղ դրսևորում է մի առանձնահատկություն. ներկայացվում է օբյեկտիվ իրականությունն այնպես, ինչպես որ կա։

Մի այլ բանաստեղծության մեջ՝ «Համեմատութիւն Մեսրոպայ Թաղիադեանց վարժապետի և աթարակիր իշոյն սրբոյ էջմիածնի, ասացեալ մարտ ամսեան 1833 ամի» Թաղիադյանը ներկայացնում է իր ապրած ժամանակի այլանդակ բարքերն ու երևույթները այլաբանական ձևի մեջ։ Վանքի գոմերից մեկի բակում գրոսանքի դուրս եկած բանաստեղծը հանդիպում է աթարակիր էշին։ Էշը քայլում է հպարտ, սկզբում ձևացնում է, թե չի նկատում վանքի վարժապետին. երբ բանաստեղծը փորձում է խոսել նրա հետ, պարզվում է, որ էշն արհամարհական վերաբերմունք ունի կոչում չունեցող և պատվազուրկ վարժապետի հանդեպ, քանի որ, ինչպես ինքն է վկայում, մեծ տարբերություն կա իր և վարժապետի միջև։

Ես էի առաջ դպիր վանական
Տաղերգ խնչոյից հավերժանվագ,
Բայց տեսեալ ապա թե մեռանիլ կա,
Ոչ հաճարեցայ մնալ անժառանգ։
Իմ այս մեծագին և անկար մուշտակ
Ցուցանեն զիս կոյ թաւուտ մեծ ազգին
Իսկ փունջ բազմաթել, որ կա իմ գաւակ
Զինչ և իցեն ես թէ առնէ յարգի[2]։

Երբ էշն իմանում է, որ բանաստեղծը բացի իր ազգանունից չունի որևէ պաշտոն կամ կոչում, ծաղրում է նրան՝ իր հետ համեմատվելու համարձակության համար։

Ինձ համավիճակից ն՞ս դու մուժիկ,
Զի՞նչ անուն է քո, զի՞նչ քոյդ վերատառութիւն,
Զի՞նչ պատիվ ունիս թեև վարժապետ,
Որ հաւասարիս աթարակիր իշոյն։

1 «Եղերերգութիւն յորհաս Թանգայ Թաղիադեանց», էջ 75—76։
2 «Մեղու», 1862, էջ 179։

Բանաստեղծը ծաղրում է կենդանու ամբարտավանությունը, տեսնելով նրա մեջ ծայր հիմարության հասած երջանկություն. էշը նրան պատասխանում է.

Դու զիմ պիտ ան շալակ աԹարաց
Բեռն ծանրագին, անձին համարիս,
Բա զհոգոց քոյոց և զտրտմուԹեանց
Ընդ որով հեծիս, զի՞նչ ունիս ասելւ

Բանաստեղծն ընդունում է, որ իրոք՝ իր հոգին ավելի ծանր է, քան իշու բեռը և տրտմությամբ հասկանում է, որ իսկապես այդ իրականության մեջ ինքը իրավունք չունի համեմատվել անգամ էշի հետ.

Անբախտ վարժապետ, անբախտ գիտնական
Այր և համեմատ չէ իշոյդ մինակւ

Մոտավորապես նույն իմաստն ունի Թաղիադյանի մի անվերնագիր բանաստեղծությունը, գրված դարձյալ 1833 թվականի մարտ ամսին։ Էջմիածնի միաբաններից հալածված, հուսահատության մատնված բանաստեղծը իր շուրջը տեսնում է միայն տգետ և հիմար մարդկանց։ Ահա դրանցից մեկը՝ անուն և դիրք վաստակած, բայց իմացությամբ անասունից չտարբերվող Ղազարոսը։

Որ ձմեռվան գոմշի նման քանի ձիԹես հպարտանա
Եվ վատ խոսքով հիմարուԹյան հող կքանդի, գլխին կտաւ

Եվ այդ չնչին մարդուկը, որ մի ժամանակ «չաքուչ» տալով հոգին փչում էր, հիմա այնքան է հղփացել ու մեծամտացել, որ ոչ բարեկամ է ճանաչում, ոչ էլ՝ ընկեր։ «Հո՜, հո՜, հո՜, հզոր իշխան» ծաղրում է նրան բանաստեղծը, մերկացնելով նրա կեղծ դիրքը, սին պատիվը, որ վաստակել էր նա էջմիածնում իր նման տգետ, այլանդակ բարքեր ունեցող միաբանների շրջանում։

1880 թվականին Տեր-Մինասյանի հրատարակած «Հայկական յիսնեակ առակք» ժողովածուի մեջ զետեղված են Թաղիադյանի մշակած առակներից մի քանիսը։ Թաղիադյանը, ինչպես հայտնի է, մշակել է սոցիալական շեշտված մոտիվներ ունեցող ժողովրդական բազմաթիվ առակներ, զետեղելով իր «Զվարճախոսություններ» շարքի և «Առակք Պարսից» ժողովածուի մեջ։

Երգիծանքի շեշտերով և եղերական տրամադրությամբ է ներշնչված Թաղիադյանի մի անավարտ պոեմը, որի վերնագիրն է «Եղերերգութիւն ի բանդ»։ Պոեմը գրված է Պոլսում՝ իր կրած անձնական և հասարակական ծանր հարվածների ազդեցության տակ։ Այս պոեմը բանաստեղծը համարել է իր գրչի տխուր արտադրանքը։ Պոեմի հիմնական ոգին բանաստեղծի դառն թույնով շաղախված երգիծանքն է իրականության հանդեպ, միևնույն ժամանակ այդ իրականությունը բացասելու, այն լքելու ծանր տրամադրությունը։ Պոեմում նա պատմում է, թե ինչպես, երբ ինքը պատ-

բաստվում էր կյանք մտնել, նրան ներկայանում են Աստղիկ դիցուհին և Աթենաս Պալասը։ Առաջինը գայթակղում է նրան վայելքի հրապույրով, մյուսը՝ ցույց է տալիս կյանքի այն դժվարությունները, որոնց հաղթահարմամբ ինքը պիտի հասներ կյանքի վայելքին։

Մին ընդ անմատոյց քարոտ զառիվեր
Ընդ բիւրս ի բիւրոց չարիս անկանէր,
Այլ ի վախճանի տաճար փառաց
Քաջս յուխտավորաց խոստանայր հանել։
Իսկ մին զառիվայր հարթ և հավասար
Ի վիհ կորստեան ձգիւր ճանապարհ,
Որ ժամէական պատիր հեշտութեամբ
Զիւրսն յանպատիր, ի կորուստ որսայր[1]։

Աթենաս Պալասը պատմում է բանաստեղծին, որ այն կյանքը, որի մեջ պիտի մտնի նա, վարակված է բազմաթիվ ախտերով, այնտեղ բազկատարած իշխում է տգիտությունը։ Բանաստեղծը պետք է ազատի մարդուն մահաբեր կորստից, սովորեցնի նրան բարձրանալու, տոգորվելու լուսավորական գաղափարներով։

Զի թեպետև զուղիս ժայռոտ մահաբեր,
Բիւրաւոր ճգանց մնաս համբերել,
Այլ ի վախճանի պսակ պարծանաց
Կայ քո խնդութեամբ ի գլուխ կապել[2]։

Բանաստեղծը լքում է Աստղիկ դիցուհուն և հետևելով Աթենաս Պալասին՝ մտնում է կյանքի քարքարոտ ճանապարհը, որպեսզի համառ պայքարով և տքնաջան աշխատանքով դափնյա պսակ վաստակի իր և իր ժողովրդի համար։ Աստղիկ դիցուհին որոշում է վրիժառու լինել իրեն լքած բանաստեղծից։ Նա իջնում է դժոխք և կանչում իր մոտ Հիմարության, Ջրպարտության և Խաբեության ոգիներին, կարգադրում նրանց հետապնդել բանաստեղծին, հալածել նրան, վարկաբեկել նրա շնորհքը, խորտակել նրա երջանկությունը։ Բայց Աթենաս Պալասի հովանավորությամբ բանաստեղծը շարունակում է իր ընտրած կյանքի ուղին։ Երբ նա մեկնում է Ջուղա, այնտեղ հավաքված դժոխքի ոգիները սպասում են հարմար առիթի, որ փոթորիկ բարձրացնեն բանաստեղծի շուրջը։ Նրանց նյութած խարդավանքները իրոք, անտանելի են դարձնում կյանքը, և բանաստեղծը ստիպված թողնում է Ջուղան։

Պոեմում Թաղիադյանն օգտագործում է, երգիծանքի նոր ձև՝ պամֆլետը։ «Տէր Հիմարութեան, տէր Զրպարտութեան և Խաբեութեան» ոգիների դիմակների տակ Թաղիադյանը մերկացնում է Ջուղայի Ամենափրկչյան ուսումնարանի կառավարիչներին և Ջուղայի առաջնորդ արքեպիսկոպոս Բագրևանդացուն.

[1] «Եղերերգութիւն յօրհաս Թանգայ Թաղիադեանց», էջ 8։
[2] Նույն տեղում, էջ 11։

Տէր Յիմարութիւն նրդուեալ յԱխերոն
Գրել անպիտան պարգևս հոգւոյն,
Գրաւոր ճգանց զանգին մարգարիտս
Յանձառու լինէր կոխան տալ ոտից[1]։

Այս տողերով Թաղիադյանը մերկացնում է Ջուղայի հասարակության այն վերնախավը, որը, պաշտպանության տակ առնելով հոգաբարձուներին, տոն էր տալիս իր դեմ ուղղված զրպարտանքներին։

Բանաստեղծի երգիծանքը այս պոեմում ունի քննադատական մեծ կիրք, և նա զգում է իր ծաղրի հասարակական արժեքը։ Բայց միևնույն ժամանակ նա գիտակցում է, որ տիրող իրականությունը դեռևս պահպանում է իր հնամենի ուժը, որի դեմ անզոր է ինքը։ Խավար իրականության մեջ բանաստեղծին մնում էր միայն սփոփանք գտնել իր Թանգի լուսապայծառ կերպարում։ Թանգը հանդես է գալիս որպես այդ միջավայրին հակադրվող եզակի դեմքերից մեկը։

Թէ դուք նո՞յն էք ամօք առաջի,
Որ քաջ զնա կարդացիք.
Արդ զի՞ զորդիս քորէ մարմանց
Զրաբանել աւադիկ։

Թանգի այս բողոքը բնութագրում է նրա ջերմ վերաբերմունքն անարդար կերպով հալածված բանաստեղծի հանդեպ։ Իր պարզ զգացումներով, հոգու ներքին բնազդով նա զգում է ամուսնու արժանիքները, որոնք բարձրացնում են նրան իր միջավայրից։

Թանգի գոյությունը լիցք է տալիս բանաստեղծին։ Շրջապատող խավարի մեջ նա տեսնում է լույսի շող։ Թանգի սերը նրա համար դառնում է միակ կամուրջը՝ կապվելու իրականության հետ։ Նա կրկին լցվում է արդարության, ճշմարտության և մարդու ապագա երջանկության նկատմամբ ունեցած իր երազների իրականացման հույսերով։

1893 թվականին Հ. Մկրյանի հրատարակած «Ողերերգութիւն յորհաս Թանգայ Թաղիադեան» ժողովածուի մեջ տեղադրված են Թաղիադյանի բանաստեղծությունների մի շարք, որը հատկանշվում է անձնական մոտիվներով, բնության երգերով ու զգացմունքների անակրեոնյան շաղախով։ Անձնական լիրիկայի լավագույն կտորներից մեկն է «Տուտու» բանաստեղծությունը, ուր հեղինակը սիրազեղ խոսքեր է ուղղում աղջկան, թախանձում՝ լսել իրեն, կշտամբում նրա անտարբերությունը։

Ծ՞ս ես արդեօք խաղալիք քոյ,
Որ ի հրապոյր խաբեութեան
Մտեալ յամարս հոգւոյ իմոյ
Կողոպտեցեր ողջ զիս, Տուտու[2]։

1 «Ողերերգութիւն յորհաս Թանգայ Թաղիադեանց», էջ 15։

2 Նույն տեղում, էջ 109։

Բանաստեղծը հուշում է, որ ինքն այլևս առաջվա ռոմանտիկ երազողը չէ, որ նա ճաշակել է կյանքի դառնությունները և, ցույց տալով իր սրտի վերքերը, աղերսում է, որ աղջիկը կարեկից լինի իր տանջանքներին։

> *«Մի խոշտանգէր գիս ընդունայն*
> *Վիրաց զոր բաց նետ գեղոյ քոյ.*
> *Չքեզ դարման դիր լաւ Տուտու»[1]։*

«Տուտու» բանաստեղծությունը աչքի է ընկնում լիրիկական հուզականությամբ ու անմիջականությամբ։

Համակող լիրիզմով է գրված նաև «Երեկոյ» ոտանավորը։ Կյանքում բավականություն չգտած բանաստեղծի քնարն այստեղ հնչեցնում է թախծի և հուսահատության մոտիվներ, որոնք նրան տանում են դեպի հասարակությունից հեռանալու, բնության ալպատ ծոցում ներանձնանալու խաղաղ հանգրվանը։

Կյանքի աղմուկից հեռու, նա լռության մեջ է փորձում ամոքել իր վշտերը.

> *Լռութիւն համայն*
> *Տիրէր յայն սահման.*
> *Ոչ ուստէք շշունչ.*
> *Հասանէր ունկան,*
> *Շնչէր զովագին*
> *Միւգ երեկոյին*
> *Իմ տրտում սրտին*
> *Ըսփոփ զուարթագին[2]։*

Թաղիադյանի՝ հատկապես թախիծ արտահայտող գործերում նկատվում է բայրոնիզմի որոշակի ազդեցությունը։ Թաղիադյանը սիրել է անգլիացի մեծ բանաստեղծին, բազմաթիվ հատվածներ թարգմանել նրա երկերից։ Նրան հրապուրել է ազգային-ազատագրական պայքարում ընկած բանաստեղծի ընդվզվող հոգին, համակվել ոչ միայն նրա մեծ թախիծով, այլև պայքարի ուժեղ կրքով։ Բայրոնի տողերը հաճախ են նրա համար թարգման հանդիսացել իրականության հանդեպ իր խոհերն արտահայտելու համար.

> *Անգամ մի տեսի զերազ պատուական*
> *Տեսիլ խոստացող ինձ ազատութեան.*
> *Ա՜հ, ճշմարտութիւն, է՞ր քո դառն նշոյլ*
> *Զարթոյց զիս կրկին յայս աշխարհ տխուր[3]։*

Թաղիադյանի ստեղծագործության մեջ առանձնակի տեղ է գրավում «Սոս և Սոնդիպի» պոեմը, որը գրվել է 1842—1843 թվականներին։

---

1 «Երբերգութիւն յորհաս Թանգայ Թաղիադեանց», էջ 110։

2 «Ազգասեր Արարատեան», 1848, № 26։

3 Ջ. Բայրոն, Ինչ՞ թե տղա միամիտ էի... «Ազգասեր Արարատեան», 1847։

Պոեմը սկսվում է Վահևանյաց տոնի նկարագրությամբ։ Ցնծում է Տարոնը, նրանց խրախճանքին մասնակցում է Աստղիկ դիցուհին, նա նվագում է Ոսկե վինը, որից մանկանում էին ծերերը, խայտում երեխաները։ Այդ պահին Արտևան լեռան վրա արտասուք է թափում Վանյան Սոսը։ Նկատելով այդ, Աստղիկ դիցուհին հրապուրում է Սոսին, հարցնում նրա վշտի պատճառը։ Սոսը պատմում է նրան իր աղետալի սիրո պատմությունը։



«Սոս և Սոնդիպի» պոեմի առաջին հրատարակության անվանաթերթը

Հնդկական թագավորներից մեկի պալատում մեծանում էր արքայադուստր Սոնդիպին, որն իր օրերը անց էր կացնում արքունիքի մոտ տարածվող կախարդական հմայքներով լի պարտեզում։ Ամեն օր երգախոս թռչունը սիրո և հրապուրանքի երգեր էր հյուսում նրա համար, իսկ այգեպանը նվիրում էր նրան բազմագույն և բազմաբույր ծաղիկներ։ Մեկ օր այգեպանի փոխարեն պարտեզ է մտնում նրա որդին, երիտասարդ Կալիդասը։ Սիրո ջերմ խոսքեր է նա հղում Սոնդիպիին։ Սոնդիպին հրապուրվում է Կալիդասի համեստ թվացող արտաքինով և խելոք խոսքերով։ Նրանց մեջ հյուսվում է սիրային մի վեպ, որի մեջ Սոնդիպին իրեն կդում է երջանիկ, Կալիդասը՝ վարձատրված։

Սոնդիպիի շնորհիվ հարստացած և ոսկու փայլից խենթացած Կալիդասը շատ շուտով դրսևորում է իր խարդախ հոգին. վարելով շվայտ կյանք, նա դրժում է Սոնդիպիին տված իր նվիրական երդումը։ Իր կեղծիքը ծածկելու համար Կալիդասը որոշում է սպանել Սոնդիպիին, և ահա մի օր Սոնդիպին անհայտանում է պալատից։ Կալիդասը լուր է տարածում, թե նա փախել է ինչ-որ օտարականի հետ։ Հայրը վճռում է գտնել անարգ աղջկան և որպես պատիժ՝ զոհ մատուցել աստվածներին, մինչդեռ Սոնդիպին Կալիդասի մարդկանցից դաշունահար եղած կախվում է Կանոջ քաղաքի պարսպից, որպես կեր գիշատիչ ագռավների։

Այդ նույն գիշերը Կանոջ քաղաքի պարիսպներին է հասնում Հայաստանցի իշխանազն Սոսը. լուսադեմին նկատելով կախված մեկին, նա մոտենում է պարսպին և այնտեղ գտնում արյունաթաթախ հնդկուհուն։

Սոնդիպիի գեղեցկությունը մի պահ շլացնում է երիտասարդին, անմիջապես նա ազատում է աղջկան կապանքներից և տեղափոխում քաղաք։

Առողջացած Սոնդիպին մտածում է վրեժ լուծել Կալիդասից։ Հետագա դեպքերի ընթացքով Կալիդասը և Սոսը հանդիպում են իրար. իմանալով այդ մասին, Սոնդիպին, Սոսի միջոցով հրավիրում է իր տունը Կալիդասին և նրա սիրուհուն։ Խնջույքի ժամին, երբ Սոսը ընկնում է արբեցման մեջ, Սոնդիպին սպանել է տալիս Կալիդասին և նրա սիրուհուն ու թողնելով Սոսին՝ հեռանում քաղաքից։ Սոսը փնտրում է Սոնդիպիին, բայց չի գտնում. հուսահատված նա սկսում է թափառել ամբողջ Հնդկաստանում։ Հասնելով Ավոյդ քաղաքը, նա հանդիպում է իրեն ծանոթ Սարոնաք ներքինուն, որից իմանում է Սոնդիպիի տեղը։ Պարզվում է, որ աղջիկը վերադարձել է հոր արքունիքը, սակայն ապրում է հորից գաղտնի։ Սոնդիպիի պատմությունը, որը անում է նրան Սարոնաք ներքինին, Սոսի համար հայտնի է դարձնում եղելությունը։ Տեսակցվելով Սոնդիպիին, Սոսն առաջարկում է նրան հեռանալ Հնդկաստանից։ Նա պատմում է աղջկան իր սրանչելի հայրենիքի՝ Հայաստանի մասին, նկարագրում նրա փառավոր անցյալը, մեծարում Հայկին, Արամին ու նրա արժանավոր հաջորդներին։ Սոնդիպիին հրապուրում է Սոսի հայրենիքը և նրանք թողնում են Հնդկաստանը ու ճանապարհվում Հայաստան։ Երջանիկ Սոնդիպին վարդավառի տոնին հայ աղջիկների հետ ծաղկաքաղի է ելնում սարը. հանկարծ հայտնվում է նրա հայրը, դաշունահար անում աղջկան, և, իր երդման համաձայն, զոհ մատուցում աստվածներին։

«Սոս և Սոնդիպի» պոեմի գաղափարական առանցքը մարդկային բարձր առաքինությունների դրվատումն է, տիրող կույր բարքերի ու նախապաշարմունքների քննադատությունը։ Դա ազնվության, մաքուր զգացմունքի, ազատ սիրո վեհացումն է, ռոմանտիկական հակադրությունը իրականության բռնի կաշկանդումներին։ Հումանիստական այդ իդեալներն էլ են մարմնավորում պոեմի ռոմանտիկ հերոսները՝ Սոսը և Սոնդիպին։

Ենթարկվելով բազմաթիվ պատահարների, բախտի չարագուշակ խաղերին, Սոսը մեծ դժվարությամբ հարթում է իր կյանքի ուղին, ղեկավարվելով մի հիմնական սկզբունքով՝ ամեն տեղ որոնել լավը, բարին, վսեմը։ Բարիք գործելու այդ ձգտումը Սոսի բնավորության հիմնական գծերից մեկն է. նա կորցնում է իր հարստությունը, բայց դրա փոխարեն կյանք է տալիս Սոնդիպիին։ Մարդու արժանիքները Սոսը համեմատում է բնության արարածների վարքի հետ։ Դառնացած Սոնդիպիի անտարբեր վերաբերմունքից, երբ Սոսը իր հոգու խռովքը ցրելու համար շրջում էր քաղաքի մերձակայքում, նրա ուշադրությունը գրավում է մի հետաքրքիր դիպված. օձը սպառնում էր տատրակի ձագերին, սրանք սարսափահար ծղրտում են, խելակորույս մայրը ընկնում է բնի մոտ, իսկ հայր-տատրակը թռչկոտում էր երկյուղած։ Եվ երբ Սոսը դաշույնով կտրում է օձի գլուխը և փրկում ձագերին, երախտապարտ տատրակը անշնչացած փռվում է ազատարարի ոտքերի տակ։ Այս դեպքը մեծ ազդեցություն է գործում Սոսի վրա.

Քաղցրիկ բնութիւն,
Քանի իմաստուն
Ոչ իցէ, ասեմ
Քոյ ամէն շարժիւն։
Որ տաս օրինակ
Յայս անմեղ տատրակ,
Ամուսին սիրոյ.
Ծնողական գթոյ[1]։

Խորապես ներշնչվելով բնության հավերժական օրենքների վեհությամբ, Թաղիադյանը գտնում է, որ մարդը պետք է վերափոխի իրեն, մաքրի իր արատները բնության իմաստուն խորհրդով։

Հումանիստական բարձր զգացման արտահայտություններից է Թաղիադյանի առաջադրած մի այլ թեզը՝ դասային ու ազգային նախապաշարմունքների վերաբերյալ։ Թաղիադյանը մերժում է դասային խտրականության ֆեոդալական նախապաշարմունքը, որը կաշկանդում է անհատի ազատության իրավունքը։

Երբ սիրտ ընդ սրտի
Սիրոյ շաղկապի,
Ոչ ազգ, ոչ աղանդ
Անդ ունի զտեղին[2]։

—ասում է Սոսը Սոդոնաք ներքինուն։ Սոսի պատկերացմամբ սրտից բխող սերը բարձր է մարդկային բոլոր տեսակի արտոնություններից, սերը մաքրում է մարդկային հոգին նեղ կրքերից ու արատներից և նրան տալիս վեհություն։ Այդպիսի ազատ, անկաշկանդ սեր Թաղիադյանը տեսնում էր հասարակ ու աշխատավորական խավերում։

Ընդ հիւղ աղքատին,
Առաւել հաճիմ.
Քան ընդ արքունիս
Տաներան Քաջին.
Մարդ՝ քանի պարզ կեայ
Աճի սեր նորա.
Բայց ընդ ճոխութեան
Ոխն յաւելանայ[3]։

Սոսի վեհ կերպարին Թաղիադյանը հակադրում է հասարակական կյանքի արատները մարմնավորող Կալիդասին։ Հակառակ Սոսի սա իր հակումներն օգտագործում է վատ, արգահատելի արարքների համար։

Պոեմի վերջում գլխավոր հերոսը՝ Սոնդիպին, դատապարտվում է մահվան, սակայն հաղթանակը մնում է Սոնդիպիի կողմը։ Հաղթում է բնության ազատ մարդն իր հումանիստական զգացումներով։

---

1 **Մ. Թաղիադյան**, *Սոս և Սոնդիպի, Կալկաթա, 1847, էջ 52։*
2 *Նույն տեղում, էջ 103։*
3 *Նույն տեղում, էջ 63։*

Որպէս շանթահոս
Երկաթ ի բովուց
Մուխ ի սառուցեալ
Ավազն ջրոց,
Այսպէս Սիրոյն բոց
Ներգործեալ ի Սօս
Անման տարփանօք
Զոգին եռացոյց[1]։

Պոեմում մեջընդմեջ բերված են հնդկական ժողովրդական ձոների ձևով հյուսված երգեր։ Դրա լավագույն օրինակներից է երգախոս թռչունի գովքը Սուրաջ Բինուն (Արևադուխտ), Սոնդիպիին և այլն։

«Սոս և Սոնդիպին», որպես գեղարվեստական բարձրարժեք գործ, իր ժամանակին խոշոր չափով նպաստել է բանաստեղծի անվան տարածվելուն։ Պատկերավոր գեղարվեստական լեզվի և ստեղծագործական վարպետության հետ միասին նա բերում է իր հետ ժամանակի համար առաջավոր գաղափարներ, առաջ քաշում հարցեր, որ մինչև այդ չէին դրվել մեր գրականության մեջ։

Աչքի ընկնող արժանիքների հետ միասին պոեմը ունեցել է և թերություններ, որոնք հնարավորություն չեն տվել լիովին դրսևորելու բանաստեղծի հասարակական իդեալները։ Մնալով կլասիցիստական պոեմի սկզբունքների շրջանակներում, Թաղիադյանը դգալիորեն պահպանել է վերացական ոճը, գրաբարյան խրթնաբանությունը և այլն։ Պոեմի մեջ առանձին տեղ է տրված հրաշապատում տեսարանների նկարագրությանը, աստվածների միջամտությանը։ Ձևը, այսպիսով, կապանք է դարձել գաղափարական բովանդակության ավելի լիակատար դրսևորմանը։

Թաղիադյանի ազգային-լուսավորական գործունեությունը նշանակալից երևույթ էր XIX դարի առաջին կեսի հայ հասարակական կյանքում։ Թաղիադյանն առաջինն էր, որ ողջունելով հայության արևելահայ հատվածի ազատագրումը պարսից լծից, ազգային քաղաքական կյանքի զարգացման մեջ կարևոր տեղ տվեց լուսավորությանը։ Գլխավոր պայքարն ուղղելով ֆեոդալական կենսաձևի ու գաղափարախոսության դեմ, նա միաժամանակ սուր քննադատության ենթարկեց հայրենասիրական կոչերով հանդես եկած հայ բուրժուազիային, բացահայտեց դաղութահայ ժողովրդի քայքայման արտաքին և ներքին պատճառները և առաջադրեց ազգային միավորման անհրաժեշտությունը։ Թաղիադյանն առաջինն էր, որ

---

1 Մ. Թաղիադյան, *Սոս և Սոնդիպի*, էջ 77։

մերկացրեց եվրոպական բուրժուազիայի գաղութային քաղաքականությունը և պաշտպանության տակ առավ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը։

Թաղիադյանը XIX դարի գրական շարժման առաջամարտիկներից մեկն էր և մի շարք ժանրերով՝ հրապարակախոսություն, պոեզիա, արձակ, ուղեգրություն, նպաստեց գրական նորագույն ձևերի հետագա զարգացմանը։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

Գրականության պատմության մեջ կան դեմքեր, որոնց բախտ է վիճակվել բացելու նոր դարագլուխ, դառնալու շրջադարձային ժամանակամիջոցի մտավոր կյանքի դրոշակիրներ, նոր ուղղության, նոր հոսանքի սկզբնավորողներ։

Մեծ հեղինակներին բնորոշող ընդհանուր գծերից զատ, դարաշրջան բացող գրողներն ունեն նաև գծեր, որ ինքնահատուկ են հենց իրենց համար։ Այդ գրողները համայնապարփակ են, նրանց համար բնորոշ է մեծ կիրքն ու մեծ էներգիան։ Կանգնած հին ու նոր էպոխաների սահմանագծում, նրանք ժխտող են ու հաստատող միաժամանակ, նրանք կործանող են ու ստեղծող։

Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյանը հանդիսացավ դարագլուխ բացող մի այդպիսի դեմք մեր իրականության մեջ։ Աբովյանին վիճակված էր դառնալու հայ ժողովրդի քաղաքական ու կուլտուրական վերածնության դրոշակակիրը, արտահայտիչը այն առաջավոր գաղափարների, որոնց մեջ սպառիչ կերպով բացահայտվեցին լայն դեմոկրատական խավերի տենչերն ու շահերը։

Աբովյանի կյանքն անցավ բուռն պայքարի փոթորիկների մեջ, պայքար ընդդեմ ռեակցիայի բոլոր ուժերի, պայքար իր սեփական հոգում՝ հին և նոր կուլտուրաների սահմանագծի վրա՝ հնից հեռանալու և նորի ուղիները հարթելու համար։ Պայքար հանուն նոր լեզվի, նոր թեմատիկայի՝ գրականության մեջ, պայքար հանուն նոր մանկավարժության և գիտության, կյանքի նոր ձևերի, նոր մտածելակերպի և ապրելակերպի։ Աբովյանը հանդիսացավ սկզբնավորողը տասնիններորդ դարի մեր ողջ կուլտուրական շարժման։

1

Խաչատուր Աբովյանը ծնվել է Երևանից հինգ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Քանաքեռ գյուղում, 1809 թվականին[1]։ Աբովյանները եղել են Քանաքեռի նշանավոր ընտանիքներից։ Աբով պապի հոշակը եր-

---

[1] *Հակասական են այդ առթիվ մեզ հասած տեղեկությունները։ Բացի մեկ գերմաներեն փաստաթղթից, ուր Աբովյանն իր ձեռքով գրել է, թե ինքը ծնվել է 1804—1805 թվականին, կան մի շարք անուղղակի փաստեր այն մասին, որ Աբովյանը ծնվել է 1809 թվականին։ Կան նաև տվյալներ հեղինակի՝ 1810, 1811, 1812-ին ծնված լինելու վերաբերյալ։*

կար է ապրել համագյուղացիների մեջ։ Նրա հյուրասիրության և առատաձեռնության մասին հպարտությամբ է խոսել ինքը՝ վիպասանը։ Գրողի օրով սակայն, Աբովենց տան նախկին հարստության հետքն անգամ մնացած չի եղել։

Խ. Աբովյանի տունը Քանաքեռում

Աբովյանի մանկության և պատանեկության տարիները հայ ժողովրդի կյանքի ամենաողբերգական պատմաշրջաններից մեկն էր։ Արևմտահայաստանը գտնվում էր Թուրքական, իսկ Արևելահայաստանը պարսկական ռազմաֆեոդալական դեսպոտիայի լծի ներքո։ Այդ անօրինակ ծանր ժամանակների համար է, որ Աբովյանը գրել է. «Ոչ տունն էր իրանը, ոչ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ոչ օղլուշաղը»։ Ֆիզիկական բնաջնջման փաստի առաջ կանգնած ժողովուրդը հետադիմում էր նաև կուլտուրապես։ Համատարած անգրագիտություն, մտավոր խավար, նախապաշարմունքներ, ահա թե ինչ էր շրջապատում ժողովրդին։ Ժամանակի ահավոր չափերի հասնող հետամնացությունն է ընդգծում Աբովյանը, երբ ասում է. «էն ժամանակ մեր աշխարհում գիրը գաբով էին բռնում և գյուլլով վեր քցում»։ Հայ հոգևորականության կենտրոն Էջմիածինը այն սակավ վայրերից էր Արևելյան Հայաստանում, ուր կարելի էր գրի սևը սպիտակից ջոկել սովորել։

Աբովյանը ինը տարեկան էր, երբ հայրը՝ Ավետիքը, նրան տարավ Էջմիածնի վանքը։ Խաչատուրը դառնում է Անտոն եպիսկոպոսի փոքրավորն ու սանը։ Անտոն եպիսկոպոսը այն ժամանակվա Էջմիածնի բանիմաց կրոնավորներից մեկն էր։

1821 թվականին Անտոն եպիսկոպոսը Աբովյանին տանում է Թիֆլիս և կրթության հանձնում ժամանակի հայտնի հայկարան համարված դա-

բաղաղցի Պողոս վարդապետի մոտ, որ աշակերտներ էր կարդացնում Տափի թաղի վանքի իր խցում։ Ստեփանոս Նազարյանը, որ Աբովյանի դասընկերն էր թե այդտեղ և թե՛ Ներսիսյան դպրոցում, ասում է. «Այդ վարժապետը ավելի ծեծ, քան թե ուսում էր տվել իր աշակերտներին»։

1824 թվականին բացվում է Ներսիսյան դպրոցը, որի առաջին սովորողներից մեկը դառնում է Աբովյանը։ Այդ դպրոցի տարբերությունը նախորդներից շատ էր մեծ ինչպես ուսման որակի, նմանապես և դասավանդման մեթոդների տեսակետից։ Դպրոցի տեսուչ էր ականավոր բանաստեղծ Հարություն Ալամդարյանը։ Հանձին նրա Աբովյանը վաստակեց մի լավագույն բարեկամ, սիրելի ուսուցիչ, որը հավանորեն և հանդիսացավ նրա՝ ստեղծագործական թոթովանքների առաջին քաջալերողը։

Աբովյանը միշտ էլ մեծ երախտիքով է խոսել Ալամդարյանի մասին և բանաստեղծական սրտառուչ տողեր է նվիրել բազմերախտ ուսուցչի հիշատակին։

Ներսիսյան դպրոցում Աբովյանը հմտանում է մայրենի լեզվի մեջ, խորացնում հայոց պատմության իմացությունը, սովորում պարսից և ռուսաց լեզուները, ծանոթանում ռուս գրականությանն ու կուլտուրային։

Ոչ պակաս նշանակալից էր դասընկերների շրջանի ազդեցությունն Աբովյանի վրա։ Նրանցից շատերը ուսման ծարավով տոչորվող ազնիվ պատանիներ էին, որոնք Աբովյանի պես ու նրա հետ մեկտեղ ուխտ էին արել զինվել գիտությամբ ու նվիրվել ժողովրդի լուսավորության գործին։ Նրանցից դուրս եկան գրական-հասարակական գործիչներ, մանկավարժներ և այլն։ Հատկապես մեծ ծառայություն մատուցեց մեր ժողովրդին հետագայում հայտնի հրապարակախոս, «Հյուսիսափայլ» ամսագրի խմբագիր Ստեփանոս Նազարյանը, որի հետ Աբովյանը պահեց բարեկամական սերտ կապեր մինչև իր կյանքի վախճանը։

Ուսման տարիները Թիֆլիսում մի կողմով ևս կարևոր եղան Աբովյանի համար։ Դեռևս 1801 թվականին Վրաստանն ընդունել էր ռուսական տիրապետությունը։ Այդ ժամանակվա Թիֆլիսում արդեն զգացվում էր ռուսական առաջավոր քաղաքական մտքի և կուլտուրայի շունչը։ Այստեղ կյանքը միանգամայն տարբեր էր այն պայմաններից, որոնց մեջ գտնվում էին Հայաստանն ու հայ ժողովուրդը։ Աբովյանը պարզ տեսնում էր ռուսական տիրապետության ակնհայտ առավելությունները պարսկականի համեմատությամբ, այդ տիրապետության շնորհիվ վրաց ժողովրդի և Վրաստանում ապրող հայերի խաղաղ կյանքը։ Աբովյանի համար պարզ է դառնում, որ հայ ժողովուրդը պարսկական բարբարոսական լծից ազատվելու մի ճանապարհ ունի՝ ռուսական տիրապետության ընդունումը։

Նոր էր Աբովյանն ավարտել Ներսիսյան դպրոցը, երբ պայթեց ռուս-պարսկական պատերազմը (1826 թվականի հուլիս)։ Հայ ժողովրդի համար պատերազմի տարիները նոր, առավել ծանր աղետի, բայց միաժամանակ և մոտալուտ ազատության հավատի ու հանուն այդ ազատության գործադրված հերոսական ջանքերի ժամանակներ հանդիսացան։ Պատերազմի ընթացքում մեր երկիրը մատնվում էր հրի ու սրի, տեղահան էր ար-

վում և բնաջնջվում ժողովուրդը։ Պարսիկները հայերի վրա նայում էին իբրև թշնամիների, քանի որ հայերը այդ պատերազմում մեծ աջակցություն էին ցույց տալիս ռուսական բանակին։ Այդ ժամանակ Ներսես Աշտարակեցու ջանքերով և Հարություն Ալամդարյանի անմիջական մասնակցությամբ ստեղծվեց հայկական աշխարհազորը, որը մեծ դեր խաղաց մոտ մեկ և կես տարի տևող այդ պատերազմի մեջ։

Ֆրիդրիխ Պարրոտ

Աբովյանը լցվում է նոր հույսերով։

Ռուսաստանի գիտական-կուլտուրական կենտրոններից մեկում հիմնավոր գիտելիքներ ձեռք բերելն ու հայրենիք վերադառնալով իր ժողովրդի լուսավորության գործին նվիրվելը դառնում է Աբովյանի համար կյանքի և մահու խնդիր։ «Ապրել և մեռնել հայրենիքիս համար,— գրում է Աբովյանը,— ահա այն խնդիրը, որ ես ընտրել եմ ինձ համար իմ մանկության օրերից»[1]։

Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո Աբովյանն անմիջապես չվերադարձավ Էջմիածին։ 1826—1827 թվականները նա անց կացրեց Հաղպատի և Սանահինի վանքերում, 1828 թվականի սկզբներին Աբովյանը կրկին Էջմիածնում էր։

Ժամանակները, հասարակական պայմանները փոխվել էին, սակայն Էջմիածինը շարունակում էր մնալ իր հնօրյա հետամնացության մեջ, անհաղորդ ժամանակակից քաղաքակրթությանը։ Զնչին շահերը, դավերն ու խարդավանքները վանական կյանքի առօրյայում իշխող դեր էին խաղում։ Եվ երբ գտնվում էին միջավայրի հետ չհամակերպվող անհատներ, ապա նրանց շուրջը ստեղծվում էր կասկածանքի և հալածանքի թունոտ մթնոլորտ։ Հենց այդպիսի մթնոլորտ էր ստեղծված Աբովյանի շուրջը։

1829 թվականին, Դորպատի՝ այժմյան Էստոնիայի Տարտու քաղաքի նշանավոր համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը, Արարատն ուսումնասիրելու նպատակով, Էջմիածին է գալիս իր գիտական արշավախմբով։ Աբովյանին է վիճակվում՝ իբրև այն ժամանակվա միակ ռուսագետ Էջմիածնում՝ դառնալ Պարրոտի թարգմանը և ուղեկիցը նրա գիտական արշավի ժամանակ։ Պարրոտի հետ Աբովյանը ևս բարձրացավ

¹ «Երկեր Խ. Աբովյանի», հատ. 1, Երևան, 1940, էջ 213։

Արարատի գագաթը և դրանից հետո էլ երդումով հաստատեց այդ վերելքը։ Հոգևորականության աչքում Աբովյանի արարքը սրբապղծություն էր։ Գիտնականի մեկնելուց հետո դաժան հալածանք է սկսվում Աբովյանի դեմ։

Արարատի ձեպանկարը ըստ Ֆ. Պարրոտի

Մեկնելիս, Պարրոտը խոստանալով օգնել Աբովյանին ուսումը շարունակելու գործում, առաջարկել էր նրան մի քանի տարով պաշտոնից արձակվելու թույլտվություն ստանալ Սինոդից՝ պահպանելով սակայն հոգևոր կոչումը։ Այդ առթիվ Աբովյանը խնդրամատույց է լինում Սինոդին։ Այս բանը ավելի է սաստկացնում թշնամանքը նրա հանդեպ։ Աբովյանը հետագայում բազմիցս անդրադարձել է իր կյանքի այս ողբերգական օրերին։ «Ինձ համար աներևակայելի տանջանքներով անցավ ամբողջ մի շաբաթ։ Համարյա ամեն օր կանչվում էի ահեղ դատաստանը այն ժամանակվա դեռ հզոր Սինոդի, որն ուներ անսահմանափակ իշխանություն եկեղեցու և նույնիսկ ազգի վրա։ Մեկի նախատինքները, սպառնալիքները, խրատները, մյուսի խոստումները՝ հինգ տարի հետո եպիսկոպոսական կոչման և պաշտոնի վերաբերյալ,— ոչինչ չէր ահաբեկում և գայթակղում ինձ»,— գրել է Աբովյանը «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ռուսերեն աշխատության մեջ[1]։ Փոքր ժամանակ անց, Աբովյանը նորից ներկայանում է Սինոդին և այս անգամ արդեն ամենայն վճռականությամբ պահանջում՝ արձակել իրեն հոգևոր կոչումից, եթե այդ կոչումը արգելք պիտի հանդիսանա իրականացնելու իր ձգտումը։ Սինոդը կանգ չի առնում

---

1 Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 7, էջ 178։*

նաև այդ քայլի առաջ։ Աբովյանը բանադրանքի է ենթարկվում և արձակվում միաբանությունից։ «Վայ նրան,— ասված է նույն տեղում,— ով սկսած այդ րոպեից կհամարձակվեր անգամ բարևել ինձ»։ Խլում են նրա բոլոր իրերը «մինչև վերջին թելը»։ Անհաց, անշոր, անպաշար, առանց մի կոպեկ ունենալու գրպանում, ցուրտ ձմռան գիշերին նա վտարվում է վանքից։ Նրան ծածկաբար օգնություն են հասնում ընկերները, ուղարկելով տաք վերնազգեստ և դրամ։

Ապագա հայ մեծ լուսավորիչի՝ Աբովյանի և հոգևորականության միջև այսպես է սկիզբ առնում բնական և անխուսափելի այն կոնֆլիկտը, որը գնալով ավելի ու ավելի խորացավ, վերածվելով ներհակ ուժերի սկզբունքային հակամարտության։ Եթե երիտասարդ հայրենասերի ելակետը ազգն էր՝ ի դեմս ժողովրդական լայն զանգվածների՝ նրանց հրամայական դարձած պահանջներով, ապա հայ կղերի ելակետը քրիստոնեական քարացած դոգմաների վրա հիմնված եկեղեցու և հենց իրենց կրոնավորների նեղ դասային էգոիստական շահերն էին։ Այս սկզբունքային հակամարտությունն էլ Աբովյանին տարավ դեպի վերջնական պառակտում եկեղեցուց, որի շատ ուշացած, պաշտոնական ձևակերպումը հանդիսացավ հոգևոր կոչումից 1839 թվականին արձակվելը։

1830 թվականի մայիսին ստացվում է Պարրոտի նամակը։ Աբովյանը այդ օրը համարում է դրախտային օր, իսկ նամակի համար ասում է. «Այդ նամակը աշխարհի հետ չեմ փոխի»։

Պարրոտը գրում էր.

«Հարգելի սարկավագ, Սիրելի բարեկամ։

Որոշված է Ձեր վիճակը, կատարվել է, ինչ ցանկանում էիք. Նորին պայծառափայլություն կոմս Պասկևիչ-Երևանսկին, նույնպես և Նորին լուսափայլություն ժողովրդական լուսավորության նախարար իշխան Լիվենը հարգեցին իմ՝ Ձեր մասին արած խնդիրը, այնպես որ Նորին կայսերական մեծությունն ամենաողորմածաբար Ձեզ թույլտվություն շնորհեց Դորպատում երեք տարի մնալու, որպեսզի սովորեք հօգուտ հայ ժողովրդի կրթության, ընդսմին նշանակելով Ձեզ տարեկան 200 ռուբլի ապրուստ, 200 ռուբլի ճանապարհածախս և նույնքան էլ վերադարձի վարձ։

Աստված Ձեզ հետ լինի, սիրելի բարեկամ։ Անհամբեր սպասում եմ Ձեր ուխտաբեր գալստին և հավիտյան կլինեմ, հարգելի սարկավագ՝ սրտով Ձեզ անձնվեր՝ Ֆ. Պարրոտ։

Դորպատ, 4 ապրիլ, 30 թիվ»[1]։

1830 թվականի հուլիսի 11-ին Աբովյանը Թիֆլիսից ճանապարհվում է Դորպատ։

---

[1] «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, Երևան, 1940, էջ 263—264։

2

Սեպտեմբերի 3-ին Աբովյանն արդեն Դորպատում էր։ Նշանակալից և խորհրդավոր օր էր այդ ոչ միայն Աբովյանի կյանքում, այլև մեր ժողովրդի մտավոր վերածնության պատմության համար։ Կովկասահայերի կյանքում սկսվում էր մի ժամանակաշրջան, երբ նրանք հնարավորություն էին ստանում հաղորդակցվելու քաղաքակիրթ աշխարհի հետ։ Վերադառնում էին այն հեռավոր օրերը, երբ հնագույն քաղաքակրթության օրրաններում մեր ժողովրդի զավակները գնում էին լույս և գիտություն որոնելու, որպեսզի իրենք դառնային լույսի և գիտության ջահակիրներ՝ իրենց ժողովրդի, երբեմն էլ նաև հարևան ժողովուրդների համար։



Մի էջ Աբովյանի ձեռագրերից

Շուրջ հինգ տարի Աբովյանը ուսանեց Դորպատում։ Սակայն նրա ուսման ընթացքը ընդունված կանոնից միանգամայն տարբեր եղավ։ Նա Դորպատ հասավ առանց գերմաներեն մի բառ իմանալու։ Ուրեմն առաջին գործը պիտի լիներ յուրացնել այդ լեզուն։ 5—6 ամսվա լարված ջանքերը սպասածից շատ ավելի մեծ արդյունք ունեցան։ Աբովյանը չդարձավ ուսանող սովորական իմաստով և նույնիսկ սովորական առումով ազատ ունկնդիր էլ չէր, թեև նրա անունը հիշատակվում է ազատ ունկնդիրների ցուցակում։ Նա ընտրեց ուսման այնպիսի եղանակ, որպեսզի կարողանա ձեռք բերել այսպես կոչված էնցիկլոպեդիկ կրթություն։ Աբովյանին պետք էր գիտենալ ամեն բան, նա պատրաստվում էր իր ժողովրդի համար դառնալու տառացիորեն ամեն ինչ. և՛ գրական-հասարակական գործիչ, և՛ ուսուցիչ, և՛ գյուղատնտես, և՛ բժիշկ, և՛ ժողովրդի առօրյա նիստ ու կացի խորհրդատու, ընկեր ու բարեկամ։ Որոշ ընտրությամբ նա հաճախում է համալսարանի դասախոսություններին, բայց և միաժամանակ մասնավոր դասեր է առնում Պարրոտից և նրա բարեկամ մի շարք այլ պրոֆեսորներից։ Միջնակարգ դպրոցի ծրագրով Դորպատի համալսարանին կից Ուսուցչական սեմինարիայում նա լրացնում է իր գիտելիքների պակասը, սովորում է լեզուներ՝ գերմաներենից զատ՝ ռուսերեն, ֆրանսերեն, լատիներեն, ուսումնասիրում է գրականության, մանկավարժության և փիլիսոփայության կլասիկներին։ Սովորում է տիեզերագիտություն, երկրաչափություն, աշխարհագրություն, բնագիտություն, պատմություն, երաժըշ-

տություն։ Աբովյանը համառոտ ծանոթանում է զանազան արհեստների՝ այդ թվում՝ ապակեգործության, ժամանակ է նվիրում ինքնահնար գլոբուս պատրաստելուն, ուսումնասիրում է փռի կազմությունը, հաց թխելու եվրոպական եղանակը, ճաշեր պատրաստելու և պանիր մակարդելու դեղատոմսեր է կազմում, բույսերի մշակման ու վնասատուների դեմ պայքարելու գիտական մեթոդները յուրացնում, սովորում է նվագել կիթառի և կլավիրի վրա և այլն և այլն։ Քաղաքակիրթ ապրելակերպի, նիստ ու կացի ոչ մի մանրուք չի վրիպում Աբովյանի ուշադրությունից։ Ինչ որ նրան թվում է կարևոր, ուսանելի, բանական՝ նա ընդօրինակում է, սովորում, արձանագրում իր օրագրերում՝ սկսած դանակ-պատառաքաղի գործածությունից, մինչև երեխաների խնամքն ու դաստիարակությունը, սկսած ժամանցի խելացի խաղերից՝ ընտանեկան հարկի տակ, մինչև կուլտուրական ժամանցը հասարակական վայրերում՝ համերգ, ներկայացում, պարահանդես և այլն։ Դորպատում տեսած ամեն մի լավ բան ցավագին ապրումով վերակենդանացնում է Աբովյանի հիշողության մեջ դրա հակապատկերը իր հայրենիքում։ Լուսավոր է, կրթված եվրոպացի երեխան, նա շրջապատված է ծնողների և հասարակության հոգատարությամբ։ Աբովյանը ուրախ է դրա համար, բայց և վշտացած, դառնացած է նա, որովհետև հայ մանուկը անխնամ է, տգետ, զուրկ տարրական կուլտուրայից։ Ներկա գտնվելով Սեմինարիայի կիսամյա քննություններին և տեսնելով, թե սովորողները որքան բազմակողմանի ու հիմնավոր են յուրացրել դասավանդվող առարկաները, Աբովյանն իրեն զգում է նվաստացած, նրան համակում է վհատություն։

Նույնպիսի ցավագին ապրումներ են արթնանում նրա սրտում, երբ նա համեմատում է քաղաքակրթությունից և հասարակական կյանքից դուրս գտնվող հայ կնոջը գերմանուհու հետ, կամ երբ նա ստիպված է երաժշտագետ Բեդերմանին ամոթով խոստովանել. «Ոչ գոյ ի մեզ կանոնաւորյալ երաժշտութիւն»[1]։

Էստոնական ժողովրդի այդ նշանավոր քաղաքն իր հռչակավոր համալսարանով այն ժամանակվա եվրոպական և ռուսական առաջավոր կուլտուրայի օջախներից մեկն էր։ Եվրոպայի և Ռուսաստանի քաղաքական-կուլտուրական նշանակալից երևույթներն իրենց արձագանքն էին գտնում այստեղ, հուզելով և խմորելով մտքերը դարի առաջավոր գաղափարներով։ Դորպատը սերտ կապերով կապված էր Պետերբուրգի հետ։ Դորպատում ռուս ուսանողներն զգալի թիվ էին կազմում։ Համալսարանին կից գործում էր պրոֆեսորական բաժինը, ուր դասախոսներ էին պատրաստվում ռուսական բարձրագույն կրթական հաստատությունների համար։ Աբովյանի օրագրերից դժվար չէ կռահել, որ նա հաճախակի առիթ է ունեցել պրոֆեսորների և ուսանողների շրջանում զրուցելու ռուս գրականության, ռուս առանձին գրողների, Ռուսաստանի քաղաքական-հասարակական կյանքի հետ կապված խնդիրների մասին։ Աբովյանը հան-

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 6, էջ 67։

դիպում է ունենում Կարամզինի որդիների հետ։ Սրանց խոսակցության թեման դառնում է ռուս գրականությունը։ Զրույցի միջոցին մասնավորապես հիշում են Պարսկաստանում տեղի ունեցած Գրիբոեդովի սպանության ողբերգական փաստը։

Աբովյանի կյանքի դորպատյան տարիների նշանավոր դեպքերից է նրա հանդիպումը ականավոր բանաստեղծ Ժուկովսկու հետ՝ 1833 թվականի սեպտեմբերի 3-ին, պրոֆեսոր Բլյումենի տանը։ Ժուկովսկին Շվեյցարիայից հայրենիք էր վերադառնում։ Նա «Արարատի որդուն» ողջույն է հաղորդում Մոնպլանից։ Հանդիպումը «ռուս գրականության նախագլխի» հետ անջնջելի տպավորություն է թողնում Աբովյանի վրա և առիթ տալիս իր օրագրերում դրի առնելու ջերմ ու սրտահույզ տողեր։

Դորպատի համալսարանի ռուս գիտնականներից Աբովյանը մոտ ծանոթ է եղել՝ հետագայում աստղագետ ակադեմիկոս Ստրուվեի հետ, որը Պարրոտի արշավախմբի մասնակիցներից էր և ծանոթ էր Աբովյանին տակավին Արարատի գագաթը բարձրանալու օրերից։ Ռուս գրականության շուրջը Աբովյանի զրուցակիցներից է եղել Իվանովը։ Դորպատում Աբովյանի ծանոթ և բարեկամ անվանի ռուսներից պետք է հիշատակել նաև Շուխովսկուն, Պերևոշչիկովին, Նապերսկուն։ Ամեն բան չէ, որ արձանագրվել է դորպատյան օրագրերում, ուստի ռուսական գրականության և հասարակական պրոգրեսիվ մտքի բարերար ազդեցության հետքերը պետք է որոնել ոչ լոկ նրա օրագրերում, այլև նրա գրական հայացքներում, նրա արվեստում, գիտական-մանկավարժական գործունեության մեջ։

Դորպատում գտնվելու առաջին իսկ օրերից Աբովյանի դերմաներենի դասագրքերն են դառնում Գյոթեի և Շիլլերի երկերը։ Աբովյանին խորապես ցնցում է Գյոթեի մահը։ Գերմանական մի լրագրից նա թարգմանում է և իր օրագրերում զետեղում աշխարհահռչակ բանաստեղծին վերաբերող մահախոսականը։ Աբովյանը թարգմանում է Գյոթեի «Անտառի արքան» հայտնի բանաստեղծությունը։ Նա թարգմանել է նաև Շիլլերի մի շարք բանաստեղծությունները։

Եվրոպական գրականությունից Գյոթեն ու Շիլլերը առաջին դեմքերն էին, որոնց երկերը Աբովյանի համար հոգևոր սնունդի աղբյուր հանդիսացան։ Սակայն, գնալով ավելի ու ավելի խորացավ և լայնացավ Աբովյանի հոգևոր կապերը կուլտուրայի և գիտության, գրականության և արվեստի աշխարհահռչակ ներկայացուցիչների հետ։

Դորպատում Աբովյանը քրտնաջան աշխատանք է կատարել յուրացնելու համար Լայբնիցի, Հեգելի և Կանտի փիլիսոփայական սիստեմները, Լեսինգի արվեստի տեսությունը։ Նրան մեծապես հետաքրքրել է Ժան-Ժակ Ռուսսոն՝ թե իբրև մտածող փիլիսոփա և թե իբրև մանկավարժ ու վիպասան։ Հետագայում Աբովյանը փորձել է թարգմանել «Նոր Էլոիզա» վեպը, որը սակայն անկարող է եղել իրականացնել, հավանաբար կյանքի դժբախտ հանգամանքների պատճառով։

Աբովյանը թարգմանել է Հոմերոսի և Պետրարկայի ստեղծագործություններից։ Զրույցներ է գրել Լեսսինգի և Մոնտեսքյոյի կյանքից առած

նշանավոր դեպքերի հիման վրա։ Առանձին գրույցների և ուսումնասիրության առարկա են եղել Աբովյանի համար Շեքսպիրն ու Վալտեր Սկոտը։

Անտիկ աշխարհի գրականություն և փիլիսոփայություն, վերածնության խոշորագույն դեմքեր, ֆրանսիական մեծ լուսավորիչներ, գերմանական կլասիկ գրականություն և փիլիսոփայություն, ռուսական կլասիկ գրականություն և առաջավոր հասարակական գաղափարներ, ահա համաշխարհային կուլտուրայի այն ուշագրավ երևույթները, որոնց վրա բևեռված է եղել Աբովյանի հարցասեր հայացքը և որտեղից նա գաղափարական սնունդ է քաղել։



Դորպատի համալսարանը

Դորպատում անց կացրած հինգ տարիների նշանակությունը մեծ եղավ Աբովյանի համար նաև այլ առումով։ Երբ Աբովյանը Դորպատ հասավ, մեկ ամսից քիչ ավելի ժամանակ էր անցել 1830 թվականի ֆրանսիական հուլիսյան նշանավոր հեղափոխությունից։ Ամբողջ Եվրոպան ցնցված էր այդ տարվա քաղաքական անցքերով։ «Գալլական աքաղաղի երկրորդ կանչը» սթափեցրեց և ոտքի հանեց Եվրոպայի մի շարք երկրների ժողովուրդներին։ Այդ հեղափոխության անմիջական արձագանքը հանդիսացավ լեհական ապստամբությունը՝ ցարական Ռուսաստանից անկախություն ձեռք բերելու համար։ Ֆրանսիական հեղափոխությունը անցավ Գերմանիա և Բելգիա։ Հայտնի է, թե հուլիսյան քաղաքական դեպքերը ինչպիսի խանդավառություն առաջ բերեցին Եվրոպայի ազատամիտ մտավորականության շրջանում։ Այդ դեպքերի առնչությամբ Հայնեն այսպիսի ոգեշունչ տողեր գրեց. «Ով դուք հուլիսյան սրբազան օրեր Փարիզում։ Դուք կմնաք իբրև հավիտենական վկայություն մարդկային մշտնջենական

ազնվության, որպիսին երբեք չի կարող ոչնչացվել»։ Իսկ ժամանակի գերմանական ականավոր հրապարակախոս Լյուդվիգ Բյոռնեն իր «Նամակներ Փարիզից» աշխատության մեջ գրում էր՝ «Եթե նույնիսկ արյան ծովեր է բաժանում մեզ ազատությունից, մենք այնուամենայնիվ ձեռք կբերենք այն»։ Այդ ժամանակ էլ հենց ստեղծվեց «Երիտասարդ Գերմանիա» գրական նոր ուղղությունը, որին աջակցում և պաշտպանում էին Հայնեն և Բյոռնեն։ Այս ուղղության ներկայացուցիչները գրողի կոչումը տեսնում էին օրվա այրող խնդիրներին ծառայելու մեջ։ Հայնեն գրողին կոչ էր անում չկտրվել կյանքից։ Հիշեցնելով հունական դիցաբանությունից Անթեյի առասպելը, նա գրում էր. «Պոետը հզոր է այնքան ժամանակ, քանի դեռ նա չի լքում իրականության հողը և անզոր է դառնում, հենց որ սկսում է երազկոտաբար սավառնել կապտավուն օդում»։

Ցարական կայսրության արևմտյան ծայրամասում գտնվող մտավոր այդ կենտրոնը՝ Դորպատը անտարբեր չմնաց Եվրոպայի քաղաքական անց ու դարձի հանդեպ։ Մեր պատմա-բանասիրական գրականության մեջ տենդենց է ցուցաբերվել այդ միջավայրը ներկայացնել որպես ինքնամփոփ, քաղաքական կյանքից և շահերից մի կողմ կանգնած, սահմանափակ հայացքներով պրոֆեսորների ու բարձր ազնվական վերնախավերից սերող ուսանող-երիտասարդության միջավայր։ Այստեղ մոռացության է տրվել լեհական ապստամբության նշանակալից փաստը։ Մոռացության է տրվել մի կարևոր մոմենտ ևս՝ Միջազգային ժողովուրդների մեջ գոյություն ունեցող և հատկապես այդ էտապում խորացող հակացարական ազատագրական տրամադրությունների մոմենտը։ Հակացարական տրամադրությունները առկա էին նաև համալսարանի պրոֆեսորների շրջանում։ Այդ բանում կարելի է համոզվել Աբովյանի օրագրերի հիման վրա։ Հայտնի է, թե «մեծ մաթեմատիկոս» Բարդելսի անունից Աբովյանը ինչպիսի տողեր է գրի առել իր օրագրերում։ «...Յազատութենէ յառաջանան ամենայն բարիք. գիտեմ, զի աստիճանաւորք ռուսաց ի կողմանս ձեր ցուցանեն զբազում անկարգութիւնս, յայսմ չիք ինչ հնար, բայց եթէ զարթուցանել զհոգի ազգին, իւրաքանչիւր ազգ պարտի ինքն զգալ զբարի իւր և յառաջ տանիլ. ազգք ձեր են ազգք քաջաջանք, այլ միմիայն պարտէ արիացուցանել զնոսա վասն հայրենի ազատութեան իւրեանց...»[1]։

Բարդելսի խոսքերի մեջ ոչ միայն շեշտված է այն անմխիթար վիճակը, որ ստեղծված էր հայերի համար ռուսական ինքնակալության չինովնիկների իշխանության ներքո, այլև նշված էր այն ուղին, որով պիտի իրականացվեր ժողովրդի ազատության իղձը։ Դեռ նոր միայն Վարշավայում տեղի ունեցած նոյեմբերյան ապստամբության ֆոնի վրա՝ հասկանալի է, թե պրոֆեսորի խոսքերը Աբովյանի համար որքան ազդեցիկ պիտի լինեին և որ իրոք այդ այդպես է, դրա ապացույցը հիշյալ խոսքերի այդքան խնամքով իր օրագրերում արձանագրելու փաստն է։

---

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 6, էջ 74.

Միևնույն օրագրերում կարելի է հանդիպել այսպիսի տողերի ևս. «Ի 5-րորդում ժամու գնամ առ պրոֆեսոր Ֆրիդլենդեր։ Նա խօսի ընդ Պօլեակի միոջ Իվանովսկի, և երկոքեան զրուցեն վասն կառավարութեան այլև այլ տէրութեանց»[1]։

Ինչ խոսք որ Աբովյանի բարեկամ պրոֆեսոր Ֆրիդլենդերի զրույցը լեհ Իվանովսկու հետ պետք է սկիզբ առած լիներ լեհական դեպքերի առընչությամբ։ Անտարակույս է նաև այն, որ խոսելով այլ և այլ կառավարական սիստեմների մասին, ցարական պետական սիստեմը չէր, որ պետք է նրանց կողմից գերադասվեր մյուսներից։

Նման զրույցների ընթացքում Աբովյանը հառաչել է հայկական անկախ պետության համար։ Ուշագրավ է այս հարցի առթիվ նրա մի զրույցը Պարրոտի հետ։ «Ի զրուցել զհայրենեաց իմոց, և յոգոց հանելն, թե արդեօք լինիցի՞ մեզ երբեմն տիրել և հայրենեաց մերոց ասե. «Բավական է, զի թէ կայսերն բարեհաճեսցի ժողովել զամենայն հայս ի սահմանս ինչ և տալ նոցա առանձին իշխանութիւն»։ Նա խոսի զՎարդանայ ամենայն ողվութեամբ։ «Ահա պատուական իշխանն, նորա օրինակին պարտիք հետևիլ»։ Զիա՞րդ հարին երակք իմ ի լսելն իմ ի բերանոյ այնպիսի առն զգովութիւն դիւցազինն իմոյ»[2]։

Անկախ այն բանից, թե Պարրոտը ինչպիսի ուղի է մատնանշում, համենայն դեպս նա արդարացի է համարում իր սանի՝ Աբովյանի երազանքը հայերին մի օր ազատ տեսնելու վերաբերյալ։ Վարդանին մատնանշելու փաստը, նրա օրինակին հետևելու հայերին արվող առաջադրանքը, ցույց է տալիս, որ ռուսական ցարի ողորմածությանն ապավինելը հայերի ազատության միակ ուղին չէ, որ տեսնում է Պարրոտը։

Ուշագրավ է, որ Հայաստանի վիճակի մասին Աբովյանի և իր բարեկամների միջև հաճախ խոսք է բացվում լեհական դեպքերի առնչությամբ, այդ դեպքերի թարմ տպավորության տակ։ Բնորոշ է այս իմաստով 1831 թվականի սեպտեմբերի 20-ին տեղի ունեցած Աբովյանի և Շվաբսի զրույցը։ «Զրույց վասն պատերազմին Պօլշիոյ... Նա հարցանէ զիս կարեկցութեամբ վասն իշխանութեան մերոյ, օրինաց մերոց և ազգի մերոյ. կարեկցութիւն նորա առ ազգն մեր։ Առանձնանայն մեր ընդ պարոն Շվաբսին. առանձին զրույց, յետ որոյ ի բաժանիլն մեր. «Տեր օրհնեսցէ զգործս ձեր...» Հաստատուն հաւատ նորա։ Նա խնդրէ յաճախակի այցելանել նմա»[3]։

Վերը բերված տողերում շատ բան է ասված բացահայտ, շատ բան էլ խորհրդավորության շղարշով է քողարկված։ Եվ մասնավորապես այդ խորհրդավորությունը ընթերցողին մղում է առավել համարձակ ենթադրությունների ու եզրակացությունների հօգուտ այն բանի, որ բուրժուական հեղափոխությունների ժամանակաշրջանի Դորպատը բոլորովին էլ

---

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 6, էջ 70։

2 Նույն տեղում, էջ 125։

3 Նույն տեղում, էջ 25։

այն միջավայրը չէր, ուր հանձին Աբովյանի պետք է դաստիարակվեր խաղաղակյաց քրիստոնեայի վարք ու բարքով մի անձնավորություն։

Դորպատը պարզ ու որոշակի դարձրեց Աբովյանի նպատակները, լայնացրեց նրա լուսավորական հայացքները, բայց որ գլխավորն է, ավեց դրանց քաղաքական բովանդակություն։ Ապագա իր լուսավորական գործունեությունը հայրենիքում այլևս ոչ թե նպատակ, այլ միջոց էր Աբովյանի քաղաքական նպատակների համար, միջոց՝ ժողովրդի ոգին բարձրացնելու, նրա ինքնագիտակցությունը խթանելու, նրան ազատ և ինքնուրույն քաղաքական կյանքի հեռանկարով տոգորելու համար։



Ֆ. Յ. Վիդեման

Աբովյանը Դորպատից վերադարձավ հայրենիք հարուստ գիտելիքներով և լայն աշխարհայացքով։ Այս իմաստով ուշագրավ է անհայտ ֆրանսիացու բնութագրականը։ «Աբովյանի հետ մտերմություն ըրի և ստուգիվ զարմացա իր հմտության վրա։ Գերմանական փիլիսոփայության և գրականության տեսիլները իրեն այնքան ընտանի են, որ նույնիսկ եվրոպական մը օգուտ կրնա քաղել իր կարծիքներեն։ Շիլլերը ջուրի պես գիտե, Լեսինգի, Լեյբնիցի կարծիքները մաղե անցուցեր է և իր ասիական երևակայությունով անոնց նոր գույն մը կուտա։ Գերմանացիի մը չափ կխոսի գերմանիկ լեզուն և տարակույս չկա, որ այս անձը հայ գրագիտության պատիվ պիտի ընէ օր մը։ Տարօրինակ երևույթ մարդկային լուսավորության. հայու մը բերան արձագանք է այնպիսի տեսիլներու, որ մեր մեջ դեռ նոր կտարածվի։ Շիլլերի, Լեսինգի գրությունները Կավկասի լեռներու մեջ կհաստատվին և լսելի կլլան, երբ դեռ Եվրոպայի մեջ ժողովուրդ կա, որ այս հեղինակներու անունն անգամ լսած չէ։ Զարմանալի բան պիտի ըլլա, եթե Ասիայի լուսավորությունը Կովկասեն սկսի և Բրոմեթեյի ժայռը տեսնե իր չարչարանքին արդյունքը...»[1]։

Շատ ավելի մեծ եղավ Աբովյանի դերը մեր գրականության և կուլտուրայի պատմության մեջ, քան կարող էին կանխատեսել Դորպատի համալսարանի պրոֆեսորները Պարրոտի գլխավորությամբ, քան կարող էր կանխատեսել նույնիսկ ինքը՝ Աբովյանը։

[1] «Արևմուտք», 1859, № 6։

3

Աբովյանը Դորպատը թողեց 1836 թվականի հունվարին։ Պետերբուրգում նա այցելեց իր բարեկամներին՝ Ժուկովսկուն, սենատոր Հանին, ակադեմիկոս Ֆրենին։ Նա հյուր եղավ Թագուհու մոտ և նրանից հրավեր ստացավ դառնալ Ռուսական հնեաբանական ընկերության անդամ։ Նույն թվականի հուլիսին Աբովյանն արդեն Թիֆլիսում էր։

Հայրենիքում իր ապագա գործունեության ծրագիրը նա շարադրել էր դեռևս 1833 թվականի հունիսին՝ Դորպատից Քիշինև Ներսես Աշտարակեցուն գրած նամակում։ Երկրորդ անգամ իր ապագա անելիքների մասին նա ավելի ընդարձակ և հանգամանալի խոսում է նույն թվականի վերջերին՝ Պետերբուրգում կարդացած մի հրապարակախոսական դասախոսության ժամանակ։

Հայրենի հողի վրա՝ Էջմիածնում, Աբովյանը ցանկանում էր հիմնել մի դպրոց, որտեղ պետք է սովորեին հասարակության տարբեր խավերի երեխաներ։ Նրանց մի զգալի մասը պիտի պատրաստվեին գյուղերում քահանաներ և միաժամանակ ուսուցիչներ դառնալու համար։ Որոշ մասը դպրոցն ավարտելուց հետո պետք է գնային կատարելագործվելու Ռուսաստանի զանազան գործարաններում և արհեստանոցներում, որպեսզի ձեռք բերելով այլևայլ մասնագիտություններ, վերադառնային հայրենիք՝ սովորածը արմատավորեին հայրենի հողի վրա։ Չքավոր երեխաների և՛ ուսումը, և՛ խնամքն ու ապրուստը պետք է ապահովվեր ի հաշիվ դպրոցի։ Սովորողներից առավել ընդունակներն ու ջանասերներն հասարակական միջոցներով պետք է ուղարկվեին Ռուսաստանի և Եվրոպայի համալսարաններում բարձրագույն կրթություն ստանալու։ Վերջիններս հայրենիքում ունենալու էին գործունեության առավել լայն ասպարեզ։

Աբովյանի ծրագիրը առաջին հայացքից թվում է միանգամայն ռեալ։ Նույնատիպ դպրոցներ Եվրոպայում գործել էին տակավին շատ տասնամյակներ առաջ։ Բայց այն ժամանակվա հայկական պայմաններում այդ ծրագիրը միանգամայն ուտոպիկ և նույնիսկ ֆանտաստիկական էր. թեկուզ հենց նրանով, որ այն զուրկ էր նյութական հիմքից։ Աբովյանը մեծ հույսեր էր կապում հարուստ հայերի նյութական զոհաբերությունների հետ, ակնկալում էր, թե Էջմիածինը վանքապատկան գյուղերից մեկի եկամուտները կտրամադրի դպրոցին։ Դուցե և նյութական միջոցները հայթայթվեին, եթե միայն Էջմիածինը սկզբունքով իր համար ընդունելի դիտեր Աբովյանի ծրագիրը և իրեն՝ ծրագրի հեղինակին համարեր այն անձնավորությունը, որին կարող էր վստահել մանուկ սերնդի կրթության ու դաստիարակության գործը[1]։

---

[1] Նույնպիսի ուշագրավ է՝ ռուսական կառավարությանը ներկայացնելու նպատակով, 1836 թվականին Մոսկվայում կազմած Աբովյանի մեկ ուրիշ ծրագիրը՝ հայ և Անդրկովկասի մյուս ժողովուրդների տնտեսական և կուլտուրական վիճակի բարելավման խնդրի վերաբերյալ (Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 6-րդ)։

Հայտնի է, թե ինչպես ընդունեց Հովհաննես Կարբեցին Աբովյանին, երբ վերջինս Թիֆլիսում ներկայանալով նրան, շարադրեց իր նպատակները և հանձնեց օտար դավանության մինիստրի հանձնարարականը։ «Հրամանաւ գաս ի վերայ իմ վտարանդեալդ ի հաւատոյ... Դու լաւ խմորել կարես զմիտս անմեղաց, այլ կրթել զնոսա չէ քո գործ»[1]։ Կարբեցու այս խոսքերից պիտի եզրակացնել, որ հոգևորականության և Աբովյանի միջև տակավին 1829 թվականին ծագած կոնֆլիկտը ոչ միայն չէր հարթվել, այլև ավելի էր սրվել, թեկուզ հենց նրանով, որ վերջինս ուսանելով Դորպատում, հայ կղերի համար առավել վտանգավոր հակառակորդ էր դարձել։

1837 թվականի փետրվարի 12-ին Աբովյանը նշանակվում է Թիֆլիսի գավառական դպրոցի տեսչի պաշտոնակատար և պատմության ու թվաբանության ուսուցիչ։ Դա ակամա քայլ էր, որին դիմեց Աբովյանը։ «Ստիպեալ ի չքավորութենէ՝ մտի ի պաշտոն արքունական, զոր ոչն երբեք կամէի» գրել է նա[2]։

Աբովյանը հաշտվեց իր վիճակի հետ, սիրեց և ոգևորվեց իր աշխատանքով։ Մի պահ նրան թվում է, որ ահա նա կանգնած է իր ծրագրերի անխափան իրականացման ճանապարհին։ Ֆրենին ուղղած մի նամակում Աբովյանը գրում է. «Իմ այժմյան պաշտոնս արդեն ինձ անսահման մխիթարություն է պատճառում ... Մանուկներին կրթելն աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար և դեռ ավելին, քանի որ սրանց մեծագույն մասն իմ ազգակիցներն են, իսկ մյուսները՝ վրացի ու թաթար՝ իմ երկրացիները»[3]։

Դպրոցին զուգահեռ Աբովյանը հիմնում է պանսիոն՝ իր շուրջը խմբելով հայ և վրացի երեխաներ։ Պանսիոնը մի տեսակ փոխարինում էր այն դպրոցին, որ նա կամենում էր ստեղծել հոգևոր իշխանության նյութական օժանդակությամբ։

1839 թվականին Աբովյանը ամուսնանում է Թիֆլիսի գերմանական գաղութի գերմանուհի Էմիլիա Լոոզեի հետ։ Էմիլիան դառնում է նրա աջակիցը պանսիոնի աշխատանքներում, հանգամանք, որ Աբովյանին հնարավորություն է ընձեռնում լայնացնել սովորողների շրջանը։ Գործերը, աշխատանքի եռանդը, հարուստ գիտելիքները, ամեն ինչ նպաստում էին, որ գոնե մի առ ժամանակ Աբովյանին այնպես թվար, թե իր առջև ծառացած խոչընդոտները վերացած են, ուստի մնում է ոգևորվել պատեհ առիթից, գործել ու գործել...

Սակայն այդպես չեղավ։ Ֆրենին ուղղված վերը հիշված նամակում արդեն Աբովյանը դժգոհում է այն բանից, որ Պետերբուրգից եկած կարգադրություններն ու հրահանգները կաշկանդում են իրեն, որ դրանք ելնում են ոչ թե տեղի հանգամանքներից, «որ ամենաբնականը կլիներ», այլ

1 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. I, էջ 60։
2 Նույն տեղում, էջ 61։
3 Նույն տեղում, էջ 111։

Պետերբուրգի պայմաններից, որոնք արմատապես տարբեր են տեղականից: Աբովյանն ասում է՝ եթե չխանգարեն, «Ես կկարողանամ իմ գավառական դպրոցով մրցել լավագույն դպրոցների հետ»[1]:

Իբրև մանկավարժ Աբովյանը եզակի երևույթ էր այն ժամանակվա Անդրկովկասում: Սակայն նա ստիպված էր ապրել և գործել ճղճիմ միջավայրում: Աբովյանին շրջապատում են սահմանափակ, փոքրոգի և նախանձոտ մարդիկ. ուսուցիչներ, որոնք իրենց գործին նայում էին չինովնիկական անտարբերությամբ, Անդրկովկասյան դպրոցների վարչության պատասխանատու աշխատողներ, որոնք վերևից եկող հրահանգների տառացի կիրառումից այն կողմ ոչինչ չէին ընդունում և ոչինչ չէին հանդուրժում: Աբովյանի նման իր գործին նվիրված մարդու համար դժվար էր համակերպվել, դառնալ մի սովորական աստիճանավոր, որին վերապահված էր ոչ թե ստեղծագործական մոտեցում աշխատանքի նկատմամբ, այլ սոսկ անմռունչ կատարողի վիրավորական վիճակ:

Խրիստյան Ցրեննին գրած 1839 թվականի փետրվարի 23-ի նամակում Աբովյանը խոսում է այն դաժան հալածանքների մասին, որ ինքը կրում է Անդրկովկասի դպրոցների վերատեսչի օգնական Դեմենտևից: Սակայն բնորոշ է, որ Աբովյանի նկատմամբ ցարական աստիճանավորի ունեցած թշնամանքը հայահալած բնույթ է կրել: Աբովյանը սոսկումով է լցվում, իմանալով, որ իր հակառակորդին սպասում է պաշտոնի բարձրացում: Դեմենտևը փոխարինելու էր քաղաքական մեղադրանքով դատապարտված և պաշտոնանկ եղած Հեսենմյուլլերին: Աբովյանը գրում է. «Սրա տեղն այժմ կրոնի մի մարդ, որը հայերին ոխերիմ թշնամի է... Մեր բոլոր աշակերտները նրա ձեռքի տակ պիտի տանջվեն, բայց գլխավորապես հայերը և առանձնապես ես...»[2]:

Աբովյանի դեմ խոչընդոտներ են հարուցվում նաև պանսիոնի կապակցությամբ: Իշխանություններին ուղղած Աբովյանի մի շարք թախանձագին խնդրագրերը, պանսիոնի հետ կապված իր նպատակների և ցանկությունների հանգամանալի բացատրությունները մեծ մասամբ մնում են ձայն բարբառո հանապատի: Պանսիոնը բազմիցս արգելվում է և կրկին բացվում՝ երբեմն օրինական թույլտվությամբ, սակայն ավելի հաճախ ապօրինի, առանց թույլտվության՝ խլելով Աբովյանից ավելորդ ճիգեր, պատճառ դառնալով նորմալ աշխատանքի համար աննպաստ, հաճախ ջղանդագին հոգեվիճակի: Կար ժամանակ, երբ Աբովյանն ասում էր, թեկուզ իրեն թագավորություն տան՝ չի մնա հայրենիքից հեռու, սակայն Դորպատից վերադառնալուն պես համոզվեց, թե տակավին որքան անպատրաստ էր սիրելի հայրենիքը ընդունելու և նպատակահարմար կերպով գործի դնելու իր պես մեկին: Այս վհատեցուցիչ եզրակացությունը գնալով ավելի խորանում էր: Հայրենիքից հեռու հաց և հանգիստ որոնելու մտքերը կապվում են Կազանի համալսարանի հայագիտության ամբիոնի

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 111:

2 Նույն տեղում, էջ 117:

պրոֆեսորի պաշտոնը ստանալու հնարավորության հետ։ Այդ ամբիոնի միջոցով Աբովյանը մտածում էր սաներ պատրաստել հայրենիքում գործելու համար։

Սակայն գործը ձախորդ ընթացք է ունենում։ Այն բանից հետո, երբ հարգվում է Ֆրենի միջնորդությունը Կազանում հայագիտական ամբիոն հիմնելու և այդ պաշտոնի համար Աբովյանին հրավիրելու վերաբերյալ, համալսարանի կուրատորը սկզբում Հաշտարխանի հոգևոր իշխանությունների, ապա՝ Էջմիածնի Սինոդի միջոցով փորձում է կապվել Աբովյանի հետ։ Եվ քանի որ կուրատորը հարցում է անում Հովսեփ և ոչ թե Խաչատուր Աբովյանի մասին, ապա երկու տեղից էլ պատասխանում են, որ այդպիսի անձնավորության չեն ճանաչում։ Նախքան Աբովյանը այս ամենի մասին միանգամայն պատահականորեն կտեղեկանար, նույն պաշտոնի համար հանդես է գալիս Ավակով ազգանունով մեկ ուրիշ թեկնածու։ Ամբիոնը ստանձնելու նպատակով հայտարարված կոնկուրսին մասնակցելու համար Աբովյանը Գիտությունների Ակադեմիա է ներկայացնում «Նախաշավիղ կրթության» ու «Տեսական և գործնական քերականություն ռուսաց վասն հայոց» աշխատությունները։

Աբովյանը գիտեր, որ դոգմատիկ մոտեցման դեպքում ներկայացրած աշխատանքները կոնկուրսի պահանջներին չեն բավարարի, բայց նա հույսեր էր կապում այն բանի հետ, որ իր աշխատությունների, մանավորապես «Նախաշավիղի» մեջ բարձրացված նոր ուսմնական հարցերը Ակադեմիայում կհասկացվեն և կգնահատվեն ըստ արժանվույն։

Թողած պաշտոնական ճանաչված և օրինականացված հին հայերենը, Աբովյանն իր դասագիրքը գրել էր ժողովրդական կենդանի խոսակցական լեզվով, այն լեզվով, որը շուտով պիտի դառնար հիմքը նոր գրական հայերենի։ Ապա «Նախաշավիղում» հեղինակը կիրառում էր գրաճանաչման հնչական մեթոդը, որն այն ժամանակ, մեր պայմաններում «տարօրինակ» նորություն էր։

Աբովյանի նորարարական ձեռնարկումները մի նպատակ էին հետապնդում՝ հեշտացնել ուսումը երեխաների համար, մանավորապես գյուղական երեխաների համար, գիտությունն ու կուլտուրան մատչելի դարձնել լայն մասսաներին։

Դասագրքին կցված իր գերմաներեն առաջաբանում հեղինակը ազդարարում է. «Որքան էլ հին հայերեն լեզուն իր արտակարգ հարստությամբ, իր կատարելությամբ և իր գրական արժեքի կողմից բարձր լինի, այնուամենայնիվ, այդ լեզուն է միակ արգելակող պատճառը, որ խեղճ ժողովուրդը մինչև հիմա զուրկ է մնացել զարգացման միջոցներից»[1]։

Առաջին անգամ հայ իրականության մեջ այսքան պարզ ու վճռական, այսպիսի համարձակ խնդիր էր դրվում։ Հիշյալ բացատրականից երևում է, որ Աբովյանի նպատակները շատ ավելի հեռուն էին գնում, քան դպրոցական գործի մեջ կատարվելիք հեղաշրջումը։

---

[1] Խ. Աբովյան. *ԵԼԺ, հատ. 5, էջ 46։*

Աբովյանը գրում էր. «Մինչդեռ գրքի լեզուն մնացել է որպես սեփականություն հոգևորականության, որը, ինչպես նրա դասակիցները մյուս ազգերի մոտ, սկսել է այդ լեզուն էգոիստորեն դարձնել եգիպտական գաղտնիք, որպեսզի ժողովրդի աչքում ավելի դիրք ու ակնածություն ձեռք բերի։

Չափից շատ բարձր կարծիք ունենալով իրենց դասի առավելությունների մասին՝ հոգևորականները գրել և մշակել են այնպիսի բաներ, որ ոչ մի կապ չուներ ժողովրդի և ժամանակի ոգու հետ։ Նրանց ամբողջ հոգևոր գործունեության ուղն ու ծուծը կազմում են աստվածաբանական մտքերը, նույնիսկ պատմության գրքերում կամ այլ բովանդակության երկերում նրանք ամեն ինչ փորձում են վերածել աստվածաբանության։ Իսկ եթե տեղ-տեղ առիթ են ունենում երիտասարդներին դաստիարակելու, ապա նրանք ամեն կերպ աշխատում են նրանց ճաշակը դրավել միայն հօգուտ իրենց շահերի»[1]։

Սրանք ժամանակի այն արմատական հարցերն էին, որոնց Աբովյանը փոքր անց ավելի մեծ թափով և ավյունով պիտի անդրադառնար իր «Վերք Հայաստանի» վեպի ու մի շարք այլ երկերի առաջաբաններում, հարցեր, որոնց լուծում տալը նա դարձրեց իր ողջ գրական-մանկավարժական, գիտական-հասարակական գործունեության նպատակը։

Սխալ կլիներ ասել, թե Ակադեմիա ներկայացրած Աբովյանի երկերի գրախոսը՝ ակադեմիկոս Բրոսսեն չըմբռնեց ժողովրդի մտավոր վերածնության գործի համար «Նախաշավիղում» և նրա բացատրականում առաջադրվող սկզբունքի հսկայական հեղափոխիչ նշանակությունը։ Ավելին, Բրոսսեն խոր ըմբռնեց և շատ էլ բարձր գնահատեց Աբովյանի աշխատության այդ կողմը։ Բրոսսեն շեշտում է, որ հանձին Աբովյանի «Հանդես է եկել մի մարդ, որն իր վրա է վերցրել միսիա՝ լուսավորել իր ժողովրդին»։ Այդ միսիան նա անվանում է սուրբ ու նվիրական, մեծարում է Աբովյանին այն բանի համար, որ նրան իր նպատակից անկարող եղան շեղել հալածանքները։ Նա իր գրախոսականում հիշատակում է այն փաստը, որ ակադեմիկոս Ֆրենը «Նախաշավիղի» գերմաներեն բացատրականին բարձր գնահատական է տվել, ընդգծում, որ բոլոր իր կոլեգաները, որոնք ճանաչում են Աբովյանին, «տածում են նրա հանդեպ ամենաանկեղծ հարգանք»։

Բրոսսեն խոստովանում է, որ Աբովյանի ազդեցությամբ ինքը վերանայել է իր հայացքները հայոց հին և նոր լեզուների վերաբերյալ։ Բայց Բրոսսեն կաշկանդված էր իր պաշտոնական դիրքով։ Թվում է, թե այդքան որոշակի առավելություններ ընդգծելուց հետո, նա անվերապահ կերպով պիտի առաջարկեր Աբովյանին հանձնել Կազանի համալսարանի հայագիտության ամբիոնը։ Սակայն խնդրի լուծումը նա նետում է իր վրայից և նույնիսկ տարակույս հայտնում, թե՝ կարելի՞ է, արդյոք, նույնացնել բարձր գիտության և ժողովրդի լուսավորության նպատակները, հայտա-

[1] Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 5, էջ 46*։

բարելով, որ Աբովյանի «շափազանցված սերը դեպի հայ ժողովրդի լեզուն, նրան առավել պիտանի է դարձնում ուսուցչի պաշտոնի համար, որը նա այժմ ունի, քան համալսարանի պրոֆեսորի»։

Աբովյանի պատրանքները խորտակվում են։ Սակայն այս դեպքում, արդեն ի նպաստ իրեն և մեր ժողովրդի ու նրա կուլտուրայի, որքան էլ Աբովյանին հակառակը թվար։ Հազիվ թե հայ ժողովուրդը ունենար «Վերք Հայաստանին», եթե Աբովյանը ստանար Կազանի համալսարանի հայագիտական ամբիոնի պրոֆեսորությունը։

Երկար քաշքշուկից հետո վերջապես տպագրվեց «Նախաշավիղը», սակայն մնաց անօգտագործելի։ «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» աշխատության մեջ «Նախաշավիղի» անշուքության Աբովյանը գրում է. «...Նույնիսկ տպագրված է, բայց սասը տարի է, ինչ առանց գործածելու անօգուտ ընկած է... գիրքը բաց չեն թողնում հենց միայն նրա համար, որ դա գրված է հասարակ ժողովրդին՝ ընդհանուրին հասկանալի լեզվով...»[1]։

1847 թվականին գրի առած Աբովյանի այս տողերը հիմք են տալիս այն ենթադրության համար, որի համաձայն «Նախաշավիղը» ի վերջո հրադատության (աուտոդաֆեի) է ենթարկվել։

Անվերջ հալածանքների, հոգեկան խռովքի թիֆլիսյան յոթ տարիները Աբովյանի համար միաժամանակ հանդիսացան անօրինակ բեղմնավոր ստեղծագործական տարիներ։ Այդ տարիներին նա ստեղծում է իր ամենանշանակալի երկերը՝ «Վերք Հայաստանին», «Պարապ վախտի խաղալիքը», բանաստեղծությունների և պատմվածքների մի կգալի մասը, «Թեոդորա կամ որդիական սեր» դրամատիկական երկը, «Հազարափեշեն» սատիրապոեմը, չհաշված մանկավարժական բնույթի գործերը, որոնց մասին վերը խոսվեց։ Բայց ճիշտ կլիներ ասել, որ ստեղծագործական աշխատանքը ոչ միայն չէր մխիթարում, այլև առավել խորացնում էր Աբովյանի ապրած ողբերգությունը, որովհետև ոչ մի բնագավառում այնքան խոր չի բացահայտվում ժամանակի սահմանափակ ոգու և մեծ լուսավորիչի հայացքների միջև եղած անդունդը, ինչպես այդ արտահայտվում է նրա գրական գործունեության մարզում։

Աբովյանը ստեղծագործում էր առանց համոզված լինելու, թե հնարավոր է այդ ստեղծագործությունները լույս աշխարհ հանել։ Դա գրողի համար մեծագույն ողբերգություն է։ Նա իր երկերում ամենասրտառուչ խոսքերով դիմում է ընթերցողներին, իր սերն ու իղձերը հեղեղի առատությամբ թափում նրանց առաջ, սակայն, եթե չհաշվենք իր աշակերտներին և մոտիկ բարեկամներին, փաստորեն չկային նրանք, չկար ընթերցողը, հեղինակի խոսքը լսելի չեղավ լայն ընթերցողներին և ինքը՝ հեղինակը չսեց երբեք «իր ընթերցողների» շնորհակալական խոսքը, որը կարող էր այնքան արդարավոր և հուսադրող լինել նրա համար։

[1] Խ. Աբովյան. *ԵԼԺ, հատ. 7, էջ 195։*

Կ

1843 թվականի հունիսի 11-ին Անդրկովկասի դպրոցների վերատեսչությանը Աբովյանը ներկայացնում է հետևյալ դիմումը. «Տեղեկացած լինելով, որ Երևանի գավառական դպրոցի հաստիքավոր տեսչի պաշտոնակատարն արձակվում է իր ներկա պաշտոնից, ես խոնարհաբար խնդրում եմ վերատեսչությանդ փոխադրել ինձ նույն դպրոցը»[1]։

Թիֆլիսի միջավայրը Աբովյանի համար դարձել էր անտանելի։ Հետագայում, երբ արդեն պաշտոնավարում էր Երևանում, Աբովյանը դպրոցների վարչությանը հասցեագրած մի գրության մեջ ասում է. «Ստիպված եղա հեռանալ Թիֆլիսից, որ գոնե հոգեկան հանգիստ գտնեմ»։ Բայց Երևանում նրա համար ստեղծվեց շատ ավելի ծանր վիճակ, քան Թիֆլիսում էր և հենց այդ վիճակն էլ նրան տարավ դեպի խոր հուսահատություն և կործանում։

Երևանում Աբովյանն ընդունեց սաստիկ անբարեկարգ, կիսավեր շենքով մի դպրոց։ Շատ ծնողներ դպրոցից հանել էին իրենց երեխաներին, նրանց այնտեղ լինելը համարելով ժամանակի անտեղի կորուստ։ Այնքան անմխիթարական էր աշակերտների առաջադիմությունը, որ Աբովյանը անհնարին համարեց տարեվերջի հրապարակական քննություններ անցկացնել։

Աբովյանի աչքից չէր կարող վրիպել, որ այդ բոլորը հետևանք էին ոչ միայն ուսուցիչների անձեռնհասության, այլև իշխանությունների տեղական ժողովուրդների նկատմամբ ունեցած արհամարհանքի ու անտարբերության։ Ձևականորեն ինչ-որ միջոցառումներ ձեռնարկվում էին տեղացիներին «քաղաքակրթվելու» համար, սակայն բացակայում էր սրտացավ վերաբերմունքն ու անկեղծ շահագրգռությունը։ Դրա փոխարեն հետևողականորեն կիրառվում էր ռուսականացման քաղաքականությունը։ Աբովյանը շուտով համոզվեց, որ աշակերտների անբավարար պատրաստության պատճառներից մեկն էլ այն էր, որ գիտելիքները դասավանդվում էին տեղացի երեխաներին դժվարմատչելի ռուսաց լեզվով։

«Բնիկների զավակները,— գրում է Աբովյանը,— չափազանց նեղվում են չհասկանալով տրված դասերի միտքը, առանց թարգմանության և մեկնաբանության իրենց մայրենի լեզուներով»։

Տեղական լեզուների դասավանդումը ձևական բնույթ էր կրում։ Ոչ միայն այդ առարկաների համար չկային ձեռնահաս դասատուներ, այլև ինչպես Թիֆլիսի գավառական դպրոցում, այստեղ ևս բավարար քանակությամբ ժամեր չէին հատկացվում այդ առարկաներին։ Ադրբեջանցի և հայ երեխաներին ստիպում էին ռուսերեն լեզվով աղոթք սովորել, հանգամանք, որ հարկադրել էր մահմեդական դավանության երեխաներից շատերին թողնել դպրոցը։ Ամեն բանում իրեն զգալ էր տալիս գաղութարարների մեծապետական շովինիզմը։

[1] «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 94։

Կապեր էին ստեղծվել Աբովյանի՝ Թիֆլիսի և Երևանի հակառակորդների միջև։ Թիֆլիսի գիմնազիայի խորհրդի անդամ ավագ տեսուչ Ֆիլադելֆինը Աբովյանի հանդեպ ատելությամբ լի իր նամակներով հրահանգավորում էր և ղեկավարում Երևանի գավառական դպրոցի ուսուցիչ Իվանովի գործողությունները։ Նույն Ֆիլադելֆինը Աբովյանի երեսին նետում է այսպիսի խոսքեր. «Կառավարությունը ցանկանում է ոչնչացնել տեղական լեզուները, իսկ դուք ուզում եք դրանց կրկին կենդանացնել և ամրապնդել»[1]։

Հետևելով երևանյան տարիների Աբովյանի պաշտոնական գրություններին, տարեկան հաշվետվություններին, դպրոցական հանդեսներում կարդացած զեկուցումներին, կարելի է տեսնել, թե ինչպես Աբովյանը գնալով ավելի և ավելի խոր է ընկալում և բացահայտում այն երևույթները, որոնք պատճառ էին դառնում դեպի գավառական դպրոցն ունեցած հասարակության սառը վերաբերմունքին։

Դա այն շրջանն էր, երբ 1840 թվականի ապրիլի 10-ի հայտնի օրենքով վերացվել էր հայկական մարզը և ստեղծվել Երևանի գավառ, առաջ բերելով ժողովրդի գիտակից մասի հիասթափությունն ու վրդովմունքը։ Նոր վարչաձևը անտեսում էր տեղական ժողովուրդների սոցիալ-տնտեսական և ազգային-կուլտուրական շահերն ու առանձնահատկությունները։ Աբովյանի զեկուցագրերում կարելի է տեսնել հիասթափության և դժգոհության բացահայտ արտահայտություններ, կապված վերոհիշյալ դրության հետ։ Այս տեսակետից խիստ բնորոշ է 1845 թվականի հոկտեմբերի 24-ի «Համառոտ հաշվետվությունը», ուր ի միջի այլոց, ասված է. «Ուրիշ տեղերում դպրոցը գրավում է հասարակությանն իր օրենքներով և արտոնություններով, որ տալիս է քաղաքացիական կյանքում։ Այնտեղ հավաստյալ և նախօրոք հայտնի է, թե ինչ պայծառ ապագա է սպասում նրան, ով որ ձեռք է բերել գիտություն և ունի ընդունակություն։ Այդ տեղերում կրթությունը, կարծես, դարձել է հասարակական կյանքի երկրորդ հոգին, որից զրկված չի կարող մնալ ոչ մի դասակարգ։

Այստեղ, ընիկների համար, կա՞ն արդյոք այդպիսի գրավիչ և դրդիչ պատճառներ ու հանգամանքներ»։ Դրած հարցին Աբովյանը բացասական պատասխան է տալիս։

«Նախկին ժամանակները,— ասվում է նույն տեղում,— կային դեռ պատճառներ, որոնցով հնարավոր էր պահպանել ժողովրդի ոգին և գրավել նրան դեպի դպրոցը։ Ներկա Երևանի գավառը, որ առաջ նահանգ էր, բնականաբար, կարոտ էր ծառայողների մի մեծ թվի. այստեղ կարող էր սա կամ նա, որ ստացել էր միջակ կրթություն, իր համար պաշտոն և մի կտոր հաց գտնել, իսկ այժմ այդպիսիներն ուրախ կլինեին ունենալ և գրագրի պաշտոն, եթե գտնեին։ Բացի սրանից, առաջ այստեղից աշակերտներ էին ուղարկվում պետական բարձրագույն դպրոցները, իսկ այժմ այդ արտոնությունը տրվում է միայն ազնվականներին, որոնցից

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 7, էջ 196։

ամբողջ Երևանի գավառում հայերի մեջ հազիվ մի երկու-երեք ընտանիք լինեն:

Դեռ շատ ու շատ պատճառներ կան, որոնք արգելք են հանդիսանում այս երկրի լուսավորության գործի հաջող ընթացքին, որոնց մասին ես լռում եմ»[1]:

Աբովյանին որոշ չափով հաջողվում է բարձրացնել դպրոցը: Սովորողների թիվը նկատելիորեն ավելանում է: Կամենալով խորացնել սկսված բեկումը, Աբովյանը ջանքեր է գործադրում գավառական իշխանության աչքի ընկնող անձանց մասնակից դարձնել դպրոցի կյանքին, հրահրել նրանց շահագրգռվածությունը դպրոցի վիճակով: Սակայն Աբովյանի այս ձգտումը ոչ միայն չի խրախուսվում գավառական իշխանության աստիճանավորների կողմից, այլև առաջ է բերում նրանց դժկամությունը: Հայտնի է այսպիսի մի փաստ:

1845 թվականի նոյեմբերի 23-ին դպրոցի տարեդարձի հանդիսավոր երեկոյին, բոլոր աստիճանավորները, որոնք ներկա էին հանդեսին, այդ թվում գավառապետ Բլավացկին, հանկարծ թողնում են հանդեսը և հեռանում, պատրվակ բռնելով իրենց հիվանդ լինելը: Դպրոցի և իրեն՝ Աբովյանի համար վիրավորական այս դեպքի մասին վերջինս բողոք գրեց դպրոցների վերատեսչի անունով, սակայն այդ բողոքը գավառապետի համար անհետևանք անցավ, իսկ ինքը՝ Աբովյանը, հանձին Բլավացկու, վաստակեց մի կատաղի հակառակորդ: Շատ չանցած գավառապետի կողմից Աբովյանը մեղադրվեց՝ Ներսես կաթողիկոսի Երևան գալու ժամանակ, որպես թե վերջինիս տգեղ վարմունք ցույց տալու մեջ, որի համար Կովկասի փոխարքայի կարգադրությամբ ենթարկվեց երեք օրվա տնային կալանքի:

Աբովյանին վիրավորում և հուսահատեցնում էր ոչ այնքան այն, որ իր անձի նկատմամբ ցույց չէր տրվում պատշաճ վերաբերմունք, այլ առավելապես ցարական չինովնիկների անհոգի, ձևական մոտեցումը ժողովրդի լուսավորության գործի նկատմամբ:

Աբովյանին շրջապատող վայրենի կամայականությունը այնքան բացահայտ էր, որ նույնիսկ կարճ միջոցով Երևանի գավառը ժամանած գիտնական ճանապարհորդները խոստովանել են այդ իրողությունը: Համաշխարհային անուն ունեցող այդ մարդիկ՝ Կարլ Կոխը, Վագները, Հաքստհաուզենը, Բոդենշտեդտը հիացմունքի և ակնածանքի խոսքեր ասելով Աբովյանի հասցեին, արձանագրել են այն արգելքների ու դժվարությունների փաստը, որոնք ստեղծված են եղել ցարական չինովնիկների կողմից վերջինիս գործունեության ճանապարհին: Արժեքավոր է մանավանդ Կարլ Կոխի վկայությունը:

«Մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որը նման սիրով ու այնպիսի հոգատարությամբ նվիրված լինի մանուկների դաստիարակության գործին, ինչպես Աբովյանն է: Սակայն, դժբախտա-

[1] «Դիվան Խ. Աբովյանի», հատ. I, էջ 157:

բար Աբովյանին չեն ցույց տալիս արժանի վերաբերմունք։ Չինովնիկների նեղսրտությունը հաճախ ու շատ է խանդարում նրան առաջ տանելու իր ազնիվ ու բուռն ձգտումները։ Եթե Աբովյանը, իբրև գավառային դպրոցի տեսուչ, մնալ կարողանար իր գործունեության ներկա շրջանի մեջ, եթե նրան գործոն աջակցություն ցույց տան իրեն ենթակա պաշտոնյաները, այլև պահանջված չափով գնահատեն նրան, սպասելի է, որ Երևանից մի նոր լույս ծագի դժբախտ ու մոռացված, դարերով ոտնահարված հայ ժողովրդի համար»[1]։

Իսկ Բոդենշտեդտը ոչ միայն դիտել է Աբովյանի գործունեության ճանապարհին ստեղծված արհեստական արգելքները, այլև բացահայտել է երևույթի քաղաքական ատատը։ Առաջ բերելով Ս. անվանատառով հիշատակվող ինչ-որ ռուս գեներալի խոսքերը այն մասին, թե «եթե հայերը կամենում են սովորել, թող սովորեն ռուս լեզվով, եթե կամենում են աղոթել, թող աղոթեն ռուս լեզվով», բանաստեղծն իր կողմից ավելացնում է. «Պարզ է, որ Աբովյանը չնայած իր ընդունակություններին և մեղմաբարո բնավորությանը, Ռուսաստանում անկարող է իրականացնել իր երազանքը»։

5

Նույնքան տխուր պատկերներ էին կանգնում Աբովյանի առաջ, երբ նա ծանոթանում էր հասարակական այն խավի կուլտուր-տնտեսական վիճակին, որի շահերը ամենից ավելի էին մոտ նրա սրտին՝ գյուղացիության վիճակին։ Նրա գործունեությունը և հասարակական շահագրգռությունները չէին սահմանափակվում դպրոցի շրջանակներով։ Աբովյանը մեծ պահանջ էր զգում լինել ժողովրդի մեջ, աշուլիս անել նրա հետ, սովորել նրանից, սովորեցնել նրան, իմանալ նրա կյանքն ու ապրումները։ Նա հաճախակի իր աշակերտների հետ էքսկուրսիաներ էր կատարում դեպի Հայաստանի հնությունները, շատ էր շրջագայում մասնավորապես եվրոպացի ճանապարհորդների հետ. լինում էր հայրենի երկրի այլևայլ գավառներում։

Էական փոփոխություն չէր մտել գյուղացու տնտեսական վիճակի մեջ։ Նրա աշխատանքի պայմանների, արտադրաեղանակի, կենցաղի, նիստ ու կացի, բարոյական ըմբռնումների մեջ։ Գյուղացին մնում էր հին նահապետական եղանակով՝ չութով հող չանկողը։ Այս իրողությունը Աբովյանի համար տխուր խոհերի և խորհրդածությունների առիթ էր դառնում։ Թեև Թիֆլիսում գոյություն ուներ «Անդրկովկասյան տնտեսական ընկերություն», որը պետք է աջակցեր երկրում արդյունաբերության և գյուղատնտեսության բարձրացմանը, սակայն շատ հաստատությունների պես այդ ընկերության գոյությունն էլ ձևական բնույթ էր կրում։

Սենատոր Հանի հետ 1838 թվականին Հայաստանում կատարած ուղևորության ժամանակ Աբովյանը Նոր-Բայազետ մտավ այնտեղ տեղի

[1] «Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին», Երևան, 1941, էջ 47։

ունեցած հայտնի դեպքերի թարմ հետքերով։ Գյուղացիների խռովությունը արդեն ճնշված էր, խռովության պարագլուխներին բանտ էին նետել, այդ թվում ժողովրդի կողմից սիրված Բարսեղ աղային։

Իր ճանապարհորդական նոթերում Աբովյանը գրում է. «...Գնացաք ի Գեօքչայ կամ ի հին քաղաքն Գեղարքունի, ուր բնակին գաղթական Հայք բայազետցիք, որոնց իշխանաւորք յարուցեալ զամբաստանութիւն ընդդէմ հարկապահանջութեան տէրութեան ի կապանս, կային յամրոցին Երևանի, բազմուք չունելով զյոյս փրկութեան. ...Ի մտանելն մեր ի քաղաքն՝ ելին ընդառաջ մեր ծնողք և ազգականք խղճալի բանտարկելոց կական բարձեալ և արտասուօք հայցելով ի նմանէ զհնարս փրկութեան»։ Եվ ապա՝ «Յայս սակս բոլոր բնակիչք քաղաքին միաձայն աղաղակէին տանել զամենեսուն զնոսա և զամենայն որդիս նոցա ի գերութիւն, այլ միմիայն ազատել զԲարսեղ աղայն»։ Կամենալով անշուշտ թե բացատրել և թե արդարացնել ժողովրդական այդ ընդվզումը ընդդեմ տերության, Աբովյանը գրում է. «Ողորմելի բնակիչք տեղւոյս... անկյալ կան ի վերջին չքավորության...»[1]։

Դեռևս 40-ական թվականների առաջին կեսին Աբովյանին սկսեց պաշարել հուսախաբությունը միապետական Ռուսաստանից, հուսախաբություն, որը հետզհետե ավելի ու ավելի խորացավ։ Գրողի երևանյան գործունեության վերջին տարիները հույսերի վերջնական խորտակման տարիներ էին։ Այդ շրջանի մի շարք վավերագրերը ցույց են տալիս, թե ինչպես է հասունանում նրա հոգեկան ճգնաժամը, ինչպես է քայլ առ քայլ մոտենում ողբերգական հանգուցալուծումը։

1846 թվականին Մկրտիչ Էմինին գրած նամակում Աբովյանը արձանագրել է. «Ես վերջացուցի համարեա թե՝ նպատակ կենաց»։ Հանուն իր ժողովրդի լուսավորության գործելու անհուն ցանկությամբ և եռանդով լցված Աբովյանի համար մահվան չափ ծանր մի եզրակացություն էր այդ։ Բայց այդ եզրակացությունը հիմնված էր նույնքան ծանր և հուսահատական մի այլ եզրակացության վրա։ Նույն նամակում նա գրում էր. «Անհնարին է ընդդեմ խթանի աքացել...»[2]։

Մեծ լուսավորչի ճանապարհին առաջացած քաղաքական-հասարակական արգելքները արդեն զինաթափ էին անում նրան։ Եվ սակայն դարձյալ չի կարելի ասել, թե նա հեշտությամբ վայր դրեց զենքը։ Այդ տարիներին Աբովյանը ավելի շուտ նման է կրակե օղակի մեջ գտնվող մարդու, որը այս ու այն կողմ է նետվում՝ ելք գտնելու համար։ Նա մերթ վերադառնում է տարիներ առաջ ունեցած մտքին՝ հայրենիքին օգտակար լինել հեռվից՝ գործունեության ասպարեզ որոնել Ռուսաստանում կամ Գերմանիայում։ Մերթ երազում է իր երկրագործ պապերի և հայրերի արդար և ազնիվ վաստակի ուղին բռնել՝ վերադառնալ գյուղ և հայ երկրագործին

---

1 Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 7, էջ 61*։

2 *«Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 83*։

օգնել նոր գիտական եղանակով տնտեսություն վարելու օրինակ տալու միջոցով։

Ամենաողբերգականը Աբովյանի կյանքում սակայն այն փաստն էր, որ նա մի պահ մտածեց կրկին վերադառնալ եկեղեցու գիրկը, միայն թե ազատվեր ստորացնող և վիրավորական այն պայմաններից, որոնց մեջ նա դրված էր իբրև պետական պաշտոնյա, իբրև Երևանի գավառական դպրոցի տեսուչ։

Աբովյանը մի պահ հույսեր է կապում նորընտիր կաթողիկոս Ներսես Աշտարակեցու հետ, որը ժամանակին խոշոր դեր էր կատարել Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու գործում։ Աբովյանն այցելում է նրան և խնդրում՝ էջմիածնի միջոցով իր սաներից տասը հոգու ուղարկել Բեռլին՝ բարձրագույն կրթություն ստանալու։ Դա Աբովյանի մեծագույն իղձերից մեկն էր։ Նա մտածում էր իրենից հետո թողնել փոխարինողներ, իր սկսած գործի շարունակողներ։ Աշտարակեցին խոստանում է կատարել Աբովյանի այդ ցանկությունը։ Աբովյանին տիրում է արտակարգ ոգևորություն։ Նա առանձին եռանդով սկսում է պատրաստել բարձր դասարանի իր աշակերտներին այդ նպատակի համար։ Բայց Աբովյանը ստիպված էր հայրապետին մի քանի անգամ հիշեցնել իր խոստումը, քանի որ նա այդ խոստումը իրականացնելու ուղղությամբ քայլեր չձեռնարկեց։ Երբ վերջին անգամ Աբովյանը նույն հարցով ներկայանում է կաթողիկոսին, վերջինս նրան ընդունում է շատ սառը և ասում կոպտաբար. «Օրհնած, ինչ անհանգիստ մարդ ես, քեզ մի բան ասացին, այլևս ձեռք չես վեր առնում»։ Հարվածը ծանր էր, հիասթափությունը կատարյալ։ Կաթողիկոսից մերժված Աբովյանը վերադառնում է էջմիածնից, հուսախաբ անելու ուրախ համբավի սպասող իր աշակերտներին։

Պետք է կարծել, որ Աբովյանի Ներսես Աշտարակեցուն ուղղված վերջին հայտնի նամակը գրելու առիթը հանդիսացել է հենց այս փաստը։ Սա նրա վերջին դատապարտության խոսքն էր ասված հայ հոգևորականությանը և կաթողիկոսին, ինչպես նաև վերջին հուսահատական եզրակացությունը նոր տիրապետողների մասին, որոնց մուտքը Հայաստան այնքան փառավոր և հուսադրիչ եղավ, իսկ տիրապետության անցած երկու տասնամյակը այնքան անփառունակ և վհատեցուցիչ։

«...Չեմ կարող լռել այն մասին,— գրում է Աբովյանը հիշյալ նամակում,— որի մասին քարերն են աղաղակում, ես չեմ կարող սրտումս թաքցնել այն, որի կսկծեցնող ցավը զգում է ամեն մի հայրենասեր տանջվելով և միշտ էլ պիտի ցավի այրվելով։ Ինչո՞ւ են խաբում մեզ Կովկասի կեղծավոր լրագրերը, թե մեր ազգը փառքի ու բարերախտության մեջ է, որ իրականում օղաձայն շաինդ է միայն... Ի՞նչ բարերախտություն ներկայումս և ապագայում, քանի որ քաղաքական բռնակալության լծի վերանալուց հետո, այժմ խառնարարոյության, ժողովրդի բարքերի ապականության լուծը, խաբեբայությունը առևտրական գործերի մեջ, սիրո սպառումը կրոնի և ընկերների հանդեպ, որոնք քրիստոնեական դավանանքի

առաջին օրենքներն են, ատելություն իրար հանդեպ, ամեն կարգի ու տեսակի վարքի ապականություն՝ մեր հայրենիքի ազատության քսան տարվա ընթացքում էլ ավելի արմատացած են երևում... Եվ ի՞նչն է այս բոլորի աղբյուրն ու պատճառը, եթե ոչ տգիտությունը, որ զորեղ բռնակալության ներքո սասանում էր, իսկ այժմ օրենքի պաշտպանության վաբագույրների տակ, ինչպես անբուժելի ժանտախտ վարակել և գրավել է ամենքի սիրտն ու հոգին»[1]։

Աբովյանը մեղադրում է կաթողիկոսին, որ նա կրթության հոգսը թողած միջոցներ և եռանդ է վատնում այն բանի վրա, որպեսզի վանքի գոմեշներն ու էշերը ... զովանան լճերի մեջ և պարարտանան մեծակառույց գոմերի մեջ»։ Աբովյանը գրում է. «Պոլսում, Զմյուռնիայում անտերունչ ազգը կազմում է ընկերություններ, ինքնահորդոր կոհարերությամբ դըպրոցներ է բացում բարբարոսների ժանիքների մեջ, էջմիածնում ազգի հավատի և լույսի աղբյուրին կից մեծացնում են գոմշագյոլը և բարեկարգում անասունների գոմը[2]։ Տաճկաստանում և Վենետիկում ջանում են լուսավորությամբ հուշակել և բարձրացնել ազգի անունը, Հայաստանում հավատի և՛ աթոռակալները, և՛ ատենակալները քնելու, պարապության, խռովարարության, ծուլության, բամբասանքի և որկրամոլության մեջ ջանում են գերազանցել միմյանց։ Ո՞րտեղ է այստեղ բարեբախտությունը, ո՞ւր է ազատության՝ իր անգին հատկության արժանի արդյունքը»։ Եվ այնուհետև թունալի հեգնությամբ բացականչում է. «Թող այժմ խաբեբա լրագրերը դարձյալ շարունակեն մեզ ցույց տան իրենց կեղծ ու պատիր դիմակները. Նրանք միայն շահ են որոնում և մարդկանց հաճելի լինելու համար խոսում, որ և ստում են»[3]։

Աբովյանը նամակի տակ չի ստորագրում և բացատրում է, թե ինչու. «Գրածիս տակը չեմ դնում անունս ... Եվրոպայի տերությունների մեջ ուրախ են լինում, ով արդարն է խոսում և մտածում, չգիտեմ այստեղ ինչպես է...»[4]։

Նամակի անստորագիր լինելը բավական չէր, իհարկե, նրա հեղինակին քողարկելու համար։ Ինչպիսի՞ն կլիներ իր հանդուգն ելույթի պատիժը, ահա մի հարց, որ ըստ երևույթին մտատանջել է Աբովյանին։ Այդ բանի հետ կարող էր կապված լինել ցարական իշխանության կողմից կալանավորվելու և Սիբիր աքսորվելու հենց այդ օրերին Աբովյանին պաշարած երկյուղը։ Բայց տեղի ունեցավ այն, ինչ ամենից անհավանականն էր։ Ճանաչե՞ց արդյոք Աշտարակեցին նամակի հեղինակին, թե նամակի և նրա հեղինակի բարոյական ուժը կաշկանդեց նրան։ Կաթողիկոսը ոչ միայն Աբովյանի հանդեպ չձեռնարկեց հալածանք, այլև նրան հրավիրեց ստանձնելու Ներսիսյան դպրոցի տեսչի պաշտոնը։

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 2, էջ 51—52։

2 Կաթողիկոսը այդ ժամանակ զբաղված էր վանքի անասունների համար նոր բարեկարգ գոմ կառուցելով և էջմիածնի լիճը («գոմշագյոլը») ընդարձակելով։

3 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 2, էջ 52։

4 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 191—192։

Դպրոցների մասի վերատեսչի 1848 թվականի մարտի 11-ի հրամանագրով Աբովյանը, համաձայն իր դիմումի, ազատվում է Երևանի գավառական դպրոցի տեսչի պաշտոնից, որպեսզի փոխվի. մեկնի Թիֆլիս՝ կաթողիկոսի առաջարկած պաշտոնը ստանձնելու համար։ Նրա տեղը ժամանակավորապես նշանակվում է Տուրկեստանովը, որը մարտի վերջերին արդեն Թիֆլիսից մեկնել էր իր նոր պաշտոնատեղին՝ Երևան։

Տակավին չէին ավարտված դպրոցն իրեն փոխարինողին հանձնելու գործողությունները, երբ Աբովյանը ապրիլի 2-ին, վաղ-լուսաբացին դուրս է գալիս տնից և այլևս չի վերադառնում։

Էմիլիա Լոռզեի տված ցուցմունքի համաձայն անհայտանալուց առաջ՝ 2 օր շարունակ նա տխուր խոհերի մեջ է եղել, չի կերել, չի քնել։ Այնուհետև թե մնացած նրան գտնելու նպատակով ձեռնարկված որոնումները արդյունք չտվին։ Մեծ մարդու և գրողի անհայտացման շուրջը հյուսվեցին հավանական և անհավանական զրույցներ...

Անդրկովկասյան իրականության մեջ Աբովյանը ներկայացուցիչն էր այն ազատախոհ սերնդի, որի ներկայացուցիչները Ռուսաստանում հանդիսացան դեկաբրիստները, Գրիբոեդովը, Պուշկինը, Լերմոնտովը, Բելինսկին, Գոգոլը և ուրիշներ։ Սրանցից յուրաքանչյուրը յուրովի դարձավ նիկոլաևյան դաժան դարի զոհը։ Այդ բիրտ ու խավար ժամանակների զոհն էր նաև Աբովյանը։

Պատահական չէ, որ ժողովուրդը Աբովյանի անհայտացման առաջին իսկ օրերին, նրա կյանքի վախճանը կապում է սև կառետով Սիբիր աքսորվելու հետ։ Առավել բնորոշ է Աբովյանի անհայտացման ժողովրդական մի այլ վերսիան, որի համաձայն անհայտ բացակայող Աբովյանին տեսել են Արարատի ստորոտում, ժայռին կռթնած՝ լաց լինելիս։ Երբ նրան հարցրել են նրա վշտի պատճառը, պատասխանել է, թե գրազ է եկել ռուս թագավորի հետ, որ եթե ինքը բարձրանա Արարատի գագաթը, թագավորը ազատություն կտա հայ ժողովրդին։ Եվ քանի որ նա անկարող է եղել բարձրանալ Արարատի գագաթը, ուստի վշտից ու հուսահատությունից գլուխն առել ու հեռացել է աշխարհից ... Այստեղ բնութագրված է ինքը՝ մեծ հայրենասեր Աբովյանը և այն ողբերգությունը, որը ուղեկցեց նրան ամբողջ կյանքի ընթացքում, մինչև նրա խորհրդավոր անհայտացումը։

6

Հարուստ և բազմակողմանի է Աբովյանի թողած գրական ժառանգությունը։ Բացառիկ է այն հայ գրականության մեջ ունեցած իր նշանակությամբ։ Աբովյանը գրել է գրական բոլոր ժանրերով, ինքն իսկ հանդիսանալով հիմնադիրը մի շարք ժանրերի։ Աբովյանը գրել է լիրիկական բանաստեղծություններ՝ ամենաբազմազան թեմաներով, արվեստի ու ձևի բազմապիսի արտահայտություններով։ Նա է ստեղծողը, բառիս իսկական իմաստով, հայ գեղարվեստական արձակի՝ պատմվածքի, նովելի, ակ-

նարկի, խրատական առակաձև զրույցի, մեծածավալ վեպի, այդ թվում մանկավարժական վեպի։ Նրա անվան հետ է կապվում պատմա-աշխարհագրական ակնարկի ստեղծումը։ Աբովյանը փորձեր է կատարել դրամատուրգիայի բնագավառում։ Նա մեզ թողել է ուղեգրական գրականության սքանչելի նմուշներ։ Մի ամբողջ հատոր է կազմում Աբովյանի Դորպատյան օրագրերը, որն իր տեսակի մեջ մեր գրականության ուշագրավ երևույթներից է։ Աբովյանն է առաջին հայ մանկական գրողը։ Աբովյանի ժառանգության մի ուշագրավ բաժինն են կազմում նրա գիտական-մանկավարժական աշխատությունները՝ դասագրքերը, ուսումնասիրություններ՝ պատմական, կենսագրական, լեզվագիտական։ Բացառիկ կարևորություն են ներկայացնում նրա ուսումնասիրությունները բրդագիտության ասպարեզում։

Աբովյանը որպես նորարար է հանդես գալիս նաև ֆոլկլորի և ազգագրության ասպարեզում։ Թե մեկը և թե մյուսը Աբովյանին զբաղեցնում էին իբրև գրական ստեղծագործության համար կարևոր նախադրյալների։ Աբովյանն առաջինն էր հայ գրականության մեջ, որ խորապես գիտակցեց ժողովրդական կյանքի, կենդանի խոսք ու զրույցի, առակի և առածի նշանակությունը գրողի և գրականության համար։ Աբովյանը ժողովրդի մարդ էր, իր ստեղծագործության ակունքներով ու ոգով սերտորեն կապված ժողովրդի հետ։ Նա առաջինն ըմբռնեց, որ ժողովրդի հետ կապված արվեստը միայն կարող է լինել կենսունակ, իսկական արվեստ։ Աբովյանի այդ գիտակցությունը ոչ թե պատահական մոմենտ էր, այլ նրա լուսավորական դեմոկրատական աշխարհայացքի բնորոշ արտահայտություններից մեկը։

Աբովյանի ստեղծագործությունը ունեցել է իր զարգացումը, նրա ստեղծագործական ուղին սկիզբ առնելով կլասիցիզմից, գրքից և գրքայնությունից՝ ընթացել է դեպի կյանքը, դեպի ժողովրդական հոծ զանգվածների՝ իր խոսքով ասած «հարիր հազարի» կյանքի վերապատկերումը, նրանց խոհերի և հույզերի, կարիքների և երազանքների արտացոլումը։ Բնորոշ է այդ տեսակետից Աբովյանի պոեզիայի անցած ճանապարհը։

Անցյալ դարի 20-ական թվականները հայկական կլասիցիզմի տիրապետության ժամանակաշրջանն էր։ Կլասիցիստական գրականությունը հեռու էր կանգնած ժողովրդից ոչ միայն իր լեզվով, այլև իր բովանդակությամբ և արվեստով։ «Ինչ կա՝ եկեղեցու վրա ա, աստծու ու սրբերի»— հետագայում իր «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում այսպես է Աբովյանը բնորոշել այդ գրականության բովանդակությունը։ Կլասիցիստական պոեզիան գերազանցապես սնունդ էր ստանում Աստվածաշնչից և կրոնական դոգմաներից։ Այդ պոեզիայի մեջ կենդանի մարդկանց հաճախ փոխարինում էին սրբերն ու հրեշտակները։ «Հեռու ուրեմն ամենայն ինչ որ աշխարհական է. հեռու հայրենի աշխարհ և քաղաքական կյանք, և դեռ սրբեր ու սրբեր միայն»[1],— գրում է Մ. Աբեղյանը այդ շրջանի մխի-

---

1 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2, Երևան, 1944, էջ 484։

թարյան պոեզիայի մասին։ Միակողմանի կլիներ սակայն կլասիցիստական գրականության գնահատականը, եթե կրոնա-եկեղեցական թեմայի կողքին անտեսվեր այդ գրականության հայրենասիրական թեման, որը դրսևորվում էր հայրենիքի «անցյալ փառքերի» դրվատման, հայ ժողովրդի պատմական հերոսական անցքերի և անձերի վերհանման միջոցով։

Հայրենասիրական և կրոնասիրական թեմաները հաճախ հանդես էին գալիս միասնաբար, կրոնասիրությունը նույնացվում էր հայրենասիրության հետ, հայրենասիրությունը զգալի չափով ենթարկվում էր կրոնական գաղափարին։

Կլասիցիստական պոեզիան թույլ էր արվեստով։ Կենդանի, պատկերավոր, հուզաթաթավ խոսքը այնտեղ փոխարինված էր չոր հանդիսավորությամբ, ոճի վերամբարձությամբ, փքուն, ծանրաշարժ և ծանրամարս խոսքով։ Հաճախ պարտադիր համարվող բռնահանգն ու բռնակարգը, ակրոստիկոսը, ավելի ևս ավլսնազրկում էին ոտանավորը, դարձնում այն լոկ մեխանիկական հորինվածք։

Աբովյանը գրական ասպարեզ մտավ իբրև բանաստեղծ։ Նա իր անդրանիկ ոտանավորները գրի առավ 1824 թվականին։ Անխուսափելիորեն նա պիտի տուրք տար ժամանակաշրջանին և տրադիցիային։

Ձոներգեր նվիրված ժամանակի նշանավոր հոգևորականներին և աշխարհիկ անձանց, «Վեհին բնական» մայր աթոռի գովք, փառաբանություն Նոյի, ահա թեմաներ, որոնք մի պահ զբաղեցնում են Աբովյանին, պայմանավորում նրա բանաստեղծությունների բնույթը՝ թե ըստ բովանդակության և թե ըստ ձևի։ Ձոներգը ժամանակի ամենատարածված ժանրն էր։ Այն լայն կիրառում էր գտնում մխիթարյան վանական-բանաստեղծների երկերում։ Այդ նույն բնույթն ունեին «Մուղայլք Արարատյան» և «Երեխայրիք» ժողովածուներում զետեղված Լազարյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի սաների ոտանավորները։ Աբովյանի ոտանավորների լեզուն գրաբար էր։ Նրա ձոներգերից մեկը գրված էր իբրև ակրոստիխ, ուր կարդացվում էր ոտանավորի հերոսի անունը։ Սրանք պատահական զուգադիպություններ չէին, այլ բնորոշ փաստեր, որոնք ցույց էին տալիս՝ իր սկզբնավորման շրջանում՝ Աբովյանի պոեզիայի կապը հայ կլասիցիստական գրականության հետ։ Սակայն կլասիցիզմը Աբովյանի պոեզիայում տևական շրջան չի կազմում։ Հաղթահարելով կլասիցիզմի սահմանափակությունը, Աբովյանի պոեզիան, կարելի է ասել, հենց սկզբից ժամանակի պաշտոնական գրականությունից տարբերվելու տենդենց հայտաբերեց։ Նրա ամենաառաջին բանաստեղծություններից մեկը «Վարդատություն նախնի վայելչաբանց հայրենեաց իմոցը», արդեն իսկ աչքի էր ընկնում աչրիվ քաղաքական բովանդակությամբ, հայրենասիրական-ռոմանտիկական վերասլացումով։

Փառավոր անցյալի ֆոնի վրա բանաստեղծին սաստիկ դառն ու տխուր է երևում երկրի ներկա վիճակը։ Սակայն ուշագրավն այն է, որ անցյալի փառավոր վիճակի բացատրությունը նա տեսնում է հանուն իր ազատության, ժողովրդի մղած հերոսական պայքարի մեջ։ Հեղինակի

առաջ կանգնում է այդ պայքարի և ազատության սիմվոլը՝ Վարդանը։ Անձնազոհ հերոսը իր օրինակով ներշնչում է բանաստեղծին՝ «Տալ զկեանս ի զոհ սիրո Հայրենեաց»[1]։

Ի տարբերություն մխիթարյան բանաստեղծների և բուն հայրենիքից ու ժողովրդից հեռու ապրող գաղութահայ այլ քերթողների Աբովյանը այն առավելությունն ուներ, որ ինչպես պարսից տիրապետության տակ գտնվելու ժողովրդի կյանքի դառն ու դաժան օրերին, այնպես էլ երկրում կատարվող քաղաքական մեծ իրադարձությունների պահին՝ ռուս-պարսկական պատերազմի ժամանակամիջոցին, նա ժողովրդի հետ էր, ականատես և վկա նրա նահատակության ու հերոսության, ազատության նրա դարավոր տենչերի իրականացմանը։ Աբովյանը ապրում էր մեծ իրադարձությունների ոլորտում և նրա գրական առաջին քայլափոխերը զուգադիպեցին այդ իրադարձություններին։ Սրանով էլ պայմանավորվեց մեր գրականության համար այն նշանակալից փաստը, որ Աբովյանի պոեզիան երկար կանգ չառավ և չմնաց կլասիցիզմի շրջանակներում ու հենց իր առաջին էտապում ի հայտ բերեց այնպիսի գծեր, որոնք հատկանշում էին ռոմանտիզմի մուտքը մեր գրականության մեջ։ Այսպիսով կլասիցիզմից ռոմանտիզմին անցնելու պրոցեսը մեր գրականության մեջ կապվում էր պատմա-հասարակական նոր էտապում սկիզբ առնող ազգային-ազատագրական շարժումների հետ, դառնում այդ շարժման մեջ ներգրավվող մասսաների, նրանց ազգային ինքնագիտակցության, ազատագրական տենչերի արտահայտության միջոցը գրականության մարզում։

Ռուսական տիրապետության տակ անցնելու փաստը ինչպես ժողովրդի, այնպես էլ նրա տենչերն արտահայտող երգչի՝ Աբովյանի կողմից դիտվում է որպես քաղաքական վերածննդի սկիզբ, նկատվում մի անհրաժեշտ էտապ հայերի իբրև ազգ և պետականություն ձևավորվելու ճանապարհին։ Պատմական այդ մեծ պահին Աբովյանը բանաստեղծությունների մի ամբողջ շարք է նվիրում։ «Խնդամիտ զգացմունք...» բանաստեղծության մեջ «Ո՜հ, դար երջանիկ»... «Ո՜հ, չքնաղ գարուն»... որակումներ է տալիս բանաստեղծն իր հայրենիքի համար սկիզբ առած նոր ժամանակին։ Չկան այլևս վաղեմի տխուր պատկերները, կյանքը դարձել է «հանդես նորահրաշ», ժողովրդի սրտում հանգել, լռել են լացն ու կականը։ Հրաշք թվացող նոր կյանքը ուրախությամբ է ողողել նաև հայի փշտերով գերեզման մտած անցյալի մեծ զավակների հոգիները։ «...Կընքեաց զիւր ողբերգ Մովսես Խորենեան,— ասում է բանաստեղծը,— զի յառաջ կացցեն, երգեսցեն մուզայք տանն Արարատեան»[2]։

«Մուտ Հայկայ ի Հայաստան» բանաստեղծության մեջ Աբովյանը ոգեկոչում է Հայկ Նահապետին։ Վերջինս մայրենի հողի վրա տեսնելով ռուսներին, չի կարողանում որոշել՝ «թշնամիք են, թե ընտանի»։ Բայց ահա, «որդիք և թոռունք Հայկայ» պատասխանում են.

---

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 1, էջ 15։

2 Նույն տեղում, էջ 22։

«Թշնամիք քո փաղուց ի չիր
Դարձեալ կորեան, անոյշ մեր Հայր.
Այս բարերար Ռուսիայ որդիք
Նկին բերել մեզ նոր այս դար»[1]:

Աբովյանի վաղ շրջանի պոեզիան տարբերվում էր ժամանակի պաշտոնական գրականությունից ոչ միայն իր արծարծած խնդիրների այժմեականությամբ, այլև ոտանավորի ճկունությամբ, բանաստեղծական պատկերի կենդանությամբ, գաղափարի և մտքի որոշակիությամբ։ Սակայն հայ կլասիցիստական պոեզիայի մի բնորոշ գիծը՝ գրաբար լեզուն, Աբովյանի կողմից չհաղթահարվեց ինչպես նրա գրական առաջին քայլերի ընթացքում, այնպես էլ մինչև հաջորդ տասնամյակի երկրորդ կեսը, հնայած ժողովրդական-խոսակցական լեզվով գրելու նրա առանձին փորձերին։

Հիշյալ ժամանակաշրջանում տակավին Աբովյանի առաջ չէր ծառացած այն հարցը, թե ո՞ւմ համար էր գրում ինքը, ո՞րն է իրեն ունկնդրող լսարանը, իր ընթերցողը։ Նա դեռևս չի արծարծում այն հարցը, թե ժողովրդի հանդեպ ի՞նչ խնդիր ու պարտականություն ունեն գրողն ու գրականությունը։ Եվ քանի որ նրան դեռևս չէր զբաղեցնում այդ կարևորագույն հարցը ու դեռևս չէր տրված այդ հարցի պատասխանը՝ դեմոկրատական լայն մասսաների կուլտուրական շահերի դիրքերից, խոսք չէր կարող լինել մեր գրականության մեջ այն արմատական շրջադարձի մասին, որ պիտի կատարվեր և կատարվեց Աբովյանի իսկ միջոցով՝ միայն 40-ական թվականների սկզբին։ Գրականության մեջ կատարվելիք արմատական հեղաշրջման պատմական անհրաժեշտության գիտակցմանը Աբովյանը հասավ ստեղծագործական երկար որոնումներից հետո։

Արդեն Աբովյանի նախադորպատյան շրջանի պոեզիայում նշմարվում է մի այսպիսի ուշագրավ երևույթ։ Եթե այդ պոեզիայի մի երակը սկիզբ էր առնում կլասիցիզմից, ապա երկրորդ երակով այն կապվում էր մեր միջնադարյան, ինչպես նաև գուսանական ժողովրդական պոեզիայի հետ։ Այսպես, օրինակ, Աբովյանի հիշյալ շրջանի սիրային բանաստեղծությունների մի ամբողջ փունջ, որոշակի կերպով իրենց վրա կրում են Պետրոս Ղափանեցու և Պաղտասար Դպիրի սիրային տաղերի ազդեցությունը, Իսկ նրանց միջոցով նաև մեր ժողովրդական պոեզիայի ազդեցությունը։ XVIII դարի վերոհիշյալ բանաստեղծ-գուսանների ստեղծագործությունների նման, այդ ոտանավորները ևս գրված են իբրև երգեր, հարմարեցված գուսանական հայտնի տաղերի չափերին ու եղանակներին։ Այդ ոտանավորների նման Աբովյանի գործերն էլ ունեն կրկներգեր։ Իսկ վերջում՝ գուսանական երգերում շատ տարածված ձևով, այդ ոտանավորների մեջ հիշատակվում է նրանց հորինողի անունը։ «Տաղ ուրախութեան ի գոյն առաւոտեան» սիրերգը վերջանում է այսպիսի բնորոշ քառատողով.

1 **Խ. Աբովյան**, *ԵԼԺ, հատ. 1, էջ 61։*

«Ի դուռն մահու մերձեալ ահա տեսանիմ,
Գերեալ սիրովդ այսր անդր՝ անկանիմ,
Խաչատուրս ցաւօք սիրոյդ տատանիմ,
Չի գէթ տացես դու մխիթար սրտի իմ»[1]։

Մի այլ օրինակ՝

«Խաչատուրս մերձ եմ ահա մեռանիլ,
Արի՛, ե՛կ, տես գոնեա՛ զմահս սիրելի»[2]։

«Տաղ ի գոյն ի սէր քո նազելիոյն» բանաստեղծության յուրաքանչյուր տուն կառուցված է չորս հիմնական տողերից և մեկ տող կրկներգից։ Իսկ վերջին տան չորրորդ տողում դարձյալ շեշտվում է երգը հորինողի անունը.

«Խաչատուր՝ անուն իմ, դարձեալ յիշեցի զի մի մոռացի...»[3]։

Աբովյանի այս սիրերգերը աչքի են ընկնում ժողովրդական ստեղծագործությանը հատուկ պարզությամբ, հստակ ու կուռ կառուցվածքով։ Նրանք կարճ են, սակավաբառ, սակայն լի են ապրումով, ջերմ են և հուզառատ։ Սիրուց տանջված պոետի կենդանի, թրթռուն սրտից են բխած այդ երգերը։ Սրանք գրված են շատ ավելի պարզ գրաբարով։ Որոշ դեպքերում այդ բանաստեղծությունների լեզուն հիշեցնում է միջին հայերենը։ Թեման և ժողովրդական արվեստի թեկուզ հեռավոր ազդեցությունն իրենց բարերար ներգործությունն են ունեցել նաև այդ գործերի լեզվի վրա։

Նախադորպատյան շրջանի Աբովյանի պոեզիայի ուսումնասիրությունը բացահայտում է մի հետաքրքրական փաստ ևս։ Աբովյանը ծանոթ է եղել ժամանակի աշուղների, թերևս նաև Սայաթ-Նովայի ստեղծագործություններին և դրանց ազդեցությամբ գրել է մի շարք «հաղեր», որոնցից դժբախտաբար մեզ հասել են միայն առանձին բեկորներ։ Հայտնի է, թե «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում» և այլ առիթներով Աբովյանը ինչպիսի բարձր կարծիք է հայտնում աշուղների և նրանց արվեստի մասին։ Նա լավ գիտեր, թե ժողովրդի կյանքի այդ հարազատ արտահայտիչները որքան են սիրված ժողովրդի կողմից։ Աբովյանը շատ անգամ է ականատես եղել, թե ինչպես մեջլիսում, կամ հարսանքատանը ժողովուրդը «հայիլ-մայիլ» լսում է աշուղին, ինքն էլ, անշուշտ, շատ անգամ է զմայլվել նրանց տպավորիչ պատմություններով, երգերով և նվագածությամբ։ Մանավորապես Թիֆլիսում, ուր աշուղական մրցումներն ու մեջլիսները ժողովրդի կենցաղի անհրաժեշտ մասն էին կազմում, պատանի Աբովյանին հաճախ պիտի հրապուրած լինեն այդ զվարճալի հավաքույթները։ Ահա այս հետքերով պիտի գնալ պարզելու համար, թե ինչ ճանապարհով կարող էր տեղի ունենալ Աբովյանի ծանոթությունը Սայաթ-Նովայի և նրա դպրոցի ուրիշ աշուղների ստեղծագործությունների հետ։

---

1 Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 1, էջ 33։*

2 *Նույն տեղում, էջ 34։*

3 *Նույն տեղում, էջ 42։*

Եթե Աբովյանի՝ վերը քննության առնված սիրային բանաստեղծությունների շարքը միայն առանձին կողմերով է հիշեցնում աշուղական պոեզիան, ապա սայաթնովայական շնչով գրված նրա բանաստեղծությունը աշուղական երգի մի օրինակելի և կատարյալ նմուշ է, ըստ ամենայնի։

Ջանումըս ջան չի՛ մնաց, որ իմ ահվալն քեզ ասեմ.
Բերանս խոսք չի՛ գալիս, որ իմ խիալն քեզ ասեմ.
Թոփ ու թոփխանա ես սարքել, քանդեցիր բուրճ ու բադանըս,
Յարի պես բհամ եկար, կերար, մաշեցիր իմ ջանըս,
Դարդիմանդ ես մի ֆիքֆիքը արա՛ ինչպես կըլի էս իմ բանըս,
Ոչովեմեն ումուդ չունեմ, դուն ես իմ ճարն ու դարմանըս,
Թե ուզում ես դիփունիմեն դուն ըլես իմ սերն ու սանըս,
Յարաբյար տո՛ւր էս բանին, որ սկսեմ լավիցն ասեմ[1]։

Այստեղ առկա են աշուղական պոեզիայի համար անհրաժեշտ բոլոր կոմպոնենտները. և՛ ժողովրդական լեզուն, և՛ սիրային թեման, և՛ աշուղական առանձնահատուկ տաղաչափությունը, և՛ բառ ու բանը, շեշտադրությունը, էպիտետներն ու պատկերները։

Աբովյանի մեզ հասած ստեղծագործությունների մեջ սա առաջին աշխարհաբար երկն է։ Սրանից կարելի է եզրակացնել, որ Աբովյանի ստեղծագործության աշխարհականացման առաջին քայլերը կապվում են մեր ~~միջնադարյան, ինչպես~~ նաև աշուղական-ժողովրդական պոեզիայի բարերար ~~ազդեցության~~ հետ։

* * *

Դորպատյան տարիներին պոեզիան մնաց Աբովյանի ստեղծագործության հիմնական ժանրը։ Սա մի շրջան էր Աբովյանի կյանքում, երբ նրա առջև հրաշքի պես բացվել են համաշխարհային պոեզիայի կախարդիչ աշխարհը՝ հանձինս Հոմերոսի, Գյոթեի, Շիլլերի, Ժուկովսկու, եվրոպական ու ռուսական գրականության տասնյակ այլ ներկայացուցիչների ստեղծագործությունների։ Աբովյանի համար գրական ստեղծագործությունը չի հանդիսացել լոկ պարապ ժամանցի առարկա, սակայն Հերդերն ու Լեսինգը, Գյոթեն ու Շիլլերը, Ժուկովսկին ու Կռիլովը օգնել են նրան առավել ևս խոր հասկանալու գրականության հասարակական ֆունկցիան, արվեստի բարոյական իմաստն ու նպատակը։

Հենց այդ գիտակցությամբ է, որ բանաստեղծն իր բարձր խոհերն ու տենչերը ամենից ավելի մուսային է վստահում, նրա հետ բաժանում.

---

[1] Բանաստեղծության ինքնագրի հեղինակային ծանոթությունից պարզվում է, որ նրա բուն ընագիրը հեղինակը տարիներ առաջ տվել է «Քանաքեռումը մի տղայի», որից, ըստ երևույթին, այլևս հետ չի ստացել։ Սույն մեզ հասած Թերի օրինակը 1835 թվականին Պետերբուրգում եղած ժամանակ Աբովյանը հիշողությամբ գրի է առել և նվիրել իր ընկեր Միրզա Եզնակ Կամսարականին։ Տե՛ս Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 1, էջ 86—87 և 385—386։

Այլ քեզ, մուզայ սուրբ, միայն ես յանձնեմ
Ջաղերս իմ սրտի բիւր ցավոց կցորդ...[1]

ասում է Աբովյանը դորպատյան մի բանաստեղծության մեջ։ Մուսայի հետ մտերմացած բանաստեղծն իր սրտի ցավերն, իր նվիրական գաղտնիքները, թշվառ հայրենիքի սերն ու վիշտը, հարազատի ու բարեկամի կարոտի կսկիծը, մանկական վերհուշներն, իր անհանգիստ հոգու ծովը փոթորկող մարդկային բոլոր վեհ զգացմունքները վերածել է գեղեցիկ բանաստեղծությունների, կաղապարել պոեզիայի բազմազան ձևերի ու չափերի ոսկե կաղապարներում։

Դորպատյան պոեզիան թեմատիկ իմաստով շատ է բազմերանգ, սակայն գերակշռողը հայրենիքի թեման է։ Այդ թեման իր հերթին հայրենիքից հեռու բանաստեղծի ստեղծագործության մեջ գտնում է արտահայտության բազմազան ձևեր։

Հայաստան իմ, քաղցրիկ Հայաստան
. . . .
Ե՞րբ եկից, ե՞րբ տեսից ղքոյդ սահման աննման,
Ուր Մասիս, Արագած հոյակապ հոյանան...[2]

բացականչում է պանդխտացած բանաստեղծը՝ կարոտակեզ սրտով։ Ոչինչ, որ հայրենիքն իրեն օտարության է ճամփել «անհաց, անպաշար»։ Իսկական սերը զերծ է հիշաչարությունից։ Նա այժմ լոկ մի բան է խնդրում «քաղցրիկ Հայաստանից».

«Կաց դու ինձ, որպես ես քեզ սիրով ու անբաժան, Հայաստան»։

Հետևելով դորպատյան տարիների Աբովյանի հայրենասիրական պոեզիային, նկատում ենք, թե ինչպես նախորդ տարիների Կովկասահայաստանի ազատության թեման այստեղ փոխարինվում է ամբողջ Հայաստանի և հայ ժողովրդի տակավին անազատ վիճակի թեմայով։ Լայնացել է հեղինակի մտահորիզոնը, այլևս Հայաստան ասելով նա չի հասկանում լոկ նախկին Երևանի խանությունը։ Աբովյանին ճնշում է անգութ օտար տիրակալների բռնությանը ենթարկված, ինքնուրույն պետականությունից զուրկ և այդ պատճառով աշխարհով մեկ պանդխտացած իր ամբողջ ժողովրդի տառապալի վիճակը։ Այդ են ասում «Զգացմունք ցավալից...» բանաստեղծության հետևյալ տողերը.

«Եվ թռչունք անգամ ունեն իւրեանց բուն, ուր օթագային
Եվ սողունք անգամ, որք ի սիրտ երկրի անվրդով հանգչին.
Այլ մեզ չիք տեղի, չիք ուրեք դադար
Ի վերայ երկրի, զոր ձեռոք քո արար,
Սահի Հայկազունն միշտ ալեկոծեալ,
Ջաւակ և զտուն, զաշխարհ մոռացեալ»[3]։

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 1, էջ 126։
2 Նույն տեղում, էջ 120։
3 Նույն տեղում, էջ 69։

Մի այլ բանաստեղծության մեջ, ուր նկարագրվում է աղատ քաղաքակիրթ կյանքով ապրող գերմանացի երիտասարդության ուրախ զրոսանքը բնության ծոցում, բանաստեղծը գրում է.

Սրգեցէ՛ք, ասեմ երջանիկ որդիք առատ բնութեան,
Օրհնեցէ՛ք զպատճառն՝ որ ստեղծ զձեզ ի խաղաղ երկիր,
Ուր չի՛ք գերութիւն, ո՛չ սուր կամ հարուած դառնաղետ կրի,
Որով անողորմ, ազգն իմ խղճալի տանջի յաւիտեան...[1]

Բանաստեղծն իր հայրենիքն անվանում է սգատուն։ Նրան այլևս չի ամոքում Արևելյան Հայաստանի հարաբերական բարվոք վիճակը։ Ցարական գեներալներին և իրեն Նիկոլայ Առաջին ցարին խանդավառ ներբողներ ձոնելու մեղրամիսն արդեն անցել էր։ Լեհերի ազատագրական պատերազմը և ֆրանսիական հուլիսյան հեղափոխությունը ստիպում էին Աբովյանին անցած դեպքերը դիտել նոր լույսի տակ։

Աբովյանի հայրենասիրական բանաստեղծություններում նորից հարություն են առնում պատմական անցյալի հերոսները, բայց այս անգամ ոչ թե միապետական Ռուսաստանի տիրապետության տակ անցած հայերի վիճակը փառաբանելու համար, ինչպես այդ տեղի էր ունենում նրա նախադորպատյան ստեղծագործություններում, այլ մեր անցյալի ռազմական ոգին, հերոսականությունը, մեր բարձր անտիկ կուլտուրան փառաբանելու համար։ Մի բանաստեղծության մեջ հիշատակելով Հայկ, Արամ, Արմենակ, Պարույր, Տրդատ, Վաղարշակ, Վարդան և այլ անուններ, Աբովյանն ասում է.

Որոց, գործոց անհամեմատ
Չիք դեռ սահման, չիք օրինակ...[2]

Աբովյանը մի ընդարձակ բանաստեղծություն է նվիրում «Սգոյ և սքանչանաց» տեսարան Վարդանանց պատերազմին։ Արժանի կերպով մեծարելու համար նախնիների «մեծապանծ գործքը», բանաստեղծը կոչ է ուղղում մուսային.

«Ե՛կ ինձ մուսայ, հոգիդ առատ հեղ ի հոգիս զբույդ ի բարձանց»։

Բանաստեղծն իբրև մի միջնադարյան տրուբադուր՝ ցանկանում է «Առնուլ զկիթառ նպաբանել պշահատակ իմ վարդանանց»։ Այդ հերոսապատումը անցյալ մարդկության կատարած մեծագործությունների մեջ Աբովյանը համարում է գերազանց ու անհամեմատելի։

«Թող Հերքիւլս և Հերակլէս՝ շուարեսցին ընդ իւրեանց հիդրա.
Այլ ձեր մրցան գեր անցանէ, գեր քաջութեամբ քան զնոցայն»[3]*։*

1 Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 1, էջ 78։*
2 *Նույն տեղում, էջ 123։*
3 *Նույն տեղում, էջ 135։*

Ամենաբարձր, ամենախսկական հերոսությունն այնտեղ է, ուր ժողովուրդն անձնազոհ, անհավասար կռվով հաստատում էր իր կյանքի, իր գոյության արդարացի իրավունքը. այսպիսին է Աբովյանի տրամաբանությունը։

Դորպատյան ստեղծագործությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ Աբովյանը բռնության թշնամի և ազատության ջատագով է ոչ միայն իր ազգի և հայրենիքի նկատմամբ, այլև առհասարակ, մի հանգամանք, որ նրան բնութագրում է իբրև իր ապրած պատաշրջանի լուսավորական գաղափարական դիրքերում կանգնած հումանիստ գրողի։ Բռնությունը, տիրապետող ազգերի դաժանությունը փոքր ժողովուրդների նկատմամբ՝ ատելի է, որտեղ էլ որ նա հանդես գա։ Հենց այս տեսակետից էլ Աբովյանին զբաղեցրել է եվրոպացի «բռնի վարժապետների» վայրագություններին զոհ դարձած ամերիկյան և Աֆրիկայի բնիկների կյանքը։ Աբովյանը բազմիցս անդրադարձել է այդ թեմային, այդ թեմայով է գրված դորպատյան պոեզիայի ուշագրավ նմուշներից մեկը՝ «Միսիսիփի» բանաստեղծությունը։

Միսիսիպի գետը վրդովված է, նա ամենի ուժով թնդում է, դղրդում, նրա հորձանքները սպառնում են խորտակել հարազատ ափերը, ավերածություն տարածել շուրջը, քարայրներն սարսափից տատանվում են, թվում է, թե նրանք պիտի ճայթեն։ Ամերիկայի մայր գետը իր այդ ցասմամբ բողոքում է ընդդեմ եվրոպացու՝ «Սպիտակ տեսլեամբ թշնամին դաժան», որ եկել է վրդովելու իր ափերը, խափանելու իր հարազատ որդիների բնական, պարզ և խաղաղ կյանքը։ Ժողովուրդների ազատ, ինքնիշխան կյանքի հումանիստական իդեալն է Աբովյանը փառաբանում այստեղ, հուր ատելությամբ նշավակելով աշխարհակալական ուժերին։

Հայրենիքի հետ կապված մտքերն ու խոհերը, սերն ու կարոտն առ հայրենիք, երբեք չեն լքում բանաստեղծին։ Դրանք բանաստեղծի հոգու մշտական անդավաճան ընկերներն են, դրանց հետ են կապված գրողի վշտերն ու ուրախությունները։

Հայրենասիրական զգացմունքը տեղի չի տալիս նույնիսկ սիրո հափշտակության պահին։ Եթե բանաստեղծը ինքնամոռաց կերպով հմայված է սիրո առարկայով, ապա միայն սիրտն է, որ պարգևում է նրան, իսկ կյանքը հայրենիքինն է, հանուն որի և պիտի զոհի այն[1]։

Ծանոթանալով Աբովյանի հիշյալ շրջանի սիրային լիրիկային, կարելի է նկատել, որ նրանց հեղինակը վանական խցից աշխարհը դիտող անձնավորությունը չէ։ Նա աշխարհի մարդ է։ Բանաստեղծի սիրո առարկան կոնկրետ է. նա ճանաչում է նրան, տեսել է, խոսել, սիրային բացատրություններ ունեցել նրա հետ, գիտի նրա թե արտաքին և թե ներքին բարեմասնությունները, որոնք և դարձել են նրա հիացմունքի, գովեստի առարկաները։

---

1 Տե՛ս Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 1, էջ 112։

Բանաստեղծն իր սիրո առարկաներին կոչում է կոնկրետ անուններով։ Մի դեպքում նա օրիորդ ֆոն Շվեբսն է, երկու ուրիշ բանաստեղծությունների մեջ երգվում է Էմման («Առ Էմ... Կ...»), երկու այլ բանաստեղծության հերոսուհիներից մեկը անվանվում է Մ. Ա., մյուսը՝ Ն. Ն.։ Նրանք դորպատյան տարիների տարբեր շրջաններում հրապուրել են Աբովյանին, անհուն բերկրանք և միաժամանակ խոր տվայտանք պատճառել զգայուն հոգու տեր բանաստեղծին։ Սակայն այդ սիրերգերի նշանակությունը դուրս է գալիս լոկ կենսագրական փաստեր լինելու շրջանակներից։ Դրանք Աբովյանի պոետական ժառանգության ուշագրավ նմուշներից են, ուշագրավ փաստեր մեր պոեզիայի աշխարհականացման ճանապարհին։

Այդ բանաստեղծությունները թեև գրված են գրաբար լեզվով, սակայն շնորհիվ գրողի կիրառած տաղաչափական պարզ ձևերի, ինքնաբերաբար երգվող տողերի, նրբորեն բացահայտված մարդկային հոգեվիճակների, հնչում են թեթև ու սահուն, ունեն բնական ինտոնացիա։

Թո՛ղ զիս դատեսցեն
Դահիճք դժոխոց,
Թո՛ղ զիս մատնեսցեն
Նորա դառնախոց.
Այլ ուր և հնչեսցի այս անույշ քո ձայն,
Անդ է իմ դրախտ, երկինք և կայան[1]։

Եթե Աբովյանի նախադորպատյան սիրային բանաստեղծությունները կապվում էին բացառապես մեր աշուղական պոեզիայի հետ, ապա նույն թեմայով գրված դորպատյան գործերը հիմնականում հիշեցնում են այդ շրջանում՝ եվրոպական և ռուսական գրականությունների մեջ շատ տարածված ռոմանսները։ «Օրիորդ ֆոն Շվեբս ի վերա երգեհոնի» բանաստեղծությունը, որից մեջբերում կատարվեց, իր բնույթով ռոմանս է։ Այդ բնույթն ունեն նաև «Առ Էմ...Կ...» և այլ բանաստեղծությունները։

Յուրացնելով բանաստեղծական նոր ձևեր, եվրոպական պոետական կուլտուրան, Աբովյանը, սակայն, չի հրաժարվում պատանեկան տարիներին յուրացրած և կիրառած հայկական ժողովրդական-աշուղական պոեզիայի ձևերից։ Դորպատում Աբովյանը գրում է սիրային և այլ թեմաներով լիրիկական բանաստեղծությունների մի շարք («Իմ կյանքս ու արևս քեզ զոհ կուտամ», «Տաղ ի գույն», «Տաղ հրաժարական»), որոնք կապվում են հայ ժողովրդական-աշուղական պոեզիայի տրադիցիաների հետ։

Դորպատյան տարիներին Աբովյանը ոչ միայն կարդում, ուսումնասիրում էր եվրոպական և ռուսական բանաստեղծներին, այլև թարգմանում նրանց ստեղծագործություններից՝ ինչ որ իրեն առանձնապես դուր էր գալիս։ Թարգմանական գործունեությունը նրա համար մի դպրոց էր՝ ինչպես իր ինքնուրույն ստեղծագործության թեմատիկան ընդարձակելու, այնպես էլ բանաստեղծական արվեստը կատարելագործելու իմաստով

---

[1] Խ. Աբովյան, *ԵԼԺ*, հատ. 1, էջ 73։

Ուշագրավ է, որ Աբովյանը թարգմանության համար առավելապես ընտրում է ժողովրդական բանահյուսության հետ կապված և կամ ժողովրդական-գեղջկական կյանքը պատկերող ստեղծագործություններ։ Այդ են վկայում Հոմերոսից, Գյոթեից, Շիլլերից, Հեոլտից, Կարամզինից կատարած նրա թարգմանությունները։

Մինչ այժմ ասածներից կարող ենք եզրակացնել, որ Աբովյանի ռոմանտիկական պոեզիայի համար, մասնավորապես դորպատյան շրջանում, բնորոշ էր ոչ միայն հետզհետե խորացող հայրենասիրության-ազատասիրության թեման, այլև ժողովրդական կյանքի և բարքերի պոետականացումը, մարդու ներքին աշխարհի բացահայտումը՝ սիրո, բնության և խոհական-փիլիսոփայական թեմաների միջոցով։ Հայ նոր գրականության հիմնադրի դորպատյան պոեզիան մեր գրականությունը նկատելի չափով առաջ տարավ այն կյանքին մոտեցնելու ուղղությամբ, սակայն ընդհանուր առմամբ Աբովյանը տակավին գտնվում էր ժամանակի առջև ծառացած խնդիրների լուծման հեռավոր մատույցներում։ Աբովյանը դեռ ճանապարհ ուներ անցնելու, մինչև որ մշուշոտ արահետներից դուրս գալով, վերջնականապես կթոթափեր անցյալի ծանր բեռը, ոտք կդներ իր իսկ ջանքերով բացված հայ նոր աշխարհիկ գրականության լուսավոր մայրուղին։

7

Աբովյանի դորպատյան օրագրերի վերջին էջերը գրված են աշխարհաբար լեզվով։ Դա պատահական երևույթ չէր։ Դրանով նա կարծես շեշտում էր իր շրջադարձը դեպի գրականության աշխարհականացումը։ Հիրավի դա այդպես էր։ Եթե նախադորպատյան և դորպատյան պոեզիայում տիրապետողը գրաբարն էր, իսկ աշխարհաբարով գրված գործերը առանձին բացառություններ էին, ապա հետդորպատյան շրջանի Աբովյանի պոեզիայի (և ողջ ստեղծագործության) լեզուն աշխարհաբարն է, թեև գրաբարի տարրերը մնում են մինչև վերջ։ Բայց Աբովյանի ստեղծագործության մեջ աշխարհաբար լեզվի տիրապետող դիրք գրավելու մոմենտը հարցի մի կողմն էր։ Հեղաշրջում կատարվեց նաև Աբովյանի ստեղծագործության բովանդակության, թեմատիկայի և ողջ արվեստի մեջ։

Հետդորպատյան շրջանի պոեզիայի առաջին իսկ օրինակները ցույց են տալիս, որ իր ստեղծագործության այս նոր էտապում արդեն հեղինակի ելակետը հասարակական լայն շերտերի շահերն են։ Այդ մոմենտը կարելի է դիտել արդեն «Աղասու խաղը» պոեմում և դեռ պոեմից էլ առաջ՝ նույն պոեմի մոտիվներով գրված բանաստեղծություններում։ Սրանք գրված են աշուղական երգերի նմանությամբ։ Անգամ վերնագրերից պարզ է դառնում հեղինակի այդ միտումը։ «Աղասու սրտի փափակը (Աշըղ Ղարիբի հանգով)». այսպես է կոչվում երգերից մեկը։ Մյուսը ունի հետևյալ բնորոշ վերնագիրը՝ «Գեղի տակով անց կենալիս երգէ»։ «Աղասու խաղը» պոեմը ևս հեղինակը դիտում է իբրև երգ և այդ նկատառումով էլ վերնագրի տակ հատկապես շեշտում՝ «Քեշիշ օղլու գունով»։ Եվ իսկապես,

այդ պոեմը մի երկար ու անավարտ մնացած երգ է, որից մոտ ապագայում պետք է ծնունդ առներ Աբովյանի երգ երգողը՝ անմահ «Վերք Հայաստանին»։

Իբրև գեղարվեստական երկ «Աղասու խաղը» անկատար գործ է։ Չունի սյուժետային կառուցվածք, դեպքերի տրամաբանական զարգացում, կերպարները ոչ բոլոր դեպքերում են խորանում, դառնում ամբողջական բնավորություններ։ Սակայն ուշագրավ է այն փաստը, որ պոեմում հանդես են բերվում ժողովրդի մարդիկ՝ Աղասին և Նազլուն, որոնք իրենց արտունչներով, իրենց դատողություններով սուր կերպով հակադրվում են շրջապատող անբարեկարգ հասարակական պայմաններին։ Այստեղ առաջին անգամ զգացվում է իսկական Աբովյանը՝ կրակված սրտով, ստեղծագործական մեծ ու հախուռն տարերքով։ Նա թոթափել է գրաբարի կաշկանդող կապանքները, նա խոսում է հարազատ բարբառով և բանաստեղծությունը հոսում է լեռան բարձունքից գահավիժող ջրվեժի թափով։

Աբովյանի հատկապես այս շրջանի պոեզիան աչքի է ընկնում ժանրային բազմազանությամբ։ «Աղասու խաղը» երկարաշունչ պոեմի կողքին, բոլորովին առանձնահատուկ երևույթ է նրա լիրիկայի մի այնպիսի ժանր, ինչպիսին է բայաթին, ուր բանաստեղծը հասավ գեղարվեստական բարձր նվաճման։ Այստեղ Աբովյանը խոր հուն է մտել, դարձել սակավախոս, սակայն ավելի խոհուն։ Ընտրելով ժողովրդական պարզ երգերի՝ ջանգյուլումների ձևը, բանաստեղծն իր հույզերը բացահայտելու համար արտահայտչական նոր և գեղեցիկ պատկերներ է գտնում, ստեղծում լեզվական հարուստ երանգներ, գունեղ և անսպասելի հաջող հանգավորումներ։ Սերն է Աբովյանի բայաթիների գլխավոր թեման։ Դրանք յարի՝ կարոտով տանջված, անմուրազ սրտից դուրս թռած դառն հառաչանքներ են։

Ընկել եմ՝ ա՜խ սարեսար,
Դարման չունեմ, ոչ մեկ ճար։
Ուզում եմ գամ քո ոտը,
Առաջս ծով ա, քար է, սար։[1]

Բանաստեղծի լիրիկական հերոսը անկարող է խոսքերով նկարագրել իր վիճակը, ուստի կանչում է յարին, որպեսզի նա գա և իր աչքով տեսնի սիրելու վիճակը։

Սիրտս կաթել ա՝ արին,
Քո մարմինն եմ, քո արին,
Ե՛կ արի, մեկ աչքովդ տես,
Թե սիրելուս ի՞նչ արին։

Նա չի զլանում խոստովանել, որ ինքը հանցավոր է սիրածի հանդեպ, նա զղջում է իր արարքները, միայն թե սիրածը ետ գա, գա թեկուզ իր հոգին առնելու համար։

---

1 Խ. Աբովյան. *ԵԼԺ, հատ. 1, էջ 187։*

Աչքս ճամփիդ ա, արի՛,
Արի՛ հոգիս ա՛ռ, արի՛.
Գյունահս երեսովս չտաս,
Փոշմանել եմ, ինչ արի։

Անսեր կյանքից, մենության զգացումից լիրիկական հերոսի հուսահատությունը ավելի և ավելի է խորանում։ Նա իրեն համարում է վերջացած մարդ.

Մահիս գիրը գրվել ա,
Դու էլ արի՝ ձեռք քաշիր.

Նա մահվան հետ հաշտ է, սակայն սիրածից մի բան է ուզում իմանալ, որպեսզի թեթևացած հոգով հեռանա կյանքից.

Որ գաս, տեսնես ինձ հողումն,
Երաք վրես սուք կանե՞ս։

Եվ այսպես, ազնիվ, ինքնամոռաց սերը պատրաստ է ամեն տեսակի զոհաբերության, միայն թե սիրածի սիրտը շահած լինի, միայն թե վերադարձնի նրա կանացիական սրտի ողջ քնքշությունը, որովհետև նա գիտի, որ անուշադրությունը, անտարբեր վերաբերմունքը կարող է լոկ կոպտացնել այն։

Սիրո թեմայով գրված այս բայաթիներից յուրաքանչյուրը առանձին ամբողջական և ավարտված երկ է։ Բայց միաժամանակ նրանք միմյանց հետ այնպես են կապված տրամադրությամբ և ներքին տրամաբանությամբ, որ բայաթիների այդ շարքը ընկալվում է իբրև մի ամբողջական գործ՝ զարգացող և ավարտվող մի ընդհանուր գիծ ունեցող լիրիկական պոեմ։

Յարի կողմից անպատասխան թողնված սերը չէ միայն հեղինակին այրող կրակը։ Նրա սրտից հառաչանքներ են դուրս կորզում և ուրիշ ցավեր. բռնության և չարի աշխարհում, ավերիչ ուժերի տիրապետության պայմաններում միշտ տուժողների ցավը։

Տա՛ր էղ հավին՝ ա՛յ ուրուր,
Աշխարքս դանակ ա ու սուր,
Ջոռ մարդի թուրն ա կտրում,
Խեղճ ո՞ւր կորչի, ախ՝ ո՞ւր, ո՞ւր։

Հեղինակի մոտ զուգորդվում են սոցիալական չարիքը և իր ճնշված ազգի ողբերգությունը.

Անի՛, Անի՛ ա՜խ՝ Անի,
Քանդողիտ տունը քանդվի,
Քեզ որ ազգը չպահեց,
Մեկ լաց ըլնողն ինչ անի։

Բայց բանաստեղծը չարի և բռնության ուժերի առաջ պինաթափ չի լինում, նա իր սրտին արիության հորդորներ է ուղղում, զինում իրեն վճռականությամբ։

Մի դարդ անիր, սի՛րտ արա,
Ի՞նչ ես էրվում, սիրտ արա.
Էղքան տանջիլ պետքը չի՛,
Ինչ ասում են՝ սիրտ արա։

Եվ իբրև նրաշխիք էգոիստական մորալը սրբագործող «չոռ մարդկանց» դեմ մղվող հաղթական պայքարի, նա կոչ է անում անշահախնդիր և ազնիվ բարեկամության.

Բարեկամիդ հետ մեկտեղ
Թող քեզ սպանեն՝ ա՛խ մեկտեղ.
Անբարեկամ որ մեռնես,
Հողն էլ չի՛ տալ քեզ մին տեղ։

* * *

Չարի և բիրտ ուժի դեմ ծառացող բանաստեղծը ժամանակի սոցիալական սուր խնդիրները բացահայտելու համար նորանոր գրական ձևեր է որոնում, նոր, ակտուալ թեմաներ հայտնագործում, ամեն անգամ մի նոր կողմից բացահայտելով իր լայն, բազմերանգ բանաստեղծական տաղանդի այս կամ այն առանձնահատկությունը։

Այդպիսի մի լուրջ հայտնագործություն էր մեր պոեզիայի համար Աբովյանի «Հազարափեշեն» սատիրապոեմը, որը հավանաբար գրվել է 40-ական թվականների սկզբին, հայտնագործություն էր թեկուզ հենց թեմատիկայի առումով։ Ցարական գաղութարարի մերկացումը մեր գրականության մեջ, թերևս նաև անդրկովկասյան մյուս ժողովուրդների գրականություններում իր նախատիպը չունեցող երևույթ էր։ Նույնքան ուշագրավ է այն մոմենտը, որ ցարական գաղութարար-չինովնիկի մերկացումը կատարվում էր տեղական ժողովուրդների շահերի համբերաշխության, ցարիզմի դեմ այդ ժողովուրդների քաղաքական դաշինքի անհրաժեշտության գիտակցման դիրքերից։

Պոեմի առաջաբանում արդեն բացահայտվում է հեղինակի քաղաքական միտումը։ «Ո՞վ չի գիտի, որ տեղից վեր կենողը հենց մեր խեղճ խալխի վրա ա ոտը բարձրացնում։ ...Թե աստված կտա մեր Ասիացիք էլ քիչ քիչ աչքերները բաց կանեն, էն ժամանակը չեն թողալ, որ ամեն հայվարա մարդ իրանց վրա բերանը բաց անի»։

«Հազարափեշեն» պոեմը գրելու հեղինակի նպատակը այլ բան չէր, քան իր հայրենակիցների աչքերը բաց անելու՝ նրանց քաղաքական ինքնագիտակցությունը բարձրացնելու ձգտումը։

Պոեմի հերոսը մեկն էր ժողովրդի վրա «ոտը բարձրացնողներից», ցարական մի աստիճանավոր, որին՝

Որդիանց որդոց սատանի քամին
Պտտեց ու մեր խեղճ շնորքի կարասին
Աչքը թոզ լցրեց, քարեքար տալով,
Գլուխը ջարդելով, ոտը կոտրելով
Երկինքը հանեց ու գետին խփեց,
Կովկասի սարի էս կողմը շպրտեց[1]։

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 1, էջ 167։

«Կովկասի սարի էս կողմը» ցարական չինովնիկների համար այլ բան չէր, քան գաղութային թալանի ու շահատակության լայն ասպարեզ։

Ասիացի մարդըն զակոն ինչ գիտի...
Դլխին տուր, ղրաղին կանգնի՛ր, քեֆ արա,
Ջեբըդ լցրու, քո՛ երկիրը գնա՛։

Այսքան բացահայտ ու անսքող է պոեմի հերոսն արտահայտում իր թալանչիական մտադրությունները։ Ուշագրավ է սակայն մի այլ հանգամանք։ Ծրգիծանքի օբյեկտը սերում է ռուս ազնվականության շրջանից։ Աբովյանը հատկապես շեշտում է իր հերոսի սոցիալական ծագումն ու կենսափորձը, նրա՝ բալ-մասկարադների, իրար կոմպլիմենտներ անող և սիրահետող արիստոկրատ դամաների և կավալերների, «ռոմի բուդիլկաների և թասերի» միջավայրից դուրս եկած լինելու հանգամանքը։

Տեղական ժողովուրդների և ցարական չինովնիկի միջև կոնֆլիկտը առանձնապես սրվում է հենց այդ պատճառով։ Վերջինս տեղացիների պարզ, համեստ բարքերը արհամարհում ու անարգում է, օտարներին ցույց տված սրտաբաց ընդունելությունն ու հյուրասիրությունն ընկալում նրանց համար վիրավորական ձևով։ Հակառակորդների մեջ հաշտություն է կայանում միայն այն բանից հետո, երբ «հայի մուշտին և վրացու քացին» ճաշակած չինովնիկը ստիպված է լինում խոստովանել տեղական վարք ու բարքի առավելությունները։

«Հազարափեշեն» պոեմը ուշագրավ է մի այլ կողմից ևս։ Պոեմի առաջաբանում, առաջին անգամ Աբովյանը փորձում է բացատրել, թե ինչո՞ւ է հրաժարվում «մութ լեզվով» գրելուց և գրում պարզ, թեկուզ որոշ ընթերցողների ականջին անախորժ հնչող լեզվով։ Աբովյանը գրում է. «Պարելի ա՝ թե շատ բառ, շատ խոսք քիչ մի ծանր թվի, բայց այլ ձևով հնար չի կար, չունքի բանն էնպես պետք է շինած, գրած, որ կարդացողի սրտովն ըլի։ Շատ մութը լեզվով գրիլ էնպես եմ կարծում, թե խալխին դիր չի դալ»[2]։

Մինչև «Հազարափեշեն» Աբովյանը աշխարհաբար լեզվով մի շարք երկեր էր ստեղծել շրջադարձ կատարելով դեպի նոր աշխարհիկ գրականությունը։ Բայց այդ երևույթը իմաստավորելու, իբրև պրոբլեմ այն քննության խնդիր դարձնելու փորձ դեռ նա չէր արել։ Այն ժամանակ, աշխարհաբար լեզվով գրելը դեռևս բավական չէր։ Պետք էր բացատրել, իմաստավորել գրաբարից աշխարհաբարին անցնելու խնդիրը, տալ երևույթի տեսական-պատմական հիմնավորումը։ Բայց այս բանի անհրաժեշտության գիտակցումը, հասկանալի պատճառով միանգամից տեղի չունեցավ։ Աշխարհաբարով գրելու առաջին փորձերից մինչև առաջին անգամ, թեկուզ մի պարզ նախադասությամբ դրա իմաստավորման փորձը, ավելի քան մեկ տասնամյակ ժամանակ պահանջեց։ Սակայն ժամանակ էր

1 Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 1, էջ 170։
2 Նույն տեղում, էջ 1[illegible]

Հարկավոր նաև էպոխայի այդ արմատական հարցի ըմբռնումը Աբովյանի մոտ խորանալու և հասունանալու համար, որպեսզի արդեն «Վերք Հայաստանի» վեպի հուշակավոր առաջաբանում այն ստանար իր համակողմանի պարզաբանումն ու հիմնավորումը, որպեսզի նոր աշխարհիկ գրականությունը հենց սկզբից դրվեր ամուր տեսական հիմքի վրա։

* * *

Երգիծանքի ասպարեզում «Հայարաիեչէն» սատիրապոեմը չմնաց եզակի Աբովյանի ստեղծագործության մեջ։ Երգիծական բնույթ ունեն հեղինակի մի քանի այլ չափածո գործեր՝ դրանց թվում՝ «Աչքի լույս ջան, դարդ մի անիլ» և «Հախվերմաղի գովքը» բանաստեղծությունները։ Աբովյանի երգիծական պոեզիայի մի կարևոր բաժինն է կազմում «Պարապ վախտի խաղալիք» առակների գիրքը։

«Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի անվանաթերթը

Առակների գիրքը ստեղծվել է Աբովյանի ստեղծագործության այն էտապում, երբ նա արդեն տեսականորեն և գործնականապես հաղթահարել էր նոր գրականության ճանապարհին կանգնած հիմնական արգելքները, պարզել այն համադեմոկրատական խնդիրները, որոնք ծառացած էին նոր գրականության հիմնադրման ճանապարհին։ Այժմ որոշ է հեղինակի աուդիտորիան։ Դրանք հասարակ մարդիկ են, գյուղի աշխատավորներ, քաղաքի արհեստավորներ ու մշակներ։ «Պարապ վախտի խաղալիքի» առաջաբանում Աբովյանը գրում է.

«Թող գիտուն մարդիքը ինձանից չնեղանան, նրանք շատ գիրք են կարդում, իրենց սիրտը մխիթարում. ամա հասարակ մարդը մեկն էլ աչունի, որ նա էլ նրանով իր պարապ վախտը՝ ժամանակը անցկացնի»[1]։

Քանի որ հեղինակը միայն «հասարակ» մարդկանց նկատի ունի, այդ պատճառով էլ գրքի թե՛ սյուժեները, թե՛ լեզուն և թե՛ գաղափարախոսությունը ժողովրդական-դեմոկրատական են։ Աբովյանի առակները վկայում են, որ նրանց հեղինակը խոր կերպով ճանաչում է ժողովրդին, հաճախ է

[1] Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 2, էջ 189։

ունկնդրել նրան, գիտե, թե ինչով է նա ապրում ու հետաքրքրվում, գիտե նրա ճաշակը, զարգացման աստիճանը և այլն։ Աբովյանի աշակերտներից Գեորգ Աքիմյանը, բանահավաք Սարգիս Քամալյանին հաղորդած իր հիշողություններում հետևյալն է ասել. «Մեր վարժապետը առանձնապես սիրում էր ներկա լինել ժողովրդական տոներին—դիտել, ուսումնասիրել օրանները, բան քաղել այնտեղից։ Խալխի բերանից լսած բաները ժողովելով, ոտանավոր դարձնելով սազացնում էր աշակերտներիս համար ... վերջը այդ բաները առանձին գիրք դարձրեց, անունը դրեց «Պարապ վախտի խաղալիք», որ ժողովուրդն էլ աշխարհաբար գիրք կարդա»[1]։ Իսկ ինքը՝ հեղինակը, գրքի առաջաբանում գրել է. «Բոլորը մեր խալխի խոսացած բաներն եմ հավաքել. թարգմանածներս էլ՝ էնպես եմ դուրս բերել, որ մեր խալխի սրտովն ըլի»[2]։

Ակնհայտ էր սուր կոնֆլիկտի անխուսափելիությունը ժամանակի «գիտունների» հետ։ Աբովյանն իր համար հաղթահարել էր ժողովրդական-կենդանի լեզվով գրելու հետ կապված նախապաշարմունքը, բայց ժամանակի իշխող մտայնությունը դեռևս կառչած էր մնում քարացած տրադիցիային, որը հաղթահարելու համար տակավին շատ զենքեր պետք է փշրվեին։ Աբովյանին այլ բան չէր մնում, քան համբերությամբ զինվել բոլոր տեսակի հալածանքների դեմ։

«Էս գրքի ճամբի խրատը» առակ առաջաբանում հեղինակը գրում է.

Գնա, իմ խեղճ գիրք՝ գնա մարդամեջ.
Գլուխդ քաշ քցիր, մի նեղանար հեչ։
Ականջդ փակիր, սիրտդ լեն բռնիր,
Ինչ ասեն, խոսեն, տար ու համբերիր։

Բանաստեղծի հայացքը կտրում անցնում է մշուշոտ հորիզոնը, հասնում մինչև պայծառ հեռուները, լուսավոր ու արևոտ գալիքը։

Հալբաթ մեկ օր էլ արև դուրս կգա,
Էն վախտն կիմանան, թե ուզածդ ինչ ա[3]։

Հասարակական ի՞նչ արատներ է առակախոսը խարազանում։ Աբովյանը բաց է անում փողի վրա հիմնված մարդկային հարաբերությունների ամբողջ կեղծիքը, թունավոր կերպով ծաղրում հարուստի ու իշխանավորի անբարտավանությունը, հասարակ ժողովրդի հանդեպ նրանց արհամարհական դիրքը, անարգում է փողատիրոջ և իշխանավորի առջև ստրկաբար խոնարհվողներին, դատապարտում շվայտությունը, որկրամոլությունը, խաղամոլությունը, նենգությունը, անընկերասիրությունը, տգիտությունը և այլն։ «Երկաթակեր մուկը», «Հացակեր փեշը», «Խանը», «Բարդին ու

1 «Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին», Երևան, 1941, էջ 110, 112։

2 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 2, էջ 189։ Առակների մի զգալի մասը թարգմանություններ և կամ գերազանցապես փոխադրություններ են Կռիլովից, Խեմնիցերից, Դմիտրիևից, Լաֆոնտենից։

3 Նույն տեղում, էջ 191։

վածը» «Զարմանալի մարդիկ» առակներում Աբովյանը շեշտում է, թե՝ ուր մուտք են գործում փողն ու իշխանությունը, այնտեղ պարարտ հող են գտնում այլասերումը, ապականությունը, կեղծիքը։

Հավատարիմ իր դեմոկրատական սկզբունքներին, աշխատավորական մասսաների բարոյական ըմբռնումներին, առակախոսը փողի և իշխանության հետ կապված ամեն մի պատրանք համարում է սին, ոչինչ լավ բան չխոստացող, և դրան հակառակ, նա փառաբանում է պարզ ու համեստ կյանքը իբրև մարդու երջանկության ստույգ պայմանի։ Բնորոշ է «Ծառը» առակի վերջաբանը։

Ինձ վրա ես՝ ասում էս պարզ առակը։
Ինչ հարկավոր ա մարդիս՝ թագ, պսակը,
Քանի ցած է տեղդ ու միտքդ հանդարտ,
Էնքան քեզանից հեռու փորձանք, դարդ։
. . . .
Պատիվն, պատուհասն որդի են մեկ մոր՝
Փուչ կանեն սիրուն արեգ ու քո օր[1]*։*

Աբովյանը ապրում էր մի հասարակության մեջ, ուր թագավորում էր էգոիստական մորալը։ Հենց այդ պատճառով էլ նա հանդես էր գալիս հանրության համար օգտակար պարտադիր գործունեության հումանիստական գաղափարի քարոզով։ Հասարակությանն անօգտակար մարդուն առակախոսը անվանում է ժանտ փուչ, իսկ նույն առակի բարոյախոսականում եզրակացնում է.

Էնպես տուն-բանդող փչեր խիստ շատ կան,
Երանի՝ նրանց մեկ օր կրակին տան[2]*։*

Ժանտ-փուչ մարդկանց մեկ այլ տեսակն է մարմնավորված Աբովյանի «Խոզն ու եզը» առակի խոզի կերպարում։

Խոզն ի՞նչ գլուխ ունի, որ ինչ գրից սա,
Բայց մեկ օր եզին սկսեց խրատ տալ նա։

«Աշխարհը դմակ, մարդը դանակ», էգոիստական մորալը բացահայտող ժողովրդական այս և սրա նման այլ ասացվածքներով է Աբովյանը ձևակերպում կյանքի նկատմամբ խողակերպ մարդկանց հայացքը։ Եզի հանդեպ «պատիարակի» դեր ստանձնած խոզը, որ ջանում է իր կենցաղը պարտադրել նրան, վերջում պարծանքով ասում է.

Էնպես եմ արել, էնպես չաղացել,
Որ ճրաքուս էկել, աչքերս լցվել։

Խոզային այս բարոյականությունը որդեգրած մարդկանցից շատերին առակագիրը ինքը անձամբ ճանաչում է։ Նա դառը փորձ ունի։ Նա ճանա-

---

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 2, էջ 271։
[2] Նույն տեղում, էջ 221։

շում է վաշխառուին ու ագահ վաճառականին, դատավորին ու ժանդարմին, հոգևոր և մարմնավոր իշխանությունների այլ և այլ ներկայացուցիչների։ Գրողի կենսափորձը նրան շատ բան է հուշում, շատ և շատ կենդանի, իրական մարդկանց կերպարներ են խռնվում նրա երևակայության առաջ, որոնք ի վերջո առարկայանում, սիմվոլանում են խոզի այլաբանական կերպարի մեջ։ Բայց Աբովյանը գիտի, որ դա յոկ կյանքի այլանդակ դեմքն է։ Կյանքի լուսավոր կողմը ավելի վառ ու պայծառ է պատկերանում առակախոսի առաջ և նա ի հակակշիռ ավերիչ-վնասակար ուժի, պատկերում է մարդկության բարուն նվիրված, ստեղծագործող ուժերին, աշխատող, շինարար, կյանքի համար կյանքը դրած մարդկանց։ Ահա, այդ բարձր հումանիստական-ալտրուիստական մորալն է մարմնավորված աշխատավոր եզի այլաբանական խոսքերում.

«Խոզն իր խոզությունն ձեռից չի թողալ։
Մեր եզն սկսեց իր բերանը բանալ։
«Ցեխն ա քո ջանը, գնա, տաս թավալ,
Հալբաթ որ էդպես կուզես դու խոսալ։
Ի՞նչ օգուտ ունի էն քաղցր արեգակն,
Կամ էն՝ երկնքի պայծառ լուսնյակն,
Որ լիս են տալիս, իրանք միր մտնում,
Միզանից մեկ քաղցր խոսք էլ չեն լսում։
Կամ անբան երկիրն ումնի՞ց խեր ունի.
Որ հազար բարի տա ամեն տարի։
Անձրևր գալիս, արևը բացվում,
Սար ու ձոր էնպես ցնծում ու ծաղկում...
Էն եոկրի խոտը ի՞նչ սրտով ուտեմ,
Էն աղբրի ջուրը ինչպե՞ս ես խմեմ,
Որ աշխարքումս բանի պետք չգամ,
Ի՛մ գլխիս նայիմ, ի՛մ ցավս հուքամ...
Ես իմ աշխատանքն ձեռից չեմ թողալ,
Քանի շունչ ունիմ ու խեր կարեմ տալ։
Իմացողի համար ես չեմ աշխատում,
Խեր տալն եմ ուզում, տեսնում, մխիթարվում»[1]։

Անսահման կերպով մարդկությանը նվիրվելու, նրան առանց շահախնդրության, անձնվիրաբար ծառայելու ալտրուիստական այս գաղափարը կարմիր թելի պես անցնում է Աբովյանի ողջ ստեղծագործության միջով։

Իր առաքինություններով հակադրվելով շրջապատող ապատավոր հասարակությանը, Աբովյանը բազմիցս տուժել է ու չարաչար հալածվել։ Սակայն ոչ մի չարիք այնքան թունավոր կերպով նրան չի խայթել, նրա նպատակների ճանապարհին այնքան արգելքներ չի հարուցել, որքան մարդկային տգիտությունը, որը մեծ լուսավորչի համար մեծագույն չարիքներից մեկն էր։

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 2, էջ 235—236։

«Էշը և բլբուլը» առակը Արովյանի ապրած ողբերգության ամենացայտուն արտահայտություններից մեկն է։ Առաջաբանում հեղինակը պարզաբանում է, որ առակը հիմնված է սեփական կենսափորձի վրա։

«Էս ներքևի ոտանավորը էնպես մարդի վրա է գրած, որ ոչ գիր գիտի, ոչ գրի զորություն, ու գրողի վրա էլ բերան կցրվի։ Իմ աշխարհաբար դրածների գլուխը՝ շատ անգամ է էսպես բան տեսել; մարդի միտք չեն հասկանում, հենց իրանց իրանց խոսում են։ ...Ինձանից խրատ չի հասնիլ, ամա մարդի սրտի դարդ է դառնում, երբ էնպես օքմին էլ ա խոսում մարդի վրա, որ իր անունը դրուստ գրել չգիտի։ Ինչևիցե՝ թուր ու թվանք չունիմ, արզա գրել պետք չի, թող բլբուլը խոսի»[1]։

Հետևում է առակի բնաբանը.

Էշն ինչ գիտի վարդն ինչ զատ ա,
Նրանը փալանն ու թավալ տալն ա

Այնուհետև նկարագրվում է, թե ինչպես փալանից և թավալ տալուց այն կողմը բան չհասկացող իշի բաժին է դառնում քնքուշ վարդը, քանի որ նա՝ վարդը շրջապատված է «իշի կերակուր» փշերով։ Վշտահար սոխակը ողբում է սիրելի վարդի վիճակը։

Երկինքն ա տեղդ, ընչի՞ ես մնում,
Իշի կերակուր, էս փշի միջում.
Քանի փուշ ու էշ դեռ կան աշխարհում,
Կմնաս անտեր։ Էս եմ միտք անում,
Ու գլխիս տալիս, էրվում, խորովվում։
. . . .
Յա՛ դու ինձ էրի մեկ օր պրծընիմ,
Յա թե ա՛ռ, թռչինք երեսիդ մեռնիմ»։

Ուշագրավ է և Աբովյանի համար խիստ բնորոշ առակի եզրափակիչ տողերը։

Իմ սիրուն բլբուլ՝ մի՛ էդքան ցավիր,
Կա՛ց մեր միջումը՝ քո վարդը գովի՛ր,
Էշը թրքումն ա իր ծնունդն առել,
Էլի թրքի հոտն նա կուզի առնել,
Քեզ վարդ, մանուշակ, քեզ ծառ ու ծաղիկ
Աստված փայ ավել, բլբուլ գեղեցիկ[2]։

Այս տողերում արտահայտություն է գտնում խավարի դեմ պայքարելու գրողի անկոտրում հավատը՝ ոչ թե հուսալքվել ու բռնել փախուստի ճանապարհը, այլ պայքարել և մաքառել, կյանքի ասպարեզը չթողնել էշերին ու փշերին։ Քննության առնված առակներից կարելի էր տեսնել, որ Աբովյանը հեռու է բուրժուական սահմանափակ քաղոյախոս լինելուց և որ սոցիալական խնդիրները չեն վրիպում հեղինակի ուշադրությունից։ Բայց

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 2, էջ 239։
[2] Նույն տեղում, էջ 243։

առակագիրը ունի գործեր, որոնց մեջ շահագործողների և շահագործվողների հակադրությունը շատ ավելի սուր բնույթ է կրում։ Այսպիսի եզրակացության հնարավորությունը տալիս են «Գելն ու գառը», «Առյուծն ու մոծակը», «Կատուն ու մուկը», «Ճրագով ման դալը», «Մառերն ու կացինը» առակները։ Հիշյալ առակների համար իբրև գաղափարական ելակետ կարող է հանդիսանալ «Գելն ու գառը» առակի բարոյախոսությունը։

Ով զոռ ունի, հենց անճարի գլխին
Է քացի տալիս, հանում աչքն, հոգին,
Իր արած մեղքն էլ նրա վզին դնում։
Օրինակ շատ կա էս մեր աշխարհում[1]։

«Զոռի և անզոռի» փոխհարաբերության բացահայտման մոմենտը առակներում նորություն չէր։ Բայաթիներում ևս Աբովյանը սոցիալական հակադիր ուժերը կերպարանավորելու, կոնկրետացնելու միջոցին է դիմում։ Առակների գայլի և գառան, առյուծի և մոծակի, կատվի ու մկան կերպարներ-սիմվոլներին նախորդում են բայաթիների ուրուրի և հավի կերպար-սիմվոլները («Տա՛ր էս հավին, ա՛յ ուրուր»)։ Սակայն առակներում կա մի մոմենտ, որ բայաթիներում չենք հանդիպում։ Դա ճնշողներին ճնշվողների ակտիվ հակադրվելու թարողն է։ Վերը հիշատակված առակներում Աբովյանը կարմիր թելի պես անց է կացնում այս գաղափարը. խեղճի խեղճ լինելու գլխավոր պատճառն այն է, որ նա հաճախ չի գիտակցում իր ուժերը և չի գործադրում այն հօգուտ իր շահերի պաշտպանության։ Կացինը չի կարող կոտրել անտառը, եթե նույն անտառը նրան կոթ չտա։ Առյուծի և մոծակի կռվում հաղթող է դուրս գալիս մոծակը, որովհետև նա համարձակ կերպով օգտագործում է պայքարի այն զենքերը, որոնցով ինքը օժտված է։ Առյուծը ստիպված է լինում «գետնի վրա չոքել, նրան մեղա գալ»։ Ի՞նչ եզրակացություն է հեղինակն անում առակից.

Խեղճի վրա մի՛ ծիծաղիր,
Անճարին մի՛ վիրավորիր։
Խեղճ մարդն էլ շատ անգամ քեզ էնպես
Կկծի, որ կմնաս սևերես։
Քո գլխին շատ էլ մի հավատա՛,
Լավ՛ր էս մասալեն, ականջդ առ[2]։

Եթե այս տողերը մի կողմից խեղճերին ուղղված պայքարի հորդոր է, ապա մյուս կողմից՝ նպատակալից զորեղների հասցեին։

Նոր չէր առակի ժանրը մեր գրականության մեջ, այն գալիս էր խոր միջնադարից, բայց Աբովյանն առաջինն էր, որ մեր գրականության մեջ կիրառեց այդ ժանրը՝ դարձնելով այն իր լուսավորական գաղափարները պրոպագանդելու և սոցիալական ու ազգային ճնշման դեմ պայքարի նպատակահարմար միջոցներից մեկը։

---

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 2, էջ 272։
[2] Նույն տեղում, էջ 274։

Արովյանի առակները նոր աստիճան էին մեր առակագրության մեջ ոչ միայն թեմայով և բովանդակությամբ, այլև արվեստով։ Նոր երևույթ էր չափածո առակը. մեր միջնադարյան առակը բացառապես պրոզայով է գրված։

Արովյանն առանձին ուշադրություն է դարձնում առակի սոցիալ-հոգեբանական իմաստի վրա։ Առակներում լայն կիրառում է գտնում դիալոգը։ Այնտեղ, ուր հնարավոր է կերպարներին հանդես բերել իրենց սեփական խոսքով, Արովյանն անում է այդ և ըստ հնարավորին խուսափում պատմողական եղանակից։ Արովյանի առակները ուշադրություն են գրավում նաև իրենց մեծ մասամբ սուր և դիպուկ բարոյախոսականներով, որոնք հաճախ վեր են ածվում չափածո աֆորիզմների։

* * *

Այս համառոտ տեսությունից պարզ դարձավ, թե որքան հարուստ ու բազմազան է Արովյանի պոեզիան։ Եվ չնայած հիշյալ հանգամանքին, Արովյանի անունը, նրա գրական մեծ փառքը կապվում է «Վերք Հայաստանի» վեպի հետ։ Դրա պատճառն այն չէ, որ գրողի պոեզիան և մյուս երկերը զուրկ են առանձին նշանակությունից, այլ այն, որ «Վերք Հայաստանի» շատ մեծ է ու նշանակալից։ Այս երկի նշանակությունը բացառիկ է ոչ միայն Արովյանի ժառանգության, այլև ամբողջ հայ դրականության մեջ, մեր ամբողջ մտավոր կյանքի, մեր անցյալի ողջ հոգևոր ժառանգության մեջ։

Պոեզիան քննելիս նշվեց, որ Արովյանը տակավին մինչև «Վերք Հայաստանի» փորձել է հիմնավորել նոր աշխարհիկ գրականության պատմական անհրաժեշտությունը։ Նույն տեղում էլ ասվեց, որ այդ փորձը հեռու էր այդ ծանրակշիռ խնդրի բավարար պատասխանը լինելուց։ Ժամանակի առաջադրած հիշյալ մեծակշիռ հարցի համակողմանի, սպառիչ պատասխանը Արովյանը տվեց իր վեպի նշանավոր առաջաբանում։ Առաջաբանը սկսվում է Կրեսոս թագավորի և նրա որդու ավանդության շարադրումով։ Ըստ այդ ավանդության Կրեսոսի քսանամյա, համր որդին պատերազմում հորը տեսնելով մահվան սպառնալիքի տակ, հանկարծ լեզու է առնում և թշնամի զորականին ձայն տալիս. «Անօրե՛ն՝ էդ ո՞ւմ ես սպանում, քաշի՛ր թուրդ էդ, չե՞ս տեսնում՝ որ առաջիդ Կրեսոսն ա, աշխարքի տե՞րն ա»։ Զորականի ձեռքից սուրը վայր է ընկնում, թագավորի կյանքը փրկվում է։

«Որդիական սերն էր՝ որ բնության դրած կնճիռը՝ կապես ջարդեց ու փշրեց»,— եզրակացնում է Արովյանը։

Սակայն ի՞նչ նպատակով է Արովյանը առաջ բերում վերոհիշյալ ավանդությունը։ Հաջորդ տողերում արդեն տրվում է հարցի պատասխանը։

«Ո՛չ քսան-երեսուն տարուց ավելի ա՝ իմ ազիզ հեր՝ ի՛մ սիրելի ազգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում փոթոթվում ա, գիշեր, ցերեկ լացն ու սուգը իմ աչքիցը, ա՛խն ու ո՛խը իմ բերնիցս չի պակասում, ա՛յ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեի ու հե-

տո հողը մտնեի։ ...Շատ անգամ մեկ հայ տեսնելիս ուզում էի՝ էլած շունչս էլ հանեմ, նրան տամ. բայց ա՜խ՝ լեզուս փա՛կ էր, աչքս բաց, բերանս՝ բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ. գանձ չունեի, որ գործով ցույց տայի ուզածս, անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հասնի, մեր գրքերն էլ գրաբար, մեր լեզուն էլ անպատիվ, որ սրտիս հասրաթը խոսքով հայտնեի...»[1]։

Ավանդության սիմվոլները մեկնված են։ Ծանր օրհասի մեջ գտնվող Կրեսոսի պատկերով արտահայտված է հայ ժողովրդի վիճակը, նրա լեզուն փակ որդու պատկերով՝ Աբովյանի ապրած անօրինակ խոր ողբերգությունը։ Բայց ավանդության մեջ նշված է նաև փրկության ելքը։ Որդիական սիրուց ծնունդ առած սրտառուչ խոսքը փրկարար եղավ կործանվող հոր համար և հենց նույն հրաշագործ սիրո շնորհիվ էր, որ կատարվեց հրաշքը՝ համրը լեզու առավ։

Կնշանակի ժողովրդին օրհասից փրկելու համար հարկավոր էր որդիական սիրով թելադրված ջերմ և սրտառուչ խոսք ասել նրան, հրաբորբոք, դյութական խոսք, որ սթափեցներ նրան դարավոր թմրությունից, իներտությունից, զարթնեցներ նրա միտքն ու սիրտը, հավատ ու հույս առաջացներ նրա մեջ իր ներկայի ու ապառնայի, իր պատմական կոչման հանդեպ։

Բայց ի՞նչն էր, որ «քսան-երեսուն տարուց ավելի» փակել էր Աբովյանի լեզուն, ստեղծելով նրա համար ողբերգական կացություն։ «...Մեր գրքերն էլ գրաբառ, մեր նոր լեզուն էլ անպատիվ, որ սրտիս հասրաթը խոսքով հայտնեի»։ Ի՞նչ էին նշանակում Աբովյանի այս խոսքերը։

Մտածելով իր ժողովրդի կյանքի վերափոխման մեծ էպոխային արժանի գործեր ստեղծելու մասին, գրականությամբ ժողովրդին ծառայելու մասին, Աբովյանն իր առջև անանցանելի պատնեշի պես կանգնած է տեսնում գրաբար լեզուն, որը թեև դարեր առաջ դադարել էր կենդանի խոսակցական լեզու լինելուց, սակայն դեռևս շարունակում էր մնալ իբրև գրքի լեզու։ Տրադիցիան պահանջում էր, որ գիտնականը և գրողը գրեին ժողովրդին անհասկանալի այդ լեզվով։ Հենց այստեղից էլ սկիզբ է առնում Աբովյանի ողբերգությունը։ «...Ես էլ էի ուզում՝ որ ինձ վրա չծիծաղին, չասեն կոպիտ ա, հիմար ա՝ որ քերականություն, ճարտասանություն. տրամաբանություն չգիտի, ես էլ էի ուզում, որ ասեն. «Օ՜հ, ինչպես խորը, խրթին շարադրել գիտի, որ սատանան էլ միջից մեկ բառ չի կարող իմանալ, հասկանալ»[2]։

Բայց Աբովյանը պարզ հաշիվ է տալիս իրեն, խորապես գիտակցում ժողովրդի հետ գրաբար լեզվով խոսելու ամբողջ անիմաստությունը։ «Հենց էս էր՝ որ ասում էի մտքումս՝ թե նստիմ, ինչքան խելքս կտրի, մեր ազգին գովեմ, մեր երևելի մարդկանց արած քաջությունները պատմեմ, էլի մտածում էի, թե ո՞ւմ համար գրեմ, որ ազգը լեզուս չի՛ հասկանալ։ Թեկուզ Ռուսերեն, Նեմեցերեն, յա Ֆռանցուզերեն գրած, թեկուզ գրաբար՝

1 Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 3, էջ 1—2։

2 Նույն տեղում, էջ 2։

տասը կըլի որ հասկանային, բայց հարիր հազարի համար՝ թեկուզ իմ գրածը, թեկուզ մեկ քամու ջաղաց։ Ախր որ ազգը էն լեզվովը չի՛ խոսում, էն լեզուն չի՛ հասկանում, սաքի հենց բերնիցդ էլ ոսկի վեր ածի՛ր, ո՞ւմ պետք է ասես։ Ամեն մարդ իր սրտի խարջ բան կուզի»[1]։ *Աբովյանի կուլտուրական մեծ ձեռնարկումների ելակետը* հարիր հազարն էր՝ ժողովուրդը։ *Սա նոր խոսք էր, նոր մոտեցում, նոր աշխարհայացք, որ հանդես էր բերում Աբովյանը, ի հակակշիռ կղերի և կղերամիտ մարդկանց հակաժողովրդական մտայնության։ Հետևել տրադիցիային, գրել ժողովրդին անհասկանալի գրաբար լեզվով, այդ Աբովյանի համար կնշանակեր հեռանալ իր ազնիվ նպատակներից, հեռանալ ժողովրդական մասսաներից, ոտնահարել նրանց շահերը, ինչպես ոտնահարվել էր դարեր շարունակ։ Աբովյանը չէր կարող անգիտանալ ժողովրդի կուլտուրական շահերն ու պահանջները։ Նա ժողովրդի մարդ էր, ժողովրդի ծոցից դուրս եկած, թեև կուլտուրայով և կենցաղով նրանից շատ էր բարձրացել, սակայն աշխարհայացքով մնացել էր նրան հարազատ, նրա շահերին նվիրված, նրա ցավերով մտահոգված գործիչ։ Եվ որքան ավելի էր բարձրացել նա կուլտուրայով, այնքան ավելի խոր էր տեսնել իր տառապած ժողովրդի կարիքները, այնքան ավելի խոր զգացել իր որդիական պարտականությունները ժողովրդի հանդեպ։ Աբովյանը իբրև գրող իր առջև տեսնում էր միայն մի ճանապարհ՝ դեպի ժողովուրդը տանող ճանապարհը։ Սակայն Աբովյանը տեսնում էր նաև, որ այդ ճանապարհին նրա դեմ կանգնած էին եկեղեցու հետադեմ սպասավորները, ժամանակի ռեակցիոն մտավորականությունը՝ խրախուսված և պաշտպանություն գտած ցարիզմից։ Հեշտ չէր տրադիցիային դեմ գնալը, դա անպատիժ չէր անցնելու։ Այս բանը խորապես գիտակցում էր Աբովյանը և այդ գիտակցությունից էլ ծնունդ էին առնում նրա հուսահատ խոհերը։ «Շատ անգամ ուզում էի գլուխս մահու տամ, չէի իմանում, թէ սրա չարեն ի՞նչ կլի»*[2]*— գրում է վիպասանը։*

Մեր այն ժամանակվա գրականությունը պահանջում էր համակողմանի արմատական հեղաշրջում։ Գրաբարը աշխարհաբարով փոխարինելը դա խնդրի մի կողմն էր։ Կղերա-սխոլաստիկ գրականությունը խորթ էր ժողովրդին ոչ միայն լեզվով, այլև իր բովանդակությամբ։ Ուստի նոր-աշխարհիկ գրականությունը կենդանի լեզվի հետ պետք է բերեր կենդանի, այժմեական բովանդակություն, նոր ժամանակների շունչն ու ոգին, պետք է իջներ երկնային բարձունքներից և հիմնվեր իրական հողի վրա, պիտի սնվեր և ուռճանար իրականության կենսական հյութերով։

Այս խնդիրների տեսանկյունից նայելով ժամանակի եկեղեցական պաշտոնական գրականությանը, Աբովյանը հանգում է տխուր եզրակացության, նշում նրա խզվածությունը կյանքից, նրա սխոլաստիկ բնույթը։ «Սիրտս ուզում էր պատռվի,— գրում է Աբովյանը,— որ էս եկեղեցանց ձեռքն էլ՝ ինչ հայի գիրք տալիս էի չէին հասկանում։ Ռուսի, Նեմեցի,

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 4։

[2] Նույն տեղում, էջ 4։

Ֆրանցուզի լեզվումը ինչ բան որ կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին էնպես բաները դիր գալիս։ Ուզում էի շատ անգամ մազերս պոկեմ՝ որ էս օտար լեզուքը ավելի էին սիրում, քանց մերը։ Բայց պատճառը շատ բնական էր։ Էն լեզվըներումը նրանք կարդում էին է՛ն բաները, որ մարդի սիրտ կարող էր գրավել, չունքի սրտի բաներ էին՝ ո՞վ չի՛ սիրիլ։ Ո՞վ չի՛ ուզիլ լսիլ՝ թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ի՞նչ զատ էն, բայց մեր լեզվումը՝ թե էսպես բաներ ըլին, թո՛ղ աչքս հանեն... ինչ կա՝ եկեղեցու վրա յա, Աստծու ու սըրբերի»[1]։ Եվ ապա՝ «Հեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Սոֆոկլեսի գըրքերը՝ երեխեքն էլ գլխատակերին ունեին, չունքի բոլորը աշխարի բաներ են»[2]։

Աբովյանը կտրականապես առարկում է այն մարդկանց, որոնք ժողովրդին մեղադրում են անընթերցասիրության մեջ և դրա հետևանքը համարում նրա խեղճությունը, կուլտուրական կյանքից կտրված լինելը։ Գրողի կենսափորձը նրան հակառակն է ասում։ Նա տեսել էր, թե ինչպես «էս մեր կարդալ չսիրող ազգը Ռոբինզոնի պատմությունը... ձեռնե ձեռ էր ման ածում», նա տեսել էր, թե ինչպես խալխը «մեյդանում, փողոցում մեկ քոռ աշըղի է՛նպես էն հայիլ մայիլ մնացել ու կանգնել՝ ականջ դնում, փող բաշխում նրան»։

Սրանք կյանքում դիտված շատ ուշագրավ փաստեր էին, որոնք Աբովյանը խոր կերպով իմաստավորելով և ընդհանրացնելով՝ հանգում էր հակառակ եզրակացության։ Ոչ թե ազգի անընթերցասիրության, այլ նրա հոգևոր ուսուցիչների ապիկարության մեջ էր նա տեսնում պատճառը այն կորստաբեր իրողության, «որ էլ Հայի գիրք ձեռն առնող, էլ Հայի լեզուն խոսող քիչ ա գտնվում»։ «Մեկ ազգի պահողն էլ,— շեշտում է Աբովյանը,— լեզուն ա ու հավատը, թե սրանք էլ կորցնենք, վա՛յ էկել ա մեր օրին»[3]։

Ստեղծված այս կացությունից այն ժամանակվա պայմաններում հեշտ չէր ելք գտնելը, բայց և անհնարին չեղավ այդ Աբովյանի համար։ Նրան ոգի էր տալիս ժողովրդի սերը, նրան սխրագործության էր կոչում պարտքի գիտակցությունը, ծանր գիտակցությունը այն բանի, որ հայ ժողովուրդը դարերով հետ էր մնացել քաղաքակիրթ մարդկությունից, և որ նրա լինել չլինելու հարցը կարող էր լուծվել միայն մի ճանապարհով՝ քաղաքակրթվելու և ազգային բարձր ինքնագիտակցության, ազգության գաղափարը ձեռք բերելու ճանապարհով։ Ողբերգական սերը այս դեպքում ևս հրաշագործ հանդիսացավ, ընկան Աբովյանի մտքի ու լեզվի կապանքները. «Միտք արի, միտք արի, մեկ օր էլ ասեցի ինձ ու ինձ, արի՛ քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալիր, ղրաղ դի՛ր ու մեկ աշըղ էլ դու դառ, ինչ կլի կլի, խանչալիդ բարը հո վեր չի՛ ընկնիլ,

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 2—3։

2 Նույն տեղում, էջ 3։

3 Նույն տեղում, էջ 5։

ցար վարազդ հո չի գնալ։ Մեկ օր էլ դու վեր կընկնիս, կմեռնիս, մեկ ողորմի ասող էլ չես ունենալ»[1]։

Այսպիսի անօրինակ, ծանր ու ցավատանջ երկունքով ծնունդ առավ հայ նոր աշխարհիկ գրականության անդրանիկ, ուստի և ամենասիրելի զավակը՝ «Վերք Հայաստանի» վեպը։

Աբովյանի մաքառումները հաղթանակով պսակվեցին։ Պատմական այդ մեծ հաղթանակի գիտակցությամբ էլ հենց հնչեցին առաջաբանի հետևյալ նշանավոր տողերը. «Թող ինձ այսուհետև ոդետ կանչեն. լեզուս բաց ա էլել՝ ի՛մ ընտիր, ազիզ, ի՛մ սրտի սիրեկան ազգ։ Թո՛ղ՝ տրամաբանություն գիտեցողը իրան համքյարի համար գրի, ես քո կորած, շվարած որդին՝ քեզ համար»[1]։

«Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում» Աբովյանը ոչ միայն ժխտող է, այլև հաստատող, նոր ուղիներ ուրվագծող։ Տալով ժամանակի պաշտոնական գրականության գնահատությունը ժխտական դիրքերից, նա միաժամանակ, տալիս է սպառիչ պատասխանը այն հարցի, թե ո՛րն է լայն մասսաներին սպասարկող գրականության ստեղծման ուղին, ինչպիսի՞ն պիտի լինի այդ գրականությունը՝ թե իր ձևով և թե իր բովանդակությամբ, լեզվով և թեմայով։ Աբովյանը տվեց մեր նոր գրականության հիմնադրման ու հետագա զարգացման տեսությունը, որը համառոտակի կարելի է ձևակերպել այսպես. ժողովրդի լեզվով, ժողովրդի կյանքից, ժողովրդի համար։

«Հառաջաբանը» հանդիսացավ սկզբնավորվող հայ նոր գրականության մանիֆեստը։

* * *

«Վերք Հայաստանին» առաջին հայ վեպն է, միաժամանակ առաջին հայ պատմավեպը։ Առակների գրքի առաջաբանում Աբովյանը խոսելով իր վեպի մասին, ասում է. «Նրանով կարելի է իմանալ էն ժամանակվա մեր աշխարհի հալը»։ Սրանով արդեն ինքը՝ հեղինակը տվել է իր երկի ճիշտ ու որոշակի բնութագրությունը։ Կարելի է վստահ ասել, որ «մեր աշխարհք» ասելով Աբովյանը նկատի ուներ ոչ միայն Հայաստանն ու հայ ժողովրդին, այլև մասամբ Անդրկովկասն իր ժողովուրդներով։ Համենայն դեպս փաստ է, որ հայ պատմագրության համար XIX դարի 20-ական թվականների Հայաստանի և Անդրկովկասի պատմության ուսումնասիրության ամենաարժեքավոր աղբյուրներից մեկը հանդիսանում է «Վերք Հայաստանին»։

Դա մի ժամանակաշրջան էր, երբ պարսից խաների լծի ներքո ճգնաժամային օրեր ապրող երկիրն ու ժողովուրդը փրկության ելք էր որոնում օրհասական վիճակից։ Զևակերպվում էր ժողովրդի քաղաքական կողմնորոշումը (օրիենտացիա) դեպի Ռուսաստան, որը տիրելով Վրաստանին ու Ադրբեջանին, ձգտում էր լայնացնել իր նվաճումները Անդրկովկասում։

---

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 4։

2 Նույն տեղում, էջ 6։

Ո՛չ միայն բուն երկրում, այլև հեռավոր հայկական գաղութներում ժողովրդի ազգային վերածնության անդրանիկ գործիչները (Շ. Շահամիրյան, Հովսեփ Էմին և ուրիշներ) այլ կերպ չէին պատկերացնում թուրք-իրանական ստրկության լուծը թոթափելու միջոցը, քան Ռուսաց տերության օժանդակությանը ապավինելով։

Հովհաննես Թումանյանը իր «Երևանի կռիվը և Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» իբրև պատմություն» ուսումնասիրության մեջ բնութագրելով Հայաստանի և հայ ժողովրդի, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասի վիճակը ռուս-պարսկական պատերազմի նախօրեին ու բուն պատերազմի ընթացքում, Աբովյանի վեպը որակում է որպես այդ ժամանակաշրջանի մի փայլուն տարեգրություն, «մեծ տանջանքի», մեծ պատերազմի ու մեծ հույսերի ժամանակի» իմաստուն արտահայտություն։ «Այդ գրքի մեջ է ամփոփված հայ ժողովրդի վերջին ժամանակների տանջանքներն ու տենչանքները և գաղտնիքն էլ հենց սրա մեջ է, որ նա մեզանում համարվում է մի սրբազան գիրք»— գրում է Թումանյանը»[1]։



«Վերք Հայաստանի» վեպի առաջին հրատարակության անվանաթերթը

Պատմական աղբյուրներից քաղած բազմաթիվ փաստերի և վեպի պարունակած տվյալների համադրումով Թումանյանը շեշտում է «Վերքի» անառարկելի պատմականությունը, XIX դարի առաջին տասնամյակների հայ ժողովրդի պատմության ամենաստույգ գեղարվեստական վավերագիրը հանդիսանալու հանգամանքը։ «Վերք Հայաստանի» վեպի պատմականությունը բացահայտվում է ոչ միայն պատմական կարևոր անցքերի և անձերի իրապատումով, այլև ժողովրդի քաղաքական պայմանների, նրա սոցիալական և կուլտուրական վիճակի, ժամանակի բարքերի ու հասկացողությունների, ժամանակի ոգու և տրամադրությունների պատմական հավաստիականությամբ։

Սակայն խոսելով «Վերքի» մասին իբրև պատմավեպի, պետք է ընդգծել, որ մի հիմնական հատկությամբ այն տարբերվում է Ծերենցի, Րաֆֆու և Մուրացանի պատմավեպերից։ Մինչ հիշյալ հեղինակները իրենց

---

1 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, 1960, էջ 256։

պատմավեպերում վերարտադրում են հնավոր անցյալը, Աբովյանի նկարագրած «պատմական դեպքերը» դեռևս թարմ էին, դեռ չէին էլ դարձել բառիս իսկական իմաստով պատմություն։ Ինքը, Աբովյանն այդ դեպքերի ժամանակակիցն էր ու մասնակիցը և այդ է պատճառը, որ նա իր նկարագրած անցքերին ու անձերին նայում է իբրև կենդանի իրականության։

Այս իմաստով էլ «Վերք Հայաստանին» պատմական վեպ լինելով հանդերձ, Աբովյանի ապրած ժամանակաշրջանի համար միանգամայն ժամանակակից երկ էր, քաղաքական մեծ լիցքով, ժամանակի ամենաայրող հարցերին արձագանքող մի երկ։

XIX դարի 30—40-ական թվականներին մեր պատմության օրակարգում դրված հիմնական խնդիրը հայ ժողովրդի պատմական ճակատագրի հարցն է։ Ահա, հենց այդ էլ դարձել է «Վերք Հայաստանի» վեպի կենտրոնական հարցը։ Պատմական ինչպիսի՞ ուղի է անցել հայ ժողովուրդը, ինչպիսին էր նրա վիճակը նշանավոր այն դեպքերի՝ ռուս-պարսկական պատերազմի նախօրյակին և թե ի՞նչ էր նշանակում հայ ժողովրդի համար 1827 թվականի պատմական իրադարձությունը՝ ռուսական տիրապետության տակ անցնելը։ Ահա, այս խնդիրներն է, որ առաջ է քաշում Աբովյանը և հիմնական այդ խնդիրների շուրջն է, որ դառնում է «Վերք Հայաստանին»։

Մի ակնարկ նետելով հայ ժողովրդի անցած պատմական ուղուն՝ Աբովյանը իր ժողովրդին բնութագրում է որպես աշխարհի ծանրագույն ճակատագիր ունեցող ժողովուրդներից մեկը։

Հայ ժողովրդի պատմությունը, դա ողբերգական պատմություն է, սակայն ըստ Աբովյանի, այդ պատմությունը միաժամանակ և հերոսական պատմություն է, քանի որ հայ ժողովուրդը ամենադաժան անցյալում, բարբարոս ժամանակներում, գերագանց ուժի դեմ անդուլ մաքառման պայմաններում չի ընկճվել, չի ոչնչացել, ապրել է, ապրել հարուստ, ստեղծագործ կյանքով, և թեկուզ հոշոտված, արյունաքամ, բայց կենդանի դուրս պրծել պատմության արյունոտ ժանիքներից, եկել, հասել է XIX դարը։

«...Քսան տարու միջում՝ լուսավորյալ, քրիստոնյա, խաչապաշտ եվրոպացոց ազը՝ ողորմելի Ամերիկա էնպես քանդեց, ջնջեց, հողի հետ հավասարեց, որ հինգ վեց միլիոն ազգերիցը՝ էս օր հազար հոգի էլ չեն մնացել, էն էլ սար ու ձոր ընկած, վայրի գազանների պես են իրանց սև օրը լալիս ու կոտորվում. բաս ի՞նչ աներ Հայոց խեղճ ազգը, որ... ոչ թե քրիստոնեի, կամ լուսավորյալ ազգի, այլ հեթանոսի, կռապաշտի, մահմեդականի, անօրենի ձեռին էր՝ աչքը բաց անում. նրանց հետ քյալլա տալիս, ու շատին շատ անգամ՝ իր ոտի տակը քցում, բայց կարո՞ղ էր վարդը ծովի միջում զորանալ, մանիշակը կրակի առաջին դիմանալ, կարո՞ղ էր կակղ ցորենի հասկն էն կայծակին ու կարկտին համբերել, որ մեր ազգը իր թշնամուն համբերել էր, յա դիմացել։ Հայո՜ց ազգ, Հայո՜ց ազգ, ձեր ջանին մեռնիմ. Հայոց ազգ՝ քո հողին մատաղ՝ Հայոց աշ-

խարհ՝ էն ո՞ր կաթը դուք ծծեցիք, էն ո՞ր մեջքը ձեզ բերեց, էն ո՞ր ձեռը ձեզ գրկեց, էն ո՞ր բերանը ձեզ օրհնեց, որ դուք էս հոգին ունենաք, էս սիրտը ձեր միջումը ըլի, էս հրաշքը դուք աշխարքին ցույց տաք»[1]։

Հայ ժողովրդի ողբերգական անցյալի մեջ Աբովյանի համար ուրախալին և գոտեպնդիչը նրա անօրինակ կենսունակությունն էր, ապրելու աներեր կամքը, ստեղծագործական զարմանալի ոգին։ Այդ էր, ահա, որ ոգի առած Աբովյանի մեջ այնպիսի հզոր ձայնով և վիթխարի ուժով խոսեց ժողովրդի գալիքի մասին, աղդարարեց նրա ապագան։

Հայ ժողովրդի անցյալի ամբողջ պատմության մեջ, Աբովյանի կարծիքով ծանրագույնը վերջին շրջանի պարսիկ խաների տիրապետության ժամանակաշրջանն էր։ Աբովյանի պատկերավոր արտահայտությամբ հայ ժողովուրդը «շունչը բերանը հասած» իր օրհասին էր սպասում։ Եվ հենց այդ վիճակն էր, որ ժողովրդին իմաստնացրեց, խթանեց նրա ազգային ինքնագիտակցությունը։ Ռուսների օգնությամբ պարսից լծից ազատագրվելու ձգտումը դարձավ համազգային տենչանք։ Այլևս անհնարին էր բռնակալության դեմ ընդվզող ժողովրդին կաշկանդել կրոնավորների կողմից քարոզվող քրիստոնեական անհիշաչարության մորալով։

«Քրիստոնեն սրով չի պետք է բանը յոլա տանի, նրա թուրը իր համբերությունն ու հավատն ա»։ Այսպես քարոզող վանականը վճռական հակահարված է ստանում ժողովրդի ներկայացուցչի կողմից։ «Թուր որ չունիս՝ գլուխդ կտրում են, օղլուշաղդ քաշում, կերածդ հարամ անում, աշխարհքն էսպես ա, ինչ կարաս անիլ։ Աստված ղշին, հայվանին էլ՝ յա չանգ ա տվել, յա պոզ, յա ատամ, որ չանկռի, հարու տա, կծի, իր գլուխը պահի»[2]։

Վեպի հերոսը՝ Աղասին, ժողովրդի ինքնապաշտպանության բնական իրավունքի Աբովյանի տեսության գեղարվեստական մարմնացումն է։ հանդիսանում։ Բնորոշ է, թե հեղինակը ինչ կերպ է բացատրում՝ Աղասուն և ոչ մեկ ուրիշին իր վեպի հերոս դարձնելու փաստը։ Աբովյանը գրում է.

«Մեկ բարիկենդանի՝ աշակերտներս որ բաց թողի, սկսեցի՝ ինչ որ երեխայությունիցս լսած կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անիլ։ Վերջը իմ ջիվան Աղասին միտս ընկավ, նրա հետ հարիր քաջ Հայի տղեք էլ իրանց գլուխը բարձրացրին ու անմենն էլ ուզում էին, որ իրենց ոտը գնամ։ Մյուսները մեծ մեծ մարդիկ էին շատն էլ դեռ հլա սաղ սալամաթ՝ փառք Աստծու՝ Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին ղուրբան։ Ասացի կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի»[3]։

Աղասին ոչ միայն ռուս-պարսկական պատերազմի հերոսներից էր՝ պատմական-իրական անձնավորություն, այլև իբրև հասարակ ժողովրդի զավակ՝ ժողովրդի ձգտումներն ու տենչերը բացահայտելու տեսակետից ևս շատ ավելի էր բնորոշ և տիպական էպոխայի համար, քան նրանք,

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 55։

2 Նույն տեղում, էջ 82։

3 Նույն տեղում, էջ 4—5։

որոնց Աբովյանն անվանում է «մեծ մեծ մարդիկ», զանազան հայ իշխանազուններ։ Պատկերելով Աղասուն, Աբովյանը պատկերում է ժողովրդի մասսայական զարթոնքը, ժողովրդի հերոսականությունը։

Վեպը սկսվում է Քանաքեռում Բարիկենդանի տոնի նկարագրությամբ։ Կենցաղային-ազգագրական հյութեղ կոլորիտային պատկերները տրված երգիծական շեշտով, բնության էպիկական, մի փոքր էլ հիպերբոլիկ նկարագրությունները, ժողովրդի խոսք ու զրույցի թեման ու եղանակը—այս ամենը վեպի առաջին իսկ էջերից ընթերցողին տեղափոխում են պարսից տիրապետության օրերի՝ պապենական բարքերով ու հասկացողություններով ապրող հայ գյուղը։

Այս կենդանի պատկերների և դրանցում բացահայտված գյուղի հասարակական կյանքի ֆոնի վրա վիպասանը հանդես է բերում իր հերոսին։

«Նրա սուրահի բոյը, նրա թուխ թուխ աչքերը, նրա ղալամով քաշած ունքերը, նրա աննման, գեղեցիկ պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր ձենը, նրա լեն թիկունքը, բարձր ճակատն ու ոսկեթել ճալվերը մարդի խելք էին տանում, տեսնողը մաթ էր մնում, չէ՛ր կշտանում»[1]։

Ամեն բանով արտասովոր է Աղասին։ Շատ են նրա բարեմասնությունները։ Հիանալի նվագել գիտի սազի վրա։ Նրա թվանքի գյուլլեն դատարկ չի անցնում, արտակարգ ուժի տեր է։ Ուժի և քաջության համար նրան Ասլան բալասի են անվանում։ Բայց մյուս կողմից նա իսկական երկրագործ է, բացառիկ եռանդով կպած գյուղական աշխատանքին։ Աղասին չքավոր-կարիքավորի նեցուկն է, թույլի պաշտպան, մանկան պարզ հոգի ունի։ Նա երեխայի հետ երեխա է, բայց և գիտի շահի ու խանի առաջ համարձակ կանգնել և արժանավայել պատասխան տալ։ Այսպիսին է Աղասին, ամբողջ գյուղի սիրելին։

Աբովյանը իր հերոսին օժտել է նաև հարուստ ներաշխարհով։ Իր առաջին իսկ ասած խոսքով Աղասին լայն ճեղք է բացում գյուղում թագավորող նահապետական աշխարհայացքի մեջ։

«— Է՛հ՝ ժամ չի՛ դառավ մեր գլխին, մեկ իշի հարսանիք դառավ, տո՛»[2],— զանգատվում է Աղասին և իր հետագա խոսքերում ծածկում մի սուր, թունոտ երգիծանք ընդդեմ պորտաբույծ հոգևոր դասի և եկեղեցական ծեսերի։ «Նրա համար ժամն ու իշի հարսանիքը մեկ էր»[3],— ասում է վիպասանը իր հերոսի մասին։ Անհեթեթ ու անիմաստ են թվում Աղասուն կրոնական ծեսերը, որովհետև նա չի տեսնում առնչություն այդ ծեսերի և մարդկային կյանքի պահանջմունքների միջև։ Դրա հակառակ, նրան հմայում, կախարդում է բնությունը, ուր ամեն ինչ այնքան ներդաշնակ է, այնպես խորիմաստ, այնքան օգտակար մարդկանց կարիքներին գոհացում տալու տեսակետից։ Բնության ծոցում Աղասին լցվում է խոր մտքերով, ազնիվ զգացմունքներով, դառնում իմաստուն։

---

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 16։

2 Նույն տեղում, էջ 9։

3 Նույն տեղում, էջ 10։

«Թե ասեմ երկիրն ա մենակ գեղեցիկ,— խորհում է Աղասին,— հազար ծաղիկներով, բուսով զարդարված, բաս երկինքն ո՞ւր թողամ, որ ցերեկը ինձ լիս ա տալիս, հանգիս պտուղը հասցնում, գիշերը մութն իմ աչքիցս հեռացնում ու էսպես չադրի պես գլխիս վրա կանգնած՝ անձրև, արև տալիս, որ ես ապրեմ, որդիքս պահպանեմ, աշխարհքի պետքը գամ՝ որ մեռնելիս էլ գան հողիս վրա, ինձ մեկ ողորմի ասեն»[1]։

Դարձյալ բնությունն է և ոչ թե եկեղեցին, որ Աղասուն թելադրում է կյանքի սկզբունքներ, բարոյական նորմաներ։ Նրան թվում էր, որ բնությունը հազար ձևերով իրեն ձայն է տալիս, ասում «Հողածին մարդ, բարի կաց, բարություն արա, ծառի պես պտուղ տուր, ծաղկի պես հոտ, սարի պես աղբյուր, դաշտի պես մասիլ, երկրի պես հաց, երկնքի պես լիս, վայելիր Աստուծո բարությունը, ուրիշին էլ փայ տուր, աղքատ տեսնելիս կերցրու, կշտացրու, ղուշը վրովդ անց կենալիս կանչիր, կուտ տուր, դու առատ ձեռք ունեցիր, որ առատ առնիս ու բախտավոր ըլիս»[2]։

Եթե Աղասին լոկ սրի մարդ լիներ, չէր դառնա էպոխայի համար բնորոշ ամբողջական կերպար։ Նրա մարտական գործողությունները և նրա ներքին համոզմունքները, նրա հայացքները կյանքի մասին, սոցիալական, փիլիսոփայական ըմբռնումները իրար հետ սերտորեն կապված են։ Դա էլ հենց Աղասուն դարձնում է ամբողջական մարդ, հայ ժողովրդի վերածնության ժամանակաշրջանի բնորոշ արտահայտություն։

Իր հերոսի միջոցով Աբովյանն ընդգծում է, որ հայ իրականության մեջ ևս, մարդու արթնացող միտքը այլևս չի պարփակվում դոգմաների շրջանակներում, նա ամեն բանում որոնում է իմաստ, արդարացում, բանականություն։ Ինչ որ հակասում է մարդկայինին, ինչ որ դեմ է գնում մարդու բնական ու արդարացի պահանջներին ու ձգտումներին, մերժվում է ու դատապարտվում, իսկ հարկ եղած դեպքում՝ այն իր դեմ ոտքի է հանում կենաց կամ մահու պայքարի։ Հենց այս տրամաբանությամբ էլ վիպասանը անխուսափելի է համարում իր հերոսի՝ Աղասու հանդուգն ծառացումը ժողովրդի վրա բռնացող ուժի՝ պարսից բարբարոս տիրապետության դեմ։ Մարդու ազատության բնական իրավունքը բնական է դարձնում նաև ինքնապաշտպանության իրավունքը։

Աղասին՝ այնպես ինչպես նա ներկայանում է ընթերցողին վեպի հենց սկզբում՝ չէր կարող անտարբեր դիտողի դերում հանդես գալ, այնպիսի բիրտ գործողության նկատմամբ, ինչպիսին Թագուհուն առևանգելու փորձն էր սարդարի ֆառաշների կողմից։ Դա Աղասու աշխարհայացքին, նրա բարոյական ըմբռնումներին դեմ գնացող, նրա մարդկային և ազգային արժանապատվությունը վիրավորող մի արարք էր։ Սակայն այդ արարքը տիրողների անթիվ բարբարոսությունների և ապօրինությունների լոկ մի մասնակի արտահայտությունն էր։ Դա ջրի այն վերջին կաթիլն էր, որով լցվում էր Աղասու համբերության բաժակը, ստիպելով նրան զենք

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 12։

2 Նույն տեղում։

վերցնել։ Այս է ներքին իմաստն ու կապը, որ պիտի տեսնել եկեղեցու և կրոնավորների, ինչպես նաև բնության **առնչությամբ** Աղասու անեցած խոհերի ու խոհրդածությունների և **նրա մարտական գործողությունների** միջև՝ սկսած Թագուհու առևանգողներին **պատժելու** պահից, մինչև նրա նահատակությունը՝ Երևանի բերդը գրավելու պահին։

Ցուցադրելով պարսկական բռնակալության դեմ ծառացած Աղասուն, Աբովյանը դրանով իսկ շարդ ու փշուր է անում հայ հետադեմ կղերի կողմից քարոզված քրիստոնեական մոքալի այն թյուր սկզբունքը, որի համաձայն, սուր վերցնելը, ինչպիսի նպատակ էլ հետապնդելու լինի այն, չարիք է։ Աբովյանը զարգացնում է այլ տիպի մի ուշագրավ միտք. այնտեղ է ժողովրդի ոգին բարձր, բռնության հետ անհաշտ, ուր կրոնը չի խեղաթյուրել մարդուն՝ այստեղ մարդ լինելուց նրան չի դարձրել հանդուրժող ստրուկ և ուր որ ժողովրդի մեջ խոր արմատներ ունեն անցյալի հերոսական ավանդությունները։ Այդպիսիք են Փամբակի, Լոռու, Ղարաբաղի, Մշո, Ղարսի հայերը։ Աբովյանը գրում է. «Սարում, չոլում մեծանալով, շատ տերտերի ու ժամի ձեն չսելով՝ մինչև էս օր էլ իրենց սովորության հետ են քաջ տղամարդության հոգին էլ ունեն, **որը որ** ունեցել են մեր անհաղթելի նախնիքը։ Ու տեղն ընկած **վախտը՝ էլ ավետարանի** ու վարդապետի **խոսքը նրանց** չի **վախեցնում՝ թե որ արին վեր ածեն,** գժոխքը կերթան, ու մաքր բարձրացնողի՝ **սաղ ձեռն էին բերանը** կոխում, հայ թոցնողի **գլուխը թռցնում**»[1]։ Սրա **մեկը նրանցից՝** «Լոռու ձորերի աստված» **աժդահա** գելեցի **Թումանյան Հովակիմը, որի** անունը «**քարերն** էր սասանեցնում»։ **Բնութագրելով** նրան **իբրև հեքիաթի** ամենահզոր հսկայի, պատմելով նրա և նրա պես ուրիշների **սխրագործությունները**. Աբովյանը գրում է. «Ա՜խ, ի՜նչ տեղ են կենում՝ որ էսպես չանեն, էս սիրտը չունենան, վարժատան չէին՝ մեռած, բառով՝ անհոգի շնչով, թուլ լեզվով լսել՝ թե Հայք էլ վաղ թագավորություն ունեին, որ կամ չհավատային, կամ քուններր վարպետի անսիրտ պատմության վրա տանեին։ Ամեն քար նրանց համար գիրք ա, ամեն ապառաժ նրանց համար պատմություն, ամեն հին

«Վերք Հայաստանի» վեպի իլյուստրացիաներից. Աղասու նկարը

1 Խ. Աբովյան, *ԵԼԺ*, հատ. 3, էջ 91։

բերդ, քանդված մատուռ կամ եկեղեցի... նրանց համար կենդանի վարժապետ»[1]։ Եվ, ահա, այդ կենդանի, ապրող տրադիցիան է, որ ժողովրդին անընդհատ կրկնում է, հիշեցնում, ուսուցանում

«Շունչդ տուր, հոգիդ, բայց քո հայրենիք
Մի տուր թշնամյաց, ու անաշխարհիկ
Ընկնիլ սարե սար, լինիլ չարաչար
Ծառա օտարաց, կամ գերի անճար[2]։

Եվ կամ՝

«Թե մեկ ազգ իրան որ էս աշխարհում
Չի պահի, թշնամուն ինքը գերի կըլի,
Աստված էլ նրան աչքից կըքցի»[3]։

Այսպիսով, թե՛ բնությունը, թե՛ պատմական տրադիցիան և թե՛ ինքը՝ պստված, միևնույն բարոյական սկզբունքի՝ մարդու բնական ազատության սկզբունքի կողմն են և մարդուն թելադրում են գիտակցել հանուն ազատության պայքարի իր իրավունքն ու պարտականությունը։

Ճեշտելու համար ժամանակի հերոսականությունը, ժողովրդի մասսայական ձգտումը՝ ինչ գնով էլ լինի թոթափել բռնակալության լուծը, Աբովյանը վեպի գլխավոր հերոսի հետ մեկտեղ իբրև էպիզոդիկ կերպարներ հանդես է բերում իրենց հերոսական գործերով աչքի ընկած մի շարք այլ պատմական անձերի. Շամշադնեցի Գրիգոր եպիսկոպոսին, արծափեցի Մանուկ աղային, շուլավերցիներ Սոսի աղային և Մելիք Հոհանջանին, վերը հիշատակված դսեղցի Թումանյան Հովակիմին և այլն։ Վեպում սրանց քիչ տեղ է հատկացվում և չնայած այդ բանին, նրանցից յուրաքանչյուրը ունի հիշողության մեջ մեխվող ցայտուն բնութագիր։ Նրանց բնութագրող գլխավոր հատկանիշը հերոսականությունն է։ Աղասու նման նրանք իրենց անձը մոռացած ժողովրդական վրիժառուներ են, բռնության, ճնշման երդվյալ թշնամիներ։ Նրանցից յուրաքանչյուրը կարող էր արժանի լինել դառնալու վեպի գլխավոր հերոս և անշուշտ, նաև սրանց նկատի ունի վիպասանը, երբ առաջաբանում ասում է, որ Աղասու հետ «հարիր քաջ հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին ու ամենն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնամ»։ Այսպիսով «Վերք Հայաստանին» պատկերում է ոչ թե մեկ անհատի, այլ ժողովրդի հերոսականությունը, հանգամանք, որ այդ երկը դարձնում է ազգային դյուցազներգություն, ինչպես անվանել է Աբովյանի վեպը Հովհաննես Թումանյանը։

«Վերք Հայաստանի» վեպի հիմնական պաթոսը անհաշտ պայքարն է՝ պասիվության և հանդուրժողականության դեմ։ Չարիքը ոչ թե չարին հակադրվելու, այլ չարի հանդեպ հաշտվողական դիրք գրավելու մեջ է։ Բնորոշ է այս տեսակետից վեպի առաջին գլուխը եզրափակող հայտնի բանաստեղծությունը.

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 93։
2 Նույն տեղում, էջ 94։
3 Նույն տեղում, էջ 96։

Վա՜յ է՛ն ազգին, որ աշխարքումս անտեր ա,
Վա՜յ է՛ն երկրին, որ թշնամուն գերի ա,
Վա՜յ է՛ն խալխին՝ որ ինքն իր կյանքն, աշխարքը
Չի՛ պահպանիլ ու հարամու ձեռ կտամ[1]։

Բանաստեղծության հաջորդ յոթ քառատողերում, հետզհետե թանձրացող գույներով, կյանքից առած ճշմարտացի և բազմիմաստ պատկերներով հեղինակը ավելի և ավելի է խորացնում բիրտ ուժի դեմ ծառանալու հրամայական անհրաժեշտության գաղափարը։ Բոլոր ութ քառյակները մի նշանակետի են խփում, հետևողականորեն մի գաղափար պրոպագանդում. ժողովրդի գոյության իրավունքը ձեռք է բերվում ժողովրդի գիտակից և մտածված ամենօրյա պայքարով։ Ինքնապաշտպանության անընդունակ ժողովրդին անխուսափելիորեն սպառնում է ստրկություն և կործանում։ Աղասու և իր մյուս հայրենասեր հերոսների կերպարներով Աբովյանը շեշտում է, որ հայ ժողովուրդը արդեն հասու է դառնում այդ փրկավետ գաղափարին։

* * *

Իբրև պատմիչ և վկա հայ ժողովրդի պատմության ծանրագույն ժամանակների, Աբովյանն իր վեպի հաջորդ գլուխներում հետզհետե խորացնում է պարսից վայրագ տիրապետության պատկերի բացահայտումը։ Վեպի երկրորդ մասը սկսվում է Երևանի բերդի հայտնի նկարագրությամբ։

«Էն քարափի վրա՝ ցից գլուխը բարձրացնում, թամաշա յա անում հանդարտ՝ հազար գլխանի դևի պես՝ **Երևանու**՝ *հազար տարեկան քավթառ, պառաված, չորս կողմը խանդակով կապած, բրջերով ղայիմացրած, սուր սուր ատամները գլխին շարած, հինգ գավաչափ հաստ պարսպով երկու տակ բռնած, մեկ ոտը* **Կոնդումը**, *մեկ ոտը* **Համուրբուլաղի** *գլխին դրած, մեկ բերանը հյուսիս, մեկը հարավ բաց արած, չորացած գլուխը երկինքը ցցած, լեն փեշերը երկրումը փռած, անամոթ երեսը կոխած, սվաղած, հազար բնով, հազար փանջարա աչքերը դես ու դեն չռած, ջուխտ չանգերով Զանգվի՝ քարոտ, զարհուրելի, սևադեմ ձորը խոտտած, դոշին կպցրած, անմազ, անլեզու, մարդակեր* **բերդը**, *ու դեղնած երեսը հեռու տեղից ծածկում, ագահ աչքերը գետնին քցում, որ միամիտ տեսնողին դհա շուտով խաբի, դհա հեշտ իր ծոցը քաշի ու բիրադի, անձեն, անսաս կուլ տա, փչացնի»*[2]։

Մի շարք էջեր գրավող այս հոյակապ նկարագրությունը բերդի պատկերից գերաճում, փոխվում է ողջ խանական-ֆեոդալական իշխանության պատկերի՝ իր վայրագ, հակամարդկային էությամբ։

«Երևանու բերդը՝ Երևանու բերդը, ախ՝ աչքս դուս գա, քանի քանի ողորմելի Հայի միս ա կերել, քանի քանի անմեղ հոգի՝ տարիքներով չար-

---

1 Խ. Աբովյան. *ԵԼԺ, հատ. 3, էջ 51։*

2 *Նույն տեղում, էջ 53։*

չարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ ըլելուց, կրակի, բոցի, երկաթե շամփրի, թոխմախի, կրակած քարփչի տանելուց, համբերելուց եդը, կաս թոփի գյուլլի հետ ա թռել, հազար կտոր էլել, կամ տարաղաչի (կախաղանի) վրա յա՝ գոռալով, երկինք, երկիր աղաչելով, իր միսն իր ատամներովը կրծելով, աչքերը դուս տրաքացնելով, ղովում, դարդաշ, իրավորի, ազգականի, իր որդոց, կավակաց ձենը լսելով, տրորվելով, փոթոթվելով հոգին ավանդել, երկինքը գնացել, որ պրծնի էս դառն աշխարհիցը, էն կատաղի գազանների ձեռիցը»[1]։

Բայց Աբովյանը չի կամենում, որ իր խոսքերը մնան պատմական կոնկրետ հիմքից զուրկ, անապարկայական։ Եվ, ահա, Երևանի բերդի նկարագրությանը հաջորդում են ժողովրդի գլխից անցած մեկը մյուսից զարհուրելի աղետների կոնկրետ նկարագրություններ։ Ցնցող ուժով տրրվում են Երևանի քոչի, Խլղարաքիլիսայի կովի և կոտորածի, քանաքեռցիների գլխով անցած հետագա դեպքերի և բազմաթիվ այլ ողբերգական իրադարձությունների նկարագրություններ։

Ահավոր տպավորություն է թողնում ռուս-պարսկական պատերազմի միջոցին «արինակեր» Հասան խանի կողմից կազմակերպված Խլղարաքիլիսայի գերիների կոտորածի նկարագրությունը։ Ինքը՝ հեղինակը, ցնցվում է այդ տեսարանի առաջ։ «Բայց վա՜յ ինձ, ո՞ւր հասա, ո՞ւր տարավ ինձ իմ կսկիծը, իմ էրված սիրտը։ Լեզուս չի, որ խոսում ա, հոգիս ա, որ ղգում ա, ազգիս արինը առաջիս թափում, իմ հայրենիքն առաջիս քանդվում, իմ սիրելի ախպոր աղի արտասունքը ու դառը սուքը՝ սիրտս էրում, խորովում...»[2]։

Ամենաողբերգական գույներով ներկայացնելով վերոհիշյալ իրադարձությունները, Աբովյանը միաժամանակ, անկրկնելի ոգևորությամբ և խանդով ի լուր աշխարհի պատմում է հարազատ ժողովրդի բաբեբախտությունը՝ կապված պարսիկ խաների տիրապետության տապալման և Ռուսաստանի հովանու ներքո անցնելու փաստի հետ։

1841—1842 թվականներին, երբ Աբովյանը գրեց իր «Վերք Հայաստանին», արդեն որոշ էին նրա մոտ «քրիստոնյա և լուսավոր» ռուսաց տերությունից հիասթափվելու նշանները։ Այդ մասին մենք նկատեցինք նաև պոեզիան վերլուծելիս։ Բայց Աբովյանը գրում է պատմական վեպ, ուստի նա իրեն պարտական է համարում վերարտադրել պատմական իրականությունն այնպես, ինչպես որ այն կար, վերարտադրել նկարագրվող ժամանակաշրջանի տեսանկյունով։ Աբովյանը հարազատորեն կենդանացնում է իր ժողովրդի մտքերն ու հույզերը։ Իսկ այդ մտքերն ու հույզերը անցյալ դարի 20-ական թվականներին և դրանից էլ շատ առաջ ուղղված էին դեպի Ռուսաստան։

1 Խ. Աբովյան, Երկ., հատ. 3, էջ 59—60։

2 Նույն տեղում, էջ 111։

Այս իմաստով շատ բնորոշ են բարիկենդանի սեղանն օրհնող գյուղական քահանայի խոսքերը. «Տե՛ր աստված՝ դու մեր ռուս թագավորի սիրտը ռահմ քցես, որ գա, մեզ ազատի՛, ընչանք մահ մի՛ տար մեզ մինչև նրանց երեսը տեսնինք»[1]։ Աբովյանն ընդգծում է, որ քահանայի խոսքերը գյուղացիների սրտից էին բխում։

Ինչպես վերը ասվեց, կովկասահայերի այդ ժամանակվա քաղաքական վիճակը Աբովյանը նմանեցնում է «շունչը բերանը հասած» մարդու վիճակի։ Այդ վիճակից հայերը մի ելք էին սպասում՝ «որ ռուսաց հզոր արծիվը գա ու իրանց հողն ու զավակը իր թևի տակն անի»[2]։ Եվ եթե «եվրոպացիք Ամերիկա ավերեցին, հողի հավասարեցին», ապա «Ռուսք Հայաստան կանգնեցրին ու ասիացվոց բիրտ, գազան ազգերին մարդասիրություն ու նոր հոգի տվին»[3]։ Ահա թե ինչու հայերը չեն կարող մոռանալ ռուսաց արածը. «օրհնվի էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց»։

«Վերք Հայաստանի» վեպում Աբովյանը ոչ միայն արձանագրում է այն դերը, որ ունեցան ռուսները հայերի կյանքում 1827 թվականի պատմական ակտով, այլև մատնանշում այն հեռանկարը, որ բացվում էր հայ ժողովրդի առաջ՝ ռուս ժողովրդի հետ քաղաքական սերտ կապերի մեջ մտնելու պահից ի վեր։ Ըմբռնելով, որ ազգերի և ժողովուրդների պատմական մրցակցության մեջ հայ փոքրաքանակ ժողովուրդը, որքան և օժտված կենսական ուժերով, այնուամենայնիվ իր գոյությունը պահպանելու համար պետք է հենվի բարեկամական մի հզոր ուժի, Աբովյանը մատնացույց է անում ռուս մեծ ժողովրդին։ Կենսական ու ճշմարտացի այդ միտքն է արտահայտված վեպի հավելվածում՝ Արաքս և Զանգի գետերի՝ Վոլգայի հետ մտերմանալու սիմվոլիկ պատկերով։

Ռուսական պետականության և ռուս ժողովրդի փառաբանությունը վեպում այնքան զգալի տեղ է գրավում, որ ոմանց մոտ տպավորություն է ստեղծվել, թե Աբովյանը հենց այդ նպատակով էլ գրել է «Վերք Հայաստանին»։ Այսպիսի պնդումը ինչ խոսք, որ անհիմն է։ «Վերք Հայաստանի» վեպի նպատակը «մեր քաջ հայերի պատմությունը» գրելն էր և ոչ այլ բան։ Եվ եթե դրան զուգահեռ՝ վիպասանը հավատարիմ պատմական ճշմարտությանը հայ ժողովրդի երախտագիտությունն է արտահայտում բարեկամ ժողովրդի հանդեպ, ապա դրանից հարցի էությունը չի փոխվում։ Առավել անհիմն կլիներ մտածել, թե միապետի և նրա գեներալների հասցեին մեծարանքի ջերմ խոսքեր շռայլող վիպասանը՝ ցարական Ռուսաստանի տիրապետությունը մի իդեալական վիճակ է համարել իր ժողովրդի համար։

---

1 Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 3, էջ 33։*

2 *Նույն տեղում, էջ 55։*

3 *Նույն տեղում, էջ 180։*

Աբովյանը առաջինն էր մեզանում, որ առանձին ուժով ծառացավ գաղութային ճնշման դեմ, գաղութարարությունը հայտարարեց խղճի և բանականության դեմ մի բան, իր խորին համակրանքն արտահայտելով ճնշված ժողովուրդների նկատմամբ։ «Հազարափեշեն» սատիրապոեմը, «Ամերիկու լիս քցիլը» պատմա-աշխարհագրական ակնարկը, մի շարք զրույցներ, չափածո գործեր, մղում են ստանում Աբովյանի սրտում այնպես խոր արմատավորված՝ ժողովուրդների ազատ և ինքնավար գոյության հումանիստական գաղափարից։ Բայց այդ գաղափարի ամենամեծ ծնունդը «Վերք Հայաստանին» է։ Հայ ժողովրդի ազատ և ինքնիշխան գոյության գաղափարը փառաբանող այդ երկի մեջ Աբովյանը չէր կարող սրբագործել ցարիզմի գաղութային իշխանությունը։ Այդ իշխանության դառը պտուղները Անդրկովկասում, գաղտնիք չէին Աբովյանի համար։ Սակայն կար մի ճշմարտություն էլ, որ նույնպես մեծ գրողը չէր կարող անտեսել։ Դա պարսից տիրապետության համեմատությամբ ցարիզմի տիրապետության որոշակի առավելության շատ էական փաստն էր։ Բայց Աբովյանն իր վեպում ընդգծում էր այդ տիրապետության առավելությունները, ոչ ամենևին իր ժողովրդի վրա այդ տիրապետությունը հավերժացնելու իմաստով։

Ցարիզմի տիրապետությունը Աբովյանի համար ընդունելի էր և նույնիսկ դրվատանքի արժանի այն չափով, ինչ չափով որ նրա հետ էին կապվում հայ ժողովրդի «անցյալի կորցրած փառքը» վերագտնելու հույսերը։ Աբովյանը երբեք չի հրաժարվել հայ ժողովրդի պետական անկախությունը վերականգնելու պատմական հեռանկարից։ Ինչ խոսք, որ ցարիզմի հետ կապվող քաղաքական հույսերը լոկ պատրանք էին։ Այդ բանը Աբովյանը ի վերջո գիտակցեց և որքան խորացավ այդ գիտակցությունը, այնքան ավելի խորացավ նրա հիասթափությունը միապետական Ռուսաստանից, կյանքի վերջում վերածվելով սկզբունքային, անհաշտ թշնամանքի։ «Վերքը» գրելու շրջանում, Աբովյանը տակավին չէր ազատագրվել հիշյալ պատրանքից։ Ցարիզմը, եթե անգամ չարիք էր, ապա փոքրագույն չարիք։ Այն դեռևս «ժամանակավոր անհրաժեշտություն» էր հայ ժողովրդի համար, իբրև մի անխուսափելի ճտապ՝ իր ինքնուրույն պետականությունը ստեղծելու ճանապարհին։ Այդ միտքը շատ որոշակի ձևակերպումն է գտել «Վերք Հայաստանիում»։ Աբովյանը գրում է. «...որ բալքի մեր հայքենիքը՝ նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա ու էլ ետ՝ իր առաջին փառքին հասնի»[1]։

Վեպի վերջին հատվածներում հեղինակը կրկին շեշտում է նույն սկզբունքային գաղափարը։ «...խելքդ ժողովես, լինես կտրիճ հայ, Ռուսաց զոր քաջ ձեռքի տակին փոքր դինջանաս ու քո աշխարհին մուղայիթ կենաս, արյունդ թափես, քո ազգը պահես, քեզ անուն ճարես»[2]։

Ինչ էին նշանակում վիպասանի վերը բերած հորդորները՝ ուղղված իր ժողովրդին։ Դրանք նշանակում էին, որ Աբովյանը հայ ժողովրդի քա-

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 114։

2 Նույն տեղում, էջ 160։

ղաքական կյանքի արմատական խնդիրները համարում է տակավին պատմության օրակարգից դուրս չեկած, չլուծված խնդիրներ, իսկ ցարիզմի տիրապետության տակ անցնելը ոչ թե նպատակ, այլ միջոց այդ նույն խնդիրների իրականացման համար։ Սրանով էլ պայմանավորվում էր Աբովյանի խորին զայրույթը՝ ցարիզմի տիրապետության պայմաններում իրենց համար տաքուկ անկյուն գտած և հարազատ ժողովրդի պատմական հեռանկարի հանդեպ անտարբեր դիրք գրաված հայ վերնախավերի նկատմամբ։ Արդեն 40-ական թվականների սկզբին Աբովյանի աչքից չի վրիպում այդ վերնախավերի մի բնորոշ գիծը՝ ցարիզմի ասիմիլյատորական քաղաքականությանը նրանց սիրահոժար ընդառաջումը։ Վերնախավերի գլխապահության այդ մորալը հետագա տասնամյակներում ավելի սուր բնույթ ստացավ՝ ենթարկվելով Նալբանդյանի, Պատկանյանի, Րաֆֆու, Պարոնյանի և մյուս հայ գրողների սպանիչ քննադատությանը։ Բայց մեր կյանքի այդ ամոթալի, ցավոտ փաստի առաջին հրապարակ հանողն ու նշավակողը Աբովյանն էր։ «Վերք Հայաստանի» վեպի առաջին տարբերակում հիշյալ հարցի վերաբերյալ կան մի շարք ուշագրավ էջեր, որոնք, անշուշտ, քաղաքական նկատառումով, Աբովյանը ստիպված է եղել դուրս թողնել երկի վերջնական օրինակից։ Հիշյալ էջերում վիպասանը խորին զայրույթով հարվածում է «հաստափոր, իշագլուխ» այն իշխաններին, որոնք ցարիզմի տիրապետության պայմաններում արտոնյալ դիրք գրավելու համար պատրաստ էին ամեն մի ստորության։

«Հիմիկ էլ,— գրում է Աբովյանը,— բացի աղա, բացի հաստափոր, իշագլուխ իշխան, բացի գոգրեն լիքը հեր իրանց ղուռնեն են գիշեր, ցերեկ, մեյդանում, բազարում, մեջլիսում, փողոցում, տանը, թե դռանը՝ փչում, գլխները քարեքար տալիս. «Ի՞նչ ա Հայի լեզուն, ո՛վ նրանից խեր կտեսնի, ո՞ւմ ձեռը մե փող կընգնի, ո՞ւմ աչքը լիս կտեսնի, իսկի էլ չըլի, շատ դարդ կանեմ. հաց ունենամ թե չէ՝ էս շան լեզուն ինչ ա, որ մեջ են քցել։ Աստուծով հինգ տարուցը եդը՝ էլ ոչ Հայ կտեսնիս, ոչ Հայի անուն կըլսես, կորչին, դրանց քոքն էլ կտրվի. Հայի անումը՝ որ վրես չէր էլել, ես գիտեմ՝ թե ինչ տեղ կը ճարեի, ինչ փառքի կհասնեի, քանի խաչ ու կավալեր կճարեի»[1]։

Աբովյանը ոչ միայն ջրի երեսը հանեց սեփական կաշվի հետ իրենց վրայից հայի անունը քերել կամեցող, հացի գերի ստորաքարշ մարդկանց, այլև տվեց այդ երևույթի քաղաքական գնահատականը՝ բնութագրելով այն իբրև ազգի ներքին ուժերը պառակտող, ազգի կոնսոլիդացման պատմական պրոցեսին հակադրվող մի վտանգավոր երևույթ։

«Վա՜յ, վա՜յ, մեկ մարդ՝ որ իր ձեռովը իր աչքը հանի, իր մատը իր պտուղը խրի, իր մուշտով իր դոշին, գլխին վեր հասի, ինքն իր տունը քանդի, Աստված ի՞նչ մեղավոր ա, մարդ ի՞նչ... Դու որ քեզ հողի հետ հավասարում ես, ուրի՞շը պետք է գա՝ էդ խոզի գլուխդ ցխիցը վեր քաշի, ու ինքն էլ մուրտառվի։ Ազգը որ կա մի մարմին ա, ամեն մարդ նրա

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 237։

անգամը։ Ամենն էլ ձեռներիցը էկածը պետք է անեն, ինչքան կարողություն ունեն, միմյանց քոմակ անեն, որ առողջ, սաղ, սալամաթ մնան։ Թե ու ձեռը գլխին խփի, ոտը փորին, ատամը պռոշը կծի, ղունգը, էրեսը չանգռի ու կտրատի, բաս էլ մարմինը սաղ կմնա, լավ որ կքաշի»[1]։

Օտարներից ոչ պակաս մենք ենք մեր ստրկության պատճառը, որ տակավին զուրկ ենք ազգային բարձր ինքնագիտակցությունից և չենք կարողանում համազգային շահերը վեր դասել ստոր բնազդների վրա հենվող նեղ, անձնական շահերից,— ցավով եզրակացնում է Աբովյանը։

Վերը բերված հատվածները, որոնք եզակի չեն «Վերք Հայաստանի» վեպի առաջին տարբերակում, ակնհայտ կերպով հակադրվում են նույն երկի այն հատվածներին, ուր կենդանանում են 20-ական թվականները՝ ռուսական բանակի հաղթանակի և այդ հաղթանակի հետ կապված հայ ժողովրդի խանդավառ տրամադրությունների ռոմանտիկայով։

Ցարիզմի տիրապետության մոտ մեկ և կես տասնամյակը առաջ էր բերել սոցիալ-քաղաքական սուր հակասություններ և դրանցով պայմանավորված նոր հարցեր։ Բարձրացնելով այդ հարցերը՝ Աբովյանը ընդգծում է միապետական Ռուսաստանի նկատմամբ հասարակական տրամադրության մեջ ծայր առնող հուսախաբությունը։

* * *

Աբովյանը մեծագույն հայրենասեր է, սակայն այդ հայրենասիրությունը ոչ թե նրան կաշկանդում է ազգային շահերի անձուկ շրջանակներում, հակադրելով նրան տեղական մյուս ժողովուրդներին, այլ հենվում է հարևան ժողովուրդների շահերի օբյեկտիվ ըմբռնման և դրանից հանած միանգամայն առողջ, հումանիստական եզրակացության վրա։ Լինելով իր հայրենիքի եռանդուն և անկեղծ պաշտպանը, Աբովյանը անկախ կրոնական և ազգային տարբերություններից ամենաջերմ սիրով է վերաբերվում այն բոլոր ժողովուրդներին, որոնք իր ժողովրդի հետ միևնույն հողի և ջրի ծնունդ լինելով, կապված են տնտեսական և քաղաքական միևնույն շահերով և բաժանում են հարազատ ժողովրդի ճակատագիրը։

Աբովյանի կարծիքով հայերին և Երևանի բնիկ թուրքերին (ադրբեջանցիներին) միացնում է ոչ միայն միևնույն հայրենիքը, այլև պարսկական բռնակալ լծի դեմ ունեցած ընդհանուր թշնամանքը։ Խիստ բնորոշ է Քանաքեռում կատարված դեպքերի առնչությամբ Երևանի ադրբեջանցի ազգաբնակության պարագլուխ Սվանղուլի խանի բռնած դիրքը։ Տեսնելով բերդը տարած իրենց հարազատներին ողբացող քանաքեռցի կանանց նկատմամբ Փառաշների վայրենի արարքները, Սվանղուլի խանը տեղնուտեղը իր ծառաների միջոցով սաստիկ պատժում է վերջիններիս և դժբախտ կանանց վերցնում իր հովանավորության ներքո։ Նա խորին ղայրությամբ է խոսում պարսից բարբարոսությունների մասին, արդարացնում ու գովում Աղասուն և նրա ծառացումը Փարաշների դեմ։

[1] Խ. Աբովյան, *ԵԼԺ*, *հատ. 3, էջ 237*։

Սվանղուլի խանը, որ ինչպես Աբովյանն է ասում «Ամեն սհաթի հայերի համար գլուխը եդ էր դրած», չի մոռանում նաև բերդը տարածներին: Սահակ աղայի հետ նա բերդ է մտնում այն ժամանակ, երբ սարդարի հրամանով դահիճները պատրաստվում էին գլխատել Աղասու հորը և մյուս քեդխուդաներին: Զիջելով այս երկու ազդեցիկ մարդկանց թախանձանքներին, սարդարը հետ է վերցնում մահապատժի հրամանը:

Բայց միայն Սվանղուլի խանը չէ, որ թշնամաբար է տրամադրված պարսիկ նվաճողների դեմ: Ըստ Աբովյանի վեպի այդ տրամադրությունը ընդհանուր է Երևանի ադրբեջանցի ազգաբնակության համար: «Երևանու ընիկ թուրքերը,— գրում է Աբովյանը,— որ Հայի հետ մեկտեղ մեծացել՝ ախպոր պես էին վարվում, սարդարին, Հասան խանին անիծելով, թքելով, ղզլբաշի վրա ատամները կրճտացնելով՝ քիչ-քիչ քաշվեցին ու դեմը գնում էին, դեմը ասում. «Տե՛ր Աստված, ե՞րբ կըլի, որ քո ողորմության դուռը բացվի ու մենք էլ անիծած Ղզլբաշի ձեռիցը մեկ օր ազատվինք»: Ջունքի սրանք երլու ըլելով՝ չէին ուզում, մեկ օր էլա, նրանց ծառայեն ու շատ անգամ Հայերի հետ միացել, քշել էին նրանց, ամա թրի զոռով էկել էլ եդ երկիրը զավթել էին»[1]:

Նկարագրելով ռուսական բանակի կողմից Երևանի գրավումը, Աբովյանն ասում է, որ ոչ միայն հայերի, այլև տեղական թուրքերի համար այդ մի փրկարար ակտ էր: «Էն ժամանակվան խաղերը,— գրում է Աբովյանը,— որ հանել ասում էին, հավիտենս հավիտենից կարող են աշխարքին վկայություն տալ՝ թե Թուրք ու Հայ հենց իմացան, թե Աստված վեր էկավ իրենց համար»[2]:

Աբովյանի գիտակցության մեջ Անդրկովկասը պատկերանում է իբրև համերաշխ ժողովուրդների մի ընտանիք: Բոլոր այդ ժողովուրդներին՝ հայերին, վրացիներին, ադրբեջանցիներին, քրդերին և այլն՝ Աբովյանն անվանում է մեր խալխը, շեշտելով և ընդգծելով իր անխտրական վերաբերմունքը նրանց բոլորի նկատմամբ: Սակայն,— ազդարարում է վիպասանը,— համերաշխ այդ ժողովուրդների խաղաղ կյանքը վտանգված է դրսի ուժերի, մասնավորապես թուրք-իրանական ռազմաֆեոդալական տերությունների նվաճողական ձգտումների հետևանքով:

Ինչպես վերը շեշտեցինք, գրողը աչք չի փակում նաև ցարիզմի վտանգի առաջ, բայց նա խորապես համոզված է, որ տեղական ժողովուրդների շահերի մահացու թշնամիները առաջին հերթին պարսիկ խաները և թուրք փաշաներն են: Եվ, ահա, այս պարագան է, որ Աբովյանին մի պահ մոռացնել է տալիս ցարական գաղութարարների ասիմիլյատորական գործունեությունը ու մղում նրան տեղական ժողովուրդներին Ռուսաստանի հետ բարեկամության դաշինքի հորդորներ կարդալու:

«Վերք Հայաստանի» վեպի հավելվածի՝ «Ջանգիի» վերջում ռուս-հայ բարեկամությունը Աբովյանը արտահայտում էր Վոլգա և Զանգի գետե-

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 128:
2 Նույն տեղում, էջ 177:

րի քուրացման սիմվոլիկայով։ Աբովյանը «Վերքում» համանման մի սիմվոլով է բացահայտում հայ և վրաց ժողովուրդների ազգային շահերի և պատմական ճակատագրի միասնության գաղափարը՝ նշելով երկուսի համար էլ մի ընդհանուր ուղի՝ ռուս ժողովրդի հետ եղբայրական դաշինքի ուղին։ «Մեկ ահագին չորս ջաղացի ջուր՝ մեկ բարձր բլրի տակից, դուրս ա պրծնում... բլրի չորս կողմը պտտում, էլ նա գետինը մտնում, ու կես փայը առու դառած՝ գնում Երևանու դաշտը՝ որ Ապարանու սուքը էջմիածնին, Վաղարշապատին, Արմավիրին, Մասիսին պատմի, ու գնա տրտում Երասխի հետ, Զանգին ու Գառնու գետն էլ մեջ անեն ու գնան՝ Քուռն էլ մեջ անեն, իրենց արտասուքը նրանի հետ խառնեն ու տանին, Կասպից ծովու սիրտն ածեն, նրա աղի ջրումը կորչեն, պարսից նավերը ջախըփուր անեն, ռուսաց նավերը իրանց քամակի վրա տանեն ու բերեն, որ ճամփին չհուսահատվի, չբեզարի, ու էն իր բարի ոտը միր աշխարհիցը չկտրի, որ բալքի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա, ու էլ էտ իր առաջին փառքին հասնի»[1]։

Այս հոյակապ պատկերի մեջ արտահայտություն է գտել Աբովյանի և՛ անկեղծ բարեկամական զգացմունքը դեպի վրաց ժողովուրդը, և՛ նրա մոլեգին ատելությունը դեպի պարսկական վայրագ տիրապետությունը, և՛ ռուս պետականության հետ կապված նրա հույսերը՝ իբրև անդրկովկասյան ժողովուրդների բարեկամի ու քաղաքական հենարանի։

9

Խոսելով «Վերք Հայաստանի» վեպի մասին, չպետք է այն ներկայացնել միակողմանի՝ ընդգծելով միմիայն այդ երկի՝ օտար կեղեքիչների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի արտահայտություն լինելու մոմենտը։ Այդպես ներկայացնել «Վերք Հայաստանին» կնշանակի աղքատացնել նրա հարուստ բովանդակությունը և նվազեցնել նրա արժեքը։ «Վերք Հայաստանին» արտահայտություն է հայ ժողովրդի արտաքին, միաժամանակ և ներքին «վերքերի»։ Ավելին՝ «Վերք Հայաստանին» գրելու միջոցին, երբ մոտ 15 տարի առաջ ազատվել էր պարսից լուծը, հայ ժողովրդի պատմական հեռանկարի տեսակետից, նույնքան հրատապ ու հրամայական էին նրա ներքին կյանքի խնդիրները, նրա առաջընթացի ներքին արգելքներն ու խոչընդոտները։

Եթե պատմական բարեբախտ հանգամանքների շնորհիվ կովկասահայերի կյանքի օրակարգից գոնե առժամանակ դուրս էր եկել ֆիզիկական պայքարի խնդիրը, հապա դրա փոխարեն այլ հրամայական խնդիր էր կանգնած ամբողջ հայ ժողովրդի առաջ՝ ազգերի և ժողովուրդների տնտեսական և կուլտուրական առաջխաղացման ընդհանուր շարժումից դուրս չմնալ, ետ չընկնել։ Աբովյանի այս գիտակցությունից առաջ են գալիս ոչ պակաս ծանր խոհեր, քան իր ժողովրդի ֆիզիկական ոչնչացման հնարավորության մտքից։

1 Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 3, էջ 113—114։

Աբովյանին պաշարած մռայլ խոհերը անհիմն չէին, եթե նկատի ունենանք հայ ժողովրդի այն ժամանակվա հետամնացությունը, նրան շրջապատող թանձր խավարը։ Հայ ժողովրդի պատմական գոյության հետագա իրավունքն ու արդարացումը Աբովյանը այլ կերպ չի ըմբռնում, քան կուլտուրական բարձր նվաճումների հասած ժողովուրդների հետ հավասարվելը, նրանց հետ ոտ ոտի դնելը։ Եվ, ահա, այս առնչությամբ Աբովյանը առաջ է քաշում իր լուսավորական լայն ծրագիրը, մի ծրագիր, որը նախատեսում էր հայ ժողովրդի կուլտուրական վերածննդի բոլոր հիմնական խնդիրները՝ լեզու, գրականություն, գիտություն, դպրոց, կենսաձև և այլն։ Բայց հենց այստեղ էլ պիտի ընդգծվի, որ լուսավորական հարցերը Աբովյանի մոտ, ինչպես նաև մեր հետագա լուսավորիչների մոտ, իբրև անկախ հարցեր գոյություն չունեին, նրանք կապակցվում էին ժողովրդի քաղաքական ազատության և այդ նպատակի համար մղվող պայքարի խնդիրների հետ։ Բարձրացնել ժողովրդի կուլտուրան, այդ նշանակում էր բարձրացնել նրա ազգային ինքնագիտակցությունը, տոգորել նրան համազգային խնդիրներով, ներգրավել նրան ակտիվ պայքարի՝ հանուն իր քաղաքական ազատության։

Աբովյանը մեծ հավատ ունի լուսավորության վերածնիչ ուժի նկատմամբ։ Ազգի ազատությունը, Աբովյանի խորին համոզմամբ, կգա ոչ այլ կերպ, քան ազգի լուսավորության, ժողովրդական զանգվածների պոտենցիալը արթնացնելու ճանապարհով։ Լուսավորիր ժողովրդին և նա ազատ կլինի։ Աբովյանի այդ համոզմունքով էլ պայմանավորվում է այդպես եռանդագին կերպով իր լուսավորական ծրագրին կառչելը։

«Նրա որ լավ կարդացող էր էլել, երեխքանց չոկ, ժողովրդին չոկ՝ գիշեր ցերեկ խրատ էր տվել, կարդացրել, լուսավորել էր, հիմիկ մեր ազգը է՞ս հալին կըլեր, է՞ստեղ կընգներ։ Սարի հայվանն էլ մեզանից լավ ա ապրում, հարամուց, փուշկանից յա փախչում, յա վրա թռչում, կտրատում, գլուխը պահում. ծտի բունն էլ որ քանդում ենք, ղժվժում, թևին գլխին անում։ Մենք ծտի ղդար էլա չկանք, որ մեր բունը պահենք»[1]։

Աբովյանը հավատում էր իր ժողովրդի կուլտուրական վերածննդին։ Բայց նա գտնում է, որ հարյուրամյակներ հոգևոր և ֆիզիկական շղթաների մեջ տառապած ժողովրդին պետք է խնամք, որպեսզի նա դուրս գա հոգևոր թմրությունից, ոտք դնի կյանքի լուսավոր ուղիներ, ներշնչվի բարձր գաղափարներով։ «Խեղճ ազգի հոգին մինչև էսօր քաղել են, հազար տարվա յարա ունի մտքումը, որ դեռ չի՛ սաղացել, էնքան դառն արտասուք ա կուլ տվել, որ ո՛չ աչքումը լիս կա, ո՛չ բերնումը համ, ո՛չ սրտումը եղ, դու հենց ուզում ես, որ էստոնք մեկ սհաթումը անց կենան, ինչպես կըլի»[2]։

Անհիմն տուն չի շինվի, կրակ չվառած հաց չի թխվի, առանց թթխմորի խմորը չի գա, թե կացինը դնես ծառի բնին ու քնես, ծառն ինքն իրեն

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 171։

2 Նույն տեղում, էջ 61։

քեզ համար փայտ չի դառնա։ Հանրահայտ այդ ճշմարտությունների հիշատակումով Աբովյանը ժամանակի գիտուններին կոչ է անում տեսական, համառ, համբերատար, ինքնամոռաց աշխատանքի՝ ժողովրդի կուլտուրական կարիքների բավարարման ուղղությամբ։ Սակայն նրանք, ովքեր կարող էին օգտակար լինել այդ գործին, անհոգ ու անտարբեր ժողովրդի հանդեպ, իրենց բավականությունների հետևից էին ընկած։ Ժամանակի առաջավոր, դեմոկրատական իդեալներից զուրկ այդ մտավորականությանը Աբովյանը սուր դատապարտության է ենթարկում։ Նա չի խնայում իրեն ևս։ Աբովյանը գրում է. «Ախր թե շատ առնողիցը շատ կպահանջեն, բաս դատաստանի օրը ի՞նչ ջուղաբ կտան ինձ նման գրի սևն ու սպիտակն իմացողները, որ էլ ուրիշ բան չենք ֆիքր անում, հենց ուզում ենք՝ լավ ուտենք, լավ խմենք, ման գանք, քեֆ ու մարաքյա անենք։ Ես ինձ վրա եմ ասում, թող ուրիշը չնեղանա։ Ընչանք փող չեմ առնում, ո՛չ գիրք եմ տալիս ոչ աշկերտ կարդացնում։ Ղազղին ու Թուրքի մոլլեքը էնպես չեն անում, անփող են իրանց ազգի երեխեքը կարդացնում, էլի Աստված նրանց ուզը հասցնում ա։ Հենց մեզ պիտի սոված սպանի»[1]։

Ո՞րն էր սակայն Աբովյանի պայքարի իսկական առարկան։ Դա վաղուց ի վեր հայ ժողովրդի կյանքում ղեկավար դեր ստանձնած և իներցիայով այն օրերում ևս իր դիրքը պահող հոգևորականությունն էր։ Պորտաբույծ այդ դասը հասարակական օրգանիզմում պատմականորեն թեև արդեն կորցնում էր իր դերն ու արդարացումը, բայց և այնպես շարունակում էր իրեն վերապահել ֆունկցիաներ, որոնց իրագործման համար նա անպետք էր։ Լեզու, գրականություն, գիտություն, դպրոց առնելով իր իշխանության ներքո՝ նա դրանք ծառայեցնում էր իր դասի նեղ էգոիստական շահերին, ժողովրդի տգիտությունը դարձնելով նրան սանձահարելու և այդ կերպ իր իշխանությունը հաստատուն և հարատև պահելու միջոց։

Եթե հայ ժողովուրդը իր պատմության վերջին աղետալի դարերի ընթացքում դուրս է գտնվել առաջավոր մարդկության շարքերից, դա Աբովյանի կարծիքով ուներ իր դժբախտ պատճառը։ Սակայն քաղաքական նոր՝ հարաբերաբար բարվոք պայմաններում, այդ ժողովրդի կուլտուրական հետամնացությունը այլ պատճառ չունի, քան այն, որ այդ գործի ղեկավարությունը իրենց վրա են վերցրել դրա համար չկոչված մարդիկ։ «Հայոց ազգի ջանին ղուրբան, մեկ նրա երեխին ուսում տուր, նրա էն լուսաթաթախ հոգին կրթիր, կրթիլ եմ ասում, անգիր բերան անել, գլխիցը դուս տալ չեմ ասում ու շարական, փոխ, յա շիլափլավ ուտել սովորեցնել, որ մեկ էս տեղն ա քցել, տեսնեմ թե ջան կտա քեզ, թե չէ[2]։

Այստեղ վիպասանը ակնարկում է վանական-խալիֆայական դպրոցի իսկական իմաստով կրթական օջախ չլինելու, ժողովրդի լուսավորության գործը իր վրա վերցնելու անկարողության փաստը։ Մի այլ տեղ Աբովյանը գրում է. «Բայց վա՜յ էն երեխին, վա՜յ էն ազգին, որ աչքը էն

1 Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 3, էջ 60։

2 Նույն տեղում, էջ 60։

պես գոցում բաց կանի, որ լսի տեղ խավար տեսնի։ Աչքը բաց դուզ ճամփեն կթողա, անբանականին կհետևի, որ էնպես խրատ տվող չի ունենալ. որ նրան հոգի տա և ո՛չ հոգին էլ հանի»[1]։

Այն ժամանակվա հայկական իրականությունը ներկայացնելով որպես խավարի թագավորություն, Արովյանը նորից ու նորից դատապարտում է նման վիճակի համար պատասխանատվություն կրող հոգևորականությանը։ Հեղինակը շեշտում է, որ կրոնավորները իրենք ևս մեծ մասամբ տգետ են ու անգրագետ։ «Գրի սևն ու սպիտակը ոո էսպես տեղ տերտերներն էլ բռանց էին ջոկում»,— ասում է վիպասանը։

Արովյանի կարծիքով հոգևորականությունը ոչ միայն անկարող է դառնալ ժողովրդի պահանջների ու շահերի արտահայտիչը, այլև այդ դասը տնտեսական ու կուլտուրական իր շահերով կանգնած է ժողովրդի շահերի հակադիր բևեռում։ «Վերք Հայաստանիում» հոգևորականությունը նույնքան սուր և հետևողականորեն քննադատված է որպես կեղեքիչ դասի, որը գյուղական աշխատավորական համայնքի կյանքում իր գոյությամբ աններդաշնակություն է մտցնում։ Եթե ռսևտրականն ու վաշխառուն գյուղի համար դեռ պալիք աղետներ էին հանդիսանում, ապա հոգևորականությունն իբրև հարստահարող տարր ի սկզբանե անտի կար։ Հենց այս առթիվ է, որ բարիկենդանի տոնի ուրախ սեղանի շուրջը խմբված գյուղացիք շատ սուր ոճ են գործածում հոգևորականության դեմ։ Սրանց խոսքերի ու դատողությունների մեջ կայծկլտում են առողջ միտքն ու քննադատությունը։ «Ախպեր, բարա, ջանմ, գյոզմ, աղոթք ունիս, քեզ համար պահիր, քեզ համար արա»,— ասում է գյուղացի Հարությունը։— «Տո, հենց փող պետք է տամ, որ հոգիս դրախտը դնա ... Փողը աղքատին պետք է տված։ Դեն քցես՝ լավ ա, քանց էն մարդին տաս՝ որ քեզ մեկ շնորհակալություն էլա չասի...։ Մեղանից առնում են, իրանց բարեկամներին ու ազգականներին շենացնում, հետո մեզ վրա էլ մեծ մեծ խոսում...։ Որդի երեխա իշի պես մենձանում են, նրանց հոգսը չեն քաշում, վարժատուն չեն բաց անում, չեն կարթացնում, հենց ուզում են՝ թե մեր դառածը խլեն»[2]։

Կյանքի չարն ու բարին հասկացող այս մարդը խնդիրներին նայում է հասարակական օգտակարության տեսակետից։ Այսպես նայելով հարցին, նկատում է, որ հոգևորականությունն իրեն չի արդարացնում. հասարակական օրգանիզմում կույր աղիքի դեր է կատարում։ Ժամ ու պատարագի մեջ գյուղացին չի տեսնում հոգևորականության դերի արդարացումը։ Այլ խնդիր է, եթե նա կարողանար առաջ տանել գյուղի լուսավորության գործը։

«Թող ինձ կարդացնեն,— ասում է Հարությունը,— որդուս ուսումն տան, ճամփից հավատից չհանեն, սատանի փայ չլիմ, մեկ բուռ հողի,

1 Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 3, էջ 171։
2 Նույն տեղում, էջ 24—25։

մեկ գող կտավի. ժամ, պատարագի հասրաթ, թե աչքս ուզեն, չհանեմ իրենց տամ, որդիս ուզեն, չմորթեմ, մատաղ անեմ»[1]։

Գյուղացիական մասսաների կողմից ժամանակի հասունացած խնդիրները գիտակցելու տեսակետից շատ ավելի բնորոշ են Հարությունի հետևյալ դատողությունները. «...Ախր մեր ազգը, որ խեղճ ա մնացել, թրի, կրակի եսիր, բոլորի պատճառն էս ա՝ որ մեզ մեկ ասող չի ըլում՝ թե մենք ով ենք, մեր հավատն ինչ ա, ինչի համար ենք էկել աշխարհ. քոռ գալիս ենք, քոռ գնում։ ...Ով չի գիտի՝ թե երկնքումն աստված կա, մեզ համար դատաստան։ Ամա պետք է իմանանք էլ՝ թե երկրումը ինչ պետք է անենք...»[2]։

Հարությունին ձայնակցում են ուրիշ գյուղացիներ էլ՝ կրկնելով, իսկ հաճախ ավելի սրելով և խորացնելով նրա մտքերը։ Այն միջավայրը, որ ծնել է Աղասուն, այդ նույն միջավայրն ու այդ մարդկանց հասարակությունը առաջ է մղել նաև մի շարք բանիմաց այլ մարդկանց, որոնց մեջ ամենաբնորոշը Հարությունն է։ Այս կերպարի միջոցով Աբովյանը շեշտում է, որ նոր ձևավորվող լուսավորական գաղափարախոսությունը ժողովրդից կտրված անհող մի բան չէր, այլ արգասիք մասսաների ընդերքում հետզհետե հասունացող պահանջմունքների։

Իթե Աղասին, Հարությունը և սրանց կողմնակիցներն ու համախոհները վեպում ժողովրդի զարթոնքի, ուրվագծվող գալիքի սիմվոլներն են, ապա իբրև հին կյանքի՝ նահապետականության սիմվոլ է ներկայացված տեր Մարկոսը։ Աբովյանը այդ կերպարի սպառիչ բնութագիրը տվել է Աղասու բերանով։ Հին աշխարհի դեմ ծառս եղած երիտասարդը չի կարող հանդուրժող վերաբերմունք ունենալ մի անձի հանդեպ, որն իր գոյությամբ ամենից ավելի է ընդգծում այդ աշխարհի անբանական լինելը, նրա դատապարտվածությունը։ Տեր Մարկոսը սպանիչ ծաղրի է ենթարկված։ Նա տգետ է, ընչաքաղց, անմարդկային։ «Առավոտից մինչ իրիգուն, փիլոնն ուսին քցած» նա «քուչեքն է չափում», «մեկ մեռել, կամ կնունք, շիլափլավ կամ մատաղ պատահելիս... դռները չարդելով ափալ թափալ ներս է ընկնում»։ Ինչպես հոգևոր հրեշտակ «մեռելի կես հոգին ինքն ա ուզում հանի»։ «Դեռ պատանը չկարած, չլվացած, շուտով թաղամելեքն ու կողոպուտն ա ուզում»։ Ելնելով այս կերպարից, Աղասին ժամանակի հետադեմ հոգևորականության ճիշտ բնութագրող մի դիպուկ ընդհանրացում է կատարում։ Կրկնելով ժողովրդական հայտնի արտահայտությունը,— սար ու ձոր՝ տերտերի փոր,— Աղասին դրանք համարում է Ավետարանի կողքին գրելու արժանի ճշմարիտ խոսքեր։ Տեր Մարկոսի նման հոգևորականներին նկատի ունի Աղասին, երբ ասում է. «Իմ կոպիտ գլխովը էնպես եմ կարծում, նհախ տեղը դատած մալը ուտելը ու դարդակ քնիլը հարամ ա։ Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլի»[3]։

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 25—26։

[2] Նույն տեղում, էջ 25։

[3] Նույն տեղում, էջ 14։

Հույսեր չկապելով հոգևորականության և ժամանակի պահպանողական մտավորականության հետ, պատմական անհրաժեշտության գիտակցությամբ, Աբովյանը առաջ է քաշում նոր ինտելիգենցիայի հարցը։ Ժողովրդի ծոցից դուրս եկած, ժամանակի առաջավոր գաղափարները որդեգրած, ժողովրդի շահերով տոգորված ինտելիգենցիայի հանդես գալու հետ է Աբովյանը կապում իր լուսավորական ծրագրերի իրագործումը։ Իբրև մի հեղինակ, որի հայացքը ուղղված է դեպի ապագան, Աբովյանն իր բոլոր հույսերը կապում է այդ ապագան կերտող սերնդի հետ։ Վեպում թեև հեղինակը հաճախ է հիշում անցյալը, բայց նա այդ անում է դարձյալ միևնույն նպատակով։ Աբովյանի համար ինքնանպատակ անցյալ գոյություն չունի, այդ անցյալը նա դիտում է իր ժողովրդի գալիքը ուրվագծելու հայացքով։ Այդ պատճառով էլ անցյալի դեմքերը Աբովյանի գրչի տակ հանդես են գալիս իբրև արդեն անցած, իրենց պատմական դերը ավարտած բրածոներ, այնինչ գալիք սերունդների հետ Աբովյանը խոսում է որպես իրական մարդկանց հետ, իբրև իր խոհերի և խոսքերի ունկնդիրների և մասնակիցների հետ։ Բնորոշ են այդ տեսակետից երիտասարդությանն ուղղված հայտնի խոսքերը.

«Ձեզ եմ ասում՝ ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արևին ղուրբան, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք։ Մեկ դարդակ լեզուն ի՞նչ ա, որ մարդ չկարենա սովորիլ։ Բաս չե՞ք ուզիլ, որ դուք էլ գրքեր գրեք, ազգի միջումն անուն թողաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա անմահ։ Ինչ կուզե Ֆրանցուզերեն, Նեմեցերեն գիտենանք, մենք չենք կարող էնպես բան գրիլ, որ նրանց միջումն անուն ունենա, չունքի նրանց միտքն, նրանց սիրտն ուրիշ ա, մերն ուրիշ. մեկ էլ որ նրանց միջումն էնքան գրող կան, որ ո՛չ թիվ կա ո՛չ հեսաբ։ Ռուսաց լեզուն մեր տերությանն ա, պետք է ամենից առավել համարինք, հետո մեր լեզուն ձեռք բերենք։ Բաս ձեր սիրտը չի ուզիլ՝ որ դուք էլ ոտանավոր գրեք, ձեր միտքը, ձեր խորհուրդը հայտնեք, որ այլազգիք իմանան՝ թե մեր միջումն էլ ա էլել երևելի գրող ու մեր լեզուն դհա ավելի սիրեն»[1]։

Այս տողերը ավելի քան բնորոշ են Աբովյանի համար և խիստ բնորոշ վեպի գաղափարական նպատակադրման տեսակետից։ Իսկ այդ նպատակադրման մեջ ամենահիմնականը աննախընթաց ուժով արտահայտված հեղինակի տիրական կիրքն է՝ իր հրաբորբոք խոսքը լսելի դարձնելու գալիք սերնդին, այդ խոսքի մեջ դնելով նույն այդ գալիքի նկատմամբ ունեցած իր ազնիվ ցանկությունները, իր վառ հույսերը, իր անհողդողդ հավատն ու սերը։

Աբովյանը այն ճշմարիտ մեծ գրողներից է, որոնց գիտակցության մեջ ներկան կամրջված է գալիքի հետ, որոնց համար գեղեցիկ և իդեալական վաղը ավելի կենդանի ու իրական է, քան արդեն դատապարտված իրականությունը։

---

[1] Խ. Աբովյան, *Երկ., հատ. 3, էջ 64—65։*

* * *

«Վերք Հայաստանին» հայ գրականության առաջին վեպն է, այդ բառի ժամանակակից հասկացողությամբ։ Պոեզիան քննելիս տարբեր առիթներով ընդգծվեց Աբովյանի նորարարական դերը ինչպես թեմատիկայի, այնպես էլ գրական ժանրերի ստեղծման բնագավառում։ Այդ բանը ավելի մեծ չափով պիտի ասել «Վերք Հայաստանի» վեպի կապակցությամբ։ Եթե իբրև պոետ իր կիրառած բանաստեղծական բազմազան ձևերում Աբովյանը զգալի չափով հանդես է գալիս որպես գոյություն ունեցող տրադիցիայի շարունակող և կատարելագործող՝ համապատասխան իր ապրած ժամանակաշրջանի պահանջների, ապա վեպի ասպարեզում Աբովյանը սկզբնավորող է, ինքը հենց վիպագրության տրադիցիայի ստեղծող։



«Վերք Հայաստանի» վեպի ձեռագիր անվանաթերթը

Աբովյանի պոետական ժառանգության զգալի մասը գրված է նախքան «Վերք Հայաստանին»։ «Վերքին» նախորդող ստեղծագործություններում շատ չափով արդեն դրսևորված էր այն նորը, ինչ որ Աբովյանը բերեց՝ թեմատիկայի, գրական կուլտուրայի, լեզվի, ժանրերի և այլ ասպարեզներում։ Սակայն ուշագրավ է, որ գրողը վեպին նախորդած իր ստեղծագործություններին առանձին կարևորություն չի տալիս, դրանց մասին խոսում է որոշ թերահավատությամբ։ Դրա պատճառը ոչ միայն այն է, որ այդ երկերի զգալի մասը գրված էին գրաբարով, այլև այն, որ գրողին թվում է, թե իրեն հուզող և ժամանակի համար հրատապ հարցերը այնտեղ տակավին չեն ստացել իրենց համապատասխան լուծումը։

Մեծ կտավի երկ գրելու մտադրություն Աբովյանն ունեցել է շատ վաղուց, դեռևս նախքան Դորպատ մեկնելը։ Աբովյանը շատ բան էր տեսել, շատ բան ապրել, նա հղի էր մտքերով։ Պարսկական տիրապետության մղձավանջը, ծառացումը այդ մղձավանջի դեմ, ռուս-պարսկական պատերազմը, հայ ժողովրդի հավելյալ տառապանքները և նրա կամավորների սխրագործությունները այդ ժամանակաշրջանում, ռուսական տիրապետության մեղրամիսն ու դրան հաջորդող որոշ հիասթափությունը, ժողովրդի առաջ բացվող նոր հեռանկարները, այդ հեռանկարներն իրականացնելու համար նրան նախապատրաստելը, դեմոկրատական գաղափարներով տոգորված՝ նոր լեզվի, գրականության, դիտության, կրթության ձևավորումը համաչափ մտավորականության խնդիրը և այլն։ Ահա հարցեր,

որոնց Աբովյանը պիտի պատասխան տար։ «Սիրտս եկել էր, բերանիս հասել»,— ասում է վիպասանը։ Կյանքի լայն և բարդ շրջանակներ ընդգրկող վիպական պատմողական ժանրը հարմարագույնն էր, որը հնարավորություն պիտի ընձեռներ Աբովյանին բազմակողմանիորեն բացահայտելու իրեն հուզող խնդիրները։

Հրատապ խնդիրների այդ առատությունը ոչ միայն պայմանավորեց վիպական ժանրին դիմելու անհրաժեշտությունը, այլև այն առանձնահատկությունները, որոնցով աչքի է ընկնում Աբովյանի վեպը։

Նախ նկատենք, որ «Վերք Հայաստանին» այն ձևով, ինչ ձևով որ այժմ հայտնի է մեզ՝ միանգամից չստեղծվեց։ Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «Աղասու երգը» պոեմը, որ այժմ միանգամայն ինքնուրույն երկ է թվում, հանդիսացել է «Վերքի» նախասկզբնական տարբերակը։ Եթե հնարավոր էլ չլինի այդպես որոշակի կերպով «Աղասու խաղը», «Վերքի» տարբերակ համարել[1], պարզ անտարակույս է, որ դա մի սկզբնական փորձ է արտահայտելու համար Աբովյանին հուզող այն խնդիրներն ու կյանքի այն երևույթները, որոնց մասին վերը խոսվեց։ Այդ անհաջող փորձը առավել ևս գրողին պիտի համոզեր արձակ պատումին դիմելու անհրաժեշտությունը։ Չէ որ Աբովյանը գրելու էր մի երկ, ուր պիտի մարմին առներ, ինչպես Նալբանդյանն է ասել «ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը»։ Վեպի ժանրը նախընտրելի էր ոչ միայն դարաշրջան ընդգրկող նյութը տեղավորելու տեսակետից, այլև այդ ժանրի՝ ընթերցողների լայն շրջան գրավելու հատկությամբ։

Աբովյանը քաջ ծանոթ էր եվրոպական վեպին։ Նա կարդացել էր Ռուսսոյի, Վալտեր Սկոտտի, Գյոթեի, Գոգոլի վեպերը։ Բայց կարո՞ղ էր արդյոք Աբովյանը հեշտությամբ կրկնել այն, ինչ հատուկ էր եվրոպական և ռուսական վեպին։ Աբովյանը գրում էր առաջին հայ վեպը։ Քաղաքակիրթ ընթերցողը, որին նա լավ ճանաչում էր, նրա համար չէր կարող չափանիշ լինել։ Աբովյանը պիտի ելակետ ընդուներ հայ ընթերցողին, մի ընթերցող, որի հիմնական զանգվածը վիպական ժանրին պիտի ծանոթանար Աբովյանի վեպի միջոցով, որի ճաշակի ու կուլտուրայի աստիճանացույցը աշուղների միջոցով տարածվող արևելյան սիրավեպերն ու հերոսապատումներն էին՝ «Քոռ օղլի», «Աշուղ-ղարիբ» և այլն հեքիաթ-վեպերը։ Առաջաբանում ասված հայտնի խոսքերը՝ «...ասացի ինձ ու ինձ, արի ... մեկ աշըղ էլ դու դառ...» խոր մտածված և կշռադատված խոսքեր էին։ Բայց և այնպես Աբովյանը չդարձավ և չէր էլ կարող դառնալ սովորական հեքիաթասաց-աշուղ։ Աբովյանի վեպը հաշվի առավ հայ ընթերցողի գրական ճաշակը, կուլտուրան, կրթական մակարդակը, բայց չստրկացավ դրան։ «Վերք Հայաստանին» հանդիսացավ արևելյան և արևմտյան կուլտուրաների մի հետաքրքիր և յուրօրինակ խաչաձևման արդյունք։ Դրանով էլ ապահովվեց այն նոր որակը, այն նոր աստիճանը, որ իր հետ բերեց

[1] Տե՛ս Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 2, էջ 339—344, «Աղասու խաղը» պոեմի մասին ծանոթագրությունները։

«Վերքը»՝ հիմք դնելով «արդյան ազգային վիպասանությանը»[1]։ Վեպի հերոսը՝ Աղասին, մասամբ կերտված է արևելյան էպոսների և գյուղական վեպերի լեգենդար և կիսալեգենդար հերոսների օրինակով։ Այստեղ կիրառված է հերոսի բնութագրման, նրա սխրագործությունների նկարագրությունների նույն «ֆոլկլորային» ոճը, ինչպիսի հիպերբոլիկ ոճով որ բնութագրված են Դավիթը, Քյոռ օղլին և այլն։ Սակայն մյուս կողմից Աղասին հիշեցնում է մերթ հայրենիքի ազատության համար մարտնչող Վիլհելմ Տելլին, մերթ բռնության և անարդարության դեմ ծառացող Կարլ Մոորին և մերթ խորհրդածող, թախծոտ Վերթերին, որը ձգտում էր հասկանալ բնության իմաստը, պարզել բնության և մարդու փոխհարաբերությունը՝ ներդաշնակություն գտնել նրանց միջև։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Աղասին XIX դարի մարդ էր, լուսավորության-ազգային վերածննդի գաղափարախոսության արտահայտություն։ Հեքիաթների ու ավանդավեպերի հերոսների շրջանակները շատ էին սահմանափակ այդպիսի մի բազմակողմանի կերպարի համար, ուստի Աբովյանը իր հերոսին կերտելիս պետք է դիմեր արևմտաեվրոպական և ռուսական դասական վեպի օժանդակությանը, ինչպես նաև օժանդակություն պիտի ստանար արևմտաեվրոպական լուսավորական փիլիսոփայությունից։

Հայրենի տրադիցիան ուժեղ կերպով արտահայտվել է մի կետում ևս։ Աշուղների կողմից ունկնդիրներին մատուցվող սիրավեպերում և հերոսավեպերում արձակ պատումները հաճախ ընդհատվելով երգերով, բազմազանություն են մտցնում նյութի մեջ, թարմացնում ունկնդիրներին։ Այդ նույն ելակետով է առաջնորդվում Աբովյանը՝ իր վեպում առատորեն տեղ տալով երգերին։ Գյուղացիք երգով Աղասու գովքն են անում («Աղասի ջան, գլխիդ ղուրբան»), Նազլուն Աղասու ծանր ճակատագիրը ողբում է երգով («Նազլվի սուգը»), Մուսին երազում տեսած Հռիփսիմեի գովքն է անում երգով («Հրեշտակ էիր, որ ինձ երևացիր»), իսկ Աղասին բաժանման, կարոտի, վշտի, հայրենասիրական առավել խոր ապրումների պահերին, միշտ ձեռքը դնում է ականջին ու սկսում բայաթին։

Վեպում մուտք գործած չափածոն միշտ չէ, որ միևնույն ֆունկցիայով է հանդես գալիս։ Եթե մի դեպքում օգտագործվում է իբրև հերոսների հոգեվիճակը բացահայտելու միջոց, այլ պարագայում այն ծառայեցվում է երկի համապատասխան հատվածում արտահայտված տրամադրությունը կամ գաղափարը առավել ևս շոշափելի դարձնելու նպատակին։ Այդպիսի չափածո հատվածներն ստեղծվում են ասես հեղինակի կամքից անկախ, ինքնամոռացության մեջ ընկած վիպասանի հախուռն տարերքի մղումով։ Հուզականությունը վեպի առանձին հատվածներում աճելով, հաճախ այնպիսի չափի է հասնում, որ անհնարին է դառնում այն արտահայտել արձակ պատումի միջոցով, ուստի արձակը բնականորեն վեր է ածվում չափածոյի։ Այսպես, օրինակ, վեպի այն տեղում, ուր խոսվում է լոռեցիների, իրենց քաջ նախնիներից ժառանգած անվեհերության մասին,

---

1 Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հատ. 3, 1940, էջ 120։

հեղինակն այնպես է անձնատուր լինում հույզերին, կուտակված զգացմունքները այնպիսի սրընթացությամբ են տանում նրան, որ արձակ շարադրանքը ինքնաբերաբար ընդմիջվում է մի երկարաշունչ չափածոյով.

Քնից էն վեր կենում, սրանց գերեզմանը տեսնում,
Թե քուն են մտնում, սրանց երազումը տեսնում,
Թե օրհնում ուտում, նրանց անունը տալիս,
Թե ճամփա գնում, նրանց աղոթքն հիշում,
Թե կռիվ անում, նրանց հիշում՝ հաշտվում... և այլն[1].

Արձակից չափածոյին անցնելու ստեղծագործական այս հետաքրքիր պրոցեսը հաճախ կրկնվում է Խլղարաքիլիսի կովի հայտնի նկարագրության մեջ։ Սակայն մի ուշագրավ մոմենտ ևս։ Շատ անգամ հեղինակը այդպիսի հանգավոր հատվածները գրի է առնում արձակ տողերով։ Այդպիսի հատվածները հեշտությամբ կարելի է տողերը հատելով չափածոյի վերածել[2]։ Բերենք մի օրինակ։

«Անուշ իմ դու հա՛յր, անգին բարերար, իմ կենաց տվող, իմ հոգուս դու ճար։ Մկամ տո՞ւնն կարա իմ ոտը փակել, մկամ չե՞մ կարա իմ աչքը կապել։ Մի՞թե էս արինն ինձ դո՞ւ չե՛ս տվել, մի՞թե էս ջանը՝ ինձ դո՞ւ չե՛ս բաշխել. Կարե՞ն դինջանալ, ինձ հանդարտ թողալ։ Բանդումն էլ ըլիմ՝ ոտս բխովումն, մահն իմ առաջիս, սուրն իմ դոշումս, էլ քեզ կուզեմ, որ ես իմ հոգիս տամ, քո ոտից տակին մեռնիմ հող դառնամ»[3]։ Եթե փորձենք նույնը գրել ոտանավորի ձևով, կստացվի հետևյալ պատկերը։

Անուշ իմ դու հա՛յր,
Անգին բարերար,
Իմ կենաց տվող,
Իմ հոգուս դու ճար։

Մկամ տո՞ւնն կարա իմ ոտը փակել,
Մկամ չե՞մ կարա իմ աչքը կապել։
Մի՞թե էս արինն ինձ դո՞ւ չե՛ս տվել,
Մի՞թե էս ջանը դո՞ւ ինձ չե՛ս բաշխել.
Կարե՞ն դինջանալ,
Ինձ հանդարտ թողալ։

Բանդումն էլ ըլիմ՝ ոտս բխովումն,
Մահն իմ առաջիս, սուրն իմ դոշումս,
Էլ քեզ կուզեմ, որ ես իմ հոգիս տամ,
Քո ոտից տակին մեռնիմ, հող դառնամ։

---

1 **Խ. Աբովյան**. *ԵԼԺ, հատ. 3, էջ 94։*

2 *Այս փաստի վրա ժամանակին ուշադրություն է դարձրել Հ. Թումանյանը, «Երևանի կռիվը և Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» իբրև պատմություն» աշխատության մեջ. «Վերքից» կատարած մի շարք մեջբերումներ, նա գրի է առել իբրև չափածո՝ համապատասխան ձևով հատելով տողերը։*

3 **Խ. Աբովյան**. *ԵԼԺ, հատ. 3, էջ 98։*

Ամբողջ վեպը համակված է լիրիկական և հրապարակախոսական բարձր պաթոսով։ Լիրիկական-հրապարակախոսական տարրերի և պոետական բարձր ներշնչանքի՝ վեպում այդքան մեծ տեղ ունենալը հետևանք է այն բանի, որ առաջին էջից մինչև վերջին էջը ինքը հեղինակը ներկա է երկում։ Հաճախ ընթերցողը ավելի իրեն հեղինակին է տեսնում, քան նրա պատկերած անձերն ու անցքերը։ Սա Աբովյանի վեպի մեկ ուրիշ կարևոր առանձնահատկությունն է։ Հարցն այն չէ, որ Աբովյանը բացառիկ հախուռն ու անմիջական խառնվածքի տեր հեղինակ է, այլ առավելապես այն, որ հարազատ ժողովրդի տառապանքները՝ Հայաստանի վերքերը, վերքեր էին բացել վիպասանի հոգում, դրա համար նա իր տեսածն ու ապրածը պատմում է խոր խոցված, կսկծալի սրտով, դրա համար էլ շատ անգամ նա անկարող է լինում մնալ վիպական արվեստի ընդունված շրջանակների մեջ և անձնատուր եղած հույզերի տարերքին, ինքնամոռաց գնում է ու հանկարծ սթափվում. «Բայց վա՜յ ինձ՝ ո՞ւր հասա, ո՞ւր տարավ ինձ իմ կսկիծը, իմ էրված սիրտը։ Լեզուս չի՛, որ խոսում ա, հոգիս ա, որ զգում ա, աչքիս արինը առաջիս թափում, իմ հայրենիքը առաջիս քանդվում, իմ սիրելի աղբոր աղի արտասունքը ու դառը սուգը՝ սիրտս էրում, խորովում։ Ինչպե՞ս բերնիս հուպ տամ արինս քթովս դուրս գալիս, աչքս կայծակին տալիս...»[1]։

Ընթերցողի աչքի առաջ կանգնում է մեծ ու փոթորկոտ խոհերով ու հույզերով մի հեղինակ, որը ազնիվ մի ձգտում ունի՝ պատասխան տալ իր ժողովրդի առաջ ծառացած, վաղուց հասունացած բազմաթիվ խնդիրների, խնդիրներ, որոնց հանդեպ անտարբերությունը կարող էր ճակատագրական լինել այդ ժողովրդի համար։ Չկարողանալով անտարբեր մնալ իրեն հուզող հարցերի հանդեպ, վիպասանը ընթերցողի ներողամտությանը ապավինելով, հաճախ ընդհատում է բուն պատմությունը, շեղվում մերթ այս, մերթ այն հարցի կապակցությամբ և զիգզագ ու ոլորուն ճանապարհներով կրկին վերադառնում իր հիմնական ասելիքին։ «Լավ չի սկսած բանը թողել ու էսպես քարոզ անել, ես էլ գիտեմ, ամա սիրտս չի դիմանում, ինչ անեմ»։ Հաճախ հեղինակը գրքի էջերից դիմում է ընթերցողին, մտերմորեն խոսում նրա հետ, աղաչում նրան՝ հավատալ իր խոսքի ճշմարտությանը, ճիգ անում իր հուզմունքը նրան հաղորդել, իրեն վշտակից ընկեր դարձնել և այդ կերպ մխիթարվել։

«Էսքան բաները լսեցիր՝ սիրելի՛ կարդացող, բաս ինչպե՞ս չի սիրտդ վառվի, որ դու է՛լ էն ազգի որդին ես, որ էսքան տանջանք քեզ համա քաշեց, ինքը նահատակվեց, քո կաթը ու արինդ ուրիշ ազգի հետ չխառնեց։ Էնպես կարծո՞ւմ ես քիչ բան ա, հազար տարով էս օրը քաշել, էլի ազգ պահել, որդի մեծացնել, անուն, լեզու, հավա՞տ ունենալ։ Ա՜խ՝ էս միտք անողը՝ էլ ի՞նչ սիրտ պետք է ունենա, որ իր լեզուն, իր ազգը չսիրի»[2]։

---

1 Խ. Աբովյան. *ԵԼԺ, հատ. 3, էջ 111։*

2 *Նույն տեղում, էջ 63։*

Եվ քանի որ հիշվեց լեզվի և հավատի խնդիրը, ապա նա չի կարող չտարածվել, լրացուցիչ բացատրություններ չտալ ընթերցողին, չխոսել նրա հետ այն սպառնալի դրության մասին, որի մեջ գտնվում են լեզուն և հավատը՝ օտար տիրապետողների ազգակուլ քաղաքականության հետևանքով։

«Ա՜խ՝ լեզուն, լեզուն, լեզուն որ չըլի, մարդ ընչի նման կըլի։ Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը։ Լեզուդ փոխիր, հավատդ ուրացա՞ր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՞ր ազգից ես։ Ինչ քաղցր, պատվական կերակուր էլ տաս երեխին, էլի մոր կաթը նրա համար շաքարից էլ ա անուշ, մեղրից էլ»[1]։

Այսպիսով հեղինակը միշտ ընթերցողի հետ է. ոչ թե գրքի մեռած տառերն են խոսում, այլ ինքը՝ հեղինակը՝ ազնիվ ու գերզգոն քաղաքացին, որը մերթ զայրույթով խարազանում է, մերթ բարեկամաբար խրատում ու հորդորում, մերթ որոտում է ինչպես ցասկոտ ամպ, մերթ ջերմորեն ժպտում ինչպես արևաշող երկինք, նայած, թե ինչպի՛սի երևույթ է նա տեսնում կամ ի՛նչ է պատկերում։ Ինչպես որ մարդկանց հետ է հեղինակը զրուցում, նրանց մեջ փնտրելով մխիթարություն, սփոփանք, այնպես էլ նա հաճախ դիմում է բնությանը, բնության ուժերը ոտքի հանում, նրանց ցասումը գրգռում չարագործ մարդկանց՝ իր ժողովրդի թշնամիների դեմ։

«Ամպերը բխտը գլխանի վիշապի նման՝ երկնքիցը ծոլոլակ ելած՝ որ բերանը չէին բաց անում, խփում, ուզում էին, որ սաղ երկինքը կում անեն, ծամեն, փշուր-փշուր անեն ու էլ ետ հազար թիքա արած ածեն անիրավ մարդի գլխին՝ որ ոչ երկնքիցն ա պատկառում, ո՛չ Աստվածանից վախենում, ո՛չ ջուրն իրան օրինակ առնում, ո՛չ հողից մեկ խրատ վերցնում, ոչ իր խեղճ հոգու ներքին ձենը լսում... որ ... քնած՝ թե արթուն ձեն է տալիս, գոռում. «..բարի կա՛ց, բարություն արա՛, քեզ պահի՛ր, լավություն արա... ընկերդ պահպանի՛ր, Աստուծո աշխարհը շինի՛ր, նրա ձեռագործը մի՛ քանդիր, որ դու էլ մնաս շեն, դու էլ չի՛ քանդվիս, հողին չի՛ հավասարվիս»[2]։

Չարը պատժող բնությունն անմեղին, թույլին, անպաշտպանին հովանավորում է, մոր պես իր գրկում պատսպարում, նրա վիշտն է լալիս, նրա սուգն անում... «Երկինք, երկիր, սար, ձոր՝ ականջ, աչք, խփել, լալիս, սուգ էին անում, դոշներին ծեծում, գլխներին տալիս, երեսները պոկում, պռճկում. ամպք ուզում էին՝ Խլղարաքիլիսեն վերև քաշեն, անդունդք՝ իրանց ծոցը քաշեն պահեն, քար ու հող իրար կտրատում, սպանում էին...»[3]։

Վեպի բուն սյուժեի հետ առնչություն չունեցող, ընդհակառակը, երկի գործողությունների հաջորդական և արագ ընթացքը խաթարող շեղումնե-

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 63։

2 Նույն տեղում, էջ 110։

3 Նույն տեղում։

րը, որ առաջին հայացքից թվում են ավելորդ, իրականում չափազանց կենսական են երկի համար։ Կարելի է ասել, որ դրանք՝ իր տեսակի մեջ բացառիկ այդ վեպի կենդանի զարկերակն են։ Արտաքուստ գուցե և այդ շեղումները թուլացնում են վեպի դինամիկան, սակայն դրանք վեպին հաղորդում են ներքին մի անասելի ավյուն, կուտակում նրա մեջ պայթուցիկ մեծ ուժ, ընթերցողի միտքն ու հույզը բոցավառող ներքին մի անհանգստի կրակ։

Վերոհիշյալ հանգամանքներով էլ պայմանավորվում է «Վերք Հայաստանի» վեպի մի այլ առանձնահատկությունը՝ այդ երկի բացառիկ անմիջականությունն ու անկեղծությունը։

Հայ գրականության մեջ թերևս չգտնվի մի այլ գործ, որ այնպես բնութագրի իր հեղինակին, ինչպես «Վերք Հայաստանին»։ «Վերք Հայաստանին» դա Աբովյանն ինքն է։ Այդ գործի մեջ նա դրսևորել է իրեն ամբողջությամբ, չկարողանալով ոչինչ թաքցնել ընթերցողից։ Իր նկարագրածն ու պատմածը Աբովյանը շատ ավելի խոր է ապրում և առավել անմիջականորեն ընկալում, քան ամենաանմիջական ու պարզամիտ ընթերցողը, ընթերցող, որ գրվածքի յուրաքանչյուր գործողությունը ընդունում է իբրև ճշմարիտ իրողություն։

«Վերք Հայաստանին» Աբովյանը գրել է անասելի կրքով, մեծ լարվածությամբ, ասես շունչը պահած։ Ստեղծագործական այդ բուռն կրքի ու լարվածության ուժն արտահայտվել է նրա հախուռն ոճի, երկար ու սլացուն նախադասությունների, նույնիսկ հաճախ էլ հիպերբոլիկ պատկերների և նկարագրությունների մեջ։ Երևանի բերդն է նկարագրում, թե Զանգուն, ձմեռը, թե ամառը, երկիրն իր հրաշալիքներով, թե երկինքը փոթորկի ու կայծակահարության պահին, ուրախություն է արտահայտում, թե վիշտ, հերոսների արտաքինն է պատկերում, թե ներքինը, իր ապրումներն է պատմում, թե ուրիշինը, այդ բոլորն այնքա՜ն յուրօրինակ ձևով է կատարվում, այնքա՜ն տարբեր վիպական պատումի սովորական եղանակից, որ երբեք չի կարելի Աբովյանինը չճանաչել, ուրիշինի հետ շփոթել։

Ն. Գոգոլի «Մեռյալ հոգիներին» նվիրված իր հոդվածում Բելինսկին «մեծագույն հաջողություն և հեղինակի կողմից առաջընթաց քայլ» է համարում այն, որ վեպում շոշափելի կերպով երևում է նրա սուբյեկտիվությունը։ «Այստեղ,— ասում է Բելինսկին,— մենք հասկանում ենք ոչ այն սուբյեկտիվությունը, որն իր սահմանափակվածությամբ կամ միակողմանիությամբ աղավաղում է պոետի պատկերած առարկաների օբյեկտիվ իրականությունը, այլ ... այն սուբյեկտիվությունը, որը նրան թույլ չի տալիս ապատիկ անտարբերությամբ խորթ լինել իր նկարագրած աշխարհին, այլ ստիպում է իր կենդանի հոգու միջով անց կացնել արտաքին աշխարհի երևույթները և այդ իսկ միջոցով նաև կենդանի հոգի ներշնչել նրանց»[1]։

---

[1] Վ. Գ. Բելինսկի, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 260։

Ուրեմն ուրիշ բան չէր այդ սուբյեկտիվությունը, քան ակտիվ քաղաքացիություն, գրողի ակտիվ, գերզգայուն վերաբերմունք դեպի իր շոշափած հարցերը, դեպի կյանքն առհասարակ՝ իր չար ու բարիով։

Բելինսկու վերոհիշյալ շատ ուշագրավ տողերը Աբովյանին վերաբերվում են թերևս ավելի մեծ չափով, որովհետև երկը շնչավորող այդ սուբյեկտիվությունը, կամ այդ ակտիվ, գերզգայուն վերաբերմունքը դեպի կյանքը, առավել շեշտված արտահայտվել է «Վերք Հայաստանի» վեպում։

Գրական ուղղության տեսակետից «Վերք Հայաստանին» միատարր չէ։ Այս մոմենտը դիտել և ընդգծել են համարյա բոլոր այն գրականագետները, ովքեր զբաղվել են այդ երկի ուսումնասիրությամբ։ Նույնիսկ նրանք, ովքեր «Վերք Հայաստանին» ռեալիստական վեպ են անվանել, չեն անտեսել ռոմանտիկական տարրերի առկայությունը և այն համարել են հիմնականում ռեալիստական։

«Վերքի» գրական ուղղության մասին խոսելիս պետք է մոռանալ մի էական հանգամանք, այն, որ Աբովյանը իր՝ մոտ քառորդ դար տևող ստեղծագործական պրակտիկայում՝ սկսելով կլասիցիզմին տուրք տալուց, անցավ ռոմանտիկական ուղղությանը՝ դառնալով այդ ուղղության հիմնադիրներից ու առաջին ներկայացուցիչներից մեկը մեր գրականության մեջ, իսկ 30-ական թվականների վերջերին անցում կատարեց դեպի ռեալիզմը, առանց հրաժարվելու ռոմանտիզմի մի շարք գրական հատկանիշներից՝ շեշտված տենդենց, բարձր ներշնչանք, ոճի պաթետիկա, հիպերբոլա, սուբյեկտիվություն (Բելինսկու իմաստով) և այլն։ Խիստ առանձնահատուկ էր Աբովյանի ռեալիզմը, մանավանդ «Վերքի» ռեալիզմը։ «Վերքի» առանձնահատկությունների մասին խոսվեց մի փոքր վերը, որոնք էլ հենց պայմանավորեցին նրա գրական ուղղության առանձնահատկությունները՝ ռեալիզմի և ռոմանտիզմի սերտ միաձուլվածությունը։ «Վերք Հայաստանին» «հայրենասերի ողբ էր», բայց և մյուս կողմից էլ պատմական վեպ։ Այդ երկի մասին կարելի է ասել Գոգոլի «Մեռյալ հոգիների» մասին ասած Բելինսկու խոսքերը՝ «Ժողովրդական կյանքի դաղտնարանից դուրս պոկված մի երկ»։ «Վերքին» տված Նալբանդյանի գնահատականի մեջ նույն գաղափարն է արտահայտված։ Նալբանդյանը գրում է. «Բարի հիշատակի արժանավոր Աբովյանի «Վերք Հայաստանի» անունով գործը է ազգային բանաստեղծության մի հարազատ գաղափար։ Ահա այդ աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը։ Այստեղ, որպես մի կատարդական հայելու մեջ ցույց է տալիս բանաստեղծը հայոց ազգի ընտանեկան կյանքի անշուք և անմխիթար պատկերները, այնտեղ տեսնում ենք գյուղերի տանուտյարքը, ծանոթանում ենք նոցա հասկացողության հետ։ Բարեխիղճ բանաստեղծը հանդիպեցնում է մեզ հոգևոր մարդերի, խոսեցնում է նոցա յուրյանց հասկացողության պես այս և այն բանի մասին, պատկերացնում է մեր առջև նոցա ունկնդիրների հասկացողության վիճակը, սահմանում է այն տխուր հարաբերությունը, որ կար նոցա մեջ։ Մենք տեսնում ենք այդ Աբովյանյան հայելու մեջ հայկական կյանքի մեռած պատկերը, տեսնում

ենք, թե ինչպես այդ մեռելային դաշտի զանազան կետերում խլրտվում է առաքինությունը և հովվական կամ նահապետական ժամանակների հասկացողությամբ ընդդեմ է զինավորվում այս կամ այն անիրավության, թե ինչպես հալածվում է այս առաքինությունը և պատճառ է լինում բյուր կաթիլներով արտասուքի։ Նա ցույց է տալիս Աղասու ընկերներով, թե ոչ բոլորովին սառել է հայկական արյունը Հայաստանի գավակների երակներում, ցույց է տալիս, թե մի հերոսի հրավեր, ազգի իրավունքների, կրոնի և ազատության անարգվելու վրեժը մի թշնամուց հանելու համար, դեռևս տեղ գտանում է ազգի երիտասարդների սրտի մեջ»[1]։

Նալբանդյանի ասածների վրա անհրաժեշտ է ավելացնել. Աբովյանն առաջին հայ հեղինակն է, որ տվել է առևտրա-վաշխառուական կապիտալի ու նրա ներկայացուցիչների բնորոշ գծերը, պարզել գյուղի և քաղաքի փոխհարաբերությունը, նախատեսել այդ փոխհարաբերության զարգացման տենդենցը — գյուղի ապագա քայքայումը։

Դուրս գալով ազգային կյանքի գաղտնարանից, «Վերք Հայաստանին» առաջին անգամ իբրև մի շքեղ հանդիսարան բաց արեց այդ գաղտնարանը՝ ազգային կյանքի իր շեշտված առանձնահատկություններով, իր լեզվով, մտածողությամբ, մարդկանց բնավորություններով, բնաշխարհով, այն ամենով, ինչով որ ապրում և շնչում էր ժողովուրդը։

«Վերք Հայաստանին» լույս տեսավ գրվելուց մոտ երկու տասնամյակ հետո՝ 1858 թվականին, սակայն նրանում արծարծված խնդիրներն այդ ժամանակ նույնքան այժմեական ու հրատապ էին, որքան երկը գրելու օրերին։ Այդ էր պատճառը երկի գտած աննախընթաց խանդավառ ընդունելության՝ ժամանակի գրական հասարակայնության կողմից՝ թե Արևելահայաստանում և թե արևմտահայերի մեջ, մինչև իսկ հայկական գաղութներում։ Հայտնի է, թե որքան խոր եղավ Աբովյանի վեպի ազդեցությունը Նազարյանցի և Նալբանդյանի, Րաֆֆու և Պատկանյանի, Պռոշյանի և Աղայանի վրա։ Արևելահայ գրողների այդ սերունդը հանդիսացավ «Վերք Հայաստանի» վեպի տրադիցիաների եռանդուն շարունակողն ու զարգացնողը։ Այդ երկի բացած մայրուղիով ընթացավ XIX դարի ողջ հայ գրականությունը՝ մինչև Թումանյան և Իսահակյան, Տերյան և Վարուժան։

Այսօր էլ կենդանի և այժմեական են «Վերք Հայաստանի» վեպի ժողովրդական տրադիցիաները, նրանում արտահայտված բյուրեղյա, անբասիր հայրենասիրությունը, ժողովուրդների բարեկամության ու հումանիզմի գաղափարները։

10

«Վերք Հայաստանի» վեպից հետո Աբովյանը տվեց մի շարք ինքնուրույն և թարգմանական պատմվածքներ ու զրույցներ, իսկ կյանքի վերջին տարիներին գրեց «Պատմություն Տիգրանի» մանկավարժական վեպը։ Այդ

[1] Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հատ. 1, էջ 279։

երկերում Աբովյանի ուշադրությունը բևեռված է ժողովրդի կյանքի նոր էտապում առաջ եկած խնդիրներին՝ աշխատավորական խավերի տնտեսական և կուլտուրական անմխիթար վիճակի հետ կապված հարցերին։ Բայց անցյալի մղձավանջը գրողը հեշտությամբ չմոռացավ։ Պարսից տիրապետության ժամանակներին մի վերջին անգամ նա անդրադարձավ «Առաջին սեր» պատմվածքում։

Այս երկը Դ. Դեմիրճյանը իրավացի կերպով անվանում է «Վերքի» մինիատյուրը»[1]։ Պատմվածքի հերոսը՝ «Զրենդունցի ռես Կարոյի որդի» Վանին Աղասու պատճենն է՝ օժտված վերջինիս արտաքին և ներքին բարեմասնություններով։ Հերոսի սիրած աղջիկը՝ Փարիխանը, Թագուհու երկվորյակն է։ Թագուհուն փախցնող ֆարաշները այստեղ փոխարինված են գիշերով հարձակվող ավազակախմբով։ Փարիխանին նույնպես հափշտակում են սարդարին «փեշքաշ» տանելու նպատակով։ Գործողությունների միջավայրը ևս ծանոթ է «Վերք Հայաստանի» վեպից։ Այստեղ էլ հանդես են գալիս Զանգուն ու Երևանի բերդը։ «Վերքում» նկարագրվող բարիկենդանի տոնը փոխարինված է Վարդևորի տոնի և այդ տոնի առիթով՝ ժողովրդի Ծաղկեվանք ուխտ գնալու նկարագրությամբ։ Լեզվի և արվեստի առանձնահատկություններով ևս «Առաջին սերը» կրկնում է «Վերք Հայաստանի» վեպին։ Երգախառն արձակ՝ արևելյան սիրավեպերի նմանությամբ,— ահա թե ինչպես պիտի բնորոշել այն՝ արվեստի տեսակետից։ Լեզուն՝ «Վերքում» կիրառված արարատյան բարբառն է։ Հիպերբոլիկ ոճը, հայրենասիրական շեղումները այս պատմվածքում էլ հանդես են գալիս իբրև գրողի արվեստի առանձնահատկություններ։

Թեև պատմվածքի թեման և սյուժեն մեզ փոխադրում են պարսից սարդարների տիրապետության դաժան օրերը, սակայն հեղինակի առաջ քաշած պրոբլեմը թվում է թե պիտի թելադրված լիներ 40-ական թվականների սոցիալական պայմաններով։ Ո՞րն է այդ պրոբլեմը։ Դա ազատ, ինքնաբուխ, սոցիալական պայմաններով և առհասարակ ոչ մի կողմնակի հանգամանքով չկաշկանդված սիրո պրոբլեմն է։

Աբովյանը գրում է. «Էնպես սեր ոսկեգրով ա երկնքումը գրած՝ երբ մարդ սրտին կհետևի և ո՛չ մալի կամ դովլաթի... սիրով սերի գինը կիմանա ու ո՛չ փողով, դրամով կառնի»[2]։

Ունևոր գյուղացու որդի Վանին սիրում է գեղեցկուհի, սակայն որբ ու ընչազուրկ Փարիխանին, հենց դրանով էլ այդ սերը արժանի է ոսկեգրով երկնքում գրվելու,— շեշտում է Աբովյանը։

Չքավոր, անօժիտ աղջիկների համար ամուսին չգտնելու հարցը հասարակական չարիքի բնույթ ստացավ հետագա տասնամյակներում։ 50—70-ական թվականներին և ավելի ուշ՝ ինչպես մեր, այնպես էլ ռուս և համաշխարհային գրականության մեջ այդ թեման մեծ տարածում ստացավ։ Բուրժուական հասարակարգում գնալով ամուսնությունը ավելի ու

[1] Խաչատուր Աբովյան. Պատմա-բանասիրական հետազոտություններ, Գիրք երրորդ, 1948, էջ 45։

[2] Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 4, էջ 14։

ավելի սկսեց նմանվել առևտրական գործարքի, մի գործարքի, ուր ամուսնացող երիտասարդին շահագրգռում էր ոչ թե «կյանքի ընկերը», այլ հարստությունն ու կարիերան։

40-ական թվականներին դեռևս վաղ էր խնդիրն իր ամբողջ խորությամբ դիտելու և բացահայտելու համար, ուստի իզուր կլիներ Աբովյանի ստեղծագործություններում որոնել ամուսնությունը՝ հողեր և այգիներ ձեռք բերելու միջոց դարձնող Միկիտան Սաքոներ ու տանուտեր Խուդոներ, սակայն երևույթն իր նախնական ձևի մեջ, ավելի շուտ երևույթի «նախազգացումը» արդեն նկատվում է գրողի պատմվածքներում։ Այս առումով կարելի է սերտ կապ տեսնել «Առաջին սեր» և «Աշխարհիկ բարբառ երևանցի հայոց» պայմանական վերնագիրը կրող պատմվածք-ակնարկի միջև։

Պատմվածք-ակնարկում՝ Աբովյանը ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում թշվառության մատնված մի ընտանիք։

«Մեկ փոքր օթախի միջում՝ մեկ հին կարպետ էր փռած, վրեն մեկ կտրտված յորղան դոշակ՝ և սրանց միջումն մեկ հիվանդ կին ընկած, ձեռքը սրտի վրա դրած, աչքերը երկինք քցած, քիչ էր մնացել՝ որ հոգին տար։ Մեկ տասնհինգ տարեկան աղջիկ, մեկ կողմն էր նստել, մեկ ութ տարեկան տղա մյուս կողմն, և մեկ ծծկեր երեխա վեցամսական՝ դոշի վրա ընկած, կամենում էր որ ծիծ ուտի։ Հոգիս խորովեցավ՝ ոտքս թուլացան։ Էլ ե՞րբ կարեի մոտ գնալ։ Հենց ռնիր կրակ թափվեցավ գլխիս։ Հեռվից մտիկ տալով՝ սկսա այրվիլ, տոչորվիլ»[1]։

Ռուսական միապետության տիրապետության ժամանակներն են։ Չկան այլևս պարսից վայրագությունները, չեն առևանգում, չեն հափշտակում, գեղեցիկ կանանց բռնությամբ քարշ չեն տալիս խանի հարեմը, բայց և չեն վերացել ժողովրդի ստորին խավերի նյութական զրկանքները։ Հորը կորցրած և մորից զրկվելու վտանգին մատնված թշվառ Մարիամի և մյուս փոքրերի վիճակը ոչնչով ավելի լավ չէ, ավազակների կողմից հափշտակված և հարեմ տարված Փարիխանի վիճակից։ Այսպիսի գաղափարական ելակետով է գրված այս երկը։

Պատմվածքում ընդգծվում է ճիշտ դիտված մի այսպիսի փաստ։ Թշվառը, որբը, անօգնականը ոչ միայն նյութապես է տուժում, այլև բարոյապես։ Նոր ձևավորվող բուրժուական հարաբերությունների բարոյական նորմները, մարդու բարեմասնություններն ու առաքինությունները նույնացվում են նրա ունեցվածքի հետ։ Ունեզուրկ ես, կնշանակի զրկված ես և առաքինություններից։ Չքավորին զրկելով մարդկային առաքինություններից, դրանով իսկ հասարակարգը նետում է իր վրայից նրա հանդեպ ամեն տեսակի պատասխանատվություն։ Աբովյանի հումանիստ հերոսը բողոքում է այս երևույթի դեմ։ «Սխալվում են,— ասում է նա,— որ կարծում են, թե Աստված սիրունություն, գութ, շնորհք, բարի բնություն

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 4, էջ 34։

հարուստին ա տվել։ Քա՛վ լիցի, Աստված շատ անիրավ կլիներ, թե որ էսպես աներ»[1]։

Փարիխանը համարյա մուրացիկի թշվառ կացության մեջ էր ապրում, բայց հենց նրանով էր, որ հափշտակվեց Վանին, նրա մեջ էր, որ նա մարմնացած տեսավ կանացիական հավլազյուտ բարձր բարեմասնություններ։ Ամեն բանով Մարիամը նման է Փարիխանին, վերջինիս չափ թշվառ և վերջինիս պես հազվադեպ հատկություններով օժտված։

Աբովյանի հերոսը ոչ միայն խոսքով է հակադրվում իշխող կարգերին, բարքերին ու հոգեբանությանը, այլև գործով։ Նա իրեն կին է ընտրում Մարիամին։ «Մերձիմահ կինն այն՝ այժմ իմ զոքանչն ա, և Մարիամ հրեշտականման աղջիկն նորա՝ նշանածն իմ՝ ... Հավատա՛ ինձ, եթե աշխարհի ամեն բախտը և հարստությունը ինձ բաշխել էին, ես ոչ փոխեի իմ այժմյան ուրախության և բախտի հետ»[2]։ Ընդգծելով, որ իր հերոսի ազնիվ և անշահախնդիր վերաբերմունքը՝ ամուսնական հարցում վարձատրված է, Աբովյանը դրանով իսկ բարոյական ուժգին ապտակ է հասցնում ժամանակի ամորալ բարքերին ու դասային նախապաշարմունքներին գերի դարձած մարդկանց։

Եթե Աբովյանի վերոհիշյալ ստեղծագործություններում արտահայտություն է գտել, ինչպես ասվեց, հիշյալ երևույթի լոկ «նախազգացումը», ապա «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի մասին» պատմաազգագրական աշխատության մեջ երևույթը բացահայտվել է իր ամբողջ խորությամբ, սոցիալական իր ողջ իմաստով։ Բարքերի անկման, ընտանեկան և ընկերական սրբությունների ոտնակոխ լինելու ընդհանուր պատկերի ֆոնի վրա, Աբովյանը հատկապես ընդգծում է՝ ամուսնությունը տղամարդկանց համար դրամագլուխ ձեռք բերելու և շահույթի աղբյուր դարձնելու փաստը։ «Թո՜ւ, բոլորն էլ փողի ծարավ են զգում, փողի համար էլ ամուսնանում»— գրում է Աբովյանը։ Հեղինակը վշտով նկատում է, որ սերը, գեղեցկությունը, պոեզիան ընտանեկան կյանքից չքացել են, տեղի են տվել շահի անսիրտ հաշվի առաջ։ Փողի սառը շնչի տակ խամրել է այն ամենը, ինչ որ թելադրվում է սրտից, մարդկային ազնիվ, բնական զգացմունքից։ «Դե, թող բանաստեղծներն իրենց գլուխը պայթեցնեն, թե ամենագեղեցիկն աշխարհիս երեսին ընտանեկան երջանկությունն է, որ կույսի հայացքը երկնային է, որ սերը մի աստվածային կայծ է մարդու սրտում. բոլորովին ոչ»։ Բանաստեղծները,— դառն իրոնիայով ավելացնում է Աբովյանը,— պետք է երգեն՝ «Փողն է ամենամեծ սրբությունը աշխարհիս երեսին, երկնային ամենամեծ բախտավորությունը, լավագույն բուժամիջոցը և ինչպես մեզ մոտ շատ ճիշտ ասում են՝ դրախտ ու դժոխք գնելու, ամբողջ աշխարհը տակ ու վրա անելու, կործանելու և նորից վերաշինելու միակ միջոցը»[3]։

---

1 **Խ. Աբովյան,** *Երկ., հատ. 4, էջ 35։*

2 *Նույն տեղում։*

3 **Խ. Աբովյան.** *Երկ., հատ. 8, էջ 179—180։*

60—70-ական թվականների Թիֆլիսահայ բարքերի սքանչելի կենդանագրող Սունդուկյանն իր կերտած անմահ կերպարներով եկավ հաստատելու, թե Աբովյանը որքան խոր է թափանցել իր դիտած երևույթների մեջ, որքան ճիշտ նկատել պատկերը բուրժուական բարքերի այլասերման։

Ժողովրդի ներքին խավերի կյանքում առկա չարիքները, որոնցից նրանք տառապում են՝ շատ են բազմազան։ Նրանք տառապում են ոչ միայն չքավորությունից, ոչ միայն վերնախավերի անմարդկային վերաբերմունքից, այլև անկուլտուրականությունից, ասիական կոպիտ, հետամնաց կենցաղից, նախապաշարմունքներին գերի լինելուց և այլն։ Այս ոգով է գրված «Թուրքի աղջիկը» ակնարկ-նովելը։ Դրվածքի հերոսուհին ասիական հետամնաց սովորությունների զոհն է։ Նրա հայրը վտարել է տնից մորը։ Մորը և աղջկան խստիվ արգելված է տեսակցվել։ Ծնողի կարոտից և միայնությունից տառապում է թշվառ աղջիկը։ Մուսուլմանական բարքերը արգելում են կնոջը տնից դուրս գալ, մարդկանց հետ հաղորդակցվել։ Եվ որբ այդ աղջիկը,— քաղաքի մի խուլ ծայրամասում՝ տան մեջ փակված մեն մենակ ողբում է իր դառն, անուրախ վիճակը։ Շեյրաթը առավել դաժան օրենքներ է սահմանել՝ քրիստոնյաների հետ հաղորդակցվող մուսուլմանների, մասնավորապես մուսուլման կնոջ նկատմամբ։ Այդ է պատճառը, որ Թրքուհին սարսափում է, տեսնելով իր մոտ՝ իր աղիողորմ լացի ձայնը լսած, իրեն կարեկցող քրիստոնյա տղամարդուն։ Ահաբեկված թե՛ օտարականի, թե՛ իր սեփական ճակատագրով, նա թախանձում է նրան իսկույն հեռանալ, քանի դեռ չի եկել հայրը։ Իզուր է անծանոթ երիտասարդը փորձում հանգստացնել աղջկան, բացատրելով, որ ինքը օտարական չէ, եվրոպացի չէ, հայ է, համաքաղաքացի, համերկրացի, որ իրեն այդտեղ է բերել մարդկային մաքուր զգացմունքը, կարեկցանքը նրա վշտի հանդեպ։ Դաժան է շեյրաթը և անզիջող։ Բայց հայ երիտասարդը այնպես է խոցված Թրքուհու վշտով, այնպես կախարդված նրա գեղեցկությամբ, որ պատրաստ է ավելի շուտ նրա խրճիթի շեմքին մահ գտնել, քան ապրել նրանից հեռու, քան կորցնել նրան։ Հեռվում երևում է աղջկա հայրը։ Եթե նա նրանց միասին տեսներ, դա ստույգ մահ կնշանակեր երկուսի համար ևս։ Հայ երիտասարդը ստիպված էր վիչել։ Նա հեռանում է։ «Մեկ ախ քաշեցի, դուշիս խփեցի ու արինն աչքս առած, մուխը քիթ ու բերանս լիքը, ձորն ընկա, սարն դուս նի էլա»։ Երիտասարդը այնուհետև իզուր է որոնում իր «սիրտը քանդող» աղջկան։ Կորցնելով Թրքուհու հետքը, նրա հետ կապված հուշերով, նրան մի օր տեսնելու հույսերով է նա ապրում։ «Ես քո պատկերը, էն աննման պատկերը, ես քո էն ցողանման արտասունքը... չե՛մ մոռանալ, չե՛մ ուրանալ։ Թող իմ հավատքն ինձ պատժի, թող իմ օրենքն ինձ հալածի, տանջի... քանի շունչս վրես ա, լեզուս բերանումս, հըլա շատ կգամ ուխտ, հըլա շատ անգամ կգամ էն արդար հողը տեսնիմ, էն քանդած խարաբեն մտնիմ, որտեղ քո ծունկն էր չոքել, քո արտասունքը թափում, քո շունչը դուս գալիս, քո աչքը լալիս»[1]։

---

[1] Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 4, էջ 31։

Տեսնել մարդու տառապանքը և անտարբեր մնալ նրա նկատմամբ, որովհետև այդպես է պահանջում կրոնը, այդ է թելադրում մարդկանց իրարից բաժանող ազգային-կրոնական անջրպետը՝ Աբովյանին և նրա հերոսին թվում են անհեթեթ, մարդու էությանը դեմ մի բան։ Ամեն ինչ կյանքում պիտի ծառայի մարդուն, նրա բարեկեցությանը, երջանկությանը, նրանում եղած առողջ և բանական զգացմունքներին ու ցանկություններին բավարարություն տալուն։ Ահա, թե որն է գրողի ելակետը։

Պատմվածքի քրիստոնյա-հայ հերոսը, նախքան թրքուհուն հանդիպելը մուսուլմանների գերեզմանոցում ականատես է լինում հուղարկավորության հանդեսի։ «Թուրք ըլի, Աստուծո պատկեր չի՞...» խորհրդածում է նա։ Եվ, ահա, նույն հումանիստական գաղափարի հետքերով առաջ է գնում նրա միտքը. «Խաղաղություն հոգուդ՝ հանգուցյալ մարմին, ա՛յ իմ պատկերակից հողածին։ Հավատներս մեկ չի՛, սրտներս հո մեկ ա, մեր ժամը չէ՞ր գալիս՝ մեկ երկնքի տակի, մեկ երկրի երեսի էիր, հո ինձ հետ կենում, ման գալիս. լեզուդ իմը չէ՞ր, պատկերդ, հոգիդ հո իմիցն էր։ Տերտեր չի քեզ թաղում, մոլլեն էլ հո աղոթք ա անում, չի՞ հայհոյում։ Խաչ, ավետարան չկա վրեդ, միևնույն հողի տակը չե՞ս մտնում, ուր որ ես էլի պիտի մտնեմ։ Խունկ ու մոմ չե՞ն վառում, չե՞ն ծխում, մկամ ա՞չք չի՞, որ վրեդ լալիս ա, սիրտ չի՞, որ քեզ համար էրվում ա։ Բաս ես քա՞րի պես պտի քեզ նայեմ, որ քրիստոնյա եմ, ու աչքս չխփե՞մ։ Գնա, ով մեզ ստեղծել ա, էն բարի Արարիչը՝ որ քեզ էլ ինձ հետ իր լուսովը լիս էր տալիս, իր քաղցր աչքի տակին պահում, քեզ համար էլ ունի տեղ, բնակություն, որ քո վարձն էլ տա։ Երկնքի վարձն ու փառքը բարյաց համար ա։ Թե բարի էիր չե՞ս կորչիլ։ Գնա, երկիրը քեզ էլ մոր պես անփորձ կպահի մինչև դատաստյան օրը»[1]։

«Թուրքի աղջիկը» նովելը ոչ միայն բողոք է կնոջ ստրկական վիճակի դեմ, այլև մի ցասկոտ ելույթ բոլոր և ամեն տեսակի նախապաշարմունքների դեմ, տգիտությունից ու սահմանափակությունից սնունդ ստացող մարդու բնական էությունը խեղաթյուրող բոլոր երևույթների դեմ։

Մարդկանց իրարից հեռացնելու և խորթացնելու գործում ամենաբացասական դերը, Աբովյանի կարծիքով, կրոնին է պատկանում։ Կրոնի պատճառով էր, որ մարդկանց ու ժողովուրդների միջից «բարեկամությունը հեռացավ, սերը վերջացավ, թշնամությունն արմատացավ, ատելությունը զորացավ»[2]։ Այդպես չէր, սակայն, վաղեմի, նախնադարյան ժամանակներում, երբ տակավին կրոնը իր նախնական պարզ ձևի մեջ էր, երբ կրոնը և բնությունը նույնանում էին։ Այն ժամանակ՝ «Ա՜խ, երկինքն էր մեր տաճարը, երկիրը մեր ժամատունը, արեգակն ու լուսինը՝ մեր ջահ ու լապտեր, աստղերը՝ մեր կանթեղ ու մոմ... Ախ՝ էն, էն ժամանակը ինչպե՞ս էր ջերմ մարդի սիրտը, ինչպե՞ս արդար միտքը, ինչպե՞ս պարզ նրա լեզուն ու խոսքը»[3]։

1 Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 4, էջ 25։

2 Նույն տեղում, էջ 33։

3 Նույն տեղում, էջ 32—33։

Աբովյանի հասկացած կրոնի էությունը պիտի կազմի սերը՝ անհուն, անպարփակ սերը դեպի «աստուծո պատկեր» մարդը, այն պիտի մարդկանց մղի դեպի բարի աշխարհաշեն գործերը, պետք է մարդկանց ոչ թե անջատի, այլ միավորի, որպեսզի նրանք «իրանց նմանին սիրեն, նրա բարին կամենան»... «...Ինչպես մեկ հոր որդի երկրումն մեկ սիրտ, մեկ հոգի, մեկ միտք, մեկ տեղ...»[1] ունենան։

Աբովյանի քննության առնված այս ակնարկ-նովելները, մասնավորապես «Թուրքի աղջիկը» այն երկերից են, որոնց մեջ գրողի աշխարհայացքի հումանիստական էությունը բացահայտվում է առավել լիավարտ, առավել խոր ու ամբողջական կերպարով։ Կյանքի երևույթներին լայն ու ազատ հայացքով նայող հեղինակն այս գործերում ամբողջ սրությամբ առաջ է քաշում մարդու հարցը, որի երջանկության ճանապարհին եղած ոչ մի խոչընդոտ չի կարող արդարացի և բանական ճանաչվել՝ լինի այն սոցիալական բնույթի, թե հանդես գա կրոնի և կամ «հզոր ազգության» անունով։ Այս կտրուկ եզրակացությունը հենվում է Աբովյանի այն հայեցողության վրա, որի համաձայն երջանկությունը դա յուրաքանչյուր անհատի անկապտելի իրավունքն է։

* * *

«Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» վեպով Աբովյանը ընթերցողների ուշադրությանն է ներկայացնում իրենց շտապ լուծմանը սպասող խնդիրների նոր շարք, ընթերցողների առաջ բացում հերոսների նոր աշխարհ։

Տակավին «Վերք Հայաստանի» վեպում Աբովյանը ամենայն սրությամբ առաջ քաշեց նոր-դեմոկրատական մտավորականության հարցը։ Աբովյանի՝ իբրև լուսավորչի համար դա խիստ կենսական հարց էր։ Ժողովրդի, նրա մատաղ սերնդի կրթության և լուսավորության գործին նվիրված, կրթված մարդկանց հետ էր կապում Աբովյանն իր հայրենակիցների ընդհանուր բարեկեցության բարձրացումը։ Սակայն ժողովրդի հանդեպ հոգատար, նրա կարիքներին նվիրված իսկական կուլտուրական գործիչների փոխարեն Աբովյանը թե հոգևորականության և թե աշխարհիկ մտավորականության շրջանում տեսնում էր միայն անիդեալ եսամոլների, գիտելիքներից ու կուլտուրայից զուրկ մարդկանց։ Իր ժամանակի մանկավարժների մասին Աբովյանը գրել է. «Դրանք դեռևս զրադաշտական ժամանակներից մնացած էակներ են, որոնք տակավին խարխափում են լույսի ու խավարի միջև...»[2]։ Իրենց տգիտությամբ փայլող այդ մարդկանց մեջ, ինչպես Աբովյանն է ընդգծում, արմատացած էր չինովնիկական ոգին։ Ոչ թե կոչումը, այլ կարիերիստական նկատառումներն էին նրանց մղում կրթական գործի ասպարեզը։ «Աստիճանները և պարգևները, ռոճիկը և անդորրը, մի խոսքով՝ սնափառությունն ու ինքնասիրությունը,

1 Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 4, էջ 33։
2 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 5, էջ 189։

ինչպես ամենուրեք, այնպես էլ այստեղ, այն միակ վտարանդիներն են,— գրում է Աբովյանը,— որոնք հրապուրում են մեզ կրել ուսուցչական անունը, այդ կործանարար տարրերը, որոնք մեր միակ նպատակն են դաստիարակի պաշտոն ստանալիս...»[1]։

Ստեղծել իսկական ուսուցչի իդեալը, ահա այն առաջին և հիմնական խնդիրը, որ ծառանում է Աբովյանի առաջ իր մանկավարժական վեպը գրելիս։ Չնայած ժամանակի մանկավարժներին տված իր սպանիչ բնութագրին, բայց և այնպես գրողը այդ իդեալը հեռուներում չպետք է որոներ։ Աբովյանին պարզապես անհրաժեշտ էր ընդհանրացնել իր սեփական մանկավարժական փորձն ու հայացքները և, ահա, մենք կունենայինք իսկական մանկավարժի այն կերպարը, որը հանձին Աբովյան-մանկավարժի ուներ իր նախատիպը։ Կարապետ Վահանյանը «Պատմություն Տիգրանի» վեպում հենց այդ իդեալի մարմնացումն է։

Բայց մատաղ սերնդի կրթության գործի առաջ դժվարություններ էին ստեղծում ոչ պակաս չափով նաև հենց իրենք՝ ծնողները։ Շահստացության ոգու թագավորության պայմաններում, ծնողների մի զգալի մասի կողմից երեխաների սովորելը դիտվում էր որպես պարապ գործ։ Լոկ նյութական շահագրգռություններով ապրող ծնողների պատճառով Աբովյանն իր մանկավարժական պրակտիկայում հաճախ է ընկել դժվարին կացության մեջ։

Այս առնչությամբ շատ ծանր խոհերի և խոսքերի կարելի է հանդիպել գրողի ամենատարբեր երկերում։ Աբովյան լուսավորիչ-մանկավարժի համար ամենևին երկրորդական հարց չէր ուսումնադաստիարակչական պրոցեսում ծնողների օժանդակությունն ստանալու մոմենտը։ Տալ այդ պրոցեսում գործոն մասնակցություն ունեցող ծնողի՝ իդեալական ծնողի պատկերը,— ահա երկրորդ խնդիրը, որ դրել է իր առջև Աբովյանը «Պատմություն Տիգրանի» վեպում։

Այդպիսի իդեալական ծնողներ են Աննան և Տիգրանը, հատկապես վերջինս, որի անունն էլ կրում է վեպը։ Տիգրանի համար իր երեխաներին՝ Վարդանին և Եղիսաբեթին կրթություն տալը ամենաթանկ բանն է աշխարհում։ Ոչ թե հարստությունն է, որ պիտի երջանկացնի նրանց, այլ կրթությունը և դաստիարակությունը։ Սակայն Տիգրանը իդեալական ծնող լինելու հետ մեկտեղ իդեալական քաղաքացի է։ Նա մտավոր ու բարոյական բարձր հատկություններով օժտված անձնավորություն է, հասարակական բարոյն նվիրված մարդ։ Իր բախտավորությունը Տիգրանը տեսնում է կարոտ մարդկանց աջակցելու մեջ։ Սեփական բարեկեցության խնդիրը նրան մոռացնել չի տալիս կարիքի և հոգսերի մեջ թաղված շրջապատի մարդկանց։ «Էնպես նրա սիրտն ու հոգին էնքան իր համար չէր հոգս քաշում, ինչքան ուրիշի համար»,— ասում է Աբովյանը։

Երեխաների համար ուսուցիչ վարձելով՝ նրանց կրթության և դաստիարակության գործում Տիգրանը իր պարտականությունները չի հա-

---

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 5, էջ 186։

մարում ավարտված։ Ուսուցիչը և ծնողը մշտական համագործակցության մեջ են, իր ամենօրյա գործերի մեջ թաղված Տիգրանը միշտ էլ ժամանակ է գտնում երեխաներով զբաղվելու համար։

Վեպի կենտրոնական դեմքը ուսուցիչ Կարապետ Վահանյանն է։ Երեխաների կրթության և դաստիարակության գործը Տիգրանը նրան էր հանձնել ու պատահականորեն։ Նա այդ արել է նախապես համոզվելով, որ Վահանյանը իր մեջ միավորում է քաղաքացու առաքինություններն ու մանկավարժի հմտությունը։

«Ո՞ր գիտություններն ես ավելի սովորել,— հարցնում է Տիգրանը Կարապետ Վահանյանին։

— Բնությունը, առավել րուսաց պատմությունը, երկրիս, ու ինչ որ աչքդ տեսնում ա, նրանց պատմությունը, աշխարհիս պատմությունը ու հայի, ռսի, թուրքի լեզուն»,— պատասխանում է ուսուցիչը։ Այս պատասխանի մեջ կա մի ամբողջ մանկավարժական սիստեմ։ Դա ռեալիստական կրթության սիստեմն է։

Ինչպես ֆրանսիացի հռչակավոր մանկավարժ Ռուսսոյի, այնպես էլ Աբովյանի համար բնությունը հանդիսանում է կենդանի դպրոց, բնության առարկաների, երևույթների, ուժերի ուսումնասիրությունը, նրանց ճիշտ հասկանալը Աբովյանը համարում է կրթության նպատակներից մեկը։ Այդ միտքը նա հանգամանորեն զարգացնում էր տակավին իր «Նախաշավիղի» նախաբանում։ Այդտեղ ասված է. «Քանի՞ վայելուչ և իմաստալից դպրոց՝ բնութիւնն՝ որ շրջապատէ զմեօք։ Գործառնութիւնք մարդոյ, զորս յամենայն րոպէի տեսանեմք առընթեր մեր։ Առարկայք սովորականք՝ որք շուրջ զմեօք։ Իմանալ զանուանս, զձև, զգոյն, զորպիսութիւն, զնպատակ, զնիւթ, զներգործութիւն ամենայն իրաց, ճանաչել և դատել զամենայնէ, զոր լսեմք և տեսանեմք, զի՞նչ այլ ևս ծայրագոյն ուսումն նար իցէ ցանկալ մարդոյն բանականի»[1]։

Կարապետը իր մանկավարժական պրակտիկայում ղեկավարվում է վերը շարադրված դրույթով։ Նրան իր աշակերտների հետ ավելի հաճախ կտեսնենք բնության մեջ, զբոսանքների և էքսկուրսիաների ընթացքում, քան սենյակի չորս պատերի մեջ փակված՝ վերացական ֆորմուլաների ու սխեմաների վրա միտք չարչարելիս։ Բայց Կարապետի սաները բնության ճանաչումը ձեռք են բերում նրա վրա ակտիվ ներգործելու, այլ կերպ ասած՝ աշխատանքի միջոցով։ Բանջարեղենների, ծաղիկների, այլևայլ բույսերի անուններին, հատկություններին, նրանց աճեցողության ընթացքին երեխաները ծանոթանում են բանջարանոցում, որ մշակվում և խնամվում է հենց իրենց ձեռքով։

Այսպիսով, ըստ Աբովյանի մանկավարժական հայացքների, աշխատանքային մեթոդի կիրառումը նախ և առաջ հետապնդում է աշխատանքը իմացության աղբյուր դարձնելու նպատակ։ Ո՛չ թե հայեցողաբար, ո՛չ թե լոկ դիտելով, այլ բնության վրա ակտիվ ներգործելով, նրա հետ անմի-

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 5, էջ 55։

նորյա շփումով է, որ Կարապետի աշակերտները տիրապետում են բնության գաղտնիքներին, քայլ առ քայլ լայնացնում իրենց իմացության շրջանակները։

Բայց Աբովյանի համար աշխատանքային մեթոդի կիրառման նշանակությունը շատ ավելի մեծ է, քան այն, ինչ վերը ասվեց։ Աբովյանը հատկապես ընդգծում է աշխատանքային դաստիարակության սոցիալական նշանակությունը։ Ըստ Աբովյանի մարդ և աշխատանք հասկացողությունները նույնանում են ճիշտ այնպես, ինչպես կյանք և աշխատանք հասկացողությունները։

Կյանքը արդյունք է մարդկային ջանքերի, ով որ բաժին է ուզում կյանքից, պետք է իր բաժինը ստեղծի կյանքում։ Այս պարզ և բնական ճշմարտությունը պետք է մարդկանց մեջ մանկուց պատվաստել և այն էլ ոչ թե լոկ որպես տեսական-վերացական ճշմարտություն, այլ որպես ֆիզիկական և բարոյական պահանջ, որպես պրակտիկ ունակություն։ Աշխատանքը պետք է մանկուց դառնա կյանքի անհրաժեշտություն, ահա այս սկզբունքով է կրթում Կարապետ Վահանյանն իր սաներին։ Այսպիսին է նրա սաների սովորած ոտանավորներից մեկը.

«Որ նստենք-ասենք աղա եմ, աղա՛,
Մեր հացն ո՞վ կտանի ջաղացն ու կաղա։
Տանձը ինքն իրան բերանդ չի՛ ընկնիլ,
Որ տակին նստիս. տեղիցդ չե՛ս շարժիլ։
Ո՛վ ղայրաթ չանի, կմնա սոված,
Վերջ ժամանակի դռնե դուռ ընկած»[1]։

Ոտանավորի համար հիմք դարձնելով «ես աղա, դու աղա, մեր բնացունն ով աղա» ժողովրդական հայտնի ասացվածքը, Աբովյանը մարդկանց ակտիվ աշխատանքային գործունեության կոչող այս առածի բովանդակությունն ավելի է խորացրել, առավել սուր ընդգծել կյանքում աշխատանքի կենսական անհրաժեշտությունը մարդու գոյության և բարեկեցության համար։

Սեփական աշխատանքի պտուղների վայելումը ամենամեծ երջանկությունն է,— քարոզում է սաներին Վահանյանը։ Այդ բանում շուտով նրանք համոզվում են սեփական փորձով, երբ հավաքում են իրենց ձեռքերով մշակված բանջարանոցի առաջին արդյունքները։

Ասվեց, որ ռեալական դաստիարակության մեթոդի կիրառմամբ Աբովյանի մանկավարժ հերոսը՝ Կարապետը ձգտում է այն բանին, որպեսզի իր սաներին տա կյանքի գիտություն, նախապատրաստի կյանքի համար։ Բայց կյանքի համար մանուկներին նախապատրաստել՝ չի նշանակում երեխաներին տալ լոկ բնության և բնական երևույթների իմացություն։ Կյանքը իմանալ, կնշանակի իմանալ հասարակական կյանքը նախ և առաջ։ Խնդիրն այդպես է հասկանում Աբովյանը։ Նա իր պատանի

1 Խ. Աբովյան. *ԵԼԺ, հատ. 4, էջ 189։*

հերոսների առջև բաց է անում կյանքը՝ փոքր առ փոքր ետ տանելով չարն ու բարին սքողող վարագույրը։ Սակայն գրող-մանկավարժը դավաճանած կլիներ իր սկզբունքին, եթե հետ տանելով կյանքի վարագույրը, ինքը մի կողմ կանգներ, կամենալով ասել՝ «Ահա կյանքը ինչպես որ կա, ընդունեցեք այն՝ ինչպես որ այն տեսնում եք»։ Աբովյանը բազմազան դեպքերի ու դեմքերի միջոցով հրապարակ է հանում կյանքի բազմազան երեվույթներ և ասում իր որոշակի ու կրքոտ խոսքը լավի և վատի, օգտակարի և վնասակարի, ընդունելիի և մերժելիի նկատմամբ։

Այս առնչությամբ չի կարելի ուշադրություն չդարձնել «Պատմություն Տիգրանի» վեպի մի հետաքրքրական առանձնահատկության վրա։ Խնդիրը վերաբերվում է երկի կառուցվածքին։ Վեպի գլխավոր սյուժետային գծին զուգահեռ Աբովյանը ստեղծում է բազմաթիվ փոքրիկ նովելներ, առակաձև պատմվածքներ, խրատական զրույցներ, որոնք հանդիսանալով միանգամայն ինքնուրույն, ամբողջական գործեր, վարպետորեն տեղադրվում են վեպի մեջ իբրև նրա անհրաժեշտ մասերը։ Այդ զրույցների և նրանց մեջ հանդես եկած կերպարների միջոցով է, որ վեպի գլխավոր հերոսները՝ Կարապետը և Տիգրանը երեխաներին դուրս են բերում պատանեկան անգիտությունից և տալիս կյանքի կողմնորոշում։ Ինչպիսին պիտի լինի մարդը կյանքում, որպեսզի արդարացրած լինի իր մարդկային բարձր կոչումը։ Այս է այն առանցքային սոցիալ-բարոյական խնդիրը, որը դնում է Աբովյանը այդ զրույցների և ամբողջ վեպի հիմքում։

Գրողն այս հարցի պատասխանը տալիս է՝ ելակետ ունենալով պարզհասարակ մարդկանց բարոյական նորմաները, նրանց ապրելակերպը, կյանքի նրանց ըմբռնումը։ Հարուստը և ոչ էլ բարձր պաշտոնյան չեն կարող լինել բարոյական կյանքի օրինակ, որովհետև, Աբովյանի կարծիքով, թե՛ հարստությունը և թե՛ բարձր դիրքը մարդկանց անբարոյականացնում են։ Հակադրելով հասարակ փոստատարին և «աստղը դոշին» «մեծ մարդուն», հեղինակն ընդգծում է առաջինի բարձր մարդկայնությունը, իսկ երկրորդի գոռոզամտությունը, չոր ու տմարդի լինելը։ Իշխանորդի Վարդազարը իր գեխ կյանքի համար «մշակի ու նոքարի հախն էր կտրում, ու աղքատ տեսնելիս ուզում էր գլուխը պոկի»... Վարդազարի և նրա նմանների վարած կյանքի մեջ չկա և չի կարող լինել երջանկություն, քանի որ նրանց կյանքը թունավորված է իրենց զոհերի արտասուքով ու անեծքով։ Այնտեղ է իսկական մարդկային երջանկությունը, ուր որ մարդը ապրում է իր սեփական վաստակի արդյունքով։

Աշխատավորի համեստ կյանքով և վաստակով ապրող Ոսկանը, ժառանգություն ստանալու միջոցով հարստանալով թողնում է աշխատանքը, անձնատուր լինում շվայտ կյանքի, սկսում է դիրք ու աստիճան որոնել, գոռոզանում է, դադարում մարդկանց բարիք կատարել և վերջը՝ անփառունակ վախճան։

Կանգնած լինելով դեմոկրատական խավերի սոցիալ-քաղաքական շահերի պաշտպանության դիրքերում, Աբովյանն իր սաներին ևս կրթում

և դաստիարակում է նույն ոգով՝ աշխատանքի, մարդու հանդեպ խոր հարգանքի ոգով։

Ամփոփելով և ընդհանրացնելով կյանքից առնված կենդանի փաստերը, Կարապետի բերանով վիպասանն ուսուցանում է՝ «լավ իմացեք ուրեմն, սիրելի երեխեք, որ մարդին շորով չի պետք է ճանաչել ու պատիվ տալ, կամ տեղով»։ Շորն ու տեղը հարստությունն է ու դիրքը։

Տիգրանի բերանով Աբովյանը քարոզում է երեխաներին՝ «նոքար ըլի, թե ճորտ, աղքատ ըլի թե ղարիբ, պակասություն ունենա, քոռ ըլի կամ քաչալ, կամ չոլախ, ինչ ըլի, ըլի... ով նրանց մեկ պակաս խոսք ասի... նրանում ոչ մարդկություն կա, ոչ հոգի, ոչ հավատ»։ Խորին մարդկության այս քարոզը Աբովյանի լուսավորական-հումանիստական աշխարհայացքի բնորոշ դրսևորումներից է։

«Պատմություն Տիգրանի» վեպը գրված է Աբովյանի կյանքի վերջին շրջանում՝ 40-ական թվականների կեսերին։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ Ռուսաստանում վաղուց արդեն հուզող խնդիր էր դարձել ճորտերի ազատությունը։ Այդ խնդիրը ծլել էր արդեն իր առաջին զոհերին։ Ցմահ տաժանակրության էր դատապարտվել այդ հարցի առաջամարտիկը՝ Ռադիշչևը, կախաղան էին բարձրացվել դեկաբրիստները։ Բայց հարցը ոչ միայն չէր դուրս գալիս հասարակական կյանքի օրակարգից, այլ գնալով ավելի և ավելի շատ մտքեր էր գրավում դեպի իրեն, հուզում ու խռովում այդ շրջանում արդեն ասպարեզ եկած ռազնոչին մտավորականության ներկայացուցիչներին՝ ի դեմս Բելինսկու և ուրիշների։

Աբովյանը ևս անտարբեր չմնաց ժամանակի այդ արմատական հուզող խնդրի նկատմամբ, չնայած ճորտատիրական սիստեմը որպես այդպիսին բնորոշ չէր հայ իրականության համար։

«Պատմություն Տիգրանի» վեպում Աբովյանը հանդես է բերում ճորտերի, որոնք վրեժով և ատելությամբ են լցված իրենց տերերի դեմ, որոնց կողմից ենթարկված են անմարդկային հարստահարության։ Փախած մի ռուս ճորտի Տիգրանը ապաստան է տալիս իր հարկի տակ, պատսպարում, պաշտպանում է իշխանության հետապնդումից ու տնօրինում նրա հետագա կյանքը իբրև ազատ աշխատավորի։ Ուշագրավ է Տիգրանի և Կարապետի զրույցը այս առթիվ։ «Ասացե՛ք ինձ՝ աչքի լույս, ի՞նչ անեմ էս մարդի հետ։ Ղորդ ա, ղարիբ ա, մեր բարեկամը չի, ճանաչ չէ, հայ էլ չի, օտար ազգ ա»։

«Հո մարդ, խամորդի ա»,— խոսք առավ պարոն Կարապետը։

«Ես էլ էդ կուզեի ասիլ,— պատասխանեց պարոն Տիգրանը,— էն էլ նեղության մեջ, ոչ թե մենակ մարդ։ Էսպեսին չի՛ պետք է դուռը հետ անիլ։

Նա մեր տունն ա ապավինել, էկել, ով ըլի, ինչ ազգ էլ որ ըլի, նրա դարդին պետք է հասնիմ, էդ իմ պարտքն է»[1]։

---

[1] Խ. Աբովյան. *ԵԼԺ, հատ. 4, էջ 207։*

Իսկ մի ուրիշ առիթով վեպի կերպարներից մեկը մի ճորտի մասին ասում է. «Նա էլ էնպես մարդ ա, ինչպես ես։ Ինչ անի, որ ճորտ ա ծնվել։ Նրա հերը որ ազնիվ ըլեր ու իմը՝ ճորտ, կարելի է ես ըլեի նրա ռահաթը»[1]։

Այսպիսով Աբովյանի դաստիարակչական սիստեմը ոչ թե երեխաների ուշադրությունից սքողում, այլ նրանց ուշադրությանն է ներկայացնում կյանքն իր սուր հակասություններով, տալիս այդ հակասությունների հանդեպ կողմնորոշման հումանիստական ելակետը։

«Պատմություն Տիգրանի» վեպը անավարտ է մնացել։ Վարդանը, Եղիսաբեթը և Ստեփանը բաժանվում են ընթերցողից նախքան իրենց վերջնական ձևավորումը։ Բայց, չնայած այդ բանին, ընթերցողի համար միանգամայն պարզ է դառնում, թե որը պիտի հանդիսանար Աբովյանի տված դաստիարակության վերջնական արդյունքը, դաստիարակություն, որի ելակետը կյանքն է, ըստ նոր սաղմնավորվող դեմոկրատիայի ըմբռնման։

Ինչպես Ռուսսոն իր Էմիլից և նրա ապագա կնոջից՝ Սոֆիից նոր հասարակության բջիջն է ստեղծում, այնպես էլ Աբովյանը Վարդանից, Եղիսաբեթից և Ստեփանից պատրաստում է նոր հասարակության օրինակելի քաղաքացիներ։ Նրանց համար խորթ է էգոիստական մորալը, քաղքենիական անտարբերությունը դեպի հասարակական կյանքը, նրանք ջերմոցային բույսեր չեն։ Աբովյանը պատրաստում է հոգեկան և ֆիզիկական ուժերով օժտված առողջ ու առույգ մարդ, մարդ, որ կանգնած է ժամանակի կուլտուրայի բարձրության վրա, բոլոր տեսակի նախապաշարմունքներից և կույր սնահավատությունից ազատ, լուսամիտ մարդ, իր ուժերին և կարողություններին հավատացող, կյանքի իմաստը եռանդագին գործունեության մեջ տեսնող մարդ, մարդ, որի համար աշխատանքը երջանկության աղբյուր է, որը գերադասում է պարզ, համեստ, ազնիվ և բնական կյանքը քաղքենիական փափկակեցությունից և մարդու համար կործանարար շահագործող պորտաբույծ խավերի շվայտ կենցաղից։ Աբովյանի դաստիարակած մարդը ակտիվ քաղաքացի է, օժտված քաղաքացիական արիությամբ։ Նա սիրում է կյանքը և մարդկանց, սիրում է մարդկային հասարակությունը և նվիրված է նրա շահերին։

«Պատմություն Տիգրանի» վեպը մի նոր և խոշոր ապացույց է Աբովյանի դեմոկրատիզմի։

II

Աբովյանին գրավել է նաև դրամատիկական ժանրը։ Այդ ժանրով գրած երկի նախափորձը կարելի է համարել «Նախաշավիղում» տեղ գտած «Խաղարկություն մանկանց» աշակերտական կյանքից կատակը։ Երկի հերոսը սրամիտ մի աշակերտ է, որը ընկերներին բարկացնելու համար ծույլ ու անուսումնասեր է ձևանում։ Նրան գիժ ածականն են տալիս։ Վերջում նա թողնում է «գժությունը» և դասընկերների հետ միասին

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 4, էջ 202։

երգով գովաբանում ուսումը։ Այս կատակը՝ «Գիժը ուսումնարանում» վերնագրով, մի շարք տասնամյակներ շարունակ տեղ է գտել ինչպես նախասովետական, այնպես էլ սովետական շրջանի դպրոցական դասագրքերում։

Շատ ավելի ուշագրավ գործ է «Ֆեոդորա, կամ Որդիական սերը» մեկ գործողությամբ պիեսը, որը գրված է 1841 թվականին։ Այն գրված է շրջիկ թեմայի վրա։ Այս մասին հիշատակություն կա նաև հեղինակի առաջաբանում. «Շատ մարդ կըլի լսած,— գրում է Աբովյանը,— որ Ալեքսանդր կայսեր ժամանակին, երբ Ռուսք ֆրանցուզին ջարդեցին ու էնքան մեծ ողորմություն դուրս եկավ ամեն մարդի համար, մեկ ջահել աղջիկ Սիբիրուցը փախած էկավ Մոսկով, քանի ժամանակից եդ՝ կայսրը պատահեցավ, տներն ընկավ ու հորն ազատել տալ տվեց»[1]։ Թեև «Սիպիրացի օրիորդի» պատմությունը Աբովյանը կապում է 1812 թվականի Նապոլեոնի ռուսական արշավանքի ժամանակաշրջանի հետ, սակայն հայտնի է, որ ֆրանսիացի գրողներ Մարի Կոտտեն և Քսավիե դը Մեստրեն նույն սյուժեով երկեր են գրել հիշատակված ժամանակաշրջանից առաջ։ Պետք է կարծել, որ հնում գոյություն ունեցող զրույցը նորոգվել է, կապվելով 1812 թվականի անցքերի հետ, որից և օգտվել է Աբովյանը։

«Ֆեոդորա կամ որդիական սերը» Աբովյանի այն երկերի թվին է պատկանում, որոնց հեղինակը առանձին կարևորություն է տվել, կցել է հատուկ առաջաբան, շեշտել երկը աշխարհաբար գրելու իր դիտավորությունը։ «Մախսուս էս լեզվովը գրեցի,—ասված է պիեսի առաջաբանում,—որ գեղըցիք էլ հասկանան, քաղաքացիք էլ, միթե գեղցին մարդ չի՞, չի՞ ուզիլ՝ որ մեկ նոր բան էլ նա լսի, կամ կարդա։ Էլի խոսողը թող խոսի»[2]։

Այս զրույցում ի՞նչն է, որ այնպես կենսական է համարել Աբովյանը և ցանկացել իր պիեսի միջոցով մատչելի դարձնել «գեղըցուն և քաղաքացուն»։ Դա ծնողի հանդեպ որդիական անձնազոհ սիրո գաղափարն է, որը հանդիսանում է ինչպես զրույցի, այնպես էլ պիեսի գաղափարական առանցքը։

Որդիական սիրո թեման, Աբովյանի կողմից բազմիցս շոշափված թեմաներից է։ Այդ թեմայով նա գրել է մի շարք արձակ և չափածո զրույցներ պատանիների համար։ Վերհիշենք նաև, թե որքան գեղեցիկ կերպով է «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում օգտագործված Կրեսոսի և նրա որդու ավանդությունը, ուր հեղինակն ընդգծում է որդիական սիրո հրաշագործ ուժը։ Նույն վեպի վերջում հեղինակը միևնույն ոգով օգտագործել է նաև իր այս պիեսի հերոսուհու՝ սիբիրցի աղջկա կերպարը։ Ներսես Աշտարակեցին կամենալով ընդգծել երկու քաջարի հայերի՝ Սումբաթովի և Երուսալեմսկու անձնազոհ հայրենասիրությունը, ասում է.

---

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 4, էջ 241։

2 Նույն տեղում։

«Դուք էն օրինակն եք ցույց տվել, որ մեկ որդի Սիբիրից ոտով գնացել ա Մոսկով, որ իր հորն ազատի»[1]։

Վերջին փաստը ցույց է տալիս, թե որքան վեհություն և գեղեցկություն է տեսնում Աբովյանը ռուս այդ պարզ աղջկա արարքի մեջ։ Հենց այդպիսի մի վեհ ու գեղեցիկ կերպար է հանում «Ֆեոդորա կամ որդիական սերը» պիեսից՝ հանձին նրա հերոսուհու։

Պիեսն սկսվում է Մարիայի երգով, որի թեման է բնությունը, նոր բացված գարունը։ Բնության մեջ ամեն ինչ ներդաշնակ է ու գեղեցիկ, նա չորս կողմը հրճվանք է սփռում ու հրապույր։ Բայց ներդաշնակությունը մարդկային կյանքում բացակայում է, ուստի ամենքը չէ, որ ուրախանում են, նկատում բնության հրապույրները, ապրում և հրճվում նրանցով։ Հոգեկան խռովքի մեջ է Մարիայի եղբայրը՝ երիտասարդ մայորը։ Նա երիտասարդ է, առողջ, գեղեցիկ, հարուստ, բայց երջանիկ չէ։ Քրոջ հետ ունեցած բացատրությունից պարզվում է, որ նրա վշտի պատճառը Ֆեոդորան է՝ այն աղջիկը, որին մոտ երեք ամիս առաջ մայորը գիշերով պատահել է փողոցում, ընկած ձյուների մեջ, ցրտից կարկամած, և տուն է բերել։ Ո՛վ է նա, ի՛նչ ծագումով, որտեղից է եկել, ո՛ւր է գնում, ո՛րն է նրա անհանգիստ, վշտահար վիճակի պատճառը, ոչինչ հայտնի չէ։ Նա ոչինչ չի հայտնում իր մասին։ Խորհրդավոր այդ աղջիկն է, որ խլել է մայորի հանգիստն ու դադարը։ Մայորը սիրահարված է խենթանալու աստիճան։ Բայց շուտով նա համոզվում է, որ Ֆեոդորայի սրտում տեղ չկա անձնական զգացմունքների համար, տեսնում է, որ նա իր ամբողջ էությամբ կլանված է մի այլ գաղափարով, որի մասին, սակայն, համառորեն լռում է։ Մայորի հորեղբայրը՝ Իվանը, Մոսկվայի ոստիկանությունից ստացած տեղեկությունների հիման վրա կասկածում է աղջկա անմեղությանն ու մաքրությանը։ Խախտվում է նաև երիտասարդ սիրահարի հավատը։ Աղջիկը կանգնած է փողոց նետվելու վտանգի առաջ։ Բայց հենց այդ ժամանակ տեղի է ունենում այն, ինչին որ սպասում էր Ֆեոդորան։ Նապոլեոնի դեմ հաղթական արշավանքից Պետերբուրգ վերադառնալու ճանապարհին, Ալեքսանդր կայսրը հյուրընկալվում է մայորի ընտանիքում։ Այս առիթով էլ պարզվում է Ֆեոդորայի պատմությունը։

Ֆեոդորան դուստրն է գեներալ Զուլիկովի, որին 14 տարի առաջ ընտանիքով հանդերձ աքսորել են Սիբիր։ Կյանքի խստադաժան պայմաններին զոհ են գնացել նրա կինն ու երկու որդիները։ Նույն թշվառ ճակատագիրն է սպասում նաև ծեր ու հիվանդ գեներալին, եթե շուտով չազատվի տաժանակրությունից։ Թշվառության ու զրկանքների մեջ մեծացած Ֆեոդորան վճռում է ինչ գնով էլ լինի փրկել հորը։ Հանձն առնելով երկար ու դժվարին ճանապարհի վտանգները, նա ոտքով Սիբիրից հասնում է Մոսկվա, ապա Պետերբուրգի ճանապարհն է բռնում, որպեսզի տեսնի կայսեր ու ազատություն խնդրի հոր համար։ Ընկած կայսեր ոտքերը, Ֆեոդորան պատմում է նրան այս բոլորը։

---

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 182։

Ուշագրավ է հետևյալ հատվածը.

«ԿԱՅՍՐԸ—Ինչպե՞ս, Սիբիրից մենակ ես եկել։

ՖԵՈԴՈՐԱ—Մեն մենակ։

ԿԱՅՍՐԸ—Ախր ինչպե՞ս։

ՖԵՈԴՈՐԱ—Ոտով։

ԿԱՅՍՐԸ—Ոտո՞վ։

. . . .

ԿԱՅՍՐԸ—Ի՞նչը քեզ էդպես սիրտ տվեց։

ՖԵՈԴՈՐԱ—Որդիական սերը։

ԿԱՅՍՐԸ—էդ երկար ճանապարհին ո՞վ էր քեզ պահում։

ՖԵՈԴՈՐԱ—Իմ անմեղությունը։

ԿԱՅՍՐԸ—Ի՞նչ հնարք ունեիր կամ ապրուստ։

ՖԵՈԴՈՐԱ—Ուրիշների լավությունը։

ԿԱՅՍՐԸ—Ողորմությո՞ւն էիր ուզում։

ՖԵՈԴՈՐԱ—Իմ հոր համար։

ԿԱՅՍՐԸ—Քաջասի՛րտ աղջիկ, հերդ ազա՛տ է։

ՖԵՈԴՈՐԱ—(բարձր գոռում ա)։ Հերս ազատ է... (Ուշագնաց ընկնում է Մարիի դոշին)։

ԿԱՅՍՐԸ—Ամեն ցավ, ամեն նեղություն տարել և էս քաջասիրտ աղջիկը, ուրախությանը չի կարաց դիմանալ»[1]։

Պիեսը վերջանում է ծնողական և որդիական սերը փառաբանող երգով։ Մաքուր ու գեղեցիկ է ամուսնական սերը, սակայն որդիական սերն է, որ հաստատ է ու անդավաճան։ Գովելի է ընկերոջ սերը հանդեպ ընկերը, բայց որդու սերը ծնողի համար ոչ մի բանով չի կարող փոխարինվել։ Մեծ են աշխարհի տիրողները՝ իշխաններն ու թագավորները, «բայց ամենիցը մեծ ա էն որդին, որ չմնա ծնողաց լավության տակին»։

Այս երկը մի ծառացում է Աբովյանի ժամանակաշրջանում արդեն իրեն զգալ տվող բուրժուական էգոիստական իրականության դեմ, մի իրականություն, որը Մարքսի խոսքերով ասած, «մարդկանց մեջ բացի մերկ շահից, բացի անսիրտ «նաղդ փողից» ոչ մի այլ կապ չթողեց»։ Փողային հարաբերությունները թափանցեցին նաև ընտանիքը, իրենցով փոխարինելով հարազատական, արյունակցական կապերի վրա հիմնված հարաբերությունները։

Այս ֆոնի վրա դիտելով Ֆեոդորայի արարքը, Աբովյանն այն ընութագրում է իբրև ընդօրինակության արժանի մի սխրագործություն։

Աբովյանի ստեղծագործական դիմանկարի համար շատ կողմերով հարազատ մի երկ է «Ադելաիդա ֆոն Վուլֆինգենիան» թարգմանական պիեսը։ Սա Աբովյանի այն սակավ գործերից է, որոնք լույս են տեսել նրա կենդանության օրոք[2]։ *Երկի թարգմանությունն անավարտ է։*

---

[1] Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 4, էջ 256։*

[2] *Այդ մասին տե՛ս Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի «Տեղեկագիր» 1948, № 9,* Աս. Ասատրյանի *«Խ. Աբովյանի գրական ժառանգության պատմությունից» հոդվածը և* Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 2, Ծանոթագրություններ՝ էջ 366—368։*

Պիեսի լրիվ վերնագիրն է՝ «Ադելաիդայ ֆոն Վուլֆինգենեան կամ արձանագիր բարբարոսութեան երեքտասաներորդ դարու»։ Պիեսում պատկերվում է մի դրվագ՝ երկրներ ու ժողովուրդներ նվաճելու և ստրկացնելու դուրս եկած եվրոպացի խաչակիրների արշավանքների պատմությունից։ Այն, ինչ նկարագրվում է պիեսի թարգմանված հատվածներում, եղեռնագործության մի ցնցող տեսարան է։ Արյան և կողոպուտի տենչով վառված խաչակիրների մի զորախումբ հրի և սրի է մատնում հեթանոս վենդացիների մի ավան։ Մանկանց, ծերերի ու կանաց արյունով է ներկված դաշտը, այրված և սրախողող եղած դիակներ են թափված ամենուրեք։ Գյուղը վերածվել է ավերակների կույտի։ Զորախմբի հրամանատար ասպետ Տեոբալդը ինքը սոսկումով է լցվում իր զինվորների գործած ոճիրները դիտելով։ Նա զգում է, որ խաբված է, քրիստոնյա հոգևորականությունը նրան մոլորեցրել է, հավատացնելով, թե նա իբրև խաչակիր ծառայում է բարի գործի, կատարում աստծո կամքը։ Բնորոշ է Տեոբալդի մենախոսության հետևյալ հատվածը. «Արիւն սպանելոց հոսե ընդ բլուրն։ Թեև արիւն է հեթանոսաց, սակայն է արիւն մարդոյ։ Մի՞թե այս հրկիզեալ աւերակք են հաճոյական պատարագք Աստուծոյ։ Սիրտ իմ խռովի... խիղճ իմ ասէ ցիս՝ նոքա ամենեքին եղբարք քո էին»[1]։

Զրույցը գերի բռնված հեթանոս գյուղապետի հետ, Տեոբալդին ավելի է համոզում իր եզրակացությունների ճշմարտության մեջ։ Գյուղապետը կրոնի և պատերազմի վերաբերյալ իր դատողություններով խորին պատկառանք է ներշնչում խաչակիր ասպետին։ Վերջինիս այլևս ոչինչ չի մնում անել, քան գլուխը խոնարհել իր գերու առջև և ամոթով ասել՝ «Պատկառեսջի՛ր, Տեոբալդ, պատկառեսջի՛ր»։

Պիեսն իր սուր ծայրով հարվածում է խաչակրաց արշավանքների ոգեշնչող կաթոլիկ հոգևորականությանը։ Զորախմբի դոմինիկյան կրոնավորը ոչ միայն չի կարեկցում եղեռնագործության զոհերին, այլև ավելի մոլեգին է դառնում, ավելի ևս տոչորվում արյան ծարավով, տեսնելով Տեոբալդի զղջումը և համակրական վերաբերմունքը բնիկների հանդեպ։ Կրոնավորը ասպետին սպառնում է Աբբայի անունով, իսկ վերջինս պիեսում ներկայացված է որպես նենգամիտ, խարդախ ու անառակ մի մարդ։ Սա մի կատարյալ Տարտյուֆ է։ Գրգռելով Տեոբալդի մեջ քրիստոնեական մոլեռանդություն, Աբբան նրան արշավանքի է ուղարկել, հույս ունենալով ասպետի բացակայության միջոցին տիրանալ նրա կնոջը՝ գեղեցկուհի և առաքինի Ադելաիդային։ Նա իր մեջ հույս է փայփայում, որ թերևս ասպետը չի վերադառնա ռազմաճակատից։

Դրամատիկական ժանրի ասպարեզում մեծ չէ Աբովյանի թողած վաստակը, սակայն կարևոր է ընդգծել, որ գրականության այս հիմնական ժանրը ևս չի վրիպել մեծ գրողի ուշադրությունից։ Բայց, որ ամենագլխավորն է, այս ժանրի երկերի մեջ ևս Աբովյանը հավատարիմ է մնում գրականությունը կյանքին մոտեցնելու, աշխատավորական լայն զանգ-

---

1 Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 2, էջ 324։*

վածների շահերին ծառայեցնելու իր ստեղծագործական սկզբունքին։ Ինչպես իր հարուստ ստեղծագործության մյուս բաժիններում, այնպես էլ իր պիեսներում, Աբովյանը հրապարակ է հանում ժամանակի համար կենսական խնդիրներ, հասարակական-բարոյական բարձր սկզբունքներ մարմնացնող կենդանի կերպարներ։ Այդպիսիք են Ֆեոդորան և Մայորը, Տեռբալդը և Ադելաիդան։ Ժամանակով և ազգությամբ միանգամայն տարբեր այդ մարդկանց միացնում է մի ընդհանուր գիծ՝ խորին մարդկայնությունը, տառապող, ճնշված, զրկված մարդկանց հանդեպ զգայուն, սրտացավ վերաբերմունքը, որը հաճախ հասնում է անձնազոհության։

Հայ ազգային վերածնության լուսավորիչ գործիչներից Աբովյանը ոչ միայն ամենամեծն է տաղանդի մեծության իմաստով, այլև իր համայնապարփակությամբ։ Բացառիկ կերպով լայն են նրա գործունեության և ստեղծագործական ընդգրկման շրջանակները։ Ուշագրավ է մի հանգամանք ևս, դա գրողի թեմատիկայի ազգային շրջանակներից դուրս գալու որոշակի տենդենցն է։ Այս իմաստով ևս, ինչպես ուրիշ շատ կողմերով Աբովյանի դերը աննախընթաց է ու եզակի։ Աբովյանը ազատ է ամեն տեսակի նախապաշարմունքներից ու ազգային սահմանափակությունից։ Հաճախ ոչ թե հերոսի ազգային պատկանելությունը, այլ նրա միջոցով արտահայտվող հասարակական մորալը,— ահա թե ինչն է, որ գրավում է Աբովյանին։ Գրողը հավատարիմ է իր հումանիստական աշխարհայեցողությանը։ Աբովյանը խոր և որոշակի սահմանագիծ է անցկացնում մարդկայինի և անմարդկայինի միջև։ Աբովյանի ելակետը մարդն է ու մարդկայինը։ Այդ իմաստով պիտի հասկացվի և մեկնաբանվի այն փաստը, որ Աբովյանն իր ստեղծագործության մեջ այնքան հաճախ է դիմում օտար թեմաների. օտարազգի հերոսների։ Հայրենիքի կարոտից տառապող գերի նեգր պատանին[1], իրենց հայրենիքի ազատության համար կյանքները զոհաբերած մեքսիկացի երիտասարդ եղբայրները[2], հետամնաց բարքերի հետևանքով ողբերգություն ապրող թրքուհին, հորը գերությունից փրկագնելու համար անօրինակ ճիգեր գործադրող ֆրանսիացի պատանին[3] և վերջապես Ֆեոդորան, Տեռբալդը և շատ ուրիշներ, որոնք հանդես են գալիս Աբովյանի տարբեր երկերում, օտարազգիներ լինելով ոչ միայն գրողի կողմից նվազ ուշագրավ չեն դիտվել՝ ստեղծագործական այս կամ այն խնդիրը լուծելու տեսակետից, այլև թերևս հենց այդ պատճառով արժանացել են նրա առանձին ուշադրությանը, քանի որ նա այդ կերպ հնարավորություն է ունեցել հայ ընթերցողներին ծանոթացնել օտարազգիների կյանքին, բացահայտել նրանց համար կյանքի նոր, անհայտ ընազավառներ, որպիսի հանգամանքը լիովին համապատասխանում էր Աբովյանի լուսավորական ծրագրերին։

---

[1] Տե՛ս Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 5, էջ 31։

[2] Տե՛ս Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 4, էջ 191։

Նույն տեղում, էջ 92—96։

Մարդկության դրական իդեալի կենսագործման համար մարդիկ պայքարում են ամենուրեք և ամենուրեք տառապում հենց այն պատճառով, որ դեռևս չի կենսագործվում նույն իդեալը՝ հումանիզմի իդեալը։ Ուրեմն, ի վերջո մեկ է մարդկության նպատակը, մարդկային պրոգրեսի նպատակը՝ բարձրացնել մարդկությունը, կյանքը դարձնել ազատ, բերկրալի, ինչպիսին այն պետք է լինի ըստ իր բուն խորհրդի, բարձրացնել մարդու կոչման ըմբռնումը։ Ահա թե գաղափարական ինչ ակունքից է բխում Աբովյանի ստեղծագործության թեմատիկայի միջազգայնության տենդենցը։ Նույն երևույթը կարելի է նշմարել Աբովյանի թողած գիտական-քաղաքական-հրապարակախոսական ժառանգության մեջ։

12

Մանկավարժություն, լեզվի պատմություն և տեսություն, ազգագրություն, ժողովրդական բանահյուսություն, տնտեսագիտություն, հայ ժողովրդի պատմություն, գաղութային ժողովուրդների պատմություն, քրդագիտություն—այսպես բազմազան են Աբովյան-գիտնականին զբաղեցնող հարցերը։ Սրանցից հատկապես առանձնանում են երկուսը՝ գաղութային և առհասարակ ճնշված փոքր ժողովուրդների և հայ ժողովրդի պատմության հարցերը, որոնք մեծ տեղ են գրավում նաև Աբովյանի գեղարվեստական ժառանգության մեջ։

Հայաստանի պատմության հարցերին Աբովյանն անդրադարձել է մի շարք աշխատություններում։ Դրանցից հիշատակության արժանի են «Համառոտ ակնարկ հայերի մասին», «Ի վերա հայրենասիրութեան», «Մեկ երկու խոսք էլ հայոց վերա», «Պարսկաստանի և Ռուսաստանի միջև ծագած պատերազմի նախօրեին», «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի... մասին», «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» և այլն։

Գրել մի ժողովրդի պատմություն՝ Աբովյանի համար նշանակում էր ճանաչել այդ ժողովրդի բոլոր խավերին, թափանցել նրա կյանքի, կենցաղի մեջ, իմանալ նրա հասկացողությունների ու հոգեբանությունը, պարզել դրանք պայմանավորող պատմական հանգամանքները՝ տվյալ ժողովրդի անցած պատմական ուղին հետախուզելու ճանապարհով։

Ավելին, գրել մի ժողովրդի պատմություն, նշանակում է հիմնավոր կերպով իմանալ այդ ժողովրդի հարևան ժողովուրդներին, իմանալ վերջիններիս հետ տվյալ ժողովրդի փոխհարաբերությունների պատմությունը և առհասարակ լավ իրազեկ լինել մարդկության պատմության ողջ պրոցեսին, պատմական խոշոր տեղաշարժերին, ժողովուրդների բախումներին, անկումներին ու վերելքներին։ Աբովյանի իրավացի կարծիքով դրանք առավել ևս պարտավորեցուցիչ են, երբ ուսումնասիրության օբյեկտը հանդիսանում է խոր հնությունից եկող, հին և միջին դարերի պատմության մեջ աչքի ընկնող դեր խաղացած այնպիսի մի ժողովուրդ, ինչպիսին հայ ժողովուրդն է։

Չի կարելի նկարագրել ժողովրդի այսօրը, առանց հաշվի առնելու նրա երեկը։ Եվ, վերջապես, բացարձակ անհեթեթության կարելի է հանգել, երբ ժողովրդի բարոյական կերպարը բնութագրելիս՝ ելակետ է ընդունվում ոչ թե ամբողջ ժողովուրդը, այլ լոկ նրա իշխող դասակարգերը։

Վերոհիշյալ մտքերը Աբովյանը զարգացնում է տակավին Դորպատում գրած իր «Համառոտ ակնարկ հայերի մասին» գերմաներեն հոդվածում, որը նրան գրելու առիթ է տվել կաթոլիկ միսիոներների անհիմն հերյուրանքները հայ ժողովրդի մասին, հերյուրանքներ, որ հաճախ վուա ճշմարտության տեղ են ընդունվել՝ այդ ժողովրդի անցյալին ու ներկային անիրազեկ քաղաքակիրթ աշխարհում։


Խ. Աբովյանի ռուսերեն ձեռագրերից

Աբովյանի առաջ խնդիր է ծառացել ցույց տալ, որ հայերի մասին կաթոլիկ միսիոներների հայտնած կարծիքները անհիմն են ու գիտական տեսակետից արժեքազուրկ։ Կաթոլիկ միսիոներներին կուրացրել է կրոնական անհանդուրժողականության ոգին,— բացատրում է Աբովյանը։ Ուր նրանք չեն կարողանում պապի իշխանությունը տարածել, այնտեղ թափում են իրենց ատելության թույնը։ Հենց այդ նույն պատճառով էլ նրանք հայերին ներկայացնում են «որպես ամեն տեսակ անբարեվայելչության հրեշ»։ Աբովյանը խորին վրդովմունքով նշում է, որ հաճախ հայը նրանց համար այլ բան չէ, քան հայ վաշխառու և չարչի։

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության հարցում Աբովյանը որոնում է գիտական մեկնակետ։ Անաչառություն և հավատարմություն պատմական փաստերին, այս է Աբովյանի ելակետն ու պահանջը պատմաբանից։ Ելնելով փաստերից, Աբովյանը շեշտում է, որ Հայաստանը անտիկ կուլտուրայի օրրաններից մեկն է։ Այդ բանի կռվաններն են հայ ժողովրդի ստեղծած ճարտարապետությունը, մատենագրությունը, պոեզիան, գիտությունը, լեզուն։

Մասնավորապես հին հայերենի ճոխության և հարստության փաստը Աբովյանի համար դառնում է բանալի՝ բացահայտելու համար այդ ճշմարտությունը։ Աբովյանը գրում է. «Եթե ոչ մի բան՝ ո՛չ հուշարձանի, ո՛չ էլ պատմական տվյալներ հիմք չլինեին ապացուցելու համար, որ Հա-

յաստանում գոյություն է ունեցել մի հնագույն, քաղաքական և մտավոր տեսակետից ինքնուրույն, յուրահատուկ և ինքնատիպ նախնական մշակույթ, ապա դրան ցայտուն և կենդանի կռվան կարող է հանդիսանալ այդ երկրի լեզուն»[1]։ Մի փոքր ներքև ավելացնում է. «Հայտնի է, որ հունական և հռոմեական փիլիսոփայական ու պատմական և բանաստեղծական երկերը բնագրերից ամենից հարազատ թարգմանվել են այս լեզվով։ Այդ առումով հայտնի է Աստվածաշնչի թարգմանությունը։ Որքա՜ն հարուստ է այդ լեզուն իր բազմատեսակ արտահայտություններով, դարձվածքներով, որքա՜ն զորեղ նրա հասկացողություններն ու դատողությունները, որքա՜ն բնական նրա պատկերները և փոխառումները, որքա՜ն կատարյալ՝ գիտական անվանումները... Կարո՞ղ էր արդյոք մի վայրենի, անկիրթ բնության ղավակ այնքան պարզ, այնքան սուր, բազմակողմանիորեն մտածել և պատկերացումներ ունենալ»[2]։

Աբովյանը գտնում է, որ գիտական ճշգրիտ փաստերի կողքին կարող են տեղ գրավել առասպելներն ու ավանդությունները։ Հայկի և Բելի վեպի մեջ ցոլանում է ժողովրդի ազատասիրական ոգին։ «Ասում են, որ Պրիամոսը օգնություն է խնդրել հայերից,—գրում է Աբովյանը,—իսկ հայ հերոս Զայրմայրին Մովսես Խորենացին կամենում է Աքիլեսից պարտված համարել»[3]։ Թեկուզ և այդ կասկածի առնվի իբրև պատմական իրողություն, սակայն իբրև սուտ ավանդություն ընկալելու դեպքում անգամ, այդ վկայում է հայ ժողովրդի հեռավոր անցյալի ռազմական ուժի ու փառքի մասին։

Անդրադառնալով հայերի ազգային բնավորության մեջ արտահայտվող թերությունների հարցին, այս դեպքում ևս Աբովյանը աշխատում է խնդիրը դնել գիտական պատմական հողի վրա։

Ժողովրդի պատմության, նրա քաղաքական պայմանների, աշխարհագրական և կլիմայական ֆակտորների մեջ է ձևավորվում ժողովրդի բնավորությունը, ուստի, այդտեղ էլ պետք է որոնել բացատրությունը այն հարցի, թե ինչի հետևանք է տվյալ ազգի մոտ հանդես եկող այս կամ այն թերությունը,—ազդարարում է Աբովյանը։ Նա գրում է. «Ո՛չ մի ժողովուրդ, այո՛, ո՛չ մի մարդ չի կարող ազատ համարվել թուլությունից, պակասությունից, թերությունից, ֆիզիկական և բարոյական արատներից, առավել ևս նկատի առնելով, թե որքան ավելի վատթար են եղել նրա քաղաքական կացությունը, նրա կլիմայական և աշխարհագրական պայմանները»[4]։ Հայերի վրա «անսիրտ հարձակումներ գործողներից» Աբովյանը պահանջում է նախ քննել նրա քաղաքական կյանքի պայմանները, ապա նոր միայն վճիռ արձակել. իսկ այդ պայմանները եղել են բացառիկ կերպով դաժան։

---

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 38։
2 Նույն տեղում, էջ 39։
3 Նույն տեղում, էջ 37։
4 Նույն տեղում, էջ 34։

Անմարդկայնության և սարսափի զարհուրելի դարեր է Աբովյանն անվանում հայ ժողովրդի պատմության հարյուրամյակները, «որոնք իրենց ամբողջ ծանրությամբ Հայաստանի վրա են ընկել և իրենց բովանդակ ուժով աշխատել են ճզմել այդ երկիրը»[1]։ Այդ կովածաղիկը ստիպված է եղել դիմադրել ոչ միայն պարսիկներին և հռոմեացիներին, այլև միջինասիական և կովկասյան անթիվ ու անհամար ցեղերին։

Այս բոլորից հետո,—տրամաբանում է Աբովյանը,—ինչ խոսք, դժվար էր պահպանել բարոյական անաղարտություն։ Իր ժողովրդի ֆիզիկական գոյությունն իսկ Աբովյանին հրաշքի նման մի բան է թվում, այն ժամանակ, երբ աշխարհակուլ հորձանքներին զոհ գնացին հայերից շատ ավելի մեծ ազգեր և հզոր տերություններ՝ ինչպիսիք էին քաղդեացիք, բաբելացիք, ասորեստանցիք, մարերը, պարթևները։ Բայց քանի որ խնդիրը վերաբերվում է ժողովրդի բարոյական կերպարի հարցին, ապա այս դեպքում ևս Աբովյանն առաջարկում է իր կոնցեպցիան։

Չի կարելի կասկածի տակ առնել բարոյական դեմքը մի ժողովրդի, որի պատմությունը հանդիսացել է հանուն իր գոյության անդուլ մաքառման պատմություն, որը հեռու է եղել նվաճողական աշխարհակալական ձգտումներից։ «Նրա ձգտումը,—գրում է Աբովյանը, նկատի ունենալով հայ ժողովրդին,—չի եղել աշխարհ նվաճել, աշխարհի տեր դառնալ, ընդհակառակը, մենք տեսնում ենք դեռ անհիշելի ժամանակներից անհետացած բարձր կուլտուրա, հաղթահարման և հարատևության, վերելքի և մարտերի, համբերատարության և տոկունության տեսարաններ»[2]։

Այսպիսով, տակավին երեսնական թվականների առաջին կեսին գրած իր «Համառոտ ակնարկ հայերի մասին» գերմաներեն աշխատությունում բանավիճելով կաթոլիկ միսիոներների դեմ, Աբովյանը ուրվագծում է իր պատմագիտական կոնցեպցիան, մի կոնցեպցիա, որը լրիվ չափով համընկնում է հեղինակի հումանիստական աշխարհայեցողության հետ։

Հետագա տարիների իր պատմա-բանասիրական հոդվածներում և ասույթներում Աբովյանը կրկին ու կրկին անդրադառնում է «Համառոտ ակնարկում» արծարծված խնդիրներին, հանդես բերելով պատմական ավելի լայն հայեցակետ, քննարկվող խնդիրների համար գտնելով ավելի խորացված և որոշակի պատասխան-լուծումներ։

Եթե «Համառոտ ակնարկում» Աբովյանը տակավին աղոտ կերպով էր նշմարում պաշտոնական պատմագիտության կախումը ինչ որ արտաքին ուժերից և կողմնակի հանգամանքներից, ապա հետագայում նա ամենայն որոշակիությամբ խոսում է այն մասին, որ ժամանակի ռեակցիոն պատմագիտությունը բացառապես ծառայում է հզոր պետությունների շահերին, նպաստում՝ նրանց էքսպանսիվ ձգտումներին, ոտնահարում թույլ, ճնշված և հարստահարված ժողովուրդների քաղաքական և տնտեսական շահերը։ «Պատմությունը մեծ մեծ ազգերի ա դուլուդ

---

[1] Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 8, էջ 35։*

[2] *Նույն տեղում, էջ 36։*

անում»[1],— արձանագրում է Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպի սևագիր վարիանտում։ Անցյալ դարի 40-ական թվականներին, մեր իրականության մեջ սա մի համարձակ, նոր ու ինքնուրույն դրույթ էր։ Իբրև այդ դրույթի հիմնավորում Աբովյանը առաջ է բերում հայ ժողովրդին և նրա հերոսական պատմությունը անուշադրության մատնելու փաստը։ Աբովյանը գրում է. «...Պատմությունը, անհավատարիմ պատմությունը հայի համար պապանձվել ա... ու էն ազգերի միայն գլուխ վեր բերի ու անարգաբար, կեղծավորությամբ տակը մտնի, որ թագավորություն ունեն ու պատմություն գրողին կամ պարգև կամ պատիժ կտան...»։ Մի փոքր ներքև հեղինակն ավելացնում է. «Թե սիրելի որդիքը պատմության նրանք են՝ որ շատ քաջություն արին, ոչինչ ազգ ուրեմն էնքան բրաբիոն, էնքան պսակ պետք է չստանար, որքան հայք, բայց ինչ անեմ՝ լեզուս կարճ ա, ձեռս բարակ, երկինքը բարձր, երկիրը խոր, անտեր ազգին ով ա մտիկ անում, աշխարքս զոռովին ա գլուխը վեր բերում, ծունկը համբուրում ու պատմագիրքն էլ՝ ըստ մեծի մասին եվրոպացի ըլելով իրենց ազգերին են առաջ քաշում»[2]։



Խ. Աբովյանի գերմաներեն հոդվածը տպագրված «Դորպատիշե Ցայտունգ» թերթում

Աշխարհակործան ուժերին հովանավորող եվրոպական ռեակցիոն պատմագրության վերաբերյալ արած իր սկզբունքային դիտողությունները թեև Աբովյանը հիմնավորում է իր ժողովրդի հանդեպ ունեցած այդ կիտության անբարեհաճ վերաբերմունքի փաստով, սակայն դրանից հարցի սկզբունքային կարևորությունը չի նվազում։ Աբովյանի համար իր ժողովրդի օրինակը, իբրև աշխարհի ամենաճնշված ժողովուրդներից մեկի, խիստ բնորոշ էր և հենց դրա համար էլ նա առաջ է բերում այդ օրինակը։

Իր պատմագիտական հայացքներով կանգնած լինելով հակառակ բևեռի վրա, Աբովյանը խորին համակրություն ու անկեղծ հիացմունք է արտահայտում այն ժողովուրդների նկատմամբ, որոնք զենք են վերցրել և անհավասար կովի մեջ մտել նվաճողների դեմ, պատվար դառնալով թե իրենց և թե հարևան ժողովուրդների համար։ Աբովյանը կրկին դիմում է

---

1 Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 3, էջ 123։*

2 *Նույն տեղում, էջ 305։*

սեփական ժողովրդի պատմությանը։ «Մեկ երկու խոսք էլ Հայոց վրա» պատմական ակնարկում Աբովյանը գրում է. «էն ջրհեղեղը՝ որ մեր աշխարհը մտավ, այսինքն էն գազան ազգերը, որ մեր աշխարհովն անց կացան, սար ըլեր, նրանց ոտի տակին կհավասարվեր, ծով ըլեր՝ կցամաքեր, բայց մեր ազգը՝ սարի տեղակ իր դոշը, ծովի տեղակ իր արինը դեմ անելով, է՜ն հոգին ուներ, որ էնպես զորեղ ազգերը կորան, փչացան, նա էլի իր գլուխը նրանց փոշուցը հանեց, էլի սկսեց կորանալ, բազմանալ ու զորացա, թե իր աշխարհը չկարաց ձեռքին պահել, իր լեզուն, իր հավատը պահեց, որ ոչի՛նչ ազգ չէր կարող անել»[1]*։ Ի՞նչի մեջ է Աբովյանը տեսնում իր ժողովրդի այդ արտասովոր կենսունակության գաղտնիքը։ Հայը ապրեց,— բացատրում է գրողը,— որովհետև նա բարբարոս նվաճողներին հակադրեց ոչ միայն իր սուրը, այլև իր աշխարհաշեն ոգին, իր ծայրագույն լուսավորությունը*[2]*։*

Աբովյանը պնդում է, որ աշխարհի ժողովուրդներից հայը առաջիններից մեկն է ձեռք վարկել աշխարհաշինության և քաղաքակրթության։ Վերը հիշված աշխատության մեջ ասված է. «Քսենոֆոնը Հույն զորապետն ու պատմագիրը վեց հարյուր տարի Քրիստոսից առաջ Հայաստան որ մտավ, զարմանում ա, թե էն ժամանակն էլ Հայք ինչպես աշխատավոր, դինջ, խաղաղասեր էին։ Էս բավական պատճառ չի՞, որ իմանանք, թե մեր ազգը ինչքա՞ն շուտով սկսեց լուսավորվել, ի՞նչ ազնվական հոգի ուներ, որ էնպես կանուխ իր վայրենի կյանքը թողեց ու աշխարհաշինության ձեռ տվեց»[3]*։*

«Ուղևորություն դեպի Անիի ավերակները» աշխատության մեջ նույն ոգով է կատարվում հայ ժողովրդի բարոյական կերպարի բնութագրությունը։ «...Խաղաղության օրերին աշխատասեր հն և հեզ, թշնամիների սրերի դեմ արիսիրտ և համբերատար, մտքի և բարոյական ուժերի զարգացման մեջ՝ ճոխ և քնքույշ, ազգային սրբությունների անձեռնմխելիությունը պահպանելիս՝ հպարտ ու անընկճելի»[4]*։*

Իբրև ապացույց իր ժողովրդի աշխարհաշեն ոգու, բարոյական ու մտավոր ուժերի ճոխության, նա մատնացույց է անում Անին. Անին,— գրում է Աբովյանը,— «ստեղծագործությունն է մի ժողովրդի, որ չի եղել հռոմեացիների նման՝ նվաճող, մոնղոլների և պարսիկների նման՝ բազմաքանակ, հնդիկների, չինացիների և հույների նման՝ առատաձեռն բնությունից և հազարամյա հանգստավետ կյանքով փայփայված ու երկրի հարստությամբ ողողված և ո՛չ էլ ուրիշների արյամբ և դանձերով է հարստություն ձեռք բերել. դա ստեղծագործությունն է՝ իր սեփական ջանքով ու աշխատանքով փառքի ու մեծության այդ աստիճանին հասած, խաղաղ, գործունյա, բայց դաժան բախտի բերումով մեծ ու անթիվ բոլոր նվաճողների խաչուղիների վրա ընկած մի ժողովրդի...»[5]*։*

---

1 **Խ. Աբովյան.** *ԵԼԺ, հատ. 4, էջ 98։*

2 *Նույն տեղում, էջ 97—98։*

3 *Նույն տեղում, էջ 97։*

4 **Խ. Աբովյան.** *ԵԼԺ, հատ. 7, էջ 199։*

5 *Նույն տեղում, էջ 207։*

Հայ ժողովրդի պատմական անցյալի մեծարանքը Աբովյանի կողմից չի կատարվում ինքնանպատակ կերպով, ոչ էլ այն հանդիսանում է տուրք ազգային սնափառության։ Աբովյանի պատմաբանասիրական աշխատությունների, մասնավորապես հայոց պատմության հարցերին նվիրված աշխատությունների խորամուխ ընթերցողների ուշադրությունից չի կարող վրիպել այն փաստը, որ այդ ուսումնասիրությունները կրքոտ բանավեճի բնույթ ունեն և որ նրանք բոլորը ուղղված են ընդդեմ այն պատմագրության, որը նույնիսկ Աթիլլայի, Լենկթեմուրի, Չինկիզխանի պես արյունարբու աշխարհակալներին չի զրկել իր շնորհից։ «Գազանաբարոյն Ատելայ», «Կատաղին Չինկիզ-խան», «Անկուշտ Թամուրլանգ», այսպես է որակում Աբովյանը նրանց, որոնց համար պաշտոնական պատմագրությունն ունի իր բառապաշարում «հանճարեղ զորավար», «մեծ աշխարհակալ», «մեծ նվաճող» և այլ մեծարանքի խոսքեր։

Իր մի զրույցում Աբովյանը Ալեքսանդր Մակեդոնացուն համեմատելով ծովահենի հետ, միայն մի տարբերություն է տեսնում, այն, որ ծովահենը փոքր ավազակ է, Մակեդոնացին՝ մեծ ավազակ, որի համար և նրան փոխանակ ավազակ ասելու, անվանում են աշխարհակալ։ Ի հակադրություն նվաճողական պատերազմներ վարողների, ազատագրական պայքարի մեջ է, որ ըստ Աբովյանի, ժողովուրդները դրսևորվում են իրենց բարձր արժանիքները՝ անձնազոհ հայրենասիրություն, հերոսականություն, տոկունություն՝ հատկություններ, որոնք բարոյական դաստիարակչական մեծ իմաստ ունեն և կարող են մարդկության համար լինել ուսանելի։ Պատմության այս ըմբռնումից Աբովյանը հանում է այսպիսի բանաձև. «Նա է իսկապես այր մեծագործ, ազգ մեծ, որ ի յորձանս բիւրատեսակ փորձանաց և վտանգաց, պահպանեաց զանձն, և ոչ կերակուր եղև համակործան հեղեղին»[1]։

Դրա համար էլ Աբովյանը անմահի փառքով պսակելու իսկական արժանի անձեր է համարում Վարդան և Վահան Մամիկոնյաններին ու նրանց նմաններին, ովքեր սուր են վերցրել ազատության սուրբ գործի համար։ Ոչ թե Մեքսիկան նվաճող Կորտեզ Իսպանացին պիտի փառաբանվի պատմագիրների մատյաններում, այլ այն անանուն երկու երիտասարդ մեքսիկացիները, որոնք հանուն իրենց հայրենիքի ազատության մաքառեցին Կորտեզ Իսպանացու դեմ և ընկան անհավասար կռվում։

Իր ստեղծագործական կյանքի զանազան էտապներում տարբեր առիթներով անդրադառնալով հայ ժողովրդի պատմությանը, Աբովյանը թեև մտադրվում է, բայց չի տալիս ժողովրդի քիչ թե շատ ամբողջական պատմությունը և ոչ էլ նույնիսկ Հայաստանի հարուստ պատմության առանձին դրվագները։ Աբովյանին զբաղեցնում է այլ խնդիր, այն է՝ բացահայտել իր ժողովրդի պատմության փիլիսոփայությունը, բնութագրել այդ պատմության էությունը, տալ այդ պատմությունը կերտող ժողովրդի բարոյական կերպարը։ Այդ բանի արտաքին դրդապատճառը թերևս սուր

---

1 Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 8, էջ 101—102*։

րանավեճերն էին կաթոլիկ միսիոներների և այլոց դեմ՝ հայոց պատմության հարցերի առնչությամբ, սակայն էապես դա ավելի կապված պետք է լիներ այն բանի հետ, որ հայոց պատմությունը տակավին չուներ նոր լուսավորական դարաշրջանի պահանջները բավարարող կոնցեպցիա։ Պատմության բերումով Աբովյանի առաջ ծառանում է այդ նոր հայեցակետը հայտնագործելու, հայ ժողովրդի պատմության փիլիսոփայությունը բացահայտելու կանորագույն խնդիրը։

Կոնկրետ, Աբովյանը առաջ է քաշում երկու խնդիր. որն է հայ ժողովրդի պետականության անկման պատճառը, և որը պետք է հանդիսանա հայ ժողովրդի պատմության գնահատության մեկնակետը։ Երկուսն էլ Աբովյանի ապրած ժամանակաշրջանի համար խիստ ակտուալ խնդիրներ էին։ Թե մեկ և թե մյուս հարցի պատասխանը պետք է ուղղված լիներ ազգի քաղաքական ինքնագիտակցությունը խթանելու, նրան հոգեպես վերազինելու և ի սփյուռս աշխարհի ցրված մեր ժողովրդի կոնսոլիդացման նպատակին։

Խոստովանելով որոշ հայ և եվրոպացի պատմաբանների (Չամչյան, Ջրպետ, Սեն-Մարտեն, Նոյման) հայոց պատմությանը նվիրված աշխատությունների արժանիքները, Աբովյանը միաժամանակ ընդգծում է, որ տակավին իրենց զգալ են տալիս ոչ գիտական մեկնաբանությունները հայ ժողովրդի պատմության առանձին հարցերում։ Այսպես, օրինակ՝ Աբովյանը «Մեկ երկու խոսք էլ հայոց վերա» պատմական ակնարկում հիմար, անհեթեթ ու պառավական է համարում տարածված այն տեսակետը, ըստ որի հայ ժողովրդի պետականության անկումն հետևանք էր այն բանի, «Թե հայք անմիաբան էին,—գոռոզ էին, իրար չեն սիրում և *այլն»։ «Դիցուք հայք անմիաբան էին,—պարզաբանում է Աբովյանը,— մյուս ազգերին ինչ պատահեցավ, որ ինչպես ասեցի, էնպես են վերջացել, որ նրանց իզն ու թոզը չկա»*[1]*։ Աբովյանը տալիս է հարցի իր մեկնաբանությունը. «Հինգ գլխավոր պատճառ մեր ազգին էս տեղը հասցրին։ Մեկ որ անդադար զանազան ազգեր իրար վրա կռիվ էին գնում ու մեր աշխարհովն անց կենում։ Երկրորդ՝ մեր ազգը աշխատասեր ըլելով, ամենն էլ ուզում էին, որ իրենց ձեռի տակը քցեն, իրանք շահվին։ Երրորդ՝ մեր ազգը քրիստոնյա էր, մյուսները կամ կռապաշտ կամ մահմեդական, որ Քրիստոսի հավատն ուզում էին ջնջեն։ Չորրորդ՝ որ ազգը էնպես ժամանակին չկարաց ուսումն առնիլ, իր լեզվի պատմությունը կարդալ, մնաց տգետ։ Հինգերորդ՝ որ գրած գրքերը ասենք թե կարդացող էլ ըլում էր, ոչ միտքն էին հասկանում, ոչ զորությունը»*[2]*։*

Այսպիսով ժողովրդի բնավորության մեջ նրա քաղաքական վիճակի բացատրությունը որոնողների հակագիտական մեկնաբանությանը Աբովյանը փորձում է հակադրել գիտական-պատմական մեկնաբանություն։

---

1 Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 4, էջ 98։*

2 *Նույն տեղում, էջ 98—99։*

Աբովյանի ըստ էության այդ ճիշտ տեսակետն ուներ իր ենթատեքստը. հայ ժողովրդի անազատ վիճակը ոչ թե ճակատագրական ու անխուսափելի մի բան է, այլ երևույթ, որ կարող է փոխվել և վերացվել, և պիտի փոխվի ու վերացվի իրեն ծնող պատմական պայմանների հետ մեկտեղ։

Իր սկզբունքային նշանակությամբ շատ ավելի կարևոր էր Աբովյանի պատասխանը այն հարցին, թե ո՛րը պետք է լինի հայ ժողովրդի պատմության գնահատության ելակետը։ Այդ ելակետը, ինչպես կարելի է եզրակացնել գրողի մի շարք մտքերից ու ասույթներից, պետք է հանդիսանա հայ ժողովրդի պատմության մի բնորոշ առանձնահատկությունը, այն, որ ի հակադրություն իր դարավոր ախոյանների, հայ ժողովուրդը չի վարել նվաճողական պատերազմներ և որ նրա պատմությունը պաշտպանական պատերազմների պատմություն է։ Առաջադրված հարցին՝ սա մի օրիգինալ և Աբովյանի հումանիստական աշխարհայեցողության համար բնորոշ պատասխան է։ Հայ ժողովրդի պատմության այդպիսի կարևորագույն առանձնահատկության հայտնագործությամբ Աբովյանը մեծ ծառայություն է մատուցում մեր պատմագրությանը։

* * *

XVI—XVIII դարերի պատմությունը մարքսիստական գրականության մեջ բնութագրվում է իբրև «գաղութային թալանի» ժամանակաշրջան, երբ օրինականացված էր նոր հայտնագործված և նվաճված երկրներում կատարվող ամեն տեսակի ալան թալանը, ավազակային հարձակումները, հնդիկ և նեգր երիտասարդության առևանգումը, ստրուկների վաճառքը, ամբողջ ցեղերի և ժողովուրդների բնաջնջումը, հրեշավոր չափերի հասնող շահագործումը, խաբեբայությունը, անվերջ պատերազմները տեղական ժողովուրդների հետ՝ նրանց հնազանդեցնելու նպատակով և գաղութային տիրապետության համար մրցակցող եվրոպական պետությունների՝ Փորթուգալիայի, Իսպանիայի, Անգլիայի միջև և այլն։

Գաղութատիրության խնդիրն Աբովյանին զբաղեցնել սկսեց տակավին Դորպատում, այն ժամանակաշրջանում, երբ նոր-նոր էր ձևավորվում գրողի պատմահայեցողությունը։ Այդ միջոցին էր, որ նա գրեց իր «Միսիսիփի» բանաստեղծությունը, որով անարգանքի սյունին էր գամում «սպիտակ տեսելեամբ» եվրոպացի դաժան գաղութարարներին, իր սերն ու համակրությունն արտահայտելով բնիկների նկատմամբ։

Հետագայում ես Աբովյանը գրեց գաղութային ժողովուրդների կյանքը պատկերող գեղարվեստական երկեր. դրանցից են «Ազատասիրություն», «Օրինակ վեհանձնության և հայրենասիրության», «Սեր մայրենի»։ Գաղութարարների կողմից ոչ լիարժեք համարված այդ մարդիկ, Աբովյանի այդ երկերում ներկայանում են իբրև բարձր առաքինությունների կրողներ։ Նրանք իրենց հայրենիքն ու ազատությունը «զիջում են» իրենց թշնամուն ոչ այլ կերպ, քան մինչև վերջ կենաց կամ մահու պայքար մղելով։ Ամենադժվարին կյանքը հարազատ հայրենիքում նրանք գերադասում են օտարությունից՝ ինչպիսի բարիք էլ որ օտարությունը խոստանա։ Նր-

րանց բնտանեկան, ընկերական փոխհարաբերությունների մեջ իշխում է բարձր մարդկայնությունը։

Ամերիկայի բնիկների ողբերգական ճակատագրի փաստը Աբովյանի գիտակցության մեջ երբեմն կենդանանում է, հայ ժողովրդի կյանքի համանման փաստերը վերապատկերելու կապակցությամբ։ Այսպես, օրինակ՝ «Վերք Հայաստանի» վեպում կրակված սրտով պատմելով, թե ինչպիսի արհավիրքներ է տեսել հայ ժողովուրդն իր պատմական կյանքում, իբրև առավել դաժան բարբարոսության մի օրինակ Աբովյանը հիշատակում է «լուսավորյալ եվրոպացոց» արարքները Ամերիկայի սևամորթների նկատմամբ։ Նա գրում է. «Լուսավորյալ, քրիստոնյա, խաչապաշտ եվրոպացոց ոտը ողորմելի Ամերիկա էնպես քանդեց, ջնջեց, հողի հետ հավասարեց, որ հինգ-վեց միլիոն ազգիցը էսօր հազար հոգի էլ չեն մնացել, էն էլ սար ու ձոր ընկած վայրենի գազանների պես են իրենց սև օրը լալիս ու կոտորվում»[1]։

Գաղութատիրությունը որպես այդպիսին դատապարտելու ուղղությամբ սրանք տակավին Աբովյանի առաջին քայլերն էին, լոկ նախապատրաստություն գրելու համար «Ամերիկու լիս քցիլը» նշանավոր աշխատությունը, որ հանդիսանում է մի կրքոտ ելույթ ընդդեմ աշխարհակալության, ընդդեմ մարդու հանդեպ անմարդկային վերաբերմունքի ամեն մի արտահայտության։

«Փորթուգալացիք կամենում են՝ Աֆրիկու հարավային ծայրը մոտով մեկ ճանապարհ գտնին ծովով, որ գնան Հնդկաստան»[2],—այսպես հանգիստ, «գիտական» ոճով է սկսում Աբովյանը լայն ընթերցողների համար նախատեսված իր աշխատությունը։ Սակայն նույն էջի վերջում արդեն իր խաղաղ պատմությունը ընդմիջվում է այսպիսի տողերով.

«Բայց ա՜խ, էն էլ չի՛ պետք է մոռանանք, որ ոչի՛նչ աշխարք էն սև օրը, էն տարաբախտությունն ու թշվառությունը չի՛ տեսել մարդի ձեռիցը, ինչպես Ամերիկա եվրոպացոց ձեռիցը»[3]։

Այն բանից հետո, երբ հանգամանորեն նկարագրված է փորթուգալացիների առաջին հաջողությունները նոր երկրներ հայտնագործելու ասպարեզում, Աբովյանը կրկին անդրադառնում է իրեն զբաղեցնող ամենաէական խնդրին՝ եվրոպացիների նվաճած երկրների բնիկների վիճակին։ Ընթերցողների առաջ հեղինակը բաց է անում սևամորթների նկատմամբ «քրիստոնյա եվրոպացիների» վայրագությունների մի ցնցող տեսարան։ «Սրանից դուրս էկավ, որ վերջ ժամանակի, սկսեցին Եվրոպացիք աֆրիկացի **Նեգր** ազգերին (այսինքն սև ազգերին) բռնել, **ծախել**, ինչպես անասունը, որ մարդ լսելիս միսը հալչում ա վրեն»։ Եվ ապա՝ «1442 թվին սֆթա տեսավ **Լիսաբոն**, Փորթուգալի մայրաքաղաքը էնպես մարդիք՝ երեսները սև, մազները խուճուճ, պռոշները հաստ ու դուրս պրծած, որ

---

[1] Խ. Աբովյան. ԵԼԺ, հատ. 3, էջ 55։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

Ոսկե գետի մոտ Աֆրիկա էին եսիր արել։ էս ողորմելիքը, երբ որ իրենց բռնեցին, Ոսկու թող բերին, որ իրանց գլուխն ազատեն։ Հենց էս անպիտան թողը տեսան Եվրոպացիք թե չէ, գժվեցին։ Նրանք էլ է՛ն էին ուզում։ Ամենն էլ սկսեցին նոր նոր աշխարներիման գալ։ Ոսկու հասարաթը ամենի սիրտն էլ վառեց... Ամենն էլ ուզում էին էնպես աշխար գտնել, որ ոսկու գետ ունենար։ Բայց չունքի էնպես երկրներ չգտան, ընկան ողորմելի նեգր ազգի վրա, ու որտեղ որ գտնում էին, հայվանի պես կամ սպանում էին, կամ առաջ անում, տանում ծախում։ Մարդի սիրտ կրակ է ընկնում, ինչ ժամանակ լսում ա, թե էս լուսավոր եվրոպացիքը ինչ են բերել էն խեղճ ազգի գլխին, որդին հորից խլել, աղջիկը մորից, մորը՝ զավակներիցը, որ տանեն իրանց փողի ծարավը կշտացնեն»[1]։

Վերը բերած փաստերից հետո Աբովյանը նզովում և նշավակում է նրանց, ովքեր քաղաքակրթելու անվան տակ ամբողջ երկրներ էին ամայացնում և ժողովուրդներ ոչնչացնում։ «Ա՜խ, ով էնպես բանն իմանա ու էնպես անողորմ, ագահ մարդկերանց գլխին նզովք չկարդա»[2],—գրում է հեղինակը։ «Լուսավոր եվրոպացիք» բառերը մեծ լուսավորչի համար կորցնում են իրենց իմաստը և գործածվում որպես հեգնանքի արտահայտություն։ «էս էլ քո լուսավոր եվրոպացիք»,—ասում է նա եվրոպացի ստրկավաճառների հասցեին և ապա զայրագին բացականչում. «էս առևտուրը եվրոպացոց համար հավիտյանս հավիտենից ամոթ կմնա...»[3]։

Գաղութներ նվաճելու և ժողովուրդներ ստրկացնելու գործում իր ակտիվ մասնակցությունն ուներ կաթոլիկ հոգևորականությունը։ «էս միջոցումը փափին էլ չմոռացան»,— ասում է Աբովյանը և ապա ավելացնում. «էնպես քոռ քոռ հավատում էին էն ժամանակը, թե աշխարքիս երեսին Աստուծո տեղապահը նա է»։ Ուստի նրա տնօրինությանն է հանձնվում հայտնագործած և հայտնագործվելիք երկրների բաշխումը իսպանացիների և փորթուգալացիների միջև։

Բայց «Աստուծո փոխանորդ փափը»՝ հենց ինքն իր հոգևորականների միջոցով հանդես էր գալիս իբրև մի վայրագ գաղութարար։ Այն բանից հետո, երբ նկարագրվում է Ամերիկայի բնիկների նկատմամբ գործադրըվող անլուր բռնությունների մի ամբողջ շարք, Աբովյանը ավելացնում է. «Ու էնպես անօրեն գործքերը փափի հոգևորականքն էին անում... էն Քրիստոսի սուրբ հավատի վարդապետքն ու քահանեքը, որ մեզ խրատում է մարդասիրություն, թշնամասիրություն։ Օ՜, ի՞նչ չեն արել սրանք Եվրոպա, թե Ասիա, թե Ամերիկա, որ ինչ ա իրանց իշխանությունը զորանա, մեծանա»[4]։ Աբովյանի գնահատությամբ պապականությունը, կաթոլիկ եկեղեցին ոչ այլ ինչ են, եթե ոչ կապիտալիստական պետությունների էքսպանսիայի ամենաակտիվ աջակիցն ու մասնակիցը, իսկ երբեմն էլ նաև դրոշակակիրը։

---

1 Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 5, էջ 237—238։

2 Նույն տեղում, էջ 247—248։

3 Նույն տեղում, էջ 254։

4 Նույն տեղում, էջ 253։

* * *

40-ական թվականների երկրորդ կեսին Աբովյանն զբաղվեց քուրդ և եզդի ժողովուրդների պատմության, նրանց կյանքի, կենցաղի ու բանահյուսության ուսումնասիրությամբ։ Նա գրեց «Քրդեր» և «Եզդիներ» աշխատությունները, գրի առավ նմուշներ քրդական ֆոլկլորից։

Եթե ամերիկացի բնիկներին նվիրած Աբովյանի աշխատությունը իր փաստական տվյալներով՝ կոմպիլյատիվ բնույթ ուներ և հեղինակի ինքնուրույնությունը արտահայտվում էր նրա կտրուկ և համարձակ եզրակացությունների մեջ, ապա քրդերին ու եզդիներին նվիրված ուսումնասիրությունները ըստ ամենայնի ինքնուրույն էին։ Դրանք արդյունք էին նրա սեփական մանրակրկիտ և տքնաջան հետազոտությունների։ Դրանց գիտական մեծ արժեքի մասին խոստովանել է այդ հարցերի այնպիսի մի գիտակ և հեղինակավոր անձնավորություն, ինչպիսին Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Մորից Վագներն է։ Նա Աբովյանին անվանում է «Արևելքի լավագույն հետազոտող և գիտակ», որը «հիմնավորապես տիրապետում է ասիական շատ լեզուների», իսկ քրդերին ու եզդիներին նվիրված նրա աշխատությունը համարում «շատ հետաքրքրական աշխատություններ»։ Վագները համեմատության մեջ դնելով այդ ուսումնասիրությունները՝ «Քուրդիստանում և Սինջարում թռուցիկ կերպով եզդիներին ուսումնասիրող ինչ որ բրիտանական ճանապարհորդների» աշխատությունների հետ, շեշտում է Աբովյանի գործերի ակնհայտ առավելությունները։

«Ամենասրամիտ պատմաբանին անգամ, անշուշտ, դժվարությամբ կհաջողվի ճշգրիտ գաղափար կազմել աշխարհիս այն անհամար ժողովուրդների ներկա և անցյալ վիճակի մասին, որոնց սկզբնավորման, ծագման, տարածման և գոյության վերաբերմամբ պակասում են ամեն տեսակի գրավոր տեղեկություններ։ Անվիճելիորեն նման՝ ամեն տեսակետից առեղծվածային ժողովուրդների շարքին են պատկանում քրդերը...»[1],—այսպես է սկսվում Աբովյանի «Քրդերը» վերնագրով աշխատությունը։ Փաստը չէր չափազանցվում։ Գիտության այդ բնագավառը՝ քրդագիտությունը Աբովյանի առաջ բացվում էր համարյա իբրև խոպան դաշտ։ Հայկական աղբյուրները (Ջամչյան, Ինճիճյան) որոշ կցկտուր տեղեկություններ են հուշում քրդերի ծագման մասին և այդքան միայն։ Քրդագիտության հիմնադրման առաջին քարը փաստորեն դնում էր Աբովյանն ինքը, որի համար հիմք էր հանդիսանում նրան քաջ ծանոթ կենդանի ժողովուրդը իր լեզվով, կրոնով, սովորություններով ու բանավոր ստեղծագործությամբ։

Այդ խնդրի հաջող իրագործման համար նպաստավոր մի պայման էր այն, որ Աբովյանը տիրապետում էր ասիական մի քանի լեզուների, ինչպես նաև մոտիկից ծանոթ էր ասիական ժողովուրդների պատմությանը, բարքերին, կրոններին ու պոեզիային։ Որոշ խնդիրների, մասնավորապես

[1] Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 243։

քրդերի և եզդիների ծագման մասին Աբովյանի բացատրությունը կարող է այսօր վիճելի թվալ, սակայն դրանով մազաչափ անգամ չի նսեմանում ժամանակակից քրդագիտության զարգացման համար Աբովյանի աշխատությունների գիտական նշանակությունը։ «Քրդեր» և «Եզդիներ» աշխատությունները ներքին սերտ աղերս ունեն արդեն քննության առնված Աբովյանի պատմա-բանասիրական մյուս երկերի հետ։ Համառ հետևողականությամբ Աբովյանը շարունակում է զարգացնել՝ փոքր ու ճնշված ժողովուրդների շահերին ընդառաջող իր պատմական կոնցեպցիան։ Հիշյալ աշխատությունները ներթափանցված են խորին համակրանքով դեպի ազատասեր ու ռազմիկ, բայց և ճնշված այդ ժողովուրդները։

Աբովյանի բնութագրությամբ քուրդը աչքի է ընկնում հարուստ հուզաշխարհով։ Ամեն մի քուրդ և քրդուհի բնածին բանաստեղծ է։ Հսկայական առաջադիմություն կատարած այդ ժողովրդի բանավոր պոեզիան դրա ապացույցն է։

Քուրդերը ասպետ ժողովուրդ են. այդ երևում է մանավանդ դեպի կինը ունեցած արտակարգ հարգանքից։ Առավել մեծ չափով է արտահայտվում հարգանքը հատկապես օտարազգի կանանց նկատմամբ։ Քուրդը լայնախոհ և հանդուրժող է կրոնական հարցերում։ «Չի եղել մի դեպք,—գրում է Աբովյանը,—որ քուրդը ստիպեր քրիստոնեային իր հավատն ուրանալ կամ դրա պատճառով նրան հալածեր»։

Քրդերի այսքան բարձր առաքինությունները Աբովյանի վկայությամբ ավելի մեծ չափով հատկանշական են եզդիների համար և ընդհակառակը, վերջիններս քիչ են ենթակա քրդերի մեջ տարածված այն «միակ ստվերոտ կողմին», որպիսին է ասպատակություններ կատարելու նրանց սովորությունը։ Բայց կողոպուտի ժամանակ էլ քուրդը պահպանում է իր ասպետական հատկությունները,—պնդում է Աբովյանը։

Ընդհանրապես Աբովյանը ներողամիտ է եզդիների ու քրդերի ազգային արատների հանդեպ։ Նա մինչև իսկ իդեալականացնում է այդ ժողովուրդներին։ Նրան չի կաշկանդում անգամ քրդերի կողմից իր ազգակիցների՝ հայերի նկատմամբ գործադրվող ակնհայտ հալածանքները, թեպետ և նա հիշատակում է այդ փաստը։ Աբովյանի նմանօրինակ վերաբերմունքը բացատրվում է նրանով, որ քուրդ և եզդի ժողովուրդներն էլ իրենց հերթին թուրքերի ու պարսիկների կողմից ճնշված ու հալածված են։ Նրանք գոյություն են պահպանում իրենց հակառակորդների դեմ ամենօրյա դաժան պայքարով։ Իշխող ազգերը նրանց անխնա բնաջնջում են, հարկադրում փոխել իրենց ապրելաձևը, կրոնը, լեզուն։

Աբովյանի բերած փաստերը համոզում են, որ քրդերին ու եզդիներին ստրկացնելու և բնաջնջելու իրենց ձգտումով թուրքական և պարսից իշխանությունները ասես փորձում էին նսեմացնել եվրոպական գաղութարարների նույնանման արարքները՝ Ամերիկայի և Աֆրիկայի բնիկների նկատմամբ։

Փոքր, ճնշված ժողովուրդների բարոյական կերպարի բնութագրության հարցում ոչ մի բան Աբովյանի աչքին այն նշանակությունը չունի,

ինչ ժողովրդի ինքնապաշտպանության ոգին, նրա բարձր ազգային ինքնագիտակցությունը։ Այս տեսակետից ևս քրդերը և եզդիները արժանանում են Աբովյանի խոր համակրանքին։ Իրենց ազատության և անկախության համար քրդերի մղած խիզախ ու անձնազոհ պայքարի այլ փաստերի կողքին, Աբովյանը հիացմունքով հիշատակում է նրանց միանգամայն գիտակցված ձգտումը, իրենց երգն ու պոեզիան թշնամի ճնշող ազգերի ազդեցությունից զերծ պահելու։ «Քրդերը,—գրում է Աբովյանը,—երբեք չեն երգում թուրքերեն երգեր՝ թե՛ իրենց խնջույքների ժամանակ և թե՛ բացօթյա, ինչպես այդ անում են ասիական քրիստոնյաները՝ համոթ իրենց. նրանք արհամարհում են այն բոլորը, ինչ որ ծագում է իրենց կողմից այնպես սարսափելի կերպով ատելի աջամներից»[1]։

Հասկանալի է, որ Աբովյանը խրախուսում է ոչ թե ազգային սահմանափակությունը, այլ փոքր, գաղութացված ժողովրդի արդարացի ձգտումը անբիծ պահպանել իր «բարոյականությունն ու ազատասիրությունը», ակտիվ դիմագրավել թշնամական ուժերի բոլոր տեսակի ոտնձգություններին։

Աբովյանն անձնական մոտիկ կապերի մեջ էր այդ ժողովուրդների շատ ներկայացուցիչների հետ։ Գիտեր մեկից ավելի քուրդ բեգերի ու ցեղապետների, որոնք չարաչար տուժել ու իրավազրկվել էին տաճկական իշխանությունների ձեռքով։ Աբովյանը զարմանքով ու հիացմունքով տեսել էր, թե ինչպիսի վեհությամբ ու արժանապատվությամբ են այդ մարդիկ կրում իրենց դժբախտությունը։ «...Առաջին անգամ,—գրում է Աբովյանը,— ես նրանցից սովորեցի, որ դժբախտության մեջ էլ կարելի է վեհ լինել»։ Եվ իբրև հետևություն իր բոլոր ասածների՝ Աբովյանը եզրակացնում է. «Սքանչելի՜ ժողովուրդ, սքանչելի՜ բարքեր»[2]։

Րաֆֆին «Սալբի» վեպի առաջաբանում նկատի ունենալով իշխող ազգերին, այսպիսի ուշագրավ տողեր է գրել «...Ոչ միայն տակավին եսականությունը սեփական է ազգերին, այլև բռնաբարությունը նոցա մեկ նպատակն է։ Նոցանից ամեն մինը ցանկանում է ընդլայնել յուր երկրի սահմանները, բախտավորել յուրյան՝ աշխարհի բոլոր բարիքներով և մինչև երկինք հասուցանել յուր «դրոշի փառքը»։ Եվ բավական չէ, որ նոքա յուրյանց սրտի կրակը յուրյանց եղբայրների արյունով մարում, զովացնում են, բայց ընդհանուր աշխարհին յուրյանց չար հաղթության պարծանքը հայտնելեն հետո, յուրյանց չարագործությունքը առանց ամաչելու արձանագրում են պատմության մեջ և թողնում են գալոց սերնդին։ Ժամանակակից կեղծավոր գրականությունը բոլորում է այդ գրքերի վերա ծաղկից պսակներ և „անուշահոտ խնկեր է ծխում։ Բայց գնացող և եկող ժամանակները կթառամեցնեն այդ անիրավության ծաղիկները և հաղթահարված ազգերի սերունդները երկաթյա գավազանով կդատեն այդ

1 Խ. Աբովյան, *ԵԼԺ, հատ. 8, էջ 247։*

2 *Նույն տեղում, էջ 259։*

չարության գրվածքը, և ընդհանուր մարդկության հոգին մինչև հավիտյան կանիծե և կնզովե նոցա եղեռնագործ հերոսները»[1]։

Երբ անցյալ դարի 60-ական թվականներին Րաֆֆին գրի էր առնում աշխարհականություն նշավակող այս ցասումնալի տողերը, նա չգիտեր, որ տակավին 30—40-ական թվականներին Աբովյանը նույնպիսի ցասկոտությամբ պսակազերծ էր անում նույն «կեղծավոր գրականությունը» և նրանում փառաբանված աշխարհական «հերոսներին», կատարելով այն պատվավոր միսիան, ինչ վերը բերված հատվածում կտակվում էր գալիք սերունդներին։

Աբովյանի պատմաբանասիրական երկերի մեծագույն մասը հրապարակ հանվեցին միայն վերջին տասնամյակում, ուստի հասկանալի է, որ չունեցան այն դերը, ինչ որ նրանք կատարելու էին մեր գիտական հասարակական մտքի պատմության մեջ։ Սակայն, ինչ էլ որ լինի, այժմ նրանք մեծապես օգնում են թեկուզ և հետին թվով՝ մի կողմից մինչև վերջ ճանաչելու Աբովյանին, նրա տիտանական կերպարը, նրա հասարակական հզոր խառնվածքը, իսկ մյուս կողմից՝ պարզելու XIX դարի հայ հասարակական մտքի զարգացման ընթացքն ու էտապները։ Եվ հենց այս իմաստով էլ անչափ մեծանում է Աբովյանի դերը՝ իբրև հայ ժողովրդի և համաշխարհային պատմության հետ կապված հարցերին լուսավորական-հումանիստական հայեցակետով մերձեցող հեղինակ, իբրև գաղութային ստրկության դեմ պայքարի դրոշը մեր իրականության մեջ բարձրացնող առաջամարտիկ։

Աբովյանը ոչ միայն դատապարտեց աշխարհակալությունն ու գաղութատիրությունը, այլև պաշտպանեց ու քաջալերեց ճնշված ժողովուրդների պայքարը հանուն իրենց ազատության, դրա վրա կառուցեց ստրկացված ազգերին ի սպաս դրված իր պատմական կոնցեպցիան։

Ահա իր այս դեմոկրատական-հումանիստական պատմահայեցողությամբ գրեց Աբովյանն իր պատմավեպը՝ առաջին հայ պատմավեպը՝ «Վերք Հայաստանին»։ Եվ եթե Աբովյանի պատմագիտական աշխատությունները անհայտ մնալով մինչև վերջերս չկատարեցին իրենց վերապահված դերը, ապա չի կարելի ասել, թե անհայտ մնաց նաև գրողի պատմական կոնցեպցիան, որը սերունդներին անցավ «Վերք Հայաստանի» վեպի միջոցով և աննախընթաց մեծ նշանակություն ունեցավ մեր նոր գրականության և պատմավիպագրության զարգացման համար։

* * *

Ֆ. Էնգելսը վերածնության գործիչներին բնութագրում է իբրև մտքի, կրքոտության և բնավորության ուժով, բազմակողմանիությամբ և գիտնականությամբ օժտված տիտաններ։ «...Այն ժամանակ,—գրում է Էնգելսը,—գրեթե չկար ոչ մի խոշոր մարդ, որ կատարած չլիներ հեռավոր

---

[1] **Րաֆֆի**, *Գրականության մասին*, Երևան, 1959, էջ 22—23։

ճանապարհորդություններ, չխոսեր չորս հինգ լեզվով, չփայլեր ստեղծագործական մի քանի բնագավառներում... Բայց ինչ որ առանձնապես բնորոշ է նրանց համար, այդ այն է, որ նրանք գրեթե բոլորը ապրում են իրենց ժամանակի բոլոր շահագրգռություններով, մասնակցում են գործնական պայքարին... Այստեղից էլ բնավորության այն լիությունը, որ նրանց դարձնում է ամբողջական մարդիկ։ Կաբինետային գիտնականներ այն ժամանակ բացառություններ էին»[1]։

Հայ վերածնության առաջին մեծ գործիչը՝ Խաչատուր Աբովյանը՝ շատ էր ժամանակով հեռու եվրոպական վերածնության գործիչներից, սակայն իր ստեղծագործական նկարագրով շատ էր մոտ և հարազատ նրանց։

Աբովյանի մեջ ներդաշնակորեն հանդես են գալիս մեծ գրողն ու հասարակական գործիչը, մեծ մանկավարժն ու գիտնականը։ Ստեղծագործական այն բազմազանությունը, որով աչքի է ընկնում Աբովյանի ժառանգությունը, եզակի երևույթ է ամբողջ հայ գրականության մեջ,

Աբովյանը առաջին ազդարարողն հանդիսացավ հայ ժողովրդի վերածնության։ Անմահ գրողի ստեղծագործության մեջ հսկայական ուժով արտացոլվեցին մեր ժողովրդի XIX դարի առաջին կեսի քաղաքական և կուլտուրական ձգտումները, նրա նյութական և հոգևոր բովանդակ կյանքը։

Զինված մարդկության ստեղծած առաջավոր կուլտուրայի զենքերով՝ որոնցով մարդկային միտքը շղթայազերծ էր լինում ավատական աշխարհայացքից և կրոնական սխոլաստիկայից, Աբովյանն իբրև նոր կուլտուրայի մարտիկ ու դրոշակակիր, իր բազմաբովանդակ ստեղծագործությամբ, մասնավորապես «Վերք Հայաստանի» վեպով, արմատական հեղաշրջում կատարեց մեր գրականության, մեր կուլտուրայի զարգացման մեջ և մի ամբողջ գլխով վեր բարձրացրեց հայ ժողովրդի հասարակական գիտակցությունն ու դեղարվեստական մտածողությունը։ XIX դարի ողջ հայ գրականությունն ընթացավ Աբովյանի բացած մայրուղիով։

[1] *«Մարքսը և Էնգելսը արվեստի մասին», Երևան, 1934, էջ 123—124։*

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ղևոնդ Ալիշանը հայ նոր գրականության պատմության մեջ է մտել որպես աշխարհաբար պոեզիայի հիմնադիրներից մեկը։ Միք. Նալբանդյանն, անշուշտ, այդ է նկատի ունեցել, երբ «Սոս և Վարդիթերի» «Կրիտիկայում» նշելով, որ Աբովյանի «Վերք Հայաստանին» և Պռոշյանի «Սոս և Վարդիթերը» «հիմք դրին արդյան ազգային վիպասանության», անհրաժեշտ է համարել ավելացնել. «Ջենք մոռացած «Նահապետ» ստորագրությամբ Հ. Ղևոնդ Ալիշանյանց արժանավոր վարդապետի հրատարակած հոյակապ քերթվածքը՝ «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ» և մյուս բոլոր աշխարհաբար ոտանավորքը, բայց այստեղ չհիշեցինք, որովհետև արձակ բանաստեղծության վրա էր մեր խոսքը, ապա թե ոչ՝ չափաբերական քերթվածոց մեջ արժանավոր վարդապետը ախոյան չունի...»[1]։

Ալիշանի, որպես բանաստեղծի, պատմական ծառայությունը նաև այն է, որ նա, թեև լիովին չհաղթահարեց Մխիթարյանների կլասիցիզմը, բայց եղավ առաջիններից մեկը, որ ճանապարհ հարթեց ռոմանտիզմի համար, իր «Նահապետի երգերով» հաստատեց գրական այդ առաջավոր ուղղության պատմական իրավունքը։ Ալիշանը պոեզիան դարձրեց կյանքի, իրականության կենդանի արձագանքը։ Այլ կերպ չի կարելի բացատրել այն ջերմ վերաբերմունքը, որին արժանացել են նրա լավագույն բանաստեղծությունները («Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ», «Հրազդան» և մյուս ստեղծագործությունները)։ Վերջիններիս հայրենասիրական-մարտական պաթոսը համահունչ էր 40—50-ական թվականների ազգային-ազատագրական ձգտումներին։ Ալիշանը հարթեց հայ նոր պոեզիայի հետագա զարգացման ուղին։ Նրա հայրենասիրական քնարից ստեղծագործական ազդակներ ստացան 50—60-ական թվականների գրական սերնդի ականավոր այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Ռափայել Պատկանյանը և Մկրտիչ Պեշիկթաշլյանը։

1

Ղևոնդ (Քերովբե) Ալիշանը ծնվել է 1820 թվականի հուլիսի 18-ին Կոստանդնուպոլսում, դրամագետ-հնահավաք Պետրոս Մարգարի Ալիշանի ընտանիքում։ Տասներկու տարեկան հասակում, 1832 թվականին,

---

1 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 3, Երևան, 1940, էջ 120։

Հայրը նրան ուղարկում է Վենետիկի ս. Ղազար վանքի դպրոցը («Ընծայարան»), ուր հինգ տարի ուսանելուց հետո, փոխադրվում է «Բարձրագույն կրթարանը»։ Այստեղ էլ Ալիշանն սկսում է գրական իր առաջին փորձերը։ Դրանք վանքի չորս պատերի մեջ պարփակված, բայց դրսի «դուրսի աշխարհի» տպավորություններով ապրող պատանու բանաստեղծական զեղումներն էին՝ ներշնչված Ադրիատիկական ծովի և ս. Ղազար կղզու գեղեցիկ բնանկարներից։ Սակայն, Ալիշանի այս, ինչպես և հետագայում գրած բազմաթիվ գրաբար բանաստեղծությունները կրում էին կլասիցիզմի ոճական ազդեցությունը, և, ըստ էության, գրեթե չէին տարբերվում մխիթարյան մյուս բանաստեղծների բռնահանգ ոտանավորներից։

Ղևոնդ Ալիշան

1841 թվականին Ալիշանը նշանակվում է ուսուցիչ Վենետիկի Ռափայելյան վարժարանում։ Այնուհետև, 1843 թվականից սկսած, նա, մանկավարժական գործունեությանը զուգընթաց, աշխատակցում է «Բազմավեպին», իսկ 1849—1852 թվականներին նաև խմբագրում է այդ հանդեսը։ Բեղմնավոր է լինում երիտասարդ Ալիշանի աշխատակցությունը «Բազմավեպին». այստեղ նա տպագրում է բազմաթիվ հոդվածներ, ինքնուրույն ու թարգմանական բանաստեղծություններ. հրապարակում է միջնադարյան տաղերգուների ստեղծագործությունները և ժողովրդական երգերը՝ հանված ձեռագիր մատյաններից. «Բազմավեպում», «Նահապետ» ծածկանունով, նա հանդես է գալիս աշխարհաբար-հայրենասիրական բանաստեղծություններով ու պոեմներով, որոնք և նշանավորեցին նրա գրական փառքը։

1848 թվականին Ալիշանը նշանակվում է Ռափայելյան վարժարանի տեսուչ։ Վենետիկում նա ականատես է լինում իտալական ժողովրդի ապստամբությանը՝ ավստրիական լծի դեմ. Նա լսում է վարժարանի շենքի առջևից անցնող հազարավոր իտալացի հայրենասերների ազատության ոգեշունչ երգերը։ Այդ ամենը երիտասարդ բանաստեղծի վրա թողնում են ուժեղ տպավորություն. այդ օրերին է, որ նա գրում է «Մասիսու սարերն», «Բա՜մ. փորոտան...» և մի քանի այլ մարտաշունչ-հայրենասիրական բանաստեղծություններ։

1850—1853 թվականներին, զանազան առիթներով, Ալիշանը լինում է Հռոմում, Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, Վիեննայում, ուր ուսումնասիրում է հայկական գրչագիր մատյանները, հոգևոր կուլտուրայի հուշարձանները, նյութեր է հավաքում հայագիտական իր ուսումնասիրու-

թյունների համար։ Այս ճանապարհորդությունների ընթացքում նա բնագրից թարգմանում է Բայրոնի «Չայլդ Հարոլդ» պոեմի չորրորդ երգը և գրում է մի շարք բանաստեղծություններ։

1858—1861 թվականներին Ալիշանը վարում է Փարիզի Մուրադյան վարժարանի տեսչի պաշտոնը։

1861 թվականի նոյեմբերին նա վերադառնում է Ս. Ղազար։ 1866 թվականին նա կրկին նշանակվում է Վենետիկի Ռափայելյան վարժարանի տեսուչ։ Այդ պաշտոնը նա վարում է մինչև 1872 թվականը, որից հետո ընդմիշտ թողնում է մանկավարժական ասպարեզը և ամբողջությամբ, մինչև իր մահը (1901 թվականի նոյեմբերի 22), նվիրվում է հայագիտությանը։

Բազմակողմանի ու բացառիկ բեղմնավոր է Ալիշան-հայագետի գործունեությունը. նրա գրչին են պատկանում հայոց պատմության, հնագիտության, աշխարհագրության, հոգևոր և նյութական կուլտուրայի վերաբերյալ ստվարածավալ բազմաթիվ աշխատություններ, ինչպես՝ «Տեղագիր հայոց մեծաց» (1855), «Շնորհալի և պարագայ իւր» (1873), «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890), «Սիսական» (1893), «Հայ-բուսակ» (1895), «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» (1895), «Հայ-Վենետ» (1896), «Հայապատում» (1901) և այլ, փոքր ու մեծ, շատ հետազոտություններ, որոնք փաստական հսկայական նյութ են պարունակում հայ ժողովրդի պատմական անցյալի գրեթե բոլոր շրջանների և բնագավառների վերաբերյալ։ Ականավոր հայագետի այդ աշխատությունները, չնայած իրենց թերություններին,—որ պայմանավորված էին հեղինակի կրոնական-իդեալիստական աշխարհայացքով,—այսօր էլ խոշոր արժեք են ներկայացնում հայ ժողովրդի պատմական անցյալի մի շարք պրոբլեմների մշակման և ուսումնասիրության տեսակետից։

2

Ալիշան-բանաստեղծն ստեղծագործել է մեկ տասնամյակից մի փոքր ավելի, այն է՝ 1840—1852 թվականներին։ Իր պոեզիան, գրեթե ամբողջությամբ, նա ամփոփել է «Նուագք» ժողովածուի մեջ և 1857—1858 թվականներին հրատարակել հինգ հատորով (հատոր առաջին՝ «Մանկունի», հատոր երկրորդ՝ «Մաղթունի» և «Բնունի», հատոր երրորդ՝ «Հայրունի», հատոր չորրորդ՝ «Տերունի» և հատոր հինգերորդ՝ «Տխրունի»)։

«Նուագքի» երրորդ՝ «Հայրունի» բնորոշ խորագիրը կրող հատորում են ամփոփված Ալիշանի պատմա-հայրենասիրական բանաստեղծությունները ու պոեմները, որոնց մեծ մասը դարձյալ գրաբար է։

Ինչպես Ալիշան-մանկավարժի, այնպես էլ Ալիշան-բանաստեղծի գերագույն նպատակը հայրենանվեր քաղաքացիներ պատրաստելն է։ 1845 թվականին Ռափայելյան վարժարանում արտասանած ճառում հի-

շեցնելով մի իմաստասերի խոսքը, թե՝ «ուր չիք հայրենիք՝ չեն անդ և քաղաքացիք», Ալիշանն այդ ասույթը շրջում է այսպես. «Ուր քաղաքացիք չիք՝ չկան և հայրենիք»։ Ուրեմն հայրենիքի գոյությունը պայմանավորված է նրան նվիրված անձնազոհ քաղաքացիներով. «բուն իսկ հայրենիք մեր եմք, անձն իւրաքանչիւր, և լաւութիւնք մեր նեցուկք են նորա»[1]։


ՆՈՒԱԳՔ

Հ. ՂԵՒՈՆԴԵԱՅ Մ. ԱԼԻՇԱՆԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

ՌՅԼ–1881

Ղ. Ալիշանի «Նուագք» ժողովածուի առաջին հատորի անվանաթերթը։

Հայրենասիրական նման հորդորներով Ալիշանը բազմիցս հանդես է եկել Ռափայելյան վարժարանի սաների առջև։ Նրա հայրենասիրական այդ կոչերին, անշուշտ, մարտական շեշտ էին հաղորդում Վենետիկի փողոցներում, վարժարանի պատերի տակ մղվող ազատագրական պայքարի թոհ ու բոհը։

Երիտասարդ բանաստեղծմանկավարժն իր սաներին հորդորում էր. «Ճանաչել և պահել անվթար զսեփական շնորհս ազգիս, զլեզու նորա, զպատմութիւն նորա, զսովորութիւն և զախորժակս նորա անվնաս, զհարազատ դրպրութիւն նորա և զփառս անուան նորա։ Զայսպիսի կամիմ հայրենասիրութիւն»[2]։

Ալիշանի հայրենասիրությունը հայեցողական չէր։ Բանաստեղծն այն համոզմունքն ուներ, որ հայրենասիրական սխրագործությունները հաջողությամբ են պսակվում «վտանգօք և դժուարութեամբ», ուստի և՝ արիությունը նա համարում էր «առաջին օրէնք հայրենասիրութեան»։

Անցյալի վերհուշը, ազգային պատմության հերոսական դրվագների ու հերոսների վկայակոչումը Ալիշանի համար ինքնանպատակ չէր։ «Ազգային դաստիարակութիւն» հոդվածում, որ գրված է աշխարհաբար, նա որոշակիորեն այն միտքն է արծարծում, թե անցյալի հերոսների առաքինությունները այսօր մեզ համար անօգուտ են, եթե մենք նրանց չհետևենք և չջանանք մեր քրտինքով առաքինություններ վաստակելու։ «Դրախտին Հայաստանի մեջ ծաղկիլը զմեզ չկրնար ազատել հիմակվան

---

[1] «Բազմավէպ», 1845, № 22, էջ 343։

[2] «Բազմավէպ», 1848, № 12, էջ 181։

փուշերեն, որ լեցուն է ճամբնուս վրա...—գրում է նա։—Մեր աննման դյուցազունք և քաջերն և երևելի մարդիկը չեն կրնար մեր գերության և խեղճության վիճակը մեզի մոռցնել... նախնիք այն ատեն պարծանք են մեզի, երբ մենք ալ իրենց նման կըլլանք... Մեր ինչ ըլլալը մեզնե կախված է. անոնց պարծանքն ու փառքը մեկ լույս մըն է մեր ճամբուն վրա, բայց մենք պետք է, որ աչվընիս բանանք ու ոտվընիս շարժենք...»[1]։

Այնուհետև, խոսելով հայերի ձիրքի, ընդունակությունների մասին, Ալիշանը նկատում է, թե բանը ունենալը չէ, այլ գործադրելը, և բերում է հետևյալ, խիստ նշանակալից օրինակը. «Մենք շատ զենքեր ունինք, կըսեր մեկը, սնտուկով սուր ունինք, պատերնես հրացաններ կախված են։— Եվ, անշուշտ, պատին վրա ու սնտուկին մեջ կենալնուն համար է, ըսավ լսող մը, որ ճանճ մ՚ալ չես հալածած։—Թե որ կուզենք հավտցնել, մանավանդ հավատալ, թե ունինք,—եզրակացնում է Ալիշանը,— պետք է գործածելով ցուցնենք...»[2]։

Եվ ուշագրավ է, որ այս տողերը գրելուց հետո, «Բազմավեպի» հաջորդ համարում, Ալիշանը տպագրում է «Մասիսու սարերն» հայտնի բանաստեղծությունը, ուր արտահայտվում է զինված ապստամբության գաղափարը։

Հայրենասիրության այսպիսի ըմբռնման տեսանկյունից էլ պետք է դիտվի ու գնահատվի «Հայրունի» հատորը, որն ամբողջությամբ մի հերոսամատյան է՝ լի հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական անցքերին ու անձերին նվիրված ներբողներով, ինչպիսիք են՝ «Ի Հայկն և ի բաստ հայկազանց», «Երկհազարեակն Արշակունեաց», «Ի մահ Տրդատայ ահեղազօրն արքայի հայոց», «Ճակատամարտ Ջիրաւայ և քաջակորովն Մուշեղ», «Յառանձար սեպուհ Ամատունի», «Երթ- ու գնացք զօրացն հայոց ընդ Վահանայ Մամիկոնենոյ», «Նահատակութիւն սրբոց Ղևոնդեանց», «Ջայնարկութիւն բանակի Աշոտոյ Բ.» և այլն։

Ալիշանի հիմնական միտումը, նրա գաղափարական նպատակադրումն արտահայտված է «Ի բամբիռն հայկական» ծրագրային բանաստեղծությամբ, որով բացվում է «Հայրունի» հատորը.

> Բամբի՛ռն հայոց, բամբիռն անմահ, օճան ազանց ու երկնից անգամ...
> Սթափե՛աց, փորնչե՛աց, տո՛ւր գպատուէր տեառն, և հայութեան հսկայանգամ
> Եռանդն ի սիրտ և ի բազուկ, երդ ի բերան՝ դիմեսցէ գհետ...

Ժամանակակիցների ազգային ինքնագիտակցությունը բորբոքելու, քաղաքական ընդարմացումից նրանց սթափեցնելու այդ միտումը կարմիր գծի նման անցնում է Ալիշանի պատմա-հայրենասիրական պոեզիայի միջով՝ ծայրից ծայր։ Բանաստեղծական իր վառ երևակայությամբ նա վերակենդանացնում է Ջիրավի և Ավարայրի ճակատամարտերը, ներբողում է Մուշեղ, Վարդան և Վահան Մամիկոնյանների, Վահրամ Պահլավունու

---

1 «Բազմավեպ», 1849, № 5, էջ 66—67։

2 Նույն տեղում, էջ 67։

Աշոտ Երկաթի և ուրիշների սխրագործությունները, հյուսում է Վահան Մամիկոնյանի մարտական քայլերգը, որն իր կենսունակությունը պահպանեց երկար տասնամյակներ.

Բա՛մ. փորոտան բարձուստ ռմբինք յԱրարատեան դաշտն ի վայր.
Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի հրագայր.
Հրաւէր հայրենեաց հրոշակի 'նդհանուր
Հոգիք հայկազանց բորբոքին ի հուր...

Ալիշանի հայրենասիրական պոեզիայի գաղափարական բովանդակությունը, քաղաքական միտումները առավել ցայտուն կերպով դրսևորվել են աշխարհաբար գրված «Նահապետի երգերում», որոնք և հռչակել են Ալիշան-բանաստեղծի անունը և նրան դասել հայ նոր գրականության հիմնադիրների շարքը։

Ուշագրավ է, որ Ալիշանն իր աշխարհաբար բանաստեղծությունները՝ «Նահապետ» ստորագրությամբ, «Բազմավեպում» տպագրել է որպես միջնադարյան գուսանական երգեր, քաղված դրշագիր հին մատյաններից։ «Նահապետի երգեր» շարքի առաջին բանաստեղծության («Հայոց աշխարհիկ») ծանոթագրության մեջ ասված է հետևյալը. «Թեպետև աս հայոց դաշտերուն Վիրգիլիոսը կամ Հոմերոսն ալ (խոսքը Նահապետի մասին է—Ա. Ի.) իր բախտին պես անծանոթ թողեր է իր կյանքն ալ, բայց անոր պատվական հիշատակները՝ այսինքն երգերեն մեկ քանին բախտով մեզի հասան մոտերս հին տաղարաններու և ոսկիփորիկներու մեջ թաղված, ուրիշ խառն երգերու և ռամկական ոտանավորներու հետ... Կերևնա թե աս Նահապետը քանի մը դար առաջ Շահարասին ժամանակները Հայաստան մնացող ազգայիններեն եղած է»[1]։

«Նահապետի երգերը» գրված են, ըստ երևույթին, 1847—1850 թվականներին։ Աբովյանն ապրում էր, երբ տպագրվեցին «Հայոց աշխարհիկն» ու «Պլպուլն Ավարայրին» (1847)։

Երիտասարդ վանականի համար մի խիզախ քայլ էր բացահայտ հանդես գալ աշխարհաբար, այն էլ՝ քաղաքական որոշակի միտումներ արտահայտող բանաստեղծություններով։ Թերևս դրանով պետք է բացատրել, որ նա սկզբում խուսափել է «Նահապետի երգերի» հեղինակ ճանաչվելուց և դրանք տպագրել է որպես միջնադարյան գուսանական երգեր։

Էականն այն է, սակայն, որ «Վերք Հայաստանիի» տպագրությունից մեկ տասնամյակ առաջ, Աբովյանից անկախ, ըմբռնելով ժամանակի հրամայական պահանջը, երիտասարդ Ալիշանը խիզախ քայլեր էր անում գրականությունը ժողովրդի հետ կապելու գործում։ Նշանակալից է, որ նախքան իր աշխարհաբար բանաստեղծությունները տպագրելը, Ալիշանը հանդես եկավ որպես ժողովրդական բանարվեստի, մասնավորապես

---

[1] «Բազմավեպ», 1847, № 12, էջ 187։

պոեզիայի, առաջին գնահատողներից մեկը մեր իրականության մեջ։ 1845 թվականին «Ռամկական երգեր» խորագիրը կրող հոդվածում նա գրում է. «Ռամկական երգը ազգային ոգվույն մեկ ձայնն է, որ շատ հեղ ուրիշ կողմանե մեռած կամ մարած ատենն ալ, դեռ այսպիսի երգոց մեջ կենդանի կմնա, անոր համար ազգային երգ ալ կըսվի... Այսպիսի երգերը շատ անգամ ավելի լավ կիմացնեն ազգի հանճարը, քան թե ծանր գըրվածքները, և կգտնվին, անոնց մեջ անանկ սքանչելի ղուրգվածք, որ միայն իրենց ռամկական անունին համար հասարակ բան կկարծվին, բայց ճըշմարտությամբ գերագույն գրվածոց կարգը անցնելու են»։ Այնուհետև մեջ բերելով «Ողը կաքավու» («Նրստյալ կայր ու լայր կաքվուկն...») երգը, ավելացնում է. «Կը համարձակիմ ըսելու, թե աս երգս անոնցմե մեկն է, որոց վրա չկրնար մեկը բան մը ավելցնել կամ պակսեցնել, և կրնա գեղեցիկ օրինակ մը ըլլալ նաև օտար ազգաց, միայն թե հայերենին քաղցրությունը կարելի ըլլա պահվիլ, որ անկարելի է. և կարծեմ՝ ավելի վսեմ հայկական լեզվով ալ գրված ըլլար նե՝ նույն աղվորությունը չէր ունենար»։ Ապա «ուսումնասեր և ազգասեր ընթերցողներին» կոչ է անում գրի առնել, հավաքել Հայաստանի այլևայլ գավառների մեջ երգվող ժողովրդական այդ երգերը, «վասն զի անոնցմե կրնան շատ մարգարիտներ ելլել, և թերևս ատենով հայոց դրականության տաճարին մեջը պատվավոր տեղ մը ունենալ»[1]։ Ինքն Ալիշանը Վենետիկի, Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի մատենադարանների հայկական գրչագիր մատյաններում տարբեր ժամանակներում գրի առնված ժողովրդական երգերը ի մի հավաքելով, 1852 թվականին հրատարակում է մի ժողովածու, հայերեն և անգլերեն, «Հայոց երգք ռամկականք» խորագրով։ Ժողովածուն պարունակում էր 19 կանազան երգեր, այդ թվում նաև հետագայում համազգային հռչակ ստացած «Կռունկ, ուստի՞ կուգաս...»։

Ալիշանն առաջիններից էր նաև, որ ձգտելով հասկանալի լինել ժողովրդին, քաղաքացիական իրավունք տվեց ժողովրդական լեզվին, օգտագործելով վերջինիս հարուստ բառապաշարը և գեղարվեստական պատկերավորման միջոցները։ Ալիշանի դժբախտությունն էր, սակայն, որ նա մանկությունից վանքում մեծացած լինելով, կտրված էր աշխարհաբարի բուն աղբյուրից՝ ժողովրդից. այդ է պատճառը, որ նրա լեզուն արհեստական է։ Միք. Նալբանդյանը մասնավորապես նշելով Ալիշանի լեզվի այդ թերությունը, գրել է. «...Նահապետի անունով գրվածքը, թեև աշխարհաբար, բայց շատ հաղթահարված հին լեզվից (գրաբարից— Ա. Ի.), և նմանել ցանկանալով Մեծ Հայաստանի լեզվին, շատ անգամ մեջ խառնած այնպիսի տեղական բառեր, որ շատ սակավ էին գործածվում։ Հայր Ղևոնդ Ալիշանյանցը ունի բանաստեղծական քանքար և այդ քանքարը կարող էր ավելի պարզ ու վառ երևել, եթե արեղայական սնաթույր վերարկուն չլինեք խափանարիթ»[2]։

---

[1] «Բազմավէպ», 1845, № 7, էջ 109—111։

[2] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 1, էջ 430։

Սակայն, չնայած Ալիշանի լեզվի էկլեկտիզմին, նրա լավագույն բանաստեղծությունները մտան ժողովրդի մեջ և, ինչպես Նալբանդյանն է նշել, «ջերմացուցին շատ սրտեր Նահապետի անունի վերա»։

Արդ, ինչո՞վ բացատրել այդ ուշագրավ երևույթը։ Նախ նրանով, որ «Նահապետի երգերը», որքան էլ հին լեզվից հաղթահարված լինեին, այնուամենայնիվ աշխարհաբար էին և մատչելի ժողովրդին։ Երկրորդ, ոչ-նվազ կարևոր հանգամանքը նրանց («Նահապետի երգերի») հայրենասիրական-մարտական պաթոսն էր, որ ինչպես վերը նշվեց, համապատասխանում էր ժամանակի ոգուն։

Ազգային ինքնաճանաչման գաղափարը «Նահապետի երգերի» հիմնական բովանդակությունն ու պաթոսն է։

Ալիշանի բանաստեղծությունները տոգորված են օրինական հպարտությամբ հայ ժողովրդի հերոսական անցյալի, նրա նյութական և հոգևոր բազմադարյան, հարուստ կուլտուրայի նկատմամբ։

Մի առանձին հմայք ունեն հայրենի երկրի բնությանը նվիրված Ալիշանի թախծոտ ու սրտամորմոք երգերը՝ «Հայոց աշխարհիկ», «Հրազդան» և «Հայ հայրենիք»։ Այս երգերում հատկապես ուժեղ է արտահայտված պանդխտության ցավատանջ զգացումը, որ խորապես ապրել է ինքը, «մեր միշտ պանդուխտ ալևոր Նահապետը» (Հովհ. Թումանյան)։

«Հրազդանը»՝ իր հայրական տունն ու այգին, իր սիրած աղջկան՝ «աչքի լույս» խանդուկին և ընկերներին կորցրած պանդխտի սրտահույզ զրույցն է հայրենի գետակի հետ։

Ալիշանն անձնավորել է հայրենի բնությունը՝ Հրազդանն ու նրա ափերը. և դրանով էլ պայմանավորված է բանաստեղծության անմիջականությունը, վարակիչ հուզականությունը.

Ես ձեր դրացնակն եմ, չե՞ք ճանչել,
Սիրտս զձեզ չէ մոռցել իսկի.
Դուք կարկըչիկդ ե՞ր եք մոռցել,
Ծիծղուն երեսդ ե՞ր սուգ ունի։

Հայրենի գետակը և նրա երբեմնի ծաղկուն ափերը լուռ արտասվում են, արտահայտելով պանդուխտ բանաստեղծի կարոտն ու վիշտը հեռավոր ու սգավոր հայրենիքի նկատմամբ։

Յուրաքանչյուր տան վերջում կրկնվող երկտողը՝

Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, ե՞ր լայր լինիկ…

առավել ուժեղացնում են բանաստեղծության հուզականությունը։

Մեր դասական գրականության մեջ պանդխտությանը նվիրված լավագույն բանաստեղծություններից մեկն է «Հրազդանը», նույնքան ջերմ ու անմիջական, որքան և պանդխտության ժողովրդական երգերը։

Հայաստանը իրականության մեջ չտեսած, բայց ստեղծագործական վառ երևակայությամբ օժտված բանաստեղծը, հատկապես «Հայ հայրե-

նիք» և «Հայոց աշխարհիկ» բանաստեղծություններում. տվել է հայրենի բնության ռոմանտիկան։

«Հայ հայրենիքը» Հայաստանի հոգեզմայլ գովքն է։ Բանաստեղծությունն ամբողջովին տոգորված է առույգ տրամադրությամբ։ Ինչպես «Հրազդանը», այնպես էլ «Հայ հայրենիքը», գրված է յամբական երկանդամ. ութվանկանի աշխույժ չափով, որ համապատասխանում է բանաստեղծության ոգուն, հայրենի բնության հրապույրներով արբած, հայրենարաղձ բանաստեղծի խանդավառ տրամադրությանը։

Այս բանաստեղծությունը, ուր պատկերված է հայկական լեռնաշխարհի արևածագը, XIX դարի հայ դասական պոեզիայի շքեղ էջերից է.

Առաւօտուն՝ դրունակն է բաց,
Ե՛լ, ե՛լ տղեկ Հայաստանեայց...
Ահա ելնէր արեւն յամպոց
Վարդ կու թափէր յաշխարհն Հայոց.
Ցօղըն տեղայր զով ու սիրուն
Զինչ մարգարիտ ի սատափուն.
Կարմիր կանաչ, ծին ծիրանի
Գօտի ածէր Հայաստանի։
Լերանց սարերըն բարձրաձայր
Ոսկի պըսակ եդան հաւսար.
Հայոց գետերն հազարաւոր
Իջանէին ճաճանչաւոր...

«Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունն նս սկսվում է հայրենի բնության ոգեշունչ գովերգով, Հայաստանի գեղեցիկ գարնան քնարական նկարագրությամբ.

Հայո՛ց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ո՛վ դու ի վաղուց մոռցված հայրենիք,
Ո՛վ դու իմ սրտին անմոռաց տեղիք։

Հայրենի բնության գովքը վերածվում է հայրենասիրության, հայրենիքին հավատարիմ մնալու կոչի. դա բազմափորձ ծեր «շայիրի» պատգամն է մանուկ սերնդին.

Ձեզ կասեմ մանկունք սիրունք, նազելիք,
Որոնց է բնական Հայոց աշխարհիկ.
Մ'ուրանայք դերկիրդ ու զազգըդ սիրուն,
Ծառն՝ արմատով ծառ, տունն՝ հիմամբն է տուն...

Որքան փարթամ ու գեղեցիկ է Հայաստանի բնությունը, նույնքան շքեղ ու պանծալի է նրա պատմությունը. Հայկ նահապետի օրերից Հայաստանի սարերն ու ձորերը ներկված են հայրենիքի համար ընկած քաջերի արյունով. Հայաստանը շատ կտրիճներ է հանել, որոնք, Հայկի նման, շատ Բելեր են տապալել գետին։ Բանաստեղծը հիշում է Տրդատի ու Տիգրանի, Վարդանի ու Վահանի, Աշոտի ու Սմբատի և շատ ուրիշների սխրագործությունները։ Հայ ժողովուրդը տվել է ոչ միայն հերոսների բազ-

մաթիվ սերունդներ, այլև ստեղծել է հոգևոր մեծարժեք մշակույթ, «քանց բարձր Արարատ» հարուստ գրականություն։

Հայաստանի բնության ու պատմության այս շքեղ ֆոնի վրա առավել մռայլ է ուրվագծվում բանաստեղծի ժամանակակից իրականության պատկերը.

Բայց ափսո՜ս հիմիկ, որ չար թըշնամիք
Իսկի չեն խնայել Հայո՜ց աշխարհիկ…
Ջազգն ընչոք տեղոք քանդել ու գերել,
Դեմ չորս հովերուն տվել ու ցրվել։
Ավա՜ղ քեզ, ավա՜ղ, Հայոց աշխարհիկ,
Տուն երկնանման, փլած տաղվարիկ…

Իրականության մռայլ նկարագրությունը, սակայն, բանաստեղծը անհույս և անհեռանկար ողբասացության չի վերածում. Հայրենիքի ապագայի նկատմամբ նա լավատեսորեն է տրամադրված, նա հավատում է հայրենիքի վերածնությանը։ Ճիշտ է, իր այդ հավատը Ալիշանը կրոնական շղարշով է պարուրել. Հայաստանի անկումը, ինչպես և հառնումը պայմանավորելով աստծու կամքով՝ «ինքն է հրամայած քակել, ինք շինե…», էականն, այնուամենայնիվ, այդ չէ, այլ այն, որ նա մանուկ սերնդին ներշնչում է ազգային արժանապատվության զգացում, ինքնավստահություն, լավատեսություն։

Դալար մանկտիք, ձեր տակն է Արարատ,
Պի՛նդ կացեք…

Հորդորում է նա, ընդգծելով, որ Հայաստանի ներկան ու ապագան խարսխված են պատմական ամուր հիմքի վրա։

Բանաստեղծի պատկերավորման ատաղձը բնությունն է։ Բնության պատկերները նա առատորեն օգտագործել է իր հիմնական միտումը՝ հայրենիքի քաղաքական վերածնության հավատը հավաստելու համար։

Մասիսի (Հայաստանի) ճակատին շատ անգամ են ամպեր կուտակվել, բայց փարատվել են.

Այն սև-սև ամպերն են դարձել ի փախ,
Այն ճերմակ-ճերմակ սարերն են անվախ…

Հայոց աշխարհը շատ ցուրտ ձմեռներ է տեսել, որոնց հաջորդել են գեղեցիկ գարուններ.

Հազար քո ձորերդ ու հազար քո դաշտ՝
Տարան ցուրտ ձմեռդ ու ձյուներդ շատ…

Եվ իր բանաստեղծությունը, որ սկսել էր հայոց աշխարհի գեղեցիկ գարնան նկարագրությամբ, Ալիշանն ավարտում է այն հաստատ հավատով, որ Հայաստանի լեռների վրա կրկին բացվելու է գարունը, գալու է և հայ ժողովրդի քաղաքական կյանքի զարթոնքի օրը.

Ամպն և փոթորիկ վաղիվ վերանա,
Նոր արև, գարուն, ծառն ու այգի կա։
Արմատք հին՝ նոր ճյուղ, հին ճյուղ՝ նոր ծաղիկ.
Ընծայեն բնության, Հայոց աշխարհիկ...
Որք խելոք սիրով կան դինչ աղբըրիկք
Տեսնեն քո գարունդ, Հայոց աշխարհիկ։

Բնության նման, Հայաստանն էլ պիտի ունենա իր վերածնունդը. «Թեպետ քշիկ մ՚ալ ուշ», բայց պիտի ունենա անպատճառ։ Ահա բանաստեղծության գաղափարական առաջատար միտումը։ Եվ նա իր երգն ավարտում է այն հույսը փայփայելով, թե ինքն էլ, ծեր Նահապետը, ականատես կլինի հայոց աշխարհի վերածննդին և հանդիսա շիրիմ կմտնի՝ ավետաբեր լուրը նախնիներին հաղորդելու։

«Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» (1848) բանաստեղծության մեջ Ալիշանը ամենամռայլ գույներով գծում է իրական հայրենիքի պատկերը՝ պատմական Հայաստանի ֆոնի վրա. Նա վերհիշում է անցյալ փառքը և ողբում անմխիթար իրականությունը. մի՞թե ա՞յս է երկիրը Հայկազունիների և Արշակունիների, Արամի և Տիգրանի, Տրդատի և Վարդանի, Սահակի և Մեսրոպի և քերթողահայր Խորենացու, որին և ուղղում է նա իր խոսքը։ Իրական Հայաստանում բանաստեղծը տեսնում է միայն «ավար, ավեր, գերություն, սուգ և չարիք...»։

Ողբա՛մ, ողբա՛մ, հայար ողբամ զքեզ, Հայաստան,
Երբեմըն բյուր փառաց տեղիք, հիմի դամբան։

Ալիշանը վերհիշում է հայոց պատմության ոչ միայն հերոսական դրվագները, այլև ողբերգական էջերը, երբ Հայաստանը դարձել էր շարունակական արշավանքների, ավերածության ու սրածության ասպարեզ.

Ո՞ր բռնավոր, ո՞ր տիրապետ, ո՞ր անօրեն
Չեկավ սրրով բաժին մ՚առնուլ Հայոց երկրեն...

Հայրենի գետերի նման հորդահոս՝ բանաստեղծը արցունք է թափում ավերված հայրենիքի, «շվար ու մոլար» ժողովրդի համար, որ

Ո՛չ ձեռնտու, ո՛չ առաջնորդ ունի, ո՛չ ճար...

Բանաստեղծը երանի է տալիս նրանց, ովքեր նահատակվեցին, բայց չտեսան Հայաստանի ավերումը, Անիի՝ գետին փռված «նշխարքները»։

Հայաստանի կործանման պատճառը, օտար նվաճողներից բացի, Ալիշանը համարում է ներքին երկպառակությունները։ Ներկա ողբերգական վիճակից նա այլ ելք չի տեսնում, քան «ողորմած աստծուն» ապավինելը. Հայաստանն ինքն է գլորվել խոր զնդանը և ինքն էլ մի օր ոտքի կկանգնի, երբ վերանան «կռիվն ու նախանձը» և իշխեն «սերն ու միաբանությունը»։

Սակայն, էականն այստեղ, ինչպես և Ալիշանի հայրենասիրական պոեզիայում՝ ամբողջությամբ վերցրած՝ նրա խոր, անդրդվելի հավատն է Հայաստանի քաղաքական վերածնության վերաբերյալ։

Ալիշանի դիրքորոշումը հայ ազգային-ազատագրական շարժման նկատմամբ պարզաբանելու տեսակետից խիստ ուշագրավ է «Մասիսու սարերն» բանաստեղծությունը, որ, ինչպես վերը նշվեց, գրված է 1849 թվականի մարտին, այն օրերին, երբ իտալացի հայրենասերները Վենետիկի փողոցներում հերոսական մարտեր էին մղում ավստրիական բռնակալության լուծը թոթափելու համար։

Բանաստեղծությունը կառուցված է Փոքր և Ավագ Մասիսների միջև տեղի ունեցող երկխոսության (դիալոգի) ձևով։ Փոքր Մասիսը թերահավատություն, տարակուսանք է հայտնում հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնությունը վերականգնելու նկատմամբ.

Թե՛ փառք, թե՛ պարծանք անցել են, գնացել,
Քո բարձրը գըլխեդ ի վայր են սահել...
Շատ փառք ունեանք, հիմիկ ի՞նչ ունինք,
Ավա՜ղ, լոկ ամոթ, միայն նախատինք...
Գան, գընան, դառնան ալիք գետերուն,
Չի դառնար որդվոց՝ պարծանք հայրերուն։

Փոքր Մասիսը ժամանակակից հայերի սրտերը մեռած, սառած է համարում. նա կարծում է, թե Հայոց արևն անցել է և «արևմուտքի լուսիկն է մնացել»։ Ավագ Մասիսը փարատում է Փոքրի տարակուսանքը. այնպիսի սառն կրծքեր կան, որ ունեն «սիրտ հրավառ». քարից կայծ է դուրս գալիս, իսկ կայծից՝ կայծակ. արևը մտած է, սակայն նա նոր լույսով կծագի առավոտյան. ամպն էլ կփարատվի, մրրիկն էլ կդադարի, Հայաստանի ճրագն էլ, որ մարած է թվում, կրկին կվառվի, որովհետև՝ «իսկի անփոփոխ չէ բախտն աշխարհի»։ Փոքր Մասիսի այն հարցին, թե՝ ե՞րբ պիտի վառվին սրտերը, ե՞րբ պիտի տեսնենք այդ երջանիկ օրերը, Ավագը պատասխանում է.

Երբ հետ դարերու առաջին անգամ
Ես, Ավագ Մասիս, ներսուց որոտամ
Կանչեմ ու շրնչեմ, արձակեմ ծուխ, բոց,
Սասանեցրնեմ զԱրարատն Հայոց,
Այս ըլնի նըշան Հայոց աշխարհին,
Թե գա ժամանակ, որ գան փառքն այլ հին...

Փոքր Մասիսն իր հերթին մյուս սարերին ազդարարում է, թե՝

Երբ շարժվի Ավագ, ցրնչե ծուխ ու բոց,
Նըշան է բարվո աշխարհին Հայոց։

Աւշագրավ են բանաստեղծության եզրափակիչ տողերը, որոնցով նահապետը շարժման է կոչում Ավագ Մասիսին և հայ երիտասարդությանը.

Շարժի՛ր, հա շարժի՛ր Ավագըդ Մասիս,
Արժան պարծանաց Հայոց աշխարհիս.
Շրնչե՛, հա շրնչե՛ ծըխիկ ծիրանի,
Որ քո մանկըտյացըդ նըշան ըլնի...
Ահա շարժեցավ Ավագըն Մասիս...
Ահա շարժեցան դաշտք Արարատա,
Դուք այլ շարժեցե՛ք, մանկըտիք Հայկա...

Մասիսի հրաբխային ժայթքման բանաստեղծական պատկերի մեջ Ալիշանն, անշուշտ, դրել է ապստամբության, ազատագրական պայքարի գաղափարը, որ, ինչ խոսք, իտալական ազգային ազատագրական շարժման անմիջական ազդեցության արգասիքն էր։ Այստեղ արտահայտված է բանաստեղծի հավատը ժողովրդի ուժերի նկատմամբ, որոնք թեև թմրած են, բայց մի օր դուրս են հորդելու՝ ինչպես Մասիսի խորքում թաքնված հրաբխային կրակը։ Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ նույնիսկ այս բանաստեղծության մեջ «աբեղայական սևաթույր վերարկուն» իրեն զգալ է տվել։ Ավագ Մասիսի միջոցով Ալիշանը Հայաստանին հասած դժբախտությունները բացատրում է նրանով, որ հայ ժողովուրդը մոռացել էր աստծուն։ Մասիսի շարժման հետ կապելով Հայաստանի վերանորոգությունը, բանաստեղծը միաժամանակ քանիցս խորհուրդ է տալիս «անդարտ ու խելոք» լինել, «սիրով համբերել» և այլն։ Այդուհանդերձ, իշխող է մարտական տրամադրությունը, հայրենիքի վերածնության հավատը։ Այդ առումով էլ «Մասիսու սարերն» բանաստեղծությունը պետք է գնահատել որպես XIX դարի առաջին կեսի ազգային-ազատագրական պոեզիայի ամենացայտուն և բնորոշ էջերից մեկը։



Ղ. Ալիշանի՝ Մ. էմինին գրած նամակի ֆոտո-պատճենը

3

Ալիշանի հայրենասիրական պոեզիան, գրեթե ամբողջությամբ, հյուսված է պատմական հենքի վրա։ Նրա համար պատմությունը ինքնանպատակ չէր. բանաստեղծորեն վերակենդանացնելով հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական դրվագները, նա ձգտում էր քաջ նախնիների արիության գործերով ոգեշնչել ժամանակակիցներին, նրանց մեջ արթնաց-

նել ներգործուն վերաբերմունք հայրենիքի քաղաքական ճակատագրի նկատմամբ, նրանց մղել սխրագործության՝ հանուն հայրենիքի ազատության։

Այս տեսակետից շատ ուշագրավ է մանավանդ «Պլպուլն Ավարայրի» պոեմը, որը իր հայրենասիրական պաթոսով հմայիչ ու խոր ազդեցություն է գործել ժամանակակիցների վրա և այդ հմայքը պահպանել է գրեթե ամբողջ XIX դարի ընթացքում։ Հայտնի է, որ Ռ. Պատկանյանը իր «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը գրել է «Պլպուլն Ավարայրի» խոր ներշնչմամբ։

Այս պոեմում եռ Ալիշանի նախասիրած ձևը դիմառնությունն է։ Դիմելով նախ լուսնին («Ո՞նց գաս իմ լուսնակ, հեզիկ ու հանդարտ...»), ապա Տղմուտին («Դու այլ, ո՛վ Տղմուտ, սրտում ու արյունոտ...») և սոխակին («Ո՜հ, դու բարեկամ այրած սրտերու...») բանաստեղծը խորհրդածում է Ավարայրի ճակատամարտի և նրա հերոսի մասին։ Սոխակը, որին նա դիմում է իր ոգեշունչ խոսքով, Եղիշեն է, Վարդանանց հերոսամարտի պատմիչն ու երգիչը, որին և նկատի է ունեցել բանաստեղծը իր պոեմին «Պլպուլն Ավարայրի» խորագիրը տալով։

Պոեմն սկսվում է Ավարայրի դաշտի նկարագրությամբ։ Բախտորոշ ճակատամարտի նախընթաց գիշերը խաղաղ է, ինչպես ծովը փոթորկից առաջ.

Կես գիշերն առել էր գիշերավար,
Լուսնակն ամպի տակ բացխըփիկ խաղայր,
Հովըն շըրշաուկ կախ թևոքն հանտաո
Օդոց և ծառոց հանգիստ կու կարդայր։
Ջավարայրի մութն ու կանաչ ծոցիկ
Ծայրեծայր ճըղքած Տըղմուտն հանդարտիկ,
Մետաքսանըման անձայն խատուտիկ
Կու թավլեցըներ հազար բյուր ալիք...
Ոչ մեկ հըրնչի ձայն, ոչ մեկ շարժի զեն,
Կարծես հաղթըվեր ամենքն ի քընեն...

Հայոց և պարսից բանակները բանաստեղծը պատկերել է լույսի և ստվերի հակադրությամբ. առաջինը ողողված է լուսնի լույսով, երկրորդը խավարած՝ ամպի ստվերով. բանաստեղծական այս պատկերով Ալիշանը սիմվոլացրել է երկու իրարամերժ ուժերի՝ ազատության և բռնության հակամարտը, ընդգծելով Ավարայրի դաշտում հայ ժողովրդի մղած պայքարի առաջավոր, ազատագրական բնույթը։ Քնած հայ զինվորներին բանաստեղծը համեմատում է հանգստացող բազեների հետ, որոնց աշխույժ թևաբախումները վկայում են նրանց ուժն ու արիությունը։

Գիշերային այդ ընդհանուր խաղաղության մեջ արթուն է միայն մեկը, Վարդան Մամիկոնյանը, որ «ծայրախաչ նիզակը թևի տակն առած», գորովագութ մոր նման հսկում է իր զինվորների գիշերային հանգիստը և մտածում հաջորդ օրվա ճակատամարտի մասին։

Ավարայրի ճակատամարտը Ալիշանը նկարագրել է էպիկական-հերոսական փոխաբերություններով ու պատկերներով, ձգտելով բացա-

հայտել Վարդանանց պատերազմի դյուցազնական-հերոսական բնույթը։ Երկու թշնամական բանակների սովորական բախում չէ այդ, այլ սանձազերծված տարերքի մոլեգին թոհ ու բոհ։ Զինվորների ոտների դոփյունից թնդում է երկիրը, զենքերի շաչյունից փոթորկվում, որոտում է երկինքը.

Երթալով երթան ձայնքըն զորանան,
Շեշտակի շաչյունք լըսվին աղեղան,
Ահեղ կոփկոփյունք վահան ընդ վահան,
Նետք, նիզակք թափին անձրևի նըման.
Բլրաձև փըղաց ոտքերուն դարգափ
Աշտարակազարդ բըրգոք բերդակապ՝
Դաշտանց ու լերանց արկանեն սարսափ,
Երկիրն ի հիմանց տա պըորդ ու կափկափ...

Թշնամու գերազանց ուժերի դեմ արիաբար մարտնչող Վարդանի զինակիցներից Ալիշանը պատկերել է Գարեգին Սրվանձտյանի և նրա եղբայրների՝ Ռոստոմի ու Վռամի կերպարները։ Գարեգինը մինչև վերջին շունչը թշնամու առաջ տեղի չի տալիս.

Հազար խոցերով ի զրեհս սըրտին,
Դեռ չուզեր անխոց թողուլ թըշնամին.
Ջենքերըն կոտրած, մարմին կիսամեռ
Դեռ հուղարկավոր հետն ուզե շատեր.
Ընկած դիականց մեջ՝ խնդրե սուսեր,
Կարծես հետ մահուն ալ կըռվել ուզեր։

Գարեգինի, Ռոստոմի և Վռամի հետ Վարդանի վինակիցներից շատերն են դյուցազնաբար մարտնչում թշնամու դեմ՝ ճակատ-ճակատի. անհավասար մարտում նրանք ընկնում են, սակայն, ինչպես վայել է քաջերին, նրանցից ոչ ոք թշնամու հարվածը թիկունքից չի ընդունում։ Քաջերի կրծքերից բխած վարդագույն արյունը վկայում է նրանց արիության և հայրենասիրության գերազանց ուժի մասին.

Վասըն քո ընկան, աշխա՛րհ իմ հայոց,
Կըտրիճք աննըմանք վեհք հյուսիսայնոց.—
Ոչ ոք ի թիկանց լառ ըզհարված...
Վարդագույն արյունք սրտերնեն բխած՝
Ուժո և սիրո վըկայք անմոռաց...

Վարդանի կերպարի պատկերմանը նվիրված էջերում պոեմի ռոմանտիկական պաթոսը հասնում է իր բարձրակետին. այստեղ հիպերբոլիկ պատկերները հաջորդում են մեկը մյուսին։ Վարդանը հազարներով է տապալում, «կարկտահար» թափում պարսից զորքը. նա, բանաստեղծի պատկերմամբ, մերթ «մռնչում է վինչ ծով», մերթ, անտառում բռնկված հրդեհի նման, այրում, լափում է թշնամու բանակը.

Սև զրեհոք ի սեն հեծած նրիվար
Գայր զինչ սաստկորոտ ամպ մըրըրկավար.
Սուսերն ահագին զինչ կայծակ շողայր,
Քան զայն ահեղ՝ մահն իսկ ոչ երեար...

Անհուն հետևակք, զինչ չոր եղեգունք
Գետնակոխ արար ի ձիուն ոտկունք.
Ձիանք ու փղանք զինչ մայրիք բարձունք
Մեկմեկն առաջ թափին երագունք։
Աջ ու ձախ զարնեն, փռեն ու անցնեն,
Զանտառ զօրքերուն հանապազ փոխեն...

Վարդանի ամենակործան հարվածներից մազապուրծ պարսիկները իրենց ծանր պարտության բոթը հասցնում են Մուշկան զորավարին. վերջինս կատաղությունից գալարվում է թունավոր օձի նման և կծոտում մատները։ Նա հրամայում է Վարդանի դեմ հանել Մատյան գունդը։ Պարսից զորքը իր ամբողջ զորությամբ՝ հետիոտն ու հեծյալ և «լեռնեղեն» փղերով շրջապատել են Վարդանին։ Հայոց սպարապետն զգում է, որ մոտ է ահեղ ճակատամարտի օրհասական պահը. իր սակավաթիվ կտրիճներին համախմբած, նա շարունակում է դյուցազնամարտը։

Վարդանի հայրենասիրական սխրագործության ուժը արտահայտելու համար, բանաստեղծը դիմում է նոր, առավել հզոր հիպերբոլիկ պատկերների, փոխաբերությունների. անձնվեր հայրենասեր զորավարի զորությունը նա համեմատում է բնության ամենաահեղ տարերքի՝ հրաբուխի հետ.

...զինչ լեռ հրաբուխ ի սև ծոցեն խոր
Ըղսարսափ բնության հանե ընդ սև որկոր,
Բոցեղեն գետեր վազցընե հորդոր,
Քարինք կարկըտա յրնու ցպաշտ ու ձոր...

Ավարայրի ճակատամարտի նկարագրությունը, որ ամբողջովին տոգորված է հերոսական պաթոսով և դրամատիկ լարվածությամբ, ավարտվում է Վարդանի մահով։ Դյուցազնական հերոսի անկումը բանաստեղծը սիմվոլացրել է մայրամուտի պատկերով։ Մահից առաջ Վարդանը պատգամում է հավատարիմ մնալ նախնիների ավանդներին, և զինակիցներին հանձնելով իր վահանը, սուրն ու սաղավարտը, լռելյայն նրանց է հանձնում ազատագրական պայքարը շարունակելու և հաղթական վախճանին հասցնելու պատգամը։

Պոեմի երրորդ հատվածում նկարագրված է կրկին Ավարայրի դաշտի գիշերը, բայց այս անգամ ճակատամարտից հետո։ Ամպեղեն քողը բաց անելով, լուսնյակը լուսավորում է ռազմադաշտը, ուր, գիշերային անդորրության մեջ, լսվում են վիրավորների հառաչանքները։ Լուսնի լույսով ողողված ռազմադաշտում երևում է Ավարայրի «պլպուլը»՝ Եղիշեն, որ քաջերի դիակների մեջ որոնում է Վարդանին՝ իր մանկության ընկերոջը։ Մի պահ ընդմիջելով Ավարայրի դաշտի նկարագրությունը, Ալիշանը պատմում է Վարդանի և Եղիշեի մանկության և սրտակից ընկերության մասին։ Բնությունը նրանց օժտել էր տարբեր հակումներով. մեկի սաիրքն էր վեճն ու պատերազմը, մյուսինը՝ գիրքն ու անապատը. սակայն, երկուսն էլ՝ Վարդանն իր բազկի ուժով, Եղիշեն իր մտքի կորովով,

միմյանց լրացնելով, միևնույն վեհ նպատակին՝ հայրենիքին էին ծառայում։

Գեղեցիկ է ռազմադաշտի նկարագրությունը. հերոսականության պաթոսով է բանաստեղծը տոգորել պոեմի այդ էջերը։

Հերոսական ու վեհ է նաև Ավարայրի դաշտում ընկած Վարդանի նկարագրությունը.

Հանկարծ բրլրաձև դիականց դարեն
Փայլակ մի շողա, քան զայն, որ հերկնեն.
Երկայն լույս ցոլա ի զեն խաչազեն,
Մեկ թընդմամբ սըրտի հոն գա Եղիշեն...
Երից սևազրահ պարս զորավարաց
Վ՚նրա տարածված հանգչեր ոմըն քաջ,
Ըզձախն Լը ածել ի սըրտին դիմաց,
Աջն ուներ նիզակ մահվամբ ձանձրացած.
Ջրեհքըն պրղընձի ծակել են հազար,
Ի ծակուցն ի դուրս շող ծաթե պայծառ.
Ծոցին ու ձեռաց միջուկն արյուն վառ,
Գրնդաձև դիվվեր վարդի հավասար.
Ըզսևագանգուր մազն ի բաց շըրջե
Ի անսաղավարդ քաջին ճակատե...
Խելաց լինի, դողա Եղիշե,
Ըզմե՜ծն յուր Վարդան ի հոն ճանաչե։

Վարդանին պատկերելով երեք սևազրահ պարսից զորավարների վրա տարածված, նիզակը ձեռքին, Ալիշանը ցանկացել է ընդգծել Ավարայրի ճակատամարտի հերոսական բնույթը, Վարդանի և նրա զինակիցների անընկճելի, անպարտելի ոգին։ Վարդանի լեզուն լուռ է, բայց նա խոսում է իր ողջ էությամբ. նա սարսափ է ազդում թշնամիներին և ոգի ներշընչում յուրայիններին։ Իր կենդանության ժամանակ, երբ բազմիցս, փառքով վերադառնալով մարտադաշտից, հաղթության պսակն է բերել՝ զարդարելու հայրենի շիրիմներն ու մատուռները, նա երբեք այնքան վեհ ու գեղեցիկ չի երևացել, որքան այժմ՝ Ավարայրի դաշտում քաջի մահով անմահացած։ Իր մահով նա հաղթել է մահին։

Ալիշանի պոեմի հիմքում դրված է հայրենիքի ազատության և անկախության համար ընկած հերոսի անմահության գաղափարը.

Թե բյուր դարք անցնին՝ դու մնաս, Վարդա՛ն.

բացականչում է բանաստեղծը՝ Եղիշեի բերանով։ Եվ այդ լիովին համապատասխանում է Ավարայրի պլպուլի՝ նույն Եղիշեի «մահ իմացյալ անմահություն է» թևավոր խոսքի բուն իմաստին։

Կարևոր է նշել, որ Ալիշանն իր պոեմում որոշակիորեն ընդգծել է Վարդանանց պատերազմի ոչ թե կրոնական, այլ քաղաքական-ազատագրական բնույթը։

«Պլպուլն Ավարայրի» պոեմի գեղարվեստական առանձնահատկություններից մեկը լիրիզմն է, որով, գերազանցապես, պայմանավորված է Ալիշանի այս երկի ներգործուն ուժը, հմայքը։

Պոեմի նախերգանքն ամբողջությամբ լիրիկական մի զրույց է լուսնյակի, Տղմուտի և Ավարայրի «պլպուլի» հետ, ի դեմս որի, բանաստեղծը, ըստ նախնյաց ավանդության, տեսնում է Եղիշեի «հոգյակը»։

> Ո՜հ, դու բարեկամ այրած սրտերու,
> Խոսնակ գիշերո, հոգյակ վարդերու,
> Երգն պլպուլիկդ, երգն ի սարեդ,
> Ջանման քաջքն հայոց երգե հոգվույս հետ...

Բանաստեղծի ակտիվ ներկայությունն զգացվում է Ավարայրի ճակատամարտի բոլոր դրվագներում. լիրիկական զեղումներով նա, որպես ականատես վկա, հաճախ իր վերաբերմունքն է ցույց տալիս նկարագրվող դեպքերի նկատմամբ։

Երբ Գարեգին Սրվանձտյանին օգնության հասած նրա երկու եղբայրները՝ Ռոստոմն ու Վռամը նետահար ընկնում են, բանաստեղծը բացականչում է.

> Ո՜հ, սրտապատառ վրեժ տեսարան...

Կամ՝ քաջի մահով ռազմադաշտում ընկած կտրիճներին համեմատելով մանգաղով հնձված բողբոջների հետ, գրում է.

> Ո՞ր ծաղիկ չուզե փռվիլ ի մարգն այն,
> Ուր իշխանք ծաղկանց գետնատարած կան...

Եվ կամ՝ Ավարայրի հերոսի մահվանը նվիրված դրվագն ավարտում է «Լո՜ւռ կացեք... Վարդան կա հոս ի մրրափ» բառերով, շեշտելով պահի հանդիսավորությունն ու վեհությունը։

Լիրիկական զեղումները քիչ չեն նաև պոեմի երրորդ դրվագում, որ սկսվում և ավարտվում է «Ավարայրի պլպուլին»՝ Եղիշեին ուղղված խոսքով.

> Ո՞վ ես դու, որ գաս շեշտ ի Շավարշան,
> Թևոք թռչնորեն, ոտիվք փայլական...
>
> . . . .
>
> Կանչե՛, պլպուլիկ, կանչե՛ յԱւարայր,
> Որ Վարդան հայի յերկնուց այլ ի վայր,
> Հիշե զՀայաստան, ըզսիրելին վայր,
> Հայաստան հիշե զՎարդան յուր համայր։

Ալիշան-Նահապետին ոգեշնչել է հայ ժողովրդի պատմական անցյալի մի այլ հերոսական դրվագ ևս՝ Աշոտ-Երկաթի պայքարը արաբ նվաճողների դեմ («Աշոտ Երկաթ ի ծովուն Սևանա»)։

Պոեմն սկսվում է դառնաշունչ ձմռան նկարագրությամբ, որով բանաստեղծը խորհրդածում է արաբական արշավանքների և քաղաքական ներքին երկպառակությունների հետևանքով Հայաստանում ստեղծված ծանր կացությունը տասներորդ դարի առաջին քառորդում.

Ցուրտ-ցուրտ ձմեռունք բրդան արձակ հովերեն,
Սիպտակ կարվանք իջան լերանց կողերեն...
Սուգ էր պատել մեր գեղեցիկ աշխարհին,
Երբ զառնաշունչ հովին փրչեց օտարին...

Թշնամու «սևագունդ» զորքերի արշավանքը Հայաստանի վրա, Ալիշանը համեմատում է «խիտ մորեխի» և Սևանը ծածկող սև ամպերի հետ։ Ուշագրավ է ակնարկն այն մասին, որ հայրենիքին սպառնացող վտանգի պահին իշխանները քաշվում են իրենց ամրոցները, և ռամիկներն են, որ մնում են դիմագրավելու թշնամու վայրագ հորդաներին։ Սակայն այդ ակնարկը գեղարվեստորեն չի կոնկրետանում. պոեմի հերոսը Աշոտ Երկաթ Բագրատունի թագավորն է, որ իր յոթ տասնյակ մարտիկների հետ, տասը լաստանավերով Սևանի կղզուց անակնկալ հարձակվում է թշնամու վրա, խուճապի և պարտության մատնում նրան։

Պոեմը տոգորված է հայրենասիրական պաթոսով, մարտական, առույգ տրամադրությամբ և լավատեսությամբ՝ հայ ժողովրդի ապագայի նկատմամբ.

Թո՛ղ աշխարհին լուր լինի,
Որ քանի եմք կենդանի՝
Հայաստան ո՛չ տի մեռնի...

Այդ լավատեսությունը, այդ անդրդվելի հավատը Հայաստանի քաղաքական վերածնության վերաբերյալ Ալիշանը վերարծարծում է նաև հետագայում, 60-ական թվականներին, համաեվրոպական ազատագրական շարժման շրջանում, ընդհանուր ոգևորության մթնոլորտում («Հայ հանճար», 1863)։

Ժամանակակից Հայաստանի քաղաքական վիճակը նա բնութագրում է որպես «քուն թանձր և երկայն, բայց ո՛չ մահ անհույս».

Մեռյալ չեն, ուրեմն, հայ հայրենիք մեր.
Հայաստան անկեր,
Բայց ո՛չ է անցեր...

«Հայ հանճար» բանաստեղծությունը հետաքրքրական է նաև այն տեսակետից, որ հայ ժողովրդի ազատագրությունը Ալիշանն արտաքին, դիվանագիտական միջամտության խնդիր չի համարում.

Ո՞վ բանա զՀայկա աշխույժ աչուկներ,
Ո՞հ, ո՞վ կանգնե զքեզ, հանճար Հայրենի...

Այս հարցումին բանաստեղծը տալիս է ուղղակի և աներկմիտ պատասխան.—Հայաստանն ինքն է լինելու իրեն զորավիգ. հույսն ինքն իր վրա է դնելու, ապավինելու է իր պոտենցիալ ուժերին.

Ե՛լ, կանգնե զու զքեզ, զավակ ես երկնի,
Լույս ծագե մրթից, ե՛լ, կանգնիր ի վեր.
Հերի՛ք քրնացեր,
Գիշերդ է անցեր...

Չի կարելի չնկատել, որ վերջին երկտողով բանաստեղծն ակնարկում է 60-ական թվականների իրադրությունը, երբ հայ հասարակական-քաղաքական մտքի առաջավոր ներկայացուցիչները այն հույսն էին փայփայում, թե հայ ժողովրդի համար ևս եկել է քաղաքական զարթոնքի ու վերածնության՝ ազգային ազատագրության ցանկալի պահը։ Ալիշանի այդ շրջանի տրամադրությունների մեջ չի կարելի ժխտել նաև Զեյթունի ապստամբության հեռավոր արձագանքը։

4

Վանական միջավայրը իր անխուսափելի կնիքն է դրել Ալիշանի աշխարհայացքի վրա։ Եկեղեցական սրբերին և կրոնական տոներին նվիրված բազմաթիվ գրաբար բանաստեղծություններից բացի, նա գրել է ազգային-եկեղեցական մի լեգենդի սյուժեով «Շուշանն Շավարշանա» պոեմը, որի հերոսուհին՝ Սանատրուկ թագավորի դուստրը, մերժելով աշխարհային բոլոր վայելքները, ընդունում է քրիստոնեություն և Թադեոս առաքյալի հետ նահատակվում է հարազատ հոր ձեռքով։ Դա վանական բանաստեղծի կրոնական-միստիկ զգացումների գրական արտահայտությունն է, ոգեշնչված մի ներբող քրիստոնեական հավատի համար նահատակված և եկեղեցական սրբերի շարքը դասված կույսի մասին։

Եկե՛ք կուսանք, ժողվեցեք
Վարդն ու շուշան կուգեցեք,
Դրեք դալար զայն մարմին
Թադեի հետ ի շիրմին։
Սանդո՛ւխտ, հայոց կույս քնքուշ
Հանգչե ի հողս այս անույշ.
Կուսանք հայոց քեզ շուշան
Բերեն ի դաշտ Շավարշան։

Ալիշանի հայրենասիրական բանաստեղծություններից մի քանիսը զերծ չեն ազգային սահմանափակության և սնապարծության տարրերից։ Բանաստեղծը լրջորեն հավատում է, որ Հայաստանը եղել է մարդկության օրրանը, «երկիր դրախտավայրը», որ երկրագնդի վրա առաջին մարդիկ՝ Ադամն ու Եվան հայեր են եղել, որ հայ ազգը ամենակատարյալ, «աստվածընտիր» ազգն է։ Ալիշանի պատմահայեցողությունն ունի շեշտված կրոնա-իդեալիստական բնույթ. Նրա համոզումով մարդկության և ժողովուրդների ճակատագիրը նախասահմանում է աստված, և «աստվածահաճո» անհատները՝ հերոսներն են վճռական դեր կատարում պատմության մեջ։ Հայ ժողովուրդը նա դիտում է իբրև մի անբաժանելի ցեղային միասնություն, առանց սոցիալական ներքին հակասությունների ու պայքարի։ Երգելով հայ ժողովրդի քաղաքական ազատագրությունը օտարերկրյա նվաճողների լծից, Ալիշանը, որպես իդեալ, փայփայում էր ֆեոդալական-միապետական Հայաստանի գաղափարը։ Ժամանակակիցների վկայությամբ, հայրենակարոտ բանաստեղծը իր երկարամյա կյանքի

ընթացքում Հայաստան չի այցելել սոսկ այն պատճառով, որպեսզի «այսօրվան ողբալի, քայքայված, մոխրապատ Հայաստանի իրականության բիրտ բախումովը» չքանդվեր «հին, շքեղ, ազատ Հայաստանի» տեսիլը, որ խանդաղատագին սիրով կրում էր նա իր հոգում[1]։

Ավատական-միապետական Հայաստանի վերականգնման գաղափարը, ի՛նչ խոսք, տարընթաց էր ժամանակի առաջավոր գործիչների քաղաքական ձգտումներին, սակայն, Ալիշանի հայրենասիրական պոեզիայի ներգործությունն ընդհանուր առմամբ դրական էր, քանի որ այն նպաստում էր ազգային ինքնագիտակցության զարթոնքին, ազգային-ազատագրական շարժման վերելքին։

Ալիշանի հայրենասիրական քնարը երգել է հայ ժողովրդի ազատագրական պայքարն ընդդեմ օտար նվաճողների, հանուն հայրենիքի ազատության։ «Մեր ազգային զենքը,— գրում է Ալիշանը,— պաշտպանական է և ոչ թշնամական»։

Ալիշանի հայրենասիրությունն իր էությամբ, իր որակով առողջ է, առաջադիմական և իր մեջ կրում է 40—50-ական թվականների ազգային զարթոնքի և լուսավորական, ազատագրական շարժման գաղափարները։ Ահա ինչո՛ւ սխալ և անհիմն պետք է համարել այն կարծիքը, թե Ալիշանի պոեզիան, հորինված լինելով վանքի չորս պատերի մեջ, ամբողջովին արհեստական է, ջերմոցային և բնավ առնչություն չունի կենդանի իրականության հետ։ «Նահապետի երգերը», թեկուզ և հյուսված վանքի չորս պատերի մեջ, թեկուզ և նվիրված պատմական անցյալին, ժամանակի հայ իրականության կենդանի արձագանքն են. Նրանք կյանքի են կոչվել իրականության հրամայական պահանջով։ Որ այդ այդպես է, դրա լավագույն գրավականը նրանց (Ալիշանի հայրենասիրական երգերի) լայն տարածումն է 50—60-ական թվականներին, ինչպես և հետագա տասնամյակներին։

Ալիշանի պոեզիան, մասնավորապես «Նահապետի երգերը», իրենց որոշակի տեղն ունեն XIX դարի հայ ազգային-ազատագրական պայքարի գրականության մեջ։ «Ալիշանի գործը...,—գրում է Ա. Չոպանյանը,—անուղղակի կերպով, բայց շատ հզորապես նպաստած է հայ ազատագրական պայքարի շարժման ծննդյանն ու աճմանը արդի հայ մտքին մեջ, որովհետև ժողովուրդ մը, երբ գիտակցությունը կունենա անցյալին մեջ մեծ ու ազատ եղած ըլլալուն, չի կրնար երկարօրեն հանդուրժել ստրկական անարգ կացության մը մեջ կապկպված մնալու, և կշտապե ամեն ցոհողություն թափել՝ այդ գեղեցիկ անցյալը դրականապես վերանորոգելու համար։ Ալիշանի գործը սթափեցնող, աղնվացնող, ներշնչող մեծ ձայնն է եղած, որ պատրաստած և դյուրացուցած է Րաֆֆիի գործը»[2]։

---

1 Ա. Չոպանյան. Դեմքեր, 1924, էջ 89։

2 Նույն տեղում, էջ 100։

Բանասեր-հայագետ Ալիշանի գիտական բազմահատոր ուսումնասիրությունների գաղափարական բովանդակությունը ևս հայրենասիրությունն է։ Իր հայագիտական գործունեության մեջ նրան մշտապես առաջնորդել է այն գաղափարը, որ «աղեկ քաղաքացի ըլլալու համար պետք է քննել, սորվիլ զհայրենիս... Քննեցեք և սորվեցեք, ուրեմն, այդ ազնիվ և բարեբեր Հայաստանը»։ Եվ ինքը, բանաստեղծ-բանասեր Ալիշանը, քննել, ուսումնասիրել է հայ ժողովրդի բազմադարյան, հարուստ պատմությունը և ստեղծել է հայագիտական մի ամբողջ գրադարան, որպեսզի նրանով դաստիարակվեն, պատրաստվեն «աղեկ քաղաքացիներ» հայրենիքի համար։

Խոսելով ազգային-պատմական հուշարձանների մասին, Ալիշանը նկատում է. «Ո՜հ, երբ այսպիսի հիշատակաց վրա շարժի գրիչն, չի կրնար գոնե կայծեր չցատքեցնել — պատմիչն հանկարծ վիպասան կըլլա, բանագատն՝ բանաստեղծ...»։

Եվ իրոք. հայրենասիրական պաթոսը պատմիչ ու բանագետ Ալիշանին երբեմն, հատկապես «Հուշիկներում» («Յուշիկք հայրենեաց հայոց») դարձնում է վիպասան ու բանաստեղծ։ Հստակ, պատկերավոր լեզվի ու ոճի,

ՅՈՒՇԻԿՔ

ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ

Ի Հ. ՂԵՒՈՆԴԷ Մ. ԱԼԻՇԱՆ

Վ. ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՀԱՏՈՐ Ա.

Ի Ս. ՂԱԶԱՐ ՎԷՆԷՏԿՈՅ

1869

Ղ. Ալիշանի «Հուշիկք հայրենյաց հայոց» գրքի անվանաթերթը

մտերիմ, ջերմ պատմելաձևի շնորհիվ ընթերցողի երևակայության առաջ կենդանի կանգնում են Վարդան Մամիկոնյանի, նրա դուստր Շուշանիկի, Լևոն վեցերորդի, Խուլ Խաչիկի և շատ ուրիշների պատմագեղարվեստական կերպարները։

Անտարակույս, Ալիշանի պատմագիտական-բանասիրական երկերն ևս որոշակիորեն կրում են վանական միջավայրի, կրոնա-իդեալիստական աշխարհայացքի դրոշմը։ Սակայն էականը, արժեքավորը հայրենասիրական ազնիվ պաթոսն է, որով տոգորված են նրա երկերը և այն հրսկայական փաստական նյութը, որ պարունակում են նրանք Հայաստանի քաղաքական-մշակութային կյանքի, բուսական-կենդանական աշխարհի, կենցաղի, վարքերի ու սովորությունների, կրոնի ու հավատալիքների վե-

բաբերյալ։ Ալիշանի հայագիտական գրականությունը իրավամբ համարվում է պատմական Հայաստանի հանրագիտարանը։

Ինչպես բանաստեղծության, այնպես և գիտության համար Ալիշանը ճանապարհ հարթեց դեպի ժողովուրդը։ Թե՛ «Նվագների» և թե՛ պատմաբանասիրական հետազոտությունների մեջ Ալիշանը հետապնդում էր մի նպատակ, այն է՝ «բոլոր այդ բաները ընդլային գեղեցիկ և բռնկցնեին հրդեհը հայրենասիրության»։ «Ալիշան բանաստեղծ էր, որ գիտություն կըներ,— գրում է Դ. Վարուժանը։— Այս կնշանակե, թե գիտությունը կժողովրդականացներ։ Իր թանգարանին, իր մագաղաթներու մատենադարանին և առհասարակ հայրենի բոլոր ավերակներուն մենությանը վերև կախված էր իր հսկայական տավիղը, և ահա Խորենացիին խոսքը երգի կփոխվեր, Եղիշեի աղաղակը՝ դյուցազներգության, Եզնիկի մտածումը՝ երևակայության, Շնորհալիի աղոթքը՝ օրհներգության, ավերակներու տրտմությունը՝ արցունքի և անցյալի նշույլը՝ հրդեհի»[1]։


ՇԻՐԱԿ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՅՑ

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

Ղ. Ալիշանի «Շիրակ» աշխատության անվանաթերթը

Ալիշանի պատմական ծառայությունն այն է, որ նա Աբովյանից անմիջապես հետո, գրեթե նրա հետ միաժամանակ, գիտակցեց գրականությունը ժողովրդին մոտեցնելու, ժողովրդին հասկանալի լեզվով գրելու հրամայական անհրաժեշտությունը։ Եվ նա այդ գիտակցությանը հասավ ժողովրդից, հայկական կենդանի իրականությունից հեռու գտնվելով, սակայն, խորապես ըմբռնելով ժամանակի պահանջը։ Եվ եթե Ալիշանի լեզուն (մեր խոսքը «Նահապետի երգերի» մասին է) արհեստականության, ջերմոցայնության զգալի դրոշմ է կրում, ապա դա նրա հանցանքը չէ, այլ դժբախտությունը։ Զրկված լինելով ժողովրդական կենդանի լեզվից սնվելու հնարավորությունից, նա օգտվել է միջնադարյան ժողովրդական երգերի բառապաշարից, ինչ որ կարելի էր գտնել իր հայտնաբերած և հետազոտած գրչագիր մատյաններում։ Ալիշանը պոեզիայի մեջ բերել ժողովրդական լեզվի այնպիսի բառեր ու ձևեր (աշվի, մտիկ անել, ճխալ, ցուխտ, նախշուն, հոտաղ, համ տալ, մանումանի դալ, դարտակ, ձենել,

[1] Դ. Վարուժան, Երկեր, Երևան, 1946, էջ 356։

խորոտիկ, սիրուն, թախտ և այլն), որ անհամատեղելի էր կլասիցիզմի պոետիկայի սրբագործված կանոններին։ Ի՞նչ խոսք, Ալիշանի աշխարհաբարը դեռ թերի էր, անկատար, ինչպես Նալբանդյանն է նկատել՝ «շատ հաղթահարված հին լեզվից (գրաբարից—Ա. Ի.), շատ անգամ մեջ խառնըված այնպիսի տեղական բառեր, որ շատ սակավ էին գործ ածվում»։ Այդ ճիշտ է, անշուշտ։ Սակայն, «հին լեզվից հարթահարված» աշխարհաբարով էլ Ալիշանը կարողացավ կոտրել կլասիցիզմի սառույցը, ժողովրդի հետ խոսել և իր ստեղծագործություններով ջերմացնել «շատ սրտեր Նահապետի անունի վերա» (Նալբանդյան)։

Ալիշանի պոեզիայի («Նահապետի երգեր») հմայքը պայմանավորված էր ոչ միայն նրա (այդ պոեզիայի) գաղափարական բովանդակությամբ, հայրենասիրական պաթոսով, այլև զգացմունքների խորությամբ, անմիջականությամբ, պատկերավորությամբ, վառ երևակայությամբ, բովանդակությանը համարեցրած տաղաչափական ձևերի բազմազանությամբ։ Ալիշանին խորթ է բռնահանգը. բանաստեղծության իմաստը նա չի զոհաբերում հանգին, ինչ որ բնորոշ է մխիթարյան կլասիցիստներին։

Ալիշանի բանաստեղծական ոճի ձևավորման գործում զգալի դեր են խաղացել ինչպես միջնադարյան հայ տաղերգուների ավանդները, այնպես էլ ժողովրդական երգերը։ Ինչ վերաբերում է եվրոպական գրականությանը, ապա պետք է ասել, որ եթե կրոնական գրաբար տաղերի վրա նկատելի է Լամարտինի ու Շատոբրիանի ազդեցությունը, ապա հայրենասիրական երգերում Ալիշանն, անտարակույս, ներշնչված է Հյուգոյից և մանավանդ Բայրոնից, որին բարձր է գնահատել և թարգմանել մի հատված նրա «Չայլդ Հարոլդից»։ Հայ բանաստեղծին հարազատ է եղել նաև բռնության դեմ ըմբոստացող, ազատասեր Շիլլերը, որի «Զանգակը» նա թարգմանել և տպագրել է «Բազմավեպում»։

XIX դարի հայ հոգևոր մշակույթի պատմության մեջ խոշոր ու նշանակալից է Ալիշանի դերը, որը Նալբանդյանից հետո, վկայել են մեր կլասիկ գրականության այնպիսի ականավոր ներկայացուցիչները, ինչպիսիք են՝ Աղայանը, Թումանյանը, Իսահակյանը, Վարուժանը։

Ալիշանով սկզբնավորվեց և նշանավորվեց հայ նոր պոեզիան, որն իր զարգացման հետագա, ավելի բարձր աստիճանին պիտի հասներ Պեշիկթաշլյանի, Դուրյանի և Պատկանյանի ստեղծագործություններում։

ԳԼՈՒԽ ՈՒԹՆԵՐՈՐԴ

ԳԱԲՐԻԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

1

Գաբրիել Պատկանյանը՝ Սերովբե վարժապետի որդին և Ռափայել Պատկանյանի հայրը, ծնվել է 1802 թվականին Թիֆլիսում։ Սերովբե վարժապետը, ժամանակի գիտուն և զարգացած մարդկանցից մեկը, շրջագայել էր Եվրոպա, Ավստրիա, Իտալիա։ Նա տիրապետում էր մի շարք լեզուների, հմուտ էր աստվածաբանության, տիեզերագիտության մեջ, զբաղվում էր գրչությամբ, գրում բանաստեղծություններ։ 1805 թվականին Սերովբե վարժապետը իր ընտանիքով Թիֆլիսից տեղափոխվում է Աստրախան, ուր նրա ջանքերով բացվում է Աղաբաբյան դպրոցը։ Փոքրիկ Գաբրիելը վեց տարեկան հասակում հաճախում է այդ դպրոցը։ Տասը տարեկան հասակում նա սկսում է ինքնուրույն բանաստեղծություններ և շարադրություններ գրել։

1827 թվականին Գ. Պատկանյանը հոր հետ միասին տեղափոխվում է Նոր-Նախիջևան, ուր զբաղվում է ուսուցչությամբ։ 1832 թվականին Ներսես արքեպիսկոպոսը նրան հրավիրում է Բեսարաբիա, կոնսիստորիայում աշխատելու։ Մեկ և կես տարի Քիշինևում մնալուց հետո նա վերադառնում է Նոր Նախիջևան, ուր իր եղբոր՝ Պետրոս Պատկանյանի հետ բացում է մասնավոր դպրոց և պանսիոն։ Այստեղ 1837—1845 թվականներին նրան աշակերտում են Միքայել Նալբանդյանը և Ռափայել Պատկանյանը։ 1846 թվականին տեղի աղայական դասի դրդմամբ Գ. Պատկանյանին հեռացնում են Նոր Նախիջևանից և նշանակում Թիֆլիսի Նորաշեն եկեղեցու վանահայր։ 1848 թվականի սկզբներին Գ. Պատկանյանը Թիֆլիսում իր եղբոր՝ Միքայել Պատկանյանի հետ գաղտնի, քաղաքի մի հետամնաց թաղամասում, բացում է մասնավոր դպրոց և միաժամանակ զբաղվում տպարան կազմակերպելու իր վաղատենչ գործով։ 1850 թվականին նրան հաջողվում է հրատարակել «Արարատ» շաբաթաթերթը, որի գոյությունը տևում է մեկ և կես տարի։ 1852 թվականին Գ. Պատկանյանին իրավունք է տրվում վերադառնալու Նոր Նախիջևան։ Այստեղ նա ընկնում է մի նոր որոգայթի մեջ։ Պատկանյանին մեղադրում են քաղաքագլուխ աղա Հարություն Խալիպյանի դեմ մահափորձ կազմակերպե-

լու գործում և ձերբակալում։ Ռոստովի բանտում նա մնում է 1853-ից մինչև 1860 թվականը։ Ազատվելով բանտից, Գ. Պատկանյանը մնում է ոստիկանության հսկողության տակ։ Սակայն նրա անբավական հակառակորդները բողոքում են կայսեր առաջ և կազմակերպում նրա աքսորը հեռավոր հյուսիս՝ Վյատկա, ապա Կաստրոմա։



Գաբրիել Պատկանյան

Բարեկամների և ժամանակի նշանավոր գործիչների միջնորդությամբ, 1863 թվականի մարտին Գ. Պատկանյանը ազատվում է աքսորից և թույլտվություն ստանում բնակվելու Պետերբուրգում։ Այստեղ նա շարունակում է զբաղվել ուսուցչությամբ (Պետերբուրգի զինվորական դպրոցում)։ Ազատ ժամերին նա մեծ մասամբ սրբագրում է բանտում և աքսորում գրած իր երկերը, թարգմանությունները, որոնք հսկայական բանակություն էին կազմում։

Գ. Պատկանյանը մահացել է 1889 թվականի ապրիլի 14-ին, 87 տարեկան հասակում և թաղվել Սմոլինսկի գերեզմանատանը (Պետերբուրգ)։

2

Գաբրիել Պատկանյանի գրական-հասարակական գործունեությունը սկիզբ է առնում XIX դարի առաջին տասնամյակներից և հասնում մինչև 1880-ական թվականները։ Սակայն նրա գործունեության բեղմնավոր շրջանը ընդգրկում է 1830—1860 թվականները, մի ժամանակաշրջան, երբ ձևավորվում ու ծաղկում էր հայ նոր գրականությունն ու լեզուն, երբ ազգային լուսավորության համար բացվում էին նոր և լայն հեռանկարներ։

Գ. Պատկանյանի հասարակական գործունեության ամենաեռանդուն շրջանը նախիջևանյան և թիֆլիսյան տարիներն են, երբ նա, դեռևս Աստրախանում գիտուն վարժապետի համբավ ստացած, 1827 թվականին տեղափոխվում է Նոր Նախիջևան։ Այդ տարիներին Նոր Նախիջևանի հասարակության ներսում արդեն սրվում էին սոցիալական հակասությունները։ Մի խումբ հայ կալվածատերեր իրենց ձեռքն էին կենտրոնացրել քաղաքի և նրա շրջակա գյուղերի հողային տարածությունների զգալի մասը։ Գ. Պատկանյանը խոր վրդովմունքով է նայում այդ բոլորին։ Իր մանկավարժական աշխատանքի հետ միասին նրան մտահոգում էր Նոր Նախիջևանի հասարակության կենսական շահերի պաշտպանությունը։

Նա վրաղվում է աղքատների գանձանակի ստեղծման գործով, եկեղեցական գումարներով նախապես հաց գնելով լցնում է եկեղեցու շտեմարանները և գարնանը բաժանում քաղաքի չքավոր խավերին՝ փրկելով նրանց 1833 թվականի սովից։ Գ. Պատկանյանի ջանքերով հասարակությունը ազատվում է անօրեն կերպով գանձվող ամենածանր հարկերից մեկից՝ գլխահարկից։

Գ. Պատկանյանին վրդովեցնում է այն հանգամանքը, որ մեծատունները տնտեսապես օրըստօրե ուռճանում են, իսկ աշխատավորը զրկվում է իր մի կտոր հողաբաժնից։ «...Մըկըր աղա և Խալիպյանն կասեին, թե տեր Գաբրիելն կըպչփորե հասարակության սիրտն, որ նոքա չերթան քաղաքի շրջակա քառասուն, հիսուն ագարակաց մեջ երկիրն չմշակեն։ Մինչ յուրաքանչյուր տարի անվախճան կարգ ու կռիվ կլիներ ագարակաց կալվածատիրաց և քաղաքի հողագործաց մեջ, որ քաղաքի հողագործք, քաղաքի լայնածավալ հողեն վիճակ կըխնդրեին և չէին ստանար, իսկ ագարակատյարք քաղաքի հողաբաժինքն կամ խարդավանոք, կամ բռնությամբ տիրապետելով, կվարեին, կցանեին, խոտն կհնձեին, ցախն կառնեին և քաղաքի մեջ այրի կանայք և որբք մի կով դարմանելո համար չէին կարողանա մի սայլ խոտ ստանալ»[1]։

Ահա թե ինչու Գ. Պատկանյանը գնալով ավելի քան վտանգավոր է դառնում քաղաքային իշխանության աչքին։ Գ. Պատկանյանի կատարած ամեն մի գործի մասին խալիբյանականները տվյալներ էին հաղորդում Ներսես Աշտարակեցուն։

Չանցած որոշ ժամանակ, Գ. Պատկանյանին հեռացնում են Նախիջևանից, իսկ եկեղեցական գումարների տերն ու տնօրենը Ներսեսի հատուկ կոնդակով դառնում է Հ. Խալիպյանը։ Խալիպյանականներին թվում էր, որ անհանգիստ վարժապետի հեռացումով կմեղմանան ներքին հակասությունները։ Սակայն Գ. Պատկանյանի հեռացման պատմությունը սկիզբ դարձավ նրա աշակերտի՝ Մ. Նալբանդյանի պայքարի համար. դրանով սկսվեց ապագա գործիչի մենամարտը Նոր Նախիջևանի հետադեմ ուժերի դեմ։

Բնորոշ է, որ խալիպյանականներն իրենց պայքարի ընթացքում փնտրում են ընդհանուր կետեր Գ. Պատկանյանին և Մ. Նալբանդյանին մեղադրելու համար։ Խալիպյանը մի կողմից որոգայթ էր լարում Պատկանյանին բանտ նետելու համար, մյուս կողմից լրտեսում էր Նալբանդյանին՝ ոստիկանության հսկողությամբ Էջմիածին ուղարկելու նպատակով։ Այս ճանապարհով խալիպյանականները ձգտում էին հասնել Պատկանյան բանակի ուժերի ջլատմանը, նրա և Նալբանդյանի՝ ժողովրդի մեջ ունեցած ազդեցության վերացմանը։ Հենց այս բանն էր հետապնդում նաև նրանց ամենաոխերիմ թշնամիներից մեկը՝ Մկրտիչ Եկանյանը, իր լրտեսական ծառայությամբ։ Վերջինս կաթողիկոսին հայտնում է, որ Խալիպյանի դեմ Գաբրիել Պատկանյանի կողմից կազմակերպված մա-

---

[1] Մատենադարան, ձեռ. № 8816, էջ 211բ—212 ա։

հափործի մեջ անպատճառ մեղադիր պիտի ճանաչել նաև Մ. Նալբանդյանին[1]։

Այսպիսով, Գ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի պայքարը Նոր Նախիջևանյան տարիներին, ուղղված է եղել միևնույն թշնամու, ժամանակակից հայ ազգային լուսավորական շարժման հակառակորդ ուժերի ու նրանց համախոհների դեմ։

Սակայն, պատմական ճշմարտությունը թելադրում է ասել, որ հենց այդ տարիներին Գ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի կողմից տարվող ընդհանուր պայքարը բխում էր գաղափարական տարբեր դիրքերից։ Գ. Պատկանյանը չէր հասնում դեմոկրատ-լուսավորչի արմատական հայացքների ըմբռնմանը։ Նրա կարծիքով Նալբանդյանը ընկավ մոլորությունների մեջ, շեղվեց ճիշտ ճանապարհից և հենց այդ պատճառով էլ «եգիտ զարհուրելի մահ տարաժամ»։ «Ցավալի էր հույժ,—գրում է Պատկանյանը,—զի այսպիսի արդյունավոր զավակ պակասեցավ ի Նախիջևանա և կորավ ի ծոցո բովանդակ ազգին, որո շահույն էր անձնատուր և կարեր մեծամեծ օգուտ բերել նմա եթե միայն բարին ի կիր առնույր զհանճար յուր...»։ Վերջին խոսքով Գ. Պատկանյանն ակնարկում է Մ. Նալբանդյանի հակացարական, ռևոլյուցիոն գործունեությունը, որին Գ. Պատկանյանը երբեք չէր համակրում։ Գ. Պատկանյանը պարզապես ցավ է հայտնում, որ Նալբանդյանը իր ցանկացած ձևով չշարունակեց պայքարը։ Ուսուցչի նպատակն էր, որ Նալբանդյանը լիներ սոսկ լուսավորիչ և ոչ թե իշխանության դեմ զենք բարձրացնող քաղաքական մարտիկ։

3

Գ. Պատկանյանը կարևոր դեր է կատարել XIX դարի առաջին կեսի հայ մանկավարժության պատմության մեջ։ Նա պատանեկական տարիներից մինչև 80-ամյա հասակը զբաղվել է ուսուցչությամբ։ Անընդհատ պայքարի ու խռովությունների մեջ, աղայական և հոգևոր դասերի հետամնաց ուժերի հալածանքներին ենթակա, նյութական, տնտեսական ծանր պայմաններում, նա համառությամբ առաջ է տարել հայ մանուկների կրթության ու դաստիարակության իր սիրած գործը։ «Վարժապետությունը յուր տարրն է,—գրում է նա իր մասին,—աշակերտաց մեջ օրրստօրե կմատաղանայր և կմանկանայր, մինչ ընդհակառակն, հոգևոր կառավարության դրության մեջ կկորցներ ամենայն եռանդն ու աշխույժն։ Բայց ի՞նչ պիտի աներ...,—շարունակում է նա,—տեր Գաբրիելն կրկին մտավ հոգևոր կառավարություն, կամ լավ ես՝ անբան ոչխարն գնաց սպանդանոց[2]։

Իր մանկավարժական հայացքներով Գ. Պատկանյանը պայքարում է խալիֆայական, պահպանողական դպրոցի դեմ և մանկավարժության

---

1 *Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 169, վավ. 118։*

2 *Մատենադարան, ձեռագիր 8816, էջ 94 բ։*

մեջ պաշտպանում է այն նորը, որը նույն ժամանակամիջոցում սիստեմի վերածեց և ամբողջացրեց մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը։

Գ. Պատկանյանը աշակերտների առաջադիմության, նրանց խոր և գործնական գիտելիքներ տալու նպատակով փնտրում է նոր եղանակներ ու միջոցներ։ Երբեմն պարապմունքներն անց է կացնում դրսում՝ բնության մեջ, երբեմն հարց ու պատասխանի ձևով, երբեմն դասավանդելիք նյութը բաժանում է դերերի՝ որպեսզի աշակերտները թատերախաղով ներկայացնեն յուրացրած նյութը և այլն։

Գ. Պատկանյանի մանկավարժական գործունեության մեջ ամենագնահատելին և նորը այն է, որ նա դեռ 1820-ական թվականների վերջերին դասավանդումը վարում էր աշխարհաբար լեզվով, մինչև որ աշակերտները կհասնեին գրաբարը յուրացնելու աստիճանին։ Ավելին, Հ. Ալամդարյանի հետ ունեցած մի զրույցի ժամանակ Գ. Պատկանյանը պաշտպանում է աշխարհաբար լեզվով հայոց պատմության և աշխարհագրության դասագրքեր կազմելու անհրաժեշտությունը։ Նա առաջարկում է Մ. Խորենացու «Հայոց պատմությունը» համառոտել և թարգմանել աշխարհաբար։

Գ. Պատկանյանը որոշակի տեղ ունի նաև հայ մամուլի պատմության մեջ։ Նրա խմբագրած «Արարատը» և «Հյուսիսը» զգալի դեր են կատարել 1850—1860-ական թվականների հայ աշխարհաբար լեզվի ու գրականության զարգացման գործում։ Հատկապես «Արարատի» հրատարակությունը (1850—1851) գնահատելի մի երևույթ է և՛ արևելահայ մամուլի, և՛ հայ լրագրության պատմության համար։ «Արարատում» են առաջին անգամ տպագրվում Միքայել Նալբանդյանի և Ռափայել Պատկանյանի բանաստեղծությունները։

Թեև «Արարատում» տպագրվել են կրոնական մի շարք հոդվածներ և գրաբար լեզվով գրած բանաստեղծություններ, բայց «Արարատ» շաբաթաթերթի բովանդակությունը հիմնականում կազմում են գիտական, բարոյա-կրթական բնույթի զրույցներ, մանրավեպեր, անեկդոտներ, առակներն ու հանելուկները, որոնց զգալի մասը հեղինակել է ինքը՝ Գ. Պատկանյանը։ Դրանք իրենց բովանդակությամբ ու ձևով հետապնդում են մանուկներին բնական և հասարակական բազմակողմանի գիտելիքներ տալու ժամանակի առաջավոր մանկավարժության պահանջը։ Գ. Պատկանյանը հայտնում է, որ «Արարատը» ըստ էության ոչ շաբաթաթերթ է և ոչ էլ օրագիր, այլ ընթերցանության գիրք, որի նպատակն է ոչ թե սակավաթիվ հայ ուսյալներին զարմացնելը, այլ բազմաթիվ ոչ-ուսյալների հոգևոր կրթությանը և դաստիարակությանը նպաստելը։ Իսկ նրանց համար պետք է գրել պարզ լեզվով, դյուրըմբռնելի բաներ, որոնցից նախընտրելի են անեկդոտները, պատմությունները, երգերը, «բնական վիպասանության պատկանյալ հատվածները, որ մեր ընթերցողաց ճաշակին և կարողությանն հարմար և դյուրընկալ լինի»։

Գրական բազմատեսակ ձևերով, պարզ ժողովրդական լեզվով ու ոճով «Արարատում» տպագրված այդ երկերով Գ. Պատկանյանը մարզում է շարքային ընթերցողի միտքը, լայնացնում նրա մտահորիզոնը, զարգացնում ճաշակը և նպաստում նրա կրթության գործին։

4

Գ. Պատկանյանը թողել է հարուստ և բազմատեսակ գրական ժառանգություն։ Նա իր ուժերը փորձել է թե գեղարվեստական գրականության բազմաթիվ ժանրերի և թե պատմագրության մեջ, զբաղվել է հայ և այլ ժողովուրդների պատմության տարբեր էտապների ու հարցերի ուսումնասիրությամբ։ Միաժամանակ Գ. Պատկանյանը 1850—1860-ական թվականներին, օգտվելով «Կովկաս», «Արարատ» և «Հյուսիս» շաբաթաթերթերին մասնակցելու հնարավորությունից, հանդես է եկել հրապարակախոսական, բանասիրական բազմաթիվ հոդվածներով, որոնցով արձագանքել է հայ ժամանակակից կյանքի հետ կապված բազմազան հարցերին (աշխարհաբար և գրաբար լեզվի պայքար, գրականություն, դպրոց, ուսուցչություն, մանկավարժություն, թատրոն, տպագրություն և ազգային առաջադիմության հետ առնչվող այլ խնդիրներ)։ Նա մտահոգված է եղել հայ ընթերցողներին հաղորդակից անել նաև ուրիշ ժողովուրդների առաջավոր գիտության նվաճումներին. իրար հետևից գրել կամ թարգմանել է գիտահանրամատչելի հոդվածներ, թղթի, վառոդի, ժամացույցի, տպագրության գյուտի, Հենրիկ Նավագնացի և Քրիստափոր Կոլումբոսի ծովային ճանապարհորդությունների և այլն հայտնագործությունների մասին։ Գ. Պատկանյանը ծրագրել էր գրելու «Հայ տպագրության պատմություն»։

Գ. Պատկանյանը թողել է բազմաթիվ թարգմանական աշխատություններ։ Նա թարգմանել է XIX դարի բուրժուական պատմաբան-սոցիոլոգ Հենրի Թոմաս Բոկլի «Քաղաքակրթության պատմություն Անգլո» աշխատությունը, ռուսական օրենքներ, զինվորական կանոններ, հրովարտակներ, ռուսերենից թարգմանել է նաև մի անհայտ հեղինակի «Ջրասույզների փրկության մեծագործությունը» և «Աղեքսանդր Մակեդոնացու պատմությունը», թարգմանել է Շեքսպիրի «Համլետը» և այլն։ Գ. Պատկանյանը կազմել է դասագրքեր, բառարաններ (ռուսերեն-հայերեն, Նոր Նախիջևանի բարբառից աշխարհաբար և այլն), օրացույցներ, գրել է տոմարական, կրոնագիտական բազմաթիվ աշխատություններ։ Նրա գրչին են պատկանում նաև Հարություն Ալամդարյանի ստվարածավալ կենսագրությունը (մի հատված տպագրված է «Հյուսիս» շաբաթաթերթում), Նոր Նախիջևանի հարյուրամյա պատմության եռահատոր աշխատությունը, ստվարածավալ «Հիշատակարանը» և այլն։

Գ. Պատկանյանի գրական ժառանգության մեջ պատկառելի տեղ են գրավում հրապարակախոսական բնույթի հոդվածները՝ «Ազգային հառաջադիմություն», «Ուսումնասե՞ր են հայք», «Հայոց ազգի նպատակն ի՞նչ է», «Նախընթաց հանգամանք արդի վիճակի...», «Փայտե ձիու վրա

նստած առաջադիմություն», «Հայերեն տպագրություն», «Հայոց ազգի ուսումնասիրություն, ուսումնարուք և ուսուցիչք», «Միաբա՞ն են հայք», «Հայաստանի և հայերու լուսավորությենեն զուրկ մնալու պատճառներեն մեկը», «Աղքատությունը անբախտություն չէ», «Մեր ժամանակակից հայք», «Դաստիարակություն մանկանց» և այլն, որոնք ուշագրավ են 1850—1870-ական թվականների հայ հրապարակախոսության պատմության, հայ հասարակական մտքի տարբեր հոսանքների գաղափարական պայքարի լուսաբանման տեսակետից։

XIX դարը ազատության և լուսավորության դար է, նշում է Գ. Պատկանյանը։ «...Փոխվել են դարերը, փոխվել են ժամանակի հանգամանքները։ Եկել է, հասել է այնպիսի ժամանակ, որ ամենայն ազգք և ազինք և լեզուք վազում են դեպի առաջ. ամենքը մեկ դրոշակ ունին բացած. ամենու դրոշակի վրա էլ այս խոսքերն են գրած՝ ազգություն և լուսավորություն։ Այս երկու առարկայն այնպես ներքուստ մեկզմեկու հետ կապված են, որ ...չէ կարող լինել մեկը առանց մյուսի»[1]։

Պարզորոշ տեսնելով «ամենայն իրաց և հանգամանաց փոփոխությունը», ազգերի նոր կյանքի, առաջադիմության համար ստեղծված պատմական նախադրյալները, Գ. Պատկանյանը կրքոտ կերպով պայքարում է հայ ազգի կազմավորման, նրա առաջադիմության ճանապարհին ծառացած խոչընդոտների դեմ։ Ֆեոդալական տնտեսության հին և իրենց դարն ապրած ձևերի դեմ Գ. Պատկանյանը առաջարկում է տնտեսության ամրապնդման ու առաջընթացի նոր միջոցներ՝ զարգացնել երկրագործությունը, ծաղկեցնել արվեստագիտությունը, տեխնոլոգիան, ստեղծել նոր տիպի վաճառաշահություն։ Ըստ Գ. Պատկանյանի՝ այս միջոցներով միայն հայ աղքատ գյուղացու համար նյութական ապահովություն կըստեղծվի, ազգը կհարստանա։

Հայ ազգի լուսավորության համար ամենաէականը Գ. Պատկանյանը համարում է լեզվի հարցը։ Ըստ նրա՝ լուսավորությունը տարածելու համար ամենամեծ խոչընդոտը գրաբարն է, որը «յուր երկաթի ծանրատաղտուկ շղթաներու մեջ կապած ուներ խղճալի ազգի զարգացումն ու հառաջադիմությունը»։ Գրաբարը պետք է իջնի կյանքի ասպարեզից և իր տեղը զիջի աշխարհաբարին։ Այս է նրա պահանջը։ «Լավ չէ՞ր լինի, որ մանուկը յուր լեզուն ճանաչեր մինչև վերջը։ Այն, ինչ որ սովորել է յուր մորեն, դեռևս օրորոցի մեջ, դեռևս մոր կաթն ուտելու ժամանակ»։ Ըստ Պատկանյանի գրաբարը ազգի համար «օտար», «եկամուտ» լեզու է։ «Եթե մեկը հասկանա, տասն և մեկը կմնա չհասկացած»[2]։ Նա, նույնպես, ինչպես բոլոր առաջադեմ գործիչները, ազգ ասելով հասկանում է ոչ թե նրա միջի ընտրյալը կամ ուսյալը, այլ հասարակ ժողովուրդը։ Եվ նա հարց է բարձրացնում, որ գրողները գրեն ոչ թե գրաբար, ոչ թե փոք-

---

[1] *Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. 37, էջ 25բ—26ա։*

[2] Գ. Պատկանյան, *Ուսումնասե՞ր են հայք, Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 137, վավ. 37, էջ 14ա.*

րամասնության համար, այլ գրեն աշխարհաբար, «հազարավոր և բյուրավոր բազմության համար, որ մեկ անունով ասվում է հասարակ ժողովուրդ։ Ազգը նա է և նորա հասկացողության պիտի հարմարեցնեն իրենց գրիչը»[1]։

Հիշելով հայ ժողովրդի դարավոր տխուր անցյալը, Գ. Պատկանյանը վճռականորեն պահանջում է քանդել լուսավորությունը կաշկանդող ֆեոդալական կապանքները, վերջ տալ կրթության քարացած, անշարժ վիճակին և ամեն ջանք գործադրել համազգային լուսավորության ստեղծման համար. «...Ուսումն ու գիտությունը օր ըստ օրե ծաղկում էր և աճում էր Հայաստանում,—հիշում է նա դեռ անցյալի մասին,— բայց ոչ ընդհանուր ազգի մեջ և միջին կարգի բազմության մեջ, որ իսկապես ազգ է, որ ամեն կողմանց կոփված, կեղեքված, կողոպտված, քերթված, հալածված էր, այլ միայն ոմանց՝ երևելի իշխանաց, հարուստ վաճառականաց, և վանքերու անկյուններումը, լեռներու և անտառներու խորշերումը...»[2]։

«Ուսումնասե՞ր են հայք» և «Հայոց ազգի նպատակն ի՞նչ է» հոդվածներում Գ. Պատկանյանը աշխարհաբար գրական լեզվի հարցի հետ միասին առաջ է քաշում նաև նոր աշխարհիկ բովանդակությամբ գրականության զարգացման հարցը։ Գ. Պատկանյանը պախարակում է նրանց, ովքեր չեն գիտակցում, որ բացի վանքերից գոյություն ունի նաև ժողովրդական կյանք, քաղաքական կյանք, անհատական կյանք։ «Այսպիսի խթանները կզարթեցնեին մեր գրաբար վանքի մեջ գրողներուն և նրանց, որ թե միայն լեզուն, այլ առարկան փոխել կուտային, որ նոքա միայն երկնավոր ճանապարհը ցույց չտային, այլ մի քիչ էլ երկրավորի վրա էլ խոսեին»։ «Մի՞թե գյուղացին մարդ չէ, մի՞թե նորա կյանքի մեջ քիչ նյութ կա գրելու, մի՞թե երկրագործության վրա, խաշնարածության վրա գրելը ամոթ կբերեր նրանց, որոնք միշտ յոթն մահացու մեղաց վրա են հարձակում։ Մի՞թե գյուղականք տուն չունին, տեղ չունին, հաց չեն ուտում, որդիք, դստերք չեն ծնանում, հարսանիք չեն անում, ուրախություն, ցնծություն չեն անում, տրտմություն չեն քաշում, մի՞թե չէին կարող այս նյութերու վրա էլ գրել. կամ քաղաքական կյանքը, կամ գյուղական կյանքը չէին կարող ստորագրել։ Քի՞չ ծեսեր ունեն ամեն մեկ գեղ իրա համար առանձին, քի՞չ սովորություններ ունեն, քի՞չ ուխտատեղիք ունեն, քի՞չ գրոսարաններ ունեն, քի՞չ նախնի ավանդություններ ունեն պահած։ Եթե մեկը մեկ գյուղինը գրեր, մյուսը մեկել գյուղին, կդառնար ազգային կյանքի հայելի»[3]։

Պատկանյանը զգում է նաև նոր, ժողովրդային գրականության ստեղծման անհրաժեշտությունը։ Ըստ նրա, գրականությունը պիտի արտացոլի ժողովրդի լայն խավերի կյանքն ու կենցաղը՝ բոլոր կողմերով։ «Նախընթաց հանգամանք արդի վիճակի մտավոր զարգացման մեր» ան-

---

1 Գ. Պատկանյան, *Ուսումնասե՞ր են հայք*, էջ 13 բ։

2 *Նույն տեղում, էջ 9 ա։*

3 *Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 137, վավ. 37, էջ 12 ա-բ։*

տիպ հոդվածում Գ. Պատկանյանը քննարկում է այն հարցը, թե ո՞րն է իսկական արվեստագետի բուն նպատակը, ինչպե՞ս պիտի նա իր գործերով ազդել կարողանա հանդիսատեսի, ընթերցողի կամ դիտողի վրա: «Երևելի եղերերգակ ոմն,—գրում է նա,—հանդիսացուցանելով տեսարանի մեջ Շիլլերի «Հուզկահարք»[1] բանաստեղծությունն, այնպիսի վառ և բորբոքյալ եռանդով հառաջ տարավ յուր դերն, որ ինքն ևս երևեցուցանելով թե ինքն է իսկապես այն անձն՝ որո նմանությունն էր յուր վերա առել, ատրճանահար խոցեց յուր անձն: Այլ այսպիսի ծայրացյալ եռանդուն կրյուք բորբոքվիլ և վառվիլ կարե միայն նա՝ որ անցից հանգամանք մտադրությամբ տեղեկացած լինի՝ որպես արժան է. և ոչ հարևանցի. գիտենա անձանց, տեղաց և ժամանակաց պարագայքն, դիպվածոց շրջադարձից ազդեցությունքն, արկածից շարժառիթքն, նախընթացից և զուգընթացից մանրամասնությունքն, որով և հուսալի լինի հետևորդացն արգասյաց. ամենայն ինչ զգա հոգով և խորամուխ գիտակցությամբ միաց, և ի բաց դնելով օտարությունն՝ զգածի համապատշաճ կրյուք, որպես թե յուրաքանչյուր պատկերացուցած դրվագաց մեջ ոչ թե միայն ինքն ևս խաոն է, այլ և լցվի այն խանդով, որպես թե ինքն է գործադիրն»[2]:

Ազգային լուսավորության հիմնական պայմաններից մեկն էլ Գ. Պատկանյանը համարում է թատրոնը: Նա պաշտպանում է նոր կյանքի հետ կապված թատրոն ստեղծելու պահանջը և ողջունում է այդ գործի ջատագով մարդկանց բեմելը: Գ. Պատկանյանը ճիշտ է գնահատում թատրոնի դաստիարակչական, հասարակական դերը, այն համարելով «ազգի լուսավորության ամենահարկավոր միջոցներեն մեկը», «հայերու առաջ շարժելու գլխավոր լծակը»: «Մեր դիտավորությունը այն չէ,—գրում է Գ. Պատկանյանը,— որ ներբողական ճառեր գրենք կամ միաբանության համար, կամ թիֆլիզեցվոց: Այս երկուսի գովեստն էլ, վարձն էլ իրենց մեջն են պարունակում: Մենք միայն այս պիտի ասենք, որ ուրեմն, եթե այլ հայարնակ քաղաքներու ժողովուրդներն էլ կամենան, կարող են իրենց օգտի համար այդպիսի ազգասիրական հանդեսներու մեջ ճգնիլ և փառավորվիլ: Բայց միշտ փառքը ու պատիվը նրանցն է, ով որ առաջ հանապարհ կբանա: Ուրեմն փառք թիֆլիզաբնակ հայերուն և պարծանք նոցա ազգասիրության, որ ազգային լուսավորության ասպարեզումը այս առաջին քայլափոխը արին: Թեպետ առաջին քայլն է, սակայն մեծ քայլափոխ է: Թատրոն ունենալը փոքր գործ չէ: Ի՞նչ կա մարդու բարի կենցաղավարության հարկավոր, որ այնտեղ չիմանա ու չսովորի: Ինչ որ ոչ վարժապետ է կարող վարժատան մեջ ավանդել, և ոչ վարժապետը եկեղեցու բեմումը, այն դերասանը կարող է ասել թեատրոնի տեսարանումը»[3]:

[1] Խոսքը Շիլլերի «Ավազակներ» դրամայի մասին է:
[2] Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 136, վավ. 32, էջ 1 ա—1 բ:
[3] Գր. Թանգարան, Պատկանյանների ֆոնդ, վավ. 6, էջ 1:

Ազգի մտավոր զարգացման, նրա տնտեսական առաջադիմության համար վերոհիշյալ միջոցները նշելու հետ մեկտեղ, Գ. Պատկանյանը անդրադառնում է այն հարցին, թե հասարակության ներսում առաջացած առանձին շերտեր ի՞նչ դիրք ունեն ազգօգուտ այդ գործերի նկատմամբ և թե ի՞նչ է պահանջվում նրանցից ազգի գոյության պահպանման համար մղվող պայքարում։

Իհարկե, Գ. Պատկանյանը հասարակությունը որոշակիորեն չի բաժանում դասակարգերի և այս հարցում նրա մոտ նկատելի է որոշ անխուսափելի նաիվություն։ Սակայն նա սոցիալական բնորոշ հակասությունների փաստերով շահագործողներին սահմանազատում է շահագործվողներից։ Գ. Պատկանյանը զգում է, թե որքա՜ն խորն են տնտեսական հիմքի վրա առաջ եկած հակասությունները։ «Ե՞րբ կլինի զրկվածի և զրկողի մեջ հաշտություն, ինչո՞վ կլինի նոցա մեջ սեր, ինչպե՞ս կլինի նոցա մեջ խաղաղություն։ Եթե վեճը, հակասությունը լիներ միայն գաղափարներու վերա, փույթ չէր, թող վիճեին, որքան որ կամենային. վեճը կենսական խնդիրների վրա է, օրական հացի վրա, մեկը խլել է բովանդակ կենաց վաստակը, մյուսը կողկողում է։ Այստեղ ի՞նչ խաղաղություն պիտի լինի»[1]։ Գ. Պատկանյանը խորապես ատելով «հազար մարդկանց հաց ուտողներին»՝ կեղեքիչներին, անկեղծորեն պաշտպանելով աշխատավոր հայի իրավունքները, ազգի ֆիզիկական և տնտեսական գոյությունն ամրապնդելու համար նշում է մի հիմնական ճանապարհ՝ «ղորացնել նրա մեջ բարոյական կոմունիզմը», այդ միջոցով պայքարել ազգի ներքին քայքայիչների, զրկողների, խաբեբաների դեմ, որպեսզի ազգը ուժ ու ամրություն ստանա այնպես, որ կարողանա պահպանել իր քաղաքական ինքնուրույնությունը։

5

Գ. Պատկանյանը, ինչպես ասվեց, սկսել է գրել վաղ, պատանեկության տարիներից։ Բայց այդ շրջանի գեղարվեստական երկերը մեզ չեն հասել։ Մինչև 1850 թվականը նա խճճված լինելով հասարակական, եկեղեցական հարցերի շուրջը ծագած վեճերի մեջ, հնարավորություն չի ունեցել շատ բան գրելու։ Իսկ, ինչպես ինքն է վկայում, 1853 թվականին, ձերբակալության ժամանակ, նրա արխիվը բռնագրավել են և հետագայում չեն վերադարձրել։

Գ. Պատկանյանի ստեղծագործություններից առանձին երկեր տպագրվել են նախ՝ «Արարատում» և Գամառ Քաթիպայի տետրակներում, ապա՝ «Հյուսիսում» և այլ պարբերականներում, իսկ հետագայում, 60—80-ական թվականներին առանձին գրքով՝ Դոնի Ռոստովում, Նոր Նախիջևանում, Պետերբուրգում, Պոլսում, Զմյուռնիայում և այլուր։ Երկերի մի զգալի մասն էլ մնացել է ձեռագիր վիճակում և պահպանվում է զանազան արխիվներում։

---

1 «Ազգային հառաջադիմություն», էջ 2 ա։

Գ. Պատկանյանի գրական ժառանգության մեջ ամենից արժեքավորը աշխարհաբար լեզվով և ժամանակակից թեմատիկայով գրված երկերն են՝ թե՛ արձակ և թե՛ չափածո։ Որոշակի արժեք են ներկայացնում նաև պատմա-դիցաբանական երկերը։ Դրանցից հատկապես, այսպես կոչված, Գողթան երգերը՝ «Հարսանիք Արտաշեսի և Սաթինիկայ», «Յուլունսն Շամիրամայ», «Արի արքայն արքայից», «Վահագն» և այլն, որոնք XIX դարի 40—60-ական թվականներին հայկական լայն շրջանների ամենասիրված և տարածված երգերից են եղել. դրանք իրենց հին գուսանական-բանաստեղծական արվեստով մինչև այժմ էլ հետաքրքրություն են ներկայացնում։ Ահա մի հատված «Յուլունսն Շամիրամայ» երգից.

Յուլունսն Շամիրամայ,

Յուռութք յուլունսն Շամիրամայ,
Յուռութք ի ծով ծածանէին,
Ծածանէին ի ծով ծիրանի—
Յուռութք ի ծով ծիրանի
Ծիծաղախիտ ծածանէին։

Յուլունսն Շամիրամայ,

Յուռութք յուլունսն Շամիրամայ,
Ծածանէին ի հով զովարար,
Ծածանէին ի ծով ծիրանի,
Գիսակք ի հով հիւսիսոյ,
Սիրապատար տարուբերէին։

Յուլունսն Շամիրամայ,

Ծածկոյթ զստինսն սքօղէին—
Սքօղէին յաչաց պատանեկաց,
Ծածկէին յաչաց պատանեաց,
Յաչաղելով զստինսն սքօղէին[1]։

. .

Գ. Պատկանյանի թե վերոհիշյալ երգերը և թե մի շարք այլ բանաստեղծություններ («Օրորոցի երգ գյուղական այրի կնոջ», «Գեղեցիկ Նախիջևան», «Քրտնաջան այգեպան», «Իշխան անխելք և հիմար», «Առ հայրենիս» և այլն) իրենց արվեստով և բովանդակությամբ համահընչյուն են ժամանակի հայ պոեզիայի ընդհանուր ոգուն։ Դրանք միաժամանակ արտահայտում են բազմատանջ բանաստեղծի անձնական և հասարակական խոհերը, հոգեկան վիճակը։

Հոգիս վիրոք վշտացած է,
Սիրտս խոթ է ցավերով,
Աչքես պակաս չեն արտասուք,
Շրթունքս լի ողբերով։

1 Միանսարյան, Քնար հայկական, էջ 248—249։

Հույս չմնաց ազատության.
Մեկ ճար չեղավ դեղերից,
Սրտին դիպքն չեղան օգուտ,
Զայրացած ցավքս թույներից։

Առաջ ինձ ախտ պատճառեցին,
Զավակացըս գաղջությունք,
Պատկառելի ալյացս դեմ,
Արհամարհոտ սիգությունք[1]։

«Առ հայրենիս» բանաստեղծության մեջ դարձյալ իր նույն հալածական ու հուսահատական վիճակը պատկերելով, բանաստեղծը սակայն հանգում է այն եզրակացության, որ հայրենիքի շահերը պահանջում են ոչ թե լռել, խոնարհվել թշնամու առաջ, այլ պայքարել նրա դեմ։

Քանի անգամ ես երգում եմ արել,
Արդի վիճակիս զանձն իմ ենթարկել,
Սանձ դնել սրտիս, սանձ դընել կամաց,
Սանձ դնել հոգույս անսանձ մղանաց։

Երգում եմ արել հանդարտ և մեղմիկ,
Կյանքս անցուցել խաղաղ և լռիկ,
Եվ բոցաբորբոք իմ հեծեծանաց
Զայն երբեք չառնել քեզ առիթ վշտաց...

Երբ քաջիկ որդիք ցայտեն կայծակունք,
Երդում եմ արել, որ հոգույս ձգտմունք,
Նոցա մեջ հույսը կայծեր չորոնեն,
Այլ լոկ զարգացման նշաններ կարծեն։

Երդում եմ արել օրեր առանձին
Վարել աննշան, անհայտ ու մըթին.—
Բայց երբ լսվեցավ քո ձայնն անուշիկ,
Ցնդեցան երդմունքս, ուխտերս խաբուսիկ[2]։

Հետաքրքիր է «Փունջ հայոց պատմության» հայրենասիրական բանաստեղծությունը, որտեղ հեղինակը հայ քաջերի գովքն է անում սկսած Հայկից՝ մինչև Դավիթ Բեկը։

Գ. Պատկանյանն ունի նաև լիրիկական շնչով հագեցված պարզ և սահուն բանաստեղծություններ ու քառյակներ, որոնց մեջ զգալի է բնության կենդանությունը, գարնան թարմ շունչն ու բուրմունքը.

Հասավ գարնան եղանակը,
Դաշտք և հովիտք ծաղկեցան,
Ահա բյուլբյուլն ու երգնակը
Արոտներում փռվեցան[3]։

---

[1] *Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. 62, էջ 44—45, թղթ. № 137, վավ. 58, էջ 18 բ։ Այս և սրան հաջորդող բանաստեղծությունները անտիպ են։*

[2] *Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 136, վավ. 21։*

[3] *Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. 58, էջ 20 բ։*

Հաճախ բանաստեղծը բնության զարթոնքը հակադրում է հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական անապահով վիճակին, օտար բռնակալության լծի տակ նրա կրած տառապանքներին։ Նա հուսահատ բողոքում է, թե ե՞րբ պիտի գարուն գա նաև իր ժողովրդի համար, մի՞թե նա դեռ շատ պիտի մաքառի ու տանջվի իր կյանքի գարնան համար։ Նրան թվում է, թե բնության զարթոնքի հետ պիտի վերանան և հայ կյանքի մութ ու մռայլ կողմերը։

Գարուն հասավ, ամենայն ինչ մեջ բնության,
Ծաղկի, զարթնի երկայն քնո խոր թմրության,
Բայց այս կենոք մեր առջև ի՞նչ այլ կա պատրաստ,
Մեզ համար ե՞րբ կուգա գարուն սիրապատվաստ[1]։

Ուշագրավ են նաև Գ. Պատկանյանի մշակած առակները, ասացվածքները, որոնք նույնպես արտացոլում են ժամանակակից սոցիալական հարաբերությունները։ Այսպես օրինակ.

Գեղը գտել է անգազան,
Ման է գալիս անգավազան։

Կամ՝

Գեղը գըտել է անշուն,
Անցուպ շրջի տրնետուն[2]։

Կամ՝

Մի անցներ վատթար մարդու կամուրջեն,
Թող քեզ տանեն հեղեղահորդ հոսանքը,
Մի ուզենար ապաստանի վատ մարդեն,
Թող գիշատեն քեզ առյուծի ճիրանքը[3]։

Գ. Պատկանյանն ունի նաև ուշադրության արժանի գեղարվեստական արձակ երկեր—«Ամառ», «Ջորս եղանակ», «Սրտանց բարեկամություն», «Դրացի», «Վարդանամակ», «Դյուցազն մեր ժամանակի»։ Սրանք մեզ հասել են ձեռագիր վիճակում։ Առաջին երկուսը խորհրդածություններ են բնության մասին, գրված պարզ ու մատչելի աշխարհաբար լեզվով։ Մյուսները զրույցներ են Նախիջևանի բարբառով, որոնք պատկերում են նորնախիջևանցիների բարքերն ու սովորությունները, լուսավորության վիճակը, կամ վիպական երկեր են՝ դարձյալ ժամանակակից կյանքից առնված։

XIX դարի 50—60-ական թվականների արևելահայ գեղարվեստական արձակի մեջ հայտնի են թվով ոչ շատ վիպական ստեղծագործություններ։ 1860-ական թվականներին աշխարհաբար լեզվով գրված վիպական երկերը, որքան էլ գեղարվեստորեն պակասավոր լինեն, ինքն-

---

1 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 136, վավ. 21, էջ 2 ա։

2 Նույն տեղում, էջ 1 բ—2 ա։

3 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 137, վավ. 61։

ռատինքյան ուշադրավ են։ Այս «Վարդանամակ կամ Արկածք Վարդանայ» վիպը։

Գ. Պատկանյանի այդ երկը իր բնույթով պատմա-արկածային ստեղծագործություն է, այս առումով էլ նորություն էր ժամանակակից արևելահայ արձակի համար։ Հեղինակի կողմից այս թեմայի ընտրությունը պիտի բացատրել ռուսական գրականության մեջ արդեն տարածված ծովային ճանապարհորդական գրականության ազդեցությամբ, իսկ գրելու կոնկրետ շարժառիթը եղել է Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո»[1] վեպը, որի ազդեցությունը բացահայտորեն նկատվում է։ Առաջաբանում հեղինակը պատմում է իր վեպի հերոսի՝ Վարդանի մանկության, պատանեկության, ուսումնառության մասին, իսկ առաջին գլխից սկսվում է արկածների բուն պատմությունը։

Վարդանի հայրը՝ պղնձագործ Ավետիքը, ալաշկերտցի է. գալով Թիֆլիս, ամուսնացել է հավլաբարցի ոմն ջուլհակի դստեր՝ Մարգարտի հետ։ Վարդանն իր աշխատասեր ծնողների բարեբար հսկողության տակ ստանում է կրթություն ու դաստիարակություն։ Պղնձագործ Ավետիքը որդուն ուղարկում է Աստրախանի Աղաբաբյան դպրոցը, իսկ հետո Մոսկվա, այնտեղից էլ Վենետիկ։ Սուրբ Ղազարի վանքում նա ծանոթանում է մի անգլիացի արքայազնի հետ, որի թարգմանն ու քարտուղարը դառնալով, շրջագայում է նրա հետ նշանավոր քաղաքներ։ Վարդանը Կոստանդնուպոլսից նավ նստելով կամենում է Մոսկվա վերադառնալ՝ Լազարյանների մոտ մի պաշտոն ստանալու հույսով, բայց ճանապարհին արտասովոր փոթորիկը փոխում է նավի ընթացքը։ Ուղևորները մակույկներով փախչում են, իսկ Վարդանի մակույկը թաղվում է ավազակույտի մեջ։ Մնալով մենակ, ընկնում է անմարդաբնակ մի կղզի և բնակություն հաստատում այնտեղ, ուր երբեմն գալիս էին նաև ծովահեններ, իրենց կողոպուտները թաքցնելու նպատակով։ Վարդանը ծովում խեղդվելուց ազատում է իտալացի մի աղջկա՝ Ռոզալիային և հետագայում ամուսնանում նրա հետ։ Շարունակելով իր արկածային կյանքը, Վարդանը իր նոր ընտանիքի հետ սպասում է հայրենիք վերադառնալու բարեհաջող դիպվածի։ Ռոզալիային նա պատմում է Թիֆլիսի, Ղզլարի, Աստրախանի, Նոր Նախիջևանի մասին, սկսում է կրոնա-ավանդական մի պատմություն Երուսաղեմի մասին, և հենց այստեղ էլ ձեռագիրն ընդհատվում է։

Վեպի սյուժեն մի կողմից ներկայացնում է Վարդանի արկածների հաջորդական պատմությունը, մյուս կողմից՝ XIX դարի առաջին քառորդի հայ պատմական իրականության մի շարք գծերը։ Վեպի արկածային մասը ընթերցանության համար հանրամատչելի մի նյութ է, շարադրված պարզ արվեստով, ինքնատիպ ոճով։ Դրանով Գ. Պատկանյանը հակա-

[1] «Ռոբինզոն Կրուզո» Պատկանյանների ընտանիքի սիրված գրքերից մեկն է եղել. Ռ. Պատկանյանը (1857) թարգմանել է այն, Մ. Նալբանդյանը «Հյուսիսափայլում» խրախուսել է Ռ. Պատկանյանի այդ նախաձեռնությունը։

դրվում է երեխաների դաստիարակության կղերա-պահպանողական սկզբունքներին, պաշտպանելով բազմակողմանի և ազատ դաստիարակությունը։

Մարդուն, իր գոյության ընթացքում, հանդիպում են ամեն կարգի դժվարություններ, փորձություններ, նա պետք է զինված լինի գիտելիքներով, կենսական փորձով, որպեսզի կարողանա այդ դժվարությունները հաղթահարել։ Այս է Գ. Պատկանյանի վեպի գաղափարը։ Մնալով անմարդաբնակ կղզում, Վարդանը ձգտում է իշխել ոչ միայն իր, այլև շրջապատի վրա. տարիներ շարունակ ապրելով այնտեղ, նա ստեղծում է իր համար ապահով կյանք՝ կենցաղի մեջ մտցնելով այն ամենը, ինչ նա տեսել ու սովորել էր Թիֆլիսում, Աստրախանում, Նախիջևանում, Գյումուշխանեում, ռուսական և եվրոպական նշանավոր քաղաքներում։

«Արկածք Վարդանա» վեպը արժեքավոր է նաև հաղորդած պատմական տեղեկություններով, XIX դարի առաջին քառորդի հայաշատ մի շարք քաղաքների (Թիֆլիս, Աստրախան, Նոր Նախիջևան) կյանքի ու կենցաղի վերաբերյալ եղած նկարագրություններով։

Ահա Աստրախանը XIX դարի սկզբներին։ Քաղաքն իր արտաքին ու ներքին դիրքով, բերդերը, եկեղեցիները, նշանավոր փողոցները, շուկաները, զբոսավայրերը, կամուրջները, պետական-պաշտոնական հաստատությունները, դպրոցները, գրադարանները և այլն։ Վեպում պատմված է այն մասին, որ հայերը Աստրախանում ունեցել են բազմաթիվ եկեղեցիներ, հոգևոր գործերի կոնսիստորիա, վարժատուն, «վարժարանաց բնակարան», տպարաններ, հայերեն և ռուսերեն գրքերով հարուստ մատենադարան։ Աստրախանում բնակվել են 1000 տուն հայեր, որոնք ունեցել են առանձին դատաստանատուն, մեծ մասամբ զբաղվել են վաճառականությամբ, ունեցել են նաև գործարաններ՝ «քարխանայ», որոնցում արտադրվել են մետաքսյա գործվածքներ, կերպասներ, ունեցել են նաև լավ պարտեզներ, այգիներ, ոչխարների հոտեր, ձիերի երամակներ։ Զարգացած է եղել պղնձագործությունը, երկաթագործությունը, ներկարարությունը, ժամագործությունը, հյուսնությունը և այլ արհեստներ։

Վարդանը գործնական մարդ է, անվախ, համարձակ, աշխատասեր, խորագետ, ճարպիկ, շրջահայաց, միաժամանակ ազատամիտ, լավատես, մարդասեր։ Այս հատկությունները հարկավոր են մարդուն գոյության կռվի համար. դրանց շնորհիվ է, որ Վարդանն ամայի կղզին վեր է ածում դրախտավայրի։ Նա դեմ է ավազակության, կողոպուտների ճանապարհով ձեռք բերած հարստության, բայց աշխատանքով ձեռք բերած հարստությունը համարում է օրինական և ձգտում է «հարստանալ ամեն կերպիվ» (այսինքն նաև կրթությամբ, գիտությամբ, լուսավորվելով)։

Վարդանը Ռոպյաիայի նկատմամբ ցուցաբերում է մարդկային բարձր զգեր, նա հովանավորում է դժբախտ աղջկան, որը բռնակալ նավապետի հետապնդումից ազատվելու համար ծովն է նետել իրեն, կորցնելով

ծնողներին ու փեսացուին։ Վարդանի վարմունքը դեպի Ռոզալիան մեծ մասամբ ներկայացված է հոգեբանորեն պատճառաբանված։

Բայց գնալով թուլանում են Ռոզալիայի և Վարդանի կերպարները։ Նրանց փոխադարձ, մաքուր և ազատ սիրո զգացմունքի մեջ աստիճանաբար դրսևորվում է մի տենդենց, որը ոչնչով չի պատճառաբանվում։ Ռոզալիան՝ իտալացի կինը աստիճանաբար դառնում է նորատիպ մի հայուհի[1]։ Նա անզուսպ սեր ու հետաքրքրություն է ցուցաբերում հայ ազգի նկատմամբ, մի շնչով ուզում է իմանալ նրա հին ու նոր պատմությունը և իրեն նվիրել նրա լուսավորության գործին։

Իդեալականացվում է Վարդանը, չափազանցվում նրա ընդունակությունները։ Վարդանը բոլոր գիտությունների, արհեստների մեջ հավասարաչափ սեր ու առաջադիմություն է ցուցաբերում, բազմաթիվ լեզուներ և արհեստներ սովորում, բոլոր դժվարությունները հեշտությամբ հաղթահարում և այլն։

Գ. Պատկանյանի վեպը աչքի է ընկնում իր պարզ պատմողական-նկարագրական արվեստով և թեև անավարտ է, սակայն արկածները ամփոփվում են իրենց հաջորդական կապակցությամբ։ Առաջաբանը կազմում է սյուժեի ողնաշարը, այնտեղ շոշափված հարցերը մասամբ հիմք են դառնում արկածների համար։

«Վարդանամակը» վիպական արվեստի տեսակետից ունի մի շարք անկատարություններ, որոնք բացատրվում են տվյալ ժանրի թույլ զարգացմամբ։ Ամենից առաջ Գ. Պատկանյանի ստեղծագործական երևակայությանը խանգարել է հնագետ և պատմաբան հեղինակը։ Նա չի կարողացել լիովին պատռել այն անջրպետը, որ կա վիպական ստեղծագործության և պատմության շարադրանքի միջև։ Սյուժեի ամբողջականությունը խախտել են միջամտությունները ու շեղումները։ Հատկապես վեպի վերջում կրոնա-առասպելական երկար ու բարակ դատողությունները բոլորովին թուլացրել են գործողությունը։ Այդ մասերն այնքան անհարիր են վեպի բովանդակությանը, որ եթե հեղինակը մեջընդմեջ չհիշեր իր հերոսների անունները, չէր կարելի իմանալ, թե դրանք կապ ունեն վեպի հետ։ Ի դեպ պիտի նշել, որ այդ Գ. Պատկանյանի ստեղծագործությունների առանձնահատկություններից մեկն է. ժամանակակից ամեն մի հարց քննության առնելիս նա անպատճառ զուգահեռ է անցկացնում անցյալի հետ, հակադրում կամ համադրում պատմական փաստերով կամ կրոնական, ավանդական հիշողություններով։ Չափազանցության հասնող այս երևույթից զերծ չեն նաև նրա հրապարակախոսական հոդվածները։

---

1 Ուշագրավ է այն, որ Վարդանը և Ռոզալիան հանդես են գալիս նաև «Դրացի» պատմվածքում։ Նրանք Նախիջևանում ճանաչվում են որպես գիտուն ու զարգացած մարդիկ։ Ռոզալիան այստեղ կոչվում է Վարդուհի։ Հեղինակը հիշում է, որ 20—25 տարի առաջ Վարդանը և Վարդուհին երկար ժամանակ ապրել են անմարդաբնակ կղզում։ Վեպի գործողությունները հասնում են մինչև 1830 թվականը. հավանական է, որ «Դրացի» պատմվածքը պիտի գրված լինի 1860 թվականից, այսինքն վեպը գրելու տարեթվից հետո

Վեպի թուլության պատճառներից մեկն էլ կրկնությունններն են ու ձգձգվածությունը։ Այս նկատելի է նույնիսկ գեղարվեստորեն հաջողված մասերում։

Իր նյութով, շոշափած հարցերով ուշագրավ ստեղծագործություն է նաև Գ. Պատկանյանի «Դյուցազն մեր ժամանակի, կամ դաստիարակության ճշգրիտ անցք» վիպակը։ Այստեղ նկարագրվում է ղրիմահայ առևտրականների մի ընտանիքի կյանքը, քննադատվում են կեղծ ազգայինները՝ ժամանակի բախտախնդիր այն մարդիկ, որոնք անձնական շահով կուրացած մեծամեծ վնասներ են պատճառում ազգի առաջադիմության գործին։ Վիպակը գրված է աշխարհաբար լեզվով, գործողությունները կատարվում են Ղրիմում և Կ. Պոլսում։ Այս երկի համար շարժառիթ է հանդիսացել 1860-ական թվականների հայ հասարակական տարբեր խմբավորումների միջև եղած գաղափարական պայքարը, որի կրքոտ մասնակիցներից մեկն էր ինքը՝ հեղինակը։

6

Գ. Պատկանյանի ստեղծագործության գերակշռող մասը կազմում են պատմական, դիցաբանական պոեմները, վեպերը և ողբերգությունները («Հայկերգ», «Արամերգ», «Անուշավան», «Փառնակ», «Առնակ», «Փառանձեմ», «Վշտակ», «Ոչ գիր, ոչ Կիրակոս», «Վարդան», «Կար» (Կայպակ), «Շավարշ Բ», «Հրաչյա» և շատ ուրիշներ)։ Ինչո՞վ է բացատրըվում այս երևույթը։ Նախ և առաջ նրանով, որ Գ. Պատկանյանը հմուտ դիցաբան, պատմաբան էր և բանտի ու աքսորի պայմաններում հայ և անտիկ պատմությունն ու դիցաբանությունը առատ նյութ էին տրամադրում նրան։ Երկրորդ՝ նա խոստովանում է, որ իր դարը, հալածական կյանքը, ներսեսի և խալիպի մեքենայությունները թույլ չեն տվել աչք բանալու, որոշելու իր անելիքը, կենտրոնացնելու իր միտքը՝ ազգին առավել օգտակար ծառայություններ անելու համար։ «Գիտեր,— գրում է Գ. Պատկանյանը իր մասին,— որ ազգն բազմատեսակ վերքեր ունի. այլ չգիտեր, ո՞րն է նորա մահառիթ խոցն, որ առաջ նորա սպեղանու համար հոգայր»[1]։ Երրորդ՝ իր երկերի համար հիմք ընդունելով պատմական անցյալը և դիցաբանությունը, որոնցով ոգեշնչված էր նա, դիտավորություն է ունեցել որոշ հերոսների պատմական անունների տակ ներկայացնել ժամանակակից լավ ու վատ մարդկանց, «որը որպես իր, այնպես էլ ազգի վիճակին հարմարի»։

Պետք նկատել այն, որ Գ. Պատկանյանը սովորություն է ունեցել լսել ժողովրդին, գրի առնել նրա մեջ պահպանված հուշերն ու ավանդություններն և օգտագործել իր ստեղծագործություններում։ «Հայկերգ» և «Արամերգ» պոեմների համար նա նյութեր է հավաքել 1820-ական թվականներից։ «Այս միջոցն էր, որ տեր Գաբրիելի մտաց մեջ ծագեցավ Հայկերգի

---

1 «Հիշատակարան», էջ 464։

և Արամերգի գաղափարն և սկսավ խաժամուժ ամբոխի բերանեն լսած առածից և ավանդությանց մեջ միտ դնել և յուր մտաց մեջ անգիր խրմբագրել»[1]:

Գ. Պատկանյանի ամբողջ ստեղծագործության հանգամանալից քննությունը ցույց է տալիս, որ նա մի ծայրով կառչած է անցյալին, իսկ մյուս ծայրով ամուր կապված է նոր ժամանակների հետ: Հեղինակը ազգասիրական նկատառումով մտաբերում է անցյալի արժանահիշատակ դեպքերն ու դեմքերը, որոնք իրենց ազդեցությամբ օգտակար կլինեն ժամանակակից հասարակարգի առողջացման, ամրապնդման գործում: Իր այդ երկերով Գ. Պատկանյանը՝ հետագեմ կղերամիտ ազգայնամոլների նման ոչ թե կամենում է հետ դառնալ դեպի անցյալը, այլ ցանկանում է իր ժամանակների մարդկանց մեջ տեսնել Հայկի, Արամի, Վահագնի, Վաշտակի, Կարի և այլոց հերոսական գծերը, և նրանց միջոցով հասարակությունը մաքրել այլանդակ բարքերից:

Գ. Պատկանյանը պատմական, դիցաբանական այդ երկերում առաջ է քաշում այն նույն խնդիրները, որոնք դրված են նրա ժամանակակից թեմաներով գրված երկերի և հրապարակախոսական հոդվածների մեջ: Դրանք ազգի միաբանության, լուսավորության, առաջադիմության, ժողովրդի ներքին և արտաքին թշնամիների դեմ պայքարի կազմակերպման հարցերն են:

Ահա «Վաշտակ»[2] (1857) դիցաբանական վեպը: Այստեղ հանդես են գալիս ոչ միայն ժողովրդասեր հերոսները՝ Հայկակ, Նորայր, Հրանտ. Մանուշակ, ծերունի ջրաղացպան, զինվոր, Շահպուրակ և այլն, որոնք կռվում են երկրի թշնամիների դեմ, այլև ժողովուրդը, որի բազմաթիվ ներկայացուցիչները ամեն տեղ՝ դաշտերում, բերդերում և ամրոցներում ծպտյալ գործում են Վաշտակի ղեկավարությամբ և նախապատրաստվում են հարձակման՝ արյունարբու Նահապետ Հավանակի իշխանության դեմ:

Վաշտակը իր նպատակին հասնելու համար երկար տարիներ ապրում է քարայրներում, թափառական, աղքատ ծերունու կերպարանքով: Հայկակը, որին որդեգրել էր Ողական ամրոցի նախարարը, երբ իմանում է, որ

---

[1] Ձեռագիր № 8816, էջ 22ա: Հենց այդ ժամանակ Գ. Պատկանյանը մտադրություն է ունեցել գրելու վերոհիշյալ պոեմները: Բայց նրա հայրը՝ Սերովբե վարդապետը, կանխել է՝ «կասկածելով թե մի գուցե ծածուկ դարանակալության փոխարկվի իր հայտնի խիզախ հարձակումն թշնամական» (ակնարկում է Գ. Պատկանյանի շուրջ սկսվող թշնամանքը):

[2] Ըստ երևույթին, Գ. Պատկանյանը «Վաշտակը» թերավարտ է թողել Արարատյան դաշտի և նրա շրջակա բնակչության կյանքի նկարագիրը տալու դժվարությունները հաշվի առնելով: Գ. Պատկանյանը անծանոթ էր այդ վայրերին: Ահա թե ինչ է գրում նա այս կապակցությամբ. «...Ինձ ցանկալի չէ Երուսաղեմ. եթե գտանիմ ազատություն ի կապանաց, պիտի ճեմեմ ի դաշտն Արարատյա, ոչ որպես ապաշխարող, ոչ որպես ուխտավոր, այլ որպես նկարագիր»: Նա ուզում է «տեսանել թե ուստի՞ բղխէ Քասաղ գետ, ու զիա՞րդ անցանէ ընդ Օշական, զի՞նչ գիրս ունին..., Նոր Ապարան, Կարբի, Աշտարակ...»: Նա ցանկացել է տեղեկանալ «զրից Արարատյան դաշտին և քաղաքաց նորա», քանզի գրեմ «զՎաշտակ» (Հիշատակարան, էջ 773):

ինքը այդ աղքատ ծերունու որդին է, թողնում է պալատական ապահով կյանքը, իր սիրած նշանածին, և գալիս աղքատ թափառական հոր մոտ, և նրանք միասին պայքարում են նույն նպատակի համար։ «...Եթե իմ հայրս դու ես, ծերունի, ինձ ցանկալի չէ ոչ մեծություն, ոչ գանձ, և ոչ ճոխություն. այո, սիրում եմ Շահպուրակին, բայց այն սերը չէ կարող հաղթել որդիական սիրույն»[1],— ասում է Հայկակը։

Գ. Պատկանյանը բողոքում է անօգուտ հնազանդության, համակերպվելու դեմ։ Վաշտակը զայրանում է, որ դեռ որոշ գավառների բնակչությունը չի մտածում ամոթալի կապանքից շուտ ազատվելու մասին։ «...Բովանդակ ազգի հին սովորությունն է սիրել, պատվել յուրյանց կործանողին, հնազանդիլ նրան, ով որ ավելի կչարչարե և կտանջե։ Արարատա մեջ տակավին կան այնպիսի գերդաստաններ, որ նահապետի սուտը լավ կը հաշվին, քան թե այլոց ճշմարիտը...»[2],— բողոքում է մանազկերտցի մի զինվոր։

Վաշտակը պահանջում է, որ ազգի իշխանությունը տրվի ազնիվ, ժողովրդի շահերին նվիրված մարդկանց ձեռքը։ Ազգի թշվառության պատճառը վնասակար իշխաններն են և նրանց համաձայնքով է, որ օտարը իշխում է, ազգային լեզուն մոռացվում, առևտուրը նվազում։ «Իշխանությունը ընկնում է ազգատյաց մարդոց ձեռք, քաջերը, խելոքները, ազգասերները խորշե-խորշ են ընկնում և աներևույթ են մնում, իսկ վատաբարո մարդիկ ազգի կառավարության սանձը ձեռքն են առնում և ազգին թշվառացնում»,— բացատրում է Վաշտակն իր որդուն»[3]։

Գ. Պատկանյանը իր դյուցազներգությունների, պատմական թեմայով գրված երկերի մեջ պաշտպանում է նաև ազգային-ազատագրական շարժման, ազգային պատերազմի (ինչպես ինքն է բնութագրում Արայի՝ Շամիրամի դեմ մղած պատերազմը) գաղափարը։ Բնորոշ է, որ մի շարք երկերում («Շավարշ Բ», «Կար», «Վաշտակ» և այլն) զգալի դեր է տրված գյուղացիությանը. Նրա ներկայացուցիչները խմբերով, ջոկատներով դուրս են գալիս և՛ արտաքին, և՛ ներքին թշնամու դեմ, թե ինքնուրույնաբար և թե քաջ ու հայրենասեր իշխանների, նահապետների առաջնորդությամբ։ Պատկանյանի այդ երկերի համար դիցաբանությունը ընդհանուր ֆոն է, որը գնալով թուլանում է ընդդիմադիր ուժերի ռեալ, կենսական փոխհարաբերությունների, նրանց բախումների ներգործող ազդեցության տակ։ Հայկա նետը աուիթ է, որպեսզի Գ. Պատկանյանը ժամանակակից հայ գյուղացիությանը, հայ ինտելիգենցիային տրամադրի ընդդեմ օտար բռնակալության, ուժ ու ոգի ներշնչի նրանց՝ ազգը և հայրենիքը պարսկա-թուրքական տիրապետությունից ազատագրելու համար։

---

[1] *Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 135. պավ. 11, էջ 9։*

[2] *Նույն տեղում, էջ 60։*

[3] *Նույն տեղում, էջ 55։*

«Հայաստանը այժըմ սըգով և թախիծով սևացած,
Տեսնում է, որ զորացել են ամեն տեղ ջոկք թշնամյաց,
Դրսեն օտարքն են փչատում, ներսեն տանջում բռնավորք,
Ցոլակի հետ շատ կան կըցուրդ ավագորյարք փառավոր»[1]։

Մինչդեռ բռնակալ Ցոլակի շուրջը հավաքված են ազգի ընտրյալները, «ավագորյարք փառավոր», բայց նրա դեմ ոտքի է կանգնել աշխատավոր գյուղացիությունը և ջոկատներ կազմած արիաբար կռվում է բռնության դեմ։

Ազգային էր այս պատերազմ, դեռ զորավարք չեն հասած,
Արա զըկեց զորապետներ՝ առաջնորդել այն քաջաց.
Վերջացել էր և սոցա հունձք, լեռնականքն պարապ են,
Շամիրամի դեմ մարտնչիլ գլուխն առած վազում են[2]։

Գ. Պատկանյանի այդ երկերում «ազգային պատերազմը» ղեկավարում-գլխավորում են նահապետները, թագավորները։ Թշնամու դեմ գյուղացիության վերջին հախուռն հարձակումը պսակվում է հաղթանակով՝ դյուցազնի հանկարծակի հայտնվելու շնորհիվ։ Ժողովուրդը քաջ է և հաղթող, բայց չունի իր սեփական հերոսները։ Գյուղացիությանն առաջնորդում է Հայկի տոհմից սերված Կտրիճը։ Եվ չնայած բանաստեղծը «Վաշտակում» ընդգծում է, թե՝ անցել են այն ժամանակները, երբ ասում էին. «Ով Հայկա աթոռն ունի՝ նա է մեր իշխանը...», բայց միշտ Հայկի շառավիղներին է հանձնում նահապետությունը։ Կարը (Կայպակ) այդ գեղջկական չարքաշ կյանքով մեծացած երիտասարդը, որը շատ հեռու է եղել ազնվական միջավայրի ազդեցությունից, պարզվում է, որ դյուցազն Վաստամի որդին է, և նա որպես այդպիսին ընտրվում է նահապետ։

Գ. Պատկանյանի դիցա-պատմական պոեմներից ուշագրավ են նաև «Անուշավանը» և «Փառնակը», որոնք հիմնականում գրված են կլասիցիզմի ոգով։

«Անուշավան» պոեմը հեղինակը կոչում է «Բանաստեղծական վիպասանություն» կամ «ազգային պարզ վեպ», որի նյութը քաղված է Խորենացու «Հայոց պատմության» առասպելներից։ Այստեղ էլ, ինչպես «Հայկերգ», «Արամերգ», «Արայի մահը» և «Կարդոս» պոեմներում, սյուժեն պտտվում է Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելի շուրջը։

Անուշավանը Հայկի տասներորդ շառավիղն է, Արայի թոռը, Կարդոսի որդին։ Երբ արդեն ծերացած Շամիրամի դեմ պատերազմի է ելնում նրա որդին՝ Նինուասը և քշում Շամիրամին իր Ջրադաշտ ամուսնու հետ դեպի Հայաստան, Արայի որդի Կարդոս նահապետը իր բանակով օգնական է կանգնում Շամիրամին։ Պատերազմում հաղթում է Նինուասը.

---

1 «Շավարշ Բ», «Հյուսիս», 1863, էջ 179։ Մատենադարան, Ջանազան հեղինակների արխիվ, թղթ. 62, վավ. 13, էջ 3 ա։

2 «Անուշավան», Զմյուռնիա, 1875, էջ 52։ Մատենադարան. Պատկանյանների արխիվ, թղթ. 135, վավ. 6։

գոհվում են՝ Շամիրամը, Զրադաշտը և Կարդոսը։ Նինուասը գերի է վերցնում նաև Կարդոսի միակ որդուն՝ պատանի Անուշավանին և պահում ասորական արքունիքում։ Ծանր, սրտամաշ կյանք է վարում Անուշավանը. նրան տանջում է Հայաստանի վիճակը, նրա ազատության հարցը։

Մի օր, երբ Անուշավանը զբոսնում էր մտամոլոր, իր դղյակի լուսամուտից նրան նկատում և իր մոտ է հրավիրում Շամիրամի դուստրը՝ դրշխուհի Դերկեթը (Դերկեթը Նինուասի քույրն էր, Շամիրամի դուստրը՝ վերջին ամուսնուց՝ Զրադաշտից)։ Այդ հանդիպումը երկու երիտասարդ էակների մեջ առաջ է բերում հոգեկան անխզելի կապ։ Նրանք միասին անց են կացնում վայելքի ջերմ ժամեր և ապա պատմում միմյանց իրենց կյանքի ու ծագման մանրամասնությունը.

—Այլ ես թոռն եմ այն Արայի՝ Անուշավան իմ անուն,
Իմ հայր Կարդոս մարտի մեջը թափեց անպարտ յուր արյուն.
Շամիրամի էր օգնական, նորա եղև մահակից,
Քո մայր, իմ հայր ի միասին անկան կործան վիրալից։

Դերկեթը պատասխանում է.

—Դերկեթ դշխույս սրտիս սերը, գնում եմ քո ոտից տակ.
Անուշավան իմ բաժին է՝ չբնադ նախնույն փոխանակ.
Ես բարեբախտ, քան զիմ մայրը. Արայի տեղ քեզ տեսա.
Հոգիդ մաքուր, սերդ անարատ, տրիտուր սիրույս նա կուտա...

Երիտասարդ զույգի ծնողների ունեցած կապի ու ճակատագրի պատմությունը ուժեղացնում է նրանց միջև ծագած սերը։ Անուշավանը Դերկեթին թախանձում է պատմել Շամիրամի՝ Արայի դեմ հարուցած պատերազմի եղելությունը։ Դերկեթը հուզմունքով հիշում է Շամիրամի գլխով անցած օրերը՝ նրա ամուսնությունը իր սիրած Մենոնի հետ, Նինոս թագավորի խարդավանքը, Շամիրամի ակամա ամուսնությունը Նինոսի հետ, վշտահար Մենոնի մահը, Շամիրամի գահակալությունը և վրիժառությունը Նինոսից, նրա սերը դեպի Արան, առաջին պատերազմը Արայի դեմ, հանդիպումը և զրույցը Արայի և Նվարդի հետ, Զրադաշտի հանդեսդալը, երկրորդ պատերազմը Արայի դեմ, Արայի մահը, Շամիրամի սգալի օրերը, նրա ամուսնությունը Զրադաշտի հետ, Նինուասի պատերազմը Շամիրամի դեմ և Շամիրամի մահը...

Այս վշտալի պատմությունը Անուշավանի և Դերկեթի մեջ առաջ է բերում մի նոր, ուժգին սեր դեպի դյուցազն Արան և նրա անօգնական հայ ազգն ու Հայաստանը։ Անձնանվեր Դերկեթը, դժգոհ իր եղբայր Նինուաս թագավորի՝ Հայաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, հնարագիտությամբ ձեռք է բերում Հայկա նետը, ուժ ու կորով ներշնչում Անուշավանին։

Ասորեստանի արքայական հրապարակում հրավիրվում է քաջերի մրցություն։

—Թագավորը հրամայեց և կանգնեցավ մունետիկ,
Բարձր ձայնով քարոզ կարդաց,—«Ականջ դրեք ով մարդիկ,
Արքունական հրամանն է, ով որ հաղթի այս քաջին,
Պարգև կառնե թագավորեն, գահ ավագանց առաջին»։

Անուշավան քաջը՝ Դերկեթի հովանավորությամբ, պատրաստվում է մասնակցելու մրցությանը։

—Դերկեթ ասաց, հազար համբույր և բյուր գգվանք իմ գրկաց,
Քեզ կսպասեն սոսանվեր ձոն իմ շրթանց և լանջաց,
Զորավիգ է քեզ իմ սերը, և քո սիրած Հայաստան,
Նետն Հայկա իմում ձեռին՝ առհավատչյա՝ հաղթության։

Ծանր ու երկար մենամարտում, անհաղթելի հսկային հաղթում է Անուշավանը։ Ծափ ու որոտ է բարձրանում։ Քաջի հաղթանակով հրճվում է ամբոխը, հրճվում է և թագավորը.

—Թագավորը փաղաքշելով ասաց,—պարգև իմ սիրուն՝
է իմ առատ գանձը ոսկուց և իմ սրտի գոհություն.
Անուշավանը նոր փեսա և փեսա տան արքայի,
Բարեբախտիկ և երջանիկ նորա կյանքը կլինի։

Սակայն այլ է Անուշավանի և Դերկեթի բաղձանքը։ Նրանք ցանկանում էին օգնության հասնել Հայաստանին։

—Ինչ օգուտ ձեզ այն աշխարհն, երկիրը զոր կորչում է,
Նրնուաս նոցա թշվառության ծայրիվ մատին հասնում չէ,
Շրջակա ազգ գազանացած գիշատում են խեղճ ազգին,
Լոկ մեկ խոսքով չէ ուզում որ պաշտպան կանգնի ասորին։

Այս խոսքերով է դիմում Դերկեթ դշխուհին Ասորեստանի ավագ պալատականներին։ Այդ միջոցին Հայաստանից պատգամավորներ են գալիս, և հայտնում, որ քառասուն հազար հայ երիտասարդներից կազմված զորախումբը սպասում է իրենց նահապետի՝ Անուշավանի վերադարձին։

—Բավական է պանդխտությունդ, տասնուհինգ ամի արդ եղեն,
Թշնամիքը պատառում են քո հայրենին ապազեն,
Դարձուր ազգի ցնծությունը, մխիթարե քո ազգըն,
Քեզ պիտի տանք Հայաստանին, այս է ազգի պատգամքըն։

Նրնուաս թագավորը տալիս է իր համաձայնությունը։ Անուշավանը Դերկեթի հետ, հայոց պատգամավորների ուղեկցությամբ վերադառնում է Արմավիր և նստում նահապետական աթոռին։

Ավելի եւս ուշագրավ է «Փառնակ» պոեմը, որի նյութը Գ. Պատկանյանը վերցրել է հայ և վրաց ժողովուրդների ավանդական պատմությունից։ Դիցաբանական այս ընդարձակ պոեմով հեղինակն այն հստակ գաղափարն է զարգացնում, որ հայ և վրաց ժողովուրդները ունեցել են

եղբայրական ծագում և որ սերտ բարեկամությունն ու միությունը ուղեկցել են նրանց հին ժամանակներից սկսած՝ մինչև մեր օրերը։

Պոեմի հերոսները հայ և վրաց նահապետական տների ժառանգներն են։ Փառնակը՝ Զավան նահապետի որդին (ըստ ավանդության, մեր թվարկությունից 1531 տարի առաջ, 53 տարի շարունակ կառավարել է հայկական տան աթոռը) և վրաց նահապետի դուստրը՝ Զամիրհը սիրում են իրար, թեև վերջինիս հայրը մերժել է Զավանի առաջարկը՝ Փառնակին կնության տալու իր աղջկան։

Վրաստանի նահապետի որդին՝ Զամիրոնը՝ Զամիրհի եղբայրը, սիրում է գեղեցկատեսիլ հայուհի Շուշանին, բայց մի այլ աղջիկ՝ վրացուհի, որ նույնպես սիրում է Զամիրոնին, խանգարում է նրանց սերը և կախարդանքով հեռացնում է Զամիրոնին Շուշանից։ Մծխեթի դղյակում Շուշանը երեք տարի պառկում է քնով, իսկ տղան՝ Զամիրոնը վշտահար տենչում է նրան։ Զամիրոնին և Շուշանին հսկում է կախարդող աղջիկը՝ երնջի կերպարանքով։

—Հայրս տեսավ, որ երեց որդին հայ կուսանի պատճառավ,
Մեր հայրենյաց երջանկությունն բոլորովին մոռացավ,
Չկամեցավ այսուհետև՝ հայոց ազգին խնամանալ,
Եվ Փառնակ ջան ի հարսնություն ի Հայաստան զիս քեզ տալ։

Զամիր դշխուհին այս պատմությունն անում է Փառնակին, երբ վերջինս Սոսյաց անտառներում որսի ելած ժամանակ, կորցնելով իր ընկերներին, եկել հասել էր վրաց նահապետի դղյակը և դիպվածով հանդիպել իր սիրուհուն՝ Զամիրին։ Զամիրը իր և Փառնակի նախնիների եղբայրությունն ու բարեկամությունը հիշելով, կրկին իր նվիրական սերը հայտնելով հայ դյուցազնին, խնդրում է նրան աջակցել իր եղբորը՝ ազատել նրան և նրա սիրած Շուշանին կախարդանքից, որով կիրագործվի և իրենց միությունը։

Պիտի հարցեմ այս նետ, թեպետ Բելա արյամբ է ներկած,
Հայկա եղբոր քաջ արյունն է ի մեջ իմոց երակաց։
Զամիր դշխույս չեմ թշնամի Արամազնյաց սերնդոց,
Որպես նախնիքս միշտ հաշտ լին, ես ևս հաշտ եմ ընդ հայոց։

Մեր ծնողաց տրտմության մեզ, կերթանք փույթ կու կփարատենք,
Եվ զիմ եղբայրն յուր մեծ ցավեն հաջողությամբ կազատենք,
Դու կլինիս այն իմ եղբոր ընդ բոլոր կյանս բարերալ,
Զքեզ ոչ փեսա, այլ զևրթ որդի կընդունին իմ հայր և մայր։

Սիրո, թովչանքի երկար ժամեր անցկացնելուց հետո Փառնակն ու Զամիրը նստում են իրենց նժույգները և մեկնում դեպի Զամիրոնի դղյակը։ Նրանց ընդառաջ է գալիս դալուկ ու վշտահար Զամիրոնը, ապա նրանց առջև բացվում է քնած Շուշանի, նրա մոտ կապված երնջակի տեսարանը։ Զամիրոնը թախանձում է երնջին՝ կյանք տալ իր Շուշանին. երինջը ցաված սիրով նայում է նրան, մերժում նրա խնդիրը և կրկին.

իր սերը հայտնում Զամիրոնին։ Զամիրոնը այս անգամ զայրացին պատասխանում է.

Այ անզգամ,— ասաց Զամրոն,— մարդ կու սիրն ակամա,
Քեզ ի՞նչ սիրեմ, երբ տանջում ես անձամբ վանձդ անխնա.
Սեր ի սրտե պիտի լինի, ես քեզ հոգով եմ ատում,
Բոլոր կենացս թունավորիչ և խանգարիչ ճանաչում։

Բայց երինջը կրկին մերժում է, ասելով.

Այսուհետև, մեկ վիմ վզիս պիտի կախած Քուռն ընկնիմ,
Որ Շուշանին քո ծոցումը իմ բաց աչքով տեսանիմ։

Այս ամենը տեսնելով Փառնակը, Զամիրի և Զամիրոնի խնդրանքով, Հայկա նետի զորությամբ, փարատում է թովչությունը։ Նա նետահար է անում երնջի մորթին, և մորթու տակից ազատվում է չքնաղ վրացուհին։ Նույն ժամին քնից արթնանում է Շուշանը և ողջագուրվում իր փեսացուի հետ։ Զամիրը և Փառնակը ամուսնանում են և մեկնում Հայաստան՝ նրանք վերցնում են իրենց հետ և գեղեցիկ վրացուհուն, որպես հարսնացու մի հայ սեպուհի։ Իսկ Զամիրոնն ու Շուշանը ամուսնանում են՝ նոր կյանք տալով վրաց նահապետական աթոռին։

Այս պոեմն էլ, ինչպես «Անուշավանը», ծանրաբեռնված է կողմնակի շատ նյութերով, հատկապես «Արամերգի» առասպելական պատմություններով։

Անհրաժեշտ է նկատել, որ ընդհանրություններով հանդերձ, Գ. Պատկանյանի հերոսները որոշ իմաստով նաև տարբերվում են կլասիցիստական մյուս վիպերգերի հերոսներից։ Եթե կլասիցիզմի ներկայացուցիչները ամենուրեք պահպանում էին իրենց հերոսների դիցաբանական կերպարանքը, ապա Պատկանյանի հերոսների մոտ նկատելի է կենցաղային, հոգեբանական մոմենտների գերակշռությունը, որով և նրանք դառնում են ավելի կենդանի և առօրեական։ Նրանք խոսում են ժողովրդի լեզվով, գործում են ինչպես հասարակ մարդիկ։

Գ. Պատկանյանի պատմա-առասպելական թեմաներով գրված երկերի մեջ կան կանանց գեղարվեստորեն հաջողված կերպարներ։ Շամիրամը և Նվարդը («Անուշավան»), Լուսնթագը և Համասփյուռը («Հայկերգ»), Շահպուրակը և Շուշանը (Վաշտակ»), Մարգարիտը, Մեխակը և Անթառամը («Կար») անհատականանում են իրենց ներքին, հոգեկան աշխարհով, իրենց մտածողությամբ ու գործով։ Ջերմ սեր, անձնվիրություն, կարեկցություն, մեծահոգություն, ընտանեկան երջանիկ կյանքի ձգտում, խանդ, դավադրություն, զղջում, կիրք,— այս բոլորը առավել կամ նվազ չափով, հաճախ վառ ու գունագեղ պատկերների մեջ, դրսևորվում է նրանցից յուրաքանչյուրի մոտ։ Այս տեսակետից Գ. Պատկանյանի պատմական երկերի մեջ բացառիկ տեղ է գրավում «Կար» (1857) պոեմը։ Մարգարիտը անբիծ ու հասարակ գեղջկուհու այն տիպարն է, որը խոր կերպով զգում է աշխարհիկ կյանքի, վայելքների հմայքը, մարդկայնորեն անձ-

նատուր լինում նրան և ապա գիտակցաբար հրաժարվում նրանից։ Նրա պարզ, անձնվեր, նախուռն սիրո զգացմունքները դեպի Սյունյաց իշխան Վասակը, նրա անկաշառ որդիական սերը դեպի իր տանջված, չարքաշ ու ծերացած ծնողները, նրա մայրական խանդաղատանքը՝ դեռևս չծնված իր մանկան նկատմամբ, նրա գորովագութ սերն ու նվիրվածությունը դեպի իր որդին՝ Կարը, տրված են զարմանալիորեն նուրբ ու քնքուշ դիտողականությամբ, պարզ, անկաշկանդ նկարագրությամբ։ Այստեղ ավելի, քան հեղինակի մյուս երկերում, ճկուն ու շարժուն գործողությունների ու դեպքերի խաչավորվող բախումների ու հանգույցների մեջ կոնկրետանում է շոշափելի մարդը՝ իր հոգեբանության բնորոշ կողմերով։

Գ. Պատկանյանի վերոհիշյալ պոեմներն ունեն մշակված սյուժե, գործողությունները զարգանում են տրամաբանական ընթացքով և հասնում որոշակի վախճանի։ Այդ պոեմների հերոսները (Վաչտակ, Հայկակ, Մանիշակ, Շահպուրակ, Հայկ, Արմենակ, Լուսնթագ, Արա, Նվարդ, Անուշավան և այլն) խոսում են շատ հասարակ լեզվով, անբռնազբոսիկ բնական ոճով։

Ճիշտ է, Գ. Պատկանյանի լեզուն այնուհետև բացարձակ զարգացում չապրեց, և նրա հետ հանդես եկած բանաստեղծներն ու արձակագիրները բարձր զարգացման հասցրին գրական հայերենը, բայց Գ. Պատկանյանը գնահատելի է նրանով, որ հանդիսացավ գրական հայերենի առաջին կիրառողներից մեկը։ Պետք հաշվի առնել, որ Գ. Պատկանյանը իր աշխարհաբարով գրած երկերից շատերը ստեղծել է այն ժամանակ, երբ դեռ լույս չէր տեսել «Վերք Հայաստանին», երբ նոր էր բորբոքվում հին և նոր գրականության, աշխարհաբարի և գրաբարի պայքարը։ Այսպիսով, նույնիսկ պատմա-դիցաբանական երկերի մեջ էլ առկա է իր ժամանակի ակտիվ գործիչը։

* * *

XIX դարի հայ գրական պրոցեսում Գաբրիել Պատկանյանը առանձնակի տեղ է գրավում։ Իր պոեզիայի՝ բանաստեղծությունների և հատկապես պատմական պոեմների հիմնական որակով Գ. Պատկանյանը զգալի չափով կապվում է հայկական կլասիցիզմի տրադիցիաների հետ և դառնում է նրա ամենավերջին ներկայացուցիչներից մեկը։ Այդ մասին է խոսում, մասնավորապես, այդ պոեմների և շատ բանաստեղծությունների հնագույն պատմական թեմատիկան, դիցաբանական, հրաշապատում տարրերի խոշոր դերը այդ երկերի սյուժեներում և ամբողջ գաղափարական բովանդակության մեջ, նրանց ռացիոնալիստական ոճը և կոնֆլիկտների լուծումը՝ նախօրոք սահմանված սխեմայի համաձայն, այդ ստեղծագործություններից մի քանիսի գրաբար լեզուն և այլն։ Ընդ որում, Գ. Պատկանյանի, իբրև կլասիցիստ-բանաստեղծի մի կարևոր առանձնահատկությունն էլ այն է, որ ստեղծելով այդ պոեմների մեծ մասը 30—50-ական թվականներին, նա տպագրել է դրանք շատ ավելի

ուշ՝ 60-ական և հատկապես 70—80-ական թվականներին հայկական պարբերական մամուլում ու առանձին գրքերով։ Այսպիսով, այդ գրքերը լույս էին տեսնում այն ժամանակ, երբ կլասիցիզմի սկզբունքների հնացած լինելը շատ ավելի ցայտուն էր դարձել, երբ հրապարակի վրա արդեն տիրապետող էին նոր ստեղծագործական մեթոդները՝ ռոմանտիզմն ու քննադատական ռեալիզմը։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Պատկանյանի պատմական պոեմները արդեն գործուն ազդեցություն չունեցան մեր գրականության զարգացման վրա, իսկ նրանց մի մասը մինչև այսօր էլ մնում է անտիպ։

Այնուամենայնիվ, սխալ կլիներ նաև Գ. Պատկանյանին դիտել միմիայն կլասիցիզմի շրջանակներում, նախ այն պատճառով, որ ժամանակագրական իմաստով նրա ստեղծագործությունը շատ է հեռանում այն ժամանակաշրջանից, երբ կլասիցիզմը համեմատաբար տիրապետող դիրքեր էր գրավում մեր գրականության մեջ, և, երկրորդ, իրենց որոշ հատկանիշներով նրա երկերը անպայման շեղվում են կլասիցիզմի կանոններից։ Այդ առթիվ պետք է նորից ընդգծել, որ նրա պոեմների հերոսներից շատերը բնութագրվում են պարզ, սովորական մարդկանց հատկանիշներով, զերծ են կլասիցիզմի կերպարներին հատուկ բացառիկությունից։ Գ. Պատկանյանի պոեմների մեծ մասը գրված է աշխարհաբարով՝ բարբառային տարրերի բավական ուժեղ խառնուրդով, մի բան, որ նույնպես լուրջ շեղում էր հայկական կլասիցիզմի տրադիցիաներից։ Սրան պետք է ավելացնել և այն, որ մի քանի պոեմներում և հատկապես իր արձակ երկերում Պատկանյանը ինչ-որ չափով տուրք է տալիս բուռն զգացմունքայնության և դեպքերի արկածայնության ռոմանտիկական սկզբունքին։ Այս բոլորը ցույց են տալիս, որ նա անտարբեր չէր ժամանակի նոր գրական պահանջների և հովերի նկատմամբ և ինչ-որ չափով աշխատում էր արձագանքել նրանց։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1772

—*Մադրասում, Շահամիր Շահամիրյանի և նրա որդի Հակոբ Շահամիրյանի ջանքերով հիմնվում է հայկական տպարան։ Տպարանն իր գոյությունը շարունակում է մինչև 1783 թվականը։*

—*Մադրասում, գրաբար լեզվով, հրատարակվում է Մովսես Արցախեցի Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» աշխատությունը։*

—*Վանում ծնվեց բանաստեղծ Հովհան Վանանդեցին։ Վախճ. 1840 թ. փետրվարի 3-ին, Զմյուռնիայում (Իզմիր)։*

1773

—*Մադրասում, գրաբար լեզվով, հրատարակվում է Շահամիր Շահամիրյանի «Գիրք անուանեալ Որոգայթ Փառաց» աշխատությունը։ Նույնը անփոփոխ՝ Թիֆլիս, 1913։ (Չնայած գրքի վրա որպես հեղինակ նշված է Հակոբ Շահամիրյան, բայց բանասիրությունն ապացուցել է, որ այն պատկանում է հոր՝ Շահամիր Շահամիրյանի գրչին)։*

1774

Ապրիլի 20. *Վաղարշապատում ծնվեց գրական-հասարակական գործիչ, մեմուարիստ Հարություն Արարատյանը։ Անհայտացավ 1831 թվականին, Տրապիզոն մեկնելու ճանապարհին։*

Հունիս. *Պոլսում ծնվեց հայկաբան, բառարանագիր և թարգմանիչ Հարություն Ավգերյանը։ Վախճ. 1854 թվականի նոյեմբերի 24-ին, Վենետիկում։*

1775

—*Մադրասում հրատարակվում է Մեսրոպ Երեցի «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց» աշխատությունը։*

1776

—*Տրիեստում, Վենետիկի Մխիթարյաններից պառակտված միաբանների ուժերով, հիմնվում է հայկական տպարան։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1811 թվականը, ապա, փոխադրվելով Վիեննա, հարատևում է առ այսօր։*

1779

—*Էջմիածնում, Սիմեոն կաթողիկոսի նախաձեռնությամբ, ստեղծվում է հայկական տպարան։*

1780

Հունվարի 2. *Պետերբուրգում, ռուսաց իշխանավորների և Հովսեփ Արղության ու Հովհաննես Լազարյանի միջև սկսվում են բանակցություններ, նվիրված հայոց մելիքներին միավորելու և անկախ Հայաստան ստեղծելու հարցին։ Բանակցություն-*

ները, որոնցից մի քանիսին ներկա էր նաև Սուվորովը, տևում են մինչև հունվարի 13-ը։

—Մադրասում, Պողոս Միրզոյան Ամթեցու՝ անգլիական բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Հանունի «Պատմություն Դահմազի» (Պատմագրություն վարուցն և գործոց Նատըր շահ թագաւորին Պարսից) աշխատությունը։

—Պետերբուրգում, Գրիգոր Խալդարյանցի և Հովսեփ Արղության համատեղ ջանքերով հիմնվում է հայկական տպարան։ Տպարանն իր գոյությունը շարունակում է մինչև 1787 թվականը։

1783

Մարտի 5. *Գանձասարում հավաքված հայ մելիքները, հայ ժողովրդի անունից իրենց հպատակությունն են հայտնում Ռուսաստանին և խնդրում են արագացնել Ռուսաց զորքերի առաջխաղացումը Հայաստան։*

Հուլիսի 24. *Գեորգիևսկ բերդում, գեներալ Պոտյոմկինի և Վրաստանի թագավոր Հերակլի միջև կնքվում է դաշնագրություն՝ Վրաստանը Ռուսաստանի հպատակության ներքո անցնելու մասին։*

1784

Դեկտեմբեր. *Գեներալ Պոտյոմկինը պաշտոնապես ծանուցում է, որ ռուսական զորքերի 1784 թվականի ամառը ծրագրված արշավանքը Հայաստան չի կայանալու։*

—Վենետիկում, գրաբար լեզվով, հրատարակվում է Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց, ի սկզբանէ աշխարհի մինչև ցամն տեառն 1784» աշխատության առաջին հատորը։ Հրատարակությունն ավարտվում է 1786 թվականին. լույս է տեսնում երեք հատոր։

1787

—Պետերբուրգում հրատարակվում է Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատությունը։ Նույնը Կալկաթայում, 1816, Պոլսում, 1823, Վենետիկում 1828 և 1838 թվականներին։ (Վերջինը՝ լիակատար ժողովածու)։

1788

—Պետերբուրգում հրատարակվում է Ներսես Շնորհալու «Գիրք որ կոչի ընդհանրական»։ Նույնը՝ Պոլսում («Թուղթ ընդհանրական» վերնագրով) 1825-ին, Վենետիկում՝ 1830-ին (լիակատար ժողովածու), նույնը՝ Հ. Կապյուլետտիի իտալերեն թարգմանությամբ, Վենետիկ, 1829, 1833։

1790

Հունիսի 23. *Յաշ քաղաքում (Մոլդավիա) Հովսեփ Արղությանը զեկուցագիր է ներկայացնում իշխան Պոտյոմկինին, հայ ժողովրդի աննախանձելի դրության մասին։*

—Վենետիկում, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Մխիթար Գոշի առակների ժողովածուն՝ «Առակք ոտանաւորք և խրատականք» խորագրով։ Նույնը («Առակք Ողոմպիանու» բաժնի հավելումով) 1842-ին։

—Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքում հիմնվում է հայկական տպարան։ Վերջինս Պետերբուրգի՝ Գրիգոր Խալդարյանցի տպարանն էր, որն իր գոյությունը դադարեցրել էր 1787 թվականին և Նոր Նախիջևան էր տեղափոխվել 1789 թվականին։ Տպարանն իր գոյությունը դադարեցնում է 1796 թվականին, ապա տեղափոխվում է Աստրախան։

1791

—*Փարիզում ծնվեց ֆրանսիացի հայագետ Անտուան Ժան Սեն-Մարտենը։ Վախճ. 1832 թվականի հուլիսի 4-ին, իր ծննդավայրում։*

1792

—*Մադրասում հրատարակվում է Ներսես Շնորհալու «Յիսուս Որդին»։ Նույնը՝ առաջաբանով, ծանոթագրություններով և բնագրային տարբերակներով, Վենետիկ, 1830։*

1793

—*Վենետիկում հրատարակվում է Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» գիրքը։*

1794

Հոկտեմբեր. *Մադրասում, գրաբար լեզվով, Հարություն քահանա Շմավոնյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարար»։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1796 թվականի մարտը և հրատարակվում է ընդամենը 18 համար։*

—*Նոր Նախիջևանում, Մարգար Խոճենցի՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ֆենելոնի «Արկածք Տելեմաքայ» վեպը։*

1795

Գարուն. *Իրանի Աղա Մահմադ խանը, իր հիսուն հազարանոց բանակով, սկսում է նվաճումներն Անդրկովկասում։*

Հուլիս. *Աղա Մահմադ խանի զորավար Ալի Ղուլի խանը շրջապատում է Երևանի բերդը։ Փոքր կռվից հետո բերդն անձնատուր է լինում։*

Օգոստոս. *Աղա Մահմադ խանն սկսում է Շուշու բերդի պաշարումը։ Երեսուներեք օր տևող արյունահեղ մարտերից հետո, չկարողանալով ընկճել պաշտպանների դիմադրությունը, բերդի պաշարումը դադարեցվում է։ Աղա Մահմադ խանը Շուշին կարողանում է նվաճել միայն հաջորդ տարում։*

Սեպտեմբեր 13. *Աղա Մահմադ խանի զորքերը, կոտրելով քաղաքը պաշտպանողների դիմադրությունը, ներխուժում են Թիֆլիս և անխնա ավերում են այն։ Այստեղ էլ, քաղաքը պաշտպանողների շարքերում, սպանվում է աշուղ Սայաթ-Նովան։*

1796

Մայիսի 10. *Գեներալ Վալերիան Զուբովի հրամանատարությամբ գործող ռուսական զորքերը, որոնք ուղարկված էին Աղա Մահմադ խանի հետ կռվելու, գրավում են Դերբենդը։*

Սեպտեմբերի 25. *Աստրախանում ծնվեց մանկավարժ, հասարակական գործիչ և գրող Հարություն Ալամդարյանը։ Սպանվեց 1834 թ. մայիսի 24-ին, Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքում։*

—*Կալկաթայում առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվում է Աբրահամ կաթողիկոս Կրետացու «Պատմութիւնը»։*

—*Կալկաթայում, Հովսեփ Ստեփաննոսյանի ջանքերով, ստեղծվում է հայկական տպարան։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1799 թվականը։*

—*Աստրախանում հիմնվում է հայկական տպարան, որն իր հրատարակությունները սկսում է 1797 թվականից։ Տպարանն իր գոյությունը շարունակում է մինչև 19-րդ դարի 20-ական թվականները։*

1798

Փետրվարի 26. *Պավել Առաջին կայսեր հրովարտակը՝ որով շնորհակալություն է հայտնում հայ ժողովրդին՝ ռուսական զորաբանակներին ցույց տված օգնության համար։*

1799

Հունվարի 22. *Պոլսում ծնվեց գրականության տեսաբան, բանաստեղծ, թարգմանիչ Էդուարդ Հյուրմյուզյանը։ Վախճ. 1876 թվականի հոկտեմբերի 26-ին, Հռոմում։*

Հոկտեմբերի 9. *Պոլսում ծնվեց դրամատուրգ, թատերական տեսաբան Պետրոս Մինասյանը։ Վախճ. 1867 թվականի օգոստոսի 19-ին, Փարիզում։*

—*Վենետիկում, աշխարհաբար լեզվով, Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել հասարակական, քաղաքական, գրական ամփոփագիր «Տարեգրություն» պարբերականը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1802 թվականը։*

1801

Օգոստոսի 12. *Գլախաուում (կենտր. Գերմանիա) ծնվից գերմանացի հայագետ Հուլիոս Հենրիխ Պետերմանը։ Վախճ. 1876 թ. Պատ-Նաուհայմում։*

Սեպտեմբերի 12. *Ալեքսանդր Առաջին կայսեր մանիֆեստը՝ Վրաստանը Ռուսաստանին միացնելու մասին։ Վրաստանի հետ մեկտեղ Ռուսաստանին են միանում Լոռու, Փամբակի, Ղազախի շրջանները։*

—*Վենետիկում, գրաբար լեզվով, հրատարակվում է Գաբրիել Ավետիքյանի «Մեկնութիւն կամ լուծումն Նարեկայ» աշխատությունը։ Նույնը՝ 1827 և 1859 թվականներին։*

1802

Փետրվարի 5. *Փարիզում ծնվեց ֆրանսիացի հայագետ Մարի Ժան Բրոսսեն։ Վախճ. 1880 թվականի սեպտեմբերի 3-ին, Շաթըրլոյում (հար. Ֆրանսիա)։*

Փետրվարի 26. *Թիֆլիսում ծնվեց պատմաբան և բանաստեղծ Գաբրիել Պատկանյանը։ Վախճ. 1889 թվականի ապրիլի 13-ին, Պետերբուրգում։*

Հոկտեմբերի 9. *Սեպենիքոյում (կենտր. Իտալիա), ծնվեց իտալացի հայագետ Նիկոլա Թոմմազեոն։ Վախճ. Ֆիրենցեյում, 1874 թվականի մայիսի 1-ին։*

1803

Հունվար. *Երևանի Զորագյուղ թաղում ծնվեց գրող, մանկավարժ և հրապարակախոս Մեսրոպ Դավթի Թաղիադյանը։ Վախճ. 1858 թվականի հունիսի 10-ին, Շիրազ քաղաքում (Պարսկաստան)։*

—*Վենետիկում, Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ, աշխարհաբար լեզվով, հրատարակվում է «Եղանակ Բյուզանդյան-Բազմավեպ» տարեգիրքը։ Շարունակվում է հրատարակվել մինչև 1820 թվականը։*

1804

Հունվար. *Սկսվում է ռուս-պարսկական պատերազմը։*

Մայիս. *Երևանի սարդար Մահմեդ խանը, տեղեկանալով ռուսների առաջխաղացման մասին, կարգադրում է Երևանի, Կրխբուլաղի և Էջմիածնի շրջանի բոլոր հայկական ընտանիքներին տեղափոխել Օսմանյան պետության խորքը։ Տեղահանվում են մոտ չորս հազար հայ ընտանիք։*

—*Վենետիկում հրատարակվում է Մանվել Ջախջախյանի «Բառարան յիտալական լեզուէ ի հայ և ի տաճիկ բարբառս»։ Նույնը համառոտ՝ 1829-ին։*

1806

Դեկտեմբերի 18. *Սկսվում է ռուս-թուրքական պատերազմը։*

—*Վենետիկում հրատարակվում է Հովակիմ Օղուլլուխյանի «Նիւթ բժշկական» պատմափիլիսոփայական աշխատությունը։*

1807

—*Վենետիկում, Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Ցիշատակարան» քաղաքական-բանասիրական տարեգրությունը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1808 թվականը։*

1808

Սեպտեմբերի 26. *Ռուսական զորքերը գրավում են էջմիածինը։*

—*Պոլսում հրատարակվում է Մեսրոպ Տեր-Հարությունյանի «Քերականութիւն հայոց լեզուի. նորոգ քննութեամբ» աշխատությունը։ Նույնը՝ 1826-ին։*

1809

Օգոստոսի 2. *Կալկաթայում մահացավ ազատագրական շարժման հայ ականավոր ներկայացուցիչ Հովսեփ էմինը։ Ծնվ. 1726 թվականին Պարսկաստանի Համադան քաղաքում։*

—*Քանաքեռում ծնվեց հայ մեծ լուսավորիչ, նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանը։ Անհետ կորավ 1848 թվականի ապրիլի 2-ին, Երևանից։*

1810

Դեկտեմբեր. *Փարիզի Արևելյան լեզուների դպրոցում, հայագետ Հակոբ Շահան-Ջրպետյանի նախաձեռնությամբ հիմնվում է հայոց լեզվի ուսումնասիրության ամբիոն։ Շահան-Ջրպետյանից հետո, ամբիոնի վարիչի պաշտոնը հաջորդաբար վարել են Ֆլորիվալը, Դյուլորիեն, Կարրիերը, Բրոսսեն, Լանգլուան, Բորեն։*

—*Աստրախանում բացվում է Ռուսահայոց առաջին դպրոցը՝ Աղաբաբյան վարժարանը։ Այստեղ սովորել է Հարություն Ալամդարյանը, աշակերտելով Սերովբե Պատկանյանին։*

—*Մադրասում, ձեռագրերի տեքստաբանական բաղդատմամբ և առաջաբանով, հրատարակվում է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը։ Նույնը՝ Փարիզում՝ 1828-ին, Թիֆլիսում՝ 1829-ին։*

1811

Փետրվարի 18. *Վիեննայում հաստատվում է Վենետիկի Մխիթարյան միաբանությունից պառակտված միաբանների խումբը Աստվածատուր Պապիկյանի առաջնորդությամբ։ Հիմնվում է Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, որն իր գոյությունը շարունակում է մինչև այսօր։*

—*Վենետիկում հրատարակվում է Միքայել Չամչյանի «Խրախճան պատմութեան հայոցը», որը նրա եռահատոր «Պատմութիւն Հայոց» աշխատության համառոտությունն է։ Նույնը՝ 1812 թվականին, նույնը Կալկաթայում 1824-ին, նույնը հայատառ տաճկերենով, 1850-ին։*

1812

Մայիսի 10. *Թեոդոսիայում (Ղրիմ) ծնվեց հայազգի, թարգմանիչ Գաբրիել Այվազովսկին։ Վախճ. 1880 թվականի ապրիլի 8-ին։*

Մայիսի 14. *Թիֆլիսում ծնվեց հրապարակախոս, «Հյուսիսափայլի» հիմնադիր և խմբագիր Ստեփաննոս Ոսկան Նազարյանցը։ Վախճ. 1879 թվականի ապրիլի 26-ին, Մոսկվայում։*

Մայիսի 16. *Բուխարեստում կնքված հաշտության պայմանագրով՝ ավարտվում է ռուս-թուրքական պատերազմը։ Հայաստանում տերիտորիալ փոփոխություններ չեն լինում։*

—*Պոլսում հիմնվում է առաջին գրական-հասարակական կազմակերպությունը՝ «Արշարունյաց ընկերությունը»։ Ընկերությունն իր առջև նպատակ էր դնում ազգի մեջ ընթերցանություն տարածել, հրատարակելով գրքեր ու լրագրեր։*

—*Վենետիկում, Գրիգոր Գապարաճյանի և ապա՝ Մանվել Ջախջախյանի խմբագրությամբ սկսում է հրատարակվել Արշարունյաց ընկերության օրգան «Դիտակ Բյուզանդիան» երկշաբաթաթերթը (հետագայում՝ շաբաթաթերթ)։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1816 թվականը։*

—*Վենետիկում, գրաբար և լատիներեն համատեղ տեքստերով հրատարակվում է Ներսես Լամբրոնացու «Ատենաբանությունը»։ Տեքստերը պատրաստել և իտալերեն թարգմանել էր Հարություն Ավգերյանը։*

—*Պետերբուրգում, Մարգար Խոճենցի՝ թուրքերեն բնագրից կատարված համառոտ թարգմանությամբ, հրատարակվում է Ֆազլիի «Բարառնական դիմառնություն բարոյական» վիպակը։ Նույնը՝ Խոճենցի ֆրանսերեն թարգմանությամբ Փարիզում՝ 1838-ին, և իտալերեն թարգմանությամբ Վենետիկում՝ 1879-ին։*

1813

Հոկտեմբերի 12. *Գյուլիստանում կնքված հաշտության պայմանագրով ավարտվում է ռուս-պարսկական պատերազմը։ Ռուսաստանին են անցնում արևելյան Վրաստանը, Լոռու, Ղարաբաղի և Շամշադինի շրջանները, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Կուբայի, Դերբենդի և Թալիշի խանությունները։*

—*Պետերբուրգում հրատարակվում է Հարություն Արարատյանի* «Жизнь Артемий Араратского, уроженца селения Вагаршапата» *ինքնակենսագրական գիրքը։ Նույնը գերմաներեն 1821-ին, անգլերեն՝ 1822-ին։*

1814

Մայիսի 14. *Պարսկաստանի Համադան քաղաքում ծնվեց հայագետ Կարապետ Շահնազարյանը։ Վախճ. 1865 թվականի օգոստոսի 29-ին, Պոլսում։*

1815

Մայիսի 12. *Մոսկվայում իր գործունեությունն է սկսում Լազարյան ճեմարանը։ 1827 թվականի դեկտեմբերի 26-ից՝ արևելյան լեզուների Լազարյան ճեմարան, 1828 թվականի մարտից՝ արևելյան լեզուների հայկական ճեմարան։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1917 թվականը։*

Սեպտեմբեր. *Պոլսում ծնվեց բանաստեղծ Խաչատուր Միսաքյանը։ Վախճ. 1891 թվականին։*

Նոյեմբերի 25. *Նոր Ջուղայում ծնվեց հայագետ, պրոֆեսոր Մկրտիչ Էմինը։ Վախճ. 1890 թվականի դեկտեմբերի 13-ին, Մոսկվայում։*

—*Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն)։ Վախճ. 1897 թվականի հոկտեմբերի 3-ին, իր ծննդավայրում։*

—*Պոլսում ծնվեց ռեալիստ գրող, պատմաբան, խմբագիր Հովսեփ Վարդանյանը (Վարդան փաշա)։ Վախճ. 1879 թվականի մարտի 28-ին, իր ծննդավայրում։*

—*Վենետիկում հրատարակվում է Մինաս Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց» չափածո ստեղծագործությունը։ Նույնը՝ 1818-ին։*

1816

Դեկտեմբերի 3. *Վենետիկ է գալիս անգլիացի նշանավոր գրող Բայրոնը և Հարություն Ավգերյանի մոտ սկսում է հայոց լեզու պարապել։ Ուսումնառությունը տևում է մինչև 1817 թվականի մարտ ամիսը։*

1817

—Վենետիկում, Մինաս Բժշկյանի արևմտահայերեն թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Դանիել Դեֆոյի «Ռոբինսոն Կրուզո» վեպը։ Նույնը՝ 1858, 1875, 1886, 1911 թվականներին։

1818

Փետրվարի 11. *Պոլսում ծնվեց պատմաբան Անտոն Մատաթիա Գարագաշյանը։ Վախճ. 1903 թվականի նոյեմբերի 26-ին, իր ծննդավայրում։*

Հունիսի 5. *Թիֆլիսում ծնվեց բանաստեղծ Գևորգ Ախվերդյանը։ Վախճ. 1861 թվականի նոյեմբերի 17-ին, իր ծննդավայրում։*

—Վենետիկում, Մինաս Բժշկյանի գրաբար թարգմանությամբ և ծանոթագրություններով, հրատարակվում է «Եզովբոսի առակք և վարք նորին» գրքույկը։ Նույնը՝ 1860, 1886, 1931 թվականին։

—Մադրասում, Հակոբ Նազար Շամրանի՝ անգլերենից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Վոլտերի «Մահ Յուլիոսի Կեսարու» ողբերգությունը։

1819

Փետրվարի 3. *Երևան է ժամանում ռուս նշանավոր գրող Ա. Ս. Գրիբոեդովը, որտեղ մնում է մինչև փետրվարի 7-ը։ Վերջինս մեկնում էր Թեհրան, որպես Պարսկաստանի ռուսական միսիայի քարտուղար։*

Սեպտեմբերի 23. *Կեսարիայի Էվերեկ գյուղում ծնվեց բժիշկ, գրականագետ ու հասարակական գործիչ Նահապետ Ռուսինյանը։ Վախճ. 1876 թվականի նոյեմբերի 29-ին, Պոլսում։*

—Վենետիկում հրատարակվում է Հարություն Ավգերյանի և լորդ Բայրոնի կազմած «Քերականութիւն հայ-անգղիերեն» աշխատությունը։ Նույնը՝ 1832, 1873, 1907 թվականներին։

1820

Հունվարի 17. *Ա. Ս. Գրիբոյեդովը Թեհրանից վերադառնալիս ժամանում է Էջմիածին, ուր մնում է մինչև հունվարի 19-ը։*

Փետրվարի 19. *Պոլսում ծնվեց նշանավոր պատմաբան և հայագետ Հովսեփ Գաթրրճյանը։ Վախճ. 1882 թվականի հունվարի 9-ին, իր ծննդավայրում։*

Ապրիլի 4. *Վանի Այգեստան արվարձանում ծնվեց ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկ)։ Կաթողիկոս է օծվել 1892 թվականի մայիսի 5-ին, վախճ. 1907 թվականի նոյեմբերի 17-ին Էջմիածնում։*

Հուլիսի 6. *Պոլսում ծնվեց նշանավոր գիտնական, հայագետ, գրող Ղևոնդ Ալիշանը։ Վախճ. 1901 թվականի նոյեմբերի 9-ին Վենետիկում։*

—Պոլսում (Քյուրքչիխանե) Պողոս Արապյանի ջանքերով հիմնվում է հայկական տպարան։ Տպարանն իր գոյությունը շարունակում է մինչև 1835 թվականը։

—Կալկաթայում Հովհաննես Տեր-Հակոբյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Հայելի Կալկաթեանս» շաբաթաթերթը։ Նույն թվականին դադարեցնում է իր գոյությունը։

1821

—Կալկաթայում բացվում է հայկական մարդասիրական ճեմարանը։ Այստեղ 1825—1826 թվականներին հայոց լեզվի ուսուցչի պաշտոնով աշխատել է Մեսրոպ Թաղիադյանը։

—Կալկաթայում, Մարտիրոս Մկրտչյան Շիրազեցու խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Շտեմարան» ամսագիրը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1823 թվականը։

—Մոսկվայում լույս է տեսնում Հարություն Ալամդարյանի «Краткий российско-армянский словарь»-ը։

1822

Սեպտեմբերի 16. Պոլսում ծնվեց հայ նշանավոր վիպասան և հրապարակախոս Ծերենցը (Հովսեփ Շիշմանյան)։ Վախճ. 1888 թվականի փետրվարի 1-ին Թիֆլիսում։

—Փարիզում, Սեն-Մարտենի նախաձեռնությամբ և հայագետներ Բլաբրոթի, Բրոսսեի, Յոբերի, Մակգովանի և այլոց օժանդակությամբ, հիմնվում է «Ասիական ընկերությունը»։ Նույն թվականից էլ սկսում է հրատարակվել ընկերության օրգան «Ժուռնալ Ազիատիկը»։

1823

Հոկտեմբերի 24. Պոլսում ծնվեց արևմտահայ գրական գործիչ Կարապետ Ութուջյանը։ Վախճ. 1904 թվականի հունիսի 28-ին, իր ծննդավայրում։

Նոյեմբերի 30. Պոլսում վախճանվեց նշանավոր պատմաբան Միքայել Չամչյանը։ Ծնվ. 1738 թվականի դեկտեմբերի 4-ին, Պոլսում։

—Թիֆլիսում, Գևորգ Արծրունու և Ներսես Աշտարակեցու ջանքերով հիմնվում է հայկական տպարան։ Տպարանն իր գոյությունը շարունակում է մինչև 1830 թվականը։

—Փարիզում ֆրանսերեն լեզվով հրատարակվում է Հակոբ Շահան-Ջրպետյանի կազմած «Հայերենի քերականությունը»։

1824

—Վենետիկում լույս է տեսնում Ղուկաս Ինճիճյանի «Դարապատում» պատմա-աշխարհագրական ուսումնասիրությունը։

—Պոլսում հրատարակվում է Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոցը»։ Նույնը՝ առաջաբանով ու ծանոթագրություններով, 1835-ին՝ Վենետիկում։

1825

Հունվարի 1. Թիֆլիսում իր գործունեությունն է սկսում Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցը, որի առաջին ուսուցիչներից էր Հարություն Ալամդարյանը։ Դպրոցն իր գոյությունը դադարեցնում է 1924 թվականին։

Հունվարի 7. Պոլսում ծնվեց նշանավոր հայագետ Արսեն Այտընյանը։ Վախճ. 1902 թվականի հուլիսի 9-ին Վիեննայում։

Հունիսի 29. Թիֆլիսում ծնվեց հայ դասական դրամատուրգիայի հիմնադիր Գաբրիել Սունդուկյանը։ Վախճ. 1912 թվականի մարտի 13-ին, իր ծննդավայրում։

—Իզմիրում (Զմյուռնիա) ծնվեց արևմտահայ նշանավոր հրապարակախոս Ստեփան Ոսկանյանը։ Վախճ. 1901 թվականի փետրվարի 23-ին, իր ծննդավայրում։

—Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ իտալերեն բնագրից կատարված թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվում է Ֆրանցիսկոս Սոավեի «Արուեստ բանական կամ տրամաբանութիւն» աշխատությունը։

—Փարիզում, հայերեն բնագրից կատարված ֆրանսերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վարդան Այգեկցու առակների հատընտիր ժողովածուն «Հատընտիր առակք» խորագրով։

1826

Հուլիսի 17. Պարսկական բանակները առանց Ռուսաստանին պատերազմ հայտարարելու, գահաժառանգ Աբաս-Միրզայի հրամանատարությամբ ներխուժում են Ղարաբաղ։ Սկսվում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմը։

Սեպտեմբերի 3. *Տեղի է ունենում Շամխորի ճակատամարտը, որտեղ ռուսական զորքերը փայլուն հաղթանակ են տանում պարսիկների դեմ։*

Սեպտեմբերի 13. *Ռուսական բանակը, գեներալ Իվան Պասկևիչի գլխավորությամբ Ելիզավետպոլի մոտ ջախջախում է Աբբաս-Միրզայի մոտ 50 հազարանոց բանակը։*

—Վենետիկում հրատարակվում է Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոցը»։ Նույնը՝ անփոփոխ, 1827, 1849 թվականներին։ Նույնը՝ Ֆլորիվալի ֆրանսերեն թարգմանությամբ 1841-ին (համառոտ) և 1845-ին (լիակատար)։

—Վենետիկում հրատարակվում է Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունը, Նույնը՝ անփոփոխ 1850, 1914, 1927 թվականներին։

—Ծնվեց հայ նշանավոր ճարտարապետ, արվեստագետ Նիկողայոս Պալյանը։ Վախճ. 1858 թվականի փետրվարի 27-ին Պոլսում։

—Կալկաթայում Հովհաննես Ավդալյանի գրաբար թարգմանությամբ հրատարակվում է Շատոբրիանի բանաստեղծությունների ժողովածուն «Ատալա» վերնագրով։

—Վենետիկում, Մանվել Ջախջախյանի գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ֆենելոնի «Արկածք Տելեմաքայ» դյուցազներգությունը։ Նույնը՝ 1850 թվականին Էդուարդ Հյուրմյուզյանի թարգմանությամբ։

1827

Մարտի 29. *Կովկասի կառավարչապետ և Կովկասում գործող ռուսական բանակների ընդհանուր հրամանատար է նշանակվում գեներալ Իվան Ֆեոդորովիչ Պասկևիչը, գեներալ Երմոլովի փոխարեն։*

Մարտի 30. *Թիֆլիսում տեղի է ունենում հայկական նորակազմ կամավորական զորագնդի զորահանդեսը, որն ընդունում էր Ներսես Աշտարակեցին։ Մայիսի 15-ին, զորագնդի՝ մարտադաշտ մեկնելու կապակցությամբ, հայրենասիրական ջերմ ճառով հանդես է գալիս Հ. Ալամդարյանը։*

Հոկտեմբերի 1. *Կատաղի մարտերից հետո ռուսական զորքերը գրավում են Երևանի բերդը։*

Նոյեմբերի 2. *Բեռլինում ծնվեց գերմանացի հայագետ Պոլ դը Լագարդը։ Վախճ. 1894 թվականին Գետտինգենում։*

Դեկտեմբեր. *Երևանի սարդարի հայելապատ դահլիճում, սիրողների ուժերով բեմադրվում է Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգությունը։*

Դեկտեմբերի 4. *Պոլսում ծնվեց հայագետ-բանասեր Գարեգին Զարբհանալյանը։ Վախճ. 1901 թվականի փետրվարի 13-ին, Վենետիկում։*

Դեկտեմբերի 24. *Վենետիկում վախճանվեց հայագետ, բանաստեղծ և թարգմանիչ Գաբրիել Ավետիքյանը։ Ծնվ. 1751 թվականի սեպտեմբերի 19-ին, Պոլսում։*

—Կողբ գյուղում (Երևանի գավառ) ծնվեց աշուղ Շիրինը (Հովհաննես Կարապետյան)։ Վախճ. 1857 թվականի մայիսի 9-ին, Վաղարշապատում։

—Շուշիում հիմնադրվում է հայկական տպարանը։

—Վենետիկում, Հարություն Ավգերյանի գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Միլտոնի «Դրախտ Կորուսեալը»։ Նույնը՝ 1861 թվականին, Արսեն Բագրատունու թարգմանությամբ։

—Մոսկվայում հրատարակվում է Հակոբ և Դավիթ Արղանով եղբայրների «Հայկական թագավորության պատմության ուրվագծման փորձ» աշխատությունը։

—Վենետիկում հրատարակվում է Նարեկացու ստեղծագործությունների լիակատար ժողովածուն՝ «Գրիգոր Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք» վերնագրով։ Նույնը անփոփոխ՝ 1843-ին։

1828

Փետրվարի 10. *Թուրքմենչայում կնքվում է հաշտության պայմանագիր, որի համաձայն դադարում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմը։ Երևանի, Նախիջևանի խանությունների ու Օրդուբադի շրջանը անցնում է ռուսներին։*

Մարտի 21. *«Հայաստանի ժամանակավոր վարչության» փոխարեն ստեղծվում է «Հայկական մարզ»։ Մարզի կառավարիչ է նշանակվում Ալեքսանդր Ճավճավաձեն։*

Ապրիլ. *Սկսվում է ռուս-թուրքական երկրորդ պատերազմը։ Նախորդ անգամների նման՝ ռուսներին օգնելու գործում զգալի դեր էր կատարում Հայաստանում գտնվող ռուսաֆիլ խումբը Ներսես Աշտարակեցու գլխավորությամբ։*

Հունիսի 23. *Ռուսական բանակը, գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ, արյունահեղ մարտերից հետո, գրավում է Կարսը։*

Օգոստոսի 18. *Գեներալ Ճավճավաձեի հրամանատարությամբ գործող ռուսական բանակը կատաղի մարտերից հետո գրավում է Բայազետը։*

—*Պոլսի Բերա թաղում ծնվեց թատերագետ և բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը։ Վախճ. 1868 թվականի նոյեմբերի 29-ին, իր ծննդավայրում։*

—*Վենետիկում հրատարակվում է Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» գիրքը։*

—*Թիֆլիսում հրատարակվում է Ներսիսյան դպրոցի սաների ստեղծագործությունների ժողովածուն՝ «Երախայրիք Ներսիսյան դպրոցի» խորագրով։*

1 8 2 9

Հունվարի 30. *Թեհրանում, անգլիացիների դրդմամբ, գազանաբար սպանվեց Ալեքսանդր Գրիբոյեդովը։*

Փետրվարի 8. *Հնդկահայությունը, արևելյան Հայաստանի ազատագրության կապակցությամբ, ողջույնի նամակով դիմում է Ներսես Աշտարակեցուն, և հույս է հայտնում, որ արևելքի բռնակալների լծից ազատագրված Հայաստանը կդառնա աշխարհով մեկ սփռված հայության հավաքատեղին։*

Սեպտեմբերի 2. *Ադրիանապոլսում կնքվում է ռուս-թուրքական հաշտության պայմանագիր։ Ռուսաստանին են անցնում Ախալքալակը, Ախալցխան, Սև ծովի արևելյան ափերը՝ մինչև Փոթի։*

Սեպտեմբերի 26. *Դորպատի (այժմ՝ Տարտու) համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի հետ միասին Աբովյանն սկսում է վերելքը դեպի Արարատի գագաթը։ Գագաթին հասնում են սեպտեմբերի 27-ին։*

Նոյեմբերի 2. *Դոնի Նոր Նախիջևան քաղաքում ծնվեց ռևոլյուցիոներ-դեմոկրատ, հրապարակախոս, գրող Միքայել Ղազարի Նալբանդյանը։ Վախճ. 1866 թվականի մարտի 31-ին, աքսորում, Սարատովի նահանգի Կամիշին գյուղում։*

—*Ծնվեց հայագետ Միքայել Միանսարյանը։ Վախճ. 1880 թվականի ապրիլի 5-ին։*

—*Մոսկվայում, Լազարյան ճեմարանին կից, ստեղծվում է հայկական տպարան։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1917 թվականը, և փակվում է Լազարյան ճեմարանի հետ մեկտեղ։*

—*Մոսկվայում հրատարակվում է Լազարյան ճեմարանի սաների բանաստեղծությունների ժողովածուն, «Մուղայք Արարատեան» խորագրով։*

1 8 3 0

Հունվարի 8. *Սուլթան Մահմուդ Երկրորդի հրովարտակի համաձայն, Պոլսի կաթոլիկ հայերը ճանաչվում են որպես ինքնուրույն համայնք։*

Փետրվարի 17. *Գոգենլո գյուղում (Ղրիմ, Սիմֆերոպոլից 40 կմ. արևմուտք), ծնվեց բանաստեղծ Գևորգ Դոդոխյանը։ Վախճ. 1908 թվականի հունիսի 8-ին, Սիմֆերոպոլում։*

Հունիսի 11. *Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով, Աբովյանը Թիֆլիսից մեկնում է Դորպատ։ Նույն թվականի սեպտեմբերի 3-ին նա հասնում է այնտեղ։*

Հոկտեմբերի 17. *Իզմիրում (Զմյուռնիա), ծնվեց հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր Մատթեոս Մամուրյանը։ Վախճ. 1901 թվականի հունվարի 2-ին։*

Նոյեմբերի 8. *Դոնի Նոր Նախիջևան քաղաքում ծնվեց նշանավոր բանաստեղծ և արձակագիր Ռափայել Պատկանյանը։ Վախճ. 1892 թվականի օգոստոսի 22-ին, իր ծննդավայրում։*

1831

Սեպտեմբերի 6. *Պոլսում ծնվեց բանաստեղծ և հասարակական գործիչ Խորեն Գալֆայանը (Նար-Պեյ)։ Վախճ. 1893 թվականի նոյեմբերի 4-ին։*

Հոկտեմբերի 22. *Պոլսում ծնվեց հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, խմբագիր Հարություն Սվաճյանը։ Վախճ. 1874 թվականի ապրիլի 22-ին, Զմյուռնիայում։*

—Լոսքվիցում (կենտր. Գերմանիա) ծնվեց գերմանացի հայագետ Հերման Ալֆրեդ Գուտշմիդը։ Վախճ. 1887 թվականի փետրվարի 19-ին, Թյուբինգենում։

1832

—Վենետիկում հրատարակվեց Հովհաննես Մամիկոնյանի «Պատմություն Տարոնոյ» աշխատությունը։

—Պոլսում, Գևորգ Գրիգորյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Լրո գիր մեծի տերության Օսմանյան» շաբաթաթերթը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1840 թվականը, ապա, մինչև 1849 թվականը հրատարակվում է «Յայտարար գիր լրոյ մեծի տէրութեանն Օսմանեան» խորագրով, որից հետո, մինչև 1850 թվականը՝ «Լրագիր տէրութեանն Օսմանեան» խորագրով։

—Վենետիկում հրատարակվում է Փավստոս Բուզանդի «Պատմութիւն հայոցը»։ Նույնը՝ 1867 թվականին ֆրանսերեն, Վիկտոր Լանգլուայի թարգմանությամբ և առաջաբանով։

—Երևանում իր գործունեությունն է սկսում Երևանի գավառական դպրոցը։

—Մոսկվայում հրատարակվում է «Նկարագիր գաղթականութեանն հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսս» աշխատությունը։

—Վենետիկում, Եղիա Թովմաճանի՝ հին հունարեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Պլուտարքոսի «Զուգակշիռք»-ի առաջին հատորը։ Հրատարակությունը տևում է մինչև 1834 թվականը, որի ընթացքում հրատարակվում է 6 հատոր։

1833

Հունվարի 5. *Լարվիկում (Նորվեգիա) ծնվեց նորվեգացի հայագետ Սոֆուս Բուգգեն։ Վախճ. 1907 թվականի հունիսի 25-ին։*

Մայիսի 4. *Նոր-Նախիջևանում ծնվեց հայագետ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Քերովբե Պատկանյանը։ Վախճ. 1889 թվականի ապրիլի 2-ին, Մոսկվայում։*

Հուլիսի 2. *Վենետիկում վախճանվեց հայագետ, խմբագիր Ղուկաս Ինճիճյանը։ Ծնվ. 1758 թվականի մարտի 21-ին, Պոլսում։*

—Վենետիկում, գրաբար առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Դավիթ Անհաղթի գործերի լիակատար ժողովածուն, «Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք» խորագրով։

—Վենետիկում հրատարակվում է Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը։ Նույնը անփոփոխ՝ 1854 թվականին։

1834

Սեպտեմբերի 4. *Պադուայում (հս. Իտալիա) իր ուսումնական առաջին տարեշրջանն է սկսում Մխիթարյանների Մուրադյան Վարժարանը։ Առաջին տեսուչն էր Իգնատիոս Փափազյանը։*

Հոկտեմբերի 14. *Պոլսում ծնվեց հասարակական գործիչ, գրականագետ Գրիգոր Օտյանը։ Վախճ. 1887 թվականի օգոստոսի 14-ին, Փարիզում։*

—Մոսկվայում, Սարգիս Տիգրանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ժան Ռասինի «Գոթողիա» (Ատալիա) եղերերգությունը։

1 8 3 5

Հունվարի 5. Վենետիկում վախճանվեց հայագետ, թարգմանիչ, բանաստեղծ Մանվել Ջախջախյանը։ Ծնվ. 1770 թվականի մարտի 25-ին, Գյումուշխանեում։

Սեպտեմբերի 5. Մոսկվայում ծնվեց հայագետ Կարապետ Եզյանը (Եզով)։ Վախճ. 1905 թվականին Պետերբուրգում։

—Սալմաստի Փայաջուկ գյուղում (Պարսկաստան), ծնվեց անվանի վիպասան և հրապարակախոս Րաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան)։ Վախճ. 1888 թվականի ապրիլի 5-ին, Թիֆլիսում։

—Պոլսում ծնվեց խմբագիր, թարգմանիչ և գրող Արմենակ Հայկունին (Համբարձում Ճիզմեճյան)։ Վախճ. 1866 թվականի հոկտեմբերի 29-ին, Սամաթիայում։

1 8 3 6

Մարտի 11. Ալեքսանդր Երկրորդը վավերացնում է 141 հոդվածից բաղկացած՝ ռուսահայոց եկեղեցու գործունեության սահմանները նախանշող օրենքները (Положение)։ Վերջինս հարատևում է մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում։

Սեպտեմբերի 11. Վենետիկում իր ուսումնական առաջին տարեշրջանն է սկսում Մխիթարյանների Ռափայելյան վարժարանը։

Հոկտեմբեր. Թիֆլիսում սկսում է լույս տեսնել «Закавказский вестник» թերթը։ Շարունակվում է հրատարակվել մինչև 1855 թվականը։

—Զմյուռնիայում հրատարակվում է Հովհաննես Վանանդեցու «Արփիական Հայաստանի» դյուցազներգությունը։

—Բեսարաբիայի Հնչեշտ ավանում ծնվեց խմբագիր, բանասեր Ջարմայր Մսերյանցը։ Վախճ. 1899 թվականի մայիսի 12-ին, Մոսկվայում։

—Պոլսում ծնվեց երաժշտագետ, կոմպոզիտոր Տիգրան Չուխաճյանը։ Վախճ. 1898 թվականի մարտի 10-ին, Զմյուռնիայում։

—Վենետիկում, Գաբրիել Ավետիքյանի, Խաչատուր Սյուրմելյանի և Մկրտիչ Ավգերյանի համատեղ հեղինակությամբ, լույս է տեսնում «Նոր բառգիրք Հայկազնեան լեզուի» ընդարձակ բառարանի առաջին հատորը (XX+1140 էջ)։ Երկրորդ հատորը՝ 1837 թվականին, 1067 էջ։ Բառարանի պատրաստման աշխատանքներն սկսվել էին 1784 թվականից։

—Վենետիկում, գրաբար լեզվով, հրատարակվում է Գաբրիել Այվազովսկու «Պատմութիւն համառօտ ռուսաց» աշխատությունը։

1 8 3 7

Մարտի 19. Թիֆլիսում ծնվեց նշանավոր դերասան, թատերական գործիչ Գևորգ Չմշկյանը։ Վախճ. 1916 թվականի հունվարի 11-ին, Պետերբուրգում։

Հունիսի 3. Աշտարակում ծնվեց ականավոր վիպասան Պերճ Պռոշյանը։ Վախճ. 1907 թվականի նոյեմբերի 23-ին, Բաքվում։

Դեկտեմբերի 5. Թիֆլիսում վախճանվեց հայագետ Հակոբ Շահան-Ջրպետյանը։ Ծնվ. 1782 թվականի դեկտեմբերի 19-ին, Ուրֆայում։

—Ռումինիայի Բոդուշան քաղաքում ծնվեց հայագետ, քերական Ստեփաննոս Պալասանյանը։ Վախճ. 1899 թվականի փետրվարի 19-ին, Էջմիածնում։

—Իջևանի շրջանի Ուզունթալա գյուղում ծնվեց արձակագիր Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը։ Վախճ. 1920 թվականին, իր ծննդավայրում։

—Երևանում իր գոյությունն է սկսում Երևանի թեմական դպրոցը։ Դպրոցում դասավանդումը կատարվում էր գերանզանցապես ռուսերեն լեզվով։

1838

Հունիս. *Շուշում իր գործունեությունն է սկսում Շուշու հայոց թեմական հոգևոր դպրոցը։*

Հուլիսի 19. *Պոլսում ծնվեց բանաստեղծ Մկրտիչ Աճեմյանը։ Վախճ. 1917 թվականի մայիսի 21-ին, իր ծննդավայրում։*

Սեպտեմբեր. *Պոլսի Իսկյուտար թաղամասում բացվեց Ազգային ճեմարանը։ (Հայտնի է նաև Իսկյուտարի ճեմարան անվամբ)։ Այստեղ սովորել է Պետրոս Դուրյանը, ուսուցիչ է եղել Հակոբ Պարոնյանը։ Ճեմարանը փակվում է 1841 թվականի հոկտեմբերի 3-ին, վերաբացվում է 1846 թվականի հոկտեմբերի 1-ին։*

—Մոսկվայում հրատարակվում է Ա. Խուդաբաշյանի «Բառարան ի հայկական լեզուէ ի Ռուսաց Բարբառ» երկհատոր աշխատությունը։

1839

—Զմյուռնիայում սկսում է հրատարակվել «Շտեմարան Պիտանի գիտելեաց» ամսագիրը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1854 թվականը։

—Վենետիկում լույս է տեսնում Մատթեոս Մաղաք-Թեոփիլյանցի «Կենսագրութիւն երևելի արանց» խորագիրը կրող բառարանի առաջին հատորը։ Երկրորդ հատորը՝ 1840 թվականին։

—Վենետիկում հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Արուեստ բանաստեղծութեան» գրաբար ուսումնասիրությունը, նվիրված հայոց լեզվի տաղաչափության հարցերին։

1840

Ապրիլի 5. *Բոլնիս-Խաչեն գյուղում ծնվեց նշանավոր մանկավարժ, վիպասան և բանաստեղծ Ղազարոս Աղայանը։ Վախճ. 1911 թվականի հունիսի 20-ին, Թիֆլիսում։*

Օգոստոս. *Զմյուռնիայում (Իզմիր), Ղուկաս Պալտազարյանի, ապա՝ Հարություն Սըվաճյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Արշալույս Արարատյան» թերթը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1887 թվականը։*

Հոկտեմբերի 21. *Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, գրող Թովմաս Թերզյանը։ Վախճ. 1909 թվականի փետրվարի 18-ին, իր ծննդավայրում։*

Դեկտեմբերի 12. *Վանում ծնվեց բանահավաք Գարեգին Սրվանձտյանը։ Վախճ. 1892 թվականի նոյեմբերի 5-ին, Պոլսում։*

—Զմյուռնիայում, Ռուբեն Անդրեաս Փափազյանի նախաձեռնությամբ, ստեղծվում է «Սյունյաց ընկերությունը», որն իր առջև նպատակ էր դնում զարկ տալ հայ թատրոնին ու դրամատուրգիային։ Ընկերությունն իր գոյությունը պահպանեց մինչև 1845 թվականը։

—Պոլսում, Խաչատուր Ոսկանյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Ազդարար Բիւզանդեան» շաբաթաթերթը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1841 թվականը։

—Պոլսում ծնվեց դրամատուրգ և թատերական գործիչ Սրապիոն Թղլյանը։ Վախճ. 1919 թվականին, իր ծննդավայրում։

1841

Օգոստոսի 24. *Պոլսում տեղի է ունենում հայ արհեստավորության հակաամիրայական հզոր ցույցը։ Ցույցի պատճառ էր հանդիսացել Իսկյուտարի ճեմարանի ղեկավարությունը արհեստավորության ձեռքից վերցնելու փաստը։*

Սեպտեմբերի 5. *Աշտարակում ծնվեց նշանավոր բանաստեղծ և հրապարակախոս Սմբատ Շահազիզը։ Վախճ. 1907 թվականի դեկտեմբերի 24-ին, Մոսկվայում։*

—Կալկաթայում հրատարակվեց Մեսրոպ Թաղիադյանի «Պատմութիւն հին Հնդկաստանի» աշխատությունը։

—Պոլսում հրատարակվեց Գրիգոր Փեշտիմալճյանի «Բառգիրք Հայկազեան լեզուին»։
—Պոլսում ծնվեց ականավոր դերասանուհի Արուսյակ Փափազյանը։ Վախճ. 1907 թվականի ապրիլի 28-ին։
—Մոսկվայում, Հակոբ Կարենյանցի գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Մեսաստագիոյի պոեմների ժողովածուն, «Ողբերգութիւնք» վերնագրով։
—Զմյուռնիայում հրատարակվում է Հովհան Վանանդեցու «Ոսկե դար Հայաստանի» չափածո ստեղծագործությունը։

1842

Սեպտեմբերի 22. Թիֆլիսում ծնվեց հայագետ և պատմաբան Ալեքսանդր Երիցյանը։ Վախճ. 1902 թվականի փետրվարի 9-ին, իր ծննդավայրում։
—Ծնվեց արևմտահայ կին գրող Սրբուհի Տյուսաբը (Սրբուհի Վահանյան)։ Վախճ. 1901 թվականի հունվարի 3-ին։
—Ադրիանապոլսում ծնվեց հռչակավոր երգիծաբան, խմբագիր Հակոբ Պարոնյանը։ Վախճ. 1891 թվականի մայիսի 27-ին, Պոլսում։
—Էջմիածնում, գրաբար լեզվով, հրատարակվում է Հովհաննես Շահխաթունյանցի «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ» աշխատությունը երկու հատոր։

1843

Հունվար. Վենետիկում, Գաբրիել Այվազովսկու խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Բազմավէպ» ամսագիրը։ 1843—1848 թվականներին երկշաբաթաթերթ, 1858—1873 թվականներին ամսագիր, 1873—1895 թվականներին եռամսյա հանդես, 1896 թվականից մինչև այժմ՝ ամսագիր։
Օգոստոսի 10. Գերմանացի նշանավոր գիտնական, ճանապարհորդ Ավգուստ Հակսթհաուզենը գալիս է Թիֆլիս և ծանոթանում է Խաչատուր Աբովյանի հետ։
—Ծնվեց գրական-հասարակական գործիչ, գրող և փիլիսոփա Գալուստ Կոստանդյանը։ Վախճ. 1898 թվականի օգոստոսի 14-ին, Զմյուռնիայում։
—Զմյուռնիայում, Խաչատուր Մելիքսեթումյանցի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Հայրենասէր» շաբաթաթերթը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1846 թվականը։
—Վիեննայում, Հովսեփ Գաթըրճյանի արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Քսենոֆոնի «Կյուրոպեդիա» աշխատությունը։
—Երուսաղեմում հրատարակվում է Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն հայոցը»։
—Մոսկվայում հրատարակվում է Հ. Համազասպյանի կազմած՝ ռուս գրողներից կատարված թարգմանությունների ժողովածուն, «Թարգմանութիւնք արձակ և ոտանաւոր ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ ի Ժուկովսկիոյ, Պուշկինէ, Լերմոնտովայ, Բարատինսկիոյ և Գնեդիչէ» խորագրով։
—Կազանի համալսարանում պաշտոնապես իր գոյությունն է սկսում հայոց լեզվի ամբիոնը, որի պրոֆեսոր է նշանակվում Ստեփաննոս Նազարյանը։ Ամբիոնի հիմնադրման աշխատանքները նախաձեռնվել էին դեռ 1839 թվականից, ակադ. Խ. Ֆրենի կողմից։
—Վենետիկում, Եղիա Թովմաճանի գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Հոմերոսի «Եղիականը» (Իլիական)։ Նույնը՝ 1864 թվականին, Արսեն Բագրատունու թարգմանությամբ։

1844

Մարտի 4. Պոլսում ծնվեց հայագետ, բանասեր Նորայր Բյուզանդացին (Հարություն Գաբեզյան)։ Վախճ. 1916 թվ[illegible]ն Վենետիկում։
Ապրիլի 4. Սղնախում ծնվեց ականավոր մանկավարժ, մանկավարժության տեսաբան Սեդրակ Մանդինյանը։ Վախճ. 19[illegible] թվականի նոյեմբերի 28-ին, Թիֆլիսում։

—*Վենետիկում, գրաբար առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվում է «Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցւոյ» աշխատությունը։*

—*Էջմիածնում հրատարակվում է Առել Մխիթարյանի «Հրահանգ համաշխարհային պատմության» աշխատությունը։*

—*Վիեննայում հրատարակվում է Ղևոնդ Հովնանյանի «Քերականութիւն գաղղիերեն լեզվի» եռահատոր աշխատությունը։ Նույնը՝ 1855-ին, որոշ լրացումներով՝ 1875-ին։*

1 8 4 5

Փետրվարի 27. *Մոսկվայում ծնվեց հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ Գրիգոր Արծրունին։ Վախճ. 1892 թվականի դեկտեմբերի 19-ին, Թիֆլիսում։*

Օգոստոս. *Կալկաթայում, Մեսրոպ Թաղիադյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Ազգասէր» շաբաթաթերթը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1848 թվականի սեպտեմբերը, որից հետո, մինչև 1851 թվականը հանդես է գալիս «Ազգասէր Արարատեան» վերնագրով։*

—*Վենետիկում, գրաբար լեզվով, հրատարակվում է Պետրոս Մինասյանի թատերական ստեղծագործությունների ժողովածուն «Թատերգութիւնք» վերնագրով։*

—*Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Վերգիլիոսի «Էնեական»-ը։ Նույնը՝ 1879 թվականին։*

—*Վենետիկում, Մկրտիչ Ավգերյանի՝ լատիներեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ցիցերոնի «Յաղագս պատշաճից» աշխատությունը։*

—*Պոլսում, Վ. Սոֆյալյանի խմբագրությամբ սկսում է հրատարակվել «Ընտանի իմաստասէր» ամսագիրը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1855 թվականը։*

—*Պետերբուրգում, հայագետ Մկրտիչ Բերոյանի ջանքերով, կազմակերպվում է Հայ-վրացթաթարական լեզուների ամբիոն։ Վերջինս 1855 թվականին վերածվում է Արևելյան լեզուների ֆակուլտետի, և յուրաքանչյուր լեզվի հատկացվում է ինքնուրույն ամբիոն։*

1 8 4 6

Հունվար. *Թիֆլիսում, Հակոբ Կարենյանի և Միքայել Պատկանյանի խմբագրությամբ սկսում է հրատարակվել «Կովկաս» շաբաթաթերթը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1847 թվականը։*

Ապրիլի 1. *Պոլսում, Մկրտիչ Պեշիկթաշլյանի և Սրապիոն Հեքիմյանի նախաձեռնությամբ, կազմակերպվում է «Համազգյաց ընկերությունը»։*

—*Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Պատմութիւն Պարսից» աշխատությունը։*

—*Կալկաթայում, Մեսրոպ Թաղիադյանի նախաձեռնությամբ, հայազգի աղջիկների համար ստեղծվում է դպրոց «Ս. Սանդուխտ» անվամբ։*

—*Վենետիկում հրատարակվում է «Բառարան (առձեռն) Հայկազնեան լեզուի» աշխատությունը։ Հրատարակության է պատրաստել Մկրտիչ Ավգերյանը։ Երկրորդ տպագրություն որոշ լրացումներով՝ 1865-ին։*

—*Վիեննայում հրատարակվում է Փիլիպոս Ճամճյանի «Բառարան իտալերեն-գաղղիերեն-հայերեն-տաճկերեն» աշխատությունը։*

—*Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Վէպ Վարդգեսի» ստեղծագործությունը։*

—*Ախալքալակի Կարզախ գյուղում ծնվեց աշուղ Ջիվանին (Սերովբե Լևոնյան)։ Վախճ. 1907 թվականին Թիֆլիսում։*

1 8 4 7

Ապրիլի 28. *Սուչավայում ծնվեց «Հանդես Ամսօրյա» ամսագրի առաջին խմբագիր Ռաֆայել Պարոնյանը (Հովսեփ Պարոնյան)։ Վախճ. 1912 թվականի նոյեմբերի 29-ին Վիեննայում, 26 տարի անընդմեջ վարելով խմբագրի պարտականությունները։*

Հունիս. *Վիեննայում սկսում է հրատարակվել Վիեննայի Մխիթարյանների «Եվրոպա» շաբաթաթերթը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1863 թվականը։*

Հուլիսի 1. *Բեռլինում ծնվեց գերմանացի հայագետ, պրոֆեսոր Հենրիխ Գելցերը։ Վախճ. 1906 թվականի հուլիսի 11-ին, Ենայում։*

—Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի բանաստեղծությունների ժողովածուն «Թութակ Թաղիադյան» խորագրով։

1 8 4 8

Փետրվարի 22. *Պրոլետարիատի մասսայական ելույթները Փարիզում, ֆրանսիական ռևոլյուցիայի սկիզբը։ Փետրվարի 25-ին Ֆրանսիան հայտարարվում է ռեսպուբլիկա։ Բուրժուազիան կարողանում է վերջնականապես ճնշել ապստամբությունը նույն թվականի հունիսի 26-ին։*

Մարտի 16. *Սկսում է Վենետիկի ռևոլյուցիան։ Մարտի 19-ին ապստամբները բանտից ազատում են նշանավոր ռևոլյուցիոներ Դանիել Մանինին, որն անցնում է ապստամբների գլուխը։ Ապստամբությունը վերջնականապես ճնշվում է 1849 թ. օգոստոսի 24-ին։*

Հուլիսի 1. *Էրֆուրտում ծնվեց գերմանացի հայագետ, պրոֆեսոր Հենրիխ Հյուբշմանը։ Վախճ. 1908 թվականի հունվարի 28-ին, Ստրասբուրգում։*

Օգոստոսի 23. *Վենետիկում վախճանվեց հայագետ, թարգմանիչ և բանաստեղծ Եղիա Թովմաճանը։ Ծնվ. 1774 թվականի դեկտեմբերի 18-ին, Պոլսում։*

—Վենետիկում, Եղիա Թովմաճանի՝ հին հունարեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Հոմերոսի «Ոդիսականը»։

—Թիֆլիսում կազմակերպվում է «Կովկասյան գրաքննական կոմիտե», որը պետք է հսկողություն սահմաներ հայերեն լեզվով հրատարակվող գրականության վրա։ 1905 թվականին այն վերանվանվում է «Մամուլի գործերի կոմիտե»։

1 8 4 9

Հունվարի 14. *Ծնվեց հայագետ Կարապետ Կոստանյանը։ Վախճ. 1919 թվականին, Ջմյուռնիայում։*

Ապրիլի 27. *Փարիզում, Նահապետ Ռուսինյանի նախաձեռնությամբ, ստեղծվում է «Արարատյան ընկերությունը»։*

Մայիսի 14. *Թիֆլիսում ծնվեց «Փորձ» ամսագրի, ապա «Արձագանք» շաբաթաթերթի խմբագիր Աբգար Հովհաննիսյանը։ Վախճ. 1904 թվականի ապրիլի 15-ին, Բաթումիում։*

Հուլիս. *Սինգապուրում, Գրիգոր Գալստյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Ուսումնասէր լրագիր» շաբաթաթերթը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1853 թվականը։*

Դեկտեմբերի 27. *Պոլսում ծնվեց հռչակավոր դերասան Պետրոս Ադամյանը։ Վախճ. 1891 թվականի հունիսի 2-ին, իր ծննդավայրում։*

—Մոսկվայում Հարություն Կեոկչյանցի՝ ռուսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Կռիլովի, Դիմիտրիևի և Խեմնիցերի առակների ժողովածուն, «Մաղկաքաղ» խորագրով։

—Վիեննայում հրատարակվեց պատմաբան Ա. Գաթրճյանի «Տիեզերական պատմութիւն հայոց» աշխատության առաջին հատորը։ Երկրորդ հատորը՝ 1852 թվականին։

—Վենետիկում հրատարակվում է Ամբրոսիոս Գալֆայանի «Պատմութիւն հին և նոր ազգաց» աշխատության առաջին հատորը։ Հրատարակությունն ավարտվում է 1851 թվականին և լույս է տեսնում հինգ հատոր։

1850

Հունվար. *Երևանում հիմնադրվեց Հռիփսիմյան պետական իգական դպրոցը։*

Մայիսի 21. *Կարսում ծնվեց արձակագիր Ատրպետը (Սարգիս Մուբայաջյան)։ Վախճ. 1937 թվականի մայիսի 27-ին, Լենինականում։*

Հուլիս. *Թիֆլիսում հիմնադրվեց ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքը։*

Օգոստոսի 25. *Թիֆլիսում ծնվեց հայ նշանավոր կատակերգակ-դերասան, հետագայում՝ Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Գևորգ Տեր-Դավթյանը։ Վախճ. 1934 թվականին։*

Սեպտեմբեր. *Թիֆլիսում Գաբրիել Պատկանյանի խմբագրությամբ սկսում է լույս տեսնել «Արարատ» շաբաթաթերթը։ Իր գոյությունը շարունակում է մինչև 1851 թվականը։*

—Մոսկվայում, գրաբար լեզվով, հրատարակվում է Մկրտիչ Էմինի «Վէպք հնոյն Հայաստանի» ուսումնասիրությունը։

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Արամելիքյան Դ.— 218
Աբաս-Միրզա—321, 536, 537
Աբգարյան Հ.— 327
Աբելյան Գ.— 51
Աբեղյան Մ.— 7, 8, 9, 10, 12, 13, 98, 99, 115, 121, 122, 123, 129, 130, 168, 175, 277, 284, 312, 390
Աբովյան Ավ.— 365
Աբովյան Խ.— 20, 29, 31, 41, 42, 47, 64, 71, 79, 80, 84, 85, 86, 88, 94, 144, 149, 150, 168, 193, 220, 236, 238, 239—246, 247, 253, 260, 271, 272, 276, 297, 313, 317, 318, 323, 324, 325, 340, 350, 363—477, 478, 483, 500, 506, 533, 538, 542
Աբրահամ Աստապատցի —122
Աբրահամ Կրետացի—25, 196, 531
Աբրահամյան Ռ.— 85
Ագաթանգեղոս—24, 98, 160, 162, 174, 536
Ադոնց Ն.—106
Ադամյան Ե.— 277
Ադամյան Պ.—544
Ադդիսոն— 111
Ադրկաս— 241
Ազատյան Թ.— 82, 277
Ազարյան Ա.— 27
Ազբար-Ադամ— 80, 252, 257, 262, 265, 266, 267, 269, 271, 277, 289
Ալամդարյան Հ.— 21, 27, 38, 40, 41, 46, 71, 94, 130, 144, 149, 290—317, 365, 366, 506, 507, 531, 533, 536, 537
Ալի-Ղուլի խան—531
Ալիշան Ղ.— 26, 29, 58, 75, 80, 168, 193, 478—501, 535
Ալլահվերդի (աշուղ) — 258
Ալպոյաճյան Ա.— 77, 350
Ալֆիերի Վ. —101, 102, 103
Ախվերդյան Գ.— 29, 30, 40, 80, 81, 256, 257, 258, 259, 260, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 274, 276, 535
Ախվերդյան Մանե— 81
Աղաբեկյան Մ.— 44
Աղայան Ղ.— 250, 277, 343, 344, 346, 444, 501, 541
Աղայան Մ.— 277
Աղա Մահմադ խան— 78, 79, 225, 231, 338, 531
Աղանյան Գ.— 237
Աղանաուրյան Հ.— 42
Աղեքսանդրյան Գ.— 30
Աճառյան Հր.— 8, 65, 68, 144, 145, 174
Աճեմյան Մ.—541
Ամիրդովլաթ Ամասիացի—6
Ամիր-օղլի (աշուղ) — 80
Այվազովսկի Գ.—533, 540, 542
Այվազովսկի Հ. —48
Այտընյան Ա.—536
Անակրեոն— 202
Անանիա Շիրակացի—207
Անդրիկյան Ն.— 6
Ապրոյան Ա.— 51
Առաքել Բաղիշեցի —305, 308
Առաքել Դավրիժեցի —65, 84, 98
Ասատրյան Ա.— 459
Ասատուր Հ.— 85
Ասկարյան Վ.— 72
Ասպի (աշուղ) — 274
Աստվածատրյան Մ.— 35
Ավակով — 379
Ավգերյան Հ.—27, 32, 135, 529, 534 535, 537
Ավգերյան Մ.— 26, 32, 67, 73, 161 540, 543
Ավդալբեգյան Թ.— 19
Ավդալյան Հ.—42, 43, 537
Ավդալյան Մ.— 42
Ավետիք Եվդոկիացի —207
Ավետիքյան Գ.— 26, 73, 91, 112, 123 134, 135, 532, 537, 540
Ավետիք Պատրիարք — 237

Ավետումյան Թ.— 37, 42, 88, 89, 90, 344
Ատրպետ —545
Արապյան Պ.—535
Արարատյան Առաքել— 76, 325
Արարատյան Հարություն.— 84, 216—235, 529, 534
Արզանյան Գ.—537
Արզանյան Հ.— 537
Արիստակես Լաստիվերտցի—25, 84, 543
Արիստոֆան — 145
Արիստոտել — 105, 106, 107, 122, 132, 133, 162
Արծրունի Բ.— 276
Արծրունի Գևորգ—298, 536
Արծրունի Գրիգոր—543
Արղության Հովսեփ (Երկայնաբազուկ)—20, 529, 530
Արշարունի Ա.— 117
Արփիարյան Ա.— 8
Աքիմյան Գ.— 406

Բաբա (աշուղ) — 274
Բագրատունի Ա.— 26, 32, 69, 74, 91, 101, 102, 103, 106, 108, 112, 113, 114, 115, 123, 126, 127, 135, 137, 155, 171—193, 534, 537, 542
Բալզակ Օ. —37
Բաղեր Օղլի— 55, 80, 252
Բաղրամյան Մ.— 17, 18, 19, 52, 76, 84, 93, 94, 100, 200, 529
Բայրոն Ջ.— 37, 38, 62, 309, 314, 342, 357, 420, 501, 535
Բարատինսկի Ե.—38, 542
Բարդեխ — 241, 373
Բարսեղ Վարագեցի—65
Բարրիո— 119
Բեդերման— 370
Բելինսկի Վ.— 116, 117, 118, 119, 120, 389, 442, 443, 455
Բերդումյան Պ.— 321, 322
Բերոյան Մ.—27, 274, 543
Բժշկյան Մ.— 32, 35, 45, 67, 85, 86, 168, 249, 534, 535
Բիշեր-Ստոու Հ.— 35, 36
Բլարրոտ—536
Բլագոյ Դ.— 109
Բլավացկի— 245, 384
Բլումեն — 241, 371
Բյորնե Լ.— 373
Բյորնս Ռ. —37, 38, 62
Բյորք Ռ. —213
Բյուզանդացի Ն.—542
Բյուֆոն Ժ. —124
Բոգդանովիչ — 37
Բոդենշտետ Ֆր.— 31, 384
Բոկլ Հենրի Թոմաս— 507
Բորե Է.—533
Բրյուլով Կ.— 47
Բրոսսե Մ.—30, 31, 370, 531, 533, 536
Բուալո Ն. —96, 105, 106, 119, 125
Բուզզե Ս.—539
Բուլղարին Ֆ. —242
Բուտկով Պ.— 226, 227

Գաթրճյան Հ.—5, 32, 535, 542, 544
Գալեմքյարյան Գ.— 60, 61
Գալստյան Գ.—61, 544
Գալուցյան Հ.— 42
Գալֆայան Խ.—145, 539, 544
Գապասախալյան Գ.— 122, 123
Գապարաճյան Գ.—534
Գասպարյան Հ.— 45
Գարագաշյան Մ.—32, 535
Գափելետտի Հ.—31, 530
Գելցեր Հ.—544
Գեորգչեյան Հ. —տես Կեոկչեյան Հ.
Գեսներ Ս.— 32, 35, 102
Գերցեն Ա.—203
Գիլանենց Պետրոս Դի— 196
Գինզբուրգ Ի.— 47
Գլինկա Ս.— 27
Գյոթե Ի.— 39, 371, 395, 400, 437
Գյուրջի Նավե (աշուղ)— 252, 257, 263, 264, 265, 266, 267, 271, 285, 289
Գնեդիչ Ն.—38, 542
Գոգոլ Ն.—143, 389, 437, 442, 443
Գոլդսմիտ Օ.— 37, 38
Գոլդոնի Կ.— 146
Գոլիցին— 218, 221
Գրաս — 241, 242
Գրիբոեդով Ա.— 46, 143, 148, 221, 371, 389, 535, 537, 538
Գրիգոր Դարանաղցի (Կամախեցի)—65, 195
Գրիգոր Նարեկացի—24, 116
Գրիգոր Տաթևացի —99,104
Գրիգորիս Աղթամարցի—308
Գրիգորյան Գ. Հ. —197, 539
Գրիգորյան Գ.— 19
Գրիգորյան Ջ.— 197
Գրոփտիոս — 322

Գուգովիչ Ի.— 220
Գուտշմիդ Հ.—539

Դակիկի— 338
Դանիել (կաթողիկոս) — 218, 236, 320
Դանիելյան Կ.— 84
Դանիելյան Ս.— 47
Դավիթ Անհաղթ—24, 30, 98, 100, 104, 539
Դավիթ-Բեկ— 17, 94
Դեկարտ Ռ.—97
Դեմենտիև—378, 544
Դեմիրճյան Դ.— 445
Դերժավին Գ.— 39
Դեֆո Դ.—35, 515, 535
Դիդրո Դ.— 119, 124
Դիկկենս Չ.— 342
Դիմիտրիև — 39, 293, 406
Դիոնիսիոս Թրակացի—104
Դյուլորիե Էդ.—30, 31, 533
Դյումա Ալ.— 111
Դողոխյան Գ.—72, 538
Դրայդեն Ջ.— 111, 145
Դուրյան Ե.— 6
Դուրյան Պ.—501, 541

Եզյան Կ.— 539
Եզնիկ Կողբացի—24, 30, 100, 174, 500, 537
Եզոպոս— 32, 76, 81, 86, 334
Եկանյան Մ.— 504
Եղիշե— 24, 30, 31, 108, 156, 174, 500, 530, 538
Եսայի կաթողիկոս Աղվանից— 25
Եվրիպիդես— 100, 102, 110, 132, 149
Երանյան Գ.— 50
Երդման (պրոֆ.) — 241
Երեմիա Արևելցի — 86
Երիցյան Ա.— 63, 71, 81, 83, 218, 295, 296, 542
Երմոլով Ա.—321, 537
Եփրեմ (կաթողիկոս) — 218, 219, 248, 290, 320, 321

Զամինյան Արք.—6
Զարբհանալյան Գ.—6, 537
Զարկյար (աշուղ)— 253, 257, 258, 264, 265, 268, 271
Զաքարիա Ագուլեցի—65, 195
Զաքարիա Սարկավագ— 65
Զաքարյան Ստ.— 82
Զաքարյան Տ.— 66
Զենոբ Գլակ—24
Զոհրաբյան Մ. (Արցախեցի) — 37, 329, 343
Զոհրապյան Հ.— 66
Զորայան Ն.— 69
Զուբով Վ.—217, 234, 531

Էմին Արգար— 197
Էմին Հովսեփ— 17, 84, 100, 196, 197—215, 216, 221, 238, 416
Էմին Մկրտիչ— 28, 31, 38, 39, 40, 386, 534, 545
Էնգելհարդ Ա. —239, 241
Էնգելս Ֆ.— 193, 228, 478
Էնտազյան Ս.— 90, 131
Էշհոլց — 241
Էսքիլես — 102. 108
Էրազմ — 97

Թաղիադյան Մ.— 19, 22, 37, 38, 41, 42, 52, 58, 59, 60, 61, 70, 77, 80, 84, 85, 86, 88, 90, 94, 130, 145, 149, 236, 242, 243, 247—249, 255, 318—363, 532, 535, 541, 543, 544
Թաղիադյան Ն.— 318
Թամպուրի Ա.— 49
Թարվերդյան Գ.— 257, 259, 264, 268, 277
Թեհմուրազ— 213
Թեոդիկ — 108
Թերզիբաշյան Վ.— 51, 55
Թերզյան Թ.—75, 145, 541
Թիֆլիս-Նարգիզ (աշուղ) — 253. 261, 268
Թղլյան Ս.—541
Թոմմազեո Ն.— 532
Թոռյան Ս.— 90
Թովմա Արծրունի—25, 31, 176—178
Թովմաճան Ե.— 32, 73, 91, 102, 123, 124, 135, 136, 171, 539
Թովմաս վարդապետ—321
Թումանյան Հ.— 8, 280, 416, 422, 439, 444, 485, 501
Թումանյան Օ.— 85, 421, 422
Թուրինջ (աշուղ) — 65, 253, 260, 263, 265, 266

Ժուկովսկի Վ.—242, 371, 376, 395, 542

Իբրահիմ խան — 213
Ինճիճյան Ղ.— 26, 46, 53, 54, 66, 73,

90, 91, 123, 124, 473, 532, 533, 536, 529
Իսահակյան Ավ.— 444, 501
Իվան (աշուղ) — 253, 254, 257, 262
Իվանով — 371
Իվանովսկի — 374

Լազարդ Գ.—537
Լազարյան Խաչատուր — 218, 292, 311
Լազարյան Կատարինե— 218
Լազարյան Հովակիմ — 40, 291, 292, 293
Լազարյան Հովհաննես — 218, 292, 311, 518
Լահարպ— 142
Լամարտին Ա.— 34, 35, 501
Լանգլուա Վ.—30, 31, 533, 539
Լաֆոնտեն Ժ. —39, 81, 406
Լեյբնից Գ. —371, 375
Լենին Վ. —22, 23
Լենկթեմուր— 338, 468
Լ ե ո— 7, 8, 15, 17, 18, 19, 22, 23, 41, 42, 60, 63, 70, 74, 75, 197
Լեոնարդո Դա Վինչի— 48
Լեսաժ Ա.— 38
Լեսսինգ Գ.— 119, 371, 375, 395
Լեոնյան Գ.— 45, 269, 275, 276, 277, 284, 285, 289
Լերմոնտով Մ.—38, 47, 542
Լիմոնճյան Հ.— 49
Լ ո կ կ— Ջ.— 97
Լոմոնոսով Մ.— 39, 118
Լոնգֆելլո Հ.—37, 38, 62

Խազեզյան Ա. —78
Խալդարյան Դր.—27, 218, 530
Խալդարյան Կ.— 218
Խալիբյան Հ.— 325, 502, 504, 518
Խաչատուր Եվդոկիացի—195
Խաչատուր Էրզրումցի—104—106
Խաչատուր Ջուղայեցի—199
Խատամյանց Թ.— 46, 76
Խեմնիցեր Ի.—39, 293, 406, 544
Խերասկով Մ.—109
Խոջամալյան Թ.— 337
Խրիմյան Մ.—535
Խուդաբաշյան Ալ.—27, 292, 541

Ծաղկարար Ս. տես Տեր-Գրիգորյան Ի.
Ծ ե ր ե ն ց—416, 536

Կամսարական Մ.— 395
Կանտ Էմ.— 371
Կարամզին Ն. —293, 294, 371, 400
Կարապետ (աշուղ) — 257
Կարապետ (եպիսկոպոս) — 234, 322
Կարբեցի Ավետիս— 85
Կարբեցի Հ.— 299, 311, 315, 324, 377
Կարենյան Հ.—63, 144, 145, 542
Կարինյան Ա.— 32, 53, 55, 59, 60, 61
Կարնեցի Հ.— 65
Կարրիեր Օգ.—533
Կիկերոն Մ.— 32
Կիրակոս Գանձակեցի—84
Կլաբրոտ — 221
Կյոկչեյան Հ.—39, 544
Կոլոմբոս Քր.— 507
Կոխ Կ.— 384
Կոմիտաս — 49, 169
Կոռնել Պ.— 72, 101, 102, 110, 129, 132, 133, 140, 144, 149
Կոստանդին Երզնկացի—305, 308
Կոստանդյան Գ.—44, 542
Կոստանյանց Կ.—30, 277, 544
Կոտաև Մ.— 457
Կորյուն—24, 539
Կորտեց— 468
Կռիլով Ի.—39, 81, 293, 395, 406, 544
Կրճիկյան Հ.— 68

Հաան— 376, 385
Հայկունի Ա.—540
Հայնե Հ.— 111, 373
Հաջի Մազանդարանի—321
Համազասպյան Հ.—38, 542
Համբարձումյան Ս.— 275
Հանուն —530
Հարթուն Օղլի— 252
Հարությունյան Գ.— 60
Հարստհաուզեն Ա.—31, 384, 542
Հաֆըզ— 338
Հեգել Գ.— 371
Հեթում Կորսիկացի—195
Հեթում պատմիչ— 25
Հենրիկ Նավագնաց— 507
Հեոլտ— 400
Հերակլ— 200, 210, 212, 213, 225, 234 530
Հերդեր Ի. —395
Հեսսենմյուլե— 378

Հերիմյան Ս.— 56, 58, 75, 144, 145, 543
Հիբր Րիչինալդ— 322
Հիսարյան Հ.— 56
Հիսարլյան Ա.— 49
Հյուբշման Հ.— 543
Հյուգո Վ.—110, 111, 501
Հյուրմյուզյան Գ.— 171
Հյուրմյուզյան Էդ.— 22, 32, 102, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 124, 128, 129, 132, 171, 532, 537, 541, 543
Հնասեր Գ.— 82
Հոմերոս — 32, 39, 102, 108, 109, 124, 129, 137, 149, 162, 171, 174, 184, 186, 188, 189, 191, 192, 300, 342, 371, 395, 400, 414, 542, 544
Հովհան Մամիկոնյան—24, 539
Հովհան Մանդակունի—142
Հովհան Վանանդեցի — 44, 77, 78, 94, 129, 130, 151—170, 175, 529, 540, 542
Հովհաննես Բագրևանդցի—320
Հովհաննես Դրասխանակերտցի—25, 30, 541
Հովհաննես Եվդոկիացի—248
Հովհաննես կաթողիկոս— 206, 210, 219
Հովհաննիսյան Աբգար—17, 197, 544
Հովհաննիսյան Աշոտ—17
Հովհաննիսյան Հ.— 8, 218
Հովհաննիսյան Հովսեփ— 27
Հովհաննիսյան Ո.— 254, 257, 264, 267, 268, 270, 276, 277
Հովնաթանյան Աղաթոն— 47
Հովնաթանյան Հակոբ— 47
Հովնաթանյան Հովնաթան— 46
Հովնաթանյան Մկրտում— 46
Հովնան Գ.— 38
Հովնանյան Ղ.—543
Հովնանյան Պ.— 68
Հովսեփ Արցախեցի—26
Հովսեփ կաթողիկոս —218
Հորացիո — 102, 106, 149, 414
Հորդանան Պ. —332

Ղազանչյան Տ.— 49
Ղազար Փարպեցի—24, 531
Ղարադաղցի Պ.— 247, 248, 320, 365
Ղարամյան Ռ.— 44
Ղափանցի Պետրոս— 393
Ղլտճյան Ա.— 42
Ղորղանյան (սինոդի պրոկուրոր) — 326
Ղուլ Արզունի (աշուղ) — 55, 80
Ղուլ Էգյազ (աշուղ)— 252
Ղուլ Օհաննես (աշուղ)— 80, 252

Ճամճյան Փ.—543
Ճավճավաձե Ալ.—538

Մադաթով (գեներալ)— 218
Մալխասյան Ստ.— 6
Մակգովան—536
Մակեդոնացի Ալ.— 338, 468
Մակֆերսոն—109
Մաղաք-Թեոփիլյան Մ.—541
Մամուրյան Մ.—44, 250, 538
Մանդինյան Ս.—542
Մանին Դ.—544
Մանվել Կյումուշխանեցի—84, 195, 219, 236—238, 300
Մանվելյան Լ.—8, 309
Մատթեոս Ուռհայեցի—30, 195
Մարգար խոջենց—33, 103, 529, 534
Մարմոնտել Ժ.—119
Մարտիրոս Երզնկացի—195
Մարքս Կ.—97, 133, 459
Մելիք-Ղասի Միրզա—326
Մելիքյան Մ.— 47
Մելիքշահյան Պողոս— 153
Մելիքշահնազարյան Գ.— 321
Մելիքսեթ (աշուղ) — 270
Մելիքսեկլումյան Խ.—542
Մեսրոպ Երեց— 25, 528
Մետաստազիո Պ.—45, 137, 172, 173, 542
Միանսարյան Մ.— 40, 77, 273, 277, 287, 512, 538
Միլտոն Ջ.—32, 109, 174, 537
Մինասյան Պ.— 91, 124, 135, 139, 140, 141, 142, 143, 532, 543
Միսաքյան Խ.— 82, 533
Միսկին-Բուրջի (աշուղ)—252, 261, 265, 267, 269, 271
Միրիմանյան Գ.— 72
Միրիջանյան Շնորհ-Մկրտիչ— 152, 169
Միքայել Ասորի—176, 178
Միքայել Էմին (Հ. Էմինի պապը)—203
Մխիթար Այրիվանեցի—31
Մխիթար Գոշ—24, 86, 530
Մխիթար Հերացի—24
Մխիթար Սեբաստացի—65, 66, 173

Մխիթարյան Ա.—543
Մկրյան Հ.— 323, 328, 356
Մկրտչյան Մ.— 37, 45, 51, 55, 147, 536
Մնացականյան Աս.— 20, 148
Մոլիեր— 112, 138, 143, 145, 146, 148
Մոնտեգյու (տիկին)— 209, 210, 213
Մոնտեյն— 97, 124
Մոնտեսքյո Շ. —371
Մոնտի Վ.—101
Մովսես Կաղանկատվացի—176, 178
Մովսես Խորենացի—24, 27, 28, 30, 31, 99, 100, 104, 108, 130, 133, 137, 139, 154, 163, 174, 176—178, 184, 342, 464, 500, 506, 537
Մորգենշերն — 241
Մսերյան Զ.—540
Մսերյան Մ.— 153
Մրմրյան Հ.— 6
Մուհամեդ խան—213, 532
Մուրադյան Մ.— 49
Մուրադյան Ս.— 44
Մուրացան— 416

Յաղուբ Օղլի (աշուղ)— 262
Յ ո բ ե ր—536
Յութուճյան Կ.— 250
Յութուճյան Ա.— 49
Յուսուփյան Գ.— 33, 51

Նադիր Շահ — 199, 209, 213
Նազարյան Ստ.— 5, 6, 28, 40, 41, 63, 71, 297, 318, 325, 340, 365, 444, 534, 542
Նալբանդյան Մ.— 25, 35, 40, 46, 49, 56, 65, 70, 249, 284, 321, 335, 340, 348, 350, 427, 437, 438, 443, 444, 478, 484, 501, 502, 504, 505, 506, 515, 538
Նահապետ Քուչակ—309
Նազար Հովնաթան—46, 252, 269
Նապերսկի— 371
Նեյզան Զ.— 49
Նեյման Կ.— 5
Ներսես Աշտարակեցի—21, 22, 40, 41 62, 83, 218, 274, 295, 298, 299, 311, 315, 319, 322, 332, 334, 366, 376, 384, 387, 388, 457, 504, 518, 536—538
Ներսես Լամբրոնացի—534
Ներսես Շնորհալի—24, 30, 31, 41, 108, 116, 285, 500, 530, 531 533
Ներսիսյան Մ.— 34, 197
Ներսիսյան Ստ.— 41, 47, 83, 297
Նիրանի (աշուղ)— 253, 265, 270, 271, 277
Նյուտոն Ի.— 124
Նոյման Ֆ.— 30, 469

Շահ Աբաս— 98, 198, 338
Շահազիզ Ե.— 324
Շահազիզ Ս.—40, 541
Շահամիրյան Հ.—36, 37, 529, 534
Շահամիրյան Շ.—17, 18, 19, 20, 36, 52, 100, 200, 213, 416, 529
Շահան-Ջրպետյան Հ.— 30, 221, 469, 533, 536, 540
Շահխաթունյանց Հ.—26, 542
Շահնազարյան Կ.—534
Շահվերդի խան — 210
Շահվերդյան Կ.— 62, 81
Շահրիմանյան Մ.— 86
Շամիրյան Շ.— 86
Շամչի Բալե (աշուղ)— 269
Շամչի Մելքո (աշուղ)— 252, 268
Շամրան Հակոբ Նազար—տե՛ս Շահամիրյան Հ.
Շանշյան Պ.— 28, 40, 41
Շատոբրիան Ֆ.— 34, 35, 42, 44, 501, 537
Շ ե լ լ ի Պ.—309
Շենիե Մ.— 138
Շերմազանյան Գ. — 46, 92, 148, 230.
Շեքսպիր Վ. —37, 38, 111, 117, 119, 145, 342, 372, 507
Շիլլեր Ֆ.— 39, 342, 371, 375, 395, 400, 501, 510
Շիշմանյան Ռ.— 48
Շ ի ր ի ն— 65, 80, 252, 254, 255, 257, 258, 262, 265, 267, 268, 270, 271, 273—289, 537
Շիրխոոյան Ս.— 42
Շիրվանզադե Ալ.— 8
Շմավոնյան Հ.—53, 531
Շ ո պ ե ն Ի. —27, 47
Շվարսկի—374
Շրումպֆ Գ.— 30
Շուխովսկի— 371

Ոսկանյան Խ.—541
Ոսկանյան Ստ.—69, 536
Ոսկեբերան Հ.— 142, 151
Ոսկերչյան Հովհ.— 220, 221
Որատիոս— 32

Չալոյան Վ.— 19
Չագրճյան Ս.— 32
Չամչյան Մ.— 25, 26, 161, 162, 164, 297, 469, 473, 530, 531, 536
Չամուրճյան Հ.— տես Տերոյենց Հ.
Չեոմլեքճյան Պ.— 49
Չերքեզյան Հ.— 76, 236
Չիլինկիրյան Գր.—44, 541
Չինգիզ խան— 338, 468
Չմշկյան Գ.—280, 540
Չոպանյան Ա.— 82, 498
Չուխաճյան Տ.—50, 139, 540

Պալասանյան Ստ.—5, 540
Պալյան Ն.—537
Պալտազարյան Ղ.—57, 60, 541
Պաղդասար Դպիր— 65, 66, 308, 393
Պապայան Կ.— 82
Պապիկյան Ա.—533
Պասկևիչ— 290, 306, 311, 315, 368, 537, 538
Պատկանյան Գ.— 64, 276, 300, 313, 314, 317, 502—527, 532, 545
Պատկանյան Մ.—63, 502, 543
Պատկանյան Պ.— 502
Պատկանյան Ռ.— 38, 40, 41, 46, 65, 72, 168, 291, 348, 427, 444, 478, 491, 501, 502, 506, 515, 538
Պատկանյան Ս.— 78, 290, 291, 300, 502, 519, 533
Պատկանյան Ք.—40, 72, 539
Պարոնյան Հ.—143, 427, 541, 542
Պարոնչ Ռ.—543
Պարսամյան Վ.— 221
Պարրոտ Ֆ.— 31, 85, 239, 241, 366, 369, 374, 375, 538
Պեհզատ Ու.— 48
Պեշիկթաշլյան Մ.— 44, 50, 56, 58, 75, 145, 168, 171, 478, 501, 538, 543
Պետերման Հ.—30, 532
Պետրարկա Ֆր.— 371
Պետրոս Ամենացի—246
Պետրոս առաջին—76, 204
Պերևոզչիկով — 371
Պիտտ (անգլիայի վարչապետ) — 200
Պլավտ— 145
Պլատոն— 125, 162
Պլուտարքոս—32, 102, 142, 539
Պողոս Ամթեցի—530
Պ ո պ Ալ.— 119
Պոտյոմկին—530

Պոռշյան Պ.—222, 250, 444, 540
Պրուսացի Հ. —տես Տերոյենց Հ.
Պուշկին Ա.— 38, 121, 389, 542

Ջալալյան Ս.— 85, 86, 249
Ջախջախյան Մ.— 27, 32, 33, 73, 90, 102, 103, 109, 112, 123, 124, 125, 134, 135, 137, 138, 139, 532, 534, 537, 540
Ջահել օղլան (աշուղ) — 259
Ջիվանի (աշուղ)— 285
Ջ ո ն ս (խմբագիր) — 209
Ջոնսոն — 119

Ռաբլե Ֆ.— 97
Ռաղիշչև Ա. —455
Ռասին Ժ.— 32, 35, 101, 102, 103, 107, 110, 111, 117, 120, 132, 133, 140, 142, 143, 145, 149, 171, 540
Ռաֆայել— 48
Ռեշիդ փաշա— 327
Ռոզեն— 325
Ռոստոմ· Բեկ— 79
Ռուբենս Ռ. —48
Ռուգո Ֆ.— 21
Ռուսինյան Ն.—69, 535, 544
Ռուսսո Ժ. Ժ. —34, 53, 371, 437, 452

Սաադի— 342
Սագայան Ա.— 48
Սադաթյան Մ.— 40
Սալանթյան Մ.— 33, 116, 292, 324
Սահակյան Վ.— 90, 131
Սաղաթելյանց Մ.— 68
Սայաթ-Նովա— 29, 65, 81, 252, 256, 273, 276, 277, 278, 308, 309, 394, 531
Սարաֆյան Մ.— 17
Սարգսյան Մ.— 47
Սարգսյան Շ.— 341
Սարգսյանց Ե.— 42
Սաֆարյան Կ.— 66
Սերեոս— 24, 176, 177
Սեդրակյան Ար.— 230
Սեթյան Ե.— 91, 139
Սեյադ (աշուղ) — 65, 252, 254, 255, 264, 271, 276
Սեյադ Օղլի (աշուղ) — 258, 262
Սեն-Մարտեն Ա.—30, 116, 469, 531
Սեն-Պիեր Բ.— 35, 37
Սերեբրով— 217
Սերվանտես Մ.—37, 38. 109

Սերվիյան Հ.— 175, 327
Սերվիչեն—տես Վիչենյան Ս.
Սեֆիլ Գյովթարի— 265
Սրվաճյան Հ.—539, 541
Սիմեոն Լեհացի—195, 243
Սիմեոն կաթողիկոս— 206, 207, 216, 225, 529
Սիպիլյան Կ. — 90
Ս կ ո տ Վ.— 145, 372, 437
Սյու Է.— 35
Սյուրմելյան Խ.—26, 66, 540
Սոավյե Ֆր.—536
Սոգինյանց Թ.— 76, 81, 94
Սոկրատ — 115
Սողոմոն (Իմերեթիայի թագավոր)— 213
Սոմալյան Ս.— 5
Սոֆիալյան Վ.—543
Սոֆոկլես— 102, 110, 125, 132, 139, 142, 149, 414
Ստենդալ — 96
Ստեփանյան Գ.— 45
Ստեփանոսյան Հ.—531
Ստրուվե (աստղագետ) — 371
Սրապյան Պ.— 48
Սրվանձտյան Գ.— 540
Սուլթանշահյան Ս.— 76
Սումարոկով Ա. —118, 121
Սունդուկյան Գ.—448, 536
Սուվորով Ա.—530
Սուքիասյան — 47

Վագներ Մ.— 31, 384, 473
Վարդան Այգեկցի—24, 536
Վարդան Բարձրբերդցի—176
Վարդան Օձնեցի—79, 84, 85
Վարդանյան Հ.—534
Վարուժան Դ.— 444, 500, 501
Վեյքսհոպֆեն Ի.— 62
Վերգիլիոս— 32, 102, 109, 129, 149, 171, 174, 185, 186, 189, 190, 414, 543
Վեցմատյան Ա.— 68
Վիդեման— 241, 375
Վինդիշման Ֆ.— 30
Վիչենյան Ս.—534
Վոլտեր Ֆ.— 36, 53, 101, 102, 103, 109, 110, 111, 119, 133, 140, 141, 142, 143, 149, 535
Վորոնցով— 210, 213
Վույ-վույ (աշուղ) — 257, 259

Տակիտոս— 162
Տասսո Տ.— 109, 185, 186, 189, 190 300, 314, 315
Տերենտ — 145
Տերյան Վ.—444
Տերոյենց Հ.—34, 56
Տերտերյան Ա.— 10
Տերտերյան Ղ.— 68
Տեր-Աղեքսանդրյան Գ.—30
Տեր-Գրիգորյան Ի.— 48, 49
Տեր-Դավթյան Գ.—545
Տեր-Կարապետյանց— տե՛ս Տերոյենց Հ
Տեր-Հակոբյան Հ.—350, 535
Տեր-Հարությունյան Մ.—533
Տեր-Հովհաննիսյան Գ.—540
Տեր-Մինասյան Ռ.— 354
Տիգրանյան Ս.— 40, 46, 76, 107, 111 116, 117, 118, 119, 120, 121, 540
Տիցիան — 48
Տյուսար Ս.—542
Տրետյակովսկի Վ.—118
Տուրկեստանով — 339

Ր ա ֆ ֆ ի — 416, 427, 444, 475, 476 498, 540
Ր ե ս տ ե ն Մ.— 68

Ց ի ց ե ր ո ն Մ.—543
Ցիցիանով Պ.— 220

Ութուջյան Կ.—536
Ուլանդ — 39
Ուխտանես — 31
Ուրպելյան — 328

Փավստոս Բուզանդ—24, 30, 98, 100, 139, 539
Փափազյան Ա.—541
Փափազյան Ի.—68, 539
Փափազյան Ռ.—541
Փափազյան Վ.— 6, 9
Փեդրոս— 32, 39
Փեշտմալճյան Գր.—26, 45, 542
Փիլիպոսյան Ս.— 274

Քամալյանց Ս.— 267, 277, 476
Քարտաշյան — 326
Քիմիա (աշուղ) — 266, 270
Քիչիկ Նովա (աշուղ) — 252
Քյանհան— 253, 257, 261, 265, 266
Քյոմուրճյան Ե.— 195
Քյուչուկ Հարություն— 196

Քավալյե դը Մեստր— 457
Քսենոֆոն —162, 467, 512
Քսերքսես— 125
Քրթիկյան Բ.— 85
Քուչուբեկյան Հ.— 291

Օզերով Վ.—108, 116, 118, 121
Օլիգոր Օ.— 117, 118
Օղուլլուխյան Հ.—533
Օսիան — 109, 114
Օտյան Գր.—56, 69, 70, 539
Օրբելյան Ստ.— 31, 98
Օրի Ի.— 17, 99, 100

Ֆադրլի —534
Ֆենելոն Ն.—32, 103, 109, 171, 531, 537
Ֆերիոլ — 195
Ֆիդիաս— 48
Ֆիենոտտի — 39
Ֆիզիկա Պողոս — տե՛ս Մելիքշահյան Պողոս
Ֆիլադելֆին — 245, 383
Ֆիրդուսի — 338, 342
Ֆլորիան — 32, 35
Ֆլորիվալ Լ.—30, 533, 537
Ֆ ր ե ն Խ.—376, 377, 379, 380, 542
Ֆրիդլենդեր Մ.—241, 374
Ֆ ր ի կ — 259

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5

Ներածություն 15

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հայկական կլասիցիզմ 95
Հովհան Վանանդեցի 151
Արսեն Բագրատունի 171

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Մեմուարային գրականություն 194
Հովսեփ Էմին . . . 197
Հարություն Արարատյան 216
Այլ մեմուարիստներ 236

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Աշուղական պոեզիա 251
Շիրին . . 273

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Հարություն Ալամդարյան 290

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մեսրոպ Թաղիադյան 318

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Խաչատուր Աբովյան 363

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Ղևոնդ Ալիշան 478

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Գաբրիել Պատկանյան . 502
Ժամանակագրություն 528
Անվանացանկ . 547

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏՈՐ I

Գլխ. խմբագիր Մ. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ
Հրատ. խմբագիր Տ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Նկարչական ձևավորումը
Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Մ. Հ. ՄԻՆԱՍՅԱՆ
Սրբագրիչ Զ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

ՎՖ 00971, պատվեր 157, հրատ. 2086, ՆՀԽ 742, տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 4/III 1962 թ., ստորագրված է տպագրության 28/VII 1962 թ., տպագր. 35 մամուլ+1 ներդիր
հրատ. 35,88 մամուլ, թուղթ 70×108¹/₁₆
Գինը կազմով 1 ռ. 64 կ.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան,
Երևան, Բարեկամության 24